ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



YEREVAN STATE UNIVERSITY

VAHAN BAIBOURTIAN

HISTORY OF IRAN

(FROM ANCIENT TIMES TO OUR DAYS)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

ՀՏԴ 94(55)
ԳՄԴ 63.3(5Իրան)
Բ 260

Բայբուրդյան Վահան
Բ 260 **Իրանի պատմություն** / Վ. Բայբուրդյան: Եր., ԵՊՀ հրատ., 2024, 785 էջ + 8 էջ ներդիր:

Աշխատությունն առաջին փորձն է հայերենով ընթերցողին մատուցելու Հայաստանի դարավոր հարևան Իրանի ամբողջական պատմությունը՝ հնագույն ժամանակներից սկսած, երբ Իրանական բարձրավանդակում երևան եկան առաջին պետական կազմավորումները, և սկսեցին զարգացում ապրել իրանական հարուստ մշակույթն ու քաղաքական կյանքը:

Աշխատությունում պատշաճ ուշադրություն է դարձվել հայ-իրանական պատմական առնչությունների լուսաբանմանը՝ երկու ժողովուրդների պատմության արշալույսից սկսած մինչև մեր օրերը:

Գրքում զգալի տեղ է հատկացվում նաև իրանական հարուստ մշակույթի և նրա տեղի ու դերի բացահայտմանը համաշխարհային մշակութային արժեքների և քաղաքակրթության դարավոր ձեռքբերումների գանձարանում:

Նախատեսված է իրանագետների, արևելագետների, պատմաբանների, միջազգայնագետների, բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսների և ուսանողների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակի համար:

Գրքի տասնյոթերորդ գլուխը (Իրանի մշակույթը) շարադրված է պատմական գիտությունների թեկնածու Աշոտ Ստեփանյանի կողմից:

ՀՏԴ 94(55)
ԳՄԴ 63.3(5Իրան)

ISBN 978-5-8084-2668-9
DOI: https://doi.org/10.46991/YSUPH/9785808426689

© ԵՊՀ հրատ., 2024
© Բայբուրդյան Վահան, 2024

Առաջաբան

Իրանը համաշխարհային քաղաքակրթության հնագույն օրրաններից մեկն է: Մարդու բնակության հետքերն իրանական բարձրավանդակում գնում են դեպի խորը հնություն: Նրա հնագույն բնակիչներն առաջիններից մեկն էին, որ թևակոխեցին պատմական առաջընթացի ուղին՝ դեռևս մ.թ.ա. III հազարամյակի սկզբին ստեղծելով իրենց գիրը և պետական կազմավորումները: Նախապատմական ժամանակներում այդ ընդարձակ երկրի տարածքը հանդիսացել է արիական ցեղերի տարածման հանգրվաններից մեկը, որտեղ ծավալվել են նրանց ռազմաշունչ ոգին և ստեղծագործ եռանդը:

Հնագույն շրջանում Իրանը շփումների մեջ է գտնվել Եգիպտոսի, Հունաստանի, Ասորեստանի, Բաբելոնի, Ուրարտուի և այլ պետությունների հետ, ուստի նրա կյանքի իրադարձությունները հանդիսացել են համաշխարհային պատմության կարևորագույն դրվագները: Առհասարակ Իրանն աչքի է ընկել այնտեղ հաստատված ուժեղ քաղաքական կյանքով: Նրա տարածքում բարձրացել ու անկում են ապրել բազմաթիվ հզոր պետություններ, որոնց թևերը տարածվել են արևելքից՝ Հնդկաստանի մատույցներից, մինչև արևմուտք՝ Միջերկրական ծով ու Եգիպտոս, հյուսիսից՝ Կովկասյան լեռներից մինչև հարավ՝ Պարսից ծոց ու Արաբական թերակղզի: Իրանն իր այդ վիթխարի ծավալապաշտությամբ պարտական էր ոչ միայն իր ռազմական ուժին. նրա աշխարհագրական դիրքը ևս նրան պարտադրել է նվաճողական աշխարհայացք ու գործելակերպ: Մ.թ.ա. VI դարում ծնունդ առած Աքեմենյանների պետությունը, որն իր կազմում միավորել էր տասնյակ երկրներ ու ժողովուրդներ, հանդիսանում էր պատմության մեջ առաջին համաշխարհային տերությունը՝ իր մեջ պարունակելով իր ժամանակի քաղաքակիրթ աշխարհի մեծագույն մասը:

Իրանի բարձրավանդակով են անցել ժողովուրդների գաղթի կարևորագույն ուղիները: Այդ տարածքում է ծավալվել Իրանի և Թուրանի դարավոր պայքարը: Այդ բարձրավանդակը խաղացել է կուռ պատ-

նեշի դեր՝ կասեցնելով վաչկատուն ռազմաշունչ ցեղերի հեղեղը դեպի Արևմուտք:

VII դարում Իրանը հնազանդվել է արաբներին, որպեսզի իր հերթին սեփական բարձր մշակույթի ուժով նրանց ենթարկի իրեն:

Չափազանց մեծ է Իրանի դերը իսլամական մշակույթի ու քաղաքակրթության ստեղծման ու զարգացման գործում: Իրանական մշակութային հզոր ազդեցությունը տարածվել է իսլամն ընդունած համարյա բոլոր երկրների վրա՝ Օսմանյան կայսրությունից սկսած մինչև Աֆղանստան ու Հնդկաստան՝ նոր շունչ ներարկելով նրանց լեզվին ու մշակույթին: Իսկ ֆարսի լեզուն դարձել է ոչ միայն գրականության ու պոեզիայի, այլև, արաբերենի հետ միասին, իսլամական աշխարհի գրական ու պետական լեզու:

Հազարամյակներ շարունակ Չինական կայսրությունից ու Հնդկաստանից Միջերկրական ծովի ափերը առևտրական քարավանային ճանապարհներն անցել են իրանական բնակչություն ունեցող՝ կամ իրանական մշակութային ազդեցության տակ գտնվող շրջաններով՝ չափազանց մեծ դեր խաղալով միջազգային առևտրական ու մշակութային փոխանակության ու շփումների բնագավառում: Պարսից ծոցով է կատարվել հին աշխարհի ծովային առևտրի նշանակալից մասը:

Իրանական բարձրավանդակը միաժամանակ հանդիսացել է խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի մի տարածք, որտեղ դարերի ընթացքում աշխատասեր և ընդունակ իրանական ժողովուրդն արարել է շինարարական ու մշակութային մեծագործություններ: Իրանական բարձրավանդակը նաև այն պատմական միջավայրն է, ուր նշանակալից չափով ձևավորվել ու կոփվել է Հայաստանի քաղաքական ճակատագիրը: Այդ հինավուրց երկրի քաղաքակրթության հուժկու ազդեցությունն իր խորը դրոշմն է թողել նրա բոլոր հարևանների, այդ թվում նաև հայերի վրա: Միանգամայն ճիշտ է ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցի այն նրբին դիտումը, որ Հայաստանը հին ժամանակներից ի վեր ներգրավված էր պարսկական պետությունների համաշխարհային քաղաքական ոլորտի մեջ և հարյուրամյակներ շփվում էր պարսիկների հետ միևնույն կուլտուրական աշխարհում, որն ընդունված է անվանել «իրանական աշխարհ»: Հենց այդ աշխարհաքաղաքական տարածքում և հոգևոր-մշակութային միջավայրում է ընթացել հայ ժողովրդի մի ստվար հատվածի պատմությունը, և Իրանը ավելի քան երեք հազարամյակի ընթացքում հանդիսացել է հայ ժողովրդի պատմական ճակատագրի կերտման անմիջական և գործուն մասնակիցը:

Այժմ արդեն բավականին հստակորեն գիտակցվում է նաև այն դերը,

որ խաղացել են իրանական ժողովուրդը, նրա մշակույթը և հոգևոր փորձը նաև եվրոպական և առհասարակ համաշխարհային քաղաքակրթության ձևավորման ու զարգացման գործում: «Առանց հիմքի չէ,- այդ առթիվ գրում է նշանավոր ֆրանսիացի հետազոտող Էլիզե Ռեկլյուն,- որ մենք ամենքս՝ արևմտյան և արևելյան ժողովուրդներս՝ եվրոպացիներ, ամերիկացիներ, հնդիկներ, չինացիներ, նայում ենք Իրանին, ինչպես մեր նախնիների երկրին»:

Իրանն անցել է հազարամյակների պատմական զարգացման ճանապարհ: Այն կտրելիս նա և՛ բարձրացել է, և՛ ընկել, բայց երբեք չի կորցրել իր դիմագիծը և միշտ անշեղորեն ընթացել է իր նախանշած ու ընտրած ճանապարհով: Հիրավի, այդ երկիրն անդրդվելի է մնացել բոլոր տեսակի քաղաքական փոթորիկների, մեծ ու փոքր նվաճողների հարվածների, տնտեսական աղետների ու տագնապների նկատմամբ:

Ուշ միջնադարում՝ XVI-XVII դարերի ընթացքում, երբ Օսմանյան կայսրությունը մագլցում էր իր հզորության գագաթնակետին և Արևմուտքում հասել էր Վիեննայի պատերի տակ, Իրանը հանդիսացավ այն միակ ուժը, որը կասեցրեց յանիչարիական գնդերի շարժումը դեպի Արևելք: Շնորհիվ Իրանի հուժկու դիմակայության՝ թուրքական սուլթաններին չհաջողվեց իրականացնել իրենց նվիրական խղճը՝ զավթելու Անդրկովկասը, Ատրպատականը, Կասպից ծովի ավազանը, Խորասանը, Միջին Ասիան, Աֆղանստանը, Բելուջիստանը և Հյուսիսային Հնդկաստանը: Թուրքական առաջխաղացման փորձերը դեպի Արևելք Իրանի կողմից կասեցվել են նաև հետագայում՝ Նադիր շահի, զենդերի, ղաջարների օրոք, ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը:

Շնորհիվ իր կենսունակության, իրանական ժողովրդի վիթխարի ներքին ներուժի՝ Իրանը կարողացավ խուսափել եվրոպական տերությունների գաղութացումից: XIX դարի երկրորդ կեսից սկսած նա բռնեց բարեփոխումների ճանապարհով արդիականացման ուղին, որին նոր, հուժկու խթան հաղորդեց 1905-1911 թթ. սահմանադրական շարժումը:

Իրանը Արևելքի առաջին երկրներից մեկն էր, որ ընդունեց ժամանակակից տիպի սահմանադրություն և բռնեց պառլամենտարիզմի ուղին:

1979 թ. իսլամական հեղափոխությունն Իրանում ամբողջ աշխարհի ուշադրությունը սևեռեց այդ երկրի վրա, քանի որ ողջ Մերձավոր ու Միջին Արևելքում ստեղծվում էր սկզբունքորեն նոր աշխարհաքաղաքական իրավիճակ: Այդ հեղափոխության շնորհիվ Իրանում ստեղծվեց XX դարի համար եզական (ունիկալ) բնույթի մի պետական կառույց՝ իսլամական հանրապետություն: Այսպիսով՝ դարեր շարունակ

միապետական-շահնշահական ավանդույթներով ապրած Իրանը թևակոխեց հանրապետական զարգացման ճանապարհ՝ իր վրայից թոթափելով անցյալի բեռը:

Ներկա ժամանակներում Իրանը մուտք է գործում XXI դար որոշակի խնդիրներով և համաշխարհային պատմության նորագույն շրջանի սեփական ընկալումներով: Այսօր Իրանը Միջին Արևելքի ամենախոշոր պետություններից մեկն է: Նրա վիթխարի կենսական տարածքը (1 միլիոն 648 հազար քառակուսի կիլոմետր), հսկայական բնական ռեսուրսները, բազմաճյուղ արդյունաբերությունը, ռազմական պատկառելի ներուժը, բնակչության դինամիկ աճը և այլ գործոններ հնարավորություն են տալիս նրան ապագային նայելու վստահ հայացքով:

Վերջապես, Իրանն այն երկիրն է, որտեղ հնուց ի վեր գոյություն է ունեցել հայ հոծ գաղթօջախ: Իրանական ժողովուրդն այսօր էլ բարձր է գնահատում իրանահայության խաղացած դերը երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային զարգացման գործում:

Հայաստանում Իրանի պատմության նկատմամբ հետաքրքրությունը միշտ էլ մեծ է եղել ինչպես գիտնականների, այնպես էլ ընթերցող լայն հասարակայնության շրջանում: Այդ հետաքրքրությունն ավելի մեծացավ Հայաստանի անկախության ձեռք բերումից հետո, երբ նորոգ հանրապետությունը հնարավորություն ստացավ անմիջական քաղաքական, տնտեսական և մշակութային շփումների մեջ մտնելու իր հարավային սահմանակից երկրի հետ:

Ամենազարմանալին, թերևս և արտառոցն այն է, որ թեև հայ իրանագիտությունը շուրջ երեք հարյուրամյակի անցյալ ունի, առ այսօր հրապարակի վրա չկար ընդհանրական բնույթի մի աշխատություն, որը մայրենի լեզվով ընթերցողին ներկայացներ մեր դարավոր հարևանի պատմությունը՝ հնագույն ժամանակներից սկսած մինչև մեր օրերը: Պետք է առհասարակ խոստովանել, որ Իրանի վերաբերյալ հայերենով ստեղծված գրականության պակասի պատճառով վերջին տարիներին մեր լայն հանրության պատկերացումները այդ երկրի մասին բավականին մակերեսային են: Դրա պատճառներից մեկն էլ թերևս այն է, որ եվրոպական լեզուներով XIX-XX դարերի ընթացքում հրատարակված իրանագիտական աշխատությունները ներկայումս կա՛մ հնացել են, կա՛մ համարյա անմատչելի են գիտնականների, առավել ևս ընթերցող լայն շրջանակների համար, մանավանդ որ այդ աշխատություններից շատերը կա՛մ դարձել են մատենագիտական հազվագյուտություն, կա՛մ պարզապես բացակայում են գրադարաններում ու գրքային շուկայում: Մինչ-

դեռ Հայաստանում և առհասարակ հայ ժողովրդի մեջ գնալով հարաճուն կերպով մեծանում է հետաքրքրությունն Իրանի, նրա պատմության ու մշակույթի հարցերի նկատմամբ. Այս աճող հետաքրքրությանն ինչ-որ չափով հագուրդ տալու համար ձեռնարկվեց սույն աշխատությանս հրատարակելու գործը: Ընդ որում՝ կարևոր է նշել, որ թեև այն կրում է համառոտագրական բնույթ, սակայն գիրքը շարադրելիս նկատի ենք ունեցել գիտության ներկա պահանջների մակարդակը: Մեր խորին համոզմամբ՝ սույն աշխատությունն արժևորվում է նաև նրանով, որ այն շարադրելիս լայնորեն օգտագործվել են նաև հայկական աղբյուրներն ու գրականությունը, որոնց արժեքը դժվար է գերագնահատել Իրանի պատմության հանգուցային հարցերը վեր հանելիս. Վերջապես, այս աշխատության յուրահատկությունը կայանում է նրանում, որ Իրանի պատմությունը շարադրվում է հայ-իրանական հարաբերությունների լայն ֆոնի վրա, ընդ որում, հայ մարդու աչքերով:

Բնականաբար, նման ծավալի գործ իրականացնելիս դժվար էր, եթե չասենք անհնարին, խուսափել թերություններից ու բացթողումներից: Խոստովանում ենք, որ առհասարակ հավակնություն չենք ունեցել ընթերցողի դատին ներկայացնելու անթերի մի աշխատություն: Այս բոլորը նկատի ունենալով՝ թերությունների համար հայցում ենք անկողմնակալ ու անաչառ ընթերցողի ներողամտությունը:

Նկատի ունենալով «Իրանի պատմություն» աշխատության մեծ պահանջարկը ուսանողության և սովորող երիտասարդության շրջանում, ինչպես նաև Իրանի և նրա պատմության նկատմամբ հայ հասարակայնության կողմից հարաճուն կերպով մեծացող հետաքրքրությունը, Երևանի պետական համալսարանի ղեկավարությունը, մասնավորապես մայր բուհի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը նպատակահարմար են համարել վերահրատարակել դեռևս 2005 թվականին լույս տեսած «Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)» աշխատությունը:

Հիշյալ գրքի հեղինակը հայտնելով իր խորին շնորհակալությունը և երախտագիտությունը, միաժամանակ լիահույս է, որ այդ գովելի նախաձեռնությունը մի նոր կարևոր քայլ կհանդիսանա մեր հարևան ու բարեկամ ժողովրդի պատմությունը հայ հասարակայնությանը հասու դարձնելու, ինչպես նաև հայ-իրանական դարավոր կապերը ընդլայնելու ու ամրապնդելու հույժ կարևոր գործում:

Վահան Բայբուրդյան

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԻՐԱՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. ԻՐԱՆԻ ԲՆԱՇԽԱՐՀԸ

Իրանը գտնվում է Ասիական մայրցամաքի հարավ - արևմտյան մասում: Հնագույն ժամանակներից սկսած՝ իրանալեզու ժողովուրդների բնակության վայր է հանդիսացել լայնածավալ իրանական բարձրավանդակը, որն իրենից ներկայացնում է բոլոր կողմերից լեռներով ու լեռնային գոգահովիտներով շրջապատված մի եռանկյունի: Այդ բարձրավանդակը հանդիսանում է Առաջավոր Ասիայի ամենաչոր ու անապատային տարածքներից մեկը: Իրանի մակերևութապատկերը շատ բարդ է, բարձրությունների տատանումները՝ խիստ կտրուկ: Այսպես՝ Մերձկասպյան հարթությունը գտնվում է ծովի մակերևույթից 28 մետր ցածր, իսկ առանձին լեռնաշղթաների գագաթները հասնում են մինչև 5500 մետրի:

Իրանական բարձրավանդակի հյուսիսը երիզված է Թուրքմենա-Խորասանյան և Էլբուրսի լեռնաշղթաներով, արևմուտքը և հարավը՝ Քրդստանի, Զագրոսի և Մեհրանի լեռնազանգվածներով, իսկ հարավը և արևելքը՝ Արևելա-Իրանական լեռներով:

Էլբուրս լեռնաշղթան հանդիսանում է Իրանում ամենաբարձրը: Այն գտնվում է երկրի հյուսիսում և ձգվում է արևմուտքից արևելք 900 կմ երկարությամբ: Էլբուրսի լեռներն աչքի են ընկնում իրենց անմատչելիությամբ, կտրուկ ուրվագծերով, գահավեժ թեքություններով, խիստ կտրտված նեղ կիրճերով: Այդ լեռնային համակարգի բարձրագույն կետը Դեմավենդ լեռնագագաթն է՝ 5771 մետր բարձրությամբ, որն Առաջավոր Ասիայի բարձրագույն

գագաթներից մեկն է: Նրա կատարը ծածկված է հավերժական ձյունով: Դեմավենդը հանգած հրաբուխ է և մինչև այժմ արտաթորում է տաք ջրային ու ծծմբային գոլորշիներ: Էլբուրս լեռնաշղթայի երկրորդ գագաթը Բարիր կամ Ալամքուհ լեռն է՝ 4805 մետր բարձրությամբ: Դեմավենդը և Բալիրը երկրում ամենաբարձր լեռնագագաթներն են:

Էլբուրս լեռնաշղթան և Կասպից ծովը հանդիսանում էին Իրանի հին և միջնադարյան պետության սահմանը, բայց ոչ երբեք իրանական լեզուներով խոսող ժողովուրդների բնակության սահմանագիծը: Միջագետքի և Փոքր Ասիայի շրջանները, թեև աշխարհագրականորեն հնում դուրս էին մնում այսպես կոչված «իրանական աշխարհի» հասկացության շրջանակներից, սակայն միշտ էլ հանդիսացել են պարսկական պետության հավակնությունների առարկան:

Գիտության մեջ ընդունված է այն կարծիքը, որ այսպես կոչված «Մեծ Իրանը» ընդգրկում էր այն ողջ տարածքը, որի վրա պատմական ժամանակներում խոսում էին իրանական լեզուներով, և որի մշակույթը պետք է համարել գերազանցապես իրանական: Միջին Ասիայի, Հյուսիս -արևմտյան Հնդկաստանի, Անդրկովկասի և Միջագետքի մի շարք շրջաններ, ինչպես նաև այն բարձրավանդակը, որն իր մեջ ներառում է ժամանակակից Իրանի և Աֆղանստանի պետությունների տարածքները, վերաբերում են «Մեծ Իրանին»: Այդ հասկացությունն անշուշտ ունի միայն պատմամշակութային նշանակություն և իմաստ:

Կասպից ծովից արևելք ձգվում են Թուրքմենա-Խորասանյան լեռները, որոնք ունեն ավելի հարթ մակերևութապատկեր և ավելի մատչելի լեռնանցքներ: Այդ համակարգում առանձնանում են երեք լեռնաշղթաներ. հյուսիսային՝ Ղոփեթդաղ, միջին՝ Ալաղաղ և հարավային՝ Նիշապուրյան լեռներ: Թուրքմենա-Խորասանյան լեռների առանձին գագաթներ հասնում են 3000 մետրի:

Արևելքում՝ աֆղանական սահմանի երկայնքով, գտնվում են Կայեն և Պելենգան ոչ բարձր լեռնաստանները: Դա իրանական բարձրավանդակի հնագույն հրաբխային շրջանն է՝ հանգած հրաբուխների կոնաձև լեռներով, որոնցից ամենաբարձր գագաթ ունեցողը Թեֆթան լեռն է (4042 մ):

Երկրի հարավում ձգվում են Մեհրան և Զագրոս լեռների լեռնաճյուղավորումները՝ տափակ գագաթներով և զառիվայր ու կտրտված լեռնալանջերով: Այդ լեռների առանձին գագաթներ հասնում են 4000 մ բարձրության: Զագրոսի և Մեհրանի հարավային նախալեռների երկայնքով, Պարսից ծոցի առափնյա շրջաններով նեղ շերտով ձգվում է Գերմեզիր անապատը:

Իրանի հյուսիսարևմտյան և արևմտյան մասը զբաղեցնում է Հայկական

բարձրավանդակը, որը հարավում վերածվում է Զագրոսյան լեռնաստանի: Հայկական բարձրավանդակը կտրտված է գետահովիտներով, բազմաթիվ գոգահովիտներով, որոնցից առանձնանում է Ուրմիա (Կապուտան) լճի իջվածքը: Լճի շուրջը ձգվում է տափարակ աղուտային ցածրադաշտ: Ուրմիայի իջվածքից արևելք առանձնանում են հին հրաբխային Սեբելան (4821 մ) և Սահենդ (3710 մ) հրաբխային զանգվածները: Հյուսիսում Հայկական լեռնաշխարհն աստիճանաբար վերածվում է հարթավայրային Մուղանի տափաստանի՝ կավահողերով, աղուտներով և կիսաանապատային բուսականությամբ, արևմուտքում այն միանում է Քրդստանյան (Կորդվաց) լեռնաշղթային, որն ունի 2000 և ավելի մետր բարձրություն:

Զագրոսի լեռնային համակարգը բաղկացած է զուգահեռ լեռնաշղթաներից, որոնք հյուսիս-արևմուտքից ձգվում են դեպի հարավ-արևելք՝ ընդհուպ մինչև ներկայիս Պակիստանի լեռները: Զագրոսի լեռնագագաթները հասնում են ավելի քան 4,5 հազար մետրի: Լեռնաշղթայի հարավային մասն ունի Հարավ-Իրանական լեռներ անվանումը, իսկ արևելյան մասը կոչվում է Մեքրան:

Իրանի լեռները երիտասարդ են (հատկապես Էլբուրսի համակարգը) և աչքի են ընկնում բարձր երկրաշարժաստեպությամբ: Այդ երկրում հազվագյուտ չեն նաև տարերային այլ աղետները՝ ջրհեղեղ, անապատային փոթորիկներ և այլն:

Իրանի տարածքի մեծ մասում կլիման, չոր և ցամաքային է: Տեղումները չափազանց քիչ են: Առանձնապես չոր է Իրանական բարձրավանդակի ներքին շրջաններում, քանի որ ծայրամասային լեռները կլանում են ողջ խոնավությունը: Երկրի ամենախոնավ շրջանը Կասպից ծովի առափնյա շրջանն է, որն իրենից ներկայացնում է մերձարևադարձային գոտի:

Իրանական բարձրավանդակի ներքին շրջաններում են գտնվում երկու ամենախոշոր աղուտային, անպտուղ ու չոր անապատները՝ Դաշտե Քեվիրը և Դաշտե Լութը: Իր չափսերով երրորդը Ջազմուրյան անապատն է: Այդ անապատները հանդիսանում են մի կուռ պատնեշ արևելքի և արևմուտքի միջև, որոնք բազմիցս ստիպել են գաղթող ժողովուրդներին ընկրկել նրանց առջև և շեղել իրենց ճանապարհը: Դաշտե Քեվիր անապատի հյուսիսային սահմանների երկայնքով անցնում էր հնում հայտնի այն առևտրական ճանապարհը, որը պատմության մեջ հայտնի է «արևելք-արևմուտք մայրուղի» անունով, որի ճյուղավորումներից մեկն էր հանդիսանում Չինաստանը Առաջավոր Ասիայի քաղաքակրթության կենտրոնների հետ կապող հայտնի «մետաքսի ճանապարհը»:

Իրանական բարձրավանդակի կլիման ավելի դաժան է, քան Միջագետ-

քինը: Այն զարմացնում է իր հակադրություններով. ամառը համարյա այնպիսի շոգեր են լինում, ինչպես Սահարայում, իսկ ձմռանը՝ նույնպիսի սառնամանիքներ, ինչպես Սիբիրում:

Իրանը երկու կողմերից՝ հյուսիսից և հարավից, ողողվում է խոշոր ծովային ավազաններով: Հյուսիսում՝ Կասպից ծովի ջրերով, հարավում և հարավարևմուտքում՝ Պարսից ծոցի և Օմանի ծովի ջրերով:

Իրանի գետերի մեծ մասը վերաբերում է փակ ներքին ավազաններին: Նրանցից շատերն ամառվա շոգերին չորանում են և չեն հասնում մինչև ծովերը: Գետերը սնող հիմնական աղբյուրներն են բարձր լեռնագագաթների ձյունոտ լանջերն ու կիրճերը, գետնաջրերը և մթնոլորտային տեղումները: Երկրի հյուսիսում մի շարք գետեր սնուցվում են լեռների ձյունով և սառցադաշտերից: Ամբողջությամբ վերցրած՝ Իրանին բնորոշ է ջրային ցանցի թույլ զարգացվածությունը, և գետերն աչքի չեն ընկնում ջրառատությամբ: Տեղումների պակասը և ջրային ռեսուրսների ոչ հավասարաչափ բաշխումը ստիպում էին Իրանական բարձրավանդակի բնակիչներին, հնագույն ժամանակներից սկսած, դիմել արհեստական ոռոգման: Այդ նպատակով օգտագործվում էին գետային ջրանցքները, լեռնային աղբյուրները, ջրհորները և քյարիզները (ստորգետնյա ոռոգման ջրանցքներ, որոնք անհրաժեշտ վայրերում բարձրացվում էին գետնի մակերես):

Նման ջրային համակարգերի ստեղծումը, անտարակույս, հանդիսանում է իրանական ժողովրդի ստեղծագործական խիզախության և զարմանալի աշխատասիրության հիանալի վկայություն:

Իրանում լճերի քիվը մեծ չէ: Նրանց մեծ մասն անջրթող է կամ անհուսք, սակավաջուր և աղի: Շատ լճեր ամռանը չորանում են: Քաղցրահամ ջրեր ունեցող լճերը հազվադեպ են:

Իրանի հողերն աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ: Առկա են հողերի բոլոր տեսակները՝ սկսած անապատային և կիսաանապատայինից, մինչև անտառային ու լեռնային մարգագետինների հողերը: Իրանում հողային ծածկույթի բնորոշ առանձնահատկությունը քարքարոտությունը և բարձր աղակալվածությունն է:

Իր հարստությամբ ու բազմազանությամբ աչքի է ընկնում այդ երկրի բուսական աշխարհը: Այն ներկայացված է մերձարևադարձային հարուստ բուսականությունից մինչև կիսաանապատների աղքատ ֆլորայի բազմապիսի բույսերով: Առհասարակ Իրանում մեծ մասամբ տիրապետում է անապատային, կիսաանապատայինն և լեռնային-չորակայուն բուսականությունը:

Իրանական բարձրավանդակն աղքատ է անտառներով: Անտառները հիմնականում կենտրոնացած են երկրի հյուսիսային շրջաններում: Ամենա-

տարածված ծառատեսակներն են զիհին, կաղնին, հաճարենին, թխկին, հացենին, կնճենին, ընկուզենին, շիմշատը, նշենին և այլն: Կմախքային լեռների գլիպսաբեր կավախճային նախալեռներում աճում է «համադա»-ն անապատային տիպի բուսականությունը: Իրանական բարձրավանդակի ներքին և հարավարևելյան մասերի լեռները համարյա անտառազուրկ են: Այդ բարձրավանդակը բազմաթիվ կուլտուրական բույսերի՝ ցորենի, կորեկի, ձմերուկի, սերկևիլի, նուշի, կեռասի և այլն հնագույն հայրենիքն է:

Բարձրավանդակի դաժան կլիման, ամառը անտանելի շոգով, իսկ ձմեռը՝ սառնամանիքներով, որոշ չափով մեղմանում է ցածրադիր վայրերում, որտեղ գետերի հովիտներում հնարավոր է զբաղվել հողագործությամբ: Տափաստաններում լայնորեն զբաղվում էին անասնապահությամբ, որն ուներ վաչկատուն-քոչվորական բնույթ, իսկ օազիսներում՝ նստակյաց բնույթ: Ամռանն անասունները քշում էին բարձր լեռնային արոտավայրերը, իսկ ձմռանն իջնում էին հովիտները: Աճեցնում էին ինչպես խոշոր, այնպես էլ մանր եղջերավոր անասուններ, ինչպես նաև ձիեր: Հարթավայրային և անտառային շրջաններում նշանակալից դեր էր խաղում որսորդությունը:

Իրանն աշխարհում հողագործության հնագույն օրրաններից մեկն է: Հնագիտական պեղումները վկայում են, որ արդեն մ.թ.ա VI հազարամյակում նա հանդիսացել է հողագործական բարձր կուլտուրայի երկիր: Պեղումների ժամանակ, մասնավորապես, հայտնաբերվել են հինգ-վեց հազար տարվա հնություն ունեցող ցորենի և գարու հատիկներ: Միջերկրածովյան ավազանի, Առաջավոր և Միջին Ասիայի՝ ներկայումս մեզ հայտնի կուլտուրական բույսերի մեծամասնությունն Իրանում աճեցվում էին արդեն մ.թ.ա I հազարամյակում: Նրանցից հիշատակության արժանի են ծիրանը, դեղձը, նուռը, տանձը, խաղողի որթը և փյունիկյան արմավը: Հարավ-արևմուտքում՝ Կարուն գետի հովտում, աճեցվում էր ձիթապտղի ծառ: Սասանյանների ժամանակ սկսեցին աճեցնել շագարեղեգ, բրինձ և այլ բույսեր:

Իրանական բարձրավանդակը հարուստ է նաև հանքային հանածոներով՝ պղնձի, արծաթի, արճիճի, երկաթի և այլ հանքերով:

Բնականաբար, Իրանի աշխարհագրական դիրքը, նրա բնական հարստությունները, բնակության համար համեմատաբար բարենպաստ պայմանները և այլն լուրջ կռվան էին ստեղծում այն բանի համար, որ հնագույն ժամանակներից սկսած՝ Իրանական բարձրավանդակը դառնա մարդկային քաղաքակրթության օրրաններից մեկը, ինչպես նաև պետականության, իշխանության և համաշխարհային աշխարհակալությունների ամենաաչքի ընկնող կենտրոններից մեկը:

2. ԻՐԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Իրանի հնագույն բնակիչներն առաջիններից էին, որ մուտք գործեցին պատմական առաջընթացի ուղին՝ դեռևս մ.թ.ա. III հազարամյակի սկզբին ստեղծելով իրենց գրությունը և պետական միավորումները: Հենց այդ նույն շրջանում՝ մ.թ.ա. IV-III հազարամյակներում, ներկա Իրանի բազմաթիվ շրջաններում հողագործությունը հասել էր բարձր զարգացման մակարդակի: Այդ երկրում առաջին մետաղյա իրերը հայտնվել են մ.թ.ա. 6500 տարի առաջ:

Խուզիստանը և Ֆարսի նահանգը, դեռևս հնագույն ժամանակներից սկսած, դարձել էին քաղաքակրթության և քաղաքական իշխանության կենտրոններ: Անտարակույս, դրան նպաստող կարևորագույն գործոններ են հանդիսացել ջրառատ Կարուն գետը, այդ շրջանների հարուստ ու բարեբեր հողերը և հիանալի արոտավայրերը: Իզուր չէ, որ հնուց անտի Ֆարսը դիտվել է որպես «Պարսկաստանի սիրտը»: Դեռևս մ.թ.ա. III հազարամյակի սկզբին Իրանի հարավ-արևմուտքում հայտնվեցին առանձին քաղաք-պետություններ: Իսկ քիչ ավելի ուշ՝ Կարուն գետի հովտում՝ Խուզիստանի, Արևմտյան Լուրիսթանի և Ֆարսի մի մասի տարածքում, ձևավորվեց Էլամ պետությունը, որը մ.թ.ա. III-II հազարամյակների ընթացքում անընդհատ պատերազմներ էր մղում Միջագետքի ավելի զարգացած պետությունների՝ Շումերի, Աքքադի, Բաբելոնի ու Ասորեստանի դեմ: Քաղաքական առումով իր երկարատև պատմության նշանակալից ժամանակահատվածներում Էլամը բաղկացած էր համարյա անկախ թագավորություններից, որոնք արտաքին վտանգի դեպքում ստիպված էին համախմբվել:

Էլամը գտնվում էր Շումերի և Աքքադի մշակույթի ուժեղ ազդեցության ներքո, ինչը վկայված է բազմաթիվ փաստերով:

Իր ուժեղ հարևանների հետ տևական պատերազմների ընթացքում էլամական պետության ուժերը նվազում ու հյուծվում էին: Ի վերջո, այն կորցրեց իր ինքնուրույնությունը: Երկրի քաղաքական թատերաբեմում էլամցիներին փոխարինելու են գալիս մարերը կամ մեդացիները:

Մինչև վերջերս գիտնականների մեծ մասը ենթադրում էր, որ իրանցիների նախահայրենիքը գտնվում էր Միջին Ասիայում և նրա հարակից շրջաններում, և հենց այնտեղից է, որ իրանական ցեղերի մի մասը շարժվել է դեպի իրանական բարձրավանդակ և թափանցել Իրանի տարած-

քը՝ խառնվելով էլամերեն, կասսիտերեն և այլ հնդեվրոպական լեզուներով խոսող բնակչության հետ:

Ներկայումս այդ տարածված վարկածը վերանայման է ենթարկվում բազմաթիվ գիտնականների կողմից, որոնք առաջ են քաշում այն տեսակետը, որ այդ ցեղերն Իրան են շարժվել ոչ թե Միջին Ասիայից, այլ հյուսիսից՝ հավանաբար հարավռուսական տափաստաններից, Կովկասի ու Այսրկովկասի վրայով շարժվելով դեպի Իրանական բարձրավանդակ: Թեև իրանցիների հնագույն պատմությունը քույլ ու անբավարար է արտացոլված գրավոր աղբյուրներում, սակայն արդեն ճշտված է, որ մ.թ.ա. մոտ 2000 և 1500 թթ. միջև ընկած շրջանում Իրանի տարածքում հայտնվեցին իրենց արիացիներ անվանող հնդեվրոպական ցեղեր, որոնք հանդիսանում էին պարսիկների և այլ իրանալեզու ժողովուրդների նախահայրերը:

Առաջին անգամ պարսիկներ անվանումը հիշատակվում է մ.թ.ա. IX դարի ասորեստանյան տեքստերում: Մասնավորապես Սալմանասար Գ. թագավորի՝ մոտավորապես մ.թ.ա. 843 թ. կազմած տեքստում հիշատակվում է Պարսուա (Պարսուաշ, Պարսումաշ) շրջանը, որի 27 «թագավորներից» 834թ. ասորեստանցիները գանձել են տուրքեր: Պատմաբանների և հնագետների համարյա միահամուռ կարծիքով՝ Պարսուայում բնակություն են հաստատել պարսկական ցեղեր, և հենց նրանց անունից էլ այդ շրջանը ստացել է իր անվանումը:

Տվյալներ կան, որ հյուսիսից Իրան մտած իրանական այդ ցեղերը նախապես կենտրոնացել են Ուրմիա լճի շրջանում: Մ.թ.ա IX-VIII դարերում Իրանի մի շարք շրջաններում հին, ոչ իրանալեզու բնակչությունը, քաղաքական առումով դեռևս մնում էր գերակշռող տարր, սակայն, սկսած մ.թ.ա. VIII դարի երկրորդ կեսից, Արևմտյան Իրանի շատ շրջաններում, այդ թվում նաև ապագա Մեդական թագավորության տարածքում և Մեդիայից արևմուտք, իրանցիներն արդեն կազմում էին մեծամասնություն: Մեդացիների պետությունը, իսկ ավելի ուշ՝ Աքեմենյանների թագավորությունը, ծնունդ են առել մի շրջանում, որտեղ գերակշռում էր իրանական էթնիկական տարրը՝ հենց իրանական ցեղերի նախընթաց զարգացման հիմքի վրա: Ուշագրավ է, որ հնագույն հեղինակները՝ Հերոդոտը և Մովսես Խորենացին, գիտեին, որ պարսիկներն ու մեդացիներն արիացիներ են:

Մ.թ.ա II-I հազարամյակների սահմանագծին (մ.թ.ա. մոտ 800 թ.) պարսկական ցեղերը ուրարտացիների և մանների ճնշման ներքո տեղափոխվել են դեպի հարավ՝ Զագրոսյան լեռների հովիտը, իսկ ապա շարժ-

վել հարավ-արևմուտք՝ աստիճանաբար զբաղեցնելով Էլամական տարածքը, որը նոր եկվորների անունով կոչվեց «Պարսումաշ» (այդպես է ասորեստանյան աղբյուրներում), «Պարսա» (հին իրանական աղբյուրներում), «Պերսիդա» (հունական աղբյուրներում)։ Այդ տարածքը հիմնականում համապատասխանում է ներկայիս իրանական Ֆարս նահանգին։ Այդ անվանումը հանդիսանում է Պարսայի արաբականացված ձևը, որը նշանակում է ինչպես պարսիկների երկիրն ու ժողովուրդը, այնպես էլ նրանց մայրաքաղաք Պերսեպոլիսը։ Ինչ վերաբերում է Պարսկաստան անվանը, ապա այն ծագում է Persis, հին պարսկական Persa անվան հունական ձևից։ Պարսուան հիշատակվում է նաև մ.թ.ա IX և VIII դ. ուրարտական տեքստերում Պարշուա ձևով։ Այդ երկրի ժամանակակից պաշտոնական անվանումը՝ «Իրան», առաջին անգամ վկայված է մ.թ.ա. III դ. հունական հեղինակ Էրաթոսֆենի մոտ՝ «Արիանա» ձևով։ Իրանը «Արիանամի» («արիացիների երկիր») կրճատ ձևն է, քանի որ Իրանական բարձրավանդակում ապրող պարսիկներն ու մեդացիները իրենց անվանում էին արիացիներ։ Այսպիսով՝ այն երկիրը, ուր բնակություն հաստատեցին պարսիկները, պատկանում էր էլամցիներին՝ մի ժողովրդի, որը ստեղծել է հնագույն և ինքնատիպ քաղաքակրթություններից մեկը, և որը մեծ ազդեցություն է ունեցել պարսիկների նյութական ու հոգևոր մշակույթի վրա։

Ենթադրվում է, որ իրանական ցեղերի ներթափանցումն իրենց նոր հայրենիքը սկզբնական շրջանում կրել է խաղաղ բնույթ և տեղի է ունեցել էլամական կառավարիչների թույլտվությամբ, որոնք նրանց տրամադրում էին հողեր բնակության համար, իսկ փոխարենը այդ ցեղերը ծառայության մեջ էին մտնում նրանց մոտ՝ որպես հեծյալ ռազմիկներ, քանի որ մինչև իրանցիների գալը բարձրավանդակ՝ Առաջավոր Ասիայում հեծելազոր գոյություն չի ունեցել։ Առհասարակ, մ.թ.ա IX-VIII դդ. իրանական ցեղերը կախման մեջ են եղել Էլամից, Մաննայից, Ասորեստանից և Ուրարտուից։ Սակայն հնարավոր է, որ հետագայում տեղական բնակչության մի մասը ստիպված է եղել իր հողերը զիջել նոր եկվորներին։ Ի դեպ, էլամցիները ցեղակից էին իրենցից արևելք ընկած շրջաններում բնակվող դրավիտական ցեղերին, և այսպիսով, իրենց էթնիկական ծագմամբ, լեզվով ու ավանդույթներով ոչ մի ընդհանուր բան չունեին պարսիկների հետ։ Սակայն Պարսա (Պարսկաստան) երկիրը զբաղեցնում էր լոկ էլամական տարածքի ոչ մեծ մասը, որն իր մեջ ներառում էր ողջ Հարավային Իրանը։

Ահա այսպիսին է գիտնականների մեծ մասի տեսակետը պարսիկների

տեղաշարժի ուղիների վերաբերյալ: Թեև պետք է խոստովանել, որ Իրանում պարսկական ցեղերի տեղաշարժի կոնկրետ ուղիների մասին հարցը դեռևս մնում է որպես վիճելի մի խնդիր: Համենայն դեպս, համարյա բոլոր գիտնականների կողմից ընդունվում է, որ պարսկական ցեղերը մ.թ.ա. IX դ. սկսել են թափանցել Պերսիդա, որը դարձավ նրանց նոր հայրենիքը:

Մեր օրերի գիտնականները սխալ են համարում նաև այն տեսակետը, թե իբր Իրանական բարձրավանդակի հին տեղական բնակչության համեմատ իրանական ցեղերը եղել են հետամնաց: Նրանց կողմից հնամոզիչ փաստերով ցույց է տրվում, որ երբ իրանցիները հայտնվել են այնտեղ, նրանց մոտ արդեն առկա է եղել զարգացած մշակութային և սոցիալ-տնտեսական ավանդույթներ, նրանք զբաղվել են ինչպես անասնապահությամբ, այնպես էլ երկրագործությամբ, լավ ծանոթ են եղել մետաղների հետ, օգտվել են մարտակառքից և զբաղվել ձիաբուծությամբ:

Մ.թ.ա. VIII դ. վերջին Զագրոսյան լեռների շրջանում տեղաբաշխված Պարսումա նահանգում հին պարսիկները հիմնեցին իրենց պետությունը, որը համենայն դեպս մինչև մ.թ.ա. VIII դարի 40-ական թվականները էլամական թագավորներից գտնվում էր կախման մեջ: Էլամական պետության ծաղկումը վերաբերում է մ.թ.ա. XIV-XIII դ: Մ.թ.ա. 1175 թ. Էլամի թագավոր Շութրուք-Նախխունտեն նվաճեց Բաբելոնը՝ հին աշխարհի այդ մեծ քաղաքը: Այստեղ նա հափշտակեց և իր մայրաքաղաք Սուզա տարավ հարուստ ավար, այդ թվում նաև թանկարժեք մի քարակոթող, որի վրա փորագրված էր Համուրապիի օրենքների ժողովածուն: Մ.թ.ա. 1150 թ. հետո Էլամն անկում է ապրում և այլևս չի հիշատակվում աղբյուրներում: Էլամցիներին վիճակված էր երկրորդ անգամ հայտնվել պատմության թատերաբեմում մ.թ.ա. VII դարում, սակայն այս անգամ նրանք հանդես են գալիս որպես ոչ մեծ իշխանությունների մի կոնգլոմերատ: Իր ուժեղ հարևանների հետ տևական պատերազմների ընթացքում էլամական պետության ուժերը նվազում ու հյուծվում էին: Ի վերջո, մ.թ.ա. 636 թ. Ասորեստանի թագավոր Աշշուրբանապալն ավերեց ու կողոպուտի մատնեց Էլամը՝ իր հետ Ասորեստան տանելով նաև էլամական աստվածների արձանները: Դրանից հետո Էլամը որպես անկախ պետություն, դադարեց գոյություն ունենալուց:

Այս իրադարձություններից հետո Պարսումա նահանգում հաստատված հին պարսիկները մի կարճ ժամանակաշրջան դարձան ասորեստանցիների հարկատուն: Այդ ժամանակ նրանք, ըստ երևույթին, կազմում էին ցեղային մի դաշինք, որը գլխավորում էին Պարսուա շրջանում բնակվող պարսկական ուժեղագույն ցեղերից մեկի՝ աքեմենյանների

տոհմի առաջնորդները: Ավանդույթը պարսկական թագավորների հնագույն դինաստիայի հիմնադիր էր համարում Աքեմենին: Նրա գործունեությունը, իհարկե, եթե նա չէր հանդիսանում առասպելական նախահայր, կարելի է վերագրել մ.թ.ա VIII դ. վերջին և VII դ. առաջին քառորդին: Մոտավորապես 675-640 թթ. պարսկական ցեղերի դաշինքը գլխավորում էր Չիշփիշը, որը, համաձայն ավելի ուշ շրջանի ավանդույթի, հանդիսանում էր Աքեմենի որդին:

Վերլուծության ենթարկելով Իրանի հին շրջանի պատմության հարցերը, որոնք առնչվում էին դեմոգրաֆիական խնդիրների հետ՝ կարևոր է նշել, որ այդ երկրում նստակյաց կյանքի հիմնական գիծը օազիսային բնույթն էր և տվյալ վայրի հարաբերականորեն թույլ կապը շրջակա աշխարհի հետ: Գիտնականների կարծիքով (Ռիչարդ Ֆրայ և այլք)՝ աշխարհագրական այդ յուրահատուկ միջավայրը իր խոր դրոշմն է թողել պարսիկ ժողովրդի հոգեկան կերտվածքի և կենցաղի վրա: Օրինակ՝ իրենց ողջ պատմության ընթացքում նրանք ապրել են այնպիսի տների մեջ, որոնք շրջապատված են եղել բարձր պատերով և միշտ ձգտել են պահպանել իրենց ընտանիքների փակ աշխարհը: Պարսիկներին վերագրվող անհատապաշտությունը ևս, ըստ երևույթին, հետևանք է երկրի լանդշաֆտի խիստ բազմազանության ու կտրտվածության: Իրանի օազիսները իրարից անջատված են մեծ ու անբնակ տարածություններով: Դրանք, որպես կանոն, ջրազուրկ կամ սակավաջուր տարածքներ են, որտեղ հողագործությամբ զբաղվելը գործնականում անհնարին է: Այդ տարածքներում կարող են ապրել միայն քոչվորները, որոնք արոտավայրերի փնտրտուքով անընդհատ պետք է շարժվեն մեկ վայրից մյուսը՝ կտրել անցնելով հսկայական տարածություններ: Կոնֆլիկտը քոչվորական կենսաձևի և նստակեցության միջև կարմիր թելի պես անցնում է Իրանի ողջ պատմության միջով: «Հազարամյակների ընթացքում տափաստանն ու նստակեցությունը Իրանում,- նշում է ամերիկացի իրանագետ Ռիչարդ Ֆրայը,- գոյակցել են միմյանց հետ՝ վատ ճանաչելով ու հասկանալով մեկը մյուսին»:

3. ՄԵԴԻԱ (ՄԱՐԱՍՏԱՆ)

Մեդացիները կամ մարերն Իրանական բարձրավանդակ են մուտք գործել մ.թ.ա II հազարամյակի վերջին և I հազարամյակի սկզբին և նախապես հիմնավորվել են հյուսիսարևմտյան Իրանում, որտեղ անասունների և հատկապես ձիերի համար կային հիանալի արոտավայրեր: Սակայն այդ տարածքը չուներ ավանդույթների այնպիսի միասնություն, ինչպես Ֆարսը, և ավելի նվազ չափով, քան Ֆարսը, կարող էր դառնալ հենակետ կենտրոնացված պետական կազմավորման ստեղծման համար, որն ի վիճակի լիներ իր իշխանությունը տարածելու հարևան շրջանների վրա:

Մեդացիների մասին աղբյուրներում առաջին անգամ խոսվում է մ.թ.ա. 834 թ. Սալմանասար Գ-ի՝ դեպի Արևելք կազմակերպած արշավանքի ժամանակ: Մ.թ.ա. IX դարում ասորեստանցիներն արշավանքներ էին կազմակերպում դեպի մեդական տարածքները՝ կողոպուտի և ավար ձեռք բերելու նպատակով: IX դարի ասորեստանյան հուշարձաններում մեդացիները ներկայացվում են որպես միասնական պետական կառույց չունեցող ցրված ցեղեր, որոնք մշտապես պայքար էին մղում միմյանց դեմ, ինչպես նաև այնպիսի պետությունների դեմ, ինչպիսիք էին Ասորեստանը, Ուրարտուն և Մաննան: Ասորեստանյան աղբյուրներում հաղորդվում է «հզոր մեդացիների» երկրում ամրացված քաղաքների և ամրոցների մասին: Դեպի Իրանական բարձրավանդակ իրենց հաճախակի կազմակերպվող արշավանքների ժամանակ Ասորեստանի զորքերը գրավում էին մեդական այդ ամրություններից ու քաղաքներից շատերը: Այդ արշավանքների գլխավոր նպատակներից մեկն էր նաև ասորեստանյան հեծելազորի համար ձիերի ձեռք բերումը, քանի որ Մարաստանը մեծ հռչակ էր վայելում իր ձիերով:

Մ.թ.ա. IX դարի երկրորդ կեսին նկատվում են առանձին մեդական ցեղերի համախմբման ու միավորման փորձեր: Այդ ձգտումը ներքին մղում էր ստանում Ասորեստանի ավերիչ ու կողոպտչական արշավանքներից պաշտպանվելու համար: Մեդիայի տարածքում ցեղային միություններ էին առաջանում նաև մ.թ.ա. VIII-VII դարերում: Դրանցից մեկը վեց ցեղերի միությունն էր, որոնք միավորվել էին Դեյոկի (Դայաուկկու) կողմից, որպես մեդական «ժողովուրդ»: Այդ համադաշնության կենտրոն դարձավ Էկբաթանը (ներկայիս Համադանը): Անտիկ ավան-

դույքը, մասնավորապես Հերոդոտը, Դեյոկի հետ է կապում մարական պետականության սկիզբը: Ի դեպ, հետագայում հենց նա հանդիսացավ նաև ասորեստանյան լծից իր երկրի ազատագրողը:

Մեդական ցեղերի մեկ այլ խոշոր քաղաքական միավորում էր հանդիսանում Կաշթարիթիի (հին պարսկերեն՝ Խշաթրիթա) գլխավորությամբ ստեղծված միավորումը, որի անվան հետ ասորեստանյան աղբյուրները կապում են մեդական պետության հայտնվելը:

Սակայն Մարաստանի տարածքում ծնունդ առած դաշինքների նշանակալից մեծամասնությունը, որպես կանոն, տևական կյանք չէր ունենում: Դա բացատրվում է ոչ միայն նրանով, որ ասորեստանցիների հուժկու հարվածների տակ այդ դաշինքները կործանվում և քայքայվում էին, այլև նրանով, որ մարական շրջանների առանձին տիրակալների միջև, որպես մշտական թշնամանքի հետևանք, տեղի էին ունենում անընդմեջ պատերազմներ: Վրիժառության կրակով վառված այդ տիրակալների մի մասը նույնիսկ չէր խորշում անցնել ոխերիմ թշնամու՝ ասորեստանցիների կողմը՝ իրենց հակառակորդների հետ հաշվեհարդար տեսնելու համար: Դա հնարավորություն էր տալիս Ասորեստանի թագավորներին՝ լայնորեն օգտագործելու «մարերին ընդդեմ մարերի» դավաղիր կարգախոսը:

Սակայն արդեն այն հանգամանքը, որ մարերի մեջ ձևավորվում էին ցեղային միություններ, անկասկած, խոսում է այն մասին, որ մարական ցեղերը չէին հանդիսանում ծավալվող իրադարձությունների սոսկ հասարակ դիտորդներ, այլ իրենց հյուսիսարևմտյան հարևանների՝ մաննեների և ուրարտացիների նման միավորվում էին, որպեսզի ի վիճակի լինեին հակազդելու ասորեստանյան հզոր բանակներին:

Այսպիսով՝ ցրված մարական ցեղերի համախմբման առաջին փորձերը մ.թ.ա. IX-VIII դարերում շոշափելի հաջողություն չունեցան և մշտապես ձախողման էին մատնվում: Նշված շրջանում Մարաստանի ցեղերին հասցվեցին բազմաթիվ դաժան հարվածներ, որոնք մի քանի տասնամյակ շարունակ կասեցրին միասնական Մարական թագավորության կազմավորման գործընթացը: Սակայն ասորեստանցիներին ևս, այնուամենայնիվ, չէր հաջողվում տևականորեն ամրապնդվել մարական տարածքներում:

Ուրարտական պետության թագավորներ Իշպուինի, Մենուայի, Արգիշտի Ա-ի (786-764) և Սարդուր Բ-ի (764-735) մշտական արշավանքները մարերի հարևան Մաննա պետության վրա և ուրարտասորական մշտական ռազմական բախումները չէին կարող բարենպաստ ազդեցու-

թյուն չունենալ մարական «երկրների վրա»: Մարական ցեղային միությունների համար դա հարաբերական հանգստի մի ժամանակաշրջան էր: Երկու ռազմատենչ գիշատիչների՝ Ասորեստանի և Ուրարտուի միջև պայքարը մարական հարցը մղում էր երկրորդ պլան:

Իրերի դրությունն արմատապես փոխվում է Ասորեստանում Թիգլաթպալասար Գ-ի (745-727) իշխանության գլուխ գալուց հետո: Այդ շրջանում նրա հիմնական հակառակորդն ուրարտական թագավոր Սարդուր Բ-ն էր, որը փառասիրություն ուներ իր պետությունը դարձնել համաշխարհային մի տերություն: Վերջինս մտահղացել էր մի վիթխարի ծրագիր՝ մի շարք թշնամական երկրներ ընկճելու կամ ճկուն դիվանագիտությամբ նրանց իր կողմը գրավելու ճանապարհով, ստեղծել մի հզոր պետական միավորում և, ամենակարևորը, իր ոխերիմ թշնամուն՝ Ասորեստանին կտրել Միջերկրական ծովից:

Սակայն Սարդուր Բ-ի ծրագրին վիճակված չէր իրականանալու: Թիգլաթպալասար Գ-ի կողմից մ.թ.ա. 743 և 735 թթ. Ուրարտուին հասցված պարտությունները և հետագա մի շարք նոր հարվածները ձախողեցին ուրարտական թագավորի լայնահուն ծրագրերը: Դրանից օգտվեց Մաննա պետությունը, որը դարձավ այդ ժամանակաշրջանի խոշոր տերություններից մեկը:

Մ.թ.ա 744 թ., կեսդարյա ընդմիջումից հետո, մարերի և մարական շրջանների մասին կրկին հիշատակվում է Թիգլաթպալասար Գ-ի արձանագրություններում: Նշված թվականին Ասորեստանի թագավորը զորք է շարժում մարերի դեմ՝ ենթադրելով, որ ցանկացած պահին նրանք կարող են դառնալ ուրարտացիների դաշնակիցը: Մարական «թագավորներից» շատերը ստիպված էին փախուստի դիմել, իսկ մի մասն էլ գլուխ խոնահեց Ասորեստանի հզոր տիրակալի առջև: Վերջինս գրավեց Մեդիայից արևմուտք ընկած Բիթ-Խամբան շրջանը և, այսպես կոչված, «հզոր մեդացիների» երկրի առաջնորդներին դարձրեց հարկատու: Նրանց երկրում ասորեստանցիները նշանակեցին փոխարքա և կառուցեցին ասորեստանյան աստվածություններին նվիրված տաճար:

Իրենց արշավանքների ժամանակ ասորեստանյան զորքերը հասնում էին մինչև Իրանական բարձրավանդակի կենտրոնը՝ ընդհուպ մինչև Բիկնի լեռը (Դեմավենդը ժամանակակից Թեհրանից ոչ հեռու), մինչև Դաշտե Քեվիր անապատը՝ զավթելով հսկայական քանակությամբ խոշոր և մանր եղջերավոր անասուններ, ձիեր, ուղտեր և տասնյակ հազարավոր գերիներ: Ասորեստանի թագավորը չէր սահմանափակվում լոկ երկրներ կողոպտելով և նրանց բնակչությանը հարկատու

դարձնելով: Հաճախ «հանգստություն» ապահովելու միտումով բազմաթիվ մեդական ընտանիքների բռնագաղթի էր ենթարկում դեպի Ասորիք և այլ երկրներ և այնտեղից Զագրոս տեղափոխում սեմիթական վերաբնակիչների: Թիգլաթպալասար Գ-ն նման հսկայական մի բռնագաղթ կազմակերպեց Մարաստանի դեմ մ.թ.ա. 737 թ. իրականացրած իր հերթական արշավանքի ժամանակ:

Չնայած իրենց չափերով սարսափազդու ջարդերի, որոնք ասորեստանցիների կողմից կազմակերպվում էին նվաճված մարական երկրներում, այնուամենայնիվ, նրանց չէր հաջողվում հիմնավոր կերպով ամրապնդվել այնտեղ, քեև նրանք բազմիցս փորձում էին այդ հողերում հիմնադրել ասորեստանյան փոխարքայություններ:

Մ.թ.ա. 722 թ. Ասորեստանի գահին անցավ Սարգոն Բ-ին (մ.թ.ա. 722-705): Տարված լինելով ռազմաշունչ հեռահար նպատակներով՝ նոր գահակալն սկսեց պատերազմի եռանդուն նախապատրաստություններ տեսնել Ուրարտուի դեմ, որի թագավորներն այդ ժամանակ սերտ բարեկամական կապեր էին պահպանում մեդական և արիական ցեղերի հետ: 716 թ. սկսվեցին ռազմական գործողություններ, որոնց հետևանքով Մեդիան և Ուրմիա լճին հարող Մաննաան Սարգոնի զորքերի կողմից ենթարկվեցին սարսափելի ավերածության, և 715 թ. Դեյոկը (Դայաուկկու) կրեց ջախջախիչ պարտություն: Հաջորդ տարում Սարգոնը կրկնեց իր արշավանքն այդ նույն շրջանները, քանի որ Դեյոկը փորձեր էր կատարում կրկին կազմակերպել և իր շուրջը համախմբել մեդական ցեղերին՝ թշնամուն դիմագրավելու համար: Այս անգամ մարերի առաջնորդը կրեց վերջնական պարտություն և նույնիսկ գերի ընկավ: Նրա նկատմամբ դրսևորելով ասորեստանյան տիրակալներին ոչ հատուկ գթասրտություն՝ Սարգոնը Դեյոկին իր ընտանիքի հետ աքսորեց Ասորիքի կողմերը: Մ.թ.ա. 713 թ. Մարաստանի մի շարք շրջաններ դարձան Սարգոն Բ-ի հարկատուներ և վերածվեցին «լքված ավերակների»: Շուտով ասորեստանցիներն իրենց սահմաններից արևելք ստեղծեցին երեք նահանգներ, որոնցից մեկը կոչվեց «Մադայ» (Մեդիա):

Սարգոն Բ-ն ասորեստանյան վերջին թագավորն էր, որին այնքան ժպտում էր ռազմական բախտը, երբ նա անխնա կողոպուտի էր մատնում և կրակի ճարակ դարձնում հարյուրավոր մարական քաղաքներ և գյուղեր: Ասորեստանի հետագա թագավորների արշավանքները դեպի Մարաստան այլևս իրենց թափով նշանակալից չէին: Ըստ երևույթին, նրանք ավելի շատ կրում էին կանխիչ-նախազգուշական, քան հարձակողական բնույթ:

Ասորեստանցիների աշխարհավեր արշավանքներին դիմադրություն ցույց տալու հրամայականն արագացնում էր մանր մեդական իշխանությունների միավորման անհրաժեշտությունը մեկ միասնական պետության մեջ: Այդ գործում մեդացիներին օգտակար ծառայություն մատուցեց այն հանգամանքը, որ ասորեստանցիները Բաբելոնում և հարևավարևմտյան Իրանում ներգրավվեցին ռազմական գործողությունների մեջ: Դա հնարավորություն տվեց նաև Մարաստանի մի շարք նահանգներին՝ դադարեցնել հարկերի մուծումը Ասորեստանին: Մ.թ.ա. 672 թ., ստանալով ասորեստանցիների դեմ մարտնչող քոչվոր կիմմերների և սկյութների, ինչպես նաև մանների աջակցությունը, մեդացիները ապստամբություն բարձրացրին Ասորեստանի դեմ: Այն գլխավորում էր մարական ցեղերի առաջնորդներից մեկը՝ Կաշքարիթին (հավանական է՝ Դեյոկի որդին): Շուտով Ասարխադոնին հաջողվեց սկյութներին կտրել-հեռացնել ապստամբներից: Հանուն դրա նա չխորշեց նույնիսկ իր աղջկան կնության տալ սկյութների առաջնորդ Պարտատոային: Սակայն, չնայած այդ բոլորին, ի վերջո մեդացիների պայքարն ավարտվեց հաջողությամբ և նույն 672 թ. հանգեցրեց ինքնուրույն մարական պետության ստեղծմանը՝ Կաշքարիթիի գլխավորությամբ: Այդ նորաստեղծ պետությունը սկզբնական շրջանում դեռևս իր մեջ չէր ներառնում մեդական բոլոր շրջանները: Սակայն իր գոյության առաջին իսկ տարիներին այն սկսեց աստիճանաբար միավորել մարական բոլոր ցեղերին՝ բնականաբար վերացնելով մանր իշխանությունները և միաժամանակ իր մերձակա հարևանների նկատմամբ վարելով ռազմաշունչ նվաճողական քաղաքականություն:

Նորաստեղծ պետությունն աճում և ամրապնդվում էր ինչպես արտաքին, այնպես էլ ներքին թշնամիների դեմ պայքարի բոցերի մեջ: Մեդացիները ստիպված էին մշտական պայքար մղել իրենց հարևանների՝ արևելքում՝ քոչվորական ցեղերի, արևմուտքում՝ Ասորեստանի, Ուրարտուի և այլ պետությունների դեմ: Արդեն մ.թ.ա. VII-րդ դարի կեսերին Մեդիան դարձավ, Էլամի, Ասորեստանի, Ուրարտուի և Մաննայի հետ միաժամանակ, հին արևելյան խոշոր պետություն:

Մ.թ.ա. 653 թ. Մարական թագավոր Խշաթրիթաև կամ, ըստ Հերոդոտի, Ֆրաորթը (մ.թ.ա. 675-653 թթ.) արշավանք կազմակերպեց Ասորեստանի դեմ: Այդ արշավանքի ժամանակ Ֆրաորթը սպանվեց՝ թագավորելով 22 տարի: Այդ նույն ժամանակ Ասորեստանի դաշնակից սկյութները (հայկական աղբյուրներում՝ սաքեր), որոնք դեռևս մ.թ.ա. VIII դարում հարավ-ռուսական տափաստաններից Կովկասյան լեռնաշղթայի վրա-

յով թափանցել էին Իրանական բարձրավանդակի հյուսիսային շրջանները, հարձակվեցին մեդացիների վրա: Ի վիճակի չլինելով միաժամանակ կռվել երկու ճակատներով՝ մեդացիները կրում են պարտություն: Մ.թ.ա. 653-624 թթ., այսինքն՝ 28 տարի, Մարաստանում հաստատվում է սկյութների տիրապետություն:

Գոյություն ունի վարկած այն մասին, որ ասորեստանցիները հնարավորություն էին տվել իրենց դաշնակից սկյութներին կողոպտելու Մարաստանը և չէին խառնվում սկյութների ու մեդացիների միջև տեղի ունեցող իրադարձություններին:

Չնայած սկյութների կողոպուտներին և բռնություններին (որոնց մասին պատմում է Հերոդոտը), նրանց իշխանությունը Մարաստանում, ըստ երևույթին, բավականաչափ ամուր չէր: Սկյութները բավարարվում էին հարկեր հավաքելով և մտադիր չէին խարխլել Մեդական պետության հիմքերը: Հակառակ դեպքում դժվար է բացատրել Կիաքսար Բ-ի կառավարման շրջանում Մելիայի հզորության այդքան արագ վերելքը:

Մարաստանում Կիաքսարն իշխանության գլուխ եկավ այն ժամանակ, երբ իրենց անսանձ բռնություններով ու վայրագությամբ սկյութները քայքայել ու ամայացրել էին ողջ Ասիան, սակայն արդեն բավականաչափ վատնել էին իրենց ուժերը և վաստակել իրենց նվաճած ժողովուրդների զայրույթն ու ատելությունը: Ըստ երևույթին, հենց դրանից էլ օգտվեց Կիաքսարը (մարերեն Խուվախշտրա, մ.թ.ա. 624-585 թթ.), որը Խշաթրիթա-Ֆրաորթի որդին էր (հին հայկական էպոսում նա հանդես է գալիս Աժդահակ անվամբ): Նա պայքար սկսեց սկյութների դեմ՝ Մարաստանը նրանց ճնշող լծից ազատագրելու համար:

Ի դեմս Կիաքսարի՝ Մեդական գահի վրա նստել էր մի օժտված, եռանդուն ու քաջ անհատականություն, որը վստահ հայացքով էր նայում դեպի ապագան և հեռահար ծրագրեր էր մշակում իր պետության հզորացման ու ընդարձակման ուղղությամբ: Իշխանության գլուխ գալով անբարենպաստ պայմաններում, բոլոր կողմերից շրջապատված լինելով քոչվոր բարբարոսների հորդաներով՝ Կիաքսարը նախ և առաջ զբաղվեց իր բանակի վերակառուցմամբ: Նա ստեղծեց Մարաստանի պատմության մեջ առաջին կանոնավոր բանակը, որը փոխարինելու եկավ ցեղային սկզբունքով կազմված նախկին աշխարհազորին: Այն բաղկացած էր նիզակակիրներից, նետաձիգներից և հեծելազորից: Այդ նորաստեղծ բանակը կոչված էր ոչ միայն մարական պետությունը պաշտպանել թշնամիներից, այլև անցնել հարձակողական-նվաճողական քաղաքականության:

Մ.թ.ա. 624 թ. Կիաքսարը պարտության մատնեց սկյութներին և մ.թ.ա. VII դարի առաջին տասնամյակներին բոլոր մարական ցեղերին վերջնականապես միավորեց մեկ միասնական պետության մեջ, որի մայրաքաղաքը դարձավ Էկբաթանը (ներկայիս Համադանը):

Սկյութների նկատմամբ տարած հաղթանակը նպաստեց Մարաստանի վերածմանը Հին Արևելքի կարևորագույն քաղաքական գործոններից մեկի: Արդեն մ.թ.ա. VII դարի կեսերին Մեդիան դարձավ խոշոր պետություն: Մեդացիները ստիպված էին մշտական պայքար մղել իրենց հարևանների՝ արևելքում՝ քոչվորական ցեղերի, արևմուտքում՝ Ասորեստանի, Ուրարտուի և հին արևելյան այլ պետությունների դեմ: Հենվելով իր վերակազմակերպված բանակի մարտական հզորության վրա, որի կազմի մեջ ընդգրկվել էին նաև սկյութական ջոկատներ՝ Կիաքսարը հաջողությամբ շարունակեց իր նախորդների կողմից սկսված գործը՝ պայքարն Ասորեստանի դեմ:

Մ.թ.ա. VII դ. 30-20-ական թվականներին միջազգային իրադրությունը փոփոխության է ենթարկվում ոչ հօգուտ Ասորեստանի: Վերջին ասորական հզոր արքա Աշշուրբանապալի մահվանից հետո սկսում են բարձրանալ քաղդեացիները, որոնք վաղուց ի վեր ձգտում էին տիրել Բաբելոնին: Քաղդեացիների ռազմաշունչ սեմիթական ջոկատները շուտով, նվաճելով ողջ Բաբելոնը և այդ տարածքում մ.թ.ա. 626 թ. ստեղծելով իրենց պետությունը, որը պատմության մեջ հայտնի է Նոր Բաբելոնական կամ Քաղդեական պետություն անունով, սկսեցին շարժվել հյուսիսային ուղղությամբ:

Այդ ժամանակ աճում էր նաև հնազանդեցված և ընկճված ժողովուրդների դժգոհությունը. գնալով մթնոլորտն ավելի ու ավելի էր շիկանում:

Ասորեստանի համար ստեղծված դժվարին իրադրությունից որոշեց օգտվել Բաբելոնի թագավոր Նաբուպալասարը, որպեսզի վերջ տա երկու հակառակորդների միջև ձգձգվող վաղեմի վեճին: Մ.թ.ա. 616 թ. սկսելով պատերազմ՝ նա ուժգին պարտության մատնեց ասորեստանցիներին:

Հենց այդ նույն ժամանակ (մ.թ.ա. 616-615 թթ.) Կիաքսարը գրավում է ամբողջ Մաննան և միացնում Մեդական պետությանը: Այնուհետև մեդական զորքերն անցնում են Զագրոսը և հյուսիսից մոտենում են Աշշուրին ու պաշարում այն: Մ.թ.ա. 614 թ. Ասորեստանի կրոնական և մշակութային այդ հնագույն կենտրոնն ընկնում է: Մարերը կողոպտում և ավերում են քաղաքը, իսկ բնակիչներին սրի քաշում: Երբ ճակատամարտն ավարտվում է, և Աշշուրից մնում են լոկ ծխացող ավերակներ, իր զորքերով քաղաք է մտնում Բաբելոնի թագավոր Նաբուպալասարը: Մ.թ.ա.

614 թ. Աշշուրի փլատակների վրա տեղի է ունենում Կիաքսարի և Նաբուպալասարի հանդիպումը, որի ժամանակ կնքվում է «Բարեկամության դաշինք»: Այն ամրակայվում է Նաբուպալասարի որդի արքայազն Նաբուգոդոնոսորի և մարաց արքայադուստր Ամիթիդայի ամուսնությամբ:

Համաձայն հունական աղբյուրների՝ Նաբուգոդոնոսորը Բաբելոնի իր պալատի հետնամասի դարավանդների վրա, որոնք ունեին բնական բլուրների տեսք, կառուցում է նշանավոր «կախված այգիները», որոնք, նման լինելով Մարաստանի լեռնային այգիներին, փարատելու էին Ամիթիդայի կարոտը հարազատ բնության ու հայրենի եզերքի նկատմամբ: Ի դեպ, հնագիտական պեղումները հաստատում են հունական աղբյուրների հաղորդած այս տեղեկությունները:

Աշշուրի անկումը հիմքից ցնցեց Ասորեստանյան պետությունը, և քանի դեռ հաղթողները զբաղված էին հարուստ ավարը բաժանելով, ասորեստանցիները կարողացան հավաքել իրենց ուժերը: Մ.թ.ա. 613 թ. ասորեստանյան զորքերը Սինշարիշկունի գլխավորությամբ Եփրատի հովտում շարունակեցին ռազմական գործողությունները և նույնիսկ կարողացան պարտության մատնել բաբելոնացիներին:

Սակայն «Բարեկամության դաշինքի» կնքումից հետո, դառնալով այդ դաշինքի ղեկավար և գերիշխող ուժ, Մեդական պետությունը ձեռնամուխ է լինում Ասորեստանի ջախջախմանը: Մ.թ.ա. 612 թ. մեդական և բաբելոնական բանակները կենտրոնանում են Ասորեստանի արյունոտ մայրաքաղաք Նինվեի մոտ: Նույն թվականի հունիսից մինչև օգոստոս ամիսները ընկած շրջանում դաշնակից զորքերի և ասորեստանցիների միջև տեղի են ունենում երեք ճակատամարտեր, որոնցից վերջինը որոշում է քաղաքի ճակատագիրը: Քաղաքն արհեստական ջրհեղեղի մատնելուց և կատաղի գրոհից հետո մեդացիներն ու բաբելոնացիները ներխուժում են Նինվե և կործանում ու ոչնչացնում հին աշխարհի այդ նշանավոր քաղաքը, իսկ նրա բնակիչներին անխնա սրի քաշում: Ասորեստանի թագավոր Սինշարիշկունը, Աշշուրբանապալի որդին, իրեն նետում է այրվող պալատի բոցերի մեջ: Երկու հարյուր տարի հետո ոչ ոք այլևս չէր կարող ասել, թե որտեղ էր գտնվում Նինվեն: Ընկավ այդ «մեծ քաղաքը», որի տարածքը «հետիոտնի երեք օրվա կտրելու ճանապարհ էր», և, Հովհան Մարգարեի խոսքերով, այնտեղ ապրում էր «ավելի քան հարյուր քսան հազար մարդ, որը չէր կարող աջ ձեռքը տարբերել ձախից, և կային բազմաթիվ անասուններ»:

Հիրավի, մեծ էր ժողովուրդների ցնծությունը Նինվեի՝ այդ «անառակի» և «առյուծների որջի» անկման առթիվ:

Մ.թ.ա. 610 թ. մարերի մասնակցությամբ նվաճվում է նաև Ասորիքում գտնվող Ասորեստանի կարևորագույն հենակետը՝ Խառան քաղաքը: Այստեղ մեդացիները կողոպուտի են մատնում Էխուլխուլի տաճարը, որը հանդիսանում էր Լուսնի աստծո սրբավայրը: Իսկ մ.թ.ա. 605թ., չնայած եգիպտական զորքերի գործուն օգնությանը, ընկնում է ասորեստանցիների վերջին հանգրվանը՝ քաղաք-ամրոց Կարքեմիշը:

Այսպիսով՝ առհավետ վերջ է տրվում հին աշխարհի հզորագույն պետություններից մեկի՝ Ասորեստանի գոյությանը, որը տևական ժամանակամիջոցի ընթացքում անմարդկային կերպով կողոպտում ու ոչնչացնում էր Հին Արևելքի ժողովուրդներին: Կասկածից վեր է, որ Ասորեստանի կործանման մեջ, ըստ էության, հիմնական դերը պատկանում էր մարերին: Ասորեստանյան պետության ջախջախումից հետո մարերը գրավեցին Փոքր Ասիայի արևելյան մասը, ինչպես նաև բուն Ասորեստանի տարածքը, այսինքն՝ Հյուսիսային Միջագետքը: Ըստ պատմահայր Մովսես Խորենացու, Ասորեստանի ջախջախման գործում մարերին օգնել է հայոց թագավոր Պարույրը՝ Սկայորդու որդին: Առհասարակ, աղբյուրների վկայությամբ, մեդացիների նվաճումներում, իբրև նրանց դաշնակիցներ, հանդես են եկել նաև հայերը: Կարծիք կա, որ Նինվեի ավերումից և ասորեստանյան պետության կործանումից հետո, Կիաքսարը իրեն ցույց տրված օգնության համար Պարույրին ճանաչել է Հայաստանի կամ Արմե-Շուպրիա երկրի թագավոր: Գիտության մեջ հայտնվել է նաև այն կարծիքը, որ մեդական թագավորների քաղաքականությունը նպաստում էր հայ էթնոսի տարածմանը Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում: Ապացուցված է նաև, որ մեդական պետությանը հաջողվում էր հեռավոր սահմանային տարածքները պահել իր իշխանության տակ դաշնակից հայերի օգնությամբ:

Հետագայում հզորացած Մեդիան ձգտում էր կեղեքել իր երեկվա դաշնակիցներին: Մասնավորապես փոխվեց մարական պետության բարեկամական դիրքորոշումը Հայոց թագավորության նկատմամբ, որն իր գոյությամբ պատնեշում էր մարերի առաջխաղացումը դեպի Փոքր Ասիա՝ դրանով իսկ կասեցնելով նրանց ծավալապաշտական ձգտումները:

Մ.թ.ա. VI դարի սկզբներին մեդացիները հարձակվեցին Ուրարտուի վրա և հիմնովին կործանելով նրա Տուշպա մայրաքաղաքը՝ Ուրարտուի թագավորությունը հպատակեցրին իրենց: Քսենոփոնի «Կյուրոպեդիայում» պահպանված տեղեկություններից իմանում ենք, որ մեդական թագավոր Աստիագեսի (մ.թ.ա. 584-553 թթ.) ժամանակ հայերը եղել են մարերի հարևանները, իսկ հայերի երկիրը՝ Արմենիան, Մարաստանից

կախյալ երկիր էր: Հայերն իրենց զորքերով մասնակցում էին մեդական թագավորների ռազմական արշավանքներին:

Մեղիայի մղած պատերազմների ժամանակ հայ թագավորը պարտավոր էր մարերի թագավորին տրամադրել իր զինվորական ուժի կեսը, այսինքն՝ 20.000 հետևազոր և 4.000 հեծելազոր: Հայոց թագավորը՝ իբրև մեդական թագավորի «կրտսեր դաշնակից», նրան հարկ էր վճարում 50 տաղանդի չափով: Այս շրջանում հայերի և մեդացիների համագործակցությունն առաջին հերթին ուղղված էր Ասորեստանի դեմ: Մեդացիների հետ միասին ռազմաստրատեգիական որոշ կետերում տեղակայված էին նաև հայկական կայազորներ: Նույն «Կյուրոպեդիայից» տեղեկանում ենք նաև, որ չհանդուրժելով մարական լուծը՝ հայոց թագավորն ապստամբել է ու պատերազմի դուրս եկել Ասորեստանի դեմ, սակայն, պարտություն կրելով պարտավորվել է հարկատու լինել, չկառուցել ամրություններ, ինչպես նաև առաջին իսկ պահանջով տրամադրել իր զորքը:

Մեդացիների կողմից Ասորեստանի նկատմամբ տարված հաղթանակը Մարաստանը վերածեց Առաջավորասիական Հին Արևելքի մեծ պետության: Ջախջախելով Ասորեստանի թագավորությունը՝ Կիաքսարն իր դաշնակցի՝ Բաբելոնի թագավորի հետ բաժանեց նվաճված հողերը. հյուսիսը բաժին հասավ Մեդիային, իսկ հարավը՝ Բաբելոնին: Վերջինս, սակայն, երկյուղով էր հետևում իր հյուսիսարևելյան հարևանի օրըստօրե հզորացմանը:

Մ.թ.ա. VII դարի վերջը և VI դարի սկիզբը հանդիսանում է մեդական պետության առավելագույն հզորության շրջանը: Կիաքսարը, որին Էսքիլեսն անվանում է «Ասիայի նկատմամբ տիրակալության հիմնադիր», իր գերիշխանության ներքո միավորեց մի վիթխարի տարածք: Ասորեստանի նկատմամբ տարած փայլուն հաղթանակից հետո նա նվաճեց Էլամը, որի վրայով մարերը դուրս եկան Պարսից ծոց: Այսպիսով՝ այդ տարածաշրջանի քաղաքական թատերաբեմում՝ որպես առաջատար ուժ, էլամցիներին փոխարինելու եկան իրենք՝ մեդացիները: Հյուսիսարևելքում՝ Ամու-Դարյա գետից մինչև հարավ՝ Պարսից ծոց, ընդգրկվեց մեդական թագավորության կազմի մեջ: Մարերը գրավեցին նաև ողջ Ատրպատականը և Հիրկանիան: Մ.թ.ա. մոտ 590 թ. Կիաքսարը Մեդիային միացրեց Մաննան: Մարերին անցան ողջ Հյուսիսային Միջագետքը և Ասորիքի Խառան նահանգը: Արևմուտքում մարերը ցանկանում էին գրավել ողջ Փոքր Ասիան: Այստեղ մ.թ.ա. 589-585 թ. մեդական պետությունը բախման մեջ մտավ փոքրասիական հզոր Լյուդիա տերության հետ, որը մարերին ցույց տվեց համառ դիմադրություն: Պատերազմը

կողմերի միջև շարունակվեց հինգ տարի, սակայն ոչ մեկին չէր հաջողվում ձեռք բերել վճռական հաղթանակ: Երկու մեծ թագավորությունների միջև մեծ ճակատամարտ տեղի ունեցավ Հալիս գետի մոտ: Սակայն արևի խավարման պատճառով (մ.թ.ա. 585 թ. մայիսի 28-ին), որը կովող կողմերը համարեցին վատ նախանշան, ճակատամարտն ընդհատվեց, և Կիլիկիայի ու Բաբելոնիայի թագավորների միջնորդությամբ կնքվեց հաշտություն, որի համաձայն՝ Մեդիայի և Լյուդիայի սահման դարձավ Հալիս գետը (ներկայիս Կըզըլ-Իրմաք): Կողմերի միջև դաշինքն ամրապնդելու նպատակով Լյուդիայի թագավոր Ալիաթթի աղջիկը՝ Արիենիան կնության տրվեց Կիաքսարի որդի Աստիագեսին:

Մ.թ.ա. VI դարի սկզբին մարերը հնազանդեցրին իրանական ցեղերի հարավային ճյուղը հանդիսացող պարսու կամ պարսուա ցեղերին, որոնք բնակվում էին իրանական բարձրավանդակի հարավ-արևմուտքում՝ Պարսքում: Այնուհետև նրանք նվաճեցին Պարթևստանը և դրանով իսկ իրենց գերիշխանության ներքո միավորեցին ողջ Իրանի տարածքը: Մարերին հաջողվեց իրենց իշխանությանը ենթարկել նաև Ուրարտուն՝ հավանաբար նախապես գրավելով Վանա լճի մոտ գտնվող նրա Տուշպա մայրաքաղաքը: Այն բանից հետո, երբ Մարաստանը տիրեց Արաքսի հովտում և Միջագետքում գտնված հաղորդակցության ուղիներին, հայոց թագավորը ստիպված էր ճանաչել մեդական թագավորի գերիշխանությունը: Հայկական էպոսում և բանահյուսության մեջ արտահայտություն է գտել «վիշապազուն» մար Աժդահակի դեմ ուղղված այն պայքարը, որ մղում էին Երվանդ Սակավակյացը և նրա որդի Տիգրանը:

Այսպիսով, երբ մ.թ.ա. 584 թ. Կիաքսար թագավորը մահացավ, որպես ժառանգություն նա իր որդի Աստիագեսին (մ.թ.ա. 585-550 թթ.) թողեց մի հզոր պետություն: Ըստ էության, ողջ Մերձավոր Արևելքում մնացին երեք հզորագույն պետություններ՝ Մեդիան, Բաբելոնը և Եգիպտոսը:

Սակայն հետագայում սկսվում է մարական պետության ճգնաժամն ու թուլացումը: Դրա կարևորագույն պատճառներից մեկն այն էր, որ մեդական թագավորությունը կենտրոնացած ու միասնական պետություն չէր, այլ պարզապես իրենից ներկայացնում էր նվաճված ցեղերի ու երկրների մի համադաշնություն: Այդ տերությունը կազմված էր սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր մակարդակի վրա գտնվող ժողովուրդներից ու ցեղերից, որոնց միջև միասնություն գոյություն չուներ: Հետևաբար՝ այդ պետությունը խարսխված չէր կայուն հիմքերի վրա: Մարական պետության պատմության հատկապես վերջին շրջանում նրա թուլացմանը նպաստեցին նաև թագավորի և ազնվականության

միջև դրսևորվող հակասությունները: Պետության անկումն արագացվեց նաև մի շարք արտաքին հանգամանքների շնորհիվ:

Եվ այսպես, այն ամենը, ինչ մարերի կողմից ձեռք էր բերվել Կիաքսարի ժամանակ, պետք է փլուզվեր նրա ժառանգորդների օրոք: Հատկապես Աստիագեսի կառավարման շրջանում Մեդիան իր հաղթական ուղին ավարտեց մեծագույն աղետով: Սովորաբար անտիկ հեղինակները, օրինակ՝ Հերոդոտը, մարերի տերության կործանման պատճառը համարում են Աստիագեսի դաժանությունները և նրա անհաշտ թշնամանքը մարական պալատականներից մեկի՝ Գարփակի հետ: Մի շարք այլ պատմիչներ ևս, չկարողանալով բացահայտել Մեդական տերության կործանման հիմնական պատճառները, ամեն ինչ հանգեցնում են Աստիագեսի «դաժանությանը» և կամ «ոչ ռազմաշունչ խառնվածքին», նրա «նենգ ու դավադիր ոգուն», «անգործունեությանը» և այլն:

Դժբախտաբար, առ այսօր գիտությունն իր տրամադրության տակ դեռևս չունի որոշակի տվյալներ մեդական հասարակության սոցիալական ու պետական կառուցվածքի ուսումնասիրության համար: Հավաստի հայտնի է միայն, որ մեդական ցեղերը հիմնականում զբաղված էին անասնապահությամբ, թեև երկրի մի շարք շրջաններում զարգացում էր ստացել նաև երկրագործությունը:

Ինչ վերաբերում է մեդական թագավորության մշակույթին, ապա, անկասկած, մ.թ.ա. VII դարում և VI դ. առաջին կեսին Մարաստանը հանդիսանում էր իրանական նյութական ու հոգևոր մշակույթի կենտրոն, որը հետագայում ժառանգեցին ու զարգացրին պարսիկները: Մեդական դարաշրջանի հնագիտական հուշարձանների պեղումները դեռ նոր-նոր են սկսվել: Դրանք, XX դարի 70-ական թվականներից սկսած, իրականացնում էր Հնագիտական պեղումների իրանական կենտրոնը:

4. ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ: ԿՅՈՒՐՈՍ

Մ.թ.ա. VIII դ. վերջին Պարսումաշ նահանգում (Զագրոսյան լեռների շրջանում) հին պարսիկները հիմնեցին իրենց առաջին խոշոր պետական կազմավորումը: Այդ ժամանակ նրանք, ըստ երևույթին, կազմում էին ցեղային մի դաշինք, որը գլխավորում էին Աքեմենյանների տոհմի առաջնորդները: Այդ տոհմի հիմնադիր է համարվում Խախամանիշ պարսկական ցեղերի առաջնորդներից մեկը՝ Աքեմենը (հունարեն Ախեմեն): Ախեմենի ուղղակի ժառանգորդներն էին Չիշփիշը (հունարեն Թեիսպ), Կյուրոս Ա-ն, Քամբիզ Ա-ն և Կյուրոս Բ Մեծը, որոնք կոչվում էին Անշանի թագավորներ:

Ինչպես նշվեց, մ.թ.ա. 558 թ. Պերսիս երկրի (Պարսք) թագավոր դարձավ Կյուրոս Բ-ն(պարսկերեն՝ Կուրուշ): Իր գահակալության առթիվ Փասարգադում, որտեղից սերել էր իր տոհմը, նա հրամայեց ժայռաբեկորի վրա կերտել իր բարձրաքանդակը, որին կից գտնվող արձանագրության մեջ նա իրեն անվանում է «Աքեմենյանների մեծ արքա»: Նախապես Կյուրոսը հանդիսանում էր Մարաստանի թագավոր Աստիագեսի զորապետներից: Հենց նա էր, որ ճնշեց Հայաստանում բռնկած ապստամբությունը մարերի դեմ:

Սակայն շուտով՝ մ.թ.ա. 553 թ., Կյուրոսը ինքն է ապստամբում Աստիագեսի դեմ, որից պարսիկները գտնվում էին վասալական կախման մեջ: Եռամյա պայքարի ընթացքում Կյուրոսը կործանում է մարական պետությունը, ծերունի Աստիագեսին գերի վերցնում և գրավում նրա մայրաքաղաք Էկբաթանը: Այդպիսով՝ Կյուրոս Բ. Մեծը (մ.թ.ա. 550-530 թթ.) դառնում է հին պարսկական պետության հիմնադիր, որը ստացավ Աքեմենյան տերություն անվանումը:

Դրանով, ըստ Հերոդոտի, ավարտվում է Աստիագեսի երեսունհնգամյա կառավարումը և Ասիայում մեդացիների հարյուրքսանութամյա տիրապետությունը: Մարաստանը նվաճելու ժամանակաշրջանից սկսած, Պարսկաստանը, որը մինչ այդ քիչ հայտնի, ծայրամասային մի նահանգ էր, մուտք է գործում համաշխարհային պատմության լայն ասպարեզ, որպեսզի հետագա երկու հարյուրամյակների ընթացքում նրանում խաղա քաղաքական առումով առաջատար դեր:

Ի դեպ, հենց այդ ժամանակ էլ, օգտվելով ստեղծված բարենպաստ


BLACK SEA
CASPIAN SEA
ARAL SEA
JAXARTES R.
OXUS R.
Sardis
Merv
TIGRIS R.
EUPHRATES R.
MEDITERRANEAN SEA
Jerusalem
Babylon
Persepolis
Persia
PERSIAN GULF
RED SEA
NILE R.
ACHAEMENIAN EMPIRE
AT ITS HEIGHT

իրաղրությունից, Տիգրանը, հենվելով իր հետ մտերիմ կապերի մեջ գտնվող և որսակից ընկեր Կյուրոսի վրա, ելնում է Աժդահակի դեմ, սպանում է նրան և Հայաստանն ազատագրում մարերի գերիշխանությունից: Այդպիսով՝ Հայաստանն անջատվում է Մարաստանից: Վկայակոչելով հայկական էպոսը՝ Մովսես Խորենացին հաղորդում է, որ հայոց արքայազն Տիգրանը «Կյուրոսին աջակից եղավ մարաց իշխանությունը տապալելու»:

Աքեմենյան պետությունը դարձավ մարական տերության մշակութային ժառանգորդը: Նոր պետության մեջ մեդացիները, պարսիկների հետ համատեղ, օգտվում էին կարևոր դիրքերից: Պարսիկները մեդացիներից փոխ առան նրանց պետական կառավարման համակարգը: Աքեմենյան պետության մեջ Մարաստանը բուն Պարսկաստանից հետո իր կարևորությամբ գտնվում էր երկրորդ տեղում: Նոր պետության մայրաքաղաք դարձավ մարերի նախկին մայրաքաղաք Էկբաթանը (ներկայումս՝ Համադան), որի շուրջը յոթ շարքով կառուցվեցին պատեր, և քաղաքը ամրացվեց ու վերածվեց անմատչելի ամրոցի: Մինչև մայրաքաղաքի Էկբաթան տեղափոխումը թագավորական նստավայրեր էին հանդիսանում Փասարգադա և Պերսեպոլիս քաղաքները:

Կյուրոսը ձեռնամուխ եղավ բանակի ստեղծմանը, որը կազմված էր հեծելազորից ու հետևակից, որոնց գրոհն անկասելի էր:

Պարսկական բանակները պարտություն չգիտեին և մեկ դարից ավելի հանդիսանում էին Մերձավոր Արևելքի սարսափը: Կյուրոսի ստեղծած բանակն իր մարտական հատկանիշներով գերազանցում էր իր ժամանակի հին արևելյան բոլոր բանակներին: Բանակի վերակառուցման համար Կյուրոսը միջոցներ չէր խնայում: Փոքր Ասիան նվաճելուց հետո նա ընդօրինակեց այնտեղ առկա նոր և առաջավոր ռազմական տեխնիկան:

Հենվելով նորաստեղծ զորքերի վրա՝ Կյուրոսը ձեռնամուխ եղավ նվաճողական լայն քաղաքականության իրականացման: Մ.թ.ա. 549-548 թթ. պարսիկները զենքի ուժով և ճկուն դիվանագիտությամբ իրենց ենթարկեցին այն երկրները, որոնք մտնում էին նախկին մեդական պետության կազմի մեջ: Դրանք էին Պարթևստանը և Հիրկանիան: Այնուհետև, ներխուժելով Փոքր Ասիա, մ.թ.ա. 546 թ. պարսկական զորքերը գրավեցին Լյուդիան (Լիգիա), որն այդ ժամանակ Բաբելոնի և Եգիպտոսի հետ համատեղ հանդիսանում էր Մերձավոր Արևելքի խոշորագույն պետություններից մեկը: Այդպիսով՝ Կյուրոսը նվաճեց Փոքր Ասիան՝ մինչև Էգեյան ծովը: Ի դեպ, Լյուդիայի մայրաքաղաք Սարդին գրավելիս պարսիկները գերի վերցրին լյուդիական Կրասոս թագավորին, որն

առասպելական չափերի հասնող հարստությունների տեր էր: Հենց Լիգիական արշավանքի նախօրեին՝ հավանաբար մ.թ.ա. 546 թ., Կյուրոսը մտավ Հայաստան, որպեսզի նրա նվաճումով ապահովի դեպի Փոքր Ասիայի արևմտյան շրջաններ արշավող բանակի թիկունքը:

Մ.թ.ա. 545-539 թթ. ընկած շրջանում Կյուրոսը նվաճեց և Աքեմենյան պետությանը ենթարկեց վիթխարի տարածքներ. Դրանգիանան, Մարգիանան, Խորեզմը, Սողդիանան, Բակտրիան, Արեյան, Գեդրոսիան, Սատտագիդիան, Արախոսիան, Գանդհարան, հնազանդեցրեց միջինասիական սաքերին և այլն: Այսպիսով՝ պարսկական տիրապետությունը տարածվեց ընդհուպ մինչև Հնդկաստանի հյուսիս արևմտյան սահմանները, Յաքսարդ (Սիր-Դարյա) և Հինդոս գետերի հովիտները, Հինդուկուշի հարավային ստորոտները: Ցեղային առաջնորդները և ոչ մեծ շրջանների «թագավորիկները» դառնում էին Կյուրոսի հպատակներն ու «դաշնակիցները»: Հյուսիսարևելյան ուղղությամբ հասնելով իր նվաճումների ամենահեռավոր սահմաններին՝ Կյուրոսը վճռեց իր հայացքն ուղղել դեպի արևմուտք: Արևմուտքում Հալիս գետով անցնող սահմանը Կյուրոսին թվում էր շատ նեղ, և նրա նվաճողական մտքերը գնում էին անհամեմատ ավելի հեռու:

Մ.թ.ա. 539 թ. աշնանը պարսիկները նվաճեցին նաև Բաբելոնական թագավորությունը: Կյուրոսը դա իրականացրեց մեծագույն շրջահայեցությամբ: Նա աստիճանաբար շրջապատում էր այն՝ խզելով նրա կապերը արևմտյան նահանգների հետ և կտրելով նրա՝ կենսական նշանակություն ունեցող ռազմական և առևտրական ճանապարհները: Բաբելոնի առևտրական տների ու դրամատների, ինչպես նաև տաճարների եկամուտները, որոնք նախկինում կազմում էին խոշոր գումարներ, կտրուկ անկում ապրեցին: Դա առաջ բերեց քրմական և առևտրական շրջանների դժգոհությունը:

Բաբելոնի թագավոր Նաբոնիտից բոլոր դժգոհները համախմբվեցին մի կուսակցության մեջ, որը հակված էր համաձայնության մեջ մտնել պարսիկների հետ: Նրանց հետ փրկության հույսեր էին կապում նաև Պաղեստինից Նաբուգոդոնոսոր Բ թագավորի կողմից մ.թ.ա. 597 թ. տարագրված և «բաբելոնական գերության մեջ» գտնվող հուդայականները, Փյունիկայի և ծովափնյա Սիրիայի բնակիչները և այլն: Կյուրոսը փայլուն կերպով օգտվեց Բաբելոնում առկա այդ տրամադրություններից:

Նվաճելով Բաբելոնը՝ Կյուրոսը ձևականորեն պահպանեց նրա թագավորությունը՝ փոփոխություններ չմտցնելով նաև նրա սոցիալական կառուցվածքի մեջ: Աքեմենյան առաջին տիրակալը վարում էր նաև կրո-

նական հանդուրժողականության քաղաքականություն: Նա հովանավորեց Բաբելոնի հնագույն կուլտերը և աշխատում էր հաշտ ու խաղաղ լինել քրմության ու բարձր խավերի ներկայացուցիչների հետ: Հին, սրբազան արարողությունների համաձայն՝ Բաբելոնի թագավորությունը նրան հանձնվեց Մարդուկ աստծո ձեռքերով, և Կյուրոսը ստացավ «Բաբելոնի թագավոր, երկրների արքա» տիտղոսը: Նա Բաբելոնը վերածեց աքեմենյանների թագավորական նստավայրերից մեկի:

Պետք է նշել, որ Կյուրոսի վարած քաղաքականությունը պետական մեծ գործչի քաղաքականություն էր: Նման քաղաքականություն նա իրականացնում էր նաև Պաղեստինի և Փյունիկիայի քաղաքներում՝ հետապնդելով հեռահար նպատակներ. նրանք բոլորը պետք է դառնային իր դաշնակիցները՝ Եգիպտոսի դեմ ապագա պատերազմում:

Բաբելոնի նվաճումից հետո արևմտյան բոլոր երկրները, մինչև Եգիպտոսի սահմանները (Սիրիա, Պաղեստին, Փյունիկիա), կամավոր կերպով ենթարկվեցին պարսիկներին: Կյուրոսը հրեաներին ազատեց բաբելոնական գերությունից՝ շահելով նրանց անկեղծ համակրանքը: Հրեական ավագանին Կյուրոսին հայտարարեց Մեսիա (հին հրեերեն՝ Մաշիախ), այսինքն՝ Աստծո օծյալ: Փյունիկիայի առևտրական խոշոր խմբավորումները, ճիշտ այնպես, ինչպես և բաբելոնյան ու փոքրասիական վաճառականները, շահագրգռված էին, որ տարածաշրջանում ստեղծվի մի մեծ պետություն, որն ի վիճակի լիներ երաշխավորելու կայունություն, անվտանգ հաղորդակցության ուղիներ և այլն: Դա անհրաժեշտ էր նրանց միջազգային ողջ միջնորդ առևտուրն իրենց ձեռքերում կենտրոնացնելու համար: Կյուրոսի հետ դաշնակցեց նաև Կիլիկիայի թագավոր Սիեննեսին, որի հսկողության տակ էին գտնվում այն բոլոր կիրճերը, որոնց միջով անցնում էին Փոքր Ասիա և հունական Միլեթ քաղաք տանող ճանապարհները:

Կյուրոսին, սակայն, չհաջողվեց գլուխ բերել արևմուտքում իր հիմնական նպատակը կամ, ավելի ճիշտ, նվիրական իղձը՝ Եգիպտոսի նվաճումը: Փոխարենը նա կարողացավ իր տիրապետությանը ենթարկել Կապադովկիան, Էգեյան ծովի ափերի և Փոքր Ասիայի հունական հարուստ քաղաք-պետությունները և կայուն կերպով հիմնավորվել Հելեսպոնտեսի ափերին:

Կյուրոսի բոլոր մեծ պատերազմներին մասնակցել էին, ինչպես իր «Կյուրոպեդիա»-ում հաղորդում է Քսենոփոնը, արմենների հեծելազորը և հետևազորը՝ Տիգրանի և Եմբասի առաջնորդությամբ: Ինչպես և մարերի տիրապետության շրջանում, Հայաստանը տուրք էր վճարում աքեմենյաններին և զորքով մասնակցում նրանց ռազմական արշավանքներին: Հայտնի է, օրինակ, որ հայկական զորքերը մասնակցել են մ.թ.ա. 539 թ. Կյուրոսի կող-

մից Բաբելոնի նվաճմանը: Ինչպես բոլոր նվաճված երկրների, այնպես էլ Հայաստանի նկատմամբ Կյուրոսը վարում էր հանդուրժողական քաղաքականություն:

Այսպիսով՝ դեռևս իր կենդանության օրոք Կյուրոսին հաջողվեց ստեղծել վիթխարի տարածք ունեցող մի պետություն: Աքեմենյան Պարսկաստանը դարձավ հին աշխարհի ամենաուժեղ տերությունը և միաժամանակ հին արևելյան ամենահզոր քաղաքական կազմավորումներից մեկը: Նրա ազդեցությունը տարածվեց դասական Արևելքի սահմաններից շատ հեռու ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան աղբյուրներում:

Իր տերության հյուսիսարևելյան սահմանները Միջին Ասիայի քոչվոր ցեղերի՝ սաքերի և մասսագետների ներխուժումներից պաշտպանելու և անվտանգ դարձնելու նպատակով Կյուրոսը մեծ արշավանք կազմակերպեց դեպի Միջին Ասիա: Անհրաժեշտ էր ապահովել իրեն այդ կողմից, որպեսզի հնարավոր լիներ արևմուտքում վարելու գործուն քաղաքականություն: Այդ տարածքներում գոյություն ունեցող իրադրությունները անհայտություն էին պարսիկների համար: Հավաստի հայտնի էր միայն, որ սաքերի և մասսագետների սկյութական ցեղերը դեռևս գտնվում էին բարբարոսության ստորին աստիճաններում: Նրանց մոտ տարածված էին խմբային ամուսնությունը, ծերացած ազգականների ոչնչացումը և այլ բարբարոսական սովորույթներ:

Միջին Ասիայում Կյուրոսը հանդիպեց քոչվորների կատաղի դիմադրությանը: Առաջին ճակատամարտում հաջողությունն ուղեկցեց աքեմենյան արքային: Նա պարտության մատնեց մասսագետներին և գերի վերցրեց նրանց առաջնորդուհու՝ Տոմիրիս թագուհու որդուն: Հայրենի ավանդույթներին հավատարիմ՝ գերված արքայազունն ինքնասպանություն գործեց: Սակայն մ.թ.ա. 530 թ. տեղի ունեցած հաջորդ ճակատամարտում աքեմենյան զորքերը ջախջախվեցին, իսկ ինքը՝ Կյուրոսը, սպանվեց: Հավանական է, որ նա իր մահկանացուն կնքեց 70 տարեկան հասակում: Համաշխարհային տերություն ստեղծած այս տիրակալը թաղվեց իր հարազատ Փասարգադում[6]: Նրա դամբարանը, որը պահպանվել է մինչև օրս, զարմացնում է իր գեղեցկությամբ ու ճարտարապետական ներդաշնակությամբ:

Կյուրոս Մեծը խորը հետք է թողել պարսիկների հիշողության մեջ ոչ միայն որպես կայսրության հիմնադիր: Նրա անունով, եթե ոչ պաշտոնապես, ապա ժողովրդական ավանդույթներում անվանակոչվել են գետեր, քաղաքներ, լեռնագագաթներ և այլն: Հերոդոտը հաղորդում է, որ Դարեհ Ա-ի ժամանակներում ևս պարսիկները հիշում էին Կյուրոսի փափկասրտության մասին՝ նրան անվանելով «հայր»:

5. ԻՐԱՆԸ ՔԱՄԲԻԶ Բ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Համաձայն Հերոդոտի, մեկնելով իր վերջին ճակատագրական արշավանքին մասսագետների դեմ և վանխազգալով, որ ռազմական գործողությունները կարող են լինել ծանր ու անկանխատեսելի, Կյուրոսն իր ռազմական ճամբարում գտնվող որդուն՝ Քամբիզին (հունական աղբյուրներում՝ Կամբյուս կամ Կամբյուսես), նշանակեց գահաժառանգ և ուղարկեց հետ՝ Պերսիա՝ կարգադրելով նրան մնալ այնտեղ մինչև պատերազմի ավարտը: Հոր մահվան գույժը ստանալուց հետո, նա դարձավ աքեմենյան տերության արքա (մ.թ.ա. 530-522): Կյուրոսի ժառանգորդը հիանալի կազմակերպիչ էր և տաղանդավոր զորավար: Լինելով իր ժամանակի խոշորագույն պետության ղեկավար՝ նա ևս երազում էր նրա հետագա ընդարձակման ու ծավալման մասին: Ուստի գահը ստանձնելուց անմիջապես հետո նա շարունակեց իր հոր ծավալապաշտական քաղաքականությունը՝ ծրագրելով իր առաջին հարվածն ուղղել Եգիպտոսի դեմ: Քամբիզն անշուշտ գիտակցում էր, որ դա պահանջում է ուժերի մեծ լարում և զգուշություն: Ուստի նա մինչև պատերազմ սկսելը, ձեռնամուխ եղավ տնական ռազմական ու դիվանագիտական նախապատրաստությունների, որոնց հետևանքով Եգիպտոսը հայտնվեց կատարյալ մեկուսացման մեջ: Այնուհետև Քամբիզն իրեն դաշնակից ղարձրեց Պաղեստինի հուդայական թագավորությանը և Փյունիկիայի քաղաքներին: Նա ապահովեց նաև արաբական այն ցեղերի աջակցությունը, որոնք քոչվորական կյանք էին վարում պարսկական զորքերի՝ դեպի Եգիպտոս տանող ճանապարհներին ընկած անապատներում: Ռազմաշունչ բեդվինները ոչ միայն պետք է պահպանեին բարեկամական չեզոքություն, օգնեին կողմնորոշվելու անծայրածիր անապատում, այլև պետք է պարսկական զորքերին ջուր մատակարարեին Սինայի անապատով նրանց անցման ժամանակ: Քամբիզին իրենց աջակցությունը խոստացան նաև Կրետե և Սամոս կղզիների քաղաքները:

Ռազմերքի դուրս գալու նախօրեին աքեմենյան արքան հրամայեց սպանել իր կրտսեր եղբորը՝ Բարդիային՝ մտավախություն ունենալով, որ նա իր բացակայության ժամանակ կարող է հավակնություն ունենալ գահի նկատմամբ: Այդ սպանությունը տեղի ունեցավ խիստ գաղտնի պայմաններում այնպես, որ կարելի էր ենթադրել, որ նա կենդանի է, մնացել է Իրանի սահմաններում և պարզապես չի մասնակցում եղբոր արշավանքին:

Աքեմենյան վիթխարի բանակը Քամբիզի հրամանատարության ներքո մ.թ.ա. 526 թ. շարժվեց դեպի Եգիպտոս: Զորքերի ռազմերթը կատարվում էր ինչպես ցամաքով, այնպես էլ ծովով: Դաշնակից փոյուգացիների հսկայական նավատորմը դրված էր արքայի տրամադրության տակ: Պարսկական բանակում մեծ թիվ էին կազմում նաև հույն վարձկանները: Հույներ կային նաև եգիպտական զորքերի մեջ, որոնց հրամանատար Ֆանետը դավաճանեց Եգիպտոսին և պատանդ թողնելով իր երկու զավակներին՝ փախավ Քամբիզի մոտ: Նա անապատով անց կացրեց պարսիկների բանակը: Թվում էր, թե Փսամմեթիխ Գ փարավոնի հույն վարձկանները ևս կհետևեն իրենց հրամանատարի օրինակին և կանցնեն հակառակորդի կողմը: Սակայն, հակառակ այդ սպասելիքների, հույներն ապացուցեցին, որ իրենք տոգորված են մարտական պարտքի և զինվորական պատվի զգացումներով: Ճակատամարտի նախօրյակին պարսկական բանակի աչքի առջև հույն վարձկանները մորթեցին Ֆանետի որդիներին և նրանց արյունը խառնելով գինու հետ՝ ըմպեցին՝ դրանով իսկ հաստատելով իրենց տված երդումը՝ կռվել մինչև վերջ:

Նախնական հետախուզական մարտերից հետո, որոնց նպատակն էր շոշափել հակառակորդի թույլ կողմերը, մ.թ.ա. 525 թ. Պելուսիի մոտ տեղի ունեցավ այդ պատերազմի ամենախոշոր ճակատամարտը: Վայրի ընտրությունը Քամբիզի կողմից պատահական չէր: Այն ուներ խոշոր ռազմավարական նշանակություն: Հնագույն աղբյուրներում Պելուսին անվանվում է Եգիպտոսի «մուտքի և ելքի բանալի», քանի որ գտնվում էր Սուեզի պարանոցի վրա: Դա արյունահեղ մի ճակատամարտ էր, որի ընթացքում երկու կողմերն էլ կրեցին ծանր կորուստներ: Սակայն այն ավարտվեց պարսիկների հաղթանակով: Առանց մարտի հանձնվեց նաև եգիպտական նավատորմը: Պարսիկները համառ դիմադրության հանդիպեցին նաև Մեմֆիսում: *Սակայն այստեղ ևս նրանց հաջողվեց ընկճել եգիպտացիների դիմադրությունը:* Այնուհետև հաղթողները ցամաքով և ծովով շարժվեցին դեպի երկրի խորքը՝ այլևս չհանդիպելով ոչ մի լուրջ դիմադրության: Մ.թ.ա. 525 թ. ամռանն արդեն ողջ Եգիպտոսը գտնվում էր պարսիկների ձեռքերում: Նշված թվականից մինչև մոտավորապես մ.թ.ա. 450 թ., երբ եգիպտացիներին հաջողվեց անջատվել Պարսկաստանից, ընդունված է անվանել Եգիպտոսում պարսկական տիրապետության առաջին շրջան:

Քամբիզը 525 թ. Եգիպտոսը վերածեց պարսկական սատրապության: Եգիպտոսից արևմուտք ապրող լիբիական ցեղերը, ինչպես նաև Կիրենաիկայի հույները, կամավոր կերպով իրենց հնազանդությունը հայտնեցին հաղթանակած արքային: Քամբիզը հռչակվեց եգիպտական թագավոր և

հիմնադրեց փարավոնների նոր՝ XXVII դինաստիան: Աքեմենյան տիրակալը թագադրվեց եգիպտական ծեսերով և ընդունեց «Եգիպտոսի արքա, երկրների արքա» տիտղոսը: Եգիպտոսի զավթմանն օրինական բնույթ հաղորդելու համար նա հայտարարեց, որ ինքը ծնվել է Կյուրոս Բ-ի և Ապրիա փարավոնի դուստր թագուհի Նիթեթիսի ամուսնությունից: Հետևելով իր հոր՝ Կյուրոսի քաղաքականությանը՝ Քամբիզը կրոնական ու մասնավոր կյանքում եգիպտացիներին տրամադրեց կատարյալ ազատություն: Նրանք իրավունք ստացան ոչ միայն պետական ապարատում մնալու իրենց պաշտոնների վրա, այլև այդ պաշտոնները ժառանգաբար փոխանցել իրենց հետնորդներին:

Եգիպտոսը նվաճելուց հետո Քամբիզի առջև բացվում էին Աֆրիկայի անծայրածիր տարածքները: Նրա երևակայությունը բորբոքվեց փառասիրական անզուսպ ծգտումներով: Արքան երազում էր Աֆրիկայի մնացած մասի հնազանդեցման մասին: Դա իր թափով և ընդգրկման ծավալներով աշխարհակալական մի վիթխարի ծրագիր էր, որի իրագործումը պարսիկների համար կապահովեր տիրապետություն նաև Միջերկրական ծովի արևմտյան մասի նկատմամբ: Սակայն հենց սկզբից ծրագիրը տվեց ճեղքվածքներ: Պարզվեց, որ փյունիկացիները, օրինակ, վճռականորեն հրաժարվում են Կարթագենի ազգակից բնակչության դեմ արշավանքին մասնակցելուց, իսկ առանց նրանց նավատորմի Քամբիզը չէր կարող իրականացնել ծովային խոշոր գործողություններ: Առաջ եկան նաև այլ կարգի բարդություններ: Ուստի պարսից արքային առայժմ մնում էր իր հայացքն ուղղել դեպի Լիբիական անապատի հյուսիսարևմտյան մասում գտնվող Ամոնի օազիսը և դեպի Նուբիա՝ եթովպացիների երկիրը, որը վայելում էր ոսկով հարուստ երկրամասի հռչակ: Արշավանքի սկիզբը բարեհաջող էր: Հյուսիսային Նուբիան պարտավորվեց «բոլոր երկրների արքային» վճարել հարկեր: Սակայն այնուհետև առաջ եկան անհաղթահարելի դժվարություններ: Պարսկական զորքերը Նուբիայում չկարողացան տանել ահավոր շոգը և ջրի ու սննդամթերքների պակասը: Նույնիսկ բանակում սկսվեց մարդակերություն: Քամբիզը ստիպված եղավ վերադառնալ: Հերոդոտը վկայում է, որ Լիբիայում Ամոնի օազիս ուղարկված պարսկական բանակը, ընկնելով ավազի փոթորկի մեջ, ամբողջովին ոչնչացավ: Այս վարկածը, սակայն, գիտության մեջ դեռևս կարոտ է ապացուցման:

Մինչ տևական ժամանակամիջոցի ընթացքում Քամբիզը խրվել էր Նուբիական իրադարձությունների հորձանուտը, եգիպտացիները, տեղյակ լինելով նրա անհաջողություններին, ըստ երևույթին, համոզված էին, որ նա այլևս այնտեղից չի վերադառնա: Ուստի պարսկական տիրապետության դեմ

բարձրացրին ապստամբություն: Սակայն, հակառակ սպասելիքների, մ.թ.ա. 524 թ. վերջին Քամբիզը վերադարձավ և անողոք դաժանությամբ ձեռնամուխ եղավ խռովարարների հետ հաշվեհարդար տեսնելուն:

Մ.թ.ա. 522 թ. մարտին արքան տեղեկություն ստացավ, որ Պարսկաստանում հայտնվել է մի ինքնակոչ, որն իրեն անվանում է Քամբիզի կրտսեր եղբայր Բարդիա (անտիկ հեղինակների մոտ՝ Սմերդիս): Այդ ինքնակոչը Գաումատա անունով մի ոմն մոգ էր, որը մ.թ.ա. 522թ. մարտի 11-ին հռչակվեց Աքեմենյան պետության թագավոր և շուտով տերության ժողովուրդների կողմից ստացավ համընդհանուր ճանաչում: Ավելի ուշ շրջանի աղբյուրներն այդ վարկածը համարում են կեղծ՝ գտնելով, որ իշխանության էր եկել իսկական Բարդիան: Քամբիզը շտապեց Պարսկաստան, սակայն չհասցնելով վերստին իրեն վերադարձնել իշխանությունը, ճանապարհին մահացավ անհայտ հանգամանքներում: Նրա անակնկալ մահն ամրապնդեց ինքնակոչ մոգի դիրքերը, որը, ի դեպ, դրսևորում էր երկիր կառավարելու ակնառու ընդունակություններ: Նա իրականացրեց մի շարք բարեփոխումներ, որոնք դրական արձագանք գտան կայսրության բնակչության շրջանում: Հնազանդեցված ժողովուրդների ապստամբությունները կանխելու համար Գաումատան երեք տարի ժամկետով վերացրեց ամեն տեսակի հարկերն ու զինվորական ծառայության պարտավորությունները: Ներքին քաղաքականության բնագավառում նա աշխատում էր սահմանափակել պարսկական ցեղային ազնվականության՝ չափից ավելի մեծ արտոնություններն ու իրավունքները: Առհասարակ, Գաումատան կարողացավ հիանալի օգտագործել երկրում կուտակված դժգոհությունը: Այդ առթիվ Բեհիսթունյան արձանագրության մեջ նշվում է, որ արքայի, այսինքն՝ Քամբիզի բացակայության ժամանակ «սուտը երկրում շատացել էր»:

Սակայն Գաումատայի կառավարումը չափազանց կարճ տևեց: Յոթ ամիս թագավորելուց հետո նրա դեմ կազմակերպվեց դավադրություն, որի հետևանքով մ.թ.ա. 522 թ. սեպտեմբերի 29-ին նա սպանվեց: Դավադիրները յոթ ազնվականական տոհմերի ներկայացուցիչներ էին: Երբ Գաումատան կործանվեց, ասում է Հերոդոտը, պարսիկներին ենթակա բոլոր ժողովուրդները ուրախ էին:

6. ԴԱՐԵՀ Ա-Ի ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Կեղծ Բարդիայի կամ Գաումատայի սպանությունից հետո դավադիրներից մեկը՝ Դարեհը՝ Վշտասպի որդին, որն աքեմենյան բարձրատոհմիկ ազնվականության ներկայացուցիչն էր, ընդամենը 28 տարեկան հասակում (մ.թ.ա. 522 թ.) դարձավ արքայից արքա՝ ընդունելով Դարեհ Ա (պարսկերեն՝ Դարայավուշ, մ.թ.ա. 522-486 թթ.) գահակալական անունը: Նրա առաջին գործը հանդիսացավ Գաումատայի կողմից վերացված տոհմիկ ազնվականության արտոնությունների և նրա տիրապետող դիրքերի վերականգնումը տնտեսության ու հասարակության մեջ: Սակայն, ընդհանուր առմամբ, կառավարման սկզբնական շրջանում Դարեհի վիճակը չափազանց ծանր էր: Բարձրատոհմիկ ազնվականության այն մասը, որը նրան աջակցում էր, իր համար պահանջում էր իշխանություն, անհրաժեշտ էր նրանց պարգևներ տրամադրել, դարձնել նահանգների կառավարիչներ և ի չիք դարձնել մեծ իշխանություն ձեռք բերելու նրանց մոլուցքը: Քանի որ Դարեհն իշխանության գլուխ էր եկել պալատական հեղաշրջման և ոչ թե գահաժառանգման օրինական ճանապարհով, իր իշխանության օրինականացման նպատակով ամուսնացավ Կյուրոսի աղջկա՝ Աթոսսի և Քամբիզի հարեմի բոլոր մնացած կանանց հետ, իսկ ավելի ուշ՝ նաև Գաումատայի կնոջ հետ: Խորամանկ և իշխանատենչ Աթոսսան Դարեհի արքունիքում ձեռք բերեց բացառիկ դիրք՝ դառնալով ամենազոր: Դարեհի հետագա բարձրացման մեջ, ըստ երևույթին, նա խաղացել է ոչ վերջին դերը:

Իր թագավորության հենց առաջին օրերից Դարեհը զբաղված էր Աքեմենյան պետությունից անջատված տարածքները զենքով վերադարձնելու, ինչպես նաև մի շարք ցեղերի ու ժողովուրդների ապստամբությունների ճնշման գործով: Այդ մասին Դարեհը Բեհիսթունի ժայռի վրա՝ Քերմանշահ (ներկայիս Բախթարան) քաղաքից 30 կմ արևելք, թողել է մի մեծ եռալեզու (հին պարսկերեն, էլամերեն և աքքադերեն) արձանագրություն: Սկզբում նրա դեմ ապստամբեցին էլամցիները: Այն չհասցրեց ընդգրկել բնակչության լայն զանգվածներին, ուստի և հեշտությամբ ճնշվեց: Այնուհետև Դարեհի դեմ հուժկու ապստամբություն բռնկվեց Բաբելոնում: Արքան անձամբ գլխավորեց արշավանքն ապստամբների դեմ, պարտության մատնեց նրանց և չարաչար տանջանքների միջոցով (ցից բարձրացնելով) մահապատժի ենթարկեց գլխավորներին, ընդհանուր

թվով՝ 49 մարդու: Իր արձանագրություններից մեկում Դարեհը հայտնում է, որ ինքը «բոլոր նրանց (այսինքն՝ ապստամբներին) սպանեց և ոչ մեկին գերի չվերցրեց»: Մ.թ.ա. 522 թ. պարսիկները գրավեցին Բաբելոնը:

Բաբելոնում պատժիչ գործողություններ իրականացնելու ժամանակ հսկայական պարսկական պետության տարբեր երկրներում՝ Պերսիսում (Պարսք), Մարաստանում, Էլամում, Մարգիանայում, Պարթևստանում, Սատտագիդիայում, Սուզիանայում, Հայաստանում, Միջին Ասիայում և Եգիպտոսում բռնկեցին աքեմենյաններից դժգոհ բնակչության ապստամբություններ, որոնց հետևանքով Կյուրոսի և Քամբիզի կողմից նվաճված երկրները դուրս եկան աքեմենյանների հսկողությունից և վերստին ձեռք բերեցին փաստական ինքնուրույնություն: Սկսվեց երկարատև, դաժան ու արյունահեղ պայքար Աքեմենյան պետության նախկին սահմանների վերականգնման համար: Այդ մասին պատկերացում կազմելու համար բավական է բերել հետևյալ փաստը: Բակտրիայի սատրապ Դադարշիշը մ.թ.ա. 522 թ. դեկտեմբերին Մարգիանայում ապստամբությունը ճնշելիս սրի քաշեց 55.000 մարդու և հազարավորների քշեց գերության:

Հենց բուն Պերսիսում, որպես Դարեհի մրցակից, հանդես եկավ ոմն Վահյազդատ՝ Կյուրոսի որդի Բարդիայի անվան տակ, որը ժողովրդի շրջանում անմիջապես գտավ մեծ աջակցություն: Նրան հաջողվեց զավթել արևելաիրանական հսկայական տարածքներ՝ ընդհուպ մինչև Արախոսիա: Միայն մ.թ.ա. 521 թ. ամռանը հինգ արյունահեղ ճակատամարտերից հետո Դարեհի զորավարներին հաջողվեց պարտության մատնել Վահյազդատին և ողջ Պարսքի շրջանը միավորել իր իշխանության ներքո:

Սակայն տերության մնացած մասերում ապստամբությունները շարունակվում էին: Նրանք ընդգրկեցին նախկին Ասորեստանի, Պարթևստանի, Հայաստանի և Հիրկանիայի տարածքները: Մարաստանում բռնկված հուժկու ապստամբության հետևանքով համարյա ողջ երկրամասն անցավ Ֆրավարտիշ անունով առաջնորդի ձեռքը, որը հայտարարում էր, թե ինքը սերել է մեդական թագավոր Կիաքսարի ցեղից: Այդ ապստամբությունն առավել վտանգավորներից մեկն էր, ուստի և Դարեհը ինքն անձամբ ձեռնամուխ եղավ նրա ճնշմանը: Մեղացիները պարտություն կրեցին, և Ֆրավարտիշը գերի ընկավ: Դարեհը դաժան դատաստան տեսավ նրա հետ. կտրեց Ֆրավարտիշի քիթը, ականջներն ու լեզուն և հանեց աչքերը: Այնուհետև նրան տարան Էկբաթան և ցից բարձրացրին: Մայրաքաղաք տեղափոխվեցին նաև Ֆրավարտիշի մերձակա օգնականները ու զինակիցները, որոնց սկզբում բանտարկեցին

ամրոցում, ապա մաշկազերծ արեցին, տիկ հանեցին և խոտ լցնելով՝ կախեցին բերդի պատերից:

Ի թիվս տերության մի շարք այլ ժողովուրդների՝ հայերը ևս ապստամբել էին Աքեմենյանների տիրապետության դեմ: Այդ ապստամբությունը մանրամասն նկարագրված է Բեհիսթունի բարձր ժայռի վրա քանդակված Դարեհ Ա-ի եռալեզու բևեռագիր արձանագրության վկայություններում: Արմենիան, որն այդ արձանագրության մեջ հիշատակված է իբրև երկրի անուն, անվանված է «Արմինա», իսկ արմենները՝ «արմինիյա»: Այս արձանագրության վկայություններից երևում է, որ արմենները եղել են ռազմիկ ժողովուրդ, ձգտել են ազատ ու անկախ լինել և, օգտվելով բարեհաջող հանգամանքներից, պարբերաբար ապստամբել են և աշխատել են թոթափել օտար տիրապետության լուծը: Արձանագրության տվյալներից երևում է, որ Դարեհը Հայաստան է ուղարկել երկու զորավարներ՝ ծագումով հայ Դադարշիշին և պարսիկ Վահումիսային, որոնք հինգ անգամ ճակատամարտի մեջ են մտել ապստամբների հետ: Մ.թ.ա. 522 թ. դեկտեմբերի 31-ին տեղի է ունեցել խոշոր ճակատամարտ նախկին Ասորեստանի տարածքի Իզալա կոչված վայրում, որի նկատմամբ ապստամբները նույնպես սահմանել էին իրենց հսկողությունը: Դարեհի բանակը կրել է պարտություն, թեև Բեհիսթունյան արձանագրություններում ասվում է, որ խռովարարները գլխովին ջախջախվել են: Դրանից հետո Դարեհի զորավարները խուսափում էին ակտիվ ռազմական գործողություններից մինչև մ.թ.ա. 521թ. մայիսի 21-ը, երբ նրանք ճակատամարտ ընդունեցին Հայաստանում Զուզախիա կոչված վայրի մոտ: Վեց օր անց՝ դարձյալ Հայաստանում՝ Տիգրա ամրոցի մոտ, տեղի ունեցավ նոր ճակատամարտ: Սակայն դեռևս չէր հաջողվում կոտրել ապստամբած հայերի համառությունը: Այդ իսկ պատճառով Վահումիսայի ու Դադարշիշի զորքերին օգնելու համար Դարեհն ուղարկում է նոր, թարմ զորամասեր: 521 թ. հունիսի 21-ին Ույամա լեռան մոտ հայերը պարտություն են կրում Դադարշիշի զորքերից, իսկ նույն թվականի հունիսի վերջին Աուտիարա վայրում նրանց նկատմամբ հաղթանակ է տանում Վահումիսան: Այսպիսով՝ յոթամսյա պայքարից հետո հայերի համառ դիմադրությունը կոտրվում է, և երկիրը հնազանդեցվում պարսիկներին:

Այն ժամանակ, երբ Դարեհը զբաղված էր Հայաստանում և այլ երկրներում ապստամբությունների ճնշմամբ, բաբելացիները նոր փորձ կատարեցին անկախություն ձեռք բերելու համար: Ապստամբությունը ղեկավարում էր Խալդիթի որդի Արախան, որն իրեն ներկայացնում էր որպես Նաբոնիթի որդի Նաբուգոդոնոսոր: Բեհիսթունյան արձանագրու-

թյան պարսկական և էլամական տեքստերում նա անվանվում է հայ, իսկ աքքադական տեքստում՝ ուրարտացի: Արախային հաջողվում է ողջ Բաբելոնը ենթարկել իր իշխանությանը: Սակայն կարճատև է լինում նրա ցնծությունը: Մ.թ.ա. 521 թ. նոյեմբերի 27-ին Դարեհը ջախջախում է Արախայի զորքերին, իսկ ինքը՝ Արախան, և նրա մերձավոր կողմնակիցները Բաբելոնում ցից են բարձրացվում: Դա Աքեմենյանների դեմ վերջին խոշոր ապստամբությունն էր, թեև պետության տարբեր շրջաններում հուզումները դեռևս շարունակվում էին: Իշխանությունը գրավելուց հետո՝ ընդամենը մեկ տարի անց, Դարեհը կարողացավ ամրապնդել իր վիճակը, որից հետո նա վերականգնեց Կյուրոսի և Քամբիզի տերությունն իր հին սահմաններում:

Մ.թ.ա. 515-512 թթ. ընթացքում Դարեհ Ա-ն մեծ արշավանք կազմակերպեց Մերձսնծովյան տափաստաններում բնակվող սկյութացիների դեմ: Հերոդոտն այդ արշավանքի պատճառը համարում է Դարեհի ձգտումը՝ պատժելու նրանց, որովհետև այդ ռազմաշունչ քոչվորները մինչ այդ ներխուժել էին Մարաստան: Ժամանակակից ուսումնասիրողների մի ստվար մասի կարծիքով՝ այդ արշավանքի նպատակն այն էր, որ Դարեհը ցանկանում էր Պարսկական կայսրությունն ընդլայնել ու ծավալել դեպի հյուսիս, մասնավորապես իրեն ենթարկել հույների սևծովյան գաղութները և դրանով իսկ իր հսկողությունը սահմանել սևծովյան առևտրի նկատմամբ՝ միաժամանակ ճգտելով տեր դառնալ սկյութական տափաստաններում արտադրվող առատ հացին: Սակայն ավելի հավանական է թվում այն վարկածը, ըստ որի՝ Դարեհի արշավանքը մերձսնծովյան սկյութների դեմ պայմանավորված էր Աքեմենյան պետության հյուսիսային սահմանները քոչվոր սկյութների ասպատակություններից պաշտպանելու մտահոգությամբ:

Սակայն այդ արշավանքն ավարտվեց Դարեհի համար կատարյալ ձախողմամբ: Պարսկական բանակը խուճապային նահանջով կարողացավ փրկել իր հիմնական ուժերը: Սկյութները վարպետորեն օգտագործեցին իրենց հայտնի ռազմավարությունը՝ մարտերով նահանջի միջոցով հյուծել ու բարոյալքել հակառակորդին և վերջնականապես ոչնչացնել նրան:

Պարսից արքան, սակայն, այն մարդկանցից չէր, որ անհաջողությունը վհատեցներ նրան: Նախ՝ նրան հաջողվեց երկաթյա կամքով ու վճռականությամբ իր՝ վիթխարի տարածք ու այլացեղ բնակչություն ունեցող երկրում վերականգնել հանգստությունը: Այնուհետև՝ հսկայական ջանքերի գնով նրան հաջողվեց վերականգնել իր նախորդների՝ Կյուրոսի և Քամբիզի պետությունն իր նախկին սահմաններում և նույնիսկ որոշ

չափով ընդարձակել այն: Մ.թ.ա. 519-512 թթ. ընթացքում պարսիկները գրավեցին Թրակիան, Մակեդոնիան և Հնդկաստանի հյուսիսարևմտյան մասը: Արդեն մ.թ.ա. VI դ. վերջին Աքեմենյան պետության սահմանները տարածվում էին արևելքից՝ Հինդուս գետից, մինչև արևմուտք՝ Էգեյան ծովը, հյուսիսից՝ Հայաստանից, մինչև հարավ՝ Եթովպիա կամ Նեղոսի առաջին սահանքը: Այդ պետության կազմի մեջ մտնում էին ողջ Իրանը, Աֆղանստանը, Միջին Ասիայի հարավային մասը, Բելուջիստանը, ողջ Փոքր Ասիան, Բաբելոնը, Հայաստանը, Թրակիան, Սիրիան, Պաղեստինը, Եգիպտոսը, Կիրենաիկան (Աֆրիկայում), Արաբիան, Բալկանյան թերակղզու հյուսիսարևելյան մասը և Մակեդոնիան: Անվարան կարելի է ասել, որ Աքեմենյանների պետությունն առավել մեծ հզորության հասավ Դարեհ Ա-ի օրոք:

Անկասկած, այդ վիթխարի տարածքի միավորումն Աքեմենյան գերիշխանության ներքո մեծապես նպաստեց այդ պետության մեջ առևտրի ու դրամական տնտեսության զարգացմանը:

• Մ.թ.ա. 518 թվականից Դարեհը ձեռնամուխ եղավ իր պետության ամրապնդման գործին: Համաշխարհային տերությունը պետք է ստանար նաև այնպիսի նոր կազմակերպություն, որը կարողանար ապահովել նրա ներքին կայունությունը: Անհրաժեշտ էր երկրի կառավարումը կենտրոնացնել պարսիկների ձեռքերում, կարգավորել հարկային համակարգը, իրականացնել վարչաֆինանսական բարեփոխումներ, ստեղծել նվաճված երկրների նկատմամբ հսկողության հուսալի համակարգ և այլն: Բեհիսթունյան և այլ արձանագրություններում Դարեհը նշում էր, որ «սուտը» խռովարար էր դարձրել նրա իշխանության ներքո գտնվող ժողովուրդներին, և ինքը «այն ինչ որ վատ էր, դարձրեց լավ», սահմանելով կարգ ու կանոն, որը խարսխված էր արդարության և օրենքի վրա: Դարեհը հայտարարում է. «Շատ վատ բաներ կային, որոնք ես դարձրի գեղեցիկ ու հիանալի: Երկրները ներգրավված էին հուզումների մեջ, մարդիկ սպանում էին մեկը մյուսին»: Պարսկական պետության հպատակները միայն համառ և տևական պայքարից հետո ընդունեցին Դարեհի կողմից սահմանած «կարգ ու կանոնը»: Նրան հաջողվեց իրեն աջակցող բոլոր ուժերի հսկայական լարման գնով հաղթանակ տանել: Պլուտարքոսի վկայությամբ՝ Դարեհը հպարտանում էր նրանով, որ ճակատամարտերի ժամանակ և ահավոր վտանգների առջև ինքը մնում էր հանգիստ ու հավաքված: «Նախշ-ի Ռուսթամում»՝ Դարեհի տապանագրում, ասվում է. «Ես տաքարյուն չեմ: Զայրույթի ժամանակ ես աներեր կերպով զսպում եմ ինձ: Ես տիրապետում եմ ինձ... Ես ուժեղ մարմին ու-

նեմ: Որպես զինվոր՝ ես լավ զինվոր եմ... Ես տեսնում եմ՝ ով է խոռվարար և ով ոչ... Սկզբում ես մտածում եմ և ապա գործում»:

Քամբիզի և Գաումատայի կողմից ոտնահարված պարսիկ ցեղային ազնվականության արտոնությունները Դարեհն ամբողջությամբ վերականգնեց: Նա ամեն ինչ անում էր, որ ազնվականությանը կապի իր հետ, ապահովի իր նկատմամբ նրա նվիրվածությունը: Ուստի զարմանալի չէ, որ պարսկական պաշտոնական ավանդույթն իդեալականացնում է Դարեհին: Նա, ինչպես նշվեց, թողել է բազմաթիվ արձանագրություններ, որտեղ իրեն ներկայացնում է «ստի թշնամի», արդարության պաշտպան, կառավարչի տիպար և Ահուրամազդայի երկրային մարմնավորում: Պերսեպոլիսում պահպանվել են բարձրաքանդակներ, որոնք պատկերում են պարսկական արքաների հաղթական գոտեմարտերը տարբեր տեսակի հրեշների հետ՝ առյուծի իրանով, ցուլի եղջյուրներով, արծվի ոտքերով և կարիճի պոչով, որոնք մարմնավորում են սուտն ու չարը: Դարեհի ժամանակ կարգի հաղթանակը խորհրդանշող նույնպիսի պատկերներ հաճախ հանդիպում են նաև կնիքների վրա: Արքայից արքայի խոսքերով ինքը հասել էր նրան, «որպեսզի մարդիկ չսպանեն միմյանց, և որպեսզի ամեն մեկը լիներ իր տեղում, ուժեղը չսպաներ թույլին և չկողոպտեր նրան, իսկ թույլը չվնասեր ուժեղին:

7. ՀՈՒՅՆ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ: ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ ԴԱՐԵՀ Ա-Ի ՀԵՏՆՈՐԴՆԵՐԻ ՕՐՈՔ

Դարեհ Ա-ն իրավացիորեն գտնում էր, որ պարսկական տիրապետությունը Փոքր Ասիայում, Թրակիայում և Էգեյան ծովի կղզիներում թույլ ու անկայուն կլինի, քանի դեռ Բալկանյան թերակղզու հույները պահպանում են իրենց անկախությունը: Այդ ժամանակ Հունաստանը կազմված էր բազմաթիվ ինքնավար քաղաք-պետություններից, որոնցում առկա էին տարբեր քաղաքական կարգեր և, որպես կանոն, նրանք միմյանց հետ գտնվում էին մշտական թշնամանքի ու պատերազմների մեջ: Հենց այդ պատճառով էլ թվում էր, թե պարսիկների համար Հունաստանի հնազանդեցումը մեծ դժվարություն չի ներկայացնի, քանի որ նրանք իրենց տրամադրության տակ ունեին հսկայական, լավ զինված բանակ և իր ժամանակի համար լավագույն նավատորմը: Դարեհ Ա-ի

նվիրական երազանքն էր ձեռք բերել Փոքր Ասիայի արևմուտքում համաշխարհային նշանակություն ունեցող առևտրական ճանապարհները:

Իրենց հերթին հույները նս պարսիկների դեմ պատերազմի միջոցով ցանկանում էին լուծել կենսական նշանակություն ունեցող մի խնդիր՝ իրենց առևտրի համար բաց անել պարսիկների կողմից փակված սևծովյան նեղուցները: Սակայն դա վերին աստիճանի դժվարին խնդիր էր, քանի որ Էլլադան հստակ գիտակցում էր, որ իր դիմաց կանգնած են ոչ միայն պարսից արքայից արքայի հզոր զինված ուժերը, այլև խորամանկ ու ճարպիկ պարսկական դիվանագիտությունը, որը փայլուն կերպով կարողանում էր օգտագործել հունական պոլիսների միջև գոյություն ունեցող հակասությունները:

Եթե հավատանք Հերոդոտին, երբ Դարեհին զեկուցեցին, որ աթենքցիներն ու ապստամբ հոնիացիներն այրել են Սարդ քաղաքը, նա հարցնում է, թե ովքեր են աթենքցիները: Լսելով պատասխանը՝ Դարեհը հրամայում է իր ծառաներից մեկին ամեն օր ճաշից առաջ կրկնել հետևյալ խոսքերը. «Տիրակա՛լ, հիշի՛ր աթենքցիների մասին»:

Նախքան զորքերը Հունաստան ուղարկելը Դարեհը դեսպաններ ուղարկեց համարյա բոլոր հունական քաղաքները՝ պահանջելով «հող և ջուր», այսինքն՝ Պարսկաստանի գերագույն իշխանության ճանաչում: Շատ քաղաքներ կատարեցին արքայի պահանջը, սակայն Աթենքում և Սպարտայում դեսպանությունը ողբալի վախճան ունեցավ: Աթենքում դեսպաններին ժայռերից նետեցին անդունդը, իսկ Սպարտայում՝ ջրհորը՝ ծաղրանքով առաջարկելով, որ դեսպաններն իրենց արքայի համար այնտեղից վերցնեն հող և ջուր:

Մ.թ.ա. V դարի առաջին կեսի ընթացքում տեղի ունեցած հույն-պարսկական պատերազմների ժամանակ մինչ այդ Դարեհի անպարտելի համարված բանակները թե՛ ցամաքում և թե՛ ծովում կրեցին մի շարք պարտություններ: Մ.թ.ա. 490 թ. Մարաթոնյան նշանավոր ճակատամարտում պարսիկների կրած անհաջողությունը ոգևորեց ոչ միայն հույներին, այլև աքեմենյան լծի տակ գտնվող բոլոր ժողովուրդներին: Եգիպտոսը, Բաբելոնը, Մարաստանը, Փոքր Ասիայի նահանգները և այլ երկրներ ապստամբում էին արքայից արքայի դեմ, որի հետևանքով Աքեմենյան տերությունը սկսեց կորցնել տարածքներ: Բուն կայսրության ներսում ևս սկսեց նկատվել անկայունություն: Պալատական ազնվականությունը դավադրությունների օգնությամբ վերացնում էր իր համար անցանկալի անձանց: Պետության ծայրամասային շրջանների մի շարք սատրապներ բացահայտ կերպով սկսեցին դրսևորել անջատողա-

կան ձգտումներ: Միաժամանակ անսանձ տարրերը գլուխ բարձրացրին՝ խաթարելով պետության ներքին անդորրը:

Մ.թ.ա. 486 թ. նոյեմբերին, 64 տարեկան հասակում, կառավարելով 36 տարի, իր մահկանացուն կնքեց Դարեհ Ա-ն: Նա չհասցրեց ճնշել Եգիպտոսում բռնկած հուժկու ապստամբությունը և վերականգնել այդ երկրում իր իշխանությունը: Մ.թ.ա. 486 թ. դեկտեմբերին 36 տարեկան հասակում գահ բարձրացավ Դարեհի որդիներից մեկը՝ Քսերքսես Ա-ն (մ.թ.ա. 486-465): Նրա առջև հենց սկզբից կանգնած էին բազում դժվարին խնդիրներ: Պետական կենտրոնացման այն հզոր կազմակերպությունը, որ ստեղծել էր իր հայրը, բոլորի աչքի առջև սկսել էր հետզհետե թուլանալ: Սատրապները, որոնք իրենց ձեռքերում միացրել էին զինվորական ու քաղաքական իշխանությունը, դարձել էին գրեթե անկախ գերապետներ: Կենտրոնական իշխանությունը հարկադրված էր ուղղակի կռիվ մղել ինչպես ապստամբած սատրապների, այնպես էլ անկախության ձգտող ժողովուրդների դեմ:

Բնական է, որ նման պարագաներում հույների դեմ անմիջապես արշավանք կազմակերպելու վերաբերյալ Դարեհի թողած կտակի իրականացման ուղղությամբ առայժմ խոսք անգամ լինել չէր կարող: Ուստի Քսերքսեսը սկսեց նրանից, որ հայտարարեց իր հավատարիմ լինելու մասին Դարեհի հռչակած բարոյաէթիկական սկզբունքներին:

486 թ. Եգիպտոսը ապստամբություն բարձրացրեց Աքեմենյանների դեմ: Ապստամբներն օգնություն էին ստանում աթենքցիներից: Սակայն մ.թ.ա. 484 թ. հունվարին Քսերքսեսին հաջողվեց ճնշել ապստամբությունը և անողոք դատաստան տեսնել ապստամբների հետ: Բազմաթիվ տաճարների գույքեր բռնագրավվեցին: Եթե Քամբիզը և Դարեհը եգիպտական ժողովրդին ներշնչում էին, որ իրենք փարավոնների հին ավանդույթների շարունակողներն են, ընդունեցին նրանց տիտղոսները, երկրպագում էին տեղական աստվածներին, ամեն կերպ շեշտում էին իրենց հարգանքը Եգիպտոսի հին մշակույթի և սովորույթների նկատմամբ, իր՛նց անվանում էին Եգիպտոսի թագավորներ, ապա Քսերքսեսը բացահայտ կերպով այդ երկրի նկատմամբ վերաբերվում էր ինչպես նվաճված նահանգի: Ուշագրավ է նաև, որ Եգիպտոսում գոյություն չունի որևէ հուշարձան, որի կառուցումը կապված լինի Քսերքսեսի անվան հետ:

Մ.թ.ա. 482 թ. արքայից արքան ճնշեց նաև Բաբելոնում ընթացող ապստամբությունը: Նա չկործանեց այդ քաղաքը, որը հավանաբար ինքը սիրում էր, որովհետև, սկսած 498 թվականից, ապրել էր այնտեղ հատուկ իր համար կառուցված պալատում: Հունաստանը, սակայն, մշտա-

պես գտնվում էր Քսերքսեսի ուշադրության կենտրոնում: Նա դեսպաններ ուղարկեց այդ երկիրը, որոնց օգնությամբ նրան հաջողվեց իր կողմը գրավել Թեսալիայի քաղաքները և միջին Հունաստանի որոշ պետությունների: Միաժամանակ նկատի ունենալով, որ Պարսկաստանի հետևողական հակառակորդներ էին հանդիսանում Աթենքը և Սպարտան՝ պարսկական դիվանագիտությունն աշխատում էր օգտագործել ինչպես այդ պետությունների ներքին հակասությունները, այնպես էլ նրանց մրցակցությունը: Հատկապես պարսիկները մեծ հույսեր էին կապում Հունաստանի ազնվականական տարրերի և քաղաքական վտարանդիների հետ և ոչ առանց հաջողության: Հայտնի է, օրինակ, որ Աթենքից վտարված բռնապետ Գիպիոսը գտնվում էր պարսկական ճամբարում և հույս ուներ արքայից արքայի օգնությամբ վերականգնել իր իշխանությունը: Պարսիկները նկատել էին նաև, որ սպարտացիները ձգտում են պատերազմի ողջ ծանրությունը դնել իրենց դաշնակիցների՝ աթենքցիների և այլ հույների վրա: Աթենքի և Սպարտայի միջև ընթանում էր մերթ բացահայտ, մերթ սքողված պայքար հելլենական աշխարհում գերիշխանություն ձեռք բերելու համար: Պարսկական դիվանագիտությունը, ինչպես նշվեց, վարպետորեն օգտվում էր դրանից:

Տևական ռազմական ու դիվանագիտական նախապատրաստություններից հետո Քսերքսեսը, անցնելով այդ ժամանակների համար հսկա մի բանակի գլուխ, դուրս եկավ հույների դեմ ռազմարշավի: Եգիպտոսից մինչև Հնդկաստան բոլոր սատրապությունները նրան հատկացրին զինական ուժեր: Հերոդոտը տալիս է այդ բազմացեղ բանակի մանրամասն նկարագրությունը, որը կազմված էր քառասունվեց ժողովուրդների ներկայացուցիչներից: Արշավանքին մասնակցում էին աքեմենյան բանակի բոլոր փառաբանված զորավարները, այդ թվում նաև Քսերքսեսի ութ եղբայրները:

Մ.թ.ա. 480 թ. Քսերքսեսը իր զորքերն անց կացրեց Հելլեսպոնտեսի վրայով: Սպարտացիները պնդում էին, որ Միջին Հունաստանի պաշտպանությունն անհույս գործ է, ուստի և առաջարկում էին այն թշնամուն թողնել առանց դիմադրության և պաշտպանել միայն Կորինֆի պարանոցը: Երբ հելլենների մեծ մասը մերժեց այդ առաջարկը, Սպարտան Թերմոպիլ ուղարկեց միայն 300 հոգուց բաղկացած մի ջոկատ՝ իրենց թագավոր Լեոնիդի գլխավորությամբ: Վերջինս իր հետ վերցրեց միայն նրանց, ովքեր ունեին արու զավակներ, որպեսզի չհանգչեր որևէ սպարտացու տոհմ: Իսկ հելլենների ընդհանուր թիվը, որոնք եկան Թերմոպիլը պաշտպանելու, 6500 մարդ էր: Թերմոպիլի ճակատամարտն ավարտվեց պարսիկների հաղթանակով: Այնուհետև՝ մ.թ.ա. 480 թ. սեպտեմբերի 28-ին, Սալամինա կղզու

մոտ՝ նեղ ու ծանծաղ նեղուցում, տեղի ունեցավ ծովային ճակատամարտ, որից պարսկական նավատորմը դուրս եկավ շոշափելի կորուստներով, Քսերքսեսին մնացին միայն ոչ մեծ թվով նավեր: Այդ հաջողությունը հույներին ներշնչեց վստահություն իրենց սեփական ուժերի նկատմամբ՝ և հավաքելով իրենց ողջ ուժերը՝ մ.թ.ա. 479 թ. Պլատեայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում նրանք տարան վերջնական հաղթանակ:

Հույների այդ հաղթանակներով վերջ տրվեց Աքեմենյան պետության հետագա ծավալմանը դեպի արևմուտք: Այսպիսով՝ ազատատենչ հույների հետ բախումների հետևանքով դադարեցին պարսիկների ռազմական հաջողությունները: Հատկապես Սալամինայի ճակատամարտից հետո հզոր կայսրությունը ստիպված էր հրաժարվել Էլլադան ընկճելու իր ծրագրերից:

Հույն-պարսկական պատերազմները մարդկության պատմության ամենավառ էջերից մեկն են: Գիտնականները ապացուցել են, որ այդ պատերազմների ժամանակ պարսիկները բնավ չեն ձգտել ոչնչացնել հույներին, նրանց մշակույթը և տաճարները, այլ միայն ցանկացել են Հունաստանը ենթարկել իրենց: Կարելի է անվարան ասել, որ հույների հաղթանակը հնարավորություն տվեց հունական բարձր մշակույթի հետագա անկաշկանդ զարգացմանը, որը հասավ փայլուն ծաղկման:

Չնայած Հունաստանում և Էգեյան ծովի ավազանում կրած պարտություններին՝ Պարսկաստանը շարունակում էր վարել ակտիվ արտաքին քաղաքականություն: Աքեմենյան զորքերն ընկճեցին Կասպից ծովից արևելք ընկած տարածքներում բնակվող վայրենի սաքերին: Քսերքսեսը ձեռնամուխ եղավ նաև մի շարք նվաճումների իր տերության ծայր արևելքում:

Սակայն Քսերքսեսի օրոք սկսեցին նշմարվել պետության գոյության համար վտանգավոր նշաններ: Տարբեր վայրերում շարունակում էին բռնկվել սատրապների խռովություններ: Մ.թ.ա. 467 թ., այսինքն՝ Քսերքսեսի սպանությունից երկու տարի առաջ, Պարսկաստանում թագավորում էր սովը: Քսերքսեսին ոչինչ չէր մնում, եթե ոչ ժողովրդին հանգստացնելու համար իրար հետևից փոխել պետական գործիչներին: Նա ընդամենը մեկ տարվա ընթացքում փոխեց մոտ հարյուր բարձրաստիճան անձանց: Մ.թ.ա. 465 թ. Քսերքսեսը ստիպված էր հրաժարվել «Բաբելոնի արքա» տիտղոսից:

Մ.թ.ա. 465թ. օգոստոսին կազմակերպված դավադրության հետևանքով, որին, ըստ երևույթին՝ մասնակից էին Քսերքսեսի կրտսեր որդի Արտաքսերքսեսը և արքայի մերձավորագույն մարդկանցից արքայական թիկնազորի հրամանատար Արտաբանը և Ասպամիթրա անունով ներքինին, գիշերով իր ննջասենյակում 55- ամյա Քսերքսեսը սպանվեց:

Գահ բարձրացավ Արտաքսերքսես Ա-ն (մ.թ.ա. 465-424 թթ., հին պարս-

կերեն՝ Արտախշասսա), որին հույներն անվանեցին «Երկայնաբազուկ» (Մաքրոխեյր), քանի որ նրա աջ ձեռքը երկար էր ձախից: Արտաբանը մտադրվել էր նրան ևս սպանել և հափշտակել գահը, սակայն դա հայտնի է դառնում Արտաքսերքսեսին, որը հաշվեհարդար է տեսնում իրեն գահ բարձրացրած մարդկանց՝ Արտաբանի և Ասպամիթրայի հետ, ոչնչացնելով նաև նրանց զավակներին, ազգականներին և նույնիսկ կողմնակիցներին:

Մինչև որ Արտաքսերքսեսը զբաղված էր վարչական համակարգում բարեփոխումներ կատարելով, ավելի ճիշտ՝ իր մերձավորներին սատրապներ նշանակելով, մ.թ.ա. 464 թ. ապստամբեց իր հարազատ եղբայրը՝ Բաքթրիայի սատրապ Վշտասպը նպատակ ունենալով զավթել գահը: Սակայն երկու ճակատամարտերում կրելով պարտություն, նա սպանվում է: Վախենալով պալատական հեղաշրջումից՝ Արտաքսերքսեսը հրամայում է ոչնչացնել իր մնացած եղբայրներին: Այդ իրադարձություններից հետո պալատական սադրանքները պարսկական տերության ճակատագրի համար սկսեցին ձեռք բերել ավելի ու ավելի կարևոր նշանակություն:

Արտաբանի սադրանքը, իսկ ապա՝ ներքին հուզումները, թուլացրին պարսիկների տիրապետությունը Եգիպտոսում: Մ.թ.ա. 460 թ. այնտեղ բռնկեց մի նոր ապստամբություն լիբիացի Ինարի գլխավորությամբ: Մ.թ.ա. 459 թ. աթենքցիները 200 նավերից բաղկացած մի նավատորմ ուղարկեցին Եգիպտոս ապստամբներին օգնելու համար: Միայն վեց տարուց հետո՝ մ.թ.ա. 454 թ., պարսիկներին հաջողվեց ճնշել այդ վտանգավոր ապստամբությունը և վերականգնել իրենց տիրապետությունը այդ երկրում: Ինարը ցից բարձրացվեց, իսկ նրան օգնության եկած հույներից 50 հոգի գլխատվեցին: Անողոք դաժանությամբ ճնշվեց նաև մ.թ.ա. 450 թ. Սիլիկիայում բռնկած ապստամբությունը:

Տասնամյակներ տևած արյունահեղ ու ծանր պատերազմներից հետո և՛ հույները, և՛ պարսիկները համոզվեցին, որ պատերազմի օգնությամբ իրենք ի վիճակի չեն հասնելու ցանկալի նպատակների, ուստի և վաղուց հասունացել է բանակցությունների սեղանի շուրջը նստելու ժամանակը: Առավել ևս, որ պարսկական ազնվականության մի մասը գտնում էր, որ անհրաժեշտ է փոփոխության ենթարկել Հունաստանի նկատմամբ վարվող քաղաքականությունը: Մ.թ.ա. 449 թ. Աթենքում որոշվեց նավատորմը հետ կանչել Կիպրոսից և Եգիպտոսից, ինչպես նաև Սուզա ուղարկել մի դեսպանություն՝ խաղաղության պայմանագիր կնքելու համար: Ընդ որում՝ այդ դեսպանության ղեկավար նշանակվեց աթենքցի լավագույն դիվանագետ Կալլիա: Աքեմենյանների մայրաքաղաք մեկնեցին նաև Աթենքի դաշնակից հունական պետությունների դեսպանները: Բա-

նակցությունների հետևանքով մ.թ.ա. 449թ. այսպես կոչված «Դելոսյան դաշինքի» երկրների և Պարսկաստանի միջև կնքվեց խաղաղության «հավերժական» դաշնագիր, որը հայտնի է «Կալլիյան հաշտություն» անունով, ըստ որի՝ Աքեմենյանները ճանաչում էին փոքրասիական հունական քաղաք-պետությունների և Էգեյան ծովում բոլոր կղզիների անկախությունը: Նշված դաշնագրով Պարսկաստանի և Աթենքի գլխավորությամբ գործող հունական պետությունների դաշնակցության միջև տեղի ունեցավ ազդեցության գոտիների բաժանում: Կողմերը համաձայնության եկան փոխադարձ զիջումների ճանապարհով: Պարսիկները խոշոր դրամական փոխհատուցմամբ համոզեցին աթենքցիներին հրաժարվել ապստամբած եգիպտացիներին օգնություն ցուցաբերելուց:

Այսպիսով՝ Աթենքի և Պարսկաստանի միջև համարյա երկու տասնամյակ պահպանվեց ուժերի հարաբերական հավասարակշռություն, և այդ խաղաղ դադարը հնարավորություններ ստեղծեց անարգել առևտրի ու տնտեսական զարգացման համար:

Նվաճված ժողովուրդների մշտական ապստամբությունները՝ սատրապների խռովությունները և ռազմական պարտությունները ստիպեցին Արտաքսերքսես Ա-ին և նրա հետնորդներին՝ արմատապես փոխել իրենց դիվանագիտությունը և այսուհետև լայնորեն կիրառել մեկ պետությունը մյուսի դեմ հրահրելու քաղաքականությունը՝ դրա համար, որպես ազդու միջոց, լայնորեն օգտագործելով կաշառքը: Հունաստանի թուլացման մեջ շահագրգռված Պարսկաստանը, օրինակ, Պելոպսպոնեսյան պատերազմի ժամանակ (մ.թ.ա. 431-404 թթ.) օգնում էր մեկ Սպարտային, մեկ Աթենքին: Պարսիկները մեծ գումարներ էին ծախսում նաև հունական պետական գործիչներին և ականավոր հռետորներին վարկաբեկելու համար, առաջնորդվելով «Բաժանիր, որ տիրես» սկզբունքով: Պարսկական ոսկու հոսքն արդյունավետ կերպով նպաստում էր Հունաստանի պառակտմանը:

Արտաքսերքսես Ա-ն մահացավ մ.թ.ա. 424թ.: Նրա մահվան օրը իր մահկանացուն կնքեց նաև նրա կինը՝ Դամասպիան: Նրանք երկուսն էլ թաղվեցին Նաղշ-ի Ռուսթամում:

Գահ բարձրացավ Արտաքսերքսեսի որդի Քսերքսես Բ-ն, որը միակ օրինական ժառանգորդն էր: Սակայն նա գահակալեց ընդամենը 45 օր: Պալատական ազնվականության կողմից կազմակերպվեց դավադրություն և արքայից արքան իր իսկ ննջարանում սպանվեց: Մ.թ.ա. 423 թ. սկզբին իշխանությունը զավթեց Արտաքսերքսեսի որդիներից մեկը՝ Սեկուդիան անունով, որի մայրը հարճ էր: Սակայն նոր թագավորը լուրջ

հենարան չուներ: Ազդեցիկ մարդկանցից նրան աջակցում էին լոկ ներքինի Փարնակիասը և բոնատիրողի հորեղբոր որդին՝ Բաբելոնի սատրապի որդի Մենաստանը: Սեկուդիանը փորձեց համոզել իր խորթ եղբայր, Հիրկանիայի սատրապ Օխին (հին պարսկ. Վախսաուկա), որպեսզի նա ժամանի Սուզա և ստանձնի արքայական իշխանությունը: Սակայն Օխը, ոչ անհիմն կերպով կասկածելով, որ իրեն հրավիրում են ոչ թե գահակալելու, այլ սեփական հուղարկավորությանը մասնակցելու համար, չէր շտապում ժամանել Սուզա: Շուտով հեծելազորի հրամանատար Արբարը, Եգիպտոսի սատրապ Արքսամը (Արշամա) և հզոր իշխանություն վայելող ներքինի Արտոքսարն անցան Օխի կողմը: Սեկուդիանը, որը կառավարեց ընդամենը վեց ու կես ամիս, հանձնվեց՝ հույս ունենալով, որ կարժանանա նոր տիրակալի ողորմածությանը, սակայն մահապատժի ենթարկվեց:

Այսպիսով՝ մ.թ.ա. 423 թ. փետրվարին գահ բարձրացավ Հիրկանիայի սատրապ Օխը, որն Արտաքսերքսես Ա-ի որդին էր՝ ծնված բաբելոնական հարճից, որի պատճառով էլ նա կրում էր հունարեն Նոթ մականունը, այսինքն՝ «ապօրինածին»: Նա ընդունեց Դարեհ Բ գահակալական անունը: Նրա առաջին գործը հանդիսացավ մահապատժի ենթարկել բոլոր նրանց, ովքեր Սեկուդիանի հետ միասին մասնակցել էին Քսերքսես Բ-ի սպանությանը: Գահը զավթելու մտադրությամբ Օխի եղբայր Արսիտը ապստամբեց նրա դեմ: Պահանջվեց բավականին երկար ժամանակ այդ հուժկու ապստամբությունը ճնշելու համար: Ի վերջո, Արսիտը պարտություն կրեց և թեթևամտորեն հավատալով, որ հարազատ եղբայրը գթասիրտ կլինի իր նկատմամբ՝ հանձնվեց: Սակայն հետևեց սառնասիրտ ու դաժան մահապատիժը:

Դարեհ Բ-ի դեմ հուզումները երկրի տարբեր նահանգներում չէին դադարում: Մ.թ.ա. մոտ 413 թ. ապստամբություն բռնկեց Լյուդիայում: Մ.թ.ա. V դարի վերջերից սկսած՝ Փոքր Ասիայի սատրապները մշտապես միմյանց դեմ մղում էին պատերազմներ, իսկ առանձին սատրապներ հաճախ ապստամբում էին կենտրոնական իշխանության դեմ և հենվելով հույն վարձկանների օգնության վրա՝ ձգտում էին ձեռք բերել կատարյալ անկախություն: Միաժամանակ չէին դադարում նաև նվաճված ժողովուրդների ապստամբությունները: Մ.թ.ա. 411 թ. հուզումներ սկսվեցին նաև Եգիպտոսում, որի հետևանքով ավերվեց Էլեֆանտինի հուդայական ռազմական գաղութաբնակների տաճարը, որը հանդիսանում էր պարսկական տիրապետության հենակետերից մեկը: Ապստամբությունը տարածվեց ողջ երկրով մեկ, և Եգիպտոսը, փաստորեն, անջատվեց

Աքեմենյան պետությունից: Միայն 60 տարի անց՝ մ.թ.ա. 342թ., պարսիկներին հաջողվեց վերստին վերանվաճել այդ երկիրը:

Դարեհ Բ-ն իր նախորդների օրինակով հետևողական աշխատանք էր տանում Աթենքի և Սպարտայի միջև հակասությունները խորացնելու ուղղությամբ: Այդ քաղաքականությունն իրականացնելու համար անակնկալ կերպով ստեղծվեց բարենպաստ իրադրություն: Նպատակ ունենալով ստեղծել հզոր նավատորմ Աթենքին ընկճելու համար՝ Սպարտայի հակաաթենքյան կոալիցիան դիմեց Դարեհ Բ-ին խնդրելով դրամական օգնություն: Արքայից արքան հաճույքով ստանձնեց միջազգային բանկիրի դերը: Պարսկական դիվանագիտության հաշվարկը կառուցված էր այն բանի վրա, որ Սպարտայի օգնությամբ Աթենքի ծովային հզորության խորտակումը կամ, ծայրահեղ դեպքում, թուլացումը հիանալի պայմաններ կստեղծի վերականգնելու համար Պարսկաստանի հզորությունը Էգեյան ծովի ավազանում և Փոքր Ասիայում: Այս հեռահար հաշվարկների հեղինակը արտաքին քաղաքականության հարցերի գծով արքայից արքայի խորհրդական Տիսաֆերն էր, Փոքր Ասիայի արևմտյան ծովափի տարածաշրջանի սատրապը՝ արտասովոր ընդունակությունների տեր մի մարդ:

Տիսաֆերնի առաջարկով Սպարտա ուղարկվեց միանգամից երկու դեսպանություն. առաջինը՝ կղզիաբնակ հույների կողմից, որոնք դուրս էին եկել աթենական միությունից, իսկ մյուսը՝ Տիսաֆերնի կողմից: Վերջինս հույս ուներ միանգամից լուծել երկու խնդիր. թուլացնել Աթենքը և Սպարտայի օգնությամբ ապահովել արքայից արքայի տիրապետության տակ գտնվող Փոքր Ասիայի հունական քաղաքներից հարկերի և տուրքերի ավելի կանոնավոր գանձումը: Երկու դեսպանություններն էլ լակեդեմոնացիներին առաջարկեցին խաղաղություն և դաշինք:

Կարճատև բանակցություններից հետո պարսկական դեսպանների և Սպարտայի էֆորների միջև մ.թ.ա. 412 թ. կնքվեց դաշինքի վերաբերյալ պայմանագիր՝ Դարեհ Բ-ին ձեռնտու պայմաններով: Այդ պայմանագրով սպարտացիները ճանաչում էին պարսից արքայի իրավունքները հունական փոքրասիական քաղաքների նկատմամբ, որոնք ազատագրվել էին հույն-պարսկական պատերազմների հետևանքով: Մեկ այլ հոդվածով այդ երկրների և քաղաքների բոլոր հարկերն ու եկամուտները, որոնք մինչ այդ ստանում էր Աթենքը, այժմ փոխանցվելու էին պարսից արքային: Սակայն քանի որ կողմերը չէին շտապում կատարել իրենց ստանձնած պարտավորությունները, ուստի սկսվեցին նոր բանակցություններ, որոնք ավարտվեցին Միլեթ քաղաքում կնքված նոր

պայմանագրի ստորագրումով, որը նախորդի համեմատ ավելի ձեռնտու էր Սպարտային: Սակայն, այնուհանդերձ, պայմանագրի այդ տարբերակը ևս չէր կարող բավարարել լակեդեմոնացիներին, քանի որ նրանք ունեին համահունական գերիշխանության հավակնություններ: Առավել ևս, որ նոր պայմանագրի մեջ պարունակվում էր մի կետ, որտեղ ասվում էր, որ արքային են անցնում այն բոլոր քաղաքներն ու կղզիները, որոնք պատկանել են ոչ միայն իրեն՝ արքային, այլև իր նախնիներին: Այդ առթիվ Թուկիդիտեսը գրում էր, որ «այդ հռդվածի բուն իմաստով բոլոր հելլեններին խոստացված ազատության փոխարեն լակեդեմոնացիները կրկին նրանց վրա դրեցին պարսկական լուծը»:

Սպարտայի պահանջը՝ վերացնելու այդ հռդվածը, առաջ բերեց Տիսաֆերնի զայրույթը: Հենց այդ պահից պարսկական դիվանագիտությունը Սպարտայից շրջադարձ կատարեց դեպի Աթենքի կողմը:

Տիսաֆերնը այդ քայլին դիմեց իր խորհրդական, աթենքցի հույն Ալքիվիադեսի խորհրդով, որն այդ ժամանակ գտնվում էր քաղաքական վտարանդության մեջ, բայց երազում էր թեկուզ իր հայրենիքին դավաճանելու գնով վերադառնալ Աթենք և կրկին պետության մեջ ձեռք բերել ղեկավար դիրք: Ալքիվիադեսը խորհուրդ տվեց Տիսաֆերնին վերադառնալ արևելյան արքաների՝ դարերով փորձված դիվանագիտությանը. հունական աշխարհում աջակցել քաղաքական դուալիզմի համակարգին և դրանով իսկ թույլ չտալ հունական պետություններից ոչ մեկի չափից ավելի ուժեղացումը: «Արքայի համար առավել հեշտ է, էժան և անվտանգ հելլենական պետություններին հնարավորություն տալ հյուծել ու թուլացնել մեկը մյուսին»,- ասում էր Ալքիվիադեսը:

Վերջինիս դավաճանական գործունեությունը հասավ իր նպատակին, և Պարսկաստանը սկսեց աջակցել աթենքցիներին ընդդեմ Սպարտայի: Սակայն որոշ ժամանակ անց, կտրուկ շրջադարձ կատարելով, պարսկական դիվանագիտությունը կրկին սկսեց մերձենալ սպարտացիների հետ, որոնց պարսիկները կրկին սկսեցին օգնել մինչև Աթենքի ծովային պետության լրիվ ջախջախումը: Մինչև այդ գործին ձեռնամուխ լինելը՝ արքայից արքային անհրաժեշտ էր ճնշել երկրի ներսում բռնկած ապստամբությունները և վերականգնել անդորրը՝ մեծ պատերազմի ժամանակ ապահով թիկունք ունենալու համար:

Սովորաբար ապստամբների դեմ արքայից արքան զորքեր էր ուղարկում իր հրամանատարներից մեկի գլխավորությամբ, սակայն երբ մ.թ.ա. 405 թ. ապստամբեց կարդուխների (կարդուսիների) ռազմաշունչ լեռնական ցեղը, որը բնակվում էր Ասորեստանի, Մարաստանի և Հա-

յաստանի միջև ընկած շրջանում, արքայից արքան նրանց դեմ անձամբ շարժեց բանակը: Ռազմարշավի ժամանակ Դարեհ Բ-ն հիվանդացավ և մ.թ.ա. 404 թ. Բաբելոնում հրաժեշտ տվեց կյանքին: Նրա որդի Արտաքսերքսես Բ-ն (մ.թ.ա. 404-358) գահի համար պայքարի մեջ մտավ իր կրտսեր արյունակից եղբայր Կյուրոսի հետ: Սակայն մ.թ.ա. 401 թ. սեպտեմբերի 3-ին Բաբելոնից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Կունաքս գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Կյուրոսը սպանվեց:

Նկատի ունենալով, որ իր դեմ նետված մարտահրավերի ժամանակ Սպարտան աջակցել էր Կյուրոսին՝ Արտաքսերքսես Բ-ն խզեց կապերը նրա հետ և պատերազմական գործողություններ սկսեց Պարսկաստանի այդ վտանգավոր թշնամու դեմ: Մ.թ.ա. 394 թ. Կնիդ կոչված վայրում տեղի ունեցած ճակատամարտում պարսիկները ջախջախեցին ապստամբներին և մ.թ.ա. 387 թ. նրանց հետ կնքեցին «արքայական» հաշտության պայմանագիրը, ըստ որի՝ Փոքր Ասիայի հունական քաղաքները և Կիպրոս կղզին կրկին անցնում էին Պարսկաստանին: Հույների համար այդ նվաստացուցիչ պայմանագիրը միաժամանակ պարսկական զենքի փայլուն հաջողությունն էր: Պարսիկներին կրկին հաջողվեց իրենց տիրապետությունը հաստատել Էգեյան ծովի արևելյան շրջանների նկատմամբ: Իսկ ամենակարևորը Անտալքիդյան հաշտությունն արգելում էր նաև հունական պետությունների որևէ միավորում ստեղծելը և օրինականացնում էր նրանց քաղաքական տրոհվածությունը:

Արտաքսերքսես Բ-ն, զենքին զուգահեռ, լայնորեն օգտագործում էր նաև ճկուն դիվանագիտությունը: Նա կարողացավ գլխավորապես ոսկու օգնությամբ հույների նկատմամբ տանել հաղթանակ. մի բան, որ իրենից առաջ չէր հաջողվել իրականացնել Դարեհ Ա-ին ու Քսերքսեսին զենքի օգնությամբ: Պարսիկ դիվանագետներին հաջողվեց միմյանցից բաժանել հույներին և առանց արյուն հեղելու հաղթել նրանց:

Օգտվելով հույների հետ ձեռք բերված խաղաղությունից՝ Արտաքսերքսես Բ-ն փորձեց հնազանդեցնել Մեղական սատրապությունում բնակվող կադուսիների ցեղին: Սակայն այդ պատժիչ արշավանքը ավարտվեց անարդյունք, և արքան ուրախ էր, որ այդ արշավանքից կարողացավ վերադառնալ ողջ-առողջ՝ կորցնելով մեծ թվով զինվորներ: Արտաքսերքսես Բ-ի կառավարման շրջանում անկախություն ձեռք բերեցին նաև կարդուխները, քիրարենները, կոլխերը և մի շարք այլ ցեղեր:

Արտաքսերքսես Բ-ի փորձերը՝ Եգիպտոսը կրկին ենթարկելու աքեմենյան տիրապետությանը, ավարտվեցին անհաջողությամբ: Վիճակը բարվոք չէր նաև պետության մյուս նահանգներում: Փյունիկյան քաղաք-

ներում և փոքրասիական սատրապություններում տեղի էին ունենում ապստամբություններ: Բազմաթիվ ցեղեր, որոնք բնակվում էին անմատչելի վայրերում, սկսած Արաբիայից և վերջացրած Միջին Ասիայով, արդեն չէին ենթարկվում նրան և հարկեր չէին վճարում: Այդ նույն ժամանակաշրջանում Խորեզմը, Սողդիանան և սաքերը արքայի հպատակներից վերածվեցին նրա «դաշնակիցների»:

Արտաքսերքսես Բ-ն իր 366 կանանցից ու հարճերից ուներ 150 որդի: Ավագ որդի Դարեհը հայտարարվեց գահաժառանգ: Համոզվելով, որ հայրը դեռ մտադրություն չունի հօգուտ իրեն հրաժարվելու գահից՝ 50-ամյա Դարեհը որոշեց արագացնել իր գահակալության գործը և կազմակերպեց դավադրություն հարազատ հոր դեմ: Սակայն դավադրությունը բացվեց, և արքայական դատավորները վճիռ կայացրին մահապատժի ենթարկել Դարեհին: Վերջինս և նրա բոլոր որդիները, բացի մեկից, գլխատվեցին:

Սակայն այս դեպքը եզակի չէր: Առհասարակ պետք է նշել, որ Արտաքսերքսես Բ-ի կյանքի վերջին տարիները թունավորվեցին պալատական սադրանքների հետևանքով:

Ի վերջո, մ.թ.ա. 358 թ. դեկտեմբերին, 86 տարեկան հասակում, Արտաքսերքսես Բ-ն մահացավ՝ 45 տարի զբաղեցնելով աքեմենյան գահը: 358թ. գահ բարձրացավ նրա կրտսեր որդի Օխը, որն ընդունեց Արտաքսերքսես Գ գահակալական անունը (մ.թ.ա. 358-338): Նա իր առաջին գործը համարեց իր մերձավորագույն ազգականների ոչնչացումը, ապագայում բացառելու համար ամեն տեսակի դավադրությունները: Միայն մեկ օրվա ընթացքում նա սպանել տվեց իր 80 եղբայրներին: Նոր տիրակալը երկաթյա կամքի տեր մարդ էր: Նա եռանդուն կերպով ձեռնամուխ եղավ Աքեմենյան տերությունը իր նախկին սահմաններում վերականգնման գործին: Փոքր Ասիայում և Սիրիայում ճնշվեցին բազմաթիվ ապստամբություններ ու խռովություններ, վերականգնվեց պարսկական տիրապետությունը Եգիպտոսում և Կիպրոսում: Առանձնակի դաժանությամբ նա ճնշեց փյունիկացիների ապստամբությունը: Հարուստ քաղաք Սիդոնը հրդեհի մատնվեց ու ոչնչացվեց: Սարսափն անդամալուծեց Փյունիկիայի բնակչության կամքը և այդ երկիրը ծնկի եկավ պարսիկների առջև: Պարսիկ զորահրամանատար Բագոյը Երուսաղեմում ստիպեց հուդայականներին կատարելապես հնազանդվել պարսիկներին:

Այսպիսով՝ Արտաքսերքսես Գ-ի տիրապետության շրջանում Պարսկաստանը մեկ անգամ ևս ցույց տվեց իր ուժն ու ընդունակությունը՝ պահպանելու հսկա պետության միասնությունը, ճիշտ է՝ ծայրահեղ դաժան միջոցների օգնությամբ:

Սակայն այս անագորույն բռնակալի կառավարման շրջանում ևս չէին դադարում պալատական ու հարեմական սադրանքները, որին ինքը ևս զոհ գնաց: Մ.թ.ա. 338 թ. Արտաքսերքսես Գ-ն թունավորվեց իր անձնական բժշկի կողմից ու մահացավ: Նրա սպանությունը կազմակերպել էր ազդեցիկ պալատական ներքինի Բագոյը, որը կապված էր մի խումբ դավաղիրների հետ:

Գահի բարձրացվեց սպանված արքայի որդի Արսեսը, որը երկու տարի հետո՝ մ.թ.ա. 336 թ. հունիսին, նույնպես դարձավ Բագոյի դավաղրության զոհ և իր ողջ ընտանիքի հետ սպանվեց: Չնայած իր այդ կարճատև կառավարմանը՝ Արսեսը հասցրեց ձեռք բերել իր հպատակների ատելությունը:

Մ.թ.ա. 336 թ. ամենազոր ներքինի Բագոյը գահի վրա բազմեցրեց Աքեմենյան տոհմի կողմնական գծով ներկայացուցիչ, Հայաստանի սատրապ Կոդոմանին (Կոդոմանոսին), որը լրացրել էր իր 45 տարին: Նոր արքան ընդունեց Դարեհ Գ գահակալական անունը և հանդիսացավ աքեմենյան վերջին թագավորը (մ.թ.ա. 336-330): Ավելի ուշ Բագոյը փորձեց թունավորել իր այս դրածոյին ևս, սակայն Դարեհը ստիպեց նրան մինչև հատակը խմել թույնով լի բաժակը:

Իր կառավարման հենց սկզբում Դարեհը Եգիպտոսում ճնշեց հուզումները:

8. ԻՐԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ԿՈՂՄԻՑ

Ճիշտ այն ժամանակ, երբ պարսկական ազնվականության ավագանին զբաղված էր պալատական սաղրանքներով ու հեղաշրջումներով, տերության արևմտյան սահմանների մոտ քաղաքական հորիզոնում հայտնվեց մի նոր վտանգավոր հակառակորդ: Մ.թ.ա. IV դ. կեսերից Բալկանյան թերակղզում սկսվեց Մակեդոնիայի բարձրացումն ու հզորացումը, որն սկսեց ավելի ու ավելի ծանրակշիռ դեր խաղալ Հունաստանի քաղաքական կյանքում: Մ.թ.ա. 360 թ. Մակեդոնիայի թագավոր դարձավ Ֆիլիպ Բ-ն, որը միավորեց ողջ Մակեդոնիան և այնուհետև սկսեց մեկը մյուսի հետևից իրեն ենթարկել հունական քաղաքները: Մ.թ.ա. 346 թ. մի քանի տարվա անընդմեջ պայքարից հետո Աթենքը ևս ճանաչեց Ֆիլիպի գերիշխանությունը: Այսպիսով՝ Մակեդոնիան վերածվեց Էգեյան ավազանի ուժեղագույն պետություններից մեկի: Մ.թ.ա. 338 թ. կնքվեց բոլոր հունական պետությունների դաշինք, որի գլխավոր նպատակը պարսիկների դեմ պայքարն էր: Որպես Աքեմենյանների դեմ համահունական պատերազմի գաղափարախոս հանդես էր գալիս հայտնի հռետոր Իսոկրատը: «Միացյալ Հունաստանը,- գրում էր նա,- արշավանք կկազմակերպի հելլենական ժողովրդի իսկական թշնամի Պարսկաստանի դեմ: Պարսկաստանի դեմ այդ երջանիկ պատերազմը ազատ ու լայնարձակ տարածություն բաց կանի նախածեռնող ոգու առջև և Հունաստանը կազատի աղքատ մարդկանց զանգվածից՝ աշխատանք տալով թափառող տարրերին, որոնք սպառնում են հելլենական պետության ու մշակույթի բուն գոյությանը... Թող հայրենասիրական գաղափարով ոգևորված զորքը Հունաստանը դարձնի Արևելքի՝ համաշխարհային փոխանակության այդ կենտրոնի անհաշիվ հարստությունների տերը»:

Երբ դաշնակից զորքերի ընդհանուր հրամանատար ճանաչված Ֆիլիպը տենդորեն պատերազմի նախապատրաստություններ էր տեսնում պարսիկների դեմ, դավադրության զոհ դարձավ: Մ.թ.ա. 336թ., 46 տարեկան հասակում, դավադիրների կողմից նա սպանվեց իր աղջկա հարսանիքի ժամանակ: Չի բացառվում, որ այդ դավադրությունը կազմակերպվել էր պարսիկների կողմից:

Թագավոր հռչակվեց Ֆիլիպի որդի Ալեքսանդրը (մ.թ.ա. 336-323), որն ընդամենը 20 տարեկան էր: Իր հոր լայնահուն ծրագրերի իրականացումը նա վերցրեց իր վրա: Ալեքսանդրը ստացել էր հունական տիպի կրթություն:

Նրա ուսուցիչներից էր եղել նաև հույն մեծ փիլիսոփա Արիստոտելը:

Բալկանյան թերակղզու հույները պատրաստ էին ապստամբություն բարձրացնել երիտասարդ թագավորի դեմ: Հակամակեդոնական քշնամական շարժումը գլխավորում էր Ֆիվան: Ֆիվանցիները կոչ էին անում հույներին պարսից արքայից արքայի օգնությամբ ոչնչացնել մակեդոնացիների բռնատիրությունը Էլլադայում: Ալեքսանդրը դաժան հաշվեհարդար տեսավ ֆիվանցիների հետ՝ մասամբ կոտորելով նրանց, մասամբ էլ վաճառելով ստրկության: Ընդ որում՝ իր հոր նման նա գործում էր ոչ միայն զենքի ուժով, այլև դիվանագիտական միջոցներով:

Ամրապնդելով իր թիկունքը՝ մ.թ.ա. 334 թ. գարնանը մակեդոնական բանակը Ալեքսանդրի գլխավորությամբ անցավ Հելլեսպոնտեսը՝ նպատակ ունենալով նվաճել Ասիան: Սկսվեց Մակեդոնացու պարսկական արշավանքը: Ալեքսանդրի բանակը բաղկացած էր 30.000 հետևազորից և 5.000 հեծյալներից: Պատերազմը պաշտոնապես վարվում էր Կորինֆյան դաշնության անունից, ուստի արշավանքին մասնակցում էին նաև 7.000 հույն հետիոտներ, 600 թեսալիացի հեծյալներ և մի քանի հարյուր նետաձիգներ Կրետե կղզուց: Բանակին ուղեկցում էր 160 մարտանավ:

Թեև Դարեհն իր տրամադրության տակ ուներ ավելի բազմամարդ բանակ, քան Մակեդոնացին, սակայն այն իր կարգապահությամբ, մարտական հատկանիշներով, զենքի որակով և մարտավարական պատրաստվածությամբ, ինչպես նաև ռազմական արվեստի մակարդակով մեծապես զիջում էր հունա-մակեդոնական բանակին:

Հունական վարձկանների հրամանատար Մեմնոնը միակն էր Դարեհի շրջապատի մարդկանցից, որ խորհուրդ տվեց արքայից արքային խուսափել Ալեքսանդրի հետ բաց ճակատամարտից և նահանջել՝ երկիրը վերածելով անապատի, որպեսզի մակեդոնացիները չկարողանան առաջ շարժվել զինվորների համար մթերքների, իսկ ձիերի համար կերի բացակայության պատճառով: Սակայն Ֆրիգիայի սատրապ Արսիտը պարծենկոտ կերպով հայտարարեց, որ ինքը թույլ չի տա, որ արքայի հպատակներից թեկուզ և մեկի տունը այրվի: Մյուս սատրապները ևս պահանջում էին անմիջապես տալ վճռական ճակատամարտ: Իսկ Դարեհը կատարելապես վստահ էր իր հաղթանակի մեջ և հրամայեց կենդանի որսալ Ալեքսանդրին և տանել Սուզա՝ իր մոտ:

Կողմերի միջև առաջին բախումը տեղի ունեցավ մ.թ.ա. 334 թ. մայիսին Գրանիկ գետի մոտ, որտեղ Մակեդոնացին պարտության մատնեց պարսից փոքրասիական սատրապների միացյալ ուժերին: Այդ հաղթանակը Մակեդոնացու առջև բաց արեց ճանապարհը դեպի Փոքր Ասիայի

նավահանգիստները: Ալեքսանդրը որոշեց սկզբում գրավել փոքրասիական ծովափում գտնվող պարսկական նավատորմի հենակետերը և այնուհետև շարժվել Սիրիայի (Ասորիքի) և Փյունիկիայի դեմ:

Փոքր Ասիայում Ալեքսանդրը ոչնչացրեց պարսիկների կողմից հովանավորվող օլիգարխիական իշխանությունը և հաստատեց դեմոկրատական կառավարում:

Մ.թ.ա. 333 թ. ամռանը մակեդոնացիները գրավեցին Կիլիկիան և նրա վրայով շարժվեցին Ասորիք, որտեղ նրանց սպասում էր ինքը՝ Դարեհ Գ-ն՝, իր բազմահազար զորքերով: Կիլիկիայի և Ասորիքի սահմանում Իսսոս կոչված վայրի մոտ, մ.թ.ա. 333 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ խոշոր ճակատամարտ, որի ընթացքում, չնայած թվական մեծ գերակշռությանը, պարսից բանակը ծանր պարտություն կրեց: Չսպասելով ճակատամարտի ելքին՝ Դարեհը լքեց իր բանակը և թռչելով ձիու վրա՝ փախուստի դիմեց՝ հաղթողների ձեռքին թողնելով մորը, կնոջը և զավակներին: Իսսոսի ճակատամարտը դեռևս վճռականը չէր, սակայն այն հանդիսացավ վերջի սկիզբը, և այդ ժամանակվանից սկսած՝ պարսկական բանակը սկսեց անկանոն նահանջել: Այս հաղթանակից հետո Ալեքսանդրը անմիջապես չհետապնդեց Դարեհին, որը շարժվել էր դեպի Եփրատի կողմը, այլ շարունակեց նոր տարածքների նվաճումը: Մակեդոնացիները գրավեցին Ասորիքը և Փյունիկյան քաղաքներ Արադը, Բիբլոսը և Սիդոնը, որտեղ նրանք չհանդիպեցին ոչ մի դիմադրության: Յոթամսյա պաշարումից հետո Մակեդոնացուն հաջողվեց գրավել նաև ուժեղ ամրացված Տյուրոս քաղաքը, որի բնակիչներից մոտ 6000 մարդու Ալեքսանդրը սրի քաշեց, 2000 մարդու հրամայեց գամել սյուներին, իսկ 3000 մարդու վաճառեց ստրկության:

Այդ ընթացքում Դարեհը տեղեկացրեց Ալեքսանդրին, որ ինքը պատրաստ է նրան զիջել Եփրատից արևմուտք ընկած բոլոր շրջանները, նրան կնության տալ իր Սթաթիրա անունով դստերը, որն առանց այն էլ մակեդոնացիների մոտ գտնվում էր գերության մեջ, վճարել 10.000 տաղանդ արծաթ՝ որպես իր ընտանիքի փրկագին, և այդ պայմաններով կնքել հավերժական խաղաղություն: Սակայն Ալեքսանդրը պահանջեց, որպեսզի Դարեհն անձամբ ներկայանա իրեն և Մակեդոնացուն ճանաչի որպես Ասիայի տիրակալ: Դրա հետ Դարեհը չէր կարող համաձայնվել:

Այնուհետև, մ.թ.ա. 332 թ. Ալեքսանդրը շարժվեց դեպի Եգիպտոս, որն առանց դիմադրություն ցույց տալու հնազանդվեց նրան: Հին մայրաքաղաք Մեմֆիսում քրմերը նրա գլխին դրեցին Վերին և Ներքին Եգիպտոսի թագերը: Ալեքսանդրը հայտարարվեց Ամմոն աստծո զավակ

և փարավոնների ժառանգորդ: Մ.թ.ա. 331 թ. սկզբին Նեղոսի արևմտյան ափին նա հիմնադրեց Ալեքսանդրիա քաղաքը:

Եգիպտոսից Ալեքսանդրը վերադարձավ Ասորիք, անողոք ճնշով պատժեց Սամարրայի ապստամբ բնակչությանը՝ մինչև վերջին մարդը կոտորելով բոլորին, չխնայելով ոչ երեխաներին, ոչ կանանց և ոչ էլ ծերերին: Այստեղից նա սկսեց հետապնդել Դարեհին: Վերջինս դեսպանների միջոցով երկու անգամ առաջարկեց հաշտություն, սակայն մերժում ստացավ: Ուստի հապշտապ կերպով հավաքեց զորքեր և Ալեքսանդրին դիմավորեց Նինվեի ավերակներից ոչ հեռու գտնվող Գավգամելա կոչված վայրում: Ճակատամարտից առաջ Դարեհը իր զորքերից պահանջեց երդվել հայրենական աստվածների, անշեջ կրակի, արևի փայլի և Կյուրոս Մեծի հավերժ հիշատակով, որ իրենք կփրկեն պարսիկ ժողովրդին և իր սեփական արքայական անունը:

Գավգամելայի մոտ վճռական ճակատամարտը տեղի ունեցավ մ.թ.ա. 331 թ. հոկտեմբերի 1-ին: Այն, ըստ էության վճռելու էր Աքեմենյան պետության ճակատագիրը: Ճակատամարտում պարսիկները կրեցին ջախջախիչ պարտություն և այլևս ի վիճակի չէին մակեդոնական բանակին ցույց տալու կազմակերպված դիմադրություն: Ի դեպ, այդ ճակատամարտում պարսկական զորքի կազմում Մակեդոնացու դեմ մարտնչում էին նաև հայկական զորքերը՝ այրուձին ու հետևակը՝ Օրոնտեսի (Երվանդ) և Միթրաուստեսի (Միհրվահիշտ) հրամանատարությամբ:

Դարեհը կրկին դրսևորեց փոքրոգություն և փախուստի դիմեց՝ իր տերությունը թողնելով բախտի քմահաճույքին:

Ալեքսանդրը արշավեց դեպի Բաբելոն, որտեղ հռչակվեց թագավոր և զոհ մատուցեց Մարդուկ աստծուն: Այնուհետև գրավեց Պարսկաստանի գլխավոր քաղաքներ Սուզան (Սուզիանան), Էկբաթանը, իսկ ապա Պերսեպոլիսը (ներկայիս Ֆարս նահանգը), որտեղ գտնվում էր աքեմենյան թագավորների Պարսա (Պերսեպոլիս) մայրաքաղաքը, որը մ.թ.ա. 330 թ. հանձնվեց առանց դիմադրության: Այստեղ Մակեդոնացին ձեռք բերեց Աքեմենյանների կուտակած անհամար գանձերը՝ 120.000 տաղանդ արծաթ և այլ ազնիվ մետաղներ, որոնք Սուզա և Բաբելոն տեղափոխելու համար անհրաժեշտ եղան 10.000 սայլ և 300 ուղտ: Ջավթիչների բանակը Պերսեպոլիսին մոտենալիս նրա բնակիչների մի մասը փախուստի դիմեց, իսկ մնացածներին Ալեքսանդրի հրամանով սպասում էր անխնա կոտորածը: Բացառությամբ արքայական պալատների, ողջ քաղաքը Ալեքսանդրը հանձնեց կողոպուտի: Ավարի համար կողոպտիչները սպանում էին մեկը մյուսին: Բազմաթիվ պարսիկներ, որոնք փնտրում

էին թեթև մահ, իրենց կանանցով ու երեխաներով հասցրեցին իրենց նետել քաղաքային բարձր պարիսպներից ցած, իսկ ոմանք իրենց տների հետ այրեցին իրենց: Մ.թ.ա. 330 թ. մայիսին Պերսեպոլիսը կրակի մատնվեց: Ենթադրվում է, որ դա կատարվեց քաղաքական նպատակներով: Կան նաև այլ վարկածներ՝ ուժեղ հարբածության վիճակում Ալեքսանդրը այրվող ջահը ձեռքին ուղղվել է դեպի Քսերքսեսի պալատը և այրել այն, որից հետո հրդեհը տարածվել է ամբողջ քաղաքով մեկ: Մեկ այլ վարկածով՝ Պերսեպոլիսը այրվել է պատահմամբ, Ալեքսանդրի հարբած զինվորների կողմից, և վերջապես՝ կա նաև մի տարածված վարկած, ըստ որի՝ այդ քաղաքն այրվել է Ալեքսանդրի հարճերից (գեթերա) մեկի՝ Թաիդայի քմահաճ կամքով:

Երբ մ.թ.ա. 330 թ. Ալեքսանդրը մուտք գործեց Էկբաթան, Դարեհը այլևս այնտեղ չէր: Նա Կասպից ծովի հարավային ափերով փախել էր Արևելյան Իրան՝ հույս ունենալով Բակտրիայում և միջինասիական մյուս շրջաններում հավաքել զորքեր և փորձել փոխել պատերազմի ընթացքը հօգուտ իրեն: Ձախողակ արքայի հետ գտնվում էին 30.000 պարսիկներ և հույն վարձկաններ: Ալեքսանդրը քայլ առ քայլ հետևում էր Դարեհին և այն է՝ պետք է բռներ, երբ պարսից արքայի սատրապներից մեկը՝ Բաքտրիայի սատրապը՝ Բեսս անունով, սպանեց Դարեհին, որը նոր էր բոլորել իր 50 տարին:

Բեսսը իրեն հռչակեց թագավոր՝ ընդունելով Արտաքսերքսես Դ աքեմենյան գահակալական անունը: Կարելի է ենթադրել, որ Դարեհը պատրաստ էր հանձնվել Ալեքսանդրին, իսկ Բեսսը և նրա կողմնակիցները վճռականորեն ընդդիմացան նրա այդ մտադրությանը: Բեսսը հիմնավորվեց Բակտրիայում և իր շուրջը համախմբեց բոլոր նրանց, ովքեր լի էին վճռականությամբ՝ հակահարված տալու զավթիչներին: Սակայն մ.թ.ա. 329 թ. Բակտրիան նվաճվեց մակեդոնացիների կողմից, և Բեսսը գերի ընկավ: Ալեքսանդրի հրամանով կտրեցին նրա քիթը, ականջների ծայրը և շղթայակապ, առանց զգեստների տարան մահապատիժն ի կատար ածելու: Նրան կապեցին երկու առանձին ծառերի ճյուղերի՝ ճկելով դրանք, և երբ բաց թողեցին, և ծառերն ուղղվեցին, դատապարտյալը երկու կես եղավ: Դարեհ Գ-ին սպանած մարդկանց հետ հաշվեհարդարը նպատակ ուներ շեշտել Ալեքսանդրի հավակնությունների օրինականությունը պարսկական միապետության նկատմամբ:

Եթե Արևմտյան Իրանը Ալեքսանդր Մակեդոնացին նվաճեց առանց մեծ ջանքերի, ապա Արևելքում՝ Միջին Ասիայում, նրա զորքերը հանդիպեցին կատաղի դիմադրության, և միայն մ.թ.ա. 327 թ.՝ եռամյա անընդ-

մեջ մարտերից հետո, նրան հաջողվեց ամրապնդվել այդ երկրամասում:

Միշտ կասկածամիտ, վրեժխնդիր և առարկություններ չընդունող Ալեքսանդրը Միջին Ասիայում իրականացնում էր զանգվածային կոտորածներ՝ ոչնչացնելով ամբողջ ցեղերի: Նման միջոցներով նա աշխատում էր անդամալուծել այդ ժողովուրդների կամքը և կոտրել նրանց դիմադրության ոգին:

Աքեմենյանների տերության արևելյան ծայրամասը ևս միացնելով իր նվաճած տիրույթներին՝ Մակեդոնացին մոտ տաս տարվա ընթացքում ավարտեց իրանական պետության հնազանդեցումը: Այսպիսով՝ Աքեմենյան տերությունը, գոյատևելով 220 տարի, դադարեց գոյություն ունենալուց:

Դարեհի մահվանից հետո Ալեքսանդրն ինքը դարձավ Աքեմենյանների ժառանգորդ և Ասիայի տիրակալ: Բոլոր նրանք, ովքեր հրաժարվում էին ճանաչել նրա իշխանությունը, հայտարարվում էին օրինական կառավարչի դեմ հանդես եկող խռովարարներ:

Այսպիսով՝ Առաջավոր Ասիայում պարսից տիրապետությունը փոխարինվեց հունական-մակեդոնական տիրապետությամբ: Նոր վիթխարի պետության կենտրոնը դարձավ Բաբելոն քաղաքը:

Ալեքսանդր Մակեդոնացին իր առջև խնդիր էր դրել մերձեցնել Արևմուտքն ու Արևելքը, որոնք իրենց հասարակական կազմակերպության և մշակույթի չափանիշներով առանձին ու տարբեր աշխարհներ էին: Այս վիթխարի ծրագիրն իրագործելու համար Ալեքսանդրը աշխատում էր հելլենական ոգով քաղաքակրթել արևելքցիներին: Ընդ որում՝ իր այդ նպատակին հասնելու համար նա չէր խորշում դիմել արմատական և կտրուկ միջոցների: Նա ամեն կերպ խրախուսում էր նաև խառն ամուսնությունները և իր հրամանատարներից շատերին ամուսնացրեց պարսկուհիների հետ: Իր հպատակներին օրինակ տալու համար հենց ինքը ամուսնացավ բաքտրուհի Ռոքսանեի հետ: Ալեքսանդր Մակեդոնացին յուրացրեց արևելյան իշխողների նիստուկացը, սկսեց բարձր պաշտոններ բաշխել պարսիկներին, իր զորքերը, այդ թվում նաև հրամանատարական կազմը, համալրել տեղաբնակներով և այլն: Նա որդեգրեց նաև Աքեմենյանների վարչական կառուցվածքն ու կառավարման ձևերը:

Հարկ է սակայն նշել, որ նախկին Աքեմենյան տերության մի շարք լայնածավալ նահանգներ, այնուամենայնիվ, չընկան Ալեքսանդրի տիրապետության տակ: Օրոնտեսը (Երվանդը), օրինակ, Հայաստանում պահպանեց իր տիրապետությունը: Թեև Մակեդոնացին Հայաստանի սատրապ նշանակեց Սուզայի կառավարիչ պարսիկ Միթրենին, սակայն

վերջինս այդպես էլ չկարողացավ գրավել իր նոր պաշտոնը:

Ջախջախելով պարսկական պետությունը՝ Մակեդոնացին ստեղծեց մի վիթխարի ռազմաստրկատիրական կայսրություն, որն արևելքում տարածվում էր ընդհուպ մինչև Հնդկաստան: Ըստ էության, դա նոր համաշխարհային կայսրություն էր: Ամենուրեք, որտեղ Ալեքսանդրը հաստատում էր իր իշխանությունը, նա աշխատում էր կյանքում կենսագործել իր կողմից մտահղացված գաղափարը հելլենների և պարսիկների միաձուլման վերաբերյալ:

Սակայն նոր աշխարհակալի ստեղծած տերությունը երկար կյանք չունեցավ: Ինքը՝ երեսներեքամյա Ալեքսանդրը, մ.թ.ա. 323 թ. հունիսի 13-ին Բաբելոնում տենդից մահացավ: Նրա մահվանից հետո նրա ստեղծած համաշխարհային տերությունը շուտով քայքայվեց ու տրոհվեց: Քանի որ Մակեդոնացին չափահաս ժառանգորդներ չուներ, նրա զորավարները (այսպես կոչված՝ դիոդոխները, այսինքն՝ ժառանգորդները), թեժ պայքարի մեջ մտան միմյանց հետ, որի հետևանքով Ալեքսանդրի կայսրությունը բաժանվեց մի քանի մասերի: Ըստ այնմ հիմնվեցին նաև թագավորական դինաստիաներ: Քանի որ այդ պետությունների զարգացման մեջ կարևոր դեր էին խաղում հույները (հելլենները), ուստի այդ պետությունների տիրապետության դարաշրջանն ընդունված է անվանել հելլենիստական: Իրենց բնույթով դրանք իրենցից ներկայացնում էին հունական (հելլենական) պոլիսների և հին արևելյան բռնատիրությունների մի յուրահատուկ խառնուրդ: Հելլենիզմի շրջանում հունական մշակույթը լայնորեն տարածվեց ողջ Միջերկրածովյան ավազանում և հին Արևելքի հողերում:

Արևմուտքում՝ Սիրիան, Փյունիկիան և Փոքր Ասիայի տարածքը, իսկ արևելքում՝ Մակեդոնացու նվաճած ասիական գրեթե բոլոր հողերը մինչև Հինդոս գետը, անցան Ալեքսանդրի զորահրամանատարներից մեկի՝ Սելևկոս Ա Նիկատորի (մ.թ.ա. 358 կամ 354-280 թթ.) տիրապետության տակ, որը ստեղծեց հսկայածավալ մի պետություն: Մ.թ.ա. 305 թ. Միդիան, Սուզիանան, Պարսան և Բակտրիան իր պետությանը միացնելուց հետո Սելևկոսն իրեն հայտարարեց թագավոր: Աքեմենյանների նախկին պետության հիմնական սատրապությունները ևս մտան Սելևկյան պետության կազմի մեջ: Հնդկաստանից մինչև Էգեյան ծովի ափերն ընկած տարածքների առևտրական ու ռազմավարական ճանապարհների վրա սելևկյանները ստեղծեցին քաղաք-ամրոցների մի ամբողջ համակարգ:

Սելևկյանների պետության կենտրոն էր հանդիսանում Ասորիքը, իսկ մնացած բոլոր երկրները, որոնք մտնում էին այդ պետության կազմի մեջ,

այդ թվում նաև Իրանը, հանդիսանում էին տերության նահանգներ:

Նվաճելով Մերձավոր Արևելքը և հիմնելով աշխարհակալ մի մեծ պետություն՝ հելլենիստական արևմուտքն աշխատում էր զարկ տալ առևտրի և արհեստների զարգացմանը: Ալեքսանդր Մակեդոնացին և նրա հաջորդները բարեկարգեցին և ապահովեցին Եվրոպայի և Առաջավոր Ասիայի հաղորդակցությունը Միջին Ասիայի ու Հնդկաստանի հետ: Նրանց ժամանակ առևտուրը ստացավ համաշխարհային բնույթ, և նրա գլխավոր կենտրոնները դարձան Եգիպտոսում՝ Ալեքսանդրիա քաղաքը, իսկ Մերձավոր Արևելքում՝ Սելևկիան և Անտիոքը:

Սակայն հասկանալի է, որ շատ դժվար էր միասնական պետության կազմում պահպանել այդպիսի լայնարձակ տարածք: Մ.թ.ա. 280 թ. Սելևկյանների պետության հիմնադրի մահվանից հետո (նա սպանվեց Հունաստանում) նրա ժառանգորդները՝ Անտիոքոս Ա-ն (մ.թ.ա. 280-261 թթ.), Անտիոքոս Բ-ն (մ.թ.ա. 261-246 թթ.), և Սելևկոս Բ-ն (մ.թ.ա. 246-226 թթ.) ստիպված էին լարված պայքար մղել ինքնուրույնության ձգտող տեղական ժողովուրդների տոհմիկ ազնվականության դեմ: Սելևկյանների պետությունից անջատվեցին Փոքր Ասիայի տերությունները (Պերգամը, Կապադովկիան, Վիփինիյան, Պոնտոսը, ինչպես նաև արևելքում Հույն-բակտրիական թագավորությունը): Սելևկյանների համար առանձնակի մեծ վտանգ ներկայացրեց պետության արևելյան շրջաններում հայտնված ապարն կամ պարթև ցեղը, որի մասին ամենավաղ հիշատակումները վերաբերում են մ.թ.ա. I հազարամյակին, երբ նրանք հաստատվեցին արդի Թուրքմենստանի հարավային շրջաններում և Իրանի Խորասան նահանգում: Ավելի ուշ պարթևները ընդգրկվեցին Մեդական պետության կազմի մեջ, իսկ Կյուրոս Բ-ի օրոք՝ Աքեմենյան պետության մեջ: Մ.թ.ա. IV դարի 20-ական թվականներին պարթևներն նվաճվեցին Ալեքսանդր Մակեդոնացու կողմից: Մ.թ.ա. 281 թվականից սկսած՝ Պարթևստանը սատրապության իրավունքով մտավ Սելևկյան պետության կազմի մեջ:

9. ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Անկասկած, Աքեմենյան պետությունը պատմության մեջ եղել է առաջին համաշխարհային տերությունը, որն արքայից արքաների իշխանության ներքո միավորել էր տասնյակ երկրներ ու ժողովուրդներ՝ Եգիպտոսից մինչև Հյուսիսարևմտյան Հնդկաստան: Աքեմենյան տերության պատմությունը, ըստ էության, հանդիսանում է ողջ Մերձավոր Արևելքի և Միջին Ասիայի պատմություն: Հսկայական տարածքների վրա այդ պետությունը կարողացավ ապահովել հարաբերական խաղաղություն, ինչպես նաև ստեղծել բարենպաստ պայմաններ միջազգային առևտրի ծաղկման և տարբեր երկների ժողովուրդների մշակութային շփումների զարգացման համար:

Իր սոցիալ-տնտեսական կառուցվածքով Աքեմենյան պետությունը աչքի էր ընկնում իր բազմազանությամբ և խիստ խայտաբղետությամբ: Նրա մեջ մտնող Փոքր Ասիայի նահանգները, Էլամը, Բաբելոնը, Սիրիան, Փյունիկիան և Եգիպտոսը, պարսկական կայսրության ծնունդ առնելուց դեռ շատ առաջ ունեին իրենց սեփական պետական ինստիտուտները: Տնտեսապես զարգացած այդ երկրների նվաճման հետ միաժամանակ պարսիկները իրենց ենթարկեցին նաև մասսագետական և այլ ցեղերի, որոնք գտնվում էին զարգացման անհամեմատ ավելի ցածր մակարդակի վրա. և զբաղվում էին վայրի պտուղների հավաքչությամբ և ապրում էին խմբային ամուսնությամբ: Աքեմենյան տերության կազմի մեջ մտնող մի շարք այլ երկրներում (օրինակ՝ Լիկիայում և այլն) դեռևս պահպանվում էր մայրիշխանությունը:

Այս բոլորի հետևանքով նվաճված երկրների պետական կառավարման համակարգ ստեղծելիս պարսիկները բախվեցին նշանակալից դժվարությունների հետ: Աքեմենյանները ձգտում էին նվաճված երկրներում տնտեսության ու տարանցիկ առևտրի զարգացման համար ստեղծել բնական պայմաններ, պահպանում էին այդ երկրների ներքին քաղաքական կառուցվածքը և նվաճված ժողովուրդներին տրամադրում էին տեղական ինքնակառավարում:

Սակայն մ.թ.ա. 522-521 թթ. ապստամբություններն ակնառու կեր-

պով ցուցադրեցին Աքեմենյան պետության անկայունությունը: Չգտելով կանխել անջատողական միտումները՝ Դարեհ Ա-ն իրականացրեց կարևոր վարչա-ֆինանսական բարեփոխումներ, որոնք հնարավորություն տվեցին ստեղծելու պետական կառավարման կայուն համակարգ, նվաճված երկրների նկատմամբ հսկողություն սահմանելու հուսալի լծակներ և կարգավորեցին հարկահավաքման գործը:

Սակայն Դարեհի բարեփոխումներից հետո ևս Պարսկական պետությունը շարունակում էր մնալ որպես ռազմավարչական մի միավորում, որը կարող էր գոյություն ունենալ այնքան ժամանակ, քանի դեռ հաջողվում էր զենքի ուժով հնազանդության մեջ պահել տարբեր ժողովուրդներին: Մինչև Աքեմենյանների տիրապետության վերջը պահպանվեցին ցեղային տարանջատվածությունն ու մասնատվածությունը: Յուրաքանչյուր նահանգ շարունակում էր մնալ որպես ինքնուրույն սոցիալ-տնտեսական միավոր՝ իրեն յուրահատուկ հասարակական ինստիտուտներով ու ներքին կարգով, իր հին տեղական օրենքներով, սովորույթներով, ավանդույթներով, չափի, կշռի և դրամական միավորներով:

Դարեհ Ա-ն ողջ պետության տարածքը բաժանեց 20 մարզերի, որոնք կոչվեցին սատրապություններ: Նրանց գլուխ էր կանգնած «նահանգի կառավարիչը»՝ սատրապը (հին պարսկերենով՝ խշաթրապանա): Դրանք իրենցից ներկայացնում էին խոշոր նահանգներ, որոնց սահմանները առանձին դեպքերում համապատասխանում էին Աքեմենյան պետության մեջ ընդգրկված հին պետությունների սահմաններին: Այսպես, օրինակ, Եգիպտոսը, Բաբելոնը, Մարաստանը և այլն կազմում էին առանձին սատրապություններ: Դարեհ Ա-ն Հայաստանն անջատեց Մարաստանից՝ դարձնելով առանձին սատրապություն, իսկ Քսերքսեսի ժամանակ Հայկական լեռնաշխարհը և հարևան շրջանները բաժանվեցին երկու՝ 13-րդ և 18-րդ սատրապությունների միջև: Միայն բուն պարսիկներով բնակեցված շրջանը բացառված էր սատրապությունների ընդհանուր թվից և զբաղեցնում էր առանձնահատուկ վիճակ: Նրանից հարկեր չէր գանձվում: Բեհիսթունյան արձանագրություններում տրվում է սատրապությունների հետևյալ ցանկը. «Պերսիա, Էլամ, Բաբելոն, Ասորեստան, Արաբիա, Եգիպտոս (երկրներ), որոնք գտնվում էին ծովի մոտ, Լյուդիա, Իոնիա, Միդիա, Հայաստան, Կապադովկիա, Պարթևստան, Դրանգիանա, Արեյա, Խորեզմ, Բակտրիա, Սողդիանա, Գանդհարա, Սկյութիա (Սակա), Սաթթագիդիա, Արախոսիա, Մակա»: Պերսեպոլիսի և այլ արձանագրություններում հիշատակվում են նաև Հնդկաստանը, Թրակիան, Մակեդոնիան (Սկուդրա), Եթովպիան (Կուշ),

Լիբիան (Պութ) և մի շարք այլ երկրներ, որոնք նվաճվել են ավելի ուշ: Հերոդոտը հաղորդում է, որ 20 սատրապություններում բնակվում էին մոտ 70 ժողովուրդներ և ցեղեր:

Սատրապները կենտրոնական իշխանության ներկայացուցիչներն էին և, որպես այդպիսիք, իրենց ենթակա սատրապություններում իրագործում էին քաղաքացիական, մասամբ նաև զինվորական իշխանությունը: Հաճախ պատերազմների ժամանակ սատրապները հանդես էին գալիս որպես իրենց ենթակայության շրջանների բանակի ընդհանուր հրամանատար: Իսկ խաղաղ ժամանակ սատրապների տրամադրության տակ էր գտնվում միայն ոչ մեծ անձնական թիկնազոր:

Սատրապների իշխանությունը՝ իրենց ենթակա սատրապությունների բնակչության նկատմամբ, անսահմանափակ էր: Նրանց իրավասությունների մեջ էին մտնում հարկահանությունը, դատարանը, զորքերի զորակոչը, արծաթյա դրամի հատումը (ոսկեդրամ կտրելու իրավունքը պատկանում էր միայն «արքայից արքային»): Սատրապները հետևում էին իրենց երկրամասի տնտեսական կյանքին, ապահովում էին հաղորդակցության ճանապարհների անվտանգությունը, հանդիսանալով սատրապության վարչական ապարատի գլուխը՝ վերահսկում էին տեղական աստիճանավորներին և այլն: Ինչպես նշվեց, հաճախ սատրապներն իրականացնում էին նաև ռազմական իշխանությունը, որը նրանց հնարավորություն էր տալիս պարբերաբար խռովություններ բարձրացնել կենտրոնական իշխանության դեմ: Սակայն, որպես կանոն, բանակը գտնվում էր առանձին հրամանատարների իրավասության ներքո, որոնք անկախ էին սատրապներից և անմիջականորեն ենթարկվում էին արքայից արքային:

Սատրապի պաշտոնավարության ժամանակը սահմանափակված չէր որոշակի ժամկետով: Նրանցից մի մասը Դարեհի կողմից նույնիսկ նշանակվում էին ցմահ սատրապներ: Հաճախ սատրապի իշխանությունը ժառանգական էր: Սատրապությունները բաժանվում էին ավելի մանր վարչական միավորների՝ ընդհուպ մինչև գյուղերի:

Չնայած սատրապությունների առկայությանը, տեղերում պարսից արքայից արքայի դաշնակից պետություններն ու իշխանություններն օգտվում էին տեղական ինքնավարությունից: Պետության ծայրամասային շրջաններում գտնվող մի շարք ռազմաշունչ ցեղեր, ինչպես, օրինակ՝ արաբները, կոլխերը, եթովպացիները, սաքերը և այլն օժտված էին ներքին ինքնավարությամբ և կառավարվում էին իրենց ցեղային առաջնորդների կողմից: Նրանք համարվում էին պարսից արքայից արքայի դաշնակիցներ, քանի որ կամավոր անցել էին նրա կողմը և նրան ցուցաբերել

էին մեծ օգնություն այլ երկրներ նվաճելու գործում:

Մինչև Դարեհի կողմից հարկահանության վերաբերյալ հատուկ որոշման ընդունումը պարսկական պետության նահանգներն արքային մատուցում էին նվերներ, որոնք չունեին մշտական և որոշակի չափեր: Դարեհը ճշգրտորեն որոշեց յուրաքանչյուր սատրապության պարտականությունները՝ կախված նրա բարեկեցությունից: Ամենից շատ հարկեր պետք է վճարեին հարուստ Բաբելոնը և Եգիպտոսը: Բացի այդ, յուրաքանչյուր նահանգ պետք է հարկեր մուծեր նաև բնամթերքով՝ կախված նրանից, թե ինչով էր նա հարուստ. ցորենով, եղջերավոր անասուններով, ձիերով, ստրուկներով, փղոսկրով և այլն: Պերսեպոլիսի խորաքանդակներում պատկերված են Աքեմենյաններին ենթակա բոլոր ժողովուրդների ներկայացուցիչները, որոնք որպես նվեր արքայից արքային են մատուցում տարբեր կենդանիներ կամ բազմաթիվ անոթներ: Ի դեպ, այդ նվեր մատուցողների մեջ կա նաև Հայաստանի ներկայացուցչի պատկերը: Խորաքանդակում պատկերված հայը, որը հարկատուների մեջ գրավում է երրորդ տեղը, արքային մատուցում է մի ճժույգ և մի մեծ անոթ:

Հայաստանը պարտավոր էր Աքեմենյան արքային վճարել տարեկան 400 տաղանդ արծաթ: Համաձայն Ստրաբոնի՝ Հայաստանի սատրապը Միթրա աստծո տոնակատարության կապակցությամբ պարսից արքային ուղարկում էր 20.000 մտրուկ:

Սովորական հարկերից բացի, հպատակները պարտավոր էին իրենց երեխաներին տրամադրել պարսից արքաների մոտ տնային աշխատանքներ (հացթուխ, խոհարար, մատռվակ, ներքինի և այլն) կատարելու համար: Գանձարանը (ganza) հանդիսանում էր պետության ֆինանսական վարչությունը, որն իր տրամադրության տակ ուներ ոչ միայն ոսկի, արծաթ, փղոսկր, թանկարժեք մետաղներից պատրաստված անոթներ, թանկարժեք քարեր, զենք, գորգեր, մետաքս և այլն, այլև ցորեն, գինի, յուղ, անասուններ, հագուստեղեն և այլն: Գանձապետը կոչվում էր ganzabara:

Գանձարանին կից գոյություն ունեցող պահեստները կոչվում էին hambara, իսկ պահեստապետերը՝ hambarabara: Համապետական նշանակության գլխավոր գանձարանը գտնվում էր Պերսեպոլիսում: Սակայն խոշոր արքայական գանձարաններ կային նաև Փասարգադում, Էկբաթանում, Սուզայում, Բաբելոնում, Մեմֆիսում և այլն:

Դարեհ Ա-ի ժամանակ ողջ հողային ֆոնդը փարասանգներով չափվեց և դասակարգվեց ըստ բերքատվության չափի: Լավագույն հողերը պատկանում էին արքային, տաճարներին, առևտրական տներին, զինվորական ազնվականությանը, թագավորական և տաճարային վարչու-

թյան աստիճանավորներին: Հողը ձևականորեն հանդիսանում էր աքեմենյան թագավորների սեփականությունը, սակայն հողերի մեծ մասը գտնվում էր հողագործական համայնքների տնօրինության տակ, որոնք մշակում էին այն:

Թագավորի, նրա ընտանիքի և պարսկական վարչության ներկայացուցիչների տնտեսություններում աշխատող մարդիկ ստրուկներ էին կամ ստրկական վիճակի հասած աղքատ համայնականներ: Ունենալով անսահմանափակ բռնապետի վիճակ՝ Աքեմենյան արքաները, սակայն, մեծագույն հարգանքով էին վերաբերվում հողագործի աշխատանքին: Առհասարակ, հողագործի աշխատանքն արժանանում էր բարձր գնահատականի: Կյուրոս Կրտսեր արքան Սպարտայի հռչակավոր զորահրամանատար հույն Լիսանդրին հպարտությամբ ցույց էր տալիս իր իսկ կողմից մշակված այգին:

Հարկային համակարգի կարգավորումը հնարավոր էր միայն Պարսկաստանում դրամի արմատավորմամբ: Բազմաթիվ դարերի ընթացքում Աքեմենյան ոսկեդրամը, որը կոչվում էր «դարիքա» (Դարեհ արքայի անունով) Մերձավոր Արևելքում գտնվում էր շրջանառության մեջ: Սատրապություններն իրավունք ունեին հատելու միայն արծաթե դրամներ, իսկ ավելի փոքր վարչական միավորները հատում էին պղնձե դրամ: Դարեհը մտցրեց միասնական դրամական համակարգ, որը, ճանապարհաշինության հետ մեկտեղ, նպաստեց առևտրի զարգացմանը և տնտեսական կյանքի առաջընթացին: Մեծ թվով ժողովուրդներ ու երկրներ ներգրավվեցին առևտրական հարաբերությունների մեջ: Աքեմենյանների տիրապետության շրջանում միջազգային առևտուրն ապրեց աննախադեպ զարգացում:

Աքեմենյան տերության մեջ կային մի քանի խոշոր քարավանային ճանապարհներ, որոնք կապում էին հարյուրավոր կիլոմետրեր միմյանցից հեռու գտնվող նահանգները: Ամենամեծը, այսպես կոչված, «արքայական ճանապարհն էր», որի երկարությունը 2400 կմ էր: Այն սկսվում էր Փոքր Ասիայի ծայր արևմուտքում գտնվող Էվեսոս քաղաքից, այնուհետև Տիգրիսի ափով հատելով-անցնելով ողջ Միջագետքը՝ Պերսեպոլիսի և Փասարգադի վրայով հասնում էր մինչև Սուզա: Յուրաքանչյուր 25-30 կիլոմետրը մեկ առկա էին կայաններ՝ իրենց ծառայողական տարբեր շենքերով:

Դարեհ Ա-ի կարգադրությամբ վերականգնվեց Նեղոսից մինչև Սուեզ ձգվող ջրանցքը, որը գոյություն ուներ դեռևս հարյուր տարի առաջ՝ մինչ պարսկական տիրապետությունը՝ փարավոն Նեհոյի ժամանակներում, որը հետագայում դարձավ աննավարկելի: Սուեզի ջրանցքը Եգիպ-

տոսը ծովային ճանապարհով կապում էր Պարսկաստանի հետ: Առևտրական ճանապարհների զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ փոքրասիացի Սկիլակի արշավախմբի գործունեությունը, որին մոտ մ.թ.ա. 518 թ. Դարեհ Ա-ն հրամայել էր հետազոտել Հինդոսի գետաբերանը՝ պարզելու համար Հնդկաստանի և մյուս երկրների հետ ծովային կապեր ստեղծելու հնարավորությունը: Սկիլակի նավերը 30 ամսվա ընթացքում Հինդոս գետով շարժվեցին մինչև օվկիանոս, ապա շրջանցելով Արաբիան, Իրանի հարավային ափերի մոտով հասան մինչև Կարմիր ծով:

Պարսից ծոցը, որը հնագույն ժամանակներից սկսած հանդիսանում էր Արևելքի և Արևմուտքի միջև ծովային կապերն ապահովող գլխավոր ճանապարհը, Դարեհ Ա-ի ձեռնարկած միջոցառումների հետևանքով առևտրի զարգացման համար ձեռք բերեց առանձնահատուկ նշանակություն:

Աքեմենյան պետության մեջ Հայաստանը աշխույժ առևտրական հարաբերություններ ուներ տերության բազմաթիվ շրջանների ու երկրամասերի հետ:

Դարեհ Ա-ն բարեփոխման ենթարկեց նաև երկրի կառավարման համակարգը: Ստեղծվեց կենտրոնական ապարատ, որը ղեկավարվում էր արքայական գրասենյակի կողմից: Այն գտնվում էր Աքեմենյան պետության վարչական մայրաքաղաք Սուզայում: Տերության այդ կարևոր վարչաքաղաքական կենտրոնը ջրանցքով կապված էր Պարսից ծոցի հետ, իսկ Էկբաթանի, Բաբելոնի և Պերսեպոլիսի հետ հաղորդակցվում էր ցամաքային ճանապարհով: Սուզայում գործում էին նահանգները կառավարող բազմապիսի գրասենյակներ, որոնք ունեին մեծ թվով պաշտոնյաներ ու գրագիրներ: Մայրաքաղաքի և նահանգների միջև կապն իրականացնելու համար ստեղծվել էր կանոնավոր փոստային ծառայություն: Խոշոր ճանապարհների վրա գոյություն ունեին զինվորական պահակակետեր, ինչպես նաև հատուկ կայաններ՝ իրենց քարավանսարայներով և այլ ծառայություններով: Այդ կայանները սովորաբար գտնվում էին մեկը մյուսից մեկօրյա անցման հեռավորության վրա և վերահսկվում էին պետության կողմից: Արագ տեղաշարժվելու համար այդ կայաններում ձիերն անընդհատ փոխվում էին: Հերոդոտը պատմում է, որ աշխարհում արքայական սուրհանդակներից արագ շարժվող ոչինչ գոյություն չունի: Մեկ կայանից մյուսը սուրհանդակները լուրեր էին փոխանցում նաև մեկը մյուսին: Սուրհանդակները և պաշտոնական գործերով ճանապարհորդողները իրենց հետ ունենում էին արքայի կամ նրա պաշտոնյաների կողմից տրված համապատասխան փաստաթղթեր և իրենց ինքնությունն ու

լիազորությունները հաստատող փաստաթղթեր ու կնիքներ:

Ճանապարհներին գոյություն ունեին արքայական պահեստներ, որտեղից սննդամթերք էր բաց թողնվում սուրհանդակների և ճանապարհորդող աստիճանավորների համար: Ստացված սննդամթերքի դիմաց տրվում էին ստացականներ, որոնք հաշվետվության համար ուղարկվում էին Պերսեպոլիս: Ճանապարհները վերահսկող աստիճանավորները ստուգում էին, թե ճանապարհորդներն իրենց հետ ինչ են տանում: Ավազակների դեմ պայքարը մղվում էր անողոք դաժանությամբ: Ճանապարհների եզրերին կարելի էր տեսնել մահապատժի ենթարկված բազմաթիվ կողոպտիչների մարմիններ: Շտապ տեղեկություններ հաղորդելու համար օգտագործվում էր նաև կրակի միջոցով ազդանշանային համակարգը:

Արքայից արքայի արքունիքը աշունն ու ձմեռն անց էր կացնում Բաբելոնում, ամառը՝ Էկբաթանում, գարունը՝ Սուզայում, իսկ մեծ տոների ժամանակ՝ Փասարգադում ու Պերսեպոլիսում: Թագադրման ու գահակալության արարողությունները տեղի էր ունենում Փասարգադում:

Սատրապներն ու զորահրամանատարները գտնվում էին արքայից արքայի և նրա աստիճանավորների մշտական հսկողության ներքո: Այդ հսկողությունն իրագործում էին իրազեկիչները՝ թագավորի «ականջներն» ու «աչքերը», որոնք անկախ էին սատրապներից և տեղական այլ իշխանություններից ու անմիջականորեն ենթարկվում էին արքային և իրենց լսածների ու տեսածների մասին ուղղակի զեկուցում նրան: Քսենոփոնի վկայությամբ՝ շրջանի տեղապահը և զորահրամանատարը նույնպես հաճախ մեկը մյուսի մասին տեղեկություններ էին հաղորդում թագավորին:

Արքայի ուղևորությունների ժամանակ ոստիկանական ֆունկցիաներ էին իրագործում նաև արքայական «գորգեր կրողները», որոնք ճանապարհորդությունների ժամանակ հոգ էին տանում արքայից արքայի համար հարմարություններ ստեղծելու համար, նրա ոտքերի տակ փռելով փափուկ պարսկական գորգեր ու մտրակներով ճանապարհը մաքրելով անցանկալի անճանցից: Պերսեպոլիսի խորաքանդակներում նման «գորգեր կրողները» պատկերված են թևերի տակ ծալված գորգերով, իսկ ձեռքերում՝ մտրակներ:

Ողջ պետության և բոլոր աստիճանավորների նկատմամբ գերագույն հսկողությունը վստահված էր հազարապետին (hazarapati), որը միաժամանակ արքայի անձնական քիկնազորի («անմահների» գնդի առաջին հազարյակի) պետն էր, ինչպես նաև կենտրոնական պետական գրասենյակի ղեկավարը: Հենց նա էլ արքային զեկուցում էր այցելուների մասին և նրանց տանում արքային ներկայացնելու:

Անհրաժեշտության դեպքում վերահսկողության նպատակով Դարեհը նահանգներ էր ուղարկում հատուկ ստուգողների: Արքայական գրասենյակի պետը ղեկավարում էր տարբեր ծառայությունների, ինչպես, օրինակ՝ գրագիրների, գանձապետի (ganzabara), մունետիկի կամ ազդարարողի (azdakara), հաշվապահի (hamarakara), դատական քննիչի (frasaka) և այլոց գործունեությունը:

Աքեմենյան լայնածավալ պետության մեջ տարբեր լեզուներով խոսող ժողովուրդների ու ցեղերի շփման համար առավել հարմար լեզուն արամեերենն էր: Այդ լեզուն հին աշխարհում իրավամբ համարվում էր առևտրի ու դիվանագիտության միջազգային լեզու: Սակայն արամեերենի հետ մեկտեղ օգտագործվում էին նաև հին պարսկերեն, աքքադերեն, հունարեն, էլամերեն և տեղական այլ լեզուներ: Արքայից արքայի արքունիքում կազմվում էին տարեգրություններ, որոնցում մանրամասնորեն գրի էին առնվում բոլոր կարևորագույն իրադարձությունները: Ըստ Հերոդոտի՝ պարսիկները նույնիսկ ճակատամարտերի ժամանակ գրի էին առնում իրադարձությունների ընթացքը: Կային գրագիրների դպրոցներ, որտեղ պատրաստվում էին մեծ թվով գրագիրներ: Քանի որ տերությունը բազմազգ և բազմալեզու էր, արքայից արքայի և սատրապների արքունիքներում, ինչպես նաև բանակում, կային թարգմանիչներ, որոնք տիրապետում էին մի քանի լեզուների:

Աքեմենյան թագավորների գլխավոր հենարանը նվաճված երկրների խոշոր ստրկատիրական ազնվականությունն էր և պարսկական ցեղերը: Պարսիկները հանդիսանում էին տիրապետող ազգ և օգտվում էին մի շարք արտոնություններից ու առավելություններից: Նրանք ազատ էին, հարկեր ու տուրքեր չէին վճարում, ազատված էին հարկադրական աշխատանքներից և այլն:

Աքեմենյան տերության մեջ գոյություն ունեին ամենատարբեր իրավական համակարգեր ու ինստիտուտներ՝ սկսած ամենապարզունակից և վերջացրած բավականին բարձր զարգացածով: Պարսիկների կողմից տարբեր երկրների նվաճումը չհանգեցրեց հնազանդեցված ժողովուրդների իրավական ավանդույթների ու նորմերի խզմանը: Նախ կարևոր է նշել, որ աքեմենյան թագավորներն իրենց նվաճումներին տալիս էին այդ երկրների ժողովուրդների հետ անձնական ունիայի բնույթ, թագադրվում էին տեղական ծեսերով և օգտվում էին կառավարման՝ պատմականորեն ձևավորված մեթոդներից: Նվաճված երկրներում արքայից արքաները ոչ միայն պահպանեցին նրանց ներքին քաղաքական կառուցվածքը, այլև հնազանդեցված ժողովուրդներին տրամադրեցին տեղական ինքնակառավարման իրավունք:

Դարեհ Ա-ի գահակալության շրջանում հետևողականորեն աշխատանքներ էին տարվում նվաճված ժողովուրդների օրենքների կողմիֆիկացման ուղղությամբ, ինչպես նաև ուսումնասիրվում էին հնագույն օրենքները, հատկապես Համուրապիի օրենսգիրքը: Տարբեր երկրներում գործող օրենքների մեջ կատարվեցին փոփոխություններ ու ճշտումներ՝ դրանք համապատասխանեցնելով պետության ընդհանուր օրենսդրական համակարգին: Արքայից արքան սահմանում էր նոր օրենքներ՝ վկայակոչելով Ահուրա-Մազդայի ցանկությունը: Առանձին դեպքերում օգտագործվում էին նաև սովորույթներով սահմանված օրենքները:

Արքայի վճիռները հանդիսանում էին վերջնական և բեկման ենթակա չէին: Վճիռներ կայացնելիս արքան պետք է խորհրդակցեր յոթ տոհմիկ ցեղերի ներկայացուցիչների հետ, իսկ առանձին կարևոր դեպքերում հրավիրեր «խորհուրդ», որը կազմված էր ազնվականության ներկայացուցիչներից: Բեհիսթունի արձանագրություններում Դարեհ Ա-ն հայտարարում է, որ ինքը միշտ առաջնորդվել է արդարության սկզբունքներով: «Ես չարիք չեմ գործել ո՛չ թույլին, ո՛չ ուժեղին: Այդ երկրները, որ դարձել են խռովարար, նրանց սուտն է դարձրել խռովարար: Դու, որ հետագայում դառնալու ես արքա, ուժգին կերպով զգուշացի՛ր ստից»:

Հերոդոտի վկայությամբ՝ պարսիկ պատանիները սովորում էին հիմնականում երկու բան. նետ արձակել և ճշմարտություն ասել: Քաղաքական կյանքում ճշմարիտը ասելու տակ հասկացվում էր նվիրվածությունը թագավորին: Դարեհ Ա-ն հաճախ ինքն էր հանդես գալիս «օրենքը կրողի» (Databara), այսինքն՝ դատավորի դերում: Առավել կարևորագույն հանցագործությունները քննության են ենթարկելու համար դատավորներ էին նշանակվում անձամբ արքայի կողմից: Այսպես, օրինակ՝ հայոց թագավորին դատելու համար, որը «դավաճանել» էր պարսիկների հետ իր ունեցած դաշինքին, Կյուրոս Բ-ն դատավորներ նշանակեց պարսիկ և մեդացի առաջնորդներից: Նման դատարանների որոշումները բեկման ենթակա չէին, եթե իհարկե արքան չցանկանար որոշումը փոխել: Սովորական հանցագործությունները քննության էին ենթարկվում արքայական դատավորների կողմից, որոնք նշանակվում էին ազնվազարմ պարսիկներից ցմահ և պաշտոնը ժառանգաբար փոխանցելու իրավունքով: Դատավորների կաշառակերությունը պատժվում էր ահավոր խստությամբ: Հերոդոտը պատմում է, որ Սիսամն անունով արքայական դատավորներից մեկը կաշառք էր վերցնում: Տեղեկանալով այդ մասին՝ Քամբիզը հրամայում է մաշկազերծ անել նրան, նրա կաշին մշակել և նրանով կաշեպատել կաշառակերի դատավորական բազկաթոռը: Այնուհետև արքան դատավոր է

նշանակում մահապատժի ենթարկվածի որդուն՝ նրան հրամայելով վճիռ-ներ կայացնել այդ բազկաթոռին նստած: Մեկ այլ կաշառակեր թագավո-րական դատավոր Դարեհ Ա-ի կողմից դատապարտվեց խաչելության, սակայն մահապատժից առաջ արքան վճռեց, որ այդ դատավորի նախ-կին ծառայություններն ավելին են, քան նրա մեղքը, ուստի ներեց նրան: Ըստ Հերոդոտի՝ պարսիկները առաջին հանցագործության համար ընդ-հանրապես մահապատժի չէին ենթարկում, իսկ բազմակի հանցագործու-թյունների դեպքում մահվան էին դատապարտում միայն այն դեպքում, երբ դատվողի մեղքը գերազանցում էր նրա ունեցած ծառայություններին: Ճիշտ է, նման իրավաբանական մոտեցումը ոչ միշտ է, որ կիրառվում էր: Հանցագործին խոստովանեցնելու համար դիմում էին մտրակահարու-թյան և կարիճների խայթոցներով տանջանքների ենթարկելու մեթոդին: Հաճախ օգտագործվում էին մեղավորին խաչելության ենթարկելու, ոտ-քերն ու գլուխը կտրելու, կենդանի թաղելու պատժաձևերը:

Իշխանությունների նկատմամբ անհնազանդություն դրսևորած ան-ձանց, ինչպես նաև զրպարտիչներին գլխատում էին: Որոշ ծանր հան-ցանքների համար արմատից պոկում էին գլխի մազերը: Ի դեպ, Արտաք-սերքսես Ա-ն որոշում կայացրեց, որ ազնվազարմ պարսիկների նկատ-մամբ այդ պատժաձևը փոխարինվի նրանց գլխից գլխարկը հանելով:

Եգիպտոսը պարսիկների կողմից գրավվելուց հետո արքայից արքա-յի դատավորները որոշում կայացրին այն մասին, որ Քամբիզի բանակի յուրաքանչյուր սպանված զինվորի դիմաց պետք է մահապատժի են-թարկվեն տասը ազնվազարմ եգիպտացիներ: Հանցագործությունները արքայից արքայի և նրա ընտանիքի դեմ պատժվում էին մահապատժով: Հաճախ նման հանցագործությունների համար պատժում էին հանցագոր-ծի ամբողջ ընտանիքին:

Պարսկական օրենքները չեն հասել մինչև մեր օրերը՝ չհաշված նրանց մասին հունական հեղինակների հաղորդած առանձին և ըստ երևույթին ոչ միշտ ճշգրիտ տեղեկությունները:

Հին իրանցիների մոտ թագավորն ընտրվում էր որոշակի տոհմից, որը համարվում էր օրինական իշխանության իրավունք կրող (թագավորու-թյան քարիզմա): Աքեմենյան Իրանում արքայից արքայի անձը սրբազան էր, իսկ ծագումը համարվում էր աստվածային: Սակայն աքեմենյան ար-քաները չէին համարվում աստվածներ, ուստի նրանց երկրային երկրպա-գությունը (պրոսկինեզիս) հանդիսանում էր լոկ ողջույնի արարողային ձև: Արքան միաժամանակ հանդես էր գալիս որպես քուրմ: Նրա գահակալու-թյան օրը համարվում էր նրա ծննդյան օրը, քանի որ ընդունելով գահակա-

լական աճում՝ նա նորից «ծնվում էր»: Նրա հագած հատուկ զգեստը խորհրդանշում էր արքայի իշխանությունը տիեզերքի նկատմամբ: Երբ արքան մեռնում է, հանգչում է նրա «ինքնության կրակը», և, ի նշան սգո, արքայական ընտանիքի անդամները և ծառաները հաճախ մարմնական վնասվածքներ էին հասցնում իրենց կամ ինքնասպանություն գործում:

Կուրցիուս Ռուֆը հաղորդում է, որ երբ Իսսոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո Դարեհ Գ-ն դիմեց փախուստի, գերի պարսիկներից Ալեքսանդր Մակեդոնացուն չհաջողվեց իմանալ, թե որտեղ է նա թաքնվում, քանի որ, իրենց սովորույթների համաձայն, պարսիկները նվիրական ծնով պահում էին այդ գաղտնիքը:

Արքայից արքայի թագադրման արարողությունը կատարվում էր Փասարգադում: Այդ արարողության պարտադիր մասերից էր արքայի կողմից պարզ գյուղական սննդի ընդունումը:

Ըստ պարսկական ավանդույթի՝ արշավանքի մեկնելուց առաջ արքան պարտավոր էր նշանակել թագաժառանգի: Գահաժառանգման ճշգրիտ սահմանված օրենքների բացակայությունն առաջ էր բերում անվերջանալի հարեմական և պալատական սայրաքներ: Արքան կարող էր իր ընտրությամբ գահաժառանգ նշանակել իր ժառանգներից ցանկացածին, սակայն սովորաբար ընտրությունը կանգ էր առնում ավագ որդու վրա: Արքայի թագադրումը համարվում էր համապետական մի տոն, որը շարունակվում էր մի քանի օր, և այդ ժամանակ ամեն մի աշխատանք դադարում էր:

Հավանական է, որ Աքեմենյանների մոտ իրենց մերձավորագույն ազգականների հետ ամուսնանալու տարածված սովորույթի պատճառն այն էր, որ ժառանգության իրավունքը ընդունված էր կանացի կողմից (այսպես՝ Քամբիզ Բ-ն ամուսնացած էր իր երկու քույրերի հետ): Առհասարակ, պարսիկների մոտ տարածված էր իրենց արյունակից քույրերի հետ ամուսնությունը: Ընտանիքը Իրանում միամուսնական չէր: Թույլատրվում էր ունենալ բազմաթիվ օրինական կանայք ու հարճեր:

Միայն պարսկական առաջատար յոթ տոհմերի ներկայացուցիչները, ինչպես նաև արքայի մայրն ու նրա գլխավոր կինը, իրավունք ունեին առանց արքայի կանչի ներկայանալ նրան, մնացած բոլորը ընդունելության թույլտվություն պետք է ստանային հազարապետից: Արքայից, մերձակա ազգականներից ու ներքինիներից բացի, ոչ ոք իրավունք չուներ տեսնել արքայի կանանց ու հարճերի դեմքը: Այդ օրենք խախտողը պատժվում էր մահապատժով: Պատահական չէ, որ Պերսեպոլիսում եղած բազմաթիվ խորաքանդակներում գոյություն չունի ոչ մի կանացի պատկեր: Պլուտարքոսը գրում է, որ պարսիկներին բնորոշ է վայրենի

խանդը ոչ միայն հանդեպ իրենց կանանց, այլև հանդեպ իրենց ստրկուհիներն ու հարճերը, որոնց պահում են փակ տեղերում՝ կողմնակի մարդկանց աչքից հեռու: Լայնորեն հայտնի է աստվածաշնչյան պատմությունն այն մասին, որ ընդունելության ժամանակ պարսից արքան հրամայեց իր կնոջը՝ Վաշտիին, ներկա գտնվել խնջույքին, որպեսզի արքան նրան ցույց տա ժողովրդին: Սակայն նա հրաժարվում է կատարել ամուսնու հրամանը, քանի որ դա հակասում էր պարսկական օրենքներին, որը կանանց արգելում է երևալ կողմնակի մարդկանց: Սակայն միևնույն ժամանակ, քանի որ արքան ինքն է հանդիսանում օրենսդիր, հետևաբար նրա բոլոր կարգադրությունները ենթակա են անվերապահ կատարման: Ուստի նա գումարեց օրենքի մեկնաբանների մի ժողով և նրանց առջև մեղադրեց Վաշտիին, որն այնուհետև զրկվեց թագուհու իր կոչումից և վերածվեց մի սովորական հարճի:

Արքան սովորաբար ուտում էր թագուհու և իր մոր հետ, և այդ ժամանակ բերանը փակած ծառան (որպեսզի նրա շունչը չպղծի արքային) կանգնած էր նրա մոտ՝ արքայի գլխի վրա պահելով ճանճերը քշելու հովիարը:

Դեռևս Կյուրոս Բ-ի ժամանակներից սկսած՝ գոյություն ուներ մի օրենք, ըստ որի մայրաքաղաք՝ Փասարգադա մտնելիս պարսից արքաները իրենց հանդիպած բոլոր կանանց ևվիրում էին մեկ ոսկեդրամ: Ամեն տարի արքան ևվերներ էր բաժանում նաև բազմազավակ ծնողներին:

Արքայի և նրա մերձավորագույն ազգականների մահը ողբում էին բոլորը. բնակիչները ի նշան իրենց տխրության պատառոտում էին իրենց վրայի զգեստները, կտրում էին մազերը և լաց ու ողբ անում:

Աքեմենյան Իրանում արտադրության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր: Մշակելի ողջ հողատարածությունները ճշգրիտ չափված էին, և նրանց լավագույն մասը պատկանում էր արքայից արքային, տաճարներին, առևտրական տներին, զինվորական արիստոկրատիային, արքայական ու տաճարային վարչության աստիճանավորներին: Առկա էր նաև զարգացած անասնապահություն:

Մեդիայում, Պարսկաստանում և Հայաստանում հատկապես մեծ զարգացման էր հասել ձիաբուծությունը: Աքեմենյան քաղաքները ոչ միայն արհեստավորական, այլ նաև գյուղատնտեսական կենտրոններ էին: Գյուղատնտեսության զարգացման համար վճռորոշ նշանակություն ուներ ոռոգման համակարգը: Կառուցվում էին խոշոր ջրամբարտակներ, ջրանցքներ և այլն: Նման կառույցների մեծ մասը պատկանում էր պետությանը, ինչպես նաև տաճարներին ու անհատ անձանց: Այդ ջրանցքներից կարող էին օգտվել բոլոր հողագործները՝ վճարելով որոշակի գումար:

Ջրով աղքատ Իրանական բարձրավանդակում առկա էր ստորերկրյա ջրանցքների (քյարիզների) լայն ցանց:

Խոշոր հողատերերը մեծ մասամբ իրենց հողերը հանձնում էին վարձակալությամբ: Հողի վարձակալման դիմաց վճարումը կատարվում էր կա՛մ բնամթերքով, կա՛մ դրամով: Խոշոր հողատերերը սովորաբար բնակվում էին իրենց պարաղիսներում (զբոսայգիներում) կամ մեծ քաղաքներում՝ Բաբելոնում, Սուզայում և այլն:

Հին Մերձավոր Արևելքում հասարակությունը բաղկացած էր երեք խոշոր սոցիալական խմբերից. քաղաքների լիիրավ քաղաքացիներ, քաղաքացիական իրավունքներից զուրկ, բնակչության կիսաազատ տարբեր խմբեր և վերջապես՝ ստրուկներ:

Աքեմենյան տերության առավել զարգացած երկրներում ստրուկները անասունների հետ համահավասար հանդիսանում էին շարժական սեփականության գլխավոր առարկան. նրանց վաճառում էին, փոխանցում ժառանգաբար, նվիրում և այլն: Մեծ թվով ստրուկներ օգտագործվում էին տնային աշխատանքների, գյուղատնտեսության մեջ, արքայական քարհանքերում և շինարարական աշխատանքներում: Ստրուկների մեջ կային որոշ քանակությամբ որակյալ արհեստավորներ: Ստրուկների փախուստը սովորական երևույթ էր: Փախստական ստրուկներին որսում էին, խարանում, ինչպես անասունների, և շղթայակապ վերադարձնում աշխատանքի:

Բաբելոնում և այլ նվաճված երկրներում պարսիկ մեծամեծերն ու ազնվականները վերածվեցին խոշոր ստրկատերերի: Աքեմենյան տիրապետության շրջանում ստրկության ինստիտուտը, սակայն, նախորդ ժամանակների համեմատ ենթարկվեց որոշակի փոփոխությունների: Սկսեցին նկատվել ստրուկներին ազատ արձակելու դեպքեր: Երբեմն էլ ստրուկներին ազատ էին արձակում և նրանց որդեգրում որպես ազատ մարդկանց: Թույլատրվում էր նաև ամուսնությունը ազատների և ստրուկների միջև:

Բաբելոնում առկա էր ստրուկների համեմատաբար մեծ թիվ, որոնք ունեին ընտանիքներ, տուն և նշանակալից շարժական գույք: Ստրուկները կարող էին բավականին ազատորեն տնօրինել իրենց ունեցվածքը, օրինակ՝ գրավ դնել, վարձակալությամբ տալ կամ վաճառել: Ստրուկները կարող էին ոչ միայն մասնակցել երկրի տնտեսական կյանքին, այլև ունենալ իրենց կնիքները, ազատների կամ ստրուկների կողմից զանազան գործարքներ կնքելիս հանդես գալ որպես վկաներ և այլն:

Բաբելոնում ստրուկները երբեմն նույնիսկ գնում էին ուրիշ ստրուկների կամ վարձում էին ազատ մարդկանց, որպեսզի իրենց տնտեսության մեջ օգտագործեն նրանց աշխատանքը:

Աքեմենյան պետության մեջ, ինչպես և Հին Արևելքի շատ երկրներում, արքայի բոլոր հպատակները, այդ թվում նաև բարձրաստիճան անձինք (օրինակ՝ սատրապները) համարվում էին արքայից արքայի ստրուկները: Ելնելով դրանից՝ հույն հեղինակները գրում էին, որ ի բացառյալ արքայի՝ ողջ պարսիկ ժողովուրդը հանդիսանում էր քաղաքացիական առաքինություններից զուրկ ստրուկների մի ամբոխ:

Իրանում նահապետական ընտանիքների ղեկավարներն իրենց ընտանիքի անդամների հանդեպ, ըստ էության, հանդիսանում էին մի տեսակ ստրկատերեր: Օրինակ՝ Արիստոտելը նշում է, որ Իրանում հոր իշխանությունը բռնատիրական է և, նրանք իրենց զավակներին օգտագործում են իբրև ստրուկներ:

Երբ պետության այս կամ այն շրջանի կամ քաղաքի բնակչությունը ապստամբություն էր բարձրացնում պարսկական տիրապետության դեմ, Աքեմենյաններն այդ բնակչությանը վերածում էին ստրուկների:

Աքեմենյան պետության գոյությունը նշանակալիորեն կախված էր բանակից, ուստի նրա վրա մեծ ուշադրություն էր դարձվում: Ողջ պետությունը բաժանված էր ռազմական շրջանների՝ «տոպարխիաների», որոնց թիվը կայուն չէր և կարող էր փոփոխության ենթարկվել: Ապստամբությունների կամ պատերազմների դեպքում կատարվում էր արագ զորահավաք, և զորքն անհրաժեշտ վայր էր տեղափոխվում կամ գոյություն ունեցող ճանապարհներով և կամ հատուկ այդ նպատակով կառուցվող ճանապարհով:

Բանակի կորիզը կազմում էին պարսիկները, որոնց արական սեռի հասուն բնակչության մեծ մասը ռազմիկներ էին: Հերոդոտի վկայությամբ՝ պարսիկների մեջ պատերազմում ցուցաբերած արիությունից հետո կարևորագույն հերոսություն էր համարվում մեծ թվով երեխաներ ունենալը: Շատ երեխաներ ունեցող ծնողներն արքայից ստանում էին նվերներ: Հերոդոտը պատմում է, որ մեծատոհմիկ պարսիկ ազնվական Էոբազի բոլոր երեք տղաները արքայի հետ պետք է պատերազմի գնային սկյութների դեմ, բայց նրանց հայրը խնդրեց Դարեհ Ա-ին՝ նրանցից թեկուզ և մեկին թողնել Պարսկաստանում: Դարեհը պատասխանում է, որ կթողնի երեքին էլ և հրամայում է սպանել նրանց բոլորին:

Մինչև զինվորական ծառայության կանչելը պարսիկները հինգից մինչև քսան տարեկանը մարզում էին տղաներին և սովորեցնում ռազմական գործը: Բուն զինվորական ծառայությունը սկսվում էր քսան տարեկանից: Աքեմենյան բանակում, ի թիվս այլ ժողովուրդների, հայերը ևս ունեին առանձին զորամասեր, որոնք մասնակցում էին պետության վարած բոլոր պատերազմներին կամ ապստամբությունների ճնշմանը:

Աքեմենյան բանակը բաղկացած էր հեծելազորից և հետևակից: Հեծելազորը հավաքագրվում էր ազնվականությունից, իսկ հետևակը՝ հողագործներից: Պարսկական բանակի կորիզն էր կազմում տասը հազարանոց «անմահների» զորամասը: Նրանք անմահներ էին կոչվում, որովհետև նրանց թիվն անփոփոխ էր: Երբ զինվորներից որևիցէ մեկը սպանվում էր, նրա տեղն անմիջապես դրվում էր նոր զինվոր: «Անմահների» բոլոր գնդերի հրամանատարն էր «հազարապատը» (հազարապետ), որը միևնույն ժամանակ արքայի ամենավստահելի անձն էր, քանի որ պատասխանում էր նրա անվտանգության համար: Աստվածաշնչում այդ պաշտոնը հիշատակվում է «երկրորդ» ձևով՝ նկատի ունենալով պարսկական թագավորության մեջ երկրորդ բարձրագույն աստիճանավորի նրա կարգավիճակը:

Քսենոփոնը վկայում է, որ բոլոր բարձրաստիճան պարսիկների զավակները դաստիարակվում էին արքունիքին կից գոյություն ունեցող հատուկ վարժարաններում, որտեղ նրանք սովորում էին հրամայել և ենթարկվել: Հենց նրանցից էլ հավաքագրվում էր արքայից արքայի անձնական թիկնազորը: Աքեմենյան բանակի հատուկ ստորաբաժանումներ էին հանդիսանում նաև հույն վարձկաններից կազմված զորամասերը:

Սահմանամերձ շրջաններում ստեղծվում էին ռազմական գաղութներ, որոնց զինվորներն իրենց ծառայությունների դիմաց ստանում էին հողակտորներ: Ջորքեր էին տեղակայվում նաև նվաճված երկրներում ապստամբությունները ճնշելու համար: Կարևորագույն ռազմարշավների ժամանակ Աքեմենյան պետության բոլոր ժողովուրդները պարտավոր էին արքայից արքային տրամադրել որոշակի թվով զորամիավորումներ: Բանակի մեջ կարևոր դեր էին խաղում սկյութները կամ սաքերը: Սրանք և պարսիկները խոսում էին իրար մոտ լեզուներով և հասկանում էին իրար:

Դարեհ Ա-ի շրջանում պարսիկները տիրապետող դիրքեր ձեռք բերեցին նաև ծովերի վրա: Քանի որ նրանք սեփական նավատորմ չունեին, ծովային պատերազմները մղում էին փյունիկացիների, կիպրոսցիների, Էգեյան ծովի կղզիների բնակիչների և այլ հպատակ ծովային ժողովուրդների ռազմանավերի, ինչպես նաև եգիպտական նավատորմի օգնությամբ:

Աքեմենյան արքաների պալատը, նրանց կենցաղն աչքի էր ընկնում աներևակայելի շքեղությամբ ու ճոխությամբ: Արքայից արքայի վառ կարմիր ոսկեզօծ զգեստը, քանկարժեք քարերով ընդելուզված հոյակապ բարձր թիարան, շքեղ գահը, որի վրա նա բազմում էր. այդ բոլորը վկայում էր նրա վեհության ու մեծության, «երկրների արքայի» պետության համաշխարհային նշանակության մասին:

Աքեմենյան Պարսկաստանում գոյություն ունեին տարբեր կրոնական

պատկերացումներ: Լայն տարածում ուներ մազդեզականությունը, որի հիմքում ընկած է երկնքի աստծո՝ տիեզերքի արարիչ Ահուրա-Մազդայի կուլտը, որոշակի տարածում ուներ «սրբազան կրակի» կուլտը և այլն: Աքեմենյանների դարաշրջանի պարսիկները հանդիսանում էին բնության հին հնդեվրոպական աստվածությունների՝ Միթրայի (արևի և լույսի աստծո), Անահիտի (ջրի և բարեբերության աստվածուհու) և այլնի երկրպագուներ: Հայտնվում է այն տեսակետը, որ պարսիկ ժողովրդի շրջանում զրադաշտականությունը իր վերացական բնույթի պատճառով հաջողություն չուներ, հավանաբար, Աքեմենյանների տիրապետության ողջ շրջանում: Թեև կարծիք կա նաև այն մասին, որ Աքեմենյանները եղել են զրադաշտականներ: Որոշակի վերապահումներով կարելի է ասել, որ Դարեհ Ա-ի ժամանակներից սկսած Աքեմենյանների կրոնը հանդիսանում էր վաղ զրադաշտականության ձևերից մեկը:

Մ.թ.ա. VII-VI դդ. սահմանագծին ծնունդ առավ զրադաշտականությունը՝ կրոնական մի ուսմունք, որի հիմնադիրն էր Զորոաստրը (Զրադաշտը): Զրադաշտականության սուրբ գիրքը «Ավեստան» էր, որը բազմաշերտ մի հուշարձան է: Նրա հնագույն մասերը (գաթերը) իրենց ձևով և բովանդակությամբ խիստ տարբերվում են մնացած «Ավեստայից»: Նրանք կազմված են չափածո ձևով և հանդիսանում են հենց իր՝ Զրադաշտի քարոզները: Զրադաշտականության մեջ առկա են մազդեզական կրոնի ուժեղ տարրեր: Հայտնի է, որ հենց Զրադաշտն ինքը բարեփոխման է ենթարկել մազդեզականությունը և իր նոր կրոնը ստեղծելիս մեծապես օգտվել է նրա դրույթներից: Առհասարակ պետք է նշել, որ զրադաշտականությունը և «Ավեստան» իրենց մեջ ներառել են բազմաթիվ հին ժողովրդական ավանդույթներ ու առասպելներ: Կրոնական այդ ուսմունքի հիմքում ընկած էր աշխարհում երկու սկիզբների՝ բարու և չարի միջև պայքարի գաղափարը: Բարի սկիզբ էր համարվում կրակը, լույսը, իսկ չար սկիզբ՝ խավարը: Բարու և լույսի ուժերն անձնավորվում էին ի դեմս տիեզերքի արարիչ Ահուրա-Մազդա աստծո (հունական անվանումը՝ Օրմուզդ կամ Որմիզդ), իսկ չարի և խավարի ուժերը՝ դև աստծո Անհրա-Մայնյուի (Ահրիման): Ըստ Զրադաշտի ուսմունքի՝ Ահուրա-Մազդան միակ ամենազոր և ամենագո բարու աստվածն է, որը մարմնավորում է լույսը, կյանքը և ճշմարտությունը: Նա գոյություն է ունեցել մինչև տիեզերքի արարչագործությունը և հանդիսանում է նրա արարիչը: Սակայն ի սկզբանե Ահուրա-Մազդայի հետ միաժամանակ գոյություն է ունեցել նաև չարության ոգին՝ Ահրիմանը, որը մարմնավորում է խավարն ու մահը և իր օգնական դևերի հետ միասին գործում է չարիք: Մարդը իր մտքերով, բառերով ու գործերով

պետք է պայքարի Աhրիմանի և նրա օգնականների՝ չարության ոգիների դեմ: Զրադաշտականությունն ընդունում է անդրշիրիմյան կյանքի գոյությունը: Մարդու ճակատագիրն անդրշիրիմյան աշխարհում կախված է երկրային կյանքից: Եթե մարդը նպաստել է բարու հաղթանակին, նա կընկնի դրախտ, հակառակ դեպքում նա դատապարտված է դժոխքի հավերժական տանջանքների:

Զրադաշտը հավատում է, որ երկու սկիզբների պայքարը ի վերջո ավարտվելու է Աhուրա-Մազդայի վերջնական հաղթանակով, որից հետո կստեղծվի մի իդեալական թագավորություն, որտեղ Աhուրա-Մազդան անբաժան կերպով կթագավորի երկնքում և երկրի վրա, արևը հավերժորեն կփայլի, և աշխարհի երեսից կվերանա ամեն մի չարիք: Բացի երկու գլխավոր՝ բարու և չարի աստվածներից, զրադաշտականության մեջ պահպանվել են նաև այլ աստվածությունների՝ հողի, երկնքի, ջրի ու կրակի կուլտեր: Համաձայն զրադաշտականության ուսմունքի՝ հողագործությունը հանդիսանում էր սրբազան զբաղմունք:

Պարսիկների մեջ արքաների աստվածացում գոյություն չի ունեցել: Աքեմենյաններն իրենց համարում էին լոկ աստվածների երկրային ներկայացուցիչներ: Վաղ Աքեմենյանները հնազանդեցված ժողովուրդների կրոնների նկատմամբ ունեին հանդուրժողական վերաբերմունք: Սակայն ավելի ուշ դրությունը փոխվում է: Գաումատայի ժամանակներից սկսած ծայր է առնում կրոնական պայքար:

Ամենայն հավանականությամբ, Աքեմենյան արքաները չափազանց կարևոր նշանակություն էին տալիս կրոնին, այդ թվում նաև քաղաքական նպատակներով: Պատահական չէ, որ Դարեհ Ա-ն, իսկ հետագայում նաև Քսերքսեսը, իրականացրին կրոնական բարեփոխում՝ նսեմացնելով իրանական ցեղերի աստվածների՝ դևերի նշանակությունը և առաջին պլան մղելով Աhուրա-Մազդայի կուլտը:

10. ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ: ՍԵԼԵՎԿՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՐԹԵՎՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԻՐԱՆՈՒՄ ԻՐԵՆՑ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մ.թ.ա. III դարի ընթացքում Սելևկյան պետությունը հետզհետե թուլանում էր շնորհիվ մշտական պատերազմների, ներքին երկպառակությունների և ապստամբությունների: Նրանից շարունակ անջատվում էին նորանոր տարածքներ:

Մ.թ.ա. շուրջ 250 թ. արևելքից Իրան ներխուժեց քոչվորական ապարն կամ պարն ցեղը, որն ավելի շատ հայտնի է պարթևական ցեղ անունով: Այն հայտնի էր դեռևս Աքեմենյանների ժամանակներից, երբ նրանք զբաղեցնում էին մի տարածք, որը մոտավորապես համապատասխանում է ժամանակակից Իրանի Խորասան նահանգին: Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից հետո Արևմտյան Թուրքեստանում տեղի ունեցավ ցեղերի տեղաշարժ, որի հետևանքով Միջին Ասիայում ոչնչացվեցին մի քանի հունական հենակետեր: Սակայն Սելևկոս Ա-ն և նրա որդի Անտիոքոսը կարողացան վերականգնել այդ քաղաքները և նրանցում վերստին հաստատել Սելևկյանների իշխանությունը: Միանգամայն հավանական է, որ այդ տեղաշարժված ցեղերի մեջ էին գտնվում նաև պարները կամ ապարները:

Շարժվելով դեպի բուն Իրանի տարածքը՝ նրանք նախապես զբաղեցրին Կասպից ծովի ողջ հարավարևելյան ծովափը: Ամենայն հավանականությամբ, տեղեկանալով, որ արևմուտքում Սելևկյանների միապետությունը ջախջախիչ պարտություն է կրել, պարթևների առաջնորդներ Արշակը (հունարեն՝ Արսակ) և նրա եղբայր Տիրիդատը (Տրդատ) աւյստամբեցին հունա-մակեդոնական տիրապետության դեմ: Ապստամբությունն ընդգրկեց ոչ միայն Կասպից ծովի ողջ հարավ-արևելյան ծովափը, այլև Միջին Ասիան: Ապստամբ եղբայրները սպանեցին Սելևկյանների սատրապին (ստրատեգին) և մ.թ.ա. 247 թ. ստեղծեցին Արշակունիների կամ Պարթևական պետությունը: Այս իրադարձությունը իրանցի պատմաբանների կողմից բնութագրվել է որպես Իրանի ըմբոստացում Արևմուտքի դեմ, որը հանգեցրեց Իրանի նոր վերածննդին: Այդ դինաստիայի և պետության հիմնադիրը Արշակ Մեծ թագավորն էր

(մ.թ.ա. 247-212 թթ.), որի մասին հռոմեական պատմիչ Հուստինոսը (II-III դդ.) արտահայտվել է հետևյալ կերպ. «անհայտ ծագում ունեցող, բայց մեծ խիզախության տեր մարդ»: Նույն պատմիչը նաև նշում է, որ Արշակը «պարթևների համար նույնքան արժանահիշատակ էր, որքան պարսիկների համար՝ Կյուրոսը, մակեդոնացիների համար Ալեքսանդրը, հռոմեացիների համար՝ *Ռոմուլը*»:

Պարթևական պետության հետագա թագավորներից շատերն ընդունել են Արշակ անունը, որը մեկնաբանվում է որպես ցեղի անվանում, «Ավեստայում» հիշատակվող «արեշա» (արջ) բառից: Մեկ այլ վարկածի համաձայն՝ Արշակ նշանակում է «տղամարդ», «հերոս»՝ արշան բառից:

Իրենք Արշակունիները իրենց նախահայր էին համարում Աքեմենյան Արտաքսերքսես Բ՝ թագավորին: Սակայն այդ ծագումնաբանությունը ոչ մի պատմական հիմք չունի: Իսկ միջնադարյան իրանական ավանդությը Արշակունիների ծագումը վերագրում էր Քեյ Քավուսի որդի Սիյավուշից:

Պարթևական պետության հետ համարյա միաժամանակ Միջին Ասիայում և ժամանակակից Աֆղանստանի տարածքում ստեղծվեց Հույն-Բակտրիական պետությունը, որի սահմանները տարածվում էին մինչև Հինդոս գետը: Մ.թ.ա. 135 թ. այդ պետությունը հարձակման ենթարկվեց վաչկատուն քուշանների կողմից, որոնց հուժկու հարվածների տակ հույն-բակտրիական իշխողները դուրս մղվեցին Միջին Ասիայի և Աֆղանստանի տարածքից և միաժամանակ իրենց գոյությունը պահպանեցին միայն Հինդոս գետի ափերին:

Սկզբնական շրջանում Պարթևստանը ստիպված էր ճանաչել Սելևկյանների գերագույն իշխանությունը: Ընդ որում՝ այդ շրջանում Պարթևական պետության կազմի մեջ մտնում էին միայն Կասպից ծովից արևելք և հարավ-արևելք ընկած տարածքները: Նորաստեղծ պետության քաղաքական կենտրոն դարձավ Նիսա քաղաքը (հետագայում այդ պետության մայրաքաղաքներ են եղել Դարուն, Հեկատոմբիլը, Էկբաթանը, Քտեսիֆոնը (Տիգրոն):

Արշակը եռանդուն գործողություններով ընդարձակում էր իր նորաստեղծ պետությունը և դիմագրավում Սելևկոս Բ-ի ճնշմանը, որը ստիպված է լինում առերես, գեթ միաժամանակ ճանաչել պարթևների ինքնուրույնությունը:

Տեղական բնակչության ընդհարումներից մեկի ժամանակ Արշակ Ա-ն սպանվում է. մի հանգամանք, որը վկայում է այդ շրջանում Պարթևստանի ռազմաքաղաքական իրադրության ծայրահեղ լարվածության մասին: Մ.թ.ա. 217 թ. Արշակ Մեծին հաջորդում է նրա եղբայր Տրդատը, որն ըն-

դուսում է Արշակ Բ գահակալական անունը: Սկզբնական շրջանում իր պետությունն ընդլայնելու գործում նա ունենում է ակնառու հաջողություններ: Նրան հաջողվում է նույնիսկ իր իշխանությանը ենթարկել Հիրկանիան և պարտության մատնել Սելևկոս Բ Կալլինիկոսի զորքերին: Սակայն այնուհետև Արշակ Բ-ն ընկնում է դժվարին վիճակի մեջ:

Անտիոքոս Գ-ն, ստանալով Ատրոպատենյան Մարաստանի կառավարիչ Արտաբազանի աջակցության վերաբերյալ խոստումը, ինչպես նաև կարգավորելով գործերը Հայաստանում, մ.թ.ա. 209 թ. ձեռնամուխ է լինում իր արևելյան արշավանքին, որի նպատակն էր հնազանդության մեջ պահել պարթևներին: Այդ պատերազմի վերջնական հետևանքը հանդիսացավ խաղաղության պայմանագրի կնքումը, որով պարթևները ճանաչում էին Սելևկյանների գերագույն իշխանությունը:

Ի դեպ, պատերազմի ժամանակ Արշակ Բ-ն ստիպված է լինում փախուստի դիմել՝ ապաստան գտնելով «ապասյակ» կոչված ցեղերի մոտ: Սակայն նրա հպատակությունը Սելևկյաններին երկար չի տևում: Շուտով նրան հաջողվում է պարտության մատնել Սելևկյանների զորքերին: Այդ հաղթանակը, նշում է Հուստինոսը, հետագայում պարթևները համարում էին իրենց ազատագրության օրը և ամեն տարի նշում էին այն:

Սելևկյանների պետության թուլացման և Հույն-Բակտրիական թագավորության տրոհման ու քայքայման դարաշրջանում պարթևները վճռական քայլեր կատարեցին իրենց տարածքների ընդլայնման և անկախության ամրապնդման ուղղությամբ: Արշակ Բ-ն իր տիրույթներն ընդլայնեց Կոպետ-Դաղ լեռնաշղթայից հարավ ընկած տարածքներում, կազմակերպեց բանակ, կառուցեց մի շարք քաղաքներ ու ամրոցներ և Պարթևական թագավորության քաղաքական կենտրոնը տեղափոխեց անմատչելի Դարու ամրոցը:

Միանգամայն հասկանալի էին Արշակ Բ-ի միջոցառումները իր պետության պաշտպանունակությունն ամրապնդելու ուղղությամբ, որովհետև վտանգը հնարավոր էր ինչպես արևմուտքից, այնպես էլ արևելքից:

Արշակ Բ-ին հաջողվեց անխախտ կերպով պահպանել իր իշխանությունը Պարթևստանի նկատմամբ ընդհուպ մինչև իր մահը՝ մ.թ.ա. 211 թ.: Նրա մահվանից հետո պարթևական գահը ժառանգեց Արտաբան Ա-ն, որի գահակալական անունը Արշակ Գ է (մ.թ.ա. 211-191): Նրա կառավարման շրջանում Անտիոքոս Գ-ի զորքերը կրկին ներխուժեցին Պարթևստանի խորքերը և նույնիսկ գրավեցին պարթևական թագավորների պաշտոնական նստավայր Հեկատոմբիլը: Ի վերջո, Արտաբանը ևս, Մարաստան Ատրոպատենի և Հայաստանի կառավարիչների նման,

ստիպված էր ճանաչել Անտիոքոս Գ-ի գերագույն իշխանությունը՝ պահպանելով իր տիրույթները և արքայական տիտղոսը Սելևկյանների պետության դաշնակցի իրավունքով: Այսպիսով՝ պարթևական թագավորը կարողացավ ձեռք բերել թեկուզ և մի կարճատև խաղաղություն, որն այնքան անհրաժեշտ էր իր պետությունն ամրապնդելու համար: Սելևկոս Դ-ի տիրապետության օրոք (մ.թ.ա. 187-175 թթ.) Սելևկյանների տիրապետությունից Հայաստանի ազատագրումն իր անմիջական ներգործությունն ունեցավ Մարաստան Ատրոպատենի, Պարթևստանի և Հույն-Բակտրիական թագավորության տիրակալների քաղաքական վարքագծի վրա: Մասնավորապես Պարթևստանի նոր թագավոր Արշակ Դ Փրիապատոսը (մ.թ.ա. 191-176) գրավեց Պարթևստանի հարևան Մարաստանի որոշ տարածքներ և նույնիսկ իրեն հայտարարեց անկախ:

Մագնեսիայի ճակատամարտում Անտիոքոսի կրած պարտությունից հետո պարթևական Հրահատ Ա թագավորը (մ.թ.ա. 176-171) սկսում է իր գործողություններում ավելի ազատ զգալ: Հիրավի, այդ ճակատամարտը շրջադարձային նշանակություն ունեցավ Միջերկրածովյան ավազանի և Առաջավոր Ասիայի երկրների հասարակական-քաղաքական զարգացման մեջ: Միաժամանակ մ.թ.ա. 187 թ. Անտիոքոս Գ-ի մահը դեռևս կիսանկախ Պարթևական պետությանը հույս էր ներշնչում ձեռք բերելու կատարյալ անկախություն:

Միհրդատ Ա Մեծը կամ Արշակ Ջ-ն (մ.թ.ա. 171-138) դառնում է պարթևական աշխարհակալության հիմնադիր (Պարթև տիրողները, գահ բարձրանալուց հետո կոչվում էին Արշակ՝ պահպանելով, սակայն և իրենց հատուկ անունները): Իրավամբ, նա հանդիսանում է Պարթևական թագավորության հզորության իսկական հիմնադիրը: Նրա օրոք Արշակունիների պետությունը վերածվեց համաշխարհային տերության: Միհրդատ Ա-ին հաջողվում է գրավել Հիրկանիայից և Պարթևստանից Մարաստան տանող ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող լեռնանցքները (այսպես կոչված՝ Կասպիական դարպասները) և Մարաստանի մեծ մասը միացնել իր պետությանը: Այնուհետև պարթևներն իրենց զենքն ուղղում են դեպի արևելք՝ քոչվորական ցեղերի դեմ: Արևելքում նրանք իրենց պետությանն են միացնում Գեդրոզիան, Դրանգիանան (Սիսթան կամ Սաքաստան), Արիյան (Հերաթի շրջանը), այնուհետև՝ Իրանական բարձրավանդակի հարավային շրջանները (Պերսիդան և Էլիմայիդան): Տեղեկություններ կան, որ Միհրդատ Ա Մեծը պատերազմում էր նաև Հնդկաստանի սահմանների մոտ գտնվող Արախոսիայում:

Արևելյան սահմաններն ամրապնդելուց հետո՝ մ.թ.ա. 145 թ., Միհր-

դատ Ա-ն սկսում է իր հայացքն ուղղել դեպի արևմուտք՝ գրավելով Տիգրիսյան Սելևկիան (մ.թ.ա. 141 թ.), Բաբելոնիան և Շոշը (Սուզան): Սելևկյան Դեմետրիոս Բ Նիկատորը (մ.թ.ա. 145-140) փորձում է վերականգնել իր տերության սահմանները և հետ բերել կորցրածը: Այդ նպատակով նա ռազմական դաշինք է կնքում Հելիոկլես Բակտրիացու հետ, որպեսզի ստիպի Միհրդատին պայքար մղել երկու ճակատում: Սակայն Միհրդատը մ.թ.ա. 141 թ. դեկտեմբերին, իսկ ապա՝ 140 թ.՝ ջախջախում է Հելիոկլեսին: Ընդ որում՝ պարթևները խաբում են նրան՝ կեղծ բանակցություններ սկսելով նրա հետ, իբր թե խաղաղության դաշն կնքելու համար: Այդ բանակցությունների ժամանակ անակնկալ կերպով գերում են նրան և, ըստ Հուստինոսի, ծաղրելու նպատակով նրան պտտեցնում են այն բոլոր քաղաքները, որոնք ժամանակին անցել էին Դեմետրիոսի կողմը: Պարթևների դեմ Դեմետրիոս Բ-ի արշավանքի կատարյալ ձախողումն իրենց բացասական հետևանքներն ունեցան Ասիայում հելլենիստական հասարակության ողջ համակարգի վրա՝ հիմքից սասանելով այն: Սելևկյան թագավորին գերեվարելուց հետո Միհրդատը կարող էր իրեն համարել Աքեմենյանների և Ալեքսանդրի ժառանգորդ: Միհրդատ Ա-ի դրամների վրա դրոշմված «մեծ արքա» տիտղոսը միանգամայն համապատասխանում էր իրական դրությանը: Նրա օրոք Պարթևստանը արդեն դարձել էր համաշխարհային պետություն: Արշակունիները ձգտում էին իրենց տիրույթները ընդլայնել նաև ի հաշիվ Արևմտյան Արաբիայի, Փոքր Ասիայի և Եգիպտոսի, այսինքն՝ իրենց տիրույթները հասցնել այնպիսի սահմանների, որ ժամանակին ուներ Աքեմենյան պետությունը: Արևելքում Պարթևական թագավորությունը շփման մեջ մտավ Չինաստանի հետ:

Դեմետրիոս Բ-ի եղբայր Անտիոքոս Ե Սիդետեսը մ.թ.ա. 130 թ. մեծ արշավանք է կազմակերպում պարթևների արքա Հրահատ Բ-ի (Արշակ Է, մ.թ.ա. 138-129) դեմ, սակայն ոչ միայն չի կարողանում իրադարձությունների մեջ բեկում մտցնել, այլև ունենում է նոր կորուստներ: Նրա զորքերը ջախջախվում են, իսկ ինքը զոհվում է (մ.թ.ա. 129թ. գարնանը): Չցանկանալով ընկնել թշնամու ձեռքը՝ Անտիոքոսն իր ձիու հետ միասին նետվում է անդունդը: Հրահատ Բ-ն՝ գնահատանքի արժանացնելով իր զոհված թշնամու խիզախությունը, հաղորդում է Հուստինոսը, - նրա համար կազմակերպում է արքայական թաղում:

Այս իրադարձությունները շրջադարձային նշանակություն ունեցան Պարթևական պետության համար, քանի որ Սելևկյանների ղիմադրությունը արդեն հիմնականում կոտրված էր, և պարթևների համար բացվում էին հզորանալու նոր հեռանկարներ: Հրահատ, Բ-ն վերջնականա-

պես ավաճեց ոչ միայն «վերին սատրապությունները», այլև Միջագետքը: Նրա կողմից նշանակված կուսակալ Հիմերը ջախջախելով Բաբելոնը, նրա բնակչությանը քշեց ստրկության դեպի Մարաստան:

Պարթևների առաջխաղացումը դեպի արևմուտք դադարեց Միջին Ասիայից սաքերի Պարթևստան ներխուժելու պատճառով: Նրանք ջախջախեցին Հրահատ Բ-ի բանակը: Ճակատամարտերից մեկի ժամանակ զոհվեց նաև պարթևաց երիտասարդ արքան: Գահ բարձրացավ նրա հորեղբայրը՝ Արտաբան Բ-ն (Արշակ Ը, մ.թ.ա. 128-124): Սակայն նա ի վիճակի չեղավ ստիպել քոչվորներին վերադառնալու իրենց տափաստանները: Մ.թ.ա. 124 թ. թոհարների հետ ճակատամարտում նա մահացու վիրավորվեց և շուտով մահացավ: Արևելքում Միհրդատ Ա-ի կողմից ավաճված լայնածավալ տարածքները կորստյան մատնվեցին: Թվում էր թե Պարթևական պետությունը մոտ է կատարյալ քայքայման: Արևելքում սաքերը զավթեցին մի շարք իրանական տարածքներ, արևմուտքում Պարթևական պետությունից անջատվեցին Էլիմայիդան և Պերսիդան: Ստորին Միջագետքում, օգտագործելով պարթևների դժվարին վիճակը, տեղական կառավարիչն իրեն հայտարարեց պարթևներից անկախ: Հյուսիս-արևմուտքում հայոց արքա Արտավազդը գրավեց մի շարք սահմանամերձ շրջաններ, իսկ հյուսիսում վերսկսվեցին հոների հարձակումները:

Միհրդատ Բ-ն (Արշակ Թ, մ. թ. ա. 123-87), հորից ժառանգելով տևական պատերազմների, ներքին խռովությունների և քոչվորների դեմ մղվող անվերջանալի ընդհարումների հետևանքով թուլացած ու կատարյալ անիշխանության մատնված մի պետություն, եռանդուն քայլեր է ձեռնարկում տերության հզորությունը և դինաստիայի վարկը վերականգնելու համար: Որպես առաջին քայլ, նա ձեռնամուխ է լինում պարթևական բանակի հիմնովին վերակառուցմանը: Նոր զինված ուժերի հիմնական կորիզը դարձան ծանր սպառազինություն կրող հեծելազորայինները՝ այսպես կոչված «անխոցելիները», որոնց յուրաքանչյուր ջոկատ բաղկացած էր հազար ռազմիկից: Ջոկատների դրոշները երկար վիշապանման ձև ունեին, որի պատճառով հույներն այդ ջոկատներն անվանում էին «վիշապներ»: Բացի այդ, պարթևական բանակը բաղկացած էր հեծյալ նետաձիգներից ու հետևակից:

Պետության արևելքում վերսկսելով պայքարը սաքերի դեմ՝ Միհրդատ Բ-ն մի շարք արյունահեղ ճակատամարտերից հետո կարողանում է ստիպել նրանց առաջնորդներին՝ ճանաչել իր գերագույն իշխանությունը (մոտ մ. թ .ա. 115-110 թթ.): Սակայն, այնուամենայնիվ, սաքերի նկատմամբ հաղթանակը կատարյալ չէր: Նրանց առաջնորդները, մաս-

նավորապես գերագույն առաջնորդ Սուրենը, ճանաչվեց սաքերի կողմից նվաճված Դրանգիանա նահանգի կառավարիչ, որն այդ ժամանակվանից սկսած՝ կոչվեց Սաքաստան (ներկայիս Սեյիստան, Սիսթան)։ Բացի այդ, Սուրենը և նրա ընտանիքը պարթևական արքաների պալատում ստացան մի շարք պատվավոր ժառանգական իրավունքներ, մասնավորապես նորընտիր արքաների գլխին թագը դնելու, ինչպես նաև պատերազմների ժամանակ բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնը զբաղեցնելու ժառանգական իրավունքը։

Դեպի արևմուտք ևս կատարելով մի շարք հաջող արշավանքներ, Միհրդատ Բ-ն պարթևների տերության սահմանագիծը հասցնում է մինչև Եփրատ գետը։ Ի դեպ, սա առաջին պարթևական թագավորն էր, որն իր դրամների վրա օգտագործում էր «արքայից արքա» աքեմենյան հնագույն տիտղոսը։

Համաձայն Հուստինոսի հաղորդման՝ Միհրդատ Բ-ն պատերազմել է նաև հայոց թագավոր Արտավազդի դեմ՝ նրանից հետ խլելով պարթևներին պատկանող սահմանամերձ շրջանները և ստիպելով, որ հայոց արքան, որպես պատանդ, իրեն հանձնի իր որդի թագաժառանգ Տիգրանին։ Վերջինիս կյանքի շուրջ մեկ տասնամյակ պատանդի վիճակում անցնում է պարթևների արքունիքում։ Միհրդատ Բ-ի մոտ ծնվում է Տիգրանին հայոց գահի վրա նստեցնելու գաղափարը։ Նա ազատ է արձակում վերջինիս և օժանդակում նրա գահակալմանը՝ որպես փրկագին պահանջելով «Յոթանասուն հովիտներ» կոչվող տեղանքը։ Ըստ Ապպիանոսի հաղորդած տեղեկության՝ Տիգրանը թագադրվեց այն վայրում, որտեղ նա հետագայում հիմնեց Տիգրանակերտ քաղաքը։

Տիգրանը սկզբնապես պարթևների նկատմամբ վարում էր զգույշ քաղաքականություն և ամբողջ յոթ-ութ տարի՝ մինչև Միհրդատ Բ-ի մահը, ոչ մի քայլ չարեց նրանց դեմ։

Միհրդատի օրոք դաժան հարված հասցվեց առանց այն էլ հոգեվարքի մեջ գտնվող Սելևկյան պետությանը։ Նրա կենդանության օրոք պարթևներն առաջին անգամ շփումներ ունեցան, այսպես կոչված, «սերերի» (չինացիների) հետ, որոնք իրենց գոյության մասին սկսել էին ազդարարել Եվրոպայի հարավարևմտյան մասի ժողովուրդներին։ Միհրդատ Բ-ն, որն անվանվեց «մեծ», շքեղ հանդիսավորությամբ ընդունեց չինական դեսպանին։

Անվարան կարելի է ասել, որ Միհրդատ Բ-ի օրոք պարթևական պետությունը վերածվեց մի յուրահատուկ կապող օղակի իր ժամանակի քաղաքակիրթ աշխարհի արևելյան և արևմտյան մասերի միջև։

Մ.թ.ա. 87 թ. Միհրդատ Բ Մեծը մահացավ, և պարթևական գահի վրա նստեց Բաբելոնի «սատրապաց սատրապ» Գոդերզը (Գոդարզ): Նրա կառավարման օրոք հայոց արքա Տիգրան Բ-ի զորքերը պարթևներից հետ խլեցին «Յոթանասուն հովիտները», որը գտնվում էր Հայաստանի հարավարևելյան մասում՝ մարական սահմանի մոտ, այնուհետև ներխուժեցին Մարաստան և գրավեցին պարթևական արքայից արքայի նստավայրերից մեկը՝ Էկբաթանը: Պարթևական թագավորը ստիպված էր խնդրել հաշտություն և հօգուտ Տիգրանի հրաժարվել ինչպես «Յոթանասուն հովիտներից», այնպես էլ Ատրոպատյան Մարաստանի ու Հյուսիսային Միջագետքի նկատմամբ իր գերիշխանությունից: Իսկ, ամենակարևորը, նա ստիպված էր հրաժարվել «արքայից արքա» տիտղոսից, որն այսուհետև կրելու էր հաղթանակ տարած Տիգրանը:

Գոդերզի պարտությունը և նրա անկարողությունն առաջ բերեցին պարսիկ ազնվականության դժգոհությունը: Որպես դրա հետևանք, անմիջապես հայտնվեց գահի նոր հավակնորդ. դա Օրոդեսն էր, որը մ.թ.ա. 80 թ. թագադրվեց որպես Պարթևստանի թագավոր՝ ընդունելով Օրոդես Ա (Արշակ Ի) գահակալական անունը: Վերջինիս կառավարումը շատ կարճ տևեց՝ մինչև մ.թ.ա. 76 թ.: Այդ տիրակալը թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության բնագավառում չդրսևորեց ակտիվություն և նախաձեռնող ոգի: Մ.թ.ա. 76թ. նրան փոխարինում է Արշակունիների տոհմի հնագույն ներկայացուցիչներից մեկը՝ Սանատրուկը կամ Սինատրուկը (Արշակ Լ, մ.թ.ա. 76-70/69): Այդ յոթանասունամյա ծերունին իր կյանքի մի զգալի մասն անց էր կացրել արևելքի քոչվոր ցեղերից մեկի՝ սաքսրաուքների մոտ գերության մեջ: Ենթադրվում է, որ հենց այդ պատճառով նա կորցրել էր արքայինն վայել ոգու արիությունը և հպարտությունը: Այդ տիրակալը խաղաղասեր մարդ էր և հանգիստ ու ապահով կյանքը գերադասում էր պատերազմներից: Ուստի երբ Միհրդատ Ց Եվպատորը մ.թ.ա. 72-71 թթ. նրան դիմեց՝ խնդրելով օգնություն հռոմեացիների դեմ մղվող պատերազմում, հոգնած պարթևական թագավորը կտրուկ հրաժարվեց այդ առաջարկից:

Սինատրուկի մահվանից հետո նրա ժառանգորդ դարձավ իր որդին՝ Հրահատ Գ-ն (Արշակ XIII, մ.թ.ա. 70 կամ 69-58/57), որին վիճակված էր արդեն Սիրիայում ու Միջագետքում տեսնել հռոմեացիներին որպես Պարթևական տերության վտանգավոր հարևանների: Սրա օրոք Արևելքում կրկին սկսեցին դրսևորվել պարթևների աշխարհակալական ձգտումների մի նոր ալիքի առաջին նշանները:

11. ՊԱՐԹԵՎԱ - ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Արևմուտքում Պարթևստանի դեմ ավելի ու ավելի սպառնալից ձևով հառնում էր Հռոմեական կայսրությունը: Երկու հակառակորդների միջև կռվախնճոյր էր հանդիսանում Հայաստանը: Այդ երկրում հռոմեական ազդեցության գերակշռությունը պարթևների համար սպառնալիք էր ստեղծում Միջագետքի և առհասարակ Պարթևստանի ողջ արևմտյան սատրապությունների ազատագրության համար: Եվ, ընդհակառակը, Հայաստանում պարթևական ազդեցության ուժեղացումը պարթևների համար ուղի էր հարթում դեպի Սև ծով և ապահովում էր նրանց տիրապետող դիրքերը ողջ Կովկասում: Բացի այդ, Հայաստանը պարթևական տիրապետության տակ գտնվելու դեպքում Պարթևական պետությունը Փոքր Ասիայի արևմտյան մասերի հետ կապող բոլոր առևտրական ճանապարհները կանցնեին պարթևների հսկողության տակ: Վերջապես, ռազմական առումով Հայաստանն իրենից ներկայացնում էր հզոր ուժ, և նրա նկատմամբ գործուն ազդեցությունը կարող էր ունենալ կարևորագույն ռազմաքաղաքական նշանակություն:

Հայաստանում առկա էին երկու կուսակցություններ՝ պարթևական ու հռոմեական, որոնք թեժ պայքարի մեջ էին միմյանց հետ: Ազնվական տոհմերի մեծ մասն ուներ պարթևական կողմնորոշում, փոքրամասնությունը՝ հռոմեական:

Այդ օրերին Հայաստանը ծանր պատերազմների մեջ էր հռոմեացիների դեմ: Տիգրան Բ-ն և նրա դաշնակից Միհրդատ Եվպատորը դիմում են Հրահատ Գ-ին՝ նրան առաջարկելով դաշնակցել Հռոմի դեմ մղվող պատերազմում: Տիգրանը նույնիսկ խոստանում էր վերադարձնել «Յոթանասուն հովիտները» և Հյուսիսային Միջագետքի նախկինում պարթևներին պատկանած հողերը: Մ.թ.ա. 69 թ. Հրահատին դաշինքի առաջարկ էր արել նաև Լուկուլլոսը: Սակայն շրջահայաց ու զգույշ պարթևական արքան գերադասեց չեզոք դիրք գրավել՝ բավարարվելով երկու կողմերին էլ անորոշ, ոչնչով չպարտավորեցնող խոստումներ տալով:

Անշուշտ, այդ չեզոքությունը չէր կարող տևական լինել: Հայաստանի հետ կապված հարցերի շուրջը կողմերի միջև ծագած վեճը, ի վերջո, վերածվեց առճակատման:

Մ.թ.ա. 66-65 թթ. Հրահատ Գ-ն, վերագնահատման ենթարկելով մի-

ջազգային դրությունը, ռազմական գործողություններ սկսեց Հայաստանի դեմ, որն այդ ժամանակ արդեն դարձել էր հռոմեացիների դաշնակիցը: Հետ մղելով հայկական զորքերին՝ պարթևները գրավեցին Միջագետքի հյուսիսարևմտյան մասի մի շարք շրջաններ, այդ թվում նաև Կառռա, Նիկեփորիա և Եփրատ գետի մոտակայքում գտնվող մի շարք այլ քաղաքներ:

Շուտով, սակայն, պարթևական տերության մեջ տեղի ունեցավ քաղաքական հեղաշրջում: Հրահատ Գ-ի որդիները՝ Միհրդատը և Օրոդեսը, կազմակերպեցին դավադրություն և սպանեցին իրենց հորը: Սկզբում Պարթևական տերության տիրակալ հայտարարվեց Միհրդատը (Միհրդատ Գ, մոտ մ.թ.ա. 57 թ.): Սակայն պարթևական «ավագների խորհուրդը» որոշում կայացրեց գահընկեց անել նրան՝ մեղադրելով «դաժանության» մեջ: Արքայական գահը հանձնվեց նրա եղբորը՝ Օրոդես Բ-ին (մ.թ.ա. 55-37), որը հրամայեց սպանել արյունակից եղբորը՝ Միհրդատին:

Մ.թ.ա. 54 թ. Առաջին եռապետության անդամ Մարկոս Կրասոսը ռազմելրթի է դուրս գալիս պարթևների դեմ՝ հետապնդելով լայնահուն փառասիրական նպատակներ: Նրա զորքերն անցնում են Եփրատը՝ Պարթևների տերության սահմանը, ետ շպրտում սատրապ Սիլլակի փոքրաթիվ զորքը և գրավում մի քանի քաղաքներ:

Պարթևական թագավոր Օրոդես Բ-ն դեսպաններ է ուղարկում Կրասոսի մոտ՝ շոշափելու համար նրա մտադրությունները: Դեսպանների խնդիրն էր նաև ստույգ տեղեկություններ հավաքել հռոմեացիների ուժերի, նրանց տեղակայման վայրերի և հռոմեական բանակի տեղաշարժերի վերաբերյալ:

Կրասոսի հետ հանդիպման ժամանակ վերջինս ցինիկորեն հայտարարում է, թե դեսպանների հարցման պատասխանը կտա Տիգրիսյան Սելևկիայում (այսինքն՝ պարթևներին նվաճելուց հետո): Դեսպաններից մեկը՝ Վահիզ անունով, նկատում է, թե ավելի շուտ իր ձեռքի ափին մազեր կբուսնեն, քան Կրասոսը կտեսնի Սելևկիան: Դեսպանների եզրակացությունը մեկն էր՝ պատերազմն անխուսափելի է:

Մ.թ.ա. 53 թ. ապրիլի վերջին հռոմեական զորքերը վերսկսում են ռազմական գործողությունները: Հռոմի դաշնակիցների թվում հանդես էր գալիս նաև Հայաստանի թագավոր Արտավազդը: Ընդ որում՝ նա առաջարկում է Կրասոսին պարթևների դեմ արշավել ոչ թե Միջագետքի տափաստանների ու անապատների միջով, այլ Հայաստանի վրայով հռոմեական բանակը հեռու պահելու համար պարթևական հեծելազորի գործողությունների համար նպաստավոր տափարակ վայրերից: Սակայն հռոմեացի զորավարը մերժեց այդ առաջարկը՝ ավելի հավատ ընծայե-

լով արաբ շեյխերին, որոնք խոստանում էին նրան ավելի կարճ և հարմար ճանապարհով տանել Տիգրոնի վրա: Կրասոսոս իր բանակը շարժեց դեպի Խառան (Կառռա) քաղաքի կողմը՝ Միջագետքի անջուր ու կիզիչ տափաստաններով: Այդ դժվարին անցման ժամանակ ռազմիկները սովի, ծարավի և հոգնածության պատճառով ուժասպառ էին լինում, բարոյալքվում և կորցնում արիությունը:

Անսպասելիորեն հռոմեական բանակի առջև հայտնվում են պարթևական զորքերը երիտասարդ, տաղանդավոր զորավար Սուրենի հրամանատարության ներքո: Պարթևները մոտ տարածությունից բացառիկ վարպետությամբ սկսում են նետերի տարափ տեղալ հակառակորդի վրա: Հռոմեացիները չկարողացան դիմագրավել նաև ուղտերի երամակների գրոհին: Քոլորովին հուսալքված, բարոյապես ընկճված ու ջախջախված հռոմեական բանակի մնացուկները, թվով մոտ 14 հազար մարդ, սկսեցին Բելիսսա գետի ափով հապշտապ նահանջել դեպի հյուսիս ձգտելով գիշերային խավարի քողի տակ կտրվել ահարկու հակառակորդից և հնարավորին չափ շուտ հասնել Կառռա քաղաքը: Մի քանի օր տևած այդ նահանջը տեղի էր ունենում ծայրահեղ անկազմակերպ ձևով: Հրամանները արձակում էին Գայ Կասսիոսը և Օկտավիանոսը, որովհետև բանակի գլխավոր հրամանատար Մարկոս Լիցինիա Կրասոսը՝ Սպարտակին պարտության մատնած այդ անվանի զորահրամանատարը, գտնվում էր կիսամեղսունակ վիճակում (հատկապես որդու սպանության լուրը առնելուց հետո): Խուճապահար փախչող հռոմեացիները հաղթողների քմահաճույքին թողեցին 4 հազար վիրավորների, որոնք մինչև վերջին մարդը կոտորվեցին պարթևների կողմից: Վերջիններս որսում և անխնա ոչնչացնում էին նաև դասալիքներին ու ճանապարհը կորցրած ու մոլորված հռոմեացի լեգեոներներին: Միաժամանակ պարթևական հեծելազորն անընդհատ հարվածներով մաշում էր թշնամու զորքը և, ի վերջո, շրջապատում ու գերի վերցնում նրա մեծ մասը: Մի փոքր մասին Կասսիոսի գլխավորությամբ հաջողվում է փախչել և վերադառնալ Ասորիք: Արշավանքի ընթացքում հռոմեացիները 20 հազար զոհ տվին և կորցրին լեգեոնների արծվեկիր դրոշները: Կեղծ բանակցությունների միջոցով Սուրենին հաջողվեց տեղեկանալ, թե որտեղ է գտնվում Կրասոսը՝ իրեն ուղեկցող հրամանատարների ու զինվորների հետ: Պարթևներն առաջարկեցին նրան անձնական բանակցություններ սկսել: Թեև Կրասոսը չէր հավատում իր նենգ թշնամուն, սակայն իր բարոյալքված զինվորների ճնշման տակ ստիպված էր տալ իր համաձայնությունը: Եվ երբ Կրասոսը Օկտավիանոսի հետ և իրեն հավատարիմ

մնացած զինվորների ուղեկցությամբ բլուրից իջնելով՝ ցած եկավ պարթևների մոտ, նրանք ուխտադրժորեն կոտորեցին բոլորին: Կտրելով Կրասոսի գլուխը՝ Սուրենն այն ուղարկեց Հայաստանում գտնվող պարթևական Օրոդես Բ թագավորին: Խնջույքներից մեկի ժամանակ, երբ Օրոդեսն ու հայոց արքա Արտավազդը դիտում էին տրալլացի Յասոն ողբերգակի և նրա խմբի ներկայացրած՝ Եվրիպիդեսի «Բաքոսուհիները», ներս է մտնում Սիլլակ սատրապը և դահլիճի մեջտեղը նետում Մարկոս Կրասոսի գլուխը: Իր գոհունակությունը Սուրենին պարթև արքան արտահայտում է առատ նվերներով: Սակայն այդ գոհունակության զգացումը Սուրեն զորավարի նկատմամբ շուտով փոխվում է նախանձի և երկյուղի: Հիրավի, հրճված իր տարած հաղթանակով, Սուրենը Տիգրիսի ափի Սելևկիայում կազմակերպում է հաղթահանդես, որի ժամանակ Կրասոսի փոխարեն ցուցադրում է նրա նման մի հռոմեացու՝ պարթևական կանացի զգեստով: Թափորը եզրափակում է Սելևկիայի պոռնիկների բազմությունը: Պլուտարքոսն այդ բոլորը գնահատում է որպես «պարթևական բարբարոսության» տիպիկ օրինակ:

Օրոդեսին, բնականաբար, դուր չի գալիս Սուրենի վաստակած փառքը և հրամայում է սպանել նրան: Փառաբանված զորավարը զոհ է դառնում պարթևաց արքայի կասկածամտությանը:

Այսպիսով՝ պարթևներին ընկճելու Հռոմի առաջին փորձն ավարտվում է ահավոր պարտությամբ: Կրասոսի պարտությունն ունեցավ հսկայական ռազմաքաղաքական և հոգեբանական հետևանքներ: Հռոմեական զորքերի անպարտելիության լուսապսակը ամենավճռական կերպով ի չիք դարձավ: Մինչև մ.թ.ա. 53 թ. Կառռայի մոտ տեղի ունեցած ճակատամարտը հռոմեացիները Պարթևստանը չէին համարում Արևելքում եղած գլխավոր ուժը: Ավելին՝ նրան վերաբերվում էին որոշ արհամարհանքով: Սակայն այդ ճակատամարտից հետո, համաձայն հունական ու լատինական հեղինակների, աշխարհը բաժանվեց Հռոմի ու Պարթևստանի միջև:

Հաջողությամբ ոգևորված, մ.թ.ա. 51-50 թթ. պարթևները թագաժառանգ Բակուրի գլխավորությամբ շարժվեցին դեպի Ասորիք: Առանձին զորամասեր թափանցեցին Կիլիկիա: Սակայն այդ արշավանքը հաջողություն չունեցավ: Կողոպուտի նպատակով ասպատակ սփռելով մի շարք հարուստ շրջաններում՝ մ.թ.ա. 50 թ. պարթևական հեծելազորը վերադարձավ Եփրատի ափերը:

Հռոմեական զորքերի ջախջախիչ պարտությունից հետո հայոց արքա Արտավազդ Բ-ն մ.թ.ա 53 թ. դաշինք կնքեց Օրոդես Բ-ի (մ.թ.ա. 56-37) հետ՝ ընդդեմ Հռոմի: Այդ դաշինքն ամրակայվեց նաև դինաստիական

ամուսնությամբ: Դաշնադրությունից հետո Օրոդեսը Արտավազդին վերադարձրեց Հյուսիսային Միջագետքում գտնվող վիճելի հողերը: Այդ ժամանակաշրջանից սկսած, Հայաստանը՝ իբրև պարթևական պետության դաշնակից, եռանդուն մասնակցություն էր բերում արևմուտքում Հռոմեական կայսրության դեմ պարթևների ծավալած ակտիվ քաղաքականությանը, նրանց արշավանքներին ու նվաճումներին: Մ.թ.ա. 50-40-ական թթ. հայ - պարթևական զորքերը արշավեցին Ասորիք, Փյունիկիա և Պաղեստին: Այդ մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդում Հովսեպոս Փլավիոսը և Մովսես Խորենացին:

Հարկ է նշել, որ Առաջավոր Ասիայի վերջին մեկ ու կես հարյուրամյակի պատմությունը համոզել էր կոանի և սալի միջև ընկած հայ ժողովրդին, որ Հռոմի գերիշխանությունն անհամեմատ ավելի դաժան ու ծանր է, քան պարթևներինը: Բացի այդ, հայերին ու պարթևներին միավորում էին մի շարք ընդհանրություններ: Մշակույթի, կրոնի, բարքերի, տնտեսածևի, պետական կառուցվածքի և այլ տեսակետներից հայերը շատ ավելի մոտ էին պարթևներին: Դա նկատել է նաև Տակիտոսը, որը գրում է. «Հայերը տեղադրությամբ և բարքերի նմանությամբ պարթևներին ավելի մոտ էին կանգնած և խառնված էին նրանց հետ ամուսնություններով»: Ուստի քաղաքական կողմնորոշման առումով ընտրությունը կատարվեց հօգուտ պարթևների: Այդ կողմնորոշումը, ի բացառյալ առանձին միջադեպերի, շարունակվեց մինչև Պարթևական պետության կործանումը, այսինքն՝ մինչև մ.թ. 226 թ.:

Օրոդես Բ-ն, որ նախապես փայլուն հաջողություններ էր ձեռք բերել Հռոմի հետ պայքարում, ի վերջո՝ հայտնվեց չափազանց դժվարին վիճակի մեջ: Նրա լայնահուն ծրագրերը՝ Պարթևական միապետությունն Աքեմենյան տերության սահմաններում վերականգնելու ուղղությամբ, մտան փակուղի: Իր արևմտյան արշավանքի ժամանակ չկարողանալով ձեռք բերել ակնառու հաջողություններ և կորցնելով գահաժառանգ Բակուրին և իր ամենահեղինակավոր զորավարներից մեկին՝ Փարնապատին՝ այդ ծեռնունի տիրակալը կորցրեց նաև իր հեղինակությունը «ավագների խորհրդում», որի պահանջով նա հրաժարվեց իշխանությունից՝ հօգուտ իր բազմաթիվ որդիներից մեկի՝ Հրահատ Դ-ի (մ.թ.ա. մոտ 38-32): Վերջինս ոչ միայն թունավորելով սպանեց ծերունի հորը, այլև սրի քաշեց եղբայրներին՝ ձգտելով վերացնել իր գահին սպառնացող ամեն մի վտանգ:

Այդ ժամանակ Հռոմը հանձնարարեց Անտոնիոսին արշավանք կազմակերպել դեպի արևելք՝ պարթևների դեմ: Նրա ռազմարշավի գլխավոր նպատակներից մեկն էր լինելու պատժել նրանց Կրասոսի

խայտառակ պարտության համար և Բաբելոնը անջատել Պարթևստանից: Մ.թ.ա. 36 թ. դուրս գալով Զնգմայից՝ Անտոնիոսի բանակը Եփրատի ափով շարժվեց դեպի հյուսիս՝ Կարանայի (Կարին, Էրզրում) կողմը: Հայոց Արտավազդ արքան, իր կամքին հակառակ, միանում էր հռոմեական արշավանքին՝ ջանալով, որ Հայաստանը ըստ հնարավորին քիչ տուժի: Նա թեև Անտոնիոսին տրամադրեց 7000 հետևակ և 6000 հեծյալ, սակայն, հենց սկզբից հակված էր, որ հարմար պահին իսպառ լքի իրեն պարտադրված այդ ձեռնարկությունը, որը և տեղի ունեցավ:

Կազմակերպելով այդ արշավանքը՝ հռոմեացիները հույսեր էին փայփայում, որ իրենց կիսջողվի օգտագործել պարթևների շրջանում գոյություն ունեցող ներքին երկպառակությունները: Սակայն այդ հույսերը չարդարացան: Ընդհակառակը, արտաքին վտանգը պարթևական ազնվականության հակամարտող ուժերին համախմբեց Հրահատ Դ-ի շուրջը: Բացի այդ, պարզվեց, որ պարթևական բանակը ոչ միայն չի զրկվել իր մարտական հատկանիշներից, այլև առավել, քան անցյալում, աչքի է ընկնում արագ տեղաշարժվելու զարմանալի կարողությամբ: Պարթևները նաև հիանալի տեղեկություններ ունեին հռոմեական բանակի թվաքանակի, նրանց ծրագրերի և շարժման ուղղությունների մասին: Դրա վառ ապացույցը հետևյալ փաստն է: Դեռևս մինչև ռազմական գործողությունների սկսվելը պարթևական ավագանու ներկայացուցիչներից մեկը՝ զորավար Մոնեսը, պարթևական արքայից դժգոհ լինելու պատրվակով փախել էր Պարթևստանից և ապաստան գտել հռոմեացիների մոտ: Անտոնիոսը սիրով ընդունել էր նրան և դարձրել Ասորիքի երեք քաղաքների տեր՝ խոստանալով նրան պարթևական գահը: Սակայն հռոմեական արշավանքի հենց նախօրեին Հրահատը հետ է կանչում Մոնեսին և հանճարարում իր զորքերի հրամանատարությունը: Անտոնիոսը վերջապես հասկանում է, որ այդ ամբողջը սոսկ մի խաղ է եղել, որի նպատակն էր հռոմեական կողմի իրավիճակի խորը հետախուզությունը: Սա, անշուշտ, վկայում է այն մասին, որ պարթևների տեղեկատու ծառայությունը դրված էր փայլուն հիմքերի վրա:

Կապուտան (Ուրմիա) լճի ուղղությամբ հռոմեական բանակը Կարռնո դաշտից շարժվեց դեպի արևելք՝ նպատակ ունենալով նախ՝ գրավել Մեդիա-Ատրոպատենեն (Ատրպատական-Մարաստանը), իսկ այնուհետև՝ բուն Պարթևստանը:

Սակայն պարթևների պարբերական «խայթիչ» հուժկու հարվածները հռոմեացիներին հաջողության ոչ մի հույս չթողեցին: Ամենուրեք պարթևները ոչնչացնում էին սննդի պաշարները և անասունների համար

կերը՝ հռոմեացիներին սովի մատնելու և նրանց տեղաշարժվելու հնարավորությունից զրկելու համար: Անտոնիոսի փորձերը՝ ստիպել հակառակորդին տալու վճռական ճակատամարտ, ամեն անգամ ավարտվում էին անհաջողությամբ: Հակառակորդին աստիճանաբար մաշելու և նրան հուսահատության ու բարոյալքման մատնելու պարթևական հին մարտավարությունը տալիս էր փայլուն արդյունքներ:

Հռոմեացիների առաջին անհաջողությունները հայոց արքա Արտավազդին մղեցին վերանայելու իր վերաբերմունքը հայերի համար բոլոր տեսակետներից անծեռնտու և աղետաբեր արշավանքի նկատմամբ: Նա հետ քաշեց իր ուժերը և հրաժարվեց հետագա գործողություններին մասնակցելուց: Հետագայում Արտավազդն իր կյանքով վճարեց դրա համար:

Հռոմեական զորքի կարգապահությունը օրեցօր ընկնում էր, իսկ հայկական զորքերի հեռացումն ուղղակի խուճապ առաջ բերեց: Անտոնիոսը ստիպված դիմում է դեցիմացիայի՝ հռոմեական հայտնի պատժամիջոցին, երբ զինվորներին բաժանում էին տասնյակների և յուրաքանչյուր տասնյակից մի զինվորի մահապատժի ենթարկում:

Ցրտերը սկսվելուն պես կողմերը երկուստեք ցանկություն հայտնեցին բանակցություններ սկսել: Անտոնիոսի ուղարկած դեսպանները Հրահատից պահանջեցին վերադարձնել հռոմեական արծվեկիր ռազմական դրոշները և հանձնել պարթևների մոտ գտնվող հռոմեացի ռազմագերիներին: Հրահատը հրաժարվեց ընդունել այդ պայմանները և հայտարարեց, որ ինքը միայն կարող է համաձայնվել, որ պարթևական պետության տարածքից հռոմեացիների նահանջի դեպքում իրենք չեն անհանգստացնի նրանց: Դրանից հետո սկսվեց Անտոնիոսի զորքերի անվտառունակ նահանջը, որն ուղեկցվում էր պարթևական հեծելազորի անընդհատ հարձակումներով: 27-օրյա նահանջից հետո քաղցից ու ծարավից տառապող հռոմեական զինվորները հասան Հայաստանի սահմանագլուխը՝ Արաքս գետին: Դա անասելի ցնծություն առաջ բերեց հռոմեացիների շարքերում: Պլուտարքոսի վկայությամբ՝ զինվորներն սկսեցին համբուրել քարերն ու ավազը և գրկախառնվելով լաց լինել ուրախությունից: Սակայն դաժան սառնամանիքի պայմաններում Հայաստանի բարձր լեռնային շրջաններով անցումը և հռոմեացիներից խլեց մոտ 8000 լեգեոներների կյանք: Միայն հասնելով Ասորիքի սահմաններին՝ Անտոնիոսի զորքերը վերջապես գտան հանգիստ և ապահով տանիք:

Սակայն դաժան իրողությունն այն էր, որ Անտոնիոսը, որն իր դրոշի տակ հավաքել էր մի վիթխարի բանակ և պատրաստվում էր կրկնել Ալեքսանդր Մակեդոնացու փառապանծ հաղթարշավը, կրել էր անփա-

ռուսակ պարտություն: Այդ արշավանքի ժամանակ հռոմեացիները կորցրին շուրջ 35 հազար զինվոր: Պարթևներին ընկճելու այս երկրորդ փորձը ևս ձախողվեց:

Հռոմեացիների վիճակի մեջ փոփոխություն տեղի ունեցավ միայն մ.թ.ա. 30 թ., երբ Ասորիք ժամանեց Օկտավիանոսը (Օգոստոսը)՝ ծրագիր ունենալով Հռոմի արևելյան քաղաքականությանը հաղորդել նոր ուղղվածություն: Այդ ծրագրի էությունը կայանում էր նրանում, որ ամրապնդվեն Հռոմի սահմանները Պարթևստանի հետ և դրանք հնարավորին չափով տեղաշարժվեն դեպի արևելք:

Շուտով պարթևական տերության մեջ սկսվեցին դինաստիական երկպառակություններ: Մ.թ.ա. 31 թ. Հրահատ Դ-ն ստիպված էր թողնել Տիզբոնը և փախչել իր տերության հեռավոր հյուսիսարևելյան շրջանները: Արքայական գահի վրա նրա տեղը զբաղեցրեց Արշակունիների մեկ այլ ներկայացուցիչ՝ Տրդատը (Տիրիդատ): Սակայն Հրահատ Դ-ն չցանկացավ առանց պայքարի զիջել «արքայից արքայի» տիտղոսը: Պարթևական տերության հյուսիսարևելյան նահանգներից, ինչպես նաև միջինասիական տափաստանների քոչվորներից հավաքագրելով զորքեր, նա վերադարձավ տերության արևմտյան շրջանները և պայքար սկսեց գահը վերադարձնելու համար:

Մ.թ.ա. 20 թ. մայիսի 12-ին Հռոմեական կայսրության և Պարթևական տերության միջև կնքվեց համաձայնագիր, որը պաշտոնապես վերջ տվեց նրանց միջև պատերազմական վիճակին: Պարթևները հանդիսավոր կերպով հռոմեացիներին վերադարձրին նրանց լեգեոնների արծվեկիր դրոշները և դեռևս կենդանի մնացած գերիներին: Որպես Օգոստոս կայսրի բարեհաճության նշան՝ Հրահատ Դ-ին նվեր է ուղարկվում մի գեղանի իտալուհի (մեկ այլ վարկածով՝ հույն)՝ Մուսա անունով մի ստրկուհի:

Սինչդեռ Հրահատ Դ-ի վիճակը շարունակում էր մնալ անկայուն: Մ.թ.ա. մոտ 12 թ. նա կրկին ստիպված էր ժամանակավորապես զիջել իր մայրաքաղաքը և արքայից արքայի գահը նոր հավակնորդին՝ Միհրդատ Դ-ին: Սակայն արդեն մ.թ.ա. 10 թ. Հրահատ Դ-ն կարողանում է վերստին վերականգնել իր իշխանությունը Տիզբոնում: Դրանից հետո նա ծերունի արքան զգում էր իր վիճակի անկայունությունը: Նա մշտական վախի մեջ էր, որ պարթևական ազնվականությունն առաջ կքաշի մի նոր մրցակցի: Մ.թ.ա. 2 թ. խորը ծերության մեջ գտնվող այդ արքան սպանվեց իր որդու՝ գահաժառանգ Հրահատակի կազմակերպած դավադրության հետևանքով: Իր հոր այդ սիրեցյալ որդին իր կողմնակիցների կողմից հռչակվեց «արքայից արքա»՝ ընդունելով Հրահատ Ե գահակալա-

կան անունը: Նրա ստրկուհի մայրը ստիպեց որդուն ամուսնանալ իր հետ և իրեն հայտարարել աստվածուհի և թագուհի: Սակայն արդեն մ.թ. 4 թ. Հրահատ Ե-ն գահընկեց արվեց և սպանվեց: Սպանվեց նաև նրա հույն կամ իտալուհի մայրը: Պարթևական թագավոր հռչակվեց Օրոդես Գ-ն: Իշխանության ղեկի մոտ գտնվելով մոտ երկու տարի (4-6թթ.), նա գահընկեց արվեց միջագետքյան քաղաքների բնակչության կողմից, որոնք դիմեցին Օգոստոսին՝ խնդրելով Հռոմում գտնվող արքայազն Վոնոնին, որը Հրահատ Դ-ի ավագ որդին էր,նշանակել Պարթևստանի թագավոր: 6 թ. Վոնոնը վերադարձավ Միջագետք և հռչակվեց «արքայից արքա»: Սակայն 15 տարի Հռոմում ապրած և հռոմեական դաստիարակություն ստացած Վոնոնը (7-11 թթ.) հենարան չուներ պարթևական ավագանու շրջանում: Նրան օտար էին նաև պարթևական բարքերն ու սովորությունները: Նա չէր սիրում որսի գնալ և ատում էր աղմկոտ խնջույքները, որոնք պարթևական ազնվականության սովորական խրախճանքներն էին, չէր սիրում նաև ձիույգներ: Նա կրում էր հունական զգեստ և պատգարակով տեղաշարժվելու սովորություն մտցրեց: Վերջապես, հակառակ արքունիքում ընդունված սովորության, Վոնոնի վերաբերմունքը իր բոլոր հպատակների նկատմամբ վերին աստիճանի պարզ ու հասարակ էր:

Այդ բոլորն առաջ բերեց պարթևական ազնվականության բացահայտ ատելությունը Վոնոնի նկատմամբ: Նրա դեմ սկսվում է պայքար, որը գլխավորում էր Վրկանից աշխարհի և Կրմանի կառավարչի որդի Արտավանը, որը մոր կողմից Արշակունի էր և հիմնադիր դարձավ Արշակունյաց հարստության կրտսեր ճյուղի:

Հենվելով պարթևական ազնվականության և արևելյան շրջանների ցեղերի ջոկատների վրա՝ Արտավանը հանդես եկավ Վոնոնի դեմ՝ նրան հայտարարելով դավաճան և նրա նկատմամբ տանելով հաղթանակ, հռչակվեց «արքայից արքա»՝ ընդունելով Արտավան Գ (12-38 թթ.) գահակալական անունը:

Գահազուրկ Վոնոնը ապաստան է գտնում Հայաստանում, որտեղ հռչակվում է Մեծ Հայքի թագավոր (11-16թթ.): Սակայն Արտավան Գ-ն չէր կարող թույլ տալ, որ իր մրցակիցը հաստատվի հայկական գահի վրա, ուստի պատրաստություն տեսավ Հայաստան ներխուժելու համար: Ի վերջո, Վոնոնը ստիպված եղավ հրաժարվել հայոց գահից և օգտվելով Ասորիքի լեգատ Կրետիկոս Սիլանի հրավերից 15 կամ 16 թթ. հեռացավ դեպի հռոմեական տարածք, որտեղ հանելուկային պայմաններում 19 կամ 20 թ. սպանվեց:

Վոնոնի սպանությունից հետո Արտավան Գ-ի քաղաքական վիճակը խիստ կայունացավ: Նրա ազգականներից մի քանիսը ցմահ կառավարման իրավունքով ստացան ամբողջ երկրներ՝ վերածվելով կիսաանկախ կառավարիչների:

Պարթևական տերության հյուսիսային և արևելյան սահմանների մոտ Արտավանը մղում էր հաջող պատերազմներ, որոնք էլ ավելի ուժեղացրին նրա ռազմաշունչ տրամադրությունները:

Արտավան Գ-ով սկսվում է Պարթևական պետության զարգացման մի նոր ժամանակաշրջան: Պետության մեջ լայնորեն տարածված հունարենն աստիճանաբար իր տեղը զիջում է պարթևների լեզվին՝ պահլավերենին, որով ստեղծվում են մի շարք աչքի ընկնող գրական հուշարձաններ: Այնուհետև զրադաշտականությունը ձևավորվում է իբրև պետական կրոն, և սկսվում է մեծ պայքար հելլենիստական պաշտամունքների դեմ: Ուժգին պայքար ծավալելով արևելքում քաղաքական գերիշխանության ձգտող Հռոմի դեմ՝ Արտավան Գ-ն միաժամանակ աշխատում էր պարթևական պետությանը ենթակա թագավորությունների գահերի վրա բարձրացնել պարթև Արշակունիների հարստության ներկայացուցիչներին:

Արտավան Գ-ն մշակել էր փառասիրական՝ հեռուն գնացող նպատակներ: Նա երազում էր Պարթևական պետության սահմանները հասցնել մինչև Միջերկրական ծով և առհասարակ վերականգնել Աքեմենյան Պարսկաստանի սահմանները: Ի դեպ, նա իր ավագ որդուն՝ թագաժառանգ Արշակին (ըստ հայկական ավանդության՝ սրա անունը Սանատրուկ է), կարողացավ կարգել Հայաստանի թագավոր: Սակայն Արտավան Գ-ին չհաջողվեց ամբողջությամբ իրականացնել իր մտահղացած քաղաքական ծրագրերը: Նրանից դժգոհ մի խումբ պարթևական մեծատոհմիկ ազնվականներ Հռոմ՝ Տիբերիոսի մոտ են ուղարկում մի դեսպանություն՝ խնդրելով, որ նա թույլ տա Հրահատ Դ-ի կրտսեր որդի Հրահատին, որը 40 տարուց ավել բնակվում էր Հռոմում, վերադառնալ Պարթևստան: Տիբերիոսը համաձայնվում է բավարարել ընդդիմադիր տրամադրություններ ունեցող պարթևական մեծամեծների խնդրանքը: Ծերունի ու հիվանդ Հրահատն ուղարկվեց հայրենիք: Սակայն տևական ճանապարհորդությունը ծովով նրա համար կործանարար եղավ: Հազիվ հասնելով Ասորիք՝ նա մահացավ:

Մինչդեռ Պարթևստանում տիրում էր անտերունչ վիճակ: Հռոմեական ոսկին հետևողականորեն աշխատում էր ապակայունացնել պարթևական տերությանը: Արտավանի վիճակը դարձավ համարյա հուսահատական, երբ Հայաստանում նրա զորքերը ջախջախվեցին, իսկ ավագ որդին

սպանվեց: Սպանվեց նաև Արտավանի երկրորդ որդին՝ Օրոդեսը, որն իր հոր կողմից ուղարկվել էր ավագ եղբորը փոխարինելու համար: Վերջապես, երբ ծերունի արքան անծամբ բանակը շարժեց դեպի Հայաստան, նրա դեմ ապստամբություն բռնկվեց Միջագետքում, և նա ստիպված էր փախուստով փրկել իր կյանքը՝ ապաստան գտնելով իր տերության հյուսիսարևելյան լեռնային շրջաններում: Սակայն, այնուամենայնիվ, նա իր մեջ ուժ գտավ կրկին վերականգնելու իր իշխանությունը և նույնիսկ խաղաղության պայմանագիր կնքելու հռոմեացիների հետ (36թ.):

38 թ. Արտավան Գ-ն մահանում է և Պարթևական պետության մեջ նորից ծայր են առնում խառնակություններ գահաժառանգության համար: Դրա հիմնական մասնակիցները Ատրպատականի Վոնոն Բ թագավորի որդիներն էին՝ Գոտարզը (Գոդերձը) և Վարդանը: (Վոնոնը Արտավան Գ-ի եղբայրն էր և նրա կողմից էր նշանակվել Ատրպատականի թագավոր): Սկզբում գահին տիրանում է Վարդանը /42-45թթ./, որի սպանվելուց հետո գահ է բարձրանում Գոտարզը (45-51 թթ.), որն այնպիսի մի արյունարբու բռնակալ էր, որ դարձյալ ազնվականները դիմեցին Հռոմ՝ խնդրելով Տիգրոն ուղարկել Վոնոնի վերջին որդուն՝ Միհրդատին: Վերջինս եկավ թագավորելու, սակայն Գոտարզը ջարդեց նրա կողմնակիցներին և բռնելով Միհրդատին՝ կտրեց նրա ականջն ու բաց թողեց:

Գոտարզին հաջորդեց Արտավանի եղբայր Վոնոն Բ-ն (51թ.), որը թագավորեց միայն մեկ տարի: Ի վերջո պարթևական գահ է բարձրանում վերջինիս որդին՝ Վաղարշ Ա-ն (51-75թթ.), որին հույն-հռոմեական հեղինակները անվանում են Վոլոգազ: Սրա օրոք Պարթևստանը կրկին հասնում է իր հզորության գագաթնակետին: Պարթևական *դաժան իշխողների* մեջ նա միակն էր, որ իրավունքը գերադասում էր ուժից և ճշմարտությունն էր համարում մարդկային հարաբերությունների հիմքն ու ղեկավարը, նշում է Տակիտոսը: Պարթևստանում կրկին մեծ շարժում է սկսվում հունականության դեմ: Նույնիսկ փոխում են հունարեն լեզվով աշխարհագրական անունները: Հունարեն գրությունները պարթևականով են փոխարինվում նաև դրամների վրա: Մեծ հետաքրքրություն է առաջ գալիս դեպի բուն պարթևական ժողովրդական ավանդությունները, էպոսը, երգերը և բանավոր գրականությունը: Գրի են առնվում զրադաշտականների սուրբ գրքի՝ «Ավեստայի» կարևոր մասերը, կազմվում նրա առաջին խմբագրությունը: Վաղարշ Ա-ն փորձ արեց իր մայրաքաղաքը հեռացված Տիգրոնից փոխադրել Եփրատի աջ ափին հիմնադրված Վոլոգեսակերտ (Վաղարշակերտ) քաղաքը, որտեղ նա մտադիր էր փոխադրել Պալմիրայի միջազգային առևտուրը:

Թեև սիրով ու քաղցրությամբ էր լուծվել Վաղարշի և նրա երկու եղբայրների՝ Բակուրի և Տրդատի միջև գահակալության հարցը, որոնք համաձայնվել էին, որ Վաղարշը նստի գահի վրա, սակայն վերջինս, լինելով շրջահայաց ու հեռատես, թագեր գտավ նաև իր երկու եղբայրների համար: Նա Բակուրին նշանակեց Ատրպատականի թագավոր, իսկ Տրդատին որոշել էր թագավորեցնել Հայաստանում, որով նա մտադիր էր իրագործել Արտավան Գ-ի ծրագիրը՝ Հայաստանը դարձնել պարթևական երկրորդ թագավորություն և դրանով իսկ ամրապնդել այնտեղ պարթևների քաղաքական ազդեցությունը: Այս քաղաքականությունն ավելի սուր կերպարանք հաղորդեց հայոց հարցին՝ երկարատև և տագնապալի ընդհարումներ հարուցելով Պարսկաստանի և Հռոմի միջև:

Վաղարշ Ա-ի եղբայր Տրդատը 54 թ. նստում է հայկական գահի վրա, սակայն Հռոմի կողմից չի ճանաչվում որպես թագավոր: Ներոնի ժամանակ հայկական հարցի կապակցությամբ ձեռք բերվեց երկու պետությունների համար ընդունելի համաձայնություն: Կողմերը հաշտվեցին հետևյալ կոմպրոմիսի հիմքի վրա. հայկական գահը հանձնվում էր պարթևական թագավոր Վաղարշի եղբայր Տրդատին, սակայն ապագա հայկական թագավորի թագադրությունը պետք է կատարվեր Հռոմում՝ կայսրի ձեռքով: Վաղարշի և արևելյան նահանգներում Ներոնի փոխարքա և լեգատ Դոմիցիանոս Կորբուլոնի միջև 66 թ. ստորագրվեց համաձայնագիր: Կորբուլոնին ուղղված իր նամակում Վաղարշը գրում էր, որ ներկայումս իր համար հայկական հարցը կարելի է լուծված համարել: «Աստվածները՝ մարդկանց և ժողովուրդների ճակատագրերի այդ կարգադրիչները,- գրում էր նա,- Հայաստանը տվեցին պարթևներին՝ դրանով, սակայն, անարգանք չպատճառելով նաև հռոմեացիներին»:

Հռոմում 66 թ. տեղի է ունենում Տրդատի թագադրության արարողությունը, և նա ճանաչվում է որպես Հայոց երկրի օրինավոր տիրակալ:

Այսպիսով՝ հայկական գահի վրա բազմեցին պարթև Արշակունի տոհմի ներկայացուցիչները, որոնք շուտով բռնեցին հայացման ուղին: Հայաստանում վերջնականապես հաստատվում է Արշակունիների հարստությունը, և Մեծ Հայքը, Պարթևստանից հետո, դառնում է Արշակունյաց երկրորդ թագավորությունը:

I դարի երկրորդ կեսից սկսած՝ պարթև Արշակունիների դինաստիայի ներսում գահակալական կռիվներ էին գնում այդ դինաստիայի երկու թևերի միջև, որոնց հիմնական մասը հենվում էր արևելյան և հյուսիս արևելյան իրանական նահանգների վրա, իսկ նրանց հակառակորդները հենարան էին գտնում Միջագետքի հելլենացված վերնախավերի մոտ և

սովորաբար հովանավորություն էին ստանում հռոմեական կայսրերի կողմից, որոնք ակտիվ մասնակցություն էին ունենում բոլոր այդ բանասարկությունների և գաղտնի ու բացահայտ պայքարի մեջ: Իշխանության համար դինաստիական պայքարն առանձին սրության հասավ Քակուր Բ-ի (78-110 թթ.) կառավարման տարիներին, երբ նրա հետ միասին իշխանությանը հավակնում էին Արտավան Դ-ն (մոտ 80-81 թթ.) և Խոսրովը (մոտ 110-128/9թթ.):

I դարում պարթևների համար առաջ է գալիս մի նոր բարդություն: Նրանց թիկունքում՝ պետության հյուսիս արևելյան մասում, առաջանում է հզոր քուշանաց թագավորությունը: Մյուս կողմից, Հյուսիսային Կովկասից վաչկատուն ցեղերը ալանների գլխավորությամբ անընդհատ հարձակումներ էին գործում պարթևական պետության վրա: Վերջինս ուրիշ ելք չուներ, քան խնդրելու հռոմեական կայսրին միջոցներ ձեռնարկել այդ վտանգի դեմ: Դոմիտիանոս կայսրը (81-96 թթ.) հաճույքով արձագանքեց այդ խնդրանքին և զորքեր ուղարկեց Հյուսիսային Կովկասի հրոսակախմբերին զսպելու համար: Այդ զորքերը հասան մինչև Կասպից ծովի ափերը՝ փաստորեն, իրենց հսկողության տակ վերցնելով Կովկասի բոլոր հաղորդակցության ուղիները: Ընդ որում՝ կայուն կերպով հաստատվելով այդ վայրերում՝ պետք եղած ժամանակ հռոմեական կայսրությունը թույլ էր տալիս, որ «բարբարոսները» ներխուժեն Անդրկովկաս:

Հարկ է նշել, որ Հռոմեական կայսրության և Պարթևստանի միջև հարաբերությունները խիստ հարափոփոխ էին, և մշտապես խաղաղությունն ընդմիջվում էր պատերազմով: Այդ պատերազմների հիմքում ընկած էր համաշխարհային նշանակություն ունեցող առևտրական ճանապարհների նկատմամբ հսկողություն սահմանելու շահագրգռությունը:

II դարի սկզբներին երկու պետությունների միջև առճակատումը կրկին սրվեց: 115 թ. գարնանը Տրայանոս կայսրը գրավեց Սելևկիան՝ Տիգրոնը: Պարթևական թագավոր Օսրոյը (Խոսրով) ստիպված էր փախուստի միջոցով փրկել իր կյանքը՝ հռոմեացիներին թողնելով իր դստերը և հռչակավոր ոսկե գահը: Այդ հաղթանակի համար 116 թ. Տրայանոսին շնորհվեց «Պարթևացի» տիտղոսը:

Վաղարշ Բ թագավորը (128/9-147 թթ.) փորձում էր Հռոմի հետ պահպանել բարեկամական հարաբերություններ, որը, սակայն, ոչ միշտ էր հաջողվում: Երբ պարթևական գահ բարձրացավ Վաղարշ Գ Պերոզը (148-191 թթ.), Պարթևստանը նորից ուժեղացավ և անցավ եռանդուն արտաքին քաղաքականության: Վաղարշի «Պերոզ» (հաղթող) տիտղոսը վկայում էր նրա ռազմաշունչ ոգու և ծավալապաշտական նպատակնե-

րի մասին: Նրա՝ ավելի քան քառասուն տարվա իշխանության ընթացքում ներքին խռովությունները Պարթևստանում բոլորովին դադարել էին: Վաղարշ Գ-ն շարժվեց արևմուտք, գրավեց Եդեսիան, իսկ այնուհետև, անցնելով Եփրատը, մուտք գործեց Ասորիք, որտեղից նա ասպատակում էր նաև Պաղեստինի տարածքները: Մարկոս Ավրելիոս կայսրը ստիպված եղավ դիմել կտրուկ միջոցների՝ դեպի արևելք նետելով մեծ թվով լեգեոններ:

163թ. ամռանը հռոմեական զորքերն անցան հարձակողական գործողությունների Հայաստանում, Ասորիքում և Միջագետքում: Այս պատերազմը, որ պաշտոնապես կոչվում էր «հայկական և պարթևական», մղվում էր երկու ուղղությամբ՝ Արտաշատի և Տիգրոնի: Հայաստան ուղարկվեց հատուկ մի զորաբանակ Կապադովկիայի կուսակալ Ստատիոս Պրիսկոսի գլխավորությամբ, որը համառ կռիվներից հետո կարողացավ նվաճել Հայաստանը: 163 թ. վերջերին հռոմեական զորքերը պաշարումից հետո գրոհով վերցրին Արտաշատ մայրաքաղաքը, որը ենթարկվեց կողոպուտի և ավերածության:

Այդ նույն ժամանակ հռոմեական մի ուրիշ զորաբանակ Ավիդիոս Կասսիոսի հրամանատարությամբ Զևգմայի հարավակողմում՝ Եվրոպոս քաղաքի մոտ, հաղթանակ տարավ Վաղարշ Գ-ի նկատմամբ և մտավ Հյուսիսային Միջագետք, ուր մեծ կռիվներից հետո գրավեց Եդեսիան և Մծբինը:

Վաղարշ Գ-ն ստիպված եղավ թողնել Միջագետքը և անցնել Տիգրիսի մյուս կողմը: Կասսիոսը, հալածելով նրան, հասավ Բաբելոնիա, որտեղ ավարի ու հրդեհի մատնեց Սելևկիա քաղաքը: Ավերածության ենթարկվեց նաև Տիգրոն մայրաքաղաքը, ուր 165 թ. արքունի դղյակը հողին հավասարեցվեց:

Վաղարշ Գ-ն հարկադրված եղավ փախչել իր երկրի խորքերը, իսկ Կասսիոսը 165 թ. վերադարձավ Ասորիք, որովհետև Պարթևստանում բռնկվել էր ժանտախտի համաճարակ, որը կարող էր մեծ կորուստներ պատճառել իր բանակին:

Սակայն պարթևներն իրենց մեջ ուժ գտան վերախմբավորելու իրենց բանակը և անցնելու պատասխան հարձակման, որը, սակայն, հաջողություն չունեցավ և հետ մղվեց: Դրա հետևանքը հանդիսացավ Խաբորից արևմուտք ընկած շրջանների հանձնումը Հռոմին և նրա քաղաքական տիրապետության հաստատումը Եդեսիայի և Կառռայի (Խարան) նկատմամբ:

Հռոմեա-պարթևական ավելի քան չորս տարվա պատերազմից հետո, 166 թ. վերջերին կողմերի միջև կնքվեց խաղաղության պայմանագիր, որն ունեցավ շատ մեծ նշանակություն: Այն սահմանագիծը, որ

որոշվեց Միջագետքում, գոյություն ունեցավ գրեթե մինչև արաբների նվաճումները VII-րդ դարի կեսերին:

191 թ. պարթևական գահի վրա նստեց Վաղարշ Դ-ն (191-207 թթ.), որը փոխարինեց խորը ծերության հասած իր նախորդին: Վաղարշը փայլուն կերպով օգտագործեց հռոմեական կայսրության ներքին երկպառակությունները և վերստին հռոմեացիներից հետ նվաճեց Միջագետքը, որը սակայն շուտով կրկին անցավ հռոմեացիներին:

Պարթևստանում արքայական իշխանության թուլությունը, գահի համար մշտական պայքարը դժվարացնում էին նրա դիմադրությունը Հռոմին: Դա հնարավորություն տվեց կայսր Սեպտիմիոս Սևերոսին պարթևների դեմ կազմակերպել մեծ արշավանք: 198 թ. հռոմեական զորքերը կայսրի հրամանատարությամբ Եփրատ գետի երկարությամբ իջան Բաբելոնիա և, նավարկելի դարձնելով Եփրատը Տիգրիսի հետ միացնող հին ջրանցքը՝ շարժվեցին դեպի Տիգրիս գետը, ուր հանկարծակիի բերեցին պարթևական զորքին և մատնեցին ծանր պարտության: Նրանք գրավեցին Բաբելոն և Սելևկիա քաղաքները, որոնք պարթևների կողմից արդեն ավերված ու դատարկված էին: Իսկ Տիզբոն քաղաքը, որ անձնատուր էր եղել, մատնվեց կողոպուտի ու կոտորածի:

Հռոմեական այս հաղթական արշավանքի հետևանքով Հռոմեական կայսրության արևելյան սահմանն առաջ շարժվեց մինչև Տիգրիս գետը:

207 թ. Վաղարշ Դ-ի վախճանվելուց հետո պարթևական գահը ժառանգեց նրա որդին՝ Վաղարշ Ե-ն, որը կառավարեց ընդամենը հինգ տարի: Նրա և իր եղբոր՝ Արտավանի միջև ծայր առան գահակալական կռիվներ, որոնց հետևանքով Արտավանն իրեն հռչակեց արքայից արքա՝ ընդունելով Արտավան Ե գահակալական անունը: Եղբայրների միջև, սակայն, կռիվները շարունակվեցին մինչև Վաղարշ Ե-ի մահը (222/223 թ.), որը զոհվեց ճակատամարտում: Արտավանին հաջողվեց երկիցս պարտության մատնել հռոմեական զորքերին: Արտավան Ե-ի հաղթանակները, սակայն, պարթևների վերջին հաջողություններն էին նրանց թագավորության անկման նախօրյակին: Պարթևական աշխարհակալությունն արդեն ապրում էր իր մայրամուտը: Հռոմեական կայսր Կարակալլան օգտվեց Արշակունի երկու եղբայրների այդ երկպառակությունից և 211 թ. գրավեց Միջագետքը, Արբելան և Մեդիայի մի մասը: Արտավան Ե-ն դիմեց փախուստի, հավաքեց պարթևական զորքերին և 217 թ. անցավ Տիգրիս գետը: Հռոմեացիներն ու պարթևները հանդիպեցին Մծբինի մոտ: Սակայն բախում տեղի չունեցավ: Կարակալլային հաջորդած Մակրինոս կայսրը ստիպված էր հաշտություն խնդրել: Բանակցությունների

հետևանքով 218 թ. կողմերի միջև կնքվեց հաշտության պայմանագիր:

Այդ ժամանակ Պարսկաստանում հասունանում էին նոր իրադարձություններ: Պարթև Արշակունիները, որոնք ներքին անվերջ կռիվների պատճառով խիստ թուլացել էին, չկարողացան թագավորական իշխանությունն իրենց ձեռքերում պահել, և իրանական գահի վրա նրանց փոխարինելու եկան Սասանյան տոհմի արքաները:

Իր հզորության գագաթնակետի շրջանում պարթևական կայսրությունը տարածվում էր արևելքից՝ Հինդուկուշի լեռնաշղթայից, մինչև արևմուտք՝ Եփրատ գետը: Պարթևները ձգտում էին իրենց տերության սահմանները հասցնել մինչև այնտեղ, ուր գտնվում էին Աքեմենյան պետության սահմանները:

Պարթև Արշակունիների աշխարհակալությունը բաժանված էր երկու տարաբնույթ մասերի՝ արևմտյան և արևելյան սատրապությունների: Արևմուտքում պարթևներին ենթակա էին Միջագետքը և Զագրոսյան լեռնաստանը, որը ձգվում էր մինչև Մարաստան: Այս երկրամասերի ազգաբնակչության հիմնական տարրերն էին սեմական լեզուներով խոսող արամեացիները ու արաբական ցեղերը, ինչպես և հույները, մասամբ՝ պարթևները և այլ իրանալեզու ցեղեր:

Պարթևստանի արևելյան և հյուսիս արևելյան նահանգներն էին Մարաստանը, Պարթևաց աշխարհը՝ «Ապար աշխարհը», Մարգիանան, Աստավանը, Ապավորդենեն, Սաքաստանը և սրանց հարակից երկրամասերը: Արևելքում պարթևական պետությունը նույնիսկ շփումների մեջ մտավ Չինաստանի հետ:

Մ.թ.ա. II-րդ դարի կեսերից հյուսիսում պարթևները ստիպված էին մշտապես պայքար մղել՝ կասեցնելու ռազմաշունչ հոների շարժումները դեպի Պարթևական պետության տարածքները: Արևելքում նրանք ծանր պայքար էին մղում սաք ռազմատենչ ցեղերի դեմ, որոնք ամրացել էին Դրանգիանա-Սաքաստանում (ներկայիս Սիստան): Հյուսիս-արևելքում նրանց թշնամիները մասսագետներն էին: Սակայն առավել հզոր ուժը, որը Պարթևստանի հետ մտավ հակամարտության մեջ, Հռոմեական կայսրությունն էր: Պարթևստանի քաղաքական հակամարտությունը Հռոմի հետ, որի մեջ ընդգրկված էին նաև մի շարք նվազ հզորություն ունեցող պետություններ, ինչպիսին, օրինակ, Հայաստանն էր, շարունակվեց երեք հարյուրամյակից ավելի: Փոփոխակի հաջողությամբ ընթացող այդ պատերազմների հիմնական նպատակներից մեկն էր ձեռք բերել Արևելքը (Հնդկաստան, Չինաստան), Արևմուտքի (Միջերկրածովյան ավազան, Միջագետք, Հայաստան) հետ կապող կարևորագույն առևտրական ճանապարհները:

12. ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Որո՞նք էին պարթևական պետության թուլացման պատճառները, որոնք, ի վերջո, հանգեցրին նրա կործանմանը: Նախ՝ այդ պետությունը ներքուստ միատարր չէր: Նրանում բացակայում էր անհրաժեշտ էթնիկական ու քաղաքական զոդվածությունը: Արշակունիների պետությունը ոչ միայն բաժանված էր առանձին կախյալ թագավորությունների, այլև խայտաբղետ պատկեր էր ներկայացնում էթնիկական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման տեսակետից:

Ըստ էության, այդ պետությունը մի համադաշնություն էր, որի մեջ մտնում էին աշխարհագրական պայմաններով, բնակչության էթնիկական կազմով, տնտեսական ու սոցիալ-քաղաքական զարգացման մակարդակով միմյանցից տարբերվող տարածքներ: Այսպես, օրինակ՝ պետության կազմի մեջ մտնող ինքնակառավարվող հունական քաղաք-պոլիսները պահպանում էին իրենց հարաբերական անկախությունը, իսկ մի շարք տարածքներ՝ Ատրպատականը, Էլամը, Պերսիդան (Ֆարսը), ինչպես նաև հարավում մի շարք հողեր գտնվում էին պարթևներից վասալական կախման մեջ:

Բուն Պարթևստանը, որը գտնվում էր Արշակունիների միապետության հյուսիս արևելյան ծայրամասում, հանդիսանում էր պարթևական տերության առավել աղքատ ու նոսր բնակչություն ունեցող շրջաններից մեկը: Պարթևական տիրակալների համար առավել կարևոր նշանակություն ուներ բարեբեր և խիտ բնակեցված Միջագետքը: Այստեղ բնակվում էր նստակյաց հողագործական բնակչություն, առկա էին բազմաթիվ քաղաքներ, որոնք հանդիսանում էին արհեստավորական և առևտրական կենտրոններ: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեին նաև Մարաստանը, Էլիմայիդան, Անտիոք Մարգիանան: Այս տարածքները ևս հանդիսանում էին զարգացած արհեստագործության ու գյուղատնտեսության կենտրոններ, նրանց տարածքում ևս խաչաձևվում էին Հայաստանից, Սիրիայից, Արաբիայից, Հնդկաստանից, Կենտրոնական Ասիայից ու «սերերի» երկրից (Չինաստանից) եկող կարևորագույն միջազգային ճանապարհները:

Այսպիսով՝ պարթևական պետության անկման գլխավոր պատճառները նրա ապակենտրոնացած ներքին կազմակերպությունն էր,

երկրի ներսում գոյություն ունեցող խոովահույզ պառակտումներն ու անվերջ կրկնվող ներքին երկպառակությունները: Սակայն, սրանցից բացի, կային նաև այլ պատճառներ, որոնցից առաջին հերթին հիշատակելի է հետևյալը. հին աշխարհում II դարի վերջին և III դարի սկզբին ծայր էր առել սոցիալ-տնտեսական և քաղաքական համընդհանուր ճգնաժամ, որն անխուսափելիորեն ընդգրկել էր նաև Միջերկրածովյան և առաջավորասիական երկրները: Պարթևական տերությունը միջազգային քարավանային առևտրի նվազման պատճառով կրեց ծանր վնասներ: Ոչ պակաս կարևոր նշանակություն ուներ նաև այն, որ պարթևա-հռոմեական պատերազմների ժամանակ հռոմեական զորքերը սարսափելի ավերածությունների էին ենթարկում Պարթևստանին պատկանող տարածքները, որն անխուսափելիորեն առաջ էր բերում տնտեսական անկում և դրամաշրջանառության խաթարում: Կենտրոնական իշխանության տնտեսական սնանկացումը հարկադրում էր նրան ուժեղացնել ճնշումն իրենից կախում ունեցող թագավորների ու տեղական կառավարիչների վրա, որն անխուսափելիորեն դժգոհություն էր հարուցում կենտրոնական իշխանության հանդեպ: Այդ դժգոհությունը շատ հաճախ ընդունում էր զինված պայքարի բնույթ: «Պարթևական պետության անկման պատճառները լուսաբանելիս,- իրավացիորեն նշում է անվանի պատմաբան Հակոբ Մանանդյանը,- պետք է նկատի ունենալ նաև ժողովրդի գրգռված տրամադրությունը Արշակունիների դինաստիայի հանդեպ, քանի որ պարթևական թագավորության անկումից մի փոքր առաջ հռոմեական զորքերը Տրայանոսի, Ավիդիոս Կասսիոսի և Սեպտիմիոս Սևերոսի առաջնորդությամբ երեք անգամ (115, 164 և 198 թթ.) ներխուժել էին Պարթևական պետության արևմտյան ու կենտրոնական երկրները և անպատիժ կերպով ավերել էին Միջագետքը, Ադիաբենը և Բաբելոնիան՝ Արշակունյաց թագավորների ապիկարության և նրանց միջև պարբերաբար կրկնվող խոովահույզ պառակտումների պատճառով: Բնական է, իհարկե, որ վերոհիշյալ երկրների սրի ու կողոպուտի մատնված բնակչությունը պետք է ծայր աստիճան թշնամական վերաբերմունք ունենար դեպի իշխող դինաստիան»:

* * *

Պարթևական պետության սոցիալ-տնտեսական հարաբերությունների, նրա ներքին կառուցվածքի, կառավարման համակարգի և այլնի վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները խիստ սահմանափակ ու

սուղ են: Հայտնի է միայն, որ պարթևական լայնածավալ պետության կառավարումն իրագործվում էր սատրապների միջոցով: Երկրի վարչական բաժանումը մասամբ պահպանում էր Աքեմենյանների պետության, իսկ ապա նաև Սելևկյանների վարչական կառավարման ձևը: Սատրապությունները բաժանվում էին ավելի մանր միավորների՝ շրջանների, որոնց գլուխ էին կանգնած քաղաքացիական կամ զինվորական կառավարիչները: Արքայից արքա շահնշահ Արշակունու հետ միաժամանակ առկա էին մանր թագավորական դինաստիաներ, որոնք առանձին շրջաններում կառավարում էին որպես տեղական ազնվականական տոհմերի ներկայացուցիչներ: Առանձին դեպքերում այդ կառավարիչների վիճակը միանգամայն անկախ էր:

Պարթևական միապետության մեջ արքաները ընտրվում էին Արշակունիների տոհմից: Ստրաբոնը հաղորդում է, որ պարթևներն ունեին երկու խորհուրդ. մեկը բաղկացած էր արքայի ազգականներից, մյուսը՝ իմաստուններից ու քրմերից. արքաներն ընտրվում էին այդ երկու խորհուրդների կողմից: Սակայն Հրահատ Դ-ի տիրապետության շրջանից սկսած միտում է նկատվում գահը նախապես նշանակված թագաժառանգին փոխանցելու ուղղությամբ, որոնք, որպես կանոն, հանդիսանում էին կառավարող տիրակալի սիրեցյալ զավակները: Ընտրովի իշխանության փոխարինումը ժառանգական իշխանության առանձնապես տարածում գտավ Արտավան Գ-ի տիրապետության շրջանից սկսած (12-38 թթ.):

Թագավորական իշխանությունը ցմահ չէր: Արշակունիների տոհմի անդամները և պարթևական տոհմից ազնվականության այն մասը, որ մտնում էր վերոհիշյալ խորհուրդների կազմի մեջ, այս կամ այն պատրվակով կարող էր գահընկեց անել արքային և ընտրել նորին:

Արքայից արքան շրջապատված էր բազմամարդ արքունիքով և տոհմիկ ազնվականության ներկայացուցիչներով: Նրա անձնական անվտանգությունն ապահովում էր հատուկ պահակախումբը: Առանձնապես արքային մոտ էին կանգնած յոթ ազնվազարմ տոհմեր: Մեզ են հասել նրանցից չորսի անունները. Սուրենների, Կարենների, Ասփահոթեփների (կամ Իսբեհբեդների) և Գևերի տոհմերի անունները, որոնք կառավարող Արշակունիների տոհմի հետ համահավասար կարող էին ազդել պետական կյանքի ընթացքի վրա:

Պարթևների ցեղային ազնվականության կազմից նշանակվում էին տարբեր նահանգների փոխարքաներ՝ սատրապներ (խշախրապներ) կամ նախվադարներ (նախադարներ), որոնց ձեռքում կենտրոնացված էր իրենց կառավարմանը հանձնված նահանգների քաղաքացիական և

զինվորական իշխանությունը:

Պարթևական պետական իշխանության անբաժան մասն էր կազմում քրմերի դասը: Պետական պաշտոնների մի մասը, ըստ երևույթին, ժառանգական էր տվյալ տոհմի համար, ինչպես, օրինակ՝ Սուրեն և Կարեն տոհմերի համար:

Պարթևական բանակն առավելապես կազմված էր հեծելազորից, որի հիմնական կորիզը սաքերից հավաքագրված այրուձին էր կամ, այսպես կոչված, «սկյութական զորամասերը», որոնք հավանորեն հավաքագրվում էին Միջին Ասիայի քոչվոր ցեղերից, հատկապես ապարհացիներից-դահեներից: Հեծելազորը բաղկացած էր նաև ազատ և ազնվատոհմ պարթևներից: Վասալական թագավորներն ու իշխաններն ունեին սեփական զորքեր, որոնք հանդես էին գալիս իրենց իսկ հրամանատարության ներքո, սակայն հանդիսանում էին պարթևական ընդհանուր զինված ուժերի մի մասը: Պարթևները փառաբանված էին որպես փայլուն նետաձիգներ: Ինչպես զինվորը, այնպես էլ նրա ձին, պաշտպանված էին զրահով: Բանակում օժանդակ ծառայություններն, ըստ երևույթին, կատարում էին ստրուկները:

Մ.թ. I դարի կեսերից կառավարող արքայի մերձակա հարազատները ստանում էին հողային ժառանգական տիրույթներ: Այսպիսով՝ հաճախ սատրապների կողմից կառավարվող պետական տարածքները վեր էին ածվում առանձին ինքնավար պետությունների:

Պարթևական պետության մեջ, մասնավորապես աշխարհիկ ազնվականությանը և տաճարներին պատկանող հողակտորներում կամ, այսպես կոչված, «դաստակերտներում» լայնորեն տարածված էր ստրկական աշխատանքը: Սակայն արդեն մ.թ. I դարից սկսած՝ ստրկության բնույթը միանգամայն այլ էր, քան Սելևկյանների տիրապետության դարաշրջանում:

Պարթևստանի արևելյան նահանգներում զարգացած էր անասնապահությունը, արևմտյան նահանգներում, հատկապես Միջագետքում, անասնապահության հետ մեկտեղ նաև հողագործությունը (այգեգործություն և բանջարաբուծություն):

Պարթևստանն ընկած էր համաշխարհային առևտրական ճանապարհների խաչմերուկում: Նրա տարածքով էր անցնում «Մետաքսի մեծ ճանապարհը», որը արևելքից արևմուտք կտրում անցնում էր ողջ Ասիական մայր ցամաքը՝ չինական Խան կայսրությունը և Հնդկաստանը կապելով Միջերկրածովյան ավազանի երկրների և Կենտրոնական Ասիայի հետ: Միջագետքի քաղաքների մասնակցությունը Պարթևստանի առևտրական կապերի մեջ ամենաաշխույժն էր: Պարթևստանը Հնդկաստանի հետ կապվում էր նաև ծովային ճանապարհով՝ Պարսից ծոցի վրայով:

Պարթևական ժամանակաշրջանից մեզ հասած սակավաթիվ ճարտարապետական հուշարձանները, առանձին քանդակները, արձանիկները, քարադամբանները և այլն վկայում են Պարթևստանում արվեստի զարգացման բարձր մակարդակի մասին:

Պարթևները դավանում էին զրադաշտականություն ու մազդեզականությունը: Նրանց պաշտոնական կրոնը դարձավ զրադաշտականությունը: Սակայն պարթևական լայնածավալ պետության մեջ կողք - կողքի գոյություն ունեին այլևայլ դավանանքներ և կուլտեր՝ սկսած նախնիների կուլտից՝ արևի, լուսնի պաշտամունքից, մինչև հունական աստվածությունների պաշտամունքը: Դա, անշուշտ, վկայում է այն մասին, որ գոյություն ուներ իրանական, բաբելոնական, արամեական, սիրիա-քրիստոնեական և հունական տարրերի խորը խառնուրդ և փոխազդեցություն: Պարթևները աչքի են ընկել ավելի մեծ կրոնական հանդուրժողականությամբ, քան Սասանյանները: Համենայն դեպս, գիտությանը հայտնի չէ պարթևների ժամանակ այլադավանների լուրջ կրոնական հալածանքների մասին փաստեր:

Պարթևների ժամանակ կանայք մեկուսացվում էին տղամարդկանց հասարակությունից և գլխներին կրում էին գլխաշոր. մի ավանդույթ, որը հետագայում անցավ իսլամական կրոնին: Ընդհանուր գործածական լեզուն պարթևերենն էր, որը հետագայում ստացավ փեհլևի (փահլավի) կամ պահլավերեն լեզու անվանումը: Այն միջին պարսկերենն էր, որից հայերենին անցան բազմաթիվ փոխառություններ:

Պարթևական հասարակության մեջ հունական ավանդույթները պահում էին իրենց կենսունակությունը:

Չնայած այն հանգամանքին, որ միջագետքյան քաղաքների հույն բնակչությունը թշնամաբար էր վերաբերվում պարթևական պետության նկատմամբ, սակայն արքայից արքաները ստիպված էին հունարեն լեզուն ևս պահպանել որպես իրենց բազմացեղ տերության պետական լեզու: Մինչև մ.թ. I դարի կեսերը պարթևական դրամների՝ դրահմների գրությունը հունարեն էր: Այդ լեզվով էին գրվում իրավաբանական փաստաթղթերը, հունարենով էին իրականացվում դիվանագիտական բանակցությունները: Սակայն Պարթևական տերության արևելյան նահանգներում հունարենի հետ միաժամանակ օգտագործվում էր նաև արամեերենը, իսկ բուն Պարթևստանում, ինչպես նշվեց, պարթևական լեզուն կամ պահլավերենը:

Պարթևների կյանքի ու կենսաձևի մեջ տիրապետող էր ռազմական, հերոսական սկիզբը: Իզուր չէ, որ պարթևներ անունը՝ պահլավան, փահլավան (pahlavan) նոր պարսկերենում ստացել է «հերոս», «դյուցազն» նշանակությունը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍԱՍԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1. ՍԱՍԱՆՅԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ: ՍԱՍԱՆՅԱՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

III դ. սկզբին Իրանն իրենից ներկայացնում էր մի պետություն, որը միայն անվանական կերպով էր միավորված Արշակունիների պարթևական դինաստիայի իշխանության ներքո: Փաստորեն, այն կազմված էր բազմաթիվ ցրված, կիսանկախ, իսկ երբեմն նաև անկախ շրջաններից, որոնց գլուխ էին կանգնած հզոր ազնվականական տոհմերի ներկայացուցիչները: Մի այդպիսի տոհմի ձևավորման կենտրոն հանդիսացավ Իրանի հարավում գտնվող Ֆարս կամ Պարսք նահանգը, որտեղ գտնվում էր Աքեմենյանների հին հայրենիք Փասարգադը: Թեև Պարսքը համարվում էր Արշակունյաց թագավորների գերիշխանության տակ գտնվող երկրամաս, սակայն III դ. սկզբներին այն գրեթե անկախ էր: Հենց Պարսքին էր վիճակված լինելու Իրանի նոր միավորման կենտրոն՝ Սասանյան դինաստիայի գլխավորությամբ:

Այդ դինաստիայի հիմնադիրը Պարսքի Ստահր քաղաքի Անահիտ աստվածուհու տաճարի վերակացու-քուրմ Սասանն էր: Նա ամուսնացել էր Ստահրի արքունի տոհմից մի աղջկա հետ, և այդ ամուսնությունից ծնվել էր Պապակը: Վերջինիս որդիներից մեկին՝ Արտաշիրին, հաջողվում է հոր ազգակցական կապերի շնորհիվ Դարաբկերտ քաղաքում

ստանալ բարձր զինվորական պաշտոն, որը նա օգտագործում է քրմական շրջանների և տոհմիկ ազնվականության մի ստվար հատվածի աջակցությունը ստանալու համար: Հենց այստեղից էլ սկսվում է նրա սրընթաց բարձրացումը: Աստիճանաբար ընդլայնելով իր տիրույթները հարևան հողերի հաշվին՝ նա այն աստիճանի ուժեղացավ, որ ջախջախեց ու իշխանազրկեց Պարսքի տիրակալին (224 թ.): Միանձնյա իշխանության հասնելու համար Արտաշիրն այնուհետև պայքար է ծավալում իր եղբայրների դեմ: Շուտով նրա մեծ եղբայր Շապուհը, որը դարձել էր Ստահրի արքայիկը, մահացավ կասկածելի մահով: Այնուհետև մեկը մյուսի հետևից Արտաշիրը պարտության է մատնում իր մյուս եղբայրներին և դառնում ողջ Պարսքի միահեծան տերը: Նա Պարսքին միացրեց Սպահանի և Քերմանի հողերը, 223 թ. պաշարումից հետո գրավեց Սելևկիան՝ այդպիսով հիմք դնելով Սասանյան պետությանը:

Արտաշիրի կողմից Իրանի միավորման ձգտումն իր իշխանության ներքո անխուսափելիորեն հանգեցնելու էր Պարթև-Արշակունիների հետ բախման: Նորահայտ վտանգավոր հակառակորդի ծավալապաշտական ձգտումները հնարավորինս չափ շուտ սանձահարելու համար, Արտավան Ե. արքայից արքան պարթևական զորքերը ռազմերթի հանեց Արտաշիրի դեմ: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 227 թ. ապրիլի 20-ին Որմիզդական կոչված դաշտավայրում: Պարթևները կրեցին ջախջախիչ պարտություն և վերջին Արշակունի թագավոր Արտավան Ե-ն գերի ընկավ: Արտաշիրի հրամանով նրան մաշկազերծ արեցին և կախեցին Անահիտ աստվածուհու տաճարում: Այնուհետև Արտավանի կտրված գլուխը Արտաշիրը գցեց իր ոտքերի տակ և կոխկոտեց: Արտավան Ե-ի մահվան ճշգրիտ թվականը հայտնի չէ: Սովորաբար բերվում են 224, 226 կամ 227 թվականները:

Այսպիսով՝ պարթևական թագավորությունը կործանվեց: Թեև Արտավան Ե-ի որդի Արտավազդը փորձեց շարունակել պայքարը, սակայն ապարդյուն. նա ընկավ թշնամու ձեռքը և Տիզբոնում մահապատժի ենթարկվեց: Պատմության ասպարեզ իջավ Սասանյան հզոր հարստությունը, որի ազդեցությունն ու կշիռը դուրս եկավ Իրանի սահմաններից՝ տարածվելով ողջ Առաջավոր Ասիայում: «Հավատարիմ մնալով երկրի ավանդություններին ու պահանջներին,- գրում է Լեոն,- Սասանյան տոհմը առաջին իսկ քայլից իր քաղաքականության հիմք դարձրեց կռիվն Արևմուտքի դեմ՝ շարունակելով պետական իդեալ համարել Հռոմը Ասիայից դուրս մղելը և Պարսկաստանն իր հին սահմաններին, այսինքն՝ **Միջերկրական ծովին հասցնելը**»:

Արտաշիրը իր մայրաքաղաքը դարձրեց Տիգրիսի ափին գտնվող պարթևական պետության մայրաքաղաք Տիզբոնը (Քտեսիֆոն), որտեղ և 227 թ. հանդիսավոր կերպով թագադրվեց՝ ընդունելով «Արքայից արքա Երանի» տիտղոսը: Սակայն նրա սիրելի նստավայրը իր կողմից նորակառույց Գուր քաղաքն էր (ներկայումս Ֆիրուզաբադ քաղաքը Իրանում):

Այսպիսով՝ Արտաշիր Ա Պապականի (227-240) գահակալությամբ սկսվում է Սասանյան (Արտաշիրի պապ Սասանի անունով) դինաստիայի տիրապետությունը Երանշահրում՝ նախկին պարթևական թագավորության տարածքում:

Սասանյաններն իրենց համարում էին Աքեմենյանների հաջորդներ և իրենց առջև նպատակ էին դրել վերականգնել հին պարսկական մեծ աշխարհակալությունը՝ Կյուրոս Մեծի և Դարեհ Ա-ի ընդարձակ պետությունը: Սասանյան պետությունը ծնվեց պատերազմների կրակի մեջ և ապրում էր պատերազմով ու աշխատանքով:

Վարելով հակաարշակունյան քաղաքականություն՝ Սասանյանները հալածում ու ոչնչացնում էին նախկին պարթև Արշակունիների դինաստիայի կենդանի մնացած ներկայացուցիչներին: Արտաշիր Ա-ն շեշտված թշնամական դիրքորոշում որդեգրեց նաև Հայաստանի նկատմամբ, որովհետև նախ՝ այն հանդիսանում էր Արշակունիների երկրորդ քագավորությունը և ապա՝ դառնում էր այդ դինաստիայի հալածական անդամների ապաստան: Այսպիսով՝ Սասանյանների քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկն է դառնում պարթևներին Հայաստանից դուրս մղելը և այդ երկիրը Սասանյան շահերի հետ սերտ կերպով կապելը: Առհասարակ Սասանյանները Արշակունիներին դիտում էին իբրև ոխերիմ թշնամիներ՝ հանձինս նրանց տեսնելով պարսկական գահի հնարավոր թեկնածուների:

Միանգամայն հասկանալի է, որ վերոհիշյալ իրողությունների հետևանքով Հայաստանի համար ստեղծվում էր միանգամայն նոր վիճակ, ավելի ճիշտ փոխվում էր նրա պատմության ընթացքը: Եթե պարթևների ժամանակ Հայաստանն ապրում էր Իրանի քաղաքական-կուլտուրական շահերով, ապա Սասանյանների ժամանակ, ընդհակառակը, ջանքեր էր գործադրում նրանից քաղաքականապես և կուլտուրապես անջատվելու համար:

Իրանի ավագանին հետզհետե անցնում էր հաղթանակած Սասանյանների կողմը: Այդ կերպ վարվեցին նաև պարթև Արշակունիների տոհմակից տները:

Կայունացնելով իր ներքին վիճակը՝ Արտաշիր Ա-ն ձեռնամուխ

եղավ իր պետության սահմաններն ընդարձակելու գործին: Նա նվաճեց Մեդիան, Ադորբայգանը (Ատրպատական), Սաքաստանը, Խորասանը, Հայաստանի մի մասը, Մարգիանան (Մերվի օազիսը), Մեքրանը և այլն: Նա իրեն ենթարկեց այն բոլոր տարածքները, որոնք նախկինում գտնվում էին պարթևական պետության կազմի մեջ, և նրանց մի մասը վերածեց իր սեփական «դաստակերտի»՝ դոմենի: Հետևողականորեն իրագործվում էր պարսկալեզու նահանգների միավորումը մեկ միասնական պետության մեջ, ինչպես դա եղել էր Աքեմենյանների ժամանակ: Սասանյան տերության պետական լեզու դարձավ հարավ արևելյան պահլավական բարբառը, որի մեջ ներծծված էին նաև այլ բարբառներ:

Արտաշիր Ա-ի կառավարման տարիներին նրա տիրույթների սահմանը հյուսիսում հասավ մինչև մերձկասպյան նահանգները, հարավում՝ Պարսից ծոցը, արևելքում՝ Քաբուլ գետի հովիտը: Սակայն այնպիսի ընդարձակ երկրամասեր, ինչպիսիք էին Խորեզմը, Խորասանը, Բալխը, Վրաստանը և Հայաստանը, այդ շրջանում դեռևս չէին մտնում Սասանյան պետության կազմի մեջ: Իրանի հյուսիսում և հյուսիս արևելյան շրջաններում Սասանյանների համար մեծ վտանգ, հետևաբար և ուժերի լարվածություն էր պահանջում այն հորդաների դեմ պայքարի անհրաժեշտությունը, որոնք միավորված էին հոներ հավաքական անվան տակ:

Արևմուտքում Սասանյանների հիմնական ախոյանը, ինչպես նշվեց, Հռոմեական կայսրությունն էր, որի հետ անխուսափելի էր դաժան ու անզիջում պայքարը Սիրիայի, Միջագետքի, Հայաստանի և Անդրկովկասի նկատմամբ տիրապետություն ձեռք բերելու համար: Սասանյանների մեծագույն նպատակներից մեկն էր իրենց սահմանները հասցնել մինչև Միջերկրական և Սև ծովերի ափերը և հսկողություն սահմանել «մետաքսի ճանապարհի» և միջազգային առևտրի կարևորագույն ուղիների վրա: Արտաշիր Ա-ն հավակնություն ուներ տիրելու Հռոմեական կայսրության ամբողջ ասիական մասին: Սակայն առաջնահերթ խնդիրը Միջագետքին տիրելն էր, որը Խորենացին անվանում է «գահանիստ երկիր»:

Այդ նպատակին հետամուտ, III դարի 30-ական թթ. սկսած՝ պարսկական հեծելազորը սկսեց անհանգստացնել Սիրիայում, Կապադովկիայում, Միջագետքում և Հայաստանում տեղակայված հռոմեական զորամասերին: 230 թ. Արտաշիր Ա-ի զորքերն անցան Եփրատ գետը և պաշարեցին Մծբինը: Պարսկական հեծելազորի ասպատակություններին ենթարկվեցին նաև Միջագետքի հարևան երկրները՝ Ասորիքն ու Կապադովկիան: Այսպիսով՝ Արևելքն ու Արևմուտքը ներկայացնող երկու հզորագույն ուժերի միջև ծայր էր առնում մի արյունոտ պայքար, որի

ելքը որոշելու էր Առաջավոր Ասիայի բազմաթիվ ժողովուրդների քաղաքական ճակատագիրը:

Հռոմում անմիջապես հասկացան, որ Արևելքում պատմական ասպարեզ է իջնում ահռելի եռանդով օժտված մի երիտասարդ ու կենսունակ պետություն, որը, ըստ էության, ձգտում է համաշխարհային տիրապետության: Ուստի Ալեքսանդր Սևերոս կայսրը (222-235) 232 թ. մի մեծ բանակ շարժեց դեպի Արևելք: Կողմերը խուսափում էին վճռական գործողություններից ու թեժ մարտերի միջոցով շոշափում էին միմյանց ուժերը: Պատերազմն անորոշ ելք ունեցավ՝ ոչ մեկին չբերելով վճռական հաղթանակ, թեև կողմերից յուրաքանչյուրն իրեն էր վերագրում հաղթանակի դափնիները: Իսկ Միջագետքը մնաց հռոմեացիների ձեռքերում:

242 թ. Հռոմի երիտասարդ կայսր Գորդիանոս Գ-ն, որը կեսար դարձավ 238 թ. 13 տարեկան հասակում, պատերազմ հայտարարեց Իրանին և իր արևելյան բանակը շարժեց թշնամուն ընդառաջ:

Վախճանված Արտաշիր Ա-ի որդի Շապուհ Ա-ն (240-270) բարձրացավ գահ և հետևելով իր հոր օրինակին՝ սկսեց վարել հարձակողական արտաքին քաղաքականություն մասնավորապես իր թագավորության ողջ երեսուն տարիներն անց կացնելով Հռոմեական կայսրության հետ անընդհատ պատերազմների մեջ:

Ջորաշարժ կատարելով Գորդիանոսին հակահարված տալու համար՝ Շապուհը սասանյան բանակը շարժեց հռոմեացիներին ընդառաջ, նպատակ ունենալով հանգուցալուծել իր հոր անավարտ վեճը նրանց հետ: Երկու վիթխարի բանակների հանդիպումը տեղի ունեցավ 244 թ. փետրվարի 11-ին Տիգրոնի մատույցներում՝ Մեսիխես (Քեթ-Մաշկենե) կոչված վայրում: Հռոմեական բանակը կրեց ցնցող ու խայտառակ պարտություն: Ռազմի դաշտում ընկավ նաև Գորդիանոս կայսրը: Հռոմեացիները ստիպված էին կնքել խաղաղության ծանր պայմանագիր (244 թ.), որով իրենց վրա էին վերցնում ստորացուցիչ պարտավորություն՝ պարսիկներին վճարելու 500 հազար դինար ռազմատուգանք: Նրանք հակառակորդին զիջում էին նաև Միջագետքն ու Հայաստանի մեծ մասը: Հռոմեական աղբյուրներն այդ պայմանագիրը բնորոշել են իբրև «ամենաամոթաբեր հաշտություն»: Այդ հաղթանակի առթիվ Մեսիխեսը պարսիկներն անվանեցին Փեյրոզ-Շապուհի (այսինքն՝ «Շապուհի հաղթանակը»):

Պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող կետը մնաց թղթի վրա, այսինքն Մեծ Հայքի թագավորությունը պահպանվեց նախկին վիճակում, որովհետև հայ ժողովուրդը չցանկացավ ճանաչել իրեն պարտադրված քաղաքական իրաղրությունը և զենքը ձեռքին պայքարեց Սասանյանների դեմ:

Օգտագործելով խաղաղ դադարը հռոմեացիների հետ՝ Շապուհ Ա-ն զենքը ուղղեց Կենտրոնական Ասիայի պետական կազմավորումների և արևելքից Իրանին սպառնացող վայրկատուն ցեղերի դեմ: Խորասանում նա ջախջախեց «թուրանական թագավորին», սպանեց նրան և ճակատամարտի վայրում հիմնադրեց Նեվշապուհ (Նիշապուր) քաղաքը: Այնուհետև նա իր զենքը ուղղեց քուշանների դեմ՝ ձեռնամուխ լինելով նրանց թագավորության հնդկապարթևական մասի նվաճմանը: Տանելով հաղթանակ՝ Շապուհ Ա-ն կոտորում է հնդկապարթևական Արշակունի «Կարենյան պահլավի տոհմը» և գրավում Քուշանշահիի՝ մինչև հարավային մասը, այսինքն՝ մինչև Հնդկաստանի Փեշավար քաղաքը: Այդ երկրամասը միացնելով Իրանի հյուսիս արևելյան նահանգներին, նա կազմում է նոր կախյալ մի թագավորություն՝ «Սաքաստանի, Թուրեստանի և Հնդկաց մինչև ծովափ»: Շապուհ Ա-ն այդ միացյալ երկրների թագավոր է նշանակում իր որդի Ներսեհին:

Այդ խոշոր հաղթանակներից հետո Շապուհին այլևս չէր բավարարում իր հոր «շահանշահ Իրանի» բարձր տիտղոսը, և նա իր արձանագրությունների մեջ իրեն անվանում է «շահանշահ Իրանի և Անիրանի» («շահանշահ-ե Էրան ու Աներան»)՝ դրանով իսկ շեշտելով, որ ինքը միավորել է ոչ միայն Իրանը, այլև այն շրջանները, որոնք մինչ այդ չէին մտնում Իրանի կազմի մեջ:

Ապահովելով իր աշխարհակալության արևելյան ծայրամասի անվտանգությունը՝ Շապուհ Ա-ն կրկին իր հայացքն ուղղում է դեպի Արևմուտք՝ ռազմական ամբողջ ուժերը կենտրոնացնելով Միջագետքի և Հայաստանի մատույցներում:

Պարսկական զորքերի հրամանատար, թագաժառանգ Որմիզդ-Արտաշիրը ներխուժեց հռոմեական Մեսոպոտամիա և Սիրիա (Ասորիք) պրովինցիաները (253 թ.): Հռոմեական 60- հազարանոց բանակը ծանր պարտություն կրեց, որի հետևանքով պարսկական զորքերը գրավեցին Ասորիքի, Կիլիկիայի, Փյունիկիայի, Կապադովկիայի 37 քաղաքներ, որոնց թվում նաև Անտիոքը՝ անխնա կողոպուտի մատնելով դրանք: Այսպիսով՝ պարսկական զորքերը հասան մինչև Միջերկրական ծովի ափերը: Շապուհ Ա-ի «Ջրադաշտ-ի Քաաբայի» արձանագրությունում առկա է մի օրհներգ ի պատիվ Հռոմի նկատմամբ տարված այդ հաղթանակի: Սասանյան զորքերը հասան մինչև Արաբական թերակղզու խորքերը՝ նվաճելով Խիրի թագավորությունը:

253 թ. Սասանյանները գրավեցին նաև Հայաստանը, որի պարսկական մասը միառժամանակ մտավ Երանշահրի կազմի մեջ: Այնուհետև

253-255 թթ. Շապուհ Ա-ն գրավեց Վրաց թագավորությունը:

Սակայն Սասանյան Իրանը չէր բավարարվում միայն Մեծ Հայքի պարսկական մասով: Նրա նվիրական խղճի էր նաև Հայաստանի հռոմեական մասի բռնազավթումը: Ուստի պարսկական զորքերը ներխուժում են հռոմեական Հայաստան և այն բռնակցում իրենց պետությանը: Վալերիանոս կայսրը (253-260) հռոմեական բանակի գլուխ անցած շարժվում է պարսիկների դեմ: 259 թ. վերսկսված պարսկահռոմեական պատերազմը Վալերիանոսի համար ունեցավ ողբերգական վախճան: Եղեսիայի և Խառանի միջև ընկած տարածքում 260 թ. տեղի ունեցավ մեծ ճակատամարտ, որտեղ հռոմեական բանակը դարձյալ խայտառակ պարտություն կրեց, իսկ Վալերիանոս կայսրը գերի ընկավ Շապուհ Ա-ի ձեռքը: Իրանական զենքի այդ հաջողությունը պատկերված է Ֆարսում գտնվող «Նաղշ-ի Ռուստամի» զրադաշտական տաճարի պատի խորաքանդակի վրա:

Աղբյուրների վկայությամբ՝ Վալերիանոս կայսրը մյուս ռազմագերիների հետ ստրկացվեց և դատապարտվեց տաժանակիր աշխատանքի՝ Կարուն գետի վրա՝ Շուշթերի մոտ կառուցվող վիթխարի ջրամբարտակի շինարարության վրա աշխատելու համար: Մեկ այլ վարկածի համաձայն՝ Շապուհը շղթայակապ վիճակում ամենուրեք իր հետ տանում էր 67-ամյա կայսրին և որպեսզի է՛լ ավելի նվաստացնի նրան, օգտագործում էր որպես հենակ՝ ձի նստելիս ոտքով կանգնելով նրա մեջքի վրա:

Վերոհիշյալ իրադարձությունները, մասնավորապես հռոմեացիների 70- հազարանոց բանակի ջախջախումը, շշմեցուցիչ տպավորություն էին թողել ժամանակակիցների վրա: Այդ հաղթանակից հետո պարսիկները հաստատվեցին Ասորիքում, Կապադովկիայում, Փոքր Հայքում և Կիլիկիայում: Հռոմեական Արևելքի նվաճված այդ երկրներից Շապուհ Ա-ի հրամանով բազմահազար բնակչություն էր քշվում Իրանի խորքերը՝ նոսր բնակչություն ունեցող շրջանները յուրացնելու և երկրի առևտրին ու արհեստներին զարկ տալու համար:

Իրանական զորքերի հետագա առաջխաղացումը դեպի Արևմուտք կանգնեցվեց սիրիական անապատի առևտրական ճանապարհների խաչմերուկում գտնվող Պալմիրա-Թադմոր քաղաք-պետության արաբական թագավոր Օդեյնաթ Բ-ի կողմից, որին հռոմեացիները անվանում էին Սեպտիմիոս Օդենատոս: Վերջինս Արևելքում միակ տիրակալն էր, որ պահպանել էր իր հավատարմությունը կայսրության հանդեպ: Օդենատոսի իշխանությունը տարածվում էր ամբողջ հռոմեական Արևելքի (Ասորիք, Արաբիա, Պաղեստին, Կիլիկիա, Եգիպտոս) վրա: Հռոմեական կայսր Գաղղիանոսը Օդենատոսին ճանաչել էր որպես այդ տարածքնե-

րի ժառանգական կառավարիչ՝ նրան շնորհելով «իմպերատոր», «Պալմիրայի թագավոր», «Վերականգնող Արևելքի» և «Արևելքի Օգոստոս» տիտղոսները: Որպես Հռոմի դաշնակից՝ Օդենատոսը 262-264 թթ. պատերազմական գործողություններ էր վարում Շապուհ Ա-ի դեմ:

Երբ պրետորիաների պրեֆեկտ Բալլիստայի անակնկալ հարձակման հետևանքով պարսկական զորքերը տալիս են մեծ թվով զոհեր և խուճապահար նահանջի դիմում՝ թշնամուն թողնելով արքայից արքայի կանանոցը, պարսկական բանակը Եփրատ գետն անցնելիս Պալմիրայի տիրակալի կողմից ենթարկվում է հուժկու գրոհի: Տալով հսկայական թվով զոհեր՝ Շապուհ Ա-ն իր բանակի մնացորդներով հազիվ կարողանում է հասնել իր պետության սահմանները: Կրնկակոխ հետապնդելով հակառակորդին՝ Օդենատոսը Եդեսիան ազատում է պարսկական պաշարումից և հետ խլում Մծբինն ու Խառանը, այնուհետև շարժվում Սասանյանների մայրաքաղաք Տիզբոնի վրա (262 թ.): Եվ թեև նրան չի հաջողվում գրավել լավ ամրացված քաղաքը, սակայն նա ծեռք է բերում հարուստ պատերազմական ավար, այդ թվում նաև Շապուհ Ա-ի հարեմի մի մասը: Սակայն լուր ստանալով, որ գոթերը հարձակվել են Փոքր Ասիայի վրա՝ նա շտապում է հետ վերադառնալ:

Իր ծեռքերում կենտրոնացնելով Ասորիքն ու Միջագետքի մեծ մասը՝ Օդենատոսը սկսեց փայփայել հռոմեական Արևելքի միահեծան տեր դառնալու երազանքներ, որը առաջ բերեց հռոմեացիների զայրույթը: Պալմիրայի տիրակալի մոտ հռոմեացիների կողմից ուղարկված մարդասպանը վերջ է տալիս նրա կյանքին (266/7 թ.):

Օդենատոսին հաջորդեց իր որդին՝ Վաբալլաթը, սակայն, փաստորեն, իշխեց նրա մայրը՝ Զենոբիան, որի գեղեցկությունը և խիզախությունը գովերգվում են հռոմեական աղբյուրների կողմից: Նրա օրոք Պալմիրայում օրեցօր ուժեղանում էր հակահռոմեական պարսկասեր կուսակցությունը: Պալմիրայի ծերակույտը Զենոբիային հանձնարարում է խզել իր կապերը Հռոմից և դաշինք կնքել պարսիկների հետ (271 թ.): Այսուհետև Պալմիրան իր զենքն ուղղում է Հռոմի դեմ՝ նրան զրկելով Փոքր Ասիայից, Եգիպտոսից և գրեթե բոլոր արևելյան պրովինցիաներից: Հռոմեական աղբյուրները վկայում են, որ հռոմեացիների դեմ Զենոբիայի դաշնակիցներն էին պարսիկները և հայերը:

Միաժամանակ Պալմիրան դառնում է Արևելքի տեր ու տնօրեն, իսկ Զենոբիան՝ «Արևելքի թագուհի»:

Անշուշտ, Հռոմը չէր կարող հանդուրժել այդ իրողությունը, ուստի և կազմակերպում է մեծ արշավանք Զենոբիայի դեմ: Շապուհ Ա-ն թեև օգ-

նություն է ուղարկում իր նորահայտ դաշնակցին, սակայն տեղի ունեցած երկու ճակատամարտերում հռոմեացիները կործանիչ հարված են հասցնում Զենոբիայի զորքերին: Ավրելիանոս կայսրի հրամանով 272 թ. գրավվում և հիմնահատակ ավերվում է Պալմիրա-Թադմորը, իսկ Զենոբիա թագուհին գերության է քշվում Հռոմ:

Հռոմի հետ հաջող պատերազմները Շապուհ Ա-ին հնարավորություն տվեցին իր ուշադրությունը կենտրոնացնել արևելյան ուղղության վրա: Նա հաջող արշավանքներ ձեռնարկեց դեպի Խորասան, Անդրկովկաս, Մերվ, նվաճեց Կասպից ծովի առափնյա շրջանները: Սասանյան կայսրությունն իրեն ենթարկեց նաև Մեսենան (Տիգրիս և Եփրատ գետերի հարավային շրջանները), որի կառավարումը շահնշահը հանձնեց իր որդուն, որի անունը նույնպես Շապուհ էր:

III դարի երկրորդ կեսին Սասանյան պետության տիրույթները տարածվում էին արևմուտքից Հարավային Միջագետքից ու Սիրիայից, մինչև արևելք Հինդոս գետը, հյուսիսից՝ Կասպից ծովից՝ մինչև հարավ՝ Օմանի թերակղզին: Շապուհ Ա-ն իր ազդեցությունը տարածեց նաև Քուշանական թագավորության, Սողդիանայի և Չաչի (Շաշ) վրա: Քուշանական թագավորության կատարյալ հնազանդեցումը տեղի ունեցավ IV դարի 60-ական թթ. վերջին: Իրանական բարձրավանդակի արևելքում շահը հիմնադրեց նոր քաղաք՝ Նիշապուրը (Գեղեցիկ Շապուհ): Շապուհ Ա-ի օրոք Իրանում վերջին անգամ շահական գրագրության ու արձանագրությունների մեջ օգտագործվում էր հունարեն լեզուն:

270 թ. Շապուհ Ա-ն, որի օրոք Սասանյան պետությունը հասավ առավել մեծ հզորության և խոշոր հաղթանակներ ձեռք բերեց Հռոմի նկատմամբ, մահացավ: Նրա մահվանից հետո երեք տասնամյակների ընթացքում արքունի մեծատոհմիկները Սասանյան գահի վրա բարձրացրին և գահընկեց արեցին վեց թագավորների: Շապուհ Ա-ն ուներ չորս զավակ՝ Որմիզդ-Արտաշիրը, Շապուհը, Վարահրանը և Ներսեհը: Ավագ որդին՝ Որմիզդ-Արտաշիրը, որը հանդիսանում էր «Հայաստանի մեծ թագավոր», դեռևս շահնշահի կենդանության օրոք նշանակված էր գահաժառանգ: Ուստի հենց նա էլ Սասանյան գահի վրա փոխարինեց իր հորը (270 թ.): Սակայն Որմիզդ-Արտաշիր Ա-ն թագավորեց ընդամենը մի քանի ամիս և մահացավ: Պատմական տարեգրությունները նրա վաղաժամ մահվան մասին ոչինչ չեն հաղորդում: Միայն հայտնի է, որ նա «հեռացավ աստվածների բնակության վայրը» 45-47 տարեկան հասակում: Նրա մահվանից հետո Իրանի գահի նկատմամբ հավասար իրավունքներ ունեին Շապուհ Ա-ի կենդանի մնացած որդիներից երկուսը՝

Քերմանի կառավարիչ (թագավոր) Վարահրանը և Սաքաստանի կառավարիչ Ներսեհը: Այս երկու եղբայրների միջև ծայր են առնում գահակալական կռիվներ, որից հաղթող է դուրս գալիս Վարահրանը (Վահրամ, Վռամ), որն ընդունում է Վարահրան Ա (271-274) գահակալական անունը:

Դժբախտաբար, սրա կառավարման երեք տարիների վերաբերյալ աղբյուրների հաղորդած տեղեկությունները չափազանց սուղ են: Հայտնի է միայն, որ նրա օրոք Սասանյան Իրանի կրոնական քաղաքականության մեջ տեղի են ունեցել ինչ-ինչ վոփոխություններ, որոնց հետևանքով Վարահրանի առջև ծառացել են մեծ դժվարություններ: Սասանյան այս արքայի թագավորության շրջանում միակ աչքի ընկնող իրադարձությունը հանդիսացել է Մանի «մարգարեի» մահապատիժը:

Վարահրան Ա-ի մահվանից հետո, ոտնահարելով գահի նկատմամբ Ներսեհի ունեցած առավելագույն իրավունքները, ինչպես նաև գահաժառանգման վերաբերյալ զրադաշտական կարգը, Սասանյան արքունիքի և քրմերի կողմից գահ է բարձրացվում Վարահրան Ա-ի 14-ամյա որդի Վարահրան (Վռամ) Բ-ն (274-293): Դա խիստ սրում է ճգնաժամն արքունիքում, որի հետևանքով երկու կուսակցությունների բաժանված խմբավորումները մեկը մյուսի նկատմամբ կազմակերպում են արյունոտ հաշվեհարդարներ: Ներսեհին այդ պայքարից հեռու պահելու համար մոտ 276 թ. նրան հետ կանչեցին արևելյան նահանգներից և շնորհելով «հայերի մեծ թագավորի» տիտղոս՝ ուղարկեցին Հայաստան:

Պատանի Վարահրան Բ-ի դիրքերն ամրապնդելու համար մինչև նրա գահակալությունը նրան ամուսնացրին Շապուհ Ա-ի թոռան՝ Շապուհ-դուխտակի հետ:

Ներքին քաղաքականության բնագավառում նոր արքայից արքան սկսում է կոշտ ու դաժան կեցվածք դրդեգրել հողագործների նկատմամբ նրանց վրա բարդելով անտանելի ծանր հարկեր: Սակայն արձանագրություններից մեկում նշվում է, որ երկրի գլխավոր քուրմ Քարթիրը ճիշտ ժամանակին նրան պատմում է բարոյախոսական մի առակ, որից ազդված արքան իբր թե զղջում է և հրաժարվում իր հպատակների նկատմամբ ընտրած «արատավոր» գծից:

Ֆարսի նահանգում Վարահրան Բ-ի հրամանով ժայռերի վրա փորագրված թվով տասը բարձրաքանդակներում, ինչպես և իր նախորդ շահնշահերը, Վարահրանը պատկերում է իր ռազմական հաղթանակները, սակայն ոչ թե «արտաքին» թշնամիների, այլ ներքին «խռովարարների» նկատմամբ: Բարձրաքանդակներից մեկում հետիոտն արքան սրով սպանում է գազազած առյուծներին՝ պաշտպանելով իր կնոջը: Նման

սյուժեն աննախադեպ է Սասանյան արքաների թողած բարձրաքանդակների համար, որովհետև առաջին Սասանյան թագավորներին բնորոշ էին իրենց իշխանության վեհությունը ցուցադրող պատկերները: Միանգամայն խորհրդավոր ու անհասկանալի է նաև այն, որ այդ բարձրաքանդակների մեջ չկա մեկը, որը նվիրված լիներ «աստվածային թագադրման» տեսարանին, որը հանդիսանում է մնացած Սասանյան շահերի բարձրաքանդակների գլխավոր սյուժեն: Սովորաբար նման բարձրաքանդակներում պատկերված էր լինում գերագույն աստված Ահուրա Մազդան, որը «իշխանության ականակուռ թագ» էր հանձնում արքայից արքային: Ի դեպ, անսովոր են նաև Վարահրան Բ-ի դրամները: Դա սասանյան դրամագիտության մեջ աննախադեպ մի երևույթ էր այն առումով, որ պատմականորեն կարճ ժամանակամիջոցի ընթացքում՝ ընդամենը 17 տարվա մեջ, հատվել են մոտ քսան տարբեր տիպի դրամներ՝ միանգամայն տարբեր պատկերումներով: Այս բոլորը գիտնականներին հիմք է տվել եզրակացնելու, որ Վարահրան Բ-ի թագավորության շրջանում Սասանյան պետության մեջ տեղի են ունեցել ինչ-որ՝ մեզ համար անհայտ իրադարձություններ, որոնց վերաբերյալ աղբյուրները կա՛մ լռում են, կա՛մ չեն հասել մեզ:

Վարահրան Բ-ի թագավորության շրջանում Իրանի գերագույն քուրմը Քարթիրն էր, որը, հանդիսանալով երիտասարդ շահնշահի կրոնական դաստիարակ («ոգու պահապան») և հետևաբար, մեծ ազդեցություն ունենալով ոչ միայն նրա բոլոր գործերի, այլև մտքի վրա, ըստ երևույթին, իր կարևոր մասնակցությունն է ունեցել պետության կառավարման գործում: Վարահրան Բ-ի օրոք նա բարձրացվել էր մինչև «վուզուրգի», այսինքն՝ պետության ազնվազարմ տոհմերի իշխանազուններից հետո իր նշանակությամբ երկրորդ աստիճանին: Բացի այդ, նրան շնորհվել էր Ստահր քաղաքի Անահիտ աստվածուհու տաճարի գլխավոր «վերակացու-տիրակալի» պաշտոնը, որը նրան տալիս էր վիթխարի իշխանություն, քանի որ Անահիտ աստվածուհին համարվում էր Սասանյան դինաստիայի պահապանը: Վերջապես, Քարթիրը նշանակվել էր նաև պետության գլխավոր դատավորի պաշտոնում:

Քարթիրը հանդիսանում էր պալատական փոքրաթիվ, սակայն ուժեղ մի խմբավորման ղեկավարը, որը փաստացի կերպով տնօրինում էր երկրի ճակատագիրը: Նա առաջ էր քաշել «իդեալական թագավորի» կոնցեպցիան, ըստ որի՝ թագավորը պետք է լիներ կրոնասեր, ամբողջապես պետք է գտնվեր իր կրոնական դաստիարակի ազդեցության ներքո և գործեր ու մտածեր կրոնի սկզբունքներին համապատասխան: Պետու-

թյունը, Քարթիրի կարծիքով, պետք է լիներ աստվածապետական:

Վարահրան Բ-ի գահակալության հենց սկզբին Իրանը կանգնած էր արևմուտքում նոր պատերազմի շեմին: Մի քանի տարի շարունակ սահմանամերձ շրջաններում տեղի էին ունենում խոշորամասշտաբ բախումներ, իսկ հաճախ նաև սասանյանները հեծելազորային մարտարշավներ էին կազմակերպում դեպի հռոմեացիների խորն ընկած տիրույթները: Իրանը փորձում էր ազդեցություն գործել Միջագետքի այնպիսի քաղաքների ու փոքր պետությունների քաղաքականության վրա, ինչպիսիք էին Եդեսիան, Բորսիպպան, Անտիոքը և այլն: Միաժամանակ նա ձգտում էր ուժեղացնել իր դիրքերն Անդրկովկասում: Սակայն Արևմուտքում հաջողությունները զարգացնելուն արգելակում էին երկրի ներսում գոյություն ունեցող ծանր ճգնաժամը և թաքնված ու բացահայտ երկպառակությունները:

Այդ բոլորով հանդերձ, Վարահրան Բ-ին հաջողվեց կրկին բռնազավթել Հռոմեական Հայաստանը: Որպես պատասխան՝ Հռոմի նոր կայսր Կարոսը զորքեր շարժեց Սասանյանների դեմ: Արքայից արքան դեսպաններ է ուղարկում հռոմեացիների մոտ՝ խնդրելով կնքել խաղաղության դաշն: Սակայն մերժելով այդ առաջարկը՝ Կարոս կայսրը հետ է ուղարկում դեսպաններին, և հռոմեական լեգեոններն առաջնորդում դեպի Տիգրոն, որոնք իրենց ճանապարհին համարյա չեն հանդիպում դիմադրության, քանի որ պարսիկների ամբողջ ուշադրությունն այդ ժամանակ բևեռված էր երկրի ներսում բռնկած հուժկու ապստամբության վրա: Կարոսը չի հասցնում պաշարել կամ գրավել Սասանյանների մայրաքաղաքը և Տիգրիսի ափին, իր վրանում կայծակնահար լինելով, սպանվում է: 284 թ. կնքվում է խաղաղության պայմանագիր, որով Միջագետքը և Հռոմեական Հայաստանը պարսիկները զիջում էին Հռոմին: Շահնշահը ստիպված էր ստորագրել այդպիսի ծանր հաշտություն, քանի որ Խորասանի, Սաքաստանի և Թուրքեստանի կառավարիչ, արքայից արքայի ոչ հարազատ եղբայր Որմիզդը բարձրացրել էր ապստամբություն և սաքերի, քուշանների և այլ վաչկատուն ռազմիկ ցեղերի օգնությամբ ձգտում էր երկրի արևելքում ստեղծել առանձին պետություն: Անողոք դաժանությամբ ճնշելով այդ վտանգավոր շարժումը, որի ընթացքում սպանվեց նաև Որմիզդը՝ շահնշահը Սաքաստանի կառավարիչ նշանակեց իր փոքրահասակ որդուն՝ նրան շնորհելով «սաքանշահ» տիտղոսը: Ընդ որում՝ դեռևս 276 թ., հետևելով ավանդույթին, մինչև գահ բարձրանալը, Վարահրանը նրան հռչակել էր գահաժառանգ՝ դրանով իսկ խախտելով զրադաշտական ընտանեկան իրավունքի նորմերը, քանի որ գահի օրինական թեկնածու էր համարվում Շապուհ Ա-ի որդի Ներսեհը (Նարսես):

Վերջինս, ինչպես նշվել է վերևում, 70-ական թվականներից սկսած, թագավորում էր Հայաստանում՝ կրելով «հայերի մեծ արքա» տիտղոսը: Այս գոռոզ և պատերազմասեր միապետին հաջողվել էր ընդարձակել Հայաստանի սահմանները՝ նրան միացնելով նաև Ատրպատականը:

Ներսեհի կշիռը իրանական արքունիքում պայմանավորված էր նաև նրանով, որ «Պարսկական Հայաստանը» քաղաքական առումով հանդիսանում էր Սասանյան պետության ամենակարևորագույն թագավորությունը, որովհետև այն իրենից ներկայացնում էր Հռոմի դեմ Իրանի պայքարում անփոխարինելի և առաջնակարգ կարևորություն ունեցող ռազմական կետ. մի յուրահատուկ «քանալի» դեպի արևելահռոմեական պրովինցիաները: Պատահական չէ, որ Ներսեհի այդ «դաստակերտում» (դոմենում) էին կենտրոնացված Իրանի հիմնական ուժերը:

Հաշվի չառնելով այս բոլորը՝ Վարահրան Բ-ի մահվանից հետո (293 թ.) նրա կողմնակից պալատական խմբավորումը կարողանում է գահ բարձրացնել հանգուցյալ արքայի որդուն՝ Վարահրան Գ-ին: Դա առաջ բերեց սուր քաղաքական ճգնաժամ: Երկրում ծայր առավ քաղաքացիական պատերազմ: Բանակը հանդես էր գալիս Ներսեհի կողմից: Այն բանից, թե արդյոք պետության գլուխ կանգնած է ուժեղ ձեռք ունեցող մի շահնշահ, կախված էր բանակի բարձրագույն սպաների և հասարակ զինվորների հետագա ճակատագիրը: Իսկ «Հայաստանի մեծ արքան» բանակի կողմից ընկալվում էր որպես պետության միասնությունն ու կայունությունը ապահովելու ընդունակ առաջնորդ: Ներսեհին գաղտնի ու բացահայտ աջակցում էին նաև պալատական ազնվականության մի մասը, մի քանի նահանգների շահրաբները և Միջագետքի, Սիրիայի, Անտիոքի, Մարաստանի և այլ քաղաքների կառավարիչները:

Ինքը՝ Ներսեհը, պնդում էր, որ Իրանի տիրակալ լինելու աստվածային իրավունքը իրեն տրված է այն պատճառով, որ Շապուհ Մեծի որդին օժտված է բազմաթիվ բարոյական հատկանիշներով. «առավել հավատարիմ է կրոնին, առավել բարեսեր է, առավել արդար, առավել գործունյա»: Ինքը նաև «Արդարության գուշակ է», իսկ իր բոլոր թշնամիները՝ «գործիք սատանայի ձեռքին» և «ստի հետևորդ»:

Այս իրադարձությունների կապակցությամբ արձանագրություններից մեկում ասվում էր, որ «նրանք, որոնք արքունիքում առաջինն էին և առավել հզոր», որոշեցին Իրանի գահի վրա բարձրացնել Ներսեհին՝ նրա մոտ՝ Հայաստան ուղարկելով մի դեսպանի և հրավիրելով «աստվածներից ընդունել փառքն ու երկիրը, իր գահը և իր նախնիների տիրակալությունն ու իշխանությունը»: Սակայն չնայած այդ բոլորին, երբ 293 թ. մոտ 30 տարեկան հա-

սակում, Վարահրան Բ-ն մահացավ, արքունի ազնվականությունը հանդիսավոր կերպով գահը հանձնեց հանգուցյալ շահնշահի մանկահասակ որդուն՝ Վարահրան Գ-ին: Դրանով Ներսեհի համբերության քաժակը լցվեց, և նա որոշեց ապստամբել: Չհանդիպելով լուրջ դիմադրության, նրա բանակը սրընթաց մոտեցավ Տիզբոնին և մայրաքաղաքը գրավեց առանց մարտի:

Ներսեհը իր հակառակորդների հետ հաշվեհարդար տեսավ անագորույն դաժանությամբ: Աղբյուրները հաղորդում են, որ նա հրամայում է նրանց նետել փղերի ոտքերի տակ, եռացող կապարով լի կաթսայի մեջ, որը կոչվում էր «ցուլ» և տանջամահ անել, այսպես կոչված, «էշի» միջոցով (դա երկաթյա մի եռոտանի էր, որից կապում էին «այն, ինչ որ ունեն տղամարդիկ», և կախված վիճակում զոհը սարսափելի տանջանքների մեջ փչում էր իր շունչը): Մանկահասակ «սաքերի արքա» Վարահրանը մահապատժի ենթարկվեց վերջինը:

Այս արյունոտ ճանապարհով Ներսեհը բարձրացավ Սասանյանների գահի վրա (293-302): Նրա կառավարման տարիները Սասանյան պետության համար ծանր տարիներ էին: Ներքին ճգնաժամն անխուսափելիորեն ազդելու էր նրա ռազմական հզորության վրա: Սակայն, չնայած դրան, չեղյալ հայտարարելով 284, 287 և 293 թթ. պայմանագրերը Դիոկղետիանոս կայսեր հետ, Ներսեհը հռոմեացիների դեմ սկսեց մի նոր պատերազմ, որի ժամանակ պարսից զորքը ներխուժեց հռոմեական Միջագետք և Մեծ Հայք թագավորության սահմանները: Միջագետքում Խառանի և Կալլինիկումի միջև տեղի ունեցավ վճռական ճակատամարտ, որին հռոմեացիների կողմից մասնակցել է նաև հայոց Տրդատ Գ թագավորը՝ իր հեծելազորով: Հռոմեական զորքին հասցնելով ծանր կորուստներ՝ ճակատամարտը շահեցին պարսիկները: Այդ ճակատամարտը տանուլ տված զորահրամանատար Գալերիոս Վալերիոս Մաքսիմիանոսին, որը Դիոկղետիանոսի փեսան էր, նվաստացնելու համար կայսրը հրամայեց ամբողջ զորքի ներկայությամբ հետիոտն քայլել իր առջևից:

297 թ. հռոմեացիները, վերադասավորելով իրենց ուժերը, շարունակեցին պատերազմը պարսիկների դեմ: Միանգամայն անսպասելի կերպով վերջիններս Մծբինի մոտ կրեցին ջախջախիչ պարտություն: Ներսեհ թագավորի ողջ կանանոցը՝ նրա աղջիկները, կանայք և հարճերը, ինչպես նաև Սասանյան մեծամեծներից շատերը, հարուստ ավարի հետ միասին ընկան հռոմեացիների ձեռքը: Իսկ ինքը՝ Ներսեհը, փախուստի միջոցով փրկեց իր կյանքը:

Սասանյանների համար այդ անհաջող պատերազմն ավարտվեց Մծբինում կնքված 40-ամյա դաշնագրով, որը պարսից պատմության մեջ

հայտնի է «ամոթալի հավերժական խաղաղություն» անունով: Այդ պայմանագրով «Անդրտիգրիսյան» նահանգները, Ծավդեք գավառը և Մեծ Հայքի թագավորության հարավային երկրամասերը անցան Դիոկղետիանոսին: Մեծ Հայքի թագավորությունը ճանաչվեց որպես հռոմեական կայսրության հովանավորության ներքո գտնվող երկիր: Մի խոսքով՝ Սասանյան պետությունն Արևմուտքում կորցրեց այն ամենը, ինչ զավթված էր նախկին ժամանակներում:

Այդ պարտությունն այն աստիճանի ծանր էր, որ գրեթե կես դար Սասանյանները հրաժարվեցին արևմուտքում ակտիվ քաղաքականությունից:

Հռոմի հետ Իրանի հարաբերությունների վրա լրջորեն ազդեց քրիստոնեության տարածումը Առաջավոր Ասիայի երկրներում: IV դարի սկիզբը նշանավորվեց մի շարք երկրներում (301 թ. Հայաստանում, քիչ ավելի ուշ՝ Վրաստանում և Աղվանքում, 30-ական թթ. Հռոմում) քրիստոնեությունը որպես պաշտոնական պետական կրոն ճանաչելով: Հայաստանի քրիստոնեացումն անխուսափելիորեն նրան կապելու էր Հռոմի հետ՝ մի նոր վիհ բաց անելով Սասանյան Իրանի և Հայաստանի միջև:

Այդ նույն ժամանակներում տեղի է ունենում մի իրադարձություն, որն անխուսափելիորեն նպաստելու էր ողջ Առաջավոր Ասիայի քաղաքական իրադրության մեջ էական տեղաշարժեր մտցնելուն: 330 թ. Կոստանդինոս Ա Մեծ կայսրն իր մայրաքաղաքը Հռոմից տեղափոխեց Բյուզանդիոն, որը նրա պատվին վերանվանվեց Կոստանդնուպոլիս: Սա նշանակում էր, որ այսուհետև ավելի են սերտանալու հռոմեացիների կապերը Արևելքի հետ, և ավելի եռանդուն է լինելու նրանց քաղաքականությունը կայսրությունից արևելք ընկած տարածքների, այդ թվում նաև Սասանյան պետության նկատմամբ:

Պատահական չէ, որ Տիզբոնի արձագանքն այս շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձությունների նկատմամբ միանշանակ սուր էր: Հռոմեացիներից ստացած վերջին ցնցող հարվածից հետո սասանյաններն ուշքի էին գալիս և վերստին ձեռնամուխ լինում նվաճողական քաղաքականության սաստկացման:

Ներսեհի մահվանից հետո գահ բարձրացավ նրա որդի Որմիզդ Բ արքան (302-309), որի տիրապետության շրջանում կրկին բռնկեց իշխանության համար դինաստիական պայքար: Տեղի ունեցող ներքին երկպառակություններին վերջ տրվեց 309 թ., երբ Սասանյան տոհմիկ ազնվականությունը գահ բարձրացրեց Որմիզդ Բ-ի որդուն՝ Շապուհ Բ-ին (309-379), որը դեռևս ծծկեր երեխա էր, իսկ մի շարք աղբյուրների համաձայն՝ դեռևս գտնվում էր մոր արգանդում: Սա երկար կառավարելու

պատճառով (70 տարի) հայտնի է «Երկարակյաց» մականունով: Մինչև նրա չափահաս դառնալը երկրի կառավարման ղեկը փաստացի կերպով գտնվում էր իր մոր ձեռքերում: Վերջինս աշխատում էր գործունեության ընդարձակ ասպարեզ հարթել իր սիրեցյալ որդու համար՝ ժամանակ ու եռանդ չխնայելով նաև նրա դաստիարակության գործի վրա:

Վաղ պատանեկության տարիներին արդեն հստակորեն ուրվագծվեցին Շապուհ Բ-ի բնավորության ու խառնվածքի աչքի ընկնող գծերը. նրան բնորոշ էին կենդանի միտքը, բնատուր խելքը, անձնական քաջությունն ու անվեհերությունը, անվիճելի ռազմական տաղանդը: Միաժամանակ նա աչքի էր ընկնում իր դաժանությամբ ու նենգությամբ: Շապուհ Երկարակյացը բարձր թռիչքի քաղաքական գործիչ էր և որպես «աստծո օծյալ»՝ բարձր համարում ուներ թագավորական արժանապատվության և Իրանի շահնշահի իշխանության մասին:

Շապուհ Բ-ին հանգիստ չէր տալիս Սասանյան պետության նախկին հզորությունը վերականգնելու և իր նախնիների փառքը նոր գործերով բազմապատկելու սևեռուն գաղափարը: Նա իր առաջնահերթ խնդիրն էր համարում վերացնելու Մծբինի՝ 298 թ. ամոթալի պայմանագրի՝ Իրանին ստորացնող կետերը:

Այդ մեծ խնդիրներն իրականացնելու համար նախ անհրաժեշտ էր ապահովել թիկունքը: Ուստի նա իր կառավարման առաջին իսկ տարիներից անողոք պայքար սկսեց ինքնիշխանության ձգտող և իրենց անձնական շահը պետականից բարձր դասող տոհմիկ ազնվականության դեմ:

Իր տերության սահմանները դեպի Պարսից ծոց ընդլայնելու նպատակով Շապուհ Բ-ն պայքարի մեջ մտավ անհանգիստ արաբական ցեղերի հետ և նվաճեց Բահրեյնը: Այնուհետև, 338 թ. վերսկսելով պատերազմը Հռոմի հետ, Շապուհն իր զորքերով ներխուժում է Միջագետք և պաշարում Մծբին քաղաքը: Հենց այդ նույն ժամանակ տեղի է ունեցել պարսկական զորքերի ներխուժումը Հայաստան: Սակայն պատերազմի այս առաջին էտապում պարսիկների հաջողությունները շատ համեստ էին: Միաժամանակ հռոմեացիների զինված առճակատումը կրում է դիպվածային բնույթ, մինչև որ 344/5 թ. կայսրությունը վերսկսում է պատերազմական գործողությունները Սասանյանների դեմ, որի ընթացքում կրկին անհաջողությունն ուղեկցում է Շապուհին: 345 թ. Սինգարայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարսից արքայազն Ներսեհը գերի է ընկնում և սպանվում: Սասանյանները հարկադրված են լինում հաշտություն կնքել: Այնուհետև մի տևական ժամանակ Շապուհ Բ-ի ռազմական քաղաքականությունը Միջագետքի և Հայաստանի նկատ-

մամբ ընդունում է ասպատակ սփռելու բնույթ, որի նպատակն էր կողոպտել այդ բարգավաճ ու հարուստ երկրամասերը և բարոյալքել ու հուսահատության հասցնել նրանց տիրակալներին: Այդ քաղաքականությունը հատկապես խոշոր չափեր ընդունեց 355 թվականին՝ մեծ վնասներ պատճառելով Հարավային Հայաստանին և Միջագետքին: Այդ արշավանքների ժամանակ Շապուհ Բ-ն տասնյակ հազարավոր հայ բնակչության էր բռնի տարագրում Իրանի խորքերը:

Արևմուտքից Շապուհ Բ-ն իր զորքերը նետում է Արևելք, որտեղ նա 357-358 թթ. պայքար էր մղում հոն-խիոնիթների, քուշանների և այլ ցեղերի դեմ, որոնք ասպատակ էին սփռում և կողոպուտի ու ավերածության մատնում սահմանամերձ շրջանները: Հաղթելով ու հնազանդեցնելով հզոր Քուշանական թագավորությանը՝ Շապուհը դաշն է կնքում խիոնիթների, սաքերի և Աղվանքի թագավորների հետ, որոնք դառնում էին նրա դաշնակիցները: 359 թ. կրկին վերադառնալով Միջագետք՝ նա պաշարում ու գրավում է Ամիդը: Միաժամանակ պարսից զորքերը ներխուժում ու ավերում են Հայաստանի հարավային և արևմտյան երկրամասերը:

Թևավորվելով այս հաջողություններով՝ 360 թ. Շապուհը նորից մտնում է Միջագետք և գրավելով Սինգարան՝ կազմակերպում է սարսափելի կոտորած՝ վրեժ լուծելով այնտեղ զոհված արքայազն Ներսեհի համար: Այնուհետև նա պաշարում է Վիրտան (Բիրթոն): Սակայն պարսկական զորքերին ոչ միայն չի հաջողվում գրավել այդ քաղաքը, այլև նրանք տալիս են մեծ կորուստներ: Այդ անհաջողությունը ստիպում է Շապուհին վերադառնալ Պարսկաստան:

Սասանյանների հաջողություններից լրջորեն անհանգստացած Կոստանդինոս Բ-ն, 360 թվականից սկսած, ձեռնամուխ է լինում Սասանյանների դեմ բոլոր դաշնակից ռազմական ուժերի համախմբմանը: Սակայն նրա այդ ձեռնարկն ընդհատվում է մահվան պատճառով (361 թ.):

Նոր կայսր Հուլիանոսը, որը կրում էր «Ուրացող» մականունը, 363 թ. կազմակերպում է մեծ արշավանք Սասանյանների դեմ: Նրա զորահրամանատարներից մեկը Շապուհի կողմից երկրից վտարված նրա հարազատ եղբայր Որմիզդն էր, որին Հուլիանոսը մտադիր էր դնել պարսից գահի վրա: Հռոմեական զորքերը մոտենում են Տիզբոնին և նրա մոտ տեղի ունեցած ճակատամարտում ջախջախում պարսիկներին: Սակայն չկարողանալով գրավել մայրաքաղաքը և համոզվելով, որ ինքը չի կարող հաղթել պարսիկներին՝ Հուլիանոսը դիմում է նահանջի և պարսիկների կողմից հետապնդման ժամանակ սպանվում թշնամու նիզակից:

Նոր կայսր հռչակված Հովիանոսը 363 թ. Իրանի հետ կնքում է հաշ-

տություն, որի գործողության ժամկետը 30 տարի էր, մինչև 393 թ. Այդ հաշտությունը Ամմիանոսն անվանում է «ամոթալի», քանի որ Հռոմին դաշնակից Հայաստանը թողնվում էր բախտի քմահաճույքին: Մասնավորապես Հովիանոսը խոստանում էր չօգնել հայոց թագավոր Արշակ Բ-ին, եթե Սասանյանները պատերազմական գործողություններ սկսեն նրա դեմ: Հռոմեացիները պարտավորվում էին նաև այսուհետև չխառնվել Հայաստանի և Վիրքի (Իբերիայի) գործերին:

Վերոհիշյալ դաշնագրով պարսիկներին էին անցնում «անդրտիգրիսյան» այն երկրները, որոնք 298 թ. Մծբինի դաշնագրով անցել էին Հռոմին: Իսկ առևտրական խոշոր քաղաք Մծբինը 120 տարով, մինչև 483թ., հանձնվում էր Սասանյաններին:

Անտարակույս, 30-ամյա պայմանագիրը Շապուհ Բ-ի մեծ հաղթանակն էր: Առհասարակ, Իրանի այդ տիրակալն իր կառավարման տարիներին կարողացավ համախմբել պետությունը և կրկին բարձրացնել *շահնշահի իշխանության հեղինակությունը*: Նա նաև Սասանյան պետության մեջ առաջինը սկսեց քրիստոնյաների նկատմամբ կիրառել նպատակասլաց, պետական մակարդակով իրականացվող հալածանքների քաղաքականություն, հատկապես 393 թ. հետո, երբ այդ կրոնը Հռոմեական կայսրությունում սկսեց դառնալ տիրապետող:

Շապուհ Բ-ի մահվանից հետո գահ է բարձրանում նրա եղբայր Արդաշիր Բ-ն (379-383): Նրա կարճատև գահակալությունից հետո 383 թ. գահը ժառանգում է Շապուհ Բ-ի որդի Շապուհ Գ-ն (383-388): Վերջինս 384 թ. Կոստանդնուպոլիս է ուղարկում մի դեսպանություն, որն իր հետ տանում էր կայսեր համար հարուստ նվերներ՝ թանկագին քարեր, մետաքս և նույնիսկ փղեր: Դեսպանությանը հանձնարարված էր ծանուցել կայսրին Շապուհ Գ-ի գահակալության մասին: Ենթադրվում է, որ այս դեսպանությունը պետք է արքայից արքայի անունից առաջարկություն աներ խաղաղություն կնքելու և Հայաստանը բաժանելու մասին:

Պարսկա-հռոմեական բանակցություններն ավարտվեցին 387 թ., որով Հայաստանը բաժանվում էր երկու պետությունների միջև: Հայաստանի արևմտյան մասն անցնում էր Հռոմին, իսկ արևելյանը կամ Պարսկահայաստանը՝ Սասանյան Իրանին: Ղազար Փարպեցին նշում է, որ այս բաժանումով «Հայոց երկրի մեծ մասը՝ լավը, պիտանին ու արգավանդը, Պարսից արքայի բաժնի մեջ ընկավ»: Հիրավի, Սասանյան Իրանին բաժին ընկած տարածքը (184,916 քառ. կմ) համարյա չորս անգամ մեծ էր Հռոմեական կայսրությանն անցած տարածքից (50,575 քառ. կմ): Մեծ Հայքը, որպես մեկ միասնական պետություն, այլևս գոյություն չուներ: Այս

բաժանումից հետո Մեծ Հայքի կենտրոնացված պետության միասնական տարածքը, որ գոյություն էր ունեցել ընդամենը վեց հարյուրամյակ, հետագայում չվերականգնվեց: Այդ նույն պայմանագրով Սև ծովի հարավ արևելյան մասը՝ Լազիստանը, անցնում էր Հռոմին, իսկ Քարթլին՝ Իրանին:

388 թ. Շապուհ Գ-ի մահվանից հետո գահ բարձրացավ նրա եղբայր Վարահրան Դ-ն (388-399): Սրա օրոք ևս Հռոմեական կայսրության ու Սասանյան Պարսկաստանի դարավոր պայքարն ունեցավ իր շարունակությունը: 421-422 թթ. բռնկվեց պարսկա-բյուզանդական պատերազմ, որի պատճառը Վերին Միջագետքին և Հայաստանի հարավ արևմտյան երկրամասերին տիրելու ձգտումն էր: Պարսից Հազկերտ Ա արքան (399-420), որը Շապուհ Գ-ի որդին էր, եռանդուն ու գործունյա մի տիրակալ, ձգտում էր ռազմավարական և առևտրատնտեսական առաջնակարգ կարևորություն ունեցող այդ երկրամասերը վերցնել իր հսկողության տակ:

Հազկերտ Ա-ն գահ բարձրացավ մի այնպիսի ժամանակ, երբ զրադաշտական քրմությունը և իրանական ազնվականության վերնախավը պետությունն ու գահը խաղալիք էին դարձրել իրենց ձեռքին: Իր դիրքերն ամրապնդելու համար Հազկերտը փորձում էր ոչ միայն սահմանափակել պալատական բարձրատոհմիկ ազնվականների իշխանությունը, այլև հենարան գտնել բնակչության այլ խավերի, մասնավորապես քաղաքային առևտրական և արհեստավորական շրջաններում, որոնց նշանակալից մասը քրիստոնյաներ էին: Ուստի, ի հակադրություն Շապուհ Բ-ի, արքայից արքան մեղմացրեց Իրանի քրիստոնյա բնակչության և նրա հոգևորականության նկատմամբ սահմանված ճնշող ռեժիմը, դադարեցրեց քրիստոնյաների հալածանքները և թույլ տվեց ազատ արձակել կրոնական հալածանքների զոհ դարձած քրիստոնյա բանտարկյալներին, վերականգնել ավերված եկեղեցիները և այլն: 410 թ. Սելևկիայում գումարվեց քրիստոնեական ժողով, որը նշանակալիորեն ամրապնդեց քրիստոնյա բնակչության ու հոգևորականության դիրքերը:

Սակայն նման վիճակը չէր կարող երկար տևել: Ազնվականներն ու քրմերը սկսեցին իրենց դժգոհությունն արտահայտել արքայից արքայի վարած քաղաքականության նկատմամբ: Նրանք իրենց պետության մեջ գոյություն ունեցող քրիստոնեական եկեղեցիները համարում էին հակապետական կազմակերպություններ՝ գտնելով, որ դրանք անհրաժեշտ է վերացնել: Ուստի իր թագավորության վերջում Հազկերտ Ա-ն որոշ վերանայման ենթարկեց քրիստոնյաների նկատմամբ իր քաղաքականությունը, քանի որ սկսեց վախենալ մոգերի աճող ատելությունից, որոնք հայտարարվում էին Սասանյանների իշխանության հենարան: Բացի այդ, պետա-

կան մտածողության կերպն այնպիսին էր, որ քրիստոնյաների կապը Բյուզանդիայի հետ ընկալվում էր որպես վտանգ Սասանյանների շահերին:

Ի դեպ, Սասանյանների հակաքրիստոնեական քաղաքականությունը Հայաստանում տարվում էր ոչ միայն նրա համար, որ եկեղեցին դիտվում էր իբրև Սասանյանների թշնամի՝ Բյուզանդիային բարեկամ, այլև նրա համար, որ այն մի կազմակերպություն էր, որն Արշակունիների անկումից հետո հանդիսանում էր երկրի կենտրոնաձիգ ուժերը պահպանող զորեղ գործոն: Վերջապես, եկեղեցին ժողովրդի հոգում արթնացնում էր ազգային շահերի ընդհանրության գիտակցությունը՝ հակադրելով իր լեզուն, գիրն ու գրականությունը և առհասարակ մշակույթը թե՛ Սասանյան Պարսկաստանին և թե՛ Բյուզանդական կայսրությանը:

420 թ. Հազկերտ Ա-ի մահվանից հետո (ամենայն հավանականությամբ, նա խեղդամահ արվեց), ազնվականությունն ու արքունիքը աշխատում էին թույլ չտալ, որ նրա որդիներից մեկն ու մեկը նստի գահի վրա: Ուստի նրանց կողմից գահի թեկնածու առաջադրվեց Սասանյանների կողմնական ճյուղի մի ներկայացուցիչ: Տեղեկանալով այդ մասին՝ Հազկերտի որդի Շապուհը, որը Հայաստանի թագավորն էր, անմիջապես վերադարձավ մայրաքաղաք: Սակայն նրա դեմ ազնվականության կողմից կազմակերպվեց դավադրություն, և նա սպանվեց: Նրա եղբայր Վռամը (Վահրամ) ապրում էր Արսբիայում՝ Խիրայի թագավոր Մունդար իբն Նումանի արքունիքում: Ըստ երևույթին, նա այնտեղ աքսորված էր, գուցե և ինչ-որ գործով ուղարկված իր հոր՝ Հազկերտ Ա-ի կողմից: Մունդարի կողմից իրեն տրամադրված արաբական զորքի օգնությամբ Վռամը ստացավ հայրական գահը: Նրա թագադրությունը տեղի ունեցավ 420 թ.: Նոր արքայից արքան ընդունեց Վարահրան կամ Վռամ (Վահրամ) Ե Գոռ (420-438) գահակալական անունը:

Պետական գործերի վարման մեջ այս շահնշահը մեծ մասնակցություն չէր ցուցաբերում՝ իրեն նվիրելով որսորդության, հաճույքների և այլն: Նա կամովին (գուցե և նախնական պայմանավորվածությամբ) իշխանության սանձերը զիջել էր ազնվականությանը և հատկապես ամենազոր առաջին նախարար Վուզուրգ-Ֆրամադհար Միհրներսեհին, որը սերել էր Սպանդիատ բարձրատոհմիկ ընտանիքից: Պատմականորեն այս աննշան գործիչը՝ Վահրամ Գոռը, ճակատագրի տարօրինակ քմահաճույքով ձեռք բերեց անմահություն: Նա դարձավ միջնադարյան արևելյան գրականության բազմաթիվ էպիկական ստեղծագործությունների գլխավոր հերոսը: Նրա անունը հիշատակվում է Ֆիրդուսիի «Շահնամեում», Նիզամիի «Յոթ գեղեցկուհիներում» («Հաֆթ փայքար»),

Ամիր Խոսրով Դեհկանի «Ութ դրախտային այգիներում» («Հաշտ Բեհեշտ»), Ալիշեր Նավոյիի «Յոթ մոլորակներում» («Սաբայի սայյարա»): Վահրամ Գոռի անվանը կարելի է հանդիպել նաև Օմար Խայամի և Սաադիի ստեղծագործություններում:

Դառնալով պետության մեջ դրության տերը՝ ազնվականությունը սկսեց վարել իր շահերին համապատասխանող քաղաքականություն: Ուստի պատահական չէ, որ Վռամ Ե-ի օրոք քրիստոնյաների նկատմամբ հալածանքները վերսկսվեցին: Սրված դրությունը ստիպեց Իրանի նեստորական եպիսկոպոսներին, գումարել ընդհանրական մի ժողով, որի ժամանակ նրանք բաժանվեցին բյուզանդական կողմնորոշում ունեցող հունական ուղղափառությունից և հրաժարվեցին ամեն տեսակի կապերից բյուզանդական եկեղեցու հետ:

421 թ. օգոստոսին Հյուսիսային Միջագետքում պարսիկները պարտություն կրեցին, սակայն Բյուզանդիան չկարողացավ զարգացնել իր հաջողությունը, և 422 թ. կողմերի միջև կնքվեց խաղաղության պայմանագիր, որով արքայից արքան խոստանում էր պետության մեջ ապրող քրիստոնյաներին ազատություն տալ, իսկ կայսրը պարտավորվում էր ամեն տարի որոշ գումար հատկացնել Ալանաց դռների ամրացման ու պաշտպանության համար: Այսպիսով՝ վաղեմի մրցակիցները՝ Բյուզանդական կայսրությունը և Սասանյան Պարսկաստանը, ստիպված էին միավորվել ընդդեմ քոչվորական ցեղերի, որոնք հյուսիսից ասպատակ էին սփռում երկու պետությունների տարածքներում:

Վռամ Ե-ի կառավարման շրջանում ավելի հաճախակի դարձան նաև երկրի հյուսիս-արևելքից (Միջին Ասիայից) այն քոչվորական ցեղերի հարձակումները Իրանի տարածքի վրա, որոնց հետագայում արաբական աղբյուրներն անվանում էին թյուրքեր: Մերվի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Վռամ Ե-ն ջախջախեց հոներ ընդհանուր անունը կրող, սակայն այդ ժամանակ Խիոնիթ-էֆտալիթներ կոչված ցեղերին, որի հետևանքով Սասանյան տերության սահմանը միառժամանակ հասավ մինչև Ամու-Դարյա գետը: Հաղթանակած Վռամ Ե-ն անձամբ սպանեց այդ ցեղերի առաջնորդ խաղանին, ավարի մատնեց նրա ունեցվածքը և, որպես պատերազմական ավար, վերցրեց նրա կանանոցը: Արշավանքից վերադարձի ժամանակ շահնշահն այցելեց Գանձակի կրակապաշտների հայտնի տաճար Շիզե, որին նա նվիրեց իր ավարից զանազան թանկարժեք իրեր, իսկ խաղանի այրուն (Հանշու խաթուն) դարձրեց այդ սրբավայրի սպասավոր: Վերոհիշյալ հաղթանակից հետո շահնշահի եղբայր Ներսեհը նշանակվեց Խորասանի կառավարիչ և ստացավ «մարզպան-ի քուշան» տիտղոսը:

Վռամ Ե-ի օրոք 428 թ. Հայաստանը բաժանվեց Սասանյան Իրանի և Բյուզանդիայի միջև: Հայաստանի արևելյան մասը վերածվեց Սասանյան Իրանի նահանգի:

Նյութական մշակույթի ստեղծագործությունները և գրական հուշարձանները մեզ են հասցրել Վռամի՝ այդ համարձակ որսորդի, խնջույքների և արվեստների սիրահարի, այդ կնամոլ տղամարդու կերպարը:

438 թ. Վահրամ Ե-ին փոխարինեց նրա որդի Հազկերտ Բ-ն (438-457 թթ.): Սրա կառավարման շրջանը նշանավորվում է Բյուզանդիայի հետ նոր պատերազմով, որն ավարտվեց 442 թ.՝ չհանգեցնելով տարածքային որևէ փոփոխությունների: Միաժամանակ Թալեղանի և Բալխի շրջաններում Հազկերտը վերսկսեց ռազմական գործողությունները քյուրքալեզու հոների դեմ: Համառ մարտերն ավարտվեցին քոչվորների պարտությամբ: Շահը այնտեղ հիմնեց «Շահրեսթան-ե Յեզդիգերտ» ամրոցը:

Իրանի նոր արքայից արքայի օրոք Սասանյան պետության քրիստոնյա ժողովուրդների վիճակն ավելի է վատթարանում: Նա հրամայում է Միջին Ասիայի քյուրքալեզու ցեղերի, ինչպես նաև Կովկասյան լեռնաշղթայից Իրան ներխուժող հոների դեմ պատերազմելու համար զորք հավաքել ենթակա քրիստոնյա երկրներից և առաջին հերթին Հայաստանից: Այդ քաղաքականության նպատակը նաև Հայաստանը, Վիրքը և Աղվանքը տեղական ռազմական ուժերից զրկելն էր: Տիզբոնի արքունիքի գաղտնի նպատակն էր այդ երկրները թողնել անպաշտպան և նրանց նկատմամբ իրագործել իրենց նվաճողական ծրագրերը:

Հազկերտ Բ-ն միաժամանակ վճռական քայլեր կատարեց Հայաստանում իր պետության դիրքերն ամրապնդելու և այնտեղ զրադաշտականությունը պարտադրելու ուղղությամբ. Տիզբոնում Հայաստանը դիտվում էր որպես Մերձավոր Արևելքի քրիստոնեության միջնաբերդը: Սասանյան արքունիքին մշտապես անհանգստություն էր պատճառում նաև Հայաստանի և Բյուզանդիայի միջև դաշինքի հավանականությունը: Տիզբոնում ենթադրում էին, որ Հայաստանը հնազանդեցնելուց հետո այլևս դժվարություն չէր ներկայացնի Վրաստանը և Աղվանքը նույնպես ենթարկել Իրանին:

Հազկերտ Բ-ն Հայաստան ուղարկեց իր ներկայացուցիչ Դենշապուհին, որին հանձնարարված էր անցկացնել աշխարհագիր: Դա աննախընթաց կերպով ծանրացրեց հայ ժողովրդի վրա դրված հարկային լուծը: Այդ քաղաքականության գաղտնի նպատակն էր՝ տնտեսական ճնշում գործադրելով ստիպել ազգաբնակչությանը՝ ընդունել զրադաշտականությունը, որի հետևողները կա՛մ թեթևանում էին հարկերի ծանրությունից, կա՛մ իսպառ ազատվում այդ անտանելի բեռից:

Կասկածից վեր է, որ Սասանյանների կրոնական և հարկային քաղաքականության վերջնական նպատակը Հայաստանը պարսկական մի նահանգի վերածելն էր: Ինչպես հայտնի է, հայ ժողովուրդը դրան 451 թ. պատասխանեց բացահայտ ապստամբությամբ:

Հիրավի, Ավարայրի հերոսամարտը օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի պայքարի հերոսական դրվագներից մեկն էր:

457 թ. Հազկերտ Բ-ի երկու որդիները՝ Որմիզդն ու Պերոզը, գահի համար պայքար ծավալեցին իրենց հորը դեմ: Գահակալական այդ կռիվները տևեցին երկու տարի և ավարտվեցին Պերոզի հաղթանակով, որին հաջողվեց իր կողմը գրավել աքսորից ազատված, սակայն Պարսկաստանում զինվորական ծառայության մեջ գտնվող հայ նախարարներին: Այդ արյունոտ պայքարի ընթացքում սպանվեց նաև Որմիզդը, որից հետո 459 թ. գահ բարձրացավ Պերոզը (459-484): Վերջինս իր գահակալության սկզբնական շրջանում Հայաստանի նկատմամբ վարում էր համեմատաբար մեղմ քաղաքականություն, աշխատելով շահել նախարարների համակրական վերաբերմունքը: Սակայն շուտով արքայից արքան գնաց տրորված ուղիներով և շարունակեց իր հոր՝ Հազկերտ Բ-ի քաղաքականությունը՝ ձգտելով Հայաստանը դարձնել սովորական պարսկական մարզպանություն: Հայաստանի տարբեր մասերում կրկին վերսկսվեցին հալածանքները:

Սասանյան պետության ծանր վիճակը, որի պատճառը տևական երաշտն էր և ներքին հուզումները, էլ ավելի էր խորանում արտաքին թշնամիների ներխուժման սպառնալիքով: Երկրի արևելքում հատկապես ակտիվացել էին կիդարիթների և հեփթաղների ցեղերը: Հեփթաղներին կամ էֆտալիթներին երբեմն անվանում էին նաև «սպիտակ հոներ»: Սրանք գրավել էին Մերվի օազիսն ու մինչև Հերաթ ընկած տարածքները և ստեղծել ցեղային մի հսկայական միություն: Պերոզը հրամայեց ամրացնել սահմանամերձ զորամասերը և կառուցել երեք ամրություններ: Պայքարը հեփթաղների դեմ ընդունեց անվերջանալի պատերազմի բնույթ: Երկու անգամ Պերոզը գերի ընկավ, և միայն մեծ փրկագին ստանալով՝ հեփթաղներն ազատ արձակեցին նրան: Նա ստիպված էր նույնիսկ իր գահաժառանգ Կավադին պատանդ թողնել նրանց մոտ: Նվաստացուցիչ պայմանագրով պարսիկները ստիպված եղան Խորասանի կեսը զիջել քոչվորներին:

Կովկասում ևս Պերոզը ստիպված էր ծանր պայքար մղել հոների դեմ: Այստեղ ևս մի շարք հանգուցային վայրերում նա կառուցեց ամրություններ:

Մինչ Սասանյանների զորքերը կենտրոնացված էին տերության

արևելյան ծայրագավառներում, Այսրկովկասում՝ Հայաստանում, Վրաստանում (Քարթլի) և Աղվանքում 482 թ. ազնվականության կողմից բարձրացվեց հակասասանյան ապստամբություն, որն աջակցություն գտավ նաև բնակչության հասարակ խավերի շրջանում: Այն տևեց մինչև 484 թ.՝ զգալիորեն թուլացնելով պարսկական պետության հիմքերը: Այդ ապստամբության հետևանքով ձախողվեց Հայաստանը Իրանի մի սովորական մարզ դարձնելու Պերոզի քաղաքականությունը:

Դեպի արևելք հեփթաղների դեմ կազմակերպված արշավանքներից մեկի ժամանակ իրանական բանակը գլխովին ջախջախվեց, և Պերոզը սպանվեց (484 թ.) մարտի դաշտում: Մերձավորներին նույնիսկ չհաջողվեց գտնել նրա մարմինը: Արքայից արքայի ողջ հարեմը, որի մեջ էր նաև նրա աղջիկներից մեկը, պետական գանձարանը և անթիվ գերիներ անցան թշնամու ձեռքը: Իրանի վրա դրվեցին ծանր հարկեր, որոնք Սասանյանները ստիպված էին վճարել ընդհուպ մինչև VI դարի կեսերը:

Գահ բարձրացած Պերոզի եղբայր՝ հեզ ու խաղաղասեր Վաղարշին (484-488) բաժին էին ընկել պարտված ու թուլացած բանակը, պատերազմներից ավերված երկիրն ու դատարկ գանձարանը: Արքայից արքան ստիպված է լինում 484 թ. Նվարսակ գյուղում Հայաստանի հետ կնքել հաշտության պայմանագիր՝ երաշխավորելով նրա ինքնուրույնությունը, խոստանալով ոչ մի ոտնձգություն չկատարել հայերի քրիստոնեական (միաբնակ) դավանանքի նկատմամբ, անխախտ պահպանել Հայաստանում հաստատված նախարարական կարգերը և հարգել տոհմիկ ազնվականների իրավունքներն ու արտոնությունները:

Չորս տարվա գահակալությունից հետո Վաղարշը գահընկեց արվեց և կուրացվեց արքունի ազնվականության կողմից: Հոների օգնությամբ Կավադ Ա-ն (488-531), որը էֆթալիտական ջոկատների հետ եկել էր գերությունից, բարձրացվեց գահ: Սակայն այդ օգնությունն ուներ իր գինը, մինչդեռ գանձարանը դատարկ էր, և ոչինչ չկար հոներին վճարելու համար: Կավադը ստիպված էր Բյուզանդիայից պահանջել հերթական ոսկին, որ կայսրությունը վճարում էր պարսիկներին՝ կովկասյան լեռնանցքների պաշտպանության համար: Սակայն նոր գահ բարձրացած Անաստաս կայսրը կտրականապես մերժեց այդ պահանջը: Կավադի դրությունը էլ ավելի բարդացավ իրանական ազնվականների և զրադաշտական մոգերի բարձրացրած ապստամբության հետևանքով, որոնք ձգտում էին գահընկեց անել նրան:

Օգտվելով Իրանում ստեղծված այդ անկայուն վիճակից՝ տանուտիրական Հայաստանը հրաժարվեց ճանաչել Սասանյանների գերիշխանու-

թյունը: Տիզբոնի դեմ ապստամբություն բարձրացրին նաև Միջագետքի արաբական ցեղերը: Բուն մայրաքաղաքում արքայից արքայի կյանքին սպառնում էր մեծագույն վտանգ, ուստի նա 496 թ. փախուստի դիմեց և կրկին ապավինեց հոներին՝ ապաստան գտնելով նրանց թագավոր Ախշունվարի մոտ: Ամուսնանալով նրա աղջկա հետ՝ օտարերկրյա բանակի հետ շահը կրկին վերադարձավ Իրան և 498 թ. վերստին տիրացավ գահին: Նրա բացակայության ժամանակ գահ բարձրացած Կավադի եղբայրը՝ Ջամաշպը, հրաժարվեց պայքարից և փախուստի դիմեց: Ամենավտանգավոր հակառակորդներին Կավադը մահապատժի ենթարկեց, մյուսների հետ կարողացավ համաձայնության գալ: 502-504 թթ. տեղի ունեցավ իրա-նա-բյուզանդական պատերազմ, որն ավարտվեց 506 թ. պայմանագրի կնքմամբ: Բյուզանդական կայսրությունը համաձայնվեց մի շարք զիջումներ կատարել Իրանին: Մասնավորապես նա տալիս էր իր համաձայնությունը՝ պարսիկներին վճարել ոսկի կովկասյան լեռնանցքները պաշտպանելու համար: Այդ հաշտությունը պայմանավորված էր նրանով, որ հյուսիսային սահմաններում երկու պետությունների համար էլ ստեղծվել էին ծանր պայմաններ հոների մշտական ներխուժումների պատճառով:

Կավադը մի շարք միջոցառումներ ձեռնարկեց Իրանի կովկասյան սահմանները ամրապնդելու ուղղությամբ: Մասնավորապես նա ամրացրեց Պարթավ քաղաքը, որը ստացավ Փերոզ-Կավադ անունը: Հետագայում արաբների մոտ այն հայտնի էր Բերդաա անունով:

Ռազմական գործողությունների բնագավառում ունեցած հաջողությունները (502-506 թթ. պատերազմը Բյուզանդիայի հետ, արշավանքը դեպի Հայաստան) նպաստեցին գանձարանի համալրմանը, բանակի վիճակի կայունացմանը և առհասարակ Կավադի հեղինակության ամրապնդմանը:

527 թ. Իրանի և Բյուզանդիայի միջև բռնկվեց նոր պատերազմ, որի պատճառը Կավադի պահանջն էր, որ վրացիները ընդունեն զրադաշտականությունը: Վրացական Գուրգեն թագավորն օգնության խնդրանքով դիմեց Բյուզանդիային, որը չմերժեց այն:

531 թ. Կավադը ծանր հիվանդացավ և մահացավ: Նա իր կտակով իշխանությունը փոխանցում էր Խոսրովին, որն ընդունեց Խոսրով Ա Անուշիրվան (531-579) գահակալական անունը: Այս արքայից արքան, որը կառավարեց երկար տարիներ (48 տարի), պարսիկների պատկերացմամբ Իրանի մինչիսլամական շրջանի տիրակալներից մեծագույնն էր: Կիսառասպելական ավանդույթը նրան ներկայացնում է որպես արդար մի թագավոր: Սակայն միջնադարի իրականության պայմաններում թագավորի «արդարությունը» լոկ հարաբերական մի հասկացություն էր: Իրականում

Խոսրով Ա-ն ևս ահարկու մի բռնակալ էր, որը չնչին առիթներով մահապատժի էր ենթարկում նույնիսկ իր մերձավորներին ու պետության բարձրաստիճան գործիչներին: Նրա հրամանով սպանվեցին իր երկու հարազատ եղբայրները, իսկ ապա նաև մյուս ազգականները: Սակայն նա խնայեց իր որդի Անոշզադին, որը հանդիսանում էր Խուզիստանում VI դ. 50-ական թթ. բռնկված ապստամբության կազմակերպիչն ու ղեկավարը: Խոսրով Ա-ն չէր խորշում նաև պատերազմների ու ապստամբությունների ժամանակ անխնա սրի քաշել խաղաղ բնակչությանը. մի հանգամանք, որը սովորական երևույթ էր միջնադարում:

Սակայն, այդ բոլորով հանդերձ, Խոսրով Անուշիրվանի օրոք Սասանյան պետությունն ապրում էր իր նոր վերելքի ժամանակաշրջանը: Ավելին՝ Սասանյանների պետությունը հասավ իր ծաղկման գագաթնակետին: Երկրի ներքին կյանքում իրագործվեցին ռազմավարչական և հարկային վերափոխություններ, որոնք նպաստեցին տնտեսական կյանքի աշխուժացմանը: Ողջ Սասանյան պետության տարածքում իրագործվեց աշխարհագիր, որի ընթացքում գրանցվեցին բոլոր ցանքատարածությունները, այգիները, ինչպես նաև անասունների գլխաքանակը: Կարգավորվեց նաև հողահարկը: Սահմանվեց հողահարկի կայուն չափեր: Ընդ որում՝ հարկերը սկսեցին գանձվել ոչ միայն բնամթերքով, այլև դրամով (արծաթով):

Խոսրով Ա-ն, սակայն, չի վարել կրոնական հանդուրժողականության քաղաքականություն: Նա կրոնական հալածանքներ է սկսում քրիստոնյաների դեմ բուն Պարսկաստանում, մարզպանական Հայաստանում, Աղվանքում և Վրաստանում: Անշուշտ, սխալ կլիներ նրա այդ քաղաքականությունը բացատրել շահնշահի կրոնական մոլեռանդության հակումներով: Հարցը քաղաքական էր: Պարսից արքունիքում քրիստոնեական կրոնին պատկանելությունը շարունակում էր ընկալվել իբրև Բյուզանդիայի հետ դաշնակցություն:

Խոսրովն աշխատում էր նաև թուլացնել զրադաշտական մոգերի, ինչպես նաև ազնվականության այն մասի տնտեսական ու քաղաքական դիրքերը, որոնք աշխատում էին սահմանափակել թագավորի իշխանությունը:

Միաժամանակ Խոսրով Անուշիրվանը վարում էր եռանդուն արտաքին քաղաքականություն: Գահ բարձրանալուց հետո նա ստիպված էր Բյուզանդիայի հետ կնքել ոչ ձեռնտու հաշտության պայմանագիր, սակայն 540 թ. նա վերսկսեց պատերազմական գործողությունները: Շահնշահի զորքերն անցան Սիրիայով և գրավելով Անտիոքը՝ կողոպուտի մատնեցին այն: Շահը Իրան քշեց մեծ թվով գերիներ: Այնուհետև պա-

տերազմը տեղափոխվեց Կովկաս, և մի քանի տարի շարունակ երկու պետությունները վիճարկում էին իրենց հավակնությունները Լազիստանի նկատմամբ: 561 թ. Խոսրով Ա-ի և Հուստինիանոս Ա կայսեր միջև կնքվում է «հավերժական խաղաղություն», որը երկու կայսրությունների միջև պահպանում էր հին սահմանները: Սակայն տասը տարուց հետո այն կրկին խախտվում է, որովհետև Հուստինոս Բ կայսրը որոշում է այլևս պարսիկներին չվճարել 561 թ. պայմանագրով նախատեսված ամենամյա 500 լիտր ոսկին, որը հատկացվում էր Սասանյաններին Բյուզանդիան Կովկասի քոչվորական ցեղերի ներխուժումներից պաշտպանելու համար:

Իրանի և Բյուզանդիայի միջև մրցակցությունը չէր սահմանափակվում լոկ Անդրկովկասով ու Սև ծովի ավազանով: Նրանց շահերը բախվում էին նաև Հարավային Արաբիայում, որտեղից անցնում էր համեմունքների հին ճանապարհը, որը Եմենը կապում էր Միջերկրածովյան երկրների հետ: Դրանով Բյուզանդիա էին տեղափոխվում հնդկական համեմունքներ, փղոսկր, ներկեր ու կտորեղեն, խունկ, ոսկի և աֆրիկյան ստրուկներ: Այդ առևտրական ճանապարհի նկատմամբ տիրապետություն ձեռք բերելու նպատակով մրցակցող տերություններն օգտագործում էին Եմենի քրիստոնյա և հուդայական համայնքների միջև գոյություն ունեցող թշնամանքը: Առաջինը կողմնորոշվում էր դեպի Բյուզանդիան, երկրորդը՝ դեպի Իրանը: 598-599 թթ. տևական պայքարից հետո Եմենը միացվեց Սասանյան Իրանին, և մինչև 628 թ. այդ երկիրը կառավարում էին շահնշահի կողմից նշանակված մարզպանները: Սիրիա տանող առևտրական քարավանային ճանապարհի գլխավոր մասը, այսպիսով, հայտնվեց պարսիկների ձեռքերում: Դա նշանակալիորեն ամրապնդեց Իրանի դիրքերը Հնդկական օվկիանոսի ավազանում, ուր նրա համար ճանապարհ բացվեց Պարսից ծոցի վրայով: Այժմ պարսիկների համար հասանելի դարձավ նաև Կարմիր ծովը:

Հուստինոս Բ-ի կառավարման շրջանում իր տրամադրության տակ չունենալով անհրաժեշտ քանակությամբ զինված ուժեր Սասանյան Իրանի գրոհը արևելքից կասեցնելու համար՝ բյուզանդական կայսրությունը դիմեց իր փորձված դիվանագիտությանը՝ աշխատելով պարսիկների դեմ հարդարել հարձակողական մի ընդհանուր ճակատ: Այդ ծրագիրը նախատեսում էր կազմակերպել միաժամանակյա հարձակում Իրանի վրա արևմուտքից՝ Բյուզանդիայի կողմից և արևելքից՝ Միջին Ասիայի քոչվորների կողմից: Կայսրությունը ծրագրել էր նաև հայերի, վրացիների ու աղվանների ազատագրական շարժումը ևս ծառայեցնել

իր քաղաքականությանը:

Սակայն Բյուզանդիայի հետ պատերազմն ընթանում էր փոփոխակի հաջողությամբ՝ վճռական հաղթանակ չբերելով կողմերից որևէ մեկին, իսկ 563 և 567 թթ. միջև ընկած շրջանում Խոսրով Ա-ին հաջողվեց Արևելքում հեփթաղ-էֆտալիթների հզորությանը կործանիչ հարված հասցնել պարսիկների և թյուրքերի համատեղ ուժերով և հետ նվաճել նախկինում կորցրած տարածքները: Թյուրքական ցեղերը, որոնք VI դ. կեսերին միավորվել էին Սիլջիբու (Իստեմի) խաղանի կողմից, արևելքից հուժկու հարվածներ էին հասցնում հեփթաղներին: Վերջիններիս ջախջախումից հետո Իրանի անմիջական հարևաններ դարձան թյուրքերը: Խաղանաթի և Իրանի միջև սահման դարձավ Օքս (Ամու-Դարյա) գետը:

Երիտասարդ թյուրքական տերությունն իր վրա գրավեց Բյուզանդիայի ուշադրությունը, որը ձգտում էր նրա հետ հաստատել ուղղակի կապ, որպեսզի, շրջանցելով Իրանը, նրա տարածքի վրայով ստանա քանկարժեք չինական ապրանքը՝ մետաքսը:

Գլխավոր առևտրական ճանապարհների վրա տիրապետություն ձեռք բերելու ձգտումը 571 թ. հանգեցրեց նոր իրանա-բյուզանդական պատերազմի: Նրա բռնկման գլխավոր պատճառ հանդիսացավ այն, որ Խոսրով Ա-ն մեղադրեց Բյուզանդիային, որ նա թյուրքերին հրահրում է ասպատակ սփռելու իրանական տարածքներում:

Սասանյան զորքերը հուժկու հարձակում գործեցին բյուզանդական Վերին Միջագետքի վրա: Մելիտինեի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հաջողությունը բյուզանդացիների կողմն էր, սակայն այնուհետև նրանք ծանր պարտություն կրեցին: Ռազմական գործողությունների թատերաբեմ դարձավ նաև Անդրկովկասը: Այստեղ 572 թ. հայ ժողովուրդն ապստամբություն բարձրացրեց Սասանյան Իրանի դեմ: 573 թ. այդ ապստամբությունը ճնշելու նպատակով 20.000- անոց զորքով Հայաստան է արշավում նշանավոր զորավար Վահրամ (Բահրամ, որոշ աղբյուրներում նաև Միհրան) Չուբինը (Միհրևանդակ): Սակայն հայ-բյուզանդական միացյալ զորքը, որին օգնում էին նաև վրացիները, աբխազները և աղվաններն, պարտության է մատնում պարսիկներին: Ուստի 576 թ. պարսից զորքերի գլուխ անցած, այս անգամ դեպի Հայաստան արշավանքը գլխավորում է ինքը՝ արքայից արքա Խոսրով Ա Անուշիրվանը: Պարսիկները 577 թ. նորից գրավում են մայրզպանական ողջ Հայաստանը: Սկսվեցին հաշտության բանակցություններ, որոնք, սակայն, շահնշահի մահվան պատճառով իրենց ավարտին չհասան: Այդ պատերազմը ավարտվեց միայն Խոսրով Ա-ի թոռ Խոսրով Բ-ի կառավարման շրջանում:

2. ԻՐԱՆԸ ՎԵՐՋԻՆ ՍԱՍԱՆՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ

579 թ. Խոսրով Ա Անուշիրվանը կնքեց իր մահկանացուն: Նրա մահվանից հետո արքայից արքայի գահը ժառանգեց նրա որդի Որմիզդ Դ-ն (579-590): Վերջինիս թագավորության շրջանը նշանավորվեց անընդհատ պատերազմներով Բյուզանդիայի հետ, ռազմական արշավանքներով խազարների և թյուրքերի դեմ, համառ պայքարով ազնվականության ու զրադաշտական հոգևորականության հետ և զիջումներով քաղաքային քրիստոնեական բնակչությանը: Սակայն եթե Խոսրով Ա-ի օրոք կենտրոնական իշխանության նկատմամբ անհնազանդության դեպքերը եզակի էին, ապա Որմիզդ Դ-ի թագավորության տարիներին դրանք դարձան սովորական:

Ընդհանրապես, Որմիզդի մասին մեզ հասած տեղեկությունները խիստ հակասական են: Հայտնի է, օրինակ, որ իր կառավարման շրջանում նա փորձեր էր անում ինչ-որ չափով թեթևացնել գյուղացիության վիճակը: Թերևս հենց այդ պատճառով ազնվականության մի մասն ատում էր նրան, որին շահնշահը պատասխանում էր անագորույն դաժանությամբ: Նրա հետապնդումներից, մահապատիժների և գույքի բռնագրավումների ձևով, զերծ չմնացին նույնիսկ մոգերն ու մոգպետները: Ի պատասխան նրանց տրտունջների ու բողոքների, որ շահնշահը զիջումներ է անում քաղաքային քրիստոնյա բնակչությանը, դրանով իսկ թուլացնելով զրադաշտական կրոնի և նրա քրմերի դիրքերը՝ Որմիզդը սիրում էր պատասխանել, թե ինչպես որ իր գահը չի կարող կանգուն մնալ միայն առջևի երկու ոտքերի վրա, այնպես էլ թագավորությունը պետք է հենարան ունենա ոչ միայն ի դեմս զրադաշտականների, այլև մյուս կրոնների ներկայացուցիչների:

Բնութագրելով Որմիզդ Դ արքային՝ պատմիչ Թաբարին գրում էր. «Նա ամեն ինչով հետաքրքրվում էր, և ոչ մի բան չէր վրիպում նրա աչքերից»: Նույնպիսի դրական կարծիք նրա մասին հայտնում է նաև Ֆիրդուսին իր «Շահնամե»-ում:

Որմիզդ Դ-ի կառավարման շրջանում Բյուզանդիայի դեմ պատերազմը փոփոխակի հաջողությամբ շարունակվում էր: Բյուզանդական փորձառու դիվանագիտությանն այս անգամ ևս հաջողվեց Իրանի դեմ

կազմակերպել մի ամբողջ դաշինություն, որի նպատակն էր երկաթե աքցանի մեջ սեղմել Իրանը: Ի կատարումն այդ ծրագրի՝ Կովկասի հյուսիսից հեղեղի նման դեպի Իրան շարժվեցին խազարները իրենց խաղանի գլխավորությամբ, արևելքից՝ Ամու-Դարյայի կողմերից, թյուրքերը, իրենց կողմից հնազանդեցված հեփթաղ-էֆթալիքների զորամասերի հետ համատեղ՝ ծավալելով հուժկու գրոհ Իրանի արևելյան սահմաններ ի նկատմամբ, իսկ հարավից, Սիրիական անապատի կողմից, հարձակում ծավալեցին արաբ-բեդվինների ռազմաշունչ ջոկատները:

Թվում էր, թե Իրանի դրությունն օրհասական է: Սակայն Տիզբոնը կարողացավ արագ մոբիլիզացնել ոչ միայն իր ռազմական ուժերը, այլև բազմաքայլ պարսկական դիվանագիտությունը: Նախ՝ խոշոր գումարներ պտտացնելու շնորհիվ հաջողվեց կասեցնել արաբների արշավանքը և հետ ուղարկել այդ ռազմաշունչ ցեղերին դեպի իրենց անապատները: Այնուհետև արագ երթով Սասանյանների ուժերը նետվեցին դեպի արևելք, առավել վտանգավոր հակառակորդի՝ թյուրքերի դեմ, որոնք Շավա (Շաբա) խաղանի հրամանատարությամբ գործող 300-հազարանոց մի խառնիճաղանջ զորք էին հանել պարսիկների դեմ: Իրանական բանակի հրամանատար Վահրամ (Բահրամ) Չուբինը Բալխի մոտ կանգնեցրեց խաղանի զորքերի առաջխաղացումը, իսկ ապա 589 թ. աշնանը և 590 թ. ձմռանը այդ տաղանդավոր զորավարին հաջողվեց գլխովին ջախջախել թյուրքերին ու ցրիվ տալ նրանց վիթխարի բանակը:

Սակայն, իրերի բերումով, այդ փայլուն հաղթանակն իրանական պետության համար ունենալու էր միանգամայն տխուր հետևանքներ: Բանն այն է, որ թյուրքերին հաղթելուց հետո Վահրամ Չուբինը ձեռք բերեց հարուստ ավար, որի միայն փոքր մասը ուղարկեց Տիզբոն՝ արքայից արքային: Չուբինի ձեռք բերած հարստությունն ու փառքը նրան գայթակղեցրին նույնիսկ հավակնություններ ներկայացնելու պարսից գահի նկատմամբ: Դա ստիպեց Որմիզդ Դ-ին վիրավորական մի նամակով պաշտոնազրկել Վահրամին զորքերի գլխավոր հրամանատարի պաշտոնից: Ի պատասխան դրա՝ վերջինս, հենվելով իրեն հավատարիմ բանակի վրա, բարձրացրեց ապստամբություն: Նրան միացան նաև մայրաքաղաքից իր դեմ ուղարկված զորքերը, ինչպես նաև դեյլեմիթների ջոկատները, իրանական ազնվականության բազմաթիվ ներկայացուցիչներ և այլն:

Հենց մայրաքաղաքում ևս ազնվականության կողմից կազմակերպվեց դավադրություն Որմիզդ Դ արքայի կնոջ եղբայրների՝ Վինդոյի և Վստամի (Գուստախմի) գլխավորությամբ, որին մասնակից էր նաև շահի որդին՝ Խոսրովը: Դավադրությունը, սակայն, բացահայտվում է, և հոր

զայրույթից ու անխուսափելի մահվանից փրկվելու հույսով Խոսրովը փախչում է Եղեսիա: Որմիզդ Դ-ն ստիպված է լինում խռովարարների դեմ պայքարել երկու ճակատով: 590 թ. պալատական ազնվականությունը բարձրացնում է խռովություն և զնդանից ազատում ձերբակալված Վնդոյին և Վստամին: Վերջիններս կրկին ձեռնամուխ են լինում նոր դավադրության: Կազմակերպվում է պալատական հեղաշրջում, որի ընթացքում դավադիրները գահընկեց են անում Որմիզդ Դ արքային և գահ բարձրացնում որդուն՝ Խոսրովին, որը Խոսրով Բ Փարվեզ («հաղթական») անունով (590-628) ստանձնում է Սասանյանների գահը: Ի դեպ, սրա կերպարը պարսկալեզու գրականության մեջ անմահացել է շնորհիվ «Խոսրով և Շիրին» էպոսի: Մայրաքաղաքում Խոսրովի համաձայնությամբ Վնդոն և Վստամը մտնում են գահընկեց արված Որմիզդ Դ-ի ննջասենյակը և խեղդամահ անում նրան: Դրանով Խոսրովը դարձավ Սասանյան առաջին տիրակալը, որը համաձայնվեց հարազատ հոր սպանությանը: Նոր շահնշահը դեռևս շատ երիտասարդ էր և հնազանդորեն կատարում էր իր ազդեցիկ ազգականների բոլոր կարգադրությունները: Նա բանակ է կազմում և շարժվում Վահրամ Չուբինի դեմ: Մծբինի մոտ տեղի ունեցած ճակատամարտում արքայից արքան պարտություն է կրում խռովարար զորավարից և իր կանանոցի հետ երեսուն թիկնապահների ուղեկցությամբ փախչում է Բյուզանդիա: Վահրամ Չուբինը մտնում է Տիզբոն և 590 թ. մարտի 9-ին իրեն հռչակում պարսից արքա: Սակայն նա թագավորեց ընդամենը մեկ տարի: Սասանյան գահի երկու հավակնորդները դիմում են Մորիկ կայսեր օգնությանը: Վերջինս գերադասում է օգնել օրինական արքային՝ Խոսրով Բ-ին, որին տրամադրում է բյուզանդական, հայկական, վրացական և աղվանական զորամասեր: Միաժամանակ Մորիկը Խոսրովին կնության է տալիս իր աղջկան՝ Մարիային: Այդ օգնության դիմաց խորամանկ բյուզանդացին պահանջեց խոշոր տարածքային զիջումներ. Քարթլիի մի մասը մինչև Թիֆլիս, Հայաստանի մի մասը մինչև Վանա լիճ և որոշ տարածքներ Միջագետքում:

Ատրպատականում՝ Դաճաք կոչված հովտում, տեղի է ունենում Խոսրով Բ-ի կողմնակից 60-հազարանոց բանակի հանդիպումը Վահրամ Չուբինի 40-հազարանոց բանակի հետ: Այդ արյունահեղ ճակատամարտում վերջինս գլխովին ջախջախվում է, իսկ ինքը՝ Չուբինը, փախուստի է դիմում դեպի արևելք՝ Ամու-Դարյա գետից այն կողմ, և ապաստան գտնում թյուրքերի խաղանի մոտ: Այստեղ Վահրամը խաղանի միջոցներով ձեռնամուխ է լինում նոր զորքերի հավաքմանը՝ Իրանում գահի համար պայքարի մեջ մտնելու նպատակով, սակայն չի հասցնում գործն իր

ավարտին հասցնել: Սասանյան դիվանագիտության սաղրանքների հետևանքով հենց այնտեղ էլ սպանվում է խաղանի կնոջ հրամանով: Մեկ այլ վարկածով՝ նրան սպանում է շահնշահի կողմից ուղարկված մարդասպանը: Այդ առթիվ Տիզբոնում կազմակերպվում են շքեղ հանդիսություններ և ընդհուպ մինչև Սասանյան պետության անկումը այդ օրն ամեն տարի նշվում էր որպես պաշտոնական տոն:

Խոսրով Փարվեզը, վերահաստատվելով գահին, ճոխ պարգևներով վարձահատույց է լինում բյուզանդական և հայկական զորքերին: 591 թ. կնքվում է հաշտության պայմանագիր, որով վերջ է տրվում պարսկաբյուզանդական 20-ամյա պատերազմին:

Բյուզանդիայի հետ խաղաղ հարաբերությունների շրջանը (591-604 թթ.) լցված էր Իրանում ներքին լարված պայքարով: Խոսրով Բ-ն որոշեց ազատվել իր անհանգիստ ու իշխանատենչ ազգականների «հովանավորությունից»: Վնդոն, որ ծառայում էր արքունիքում, մահապատժի ենթարկվեց, իսկ նրա եղբայր Վստամը, որը Խորասանի փոխարքան էր, բարձրացրեց ապստամբություն՝ հույս ունենալով այդ ճանապարհով իրենից հեռացնել մահվան վտանգը: Այն ճնշվեց միայն 595 թ. վերջին: Վստամի դաշնակիցներից մեկը՝ քուշանների թագավոր Փարիովքը, ամենայն հավանականությամբ արքայից արքայի մարդկանց հորդորի կամ տված կաշառքի հետևանքով, հրամայեց դարանամուտ լինել և սպանել նրան, որն իրագործվելուց հետո տիրացավ Վստամի ողջ հարստությանը: Կորցնելով իր առաջնորդին՝ Վստամի բանակը ցրվեց: Սակայն դրանով անհանգիստ տարրերի ելույթները գահի դեմ չավարտվեցին: Դրանք մերթ ընդունում էին թաքնված, մերթ բացահայտ պայքարի բնույթ:

Չէին վերացել հակասությունները նաև պարսկա-բյուզանդական առերևույթ բարեկամական հարաբերությունների հետևում: Խոսրովը դժգոհ էր, որ հարկադրված Բյուզանդիային էր զիջել Հայաստանի մեծ մասը և զրկվել նրա հարուստ եկամուտներից, ինչպես նաև հայկական նախարարական զինական ուժերն օգտագործելու հնարավորությունից:

Բյուզանդական Մավրիկիոս կայսեր սպանությունից հետո (590 թ.), օգտվելով նոր կայսր, նախկին ցենտուրիոն Փոկասի դեմ բռնկած ապստամբություններից, Խոսրով Փարվեզը, որը վաղուց պատրվակ էր փնտրում Կոստանդնուպոլսի դեմ «փոքր հաղթական պատերազմի համար», հանդես եկավ սպանված միապետի վրեժխնդրի դերում: 604 թ., օգտվելով այն բանից, որ Բյուզանդիան գործնականում գտնվում էր քաղաքացիական պատերազմի շեմին, Խոսրովը հրամայեց իր բանակին՝ անցնել հարձակման:

Մինչ այդ Եդեսիայում ապստամբություն էր բարձրացրել բյուզանդական բանակի հայազգի անվանի զորահրամանատար Ներսեսը և օգնության խնդրանքով դիմել Իրանին: Դա ևս ջուր էր լցնում Իրանի ջրաղացին, և նա չհապաղեց օգտվել դրանից:

Այսպիսով՝ 604 թ. սկսվեց ամենախոշոր պարսկա-բյուզանդական պատերազմը, որը տևեց քառորդ դար և ավարտվեց 628 թ.՝ Խոսրովի մահվանից հետո: Նրա առաջին էտապում (604 - 622 թթ.) հաջողությունը ուղեկցում էր պարսիկներին. նրանք նվաճեցին ողջ Միջագետքը՝ Եդեսիա, Ամիդ, Թելա, Ռաշ-Այն, Մարդե և Անտիոք քաղաքներով հարդերձ, Ասորիքը, Պաղեստինը (614 թ. գարնանը գրավվեց Երուսաղեմը, որտեղ, որպես ավար, պարսիկներին անցավ քրիստոնեության սրբություններից մեկը՝ խաչափայտը, որի վրա խաչված է եղել Հիսուս Քրիստոսը: Երուսաղեմում հրեաները կազմակերպեցին քրիստոնյաների ահավոր կոտորած՝ վրեժ լուծելով քաղաքի իշխանությունների կողմից իրենց նկատմամբ իրագործվող հալածանքների համար), Փյունիկիան, Կապադովկիան և Հայաստանի մեծ մասը: Հաստատվելով սիրիա-փյունիկյան ծովափին՝ Խոսրովի զորքերը պատրաստվում էին գրավել Բյուզանդիայի հարուստ հացառատ շրջանը՝ Եգիպտոսը: 618 թ. պարսիկները ներխուժեցին Եգիպտոս: Ընդ որում՝ նրանք այդ երկրի գլխավոր նավահանգիստ Ալեքսանդրիան գրավեցին խորամանկությամբ. նստեցին փոքր նավակներ և վաղ առավոտյան՝ աղջամուղջին, երբ դեռ լույսը չէր բացվել, խառնվեցին եգիպտական ձկնորսական նավակների հետ և մուտք գործեցին քաղաք: Դրանից հետո Եգիպտոսը մոտ տասը տարի մնաց պարսիկների իշխանության ներքո: 622 թ. պարսիկներին հաջողվեց գրավել նաև Փոքր Ասիայի Անկիրա քաղաքը և Ռոդոս կղզին: Երեք անգամ նրանք կարողացան մոտենալ նույնիսկ Կոստանդնուպոլսին: Կայսրության համար ստեղծված ծանր վիճակը միաժամանակ հնարավորություն չէր տալիս բյուզանդացիներին կազմակերպել արդյունավետ պաշտպանություն և անցնել հակահարձակման:

Ընդ-որում կարևոր է նշել, որ եթե նախկինում պարսկական զորքերի գործողությունները սահմանափակվում էին գրավված տարածքների ավերմամբ ու ամայացմամբ, ապա այժմ ասպատակ սփռելու մարտավարությունն իր տեղը զիջել էր նահանգներն աստիճանաբար գրավելու և դրանք Իրանին միացնելու քաղաքականությանը: Պատերազմի երկրորդ էտապում (622-628 թթ.) ռազմական բախտը հաճախ ուղեկցում էր բյուզանդացիներին: Աղբյուրները հաղորդում են, որ պարսկական նվաճումներն ուղեկցվում էին բնակչության զանգվածային կոտորածներով,

գերեվարությամբ ու ստրկության քշելով: Նվաճված երկրների հաշվին Իրանը հարստանում էր, և ռազմագերի-ստրուկների ձրի աշխատուժն արգասավորում էր նրա տնտեսությունը: VIIդ. սկզբին Սասանյան Իրանը վեր էր ածվել մի վիթխարի կայսրության: Նրա տարածքը կազմում էր 2,9 միլիոն քառ. կմ, իսկ բնակչությունը՝ մոտ 30 միլիոն մարդ:

Հատկանշական է, որ այդ պատերազմների ժամանակ Խոսրով Փարվեզը հրամայել էր հովանավորել միաբնակ (մոնոֆիզիթ) ուղղության քրիստոնեության հետևորդներին, որոնք կրոնա-քաղաքական սուր առճակատման մեջ էին գտնվում բյուզանդական պաշտոնական եկեղեցու հետևորդների՝ երկաբնակների (դիոֆիզիթ) հետ: Այդ քաղաքականության հետևանքով տեղի էր ունենում միաբնակ քրիստոնեության աճ, հիմնականում ի հաշիվ նեստորականության:

Հետաքրքիր է նշել, որ Խոսրով Փարվեզի հրամանով 615/616 թ. Տիգրոնում գումարվում է նվաճված երկրների քրիստոնեական եկեղեցիների ժողով՝ դավանաբանական վեճերը «կարգավորելու» նշանաբանով: Հայաստանից ժողովին, ըստ Սեբեոսի, ներկա էին Կոմիտաս Մամիկոնյան և Մատթեոս Ամատունի եպիսկոպոսները: Իսկ Խոսրով Փարվեզի կողմից ժողովում վերահսկողներ էին նշանակված Սմբատ Բագրատունին ու արքունի բժշկապետ Գաբրիելը: Այդ ժողովի հանրագումարում Խոսրովը հրաման է արձակում. «Եթե ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կալցին»:

Ժողովի այս որոշումը բխում էր Սասանյանների քաղաքական շահերից, որովհետև հայոց եկեղեցին մերժողական դիրք էր գրավել բյուզանդականի հանդեպ:

Անկախ դրանից, արքայից արքայի հրամանով քրիստոնյաներին թույլատրվեց վերականգնել իրենց եկեղեցիներն ու մատուռները, պահպանել իրենց կրոնական ծեսերն ու տոները, արքունիքում վարել պաշտոններ, ծառայել որպես բժիշկներ ու թարգմանիչներ: Առհասարակ Խոսրով Բ-ի ժամանակաշրջանը նշանավորվեց Իրանի պաշտոնական շրջանների կրոնական մեծ հանդուրժողականությամբ: Այդ բոլորի հիմքում ընկած էր քրիստոնյաներին Բյուզանդական կայսրության ազդեցությունից ձերբազատելու քաղաքական շահը: Պետք է խոստովանել, որ պարսկական դիվանագիտությունը փայլուն կերպով օգտագործեց միաբնակ և երկաբնակ ուղղություններին հետևող եկեղեցիների դավանաբանական անհաշտ վեճերն ու առճակատումը:

Սակայն միաժամանակ պետք է նշել, որ պարսկա-բյուզանդական պատերազմի առաջին էտապում ամեն ինչ չէ, որ դասավորվում էր Իրա-

նի օգտին: Այսպես՝ 602 թ. Խոսրով Փարվեզը վերացրեց Խիրայի վասալական արաբական թագավորության ինքնավարությունը՝ մահապատժի ենթարկված թագավոր Նումանի փոխարեն այնտեղ փոխարքա նշանակելով շահական պահակազորում ծառայող մի արաբի: Դրա հետևանքը հանդիսացավ այն, որ Ջու-Քարեյում տեղի ունեցած ճակատամարտում (604 կամ 605թ.) արաբ բեդվինները չարաչար պարտության մատնեցին շահնշահի զորքերին: Բացի այդ, Իրանին չէր հաջողվում վճռական հաղթանակ ձեռք բերելու միջոցով գեթ ժամանակավորապես ընկճել երկրի արևելյան երկրամասերն ասպատակող ռազմաշունչ ցեղերին: Ի դեպ, դրանց դեմ կռիվը գլխավորելու գործը պարսից արքան հանձնարարել էր հայ զորավարներից Սմբատ Բագրատունուն, որը հայոց այրուձիի գլուխ անցած՝ պարսից արևելյան սահմանները պաշտպանում էր ահարկու թշնամուց: Ի գնահատումն նրա այդ ծառայությունների՝ Խոսրով Փարվեզը Սմբատ Բագրատունուն տվեց իր հոր՝ Որմիզդ Դ-ի կամարը և սուսերը՝ միաժամանակ նրան շնորհելով «Խոսրով Շում» տիտղոս-պատվանունը:

Տևական կռիվներից հետո Սմբատին հաջողվում է պարտության մատնել քոչվորներին և նրանց զորքը հետ մղել մինչև Բալխ:

Այսպիսով, միաժամանակ ապահովելով իր թիկունքն արևելքում, պարսից արքան հնարավորություն ստացավ իր ռազմական ուժերը կենտրոնացնել արևմտյան ուղղությամբ: Բյուզանդական կայսր Հերակլ Ա-ն (Փոկասը՝ որպես բռնատիրող, 610 թ. գահընկեց էր արվել և մահապատժի ենթարկվել) իրար հետևից դեսպաններ էր ուղարկում Խոսրով Բ-ի մոտ, խնդրելով կնքել հաշտություն: Սակայն շահնշահը, կախված՝ տվյալ պահին իր տրամադրությունից կամ ճակատամարտերի դաշտում եղած իրավիճակից, կա՛մ հրամայում էր գազանաբար տանջամահ անել դեսպաններին և կա՛մ նվաստացնելով հետ ուղարկել նրանց: Իսկ իրեն՝ կայսրին, Սեբեոսի վկայությամբ, գրեց հետևյալը. «Եթե Քրիստոսը չկարողացավ իրեն փրկել հրեաներից, որոնք նրան սպանեցին խաչի վրա, ապա ինչպե՞ս նա կարող է փրկել քեզ: Եթե դու նույնիսկ ընկնես ծովի անդունդը, ես կմեկնեմ իմ ձեռքը և կհանեմ քեզ, և դու ինձ կտեսնես այնպիսին, ինչպես չէիր ցանկանա տեսնել»:

618/619 թ. Սասանյան զորքերը հասել էին Բոսֆորի ափերը և գրավել Քաղկեդոնը: Պարսկական նավատորմը փորձում էր գրոհով վերցնել Բյուզանդիոնը (Կոստանդնուպոլիս): Քաղաքի անկումը համարելով անխուսափելի՝ Հերակլ կայսրը որոշում է մայրաքաղաքը տեղափոխել Կարթագեն: Սակայն Կոստանդնուպոլսի բնակչության, ինչպես նաև Սերգիոս պատրիարքի դիմադրության պատճառով նա հրաժարվում է

իր այդ մտադրությունից: Օգտագործելով «հունական կրակը»՝ բյուզանդացիներին հաջողվում է ծանր պարտության մատնել պարսիկների նավատորմը և ստիպել նրան հեռանալու մայրաքաղաքի մատույցներից:

Հաղթահարելով իրեն համակած վհատությունը՝ Հերակլ կայսրը դրսևորում է թագավորին վայել կամք ու հաստատակամություն: Նա կարողանում է վերստեղծել մարտունակ բանակ՝ հիմնականում հենվելով Փոքր Ասիայից հավաքագրված ռազմական ստորաբաժանումների վրա: Միաժամանակ մեծ գումար վճարելով՝ կայսրը զինադադար է կնքում ավարների հետ, իսկ խազարների հետ նույնիսկ հաջողվում է մտնել ռազմական դաշինքի մեջ: Կայսրը չի խորշում նույնիսկ հանուն կայսրության փրկության օգտագործել բյուզանդական եկեղեցու հարուստ գանձերը: Նախապատրաստական լայն ծավալի աշխատանքներ իրականացնելուց հետո Հերակլ կայսրը խաչափայտը Տիզբոն տանելու հանգամանքն օգտագործում է Իրանի դեմ պատերազմ ծավալելու համար:

Պարսկաբյուզանդական պատերազմի երկրորդ էտապում (622-628 թթ.) Բյուզանդիային հաջողվեց վերադարձնել բոլոր կորցրած տարածքները, այդ թվում նաև Անդրկովկասը: Բյուզանդական զորքերն ընդհուպ մոտեցան Տիզբոնին և թալանեցին ու կրակի ճարակ դարձրին պարսկական մայրաքաղաքի արվարձանները: Սասանյան բանակը կրեց աղետալի պարտություն: Խաչափայտը կրկին վերադարձվեց Երուսաղեմ:

Ինչպես պատահում է նման դեպքերում, պարսից մեծամեծները նեստորական հոգևորականների մի մասի աջակցությամբ 628 թ. փետրվարի 28-ին կազմակերպեցին հեղաշրջում և գահընկեց անելով Խոսրով Բ-Փարվեզին՝ գահ բարձրացրին նրա ավագ որդի Կավադ Շերոյեին, որին հայրը զրկել էր գահաժառանգման իրավունքից հօգուտ իր սիրեցյալ կնոջ՝ Շիրինի որդի Մարդանշահի: Կավադ Շերոյեի համաձայնությամբ՝ Խոսրով Բ-ի ամենամոտիկ «մերձավորները» 628 թ. փետրվարի 29-ին սպանեցին նրան: Առհասարակ գոյություն ունի այն կարծիքը, որ Արևելքի պատմության մեջ Կավադը ամենաարյունախում տիրակալներից մեկն է եղել: Գահի համար պայքարի ընթացքում նա կյանքից զրկեց նաև իր տասնյոթ եղբայրներին:

Խոսրով Բ-ն Կավադին թողել էր տանուլ տրված պատերազմը և երկրի քայքայված տնտեսությունը: Ուստի նոր արքայից արքան շտապում է հաշտություն խնդրել Հերակլից, որն ընդունում է այդ առաջարկը և սկսված կարճատև բանակցություններից հետո 628 թ. կողմերի միջև կնքվում է հերթական «հավերժական խաղաղությունը»:

Կավադ Շերոյեի գահակալությունը տևեց շատ կարճ: Գահակալե-

լով ընդամենը ութ ամիս ճա մահացավ ժանտախտի համաճարակից (628 թ. հոկտեմբերին)։ Գահ բարձրացվեց նրա մանկահասակ որդին՝ Արդաշիր Գ-ն։ Սակայն տերության փաստացի կառավարիչ դարձավ խնամակալը՝ Մեհ Ազերգուշնասպը, որը Խոսրով Բ-ի օրոք հանդիսանում էր «արքայական սեղանի գլխավորը»։ Դժգոհ լինելով, որ գահ է բարձրացել Կավադի որդին՝ կայսրության արևմտյան սահմանների զորքերի հրամանատար շահիվարազը (սա հատուկ անուն չէ, այլ զորահրամանատարի տիտղոս) բարձրացրեց ապստամբություն։ Նա պաշարեց Տիզբոնը և 630 թ. ապրիլին գրավելով այն՝ մահապատժի ենթարկեց Արդաշիրին և արքայական թագը դրեց իր գլխին։ Սակայն վազուրգները չցանկացան գահի վրա տեսնել ոչ արքայական ծագում ունեցող մեկին և քառասուն օր անց սպանեցին նրան։ Բռնատիրողի դեմ այդ դավադրության կազմակերպիչը նրա կինն էր, Խոսրով Բ Փարվեզի դուստր Բուրանդուխտը, որի մայրը բյուզանդական Մորիկ (Մավրիկոս) կայսեր աղջիկն էր, իշխանուհի Մարիան։ Բուրանդուխտը 630 թ. հունիսին բարձրացավ Սասանյան գահի վրա, որն աննախընթաց երևույթ էր այն առումով, որ այդ կայսրության գահն առաջին անգամ զբաղեցնում էր կին գործիչ։ Նրա գահակալությունը, սակայն, շատ կարճ տևեց, մինչև 631 թ. հոկտեմբերը։ Այդ կարճ ժամանակամիջոցի ընթացքում նա իրեն դրսևորեց որպես արդար թագուհի։ Ժամանակակիցների վկայությամբ՝ նա՝ որպես քրիստոնյա մոր դուստր, օգտվում էր կայսրության քրիստոնյա բնակչության աջակցությունից։

Ի վերջո, Բուրանդուխտը ևս կործանվեց։ Նրան խեղդամահ արեց զորահրամանատար Պերոզ (Փիրուզ) Գուշնասպդեհը, որը, ըստ որոշ տվյալների, չէր սերում Սասանյանների տոհմից։ Նա իրեն հայտարարեց շահնշահ և հասցրեց կառավարել ընդամենը մեկ-երկու ամիս (մինչև 631 թ. դեկտեմբերը), երբ նրան գահընկեց արեցին և ենթարկեցին մահապատժի։

631 թ. դեկտեմբերին գահ բարձրացավ Խոսրով Բ Փարվեզի մյուս դուստրը՝ Ազարմիդուխտը։ Պարսիկ և արաբ տարեգիրները նրա մասին գրում են որպես եռանդուն, իր հորն արժանի ժառանգորդ միապետի։ Նրա հրամանով սպանում են Խորասանի ազդեցիկ զորահրամանատար Ֆարրուխ Հորմիզդին, որն ուներ Զալի Զարու մականունը։ Այդ սպանության դրդապատճառը պատված է անորոշության մշուշով։ Ենթադրվում է, որ նա մասնակցություն է ունեցել պալատական հեղաշրջման փորձի։ Հավաստի հայտնի է, սակայն, որ Ֆարրուխ Հորմիզդի որդին՝ Ռուստամը, հոր վրեժը լուծելու համար, մեծաթիվ զորքերի գլուխ անցած, շարժվում է դեպի Ազարմիդուխտի նստավայրը, գահընկեց է անում նրան և

հրամայում կուրացնել (մեկ այլ վարկածի համաձայն՝ թունավորել):

Ազարմիդուխտի մահվանից հետո վազուրգները գահ են բարձրացնում Արդաշիր Ա Պապականի ժառանգորդներից մեկին՝ Խոսրով Միհրգուշնասպին: Նա կարողացավ գահը պահպանել ընդամենը մի քանի օր, որից հետո գահընկեց արվեց և սպանվեց:

Սասանյան տերության նախավերջին շահնշահ դարձավ Խոսրով Բ-ի մանկահասակ որդի Ֆարրուխզադ Խոսրովը, որը կառավարեց ընդամենը մի քանի ամիս: 632 թ. նա կա՛մ գահընկեց է արվել, կա՛մ սպանվել:

Սասանյան կայսրության վերջին շահնշահ դարձավ Հազկերտ Գ-ն (632-651): Թեև նա փորձեց նորից համախմբել պետությունը, սակայն թուլացած ու տրոհված երբեմնի հզոր կայսրությունն այլևս ի վիճակի չէր դիմագրավելու արաբական ապագա արշավանքի հուժկու ճնշմանը: Հազկերտ Գ-ն վերջին արքան էր, որի օրոք տեղի ունեցավ Սասանյան պետության համար ահավոր աղետը. նա տանուլ տվեց երիտասարդ արաբական խալիֆաթի հետ ծայր առած մենամարտը:

3. ՍԱՍԱՆՅԱՆ ԻՐԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԿՐՈՆԸ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրանում Սասանյան դինաստիայի շահնշահերի կառավարման շրջանը հանդիսանում էր իրանական պետականության ու մշակույթի մի փայլուն դարաշրջան:

Սասանյան պետության գլուխ էր կանգնած շահնշահը, որը սերում էր Սասանյանների թագավորող դինաստիայից: Շահնշահերը, աքեմենյան թագավորների նման, ունեին հսկայական իշխանություն: Սակայն պետության կառավարման գործում նշանակալից դեր էին խաղում նաև տոհմիկ ազնվականությունը, զորապետներն ու քրմերը: Կարևորագույն պետական որոշումները կայացվում էին պալատական երևելիների խորհրդում: Բարձրագույն դասը էքսկլյուզիվ առումով կազմված էր համարյա բացառապես պարսիկներից, որոնք իրենց անվանում էին «նամդարան» («ազնվագույններ»):

Քանի որ գահաժառանգման խստիվ սահմանված օրենքներ գոյություն չունեին, ուստի շահը ձգտում էր իր ժառանգորդին ընտրել դեռևս

իր կենդանության օրոք: Պետության կառավարման գործում շահնշահի մերձավորագույն օգնականներն ու խորհրդատուներն էին «վազուրգ-ֆրամադարը» (առաջին նախարար), զրադաշտական հոգևորականության գլուխ հանդիսացող մոբեդան-մոբեդը, գլխավոր հրամանատար «երան-սպահբեդը», գրագիրների ղեկավար «դաբիրբեդը», հարկատու դասի ղեկավար «վաստրիոշան-սալարը», արհեստավորների գլխավոր «խութուշխբադը»: Սակայն ամենաբարձրագույն պաշտոնական անձ էր համարվում «փիթիախշը», որը պարսաղիր կարգով պետք է լիներ արքայական ընտանիքի անդամ և կատարում էր շահնշահի տեղակալի պաշտոն՝ մայրաքաղաքից նրա բացակայության դեպքում:

Սասանյան պետության հիմքը զարգացած դասային համակարգն էր, որի գլուխ կանգնած էր շահնշահը: Հասարակությունը խստորեն բաժանվում էր մի շարք դասերի: Դա սրբագործված էր կրոնի կողմից, և նրա պահպանմանը հետևում էր պետական ապարատը: Դասերի ներսում գոյություն ուներ բարդ աստիճանակարգային բաժանում: Հին Իրանին հայտնի էր ազատ մարդկանց երեք դաս՝ քրմեր, ռազմիկներ և հողագործներ: IV դարում կար չորս դաս՝ քրմեր, ռազմիկներ, գրագիրներ, հարկատու դաս (հողագործներ, անասնապահներ, արհեստավորներ և այլն): Քրմերի բարձրագույն կարգն էին կազմում մոբեդները: Նրանք վերահսկում էին մոգերի (զրադաշտական հոգևորականության) գործունեությունը նահանգներում ու գավառներում: Արքայից հետո մոբեդան-մոբեդը գրավում էր առաջին տեղը: Մոբեդան-մոբեդի իշխանությունը հաճախ մրցակցում էր շահնշահի իշխանության հետ, ուստի առանձին ուժեղ ու եռանդուն արքաները աշխատում էին թուլացնել քրմերի դիրքը և մոբեդների իշխանությունը: Ի դեպ, միայն Հազկերտ Ա-ին հաջողվեց որոշ չափով սահմանափակել ազնվականության ու քրմերի չափից ավելի մեծ հավակնություններն: Աղբյուրները հաղորդում են արյունոտ երկպառակությունների և պալատական հեղաշրջումների մասին, որոնք ալեկոծում էին Սասանյան Իրանը և խախտում նրա կյանքի բնականոն ընթացքը:

Քրմերի դասի մեջ էին մտնում նաև մի շարք այլ անձինք, որոնք կապված էին կուլտի հետ. դատավորները, տաճարների սպասավորները և ուսուցիչները: Սրանք բոլորը կազմում էին առաջին դասը:

Ռազմիկների դասը, որը ըստ հերթականության, կազմում էր երկրորդը, կոչվում էր նաև «ազատների» կամ «առաքինիների» դաս: Այս դասի ներսում գոյություն ուներ բազմաստիճան հիերարխիա, որի գագաթին գտնվում էր շահնշահը, որից հետո գալիս էր երան-սպահբեդը, այնու-

հետև՝ շահրդարները, որոնք հանդիսանում էին խոշոր նահանգների կիսանկախ կառավարիչներ և կրում էին տվյալ նահանգի շահի տիտղոս: Սրանք նշանակվում էին թագավորական ընտանիքի անդամներից կամ տեղական «թագավորիկներից»: Նահանգների կառավարիչները V դարից սկսած կոչվում էին մարզպաններ: Այնուհետև գալիս էին մարզերի կուսակալները, որոնք ունեին ոչ արքայական ծագում, բարձրագույն պալատականները և առավել երևելի ու հին իրանական տոհմերի ղեկավարները՝ «վիսպուհրները», որոնք օգտվում էին ժառանգական իրավունքից և պետության մեջ ունեին մեծ կշիռ: Նրանց էին պատկանում կարևորագույն զինվորական ու պետական պաշտոնները վարելու ժառանգական իրավունքները: Ամենաերևելի յոթ տոհմերից՝ Կարեն, Սուրեն, Միհրան, Արշակ, Սպանդիատ և այլն, հետո ըստ աստիճանակարգի գալիս էին «վուզուրգները» («մեծերը»), որոնք պատասխանատու պաշտոններ էին զբաղեցնում ինչպես բանակում, այնպես էլ պետական ապարատի մեջ:

Զինվորական դասի մեջ մտնող ամենաբազմամարդ խումբը «ազատներն» էին, որոնցից ձևավորվում էր իրանական բանակի կորիզը՝ հեծելազորը: Զինվորական ծառայությունը միայն ազատների արտոնությունը չէր. «ազնվականական» հեծելազորի հետ միաժամանակ գոյություն ուներ մեկ այլ հեծելազոր ևս, որը բաղկացած էր զինվորական պարտավորություններ ունեցող, սակայն ավելի ցածր դասի պատկանող մարդկանցից, որոնք ծառայության դիմաց ստանում էին դրամական ռոճիկ, իսկ երբեմն նաև հողակտորներ: Շահնշահները շահագրգռված էին այդ զորամասերի ավելացման մեջ, քանի որ դրանց ռազմիկներն իրենց դիրքով ամբողջապես պարտական էին շահնշահին և հետևաբար, կատարելապես նվիրված էին նրան:

Սասանյան պետության մեջ բյուրոկրատական ապարատի զարգացումը հանգեցրեց նոր դասի երևան գալուն: Դա գրագիրների (դաբիրների) դասն էր, որը կարելի է անվանել նաև պետական ծառայողների դաս, քանի որ նրա մեջ էին մտնում մի քանի սպասարկող մասնագիտությունների ներկայացուցիչներ, որոնք բարձր էին կանգնած ռազմիկներից. դրանք էին բժիշկները, երաժիշտները, աշխարհիկ գիտություններով զբաղվողները, դիվանագիտական փաստաթղթեր ու նամակներ կազմողները, թագավորների կենսագիրները, գուշակները, թարգմանիչները և այլն:

Չորրորդ հարկատու դասի մեջ էին մտնում մնացած բոլոր ազատները, թեև պաշտոնական բաժանմամբ այդ դասը տրոհվում էր երեք խմբերի՝ հողագործներ, արհեստավորներ և վաճառականներ: Առաջին երեք

դասերը համարվում էին արտոնյալ և ներկայացնում էին հողատերերի դասակարգը, իսկ չորրորդ դասի մեծամասնությունը բաղկացած էր կախյալ հողագործներից: Հարկատու դասի վրա էր ընկած հարկերի և տուրքերի ողջ ծանրությունը:

Սասանյանների շրջանում Իրանում առկա էին ազատ գյուղական համայնքներ: Գոյություն է ունեցել նաև ստրկատիրություն, որն աստիճանաբար կորցրել է իր առաջատար դերը, որովհետև ստրուկները ձեռք էին բերում մասնակի ազատություն և ստանում էին հողակտորներ:

Դասերը ներփակ սոցիալական խմբեր էին, որոնց պատկանելությունը որոշվում էր հոր կարգավիճակով: Ստորին դասի ներկայացուցիչները չէին կարող նույնիսկ անշարժ գույք գնել բարձր դասերի պատկանող անձանցից, թեև հակառակը չէր արգելվում: Անցումը դեպի ավելի բարձր դասի հնարավոր էր միայն արքայի և տոհմիկ ազնվականության ներկայացուցիչների հատուկ որոշմամբ:

Դասային համակարգից դուրս գտնվում էին ստրուկները, որոնց իրավունակությունը չափազանց սահմանափակ էր և ոչ զրադաշտականները: Վերջիններս ոչ միայն գտնվում էին հասարակության ստորին աստիճանի վրա, այլ ուղղակի պատկանում էին իրավական այլ համակարգի:

Խոշոր գյուղերի կամ գյուղախմբերի գլուխ էին կանգնած «ազատները», որոնց արաբական աղբյուրներն անվանում են դեհկաններ («գյուղապետներ»): Նրանք հողատերեր էին և գյուղատերեր էին և ներկայացնում էին տեղական իշխանությունը: Նրանց վրա էր դրված իրենց ենթակայության տակ գտնվող վայրերի հարկահավաքման գործը, իսկ պատերազմների ժամանակ շահի առաջին իսկ պահանջով իրենց ձիով ու սպառազինությամբ պետք է ներկայանային նրան՝ պատերազմ մեկնելու համար: Հենց դեհկաններից էր կազմված սասանյան բանակի ծանր հեծելազորի կորիզը: Նրանք հիշեցնում են արևմտաեվրոպական ասպետներին:

Պետության եկամտի հիմնական մասը գոյանում էր հողային հարկից: Բարձր դասերին պատկանող անձինք ազատվում էին հարկերից: Այլադավանները սովորական հարկերից բացի վճարում էին նաև գլխահարկ, որի չափսերը կախված էին հարկատուի ունևորության աստիճանից:

Սասանյան պետության քաղաքական կառուցվածքի առանձնահատկությունը վասալական տիրույթների առկայությունն էր և փոխարքաների անկախության բարձր աստիճանը, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր զորքերը: Անհրաժեշտության դեպքում դրանք միանում էին մշտական շահնշահական բանակին: Ո՛չ սասանյան բանակի ընդհանուր թվաքանակի, ո՛չ նրա կորիզի թվաքանակի մասին մենք տեղեկություններ չունենք:

VI դ. կեսերին Սասանյան պետությունը հետզհետե դառնում էր կենտրոնացված մի զորեղ միապետություն: Այն բաժանված էր չորս խոշոր նահանգների՝ «քուստակների», որոնք ավելի շուտ խոշոր տարածաշրջանային միավորներ էին: Դրանք էին. Խորասան, Ազերբայգան, Նիմրուզ (որի մեջ ավելի ուշ մտցվեց նաև Եմենը) և Հորաբարան (Միջագետք): Իրանին անցած Հայաստանի արևելյան մասը, իբրև մարզպանություն, մտնում էր հյուսիսային քուստակի մեջ: Նահանգները կառավարում էին սփահբեդները, որոնք իրենց ձեռքերում կենտրոնացնում էին քաղաքացիական և զինվորական իշխանությունը: Միջագետքի նահանգում էր գտնվում պետության մայրաքաղաքը՝ Տիզբոնը (իրանական անվանումը՝ Բեհ-Արդաշիր): Այնտեղ էր Սասանյանների գլխավոր պալատը՝ ընդունելությունների համար հսկայական սյունազարդ դահլիճով: Արաբներն այդ պալատը համարում էին աշխարհի հրաշալիքներից մեկը: Վերոհիշյալ չորս նահանգները բաժանվում էին 18 սատրապությունների, որոնք կառավարում էին անձամբ թագավորի կողմից նշանակված սատրապները կամ մարզպանները:

Սասանյան շրջանում Միջագետքի և ընդհանրապես Իրանի արևմտյան շրջանների հին քաղաքները, ինչպես նաև Հայաստանի, Վրաստանի քաղաքները, հանդիսանում էին արհեստների և առևտրի աչքի ընկնող կենտրոններ: Նրանցում ապրում էին ամենատարբեր ժողովուրդներ՝ պարսիկներ, սիրիացիներ, հայեր, հրեաներ և այլն: Տարածված երևույթ էր տարբեր երկրներից արհեստավորների բռնի տեղափոխումը այդ քաղաքները: Սասանյան Իրանում արհեստները սերտորեն կապված էին արտաքին առևտրի հետ: Այդ լայնածավալ պետությունն իր հարմար աշխարհագրական դիրքի շնորհիվ համաշխարհային առևտրի մեջ խաղում էր նշանակալից դեր: Սասանյան Իրանը հանդես էր գալիս միջնորդի դերում մի կողմից՝ Չինաստանի ու Հնդկաստանի, մյուս կողմից՝ Բյուզանդիայի և Միջերկրածովյան ավազանի երկրների միջև առևտրական փոխանակության մեջ: Քարավանային և ծովային տարանցիկ առևտրի գլխավոր ապրանքը մետաքսն էր: «Մետաքսի մեծ ճանապարհի» վրայով Չինաստանից բերվում էր մեծ քանակությամբ հում և մշակված մետաքս, որը մեծ պահանջարկ ուներ Սասանյան Իրանի ազնվականական շրջաններում: Չինաստանից ու Հնդկաստանից բերվող հում մետաքսից մեծ վարպետության տեր պարսիկ ջուլհակները գործում էին բարձրարժեք կտորներ, որոնք մեծ սպառում էին գտնում նաև Բյուզանդիայում:

Իրանական արտահանման ապրանքներ էին հանդիսանում նաև բամբակյա և բրդյա կտորները, թանկարժեք գորգերը, ոսկյա և արծաթյա

գեղարվեստական սպասքը և այլն: Այնպիսի խոշոր քաղաքներում, ինչպիսիք էին Տիզբոնը, Հունդիշապուհը, Համադանը, Մտահիրը, Նիշապուրը և Ռեյը, աշխատում էին մեծ թվով արհեստավորներ, որոնք ապրանքներ էին արտադրում ներքին և արտաքին շուկայի համար:

Պարսիկները աշխույժ ծովային առևտուր ունեին Հնդկաստանի, Ցեյլոն կղզու, Հարավային Արաբիայի և Եթովպիայի հետ: Այդ երկրներից նրանք ներմուծում էին համեմունքներ, թանկարժեք քարեր, ոսկի և այլ բազմապիսի ապրանքներ: Առևտուրը և արհեստները հանդիսանում էին Սասանյան պետության հարստության աղբյուրներից մեկը:

Սասանյան պետության պաշտոնական կրոնը զրադաշտականությունն էր, որը փոխարինելու եկավ պարթևական կրոնական սինկրետիզմին: Որպես պետական կրոն՝ զրադաշտականությունն օգտվում էր հատուկ հովանավորությունից: Արտաշիր Ա-ի թագավորության շրջանից սկսած՝ մի նոր դարաշրջան բացվեց զրադաշտական վարդապետության զարգացման համար: Խիստ հետաքրքիր է Արտաշիր Ա-ի տված հետևյալ խորհուրդը իր որդի Շապուհին, որը մեջ է բերված արաբ պատմագիր և աշխարհագիր Մասուդիի մոտ. «Իմացի՛ր, իմ որդի՛ որ կրոնը և թագավորությունը երկու քույրեր են, որոնցից և ոչ մեկը չի կարող գոյություն ունենալ առանց մյուսի, որովհետև կրոնը թագավորության հիմքն է, իսկ թագավորությունը կրոնի պաշտպանն է»:

Արտաշիր Ա-ի կրոնական ջերմեռանդության դրսևորում է հանդիսանում նաև այն, որ նրա հատած դրամների վրա մի կողմում դրոշմված է թագավորի պատկերը, իսկ հակառակ կողմում՝ զոհասեղանը:

Զրադաշտականության բնորոշ գիծը, ինչպես նշվել է վերևում, դուալիզմն է, այսինքն՝ այն պատկերացումը, որ աշխարհում գոյություն ունի հավերժական պայքար երկու սկիզբների՝ լուսավորի, բարու, որը ներկայացնում է հին պարսիկների գերագույն աստվածությունը՝ Ահուրա Մազդա աստվածը և մթի, չարի՝ Ահրիմանի միջև:

Նախքան աշխարհի արարչագործությունը կամ «ի սկզբանե» գոյություն ունեին հավիտենական լույսը և հավիտենական խավարը: Հավիտենական լույսի տերն էր Ահուրա Մազդան, հավիտենական խավարի տերը՝ Ահրիմանը: Աշխարհը ստեղծվել է Ահուրա Մազդայի կողմից: Նրա բոլոր ստեղծածները՝ հողը, ջուրը, կրակը, մարդը և բոլոր արարածները բարի են: Ահուրա Մազդայի գործերն են նաև լույսը, ջերմությունը, կյանքը, առատությունը, երջանկությունը: Աշխարհը նա կառավարում է իր ձեռքով ստեղծած բարի ոգիների՝ հրեշտակների միջոցով:

Իսկ Ահրիմանը աստված չէ, նա ընդամենը մի ոգի է, բայց այն տար-

բերությամբ, որ նրա գոյությունն անկախ է: Նա նույնպես հավիտենական է, անսկիզբ և անվերջ և նույնպես օժտված է ստեղծելու կարողությամբ: Նա է, որ ստեղծել է ամեն ինչ, ինչ որ վատ է՝ մահ, հիվանդություն, ցուրտ, բոլոր անմաքուր, վնասակար արարածներին: Նրան են-թարկվող դևերը տանջանքներ են տարածում աշխարհի մեջ: Ահրիմանը թշնամի է Ահուրա Մազդային, հետևաբար և նրա ստեղծած մարդուն: Ահուրա Մազդան մշտապես ու հարատևորեն մարտնչում է նրա դեմ: Մարդը այդ կռվի մեջ պետք է Ահուրա Մազդայի կողմը լինի, նրա կռիվը մղի չար ոգու դեմ: Երկարատև է լինելու այդ կռիվը, բայց բարու և չարի վերջնական մարտում հաղթությունը լինելու է լուսավոր սկզբինը: Պիտի գա մի ժամանակ, երբ աշխարհի վրա կվերջանա Ահրիմանի թագավորությունը, և մարդիկ հավիտենապես պիտի վայելեն կատարյալ երջանկություն և անմահություն:

Ահուրա Մազդան իր մարգարե Զրադաշտին ասում է. «Սուրբ է այն մարդը, որ հողի վրա բնակարան է շինել և այդ բնակարանում պահում է կրակը, անասուններ, իր կնոջը, իր երեխաներին և լավ հոտեր: Ով հողին աճեցնել է տալիս ցորեն, ով մշակում է դաշտերի պտուղները, նա մշակում է մաքրությունը»:

Զրադաշտականության մեջ երկրագործը համարվում է բարիքների աղբյուր, և այն ժամանակ, երբ Ահուրա Մազդան պակասեցնում է երկրագործ մշակների թիվը, աշխարհը լցվում է դևերով:

Զրադաշտականները երկրպագում էին նաև երկրորդական աստվածություններին, պաշտում էին «սրբազան տարերքները». կրակը, հողը, ջուրը: Սասանյան շրջանի զրադաշտականությանը բնորոշ է այն վախը, որ հողը հանկարծ «չապականվի»: Ջուրը համարվում էր մաքրման լավագույն միջոց: Զրադաշտականների կողմից ամենագլխավոր պաշտամունքը մատուցվում էր կրակին: Այնքան տարածված էր այս պաշտամունքը, որ «զրադաշտական» կամ «մազդեզական» անունները հաճախ փոխարինվում էին «կրակապաշտ» անվամբ: Կրակը այն հզոր սկիզբն է, որ կյանք է բաշխում աշխարհին, հալածում է խավարը և մարդուն պաշտպանում չար դևերից:

Զրադաշտականների կուլտի պաշտամունքի վայրեր էին հանդիսանում կրակի տաճարները՝ ատրուշանները կամ «աթեշ-գահները»: Դրանցից երեքը, որոնք համապատասխանում էին երեք դասերին (ռազմիկների, քրմերի, հողագործների) համարվում էին գլխավորը, սակայն նրանց հետ մեկտեղ յուրաքանչյուր գավառում, քաղաքում և գյուղում կային զրադաշտական ատրուշաններ: Երկրպագությունը կրակի տարերքին

արտահայտվում էր նրանով, որ զրադաշտական տաճարների մեջ մութ սենյակում բարձրացվում էր մի խորան, որի վրա մշտապես այրվում էր «անշեջ կրակը»: Տաճարներից բացի, սրբազան հուրը գոյություն ուներ նաև տներում: Այս բոլորն անշուշտ վկայում է այն մասին, որ արևի պաշտամունքը (Միհր) մեծ տեղ էր գրավում զրադաշտականության մեջ:

Քրմերը ոչ միայն կատարում էին ծիսական պարտականություններ, այլև իրենց ձեռքերում կենտրոնացնում էին լուսավորությունն ու դատավարությունը: Նրանց էր պատկանում նաև ժառանգության հարցերում վճռական դերը:

Որպես աստղագուշակներ՝ քրմերը կազմում էին հորոսկոպներ և «սրբազան կրակի» բոցերին նայելով՝ գուշակում էին ապագան: Նրանց կարծիքով՝ մարդուն ամեն քայլափոխի սպասում է «պղծումը», որը պահանջում է անհապաղ մաքրում. հենց դա էլ հնարավորություն էր տալիս քրմերին մշտապես միջամտել մարդկանց անձնական կյանքին: Այդ միջամտությունը և «մաքրման» արարողությունը հանդիսանում էր քրմական դասի եկամուտների և հարստացման աղբյուրը:

Զրադաշտական մոգերը տիրապետում էին հսկայական չափերի հասնող հողերի: Նրանք օգտվում էին չափազանց մեծ տնտեսական և քաղաքական ազդեցությունից:

Սասանյան դինաստիայի առաջին շահնշահները կարգադրեցին հավաքել ու խմբագրել զրադաշտականների սուրբ գրքի՝ «Ավեստայի» տեքստերը: Այդ աշխատանքն ավարտվեց Շապուհ Բ-ի օրոք:

«Ավեստան» իրենից ներկայացնում էր մի յուրահատուկ հանրագիտարան: Ըստ ավանդության՝ «Ավեստայի» տեքստը գրված էր ոսկե տառերով տասներկու հազար կովի կաշվի վրա և պահվում էր Ղալա-ի Ստահրի (Ստահրի ամրոց) երեք աշտարակներում, որոնք գտնվում էին մայրաքաղաքի շրջակայքում: Ալեքսանդր Մակեդոնացու զորքերի կողմից Աքեմենյանների պետության նվաճման ժամանակ զրադաշտականների սուրբ գիրքն այրվեց: «Ավեստայում», բացի կրոնական տեքստերից, ընդգրկված էին աստղաբաշխական, տիեզերագիտական, իրավագիտական, բարոյագիտական և այլ տեքստեր: Ավեստայի հին լեզուն սասանյան շրջանում անհասկանալի դարձավ բնակչության մեծամասնության համար, որի պատճառով հետագայում կազմվեցին մեկնաբանություններ, որոնք ստացան Զենդ անվանումը («Զենդ-Ավեստա»):

Առաջին Սասանյան թագավորները պահպանում էին հանդուրժողականություն այլ կրոնների և նրանց հետևորդների նկատմամբ: Սակայն Վահրամ (Բահրամ) Բ-ի (276-293) կառավարման շրջանում գերագույն

քում «մոգպետաց մոգպետ» Քարթիրը կազմակերպեց քրիստոնեության, բուդդայականության և այլ դավանանքների հետևորդների հալածանքներ:

Քարթիրը առաջին Սասանյանների օրոք հանդիսանում էր զրադաշտականության խոշոր քարոզիչ ու բարեռնորոգիչ: Նրան շնորհվեց վուզուրգի կոչում և հանձնվեցին Ստահրում Անահիտ աստվածուհու տաճարի տիրակալի և պետության դատավորի պաշտոնները:

Քարթիրը Զրադաշտի նման համարվում էր մարգարե: Նա «աստվածների կամքի» միակ մեկնիչն էր: Նրա գործունեությունը հանգեցրեց նրան, որ Սասանյան միապետությունն արագ տեմպերով վերածվում էր աստվածապետության: Քարթիրի ձեռքերում կենտրոնացված էին ողջ երկրում ցրված մոգերի հզոր դասի կրոնական միաբանությունների կառույցները, նրա տրամադրության տակ կային հսկայական դրամական միջոցներ ու զրադաշտական տաճարներին պատկանող հողեր: Նա հրապարակեց «իդեալական միապետի» դոկտրինը, ըստ որի՝ տիրակալը պետք է լիներ խորապես հավատացյալ, մշտապես ունկնդիր լիներ իր հոգևոր առաջնորդի խորհուրդներին և գործեր զրադաշտական կրոնի դոգմաների համաձայն:

Մեզ ոչինչ հայտնի չէ Քարթիրի հետագա ճակատագրի ու նրա վախճանի մասին: Ինչ-ինչ պատճառներով նրա անունը չքանում է Սասանյան պաշտոնական տարեգրությունների և կրոնական գրքերի էջերից: Ենթադրվում է, որ հերթական պետական հեղաշրջման ժամանակ այդ զառամյալ ծերունին սպանվել է:

Զրադաշտականությունից բացի, Սասանյաններին ենթակա երկրներում տարածում էին գտել նաև քրիստոնեությունը, բուդդայականությունը, հուդայականությունը, սաբեիզմը, իսկ III դ. կեսերից՝ նաև մանիքեականությունը:

III-IV դարերում Միջագետքում, Խուզիստանում, մասամբ նաև Իրանի մյուս շրջաններում մեծ տարածում գտավ քրիստոնեությունը: Այն ժամանակվանից, երբ Հռոմեական կայսրությունում այն դարձավ պետական կրոն ի դեմս Իրանի քրիստոնյաների՝ շահնշահը և զրադաշտական հոգևորականությունը սկսեցին տեսնել Հռոմի քաղաքական դաշնակիցներին: Հատկապես իրանա-բյուզանդական պատերազմների շրջանում Սասանյան իշխանությունները մեղադրում էին քրիստոնյաներին որպես «հռոմեական կայսրի բարեկամների»: Ուստի, թեև քրիստոնեությունը ստացավ տարածում, սակայն նա չէր կարող հետևորդներ գտնել իրանական ազնվականության, առավել ևս կառավարող դինաստիայի շրջանում: Շահնշահերն հնարավոր չէին համարում իրենց երկիրը վստահել «խաչ-

ված աստծո հովանավորությանը, որը չկարողացավ նույնիսկ պաշտպանել ինքն իրեն»: Այլադավանների նկատմամբ արյունոտ հալածանքները IV դարի 30-ական թթ. ընդհատումներով շարունակվեցին մինչև 80-ական թթ., իսկ ժամանակ առ ժամանակ նաև դրանից հետո:

Հայտնի է, որ Իրանում ասորական եկեղեցին 484 թ. ընդունեց նեստորական դավանանքը (որը Բյուզանդիայում ճանաչվել էր որպես հերձված) և իր կապերը խզեց բյուզանդական (ուղղափառ) եկեղեցուց: Այդ ժամանակվանից սկսած՝ քրիստոնյաների հալածանքների քաղաքական մոտիվները վերացան, և քրիստոնեական երկու դավանանքները՝ նեստորականը և մոնոֆիզիթականը (միաբնակ), ստացան լեգալ գոյության իրավունք:

Սասանյան տերության մեջ քրիստոնյաների հիմնական զանգվածը կազմում էին Միջագետքի ասորիները և կովկասյան ժողովուրդները: Դեպի արևելք՝ Մերվի շրջանը, քրիստոնեության ներթափանցման հետևանքով քրիստոնյա համայնքների մեջ սկսեցին մտնել նաև իրանալեզու բնակչության ներկայացուցիչները:

Սասանյան տերության սահմաններում առկա էր նաև հուդայականների բազմամարդ գաղութ: Նրանց բնակության հիմնական վայրերն էին Միջագետքը և Սպահանի շրջանը: Հուդայականություն դավանողները չէին ենթարկվում հալածանքների, քանի որ Սասանյանների ախոյան Հռոմեական կայսրությունում նրանք հետապնդվում ու հալածվում էին:

Պետության արևելքում, մասնավորապես Բալխում, տարածված էր բուդդայականությունը:

III դարի կեսերին Սասանյան Իրանում ծնունդ առավ մի նոր կրոնական ուսմունք, որը կոչվում էր մանիքեականություն: Այդ նոր կրոնի հիմնադիրը (մարգարեն) նախկինում զրադաշտական մոգ Մանին էր (215-276): Նա սերել էր Արշակունիների տոհմից և պատանեկության տարիներին ստացել էր լավ կրթություն: Իրանի պատմության մեջ նա հանդես է գալիս որպես կիսաառասպելական մի անձնավորություն: Մանին Հիսուս Քրիստոսին հայտարարեց ոչ թե Հին Կտակարանի մարգարեների, այլ Բուդդայի և Զրադաշտի գործի շարունակող, իսկ իրեն՝ «մարգարեների կնիք», այսինքն՝ մարգարեներից վերջինը կամ «ճշմարտության աստծո առաքյալ»: Պահպանվել են Մանիի մի քանի աշխատությունները: Դրանք են՝ «Կեֆալիյա», «Շապուհական», «Խոստովանությունների գիրք» և այլն:

Ստեղծելով իր նոր կրոնը՝ մանիքեականությունը՝ նրա հիմնադիրը հայտարարեց, որ այն պետք է փոխարինի նախկինում եղած բոլոր կրոններին:

Մանիքեականությունն իրենից ներկայացնում է դուալիստական մի ուսմունք, որը սկզբունքորեն չի տարբերվում զրադաշտական դուալիզմից:

Ըստ այդ ուսմունքի՝ տիեզերքում և մարդկային հասարակության պատմության մեջ տեղի ունեցող բոլոր գործընթացների հիմքում ընկած է երկու սկիզբների՝ բարու ու չարի, կամ լուսավորի ու խավարի պայքարը: Լույսի (բարու) ուժերը ստեղծեցին առաջին մարդուն: Բարին ու չարը՝ տիեզերքի այդ երկու հիմնական տարրերը, գոյություն ունեն հավերժորեն, և մեկը մյուսի հետ գտնվում է մշտական պայքարի մեջ: Չարի ուժերը գերի են վերցրել առաջին մարդուն, բարու ուժերին հաջողվել է նրան ազատել, սակայն նրա մեջ շատ բան է մնացել խավարի թագավորությունից:

Մարդու մեջ այդ երկու սկիզբները դրսևորվում են մի դեպքում՝ ոգու տեսքով, որը հանդիսանում է լուսավոր սկզբի ծնունդ, մյուս դեպքում՝ մարմնի տեսքով, որը հանդիսանում է խավար սկզբի ծնունդ: Մարդը պետք է նպաստի լուսավոր սկզբի հաղթանակին: Չարից ազատվելու համար անհրաժեշտ է, որ մարդը խեղդի իր մարմնի բնական պահանջները, խզի կապերը զգայական, նյութական աշխարհի բարիքներից և զբաղվի ինքնակատարելագործմամբ: Մանիի քարոզչությունը կոչ էր անում վարել ճգնավորական կյանք, չամուսնանալ, արյուն չթափել:

Ըստ էության մանիքեականությունը հանդիսանում էր մի զրադաշտականություն, որի մեջ արմատավորվել էին ասկետիզմի և ճգնավորության քրիստոնեական գաղափարները: Առհասարակ, մանիքեականության սինկրետիկ ուսմունքի մեջ տեղ են գտել և՛ զրադաշտականության, և՛ քրիստոնեության, և՛ հուդայականության սկզբունքները: Մանին դրանց ավելացրեց նաև բուդդայականությունը և հոգիների տեղափոխման ուսմունքը:

Իր քարոզչությունը Իրանում Մանին սկսեց 241-242 թթ., Շապուհ Ա-ի կառավարման շրջանում: Արդեն III դ. վերջին նրա ուսմունքը լայն տարածում գտավ ոչ միայն Սասանյան լայնածավալ պետության բոլոր մասերում, այլև ուրիշ երկրներում, օրինակ՝ Եգիպտոսում և նույնիսկ Հռոմում:

Շապուհ Ա-ն փորձեց իր սոցիալական հենասրանն ընդլայնելու և պետության կայունացման նպատակով օգտագործել այդ նոր գաղափարական զենքը: Իր գահակալության օրը Շապուհ Ա-ն արքունիքում ընդունեց 25-ամյա Մանիին՝ որպես նոր հավատի մարգարե: Թույլատրելով մանիքեականության քարոզչությունը՝ Շապուհ Ա-ն հետապնդում էր երկակի նպատակ. նախ, մանիքեականությունը վերածելով պետական կրոնի, այն դարձնել շահնշահից կախում ունեցող գաղափարական մի ուսմունք և դրանով իսկ ձեռք բերել զանգվածների վրա ազդելու նոր, արդյունավետ մի միջոց: Երկրորդ՝ նա հույս ուներ ստեղծել իր բոլոր հպատակների, այդ թվում նաև քրիստոնյաների, կրոնական միասնություն: Երրորդ՝ նա ջախջախիչ հարված կարող էր հասցնել զրադաշտական քրմությա-

ը, անուղղակի ձևով նաև հին տոհմիկ ազնվականությանը:

Այնուամենայնիվ, մանիքեականությանը վիճակված չէր դառնալու Սասանյան պետության գաղափարական հիմքը: Նրանում չափից ավելի էին հոռետեսությունը և խճճված ու խրթին փիլիսոփայական գաղափարները: Իսկ ամենագլխավորը թերևս այն էր, որ Մանիի ուսմունքը հագեցված էր ժողովրդավարության գաղափարներով (նրա արևելյան ընկալմամբ), որոնք չէին կարող ծառայել որպես հենարան կենտրոնացման ձգտումներ ունեցող Սասանյան պետության համար:

Ազնվականությունը և բարձրագույն քրմությունը Շապուհի կրոնական քաղաքականության նկատմամբ ցույց տվեցին այնպիսի վճռական դիմադրություն, որ նա ստիպված եղավ հրաժարվել ամեն տեսակի շփումներից մանիքեականների հետ: Մանին ստիպված էր թողնել իր հայրենիքի սահմանները: Իրան վերադառնալուց հետո նա մեղադրվեց հերձվածի մեջ, ձերբակալվեց և հանձնվեց մոգերին: Խոշտանգումների հետևանքով նա մահացավ (276 թ.):

Իրանում մանիքեական համայնքների գոյությունը տևեց մինչև XI դարը: Նրանք գործում էին գաղտնի պայմաններում, քանի որ ենթարկվում էին հալածանքների ոչ միայն զրադաշտականների, այլև քրիստոնյաների, հուդայականների և մահմեդականների կողմից: Մի կարճ ժամանակաշրջանի ընթացքում՝ Ներսեհ շահնշահի տիրապետության շրջանում, մանիքեականությունը ճանաչվեց որպես պետական կրոն, իսկ VIII դարում այն տևական ժամանակով դարձավ Ույղուրական թագավորության պետական կրոնը:

V-VI դարերի սահմանագծին Իրանը ցնցեց ժողովրդական մի ծավալուն շարժում, որի գաղափարական առաջնորդը Մազդակն էր: Այդ շարժումը ծնունդ առավ Տիզբոնում, որտեղ սովալլուկ ու թշվառ մարդկանց թիվը չափազանց մեծ էր: Մազդակի ուսմունքի մեջ շաղկապված էին երկու սկզբունքներ՝ կրոնական ու սոցիալական: Որպես գաղափարախոսության հիմք Մազդակը վերցրել էր մանիքեականությունը՝ որոշ չափով փոփոխության ենթարկելով այն: Նրա ուսմունքի մեջ տեղ էին գտել նաև զրադաշտականության, հելլենիստական աշխարհի փիլիսոփայական ուսմունքների և քրիստոնեական աղանդների տարրերը: Մազդակյաններն էլույսի (բարու) թագավորությանը վերագրում էին կամքի ու բանականության հատկանիշներ, իսկ խավարի (չարի) թագավորությանը տարերայնության ու ոչ բանական լինելու որակներ: Դա ստեղծում էր առավել ակտիվ քաղաքական ներգործության նախադրյալներ:

Մազդակիզմի սոցիալական ելակետը հանգում էր հետևյալին. աշ-

խարհում գոյություն ունեցող անհավասարությունը և անարդարությունը չար սկզբի արգասիք են: Քանականության և արդարության թագավորություն կարելի է կառուցել համընդհանուր հավասարության և բարիքների հավասար բաժանման դեպքում (քանի որ բոլոր մարդիկ ցանկացած գույքի նկատմամբ ունեն հավասար իրավունքներ): Ուստի Մազդակը պահանջում էր բաց անել ալյուրի և ցորենի պետական ու մասնավոր պահեստները և հացը բաժանել մայրաքաղաքի քաղցած բնակչությանը:

Մազդակը քարոզում էր, որ արյուն թափելը մեղք է, եթե այն ուղղված չէ չարի թագավորության դեմ: Այս թեզը արդարացնում էր ժողովրդական շարժումները հարստահարիչների ու շահագործողների դեմ:

Մազդակյան շարժումը առանձնակի ուժգնության հասավ V դարի վերջին: Տարերային աղետները՝ երաշտը, անբերրիությունը, մորեխի կողմից ցանքսերի ոչնչացումը, հանգեցրին սովի, որը անմիջական պատճառ հանդիսացավ մազդակյանների կողմից 491 թ. ապստամբություն բարձրացնելու համար: Ապստամբները ստիպեցին բաց անել ցորենի պետական ամբարները, ժողովուրդը ներխուժում էր ունևոր մարդկանց տները, թալանում էր նրանց ունեցվածքը, հարեմներից տանում էին բազմաթիվ կանանց ու հարճերի: Մազդակյաններն առաջ քաշեցին կանանց ընդհանրության գաղափարը, որը ոչ այլ ինչ էր, քան տարերային բողոք դասային պատնեշների դեմ, բողոք ընդդեմ ազնվականության հարեմների և կոչ վերադառնալու ընտանեկան հարաբերությունների հին զրադաշտական ձևերին: Մազդակյանները մտցրին նաև գույքի ընդհանրություն:

Այդ շարժման զարգացման մեջ կարելի է տարբերակել երկու էտապ. մինչև 496 թ., երբ այն խրախուսվում էր Կավադ Ա արքայից արքայի կողմից, և 499 մինչև 529 թթ., երբ շահը հրաժարվեց աջակցել մազդակյաններին:

488 թ. գահ բարձրանալով Կավադ Ա-ն Մազդակին դարձրեց իր մերձավոր խորհրդականը և գերագույն քուրմ: Մազդակյանների օգնությամբ նա հույս ուներ թուլացնել ազնվականությանը, սահմանափակել արքունիքում գոյություն ունեցող ընդդիմության ազդեցությունը և սանձահարել մոգերին ու մոգպետներին, որոնց միջամտությունը պետական գործերին ուղղակի կործանարար էր: Նրա այդ քաղաքականության հետևանքը հանդիսացավ այն, որ իր դեմ կազմակերպված դավաղրության հետևանքով 494 թ. նա զրկվեց իր գահից: Նրան նետեցին զնդան՝ գահ բարձրացնելով գահընկեց արված շահնշահի եղբորը՝ Ջամասպին: Սակայն, փախուստի դիմելով, շահնշահը կրկին ստացավ հոն-էֆտալիթների առաջնորդ Ախշունվարի օգնությունը և ամուսնանալով նրա աղջկա հետ, 499 թ. վերստին բարձրացավ Իրանի գահի վրա: Կրկին տի-

րելով գահին՝ Կավադը այլևս մազդակյանների աջակցության կարիքը չուներ, ուստի փոխեց իր վերաբերմունքը այդ շարժման նկատմամբ՝ վարելով այն թուլացնելու քաղաքականություն: 528 թ. մոգպետների կողմից Մազդակը հայտարարվեց հերձվածող և ձերբակալվեց: Վերջնական հաշվեհարդարը մազդակյանների նկատմամբ Կավադի քաջալերմամբ տեսավ նրա որդի Խոսրով Ա Անուշիրվանը, որի հրամանով 529 թ. խնջույքի ժամանակ, որն իբր կազմակերպվել էր Մազդակի պատվին, վերջինս դավաճանաբար սպանվեց: Մեկ այլ վարկածով՝ Խոսրովը հրամայեց հրապարակում կառուցել մի բարձրունք, որի կենտրոնում փորվեց մի փոս: Մազդակը մտցվեց նրա մեջ ոտքերը դեպի վեր և մարմինը հողով ծածկվեց: Նրա հետևորդներից շատերը արժանացան նույն ճակատագրին, իսկ մնացածները փախան երկրի ծայրամասային շրջանները կամ լքեցին Սասանյան պետության սահմանները:

Մազդակյան շարժումը ունեցավ հեռուն գնացող հետևանքներ. շահնշահը ստացավ գերագույն իշխանություն, քանի որ տոհմիկ ազնվականության հզորագույն շրջանները նշանակալիորեն թուլացել էին: Խարխլվել էին նաև քրմերի դասի տիրապետող դիրքերը, թեև վտանգավոր հերձվածի ճնշումը համապատասխանում էր նրա շահերին: Այժմ բարձրագույն պաշտոնեության աստիճանակարգում քրմերի դասի առաջնորդ մոբեդան-մոբեդը իր տեղը զիջում էր մի քանի աշխարհիկ պաշտոնյաների: Մազդակյան շարժման կարևորագույն հետևանքներից մեկը հանդիսացավ նաև Սասանյան պետության հարկային համակարգի բարեփոխումը:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ԻՐԱՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

1. ԻՐԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԱՐԱԲՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

VII դարի 20-ական թթ. և 30-ական թթ. սկզբին ոչ ոք չէր ենթադրում, որ Իրանի անկախության համար լուրջ վտանգ կարող է գալ ոչ թե Բյուզանդիայից՝ կամ Միջին Ասիայի թյուրքերի կողմից, այլ Արաբիայի անապատներում բնակվող քոչվոր արաբներից, քանի որ նրանց Սասանյանները լուրջ հակառակորդ չէին համարում, ավելին՝ արհամարհանքով էին վերաբերվում նրանց նկատմամբ: Նրանք արաբներին դիտում էին որպես անհանգիստ հարևանների և եթե վախենում էին նրանցից, ապա միայն սահմանակից շրջանների անդորրը խախտելու պատճառով, քանի որ այդ քոչվոր-բեդվիները անսպասելիորեն հայտնվում էին Սասանյան տիրույթներում, ասպատակ սփռում ու հեռանում իրենց անապատները:

Մինչդեռ հենց արաբները հանդիսացան այն թշնամիները, որոնք Իրանին հասցրին մի այնպիսի հարված, որը նա չէր տեսել Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակներից սկսած:

Արաբական հզոր արշավանքի նախերգանք հանդիսացավ Միջագետքում Ջու Քարեի՝ մոտ 604 կամ 605 թ. տեղի ունեցած ճակատամարտը, երբ մի քանի հազար արաբ-բեդվիններ, բաքր իբն վաիլ ցեղի առաջ-

նորդությամբ, գլխովին ջախջախեցին պարսկական սահմանապահ ջոկատը: Արաբ բանաստեղծները բազմաթիվ ներբողներով փառաբանել են այդ հաղթանակը:

Սասանյան կառավարող վերնախավը, սակայն, պատշաճ գնահատական չտվեց այդ ահեղ նախազգուշացմանը: Ավելին՝ որևէ միջոցառում չձեռնարկվեց նոր հարձակման վտանգը կանխելու համար: Թերևս խանգարում էր Իրանում առկա վերին աստիճանի բարդ ներքին իրադրությունը՝ երկպառակությունները, տնտեսական դժվարությունները և այլն, ինչպես նաև արտաքին քաղաքականության բնագավառում ոչ բարենպաստ զարգացումները, մասնավորապես ծգծգվող ու անհաջող պատերազմը Բյուզանդիայի հետ:

VII դարի սկզբին «մինչդեռ պարսկա-բյուզանդական պատերազմներն սպառում էին երկու կռվող մեծ պետությունների, երկու հին ախոյանների ուժերը,- գրում է Լեոն,- խաղը անհայտության միջից դուրս էր գալիս և կազմակերպչական ապշեցուցիչ քափով պատմության ասպարեզն էր մտնում արաբ ժողովուրդը՝ մի նոր իրականություն հաստատելու համար Արևմտյան Ասիայում. մի իրականություն, որ հիմնովին պիտի փոխեր համաշխարհային պատմության ընթացքը»:

Նշված ժամանակաշրջանում Արաբական թերակղզում ծնունդ առավ մի նոր համաշխարհային կրոն՝ իսլամը, որի հիմնադիրն է Մուհամմադ մարգարեն («նաբի»): Իսլամ նշանակում է աստծո կամքին նվիրված կամ հնազանդ անձ (միևնույն նշանակությունն ունի նաև «մյուսլիմը», հոգնակի ձևը՝ «մուսիլման»): Դեռևս միջնադարից սկսած՝ հայ իրականության մեջ «իսլամի» փոխարեն գործածության մեջ է եղել «մահմեդականություն» անվանումը:

Իսլամի ծագումը սոցիալ-քաղաքական մի շարժում էր, որն անվանել են մահմեդական հեղափոխություն կամ Մուհամմադի կրոնական հեղափոխություն: Մուհամմադը գիտակցել էր, որ արաբների ցեղային տրոհվածությունն ու թշնամանքը հաղթահարելու համար անհրաժեշտ էր ստեղծել մի նոր գաղափարախոսություն, որի օգնությամբ հնարավոր կլիներ բազմացնել ու բազմակրոն քոչվոր-բեդվիններին համախմբել համասարաբական պետության մեջ: Այդպիսի գաղափարախոսություն կարող էր հանդիսանալ միաստվածության վրա հիմնված նոր կրոնը: Մուհամմադը ծնվել է 570 կամ 571 թ. «փղի տարում», Մեքքայում: Այդ առիթով Ղուրանում նրա անունից ասվում է. «Ես ծնվել եմ արդար թագավորի օրոք»՝ նկատի ունենալով Սասանյան արքա Խոսրով Ա Անուշիրվանին (531-579 թթ.): Ըստ ավանդության՝ այն գիշերը, երբ ծնվեց իսլամի

մարգարեն, Իրանի բոլոր զրադաշտական տաճարներում անշեջ կամ անմահ կրակը հանգել է:

Մուհամմադը սերել էր Մեքքայի ազնվազարմ Հաշիմյանների տոհմի Կուրեյշ կամ Կուրայշ կոչված ցեղից: Մահացել է 632 թ.: Շնորհիվ իսլամի մարգարեի քաղաքական և կրոնական հանճարի, որը կարողացավ համախմբել մարդկանց՝ արաբները, ճանաչելով իրենք իրենց, դուրս եկան տգիտության ու անիշխանության վիճակից և արդեն պատրաստ էին այն բանի համար, որպեսզի վճռականորեն իրենց տեղը գրավեն քաղաքակրթությունների պատմության մեջ:

Մուհամմադի դերը արաբական պատմության մեջ կայանում է նրանում, որ նա կարողացավ միավորել միմյանց նկատմամբ թշնամաբար տրամադրված բեդվինական ցեղերին և նրանցից ստեղծել ժողովուրդ: Այդ բանը նրան հաջողվեց անել իր հայտնի կարգախոսով. «Չկա աստված Ալլահից բացի, և Մուհամմադը նրա մարգարեն է»: Հետևաբար, Մուհամմադը միայն կրոնական գործիչ չէր: Կրոնի միջոցով նա ստեղծել էր մի ամբողջ քաղաքական համակարգ, որը հետագայում հանդես եկավ համաարաբական պետության՝ խալիֆայության տեսքով, որը միավորում էր ողջ արաբական աշխարհը: Իսկ իր Ղուրանով՝ իսլամի սուրբ գրքով («Ալ-Կորան ալ-Քարիմ»), Մուհամմադն այդ պետությանը տվել էր ոչ միայն կրոնական կանոններ, այլև օրենքներ՝ ներքին քաղաքացիական կյանքը կարգավորելու համար:

Իսլամի շնորհիվ արաբ ժողովուրդը դառնում էր գերազանցորեն կրոնական մի համայնք՝ «ումմա»: Կատարվում էր աշխարհի ու մարդկության պարզ բաժանում՝ «Դար-ալ-իսլամի» (իսլամական աշխարհ) և «Դար-ալ-հարբի» (պատերազմի աշխարհ): Այս երկու աշխարհների միջև գոյություն ուներ մի անդունդ, որը, ինչպես խորապես համոզված էր արաբը, փորել էր ինքը՝ Ալլահը: Մահմեդականներից դուրս ամբողջ մարդկությունը, առանց բացառության, «քյաֆիր» է, այսինքն՝ անհավատ ու անաստված (այստեղից է գոյացել «գյավուր» անվանումը): Քյաֆիրը չի ընդունում Մուհամմադի աստվածային առաքելությունը, ուստի մահմեդական օրենքը նրա նկատմամբ ձևակերպում է որոշակի վերաբերմունք:

Ըստ «հավատի համար սրբազան պատերազմի»՝ ջիհադի հիմնարար սկզբունքի՝ ամեն մի մահմեդականի համար իսլամի տարածումը զենքը ձեռքին դիտվում էր իբրև սրբազան կրոնական պարտք: Ովքեր մեռնում են հավատի համար («շահիդ»), նրանց սպասում է հավերժ երանությունը: Պատերազմը համարվում էր արդարացի, եթե այն ձեռնարկվել էր մարդկանց դեպի «ճշմարիտ հավատը» դարձի բերելու համար:

Ղուրանը գտնում է, որ ոչ մահմեդականների դեմ պետք է մղվի անընդհատ պայքար, մինչև որ նրանք հնազանդվեն ու ենթարկվեն իսլամին: «Ջիհադը» պարտադիր կերպով պետք է մղվի այն բոլոր ժողովուրդների դեմ, որոնք հարևան են իսլամական երկրներին: Այլ կերպ ասած՝ խոսքը վերաբերում է իսլամի տիրույթ դարձնելու (Դար-ալ-իսլամ) նրան, որը համարվում է պատերազմի տարածք (Դար-ալ-հարբ): Այդ երկու ծայրահեղ հասկացությունների միջև գոյություն ունի միջանկյալը. դա այն տարածքն է, որի բնակչությունը հարկ է վճարում իսլամի գանձարանին՝ ըստ կնքված պայմանագրի («Դար-աս-սուրխ»):

Նվաճված երկրներում հողերն ու անշարժ գույքը իսլամը դիտում էր որպես «ֆայ»՝ ողջ մահմեդական համայնքի ընդհանուր ունեցվածք:

VII դարի 30-ական թթ. ավարտվեց Արաբիայի քաղաքական միավորումը իսլամի դրոշի ներքո: Նորաստեղծ պետությունն անսքող կերպով դրսևորում էր ռազմաշունչ աշխարհակալական տրամադրություններ: Քոչվորական կյանքն արաբներին դարձրել էր պատրաստի զինվորներ: Դա օգնեց նրանց զարմանալի արագությամբ ստեղծելու մարտական բարձր հատկանիշներով օժտված զորքեր: Արաբական զինական ուժը բաղկացած էր հետևակից ու հեծյալներից: Սակայն սկզբնական շրջանում արաբները ձիեր քիչ ունեին, և հեծյալների մեծ մասը ուղտերի վրա էր: Բանակի կազմակերպման հիմքում ընկած էր տոհմացեղային սկզբունքը: Մանր զինվորական միավորները, օրինակ՝ տասնյակները, բաղկացած էին մեկ տոհմի անդամներից, իսկ ավելի խոշոր միավորումները՝ մեկ ցեղից կամ ցեղախմբից: Այս սկզբունքն ուներ և՛ իր առավելությունները, և՛ թերությունները: Առավելությունը նախ և առաջ այն էր, որ մարտի ժամանակ կողք կողքի կանգնած էին իրար լավ ծանոթ, հաճախ նաև արյունակից ազգականներ, որն անխուսափելիորեն նպաստում էր մարտական կոլեկտիվի համախմբմանը: Ռազմիկը երբեք իր արյունակից հարազատին չէր թողնի մարտի դաշտում և փախուստի դիմի, նա կկռվեր մինչև վերջ: Իսկ թերությունն այն էր, որ տոհմացեղային բոլոր հակասությունները ու երկպառակությունները, որոնք արաբներին բաժանում էին բազմաթիվ թշնամական խմբերի, այժմ տեղափոխվում էին բանակի շարքերը:

Զինվածության մակարդակով արաբները, անկասկած, զիջում էին բյուզանդական ու պարսկական զորքերին: Նրանք չունեին անհրաժեշտ քանակությամբ ծանր սրեր, չկար ծանր զենքերով զինված հեծելազոր և այլն: Բայց, այդ բոլորի փոխարեն, թվաքանակով արաբական զորքերը գերազանցում էին իրենց հակառակորդներին, քանի որ, ինչպես նշվեց, բոլոր բեդվին տղամարդիկ ռազմիկներ էին, որոնք միջցեղային արյու-

նախանձ կռիվների ժամանակ ձեռք էին բերել ոչ միայն ռազմական փորձ, այլև հաղթանակի հասնելու կամք ու հաստատակամություն:

Իրենց առաջին իսկ պատերազմների ժամանակ արաբական զորքերը, որպես ավար, ձեռք բերեցին մեծ թվով ձիեր, որը հնարավորություն էր տալիս թշնամու տարածքում ձեռնարկել խորը հեծյալ թիկունքային մարտարշավներ: Արաբական զորքերի բնորոշ առանձնահատկությունը, որը միաժամանակ ապահովում էր նրա բարձր մարտական հատկանիշները, հանդերձանքի թեթևությունն էր և շարժունակությունը: Արաբ զինվորները կարողանում էին արագ տեղաշարժվել անջուր անապատներով, թեև անսովոր լեռնային պայմաններում կամ գետանցների ժամանակ հանդիպում էին դժվարությունների: Արաբական զորքերի շարժունակությունն ուղղակի մղձավանջ էր հակառակորդների համար, քանի որ սամումի նման նրանք հայտնվում էին անսպասելի վայրերում, հեշտությամբ անցում էին կատարում թշնամու թիկունքը, ոչնչացնում ու գրավում նրա գումակները և խախտում հաղորդակցման ուղիները:

Արաբների առավելությունն իրենց հակառակորդների՝ Իրանի և Բյուզանդիայի նկատմամբ կայանում էր նաև նրանում, որ այդ երկրները ծվատվում էին ներքին հակասությունների մեջ, մինչդեռ արաբների մոտ, ընդհակառակը, սոցիալական հակասությունները դեռևս համեմատաբար թույլ էին արտահայտված:

Իսլամը արաբական վերնախավի կողմից օգտագործվեց նվաճողական պատերազմներ մղելու համար, որոնք ընթանում էին այդ նոր կրոնի դրոշի ներքո:

Իրանի նվաճումը արաբների կողմից սկսվեց Սասանյանների համար դժվարին ժամանակներում: 631 թ. արաբական մի խումբ ցեղեր, որոնք համախմբված էին ռաբի'ա ընդհանուր անվան տակ, Մուսաննա իբն Հարիսի և Սուվայդ իբն Քութբի գլխավորությամբ ներխուժեցին Սասանյան Միջագետք: Տեղի ունեցած ընդհարումների ժամանակ Մուսաննա իբն Հարիսը համոզվել էր, որ պարսիկները թույլ են, և նամակով դիմել էր Մուհամմադի մահվանից հետո նոր խալիֆ ընտրված Աբու Բաքրին՝ խնդրելով ռազմական օգնություն պարսիկների դեմ լայնամասշտաբ գործողություններ ծավալելու համար:

Հիջրեթի 12 թվականի մուհարրամ ամսին (633 թ. մարտ-ապրիլ) Խալիդ իբն ալ-Վալիդ զորավարը Աբու-Բաքրից հրաման ստացավ ռազմարշավ սկսել դեպի Միջագետք, այնտեղ միանալ Մուսաննայի ջոկատի հետ՝ իրանական զորամասերի դեմ համատեղ գործողություններ ծավալելու համար: Արաբների 18՝ հազարանոց միացյալ աշխարհազորը Ալ-

Քավազիմի (Քազիմի) մոտ, որը գտնվում է ներկայիս Քուվեյթի տարածքում, հանդիպեց Օբոլլի (Ուբալլա) շրջանի սասանյան մարզպան Հորմուզդի զորքերի հետ: Այդ ճակատամարտը հայտնի է «շղթաների ճակատամարտ» անունով, որովհետև առաջին շարքերում պարսիկ զինվորները մեկը մյուսի հետ կապված էին շղթաներով, որպեսզի փախուստի չդիմեն: Այն բանից հետո, երբ Խալիդի հետ մենամարտի ժամանակ Հորմուզդը սպանվեց, արաբները դիմեցին գրոհի և հաղթանակ տարան: Իրանական բանակի հրամանատարներ Կավադը և Անուշաջանը փախուստի դիմեցին: Որպես ավար՝ հաղթողների ձեռքն անցավ հարյուր հազար դրահամ արժեցող Հորմուզդի թանկարժեք թագը: Պատմիչներ Թաբարին և Իբն ալ-Ասիրը հաղորդում են, որ Սասանյան պետության մեջ նման թագի արժանանում էին միայն իրանական յոթ ազնվազարմ տոհմերի ներկայացուցիչները, որոնք «հասել էին կատարյալ առաքինության աստիճանին»: Ըստ իսլամական օրենքի՝ հարուստ ավարի հինգերորդ մասը՝ խալիֆի բաժինը, ուղարկվեց Մեդինա: Աբու-Բաքրը թագը նվիրեց հերոսին՝ Խալիդին:

Քազիմի մոտ տեղի ունեցած ճակատամարտը մուսուլմանների համար բաց արեց ճանապարհը դեպի Միջագետք (Իրաք):

633 թ. ապրիլ-մայիսին Օբոլլայից հյուսիս-արևմուտք՝ Մազար կոչված վայրի մոտ, Խալիդը կրկին հաղթանակ տարավ Սասանյանների մայրաքաղաք Տիզբոնից իր դեմ ուղարկված զորքերի նկատմամբ: Այդ ճակատամարտում պարսիկները տվեցին 30 հազար սպանված՝ չհաշված ծովում խեղդվածները: Սպանվեցին նաև պարսկական զորքերի հրամանատարներ Կարենը, Կավադը և Անուշաջանը: Մնացածներին հաջողվեց նավերով փախչել: Իր հաղթանակների համար Խալիդը ստացավ «Ալլահի սուր» պատվանունը:

Դեռ ռազմական ավարը չբաժանած՝ բեդվինական զորքերի այդ անդուլ հրամանատարն անձամբ սկսեց տեղեկություններ հավաքել հակառակորդի մասին և մշակել ռազմական գործողությունների նոր ծրագրեր:

Եվս մի հաղթանակ տանելով այսպես կոչված «արյան գետի» ճակատամարտում՝ արաբները շարժվեցին Հիրա քաղաքի վրա, որը հանդիսանում էր Եփրատից արևմուտք Սասանյան պետության հիմնական հենակետը: Այնուհետև 633թ. մայիսին Խալիդ իբն Վալիդը մի նոր հաղթանակ տարավ Ուլլեյսի մոտ:

Այդ հարվածներից շփոթահար Սասանյանները, վերախմբավորելով իրենց ուժերը, նախապատրաստվում էին վճռական գործողությունների: 634 թ. նոյեմբերին պարսիկ փառաբանված զորավար, Խորասանի սի-

փախեղ Ռուստամ Ֆարուխզադը Կուսս ան-Նաթիֆի՝ այսպես կոչված «կամուրջի մոտ» (Եփրատի վրա) տեղի ունեցած ճակատամարտում շրջապատեց արաբական զորքերին և նրանց հասցրեց ծանր պարտություն: Շնորհիվ Մուսաննայի կամքի, անվեհերության ու եռանդի՝ արաբներին հաջողվեց ուժերի մի մասը դուրս բերել շրջապատումից ու փրկվել: Սակայն 635 թ. Բուվեյբի մոտ տեղի ունեցած ճակատամարտում արաբները ոչնչացրին պարսիկների 12- հազարանոց բանակը, որի հրամանատարն էր զորավար Միհրանը: Վերջինս ընկավ ճակատամարտի դաշտում:

637 թ. հունիսին Հիրայի մոտ՝ Կաղիսի (Կաղիսիա) կոչված վայրում, որը գտնվում էր անջուր Սիրիական անապատի հենց սահմանին՝ Եփրատից հարավ-արևելք, իրանական և արաբական զորքերը ճամբար դրեցին՝ նախապատրաստվելով վճռական ճակատամարտի: Լավ զինված իրանական մեծաթիվ ու հիանալի հեծելազորը, որին ուղեկցում էին երեսուներեք մարտական փղեր, արհամարհանքով նայում էր արևակեզ դեմքերով, փոշեթաթախ, պատառոտված հագուստներով, բոբիկ ոտքերին սանդալներ հագած, «օձերով կերակրվող» արաբներին:

Սակայն, չնայած սասանյան բանակի նշանակալից թվական գերազանցությանը և այն տեղեկությանը, որ զորավար Մուսաննան մահացել է, Ռուստամը վախենում էր ճակատամարտ տալ, որովհետև փորձառու աչքով տեսնում էր պարսկական զորքերի թույլ կողմերը: Ահա թե ինչու, երբ Իրանում բոլորն իրենց հույսը դրել էին Ռուստամի վրա, նա ինքը, ժամանակակցի վկայությամբ, զուրկ էր այդ հույսից: Ճակատամարտի նախօրյակին Ռուստամը ստացավ ռազմական բարձրագույն պաշտոնը՝ դառնալով «իրանսպահբատ», այսինքն՝ ողջ Իրանի զորքերի հրամանատար:

Ի վերջո, բախումը տեղի ունեցավ: Կաղիսիի դաժան ու արյունահեղ ճակատամարտը տևեց չորս օր: Արաբական զորքերի հրամանատարն էր Մուհամմադի զինակիցներից մեկը՝ Սաադ իբն Աբի–Վաքքասը: Դա իսկապես մի կատաղի ռազմական ընդհարում էր: Պարսիկների կողմից կռվում էին նաև մի շարք հայ նախարարների զորամիավորումներ: Ճակատամարտի չորրորդ օրը Սիրիայից արաբներին օգնության հասան թարմ զորամասեր: Այդ նույն օրը Ռուստամն ընկավ մարտի դաշտում: Քամին ավազի ամպեր բարձրացրեց դեպի իրանական զորքերի կողմը (դրա մեջ արաբները տեսան Ալլահի ուղղակի օգնությունը, որը ոգևորեց նրանց), որը և իր ավարտին հասցրեց արաբների հաղթանակը: Ռուստամի կործանումը շփոթություն առաջ բերեց սասանյան զորքերի մեջ՝ և հրամանատարությունն իր վրա վերցրած Ջալինուսը նահանջի հրաման տվեց: Ատիկա գետից գետանցի ժամանակ մեծ թվով զինվորներ խեղդ-

վեցին, իսկ շատերը սպանվեցին հետապնդողների կողմից: Որպես ռազմական ավար՝ արաբների ձեռքն ընկավ Սասանյան Իրանի նշանավոր «դարաֆշ-ի քավեյանի» կոչված (Քավեի դրոշ) մարտական դրոշը՝ առասպելական հերոս դարբին Քավեհի ընծառյուծի կաշվից կարված և թանկարժեք քարերով զարդարված գոգնոցը, որը, ըստ ավանդության, որպես ապստամբության դրոշ, հին ժամանակներում Քավեհը բարձրացրել էր չար թագավոր Զոհակի դեմ:

Երբ Կաղիսիի մոտ տեղի ունեցած պարտության լուրը հասավ Տիզբոն, Հազկերտ Գ-ի արքունիքը հապշտապ լքեց մայրաքաղաքը և փախավ Զագրոսյան լեռներում գտնվող Խուլվան կոչված վայրը: Հազկերտ Գ-ն իր հետ տարավ նաև իր ազգականներին և պետական գանձարանի մի մասը:

Կաղիսիի մոտ պարտության հետևանքները հսկայական էին Իրանի համար: Փախուստի դիմած և ցիրուցան եղած սասանյան զորքերը մերկացրին դեպի մայրաքաղաք՝ Տիզբոն, տանող ճանապարհը: Մինչև թշնամու մոտենալը մայրաքաղաքին, այն՛արդեն դատարկվել էր բնակչությունից: Երբ արաբները մուտք գործեցին Տիզբոն, նրանք փողոցներում չհանդիպեցին ոչ մի կենդանի շնչի: Միայն պարսիկների մի ոչ մեծ ջոկատ էր մնացել Խոսրովի «Սպիտակ պալատում», որի հրամանատարներ Միհրանը և Նահիվերգանը կարճատև դիմադրությունից հետո իրենց ջոկատի հետ հանձնվեցին հաղթողների ողորմածությանը՝ նախապես նրանցից ստանալով անձի անվտանգության երաշխիքներ:

Շուտով լքված Մադաինը (այդպես էին արաբներն անվանում Տիզբոնը) գրավվեց հաղթողների կողմից (637 թ. հունիսին) և հրդեհի մատնվեց: Այն ենթարկվեց ահավոր ավերածության ու կողոպուտի և հիմնահատակ քանդվելով այլևս երբեք չվերականգնվեց: Քաղաքում և նրա շրջակայքում եղած բնակչության մի մասը կոտորվեց, մյուս մասը քշվեց ստրկության:

Արաբ պատմիչների վկայությամբ՝ հաղթողները Տիզբոնում ձեռք բերեցին հսկայական ավար, որը նրանց կողմից գնահատվեց 900 միլիոն դիրհեմ: Արաբների ձեռքն ընկած գանձերի մեջ կար մեծ քանակությամբ ոսկյա և արծաթյա սպասք, թանկարժեք քարեր, մետաքսյա կտորներ, գորգեր, թանկարժեք քարերով ընդելուզված հսկայական քանակությամբ զենքեր, որոնց մեջ առանձնանում էր Խոսրով Ա Անուշիրվանի սուրը, բացառիկ գեղեցկության ոսկերչական իրեր, ստրկուհիներ և բազմաթիվ այլ բարիքներ: Արաբները զարմանքով ու հիացմունքով տեսան բնական մեծության արծաթյա մի ուղտ, որի հեծյալն ամբողջովին ոսկի էր, ոսկուց մի ձի, որի վզից կախված էր հակինթե ծանր մի վզնոց: Ձիու ատամները ալմաստից էին, իսկ աչքերը՝ հակինթից: Տիզբոնի արքայից

արքայի պալատում նրանց ձեռքն ընկավ նաև «Խոսրովի գարունը» կոչված հսկայական չափերի հասնող մի անգնահատելի գորգ, որը զարդարում էր արքայական պալատի հատակը: Այն պատկերում էր մի ծաղկած այգի: Նրա ֆոնը մետաքսից էր և ոսկեթել բանվածքից, ուղիները՝ արծաթե, ջրավազանները՝ աղամանդներից և գույնզգույն թանկագին քարերից: Այն ստեղծում էր գարնան զարթոնքի տպավորություն: Այդ գորգը այն աստիճանի թանկարժեք էր, որ ոչ ոք չհամարձակվեց իրեն վերցնել: Խալիֆ Օմարը չգիտեր, թե ինչպես վարվեր նրա հետ: Ալի իբն Աբի Թալիբի առաջարկով այդ հրաշք գորգը կտրտեցին և բաժանեցին պետության մեծամեծների միջև: Միայն Ալիին բաժին հասած այդ գորգի մի կտորը գնահատվել էր 20 հազար դիրհեմ:

Արաբների կողմից Սասանյան Իրանի մայրաքաղաքի գրավումը և նրա հիմնահատակ կործանումը ողջ երկրի բնակչության վրա թողեց ճնշող տպավորություն: Մարդիկ հասկացան, որ դա սովորական ասպատակություն չէ, այլ նշանակալիորեն ավելի լուրջ բան:

Հազկերտ Գ-ի շրջապատն անում էր հնարավոր ամեն ինչ, որպեսզի նոր զորահավաք կատարի և արաբներին տա երկրորդ վճռական ճակատամարտը: Սակայն զինվորական ազնվականության անջատողական տրամադրություններն այն աստիճանի ուժեղ էին, որ նրանցից շատերը նույնիսկ չարձագանքեցին շահին ներկայանալու կոչին, իսկ նրանք, ովքեր ներկայացան, կա՛մ սկսեցին վեճի բռնվել մեկը մյուսի հետ և կա՛մ հրաժարվեցին ենթարկվել ընդհանուր հրամանատարին:

637 թ. վերջին Տիգրիսից արևելք ընկած Ջալուլա վայրի մոտ տեղի ունեցավ արաբների և Սասանյանների մի նոր ընդհարում, որը դարձյալ ավարտվեց պարսիկների ջախջախմամբ: Սասանյան բանակի հրամանատարն էր Ռուստամի եղբայր Խուրրազադը, որը մարտի դաշտում սպանվեց: Այդ հաղթանակի հետևանքով Իրաքի հարթավայրային մասը ենթարկվեց նոր նվաճողներին:

Այնուհետև արաբները գրավեցին Շաթթ-էլ-Արաբ գետից արևելք ու հյուսիս-արևելք ընկած տարածքը, որը կոչվում է Խուզիստան (Քեթ-Խուզայե, հայկական աղբյուրներում՝ Խուժաստան):

640 թ. արաբները լուր ստացան, որ Հազկերտ Գ-ն հեռացել է Խուլվանից և իրեն հավատարիմ մնացած պալատականների ուղեկցությամբ շարժվել է երկրի՝ խորն ընկած շրջանները՝ վախենալով, որ արաբների կողմից Խուզիստանը գրավելուց հետո կլինի շրջապատման մեջ: Խալիֆ Օմարի հրամանով Քուֆայից զորքեր ուղարկվեցին փախստական շահնշահին ձերբակալելու համար:

642 թ. Նեհավենդի մոտ (Համադանից հարավ) մահմեդականների 40 հազարանոց բանակը ան-Նու'մանա իբն Մուքարրինի հրամանատարությամբ հանդիպեց իրանական ծեր ու փորձառու հրամանատար Փիրուզանի (Մարդանշահ) 60- հազարանոց բանակի հետ:

Օրհասական ընդհարումից առաջ արաբ հրամանատարը ոգևորում էր իր զորքերին՝ կռվել մինչև վերջ, քանի որ այդ ճակատամարտը լինելու էր վերջինը և վճռականը Իրանի բախտը որոշելու հարցում. «Քարեկամնե՛րս,- դիմեց նա իր զինվորներին,- ձեզ պատրաստեցե՛ք կա՛մ հաղթելու, կա՛մ նահատակության քաղցր շերբեթը ըմպելու համար»: Արաբ հրամանատարն անձամբ գլխավորեց «Ալլահու աքբար» կոչված առաջապահ զորամասերի գործողությունները կռվի դաշտում և խմեց իր առաջարկած քաղցր շերբեթը՝ ընկնելով կռվողների շարքում: Խոդհեյֆա զորավարը, ինչպես վաղօրոք կարգադրել էր խալիֆ Օմարը, փոխարինեց սպանված հրամանատարին: Ճակատամարտը տևեց երեք օր, արաբները ստացան օգնական զորքեր: Պարսիկների կրած պարտության հետևանքով արաբները հայտնվեցին Երանշահրի կենտրոնում: Նեհավենդի ճակատամարտից հետո Իրանի կողմից ամեն մի կազմակերպված դիմադրություն դարձավ անհնար: Հաջորդ տարին ընկավ Համադանը, որը հաղթողները հեռակետ դարձրին դեպի հյուսիս՝ Ատրպատական ու Հայաստան, հարավ՝ Սպահան, և հարավ-արևելք՝ Քերման, հետագա արշավանքների համար: Արաբները նվաճեցին նաև Սասանյան պետության լեռնային մասը՝ Մարաստանը, որն ուներ գերազանցապես իրանալեզու բնակչություն: Այստեղ էին գտնվում իրանական տոհմիկ ազնվականության կալվածքները, շահնշահերի ամառային աթոռանիստը, Սասանյան տոհմի արքայապատկան հողերը: Մահմեդական բանակները չկանգնեցին Կենտրոնական Իրանի անապատներում, այլ առաջ շարժվեցին դեպի արևելք՝ Խորասան: 644-645 թթ. արաբական ջոկատները Բելուջիստանի վրայով մոտեցան Հնդկաստանի սահմաններին:

Նեհավենդի մոտ պարտությունից հետո Սասանյան վերջին թագավոր՝ ղեռևս պատանի Հազկերտ Գ-ն փախավ Սպահան, այնտեղից՝ Ստահր, այնուհետև՝ Քերման, Սիստան, ապա՝ Խորասան և վերջապես՝ Մերվ: Նրա վիճակը ողբերգական էր: Նա այլևս չուներ ոչ բանակ, ոչ միջոցներ և ոչ էլ փաստացի իշխանություն: Նրան հավատարիմ էր մնացել միայն մի ոչ մեծ ջոկատ և փոքրիկ շքախումբ: Անցնելով մի նահանգից մյուսը՝ արքայից արքան դեռ հույսեր էր փայփայում, որ իր վասալները կաջակցեն իրեն: Սակայն նրանք այլևս անհմաստ էին համարում իշխանությունից փաստորեն զրկված տիրակալին աջակցելը: Նրանցից

յուրաքանչյուրն աշխատում էր հնարավորին չափ շուտ ազատվել Հազկերտից՝ նրան հանձնելով այլ իշխանի և ստանալով ստացական, որ շահնշահը իրեն հանձնվել է ողջ-առողջ վիճակում: Մերվի օազիսի տեղական իշխանիկ Մահույան դավաճանեց նրան. սկզբում նա Հազկերտին ներքաշեց Բալխի շրջանում քոչող թյուրքական հորդայի հետ կոնֆլիկտների մեջ և երբ նրանց հետ տեղի ունեցած ճակատամարտում շահնշահը կորցրեց իր վերջին զինվորներին և իրեն հավատարիմ մնացած ընդամենը մեկ մարդու ուղեկցությամբ հասավ Մերվի դարպասների մոտ, Մահույան թույլ չտվեց նրան մտնել քաղաք: Ի վերջո, բոլորի կողմից լքված, երբեմնի հզոր կայսրության վերջին տիրակալը ստիպված էր քաղաքից դուրս օթևան փնտրել Մուրղաբ գետի ափին՝ մի ջրաղացում, որտեղ, գայթակղվելով այցելուի թանկարժեք իրերով, ջրաղացպանը, առանց իմանալու, թե ով է իր զոհը (մեկ այլ վարկածով Մահույայի գաղտնի հրամանով) գիշերով՝ քնած ժամանակ, սպանում է նրան (651 թ.) և մարմինը նետում գետը: Շահնշահի մարմինը գտնում են տեղի քրիստոնյաները և Մերվի մետրոպոլիտ Իլյան, ի նշան հարգանքի այն մարդու նկատմամբ, որի (Հազկերտի) տատը՝ Շիրինը (ըստ հայկական աղբյուրների՝ հայ, ըստ այլ աղբյուրների՝ սիրիացի քրիստոնյա), որը Խոսրով Բ Փարվեզի սիրեցյալ կինն էր և հանդիսանում էր Իրանի քրիստոնյաների հովանավորը, հողին է հանձնում շահնշահի մարմինը: Մեկ այլ վարկածի համաձայն՝ Հազկերտին կողոպտում ու սպանում է մի ոմն քարտաշ: Չի բացառվում նաև, որ շահնշահը սպանվել է հատուկ ուղարկված վարձու մարդասպանի միջոցով:

Այսպիսով՝ Հազկերտի մահով 651 թ. (հիջրեթի 30/31 թթ.) վերջ էր տրվում Սասանյան մեծ տերության քաղաքական գոյությանը: Մեռնում էր նաև հին զրադաշտական Իրանը՝ իբրև պետություն: Այն թևակոխում էր իր իսլամական պատմության դարաշրջանը: Երկիրը համարյա ամբողջությամբ նվաճվեց արաբների կողմից: Իրենց անկախությունը պահպանում էին միայն Բալխի, Գուրի, Զաբուլիսթանի և Քաբուլի շրջանները, ինչպես նաև մերձկասպյան Դեյլեմ, Գիլյան և Թաբարիսթան շրջանները:

Հարկ է նշել, որ Իրանը նվաճելիս արաբները խուսափում էին կազմակերպել բնակչության զանգվածային կոտորածներ և բնակավայրերի բարբարոսական ավերածություններ: Իրավամբ, արաբները նվաճված ժողովուրդներին շատ ավելի քիչ վնասներ էին պատճառում, քան հետագայում դա արեցին թյուրքերն ու մոնղոլները: Շատ դեպքերում Սասանյան վարչաբյուրոկրատական ապարատի և ծանր հարկահանության տակ կքած իրանական ժողովուրդը արաբներին դիմավորում էր որպես

ազատարարների: Արաբների կողմից Իրանի համեմատաբար հեշտ նվաճումը բացատրվում է նաև նրանով, որ ժամանակի երկու հզոր տերությունները՝ Սասանյան Իրանը և Բյուզանդիան, իրենց անվերջանալի պատերազմների ընթացքում ռազմական ու տնտեսական առումով մեծապես թուլացել ու հյուծվել էին:

Արաբների կողմից ջախջախված իրանական աշխարհազորի զորամասերը և տեղական կառավարիչները այլևս չէին կարողանում փոխադարձ պայմանավորվածությամբ կազմակերպել դիմադրություն: Այդ առթիվ Թաբարին նշում էր, որ այդ օրվանից սկսած՝ պարսիկների մոտ այլևս միասնություն գոյություն չուներ, և ամեն մի նահանգի բնակչությունն իշնամու դեմ կռվում էր իր նահանգում:

643-644 թթ. արաբները գրավեցին Սպահան քաղաքը և համանուն նահանգը: Սպահանը խոշոր առևտրական և վարչական կենտրոն էր, որի վրայով իրականացվում էր կապը պետության հյուսիսային և հարավային ծայրամասերի միջև: Նա միաժամանակ ռազմավարական նշանակություն ունեցող մի կարևոր հանգույց էր:

644 թ. արաբները ներխուժեցին Փարս (Ֆարս) ծովի կողմից՝ Բահրեյնից, ինչպես նաև ցամաքից՝ Խուզիստանից: Սկզբում արաբներին հաջողվեց գրավել Պարսից ծոցում Իրանին պատկանող Լար կղզին: Փարսի դեհկանների աշխարհազորը մարզպան Շեհրեքի գլխավորությամբ Ռեյշահր (Ռև-Արդաշիր) քաղաքի մոտ ճակատամարտ տվեց արաբներին: Դա մի կատաղի ու արյունոտ ճակատամարտ էր, որը, ըստ Բալաձորիի, իր դաժանությամբ ու դրամատիզմով կարելի էր համեմատել Կադիսիի ճակատամարտի հետ: Արաբների հաղթանակը կատարյալ էր: Ծանր մարտերով շարժվելով առաջ՝ նրանք իրար հետևից գրավում էին Ֆարսի քաղաքները: Նրանց հաջողվեց վերցնել նաև Ստահր քաղաքը, որը հանդիսանում էր Սասանյան պետականության օրրանը: Սակայն 649 թ. Ստահրի բնակիչները ապստամբեցին զավթիչների դեմ՝ կոտորելով քաղաքում թողնված նրանց զորամասը: Երկրորդ անգամ գրավելով այդ քաղաքը՝ արաբները Ստահրում և նրա շրջակայքում կազմակերպեցին սարսափելի կոտորած, սրի քաշելով 40 հազար տղամարդու և ստրկության քշելով կանանց ու երեխաներին: Ի վերջո, 653-654 թթ. Ֆարսի հողում հաստատվեց իսլամի ռազմական տիրապետությունը: Տեղի իրանական ազնվականության մի մասը հնազանդվեց արաբներին՝ իսլամն ընդունելու գնով պահպանելով իր հողերն ու ամրոցները:

Փարսում ռազմական գործողություններ իրականացնելուց զուգահեռ՝ 644 թ. արաբները նվաճեցին նաև Քերմանը: Քաղաքի բնակչությու-

ը դիմեց զանգվածային արտագաղթի: Առհասարակ, Իրանը նվաճելու ընթացքում տեղական բնակչության այն մասը, որը չցանկացավ հրաժարվել զրադաշտականությունից և ընդունել իսլամը, գերադասեց հեռանալ հայրենիքից: Նրանք իրենց հետ տարան իրենց պաշտամունքը և նրա սրբազան գրքերը: Սկզբում այդ զրադաշտականները կամ գյաբրերը բնակություն հաստատեցին Հորմուզում, իսկ ապա անցան գլխավորապես Հնդկաստան՝ բնակություն հաստատելով հիմնականում Բոմբեյում ու նրա շրջակայքում, ինչպես նաև արտագաղթեցին Միջին Ասիա, Չինաստան և ասիական այլ երկրներ, որտեղ կազմակերպեցին զրադաշտական համայնքներ: Վերջին ժամանակներս գիտության կողմից տվյալներ են բերվում այն մասին, որ իրանական արտագաղթի ալիքը հասել է մինչև Ճապոնիայի ափերը:

Այնուհետև արաբները իրար հետևից նվաճեցին Սաքաստանը և Խորասանը (651 թ.): Մինչ այդ նրանք ձեռնամուխ էին եղել հյուսիսային նահանգների նվաճմանը:

Հազկերտ Գ-ի մահվանից հետո (651 թ.) Իրանը ըստ էության դադարեց գոյություն ունենալուց որպես ինքնուրույն պետություն: Ճիշտ է, մեռած շահնշահի որդին փորձեց Կենտրոնական Ասիայի թյուրքերի և նույնիսկ չինացիների օգնությամբ կայսրությունը փրկել վերջնական կործանումից, սակայն նրա ջանքերը ի դերև եղան: Իրանը համարյա ամբողջապես նվաճվեց արաբների կողմից: Արևելքում նրանց նվաճումների սահմանը հասավ մինչև Ամու-Դարյա գետը: Անկախ մնացին միայն Բալխի, Հուրի, Զաբուլիսթանի և Քաբուլի շրջանները, ինչպես նաև Մերձկասպյան լեռնային շրջանները՝ Թաբարիսթանը, Դեյլեմը, Գիլյանը, որոնք պահպանեցին իրենց ինքնուրույն քաղաքական կյանքը:

Այսպիսով՝ Իրանի ավատական դասի անջատողական ձգտումները հանդիսացան երկրի անկախության կորստի կարևորագույն պատճառներից մեկը: Ավանդության համաձայն՝ Հազկերտ Գ-ն խալիֆ Օմարին հղել է մի ուղերձ, որտեղ ասվում էր. «Ամբողջ աշխարհում չկա ավելի բազմամարդ արքունիք, քան մեր արքունիքն է, չկա ավելի բարեկարգ զանձատուն, քան մեր զանձատունն է, չկան ավելի խիզախ զորքեր, քան մեր զորքերն են, ոչ ոք չունի այնքան մարդ ու հանդերձանք, որքան կա մեզ մոտ»:

Նրան Օմարը պատասխանել է. «Այո՛, ձեր արքունիքը բազմամարդ է, սակայն շողոքորթներով. ձեր գանձատունը բարեկարգ է, սակայն ոչ ճիշտ հարկերով. ձեր բանակը խիզախ է, սակայն անհնազանդ: Երբ հեռանում է պետականության զգացումը, ոչ հանդերձանքը և ոչ էլ բազմամարդությունը ոչ մի օգուտ չեն բերում»:

Արաբական զորքերի զարմանալի շարժունակությունը, ներշնչումը, զինվորների քաջությունն ու անվեհերությունը, արհամարհանքը մահվան նկատմամբ, խիստ կարգապահությունը, զորահրամանատարների ռազմական օժտվածությունը և այլ գործոններ նպաստեցին արաբների հաղթանակներին: Իրանը նվաճելու շրջանում բազմաթիվ քաղաքներ ու ազդեցիկ դեհկաններ արաբ զորավարների հետ կնքեցին իսլամի մեջ ընդունված հնազանդության մասին պայմանագրեր, որոնցով պարտավորվում էին դառնալ նրանց հարկատուները: Այդ ճանապարհով նրանք ձեռք բերեցին իրենց հողերն ու ավատական իրավունքները պահպանելու հնարավորություն: Սովորաբար այդ պայմանագրերը Իրանի բնակչությանը իրավունք էին տալիս հավատարիմ մնալու իրենց դավանանքին (զրադաշտականությանը, քրիստոնեությանը և հուդայականությանը), պահպանելու իրենց անձնական ազատությունն ու գույքը: Փոխարենը պայմանագիր կնքած բնակիչները պարտավորվում էին ճանաչել իրենց նկատմամբ արաբա-մահմեդական պետության իշխանությունը, չդավաճանել նրան, վճարել միաժամանակյա ռազմատուգանք և այսպա կանոնավոր կերպով վճարել այլադավան զիմմիների համար սահմանված հարկերն ու տուրքերը:

Գիտության մեջ հայտնվել է այն կարծիքը, որ Սասանյան Իրանի տարածքի մեծ մասը արաբների կողմից նվաճվել է «խաղաղ» ճանապարհով՝ պայմանագրերի հիման վրա: Աղբյուրները վկայում են, որ դեպի Իրան իսլամի արշավանքների ժամանակ նվաճողների հետ ակտիվ համագործակցության դեպքերը իրանալեզու և այլալեզու միջավայրում սովորական երևույթ էին: Իրանական ազնվականության մի ստվար զանգված իրավունքներ, նյութական և բարոյական արտոնություններ ձեռք բերելու նպատակով կամովին ընդունում էր իսլամը:

Ընդ որում՝ Իրանի իսլամականացման գործընթացը անշրջելի էր թերևս այն պատճառով, որ իսլամի մեջ հավատուրացությունը դաժանորեն պատժվում է: Իսլամի հետ կապերի խզումը դիտվում էր որպես Ալլահի հետ կնքված պայմանագրի խախտում: Ապստամբության դեպքում ևս արաբների հետ կնքված պայմանագրերը չեղյալ էին հայտարարվում:

Առհասարակ պետք է նշել, որ արաբական արշավանքների հաջողության գործում կարևոր դեր խաղաց արաբների կողմից առաջ քաշված մահմեդականների իրավահավասարության և նրանց հարկերից ու ստրկությունից ազատելու կարգախոսները: Իրանում Սասանյան պետության կողմից դաժան շահագործման ենթարկվող զանգվածը, այդ թվում նաև կրոնական հալածանքների ենթակա այլադավանները (քրիս-

տոնյա պարսիկներ, ասորիներ, հրեաներ և այլն) այդ կարգախոսներն ընկալեցին որպես փրկության ճանապարհ, որպես ատելի սասանյան կարգերի վերացում ու ոչնչացում:

Այսպիսով՝ միանգամայն ակնհայտ է, որ սկզբնական շրջանում Իրանում իսլամ էին ընդունում միայն բազմաթիվ դեհկաններ և այլ տիրապետող տարրեր: Իսկ զանգվածորեն իսլամի ընդունումը Իրանի բնակչության կողմից կատարվեց շատ ավելի ուշ: Սկզբնական շրջանում նվաճողների համար կարևորը ոչ թե Իրանի բնակչությանը իսլամականացնելն էր, այլ ռազմական ավարը: Բացի այդ, նվաճումների շրջանում հիմքեր չկային նվաճողների կրոնը ընդունելու համար: Սակայն ժամանակի ընթացքում պարսիկների համար գնալով ավելի ու ավելի ակներև էր դառնում, որ անհրաժեշտ է համագործակցել նվաճողների հետ:

2. *ԻՐԱՆԸ ՕՄԱՅԱՆ ԵՎ ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ*

Արաբների կողմից Իրանի նվաճումը և նրա ընդգրկումը խալիֆայության կազմի մեջ հանգեցրին մի շարք հետևանքների: Նախ՝ սկսվեց ինչպես քոչվոր, այնպես էլ նստակյաց արաբ բնակչության զանգվածային արտագաղթը դեպի Իրան: Այդ եկվորները հաղթողի իրավունքով բռնազավթում էին հսկայական հողատարածություններ: Քաղաքներում հայտնվեցին բազմաթիվ թաղամասեր, որոնք բնակեցված էին այս կամ այն ցեղի արաբներով: Ստեղծվեցին ռազմական ճամբարներ, որտեղ իրենց տրամադրության տակ գտնվող զինական ուժերով բնակվում էին խալիֆի տեղապահները: Ավելի ուշ, օրինակ՝ X դարում, Իրանի մի շարք քաղաքներում (Ղում և այլն) արաբները կազմում էին բնակչության մեծամասնությունը:

Արաբները իրանական ժողովրդին պարտադրեցին ոչ միայն իրենց կրոնը, այլև լեզուն և գրությունը: 696 թ. խալիֆ Աբդ ալ-Մալիքը անթույլատրելի համարեց, որ գործավարությունը իրականացվեր հունարեն և պահլավերեն լեզուներով, և արաբերեն լեզուն մտցվեց որպես գրասենյակային լեզու: Դասական արաբերենը դարձավ lingua franca՝ ազգամիջյան հաղորդակցության և միջազգային լեզու, գրական ու պաշտոնական, ինչպես նաև նոր կրոնի լեզու: Իսկ պահլավերենը մնաց լոկ որպես զրադաշ-

տական քրմության լեզուն: Պարսիկները, իհարկե, շարունակում էին խոսել պարսկերեն, սակայն նրանցից շատերը տիրապետում էին նաև արաբերեն լեզվին և ավելին՝ գերադասում էին գրել արաբերեն: Աղբյուրների վկայությամբ՝ նույնիսկ հայրենասեր պարսիկները, որոնք հանդիսանում էին հակաարաբական, իրանասեր մշակութային հոսանքի ներկայացուցիչներ (այսպես կոչված. «շու՝ուբիյա»), մեծ մասամբ գրում էին արաբերեն: Աստիճանաբար միջին պարսկական (պահլավական) գրականության շատ կոթողներ թարգմանվեցին արաբերենի: Նոր պարսկերեն լեզուն արաբերենից փոխ առավ հսկայական քանակությամբ արաբերեն բառեր, որը մեծապես նպաստեց նրա հարստացմանը:

Նոր պարսկերենը՝ ֆարսին, վերածնվեց միայն IX դարի սկզբին, երբ այդ լեզվով ստեղծվեց պարսիկ ժողովրդին համաշխարհային հռչակ բերած պոեզիան:

Արաբերեն լեզվի հետ միաժամանակ պարսիկների շրջանում տարածվեց նաև արաբական գրությունը, որը դուրս մղեց արամեական ծագում ունեցող պահլավական գիրը:

Իրանի արաբական նվաճման կարևորագույն հետևանքներից մեկը հանդիսացավ նաև նվաճողների կրոնի՝ իսլամի տարածումը: Մահմեդականությունն աստիճանաբար Իրանից դուրս մղեց պարսիկների հնագույն կրոնը՝ զրադաշտականությունը և դադարեցրեց քրիստոնեության հետագա տարածումն այդ երկրում:

Ինչպես հայտնի է, արաբները իրենց մշակութային զարգացման մակարդակով այն ժամանակ ցածր էին կանգնած իրենց կողմից նվաճված պարսիկներից: Չունենալով ո՛չ մեծ մասշտաբի պետություն կառավարելու փորձ, ո՛չ գիտակ աստիճանավորներ՝ նրանք ստիպված էին իրենց կարիքներին հարմարեցնել Իրանում առկա քաղաքական կարգերն ու կառավարման համակարգը: Ուստի նրանք պահպանեցին սասանյան բյուրոկրատիայի մի շարք ինստիտուտներ՝ միաժամանակ ոչնչացնելով գերագույն արքայական իշխանության ատրիբուտները:

Իրանում արաբների վարած քաղաքականության իմաստը հասկանալու համար բավական է բերել խալիֆ Օմարի հետևյալ խոսքերը. «Մահմեդականներն ուտում են նրանց (նվաճվածներին- Վ. Բ.) քանի դեռ նրանք կենդանի են. երբ մենք և նրանք կմեռնենք, մեր երեխաները կուտեն նրանց երեխաներին, քանի դեռ նրանք կենդանի են»:

Արաբների կողմից իրանական աստիճանավորների օգտագործումը՝ նոր պետական ապարատ ստեղծելու գործում, իրանական հասարակության ունևոր խավերի համար ճանապարհ բաց արին դեպի նոր պետու-

թյան քաղաքական կյանքը, թեև, անշուշտ, որոշ սահմանափակումներով:

Իրանի արաբական նվաճումն ուղեկցվեց երկրի ողջ հողային ֆոնդի վերաբաշխմամբ: Հողերի մեծ մասը, այդ թվում՝ ալաբցների դեմ պայքարած դեհկանների հողերը, Սասանյան պետության և զրադաշտական տաճարների հողերը, հայտարարվեցին մահմեդական համայնքի ընդհանուր սեփականություն («ֆայ»): Ըստ էության, այդ հողերը դարձան արաբական պետության սեփականությունը: Գյուղացիները համարվում էին լոկ պետական հողերը մշակողներ, և նրանց վրա դրված էր հողային հարկ՝ «խարաջ» մուծելու պարտականությունը:

Իրանում, ինչպես և Մերձավոր Արևելքի մյուս երկրների մեծ մասում, հողի նկատմամբ պետական սեփականությունը հողային սեփականության գերակշռող (թեև ոչ միակ) ձևն էր:

Եվ այսպես՝ հողը և ջուրը, այսինքն՝ արտադրության հիմնական միջոցները, իր մեծ մասով Իրանում պատկանում էր արաբական պետությանը: Այդ հանգամանքը պետությունը դարձնում էր ուժեղ և նպաստում էր հզոր կենտրոնացված ապարատի ստեղծմանը:

Արաբական տիրապետության շրջանում Իրանում լայնորեն օգտագործվում էր նաև ստրկական աշխատանքը: Առհասարակ ստրուկների թիվը շատ մեծ էր:

Իրանի նվաճումից հետո առաջին տասնամյակների ընթացքում հարկերի և տուրքերի գանձումը արաբներն ամբողջապես հանձնել էին իրենց ենթակա տեղական տիրակալներին: Արաբներին հետաքրքրում էր լոկ տարբեր նյութական արժեքների քանակը, իսկ թե ով և ինչպես այն կհավաքի, նրանց համար երկրորդական հարց էր: Խալիֆայությունը կարիք ուներ գլխավորապես ստրուկների և ստրկուհիների, բրդի, բամբակի, կտորեղենի, հացահատիկի, անասունների, ձիերի, կաշվի, զենքի ու սպառազինության, ոսկու, արծաթի և այլն: Այդ բոլորը հարկերի միջոցով անցնում էր արաբական վերնախավին:

Իրանում իրենց սեփական հարկային համակարգը ստեղծելուց հետո այ:աբները ամբողջապես իրենց ձեռքը վերցրին հարկահավաքման գործը:

Այլադավանները՝ զրադաշտականները, քրիստոնյաները և հրեաները, «խարաջից» բացի, վճարում էին նաև գլխահարկ՝ «ջիզյա»:

Իրանում հողագործների վիճակը դարձավ անտանելի, երբ խալիֆները ջիզյա և խարաջ վճարող բոլոր գյուղացիների վզից հրամայեցին կախել հատուկ կապարե հաշվեպիտակ, որտեղ նշվում էր, թե որ ռուստակից (գավառից) և գյուղից է տվյալ մարդը: Եթե լքելով իր բնակավայրը՝ գյուղացին տեղափոխվում էր մեկ այլ շրջան, նրան որսում և ուղար-

կում էին հաշվեպիտակում նշված իր բնակավայրը: Առանց վզից կախված այդ տարբերանշանի հայտնվել որևէ վայրում նշանակում էր, որ, որպես թափառաշրջիկ, նրան կարող էին ձերբակալել և պատժի ենթարկել: Այդ տարբերանշանները հանվում էին միայն հարկերի լրիվ վճարումից հետո և կրկին կախում էին, երբ գալիս էր նոր բերքի ժամանակը: Նշված կարգի հետևանքով ոչ մի գյուղացի չէր կարող խուսափել ջիզյան և խարաջը վճարելու պարտավորությունից: Այդ նվաստացուցիչ կարգը տարածված էր արաբների կողմից նվաճված համարյա բոլոր երկրներում՝ Իրանում, Միջագետքում, Հայաստանում, Եգիպտոսում, Միջին Ասիայում և այլն:

Որպես «անհավատներ» բոլոր այլադավանները կամ «զիմմիները» սահմանափակված էին քաղաքացիական իրավունքների մեջ և հեռացված էին քաղաքական գործունեությունից:

Առհասարակ, Օմայան խալիֆայությունը, որը, ըստ էության, համարվում էր զուտ արաբական պետություն, կոպտորեն և ատելությամբ էր վերաբերվում ոչ արաբների նկատմամբ:

Մուհամմադ մարգարեի մահվանից հետո արաբական ազնվականության երկու խմբավորումների միջև ծավալվեց թեժ պայքար, որի մեջ կարևոր դեր սկսեցին խաղալ իրանցիները: Սիրիայի կառավարիչ Մուավիի, որին աջակցում էին սիրիական արաբները, և Մուհամմադի փեսա Ալիի միջև, որի կողմնակիցներն էին Իրաքի արաբները, բորբոքված երկպառակտչական պայքարի ընթացքում շատ իրանցիներ հանդես էին գալիս որպես վերջիններիս կողմնակիցներ: Ալիի և նրա կողմնակիցների խմբավորումը, որին անվանում էին «շիաթ Ալի», այսինքն՝ «Ալիի կուսակցություն կամ խմբավորում», նպաստում էր շիիզմի կրոնական և քաղաքական հոսանքի ձևավորմանը. մի հոսանք, որը լայն տարածում գտավ Իրանում:

661 թ. հունվարի 24-ին՝ Ալիի սպանությունից հետո, ներքին քաղաքացիական պատերազմն ավարտվեց Մուավիի (Մուավիա Ա) հաղթանակով. նա հիմք դրեց կառավարող մի դինաստիայի, որը հայտնի է Օմայան դինաստիա անունով (661-750 թթ.): Նրա մայրաքաղաքը դարձավ Դամասկոսը: Դա նշանակում էր, որ խալիֆայության քաղաքական կենտրոնը Արաբիայից տեղափոխվում էր Սիրիա: Այդ դինաստիայի կառավարման տարիներին Իրանը հանդիսանում էր Օմայան խալիֆայության նահանգներից մեկը, ընդ որում՝ առավել ուժգին կերպով հարստահարվող նահանգը:

Ժողովրդական դժգոհությունն Իրանում Օմայան խալիֆայության տիրապետության դեմ սկսվեց շատ վաղ: Դա պատասխան ռեակցիա էր

Օմայանների վարած քաղաքականության նկատմամբ: Նկատի ունենալով խալիֆայության դեմ ապստամբությունների հնարավորությունը՝ Օմայանները սկսեցին Իրանի քաղաքներում և ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող վայրերում տեղավորել մեծ թվով արաբ բնակչություն: Այսպիսով՝ արաբների զանգվածային տեղափոխությունը Իրան ընդունեց նոր թափ: Այդ տեղափոխվածներին («մոհաջիրներին») հատկացվում էին լավագույն հողերը, տներ և այլն:

Արաբների բնակեցումը Իրանում հանդիպում էր տեղական բնակչության թշնամական վերաբերմունքին, թեև խոշոր հողատերերը արագորեն հաշտվում էին նվաճողների հետ, քանի որ վերջիններս պահպանում էին նրանց արտոնություններն ու հողային տիրույթները: Իրանական բնակչության այդ խավը նույնիսկ փնտրում էր մերձեցում արաբների հետ, չէր խորշում նրանց հետ ամուսնություններից և այլն:

Օմայանների ժամանակ նախկին այլադավանները, մասնավորապես պարսիկ զրադաշտականները, նույնիսկ իսլամն ընդունելուց հետո, դեռևս չէին դառնում կատարելապես իրավահավասար մահմեդականներ: Այսպես՝ ծառայության մտնելով արաբական բանակի մեջ՝ պարսիկ դեհկանները չէին օգտվում արաբ զինվորների բոլոր արտոնություններից: Քանի որ արաբների մոտ դեռևս պահպանվում էր տոհմացեղային համակարգը, ուստի ամեն մի նորաթուխ մահմեդական ոչ արաբ պարտավոր էր դառնալ «հաճախորդ» (արաբերեն՝ «մաուլա», հոգն՝ «մավալի»), այսինքն՝ այս կամ այն արաբական ցեղի կամ տոհմի անդամ:

Պարսիկ մավալիների խավը Իրանում VIII դ. սկզբին բավականին ստվար էր: Արաբներին փոխանցելով իրանական մշակույթի նվաճումները և պետություն կառավարելու հարուստ ավանդույթները՝ մավալիները խաղում էին մեծ դեր Օմայան խալիֆայության կյանքում:

Օմայանների դեմ շեշտված ընդդիմադիր կեցվածք էր որդեգրել հատկապես քաղաքական և կրոնական լիցք ունեցող շիիթական շարժումը: Շիիզմն առաջացել է արաբերեն «շաա» բառից, որ նշանակում է կուսակից: Շիիթականությունը իսլամի երկու հիմնական աստվածաբանական ուղղություններից մեկն է (սուննիթականություն և շիիթականություն): Սուննիների և շիաների միջև գլխավոր տարաձայնությունը գահաժառանգության հարցի կապակցությամբ նրանց տարբեր մոտեցումներն են: Սուննիները չեն ընդունում խալիֆայության ժառանգականության սկզբունքը (խալիֆը իսլամական համայնքի՝ «ումմայի» հոգևոր և աշխարհիկ ղեկավարն է): Նրանք Մուհամմադ մարգարեի օրինական ժառանգորդներ են համարում առաջին երեք խալիֆներին՝ Աբու-Բաք-

րին, Օմարին և Օսմանյին, որոնք սերված չէին մարգարեից: Շիաները, ընդհակառակը, առաջին երեք խալիֆներին համարում են իշխանություն անօրինական կերպով հափշտակողներ և Մուհամմադ մարգարեի օրինական ժառանգորդներ են համարում նրա արյունակից ազգական (հորեղբորորդի) և մարգարեի դստեր՝ Ֆաթիմայի ամուսին Ալիին, նրա Հասան և Հուսեյին որդիներին և նրանց ժառանգորդներին: Նրանք գտնում են, որ միայն Ալին և նրա սերունդը օրինական իրավունք ունեն իմամաթի (խալիֆաթի), այսինքն՝ մահմեդական համայնքի՝ «ումմայի» հոգևոր և քաղաքական առաջնորդի դերի նկատմամբ: Մինչդեռ սուննիները գտնում են, որ իմամները պետք է ընտրվեն ժողովրդի կողմից, և նրանց իշխանությունը չպետք է փոխանցվի մեկ իմամից մյուսին:

Իսլամի ծնունդի առաջին տարիներին՝ Մուհամմադի մահվանից հետո, Ալիի կողմնակիցների և նրա հակառակորդների միջև բորբոքվեց դաժան ու անգիջում պայքար, որն ավարտվեց վերջիններիս հաղթանակով: Ալին և նրա Հուսեյն որդին այդ պայքարի ընթացքում սպանվեցին:

Այսպիսով՝ նախ՝ միանգամայն ակնհայտ է, որ շիիզմն ունի արաբական և ոչ թե իրանական ծագում: Այնուհետև՝ շիիզմի բազան քաղաքականության մեջ հանդիսանում է լեգիտիմիզմը: Իսկ ամենակարևորը այն է, որ Իրանի ազգային–քաղաքական շահերը նույնանում էին շիիզմի սկզբունքների հետ:

Օմայան խալիֆաթի քաղաքականության դեմ ընդդիմությունը Իրանում, ի միջի այլոց, դրսևորվում էր նաև նրանում, որ պարսիկները, եթե նույնիսկ ընդունում էին իսլամը, ավելի հաճախ այն ընդունում էին ոչ թե նրա «ուղղադավան» (սուննիթական), այլ «հերձվածողական»՝ շիիթական կամ խարիջիթական ձևով:

Մի խոսքով՝ Օմայանների տիրապետության վերջին շրջանում Իրանը վերածվեց հակաարաբական պայքարի կենտրոնի: Իրանցիների մոտ գնալով ուժեղանում էր իրանական ժողովրդին պատկանելիության զգացումը: Դա հատկապես դրսևորվեց շու'ուբիյա շարժման մեջ:

Դժգոհությունը Օմայան խալիֆայության տիրապետության նկատմամբ աճում էր ոչ միայն արաբների կողմից նվաճված պարսիկների և մյուս ժողովուրդների, այլև հենց իրենց՝ արաբների շրջանում: Արաբ խարիջիթները, օրինակ, գտնում էին, որ Օմայան դինաստիայի խալիֆները հեռացել են նախնական իսլամի սկզբունքներից: Նրանց տեսակետի համաձայն՝ իսլամական պետությունը, այսինքն՝ խալիֆաթը, պետք է կառուցվի այնպես, որ բոլոր մահմեդականներն իրենցից ներկայացնեն հավասար իրավունքներ ունեցող կրոնական համայնք: Նրանց կարծի-

քով՝ բոլոր իսլամ ընդունածները, ինչպես արաբները, այնպես էլ ոչ արաբները, պետք է ազատվեն ջիզյայից ու խարաջից:

Իր ծագմամբ քեն խարիջիթական շարժումը, ինչպես և շիիզմը, զուտ արաբական երևույթ էր, սակայն արդեն VII դարում նրանց սկսեցին հարել մեծ թվով իրանցիներ, հատկապես գյուղացիներ ու արհեստավորներ:

680 թ. խալիֆ Մուավիայի մահվանից հետո Օմայան գահը ժառանգեց նրա որդի Յազիդը: Շիաները ըմբոստացան նրա դեմ: Ալիի կրտսեր որդի Հուսեյնը իր կողմնակիցների հետ մարտահրավեր նետեց Յազիդին՝ հույս ունենալով «վերականգնել արդարությունը» և օրինական իրավունքով զբաղեցնել խալիֆի գահը: Սակայն 680 թ. հոկտեմբերի 10-ին Յազիդի կողմնակից չորս հազարանոց զորախումբը Քերբելայի մոտ շրջապատեց Հուսեյնին ու նրա ուղեկիցներին և նրանց բոլորին, այդ թվում նաև Հուսեյնին, սրի քաշեց: Վերջինս դրանից հետո դարձավ շիաների սուրբ նահատակը («շահիդ»):

Խալիֆ Աբդ ալ-Մալիքի օրոք (685-705 թթ.) վերջնականապես ձևավորվեց արաբական խալիֆայությունը: Ստեղծվեց արաբական միաձույլ պետություն, որի մայրաքաղաքը Դամասկոսն էր: Թեև խալիֆը մեծ ջանքեր էր գործադրում հպատակներին հնազանդեցնելու գործում, սակայն ընդվզումները շարունակվում էին: Իրաքում և Խուզիստանում 685-687 թթ. բռնկվեց հակաօմայան մի հուժկու ապստամբություն շիիզմի դրոշի ներքո, արաբ Մուխթար իբն Աբու Ուբեյդի գլխավորությամբ: Խալիֆի զորքերին մեծ ջանքերի գնով հաջողվեց ճնշել այդ վտանգավոր շարժումը:

686 թ. Իրաքում և Խուզիստանում բռնկվեց մի նոր ապստամբություն, որի մասնակից բեդվինները և արաբ ու պարսիկ գյուղացիները համախմբվել էին ազրաքիթների խարիջիթական աղանդի դրոշի ներքո: Ապստամբները քարոզում էին, որ ցանկացած կառավարչի, որը չի կատարում նախնական իսլամի պատվիրանները (այդ ասելով նրանք հասկանում էին բոլոր մահմեդականների սոցիալական հավասարությունը), պետք է ճանաչել որպես անհավատների և նրանց դեմ մղել պատերազմ հանուն հավատի: 697 թ. այդ ապստամբությունը ևս ճնշվեց բացառիկ դաժանությամբ: 747 թ. խալիֆ Մարվան Բ-ին հաջողվեց ուժերի գերագույն լարումով վերականգնել խալիֆաթի նոմինալ միասնությունը:

Գնալով Օմայաններն ուժեղացնում էին նվաճված ժողովուրդների, այդ թվում նաև իրանցիների ճնշումը: Նրանց քայքայում էին ուժից վեր հարկերով՝ միաժամանակ նրանց վերաբերվելով ինչպես ցածր մարդկանց, երբ այդ ժողովուրդները հանդիսանում էին հին քաղաքակրթությունների ժառանգորդներ:

Վերջ ի վերջո, խուլ տրտունջներին փոխարինելու էր գալիս ընդդիմադիր տարրերի, հատկապես շիիքների և խարիջիքների կողմից վարվող եռանդուն ու վարպետ քարոզչությունը, որն արագացնում էր Օմայյանների կայսրության անկումը:

VIII դ. սկզբին հայտնվեցին Օմայյանների նոր հակառակորդներ, որոնք, 20-ական թթ. սկսած, ծավալեցին բուռն քարոզչություն: Դա մի խմբավորում էր, որը գտնում էր, որ խալիֆաթի նկատմամբ օրինական իրավունքներ ունի միայն կուրայշիտներից սերած Աբբասյանների ընտանիքը, որոնք հանդիսանում էին Մուհամմադ մարգարեի հորեղբոր՝ Աբբասի հետնորդները: Աբբասյանները գտնում էին, որ Օմայյանները չեն սերում կուրայշ ցեղի Մուհամմադի տոհմից: Հետևաբար, եզրակացնում էին նրանք, Օմայյաններն իրավական հիմք չունեն դառնալու խալիֆներ, այսինքն՝ նրանց կառավարումը օրինական, լեգիտիմ չէ:

Աբբասյաններն իրենց հակաօմայյան քարոզչությունն իրականացնում էին արդարությունը և օրինականությունը վերականգնելու նշանաբանի ներքո: Նրանց շուրջ էին համախմբվում Օմայյաններից դժգոհ բոլոր ուժերը: Աբբասյանների կողմնակիցների շրջանում կային խելոք, եռանդուն և քաղաքական հեռատեսությամբ օժտված մարդիկ: Նրանք ակնառու կերպով տեսնում էին, որ նվաճված ժողովուրդների շրջանում, հատկապես իրանցիների մոտ, Օմայյանները հեղինակություն չեն վայելում, և աշխատում էին օգտագործել դա հանուն իրենց նպատակների: Աբբասյանները, որոնց հենարանը Իրանի մահմեդականներն էին, ձգտում էին վերացնել պետությունը կառավարելու գծով արաբների մենաշնորհը, այլ կերպ ասած՝ ժխտում էին արաբական ազգայնականությունը և ձգտում էին հիմնել թեոկրատական-աստվածապետական պետություն՝ մարգարեի տան ներկայացուցչի գլխավորությամբ: Պատկանելությունը իսլամին և ոչ թե արաբական ծագումը. ահա թե ինչը պետք է ապահովեր պետության գործերին լիիրավ մասնակցությունը: Նրանք սկսեցին քարոզել, որ Աբբասյանները՝ որպես մարգարեի հորեղբոր ուղղակի սերունդ, գահի նկատմամբ ունեն ավելի մեծ իրավունքներ, քան Օմայյանները, որոնք չեն սերում մարգարեի ցեղից: 724 թ. ձևավորվեց Աբբասյանների կողմնակիցների գաղտնի կազմակերպություն: Նրա իսկական ղեկավարը պարսիկ էր, հարուստ վաճառական Բուքեյր իբն Մահանը: Նա ընտրում էր եռանդուն և հավատարիմ մարդկանց և, որպես քարոզիչ–միսիոներներ (արաբ. դա՛ի), ուղարկում խալիֆաթի տարբեր շրջանները: Այդ քարոզչությունը հատկապես լայն չափեր ընդունեց Խորասանում և Մավերաննահրում, որտեղ իրենց արաբներից բարձր դա-

սող իրանցիների որոշ խմբեր չէին կարող հաշտվել այն մտքի հետ, որ «ցածր» արաբներն իրենց նկատմամբ հաստատել են լուծ:

Քարոզիչ-միսիոներները խոստանում էին, որ Աբբասյանների հաղթանակի դեպքում նոր դինաստիան թույլ կտա, որ իրանցիները, ինչպես նաև մյուս ժողովուրդները, մուտք ունենան դեպի իշխանությունը: Գյուղացիներին և քաղաքային բնակչության ստորին խավերին խոստանում էին հարկերի և տուրքերի նվազեցում:

734 թ. Խորասանում սկսվեց հակաօմայան ապստամբություն: Նմանատիպ ապստամբական շարժումներ ծավալվեցին նաև խալիֆայության այլ շրջաններում՝ Միջին Ասիայում, Հայաստանում, Աֆրիկայում և այլն: Ապստամբական շարժումները ծայրից ծայր ցնցում էին Օմայան խալիֆայությունը:

743 թ. Աբբասյանների կողմնակիցների գաղտնի ժողովի ժամանակ Բուքեյր իբն Մահանը ձերբակալվեց և բանտ նետվեց: Այստեղ նա ծանոթացավ երիտասարդ պարսիկ Աբու Մուսլիմի (իսկական անունը՝ Բեհզադ) հետ, որը նույնպես բանտ նետված Աբբասյանների կողմնակիցներից էր: Իր խելքով ու եռանդով Աբու Մուսլիմը Բուքեյրի վրա թողեց ուժեղ տպավորություն: Դուրս գալով բանտից՝ Բուքեյրը զեկուցեց Աբբասյանների ընտանիքի՝ այն ժամանակվա գլխավոր իմամ Իբրահիմ իբն Մուհամմադին Աբբասյանների գործի համար ընդունակ և օգտակար Աբու Մուսլիմի մասին: Շուտով իմամը բանտից ազատեց Աբու Մուսլիմին և կանչեց իր մոտ՝ Իրաք՝ ծանոթանալու նրա հետ:

Իմամ Իբրահիմի հրահանգով՝ 745 թ. Աբու Մուսլիմը մեկնեց Խորասան՝ Աբբասյանների սև դրոշի ներքո ապստամբություն կազմակերպելու և այն ղեկավարելու համար:

747 թ. հունիսի 9-ին Մերվի օազիսում բռնկեց հուժկու հակաօմայան ապստամբություն Աբու Մուսլիմի գլխավորությամբ: 748 թ. ամռանը ապստամբները Թուսի մոտակայքում ջախջախեցին Օմայանների զորքերին, իսկ նույն թվականի աշնանը գրավեցին Նիշապուրը: Երկու նոր հաղթանակից հետո՝ Գորգանում (748 թ.) և Նեհավենդի մոտ (749 թ.), ողջ Իրանը գրավվեց ապստամբների կողմից: Իսկ Մեծ Զաբ (Տիգրիսի վտակը) գետի մոտ 750 թ. հունվարին տեղի ունեցած վճռական ճակատամարտը վերջ դրեց Օմայանների կողմնակիցների դիմադրությանը: Մինչ այդ, 749 թ. ապստամբները ներխուժեցին Իրաք և տիրեցին Քուֆային: Օմայան վերջին խալիֆ Մրվան Բ-ն փախուստի դիմեց Եգիպտոս, որտեղ և սպանվեց: 750 թ. Օմայան դինաստիան, որը 90 տարի անընդմեջ կառավարեց խալիֆայությունը, ընկավ: Իշխանության գլուխ եկավ Աբբասյան-

ների դինաստիան (750-1258 թթ.)։ Ամենուր Օմայանների սպիտակ դրոշներն իջեցվեցին և փոխարինվեցին Աբբասյանների սև դրոշներով։

Հաղթանակած Աբբասյանները դաժան հետևողականությամբ սկսեցին կոտորել Օմայաններին, այդ թվում նաև վերջին խալիֆի ազգականներին՝ կենդանի չթողնելով ոչ ծերերին, ոչ կանանց և ոչ էլ երեխաներին։ Նրանցից միայն մեկին՝ Աբդ ալ-Ռահման իբն Մուավիային, հաջողվեց փախչել Իսպանիա (Անդալուսիա), որտեղ նա 756 թ. հիմնադրեց Կորդովայի Օմայան խալիֆայությունը։

Աբբասյանները նույնիսկ Աբու Մուսլիմի ծառայությունների նկատմամբ պատասխանեցին սև երախտամոռությամբ։ 755 թ. խալիֆ Մանսուրը հրամայեց սպանել նրան՝ մի մարդու, որի ջանքերով Աբբասյանները բարձրացել էին գահի վրա։ Աբու Մուսլիմի սպանությունը Իրանի շիաների մեջ առաջ բերեց զայրույթի փոթորիկ։ 755 թ. նրանք դիմեցին ապստամբության Սունբաթի գլխավորությամբ։ Աբբասյանները նույնիսկ չխորշեցին տակնուվրա անելու Օմայան խալիֆներից մի քանիսի գերեզմանները և պղծելու նրանց աճյունները։

Աբբասյան դարաշրջանի պատմական ստեղծագործությունների հեղինակները աշխատում էին համոզել իրենց ժամանակակիցներին և հետագա սերունդներին, որ տապալված դինաստիան անաստված դինաստիա էր։ Մինչդեռ Օմայաններն առաջ քաշեցին մահմեդական մեսիայի՝ 12-րդ իմամ Մահդիի գաղափարը, որն իբր հայտնվելու է երկրի վրա և տապալելով բռնավորներին՝ ստեղծելու է «արդարության կայսրություն»։ Բոլոր ժամանակներում այս ձևով են պարտվածները ու թույլերն աշխատում վրեժ լուծել իրենց հակառակորդներից։

Գալով իշխանության գլուխ՝ Աբբասյան դինաստիային անհրաժեշտ էր հավասարակշռություն պահպանել արաբների և իրանցիների միջև, որոնք նրան բերեցին իշխանության։ Անշուշտ, դա չափազանց դժվարին խնդիր էր։ Պարսիկները, ավելի ճիշտ՝ խորասանցիները, որոնցից շատերն ընդունվեցին Աբբասյանների ընտանիքի մեջ՝ որպես «զավակներ», նոր դինաստիայի կառավարման սկզբում ձևավորեցին կայսրության ռազմական կորիզը։

Աբբասյանների շրջանում արաբների դերն ու նշանակությունը մեծ չափով նվազեց և, ընդհակառակը, մեծացավ պարսիկների կշիռը։ Ըստ էության, առաջին անգամ իսլամի քաղաքական պատմության մեջ պարսիկները ձեռք էին բերում հսկայական դեր։ Կայսրության համախմբման գործոն էր հանդիսանում արդեն ոչ թե արաբ ժողովուրդը, այլ դինաստիան, որը կոչված էր ապահովել իսլամական միասնությունը։ Որևէ ազգի

առաջնություն չտալու, հետևաբար դժգոհություններ չհարուցելու նպատակով Աբբասյաններն ամուսնանում էին միայն ստրկուհիների հետ: 800 թ. հետո այլևս ոչ մի խալիֆ չծնվեց ազատ մորից:

Աբբասյան հարստության ժամանակ իրանական ազդեցությունն արտահայտվում էր ոչ միայն պալատական նիստուկացի և զգեստների վրա, այլև թափանցել էր արվեստի և գրականության մեջ: Առհասարակ, իրանական մշակույթը իր խորը դրոշմը թողեց Աբբասյանների քաղաքակրթության վրա: Պարսիկ կրթված դասը մշակեց մահմեդական աստվածաբանության և իրավագիտության սկզբունքները և առաջնակարգ տեղ գրավեց խալիֆայության կյանքի բազմապիսի բնագավառներում:

Չգտնելով հենվել իրանական ազնվականության վրա՝ Աբբասյան առաջին խալիֆները՝ Սաֆֆահը (750-754) և Աբու Ջաֆար ալ Մանսուրը (754-775), որոշեցին մայրաքաղաք հիմնել Իրանին մոտիկ մի վայրում, մանավանդ որ հին մայրաքաղաքում՝ Դամասկոսում, չափազանց ուժեղ էին Օմայան ավանդույթները: Աբբասյանների մշտական մայրաքաղաք Բաղդադը կամ, ինչպես արաբներն էին անվանում, Մեդինաթ աս-սալամը (արաբերեն՝ «խաղաղության» կամ «բարօրության» քաղաք) հիմնադրվեց Տիգրիսի արևմտյան ափին՝ հնում պարսիկների կողմից հիմնադրված Բաղդադ կոչված փոքրիկ գյուղի տարածքում: 742 թ. քաղաքը հիմնադրելով վեհաշուք Տիզբոնի ավերակների մոտ՝ խալիֆ Մանսուրը կարծես թե ցանկանում էր շեշտել, որ իր սրտին մոտ են Սասանյան պետության քաղաքական և մշակութային ավանդույթները: Սակայն նոր մայրաքաղաքի տեղի ընտրությունը, անշուշտ, կապված էր հարմար ռազմական և ստրատեգիական դիրքի, տրանսպորտային կարևոր հանգույց լինելու հետ: Բաղդադի հիմնադրումը ոչ պակաս հաճելի էր նաև իրանական հողային ազնվականությանը:

Իրանի վիճակը Աբբասյան խալիֆայության կազմում որոշ չափով բարելավվեց: Նախ՝ պետական, քաղաքական, տնտեսական, կրոնական, ռազմական և մշակութային համակարգում բարձրագույն պաշտոնները սկսեցին զբաղեցնել ոչ միայն արաբները, այլ նաև իրանական հողային ազնվականության (դեհկանների) ներկայացուցիչները:

Աբբասյանները խալիֆայությունում արմատավորեցին Սասանյան Իրանի կառավարման համակարգը, նրանք ընդօրինակեցին Սասանյանների պալատական նիստուկացը, Սասանյան շահերի օրինակով սկսեցին կառուցել շքեղ պալատներ՝ միաժամանակ անձնատուր լինելով պերճանքին ու ցոփությանը:

«Պարսիկ պետական պաշտոնյաների, զինվորականների,

առևտրականների և ընդհանրապես պարսկական տարրի դերի աճման հետևանքով,- գրում է արաբագետ պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը,- թուլացան արաբական տոհմիկ արիստոկրատիայի դիրքերը խալիֆայության բոլոր օղակներում: Հօգուտ պարսկական տարրի տեղի ունեցած փոփոխությունները հիմք են հանդիսացել առաջ քաշելու այն տեսակետը, որ խալիֆայությունը Աբբասյանների ժամանակ կորցրել էր իր արաբական բնույթը, կամ այդ բնույթը զուտ ձևական էր դարձել, և խալիֆայությունը վերածվել էր համաիսլամական պետության՝ պարսկական որոշակի երանգով»:

Անդրադառնալով այդ նույն հարցին՝ արաբ պատմաբան Ֆիլիպպ Հիթթին հայտնում է այն կարծիքը, որ այն բանից հետո, երբ կառավարության մեջ պարսիկները գրավեցին կարևոր պաշտոնները, «արաբիզմն ընկավ, բայց իսլամը շարունակվեց, և միջազգային իսլամի ղեկավարության ներքո իրանիզմը հաղթականորեն մտավ ներս»:

Աբբասյաններն իրենց բանակի մեջ սկսեցին ընդգրկել նաև «մավալի» իրանցիների, որը կազմավորված էր աշխարհազորի սկզբունքով և համալրվում էր իսլամն ընդունած տեղական իրանական բնակչությունից: Այդ ջոկատների գլուխ էին կանգնած իրանական ազնվականության տեղական ներկայացուցիչները: Գոյություն ուներ իրանցիների կողմից բանակի համալրման ևս մեկ ձև. մեծ թվով հողազուրկ գյուղացիներ լքում էին գյուղական վայրերը և աշխատանք գտնելու հույսով տեղափոխվում էին քաղաքներ: Սակայն քանի որ ոչ բոլոր եկվորներն էին աշխատանք գտնում, քաղաքներում գոյանում էին թափառաշրջիկ ու քաղցած մարդկանց խոշոր զանգվածներ: Զինվորական գործից հասկացող, եռանդուն, դյուսմատեր և արկածախնդրությունների հակված մարդիկ այդ թափառաշրջիկներին վարձում էին ռազմական գործի մեջ, մարզում, հագցնում, զինում և կազմելով ջոկատներ՝ նրանց ծառայության մեջ ընդգրկում Իրանում այս կամ այն արաբական փոխարքայի մոտ: Այդ վարձու զինվորներին աղբյուրներն անվանում են «մութաթավիյա» (կամավորներ): Սրանք աչքի էին ընկնում իրենց խիզախությամբ և բարձր էին գնահատվում որպես ռազմիկներ:

Աբբասյան խալիֆայության հինգ դարերից միայն առաջին (Մանսուրի, Հարուն-ար-Ռաշիդի և Մամունի) դարաշրջանը իսկապես հանդիսանում էր ծաղկման ու վերընթաց զարգացման մի դարաշրջան: Դա այդ հարստության պատմության ամենավայելուչ շրջանն էր: Ֆրանսիացի մտածող Ռենանն ասել է, որ «մարդիկ պետք է հավերժ երազեն նրա մասին»:

Սակայն աստիճանաբար սկսեցին ի հայտ գալ խալիֆայության պե-

տական կարգի թերություններ: Կայսրության տարածքը չափազանց մեծ էր, և նրանում արդեն նկատվում էին քայքայման նշաններ: VIII դ. երկրորդ կեսից սկսած՝ ողջ խալիֆայությունով մեկ կրկին ծայր առան ապստամբական շարժումներ՝ ուղղված կենտրոնական իշխանության դեմ:

Աբբասյանների նկատմամբ դժգոհությունը վաղ դրսևորումներ ունեցավ նաև Իրանում: Դեռևս 755 թ. Նիշապուր և Ռեյ քաղաքներում բռնկվեց ապստամբություն զրադաշտական Սունբաղի գլխավորությամբ: Դա մի կարճատև, սակայն արյունոտ ու սարսափելի ընդվզում էր: Խալիֆ Մանսուրը ապստամբների դեմ ուղարկեց 10- հազարանոց մի բանակ, որը ջախջախեց ու ցրեց նրանց: Շուտով սպանվեց նաև շարժման ղեկավար Սունբաթը: Այնուհետև իրար հետևից ապստամբություններ բռնկվեցին տարբեր վայրերում. 767թ.՝ Խորասանում, 776 թ. Մերվում՝ Հաշիմ իբն Հաքիմի գլխավորությամբ, որն ավելի շատ հայտնի է ալ-Մուկաննա անվամբ («ծածկոցով փակված»), քանի որ նրա դեմքը մշտապես փակված էր: Դա Աբու-Մուսլիմի սպանության դիմաց արյան վրիժառության մի շարժում էր, որը վերածվեց հուժկու ապստամբական հրդեհի: Ապստամբության մասնակիցները գլխավորապես Խորասանի մավալիներն էին: Այդ շարժումը տարածվեց նաև մի շարք այլ քաղաքների՝ Սողդի, Բուխարայի և այլն վրա: Այն ճնշվեց միայն 783 թ.: Չցանկանալով կենդանի ընկնել խալիֆ ալ-Մահդիի ձեռքը՝ Մուկաննան ինքնասպան եղավ:

Ապստամբները հաճախ հանդես էին գալիս շիիզմի կանաչ դրոշի ներքո՝ ընդդեմ «սևազգեստների», այսինքն՝ Աբբասյանների: Առանձին դեպքերում ապստամբություններն ընթանում էին կարմիր դրոշի ներքո, որը խորհրդանշում էր «շահիդությունը», այսինքն՝ նահատակությունը հանուն հավատի: Երբեմն դրանց անվանել են «մուհամիրներ» (արաբերեն «ալ-համրա»՝ «կարմիր» բառից): Հաճախ նրանք հագնում էին նաև կարմիր զգեստներ:

Ապստամբությունների գաղափարական հենքը նաև հուրեմիների ուսմունքն էր, որը համարվում էր մազդակյանների գաղափարախոսության այլատեսակությունը: VIII-IX դդ. հուրեմիները բաժանվում էին մի քանի աղանդների. աբու-մուսլիմա, քուդաքիա, ասպիդ ջամաքիյա (արաբերեն՝ «սպիտակ զգեստավորներ», պարսկերեն՝ «սաֆիդ ջամեգան»):

Հուրեմիները ժխտում էին իսլամն ու նրա ծեսերը: Նրանք գտնում էին, որ աշխարհում տեղի է ունենում պայքար երկու սկիզբների՝ բարու (աստվածայինի) և չարի (սատանայականի) միջև: Պետությունը, հողի նկատմամբ սեփականությունը, հարկերը, ողջ պետական կառույցը հուրեմիների կողմից հայտարարվում էին չար ոգու արգասիք: Նրանք քարոզում էին

ակտիվ պայքար մղել անարդար հասարակական կարգերի դեմ: Խալիֆայության նկատմամբ հուրեմիները վերաբերվում էին անհաշտ ատելությամբ և իրենց գլխավոր խնդիրն էին համարում նրա տապալումը:

Հուրեմիներն անթույլատրելի էին համարում կենդանի արարածների արյուն հեղելը, բացառությամբ բռնության ու ճնշմանը հակադարձելու ու դիմադրելու դեպքերից, երբ, նրանց կարծիքով, արյան հեղումը թույլատրելի է: Այդ դրույթը սրբագործում էր ճնշվածների իրավունքը հարստահարողների դեմ ապստամբելու հարցում: Հուրեմիների սոցիալական ծրագրի հիմնական կետը հողի նկատմամբ համայնական սեփականության հաստատման պահանջն էր, երբ հողը կդառնար ազատ գյուղական համայնքի ընդհանուր սեփականություն:

Հուրեմիների գլխավոր հենակետերը գտնվում էին Ատրպատականում՝ Արդեբիլի և Թալիշի լեռնային շրջաններում: Սակայն նրանց գաղափարները տարածված էին նաև այլ վայրերում և նույնիսկ երկրի սահմաններից դուրս:

816 թ. հուրեմիները խալիֆայության դեմ բարձրացրին մի հուժկու ապստամբություն Բաբեկի գլխավորությամբ, որի իսկական անունը Հասան էր: Նա քսան տարի շարունակ ղեկավարում էր հակաաբբասյան, հակաարաբական ապստամբությունը: Ապստամբության հրդեհը, դուրս գալով Ատրպատականից, տարածվեց նաև Արևմտյան Իրանում, Թաբարիստանում, Դեյլեմում, Գորգանում (որին արաբներն անվանում են Ջուրջան), Խորասանում և հասավ մինչև Իրանի հարավային շրջանները՝ Սպահան և այլուր: Բաբեկին հաջողվեց գրավել Համադանը և Բաղդադը՝ իր հսկողությունը սահմանելով առևտրական ճանապարհների վրա: *Բյուզանդական կայսրությունից*, նրա մշտական ախոյանի՝ խալիֆայության դեմ օգնություն ստանալու ակնկալիքով Բաբեկը նույնիսկ կապեր հաստատեց կայսր Թեոֆիլի հետ՝ նրան հորդորելով համատեղ գործողություններ ծավալել ընդհանուր թշնամու դեմ, սակայն խորամանկ բյուզանդացին ձգտում էր միայն օգտագործել Բաբեկին, ուստի ձեռնպահ մնաց: Բաբեկին անվանում էին «աստծո հերթական մարմնացում երկրի վրա»: Ապստամբները արաբական զորքերին հասցրին երեք սարսափելի պարտություններ (820, 823, 827 թթ.) և գրավեցին հսկայական տարածքներ Դվինից և Բերդաայից սկսած մինչև Սպահան:

Աբբասյանները ստիպված էին հուրեմիների դեմ պայքարելու համար ստեղծել հատուկ վարձու բանակ, որի անձնակազմը հավաքագրվում էր գլխավորապես միջինասիական բյուրքերից, աֆրիկյան բերբերներից և ստրուկներից (ղոլամներ): 836 թ. խալիֆաթի զորքերը Հայդար

իբն Քաբուս Ափշինի հրամանատարությամբ ապստամբներին շրջապատեցին հուրեմիների գլխավոր հենակետ Բաազ ամրոցում, որը գտնվում էր Արաքսից հարավ՝ Ղարադաղի լեռներում: Ամիսներ տևած շրջապատումից հետո՝ 837 թ. օգոստոսին ամրոցը գրավվեց, հուրեմիները կոտորվեցին, իսկ նրանց կանայք և երեխաները իբրև ստրուկներ բաժանվեցին արաբ զինվորների միջև:

Թեև Բաբեկին հաջողվեց փախչել Աղվանք, սակայն շուտով նա դարձավ դավաճանության զոհ և ձերբակալվելով՝ շղթայակապ ուղարկվեց Բաղդադից ոչ հեռու գտնվող Սամարրա՝ խալիֆի նստավայրը: Խալիֆ Մութասիմը հրամայեց կտրել Բաբեկի ձեռքերի դաստակները և ոտքերի կրունկները, իսկ ապա խաչելության ենթարկել (837 թ. սեպտեմբերի 4-ին):

869-883 թթ. Աբբասյանների դեմ խոշոր ապստամբություն բռնկվեց նաև Միջագետքում (այսպես կոչված՝ սևամորթ ստրուկ զինջերի կամ զանջիների ապստամբությունը): Սակայն այն նս դաժանորեն ճնշվեց:

Այնուհանդերձ, այդ ապստամբությունները ուժգին հարված հասցրեցին Աբբասյան խալիֆայությանը և նշանակալիորեն թուլացրին այն: Դրա հետևանքով ուժեղացան տեղական իրանական ավատատերերի դիրքերը՝ ի հակակշիռ արաբների:

809 թ. խալիֆ Հարուն-ար-Ռաշիդի մահվանից հետո նրա երկու որդիների՝ Ալ-Ամինի և Ալ-Մամունի միջև սկսվեց արյունոտ պայքար գահի համար: 813 թ. այն ավարտվեց Մամունի հաղթանակով, որը պարսկուհու զավակ էր (Հարուն-ար-Ռաշիդի ստրկուհու որդին) և սերտորեն կապված էր իրանական հողային ազնվականության հետ: Նա տեղյակ էր, որ Իրանում գոյություն ունի համընդհանուր դժգոհություն խալիֆաթի նկատմամբ, ուստի Մամունը բարեկամական հարաբերություններ հաստատեց Իրանի չափավոր շիիթների վերնախավի հետ՝ հույս ունենալով նրանց ներգրավել իշխանության մեջ և դրանով իսկ թուլացնել ժողովրդական դժգոհությունը: Նա մեծ տեղ տվեց նաև այդ ժամանակ խալիֆի արքունիքում գործող՝ ծագումով պարսիկ, վեզիր Ֆազլ իբն Սահլին և նրա եղբայր Հասան իբն Սահլին: Վերջապես, ի հաճոյս իրանական չափավոր շիիթների, խալիֆը իր ժառանգորդ հռչակեց ութերորդ շիիթական իմամ Ալի ար-Ռիզային: Հենց այդ ժամանակ էլ նա Աբբասյանների պաշտոնական սև դրոշը փոխարինեց շիիթների կանաչ դրոշով:

Սակայն Մամունի քաղաքականության չափավոր շիիթական կուրսը չտվեց ցանկալի արդյունքներ: Իրանի բնակչությունը այդ փոփոխություններից ոչինչ չստացավ, և հուզումները շարունակվում էին: Ավելին, խալիֆի քաղաքական խաղերը կրոնի հետ ավելի ուժեղացրին կրոնա-

կան անհանդուրժողականությունը: Այսպես՝ իսլամն ընդունած իրանական հողային ազնվականության այն մասը, որը գնում էր բարձրատոհմիկ դեհկանական ընտանիքի ներկայացուցիչ Թահիր իբն Հուսեյնի հետևից, սկսեց դժգոհություն արտահայտել խալիֆի քաղաքականության նկատմամբ՝ հատկապես կտրուկ դատապարտելով շիիթների հետ նրա մերձեցման փորձերը:

Համոզվելով, որ իր քաղաքականությունը ձախողվել է, Մամունը նետվեց մեկ այլ ծայրահեղության մեջ. որոշեց միանգամից խզել իր կապերը շիիթական շրջանների հետ: Ֆազլ իբն Սահլը և շիիթական իմամ Ալի ար-Ռիզան, որոնց խորհուրդներով էր խալիֆն իրականացրել իր վերոհիշյալ քաղաքականությունը, վճարեցին սեփական կյանքով: Մեզ հասած վարկածներից մեկի համաձայն՝ Ֆազլ իբն Սահլը Մամունի գաղտնի հրամանով սպանվեց բաղնիսում, իսկ իմամը թունավորվեց: Աբբասյանների գահը խորհրդանշող սև գույնը վերականգնվեց, իսկ խալիֆը, որի նստավայրը Մերվն էր, 819 թ. վերջնականապես վերադարձավ Բաղդադ:

Արդեն IX դ. առաջին քառորդից սկսած՝ Աբբասյանների խալիֆայությունում սկսվեց աստիճանական քաղաքական տրոհման գործընթաց: Դա միանգամայն բնական երևույթ էր, քանի որ այդ պետությունը ժողովուրդների ու ցեղերի մի խառնուրդ էր: Պետության քայքայման ու տրոհման մյուս գործոններն էին անընդհատ բռնկվող ապստամբությունները, իրանցիների և արաբների միջև մշտական դարձած խուլ հակամարտությունը, արաբական և պարսկական վերնախավի բացահայտ պայքարը, շիա-սունիի դիմակայությունը, որ հիմքում պարունակում էր իշխանության համար քաղաքական պայքարի իմաստ, տեղական խոշոր ավատատերերի քաղաքական անջատողականությունը, որը հանգեցնում էր տեղական ժառանգական էմիրությունների գոյացմանը, որոնք այլևս հաշվի չէին նստում խալիֆի և նրա իշխանության հետ: Այսպես՝ դեռևս 755 թ. ինքնուրույն էմիրություն ձևավորվեց Իսպանիայում, 788 թ. Մարոկկոյում ստեղծվեց իդրիսների անկախ շիիթական էմիրություն (ի դեպ, իդրիսների դինաստիան հանդիսացավ պատմության մեջ առաջին շիիթական դինաստիան), 800 թ. Իֆրիկիայում կամ Թունիսում ստեղծվեց Աղլաբիների էմիրությունը, 777 և 800 թթ. Ալժիրում առաջացան երկու էմիրություններ, 868թ. Եգիպտոսում հիմնվեց Թուլունիների պետությունը, 929 թ. պետական մի կազմավորում հայտնվեց նաև հյուսիսային Սիրիայում: IX դ. ընթացքում վերածնունդ ապրեց տեղական պետականությունը Հայաստանում և Վրաստանում: Ժառանգական էմիրություններ հայտնվեցին նաև Իրանում և Մավարաննահրում:

Այդ փաստացի ինքնուրույն ավատական պետությունները տեղական դինաստիաների գլխավորությամբ կամ անվանապես ճանաչում էին իրենց նկատմամբ խալիֆայության իշխանությունը կամ իսպառ մերժում ու ժխտում էին այն:

Այսպիսով՝ արաբական տիրապետության շրջանում Իրանը այնուամենայնիվ, չհրաժարվեց իր ազգային առանձնահատկություններից և ուրույն դիմագծից՝ ապացուցելով իր բարձր կենսունակությունը: Ավելին՝ արաբներն Իրանում ենթարկվեցին իրենց կողմից նվաճվածների կամ ընկճվածների քաղաքակրթությանը: Նույնիսկ իսլամը, որը դարձավ պարսիկ ժողովրդի կրոնը, ազգայնանալով ձեռք բերեց յուրահատուկ դիմագիծ՝ պարսկացնելով իրեն:

«Պարսիկների պես բարձր քաղաքակրթության հասած մի ժողովուրդ չէր կարող կուրորեն ընդունել թեկուզ հենց հարկադրանքով, մի կրոն, որ ստեղծել էին հետամնաց արաբները» (Լեո):

Միաժամանակ արաբներն ու իսլամը նոր շունչ հաղորդեցին Իրանին և առհասարակ Միջին Արևելքին: Ճշմարիտ է և իրականությանը միանգամայն համապատասխանող պարսիկ գիտնականների այն տեսակետը, որ «տանելով պարտության դառնությունն, Իրանը, ինչպես սալամանդր, վերածնվեց մոխրից և նոր իսլամական աշխարհում գտավ կյանքի նկատմամբ մի նոր ազդակ ու կամք: Սկսվեց Իրանի մշակութային և քաղաքական նորացումը, որն իրենով նշանավորեց իսլամական քաղաքակրթության ծաղկման երկրորդ շրջանը»:

Սակայն իր քաղաքական վերածննդին Իրանը ստիպված էր սպասել 400 տարի, երբ այդ երկրում հայտնվեցին տեղական դինաստիաներ, որոնք, փոխարինելով հոգնած արաբներին, այս անգամ ստիպված էին հարատև պայքար մղել թյուրքերի արշավանքների դեմ: Այսպիսով՝ սկսվում էր Իրանի և Թուրանի դարավոր պայքարը:

3. ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՈՒՄՆ ԻՐԱՆՈՒՄ: ՆՈՐ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

IX-X դդ. խալիֆայության դեմ ապստամբությունների հետևանքով Իրանի և Միջին Ասիայի տարածքում ծնունդ առան մի շարք ավատական պետություններ, որոնք խալիֆից կախման մեջ էին գտնվում միայն անվանապես: Խորասանում և Միջին Ասիայի սահմանակից շրջաններում ստեղծվեց Թահիրիների պետությունը (821-873 թթ.): Նրա հիմնադիրն էր իրանական մավալ Թահիր իբն ալ-Հուսեյն Խորասանին, որը Բաղդադի արքունիքում մինչ այդ զբաղեցնում էր բարձր դիրք: Միաժամանակ խալիֆ Մամունն ընկել էր իր այդ հզոր պարսիկ աստիճանավորի ազդեցության տակ: Սակայն աստիճանաբար նրանց հարաբերությունները բարդացան, և 820 թ. խալիֆը նրան նշանակեց Բաղդադից արևելք ընկած խալիֆայական բոլոր նահանգների կառավարիչ: Նրա քաղաքական կենտրոնը դարձավ Մերվ քաղաքը: Ընդամենը մեկ տարի անց՝ 822 թ., Մերվի մայր մզկիթում ուրբաթօրյա աղոթքի ժամանակ, երբ ընդունված կարգի համաձայն՝ «խութբան» ընթերցելիս պետք է հիշատակվեր խալիֆի անունը, դա տեղի չունեցավ: Բաղդադում դա դիտվեց որպես քաղաքական մարտահրավեր, մանավանդ որ Մերվում խալիֆի գաղտնի գործակալ սահիբ-բերիդը այդ լուրը Բաղդադ էր հաղորդել թանձրացված գույներով: Շուտով Թահիր իբն ալ-Հուսեյնին անկողնում գտան խեղդամահ արված: Հետաքննությամբ պարզվեց, որ Թահիրը ծրագրել էր Բաղդադից անջատել Իրանի շրջանները և ստեղծել անկախ իրանական պետություն:

Խալիֆ Մամունը խոհեմաբար որոշեց հետապնդումներ չկազմակերպել Թահիրիների տան դեմ՝ վախենալով ապստամբությունից: Այդ առումով նա չհետևեց իր հոր՝ Հարուն-ար-Ռաշիդի օրինակին, որը մեկ հարվածով վերջ տվեց ինքնագլխության հակումներ ունեցող Բարմաքիդների իրանական ուժեղ ընտանիքին:

Թահիր իբն ալ-Հուսեյնի ժառանգորդ դարձավ նրա որդի Թալխա իբն ալ-Թահիրը, որը կառավարեց 822-828 թթ.: Սրա օրոք սկիզբ դրվեց խալիֆայության արևելյան շրջանների նկատմամբ Թահիրիների տան ժառանգական իրավունքին: Թահիրի և նրա ավագ որդու մահվանից հետո իշխա-

նությունն անցավ նրա մյուս որդուն՝ Աբդալլահ իբն Թահիրին (828-845):

Անվանապես իրենց կապերը չխզելով խալիֆայության հետ և ձևականորեն մնալով նրա կազմում՝ Թահիրիները, այսպիսով, ստեղծեցին հզոր մի պետություն, որը Խորասանի, իսկ ապա նաև Թաբարիստանի ու Իրանի մյուս նահանգների տարածքում վարում էր ինքնուրույն քաղաքական կյանք: Էմիրության սահմանները ծավալվելով հասան մինչև Հնդկաստան: Մայրաքաղաքը Մերվից տեղափոխվեց Նիշապուր: Էմիրության կախումը խալիֆից արտահայտվում էր լոկ նրանով, որ «խութբայի» ժամանակ առաջինը հիշատակվում էր խալիֆի անունը, նրա անվամբ հատվում էր արծաթյա դրամ՝ դիրհեմ, խալիֆայության գանձարանն էր մուծվում խարաջի և մյուս հարկերի մի մասը՝ սակայն քնավ թույլ չտալով խալիֆի միջամտությունը պետության ներքին գործերին:

Թահիրիները վարում էին իրանական մշակույթը, գրականությունը և գիտությունը զարգացնելու քաղաքականություն: Ըստ էության, նրանք հանդես էին գալիս որպես երկրի «իրանականացման» համոզված ջատագովներ: Ուշագրավ է նաև նշել, որ թահիրիները դավանում էին սունհիզմը և անհանդուրժողական դիրքորոշում էին դրսեգրել շիաների նկատմամբ: Թահիրիների դինաստիան գոյատևեց մինչև 873 թ. և ընկավ քաղաքական վերելք ապրող Սաֆարիների հարվածների տակ:

Սիսթանի շրջանը ևս աղանդավոր խարիջիականների գաղափարական ղեկավարության ներքո մշտապես ապստամբում էր խալիֆայության տիրապետության դեմ: «Հերետիկոս» հռչակված խարիջիականների դեմ պայքարելու համար խալիֆայությունը օգտագործում էր այսպես կոչված «մութաթավիների» («կամավորներ»), կամ «ղազիների» («մարտիկներ հանուն հավատի») ջոկատները, որոնք հավաքագրված էին ավազակներից, զանազան արկածախնդիրներից և մութ անցյալ ունեցող խառնիճաղանջ ամբոխից: Այդ ջոկատներից մեկը Յաղուբ իբն ալ-Լայս աս-Սաֆֆարի գլխավորությամբ ապստամբում է խալիֆայության դեմ, Սիսթանում գրավում իշխանությունը և Լայսին հռչակում Սիսթանի էմիր (861 թ.):

Վերջինս ձգտում էր ընդլայնել էմիրության տարածքը և նվաճում է Հերաթն ու Բալխը, իսկ այնուհետև՝ տապալելով Թահիրիների դինաստիան, տիրանում ողջ Խորասանին: Նրան հաջողվում է, ճիշտ է, ժամանակավորապես, գրավել նաև Քերմանն ու Ֆարսը: Սակայն նրա փառասիրական ձգտումները չսահմանափակվեցին դրանով: Նա փորձեց գրավել նույնիսկ խալիֆայության մայրաքաղաքը՝ Բաղդադը, սակայն նրա զորքերը կրեցին ծանր պարտություն:

875 թ. խալիֆ ալ-Մութամիդը Յաղուբ իբն ալ-Լայս աս-Սաֆֆարին

ճանաչեց Սիսթանի, ինչպես նաև Խորասանի, Թաբարիստանի, Քերմանի և Ֆարսի էմիր:

879 թ. Յաղուբի մահվանից հետո էմիր դարձավ նրա եղբայր Ամրը (879-901): Նա ձևականորեն հաշտվեց խալիֆի հետ և նրանից ստացավ իր իշխանությունը ճանաչելու վերաբերյալ հրովարտակ և դրոշ: Սակայն, ի տարբերություն Թահիրիների, ոչ Յաղուբը և ոչ էլ Ամրը խալիֆին այլևս ոչ մի հարկ ու տուրք չէին վճարում՝ ամբողջապես յուրացնելով խարաջից հավաքված գումարը (40 միլիոն դիրհեմից ավել):

Այսպիսով՝ Սաֆֆարիների ժամանակ Խորասանը և Սիսթանը կատարելապես անկախ էին խալիֆայությունից և Բաղդադի իշխանությունը ճանաչում էին լոկ անվանապես: Ավելին՝ խալիֆը վախենում էր Ամրից՝ սակայն ուժ չունենալով նրան «կարգի հրավիրելու», աշխատում էր նրա դեմ հանել Մավարաննահրի Սամանիներին: Այս դինաստիայի հիմնադիրը էր Նասր իբն Ահմադը, որը 874 թ. Մավարաննահրում հիմք դրեց մի նոր պետականության, որը գոյատևեց մինչև 999 թ.: Խալիֆը Սաֆֆարիների էմիր Ամրի դեմ հանեց Սամանիների էմիր Իսմայիլին, որն իր մրցակցի նման վերին աստիճանի ընչաքաղց և իշխանատենչ մեկն էր: Ամրից մեծ գումար ստանալով՝ խալիֆ ալ-Մութամիդը նրան շնորհեց Մավարաննահրը տիրելու վերաբերյալ հրովարտակ՝ միաժամանակ Իսմայիլ Սամանիին գաղտնորեն սադրելով Ամրի դեմ:

Երկու մրցակիցների առճակատումը պետք է հանգուցալուծվեր զենքի օգնությամբ: Հակառակորդների բանակները իրար հանդիպեցին Բալխի մոտ: Տեղի ունեցած կատաղի ճակատամարտում Սաֆֆարիների զորքերը գլխովին ջախջախվեցին, իսկ Ամրը գերի ընկավ և շղթայակապ ուղարկվեց Բաղդադ, որտեղ խալիֆը չհապաղեց նրան մահապատժի ենթարկելու: Ողջ Խորասանը մտավ Սամանիների պետության կազմի մեջ (900 թ.): Մի քանի տարի անց նրանք նվաճեցին նաև Սիսթանը, Քերմանը, Ջուրջանը, Ռեյը և Թաբարիստանը: Սամանիները խալիֆից ստացան այդ շրջանների նկատմամբ իրենց իրավունքը հաստատող հրովարտակ և դրոշ: Սակայն Բաղդադից այդ «իրավունքի» ձեռքբերումը կրում էր լոկ ձևական բնույթ, քանի որ Սամանիները փաստորեն անկախ էին, խալիֆին չէին վճարում հարկեր և նրա իշխանությունը ճանաչում էին զուտ ձևականորեն:

Հետագայում Սամանիները Սիսթանը վերադարձրին Սաֆֆարիների դինաստիայի ժառանգորդներից մեկին, սակայն արդեն որպես իրենց վասալի: Խորասանը մնաց Սամանիների ձեռքերում մի ամբողջ հարյուրամյակ՝ մինչև 999 թ.:

Առևտրական լայն հարաբերությունները Պովոլժիեի, Խորեզմի, Արևելյան Եվրոպայի և Բյուզանդիայի հետ նպաստեցին Սամանիների պետության ծաղկմանը և նրանում մշակույթի զարգացմանը: Սամանիների պետության պաշտոնական մայրաքաղաքը Բուխարան էր, սակայն որպես այդ պետության մշակութային ու վարչաքաղաքական կարևոր կենտրոն հանդես էր գալիս նաև Սամարղանդը: Սամանիների էմիրների հովանավորողական քաղաքականության շնորհիվ այդ պետության մեջ մեծ ծաղկում ապրեցին մշակույթն ու գիտությունը, հատկապես ֆարսի լեզվով գրականությունը: Հենց այդ ժամանակաշրջանում փայլատակեց պարսից դասական գրականության հանճարի՝ Ֆիրդուսու տաղանդը, որը գրեց իր անմահ «Շահնամեն»:

Այդ նույն X դարում են ստեղծագործել պարսկական պոեզիայի այնպիսի կարկառուն ներկայացուցիչները, ինչպիսիք են Ռուդաքին, Դաղիղին և այլք:

Սակայն Սամանիների պետությունը ստիպված էր մշտական պայքար մղել թյուրք քոչվորների ասպատակությունների դեմ: Հենց այդ նույն թյուրք ղոլամներից (ստրուկներից) Սամանիները կազմակերպեցին հատուկ զորամասեր՝ ներքին ապստամբությունները ճնշելու համար: Դարի վերջին ղոլամների բարձրագույն հրամանատարները վերածվեցին խոշոր ավատատերերի և դաղարեցին ենթարկվել Սամանիներին: Մի կողմից՝ ավատատերերի խռովություններից ու երկպառակություններից, մյուս կողմից ժողովրդական զանգվածների ապստամբություններից թուլացած Սամանիների պետությունը 999 թ. նվաճվեց թյուրք Կարախանյանների կողմից:

Իրանի մերձկասպյան շրջանները տևական ժամանակամիջոցի ընթացքում տնտեսապես և քաղաքականապես թույլ էին կապված մնացած Իրանի հետ: Արաբներին միայն VIII դարում հաջողվեց նվաճել Կասպից ծովի հարավ արևելյան ափերի մոտ ընկած Գորգանի կամ Գուրգանի (արաբականացված ձևը՝ Ջուրջան) և Թաբարիսթանի (ներկայումս՝ Մազանդարան, գտնվում է Կասպից ծովի հարավային ափերին) շրջանները: Սակայն դրանից հետո ևս, խալիֆների իշխանությունն այնտեղ երբեք էլ կայուն և ուժեղ չի եղել: Նույնիսկ դրամները հատվում էին ոչ թե արաբական գրությամբ, այլ պահլավական:

Մնացած մերձկասպյան շրջանները՝ Գիլյանը, որն ընկած է Կասպից ծովի հարավարևմտյան ափերի մոտ, և Դեյլեմը, որը գտնվում էր Գիլյանից հարավ՝ Էլբուրս լեռնաշղթայի երկու փեշերին, երբեք չէին նվաճվել արաբների կողմից: Այդ շրջաններում ապրում էին ծանր, դժվա-

րին ու աղքատ կյանք վարող գիլյանցիներն ու դեյլեմիթները, որոնք խոսում էին իրանական լեզվախմբի մեջ մտնող գիլաներենով: Արաբները բազմիցս հարձակվում էին Գիլյանի և Դեյլեմի վրա ռազմական ավար, հատկապես գերի ստրուկներ ձեռք բերելու համար: Իսլամը, ընդ որում՝ ոչ թե նրա ուղղադավան-սուննիթական, այլ շիիթական ուղղությունը, Դեյլեմում և Գիլյանում սկսեց տարածվել միայն IX դ. երկրորդ կեսից խալիֆայությունից այստեղ փախած շիիթների կամ Ալիդների (Ալիի կողմնակիցների) քարոզչության հետևանքով:

Արաբ աշխարհագիրները հաղորդում են, որ դեյլեմցի լեռնականները վերին աստիճանի ազատատենչ էին և ռազմատենչ: Նրանք մարտնչում էին երկատամ նիզակներով, որը համարվում էր ահարկու մի զենք: Քանի որ նրանց խստաշունչ լեռնային երկիրը չէր կարողանում կերակրել ողջ բնակչությանը, ուստի մեծ թվով դեյլեմցի պատանիներ լքում էին իրենց հայրենիքը և ծառայության մեջ մտնում Աբբասյան խալիֆների և տեղական իրանական էմիրների վարձու զորքերում: Աբբասյանների հեծյալ գվարդիան բաղկացած էր գնված երիտասարդ թյուրք ստրուկներից (ղոլամներից կամ մամլյուքներից), իսկ հետևակային զորամասերը՝ առավելապես դեյլեմյան կամ գիլյանական վարձկաններից: X դարում այդ վարձկաններից ոմանք առաջ գնալով դառնում էին զորահրամանատարներ և հենվելով իրենց հայրենակիցների վարձու ջոկատների վրա՝ գրավում էին այս կամ այն շրջանը և դառնում «մութաղալիբներ», այսինքն՝ նոր դինաստիաների հիմնադիրներ: Այսպես՝ դեյլեմական և գիլյանական ծագում ուներին Սալարյանների կամ Մուսաֆիրյանների դինաստիան (941-979 թթ.), որը նվաճել էր Ատրպատականը, Զիյարիների֊նը (928-1042 թթ.), որը կառավարում էր Գորգանում, Բուիների֊նը (935-1055 թթ.), որոնք նվաճել էին Արևմտյան Իրանն ու Իրաքը և այլն:

864 թ. Թաբարիխսթանում շիիզմի դրոշի ներքո բռնկվեց ապստամբություն, որի գլուխ կանգնեց տեղական շիաների առաջնորդ Ալիի սերնդից սերած Հասան իբն Զեյդը: Այդ ապստամբության հետևանքով նրան հաջողվեց Կասպից ծովի հարավային ափերին հիմնադրել Ալիդների անկախ շիիթական պետություն, որի իշխանությունը տարածվեց Դեյլեմի և Գիլյանի վրա: X դ. սկզբին դեյլեմցիներն ընդգրկվեցին Սամանիների և Ալիդների միջև ծավալված քաղաքական պայքարի մեջ, որի հետևանքով Սամանիներին հաջողվեց ժամանակավորապես տիրանալ Թաբարիխսթանին (900 թ.):

Ալիդների դինաստիայի անդամները և նրանց կողմնակից շիիթները ստիպված էին փախչել և թաքնվել Էլբուրսի անտառածածկ լեռներում:

Սամանյան փոխարքայի հալածանքները տեղիք տվեցին գյուղացիական նոր ապստամբության (913 թ.), որն ուղղված էր ոչ միայն Սամանիների կառավարության, այլև նրան աջակցող տեղական ավատատերերի դեմ: Ապստամբությունը գլխավորեց Ալիդների ընտանիքի եռանդուն անդամ Հասան իբն Ալին, որն ուներ Ութրուշ (խուլ) մականունը: Նա ապստամբության դրոշ դարձրեց շիհզմը՝ միաժամանակ շարժմանը հաղորդելով սոցիալական երանգ: Ապստամբները, օրինակ, սկսեցին իրենց հողերից վտարել ավատատեր-դեհկաններին, որի առթիվ XI դ. գիտնական-հանրագիտակ Բիրունին զայրույթով գրում էր, որ հողագործ դեհկանների հողատիրական իրավունքները ճանաչվել էին դեռևս Իրանի առասպելական արքա Ֆերիդունի կողմից, իսկ ահա Հասան Ութրուշը ցանկանում է նրանց դեն շպրտել, որպեսզի ամեն մի խոռվարար դառնա նույնպիսի հողային սեփականատեր, ինչպես «պատվարժան մարդիկ»:

Ապստամբության օրերին Կիևի իշխան Իգորի դրուժինաները, 500 նավակներով անցնելով Դնեպրից Սև ծովը, իսկ այնտեղից՝ Ազովի ծովը, այնուհետև նավակները քաշելով հասցրել էին Վոլգա և մտնելով Կասպից ծով՝ դուրս էին եկել նրա արևմտյան ու հարավ արևմտյան ափերը (913 թ.)՝ ասպատակ սփռելով Սամանիների տիրույթներում: Դա ակամայից հեշտացնում էր թաբարիսթանյան ապստամբների պայքարը: Նրանց հաջողվում է այդ երկրամասից դուրս մղել Սամանիների զորքերին ու վարչությանը և Թաբարիսթանում վերականգնել Ալիդների պետությունը:

Եթե հավատալու լինենք աղբյուրներին, մարդիկ երբեք չէին տեսել մեկ այլ այնպիսի արդար կառավարչի, ինչպիսին Հասան Ութրուշն էր: Վերականգնված Ալիդների պետության գոյությունը տևեց շատ կարճ՝ մինչև 928 թ.:

Ինչպես Իրանում, այնպես էլ բուն Աբբասյան խալիֆայության կենտրոն Իրաքում խալիֆի իշխանությանն ուժգին հարված հասցրեցին այսպես կոչված զինջների հուժկու ապստամբությունը (IX դ.) և քարմաթների շարժումը (IX դ. վերջ և X դ.): Զինջների ապստամբությունը սկսեցին ստրուկները, հիմնականում՝ սևամորթ աֆրիկացիները: Քանի որ ստրկավաճառներն այդ ստրուկներին գլխավորապես ձեռք էին բերում Զինջի (Զանզիբարում) ստրկավաճառանոցներում, այդ իսկ պատճառով խալիֆայությունում սովորաբար նրանց անվանում էին զինջեր: Սրանք տաժանակիր աշխատանք էին կատարում Բասրայի շրջակայքում՝ աղուտ կամ մեռած պետական հողերի վրա:

Թե որքան մեծ էր խալիֆայությունում սև և սպիտակ ստրուկների թիվը, երևում է նրանից, որ պատմիչ Թաբարիի հաղորդմամբ, որը զինջե-

րի ապստամբության ժամանակակիցն էր, միայն Իրաքի մի շրջանում՝ Ներքին Միջագետքում, պետական հողերի վրա աշխատում էր 15 հազար ստրուկ: Նրանք բոլորը միացան ապստամբությանը:

Այդ շարժման գլուխ կանգնեց ծագումով արաբ, եռանդուն ու կրթված մի առաջնորդ՝ Ալի իբն Մուհամմադ ալ-Բարքուհի, որը պատկանում էր խարիջի-ազրաքիթների աղանդին: Զինջերի ապստամբությունը շարունակվեց 14 տարի (869-883 թթ.): Նրան մասնակցություն բերեցին հարյուր հազարավոր ստրուկներ, մեծ թվով գյուղացիներ ու բեդվիններ: Իրաքում ապստամբների հսկողության տակ անցան հսկայական տարածքներ, այդ թվում նաև Բասրա նավահանգստային քաղաքը: Ապստամբներն իրենց գործողությունները տարածեցին նաև Իրանի տարածքի վրա՝ Խուզիսթանի նահանգում գրավելով Ահվազ քաղաքը և մի շարք հողեր:

Զինջերը չվերացրին ստրկությունը: Ընդհակառակը, իրենց ասպատակությունների ժամանակ իրենք էին ստրկացնում խաղաղ բնակիչներին: Զինջերի ղեկավարները նաև շուտով վերասերվեցին՝ դառնալով ավատական հողատերեր: Նրանք ստրկահաճորեն կրկնօրինակեցին նաև խալիֆայության պետական ձևերը՝ Ալի իբն Մուհամմադին հռչակելով խալիֆ: Այդ բոլորի հետևանքով հիասթափված գյուղացիներն ու բեդվինները հեռացան շարժումից, որը և օգնեց խալիֆի զորքերին՝ 883 թ. ճնշելու զինջերի ապստամբությունը:

Թաբարիստանում Ալիդների առաջնորդ Ութրուշի մահվանից հետո Ալիդների և Սամանիների միջև սկսվեց պայքար իշխանության համար: Այդ պայքարից դուրս գալով որպես հաղթանակածներ՝ դեյլեմցիները Թաբարիստանում և Գորգանում իշխանությունը վերցրին իրենց ձեռքը՝ սկիզբ դնելով Զիյարիների դինաստիային, որի ստեղծած պետությունը գոյատևեց մեկ հարյուրամյակից ավել (928-1045 թթ.): Այդ պետության ղեկավարներից մեկը՝ Մարդավիջ իբն Զիյարը, գրավեց Արևմտյան ու Հարավային Իրանի մեծագույն մասը՝ այնպիսի խոշոր քաղաքներով հանդերձ, ինչպիսիք էին Ռեյը, Ղազվինը, Համադանը, Սպահանը և Շիրազը՝ այնտեղից վոնդելով խալիֆի զորքերին:

Մարդավիջը գրավեց նաև Թաբարիստանը, Գիլյանն ու Ջիբալը: Թեև նա իրեն անվանում էր խալիֆի փոխարքա, սակայն դույզն ինչ չափով հաշվի չէր նստում նրա հետ և նույնիսկ պատրաստվում էր արշավանքի Բաղդադի վրա: Մարդավիջը երազում էր Սասանյան կայսրության սահմաններում իրանական թագավորության վերականգնման մասին:

Սակայն 935 թ. Սպահանում նա սպանվեց իր թյուրք զոլամների կողմից: Դրանից օգտվեց դեյլեմիթյան (Դեյլեմը գտնվում էր Կասպից ծովի

հարավարևմտյան մասում) Բուի կամ Բուիդ ընտանիքը: Բուիների դինաստիայի հիմնադիր է հանդիսանում Աբու Շաջջա Բուվայհին: Վերջինս իրեն ներկայացնում էր որպես Սասանյան արքայական տոհմի շառավիղ: Գրավելով Սպահանը՝ Բուիներն այնուհետև իրենց իշխանությանը ենթարկեցին ողջ Արևմտյան Իրանը: Այսպիսով՝ հիմնադրվեց մի նոր դեյլեմիթյան պետություն՝ Բուիների պետությունը (արաբական արտաբերմամբ՝ Բուվեյհիդների պետությունը), որը գոյատևեց 935-1055 թթ.: Այդ պետության կազմի մեջ էր մտնում Իրանի ողջ արևմուտքը, հարավը (Պարսկական Իրաքի մեծ մասը)՝ Համադան, Սպահան և Ռեյ քաղաքներով հանդերձ, Խուզիստանը, Ֆարսը և Քերմանը: Բուիներն իրենց պետության մայրաքաղաք դարձրին Շիրազը: 945 թ. Բուի եղբայրներից մեկը՝ Ահմադը, գրավելով Բաղդադը, ստիպեց խալիֆ ալ-Մուսթակֆիին իրեն շնորհել «ամիրաց ամիր» («ամիր ալ-ումարա») տիտղոսը և, ըստ էության, հրաժարվել իր աշխարհիկ իշխանությունից: Այլ կերպ ասած՝ խալիֆը լրիվ հեռացվում էր բոլոր պետական գործերից: Բուիները խալիֆից վերցրին նաև նրա ընտանեկան հողերը՝ փոխարենը տալով, ինչպես սովորական ավատական հողատիրոջ, մի կալվածք իքթայի իրավունքով: Սակայն իրենց հատած դրամի վրա նրանք շարունակում էին գրել խալիֆի անունը: Պաշտոնապես խալիֆայությունը չվերացվեց, որովհետև դա ձեռնտու չէր Բուիներին: Նրանք կառավարում էին խալիֆի անունից, ուրբաթօրյա աղոթքի ժամանակ («խութբա») առաջինը հիշատակելով նրա անունը, իսկ երկրորդը՝ էմիրների էմիրի անունը: Ըստ էության, Բուիները խալիֆի հետ համահավասար ձեռք էին բերում նաև հոգևոր առաջնորդի կարգավիճակ, սակայն այն վերապահումով, որ այսուհետև խալիֆը պետք է լիներ ուղղադավան սուննի մուսուլմանների հոգևոր ղեկավարը, իսկ շիաները և մյուս ոչ ուղղադավան մահմեդականները պետք է դուրս մնային նրա իրավասության շրջանակներից: Սա ոչ միայն շիա Բուիների մեծ նվաճումն էր, շիիզմի կարևոր հաղթանակը, այլև «իրանիզմի» մեծագույն հաղթանակը:

Բուիների ընտանիքի երեք եղբայրներից (Ահմադ, Ալի, Հասան) յուրաքանչյուրն առանձին իրականացնում էր նվաճողական քաղաքականություն և յուրաքանչյուրի կողմից գրավված տարածքները դիտվում էին որպես նրանց անձնական տիրույթներ, որոնք ժառանգաբար անցնելու էին իրենց հաջորդներին: Եղբայրները միմյանց հետ հաշտ ու համերաշխ էին և կամավոր կերպով ճանաչում էին ավագ եղբոր՝ Իմադ ադ-դոուլե («Պետության հենարան») Ալիի ավագությունն ու ղեկավար դիրքը: Ֆարսը հանդիսանում էր Իմադ ադ-դոուլե Ալիի տիրույթը, Արաբական

Իրաքը, Խուզիսթանը և Քերմանը պատկանում էին մո՛ւիզ ադ-դոուլե («Պետությունը հզորացնող») Ահմադին, Ռեյը, Համադանը, Սպահանը՝ իրենց շրջակա տարածքներով հանդերձ՝ Ռուքն ադ-դոուլե Հասանին:

Սակայն Բուիների երկրորդ սերնդի միջև սկսվեցին երկպառակություններ: Այդ պայքարում առաջնություն ձեռք բերեց Հասան Ռուքն ադ-դոուլեի որդի Ազուդ (Ազադ) ադ-դոուլե Ֆեննա Խոսրովը (949-983 թթ.): Նրա օրոք Բուիների պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Նրա կազմի մեջ էր գտնվում նաև ողջ Իրանը, բացի Սամանիներին պատկանող Խորասանից, Սիսթանից ու Թաբարիսթանից: Միայն Ատրպատականը՝ Պարսկական Իրաքի հարակից մասերով և Գիլյանով հանդերձ, կազմեց առանձին պետություն (էմիրություն), որում հաջորդաբար փոխվում էին Սաջիդների թյուրքական (890-929 թթ.), Սալարյանների կամ Մուսաֆիրյանների դեյլեմական (941-979 թթ.) և Ռավվադիդների արաբական (979-1070 թթ.) դինաստիաները: Այսպիսով՝ ողջ Իրանի տարածքը հիմնականում բաժանվեց երեք պետական կազմավորումների միջև. իրանական անապատից արևելք ընկած շրջանները՝ Խորասանը, Մավարաննահրը (արաբերեն՝ «մավարա'աննահր», այսինքն՝ «այն, ինչ որ գետի՝ Ամու-Դարյայի այն կողմն է»), և Միջին Ասիայի որոշ այլ տարածքներ մտան Սամանիների պետության կազմի մեջ: Սամանիներից վասալական կախման մեջ գտնվող Զիարիների պետությունը գբաղեցնում էր Գորգանը, իսկ Բուիները՝ վերևը հիշատակված երկրամասերը:

Իր կատարյալ ինքնուրույնությունը շեշտելու համար Ազուդ ադ-դոուլեն չբավարարվեց էմիրների էմիր տիտղոսով և ընդունեց նաև շահնշահի պարսկական տիտղոսը: Այսպիսով, նա եղավ առաջին իսլամ տիրակալը, որը կրեց պարսկական այդ տիտղոսը: Խալիֆ աթ-Թաին ստիպված էր համակերպվել այդ իրողության հետ և նույնիսկ իր աղջկան կնության տալ նորաթուխ շահնշահին:

Ազուդ ադ-դոուլեի իշխանությունը ճանաչում էին նույնիսկ Օմանում և Եմենում: Ֆաթիմյան խալիֆության հետ նա պահպանում էր չեզոքություն: Փորձեր էր կատարում նույնիսկ կանոնավոր դիվանագիտական հարաբերություններ հաստատելու Բյուզանդիայի հետ: Այդ նպատակով 981 թ. նա Կ.Պոլիս ուղարկեց մի դեսպանություն, որն ընդունվեց բյուզանդական կայսրի կողմից:

Իր պետության մեջ Ազուդ ադ-դոուլեն զարկ տվեց շինարարությանը և գյուղատնտեսությանը, կառուցեց ջրանցքներ, ամբարտակներ, վերակառուցեց ոռոգման համակարգը, կառուցեց առևտրական ճանապարհներ, քարավանսարայներ, անողորմ պայքար ծավալեց ավազակախմ-

քերի դեմ և այլն: Նա ընդլայնեց ու գեղեցկացրեց իր մայրաքաղաք Շիրազը, որտեղ կառուցեց 360 սենյակից բաղկացած մի հոյակերտ պալատ, գրադարան և այլն: Լայնախոհ այդ տիրակալը հեռու էր կրոնական մոլեռանդությունից, հովանավորում էր գիտնականներին, բանաստեղծներին, փիլիսոփաներին և այլն:

Սակայն աստիճանաբար Բուիների պետությունը մասնատվում էր: Ազուդ ադ-դոուլեի մահվանից անմիջապես հետո նրա երեք որդիների միջև սկսվեցին երկպառակություններ: Իշխանության համար նրանց պայքարն ավարտվեց եղբայրներից մեկի՝ Բահա ադ-դոուլե Փիրուզի (989-1012 թթ.) հաղթանակով, սակայն նրա մահվանից հետո մշտապես իրար դեմ պայքարող նրա չորս որդիները չկարողացան իրենց ձեռքերում պահել Արաբական Իրաքը: Այլևս դինաստիան ընդհանուրի կողմից ճանաչված ղեկավար չուներ: Երբեմնի այդ աչքի ընկնող պետությունը կատարելապես քայքայվեց: 1029 թ. ահեղ Մահմուդ Ղազնևին նրանցից խլեց Ռեյը, Համադանը և Սպահանը: Իսկ քիչ ավելի ուշ՝ 1055 թ., Բուիների տիրույթները նվաճվեցին թյուրք-սելջուկների կողմից:

Այսպիսով՝ արդեն IX դ. ընթացքում Իրանի տարածքի մեծ մասում խալիֆայության տիրապետությունը վերացավ: Նրա իշխանության ներքո մնում էր միայն Արևմտյան Իրանի մի մասը: X դ. 30-ական թթ. այն վերացավ նաև նշված շրջաններում:

4. *ԻՐԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՀԵՍՏՆԵՐԸ, ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ IX–X ԴԱՐԵՐՈՒՄ*

Արաբական խալիֆայության տիրապետության անկումից և տեղական իրանական պետականության վերածննդից հետո Իրանում նկատվեց որոշակի տնտեսական վերելք: Այլևս գյուղացիներից ու քաղաքացիներից հավաքված հարկային միջոցները դուրս չէին տարվում երկրից, ինչպես դա տեղի էր ունենում խալիֆայության ժամանակ, այլ ծախսվում էին Իրանի ներսում, այդ թվում նաև այդ երկրի համար կենսական նշանակություն ունեցող ոռոգման ջրանցքների, ջրամբարտակների և այլնի կառուցման համար: Բացի այդ, Իրանում տիրում էր հարաբերական

հանգստություն. տևական ժամանակ երկիրը չէր ենթարկվում օտարերկրյա ներխուժումների, իսկ ներքին պատերազմները չէին ընդունում ծավալուն մասշտաբներ, ուստի և տեղ ու տեղիք չէին տալիս մեծ ավերածությունների:

Այդ հարաբերական դադարը քիչ թե շատ բարենպաստ պայմաններ ստեղծեց երկրի տնտեսական կյանքը կարգավորելու համար: Դաշթե - Քեվիր և Դաշթե-ե Լութ անապատների հարակից շրջաններում (Սիսթանում և այլուր) կառուցվեցին արգելապատնեշներ, որոնք կասեցնում էին շարժվող ավազների հոսքը դեպի օազիսներն ու բարեբեր հողերը: Յուրացվեցին նոր հողեր, որոնց հետևանքով ընդարձակվեցին նաև ցանքատարածությունները, երկրում արմատավորվեցին նոր կուլտուրական բույսեր և պտղատու ծառեր: Հատկապես լայն տարածում գտավ բրնձի մշակումը, որը Սասանյանների ժամանակ համաբյա գոյություն չուներ: Բրինձ սկսեցին աճեցնել Խուզիստանում, Ֆարսի և Խորասանի ցածրադիր վայրերում, Սիսթանում, Մերձկասպյան շրջաններում: Ամ տեղի ունեցավ նաև բամբակի մշակման բնագավառում:

Ինչպես նստակյաց, այնպես էլ քոչվորական ժողովուրդների մոտ նշանակալից զարգացում ապրեց նաև անասնապահությունը:

Արհեստագործությունը, որը հնուց անտի չափազանց զարգացած էր Իրանում և Սասանյանների ժամանակ բուռն թափով վերելք էր ապրում, X-XI դդ. արձանագրեց նոր նվաճումներ: Իրանի քաղաքներում՝ Նիշապարում, Սպահանում, Շիրազում, Ռեյում և այլուր արտադրվում էին բարձրորակ և գեղարվեստական բարձրաճաշակ նախշերով նախշազարդված մետաքսյա, բրդյա և բամբակյա կտորեղեն, հախճապակյա ամաններ ու սպասք, պղնձից, բրոնզից, ոսկուց ու արծաթից պատրաստված բարձրարժեք գեղարվեստական իրեր, զենքի ու սպառազինության տարբեր տեսակներ և այլն:

Զարգացող արհեստագործական արտադրությունը խթանեց նաև լեռնահանքային գործը: Իրանում արդյունահանվում էին թանկարժեք մետաղներ՝ ոսկի և արծաթ, կապար, ծծումբ, մարմար և այլն:

X դ. առանձնակի ծաղկում ապրեց քարավանային և ծովային առևտուրը: Քարավանային ճանապարհներով Իրանը կապված էր Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների, ինչպես նաև Հնդկաստանի, Հարավարևելյան Ասիայի երկրների հետ: Քարավանային առևտրի խոշորագույն հանգույցներ էին հանդիսանում Համադան, Ռեյ, Նիշապուր, Հերաթ, Սպահան, Շիրազ և Անվազ քաղաքները: Բալխի և Քաբուլի վրայով իրանական վաճառականները ցամաքային քարավանային առևտրի մեջ էին գտնվում Հնդկաստանի հետ:

Կասպից ծովի Ամոլ և Սարի նավահանգիստների միջոցով լայն ծովային առևտրափոխանակություն էր իրագործվում Խորեզմի, խազարական Իթիլի, Պովոլժիեի, Ռուսիայի, ինչպես նաև Անդրկովկասի հետ: Իրենց հերթին այդ նավահանգիստներն էին այցելում վերոհիշյալ երկրների վաճառականները՝ իրենց հետ բերելով մորթեղեն, կաշվեղեն, մեղրամոմ, գերի ստրուկներ և այլն, որոնք փոխանակում էին իրանական արհեստագործական արտադրանքի հետ:

Պարսից ծոցի Սիրաֆ, Ջաննաբա, Քիշ (Քայս, նույնանուն կղզու վրա) և Հորմուզ նավահանգիստների իրանական ապրանքներն արտահանվում էին Բասրա, Արաբական թերակղզու նավահանգիստները, Եգիպտոս, Հնդկաստան, Չինաստան և այլ երկրներ: Ընդ որում՝ Պարսից ծոցի առևտրի մեջ մեծ մասնակցություն ունեին նաև արաբ վաճառականները: Հատկանշական է, որ եթե Սասանյանների ժամանակ պարսիկ նավաստիներ համարյա չկային, ապա X դ. պատմիչ Իսթախրիի վկայությամբ, նույնիսկ Պարսից ծոցի արաբական ափերին համարյա բոլոր նավաստիներն ու վաճառականները, որոնք զբաղվում էին ծովային առևտրով, պարսիկներ էին:

Իրանից քարավանային և ծովային ճանապարհներով միջերկրածովյան ավազանի երկրներ, Արաբիա, Հնդկաստան և Չինաստան էին արտահանվում ցորեն, կանեփ, յուղ, բուսական ներկեր, քիշմիշ, արմավ, չորացրած մրգեր, գինի, մեղր, շաքարեղեգից պատրաստված խուզիստանյան շաքար, հում մետաքս, օծանելիք, դեղորայք, ուղտեր, ձիեր և բազմապիսի այլ ապրանքներ:

Հնդկաստանից Իրան էին ներմուծվում համեմունքներ, դեղաբույսեր, բուսական ներկեր, թանկարժեք քարեր, եղեգ, փղոսկր, սև, ինչպես նաև սանդալի փայտ, պղպեղ, բուրավետ բույսեր և հնդկական արտադրության բազմապիսի այլ ապրանքներ:

Իսթախրիի հաղորդած տեղեկության համաձայն՝ Սիրաֆ նավահանգիստը ծառայում էր որպես փոխաբեռնման կետ Հնդկաստանից և Չինաստանից բերվող ապրանքների համար, որտեղից այնուհետև դրանք ծովային կամ ցամաքային ճանապարհներով ուղարկվում էին այլ երկրներ:

Առհասարակ՝ պետք է նշել, որ արտաքին առևտրի մեջ գերակշռում էին պերճանքի առարկաները, որոնք լայն սպառում էին գտնում տարբեր երկրների ազնվականության շրջանում:

Իրանում, ինչպես և առհասարակ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, առևտրի խոշոր ճյուղ էր հանդիսանում երկսեռ ստրուկների առևտուրը: Իրանի տարբեր քաղաքներում գոյություն ունեցող ստրկավաճառանոցները՝ («քույ-ի բարդե ֆորուշան») ստրուկներ էին բերվում Աֆրի-

կայից (հատկապես արևմտյան ծովափից), Արևելյան Եվրոպայի երկրներից, Հնդկաստանից, Անդրկովկասից, Միջին Ասիայից, Փոքր Ասիայից և այլն: X դ. վերջի պարսիկ աճառուն աշխարհագրի վկայությամբ՝ Անդրկովկասյան երկրներից Իրան էին բերվում ռում (հույն), հայ, բաջանաք (պեչենեկ), խազար, սակլաբ (սլավոն) ազգության ստրուկներ: Իրանում կային նաև հնդիկ, նուբիացի, հաբեշ, թյուրք, ռուս ստրուկներ:

Աղբյուրների հաղորդած տեղեկությունների համաձայն՝ ստրկավաճառությունը Իրանում հասնում էր հսկայական չափերի: Բալխ քաղաքում, օրինակ, XI դ. կար ստրկավաճառների մի ամբողջ փողոց կամ թաղամաս: Վաճառվող ստրուկների միայն մի փոքր մասն էր մնում Իրանում, մնացածը արտահանվում էր արաբական երկրներ, Միջին Ասիա և այլն: Դրա պատճառն այն էր, որ գյուղատնտեսության և արհեստների մեջ ստրկական աշխատանքի օգտագործումը VII-IX դդ. համեմատությամբ Իրանում չափազանց նվազել էր:

Թյուրքական տափաստաններից մեծ թվով պատանի ստրուկներ էին բերվում ղոլամների հեծյալ գվարդիայում ծառայելու համար: Միրխոնդի հաղորդած տեղեկության համաձայն՝ գոյություն ուներ սովորույթ՝ եթե վաճառականը միանգամից գնում էր 40 պատանիներից ոչ պակաս, նրանցից մեկին տալիս էին ձրի: Ղոլամների առևտուրը գտնվում էր պետության հսկողության տակ: Ստրուկների առևտրով զբաղվող վաճառականները պարտավոր էին իրենց «ապրանքը» առաջին հերթին առաջարկել թագավորին կամ էմիրին և *միայն դրանից հետո* կարելի էր նրանց վաճառել այլ ավատատերերի կամ հանել շուկա:

Իրանի քաղաքներում գոյություն ունեին համքարությունների տիպի արհեստակցական միավորումներ, որոնց մեջ համախմբված էին նույն արհեստի տեր մարդիկ: Նրանց գործունեությունը խստիվ վերահսկվում էր պետության կողմից:

Քաղաքային իշխանության ղեկավար գործիչները՝ ռայիսը (քաղաքապետը), ղազին (դատավորը), մայր մզկիթի իմամը, մուհթասիբը (բարքերի հսկիչը, որը միաժամանակ հանդիսանում էր նաև շուկաների վերահսկիչը), ասասը (գիշերային պահակախմբի պետը) և մյուսները առաջ էին քաշվում տեղական ազնվականության ներկայացուցիչներից:

Իրանում, ինչպես և Առաջավոր ու Միջին Ասիայում, ընդհանուր քաղաքային ինքնավարություն գոյություն չուներ: Ինքնավարությունը առկա էր միայն քաղաքների առանձին թաղամասերի, արհեստավորական, առևտրական և հոգևոր միավորումների ներսում, որոնք ունեին քաղաքային ռայիսին ենթարկվող իրենց ընտրովի ավագները:

Արհեստակցական միավորումների մեջ համախմբված արհեստավորները, որոնց աստիճանակարգը վերևից սկսվում էր վարպետներից (ուսթաղ) ու ենթավարպետներից (խալիֆե) և վերջանում էր աշակերտներով (շագիրդ), իրավաբանորեն ազատ էին: Սակայն նրանք պարտավոր էին իրենց արտադրած ապրանքներով ռենտա-հարկ վճարել պետությանը կամ տեղական ավատական տիրակալներին:

Իրանի քաղաքներում հասարակական կյանքի կենտրոնը շուկան էր (բազար): Բազարի գլխավոր փողոցների խաչմերուկը կոչվում էր չարսու (չհար սու, որի արաբական հոմանիշն է՝ մուրաբբա՛ա): Չարսուի շուրջը կամ մոտակայքում գտնվող քարավան-սարայներում տեղի էր ունենում խոշոր մեծաքանակ առևտուր: Քարավան–սարայները միաժամանակ ծառայում էին որպես այլ վայրերից եկած վաճառականների համար հյուրանոց-օթևաններ, ապրանքների պահեստներ և մեծաքանակ առևտրի յուրատեսակ բորսաներ:

Քանի որ միջնադարյան Իրանի ճանապարհների վրա վխտում էին ավազակախմբերը, որի հետևանքով վաճառականների համար վտանգավոր էր իրենց հետ տանել խոշոր գումարներ, ուստի խոշոր մեծաքանակ առևտուրը սովորաբար իրագործվում էր չեկերի միջոցով: «Չեկ» բառը հենց պարսկական ծագում ունի: Վաճառականը, որը մեկնում էր մեկ ուրիշ քաղաք, իր փողերն ի պահ էր թողնում լումայափոխներից (արաբ. «սարրաֆ») մեկի մոտ՝ նրանից ստանալով չեկ, որը վճարվում էր այն *քաղաքի սարրաֆի կողմից, ուր ժամանում էր վաճառականը:*

Տեղական արհեստագործական ապրանքները ուղղակի վաճառվում էին արհեստանոցներում, որոնք միաժամանակ ծառայում էին որպես կրպակներ: Հենց այդ պատճառով «դուքքան» (արաբ.) նշանակում էր և՛ արհեստանոց, և՛ կրպակ:

Հաճախ նույն արհեստի մարդիկ ապրում էին հատուկ թաղամասերում, որտեղ և գտնվում էին նրանց դուքքանները: Սննդամթերքները քաղաքների բազարներն էին բերվում հարևան ռուսթաքների (գյուղական վա՛յրերի) գյուղացիների կողմից:

X դ. Իրանի քաղաքների կրթական – մշակութային կյանքում ևս նկատվում էր որոշակի աշխուժացում: Գործում էին մահմեդական հոգևոր դպրոցներ՝ մեդրեսեներ: Դրանք լինում էին միջնակարգ և բարձրագույն: Առկա էին նաև մահմեդական աստվածաբանների ու սեյիդների ուժեղ հոգևոր միավորումներ, որոնց գլուխ էին կանգնած ավագները:

Մզկիթներն ու մեդրեսեները վակֆային իրավունքի հիման վրա տիրապետում էին կրպակների և նույնիսկ ամբողջ բազարների և արհեստա-

վորներից ու վաճառականներից հարկերի ու տուրքերի ձևով ստանում էին խոշոր եկամուտներ:

X դ. աշխարհագիրները, հատկապես Իսթահրին և Մուքադդասին, մանրամասնորեն նկարագրում են X դ. Իրանի քաղաքների արտաքին տեսքը: Նրանց տեղեկությունների համաձայն, իրանի քաղաքներն աչքի էին ընկնում իրենց մաքրությամբ և կարգուկանոնով: Սակայն, ինչպես Արևելքի բոլոր երկրներում, Իրանի քաղաքներին ևս բնորոշ էր մեծ թվով թափառաշրջիկների, աղքատների, մուրացկանների և առհասարակ քաղաքային ստորին խավերի ու քաղաքային տականքների առկայությունը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԻՐԱՆԸ ՄԵԼՋՈՒԿՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

1. ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ՀՈՒԺԿՈՒ ՆԵՐԽՈՒԺՈՒՄՆ ԻՐԱՆ: ՂԱԶՆԵՎԻՆԵՐԻ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Սամանիների պետության մեջ, որպես ռազմական ուժ, մեծ տեղ էր հատկացվում թյուրք-ղոլամներին, որոնք կազմում էին առանձին մի զորամիավորում: X դ. 60-ական թթ. այդ զորամիավորման հրամանատարներից մեկը՝ Աբուիսխաք Ալփ-Թեքինը, աչքի ընկնող դեր սկսեց խաղալ Սամանիների արքունիքում: Նրա տրամադրության տակ կար 2700 թյուրք–ղոլամներից բաղկացած մի ջոկատ, որն իրենից ներկայացնում էր ազդու ռազմական ուժ: Ալփ-Թեքինը հսկայական հարստություններ տեր մի անձնավորություն էր. ուներ 500 գյուղ, 100 հազար ձի և համարյա մեկ միլիոն գլուխ ոչխար: Նա կարող էր այդ ունեցվածքը ևս օգտագործել իր փառասիրական քաղաքական նպատակներին հագուրդ տալու համար: Պատահական չէ, որ շուտով Սամանիների արքունիքում կասկածներ ծնվեցին, որ Ալփ-Թեքինը ծածուկ ձգտումներ է փայփայում տիրանալու համար Սամանիների գահին: Երբ այդ կասկածներն ամրապնդվեցին փաստերով, ղոլամների գվարդիայի հրամանատարը ստիպված էր փախուստի միջոցով փրկել իր կյանքը: Հիմնավորվելով Ղազնիում՝ նա որոշեց գեթ այստեղ հագուրդ տալ իր փառասիրական ձգտումներին և

962 թ. այնտեղ հիմնեց մի ոչ մեծ, սակայն անկախ էմիրություն:

Ղազնիում, որը դարձավ թյուրքական ցեղերի կենտրոնացման ու համախմբման մի վայր, Ալփ-Թեքինի մահվանից հետո (963 թ.) նրա գործը շարունակեց դարձյալ թյուրքական ծագում ունեցող ղոլամ Սեբուք-Թեքինը (977-998 թթ.), որը Ալփ-Թեքինի փեսան էր: Հենց նա էլ դարձավ թյուրքական մի դինաստիայի հիմնադիր, որը հայտնի է Ղազնևիների կամ Ղազնկյան դինաստիա անունով (997-1186 թթ.):

Այսպիսով՝ Իրանական բարձրավանդակի արևելքում, հանճինս Միջին Ասիայի թյուրքերի, հայտնվեց նոր, առավել ազդու մի ուժ, որը ձևավորեց Ղազնևիների ռազմաավատական թյուրքական պետությունը:

Իր կառավարման երկու տասնամյակների ընթացքում Սեբուք-Թեքինը, հենվելով ղոլամների իր մարտական հեծելազորի վրա, նշանակալիորեն ընդարձակեց իր տիրույթների սահմանները: Սակայն նոր պետությունն առավելագույն հզորության հասավ Սեբուք-Թեքինի որդու՝ Ղազնիի իշխան Մահմուդ Ղազնևիի (998-1030) կառավարման շրջանում:

Մավարաննահրի թյուրք Կարախանյան պետության հարվածների ներքո Սամանիների պետությունը դադարեց գոյություն ունենալուց (999 թ.): Նախկին սամանյան տիրույթների այն մասը, որոնք գտնվում էին Ամու-Դարյա գետից հյուսիս և հյուսիս-արևելք, մտան Կարախանյանների պետության կազմի մեջ, իսկ Ամու-Դարյայից հարավ և հարավ-արևմուտք ընկած նահանգները (Խորասան, Թաբարիստան, Սիստան և ներկայիս Աֆղանստանը) նվաճվեցին Մահմուդ Ղազնևիի կողմից և մտան Ղազնևիների պետության կազմի մեջ: 1017 թ. Մահմուդը գրավեց Խորեզմը, 1025-1028 թթ. պարտության մատնեց Բուխարայում հաստատված օղուզ-թուրքմենական մի ցեղի և գրավեց այդ հարուստ ու բարեբեր քաղաքը՝ իր շրջակա տարածքով հանդերձ: Այնուհետև 1029 թ. նա Բուիներից խլեց Ռեյը, Համադանը, Ղազվինը և Սպահանը:

Իսլամի հաղթական դրոշի տարածման պատրվակի ներքո, Մահմուդը մի քանի անընդմեջ կողոպտչական արշավանքներ կազմակերպեց դեպի Հնդկաստան, խոլանալով Հինդուսթանի թերակղզու խորքերը: Դեպի Հնդկաստան՝ կատարած իր՝ թվով 17 արշավանքների ընթացքում Ղազնկյանների հաղթական զորքերը գրավեցին Քաշմիրն ու Փենջաբը, Մուլթանը, Սինդի մի մասը և Հյուսիսային ու Հյուսիսարևմտյան Հնդկաստանի հսկայական տարածքներ: Նրա բոլոր արշավանքներն ընթանում էին «կռապաշտ» հինդուսների դեմ «սրբազան պատերազմի»՝ ջիհադի կարգախոսի ներքո՝ հանուն Հնդկաստանում իսլամի տարածման:

Մահմուդ Ղազնևին անողոք կողոպուտի մատնեց Հնդկաստանի հա-

րուստ քաղաքները, մասնավորապես Մուլթանը և Դելին, ստրկության քշեց հազարավոր մարդկանց, այդ թվում նաև արհեստավորների, այդ երկրից հանեց վիթխարի քանակությամբ թանկարժեք իրեր և բազմապիսի այլ արժեքներ ու ռազմական ավար: Միայն մեկ արշավանքի ժամանակ Մահմուդը Հնդկաստանից տարավ 20 միլիոն դիրհեմ դրամ ու թանկարժեք իրեր, 57 հազար ստրուկ և 350 փիղ: Այդ կողոպտված գումարներով նա նախկինում աննշան Ղազնի քաղաքը, որը դարձել էր Ղազնևյանների մայրաքաղաքը, վերածեց իր ժամանակի փայլուն մայրաքաղաքներից մեկի:

Ղազնևիների պետության կազմի մեջ էին մտնում Աֆղանստանը, Արևելյան Իրանը, Միջին Ասիայի հարավային մասը, Խորեզմը և Արևմտյան Իրանը: Այդ պետությունը տարածել էր իր թևերը արևելքից՝ Գանգեսից, մինչև արևմուտք՝ Իրանական Քրդստանի հսկայական տարածքների վրա: Դա իր ժամանակի հզորագույն պետություններից մեկն էր:

Իր այդ հաջողություններով Մահմուդը նշանակալից չափով պարտական էր իր բանակին: Նրա հիմքն էր կազմում թյուրքական ստրուկներից բաղկացած ղուլամների գվարդիան, որոնց շրջանում, ի տարբերություն խալիֆայության և Սամանիների պետության, Մահմուդը կարողացել էր հաստատել երկաթյա կարգապահություն: Թյուրք-ղուլամների զորամասերի օգնությամբ Մահմուդին հաջողվեց ոչ միայն նվաճել հսկայական տարածքներ, այլև իր ընդարձակ պետության մեջ ժողովրդական զանգվածներին պահել հնազանդության վիճակում:

Ղուլամների գվարդիայի հետ միաժամանակ Մահմուդ Ղազնևիի բանակում ծառայում էին նաև խորասանցիներ, աֆղաններ, արաբներ և այլ ժողովուրդների ներկայացուցիչներ, ինչպես նաև «կամավոր-ղազիներ» («մարտիկներ հանուն հավատի»):

Իր երեսնամյա կառավարման մեծ մասը Մահմուդն անց կացրեց պատերազմների ու ռազմարշավների մեջ: Նա թեև ճանաչում էր Աբբասյան խալիֆ ալ-Կադիրիի գերագույն իշխանությունը, որը նրան շնորհել էր «Յաման ադ-Դավլա» («Պետության աջ ձեռքը») պատվավոր տիտղոսը, սակայն նրա կախումը խալիֆայությունից կրում էր լոկ անվանական բնույթ: Խալիֆի արտաքուստ ճանաչումը նրա իշխանությանը հաղորդում էր օրինական բնույթ:

Իր ներքին քաղաքականության մեջ նա ձգտում էր ամրապնդել կենտրոնական իշխանությունը, աքցանի մեջ պահել ինքնագլխության ձգտող անսանձ տարրերին, ստեղծել վարչահարկային արդյունավետ ապարատ, հատում էր իր սեփական դրամը և այլն: Նա գործավարու-

թյան լեզուն պարսկերենի փոխարեն դարձրեց արաբերենը: Թեև պատերազմներից ձեռք բերվող ավարը չափազանց մեծ էր, սակայն այն չէր բավարարում բանակը, արքունիքը և ողջ ռազմաավատական վերնախավը պահելու համար: Ուստի Մահմուդը սահմանել էր բազմաթիվ ու բազմապիսի հարկեր: Իզուր չէ, որ նրա պալատական տարեգիրը գրում էր, թե հպատակներին «խուզում էին, ինչպես ոչխարներ»:

Այդ քաղաքականության նկատմամբ ժողովրդական դժգոհությունը դրսևորվում էր ամենատարբեր ձևերով՝ ապստամբություններով, խռովություններով, իրենց բնակության վայրերից զանգվածային փախուստներով և այլն: Դժգոհությունը դրսևորվում էր նաև տարբեր աղանդավորական ուսմունքների հրապարակ գալու ձևով: Հատկապես լայն տարածում գտավ, այսպես կոչված, քարմաթների աղանդի քարոզչությունը:

Մահմուդ Ղազնևին այդ բոլոր շարժումները ճնշում էր աներևակայելի դաժանությամբ: Աղբյուրների վկայությամբ՝ «հերետիկոսներին» սպանում էին, կախում, խաչում, քարձեծ անում և այլն:

Միջնադարի քաղաքական կյանքի ընդհանուր ֆոնի վրա Մահմուդ Ղազնևին, անկասկած, աչքի էր ընկնում արտասովոր ընդունակություններով: Նա ականավոր զորավար էր, ընդունակ կառավարիչ և հաջողակ դիվանագետ: Նրա խառնվածքի բնորոշ գծերն էին վիթխարի եռանդն ու երկաթյա կամքը, ինչպես նաև պարզ միտքը և արագ որոշումներ կայացնելու ունակությունը: Ծայրահեղ դաժանությունն ու բռնակալությունը չէին խանգարում Մահմուդին ունենալու նաև գրականության ու արվեստի հովանավորի հռչակ: Ղազնիում նրա արքունիքը հանդիսանում էր պարսկալեզու պոեզիայի կենտրոն: Նրա ունեցած կրթական մակարդակը թույլ էր տալիս ունենալու գեղեցիկն ընկալելու ճաշակ, որի մասին վկայում են նրա հրամանով կառուցված բազմաթիվ հոյակերտ պալատները ու շինությունները:

Մահմուդի պետության մայրաքաղաքը՝ Ղազնին, ոչ միայն դարձել էր պոեզիայի ու մշակույթի կենտրոն, այլև նա իր կողմն էր ձգում վաճառականների քարավանները:

Մահմուդ Ղազնևիի մահվանից հետո (1030 թ.) պետության հզորությունը սկսեց սրընթաց անկում ապրել: Գահ բարձրացած նրա որդին՝ Մասուդը (1030-1041), զուրկ էր հոր ընդունակություններից և պետություն ղեկավարելու համար անհրաժեշտ քաղաքական կամքից: Երիտասարդության տարիներին վարժված լինելով փափկակեցության և վարելով ցոփ ու շվայտ կյանք՝ նա իսպառ զուրկ էր ռազմաշունչ ոգուց և խուսափում էր զբաղվել պետական գործերով: Նրան ավելի շատ հե-

տաքրքրում էին հարեմը և հարբեցողությունը, քան պետության ներկայի և ապագայի խնդիրները: Այդ բոլորի հետևանքով մայրաքաղաքում ու նահանգներում փաստորեն ողջ իշխանությունը հայտնվեց ապաշնորհ, եսամոլ և ընչաքաղց աստիճանավորների ձեռքերում, որոնք պետությունը հասցրին կործանման եզրին: Մասուդի կառավարման տարիներին կամայականությունները, բռնություններն ու անօրինականությունները հասան աննախընթաց չափերի: Սրվեցին ներքին հակասությունները, ուժեղացավ ավատատերերի անջատողականությունը, պետական ապարատը սկսեց արագորեն քայքայվել, բանակը կորցրեց իր մարտական հատկանիշները:

Այդ բոլորի անխուսափելի հետևանքը հանդիսացավ այն, որ Ղազնևիների երբեմնի հզոր պետությունը իրար հետևից սկսեց կորցնել տարածքներ: Խորեզմի կորստից հետո Մավարաննահրի Կարախանյանների պետությունը ներխուժեց Ամու-Դարյա գետի վերին հոսանքների շրջանում գտնվող տարածքները, որոնք մտնում էին Ղազնևյան պետության կազմի մեջ:

Այս բոլորը նպաստեց օղուզների շարժման հաջողությանը:

2. ՕՂՈՒԶՆԵՐԸ ԵՎ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Վաղնջական ժամանակներից սկսած՝ տարբեր թյուրքական ցեղեր վաչկատուն-քոչվորական կյանք էին վարում Դանուբի ակունքներից մինչև Ալթայ հասնող վիթխարի տարածքների վրա: Դրանցից օղուզ անունը կրող թյուրքական ցեղերը զբաղեցնում էին Սիր-Դարյա գետի ցածրադիր մասերը և Արալի ու Կասպից ծովերի միջև ընկած լայնածավալ տափաստանային շրջանները: Մ.թ. VIII դ. նրանք արդեն հիշատակվում են չինական աղբյուրներում: Հետագայում օղուզներ սկսեցին անվանել նաև թուրքմեններին:

X դ. երկրորդ կեսին օղուզները, ինչպես և Միջին Ասիայի թյուրքական մյուս ցեղերը, հրաժարվելով շամանիզմից, ընդունեցին իսլամը: Հենց այդ ժամանակ էլ օղուզների, կարլուկների և թյուրքական այլ քոչվորների շրջանում սկսեցին ձևավորվել պետական միավորումներ: Դրանց մեջ սկսեց առանձնանալ և առավել ակնհայտ դարձավ օղուզնե-

րի (կամ գուզզերի) սելջուկյան միավորումը, որն իր անվանումը ստացավ կիսաառասպելական առաջնորդ Սելջուկի անունով, որը և հանդիսացավ սելջուկյան դինաստիայի հիմնադիր: Այդ դինաստիայի (1038-1194) իշխանությունը ճանաչած օղուզներին սկսեցին անվանել սելջուկներ:

Լինելով խաշնարած ու քոչվոր ժողովուրդ՝ սրանք հեշտությամբ իրենց ընտանիքներով ու անասուններով տեղափոխվում էին մի վայրից մյուսը: Դեռևս X դ. վերջին և XI դ. սկզբին տեղի ունեցավ թյուրքական ցեղերի հուժկու տեղաշարժ Արևելքից Արևմուտք: Սելջուկյան վերնախավը, որը տիրում էր ձիերի հսկայական երամակների և ոչխարների ու այծերի բազմահազարանոց հոտերի, ձգտում էր ոչ միայն ձեռք բերել լավ արոտավայրեր, հարուստ ռազմական ավար և այլն, այլև հաստատել իր իշխանությունը նստակյաց հողագործական բնակչության նկատմամբ: Հենց այդ հանգամանքները պատճառ հանդիսացան, որ թյուրքական ցեղերը ձեռնամուխ լինեն զավթողական արշավանքների, և նրանց մոտ սկսվեն վիթխարի չափերի հասնող գաղթային շարժումներ:

Ի դեպ, Մահմուդ Ղազնևիի կառավարման շրջանում Խորասան տեղափոխվեց թյուրք-օղուզների մի մեծ զանգված: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Մավարաննահրը անցավ կարախանյան թյուրքերի իշխանության ներքո, և վերջիններս այդ վայրերից սկսեցին դուրս մղել օղուզներին, որոնք XI դ. 20-ական թթ. ստիպված էին հեռանալ Մավարաննահրից: Նրանց առաջնորդները դիմեցին Մահմուդ Ղազնևիին՝ խնդրելով, որ նա թույլատրի իրենց բնակվել Խորասանի տարածքում: Փոխարենը նրանք խոստացան նրա օգտին կատարել զինվորական ծառայություն: Նրանց թույլատրվեց բնակություն հաստատել Սերախսի և Աբիվերդի միջև ընկած տարածքում: Խոսքը օղուզների մի ոչ մեծ խմբի՝ ընդամենը 4000 ընտանիքի մասին էր: Սակայն այդ առաջին խմբին՝ հետևեցին նաև մյուսները, և այդ շարժումը ստացավ մեծ թափ:

Մահմուդ Ղազնևին մտադիր էր օղուզներին օգտագործել որպես կենդանի պատնեշ այլ թյուրքական ցեղերի դեմ: Սակայն նա իր հաշիվներում սխալ դուրս եկավ: Ստանալով մշտական համալրում քոչվորական տափաստանից՝ քոչվորները արագ վերածվեցին ահեղ վտանգի Ղազնևիների պետության համար: Արդեն Մասուդի կառավարման առաջին տարիներին Խորասանի հյուսիսում հայտնվեցին օղուզական բնակչության հոծ զանգվածներ: Ծայր առան բախումներ ռազմաշունչ քոչվորների և խաղաղ հողագործական բնակչության միջև: Տարեցտարի սելջուկյան ռազմաավատական վերնախավը Մասուդից ավելի ու ավելի համառորեն էր պահանջում, որ նա կատարի հողային նոր զիջումներ:

1035 թ. դրությունը Խորասանում դարձավ չափազանց լարված: Սելջուկյան օղուզների դեմ ստիպված էր անձամբ արշավանքի գնալ սուլթան Մասուդը: Երբ նրա 20 հազարանոց զորքերը Նեսի մոտ (ժամանակակից Աշխաբադից 18 կմ հյուսիս-արևմուտք) ջախջախվեց սելջուկների կողմից, Ղազնևիների ինքնակալը ստիպված էր համաձայնվել, որ Նեսի, Ֆերավի, Դեհիսթանի շրջանները հանձնվեն նրանց՝ որպես բնակության վայր՝ սահմանապահ զինվորական ծառայություն կատարելու պայմանով: Սակայն այդ զիջումները սելջուկյան վերնախավին բավարարում էին ոչ տևական ժամանակների համար: Շուտով նրանք պահանջեցին նաև Մերվի շրջանը: Որպես պատասխան՝ Մասուդը սելջուկների դեմ ուղարկեց նոր զորքեր, որոնք դարձյալ ի վիճակի չեղան ռազմական հաղթանակ տանել օղուզների աշխարհազորի նկատմամբ:

Այդ ժամանակ սելջուկների գլուխ էին կանգնած երկու եղբայրներ՝ Չաղրի-բեկ Դաուդը և Թողրուլ-բեկ (Տուղրիլ-բեկ) Մուհամմադը, որոնք Սելջուկի թոռներն էին: 1038 թ. նրանք համարյա առանց մարտի գրավեցին Խորասանի կարևորագույն քաղաքները: Դա հնարավոր դարձավ շնորհիվ այն բանի, որ Ղազնևիների նկատմամբ ընդդիմադիր տրամադրություններ ունեցող խորասանյան ազնվականությունը և դեհկանները ձգտում էին ժամ առաջ ազատվել ատելի այդ վարչակարգից: 1038 թ. Չաղրի-բեկը սուլթան հռչակվեց Մերվում, իսկ Թողրուլ-բեկը՝ Նիշապուրում: Նրանց անունով մզկիթներում կարդացվեց խութբա, որը նշանակում էր, որ նրանք այլևս չեն հանդիսանում Մասուդ Ղազնևիի վասալները: Ընդ որում՝ Թողրուլ-բեկը հանդիսացավ առաջին սելջուկյան տիրակալը, որն իրեն շնորհեց «սուլթանի» տիտղոս: Նա կրում էր «մեծ սուլթան, աշխարհի ու կրոնի հենարան» պատվավոր տիտղոսը («աս-սուլթան ալ-մուազզամ»): 1045 թվականից սելջուկյան սուլթաններին անվանում էին նաև Արևելքի և Արևմուտքի սուլթաններ («աս-սուլթան ալ-Մաշրիք վա-լ-Մաղրիբ»):

1038 թ. տեղի ունեցած այդ իրադարձությունը համարվում է սելջուկների պետության կազմավորման սկիզբը, թեև նրանց պայքարը Ղազնևիների հետ դեռևս ավարտված չէր: Շուտով Մասուդին հաջողվեց սելջուկներին դուրս մղել Նիշապուրից: Այդ հաջողությունը թևավորեց նրան, և մի բազմամարդ բանակի գլուխ անցած, որի մեջ կային նաև մարտական փղեր, Մասուդը շարժվեց սելջուկների վրա՝ նպատակ ունենալով մեկ անգամ ընդմիշտ լուծել նրանց հետ կապված գորդյան հանգույցը: 1040 թ. մայիսին Դանդանաքանի մոտ (Մերվից արևելք) տեղի ունեցած մեկօրյա ճակատամարտում Ղազնևիների զորքերը գլխովին

ջախջախվեցին, իսկ ինքը՝ Մասուդը փրկվեց փախուստի դիմելով: Սելջուկները իրենց ենթարկեցին ողջ հյուսիսարևելյան Իրանը: Ղազնևիների իշխանության ներքո մնացին միայն ներկայիս Աֆղանստանի տարածքն ու Փենջաբի մի մասը: Տարածքների կորստի հետ միաժամանակ Ղազնևիները կորցրին նաև Իրանի տիրակալների իրենց դերը:

Դանդանաքանում հաղթանակի ցնծության պահին սելջուկյան ազնվականությունը Թողրուլ-բեկին հռչակեց սուլթան: Ճակատամարտի վայրում հավաքեցին մի վրան, որտեղ դրեցին գահ: Թողրուլ-բեկը նստեց գահի վրա, և նրա մերձավորները ողջունեցին նոր տիրակալին:

Այդ իրադարձությունն իրենով նշանավորում էր Արևմտյան Ասիայում նոր պետության ծնունդը:

Մասուդ Ղազնևին փախավ Հնդկաստան, և ազնվականությունը գահ բարձրացրեց նրա եղբորը՝ Մուհամմադին, որը դեռևս 1030 թ. կուրացված էր և այն ժամանակվանից գտնվում էր բանտարկության մեջ: 1041 թ. գարնանը փոխադարձ պայքարի հետևանքով Ղազնևիների պետության գլուխ կանգնեց Մասուդի որդին՝ սուլթան Մաուդուդը (1041-1049), իսկ նրանից 10 տարի անց՝ մյուս որդին՝ Իբրահիմը (1059-1099): Այդ բոլոր տարիներին Ղազնևիների և սելջուկների միջև ընթանում էր դաժան պայքար Միջին Արևելքում առաջնության համար: 1060 թ. այդ հակամարտությունն ավարտվեց Իբրահիմ Ղազնևիի և Չաղրի-բեկ Սելջուկի միջև հաշտության պայմանագրի կնքմամբ: Կողմերը համաձայնվեցին դադարեցնել տարածքային վեճերը և բավարարվել տվյալ պահին իրենց ունեցած հողերով: Երկու պետությունների միջև սահմանն անցավ Հյուսիսային և Արևմտյան Աֆղանստանով:

3. ԻՐԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ: ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ

Դեռևս մինչև Ղազնևիների և սելջուկների միջև Խորասանի համար սկսված վեճի ելքի պարզվելը, օղուզների առանձին ջոկատներ, 1017 թ. սկսած, սկսեցին թափանցել արևմուտք՝ հասնելով մինչև Իրանի խորքերը: Միաժամանակ տեղի էին ունենում օղուզների զանգվածային գաղթեր դեպի Իրան: Այդպիսի գաղթեր են տեղի ունեցել 1017-1028, 1031, 1042 և 1047 թթ.:

Սկզբնական շրջանում այդ շարժումը տեղի էր ունենում տարերայնորեն: Սակայն այն բանից հետո, երբ Խորասանն անցավ սելջուկներին, նրանց նվաճողական շարժումը դեպի արևմուտք ընդունեց առավել կազմակերպված ու հետևողական բնույթ: Սելջուկյան ջոկատները գլխավորում էին Թողրուլ-բեկը և նրա հորեղբայր Իբրահիմ Յանալը: Խորասանում որպես «Արևելքի տիրակալ» մնաց Թողրուլ-բեկի ավագ եղբայր Չաղրի-բեկը՝ իր որդու՝ Ալփ-Ասլանի հետ: Այդ ժամանակ Իրանի արևելքում գոյություն չուներ քաղաքական և ռազմական մի այնպիսի ուժ, որն ի վիճակի լիներ հակազդելու օղուզական ջոկատների հաղթական առաջխաղացմանը: Սելջուկյան թյուրքերի արշավանքների առաջին փուլին բնորոշ էին ավարառությունն ու կողոպուտը, գերեվարությունն ու բարգավաճ քաղաքների ամայացումը: Սակայն հաջորդ փուլին հատկանշական են արշավանքի ենթարկված երկրների վերջնական նվաճումն ու բնակեցումը:

Դեռևս 1031 թ. օղուզների մի այլ խմբավորում, որը կապ չուներ սելջուկների հետ, Բուղա Գյոկ-տաշ և Յաղմուր-Կըզըլ ցեղային առաջնորդների գլխավորությամբ ապստամբում է Ղազնյան Մասուդ սուլթանի դեմ, նոր արոտավայրեր գտնելու նպատակով քոչում է Իրան և 1036 թ. միանալով Պարսկական Իրաքում և Ատրպատականում թափառող թուրքմենների հետ՝ հիմնում է յայլաղներ և ղշլաղներ, հատկապես Ատրպատականում: Թուրքմենական մեկ այլ ցեղ Դանա անունով առաջնորդի գլխավորությամբ հիմնավորվել էր Ուրմիա լճի շուրջը:

Մատթեոս Ուռհայեցի պատմիչն ուշագրավ տեղեկություններ է հաղորդում այդ նոր նվաճողների մասին: «Նրանք ունեին երկար մազեր կանանց նման,- գրում է նա: -Նրանք զինված էին աղեղներով... Նրանք չեն պատվում մեծամեծներին, չեն խղճում երիտասարդներին ու տղաներին, ոչ էլ խնայում են որևէ մեկի մանկությունը... Նրանք ունեին արյունարբու գազանների բնություն. սարսափելի էին իրենց տեսքով, որովհետև նրանց դեմքերի կերպարանքը տեսնողներին զարհուրեցնում էր և ահաբեկում»:

Իրենց դիրքերն ամրապնդելով Խորասանում՝ սելջուկները այնուհետև նվաճեցին Գորգանը, Դեհիսթանը և Խորեզմը: 1040-1054 թթ. նրանք իրենց իշխանությունը հաստատեցին Իրանի մեծագույն մասի վրա, որտեղ տիրացան Ռեյ, Համադան, Քերմանշահ, Սպահան քաղաքներին և Սիսթան, Քերման, Ֆարս և Խուզիստան նահանգներին: Ռեյը ժամանակավորապես դարձավ Թողրուլ-բեկի հիմնական հենակետը դեպի Իրան և Կովկաս շարժվելու համար:

Արդեն XI դ. 40-ական թթ. վերջին սելջուկյան զորքերը հասան Բյուզանդական կայսրության տիրույթների սահմաններին: Այնուհետև սելջուկ-թյուրքերը Ատրպատականի ու Պարսկական Իրաքի տարածքով ներխուժեցին Փոքր Ասիա, Վերին Միջագետք (Դիարբեքիր, Ջազիրայի և Մոսուլի շրջանները), ինչպես նաև Հայաստան, որտեղ նրանց հրապուրում էին հիանալի արոտավայրերը: Արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրը հայտնում է, որ օղուզ-թուրքմենները հաճախակի ասպատակում էին հայերի երկիրը, կողոպտում այն և այնքան շատ գերիներ վերցնում, որ մի գեղեցիկ ստրկուհի արժեր հազիվ 5 դինար, իսկ տղամարդկանց և տղաներին ոչ ոք չէր ցանկանում վերցնել՝ նույնիսկ ձրի:

1048/49 թթ. Հայաստանի տարածքում Իբրահիմ Յաննալը և Սելջուկի թոռ Քութալմիշը հանդիպեցին Կոնստանդինոս IX Մոնոմախ կայսեր արևելյան բանակի և նրա դաշնակիցների՝ հայկական ու վրացական զորամասերի հետ: Սելջուկներն առաջին լուրջ պարտությունը հասցրին քրիստոնյաների միացյալ ուժերին:

1050 թ. Թողրուլ-բեկը իր մայրաքաղաքը Ռեյից տեղափոխեց Սպահան և իր բոլոր ուժերն ուղղեց Բաղդադի գրավման համար: Քարոզչական նպատակով նա առաջ քաշեց Աբբասյան ուղղադավան խալիֆին Բուիների դինաստիայի «շիիթական հերետիկոսների» լծից ազատագրելու կարգախոսը:

1055 թ. դեկտեմբերի 20-ին առանց մարտի սելջուկները մուտք գործեցին Բաղդադ՝ քաղաքը մատնելով ահավոր կողոպուտի: Բաղդադի գրավումը վերջ տվեց Իրանում Բուիների դինաստիայի կառավարմանը: Աբբասյան խալիֆ ալ-Կայիմը իր պալատում մեծ պատիվներով ընդունեց Թողրուլ-բեկին և նրա գլխին դրեց երկեղջյուր թագ, իսկ մեջքին կապեց գոտի՝ երկու թրերով: Թողրուլ-բեկը Իրաքի բուիդյան վերջին կառավարիչ ալ-Մալիք ար-Ռահիմանին (1048-1055) ձերբակալեց և ցմահ բանտարկության դատապարտեց Ռեյ քաղաքի ամրոցում: Իսկ խալիֆի կարգավիճակը այսուհետև սահմանափակվելու էր լոկ «մահմեդականների հոգևոր առաջնորդի» դերով: Խալիֆ ալ-Կայիմը ստիպված էր Թողրուլ-բեկին հռչակել «Արևելքի ու Արևմուտքի սուլթան ու թագավոր»: Դա նշանակում էր, որ նորաթուխ սուլթանը պաշտոնապես ճանաչվում է որպես այն երկրների աշխարհիկ իշխանության ղեկավար, որոնք ճանաչում էին Աբբասյան խալիֆների հոգևոր իշխանությունը: Ի նշան այդ իրադարձության՝ խալիֆը Թողրուլ-բեկին կնության տվեց իր աղջկան՝ Սայիդային:

Բաղդադի խալիֆից սուլթանի կոչում ստանալը նշանակում էր, որ պաշտոնապես հիմք է դրվում սելջուկյան աշխարհակալ պետության:

Սելջուկները ժառանգեցին նաև «շահնշահ» և «ամիր ալ-մո՛ւմինին» («ուղղադավանների տիրակալ») տիտղոսները:

Բաղդադի, Բուիների դինաստիայի այդ վերջին ամրոցի գրավումը սելջուկների առջև բաց արեց ճանապարհը դեպի Խուզիսթան, որով ավարտվեց ողջ Իրանի գրավումը սելջուկյան զորքերի կողմից:

Չաղրի-բեկի մահվանից հետո (1060 թ.) սովորույթի համաձայն, Թողրուլ-բեկն ամուսնացավ իր եղբոր այրիի հետ և մինչև իր կյանքի վերջը (1063 թ.) դարձավ Սելջուկյան պետության միանձնյա տիրակալը. պետություն, որի սահմաններն այդ ժամանակ տարածվում էին Ամու-Դարյայից մինչև Եփրատ:

Որպես Թողրուլ-բեկի զորավոր մրցակից հանդես էր գալիս Իբրահիմ Յանննալը, որը նրա դեմ կազմակերպեց ապստամբություն: Սակայն Թողրուլ-բեկը ջախջախեց նրան, և 1059 թ. Յանննալը խեղդամահ արվեց իր սեփական աղեղով:

Թողրուլ-բեկի մահվանից հետո, արու զավակ չունենալու պատճառով, նրա գահը ժառանգեց Չաղրի-բեկի որդին՝ Ալփ-Ասլանը (1063-1072), որը հռչակվեց սուլթան՝ արժանանալով իշխանության խորհրդանիշների՝ սուլթանի գլխարկի (քոլահ) և գոտու (քյամար): Նրա օրոք նվաճվեցին ողջ Իրանը, Իրաքը, Սիրայի մեծ մասը, Անդրկովկասը և այլն:

Հայաստանում՝ Մանազկերտի մոտ, 1071 թ. սելջուկների հաղթանակը բյուզանդական զորքերի նկատմամբ, որտեղ Ռոմանոս Դիոգենես IV կայսրը գերի ընկավ, թյուրքերի առջև բաց արեց հետագա նվաճողականության ճանապարհը դեպի արևմուտք: Ընդամենը մի քանի տարվա ընթացքում սելջուկները նվաճեցին ողջ Հայաստանը, Արևելյան Վրաստանը, Շիրվանը, Փոքր Ասիան, Սիրիան, Պաղեստինը:

1072 թ. Ալփ-Ասլանը սպանվեց: Մալիք-շահի օրոք (1072-1092) սելջուկների պետությունը հասավ իր առավելագույն հզորությանը: Նրա տարածքները արևելքում հասնում էին մինչև Կաշգար և Արալի ծով, իսկ արևմուտքում՝ Միջերկրական ու Մարմարա ծովերը: Այդ աշխարհակալության հյուսիսային սահմանն անցնում էր Կովկասյան գլխավոր լեռնաշղթայով ու Մև ծովով, իսկ հարավում՝ Պարսից ծոցով ու Միրիական անապատով:

Սելջուկ–օղուզական նվաճումներն ուժգին ազդեցություն գործեցին ողջ Մերձավոր ու Միջին Արևելքի, այդ թվում նաև Իրանի քաղաքական զարգացման վրա: Նախ՝ այդ երկիրը ենթարկվեց սոսկալի ավերածության, որի հետևանքով նրա զարգացումը մեծապես կասեցվեց: Այնուհետև, եթե IX-X դարերում Իրանում ընթանում էր իրանալեզու ժողովուրդների ավատական պետական կազմավորումների համախմբման

(կոնսոլիդացման) գործընթաց, որոնք հանդես էին գալիս Աբբասյան խալիֆայության դեմ, ապա Ղազնևիների պետության ստեղծումով և հատկապես քաղաքական ասպարեզում սելջուկ-օղուզների հանդես գալով այդ գործընթացը դանդաղեց և համարյա իսպառ կանգ առավ: Այնուհետև թյուրք-օղուզների հսկայական զանգվածներ տեղափոխվեցին Իրան, հատկապես Ատրպատական, Խորասան, Ֆարս և այլն՝ շեշտակի ձևով փոխելով այդ երկրի էթնիկական-ազգային կազմը: Դա Թուրանի հաղթարշավն էր դեպի Իրան:

Սելջուկյան հսկայածավալ նոր պետությունը, որի մեջ մտնող երկրները մեծ մասամբ ավերված ու կողոպտված էին, բնականաբար, այդ վիճակում չէին կարող գոյատևել: Ուստի Մալիք-շահը հնարավորություն տվեց նվաճված երկրների ժողովուրդներին մասամբ վերականգնելու իրենց քայքայված երկրներն ու տնտեսությունը:

Չունենալով խոշոր կուլտուրական երկրներ կառավարելու փորձ՝ սելջուկները ստիպված էին կազմակերպել վարչական ու ֆինանսական ապարատ աստիճանավորների այն կաղրերից, առավելապես իրանական ծագում ունեցող, որոնք Ղազնևիների և Բուիների պետությունների քայքայման հետևանքով մնացել էին առանց գործի: Իրանական վարչական ու հոգևոր ազնվականությունը, դերվիշական շեյխերը, վաճառականները ևս իրենց հերթին արագորեն հաշտվեցին սելջուկյան սուլթանների տիրապետության հետ և սկսեցին դաշինք որոնել նվաճողների հետ: Այդ դաշինքը շատ արագորեն ձևավորվեց ու ամրացավ: Ավելին, քանի որ օղուզական զինվորական ազնվականությունը ստացել էր իքթա հողեր և այլևս շահագրգռված չէր ուժեղ կենտրոնացված իշխանության գոյությամբ, սկսեց դրսևորել կենտրոնախույս ձգտումներ: Նրանց այդ ձգտումներին հակակշռելու համար Մալիք-շահը նախ՝ ստեղծեց զորքերի նոր տեսակ՝ ղուլամների զորամիավորումներ, և ապա՝ ավելի շեշտված ձևով սկսեց հենվել պարսկական վերնախավի, մասնավորապես վարչական ազնվականության վրա, որը սերտորեն կապված էր կենտրոնական պետական ապարատի հետ և շահագրգռված էր ուժեղ սուլթանական իշխանության գոյության մեջ:

Այսպիսով՝ սելջուկյան պետության քաղաքական մեխանիզմի վրա նշանակալից ազդեցություն գործեցին իրանական հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալ-քաղաքական ինստիտուտները: Դա, անշուշտ չէր նշանակում, որ սելջուկների պետության մեջ այլևս զարգացում չեն ստանալու այն ինստիտուտները, որոնք բնորոշ էին վաչկատուն թյուրքական հասարակությանը:

Ուշագրավ է նշել, որ Ալփ-Ասլանի օրոք քոչվորների մեծամասնությունը, որոնց միջոցով կատարվել էին նվաճումները, տեղափոխվեցին պետության ծայրամասերը, քանի որ վաչկատուն-նոմադները մշտական սպառնալիք էին հանդիսանում քաղաքային և նստակյաց հողագործական բնակչության համար: Պատահական չէ նաև, որ Մալիք-շահը իր մայրաքաղաքը դարձրեց Սպահանը, առավելապես իրանական էթնոս ունեցող պարսկական հնագույն քաղաքակրթության այդ կենտրոնը: Նա ստեղծեց ճոխ արքունիք, սահմանեց պալատական պաշտոններ, մտցրեց խիստ արարողակարգ:

XI դ. երկրորդ կեսին Սելջուկյան պետության մեջ ձևավորվեց ռազմա-լենային համակարգը, որը հանդիսացավ այդ պետության հիմքը և կարևոր դեր խաղաց իրանական և առհասարակ ողջ մերձավորարևելյան ավատականության զարգացման գործում: Այդ համակարգի էությունը կայանում էր նրանում, որ ռազմական ծառայություն կատարելու դիմաց ավատատեր-զորահրամանատարը, որպես տիրույթ, ստանում էր որոշակի հողակտոր: Այդ շնորհված հողակտորը կրում էր «իքթա» անվանումը, իսկ հողակտոր ստացած անձը կոչվում էր «իքթադար»: Վերջինս ստանում էր գյուղացիներից հարկեր ու տուրքեր հավաքելու իրավունք՝ պարտավոր լինելով դրանց որոշակի մասը մուծելու պետական գանձարան: Իքթադարը իրավասու էր նաև իրագործել դատական ֆունկցիաներ և օգտվում էր այլ իրավունքներից:

Համաձայն մահմեդական իրավունքի՝ իքթան չէր կարող ժառանգաբար փոխանցվել, քանի որ այն հանդիսանում էր ժամանակավոր տիրույթ, այսինքն՝ կարող էր գործել բացառապես ռազմական ծառայություն կատարելու շրջանում:

Սակայն աստիճանաբար իքթադարները, հատկապես նրանցից խոշորները, որոնք, որպես կանոն, ունենում էին նաև սեփական զորքեր, սկսեցին իրենց իքթաները վերածել ժառանգական սեփականության և նույնիսկ դադարեցրին իքթայի տիրապետման հետ կապված պարտավորությունների կատարումը: Այդ կապակցությամբ Սելջուկյան պետության մեջ ուժեղացան անջատողական ձգտումները, որը և դարձավ այդ պետության աստիճանական թուլացման ու քայքայման գլխավոր պատճառներից մեկը:

Մալիք-շահի օրոք իրականացվեց ռազմական բարեփոխում, ըստ որի՝ իքթա համակարգի հիման վրա ստեղծվեցին զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներ: Ի դեպ, վարձու զորքերի մի մասը, մոտ յոթ հազար ռազմիկ, հավաքագրված էր հայերից:

Իրանական պաշտոնեական ազնվականության շրջանում ամենա-

վառ դեմքը սուլթաններ Ալփ-Ասլանի և Մալիք-շահի նշանավոր վեզիր, ականավոր ու եռանդուն պետական գործիչ Աբու Ալի Հասան Թուսին էր (1063-1092), որը հայտնի է Նիզամ ալ-Մուլք («Պետության կարգավորիչ» կամ «Պետության կարգ ու կանոն») պատվավոր անունով: Խորասանի Թուս քաղաքում ծնված այս պարսիկ վեզիրը հանդիսանում էր իր ժամանակի խոշորագույն քաղաքական գործիչներից մեկը: Լինելով վերոհիշյալ երկու սուլթանների արտաքին քաղաքականության ոգեշնչողն ու ուղղություն տվողը՝ նա միաժամանակ հանդիսանում էր պետության մեջ ողջ քաղաքական վարչության ու ֆինանսների կազմակերպիչը: Առհասարակ, սելջուկյան մեծ պետության ղեկը գտնվում էր այս տաղանդավոր պետական գործչի և շնորհաշատ ու օժտված քաղաքագետի և նրա նշանակած բարձր պաշտոնյաների ձեռքին: Իր քաղաքական հայացքներն ու գաղափարները Նիզամ ալ-Մուլքը շարադրել է մի աշխատության մեջ, որը նա անվանել է «Կառավարման ձեռնարկ» («Սիասեթնամե»): Չափազանց մեծ էր նրա դերը նաև վիթխարի Սելջուկյան կայսրությունում գիտության ու մշակույթի զարգացման գործում: Նա գիտնականների ու բանաստեղծների հովանավոր էր, նշանավոր մեդրեսեների հիմնադիր: Բաղդադում, օրինակ, նա հիմնադրեց ողջ Արևելքում մեծ հռչակ ստացած «Նիզամիե» իսլամական ուսումնական հաստատությունը:

Նիզամ ալ-Մուլքը ձգտում էր ստեղծել հզոր կենտրոնացված պետություն, որի նմուշ էր նա համարում Ղազնիների, Սամանիների և Բուիների պետությունները իրենց ծաղկման շրջանում: Նա սուլթաններին խորհուրդ էր տալիս ունենալ մեծ և ուժեղ բանակ, որը պիտանի լիներ ավատական խռովությունները ճնշելու և զավթողական պատերազմներ մղելու համար, լավ հիմքերի վրա դրված լրտեսական ծառայություն և այլն: Նիզամ ալ-Մուլքը ձգտում էր սահմանափակել իքթայի տերերի՝ «իքթադարների» իրավունքները և, ընդհակառակը, ավելի մեղմ վերաբերմունք ունենալ բարիքներ արտադրող գյուղացիության նկատմամբ:

Նիզամ ալ-Մուլքի բարեփոխումներն առաջ բերեցին ավատական շրջանների դիմադրությունը: Արքունիքում ձևավորվեց ընդդիմադիր մի խմբավորում, որը համախմբվեց սուլթանուհի Թուրքան-խաթունի շուրջը, որը կրում էր «Թաջ ալ-Մուլք» տիտղոսը: Այդ խմբավորմանը հաջողվեց հասնել Նիզամ ալ-Մուլքի և սուլթան Մալիք-շահի միջև հարաբերությունների խզմանը: Պալատական այդ խմբավորման սադրանքների, ինչպես նաև իքթաների տեր և ինքնագլխության ձգտող օղուզական զինվորական վերնախավի ճնշման ներքո Նիզամ ալ-Մուլքը իր մահվանից ոչ շատ առաջ հեռացվեց վեզիրի իր պաշտոնից: Իսկ ընդամենը երեք

ամիս անց՝ 1092 թ. հոկտեմբերին, իսմայիլական աղանդավորների ուղարկած ահաբեկիչ ֆիդայու ձեռքով նա սպանվեց: Մեկ այլ վարկածով՝ իր իսկ անձնական ղուլամները տանջալից մահվան մատնեցին իրենց տիրոջը՝ սրերով կտոր-կտոր անելով Նիզամ ալ-Մուլքին:

Սելջուկյան տիրապետությունը Իրանում գալիս է հաստատելու այն իրողությունը, որ թափառական սելջուկ-թուրքերը, հաղթող լինելով հանդերձ, ենթարկվեցին հաղթվածների բարձր քաղաքակրթությանը:

4. *ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ*

Սելջուկյան երկու պետական գործիչների՝ մեծ վեզիր Նիզամ ալ-Մուլքի և սուլթան Մալիք-շահի մահով (1092 թ.) վերջանում է սելջուկյան աշխարհակալության վերելքի ու հզորության ժամանակաշրջանը: Սկսվում է իշխանության համար անզիջում ու դաժան պայքարի մի շրջան՝ սկիզբ դնելով «խառնակ ժամանակների» («ահդ ալ-ֆիթրաթ»): Ծայր է առնում հսկայածավալ տերության կազմալուծման ու տրոհման շրջանը: Անշուշտ, դա հետևանք էր ոչ այնքան այդ երկու նշանավոր գործիչների ասպարեզից դուրս գալուն, որքան սելջուկյան պետական կարգի ռազմաավատական բնույթին բնորոշ արատների: «Մեծ սելջուկների» պետությունը, որը ստեղծվել էր քոչվորների կողմից հսկայական տարածքների նվաճման հետևանքով. տարածքներ, որոնք ունեին տնտեսական զարգացման տարբեր մակարդակ, և էթնիկական առումով ոչ միատարր բնակչություն՝ որպես մեկ միասնական ամբողջություն, չէր կարող երկար գոյատևել:

Մալիք-շահի մահվանից հետո նրա որդիների, եղբայրների և սելջուկյան տան մյուս անդամների միջև սկսված գահակալական արյունահեղ երկպառակությունները ու կռիվները նոր մղում հաղորդեցին սելջուկյան աշխարհակալության քայքայմանը: Կայսրությունն ընկել էր ավատական անիշխանության հորձանուտի մեջ: Սելջուկյան ընդարձակ պետությունը բաժանվեց մեծ ու փոքր իշխանությունների: Անջատումն ամենից առաջ տեղի ունեցավ սուլթանական ընտանիքի մեջ: Քերմանում իր անկախ իշխանությունը հաստատեց Ալփ-Ասլանի եղբոր՝ Կավուրդի սերունդը՝ ստեղծելով առանձին Քերմանի սելջուկյան սուլթանությունը (1041-1187): Փոքր Ասիայի արևմտյան մասում Գթլմուշի որդի

Սուլեյմանը հիմնադրեց Ռումի սուլթանությունը (1077-1307), որը հետագայում կոչվեց Իկոնիայի սելջուկյան սուլթանություն: Իսկ Սիրիայի և Միջագետքի կողմերում, ուր հաստատվել էին Մալիք-շահի եղբոր՝ Տուտուշի որդիները, սրանց երկպառակությունների պատճառով կազմվեցին մի շարք մանր անկախ իշխանություններ: Սուլթան տիտղոսը դադարեց խորհրդանշել միանձնյա իշխանությունը: Աստիճանաբար սելջուկյան պետության մեջ սուլթաններ անվանակոչումը ստացան մի շարք կառավարիչներ: Մալիք շահի որդիների՝ Մահմուդ Ա-ի (1092-1094), Բարքյարուքի (1094-1104), Մուհամմադ Ա-ի (1105-1118) և Սանջարի (1097-1118) երկու տասնյակից ավել տիրապետության օրոք առաջնության համար տեղի էր ունենում թեժ պայքար:

«Մեծ սուլթան» Բարքյարուքի տիրապետությունը բնորոշվում է քաղաքական ճգնաժամով, տնտեսական անկմամբ և ռազմապավատական ազնվականության կամայականություններով:

Բարքյարուքի մահվանից հետո սելջուկյան գահի վրա նրան փոխարինած Մուհամմադ Տափարը փորձում էր կասեցնել պետության մասնատումը: Սակայն նրա մահվանից հետո տեղի ունեցավ պետության բաժանում: Արևմուտքում ստեղծվեց Իրաքի սելջուկյան սուլթանությունը (1118-1194)՝ Համադան մայրաքաղաքով, որի մեջ մտան նաև Պարսկական Իրաքն ու Արևմտյան Իրանը, ինչպես նաև Ատրպատականը, իսկ արևելքում՝ Խորասանը, Սիսթանը, Խորեզմը և Մերվի օազիսը կազմեցին Արևելասելջուկյան պետությունը՝ Սանջար իբն Մալիք-շահի (1118-1153) գլխավորությամբ: Նրա տիրապետությունը տարածվեց նաև Մավարաննահրի վրա, որտեղ Սանջարը գահ բարձրացրեց իր ազգականներից մեկին՝ Կարախանյան Արսլան-խանին: Այնուհետև նա իրեն ենթարկեց Մազանդարանը, Դեմավենդը, Կումիսը, Դամղանը և Ռեյը: Շուտով Իրաքի սելջուկյան սուլթանությունը նս հարկադրված էր ճանաչել Սանջարի տիրապետությունը: Վերջինս իրեն հռչակեց «Արևելքի տիրակալ» («մալիք ալ-մաշրիք»), իսկ այնուհետև ընդունեց «մեծագույն սուլթան», «սուլթանների սուլթան», «մեծ շահնշահ» տիտղոսները: Նրա առջև քծնող բանաստեղծները նրան անվանում էին «ամբողջ Արևելքի և Արևմուտքի սուլթանների սուլթան»: Սակայն իրականում Արևմտյան Ասիայում նրան համարում էին լոկ «Արևելքի սուլթան»:

Շուտով Միջին Ասիայի քյուրքական ցեղերի՝ օղուզների, քուրքմենների, հալլաջների, չիգիլների և այլն, ռազմաավատական ազնվականությունը սկսում է իր կամքը թելադրել սուլթան Սանջարին:

Առաջին երեք «մեծ սուլթանների» կառավարման շրջանում (1038-

1092) հիմք դրվեց իրանա- և թյուրքալեզու ժողովուրդների միավորմանը: Սելջուկյան պետությունը նշանակալիորեն փոխեց Իրանի դեմոգրաֆիական հաշվեկշիռը՝ հօգուտ թյուրքալեզու ժողովուրդների: Սակայն նրանք չկարողացան իրենց կողմից նվաճված իրանական ժողովրդին համախմբել «ազգային» կամ հայրենասիրական գաղափարի շուրջ: Ճիշտ է, կայսրության ստեղծման համար միանգամայն բավարար էր մահմեդական միասնության գաղափարը, սակայն իրական միասնություն ստեղծելը հանդիսացավ իրենց ուժերից վեր մի խնդիր: «Ադաթի», այսինքն՝ ավանդական ապրելակերպի և չգրված օրենքների ու սովորույթների առկայությունն իրանցիների մոտ այն աստիճանի ուժեղ գտնվեցին, որ սելջուկները չկարողացան այն փոխարինել ինչ-որ նոր և արժանավոր բանով: Պետական հիմնարկներում ողջ գործարար գրագրությունը, որպես կանոն, տեղի էր ունենում ֆարսի լեզվով և միայն երբեմն՝ արաբերենով: Ժամանակի ընթացքում սուլթաններն ավելի շատ սկսեցին հենվել պարսկական ազնվականության վրա, որը կապված էր կենտրոնական պետական ապարատի հետ և շահագրգռված էր ուժեղ սուլթանական իշխանության գոյության մեջ:

XII դ. 30-ական թթ. Միջին Ասիայի սահմաններում հայտնվեց մի նոր վտանգավոր հակառակորդ՝ վաչկատուն կարաչինացիները կամ կիդանները: Այդ՝ ոչ այն է տունգուսական, ոչ այն է մոնղոլական ծագում ունեցող վաչկատուն ցեղը մոտ 1128 թ. Կարախանյանների ձեռքից խլեց Արևելյան Թուրքեստանի (ներկայումս՝ Սինցզյան) և, այսպես կոչված, «Յոթ գետերի» ավազանի շրջանները և այնտեղ կազմակերպեց խոշոր պետություն, որը յուրացրեց չինական մշակույթի և պետականության բազմաթիվ տարրեր:

Կարախանյան խանի խնդրանքով սուլթան Սանջարը նրան օգնության ուղարկեց մի մեծ բանակ: Սակայն Կատվանյան տափաստանում (Սամարղանդի մոտ) 1141 թ. սեպտեմբերի 9-ին տեղի ունեցած ճակատամարտում Կարախանյանների և սելջուկների միացյալ զորքերը ջախջախվեցին կարաչինացիների կողմից (1141 թ.): Կորցնելով 30 հազար զինվոր՝ սուլթան Սանջարը փրկվեց փախուստով: Այլևս Մավարաննահրը սելջուկների համար կորսված էր:

Սանջարի պարտությունը մահմեդական հպատակների աչքում մեծ հարված հասցրեց նրա հեղինակությանը, քանի որ նրան հաղթողները ոչ մահմեդական «քյաֆիր-անհավատներ» էին:

Այդ պարտությունից չհապաղեցին օգտվել Սանջարի տիրույթների վասալական կառավարիչները: 1141 թ. վերոհիշյալ ճակատամարտից

քիչ անց, Խորեզմի ժառանգական տիրակալ, խորեզմշահ Աքսըզը հարձակվեց Մերվի և Նիշապուրի վրա և իրեն հայտարարեց անկախ կառավարիչ: Սանջարին մեծ դժվարությամբ հաջողվեց ստիպել Աքսըզին գեթ ձևականորեն ճանաչելու սելջուկյան սուլթանի գերագույն իշխանությունը: Սակայն փաստորեն սելջուկները կորցրեցին Խորեզմը:

Սելջուկների պետությանն ավելի մեծ աղետ բերեց նրանց ցեղակից օղուզների ապստամբությունը, որը տեղի ունեցավ 1153 թ. ապրիլին: Մերվի մոտ սուլթան Սանջարի զորքերն ապստամբների կողմից ջախջախվեցին, իսկ ինքը՝ սուլթանը, գերի ընկավ: Օղուզները ներխուժեցին Խորասան և ահավոր կողոպուտի ենթարկեցին այն: Նրանք տղամարդկանց սպանում էին, կանանց ու երեխաներին գերի վերցնում, մզկիթները, շուկաները, մեղրեսեները ավերում ու քանդում, բնակչության գույքը կողոպտում: Նրանք այրեցին մի շարք գրադարաններ և կոտորեցին բազմաթիվ գիտնականների: Օղուզների քոչվորական վերնախավն այդ ապստամբությունն օգտագործեց հարուստ ռազմական ավար և հողեր ձեռք բերելու համար:

Երեք տարի (1153-1156 թթ.) սուլթան Սանջարն օղուզների մոտ մնաց գերության մեջ, այնուհետև նրան հաջողվեց փախչել և հասնել իր մայրաքաղաքը՝ Մերվ: Մեկ տարի հետո (1157 թ.) նա մահացավ: Սուլթան Սանջարի մահով Սելջուկների դինաստիան Խորասանում դադարեց գոյություն ունենալուց:

Իրաքյան Սելջուկյան պետության մեջ սուլթանները ստիպված էին իրենց ավատակալվածքները զիջել թյուրքական քոչվորական ազնվականության առավել աչքի ընկնող ներկայացուցիչներին, որոնց ձեռքերում էր գտնվում ռազմական ուժը: Սելջուկների իրաքյան սուլթանությունը, հետևաբար և Արևմտյան Իրանը, տրոհվեց մի շարք անկախ տիրույթների, որոնց ժառանգական կառավարիչները կոչվում էին աթաբեկներ: Այդ բառի ծագումը, որ ստացել էր տիտղոսի իմաստ, կապված է այն բանի հետ, որ Սելջուկյան պետության մեջ երբ սուլթանն իր որդիներից մեկին որպես ավատակալվածք հանձնում էր այս կամ այն շրջանը, նա որպես դաստիարակ, իր տղայի մոտ էր ուղարկում որևէ աչքի ընկնող հրամանատար-էմիրի, որը, փաստորեն, իր անունից կառավարում էր իր որդուն հատկացված կալվածքը: Նման էմիրին անվանում էին «աթաբեկ», որը թյուրքերեն նշանակում էր «հայր-բեկ»:

Իրանի տարածքում առավել կարևոր աթաբեկություններ կազմավորվեցին Ատրպատականում, Ֆարսում և Լուրիսթանում, որտեղ ամրապնդվեցին աթաբեկական մի շարք դինաստիաներ. Իլդեգիզյանների

(1136-1225 թթ.)՝ Ատրպատականում, Սալգուրյանների (1148-1287 թթ.)՝ Ֆարսում, Հազարասպիդյանների (1148-1339 թթ.)՝ Լուրիսթանում:

Դեռևս Սանջարի կենդանության օրոք Հերաթից արևելք ընկած Հուր կամ Ղուր լեռնային շրջանը դարձավ անկախ: Այնտեղ ձևավորվեց Հուրիդների դինաստիան (1148-1215 թթ.): Հուրիդներն ավերեցին Ղազնի քաղաքը (1150 թ.), որից հետո նրանք իրենց իշխանությունը տարածեցին ողջ ներկայիս Աֆղանստանի և Հյուսիսային Հնդկաստանի նկատմամբ, այնտեղից դուրս մղելով Ղազնևիներին: 1186 թ. Ղուրիները գրավեցին Ղազնևիների մայրաքաղաք Ղազնին՝ ղրանով իսկ վերջ տալով երբեմնի այդ հզոր պետության գոյությանը:

Վերոհիշյալ տիրակալների մեջ XII դ. երկրորդ կեսին աչքի ընկան խորեզմշահերը: Սելջուկների պետության թուլացումը նպաստեց Խորեզմի քաղաքական ուժեղացմանը: Խորեզմը զբաղեցնում էր հարմար աշխարհագրական դիրք Միջին Ասիան, Իրանը, Մերձսևծովյան տափաստանները, Պովոլժիեն և ռուսական հողերն իրար կապող կարևորագույն քարավանային ճանապարհների խաչմերուկում: Այդ ճանապարհների վրա աշխույժ առևտուրը հարստացնում էր խորեզմշահերին: Մոտ 30 տարի օղուզների, խորեզմշահերի, Աֆղանստանի հուրիդների և այլ ավատական տիրակալների մղած պայքարը Խորասանի համար ավարտվեց խորեզմշահ Թեքեշի (Թաքաշ) հաղթանակով, որն ընդունեց սուլթանի տիտղոս (1172-1200): Այսուհետև Խորեզմը սկսեց խաղալ ղեկավար դեր Խորասանի, իսկ ապա նաև ողջ Իրանի քաղաքական կյանքում: 1187թ. Թեքեշը տիրեց Խորասանի մայրաքաղաք Նիշապուրին, այնուհետև իր տիրույթներին միացրեց Մերվի օազիսը, որից հետո զենքն ուղղեց Իրաքյան սելջուկյան սուլթանության դեմ, որի ջախջախումից հետո իրեն միացրեց ողջ Արևմտյան Իրանը (1194թ.): Թաքաշին հաջորդած նրա որդին՝ Խորեզմշահ Ալա ադ-Դին Մուհամմադը (1200-1220 թթ.) էլ ավելի ընդլայնեց պետության սահմանները: 1210 թ. Թալասգետի մոտ նա ջախջախեց կարաչինացիներին և նրանց քշեց դեպի արևելք, իրեն ենթարկեց Մավարաննահրը Սամարղանդ և Բուխարա քաղաքներով հանդերձ և ներկա Աֆղանստանն ու Ատրպատականը (1215 թ.): Խորեզմշահերի պետությունն իր տիրապետության տակ միավորեց ողջ Իրանը, բացի Խուզիսթանից, որը շարունակում էր մնալ խալիֆայության կազմի մեջ:

1217 թ. Խորեզմշահ Մուհամմադը արշավանք կազմակերպեց դեպի Բաղդադ: Սակայն ձմռանը Զագրոսյան լեռներից անցում կատարելու ժամանակ նրա զորքերի նշանակալից մասի կորուստը ստիպեց նրան

դաղարեցնել արշավանքը: Ի դեպ, խորեզմշահերը չհամարձակվեցին ձեռք տալ իրենց վասալներից ֆարսի Սալգուրդներին և Լուրիսթանի Հազարասպիդներին:

Այսպիսով՝ Մուհամմադի ժամանակ խորեզմշահերի պետությունը, որի սահմանները տարածվում էին արևելքից Հինդոս գետից, մինչև արևմուտք՝ Զագրոսյան լեռնաշղթան, և հյուսիսից՝ Կասպից և Արալյան ծովերից, մինչև հարավ՝ Պարսից ծոց, դարձավ Մերձավոր Արևելքում խոշորագույն պետությունը:

Խորեզմշահերի պետության քաղաքական նպատակներից մեկն էր լուծել շիաների՝ հարյուրամյակներ տևող պայքարը իշխանության համար:

5. ԻՍՄԱՅԻԼԻԹԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Սելջուկ նվաճողները Իրանում իրենց պահում էին ինչպես զավթիչներ: Նրանք ոտնահարում էին տեղական սովորույթները, ավանդույթները և բարոյական նորմերը: Իրենց լեզվով, ապրելակերպով օտար լինելով տեղացիներին՝ նրանք առաջ էին բերում իրանական ժողովրդի խորը ատելությունը: Սելջուկ ավատատերերի կողմից բնակչության շահագործումը, բռնություններն ու անօրինություններն առաջ բերեցին դիմադրության շարժում, որը, որպես կանոն, ընդունում էր կրոնական գունավորում: Այդ շարժումներից ամենահզորը իսմայիլիթական շարժումն էր, որի առաջնորդը, կազմակերպիչն ու գաղափարախոսը Հասան իբն աս-Սաբբահն էր (մոտ 1055-1124 թթ.):

Իրանում իսմայիլիթների ապստամբությանը նախորդեց իսմայիլիզմի գաղափարախոսության տարածումը: Այդ գաղափարախոսությունը հանդիսանում էր շիիզմի ծայրահեղ աղանդներից մեկը, որն իր անվանումը ստացել էր շիիթական իմամ Իսմայիլի անունից:

XI դ. 80-90-ական թթ. սկսած՝ Հասան իբն աս-Սաբբահը և նրա «դայիները» (քարոզիչները) Իրանում ծավալեցին բուռն գործունեություն: Շրջելով ողջ երկրով մեկ՝ նրանք կոչ էին անում պայքարի դուրս գալ սելջուկների և սելջուկյան պետության մեջ գոյություն ունեցող կարգերի դեմ, ոչնչացնել սելջուկների քաղաքական իշխանությունն Իրանում և ազատագրել իրանական ժողովրդին ու երկրի տարածքը: Իր այդ գաղա-

փարները Հասան իբն Սաբբահը զարգացրել է մի ուսմունքի մեջ, որն ստացել էր «Դավաթ-ի ջադիդ» անվանումը (արաբերեն « ադ-դա՛վա ալ-ջադիդա»), որը նշանակում է «Նոր կոչ»:

Իսմայիլիթների կոչերին արձագանքեցին բազմաթիվ արհեստավորներ, քաղաքային չքավորությունը, գյուղացիությունը և այլք: 1090 թ. ապստամբած իսմայիլիթները գրավեցին Ալամութ անառիկ լեռնային ամրոցը, որը գտնվում էր Էլբուրսի լեռներում՝ Ղազվինից հյուսիս: Այնուհետև նրանք Դեյլեմում, Քուհիսթանում ու Ֆարսում գրավեցին մի շարք քաղաքներ և հիմնադրեցին հզոր աստվածապետական իսմայիլիթական պետությունը (1090-1256 թթ.)՝ Ալամութ մայրաքաղաքով: Հասան իբն աս-Սաբբահը, որը մինչ այդ հանդիսանում էր իսմայիլիթների հոգևոր առաջնորդը, այժմ ձեռք բերեց նաև քաղաքական իշխանություն՝ դառնալով Իրանում և Սիրիայում իսմայիլիթական բոլոր տիրույթների գերագույն կառավարիչ: Նրա մականունը, ավելի ճիշտ՝ գաղտնանունը, «Լեռնային ծերուկ» էր:

Իսմայիլիթներն արյունոտ պայքար սկսեցին սուննիզմը դավանողների և հատկապես շիիզմը հալածանքների ենթարկողների դեմ: Իրենց տրամադրության տակ չունենալով բավարար ռազմական ուժեր՝ իսմայիլիթները որպես պայքարի ձև ընդունեցին անհատական ահաբեկչության պրակտիկան՝ այն հասցնելով մինչև կատարելության աստիճան: Նրանց ահաբեկչությանը զոհ գնացին ժամանակի այնպիսի ականավոր դեմքեր, ինչպիսիք էին վեզիր Նիզամ ալ-Մուլքը (1092 թ.), Իրաքի սելջուկյան սուլթան Ղիյաս ադ-դին Դաուդը (1132 թ.), Աբբասյան խալիֆներ ալ-Մուստարշիդը (1135 թ.), ար-Ռաշիդը (1136 թ.) և շատ ուրիշներ: Իբն աս-Սաբբահի մահվանից հետո (1124 թ.) իսմայիլիթների ղեկավար դարձավ նրա հետևորդ Քիյա Բոզորգ Օմիդը, և իսմայիլիթական պետությունը նրա և նրա ժառանգորդների օրոք գոյություն ունեցավ ևս 130 տարի՝ մինչև այն պահը, երբ չկարողանալով դիմանալ մոնղոլական արշավանքների ճնշմանը, այն ընկավ (1256թ.):

Իսմայիլիթները գրավեցին բազմաթիվ լեռնային ամրոցներ Դեյլեմում, Քուհիսթանում, Ռուդբարում, Ֆարսում, ինչպես նաև Իրանի սահմաններից դուրս՝ Սիրիայում, Լիբանանի լեռներում և այլն: Նրանք Էլբուրսի լեռներում կառուցում էին նոր ամրոցներ և ամրապնդում հները: Սպահանը գրավելու փորձերը (1101-1107 թթ.) ավարտվեցին անհաջողությամբ: Թեև իսմայիլիթներին հաջողվել էր շարժում ծավալել նաև Սիրիայում, սակայն իսմայիլիթական շարժման քաղաքական կենտրոնը շարունակում էր մնալ Իրանը:

Քարավանային ճանապարհների վրա գտնվող մի շարք ամրոցները իսմայիլիթներին հնարավորություն էին տալիս առևտրական քարավաններից գանձել հարկեր: Նրանց տրամադրության տակ հիանալի արոտավայրերի, ցանքսերի և այգիների համար պիտանի հողերի առկայությունը ևս նպաստում էր, որ իսմայիլիթների պետությունն արագորեն հարստանա ու ծաղկի:

Այդ պետության մեջ վերացվեց սելջուկների քաղաքական իշխանությունը: Ալամութի իսմայիլիթների աղանդը հանդիսանում էր գաղտնի կազմակերպություն, որոնց անդամներին կապում էր երկաթյա կարգապահությունը: Կազմակերպության յուրաքանչյուր անդամ պարտավոր էր անվերապահորեն կատարել «Լեռնային ծերունու», այսինքն՝ Հասան իբն աս-Սաբբահի բոլոր հրամանները:

Իսմայիլիթների շարքերն ընդունվելիս մահմեդականը ենթարկվում էր նուրբ գաղափարական մշակման և տևական ստուգումների: Աղանդի լիարժեք անդամ դառնալու համար թեկնածուն անցնում էր յոթ էտապ: Բարձրագույն էտապներն անցածները դառնում էին «Լեռնային ծերունու» մերձավոր օգնականները: Սակայն բարձրագույն աստիճանին հասնում էին սահմանափակ թվով մարդիկ, իսկ շարքային իսմայիլիթները, որպես կանոն, առաջին-երկրորդ աստիճաններից վերև չէին բարձրանում:

Ամրոցների ձեռքբերումից ու դրանց ամրացումից, ինչպես նաև ճկուն և ուժեղ կազմակերպության ստեղծումից հետո իսմայիլիթները պայքար սկսեցին սելջուկյան պետության և հատկապես նրա պետական իշխանությունը ներկայացնող վերնախավի դեմ: Աստիճանաբար իսմայիլիթական շարժումը կրոնական աղանդից վերածվեց գաղտնի ահաբեկչական կազմակերպության, որի մեջ ղեկավար դեր էին խաղում սելջուկների դեմ ընդդիմադիր տրամադրություններ ունեցող տեղական հին ավատատերերը: Սակայն իր զարգացման վաղ էտապում իսմայիլիզմը որոշ ժողովրդականություն էր վայելում գյուղացիության շրջանում: Դա պայմանավորված էր նրանով, որ իսմայիլիզմի ճյուղերից մեկը ներկայացնող քարմաթները հանդես էին գալիս մազդակյան գաղափարների քարոզչությամբ, հին համայնքային կյանքը վերադարձնելու և համայնքային հավասարություն ստեղծելու վերաբերյալ:

«Լեռնային ծերունու» հրամանով ուղարկված մարդասպան ֆիդայիները, քողարկվելով վաճառականի, մուրացկանի, ծառայի, ղերվիշի անվան տակ, կարողանում էր թափանցել ամեն տեղ՝ թագավորի պալատը, զորահրամանատարի կայանը, մզկիթ, քաղաքային բազար և այլն, և իր դաշույնը մխրճել ընտրված զոհի սիրտը: Իսմայիլիթները իրենց ահա-

բեկչական գործողությունները նախապատրաստում էին խորը գաղտնիության պայմաններում, սակայն դրանք միշտ իրագործում էին հրապարակավ, այն հաշվով, որ այն կունենա քաղաքական մեծ արդյունավետություն ու արձագանք: Կիրակոս Գանձակեցին իսմայիլիթների մասին պատմում է. «Նրանք տարբեր զգեստավորումով թափառում էին մի վայրից մյուսը, մինչև որ հարմար պահ գտնեն սպանելու այն անձին, որին հրամայված է: Այդ իսկ պատճառով բոլոր իշխաններն ու թագավորները վախենում են նրանցից և նրանց վճարում են հարկեր: Նրանք բացառիկ ճշտությամբ են կատարում իրենց իշխանի հրամանը՝ հաճախ նույնիսկ զոհելով սեփական կյանքը»:

Ալամութի իսմայիլիթների մասին տարածված էր այն կարծիքը, որ իբր նրանք օգտագործում էին թմրանյութեր (հաշիշ), որպեսզի կտրվեն աշխարհի գործերից և ընկնեն երազանքների մեջ՝ պատկերացնելով, որ իրենք գտնվում են դրախտի այգիներում, հուրի-փերիների հետ: Այդ իսկ պատճառով իսմայիլիթներին սկսեցին անվանել «հաշիշ ծխողներ» (հաշիշիյուն): Այդ բառը խաչակիրների կողմից աղավաղված ձևով արտաբերվում էր «ասսասին», որը նշանակում էր ափազակ, մարդասպան:

Իրենք՝ իսմայիլիթները, սպանություններն իրագործողներին անվանում էին «ֆիդայի», որը կարելի է բացատրել «անձը զոհող՝ հանուն բարձր նպատակի իրագործման»: Սուննիթները իսմայիլիթներին անվանում էին «մոլորյալներ» (արաբերեն՝ «ալ-մալահիդա»): Ահաբեկչական գործողություններին զուգահեռ, իսմայիլիթները զինված պայքար էին մղում ոչ միայն սելջուկյան իշխանությունների, այլև տեղական ավատատերերի դեմ:

Արդեն XIII դ. սկզբին իսմայիլիթների Ալամության պետության մեջ կտրուկ կերպով սրվեցին ներքին հակասությունները: Սակայն նրանց պետությունը դեռևս պահպանվում էր, և շուտով նա պայքարի մեջ մտավ մոնղոլական զավթիչների դեմ:

6. ԻՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ VIII – XII ԴԱՐԵՐՈՒՄ

VIII–XIII դարերը իրանական մշակույթի զարգացման մի ուշագրավ շրջան են հանդիսանում: Արաբների կողմից Իրանի նվաճման հետևանքով մշակույթի առանձին ճյուղերի զարգացումն արհեստականորեն կասեցվեց, քանի որ նախ՝ իսլամը թշնամանքով էր վերաբերվում պարսիկների միևչիսլամական մշակութային ավանդույթների նկատմամբ, և ապա՝ իսլամական կրոնի համար անընդունելի էր արվեստի ու մշակույթի մի շարք բնագավառների գոյությունը: Այսպես, օրինակ՝ իսլամն առհասարակ արգելում է գեղանկարչությունը, որմնանկարչությունը, առավել ևս դիմանկարչությունը: Ուստի, հարմարվելով նոր ստեղծված պայմաններին, պարսիկ արվեստագետները զարկ տվեցին կտորների, սպասքների և այլ իրերի նախշանկարչությանն ու զարդանկարչությանը:

Ինչ վերաբերում է սելջուկներին, ապա լինելով վաչկատուն քոչվոր ժողովուրդ, նրանց մոտ բացակայում էր մշակութային արժեքների գոյությունը: Սակայն իրողություն է նաև այն, որ յուրացնելով իրանական բարձր զարգացած մշակույթը՝ սելջուկները իրենց հերթին որոշակի ազդեցություն գործեցին իրանական մշակութային կյանքի նկատմամբ այն առումով, որ նրանց տիրապետության շրջանում ճարտարապետության, մասնավորապես մզկիթների, մեդրեսեների, քարավանսարայների, դամբարանների և այլ շինությունների կառուցման բնագավառում մշակվեց նոր ոճ, որը թեև իր ձևերով չափազանց մոտ էր արաբական-իսլամական ոճին, սակայն ուներ նաև իր առանձնահատուկ յուրահատկությունները:

Իրանը չափազանց հարուստ է շինարարական բազմապիսի քարերով: Սակայն միջնադարում շինարարության համար օգտագործվում էր համարյա բացառապես թրծված աղյուսը: Համենայն դեպս, VIII-XIII դարերի պահպանված ճարտարապետական հուշարձաններից ոչ մեկը քարակերտ չէ: Նույնիսկ ամրոցները կառուցվում էին տարբեր չափսերի թրծված աղյուսով:

Շենքերը դրսի և ներսի կողմից երեսապատվում էին տարբեր գույների թրծված աղյուսով կամ սվաղվում էին գաջակրով: Ավելի ուշ շենքերը սկսեցին նախշազարդվել գունավոր հախճապակյա խճանկարով: X-XII դդ. Իրանում բարձր զարգացման հասան գեղարվեստական արհեստա-

գործությունը, զարդանախշերով դաջված կտորեղենի արտադրությունը, ոսկեթել ու արծաթաթել ձեռագործությունը, գորգագործությունը, ոսկեգործությունը, սառը զենքի արտադրությունը, զանազան ամաներեղենի, բրուտագործական ու հախճապակյա իրերի արտադրությունը և այլն:

VII դ. արաբական նվաճումից հետո Իրանում գրական ստեղծագործությունները գրվում էին արաբերեն լեզվով:

Սակայն աստիճանաբար մտավոր գործունեությամբ զբաղվող մարդիկ սկսեցին մերժել և ընդդիմանալ այդ կարգին, և շարժում ծավալվեց պարսկերենով առաջին պլան մղելու ուղղությամբ: Մասնավորապես VIII դ. սկսած՝ Իրանում լայն տարածում գտավ այսպես կոչված «շու՛ուբիքական» շարժումը, որն իրենից ներկայացնում էր արաբների քաղաքական ու մշակութային տիրապետության դեմ ընդդիմադիր մի շարժում, որի հետևորդները ձգտում էին ցույց տալ իրանական մշակույթի առավելությունը զավթիչների մշակույթի նկատմամբ:

IX դ. ձևավորվեց նոր պարսկերենը՝ «ֆարսին»: Սկզբնական շրջանում այդ լեզվով գրվում էին միայն բանաստեղծական ստեղծագործություններ, սակայն X դ. երկրորդ կեսից սկսած՝ նրանով սկսեցին շարադրել նաև գիտական աշխատություններ: Աստիճանաբար նոր պարսկերենը դուրս եկավ Իրանի սահմաններից, տարածում գտնելով նաև Միջին Ասիայում, Սելջուկյան Փոքր Ասիայում և Հնդկաստանի մահմեդական պետություններում:

Իր անմահ ստեղծագործությունը՝ «Շահնամեն», որը հանդիսանում է համաշխարհային պոեզիայի գոհարներից մեկը, Ֆիրդուսին (934- մոտ 1025 թթ.) գրել է նոր պարսկերենով: Այդ ստեղծագործությամբ Ֆիրդուսին բանաստեղծական կամ չափածո ձևով շարադրում է Իրանի պատմությունը հնագույն ժամանակներից սկսած մինչև արաբների կողմից Իրանի նվաճումը: Այն գրված է հերոսականության ու ջերմ հայրենասիրական շնչով, հայրենիքի նկատմամբ սիրո վառ դրսևորումներով և ատելությամբ արաբ և թյուրք զավթիչների նկատմամբ: Պոեմի լեյտմոտիվը Իրանի վրա արշավող թյուրքական վաչկատուն ցեղերի և իրանցիների միջև դարավոր պայքարն է: Պոեմում Ֆիրդուսին կերտել է Ռուստամի՝ հայրենիքի այդ նվիրյալ զինվորի և իր պարտքին գիտակից անձնվեր հայրենասերի վառ կերպարը:

XI-XII դդ. ստեղծագործել են նաև պարսիկ այնպիսի հռչակավոր բանաստեղծներ, ինչպիսիք են Ֆարրուխին, Մանուչեհրին, Ֆահրադդին Գուրգանին, Օմար Խայամը, Նասիրի Խոսրովը, Աբդալլահ Անսարին,

սուֆի բանաստեղծներ Մենայիհ, Ֆերիդ-ադ-դին Աթթարը և, ուրիշներ: Այդ նույն ժամանակաշրջանի արգասիք է նաև գեղարվեստական արձակի հայտնի ստեղծագործություն «Քաբուս-նամեն»:

Իրանի քաղաքները՝ Նիշապուրը, Ռեյը, Սպահանը, Շիրազը, Համադանը և այլն, հանդիսանում էին մշակութային կյանքի աչքի ընկնող կենտրոններ: Իր կյանքի մի զգալի մասն Իրանում է անցկացրել իր ժամանակի մեծ գիտնական Աբու Ալի իբն Սինան (Ավիցեննա, 980-1037 թթ.):

Մի խոսքով՝ իրանական միջնադարը, չնայած նրա ապրած քաղաքական վայրիվերումներին, աչքի է ընկնում նաև իր մշակութային կյանքի որոշակի ծեռքբերումներով:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԻՐԱՆԸ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԽԱՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

1. ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ

XIII դ. սկզբին Կենտրոնական Ասիայի խորքերից պատմության թատերաբեմ իջավ մի հզոր ուժ՝ ի դեմս մոնղոլների: Դրանք քոչվորական ռազմիկ ցեղեր էին, որոնք իրենց անվանումը ստացել էին չինական «Մեն-ղու» ձևից: Այդ ցեղի տարածման աշխարհագրական գոտին ընդգրկում էր մի լայնատարած տարածք՝ Իրտիշ գետի վերին հոսանքներից մինչև Ամուր գետի ակունքները և Մեծ Հինդան լեռնաշղթան: Մոնղոլները խոսում էին մի ընդհանուր լեզվի տարբեր բարբառներով, որը կոչվեց մոնղոլերեն: Նրանց հիմնական մասի դավանանքը շամանիզմն էր, իսկ գլխավոր աստվածը՝ «հավիտենական կապույտ երկինքը»: Մոնղոլների շրջանում տարածում էին գտել նաև բուդդայականությունը և քրիստոնեության նեստորական ուղղությունը:

XII դ. վերջին մոնղոլներն ունեին նաև իրենց գիրը, որը նրանք վերցրել էին Սինցզյանում (Արևելյան Թուրքեստանում, որը ներկայումս մտնում է Չինաստանի կազմի մեջ) ապրող ցեղակից ույղուրներից:

Ինչպես բոլոր քոչվորական ռազմիկ ժողովուրդները, մոնղոլական ցեղերը նաև մշտական արյունախանձ կռիվների մեջ էին միմյանց հետ մե-

կը մյուսից այրտավայրեր, անասնահոտեր, ստրուկներ և ռազմական այլ ավար հափշտակելու համար: Այդ պայքարն ուղեկցվում էր ամբողջ ցեղերի ոչնչացումով և նոր, առավել հզոր ցեղային միությունների կազմավորումով: Ի վերջո, այդ պայքարից հաղթանակող դուրս եկավ մի հզոր ցեղային խմբավորման առաջնորդ՝ Թեմուչինը, որին հաջողվեց հարկադրանքի ուժով միավորել ցեղերին և ստեղծել մոնղոլական միասնական մեծ պետություն: 1206 թ. Օնոն գետի ափին ցեղային առաջնորդների մեծ ժողովում՝ ղուռուլթայում, 50-ամյա Թեմուչինը ընտրվեց համայն Մոնղոլիայի խաքան կամ մեծ խան և նրան տրվեց Չինգիզ (հզոր) խան պատվավոր տիտղոսը (1206-1227 թթ.):

Դրսևորելով կազմակերպչական զարմանալի տաղանդ՝ նախ՝ Չինգիզ խանը ստեղծեց մարտունակ մի բանակ: Տափաստաններում գտնվող մոնղոլները պատրաստի զինվորներ էին: Չինգիզ խանն ամբողջ մոնղոլ վաչկատուն բնակչությունը ըստ ցեղերի բաժանեց տասը հազարյակների (թումաններ), հազարյակների (մինգաններ), հարյուրակների (յաուններ) և տասնյակների (ասբաններ): Համապատասխանաբար նշանակվեցին բյուրապետներ, հազարապետներ, հարյուրապետներ և տասնապետներ, որոնց պաշտոնները և կոչումները փոխանցվում էին ժառանգաբար: Յուրաքանչյուր տոհմ կազմում էր մեկ զինվորական միավոր՝ հազարյակ, հարյուրակ և այլն: Արդեն 1206թ. կազմվել էր 9 թուման և խանական տասհազարանոց թիկնազորը, այսինքն՝ Չինգիզ խանի բանակն իր ճևավորման շրջանում հասնում էր մոտ հարյուր հազարի:

Ցեղերի զինվորական առաջնորդները (նոյիններ) և զինվորները (նոքարներ), իրենց ծառայության համար ստանում էին հողաբաժին (խուբի) և ուլուս: Նստակյաց բնակչություն ունեցող նվաճված երկրները կառավարելու համար խաքանը նշանակում էր կուսակալների (դարուղաչիների, բասաղաղների), որոնք, որպես կանոն, հանդիսանում էին արքայորդիներ:

Մոնղոլական պետության հիմնական օրենքը «Մեծ Յասան» էր, որի ստեղծումը վերագրվում է Չինգիզ խանին:

1209 թ. սկսվեցին Չինգիզ խանի աշխարհակալ նվաճումները: Սկզբում մոնղոլական հարվածն ուղղվեց Չինաստանի դեմ, որի տարածքի մի զգալի մասը նվաճվեց: 1217-1218 թթ. մոնղոլները գրավեցին Կաշկարը և Արևելյան Թուրքեստանը: Այնուհետև 1219 թ. Չինգիզ խանն իր զենքն ուղղեց Խորեզմի պետության դեմ, որի կազմի մեջ XIII դ. սկզբին մտնում էր ողջ Իրանը, բացի Խուզիսթանից և իսմայիլիթների տիրույթներից:

Սովորաբար Չինգիզ խանը հիմնավորապես էր նախապատրաստվում արշավանքների: Ռազմական գործողություններին նախորդում էր

թշնամու ուժերի և առհասարակ տվյալ երկրի խորը հետախուզությունը, որը նախապես կատարվում էր հատուկ հետախույզ-լրտեսների և մոնղոլների մոտ ծառայության մտած մահմեդական առևտրականների միջոցով: Ռազմական գործողությանը նախորդում էր նաև դիվանագիտական նախապատրաստությունը: Չինգիզ խանը Խորեզմի շահ Ալա ադ-Դին Մուհամմադի մոտ ուղարկեց մի քանի դեսպանություններ, որոնց հանձնարարված էր բանակցություններ վարելու պատրվակի ներքո այդ հզոր պետության վերաբերյալ հավաքել ստույգ հետախուզական տեղեկություններ: Մանրակրկիտ նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1219թ., Չինգիզ խանը Իրտիշի ափերից մեծ բանակ ուղարկեց խորեզմշահի դեմ: 1219 թ. աշնանը մոնղոլական զորքերը մոտեցան Միջին Ասիայի սահմաններին: Ալա-ադ-Դինի մոտ ծառայության մեջ գտնվող կարաչինացիները, խորասանցիները, դեյլեմցիները և այլն ամբողջ ջոկատներով անցնում էին Չինգիզ խանի կողմը: Վերջինիս բանակում կային մահմեդականներից, քրիստոնյաներից և կռապաշտներից բաղկացած զորամիավորումներ: Տասներկուօրյա պաշարումից հետո 1220 թ. փետրվարին Չինգիզ խանը գրավեց Բուխարան, քաղաքն ավերվեց, բնակչությունը մասամբ կոտորվեց, մասամբ ստրկացվեց: Ապրիլին մոնղոլները գրավեցին Սամարղանդը: Մինչև 1220 թ. գարունը Խորեզմի պետության կարևորագույն քաղաքներն անցան մոնղոլների ձեռքը:

Բուխարայում և Սամարղանդում ազնվականության, հոգևոր դասի և խոշոր վաճառականության մի մասը, իրենց կալվածքներն ու հարստությունները պահպանելու մտահոգությամբ, դավաճանեց խորեզմշահին և բաց արեց այդ քաղաքների դռները թշնամու առջև: Շուտով ողջ Մավարաննահրը նվաճվեց: Խորեզմշահ Մուհամմադը չկարողացավ դիմադրություն ցույց տալ զավթիչներին, թեև նրա ուժերը գերազանցում էին մոնղոլականին: Նա դիմեց փախուստի: 1220-1223 թթ. մոնղոլները նվաճեցին ողջ Խորասանը և գրավելով նրա խոշոր քաղաքները՝ Մերվը, Բալխը, Հերաքը, Թուսը, Նիշապուրը և այլն՝ անխնա կողոպուտի մատնեցին դրանք: Նիշապուրի տարածքը հերկվեց ու գարի ցանվեց: Այնուհետև մոնղոլների 30-հազարանոց զորքը Ջեբե և Սուբաթայ զորահրամանատարների գլխավորությամբ ավերեց Հյուսիսային Իրանը և գրավեց Ռեյ, Համադան, Ղազվին և այլ քաղաքներ: Անցնելով Անդրկովկաս՝ բանակը շարժվեց դեպի հյուսիս և Դերբենտի անցքի մոտ ջախջախեց ղփչաղներին (պոլովցիներին) և նրանց օգնություն ցուցաբերող հարավռուսական իշխաններին (Կալկա գետի մոտ, 1223 թ.): Շրջանցելով Կասպից ծովը արևմուտքից՝ մոնղոլական ջոկատը ներկա Ղազախստանի տափաս-

տանների վրայով վերադարձավ Մոնղոլիա՝ դրանով իսկ ավարտելով այդ անօրինակ արշավանքը:

Խորեզմշահ Մուհամմադը փախավ Իրան. այլևս չվստահելով ո՛չ իր հրամանատարներին, ո՛չ աշխարհազորին և առհասարակ իր վասալներին, շփոթահար ու խուճապի մատնված՝ նա թաքնվեց Կասպից ծովի հարավարևելյան մասում՝ Ամոլ քաղաքի մոտակայքում գտնվող մի անմարդաբնակ կղզյակում, որտեղ և 1220 թ. դեկտեմբերին մենակության մեջ նա կնքեց իր մահկանացուն՝ նախապես իր երեք զավակներից՝ Ջալալ էդ-Դինը, Ուզլաղ-շահ և Ակ-շահ, իրեն ժառանգորդ նշանակելով Ջալալ էդ-Դինին:

Նույնպիսի ճակատագրի արժանացավ նաև նրա մայրը՝ Թուրքանխաթունը: Նա խորեզմշահի ողջ հարեմի հետ միասին գերի ընկավ Չինգիզ խանի ձեռքը: Նրան տարան Մոնղոլիա, որտեղ և մահացավ (1233 թ.):

Մուհամմադի որդին ու հաջորդը, վերջին խորեզմշահ Ջալալ-էդ-Դինը (1220-1231), իր հոր մահվանից հետո մեկնեց Խորեզմ, սակայն հանդիպելով տեղական ազնվականության թշնամական վերաբերմունքին՝ ստիպված էր վերադառնալ իր ժառանգական կալվածքը՝ Ղազնի քաղաքը: Ջալալ-էդ-Դինին հաջողվեց իր դրոշի տակ հավաքել մոտ 70 հազար մարդու, որոնց գլուխ անցած՝ նա դուրս եկավ թշնամու դեմ: Ճակատամարտը տեղի ունեցավ Քաբուլից ոչ հեռու՝ Փերվանի տափաստանում: Երկօրյա արյունահեղ մարտից հետո մոնղոլական բանակը պարտություն կրեց ու դիմեց փախուստի: Դա Իրանի տարածքը ներխուժելու ժամանակվանից սկսած մոնղոլական զորքերի առաջին պարտությունն էր: Սակայն շուտով Ջալալ-էդ-Դինի զորքերի մեջ, որոնք առավելապես բաղկացած էին թյուրք-քոչվորներից (օղուզներ և հալաջներ), սկսվեցին վեճեր ու երկպառակություններ ռազմական ավարը բաժանելու համար, և նրանք լքեցին խորեզմշահին: Փերվանի մոտ կրած պարտությունից հետո մոնղոլական բոլոր ուժերը անձամբ Չինգիզ խանի գլխավորությամբ շարժվեցին Ջալալ-էդ-Դինի դեմ: Ամբողջ Հյուսիսային Իրանի, Աֆղանստանի և Հյուսիսային Հնդկաստանի տարածքով հետապնդելով Ջալալ-էդ-Դինին՝ ի վերջո, հակառակորդները հանդիպեցին միմյանց: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Հինդոս գետի ափին 1221 թ. նոյեմբերին: Բոլոր կողմերից Ջալալ-էդ-Դինին վերցնելով շրջափակման մեջ՝ Չինգիզ խանը հրամայեց չսպանել նրան, այլ փորձել կենդանի գերի վերցնել: Սակայն նա կատաղի կերպով կռվում էր և երբ հասկացավ, որ փրկության ոչ մի ելք չկա, հրամայեց ջրում խեղդամահ անել իր ողջ հարեմը, իսկ ինքը՝ իր ձիու վրա հեծած, բարձր ժայռից նետվեց գետը և դուրս եկավ մյուս ափը: Ապշած ու հիացած Չինգիզ խանը արգելեց հետապնդել խորեզմշահին և

ասաց իր կողքին կանգնած որդիներին. «Հայրը պետք է ունենա միայն այդպիսի զավակ»: Կրելով ջախջախիչ պարտություն՝ Ջալալ-էդ-Դինը փախավ Հնդկաստանի խորքերը, սակայն այնտեղ երկար մնալու մտադրություն չուներ: Այնտեղից նա 1224 թ. եկավ Իրանի հարավային շրջանները, որոնք չէին ավերվել մոնղոլական հարձակումների ժամանակ, և 1225 թ. սկզբներին Ֆարսի աթաբեկի օգնությամբ նվաճեց Խուզիսթանի (Խուժաստանի) մի մասը, սակայն չկարողացավ գրավել Բասրան և Բաղդադը: Այնուհետև սրընթաց շարժվելով հյուսիս՝ 1225 թ. հուլիսի 25-ին նա գրավեց Ատրպատականի աթաբեկների աթոռանիստ Թավրիզ քաղաքը, իսկ ապա նաև ողջ Ատրպատականը, որտեղից 1225թ. օգոստոսին արշավեց Հայաստան և գրավեց Դվինը:

Ջալալ-էդ-Դինը ծրագրել էր ըստ կարելվույն շուտ Իրանի հյուսիս-արևմուտքում հիմնել մի հզոր պետություն, հավաքել մի նոր մեծ բանակ և կասեցնելով մոնղոլական զորքերի առաջխաղացումը՝ վերականգնել խորեզմշահերի պետության նախկին հզորությունը: Վճռականությունը և արագությունը հիմնական նախապայմաններն էին նրա նախաձեռնած գործի հաջողության համար:

Անդրկովկասում նրա դեմ դուրս եկան հայ-վրացական միացյալ զորքերը՝ Իվանե աթաբեկի գլխավորությամբ: 1225 թ. օգոստոսի վերջերին կամ սեպտեմբերի սկզբներին Գառնիի մոտ տեղի ունեցավ մեծ ճակատամարտ, որտեղ Իվանեի զորքերը մեծ կորուստներ կրեցին և դիմեցին փախուստի: Ստեփանոս Օրբելյան պատմիչը վկայում է, որ խորեզմցիները հաղթանակից հետո «անխնա կոտորեցին և գերեցին բոլորին ու հրդեհեցին քաղաքների, գյուղերի ու վանքերի բոլոր շենքերն ու տները: Նրանք այրեցին նաև մեր բոլոր վաստակը և կտրեցին այգիներն ու ծառերը»:

Ջալալ-էդ-Դինը այնուհետև գրավեց Գանձակը, Տփղիսը, իսկ այնտեղից արշավեց դեպի Էրզրում և ասպատակ սփռեց Արևմտյան Հայաստանում: Այստեղ նա ուժգին դիմադրության հանդիպեց Էյուբյանների կողմից:

Հիմնավորվելով Արևմտյան Իրանում, Ատրպատականում և Անդրկովկասում՝ Ջալալ-էդ-Դինը շարունակեց պայքարը մոնղոլների դեմ մինչև 1231 թ., երբ մոնղոլները Չարմաղանի գլխավորությամբ մեծ արշավանք կազմակերպեցին նրա դեմ՝ նպատակ ունենալով ոչնչացնել նրա զինված ուժերը: Այդ արշավանքի ժամանակ վերջին խորեզմշահը ջախջախվեց և Հայաստանի լեռներում՝ Ամիդ (ներկայիս Դիարբեքիր) քաղաքի մոտ, փախուստի ժամանակ ընկավ կողոպտուտներով զբաղվող քրդերի ձեռքը, որոնք նրան սպանեցին: Այդպիսի անփառունակ ձևով ավարտվեց վերջին խորեզմշահի՝ Ջալալ-էդ-Դինի կյանքը:

Ջալալ-էդ-Դինը արտասովոր եռանդի տեր, արի ու քաջ մարտիկ էր, սակայն անհաջողակ դիվանագետ: Նա իր ուժերը վատնեց Հայաստանի էյուբյանների և Վրաստանի ու Փոքր Ասիայի սելջուկների հետ անվերջանալի պատերազմներում: Իր իսկ ժողովրդի հանդեպ նրա իրագործած դաժանությունները հանգեցրին նրան, որ, ի վերջո, նա մնաց մենակ ու ջախջախվեց:

Չինգիզ խանի վայրագ ու անողոք հրոսակների առջև Ջալալ-էդ-Դինի պարտությունից հետո Իրանում և Անդրկովկասում այլևս լուրջ և դիմադրության ընդունակ ուժ գոյություն չուներ: Մոնղոլներն անսանձ վայրագությամբ սկսեցին ասպատակ սփռել ու նվաճել բարձր քաղաքակրթությամբ աչքի ընկնող այդ երկրները: Ջալալ-էդ-Դինի մահվանից հետո մոնղոլները ոչնչացրին նրա ջոկատների մնացուկները և նվաճեցին Ատրպատականը, Արյանը, Շիրվանը, Վրաստանը և Հայաստանը: Դա տեղի ունեցավ 1231-1239 թթ. միջև ընկած շրջանում: 1237 թ. գրավվեց և ավերածության մատնվեց Սպահանը: Այդ նույն ժամանակ նվաճվեց Ջեզիրեն (Վերին Միջագետք): 1231-1236 թթ. ավերվեցին ու կողոպտվեցին Մոսուլ, Մծբին, Մարդին, Ամիդ (Դիարբեքիր), Բիթլիս քաղաքները: XIII դ. 40-ական թթ. մոնղոլների հարվածն ուղղվեց Փոքր Ասիայում գտնվող սելջուկյան Ռումի սուլթանության դեմ (1077-1307): 1243 թ. Քյոսե-դաղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Ռումի սելջուկյան սուլթան Ղայասադ-դին Քեյքուբաթ Բ-ն ջախջախվեց: Մեծ խանին իր հնազանդությունը հայտնեց նաև Կիլիկիայի հայկական պետության թագավոր Հեթումը:

Քուչվոր նվաճողների արշավանքները դեպի բարձր զարգացած հողագործական շրջանները կրում էին ավերիչ բալանչիական բնույթ: Սակայն մոնղոլական նվաճումները շատ բաներով տարբերվում էին քոչվորների նախկին արշավանքներից: Մոնղոլների մոտ առկա էին ամբողջ շրջանների ու երկրամասերի ավերածության կազմակերպված ձևեր, ինչպես նաև խաղաղ բնակչության զանգվածային ոչնչացման դիվական եղանակներ: Դրանց նպատակն էր դիմադրության համար ընդունակ մարդկանց անխնա ոչնչացումը և իրենց ներխուժած երկրներում խուճապի առաջացումը: Երբ Չինգիզ խանի զորքերը պաշարում էին քաղաքները, նրանք բնակիչներին կենդանի էին թողնում միայն այն դեպքում, երբ նրանք անհապաղ հանձնվում էին մոնղոլների ողորմածությանը: Եթե քաղաքը հանձնվում էր ուշացումով, նրա բնակիչներին քշում էին բաց դաշտը, որտեղ նրանք մնում էին այնքան ժամանակ, մինչև որ քաղաքը կատարելապես կողոպտվեր: Դրանից հետո բնակիչներին բաժանում էին տարբեր խմբերի. զինվորներին սպանում էին, նրանց ընտանիքնե-

րին, ինչպես նաև աղջիկներին ու երիտասարդ կանանց ստրկացնում ու բաժանում էին նվաճողների միջև: Արհեստավորներն իրենց ընտանիքներով դառնում էին մոնղոլական խանի կամ իշխանազունների ստրուկները: Նրանց տանում էին Մոնղոլիա կամ ստիպում էին նոր տերերի համար աշխատել տեղում՝ «քարխանեներում»: Արական սեռի երիտասարդությանն օգտագործում էին որպես «ամբոխ»՝ քաղաքների պաշարման և զանազան ծանր աշխատանքներ կատարելու համար, որտեղից այլևս ոչ ոք տուն չէր վերադառնում: Մնացած բնակիչներին, որոնք կողոպտված էին մինչև վերջին թելը, թույլ էին տալիս վերադառնալ իրենց ավերված ու հրո ճարակ դարձած օջախները:

Այն դեպքերում, եթե այս կամ այն քաղաքը ցույց էր տվել համառ դիմադրություն, կամ նրա բնակիչները ապստամբել էին, մոնղոլական հրամանատարները կազմակերպում էին համատարած կոտորած՝ կենդանի չթողնելով ոչ մի մարդու: Նրանք այդպես վարվեցին, օրինակ, Մերվում, Նիսում, Բալխում, Հերաթում, Թուսում, Նիշապուրում, Ռեյում, Ղազվինում, Համադանում, Մարաղայում, Արդեբիլում և Իրանի բազմաթիվ այլ քաղաքներում: Այդպիսին էր Չինգիզ խանի կողմից ստեղծված համակարգը:

Պատահական չէ, որ ժամանակակիցները մոնղոլական նվաճումները համարում էին աշխարհավեր ու ահասարսուռ աղետ, երկնային պատիժ և այլն: Պատմիչ Ջուվեյնիի վկայությամբ՝ Խորասանն այնպես էր ավերված մոնղոլների կողմից, որ դարձել էր «ձեռքի ափի նման հարթ»: Իսկ Կիրակոս Գանձակեցին մոնղոլական արշավանքների մասին գրում է. «Ամբողջ երկիրը լցվեց դիակներով, կարծես թե խավարով էր պատած ամբողջ աշխարհը, մարդիկ գիշերն ավելի էին սիրում, քան ցերեկը, և երկիրը դատարկվեց իր բնակիչներից»:

Մոնղոլական արշավանքների հետևանքով Արևելյան և Հյուսիսային Իրանում ոռոգման ջրանցքներն ու քյարիզները, որպես կանոն, քանդվեցին ու հողով ծածկվեցին, քարշող անասունները ոչնչացվեցին, իսկ պտղատու ծառերը կտրատվեցին: Դրա հետևանքը հանդիսացավ գյուղատնտեսության խորն անկումը և սովի տարածումը: Մի քանի տասնյակ ծաղկուն քաղաքներ վերածվեցին աննշուք գյուղերի: Բացարձակապես հաշվի չհստելով բնակչության քայքայման ու ծայր աստիճանի աղքատացման հետ՝ մոնղոլները հարաճուն կերպով ավելացնում էին նվաճված ժողովուրդներից գանձվող հարկերն ու տուրքերը:

Հարկ է նշել, որ Իրանի հարավային շրջանները մոնղոլների կողմից ավելի քիչ ավերածության մատնվեցին: Դրա պատճառը կայա-

նում էր նրանում, որ նրանց տիրակալները (Ֆարսի, Լուրիստանի, Քերմանի և այլնի աթաբեկները) հնազանդվում ու ենթարկվում էին մոնղոլներին: Սակայն այնուհանդերձ, այդ շրջանները ևս զերծ չմնացին գիշատիչ բնազդներով առաջնորդվող վայրկատուն նվաճողների դաժանություններից և հարկային քաղաքականության անասելի ծանր լծից:

2. ԻԼԽԱՆ ՀՈՒԼԱՎՅԱՆՆԵՐԻ (ՀՈՒԼԱՂՈՒԻԴՆԵՐԻ) ՍՈՆՂՈԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ

Մոնղոլների առաջին արշավանքը Արևմտյան Իրան իրականացվեց 1220-1222 թթ.: Դա դեռևս երկրի նվաճում չէր, այլ ավերիչ ու կողոպտչական մի ասպատակություն, որն ուղեկցվում էր զանգվածային գազանություններով, բնակչության անխնա կոտորածներով և այլն, որոնց նպատակն էր անդամալուծել հակառակորդի կամքը և դրանով իսկ կոտրել նրա դիմադրության ոգին: Մոնղոլների նոր հարձակումը դեպի Իրան, որը սկսվեց 1229-1230 թթ., ավարտվեց այդ երկրի տարածքում ավատական պետությունների մեծ մասի վերացմամբ: Սակայն մի շարք հողերի ու քաղաքների (Մազանդարան, Ղազվին, Թավրիզ և այլն) բնակչության հերոսական դիմադրության հետևանքով միայն 1239 թ. մոնղոլներին հաջողվեց իրենց ենթարկել Արևմտյան Իրանը: Հարավում և հարավարևմուտքում (Ֆարս, Լուրեսթան) դեռևս գոյություն ունեին աթաբեկների ինքնուրույն պետություններ, Կենտրոնական Իրանում՝ Իսմայիլիթների Ալամության պետությունը, իսկ Քերմանը գտնվում էր Կարաչինացիների դինաստիայի տիրապետության ներքո, որը մոնղոլական մեծ խանից ստացել էր իր տիրույթի նկատմամբ յարլիք՝ «դութլուղ-խան» տիտղոսի հետ միասին:

1227 թ. յոթանասուներկու տարեկան հասակում Չինգիզ խանը մահացավ: Արդեն նրա կենդանության օրոք Խաղաղ օվկիանոսից մինչև Կասպից ծովի ափերը ընկած հսկայական տարածքն ընդգրկվեց Մոնղոլական կայսրության կազմի մեջ: Չինգիզ խանը իր նվաճած երկրները որպես կալվածք բաժանեց իր որդիներին: Ավագ որդուն՝ Ջուչիին, բաժին հասավ Դեշթ-ի Ղփչաղը (Պոլովեցյան տափաստանը) և Խորեզմը: Նրա մասնաբաժնի մեջ պետք է մտնեին նաև արևմուտքում գտնվող այն բոլոր

հողերը, որոնք ծրագրված էին նվաճել: Երկրորդ որդին՝ Չաղաթայը, ստացավ Մավարաննահրը՝ այսպես կոչված՝ «յոթ գետերի հովիտը», և Արևելյան Թուրքեստանի հարավային մասը: Երրորդ որդուն՝ Ուգեդեյին, բաժին հասավ Արևելյան Թուրքեստանի հյուսիսային մասը: Կրտսեր որդի Թուլույին, մոնղոլական ավանդույթի համաձայն, անցան հոր բնիկ յուրթը՝ Կենտրոնական Մոնղոլիան, ինչպես նաև Հյուսիսային Չինաստանը:

1229 թ. մոնղոլական ղուռուլթայը մեծ խան կամ խաքան հռչակեց Ուգեդեյին (1229-1241), իսկ 1246 թ. ղուռուլթայի կողմից մեծ խանի գահի վրա բարձրացվեց Ուգեդեյի որդի Գույուկ-ղաանը (1246-1248): Նրա մահվանից հետո մոնղոլական ազնվականության շրջանում թեժ պայքար սկսվեց մեծ խանի գահի համար: Միայն 1251 թ. գահ բարձրացվեց Թուլույի որդի Մունքե-ղաանը (հայկական աղբյուրներում՝ Մանկու խանը, 1251-1259):

Նվաճումների շնորհիվ ստեղծված մոնղոլական կայսրությունն իր իշխանության ներքո միավորում էր բազմաթիվ ցեղերի ու ժողովուրդների, երկրների ու պետությունների, որոնք ունեին միանգամայն տարբեր տնտեսական ու մշակութային զարգացման մակարդակ: Նման պետությունը՝ որպես մեկ միասնական ամբողջություն, տևական ժամանակ չէր կարող գոյություն ունենալ: Մունքե-ղաանի մահվանից հետո այն վերջնականապես տրոհվեց մի քանի առանձին մոնղոլական պետությունների (ուլուսների): Այդ պետություններն էին՝ Ոսկե Հորդան, որն ընդգրկում էր Հյուսիսային Կովկասը, Ղրիմը, հարավ-ռուսական տափաստանները, Ստորին Պովոլժիեն և գտնվում էր Ջուչիի ժառանգորդների իշխանության ներքո; Չաղաթայական պետությունը, որն իր անվանումը ստացել էր Չինգիզ խանի որդու՝ Չաղաթայի անունից, նույնպես զբաղեցնում էր ընդարձակ տարածքներ: Մոնղոլիայում և Չինաստանում ստեղծված պետությունը կառավարում էր Մունքեի եղբայր Խուբիլայ-ղաանը (այս պետության չինական պաշտոնական անվանումն էր Յուան կայսրություն): Վերջապես, Իրանի տարածքում Մունքե-ղաանի եղբայր Հուլաղու խանի (հայկական աղբյուրներում՝ Հուլավու խան) կողմից ստեղծվեց Հուլաղուիդների կամ Հուլավյան պետությունը:

Մերձավոր Արևելքի այդ հզոր պետության ստեղծումն իրականացվեց մի շարք էտապներով: Թեև նախապես որոշված էր, որ Իրանը պետք է մտնի Ջուչիների (Ոսկե Հորդա) ուլուսի կազմի մեջ, սակայն իրականում, XIII դ. 50-ական թթ. սկսած, այն կառավարում էին մեծ խանի տեղապահները:

Մոնղոլիայում 1251 թ. տեղի ունեցած ղուռուլթայում որոշվել էր արագացնել Մերձավոր և Հեռավոր Արևելքում մոնղոլների կողմից դեռևս չնվաճված հողերի գրավումը: Այդ նպատակով կազմավորվեցին երկու

խոշոր զորամիավորումներ, որոնցից մեկը Խուբիլայ խանի գլխավորությամբ շարժվեց դեպի Չինաստան, իսկ մյուսը՝ Մունքե-ղաանի եղբոր՝ Հուլաղու խանի գլխավորությամբ՝ Իրան: Վերջինս ուներ գործողությունների հստակ ծրագիր. ոչնչացնել իսմայիլիթների պետությունը, հնազանդեցնել Բաղդադի խալիֆին և իր ավարտին հասցնել Մերձավոր Արևելքի երկրների նվաճումը:

Հայ պատմիչ *Մաղաքիա աբեղայի հաղորդած* տեղեկությունների համաձայն՝ Հուլաղուն իր դրոշի ներքո հավաքեց մինչև 70 հազար զինվոր: Նա խնամքով նախապատրաստվում էր այդ արշավանքին. այն տարածքները, որտեղից անցնելու էին մոնղոլական զորքերը, նախապես մաքրվում էին քոչվորական հորդաներից, գետերից անցում կատարելու համար կառուցվում էին կամուրջներ, բարեկարգվում էին ճանապարհները, պահեստավորվում էին սննդամթերքներ և անասունների համար կեր: 1253 թ. Հուլաղուի բանակը դուրս եկավ Ղարաղորումից և Թուրքեստանի վրայով սկսեց շարժվել դեպի Իրան: Առաջխաղացումը տեղի էր ունենում շատ դանդաղ, որովհետև հսկայական բանակը շատ ծանրաշարժ էր: Ամու-Դարյա գետի անցումը տեղի ունեցավ միայն 1256 թ.: Առաջին հարվածն ուղղվեց իսմայիլիթական պետության դեմ: Էլբուրսի լեռներում մոնղոլական զորքերը պաշարեցին իսմայիլիթական ամրոցները և մեկը մյուսի հետևից գրավեցին դրանք: Հուլաղուն «Լեռնային ծերունուց» պահանջեց անվերապահորեն հանձնվել և քանդել իր ամրոցները: Այն հանգամանքը, որ այդ ժամանակ իսմայիլիթների կառավարող շրջանների ներսում տեղի էին ունենում երկպառակություններ ու ներքին պայքար, ուժերի հարաբերակցությունը փոխեց հօգուտ մոնղոլների: Վերջիններին հաջողվեց օգտվել այդ պայքարից և գրոհով վերցնել Ալամութ ամրոցը: «Լեռնային ծերունու» դեմ կազմակերպվեց դավադրություն, որը գլխավորում էր նրա հարազատ որդի Ռուքն-ադ-դին Հուրշահը, որին աջակցում էր մոնղոլասեր խմբավորումը: Հենց սրանք էլ սպանեցին «Լեռնային ծերունուն» (1256 թ.):

Մոնղոլասեր խմբավորման ճնշման ներքո, որի մեջ էր գտնվում նաև գիտնական-աստղագետ Նասիր-ադ-Թուսին, Հուրշահը տվեց իր համաձայնությունը հնազանդվել մոնղոլներին. պայմանով, որ իրեն թույլ տրվի պահպանել իսմայիլիթական տիրույթները: Սակայն, խախտելով իր այդ խոստումը, Հուրշահն ամեն կերպ ձգձգում էր իր կապիտուլյացիան: Որպես պատասխան, մոնղոլական զորքերը պաշարեցին նրա Մեյմունդիզ ամրոցը և ստիպեցին Հուրշահին դուրս գալ այնտեղից և ներկայանալ Հուլաղու խանին: Վերջինս խոստացել էր կամավոր հանձնվելու դեպ-

քում խնայել նրա կյանքը: Սակայն դրժելով իր այդ խոստումը՝ Հուլաղուն Հուրշահին ուղարկեց Ղարաղորում՝ Մունքե-խանի ոտքը՝ նրան ուղեկցողներին նախապես հրաման տալով ճանապարհին սպանել, որը և կատարվեց ճշտությամբ:

1256 թ. մոնղոլները գրավեցին ու ավերեցին իսմայիլիթների 40 անառիկ ամրոցներ: Իսմայիլիթները ցույց էին տալիս կատաղի դիմադրություն: Դամղանի մոտ գտնվող Գիրդքաի ամրոցը, օրինակ, ամբողջ երեք տարի դիմադրեց: Սակայն իսմայիլիթական պետությունն այլևս դատապարտված էր: Մոնղոլները ոչնչացրին այն: Հաշվեհարդարը իսմայիլիթների հետ անողոք էր: Հուլաղու խանը հրամայեց մորթազերծ անել նույնիսկ ծծկեր մանուկներին ու երեխաներին:

1258 թ. Հուլաղու խանն իր զորքերը շարժեց Բաղդադի վրա: Այդ ժամանակ Բաղդադի երբեմնի հզոր խալիֆայությունը վեր էր ածվել մի ոչ մեծ ավատական տիրույթի, թեև նրա կրոնական հեղինակությունը, որպես ուղղադավան մահմեդականների՝ սուննիթների ղեկավարի, դեռևս շատ մեծ էր:

1258 թ. փետրվարի 10-ին կարճատև գրոհից հետո մոնղոլները ներխուժեցին Բաղդադ: Քսան օր շարունակ խալիֆայության մայրաքաղաքում տեղի էր ունենում կոտորած: Բաղդադի բնակչությունը առանց սեռի ու տարիքի տարբերության ոչնչացվեց: Խնայվեցին միայն քրիստոնյաները ու հուդայական-հրեաները, որոնց Հուլաղու խանը դիտում էր որպես իր կողմնակիցների, քանի որ նրանք խալիֆայությունում իրավազուրկ էին և ենթարկվում էին կրոնական ու սոցիալական ճնշումների: Մեկ այլ վարկածով՝ քրիստոնյաներին ու հուդայականներին իր պաշտպանության տակ վերցրեց Հուլաղուի կանանցից մեկը, որը քրիստոնյա էր:

Հուլաղու խանը չխնայեց նույնիսկ խալիֆի հարեմի կանանց և հրամայեց սպանել և՛ նրանց, և՛ ներքինիներին, թվով 700 մարդու: Բաղդադի երբեմնի հարուստ գրադարանները, արվեստի ու մշակույթի ստեղծագործությունները հիմնովին ոչնչացվեցին: 1258 թ. փետրվարի 10-ին խալիֆ Մուսթասիմը հանձնվեց հաղթողների ողորմածությանը: Մի քանի օր անց հանդիսավոր կերպով Հուլաղու խանը մուտք գործեց Բաղդադ: Նրա առաջին գործը հանդիսացավ խալիֆին խոստովանեցնել, թե որտեղ են պահվում Աբբասյան խալիֆների թաքցրած հարստությունները: Վախից դողացող ալ-Մուսթասիմը հաղթողին ցույց տվեց այն գաղտնի գանձարանները, որտեղ պահվում էին խալիֆների առասպելական հարստությունները: Այնուհետև Հուլաղուն կանչեց գուշակներին և հարց տվեց նրանց, թե աշխարհի վերջը կգա՞ արդյոք, եթե խալիֆը մահապատժի ենթարկվի: «Ոչինչ տեղի չունեցավ Հովհաննես Սկրտչի, Հիսուս Քրիստոսի

և նահատակ ալ-Հուսեյնի մահվանից հետո», - հետևեց պատասխանը: Եվ Բաղդադի վերջին խալիֆը՝ ալ-Մուսթասիմը, իր ընտանիքի արական սեռի բոլոր անդամների հետ սպանվեց: Մոնղոլները, որոնց հավատալիքների համաձայն, գերագույն կառավարչի սպանության դեպքում անպայման կիետևի վրիժառությունը, խալիֆին կարեցին կաշվե պարկի մեջ և գցեցին սուրացող ձիերի ոտքերի տակ: Հուլաղու խանը վերջ տվեց նաև Բաղդադի խալիֆայությանը, որը շուրջ 700 տարի իշխում էր Մերձավոր Արևելքում: Ընդ որում՝ այդ գործում Հուլաղուն օգտագործեց նաև հայ-վրացական զինված ուժերը՝ ամիրսպասալար Շահնշահի որդի Զաքարեի և սպարապետ Պռոշ իշխանաց իշխանի գլխավորությամբ:

Իր գրաված ընդարձակ տարածքների վրա Հուլաղու խանը (1256-1265) ստեղծեց սեփական ուլուս կամ պետություն, որն ավելի ուշ ճանաչվեց մեծ խան Խուբիլայ-ղաանի կողմից (1261 թ.), որը Հուլաղուին շնորհեց «իլ-խան», այսինքն՝ «ցեղի խան», «ուլուսի խան» տիտղոսը: Այստեղից էլ նրանց պետությունը հայտնի էր որպես իլխանների պետություն (1256-1353): Այն, ըստ էության, մոնղոլա-իրանական պետություն էր, որն ընդգրկում էր վիթխարի տարածք: Հյուսիսում Կովկասյան լեռնաշղթան հանդիսանում էր նրա սահմանը Ոսկե Հորդայի հետ, այնուհետև իր մեջ ներառում էր ողջ Իրանը, Մերվի օազիսը, Հերաթի շրջանը և ներկայիս ամբողջ Աֆղանստանը (բացի Բալխի շրջանից, որը Մավարաննահրի հետ միասին մտնում էր Չաղաթայի ժառանգորդների ուլուսի մեջ), Արաբական Իրաքը՝ Բաղդադ քաղաքով հանդերձ, Ատրպատականը, Արրանը և Շիրվանը, Հայաստանը, Ջեզիրեն (Վերին Միջագետքը) և Ռումի (Փոքր Ասիայի) արևմտյան մասը՝ մինչև Կրզըլ-Իրմակ գետը: Ռումի սելջուկյան սուլթանությունը, Վրաստանը, շիրվանշահերի պետությունը, հունական Տրապիզոնյան թագավորությունը, Կիլիկիայի հայկական թագավորությունը, Կիպրոս կղզու թագավորությունը, ներկայիս Աֆղանստանի տարածքում գոյություն ունեցող Կուրտերի իշխանապետությունը դարձան հուլավյանների վասալները, որոնք մոնղոլներին վճարում էին հարկեր և հատկացնում էին օգնական զորամիավորումներ: Եփրատ գետը հանդիսանում էր Հուլավյանների պետության սահմանը Սիրիայի հետ: Հարավում բնական սահման էր Պարսից ծոցը: Հարավ-արևելքում Հուլավյանների պետությունը սահմանակցում էր հնդկական իշխանությունների հետ: Արևելքում Չաղաթայցիների մոնղոլական պետության հետ սահմանն անցնում էր Ամու-Դարյա գետով:

Սակայն Ոսկե Հորդայի խաները չէին հաշտվում այն մտքի հետ, որ Հուլավյանները զավթել են այնպիսի հողեր, որոնք, Չինգիզ խանի կտա-

կի համաձայն, պետք է մտնեին Ջուչիի հետնորդների ուլուսի մեջ: Այդ հողի վրա վերջիններիս և Հուլավյանների միջև հաճախակի տեղի էին ունենում պատերազմներ ու արյունոտ ընդհարումներ: Այսպես, օգտվելով այն բանից, որ Հուլավյանների կողմից 1258 թ. Բաղդադի գրավումը, նրա բնակչության զանգվածային կոտորածը և մահմեդականների առաջնորդ համարվող խալիֆի սպանությունը խռովել էին ողջ մահմեդական աշխարհը՝ առաջ բերելով նրա զայրույթը, Ոսկե Հորդայի խան Բերկեն (1256-1265), որն ընդունել էր իսլամը, Կովկաս՝ Հուլաղու խանի դեմ ուղարկեց 30- հազարանոց մի բանակ՝ իբր իսլամը ոտնահարողներին պատժելու համար: Հուլաղուի և Բերկեի զորքերն իրար հանդիպեցին Դերբենտի մոտ 1262թ.: Թեև այդ ճակատամարտում հաջողությունը Բերկեի կողմն էր, սակայն նա որոշեց հետ քաշել իր զորքերը և չանցնել Կովկասյան լեռնաշղթան:

Հուլաղուիդների պետության նկատմամբ թշնամաբար էին տրամադրված նաև Չաղաթայցիների պետությունը և Եգիպտոսի ու Սիրիայի մամլյուքյան սուլթանությունը, որը շահերի միասնության հիմքի վրա հարաբերություններ հաստատեց Ոսկե Հորդայի հետ:

Եգիպտոսի մամլյուքյան սուլթանության դեմ պայքարն առաջ բերեց Հուլաղուիդների տնական հարաբերությունները Սիրիայի խաչակիրների և Եվրոպայի քրիստոնյա պետությունների, առանձնապես Ֆրանսիայի և Ջենովայի հետ: Արդեն առաջին իլխանների ժամանակ նրանց, մի կողմից, և Ֆրանսիայի, Անգլիայի, Հռոմի պապի միջև մյուս կողմից՝ տեղի էին ունենում ակտիվ շփումներ և դեսպանների փոխանակումներ, ինչը նպատակ ուներ ընդհանուր դաշինք կնքել մամլյուքների դեմ՝ «տիրոջ գերեզմանը ազատագրելու», այսինքն՝ համատեղ կերպով Սիրիան և Պաղեստինը նվաճելու համար, որոնք Հուլաղուիդները խոստանում էին հանձնել իրենց քրիստոնյա վասալներին: Հուլավյանները մամլյուքների դեմ ուղղված դաշնակցային հարաբերություններ ունեին նաև Կիլիկիայի հայկական թագավորության հետ:

Հուլավյանների պետությունը կառուցված էր այն նույն սկզբունքով, ինչ որ մոնղոլական կայսրությունը: Պետության մեջ բարձրագույն իշխանությունը պատկանում էր իլխանին: Մոնղոլական իշխանազուններ, նոյոնները, էմիրները հանդիսանում էին խանի վասալները: Նրանք որպես կալվածքներ խանից ստանում էին խոշոր տարածքներ կամ առանձին քաղաքներ, որոնցից ստացվող եկամուտները պատկանում էին իրենց: Մոնղոլական կամ թյուրքական վաչկատուն ավատատերերը հանդիսանում էին մոնղոլական զորքերի հրամանատարներ, որոնք

պահպանում էին իրենց ցեղային ու տոհմային բաժանումը և պարտավոր էին խանի առաջին իսկ պահանջով ներկայանալ նրան իրենց զինվորներով՝ ռազմական ծառայություն կատարելու համար:

Բանակը կամ մոնղոլական հեծելազորը կազմված էր մոնղոլական և թյուրքական քոչվորական ցեղերից, որոնց բոլոր տղամարդիկ զինապարտ էին: Սակայն իլխանական բանակի մաս էին կազմում նաև նստակյաց ավատատերերի ջոկատները, որոնք, որպես կանոն, հետևակ էին և ռազմական գործողությունների ժամանակ կատարում էին օժանդակ դեր (ամրոցները պաշարելու և այլ նպատակներով):

Էմիրները (հրամանատարները) զինվորական ծառայության դիմաց ստանում էին հողակտորներ՝ իքթաներ: Շարքային զինվորների հիմնական եկամուտը ռազմական ավարն էր: Սակայն երբ նվաճումները ավարտվեցին և ռազմական ավարի աղբյուրը չորացավ, զինվորները սկսեցին տրտնջալ և համառորեն պահանջել հողակտորներ: XIV դ. սկզբին իլխան Ղազան խանը բավարարեց նրանց պահանջը և իքթաներ հատկացրեց բոլոր մոնղոլ ռազմիկներին:

Իլխանները վարում էին կիսաքոչվորական կյանք: Նրանք տարվա մի մասն անց էին կացնում Բաղդադում կամ մայրաքաղաքում, որը սկզբում Մարաղան էր, այնուհետև՝ Թավրիզը, իսկ XIV դ. սկզբից՝ նոր հիմնադրված Սուլթանիեն, իսկ մնացած ժամանակը՝ քոչավայրերում (ամռանը՝ լեռներում, ձմռանը՝ հարթավայրային շրջաններում), որտեղ նրանց զբաղմունքը որսորդությունն էր (այդ թվում նաև բազեներով որսը) և զինվորական արշավները: Նրանց կյանքի անբաժան մասն էին կազմում ճոխ խնջույքները: Ատրպատականն իր հիանալի արոտավայրերով հանդիսանում էր մոնղոլների սիրված վայրերից մեկը:

Իլխանի մոտ ծառայության մեջ գտնվող առաջին վեզիրը կամ նայիբը սովորաբար լինում էր պարսիկ: Առհասարակ, իլխանների մոտ ծառայող իրանական աստիճանավորները հավատարմորեն ու նվիրվածությամբ կատարում էին իրենց պարտականությունները:

Վրաստանը, Ռումը, Լուրիսթանը, Ֆարսը, Քերմանը, Յեզդը, Հերաթը և այլն, որոնք Հուլաղուին հայտնել էին իրենց հնազանդությունը, համարվում էին վասալական տիրույթներ և կառավարվում էին տեղական կառավարիչների կողմից, սակայն իլխանի ներկայացուցիչների (մոնղոլերեն՝ բասաղաղ, պարսկերեն շիհնա) հսկողության ներքո: Մեծ ինքնուրույնությամբ էր օժտված Կիլիկիայի հայկական պետությունը:

Իրանում մոնղոլների տիրապետության շրջանում կարողացան իրենց դիրքն ու տնտեսական հզորությունը պահպանել նաև մահմեդա-

կան հոգևորականությունը՝ սեյիդները, ուլեմները, շեյխերը, դերվիշական միաբանությունները և այլն, որոնք օգտվում էին մեծ ինքնուրույնությունից և զանազան արտոնություններից: Այսպես՝ վակֆային ունեցվածքի մի մասը թողնվեց նրանց: Դրանք մզկիթապատկան մեծ ու փոքր հողային կալվածքներ էին, արհեստանոցներ, կրպակներ, բազարներ, քարավանսարայներ և այլն, որոնց եկամուտներից օգտվում էին հոգևորականները: Մահմեդական հոգևորականությունը և իրանական աստիճանավորները սերտորեն կապված էին ինչպես տեղական, այնպես էլ տարանցիկ քարավանային առևտրի հետ: Առկա էին հզոր առևտրական ընկերություններ, որոնց ներկայացուցիչները՝ «օրթաղները», հաճախ գործում էին որպես խաների առևտրական ներկայացուցիչներ:

Մոնղոլները պահպանեցին տեղական իրանական ազնվականության միայն մի մասին, մյուս մասին ոչնչացրին, և նրանց հողերն անցան կա՛մ պետությանը, կա՛մ մոնղոլական քոչվորական ազնվականությանը:

Հուլավյանների պետության մեջ, մասնավորապես Իրանում, գոյություն ունեին հողատիրության հետևյալ ձևերը. ա) պետական հողեր կամ դիվանի. բ) ինջու կամ խասինջու հողեր, որոնք պատկանում էին խանին և նրա ազգականներին. գ) մասնավոր հողեր (մուլք), որոնք պատկանում էին ինչպես մոնղոլական, այնպես էլ տեղական ավատատերերին. դ) վակֆային կամ մզկիթապատկան հողեր:

Ողջ պետական վարչությունը ծառայում էր բնակչությունից առավելագույն չափով եկամուտներ կորզելուն: Գյուղացիները պարտավոր էին վճարել ամենաբազմապիսի հարկեր ու տուրքեր և կատարել ձրի հարկադրական աշխատանքներ: Հիմնական հարկատեսակներից մեկը «մալն» էր կամ խարաջը՝ հողային հարկը: Արմատավորված էր նաև «քուփչուր» կոչվող հարկատեսակը: Այն, ըստ էության, գլխահարկ էր, որը, հակառակ շարիաթի օրենքների, մոնղոլները գանձում էին ոչ միայն քրիստոնյաներից, զրադաշտականներից և հուդայականներից, այլև մահմեդականներից. մի հանգամանք, որը նրանց համար խիստ վիրավորական էր:

Հարկերը գանձվում էին ինչպես դրամով, այնպես էլ բնամթերքով: Գյուղացիները, սովորական հարկերից բացի, որոնք հավաքական իմաստով կոչվում էին «իխրաջաթ» (արաբերեն՝ «ծախսեր»), պարտավոր էին նաև ձիերի համար մատակարարել կեր, իսկ զորքերի համար՝ մթերքներ (այդ մատակարարումները կոչվում էին «ալաֆե» կամ «ուլուֆե»), խմիչքներ («թաղար») և այլն: Հարկերի չափերը, որպես կանոն, կամայական էին: Հարկահավաքները գործում էին բացարձակ անվերահսկելի ձևով՝ հաճախ միևնույն հարկը հավաքելով երկու-երեք ան-

գամ: Նրանք, ովքեր չէին կարողանում մուծել հարկերը, ենթարկվում էին դաժան կտտանքների և վեր էին ածվում ստրուկների:

Գյուղացիների համար պակաս ծանր բեռ չէին նաև բազմապիսի պարհակները հօգուտ պետության: Օրինակ՝ գործում էր այսպես կոչված փոստային պարհակը («ուլուղ»), երբ գյուղացիները փոստային նյութերին՝ յամերին, պետական սուրհանդակներին (իլչի) և զինվորականներին պարտավոր էին ձրի տրամադրել ձիեր ու ավանակներ: Բիգար կամ բեգար տեսակի պարհակը հարկադրական աշխատանք էր ջրանցքները վերանորոգելու և մաքրելու, ամրոցներ, պալատներ, ճանապարհներ կառուցելու համար: Նման՝ ուժից վեր աշխատանքը խլում էր հազարավոր մարդկանց կյանք:

Գյուղացիների համար իսկական աղետ էր «նուգուլ» կոչված պարհակը: Ցանկացած մոնղոլական էմիր կամ պաշտոնյա, իջ-իջ գործով մնալով այս կամ այն քաղաքում կամ գյուղում, իր և իրեն ուղեկցող շքախմբի համար զբաղեցնում էր բազմաթիվ տներ: Էմիրի նոքյարները առանց տանտիրոջը հարցնելու վերցնում ու տանում էին այն բոլորը, ինչ ընկնում էր իրենց ձեռքը: Կանանց բռնաբարում էին, տանտերերին ենթարկում ծաղր ու ծանակի: Որպեսզի իրենց տունը չգրավի էմիրների ուշադրությունը, գյուղացիներն ու քաղաքացիները աշխատում էին միտումնավոր կերպով այն պահպանել կիսաքանդ վիճակում: Սակայն դա ևս քիչ էր օգնում:

Հուլաղուիդյան պետության մեջ քաղաքացիական վարչության գլուխ էր կանգնած մեծ դիվանի վեզիրը (կամ «սահիբ-դիվանը»), որի տրամադրության ու ենթակայության տակ էին գտնվում գանձարանը, հարկահավաքությունը, պետական եկամուտները ու ծախսերը, ռազմական գործավարությունը և այլն: Վեզիրի իրավասության ներքո էին գտնվում նաև արհեստանոցները (պարսկերեն՝ «քարխանե»), որոնք պատկանում էին անձամբ խանին կամ նրա ազգականներին: Այդ արհեստանոցներում աշխատում էին նվաճումների ժամանակ ստրկացված մարդիկ կամ նրանց ժառանգորդները: Հարկահավաքումն իրականացվում էր անասելի դաժանությամբ, և այն ավելի շատ հիշեցնում էր փոքր չափերի ռազմարշավ:

Իլխանների արքունիքն իրար հետ մրցակցող ավատական խմբավորումների մշտական սադրանքների ու դավերի մի բույն էր:

Մոնղոլա-թյուրքական քոչվորական ազնվականությունը պինդ կառչած էր Չինգիզ խանի «Մեծ Յասային» և պատրաստ էր զոհողության՝ հանուն նրա պահպանման: Այն պահանջում էր անվերապահորեն հավատարիմ մնալ քոչվորական ավանդույթներին և չանցնել նստակեցության, ինչպես նաև պահպանել արյան մաքրությունն ու չխառնվել իրա-

նական նստակյաց ազնվականության հետ: Ավելին՝ նստակյաց մահմեդական մշակույթի և իսլամի նկատմամբ ռազմա-քոչվորական ազնվականությունը երկար ժամանակ տրամադրված էր թշնամաբար:

Դեռևս մինչև մոնղոլների միավորումը Չինգիզ խանի կողմից՝ շամանիզմը դավանող մոնղոլների շրջանում որոշ տարածում էին գտել այլ կրոններ: Օրինակ՝ ույղուրների միջոցով տարածվել էին բուդդայականությունն ու նեստորական ուղղության քրիստոնեությունը: Հուլաղու խանի և նրա առաջին վեց ժառանգորդների օրոք տարբեր կրոնների ներկայացուցիչների միջև թեժ պայքար էր գնում այն բանի շուրջը, թե նրանցից որ մեկին կհաջողվի խաներին «դարձի բերել» դեպի իր կրոնը և դրանով իսկ արքունիքում ձեռք բերել դեկավար դիրք:

Յուրահատուկ դեմք էր առաջին իլխան Հուլաղու խանը: Նա ծնվել էր 1216/17 թ. Մոնղոլիայում և հանդիսանում էր Չինգիզ խանի սիրեցյալ թոռներից մեկը: Նրա պատանեկությունն ու երիտասարդությունն անցել էին համարյա անդադար ռազմական արշավանքների մեջ: Դառնալով Իրանի տիրակալ՝ Հուլաղուն չփոխեց իր ապրելակերպը, ռազմիկի և քոչվոր ավատատիրոջ իր սովորությունները: Իր զորքի հետ (օրդու) նա շարունակում էր տարեկան մի քանի անգամ տեղափոխվել մի վայրից մյուսը: Պետական և անձնական կյանքում նրա հիմնական ուղեցույցն էին հանդիսանում քոչվորական ավանդույթներն ու Մեծ Յասան: Ինչպես և Չինգիզ խանը, Հուլաղուն կարողանում էր պահը ծառայեցնել իր օգտին և օժտված լինելով դիվանագիտական հանճարով՝ նրբորեն օգտագործում էր թշնամու ճամբարում եղած թեկուզ և աննշան հակասությունները:

Թեև իլխանը դավանում էր շամանիզմը, սակայն աչքի էր ընկնում մահմեդականների և այլ կրոնների հետևորդների նկատմամբ կրոնական մեծ հանդուրժողականությամբ: Անշուշտ, դրա մեջ նա տեսնում էր նաև որոշակի քաղաքական խորհուրդ: Քրիստոնյաներն օգտվում էին նրա հատուկ հովանավորությունից: Դա բացատրվում է ոչ միայն նրանով, որ իր մայրը, ինչպես նաև գլխավոր կինն ու խորհրդատուն՝ Դոքուզ-խաթունը, քրիստոնյաներ էին, այլև նրանով, որ Եգիպտոսի մամլյուքյան սուլթանի դեմ պայքարում, որը հանդես էր գալիս իսլամի պաշտպանի դերում, Հուլաղու խանը ձգտում էր օգտագործել հայերին ու վրացիներին և նրանց, ինչպես նաև խաչակիրների աջակցությամբ նվաճել Սիրիան: Հուլաղու խանը մարդկանց իր մոտ ծառայության վերցնելիս առաջնորդվում էր ոչ թե նրանց կրոնական կամ ազգային պատկանելության սկզբունքով, այլ նրանց գործարար հատկանիշներով: Պիտանի մարդկանց նա տալիս էր ճանապարհ և բարձրանալու հնարավորություն: Օրինակ՝ նրա քաղաքա-

ցիական վարչության ղեկավարը պարսիկ մահմեդական Շամս-ադ-դին Մուհամմադ Ջուվեյնին էր, իսկ պալատական բժիշկը՝ չինացի և այլն:

Լինելով քոչվոր-վաչկատուն՝ Հուլաղուն, սակայն, մոլի շինարար էր: Ալա-Դաղում նա, օրինակ, կառուցեց մի հոյակերտ պալատ, Խոյում՝ բուդդայական տաճար, Խաբուշանում՝ քարխանե և այլն: 1259 թ. Մարաղայում միջնադարի հայտնի պարսիկ մաթեմատիկոս և աստղագետ Նասիր-ադ-դին Թուսիի գլխավորությամբ կառուցեց մի աստղադիտարան, որը վայելում էր մեծ հռչակ: Հուլաղու խանը միաժամանակ գիտության ու գիտնականների հովանավոր էր:

Հուլաղուի մահվանից հետո ղուտլուքայը գահ բարձրացրեց նրա որդուն՝ Աբաղա խանին (1265-1282): Վերջինս փոփոխության չենթարկեց իր նախորդի արտաքին քաղաքականությունը: Կովկասի տարածքում շարունակվում էին ռազմական գործողությունները Ոսկե Հորդայի դեմ: Թշնամական էին հարաբերությունները նաև Միջին Ասիայի Չաղաթայական ուլուսի հետ: 1270 թ. չաղաթայական իշխանազուն Բորակը ներխուժեց Հուլաղուիդների պետության տարածքը՝ Խորասան: Սակայն Հերաթի մոտ չաղաթայական զորքն ընկավ ծուղակի մեջ և գլխովին ջախջախվեց: Աբաղա խանը զորքեր ուղարկեց Բուխարա: Քաղաքը ենթարկվեց ավելի ահավոր ավերածության, քան Չինգիզ խանի կողմից գրավման ժամանակ:

Շարունակվում էր նաև Հուլաղուիդների թշնամական առճակատումը Եգիպտոսի մամլյուքյան սուլթանների հետ: Մոնղոլական զորքերը մի քանի անգամ ներխուժեցին Սիրիա, սակայն իլխաններին չհաջողվեց այնտեղ ամրապնդվել: Եգիպտացիները երկիցս՝ 1260 և 1277 թթ., ջախջախիչ պարտության մատնեցին Հուլաղուիդների զորքերին և նրանց դուրս քշեցին Սիրիայից: Ավերելով Կիլիկյան Հայաստանը և աստիճանաբար նվաճելով Հուլաղուիդների դաշնակից խաչակիրների տիրույթները Սիրիայում (1291 թ.)՝ մամլյուքները իլխաններին զրկեցին կարևոր դաշնակիցներից:

Աբաղա խանի ժամանակ ծայր առան Հռոմի պապերի և Արևմտյան Եվրոպայի պետությունների հարաբերությունները մոնղոլ-իլխանների հետ: Արևմտյան Եվրոպայում, որտեղ ոգևորությունը խաչակիրների արշավանքների նկատմամբ վաղուց հանգել էր, ծայրահեղ ուրախ էին, որ Սիրիայի սահմանների մոտ առկա է մի պետություն, որը թշնամաբար է տրամադրված Եգիպտոսի մամլյուքների նկատմամբ: Կղեմես IV պապը և անգլիական թագավոր Էդվարդ Ա-ն Աբաղա խանի անունով հղեցին ուղերձներ, որտեղ նրան հորդորում էին շարունակել պայքարը եգիպտա-

կան մամլյուքների դեմ: Հենց այդ խանի տիրապետության օրերին Իրանի քաղաքներում սկսեցին հայտնվել կաթոլիկ միսիոներ-քարոզիչներ:

Աբաղա խանի մահվանից հետո մոնղոլական քոչվորական ազնվականության տարբեր խմբավորումների կողմից խանական գահի համար միաժամանակ առաջ քաշվեցին երկու թեկնածուներ: Մեկը խանի եղբայր Թոքուդարն էր (Թեքյուդար խան), մյուսը՝ Աբաղայի որդի Արղունը: Ղազանի ընտրությունը Թոքուդարի (1282-1284) օգտին էր: Վերջինս իլխանների մեջ առաջինն ընդունեց իսլամը՝ անվանակոչվելով մահմեդական Ահմադ անունով: Նա վերցրեց պետության իսլամականացման և մամլյուքների հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու կուրս: Ահմադի այդ քաղաքականությունը խորը դժգոհություն առաջ բերեց մոնղոլական քոչվորական ավատատերերի այն մասի մոտ, որոնք հետևում էին մոնղոլների հին ավանդույթներին և շեշտված թշնամանքով էին տրամադրված հանդեպ իսլամը: Սրանք սկսեցին անցնել Արղունի կողմը՝ համարելով, որ Թոքուդարը խարդախ ճանապարհով է տիրացել գահին: Հենվելով նրանց վրա՝ Արղունը զինված պայքար սկսեց իր հորեղբոր դեմ: Պարտություն կրելով՝ Ահմադը դիմեց փախուստի, սակայն դա չփրկեց նրան: Արղունի կողմնակիցները հայտնաբերեցին նրա ծպտյալ բնակության վայրը և ծերբակալելով կոտրեցին նրա ողնաշարը, որովհետև, մոնղոլական սովորույթի համաձայն, արգելված էր Չինգիզ խանի ժառանգորդ ազնվազարմ անձանց սպանել արյուն հեղելով: Մահապատժի ենթարկվեցին նաև Ահմադի կողմնակիցները, այդ թվում նաև սահիբ դիվան Ջուվեյնին:

Արղուն խանի (1284-1291) կառավարման շրջանը փոթորկահույզ և անհանգիստ մի ժամանակաշրջան էր: Անընդհատ տեղի էին ունենում ինքնագլխության ձգտող քոչվորական ավատատերերի խռովություններ ու ապստամբություններ: Այդ անհնազանդ տարրերի այն մասը, որի համակրանքը իսլամի կողմն էր, Արղուն խանին մեղադրում էին, որ նա մահմեդականների նկատմամբ տածում է անհաշտ թշնամություն և, ընդհակառակը, հովանավորում է նրանց թշնամիներին՝ բուդդայականներին, քրիստոնյաներին և հուդայականներին:

Ցանկանալով խորտակել ամենազոր իրանական մահմեդական բյուրոկրատիայի ազդեցությունը, որին ինքը խորապես ատում ու չէր վստահում՝ Արղուն խանը որոշեց պետական ապարատը մաքրել պարսիկներից և նրանց փոխարինել հուդայականներով ու քրիստոնյաներով: Արղուն խանի հակաիսլամական այդ թշնամական դիրքորոշումը պատճառ հանդիսացավ պետության մեջ նոր ցնցումների համար: Արղուն

խանը ձգտում էր քրիստոնեությունն ավելի գործարար ձևով օգտագործել իր արտաքին դիվանագիտական բանակցություններում: Նրա տիրապետության շրջանում իլխանների շփումները Արևմտյան Եվրոպայի պետությունների և Հռոմի պապի հետ հաջողությամբ շարունակվում էին: Նրանց միավորում էր ընդհանուր թշնամանքը մամլյուքների նկատմամբ: 1287-1288 թթ. Արղունը դեսպանություն ուղարկեց Եվրոպա՝ Հռոմ՝ Նիկողայոս Դ պապի մոտ, Ջենովա, Ֆրանսիա և Անգլիա: Այն գլխավորում էր ծագումով չինաստանցի ույղուր, նեստորական վանական Ռաբբան (ասորերեն՝ «ուսուցիչ») Սաուման: Ի պատասխան այդ դեսպանության՝ Հռոմի պապը ուղերձ հղեց Արղուն խանի անունով, որտեղ նրան հորդորում էր ընդունել քրիստոնեությունը և մասնակցել մամլյուքների դեմ խաչակրաց արշավանքին: Ի դեպ, քրիստոնեության նկատմամբ Արղունի քաղաքականությունը, մանավանդ Հռոմի պապի հետ սկսած նրա բանակցությունները, ժամանակի հայ միջավայրում առաջ էին բերել որոշ ազատագրական պատրանքներ:

Սակայն եվրոպացիների հետ այդ շփումները ոչ մի շոշափելի արդյունքի չհանգեցրին, առավել ևս, որ 1291 թ. Եգիպտոսի մամլյուքյան սուլթան Աշրաֆը իր ավարտին հասցրեց Սիրիայում և Պաղեստինում խաչակիրների բոլոր տիրույթների նվաճումը:

Արևմտյան Եվրոպայի երկրների հետ առավել շոշափելի արդյունքներ արձանագրվեցին առևտրական հարաբերությունների բնագավառում: Մասնավորապես Ջենովան առևտրական-քաղաքական լայն կապեր հաստատեց Հուլաղուիդների ընդարձակ պետության տարբեր շրջանների հետ, մինչդեռ նրա առևտրական մրցակից Վենետիկը գլխավորապես հարաբերություններ էր զարգացնում Եգիպտոսի մամլյուքների հետ:

Ջենովայի սենատը մշակել էր և 1288 թ. Վիլհելմ Ադամի միջնորդությամբ, որը հետագայում դարձավ Սուլթանիեում կաթոլիկ արքեպիսկոպոս, Արղուն խանին ներկայացրեց իր քաղաքական-տնտեսական ընդգրկումներով մի վիթխարի նախագիծ, որը հանգում էր հետևյալին. մոնղոլական ռազմական նավատորմը պետք է բռնագրավի Հնդկաստանից եկող բոլոր առևտրական նավերը՝ թույլ չտալով, որ նրանք շարժվեին Կարմիր ծով-Եգիպտոս ճանապարհով, այլ ստիպելով, որ նրանք բոլորը գնան դեպի Պարսից ծոցի Հորմուզ նավահանգիստը: Այդ դեպքում կասկածից վեր է, որ ողջ հնդկա-միջերկրածովյան առևտուրը կուղղվեր հետևյալ ճանապարհով. Հնդկաստան-Հորմուզ- Սպահան-Սուլթանիե-Էրզրում-Կոստանդնուպոլիս, այլ կերպ ասած՝ միջազգային առևտուրն ամբողջապես կիրականանար Իրանի վրայով: Ընդ որում՝ այդ առևտրից

ստացվող բոլոր օգուտները կանցնեին Հուլաղուիդների պետությանը և Ջենովայի վաճառականներին, իսկ Եգիպտոսի և Վենետիկի վրայով իրականացվող տարանցիկ առևտրին կհասցվեր մահացու հարված:

Սակայն Հուլաղուիդները չկարողացան իրականացնել այդ նախագիծը, քանի որ չունեին բավականաչափ ուժեղ նավատորմ:

Քիչ ավելի ուշ՝ XIV դ. սկզբին, Թավրիզում, Սուլթանիեում և Իրանի մի շարք այլ քաղաքներում հայտնվեցին ջենովական և վենետիկյան վաճառականների ոչ մեծ համայնքներ: Շարունակում էին Իրան ժամանել նաև կաթոլիկ միսիոներներ: Սուլթանիեում, որի շինարարությունը սկսվել էր Արղուն խանի կողմից, և որը հետագայում դարձավ Հուլաղուիդների մայրաքաղաքը, նույնիսկ հիմնադրվեց կաթոլիկ արքեպիսկոպոսություն, որը գոյություն ունեցավ ընդհուպ մինչև XV դ. սկիզբը: 1289 թ. Արղունի դեմ դավադրություն կազմակերպեց գլխավոր ամիր Բուղան: Դավադրությունը բացահայտվեց, և իլխանը դաժանորեն հաշվեհարդար տեսավ Բուղայի և նրա համախոհների հետ:

1291 թ. Արղունը կաթվածահար եղավ: Արդեն նրա հիվանդության ժամանակ էմիրների տարբեր խմբավորումների միջև սկսվեց իշխանության համար թեժ պայքար: Լուրիսթանում բռնկվեց ապստամբություն մոնղոլական տիրապետության դեմ: Ապստամբները գրավեցին Սպահանը և սրի քաշեցին տեղի իլխանական կայազորն ու աստիճանավորներին: Մոնղոլներին հաջողվեց ճնշել այդ վտանգավոր շարժումը:

1291 թ. գահ բարձրացվեց Աբաղա խանի որդի Քեյղաթու խանը (1291-1295): Վերջինս նախ և առաջ ծեռնամուխ եղավ տարբեր կրոնական խմբավորումների միջև հաշտություն կայացնելու գործին: Նորանշանակ խանը աշխատում էր իր հեղինակությունն ամրապնդել իշխանազուններին ու էմիրներին, ինչպես նաև նրանց կանանց առատ նվերներ բաժանելու ճանապարհով: Դրա հետևանքը եղավ այն, որ գանձարանն ամբողջովին դատարկվեց: Որպես դրություններից ելք՝ որոշվեց թողարկել թղթադրամ: Ենթադրվում էր, որ ողջ ներքին առևտուրը տեղի կունենա թղթադրամով, իսկ ոսկին կկուտակվի գանձարանում: 1294 թ. Թավրիզում թողարկվեց թղթադրամ, և բնակչությանը մահվան սպառնալիքով պարտադրեցին ընդունել այն: Սակայն այդ թղթադրամի՝ «չայի» թողարկումից ընդամենը մեկ շաբաթ անց Թավրիզում բոլոր բազարները փակվեցին և այլևս հնարավոր չէր գտնել որևէ ուտելիք, խախտվեց քարավանային առևտուրը և այլն: Ֆինանսական-տնտեսական կատարյալ փլուզման վտանգը ստիպեց կառավարությանը՝ չառն հանել շրջանառությունից: Սակայն գանձարանը շարունակում էր դատարկ մնալ: Առ-

հասարակ, Քեյղաթուի տիրապետության շրջանում պետական պաշտոնեության կողմից չարաշահումներն ու կամայականությունները չտեսնված չափերի հասան: Իլխանությունն ապրում էր տնտեսական ու քաղաքական անկում: Սակայն ապաշնորհ խանը շարունակում էր պետության միջոցներն առատորեն քամուն տալ, որպեսզի նվիրատվություններ միջոցով սիրաշահի իր շրջապատը:

1295 թ. Քեյղաթու խանը նույնպես զոհ գնաց քոչվոր ազնվականության կառավարող շրջանների քաղաքական խաղերին: Նրա դեմ ապստամբություն բարձրացրեց իր հորեղբորորդի Բայդուն, որը նախկինում հանդիսանում էր Փոքր Ասիայում Հուլաղուիդյան պետության փոխարքան: Նա ծպտյալ մահմեդականների թշնամի էր և համակրանք էր տածում քրիստոնյաների նկատմամբ: Նրա կողմն անցավ մոնղոլական ազնվականության մի մասը: Զրկվելով իր կողմնակիցներից՝ Քեյղաթու խանը փախուստի դիմեց, սակայն բռնվեց, և պարանով նրան խեղդեցին:

Գահը ժառանգեց Հուլաղուի թոռ Բայդու խանը, որը իշխեց ընդամենը կես տարի (1295 թ. ապրիլ-հոկտեմբերին): Նա սպանվեց Արղուն խանի որդի Ղազանի հետ մղված պայքարի ընթացքում: Մահմուդ Ղազան խանը (1295-1304) գահ բարձրացավ 24 տարեկան հասակում: Նա աչքի ընկնող անհատականություն էր: Ընդունելով իսլամը, սակայն մնալով մոնղոլական հայրենասեր՝ նա գնահատում էր հին Իրանի մշակութային ժառանգությունը: Կրթված էր ու կարդացած, մայրենի լեզվից բացի, տիրապետում էր ֆարսի, թյուրքերեն, արաբերեն, հինդի, քաշմիրի, չինարեն և նույնիսկ ֆրանկների լեզուներին (ֆրանսերենին):

Իրանի ողջ բազմադարյա պատմության ընթացքում երկրի բնակչության վիճակը մոնղոլների տիրապետության ժամանակ եղել է ամենածանրը: XIII դ. վերջին գիշատիչ շահագործման հետևանքով ամբողջ նահանգներ դատարկվեցին, որովհետև մարդիկ թողնում ու փախչում էին իրենց բնակավայրերից: Ծաղկուն հողերն ու այգիները խոպանի վերածվեցին: Ավելի բարվոք չէր քաղաքների վիճակը: Քաղաքներից գանձվող հիմնական հարկատեսակը «տամղաև» էր: Քաղաքաբնակները վճարում էին նաև «բաջ» կոչված մաքսատուրքը, որը գանձվում էր ապրանքների տեղափոխության համար: Արհեստավորները պարտավոր էին նաև կատարել զանազան հարկադրական աշխատանքներ. կառուցել հասարակական շինություններ, իլխանի, իշխանազունների և այլոց գալստյան առթիվ մասնակցել քաղաքի զարդարմանը և այլն:

Ավելի վատթար էր ստրկացված արհեստավորների վիճակը, որոնք աշխատում էին բանակի համար զենք, հագուստ և հանդերձանք ար-

տաղրող պետական արհեստանոցներում («քարխանե»):

Առհասարակ, Իրանի մոնղոլական նվաճումը հանգեցրեց ստրկատիրական կացութաձևի ժամանակավոր վերածննդին: Ստրուկների աշխատանքը կրկին բավականին լայնորեն օգտագործվում էր քոչվորական անասնապահության, արհեստների և գյուղատնտեսության մեջ: Ստրուկները համալրվում էին գլխավորապես ռազմագերիներից, սակայն մեծ թվով ստրուկներ էին գնվում նաև Մերձավոր ու Միջին Արևելքի ստրկավաճառանոցներից կամ «եսիր բազարներից», որտեղ վաճառվում էին Ղրիմից, Ռուսիայից, Ղփչաղական տափաստանից, Հնդկաստանից, Աֆրիկայից, Եգիպտոսից, Ռումից (Փոքր Ասիա), Կովկասից և այլ վայրերից բերված հազարավոր ստրուկներ: Իրենց պարտքերը չվճարած անձինք նույնպես կարող էին ստրկացվել:

Մոնղոլական զավթիչները հսկայական վնասներ պատճառեցին Իրանի և առհասարակ նվաճված երկրների արտադրողական ուժերին: Այդ նվաճումների ժամանակ ոչնչացվում էին մարդկանց մեծ զանգվածներ, քաղաքներն ու գյուղերը վեր էին ածվում ավերակների, շարքից դուրս էր գալիս ոռոգման համակարգը, առանց որի առկայության Իրանի տարածքի մեծ մասում հնարավոր չէ հողագործությամբ զբաղվելը:

Սակայն հարկ է նաև նշել, որ նվաճված երկրներում ամրապնդելով իրենց իշխանությունը՝ մոնղոլները, այնուամենայնիվ, ստիպված էին ինչ-որ չափով ուշադրություն դարձնել ավերված տնտեսությունը վերականգնելու հարցին: Սակայն Հուլաղուիդների դինաստիայի առաջին վեց խաների կառավարման շրջանում այդ ուղղությամբ շատ քիչ բան կատարվեց: Ավելին՝ արոտավայրերի և հողերի համար քոչվորական ազնվականության պայքարը, որն ուղեկցվում էր արյունոտ պատերազմներով ու երկպառակություններով, նպաստեց, հատկապես XIII դ. 80-90-ական թթ., Իրանի տնտեսական դրության կտրուկ վատթարացմանը:

Պետության տնտեսության ու ֆինանսների ծանր վիճակը, կենտրոնախույս ձգտումների ուժեղացումը, մոնղոլա-թյուրքական քոչվորական ազնվականության չդադարող խռովությունները, հարուստ ռազմական ավար բերող արտաքին նվաճումների դադարեցումը. միավ բանիվ այս բոլորը միասին ստիպեցին կենտրոնական իշխանությանը ստեղծված վիճակից ելք որոնել:

Այդ դերն իր վրա վերցրեց Արղուն խանի որդի, իլխան Մահմուդ Ղազան խանը (1295-1304), որը հասկացավ, որ շտապ կարգով պետության մեջ բարեփոխումներ չիրականացնելու դեպքում երկիրը կկանգնի փլուզման վտանգի առջև: Հիրավի, Ղազան խանի օրոք մոնղոլական

պետության մեջ լուրջ տեղաշարժեր կատարվեցին:

Սակայն մինչև խանական գահին հասնելը Ղազանը պետք է անցներ դժվարին ճանապարհ, մասնավորապես պետք է տապալեր Բայդու խանին: Այդ գործում նրա համար դաշնակից կարող էր հանդիսանալ մոնղոլական քոչվորական ազնվականության՝ իսլամն ընդունած հատվածը: Նախ՝ Ղազան խանի կողմն անցավ օյրաթների ցեղից էմիր Նովրուզը, որը դեռևս 1289 թ. Խորասանում Արղուն խանի դեմ բարձրացրել էր ապստամբություն: Նովրուզը համաձայնվեց աջակցել Ղազան խանին. պայմանով, որ վերջինս ընդունի իսլամը: Ղազանը, որը մինչ այդ բուդդայական էր, ընդունեց Մուհամմադի կրոնը և մահմեդական Մահմուդ անունը:

Նրա կողմից իսլամի ընդունումն ունեցավ այն հետևանքը, որ Ղազան խանին սկսեցին աջակցել ոչ միայն նստակյաց մահմեդական ավատատերերի բոլոր խմբերը, այլև մոնղոլական քոչվորական ազնվականության այն մասը, որն ընդունել էր իսլամը, ինչպես նաև բյուրքական ազնվականությունը:

1295 թ. հոկտեմբերին մոնղոլական ղուռուլթայը 24 տարեկան Ղազան խանին հռչակեց իլխան: Իր թագավորության առաջին տարիներին Ղազանը հարկադրված էր ջախջախել իր գահի նկատմամբ հավակնություններ ունեցող հակառակորդներին և անջատողական ձգտումներ փայփայող ավատատերերին: Այդ ներքին պայքարն ընթանում էր համարյա անընդմեջ արտաքին պատերազմներով, ինչը պահանջում էր պետության բոլոր ուժերի մեծ լարում: 1295 թ., օրինակ, չաղաթայցի Դուվա-խանի զորքերը ներխուժեցին Խորասանի և Մազանդարանի տարածքները: Թեև շուտով նրանք այնտեղից վոնդվեցին, սակայն հասցրեցին ահավոր կողոպուտի ենթարկել այդ նահանգները՝ միաժամանակ ստրկության քշելով 200 հազար բնակչի:

Ավելի ծանր էր պայքարը էմիր Նովրուզի դեմ, որը, եռանդուն կերպով օգնելով խանին, հույս ուներ նրան իր ձեռքում դարձնել խաղալիք: Սակայն համոզվելով, որ ինքը սխալվել է իր հաշիվների մեջ՝ 1298 թ. նա Խորասանում բարձրացրեց ապստամբություն՝ ձգտելով դառնալ այդ նահանգի անկախ կառավարիչ: Ղազան խանը ջախջախեց խռովարար Նովրուզի զորքերին և դաժանորեն պատժեց նրան՝ սպանելով ոչ միայն իրեն, այլև ամբողջովին ոչնչացնելով նրա տոհմը: Ի դեպ, Նովրուզի ապստամբության ճնշման գործում ակտիվ մասնակցություն են ունեցել հայկական և վրացական ուժերը, հատկապես աչքի են ընկել Լիպարիտ Օրբելյանը և Էաչի Պռոշյանը:

1299 թ. պետության արևմտյան մասում՝ Ռումում, ապստամբություն բարձրացրեց էմիր Սուլամիշը, որին հաջողվեց հավաքել 50- հազարանոց բանակ և ստանալ Եգիպտոսի աջակցությունը: Խանական զորքերը ջախջախեցին այդ ապստամբությունը ևս:

1299-1303 թթ. միջև ընկած շրջանում Ղազան խանը երեք արշավանք կազմակերպեց դեպի Սիրիա (Ասորիք): Նրա զորքերը գրավեցին Հալեպը, Դամասկոսը և այլ քաղաքներ: Այդ պատերազմներին մասնակցել են նաև հայ-վրացական զինվորական միավորումները՝ աթաբեկ և ամիրսպասալար Շահնշահ Բ Զաքարյանի հրամանատարությամբ: Սակայն, չնայած ժամանակավոր հաջողություններին, մոնղոլական բանակը վերջին հաշվով կրեց անհաջողություն մոնղոլների հզոր թշնամու՝ եգիպտական մամլյուքների դեմ պայքարում և ստիպված էր հեռանալ Սիրիայից: Ինչպես մոնղոլների, այնպես էլ կիլիկյան հայ իշխողների հույսերը՝ Եգիպտոսի դեմ քրիստոնյա Արևմուտքի և Հռոմի պապի օգնությունն ստանալու վերաբերյալ, հօդս ցնդեցին: Ֆրանսիան, Արագոնիան և Արևմտյան Եվրոպայի մյուս քրիստոնյա պետությունները, որոնք Ղազան խանին խոստացել էին ռազմական օգնություն, իրենց խոստումը չկատարեցին:

Ներքին և արտաքին թշնամիներից ապահովելով իր պետության անվտանգությունը՝ Ղազան խանը ձեռնամուխ եղավ երկիրը տնտեսական ու քաղաքական ճգնաժամից դուրս բերելու միջոցառումներին: Այդ միջոցառումների մշակման ու իրականացման գործում նախաձեռնող ու ղեկավար դեր է խաղացել 1298 թվականից սահիբ դիվանի և առաջին վեզիրի պաշտոնը վարող միջնադարի պարսիկ խոշոր պատմաբան, բժիշկ, գիտնական-հանրագիտակ և աստվածաբան Ռաշիդ-ադ-դին Ֆազլուլլահ Համադանին (1294-1317), որն օգտվում էր Ղազան խանի բացառիկ վստահությունից ու համակրանքից: Ռաշիդ-ադ-դինը ծավալեց բարենորոգչական լայն գործունեություն: Նրա բարեփոխումներն ընդգրկում էին պետության ներքին կյանքի ամենատարբեր բնագավառներ. իրականացվեց պետականության ավանդույթների յուրացումը, կենտրոնական իշխանության ամրապնդումը, մոնղոլա-թյուրքական քոչվորական ազնվականության կենտրոնախույս ձգտումների դեմ պայքարը և նրա ինքնագլխության սանձահարումը, հողային հարկի չափերի կայուն հաստատագրման և ֆինանսական ապարատի առողջացման անհրաժեշտությունը գյուղացիների ու քաղաքացիների հարկերի մուծման վճարունակությունը բարձրացնելու նպատակով, ավերված ու քանդված ոռոգման համակարգի, գյուղատնտեսության, արհեստների, առևտրի և քա-

ղաքային կյանքի վերականգնումը: Այդ բարեփոխումներով Ղազան խանը վերացրեց օթևանության պարհակը, հարկերի գանձման կապալային սիստեմը, սահմանափակեց արքունիքի, խանական տան անդամների, բանակի, ամիրաների պահպանման համար ծախսվող գումարները և վերացրեց նրանց օգտին բնակչությունից գանձվող բազմաթիվ ապօրինի տուրքերը: Կանոնավորեց պետական գանձարանի գործերը:

Ղազան խանը անցկացրեց նաև հողային ռեֆորմ, ըստ որի՝ բոլոր զինվորներին բաժնեկալվածքի (իքթա) իրավունքով հողաբաժին տրվեց: Խաների կանանց, իշխանազուններին և այլոց արգելվեց սուրհանդակներ ուղարկել իրենց հանձնարարությունները կատարելու համար: Այսուհետև սուրհանդակներ էին ուղարկվելու բացառապես պետական գործերի համար: Կրճատվեցին թագավորական որսի համար բաց թողնվող միջոցները:

Ղազան խանը հաստատեց գյուղացիներին հողին ամրակայելու սկզբունքը, որը գոյություն ուներ արդեն առաջին իլխանների օրոք: Գյուղացիներին արգելվում էր լքել այն հողերը, որոնց վրա իրենք ամրակայված էին: Հողատերերին արգելվում էր իրենց մոտ ապաստան տալ փախստական գյուղացիներին: Սահմանվում էր 30-ամյա ժամկետ, որի ընթացքում կարելի էր փնտրել փախստական գյուղացուն և ստիպողական ձևով վերադարձնել նրան իր լքած հողի վրա:

Լքված հողերի մշակումը խրախուսելու համար Ղազան խանը արտոնություններ խոստացավ այն հողատերերին, որոնք կհամաձայնվեին ձեռնամուխ լինել այդ հողերի մշակմանն ու բնակեցմանը: Ղազան խանի օրոք ոչ միայն մեծապես աճեց պետական հողերի ֆոնդը, այլև նշանակալիորեն ավելացան վակուֆային հողերը: Նորաթուխ մահմեդական խանը իսլամական հոգևորականությանը շնորհեց մեծ հողային և դրամական նվիրատվություններ:

Պետության մեջ հարգանք վայելող խոշոր վաճառականները սկսեցին օգտվել խանի հատուկ հովանավորությունից:

Ղազան խանը կատարեց նաև դրամական ռեֆորմ: Երկրի տարբեր մասերում հատվող բազմապիսի դրամների փոխարեն արմատավորվեց ողջ պետության համար միասնական արծաթյա դրամի համակարգ: Դրամական միավոր դարձավ դիրհեմը:

Ղազան խանը մեծ գործ կատարեց նաև իր մայրաքաղաք Թավրիզը բարեկարգելու և ընդարձակելու ուղղությամբ: Գտնվելով քարավանային ճանապարհների հանգուցակետում՝ այն ձեռք բերեց առևտրատնտեսական ու մշակութային խոշոր կենտրոնի համբավ:

Արհեստավորության և ստորին խավերի վիճակը թեթևացնելու նպա-

տակով խանը վերացրեց կամ կրճատեց «տամղա» հարկի գանձումը: Մեծ չափերի հասած վաշխառությունը սահմանափակելու նպատակով, հատուկ հրամանով արգելեց վաշխառուական դրամափոխտվությունը և պարտապաններին ազատեց վերցրած գումարներն ու նրանց տոկոսները վճարելուց: Սահմանեց դրամական և չափ ու կշռի միասնական միավորներ: Ստրուկ արհեստավորների աշխատանքն արդյունավետ դարձնելու համար, նրանց կենտրոնացրեց պետական արհեստանոցներում և սահմանեց ռոճիկ: Հետապնդվում էր ստրկուհիների վաճառքը հասարակաց տներին:

Ղազան խանի բարեկորոգումների շնորհիվ պետության գանձարանի եկամուտները աճեցին մոտ 25 տոկոսով: Իրանի ոռոգման համակարգը մասնակիորեն վերականգնվեց, գյուղատնտեսությունը սկսեց որոշ վերելք ապրել:

Ղազան խանի ժամանակ Իրանում ղեկավար դերը մոնղոլա-թյուրքական ռազմաքաղաքական ազնվականությունից անցավ իրանական պաշտոնեության և առհասարակ աշխարհիկ ու հոգևոր ազնվականության ձեռքը, որոնց շահերի ներկայացուցիչը և քաղաքական գծի իրականացնողը հենց Ռաշիդ-ադ-դինն էր: Իրանական հին ու հարուստ մշակույթն իր հերթական հաղթանակն էր տանում քոչվորների նկատմամբ:

Սակայն այդ բոլորով հանդերձ՝ Ղազան խանի բարեկորոգումների հետևանքով Իրանի տնտեսությունը չհասավ այն մակարդակին, որի վրա գտնվում էր XIII դ. սկզբին: Բացի այդ, նշված բարեկորոգումները լոկ ժամանակավորապես կասեցրին պետության քայքայումը, ի վիճակի չլինելով այն կանգնեցնել:

Ղազան խանի կառավարման շրջանում տեղի ունեցավ մոնղոլական իլխանական ազնվականության կատարյալ իսլամականացում: Այն ուղեկցվում էր այլադավանների նկատմամբ թշնամական գործողություններով:

Իլխանների և հատկապես Ղազան խանի օրոք գիտությունը, մշակույթը և արվեստը ակնառու կերպով զարգացում ապրեցին: Նկատելիորեն աշխուժացավ առևտուրը Բյուզանդիայի, Վենետիկի, Ջենովայի, Չինաստանի և այլ երկրների հետ: Առևտուրը նպաստեց նաև նշված երկրների հետ մշակութային շփմանը: Ուշագրավ է նաև, որ այդ շրջանում բարձր զարգացման հասավ մոնղոլների շինարարական գործունեությունը:

Հենց այդ ժամանակաշրջանին է վերաբերում նաև պարսկական պատմագրության աննախընթաց զարգացումը: Առավել աչքի ընկնող պատմիչներից էր Ղազան խանի առաջին վեզիր Ռաշիդ-ադ-Դինը, որից մեզ է հասել չափազանց արժեքավոր պատմական մի աղբյուր՝ «Ջամիաթ-Թավարիխ» անունով («Տարեգրությունների ժողովածու»): Սակայն

նա այդ ժամանակի միակ պատմիչը չէր: Իրանում ապրում և ստեղծագործում էին նաև միջնադարի ականավոր գրագետներ և տարեգիր-պատմիչներ Ջուվեյնին, Վասսաֆը, Համդալլահ Ղազվինին և այլն:

Ղազան խանը մահացավ 1304 թ.: Մահվանից առաջ նա իր ժառանգորդ նշանակեց Օլջայթու խանին, որն իր հարազատ եղբայրն էր: Սա պատմության մեջ հայտնի է «Խուդաբենդե» («Աստծո ծառա») անունով: Նրա կառավարման շրջանը տևեց տասներկու տարի (1304-1316):

Խանական գահը գրավելուց հետո Օլջայթուն որոշեց իրականացնել իր տոհմի հին ծրագրերից մեկը՝ Սիրիայի նվաճումը, որը գտնվում էր Եգիպտոսի սուլթանի տիրապետության ներքո: Առաջիկա ծանր պայքարում կարիք ունենալով դաշնակիցների՝ 1304 թ. խանը Ֆրանսիա ուղարկեց երկու դեսպանների՝ նրանց հանձնարարելով իր նամակը անձամբ հանձնել ֆրանսիական թագավոր Ֆիլիպ IV «Գեղեցիկին»: Նույնպիսի նամակներ ուղարկվեցին նաև անգլիական թագավոր Էդուարդ Բ-ին և Հռոմի պապ Կղեմես Ե-ին: Եվրոպայի այդ գորեղ մարդկանց պատասխան նամակները չափազանց խոստումնալից ու հուսադրող էին, սակայն գործնական օգնություն խանը այդպես էլ չստացավ: Դա ստիպեց նրան հրաժարվել Սիրիան նվաճելու իր փառասիրական ձգտումներից, մանավանդ որ շարունակվող քշնամական հարաբերությունները չաղաթայցիների և Ոսկե Հորդայի հետ պետության անվտանգության համար ստեղծում էին շոշափելի սպառնալիք:

Օլջայթուն որոշեց իր եռանդը ծախսել ներքին խնդիրներ լուծելու համար, իսկ արտաքին քաղաքականության բնագավառում հնարքացս լուծել իր հնարավորություններին համապատասխան հարցեր: Նա, օրինակ, 1305 թ. վերսկսեց Սուլթանիե նոր քաղաքի շինարարությունը, որը սկսել էր Արղուն խանը, սակայն իր ավարտին չէր հասցրել: 1313 թ. այդ քաղաքի շինարարությունն ավարտվեց, և այն դարձավ իլխանների ամառային մայրաքաղաքը (ձմեռայինը շարունակում էր մնալ Բաղդադը): Այդ ընթացքում՝ 1307 թ., Օլջայթուն Իրանի լավագույն կտորներից մեկը՝ Գիլյանը, միացրեց իր պետությանը:

Օլջայթու խանի տիրապետության օրոք դեռ շարունակվում էր Ղազան խանի սկսած բարեփոխումների կուրսը, սակայն դա ավելի շուտ մի տեսակ տուրք էր իր եղբոր հիշատակին, քան ծրագրված քաղաքականություն: Ուստի և նրա օրոք իրականացված նորամուծություններն աչքի չընկան իրենց հետևողականությամբ ու արդյունավետությամբ:

Իր պետության գաղափարական հիմնավորման գործում նա Օլջայթուն մշտական որոնումների մեջ էր: Նա մանկության տարիներին

մկրտված էր իր քրիստոնյա մոր կողմից: Սակայն հասկանալով, որ իլխանական պետության ղեկավարը չի կարող լինել քրիստոնյա՝ նա ընդունեց այդ ժամանակ Իրանում պաշտոնական կրոն հանդիսացող սունիթական ուղղության իսլամը: Սակայն, ի վերջո, նա հակվեց դեպի շիիզմը և փորձեց այն դարձնել պետական կրոն: Այդ փորձն ավարտվեց կատարյալ ձախողմամբ, որովհետև իրանական հոգևոր ու աշխարհիկ ազնվականությունը, որը հաստատուն կերպով կանգնած էր սունիթականության պաշտպանության դիրքերի վրա, վճռական դիմադրություն ցույց տվեց «Աստծո ծառայի» քաղաքական նպատակներ հետապնդող նախաձեռնությանը:

3. ՀՈՒԼԱՎՅԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐՈՀՈՒՄՆ ՈՒ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

1316 թ. Օլջայթու խանի մահվանից հետո, գահ բարձրացավ նրա որդի Աբու-Սայիդ Բահադուր խանը (1317-1335): Նա ընդամենը 12 տարեկան էր և դեռ հրաժեշտ չէր տվել իր մանկությանը, ուստիև, բնականաբար, ի վիճակի չէր կառավարելու հսկա պետությունը: Այդ պարագաներում տերության փաստական կառավարիչ դարձավ մոնղոլական սուլդուզ ցեղից սերած ուլուսային էմիր և զորքերի գլխավոր հրամանատար էմիր Չոբանը, որը Բահադուր-խանի փեսան էր: Հենց սրա աջակցության շնորհիվ նոր վեզիր Թաջ-ադ-դին Ալիշահը ձեռք բերեց մեծ ազդեցություն: Վերջինս, Ռաշիդ-ադ-դինին համարելով վտանգավոր մրցակից, նրան զրկեց պետական գործերի վրա ամեն տեսակի ազդեցությունից: Յոթանասունամյա ծերունու համար այլևս դժվար էր պայքարել պալատական սադրանքների դեմ, և նա որոշեց հրաժարական տալ և հեռանալ պետական գործերից: Սակայն դա չփրկեց նրան վերահաս կործանումից: Պատրվակ բռնելով այն հանգամանքը, որ Ռաշիդ-ադ-դինը, որպես բժիշկ, բուժում էր Օլջայթու խանին՝ Ալիշահը մեղադրեց նրան, որ իբր թունավորել է խանին: Այս ահավոր մեղադրանքը հիմնավորելու ապացույցների կարիք բոլորովին չկար, քանի որ քոչվորական ազնվականությունը, որն ատում էր Ռաշիդ-ադ-դինին՝ Ղազան խանի բարեփոխումներին նրա եռանդուն մասնակցության համար, ուրախ էր, որ ստեղծվել է բարեպատեհ առիթ այդ ուժեղ և տիրական խառնվածքի տեր մարդու հետ հաշիվ մաքրելու համար: Ռաշիդ-ադ-դինը կանգնեց խանական

դատարանի առջև և 1318 թ. հուլիսին մահապատժի ենթարկվեց. նրան սրով կես արեցին ճիշտ այնպես, ինչպես ինքը ժամանակին վարվել էր նախկին վեզիր Սադր-ադ-դինի հետ: Դատարանի վճռով Ռաշիդ-ադ-դինի վիթխարի հարստությունը բռնագրավվեց հարքունիս, նրա կողմից Թավրիզում կառուցված թաղամասն ավերվեց, իսկ հասութաբեր վակֆերը, ինչպես նաև նրա հիմնադրած բազմաթիվ բարեգործական հիմնարկությունները ոչնչացվեցին:

Այլևս Ռաշիդ-ադ-դինը չկար, և մոնղոլական քոչվորական ազնվականությունը ազատ շունչ քաշեց: Նա իր ձեռքը վերցրեց պետական կյանքի բոլոր կարևորագույն բնագավառները և հանգուցային քաղաքացիական պաշտոններում նշանակեց իր դրածոներին: Զգալով կենտրոնական կառավարության թուլությունը՝ անսանձ տարրերը գլուխ բարձրացրին: Պետության տարբեր մասերում ծայր առան խռովություններ ու ապստամբություններ: Դրանց դեմ պայքարը դժվարանում էր նրանով, որ այն միաժամանակ ընթանում էր հարևան պետությունների հետ պատերազմների պայմաններում: 1317 թ. Խորասանում ապստամբություն բարձրացրեց չաղաթայական իշխանազուն Յասավուրը, որը վռնդվել էր Միջին Ասիայից և ապաստան էր գտել Իրանի այդ նահանգում: Միաժամանակ Ոսկե հորդայի խան Ուզբեկի զորքերը, շարունակելով Ատրպատականի համար վաղեմի պայքարը, ներխուժեցին Դերբենտի շրջանը: Մինչ էմիր Չոբանը ծանր պատերազմ էր մղում ոսկեհորդացիների դեմ, էմիր Յասավուրն ավերեց Խորասանի մի մասը, Սիսթանը, այնուհետև նաև Մազանդարանը: Միայն 1320 թ. հաջողվեց ճնշել այդ վտանգավոր ապստամբությունը:

Էմիր Չոբանի վիթխարի իշխանությունն առաջ բերեց բազմաթիվ մոնղոլական քոչվորական ավատատերերի նախանձն ու մրցակցությունը, որոնք սկսեցին իլխան Աբու-Սայիդի մոտ զրպարտել նրան՝ սուտն ու ճշմարտությունը խառնելով իրար: Ի վերջո կազմակերպվեց դավադրություն, որի գլուխ կանգնեց էմիր Իրինչինը քերայիթների ցեղից: Թեև այդ դավադրությունը նախապես ուղղված էր Չոբանի դեմ, բայց ընթացքում վերածվեց հենց իլխանի դեմ ուղղված խռովության: Պահանջվեց ուժերի մեծ լարում այն ճնշելու համար: 1319 թ. էմիր Իրինչինը մահապատժի ենթարկվեց:

1320 թ. եգիպտական մամլյուքներն ավերիչ ներխուժում կազմակերպեցին իլխաններից վասալական կախման մեջ գտնվող Կիլիկյան Հայաստան: Ցանկանալով վերջ տալ տերության արևմտյան սահմանների մոտ ծավալված ռազմական գործողություններին՝ Աբու-Սայիդը բանակցություններ սկսեց Եգիպտոսի մամլյուքյան սուլթան Նասիր Մուհամմադի հետ: 1323 թ. Հուլաղուիդների պետության ու Եգիպտոսի միջև կնքվեց հաշտության

պայմանագիր, և կողմերը փոխանակեցին բարեկամական դեսպանություններ:

1332 թ. Փոքր Ասիայում (Ռում) խռովություն բարձրացրեց էմիր Չոբանի հարազատ որդի էմիր Թիմուրթաշը: Զայրացած Չոբանը անձամբ շարժեց իր զորքերը որդուն պատժելու համար, սակայն քիչ ավելի ուշ վերջինս խնդրեց հոր ներողամտությունը, և խռովությունը հանգեց: Կովկասում Ոսկե Հորդայի դեմ ռազմական գործողությունները շարունակվում էին:

Հազիվ էին մեկ վայրում կարողանում ճնշել ապստամբությունը, երբ նոր բռնկում էր տեղի ունենում մեկ այլ վայրում: Այդ բոլորի հետևանքով խորանում էր նաև իշխանությունների ճգնաժամը: 1324 թ. մահացավ վեզիր Ալիշահը՝ իլխանների բոլոր վեզիրներից միակը, որը կյանքից հեռացավ բնական մահով: Մինչդեռ Չոբանի իշխանությունը գնալով ավելի ու ավելի էր մեծանում: Այդ ազդեցիկ մարդու հովանավորությունն արդեն բեռ էր դառնում առնականացած Աբու-Սայիդ Բահադուր խանի համար: Իրադարձությունների զուգադիպությամբ Չոբանի որդիներից մեկը՝ Դ-ըմըշղ-խոջան Թավրիզի բնակչության նկատմամբ կազմակերպեց սանձարձակ բռնություններ, որոնք տեղիք տվեցին համընդհանուր դժգոհության: Դա անմիջապես օգտագործվեց Բահադուր խանի կողմից, որը բացահայտ կերպով մարտահրավեր նետեց իր «հովանավորին»: Նրա հրամանով 1327 թ. Դ-ըմըշղ-խոջան մահապատժի ենթարկվեց: Այլևս «հովանավորի» և «հովանավորյալի» միջև կամուրջներն այրված էին: Սիրեցյալ որդու մահվան լուրից ցնցված հայրն այլևս ուժ չուներ ունկնդիր լինել խոհեմության ձայնին: Ինքնապաշտպանության բնազդն անգամ ի վիճակի չէր նրան հեռու պահել խելահեղ քայլերից: Վրիժառության մոլուցքով տարված՝ էմիր Չոբանը Խորասանում բարձրացրեց խռովություն, որն ի սկզբանե դատապարտված էր ձախողման, մանավանդ որ զորքերի մեծ մասը, զգալով հրամանատարի ղիրքերի թուլությունը, ինչպես հատուկ է մարդկային բնավորությանը, անցավ ուժեղի՝ իլխանի կողմը: Ջախջախված Չոբանը փախավ Հերաթ, որի տիրակալը, անտեղյակ լինելով գլխավոր հրամանատարի բախտի անիվի հակառակ պտույտի իրողությանը, նրան ոչ միայն տվեց ապաստան, այլև ամեն մի առիթով դրսևորում էր ուշադրության նշաններ: Սակայն տեղեկանալով, թե ինչն-ինչոց է՝ իլխանին հաճոյանալու համար հրամայեց Չոբանին խեղդամահ անել:

Ավատական խմբավորումների խռովությունները, ինքնագլխության ճգտող քոչվորական ազնվականության կենտրոնախույս տրամադրությունները, հաճախակի ռազմական ընդհարումները, զորքերի ավերիչ տեղաշարժերը նստակյաց շրջանների տարածքներով, աստիճանավորների չարաշա-

հումները և այլն պետությունը կանգնեցրել էին աղետալի վիճակի առջև: Այդ բոլորին ավելացան նաև տարերային աղետները. 1318-1320 թթ. տեղի ունեցավ ահավոր երաշտ, այնուհետև մորեխը ոչնչացրեց ցանքսերը, իսկ դրան հետևած ահավոր ուժգնության կարկուտն այլևս ոչ մի հույս չթողեց, որ հնարավոր կլինի խուսափել համատարած սովից: Մարդիկ լքում էին իրենց բնակավայրերը և խուճապահար փախուստի դիմում:

1328 թվականից՝ էմիր Չոբանի անկումից հետո, վեզիրի պաշտոնը զբաղեցրեց Ռաշիդ-ադ-դինի որդին՝ Ղիյաս-ադ-դին Մուհամմադ Ռաշիդին: Նա ձգտում էր իր ձեռքին քաղաքականությունն իրականացնել Ղազան խանի բարեփոխումների ոգով: Նրա խորհրդով Աբու-Սայիդի կողմից հրապարակվեցին հրամանագրեր բնակչության անօրինական ու քայքայիչ հարկերից և առհասարակ ավատատերերի կամայականություններից պաշտպանելու համար: Մեզ է հասել Անի քաղաքի մզկիթի պատին փորագրված այդպիսի հրամանագրերից մեկը: Սակայն այնս ոչնչով հնարավոր չէր կանգնեցնել Հուլաղուիդների տերության քայքայման գործընթացը, որը հանգեցրել էր նրա տարածքում մի շարք ինքնուրույն էմիրությունների ստեղծմանը:

Իլխան Աբու-Սայիդ Բահադուր խանը մահացավ 1335 թ. նոյեմբերի 30-ին Ոսկե Հորդայի դեմ արշավանքի ժամանակ: Նրա մահվանից հետո հրապարակի վրա այլևս որևէ իլխան գոյություն չուներ, որի իշխանությունը ճանաչվեր ամբողջ պետության մեջ: Խոշոր ավատական խմբավորումները գահ էին բարձրացնում Չինգիզ խանի ժառանգորդներից սերած խամաճիկային իլխանների, որոնց իշխանությունը լոկ անվանական էր: Նրանք հասարակ գործիք էին ռազմաավատական խմբավորումների ձեռքերում:

Վեզիր Ղիյաս-ադ-դինի փորձերը՝ կանխելու պետության վերահաս տրոհումը, ավարտվեցին ձախողմամբ: Նրա կողմից իրականացվող քաղաքական գիծն առաջ բերեց մոնղոլա-թյուրքական քոչվորական ազնվականության ուժեղ հակազդեցությունը: Խոշոր ավատատերերի, առանձնապես քոչվորական ազնվականության հողային հարստությունների աճը «իքթա» կոչվող համակարգի հիմքի վրա մի կողմից առաջ բերեց կենտրոնական իշխանության թուլացում, իսկ մյուս կողմից հանգեցրեց այդ ազնվականության քաղաքական ազդեցության ուժեղացմանը: Այդ բոլորի տրամաբանական հետևանքը ավատական խմբավորումների շրջանում սուր պայքարի ծավալումն էր հանուն իշխանության և նոր հողային կալվածքների:

1335 թ. Ոսկե Հորդայի դեմ արշավանքի ժամանակ իլխան Աբու-Սայիդը մահացավ: Նրա մահվանից հետո, քանի որ արու ժառանգներ չէր թողել, վեզիր Ղիյաս-ադ-դինի կողմնակիցները իլխան հռչակեցին Հուլաղու խանի եղբայր Արիք Բուղայի ժառանգորդներից մեկին՝ Արփային (1335-1336):

Քոչվորական էմիրների թշնամական խմբավորումը մոնղոլական օյրաթ ցեղի առաջնորդ էմիր Ալի-Փաղշահի գլխավորությամբ առաջ քաշեց մեկ այլ խամաճիկային իլխանի թեկնածություն՝ Հուլաղուիդ Մուսային (վեցերորդ իլխան Բայդուի թոռանը): Կողմերի միջև ռազմական բախումը դարձավ անխուսափելի: Մարաղայի մոտ 1336 թ. ապրիլի 29-ին տեղի ունեցած ճակատամարտում Ղիյաս-ադ-դինի կողմնակիցները ջախջախվեցին, իսկ ինքը Արփա խանի հետ միասին մահապատժի ենթարկվեց: Սակայն Մուսայի կողմնակիցները ևս երկու ճակատամարտերի ընթացքում (1336 թ. Ալաթաղում և 1337 թ. հունիսին՝ Մարաղայի մոտ) ջախջախվեցին ու ոչնչացվեցին մոնղոլական ջելայիր ցեղի առաջնորդ Հասան Մեծի կողմից գլխավորվող ռազմաքոչվորական ազնվականության խմբավորման կողմից: Ջելայիրյանների այդ խմբավորումը շուտով ստիպված էր պատերազմ մղել ռազմաքոչվորական ազնվականության մի երրորդ խմբավորման՝ Չոբանյանների դեմ, որը գլխավորում էր սուլդուզ ցեղի առաջնորդ, էմիր Չոբանի թոռ էմիր Հասան Փոքրը:

Երկու ճակատամարտերի ընթացքում (Նախիջևանի մոտ 1338թ. և Մարաղայի մոտ՝ 1340 թ.) Չոբանյանները ջախջախեցին Ջելայիրյաններին:

Այսպիսով իլխանների պետության խոշոր նահանգների տարածքը վերածվեց իշխանության համար սուր պայքարի ասպարեզի մոնղոլական, թյուրքական, իրանական ազնվականության առանձին ավատական ընտանիքների միջև: Նախկինում իլխաններից վասալական կախման մեջ գտնվող ավատատերերը փաստորեն դարձան անկախ: Պետության քաղաքական տրոհումը և անդամահատումն ավարտին հասավ վերջին իլխան Թուղա Թիմուր խանի (1336-1353) սպանությունից հետո (1353 թ.): Իլխանների Հուլաղուիդյան պետությունը, որը հանդիսանում էր ժամանակի հզորագույն պետական միավորումներից մեկը, պատմական կարճ ժամանակամիջոցի ընթացքում՝ 1336-1353 թթ., ապրելով ծանր հոգեվարք, քայքայվեց: Նրա փլատակների վրա ձևավորվեցին մի շարք անկախ ավատական պետություններ, որոնցից առավել հզորագույններն էին Չոբանյանների (1336-1357), Ջելայիրյանների (1340-1432), Մուզաֆարյանների (1313/14-1393) պետությունները: Ի դեպ, սրանք հանդիսանում էին Սասանյան Իրանի արաբական նվաճողների իրանականացված ժառանգորդները: Այս դինաստիայի աչքի ընկնող դեմքերից էր էմիր Մուբարիզ-ադ-դին Մուհամմադը (1313-1359 թթ.), որը 1319 թ. Օլջայթու խանից ստացել էր Յազդի տեղապահի պաշտոնը և ամուսնացել էր մոնղոլական արքայադստեր հետ: Սա բռնակալ ու ագահ մի կառավարիչ էր, որն իր պաշտոնը համատեղում էր քարավանային ճանապարհների վրա ավազակություն անելու հետ: Նրա մոտ ցու-

ցաղրական ու կեղծ աստվածավախությունը զուգակցվում էր սաղիստական դաժանության հետ: Միրխոնդի (XV դ.) և այլ պատմիչների հաղորդման համաձայն՝ հաճախ Մուբարիզ-ադ-դինը կտրվում էր Ղուրանի ընթերցումից, որպեսզի սեփական ձեռքերով գլխատի իր մոտ բերված «հանցագործին», իսկ ապա նորից խորասուզվում էր սուրբ գրքի ընթերցանության մեջ, կարծես թե ոչինչ չէր պատահել: Իր կառավարման շրջանում այդ անագորույն դաժանության տեր մարդը մահապատժի ենթարկեց ոչ պակաս, քան ութ հարյուր մարդու:

1340 թ. Մուբարիզ-ադ-Դինը գրավեց Քերմանի քաղաքը, 1353 թ. էմիր Աբու Իսխակ Ինջուից խլեց Շիրազը, իսկ այնուհետև՝ ողջ Ֆարսը: Նա իրեն ենթարկեց Լուրիսթանի տիրակալներին (1356) և վերջապես 1357 թ. գրավեց Սպահանը: Գերի ընկած Աբու Իսխակ Ինջուն մահապատժի ենթարկվեց: Ինջուիդների պետությունը վերացվեց, և Իրանի ողջ հարավը մտցվեց մուզաֆֆարյանների պետության կազմի մեջ:

Այսպիսով՝ Չոբանյանները, Ջելայիրյանները և Մուզաֆարյանները միմյանց միջև բաժանեցին Իրանի տարածքի մեծ մասը, թեև ժամանակ առ ժամանակ միմյանց դեմ պատերազմների միջոցով վերաձևում էին իրենց տիրույթների սահմանները: Իրանի տարածքում ծնունդ առան նաև մի շարք երկրորդական պետություններ: Այսպես՝ Հյուսիսային Խորասանում իշխանությունը զավթեց մոնղոլական օյրաթ ցեղից սերած էմիր Նովրուզի թոռ, Ջանի-Ղուրբանի ընտանիքի ներկայացուցիչ էմիր Արղունշահը: Այս ընտանիքի տիրույթներն ընդգրկում էին լայնածավալ տարածքներ Սերախս, Աբիվերդ, Նեսա, Թուս, Մեշհեդ, Նիշապուր և այլ քաղաքներով հանդերձ: Խորասանյան էմիրների խմբավորումը իլխան հռչակեց Չինգիզ խանի եղբոր՝ Օթչիգինի ժառանգորդներից մեկին՝ Թուղայ Թիմուր խանին: Վերջինիս իշխանությունը թեև անվանապես ճանաչվում էր ողջ Հյուսիսային և Արևմտյան Խորասանում, սակայն իրական իշխանությունից նա օգտվում էր միայն Գուրգանում: Հարկ է նշել, որ Ջանի-Ղուրբանի ընտանիքի էմիրները Խորասանում ձեռք բերեցին դաժան բռնակալների («զովլեթշահ») համբավ:

Արևելյան Խորասանում դեռևս Հուլաղուիդների ժամանակ ստեղծվեց մի խոշոր վասալական իշխանություն տեղական Կուրտերի դինաստիայի (1245-1389) գլխավորությամբ, որի կենտրոնը Հերաթ քաղաքն էր: Նրա տարածքի մեջ էին մտնում Խորասանի ողջ արևելյան մասը, հյուսիսում՝ մինչև Մերվի օազիսը, Սիսթանը, Զաբուլիսթանը և ողջ Աֆղանստանը՝ մինչև Սուլեյմանյան լեռները: Սակայն առաջին հայացքից այդ մեծ պետությունը լոկ բազմաթիվ ավատական տիրույթների ձևական ռազմավարչական մի միավորում էր: Կորտերի դինաստիայի անմիջական իշխանության ներքո գտն-

վում էին Հերաթի օազիսը և Հուր կոչված լեռնային շրջանը:

Խորասանում վերոհիշյալ պետական կազմավորումներից զատ, սոցիալ-կրոնական շարժման հետևանքով այդ ընդարձակ նահանգի արևմտյան մասում ծնունդ առավ Սերբադարների կամ Սերբադարյան աստվածապետական պետությունը (XIV դ. առաջին կես):

Հուլավյանների պետության քայքայումից հետո Հարավային Իրանում Հուլաղուիդների նախկին վասալները փաստորեն դարձան անկախ: Դրանք էին. Մեծ Լուրի (Լուրիսթանի) աթաբեկները Հազարասպիդների դինաստիայից, որոնց մայրաքաղաքը Իդաջ քաղաքն էր: Այս դինաստիան տիրում էր նաև Խուզիսթանի մի մասին: Հարավային Իրանում անկախ էին նաև Փոքր Լուրի աթաբեկները, Ֆարսի տիրակալ ինջուիդները (1336-1357), որոնց տիրույթների մեջ էին մտնում նաև Սպահանը, Շեբանգարեի Ֆազլուիդ աթաբեկները և Հորմուզի ծովային պետությունը Պարսից ծոցում: Հին Հորմուզը գտնվում էր ցամաքի վրա՝ Պարսից ծոցից Հնդկական օվկիանոս տանող ճանապարհի ելքի մոտ: Արդեն XIII դ. այն հանդիսանում էր Իրանի համար Հնդկաստանի հետ միջնորդ առևտրի գլխավոր կետ: Աֆղանստանում քոչող և հուլաղուիդյան իլխանների իշխանությունը չճանաչող մոնղոլների այսպես կոչված, նիքուդերիական հորդայի կողոպտչական արշավանքները ստիպեցին Հորմուզի տիրակալին քաղաքը և նավահանգիստը տեղափոխել անապատային, անջուր, արևակեզ ու մերկ Ջերաուն կղզյակը (հին Հորմուզից 20 կմ հեռավորության վրա): Հնդկաստանի և Չինաստանի հետ միջնորդ առևտրի հսկայական շրջանառության և մարգարտի որսից ստացվող խոշոր եկամուտների շնորհիվ Նոր Հորմուզի տիրակալները իրենց տրամադրության տակ ունեին վիթխարի նյութական միջոցներ, վարձու զորքեր և ուժեղ ռազմական նավատորմ (ավելի քան 300 նավեր): Արաբական ծագում ունեցող Հորմուզի տիրակալները իրենց ենթարկեցին Պարսից ծոցի Քայս, Քիշմ, Բահրեյն և այլ կղզիները, Քերմանի և Ֆարսի առափնյա շրջանների շատ կետեր և Պարսից ծոցի ողջ արաբական ափը՝ Քալխաթով ու Օմանով հանդերձ:

Անշուշտ, Հուլաղուիդների պետության քայքայումը դեռևս չէր նշանակում ողջ Իրանի տարածքում մոնղոլական տիրապետության վերացում, քանի որ մի շարք նահանգներում իշխանությունը շարունակեց մնալ մոնղոլական և բյուրքական ռազմաքոչվորական ազնվականության ձեռքերում:

Հետագայում մոնղոլները Իրանում աստիճանաբար ձուլվեցին մասամբ այնտեղ ապրող բյուրքերի, մասամբ էլ իրանցիների հետ:

4. ԻՐԱՆԸ ԹԱՄՈՒՐՅԱՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ: ԹԱՄՈՒՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ

XIV դ. կեսերին երբեմնի հզոր Չաղաթայական պետությունը, որն իր մականի տակ միավորել էր միջինասիական երկրամասերը, պառակտվեց երկու հակամարտ մասերի: Դրանցից մեկը Մողոլիսթանն էր, որտեղ իշխում էր քոչվորական կյանքով ապրող մոնղոլական ցեղերի ավագանին, իսկ մյուսը՝ Մավարաննահրը, ուր տեղի էր ունեցել մերձեցում արդեն կիսով չափ նստակյաց դարձած մոնղոլա-թյուրքական ցեղերի ավագանու և տեղաբնիկ պարսկական ավատատերերի միջև:

Ահա այս միջավայրում քաղաքական ասպարեզ է իջնում մոնղոլա-թյուրքական առաջնորդ Թամուրը կամ Լանկ (կաղ) Թամուրը, որը շուտով նոր աղետի էր մատնելու Արևմտյան Ասիան: Թարաղայի որդի Թամուրը ծնվել է Քեշղ քաղաքում (ժամանակակից Ուզբեկստանում Շահրիսաբզ), ուր նրա հայրը՝ Թարաղայը, սերել էր մոնղոլական հին բարլաս տոհմից: Պարսկա-արաբական պատմագրությունը նրան համարում է զտարյուն մոնղոլ և Չինգիզ խանի տոհմի շառավիղ, սակայն կա նաև տեսակետ այն մասին, որ նա կարող էր լինել թյուրք: Այս տեսակետը հիմնավորվում է այն փաստարկով, որ Թամուրի ծնվելու պահին բարլասների տոհմն արդեն թյուրքականացվել էր:

Լանկթամուրը սկզբում եղել է ավազակախմբի ղեկավար: XIV դ. երկրորդ կեսին, երբ նա իջնում էր քաղաքական կյանքի ասպարեզ, Չինգիզ խանի որդու՝ Չաղաթայի սերունդը Միջին Ասիայում այլևս չուներ միահեծան իշխանություն: Մոնղոլական այդ ուլուսը վաղուց արդեն քայքայվել ու բաժանվել էր մեծ ու փոքր անկախ կամ կիսանկախ իշխանությունների: Ծառայության մեջ մտնելով Չաղաթայան տոհմի մի աննշան խանի մոտ՝ Թամուրը ծավալում է երկարատև քաղաքական պայքար՝ նպատակ ունենալով վերականգնել Չաղաթայան նախկին հզոր պետությունը: Անցնելով աներևակայելի արկածների միջով՝ 1370 թ. Թամուրը ղուռուլթայի կողմից ընտրվեց միջինասիական ուլուսի մեծ էմիր: Այդ նորաստեղծ պետության մեջ պահպանվեցին մոնղոլական պետության ավանդույթները: Թամուրն այդ պետությունը կառավարեց 1370-1405 թթ.: Այդ խիզախ զորահրամանատարը միաժամանակ տիպիկ արևելյան խորամանկ ու զգույշ մի քաղաքագետ էր: Նա հիանալի հասկանում էր, որ ավատատերերի հավատար-

մությունն ու լոյալությունն ապահովելու միակ ճանապարհը զավթումներ կատարելն ու նոր հողերի և հարուստ ռազմական ավարի ճեռք բերումն է: Ուստի կազմակերպեց աշխարհավեր կողոպտչական արշավանքներ դեպի մոտ և հեռու երկրներ: Ընդամենը մի քանի տարվա ընթացքում նրան հաջողվեց կործանել ու իրեն ենթարկել Ջելայիրյանների, մասամբ նաև Մուզաֆարյանների պետությունները, ինչպես նաև Անդրկովկասի երկրները, Ղփչաղական տափաստանը և Ղրիմը (1381-1393 թթ.): Ընդ որում՝ նա երկու անգամ գրավեց Բաղդադը (1393 և 1401 թթ.): Թամուրը ճեռնարկեց ավերիչ արշավանք դեպի Հնդկաստան (1398-1399 թթ.), իսկ 1402 թ. Անգորա (ժամանակակից Անկարա) ամրոցի մոտ պարտության մատնեց օսմանյան սուլթան Բայազեդ Ա-ին և նրան գերի վերցրեց: Պատմվում է, որ գերության մեջ գտնվող սուլթանին Թամուրը մշտապես նվաստացնում էր՝ շղթայակապ վիճակում երկաթյա վանդակի մեջ տեղափոխելով վայրից վայր և ստիպելով, որ նա կռանա, և ոտքը դնելով մեջքին՝ Թամուրը հեծնի իր ձին: Սուլթանին կրկնակի նվաստացնելու համար Թամուրը ստիպում էր նրա կնոջը՝ սերբուհի Դեսպինային, որպեսզի վերջինս մերկ վիճակում խնջույքների ժամանակ ծառայի իրեն: Չդիմանալով այդ տառապանքներին՝ ութ ամսից հետո Բայազեդը կաթված ստացավ ու մահացավ: Մեկ այլ վարկածով՝ ինքնասպանություն գործեց:

Իր նվաճողական արշավանքների հետևանքով Թամուրը ստեղծեց մի կայսրություն, որի տարածքն իր մեջ ներառում էր Վոլգա և Յայիկ (Ուրալ), Օբ և Իրթիշ, Խուանխե և Յանցզի, Հինդոս և Գանգես, Եփրատի ու Տիգրիս գետերի հովիտները:

Դեռևս իր կենդանության օրոք Թամուրն իր որդիների միջև բաժանեց նվաճված հողերը. Օմար-շեյխին բաժին հասան «Հուլաղուի թագավորությունը» և Ֆարսը. Միրան-շահին՝ Արևմտյան Իրանը, Հայաստանը, Ատրպատականը և Արաբական Իրաքը՝ Թավրիզ մայրաքաղաքով. Շահրուհին՝ Խորասանը, Գորգանը, Մազանդարանը և Սիսթանը՝ Հերաթ կենտրոնով: Ուլուսներ ստացան նաև Թամուրի թոռները: Խալիլ-սուլթանը դարձավ Համադանի կառավարիչը, Փիր-Մուհամմադ իբն Օմար-շեյխը՝ Շիրազի, Ռուստամը՝ Սպահանի, Աբու-Բաքրը՝ Բաղդադի, Խալիլ-սուլթանը՝ Անդրկովկասի ու Արևելյան Անատոլիայի, իսկ Փիր Մուհամմադ իբն Ջահանգիրը նստեց Ղազնիների գահի վրա:

Թամուրի ասպատակություններն ու նվաճումներն ուղեկցվում էին ահավոր ավերածություններով, կողոպուտներով ու գազանություններով, նվաճված երկրների ժողովուրդների նկատմամբ զանգվածային ահաբեկչությամբ: Ի տարբերություն Չինգիզ խանի՝ իր զավթողական արշավանքներով Թամուրը հետապնդում էր որոշակի տնտեսական

նպատակներ: Նա գիտակցում էր, որ եվրոպա-ասիական առևտրի ցամաքային քարավանային ճանապարհների նկատմամբ հսկողություն սահմանելու համար անհրաժեշտ է տիրել Առաջավոր Ասիայի երկրներին և Անդրկովկասին: Իսկ հյուսիսային քարավանային ճանապարհները, որոնք անցնում էին մերձսևծովյան ու մերձկասպյան տափաստաններով, այդ տարածքները գրավելուց հետո Թամուրը մտադիր էր առևտրի համար փակել: Հենց այդ նպատակով նա ավերեց խոշոր առևտրական քաղաքներ Ուրգենչը, Մարայ-Բերկեն, Աստրախանը, Ազովը և այլն: Դրանից հետո մոտ 30 տարի ողջ եվրոպա-ասիական առևտուրն ուղղվեց դեպի տրանսիրանական քարավանային ճանապարհները՝ աննախադեպ աշխուժություն հաղորդելով տեղական վաճառականների, այդ թվում նաև հայ խոջաների միջազգային առևտրին:

Թամուրի զորքերի կողմից Իրանի նվաճումը սկսվեց 1381 թ.: Նախ ընկճվեցին Հերաթի Կուրթ մելիքները: Նույն թվականին ընկավ Սաբզավարը: Թամուրն այդ երկու քաղաքների և նրանց հարակից շրջանների վրա դրեց հսկայական ռազմատուգանք: Միաժամանակ նա, Հերաթի տիրակալ Ղիյաս-ադ-դին Կուրթին և Սաբզեվարի տիրակալ Ալի Մուայյադին նշանակելով իրենց տիրույթների անվանական տիրակալներ, նրանց, որպես սպատանդներ պահում էր Սամարղանդի իր արքունիքում: Ընդ որում՝ մի քանի տարի հետո նա ազատվեց այդ երկուսից էլ՝ առանց որևէ պատճառի մահվան դատապարտելով նրանց: Թամուրի հաջորդ քայլը հանդիսացավ Արևմտյան Խորասանում Սարբեդարյան պետության ոչնչացումը, որը 1383 թ. ապստամբություն էր բարձրացրել իր դեմ: Թամուրի հաշվեհարդարը ապստամբների հետ ուղղակի սահմռկեցուցիչ էր. 2000 մարդու նա կենդանի թաղել տվեց իր կողմից կառուցվող աշտարակի պատերի մեջ: Այնուհետև, նույն 1383 թ. նա նվաճեց Սիսթանն ու Ղանդահարը, դրանք ավերեց ու ամայացրեց և սպանված մարդկանց գանգերից կառուցեց աշտարակներ: 1384 թ. Թամուրը նվաճեց Գուրգանը՝ այնտեղ ոչնչացնելով էմիր Վելիի պետությունը: Իսկ 1385 թ. ընթացքում նրան հաջողվեց իրեն ենթարկել Հյուսիսային Իրանի մի մասը՝ Դամղանից մինչև Սուլթանիե:

Ջելայիրյանների պետությունը, որը ծվատվում էր ներքին երկպառակություններից, ի վիճակի չէր դիմադրելու Թամուրին. առավել ևս, որ Ոսկե Հորդայի Թոխթամիշ խանը նույնպես, վախենալով, որ Անդրկովկասի և Արևմտյան Իրանի երկրները կանցնեն Թամուրի իշխանության տակ, 1385թ. ձեռնամուխ եղավ ավերիչ ասպատակության: Թոխթամիշի զորքերը վերցրին Թավրիզը և ավերի ու ավարի մատնելով այն, հետ վերադարձան՝ իրենց հետ տանելով 90 հազար գերի և հարուստ ավար:

Թոխթամիշի այդ արշավանքից հետո Լանկթամուրը մեծ զորքով մտավ Ատրպատական, 1386 թ. գարնանը գրավեց Թավրիզը՝ անխնա կողոպուտի մատնելով այն: Սուլթան Ահմադ Ջելայիրյանը, որն ատելի էր բնակչության համար, դիմեց փախուստի՝ իր տիրույթները թողնելով Թամուրին: Վերջինս, Թավրիզից առաջ անցնելով, նույն 1386 թ. դիմեց դեպի հյուսիս-արևմուտք և Նախիջևանի վրայով արշավեց Հայաստան ու Վրաստան: Ժամանակակից աղբյուրները սրտաճմլիկ նկարագրություններ են պահպանել Հայաստանի զույգ հատվածներում Լանկ Թամուրի գործած ավերածությունների, բնակչության սրածության, գերեվարության, նյութական ու հոգևոր արժեքների կողոպուտի ու ոչնչացման մասին:

Անդրկովկասից Թամուրը շարժվեց Մուզաֆարյանների պետության դեմ և 1387 թ. գրավեց Սպահանն ու նրա վրա դրեց ծանր ռազմատուգանք: Այդ նույն թվականին Թամուրի զորքերը Սպահանում ճնշեցին երիտասարդ մի դարբնի կողմից բարձրացված ապստամբությունը: Յուրաքանչյուր զինվորի հրամայված էր բերել որոշակի թվով կտրված մարդկային գլուխներ: 70 հազար սպանված սպահանցիների գանգերով բռնավորը կառուցեց մի աշտարակ ի ցույց բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեին դուրս գալ իր դեմ: 1392 թ. Թամուրն անողոք դաժանությամբ ճնշեց Գորգանում բռնկած ապստամբությունը, իսկ ապա վերացրեց Մազանդարանի Սեյիդների պետությունը: Լանկ Թամուրն ամբողջությամբ նվաճեց Մուզաֆարյանների և Ջելայիրյանների պետությունները: Վերջին ջելայիրյան սուլթան Ահմադը իր կյանքը փրկելու համար փախուստի դիմեց:

1393 թ. Թամուրն ավարտեց Իրանի ողջ տարածքի նվաճումը:

Նորանվաճ այդ հսկա երկրի հողերը նա սկսեց բաժանել իր զորքին, հատկապես նրա հրամանատարությանը: Իր կողմն անցած իրանական խոշոր ավատատերերին ևս նա առատությամբ հատկացրեց հողեր՝ որպես լենային տիրույթ կամ սոյուրղալ: Թամուրը եռանդուն միջոցառումներ էր իրականացնում նաև իր նվաճած երկրների էթնիկական կազմը փոխելու ուղղությամբ: Նա, օրինակ, Անդրկովկասից և հատկապես Հայաստանից, ինչպես նաև Իրանից, գերիների անթիվ- անհամար բազմություն էր տարել Մ՛ւջին Ասիա և գլխավորապես Սամարղանդ: Իսկ Ատրպատականում և Անդրկովկասում բնակեցրեց թյուրքալեզու վաչկատուն ցեղերի, որոնց իր հետ բերել էր Միջին Ասիայից: Ի դեպ, նա Խորասանից Ղարաբաղ գաղթեցրեց մեծ թվով թյուրքական ցեղեր՝ այդ երկրամասի ազգային կազմն արհեստականորեն փոխելու համար: Արաբ պատմիչ Իբն Արաբշահը նկատում է, որ Լանկ Թամուրի սովորությունն էր անընդհատ փոփոխել զորքերի ու ժողովուրդների բնակության վայրերը: Իրանի ողջ տարածքը նա բաժանեց երկու վարչական միավորների և դրանք հատկացրեց իր որդիներին:

Թամուրի տիրապետությունն Իրանում ուղեկցվեց մեծ ավերածություններով, կողոպուտով ու հալածանքներով: Այդ արյունոտ բռնատիրական վարչակարգը, որը խարսխված էր ահի ու սարսափի վրա, նշանակալիորեն դանդաղեցրեց Իրանի սոցիալական, տնտեսական ու քաղաքական առաջընթացը: Իրավացի է անվանի պատմաբան Հակոբ Մանանդյանը, երբ նշում է. «Չաղաթայ այս աշխարհակալի արշավանքները և տիրապետությունը Մերձավոր Արևելքում տևեցին ուղիղ քսան տարի (1386-1405), բայց սրա հասցրած հարվածները իր նվաճած երկրներին այնքան ծանր էին, որ մնացին երկար դարերով անդարմանելի: ...Ավերածությունները և բնակչության կոտորածներն ու գերեվարությունները սովորական երևույթ էին դառել Արևմտյան Ասիայում դեռևս նախորդ դարերում, սակայն Լանկթամուրի ավերածությունները և գազանությունները, անկասկած, բոլորից ամենասոսկալին էին»:

Լանկ Թամուրը մեռավ 1405 թ. փետրվարին՝ 70-ամյա հասակում, դեպի Չինաստան ձեռնարկած մեծ արշավանքի ճանապարհին: Նրա մահվանից հետո մեծ ու ընդարձակ աշխարհակալությունը, որը չուներ միասնական տնտեսական հիմք, սկսեց արագորեն քայքայվել: Լանկ Թամուրն իրեն հաջորդ էր նշանակել իր թոռանը իր մեծ որդի Ջահանգիրի որդի Փիր-Մուհամմադին: Սակայն նրա զորքը թագաժառանգ ու հաջորդ հայտարարեց նրա թոռ Խալիլին: Հանուն գերագույն իշխանության ու սուլթանի տիտղոսի՝ Խորասանում սկսվեց արյունոտ պատերազմ Լանկ Թամուրի որդի սուլթան Շահրուհի և Թամուրի թոռ (Միրանշահի որդի) պատանի Խալիլ-սուլթանի միջև, որն ավարտվեց առաջինի հաղթանակով: Հաղթանակած Շահրուհը (կառավարել է 1405-1447 թթ.) եռանդուն ջանքեր էր գործադրում պահպանելու համար իր իշխանությունը Միջին Ասիայի և Իրանի մեծ մասի նկատմամբ: Թեև դա նրան հաջողվեց, սակայն թամուրյաններից Հոսեյին Բայքարիի կառավարման շրջանում (1469-1506) ավատական երկպառակությունների հետևանքով Թամուրյանների պետությունը քայքայվեց ու բաժանվեց երկու մասի՝ միջինասիական և խորասանյան:

Խլրտումները և արյունահեղ ընդհարումներն ավելի երկարատև ու կատաղի էին Լանկ Թամուրի պետության արևմտյան մասում, որտեղ նվաճված երկրների նախկին տերերը ոտքի ելան և համառ պայքար ծավալեցին Թամուրյան Միրանշահի և նրա որդիների դեմ, որոնք իշխում էին արևմուտքում:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՂԱՐԱ-ՂՈՅՈՒՆԼՈՒ ԵՎ ԱՂ-ՂՈՅՈՒՆԼՈՒ ԹՈՒՐՔՄԵՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ

Արևմտյան Իրանում և Ատրպատականում Լանկ Թամուրի մահվանից հետո իշխանության համար թեժ պայքար ծավալվեց Միրանշահի և նրա որդի Միրզա Օմարի միջև: Եկել էր պահը, երբ, Միրանշահի կարծիքով, «կարելի էր ուղղել անարդարությունը»: Վերջինս հավատացած էր իր հաղթանակի մեջ նաև այն պատճառով, որ Թամուրի մյուս որդին, այսինքն՝ Միրանշահի եղբայր Շահռուխը, որը Խորասանում պայքար էր մղում Միրանշահի որդիներից մեկի՝ Խալիլի դեմ, իր եղբորը խոստացել էր ամեն տեսակի օգնություն: Իսկ 1405 թ. Միրզա Օմարի կողմից բանտ նետված Աբուբաքր եղբայրը նույնպես, բանտից փախչելով, միացել էր իր հորը: Հայր և որդի միացյալ ուժերով շարժվում են մեկը իր հարազատ որդու, մյուսը՝ հարազատ եղբոր դեմ, որի նստավայրը գտնվում էր Ատրպատականում: Մեծ ճակատամարտ տեղի չի ունենում, որովհետև զորքը լքում է Միրզա Օմարին: Սուլթանիեում Միրանշահը հայտարարվում է փաղիշահ:

Շուտով, սակայն, իրադարձությունների մեջ մտնում է կտրուկ շրջադարձ շնորհիվ այն բանի, որ գահակալական պայքարի ասպարեզ է մտնում թուրքմեն Ղարա-Յուսուֆը, որն արևմտյան օղուզների քոչվորական ցեղերից մեկի՝ ղարա-ղոյունլու («Սև ոչխար») ցեղային միության առաջնորդն էր: Սա, Ջելայիրյան սուլթան Ահմադի հետ միասին Լանկ Թամուրի վերջին արշավանքի ժամանակ պարտություն կրելով Միջագետքում՝ ապաստանել էր Եգիպտոսում՝ որպես քաղաքական վտարանդի:

Թամուրի մահվանից հետո նրանք երկուսն էլ ազատ են արձակվում և վերադառնալով իրենց հայրենի երկրները՝ պատրաստվում են պայքարի թամուրյանների դեմ՝ վերահաստատվելու համար իրենց նախկին իշխանություններում:

Ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին, Ղարա-Յուսուֆը նախ գալիս է Բաղեշ, ուր ամիր Շարաֆի որդի Շամս-ադ-դինը նրան օգնություն է հասցնում զենքով, պարենամթերքով և պատերազմական ամեն տեսակի հանդերձանքով: Այնուհետև նա գնում է Ուստան, ուր նրան հնազանդություն են հայտնում նաև Եզդին ամիրան ու նրա Մելիք որդին: Ղարա-Յուսուֆը, ընդարձակելով իր իշխանության սահմանները մինչև Երզնկա, պարտության է մատնում Օմարին, նրա հորը՝ Միրանշահին, ու եղբորը՝ Աբուբաքրին, և գրավում Թավրիզը, այնուհետև ամբողջ Ատրպատականը՝ մինչև Արդաբիլ և Սուլթանիե: Նրա տիրապետության տակ է անցնում նաև Հայաստանի մեծ մասը: Այնուհետև նրա նվաճումները ծավալվում են Միջագետքի և Փոքր Ասիայի կողմը: 1409 թ. նա գրավում է ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Մերդին քաղաքամրությունը և նրա շրջակայքը: Այդ նվաճումների հետևանքով արևմուտքում դարա-ղոյունլու («սև ոչխար») օղուզական քոչվոր թուրքմենները դարձան աղ-ղոյունլու («ապիտակ ոչխար») թուրքմենների անմիջական հարևան: Թեև նրանք ցեղակից էին, բայց միմյանց հետ գտնվում էին անհաշտ թշնամանքի մեջ: Այս երկու ցեղերն ունեին նաև կրոնադավանաբանական սուր հակասություններ. դարա-ղոյունլուները շիիթներ էին, իսկ աղ-ղոյունլուները՝ սուննիներ: Աղ-ղոյունլու դինաստիայի կառավարիչները «սև ոչխարավոր» օղուզների դեմ պայքարում հանդես էին գալիս որպես Թամուրի և Շահրուխի դաշնակիցներ:

Օգտվելով այն հանգամանքից, որ իրենց թշնամի լանկթամուրյանների միջև դեռ շարունակվում էին ներքին երկպառակությունները, ղրաղով իսկ ապահով դարձնելով իր թիկունքը՝ 1410թ. Ղարա-Յուսուֆը ռազմերթի ելավ աղ-ղոյունլուների առաջնորդ Ղարա Յուլուք Օսմանի դեմ, որն իր ամենաուժեղ հակառակորդն էր արևմուտքում: Բախումը տեղի ունեցավ 1410 թ. Մշո դաշտում: Տանելով վճռական հաղթանակ, Ղարա-Յուսուֆը այնուհետև պաշարեց Դիարբեքիրը և Արղնին: Սակայն երբ այդ քաղաքները հանձնվելու մոտ էին, միջամտեց Երզնկայի Փիր-Օմար ամիրան և հաշտեցրեց հակառակորդներին:

Օգտվելով Ղարա-Յուսուֆի բացակայությունից՝ Ջելայիրյան սուլթան Ահմեդը փորձում է ազատվել իր «դաշնակցի» տհաճ ընկերակցությունից և դաշնակցելով Շիրվանշահ Իբրահիմի հետ՝ գրավում է Թավրի-

զը: Լուր ստանալով այդ մասին՝ Ղարա-Յուսուֆը շուտափույթ հաշտություն է կնքում աղ-ղոյունլուների հետ, սրընթաց արշավով վերադառնում է Ատրպատական և 1410 թ. օգոստոսի 30-ին տեղի ունեցած ճակատամարտում պարտության է մատնում ապստամբներին: Ղարա-Յուսուֆը հրամայում է խեղդամահ անել սուլթան Ահմադին և սրի քաշել նրա որդիներին: 1411 թ. նա Ջելայիրյաններից գրավում է նաև Բաղդադը: Այսպիսով, Ջելայիրյանների պետության տարածքների մեծագույն մասը՝ Ատրպատականը, Հայաստանը և Արաբական Իրաքը, Ղարա-Յուսուֆը միացրեց ղարա-ղոյունլուների նորաստեղծ պետությանը (1410-1468):

Ղարա-Յուսուֆը գահին անվանապես հանձնեց իր Փիր-Բուդաղ որդուն, իսկ ինքը Թավրիզից փոխադրվեց Հայաստանի կենտրոնական շրջաններից մեկը՝ Վաղարշակերտ (Ալաշկերտ), որը հանդիսանում էր ղարա-ղոյունլու ցեղախմբի ամենառազմունակ Բահարլու ցեղի քոչավայրը: Ցեղի առաջնորդը ցանկանում էր ապրել իր ցեղակիցների միջավայրում: Սակայն չդավաճանելով քոչվորական կենցաղին ու հոգեբանությանը՝ նա անընդհատ գտնվում էր շարժման ու պատերազմների մեջ: 1416 թ. Ղարա-Յուսուֆը հարձակվեց Ախալցխա քաղաքի վրա, անխնա կոտորեց նրա բնակչությանը, ավերեց այն և վերցնելով հարուստ ավար ու անթիվ քանակությամբ գերիներ՝ վերադարձավ Բագրևանդ գավառի իր Վաղարշակերտ նստավայրը: 1418 թ. նա Ամիդ-Դիարբեքիրի կողմով ներխուժեց Հյուսիսային Միջագետք, Հռոմկլայի մոտ հաղթեց իր ախոյան Ղարա-Յուսուֆ Օսմանին և հալածելով նրան՝ մտավ Ասորիք (Սիրիա): Սակայն այստեղ նա աչքի ընկնող հաջողություն չունեցավ և լսելով իր Փիր-Բուդաղ որդու մահվան լուրը՝ անմիջապես ետ դարձավ: Շուտով նրան սպասում էին այլ փորձություններ: Գնալով ղարա-ղոյունլուների հարաբերությունները Թամուրյանների հետ դառնում էին շեշտված քշնամական: Թամուրյանների պետությունն այդ ժամանակ սահմանափակված էր Միջին Ասիայով, Խորասանով և Իրանի հարավային և արևելյան մասերով (մինչև Սեֆիդ-րուդ գետը և Փուշթ-ի քուհ-ի լեռները): Ի՛ուլթան Շահռուխը Թամուրյան պետության մայրաքաղաք էր դարձրել Հերաթը, որը XV դ. վերածվեց խոշոր առևտրաարհեստավորական քաղաքի և մշակութային կենտրոնի: Այստեղ՝ Շահռուխի պալատն էին գալիս չինական դեսպանություններ: Ինքը ևս դեսպանություններ էր ուղարկում Չինաստան, Հնդկաստան և Օսմանյան թուրքերի մոտ:

Ի տարբերություն Լանկ Թամուրի՝ սուլթան Շահռուխը աշխատում էր հենվել ոչ թե մոնղոլա-թյուրքական քոչվորների, այլ նստակյաց իրանական ազնվականության, առավելապես քաղաքացիական բյուրոկրա-

տիայի և հոգևորականության վրա:

Թեև Շահռուխը հրաժարվել էր նոր նվաճումներից և աշխատում էր իր ձեռքերում պահել միայն Իրանը և Միջին Ասիան, սակայն նա քաջ գիտակցում էր, թե ինչ վտանգ են ներկայացնում ղարա-ղոյունլուները իր պետության համար: Ուստի նա մղեց երեք պաշտպանողական պատերազմ ղարա-ղոյունլուների դեմ՝ ձգտելով թույլ չտալ նրանց հետագա նվաճողականությունն Իրանում: Սակայն ավելի շատ իր հակառակորդների դեմ պայքարում Շահռուխն օգտագործում էր ճկուն դիվանագիտությունը, նրբին սադրանքները՝ չխորշելով նաև կաշառքից:

1419 թ. աղ-ղոյունլուների առաջնորդ Օսմանը անակնկալ կերպով գրավում է Երզնկան և սպանում նրա իշխան Փիր Օմարին, որը գտնվում էր Ղարա-Յուսուֆի գերիշխանության տակ: Նրա համարձակ այս ելույթը, ըստ երևույթին, համաձայնեցված էր Շահռուխի հետ, կամ նրանց միջև գոյություն ուներ գաղտնի պայմանավորվածություն: Հօգուտ այդ տեսակետին է խոսում այն, որ շուտով զինական մեծ ուժերով արևելքից արշավեց նաև Շահռուխը, որը 1420 թ. մտավ Ատրպատական և մոտեցավ Թավրիզին: Մայրաքաղաքի վրա հարձակումը կանխելու համար Ղարա-Յուսուֆը շտապեց իր զորքերով դուրս գալ թշնամու դեմ: Հակառակորդները միմյանց հանդիպեցին Թավրիզի և Միանեի միջև գտնվող Ուջան կոչված վայրի մոտ: Մինչև ճակատամարտի սկսվելը՝ Ղարա-Յուսուֆն այստեղ հանկարծամահ եղավ (1420 թ. նոյեմբերին), և նրա զորքերը հապշտապ հետ նահանջեցին ու ցրվեցին:

Ղարա-Յուսուֆի Սքանդար (Իսքանդար) որդին Բաղդադից անմիջապես շարժվում է Շահռուխին ընդառաջ և գլուխ կանգնելով իր հոր ցիրուցան եղած բանակին ու հավաքելով նաև նոր զորք՝ 150- հազարանոց բանակով մտնում է Բագրևանդ: Հենց այստեղ՝ Ալաշկերտի դաշտում, տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ (1421 թ. օգոստոսի 1-ին), որն ավարտվեց ղարա-ղոյունլուների խայտառակ պարտությամբ: Իսքանդարն ու նրա եղբայր Սպանդիարը (Ասպահանը) իրենց զորաբանակի սակավաթիվ մնացորդների հետ փախչում են Մերդինի և Մոսուլի կողմերը, իսկ Շահռուխը, որին հպատակվել էին տեղական ամիրաները, իր զորաբանակի հետ վերադառնում է Խորասան՝ իր հետ տանելով մեծ թվով գերիներ:

Շահռուխի մեկնելուց հետո Բաղեշի կողմերից հայտնվում է Ղարա-Յուսուֆի որդի Սպանդիարը՝ նպատակ ունենալով տիրել Հայաստանին ու Ատրպատականին: Նրան հաջողվում է գրավել նաև ղարա-ղոյունլուների մայրաքաղաք Թավրիզը: Սակայն շուտով Բաղդադի կողմերից նրա դեմ է գալիս մեծ եղբայր Իսքանդարը, որը նրան վռնդում է Ատրպա-

տականից ու Հայաստանից և անցնում իշխանության գլուխ: Նրան հաջողվում է վերահաստատել ղարա-ղոյունլուների պետությունը՝ իր նախկին սահմաններով: Ժամանակակից մի հիշատակագիր հայտնում է, որ նա տիրել է «Պարսից և Բաբելացւոց, Հայոց և Միջագետաց Ասորւոց, յԱրարատեան տանէէն Հայոց՝ մինչ յԵրզնկայն, ի Մերդին, ի Բաղդադ, ի Սուլթանիայ և ի Գանձակ շահաստանն Թաւրէզ և մինչ ի գետն Քուռ»:

Աղբյուրների վկայությամբ՝ Իսքանդար ղարա-ղոյունլուն ձգտում էր ստեղծել կենտրոնաձիգ ուժեղ պետություն: Սակայն քանի որ իր այդ ձգտումը հակասում էր թուրքմենական ռազմաքոչվորական ազնվականության շահերին, Իսքանդարն աշխատում էր հենվել «երրորդ ուժի», այդ թվում նաև հայ էքզիկական տարրի վրա: Պատահական չէ, որ նա իրեն անվանում էր «շահ-ի Արման» (քագավոր հայոց):

Արտաքին թշնամիների մեջ Իսքանդարի համար ամենավտանգավորը շարունակում էին մնալ թամուրյանները, որոնց հետ բախումը նա համարում էր անխուսափելի: Ընտրելով «Լավագույն պաշտպանությունը հարձակումն է» մարտավարությունը՝ 1426 թ. Իսքանդարը մեծ բանակով շարժվեց դեպի Ուրմիա, գրավեց այդ քաղաքը և նրա պաշտպաններին, որոնք Շահռուխի կողմնակիցներն էին, չարաչար կերպով պատժեց: Ի դեպ, նա վերջ տվեց նաև Արտազի (Մակվի) հայկական իշխանությանը, որը գտնվում էր կաթոլիկ հայ ավատատեր Սոյուղաթմիշի ձեռքում: Այնուհետև Իսքանդարի զորքերը գրավում են Սուլթանիե, Զենջան ու Ղազվին քաղաքները:

1426 թ. այս անցքերը, անշուշտ, պարզ ու համարձակ մարտահրավեր էին՝ անխուսափելի դարձնելով թամուրյանների և ղարա-ղոյունլուների միջև բախումը: 1428 թ. հոկտեմբերին Իսքանդարի դեմ Շահռուխի զորահրամանատարներից մեկը սկսում է պատերազմական գործողությունները, իսկ 1429 թ. մայիսին գլխավոր ուժերով հակառակորդի դեմ հանդես է գալիս ինքը՝ Շահռուխը: Ճակատամարտը տեղի ունեցավ Սալմաստի մոտ և ավարտվեց Իսքանդարի զորքի ծանր պարտությամբ: Զինվորներից շատերը, որոնց մի մասը քրիստոնյաներ էին և հայեր, գերի ընկան և որպես ստրուկներ քշվեցին հեռավոր երկրներ: Կողմերի միջև կռիվները շարունակվեցին մինչև 1430 թ.: Այդ նույն թվականի գարնանը, ղարա-ղոյունլուների պետության գահը հանձնելով Իսքանդարի եղբայր Աբու-Սայիդին, Շահռուխը վերադարձավ Սամարղանդ:

1431 թ., սակայն, Իսքանդարն սպանում է իր եղբորը և վերագրավում գահը: 1434 թ. նա պատժիչ արշավանք է կազմակերպում Շիրվան, որի տիրակալ շիրվանշահ Խալիլուլլահը գտնվում էր Շահռուխի գերիշխա-

նության ու հովանավորության տակ: Հենց սրա խնդրանքով էլ 1435 թ. Շահռուխը երրորդ անգամ արշավանք է սկսում Իսքանդարի դեմ: Շահռուխն իր բանակով մտավ Սյունիք և պաշարեց Երնջակը, ուր գտնվում էին Իսքանդարը և նրա մոտ ազգականները: Իսքանդարին հաջողվում է փախչել պետության արևմտյան շրջանները: Ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին, ամրացում պաշարված Իսքանդարի մայրն ու եղբայրը Շահռուխին ուղարկում են հարուստ ընծաներ, ոսկի ու արծաթ, և խոստանում նրան, որ եթե հնայ ունենան, հենց իրենք կսպանեն Իսքանդարին:

Ի վերջո, Իսքանդարի Ջհանշահ եղբայրը, որը հնազանդվել էր Շահռուխին, նրա ձեռքից ստանում է ղարա-ղոյունլուների գահը, իսկ 1436թ. գարնանը թամուրյանները վերադառնում են Խորասան:

Իշխանության հանձնումը Ջհանշահին պատճառ դարձավ Ղարա-Յուսուֆի ընտանիքում ներքին երկպառակությունների համար: Պետության արևմտյան շրջաններում Իսքանդարը տենդագին նախապատրաստություններ էր տեսնում Ջհանշահի դեմ հանդես գալու և իշխանությունը վերստին գրավելու համար: Կռվերի միջև բախումն սկսվեց 1437 թ.: Սկզբում հաջողությունը Իսքանդարի կողմն էր, սակայն հարատև պատերազմներից հոգնած և ծանծրացած՝ նրա զորքերն անցան Ջհանշահի կողմը՝ ոլորշելով պատերազմի ելքը: Իսքանդարը պատսպարվեց Երնջակի բերդում՝ պայքարը շարունակելու վճռականությամբ, սակայն սպանվեց հարազատ որդու՝ Շահ-Քուբադի կողմից:

Ղարա-ղոյունլու տիրակալներից ամենաաչքի ընկնող դեմքը, անտարակույս, սուլթան Ջհանշահն էր (1436-1467), որի գահակալության տարիները ժամանակակիցների կողմից ստացել է երկակի գնահատական՝ ծանր հարկապահանջության ու կեղեքման տարիներ և միաժամանակ հարաբերական խաղաղության տարիներ: Կասկածից վեր է, որ նա ավելի քաղաքակիրթ էր, քան իր եղբայր Իսքանդարը: Նրան հեղինակ են համարում մի շարք միստիկական պոեմների, որոնք գրված են թուրքերեն և պարսկերեն լեզուներով: Նա կառուցել է Թավրիզի ամենագեղեցիկ մզկիթներից մեկը՝ հռչակավոր երկնագույն մզկիթը: Ի դեպ, սրա օրոք՝ 1441 թ., հայոց կաթողիկոսական աթոռը Սսից տեղափոխվեց Էջմիածին:

XVII դ. թյուրք արաբալեզու հեղինակ Մյունեջիմ-բաշին տալիս է Ջհանշահի հետևյալ գնահատականը, որը թեև միտումնավոր է, սակայն, միաժամանակ, ուշագրավ: «Դա (Ջհանշահը-Վ. Բ.) անառակ, անբարոյական, արյունարբու մի բռնակալ էր, որը հակված էր դեպի հերձվածն ու անաստվածությունը և չէր հետևում սրբազան շարիաթին. գիշերները

մինչև լուսաբաց նա անց էր կացնում հարբեցողության ու սեռական սանձարձակության մեջ, իսկ ցերեկը քնում էր, հանց չուն»:

Ուղղադավան սունննի Մյունեջիմ-բաշիի գայրույթը հասկանալի է. անկախ իր անձնական հատկանիշներից, որոնց իրական պատկերը մեզ անհայտ է աղբյուրների լռության պատճառով, Ջհանշահի կրոնական ազատախոհությունը և հատկապես շիաների վրա հենվելու նրա փորձերը, որոնց աճող հեղինակությունը զանգվածների շրջանում նա աշխատում էր օգտագործել սեփական նպատակների համար, ներվայնացնում ու հունից հանում էր ուղղադավան մտածողության տեր բոլոր մարդկանց: Իսկ նրա կենտրոնացման քաղաքականությունն առաջ էր բերում ոչ միայն քոչվորական ազնվականության դժգոհությունը, այլև նրա սքողված ու բացահայտ դիմադրությունը:

Ջհանշահի իշխանության ընթացքում ղարա-ղոյունլուների հիմնած պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Թուրքմենների այս առաջնորդը, որն իր գահը ստացել էր Շահռուխից, իր սյուզերենին հավատարիմ մնաց մինչև վերջինիս մահը (1447 թ.): Այդ ընթացքում նա բավարարվեց Ատրպատականում, Հայաստանում և Արաբական Իրաքում իր ունեցած տիրույթներով: Սակայն Շահռուխի մահից հետո, երբ սրա լայնածավալ պետությունը սկսեց քայքայվել ներքին երկպառակությունների, դինաստիական վեճերի և գահակալական կռիվների պատճառով, Ջհանշահն ընդունեց սուլթանի տիտղոս, որը նշանակում էր, որ նրա կարգավիճակը դարձել է կատարելապես անկախ տիրակալի կարգավիճակ: Հենց այդ պահից նրա արտաքին քաղաքականության մեջ սկսվում է կտրուկ շրջադարձ՝ նա աշխատում է ընդարձակել իր պետության սահմանները՝ արևելքում պատերազմներ վարելով լանկթամուրյան տոհմի իշխանների, իսկ արևմուտքում՝ թամուրյանների զորեղ դաշնակիցներ հանդիսացող աղ-ղոյունլու թուրքմենների դեմ:

1453 թ. սկզբներին Ջհանշահը 200 հազար հեծելազորով ներխուժեց թամուրյաններին պատկանող իրանական տիրույթները և լուրջ դիմադրության չհանդիպելով՝ գրավեց Պարսկական Իրաքը, Ֆարսը, Խուզիստանը և Քերմանը: Արևմտյան Իրանի այդ նոր նվաճումը քոչվորների կողմից ուղեկցվում էր արյունալի կոտորածներով ու ավերածություններով: Առանձնապես տուժեցին Սուլթանիե և Սպահան քաղաքները: 1455 թ. Ջհանշահն արշավեց Արաբական Իրաք, որտեղ իշխող իր եղբորորդիներից մեկը դրսևորում էր ինքնագլխության նշաններ: Բաղդադում ղարա-ղոյունլու ռազմիկները կոտորեցին 60 հազար մարդ և 30 հազար ջորեբեռ ավար հափշտակեցին:

1457 թ. Ջհանշահը թամուրյանների դեմ սկսում է մի նոր արշավանք:

Համադանը, Ռեյը, Ղազվինը և Գիլյանը խլելով նրանցից՝ դրանք միացնում է իր տիրույթներին և ապա շարունակում ռազմերթը դեպի արևելք՝ Խորասանի կողմը: Նրա զորքերը հասան մինչև Հերաթ: 1459թ. Ջհանշահի և լանկթամուրյան տոհմի սուլթան Աբու-Սայիդի (1451-1469) միջև կնքվում է մի պայմանագիր՝ Իրանը միմյանց միջև բաժանելու վերաբերյալ: Իրանական բարձրավանդակի Դեշթ-ի Քեվիր և Դեշթ-ի Լութ անապատները ճանաչվեցին որպես նրանց պետությունների միջև սահմանագծեր: Այսպիսով՝ մինչև Թեհրանի արևելակողմում գտնվող Սեմնան քաղաքն անցնում էր ղարա-ղոյունլուներին: Հաշտության պայմանագրին կից կողմերը ստորագրեցին նաև մեկ այլ փաստաթուղթ՝ ռազմական դաշինքի վերաբերյալ, որը ենթադրում էր փոխադարձ օգնություն իրենց երկրներում ավատական երկպառակությունների և ժողովրդական շարժումների դեմ: Սա ցույց է տալիս, որ հսկայական տարածք ունեցող նվաճված երկրամասերն իրենց ձեռքում պահելու համար ղարա-ղոյունլուները չունեին անհրաժեշտ ուժեր:

Շուտով թամուրյան պետության մեջ գահակալական կռիվները դադարում են, և ներքին վիճակը ձեռք է բերում հարաբերական կայունություն: Աբու-Սայիդին հաջողվում է ողջ իշխանությունը կենտրոնացնել իր ձեռքերում, վերակազմակերպել բանակը և այլն: Այնուհետև նա Ջհանշահից պահանջում է հրաժարվել նվաճած երկրամասերից, ավելի ճիշտ վերանայել 1459 թ. պայմանագիրը: Ջհանշահը, որի Հասան-Ալի որդին ապստամբել էր հոր դեմ, ստիպված է լինում հրաժարվել արևելյան նվաճումներից, մանավանդ որ նրա ականջին լուրեր էին հասնում այն մասին, որ Շիրազում գտնվող իր Փիր-Բուդաղ որդին ևս փայփայում է ինքնագլխության ձգտումներ:

1463-1465 թթ. Ջհանշահն Իրաքում պատերազմում էր իր որդու՝ Փիր-Բուդաղի դեմ, *որին հայրը Շիրազից տեղափոխել* և կառավարիչ էր կարգել Բաղդադում: Սակայն հոր ողորմածությունը դաս չէր հանդիսացել փառասեր որդու համար, և այս նոր միջավայրում ևս նա ապստամբել էր: Ի վերջո, Ջհանշահին հաջողվում է ճնշել այդ «ընտանեկան խռովությունը» և մահվամբ պատժել իր որդուն:

Այսպիսով, ամրապնդելով իր ներքին դրությունը, Ջհանշահը հետևողականորեն սկսում է նախապատրաստվել մեծ պատերազմի աղ-ղոյունլուների դեմ՝ մեկ անգամ ընդմիշտ լուծելու համար այն հարցը, թե ով է հանդիսանալու տարածաշրջանի թելադրող ուժը:

Աղ-ղոյունլու («Սպիտակ ոչխար») թուրքմենական վաչկատուն ցեղերը, ղարա-ղոյունլուների հետ միասին Մերձավոր Արևելք էին գաղթել

XIII դ. վերջերին և քոչում էին Տիգրիս գետի վերին հոսանքների շրջանում և Դիարբեքիրի ու Սեբաստիա (Սըվաս) քաղաքների միջև: Աղ-ղոյունլուների մեջ առաջատար ցեղը Բայանդուրն էր, ուստի և նրանց դինաստիան երբեմն կոչում են Բայանդուրյան:

Ղարա-ղոյունլու օղուզական վաչկատուն ցեղերի միավորումը դեռևս XIV դ. վերջից տարածքներ, արոտավայրեր և ռազմական ավար ձեռք բերելու համար պատերազմներ էր մղում օղուզական վաչկատուն ցեղերի մեկ այլ խմբավորման, այն է՝ աղ-ղոյունլուների հետ: Վերջիններս հանդիսանում էին թամուրյանների դաշնակիցը: Աղ-ղոյունլուները հաճախ թշնամական հարաբերությունների մեջ էին գտնվում նաև օսմանյան թուրքերի հետ և սերտ դաշնակցային հարաբերություններ էին պահպանում Տրապիզոնյան կայսրության հետ (1204-1461): Տրապիզոնը աղ-ղոյունլուների համար ծառայում էր որպես առևտրական նավահանգիստ:

Աղ-ղոյունլու դինաստիայի հիմնադիր Ղարա Օսմանի մահվանից հետո (1435 թ.) նրա ժառանգորդների միջև սկսվեցին ներքին պառակտումներ, որոնց վերջ տվեց նրա թոռը՝ Ուզուն Հասանը՝ իրեն հռչակելով սուլթան (1453-1478): Սրա իսկական անունը Հասան-բեկ աղ-ղոյունլու էր: Բարձրահասակ և նիհար լինելու համար ստացել էր «ուզուն» («երկար») մականունը: Նա ևս իր մայրաքաղաքը դարձրեց Թավրիզը:

Ինչպես և Ջահանշահը, Ուզուն Հասանը ևս բավականաչափ քաղաքակրթված էր և հղկված: Նրա մեծ տատը Տրապիզոնի կայսերական տոհմի իշխանուհի էր: Ինքը նույնպես ամուսնացած էր Տրապիզոնի Կալոյոաննես կայսեր աղջկա՝ Կատարինայի հետ, որին եվրոպական ճանապարհորդներն իրենց ուղեգրություններում անվանում են Դեսպինա («տիրուհի»):

Ուզուն Հասանի օրոք «Սև» և «Սպիտակ» ոչխարավորների միջև սկսվեց անզիջում մի պայքար: Ուզուն Հասանին հաջողվեց իրեն ենթարկել համարյա ողջ Արևմտյան Իրանը, ինչպես նաև Հայկական բարձրավանդակը: Նա ձգտում էր ընդլայնել իր տիրույթները ոչ միայն Իրանի տարածքում, այլև Փոքր Ասիայում: Օսմանյան թուրքերի դեմ պայքարում ձգտելով ձեռք բերել դաշնակիցներ՝ Ուզուն Հասանը դիվանագիտական շփումների մեջ մտավ եվրոպական պետությունների հետ: 1469 թ., օրինակ, նա Վենետիկ ուղարկեց լայն լիազորություններով օժտված մի դեսպանություն, որի կազմում կարևոր դերակատարություն ուներ միջազգային առևտրով զբաղվող, մեծահարուստ հայ վաճառական խոջա Միրաքը: Կատերինո Զենոն հաղորդում է, որ հասնելով Վենետիկ և մեծ ընծաներ մատուցելով դոժին և հանրապետության իշխանություններին՝

դեսպանության անդամները Ուզուն Հասանի անունից «առաջարկում էին զինակցություն և պատվավոր դաշնակցություն կնքել Թուրքիայի և Եգիպտոսի սուլթանների դեմ. պայմանով, որ վենետիկցիները չքերանան իրենց նավատորմով հարձակվելու երկու իշխանություններիր վրա»:

Ուզուն Հասանի դեսպանությունը Վենետիկից անցավ Հռոմի պապի, իսկ ապա՝ Նեապոլի թագավորի մոտ՝ առաջարկելով նույնպիսի դաշինք: Բանակցություններն ի վերջո ավարտվեցին հակաօսմանյան լիգայի ստեղծումով, որի կազմի մեջ էին մտնում Եվրոպայում Վենետիկի հասարակապետությունը, Հռոմի պապը, Նեապոլի թագավորությունը և Հունգարիան, իսկ Ասիայում՝ աղ-ղոյունլուների պետությունը, Ղարամանիան և Կիպրոսը: Իրենց հերթին եվրոպացիները ևս դիվանագիտական հանձնակատարներ էին ուղարկում Թավրիզ Ուզուն Հասանի արքունիքը: Վենետիկյան դեսպաններ Կատերինո Զենոն, Խոսաֆաթ Բարբարոն և Ամբրոսի Կոնտարինին թողել են Իրանի, Հայաստանի և հարակից երկրների արժեքավոր նկարագրություններ: Ուզուն Հասանի արքունիքում եղել է նաև ռուսական ցարի դեսպան Մարկո Ռոսսոն:

Ուզուն Հասանն աշխատում էր բարեկամական հարաբերություններ հաստատել նաև Հունգարիայի, Լեհաստանի, մոլդովական գոսպոդորյայի, Ռուսաստանի հետ և այլն:

Այդ բանակցությունների մեջ ռեալ արդյունք տվեցին միայն Վենետիկի հանրապետության հետ սկսված շփումները, որոնք ավարտվեցին դաշինքի վերաբերյալ փաստաթղթի ստորագրմամբ: Օսմանցիների հաղթանակները Սև ու Միջերկրական ծովերի առափնյա երկրներում մեծ հարված էին հասցնում իտալական հանրապետություններին և առաջին հերթին՝ Վենետիկին, որի ձեռքերում էր այդ ժամանակ մեծ չափով կենտրոնացած Արևմտյան Եվրոպայի առևտուրը արևելքի հետ: Վենետիկը, որը 1463 թ. սկսած, պատերազմի մեջ էր օսմանցիների հետ, եռանդուն կերպով աշխատում էր ստեղծել եվրոպական պետությունների մի զինակցություն: Սակայն նրա այդ ջանքերը ի դերև ելան նրանց շահերի ներհակության պատճառով: Ուստի Վենետիկի ծերակույտը որոշում ընդունեց դաշինք կնքել Ուզուն Հասանի հետ, որն այդ ժամանակ դարձել էր Օսմանյան պետության միակ հզոր հակառակորդը Արևելքում: Եփրատ գետի մոտ՝ Դերջանում, տեղի ունեցած ճակատամարտում (1473) թուրքերից կրած պարտությունը (գլխավորապես հրետանու պակասի և զորքերի կազմակերպման հնացած ձևերի) պատճառով ի դերև հանեց Ուզուն Հասանի հույսերը՝ Վենետիկի հետ միասնական ճակատով օսմանյան թուրքերի դեմ հանդես գալու վերաբերյալ:

Ղարա-ղոյունլուների և աղ-ղոյունլուների քաղաքական մրցակցության հանգուցալուծումը տեղի ունեցավ 1467 թ., երբ Հայաստանում Ուզուն Հասանը ջախջախեց ղարա-ղոյունլու զորքերին: Ուզուն Հասանը սպանված Ջհանշահ ղարա-ղոյունլուի գլուխն ուղարկեց նրա դաշնակից՝ թամուրյան սուլթան Աբու-Սայիդին, իսկ Ջհանշահի որդու գլուխը՝ օսմանյան սուլթան Մեհմեդ Բ-ին: Ողջ Հայկական բարձրավանդակը, Ատրպատականը և ղարա-ղոյունլուներին պատկանող Իրանի տարածքներն անցան հաղթողին: Այսպիսով՝ ղարա-ղոյունլու պետությունը կործանվեց և չքացավ պատմության ասպարեզից՝ իր տեղը զիջելով Աղ-Ղոյունլու պետությանը, որի մայրաքաղաքը դարձավ Թավրիզը (1468): Նրա կազմի մեջ մտան Հայաստանը, Շիրվանը (մինչև Քուռ գետը), Աղրբեջանը, Քրդստանը, Արաբական ու Պարսկական Իրաքը, Խուզիստանը, Ֆարսն ու Քերմանը: Այդ տարածքում Աղ-Ղոյունլու պետությունը գոյատևեց մինչև 1502 թ.:

Վերոհիշյալ իրադարձությունները չէին կարող չմտահոգել թամուրյաններին, որոնք չէին բացառում, որ իրենց դաշնակցին ջախջախելուց հետո Ուզուն Հասանն իր բանակներն ուղղելու է դեպի արևելք: Ուստի 1468 թ. գարնանը Աբու-Սայիդը Հերաթից մեծ զորքով շարժվեց դեպի Ատրպատական՝ ճանապարհին Իրանի տարածքում ամեն տեղ նշանակելով իր կառավարիչներին: Նրա հոգնած և ցրտից ու սովից տառապող բանակը շարժվեց դեպի Մուղանի դաշտավայրը՝ այնտեղ ձմեռելու մտադրությամբ: Այստեղ ինչ-ինչ պատճառներով թամուրյան զորքերը կորցրին համարյա բոլոր ձիերին: Կուր և Արաքս գետերի հարավակողմում աղ-ղոյունլուների և նրանց դաշնակից շիրվանշահերի զորքերը շրջապատեցին թամուրյաններին: Դրա հետևանքով թամուրյանների բանակում սկսվեց սով, որը հասավ այնպիսի չափերի, որ զորքը ցիրուցան եղավ, սուլթան Աբու-Սայիդը փախուստի դիմեց, սակայն բռնվեց աղ-ղոյունլու զինվորների կողմից և չարաչար մահապատժի ենթարկվեց (1469 թ. փետրվարին):

Այլևս թամուրյանները միանգամայն անվտանգ էին Ուզուն Հասանի համար: Իր այդ մեծ հաղթանակից հետո աղ-ղոյունլուների այս առաջնորդը հիմնադիր դարձավ մի հսկայական պետության (1468-1502), որի սահմանները ձգվում էին Եփրատից մինչև Իրանի արևելյան կողմերը և Կովկասից ու Տրապիզոնից մինչև Հնդկական օվկիանոսը: Այսուհետև նրան էին պատկանում Արևմտյան Իրանը, Ատրպատականը, ամբողջ Հայաստանը, Միջագետքը, Պարսկական Իրաքը և Արաբական Իրաքը, Քերմանը, Ֆարսը:

1473 թ. Դերջանի ճակատամարտում օսմանցիներից պարտություն

կրելուց հետո Ուզուն Հասանը խուսափում էր ուժեղ և հզոր հակառակորդներից և բավարարվում թույլ հարևանների դեմ պատերազմներ մղելով: Այսպես՝ նա երկու անգամ՝ 1476 և 1477 թթ., կողոպտչական արշավանքներ կազմակերպեց դեպի Վրաստան:

1478 թ. հունվարի 5-ին Ուզուն Հասանը մահացավ: Նրա ժառանգորդների օրոք բացահայտվեց պետության ներքին թուլությունը, որն այդպես էլ չդարձավ մեկ միասնական ամբողջություն: Նրա հինգ որդիների միջև, որոնք տարբեր մայրերից էին, անմիջապես բռնկեցին գահակալական կռիվներ: Եղբայրներից մեկը, որի մայրը Տրապիզոնի իշխանուհի Դեսպինան էր, խեղդամահ արվեց: Հոր գահը նախ գրավեց Ուզուն Հասանի անդրանիկ որդի Սուլթան Խալիլը (1478 թ.): Բայց վեց ամիս հետո երկրորդ եղբայրը՝ Յաղուբը, սպանեց Սուլթան Խալիլին և բարձրանալով գահ՝ իշխեց ավելի քան 12 տարի (1478-1490):

Յաղուբ փաղիշահը տարված էր պարսկական գրականությամբ: Աղբյուրների վկայությամբ՝ նա ռազմական գործին անընդունակ, թույլ ու անկամ մի անձնավորություն էր, որի համար ռազմական փառքն առաջնային չէր: Նրա օրոք պետության ղեկը, փաստորեն, գտնվում էր Ուզուն Հասանի անվանի զորավարների՝ Սուլեյման-բեկ Բիժան-օղլուի, Քայանդուր բեկի և Սուֆի Խալիլի ձեռքերում: Շնորհիվ այս փորձառու հրամանատարների ու կազմակերպիչների՝ Յաղուբը մի շարք հաղթանակներ տարավ արևելքում՝ թամուրյանների, արևմուտքում՝ օսմանյան թուրքերի, իսկ հարավում՝ Եգիպտոսի և Սիրիայի սուլթանության դեմ: Այդ հաղթանակների շնորհիվ աղ-ղոյունլուների պետության քաղաքական վարկը Արևելքում ժամանակավորապես վերականգնվեց: Սակայն Յաղուբի թագավորության վերջին շրջանում Արդաբիլում սկսեցին ուժեղանալ Սեֆյան ընտանիքի շեյխերը, որոնք մեծ ազդեցություն ունեին այդ քաղաքի և հարևան շրջանների թուրք բնակչության վրա: Շեյխ Հայդարը հանդիսանում էր շիա աղանդին պատկանող դերվիշական միաբանության հոգևոր առաջնորդ: Թեև նա ամուսնացած էր Ուզուն Հասանի աղջիկներից մեկի հետ, սակայն ձգտում էր նրանց պատկանող տարածքների հաշվին ընդլայնել իր իշխանության սահմանները: 1488 թ. Հայդարն իր հետևորդ ղզըլբաշներից («կարմրագլուխներ». այդպես էին կոչվում կարմիր երիզով գլխարկներ կրելու համար) կազմեց 40- հազարանոց մի բանակ և նրա գլուխ անցած՝ արշավանքի դուրս եկավ դեպի Դաղստան: Թեև Շիրվանշահ Ֆառուխ Յասարը փորձեց արգելել նրանց անցումը իր երկրով, սակայն ղզըլբաշները ոչ միայն չդադարեցրին իրենց ռազմարշավը, այլև գրավեցին Շիրվանը և քաղաքը մատնե-

ցին ահավոր կոտորածի ու ավերածության: Որպես օգնություն Ֆառուխ Յասարին՝ Յաղուբը ղըզըլբաշների դեմ ուղարկեց մի մեծ բանակ՝ Սուլեյման-բեկ Բիժան-օղլուի հրամանատարությամբ: Տեղի ունեցավ արյունալի ու կատաղի մի ճակատամարտ, որը, թեև մեծ զոհերի գնով, հաղթանակ բերեց աղ-ղոյունլուներին: Հաղթողները գրավեցին Շեյխ Հայդարի կալվածքները, ինչպես նաև Արդաբիլը: Իսկ ճակատամարտում սպանված շեյխի անչափահաս որդիներին, այդ թվում՝ Իրանի Սեֆյան հարստության ապագա հիմնադիր Իսմայիլին, մեկուսացնելու համար ի պահ տվեցին Աղքամարի հայ վանականներին:

1490 թ. Յաղուբ փաղիշահի մահվանից հետո (նրան թունավորեցին) գահաժառանգման համար նրա որդիների միջև սկսվեցին նոր երկպառակություններ: Քոչվոր ցեղապետներից և պետական բարձրաստիճան աստիճանավորներից ոմանք ցանկանում էին գահը հանձնել Յաղուբի եղբայրներին, իսկ մի մասն էլ՝ որդիներին: Երեք տարի տևած այդ ներքին կռիվների ժամանակ սպանվեցին բազմաթիվ ամիրզադեներ. Յաղուբի եղբայր Մասիհը, Հասանի թոռ, Խալիլի որդի Ալին, Յաղուբի որդի Բայսոնղուրը, աթաբեկ Սուֆի Խալիլը, մեծ վեզիր Սուլեյմանը և ուրիշներ: Այդ երեք տարում իրար հաջորդելով՝ իշխեցին Մասիհը, Ալին և Բայսոնղուրը: Արյունահեղ պայքարը դադարեց 1493 թ., երբ աղ-ղոյունլուների պետության գահը ստացավ Ուզուն Հասանի թոռներից մեկը՝ Ռուստամը: Սրա իշխանության չորրորդ տարում՝ 1496 թ. կրկին ծայր առան ներքին խռովություններ: Ռուստամի դեմ ապստամբեց իր հորեղբոր՝ Ուղուրլու Մահմեդի որդին՝ Ահմադը, որը Արաքսի ափին, Ջուղայի դաշտում, պարտության մատնեց նրան, սպանեց և նրանից խլեց գահը: Ահմադը կարողացավ իշխանությունն իր ձեռքում պահել միայն 8 ամիս: Ներքին խռովություններից մեկի ժամանակ նա սպանվեց (1497), և թագավոր հռչակվեց Ռուստամի որդի Ալվանդը:

Սակայն շուտով հրապարակ են իջնում գահի նոր հավակնորդներ՝ Մուհամմադը և Մուրադը: 1499 թ. Մուհամմադը սպանվում է, իսկ հաջորդ տարում Մուրադի և Ալվանդի միջև հաշտություն է կայանում: 1500 թ. աղ-ղոյունլուների պետությունը բաժանվում է երկու մասի. Հայաստանն ու Ատրպատականը բաժին են ընկնում Ալվանդին, իսկ Արաբական Իրաքը և Պարսկական Իրաքը, ինչպես նաև Ֆարսը՝ Մուրադին: Սակայն վերջինս կարողացավ ամրապնդվել միայն Պարսկական Իրաքում:

Անտարակույս, մեկ միասնական պետության տրոհումն ու անդամահատումը նոր մարտահրավերների առջև էր դնում աղ-ղոյունլուների պետությունը:

Այսպիսով՝ XVI դ. սկզբին Իրանն իրենից չէր ներկայացնում մեկ մի-

ասնական քաղաքական ամբողջություն: Երկրի տարածքի մի մասը, ինչպես նշվեց, բաժանված էր աղ-ղոյունլու սուլթաններ Ալվանդի ու Մուրադի միջև: Ֆարսում, Յեզդում և Քերմանում կառավարում էին Աղ-Ղոյունլու դինաստիայի այլ ներկայացուցիչներ: Խուզիստանը գտնվում էր արաբական շիիթական Մուշաշա («Փայլուն») դինաստիայի տիրապետության տակ: Աբերքուհում, Քաշանում, Սեմնանում, Սիսթանում նստած էին անկախ կառավարիչներ: Մազանդարանը բաժանված էր առնվազն տասը տեղական դինաստիաների միջև: Գիլյանում կային երկու էմիրություններ, Լահիջանի «Քիչե փիչ» և Ռեշտի «Քիչե փաս» էմիրությունները: Թալիշը հանդիսանում էր առանձին խանություն: Արևելքում Խորասանը ներկա Աֆղանստանի և Թուրքմենստանի հետ համատեղ կազմում էր թամուրյան սուլթան Հուսեյն Բայքարի (1469-1506) պետությունը՝ Հերաթ մայրաքաղաքով: Բալխում և Ղանդահարում առկա էին առանձին կառավարիչներ, որոնք անվանապես կախում ունեին սուլթան Հուսեյն Բայքարից:

Թվարկված պետություններից ամենաուժեղներն էին համարվում Աղ-Ղոյունլու և Խորասանյան Թամուրյանների պետությունները, թեև XV դ. վերջին այդ երկուսն էլ ներքին երկպառակությունների հետևանքով թուլացել էին, իսկ ամենակարևորը՝ նրանց երկուսին էլ սպառնում էին ուժեղ հակառակորդներ՝ աղ-ղոյունլուին՝ Օսմանյան Թուրքիան, իսկ Խորասանյան թամուրյաններին՝ քոչվոր ուզբեկները՝ Մուհամմադ խան Շեյբանիի (Շեյբեք խան) գլխավորությամբ, որոնք արդեն հասցրել էին նվաճել թամուրյանների միջինասիական հողերը: Աղ-ղոյունլու թուրքմեն տիրակալների նկատմամբ կուտակված ատելությունն աշխատում էին օգտագործել հատկապես արդեբիլյան շեյխերը կամ Սեֆյան տոհմի ավատատերերը, որոնց ազդեցությունը Ատրպատականի հյուսիսարևելյան մասում սկսել էր աճել դեռևս XV դ. արշալույսից սկսած:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՍԵՖՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1. ՍԵՖՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Դեռևս XIII դ. մոնղոլական տիրապետության շրջանում, Իրանում լայն տարածում գտան սուֆիական-դերվիշական միաբանությունները: Սուֆիզմը կամ սուֆիականությունը կրոնական-փիլիսոփայական մի ուսմունք է, որը ծնունդ է առել իսլամի հայտնվելուց մեկ-երկու դար հետո: Նրա անվանումը ծագել է արաբերեն «սուֆ», (հոգնակի՝ «թասավվուֆ») բառից, որը տառացիորեն նշանակում է կոշտ բրդյա զգեստ: Նման զգեստներ էին հագնում մահմեդական անապատական մենակյաց ճգնավորները՝ սուֆիները և դերվիշները:

Սկզբնական շրջանում սուֆիզմը զարգացնում էր իսլամի մեջ առկա միստիցիզմի տարրերը և քարոզում էր ասկետիզմ ու արտաքին աշխարհի բարիքներից հրաժարվելու գաղափարներ: Հետագայում այդ ուսմունքն ապրեց որոշակի զարգացում և, ըստ էության, խզեց իր կապերը իսլամի դոգմաներից:

Ինչպես ամեն մի միստիցիզմ, սուֆիզմը գտնում էր, որ յուրաքանչյուր մարդ կարող է անձնական շփման մեջ մտնել աստվածության հետ: Դրան հասնելու ուղին սուֆիները համարում էին ինքնահրաժարումը, ճգնավորական մեկուսացումը, տևական հայեցողական և մենակյաց կյանքը ուսուցիչ-դաստիարակի (արաբերեն՝ «շեյխ» կամ «մուրշիդ», պարսկերեն՝ «փիր») ղեկավարությամբ:


Black Sea
Ottoman Empire
Caspian Sea
Khanate of Uzbek
Oxus R.
Tigris R.
Euphrates R.
Tabriz
Qazvin
Rayy
PERSIA
Mashhad
Nishapur
Baghdad
Isfahan
Herat
India
Kerman
Shiraz
Bandar Abbas
Hormuz
Persian Gulf
Safavid Persia

Պարսկական սուֆիները ևս քարոզում էին աստծո հետ մարդու վերամիավորվելու ու համաձուլվելու գաղափարը: Նրանք գտնում էին, որ աստված միակ ճշմարտությունն է և միակ ռեալությունը: Մարդը նախկինում գտնվել է աստվածության հետ անմիջական միացման վիճակում, սակայն հետագայում նա հեռացել է նրանից: Մարդու վերամիավորումը աստծո հետ հնարավոր է ներքին ինքնակատարելագործման, աստծո նկատմամբ խորը սիրո առկայության, իր ես-ի ոչ ռեալականության գիտակցման և այն հավատի մեջ, որ իսկական ես-ը անձի մեջ ապրող աստվածն է: Միստիկական «ճանապարհի» վերջին էտապում (արաբերեն- «թարիքաթ») սուֆիները հնարավոր էին համարում կատարյալ ձուլումը աստվածության հետ: Դրա համար անհրաժեշտ պայման էր համարվում «ֆանաև» (արաբերեն՝ ոչնչացում, չքացում), այսինքն՝ լրիվ հրաժարում սեփական անձից և նրա «տարրալուծում» աստծո հետ

Սուֆիները ոչ մի նշանակություն չէին տալիս կյանքի արտաքին կողմին, բարոյականությանը և այլն: Նրանք «բարու» և «չարի» հասկացությունները համարում էին հարաբերական հասկացություններ, որոնք գործում են միայն պայմանականությունների արտաքին աշխարհում, իսկ իրական կյանքում նրանք պիտանի չեն, և նրանց կարիքը չի զգացվում:

Սուֆիզմը ինչ-որ մեկ միասնական երևույթ չէր. նրանում առկա էին տարբեր հոսանքներ: Նա սերտորեն կապված էր դերվիշականության հետ, ուներ իր կազմակերպությունը՝ դերվիշական միաբանությունները կամ եղբայրությունները:

Ամենահին դերվիշական միաբանությունը կոչվում էր ղադարիե (XII դ.): Որոշ սուֆիական-դերվիշական միաբանություններ հենվում էին ավատատերերի վրա, մյուսները կապված էին արհեստավորական համքարությունների հետ, որոնց բուն կազմակերպությունը ստեղծվում էր դերվիշական եղբայրությունների սկզբունքով: Վերջին տիպի դերվիշները հաճախ պախարակում էին հարստությունը և այն անձանց, որոնք ուտում էին «չքույլատրված կերակուր», այսինքն՝ սնվում էին «աստծո ծառաների» շահագործման ու հարստահարությունների միջոցով: Հաճախ գաղափարների արտահայտման սուֆիական ձևը ծառայում էր որպես ազատախոհությունը սքողելու, թաքցնելու կամ տիրապետող կարգերին քննադատելու համար:

Իրանում սուֆիզմը հայտնի էր արդեն IX դ., սակայն այն հատկապես լայն տարածում գտավ XI դ. սկսած: Նրա գլխավոր տարածողները մահմեդական դերվիշներն էին: XI դ. սկսած՝ սուֆիզմն ուժգին ազդեցություն սկսեց գործել պարսկական պոեզիայի վրա:

Ի թիվս Իրանի այլևայլ վայրերի՝ Ատրպատականում ևս XIII դ. ծնունդ են առնում մի շարք դերվիշական-սուֆիական միաբանություններ, որոնցից մեկը սրբի համբավ վայելող շեյխ Սեֆի-ադ-դինն Իսխաքի (1252-1334) անունով կոչվեց «Սեֆեվիյե», հետևաբար շեյխ Սեֆի-ադ-դինը հանդիսանում է Սեֆյանների նախահայրը: Նա և իր մեծ գերդաստանը, ինչպես նաև նրա հետևորդներն ու ժառանգորդները («մուրիդներ», թյուրքերեն՝ «մյուրիդներ») ապրում էին Ատրպատականի Արդեբիլ քաղաքում և նրա շրջակայքում:

Կարծիք կա այն մասին, որ ինքը՝ շեյխ Սեֆի-ադ-դինը, շաֆիիթական «մազհաբի» սուննիթ էր և իրեն չէր համարում չորրորդ խալիֆ՝ Ալիից (Մուհամմադ մարգարեի հորեղբոր որդին և փեսան, մահացել է մոտ 656թ.) սերած: Քանի որ շիիզմը կամ շիիթականությունն այդ ժամանակներում լայնորեն տարածված էր Իրանի զանգվածների շրջանում, ըստ երևույթին, շեյխ Սեֆի-ադ-դինի որդին և նրա ժառանգորդը՝ շեյխ Սաղրադ-դինն Մուսան (1334-1392), որոշել էր հարել իմամիթների չափավոր շիիթական ուղղությանը զուտ քաղաքական նպատակներով, այն է՝ գյուղացիության և քաղաքային չքավորության նկատմամբ ազդեցության լծակներ ձեռք բերելու մտադրությամբ: Ինչպես նշվել է վերևում, շիիթները գտնում էին, որ իսլամի մարգարեի միակ օրինական ժառանգորդն Ալին է: Նրանք դա հաստատելու համար վկայակոչում էին Ղուրանի հադիսներից մեկը, որտեղ ասվում է, որ մարգարեն իր բազմաթիվ հետևորդների ներկայությամբ պաշտոնապես Ալիին ճանաչել է իր ժառանգորդ: Շիիթների աչքում Ալին և նրա 12 ժառանգորդները իսկական խալիֆներ են կամ ավելի ճիշտ, իմամներ: Ալիի ժառանգորդների ուղիղ գիծը ընդհատվել է 12-րդ իմամ Մահդիով, որը ոչ թե մահացել է, այլ անհետացել է և սպասում է իր ժամին, որ վերադառնա ու երկրի վրա հաստատի արդարություն: Այսպիսով՝ շիիզմի հիմքում ընկած է նաև մեսիականության գաղափարը: Առհասարակ, շիիզմի մեջ մեծ տեղ է գրավում նահատակության և մարտիրոսության պաշտամունքը: Այն մոտ էր գյուղացիության և քաղաքային բնակչության ստորին խավերի ձգտումներին, որոնց կյանքը հաճախ հանդիսանում էր անընդմեջ մարտիրոսություն:

Շիիթները հավատում էին, որ իմամ Մահդին կենդանի է և վաղ թե ուշ կհայտնվի՝ երկրի երեսից ոչնչացնելու համար անարդար կարգերը, որոնք հաստատվել են սուննիների կողմից, և կվերականգնի իսլամը իր նախասկզբնական տեսքով: Այսպիսով՝ իմամ Մահդին ընկալվում էր որպես կարիքից, բռնությունից և ամեն տեսակ դառնություններից մի ազատարար: Մահդիի երկրորդ գալստյան սպասումը չափազանց կարևոր գաղա-

փարական սկզբունք էր XIV-XV դարերի ժողովրդական շարժումների մեջ:

Աշխարհագետ Յաղութ Խամավիի վկայության համաձայն, դեռևս XIII դարի սկզբին Քաշան քաղաքում, որի բնակիչները շիաներ էին, ամեն առավոտ լուսաբացին քաղաքային ավագները ձիերով դուրս էին գնում քաղաքային դարպասներից, սանձից բռնած տանելով թամբած մի սպիտակ ձի՝ իմամ Մահդիի համար, որի գալստյանը սպասում էին ամեն օր:

Շիիթական հիմնական գաղափարն այն մասին, ու մահմեդական համայնքի օրինական ղեկավար կարող է հանդիսանալ միայն Ալիի ժառանգորդներից որևէ մեկը, զանգվածների կողմից մեկնաբանվում էր այն իմաստով, որ Իրանում կառավարող դինաստիաները օրինական չեն, ինչպես նաև օրինական չի կարող լինել նաև տիրապետող սուննիթական շարիաթը:

VII դարում արաբների կողմից Իրանը նվաճելուց հետո, շիիթականությունը որպես ուղղադավան իսլամի՝ սուննիզմի նկատմամբ ընդդիմադիր ուսմունք, լայնորեն տարածվեց երկրում: Ըստ էության այն դարձավ գաղափարական մի կառույց, որի մեջ դրսևորվում էր նվաճված Իրանի բնակչության բողոքը օտարերկրյա նվաճողների դեմ: Հետագայում Իրանը բազմիցս նվաճվել է սուննիթների կողմից, կամ հանդիսացել նրանց նվաճողական քաղաքականության առարկա, որի հետևանքով երկրում տիրապետող է դարձել սուննիզմը: Իսկ շիիթականությունը սուննիների կողմից դիտվել է որպես իսլամի հերձված և ենթարկվել անլուր հալածանքների:

Հենց այդ պատճառով էլ իրանական ժողովրդի պայքարը նվաճողների, մասնավորապես երկրում հաստատված սուննիթական դինաստիաների դեմ, որպես կանոն, ընդունել է սուննիների և շիաների միջև կրոնական պայքարի բովանդակություն:

Սեֆյանները հարեցին շիիզմին, նպատակ ունենալով նրա ժողովրդականությունն օգտագործել իրենց շահերի օգտին: Քանի որ շիիզմի հիմնական սկզբունքներից մեկն այն էր, որ մահմեդական համայնքի հոգևոր և աշխարհիկ առաջնորդ կարող են լինել միայն Մուհամմադի և Ալիի ժառանգորդները, ուստի Սեֆյանների հետնորդների շրջանում դեռևս XIV դարից սկսած արմատավորվել էր մի ավանդություն այն մասին, որ սեֆյանները հանդիսանում են Ալիից սերված յոթերորդ շիիթական իմամ Մուսա Քազիմի ժառանգորդները:

Շիիզմի գաղափարական զենքով զինված շեյխ Սեֆի-ադ-դինը իջնում էր քաղաքական ասպարեզ: Նա աննշան և համեմատաբար աղքատ մեկն էր: Նրա ունեցվածքը սահմանափակվում էր լոկ «մեկ զույգ լծկանի» («ջուֆթ-ի գավ») չափ հողով, որը հավասար է վեց-յոթ հեկտա-

րի: Դրա փոխարեն նա ուներ զգալի թվով «մուրիդներ» (հետևորդներ) Ատրպատականում, Արևմտյան Իրանում, Սպահանում, Շիրազում և Ռումում (Փոքր Ասիա):

XV դարում Սեֆյանների գլխավոր հենարան դարձան թյուրքական վաչկատուն ցեղերը, որոնք ունեին տարբեր ծագում և նրանց մեծ մասը գաղթել էր Իրան Փոքր Ասիայից, դժգոհ լինելով օսմանյան սուլթանների կենտրոնացման քաղաքականությունից: Սկզբնապես այդ ցեղերի թիվը յոթն էր. շամլու, ռումլու, ուսթաջլու, թեքքելու, աֆշար, ղաջար, զուլքադար, որոնցից միայն շամլու և ռումլու ցեղերն էին իրենց ամբողջ կազմով ենթարկվում Սեֆյաններին: Հետագայում (XV դ. երկրորդ կեսին) այդ ցեղերը ստացան «ղզլբաշներ» (թյուրքերեն «կարմրագլուխներ») ընդհանուր անվանումը, քանի որ այդ ռազմիկ քոչվորները որպես տարբերանշան, սկսեցին կրել տասներկու ալ երիզներով չալմա՝ («թաջ») ի պատիվ տասներկու շիիթական իմամների: Հենց սրանց անունով Սեֆյանների պետությունը հաճախ անվանվում էր «ղզլբաշական» (դոուլեթ-ի ղզլբաշ):

Հետագայում ղզլբաշական ցեղերի թիվն ավելացավ շնորհիվ այն բանի, որ նրանց միացան նաև թյուրքալեզու այլ ցեղեր: Ղզլբաշները սափրում էին իրենց մորուքը, թողնում էին երկար բեղեր և սափրված գլխի վրա՝ մազերի մի փունջ: Նրանք աչքի էին ընկնում շիիզմի նկատմամբ մոլեռանդ նվիրվածությամբ: Ղզլբաշական ցեղերը Սեֆյաններից կախման մեջ էին ինչպես կրոնական, այնպես էլ քաղաքական առումով: Շեյխին ընդունում էին որպես իրենց հոգևոր առաջնորդ, իսկ իրենց՝ նրա «մյուրիդը», վասալը, միաժամանակ հանդիսանալով նրա զինվորը:

Սեֆևիյե միաբանությունը խաղաղ դերվիշական եղբայրությունից, ինչպիսին այն հանդիսանում էր XIV դարում, աստիճանաբար վերածվեց մի յուրահատուկ հոգևոր-ասպետական օրդենի: XV դ. երկրորդ քառորդից սկսած սեֆյան շեյխերը «հանուն հավատի» նշանաբանի ներքո ղզլբաշական ցեղային զորամիավորումների գլուխ անցած սկսեցին հաճախակի ռազմարշավներ կազմակերպել դեպի հարևան ոչ մահմեդական երկրները՝ Դաղստան, չերքեզների երկիրը (սրանք դեռևս ամբողջովին չէին ընդունել իսլամը), Վրաստան, Տրապիզոնյան թագավորություն և այլն: Կրոնական շղարշով սքողված այդ արշավանքները ոչ այլ ինչ էին, եթե ոչ կողոպտչական ասպատակություններ, որոնք «հավատի մարտիկներին» բերում էին հարուստ ավար, հատկապես ձիեր, անասուններ և երկսեռ գերիներ, որոնց ստրկացնելով օգտագործում էին ծանր աշխատանքների համար, կամ վաճառում Արդեբիլի և այլ քաղաքների «եսիր բազարներում» (ստրկավաճառանոցներում):

Նման ավազակային ասպատակություններից մեկի ժամանակ սեֆյան շեյխ Ջունեյդը (1447-1460) սպանվեց, սակայն նրա որդի Հեյդարը (1460-1488) շարունակեց հոր գործը: Նա ևս սպանվեց 1488 թ. Ուզուն-հասանի որդի Յաղուբի (1479-1490) կողմից, սակայն նրա կրտսեր որդի Իսմայիլը փրկվեց:

2. *Սեֆյան առաջին շահերի ներքին և արտաքին քաղաքականությունը:*

Ընթանալով իր հոր քաղաքական շավղով, ընդամենը 13 տարեկան Իսմայիլը սկսում է իր շուրջը համախմբել Ատրպատականում, Հայաստանում և փոքր Ասիայում սփռված թյուրքական ցեղերին և նրանցից ստեղծել զինական ուժեր: Նրան զինվորագրվեցին նաև Գիլանի և Թալիշի ավատատերերը: Կարճ ժամանակամիջոցի ընթացքում նրան հաջողվում է ստեղծել մի պատկառելի բանակ, որն ընդունակ էր լուծելու ռազմական և քաղաքական բարդ խնդիրներ: 1500թ. շեյխ Իսմայիլն արշավեց Շիրվան, վրեժ լուծելու համար շիրվանշահ Ֆարուխ Յասարից, որը սպանել էր իր հորը և հանդիսանում էր Սեֆյանների հին թշնամին և աղ-ղոյունլուների դաշնակիցը: Ջաբանի կոչված վայրում տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում Շիրվանշահը պարտություն կրեց ու գլխատվեց և ղզլբաշները տիրելով Շամախի քաղաքին և Շիրվանին, զարհուրելի ասպատակ սփռեցին այդ երկրում: 1501թ. շեյխ Իսմայիլը իր զենքն ուղղեց աղ-ղոյունլու սուլթան Ալվանդի դեմ: Ճակատամարտը տեղի ունեցավ Նախիջևանի մոտ՝ Շարուրի հարթավայրում: Իսմայիլը գլխովին ջախջախեց Ալվանդին, որն իր ընտանիքի հետ փախավ Ամիդ, և ղզլբաշական զորքերը հանդիսավոր երթով մտան Թավրիզ: Հաջորդ տարի, 1502թ. ղզլբաշները պարտության մատնեցին նաև աղ-ղոյունլու մյուս փաղիշահ շահ Մուրադին և գրավեցին Կենտրոնական և Արևմտյան Իրանը:

Իսմայիլը իրեն հայտարարեց Իրանի շահ (1502-1524 թթ.)՝ ընդունելով շահ Իսմայիլ Ա գահակալական անունը և հիմք դնելով Սեֆյանների նոր դինաստիային (1502-1722 թթ.), որի մայրաքաղաք հռչակվեց Թավրիզը: Շիիթականությունը կամ «12 իմամների» վերաբերյալ շիիթական ուսմունքը հայտարարվեց Իրանի պետական կրոն, որը փոխարինելու եկավ սուննիթական ուղղադավան իսլամին:

Այսպիսով, Սասանյան պետության անկումից 900 տարի հետո պատմության ասպարեզ էր իջնում իրանական ազգային միասնական մի հզոր պետություն, իր փառավոր տարեգրությունը գրելու համար Իրանի բազմադարյա պատմության էջերում: Սեֆյան պետության ստեղծումով փաստորեն Իրանը փրկվեց նրան սպառնացող երկակի վտանգից՝ արևմուտքից Օսմանյան կայսրության, իսկ արևելքից ուզբեկների կողմից: Սեֆյանները երկիրը կրկին սկսեցին անվանել Իրան, նախկին Պարսկաստանի փոխարեն: Շահ Իսմայիլն ընդունեց «Իրանի շահնշահ» տիտղոսը: Սեֆյանների պետությունը, հատկապես սկզբնական շրջանում, ուներ շեշտված աստվածապետական բնույթ: Շահ Իսմայիլը ոչ միայն սուլթան էր, այլև շիաների հոգևոր առաջնորդ: Հանճինս շիիզմի, շահը տեսնում էր ինչպես պետության միավորման մի զորեղ գործոն, այնպես էլ սուննիզմի հետևորդ հարևան պետություններին հակազդելու մի զորեղ կռվան: Ճիշտ է, նրա արքունիքում տևական ժամանակ տիրապետող լեզու էր հանդիսանում թուրքերենը և ինքը շահը, լինելով ծագումով թուրք, այդ լեզվով գրում էր բանաստեղծություններ «ալ-Խաթայի» քախալուսի (գրական անվան) տակ, սակայն նա գրագրության լեզուն թուրքերենից դարձրեց պարսկերենը և պետության պաշտոնական փաստաթղթերը ամբողջապես ֆարսի լեզվով էր, ինչպես Սելջուկների ու իլխան-հուլավյանների ժամանակ: Անկասկած շահ Իսմայիլ Ա-ի կողմից ստեղծված պետությունը իրանական էր, թեև ազգայնականության մոլուցքով տարված աղրբեջանցի գիտնականներն անհիմն կերպով այն համարում են ադրբեջանական-ազերիական: Նրանք ճգնում են ապացուցել նաև, որ իբր շահ Իսմայիլը իր առջև խնդիր չէր դնում վերականգնել Իրանի ազգային ու պետական միասնությունը, թեև պատմությունը վկայում է հակառակը: Շահի ողջ քաղաքականությունն ուղղված էր իրանական ազգային պետության ստեղծմանը:

Շահ Իսմայիլը իրեն հայտարարեց ոչ միայն պետության աշխարհիկ ղեկավար, այլև շիիթների հոգևոր առաջնորդ, խալիֆ Ալիի ուղիղ ժառանգորդ՝ շիիթական յոթերորդ իմամ Մուսա ալ-Քազիմի գծով: Դեռևս իշխանության համար պայքարի շրջանում շահ-Իսմայիլը ձեռնամուխ էր եղել սուննիթների նկատմամբ դաժան հետապնդումների: Հետևաբար շիիզմը կամ 12 իմամների վերաբերյալ իսնաաշարիյա ուսմունքը հռչակելով Իրանի պետական պաշտոնական կրոն, նա հետապնդում էր որոշակի քաղաքական շահեր: Մասնավորապես շահ Իսմայիլը մտադիր էր իր ախոյան Օսմանյան կայսրության դեմ պայքարում շիիզմն օգտագործել որպես գաղափարական զենք, պայքարի դրոշ: Հայտնի է, որ XVI-XVII

դարերում Անատոլիայում օսմանյան սուլթանի դեմ բռնկած համարյա բոլոր ապստամբությունները ուղղակի և անուղղակի կապ ունեին սեֆյան շիհքական քարոզիչների գործունեության հետ: Շահ Իսմայիլի հրամանով առանձնացվեցին հատուկ մարդիկ («թաբարրայիյան»), որոնք քաղաքների փողոցներում ու հրապարակներում գովաբանում էին խալիֆ Ալիին և ընդհակառակը, հայհոյում ու պարսավում մնացած բոլոր խալիֆներին:

Շահական գահը ստանձնելուց հետո Իսմայիլ Ա-ն սկսեց հետևողականորեն իրեն ենթարկել Իրանի տարածքները: 1503թ. նա Աղ-Ղոյունլու սուլթան Մուրադին (Ուզուն Հասանի թոռանը) ուղարկեց մի ուղերձ, որում պահանջում էր ճանաչել իր իշխանությունը Պարսկական Իրաքի նկատմամբ: Մուրադը պատասխանեց մերժմամբ: Զայրացած շահ Իսմայիլը 12 հազարանոց զորքի գլուխ անցած սրընթաց շարժվեց դեպի Համադան: Հակառակորդների միջև ճակատամարտը տեղի ունեցավ 1503թ. հունիսի 21-ին, քաղաքից ոչ հեռու գտնվող Ալմա Գուլաքի կոչվող վայրում: Աղ-Ղոյունլուի 70 հազարանոց բանակը ջախջախվեց, սակայն սուլթան Մուրադին հաջողվեց փախչել: Այդ հաղթանակի հետևանքով շահ Իսմայիլը նվաճեց ողջ Պարսկական Իրաքը, վերջ տալով Աղ-Ղոյունլու պետության գոյությանը: Նույն 1503 թ. ղզլբաշական բանակը գրավեց Շիրազը, Սպահանը, Քաշանը, Ղումը, իսկ 1504թ.՝ Յեզդը: 1509թ. նա իր տիրույթներին միացրեց Խուզիստանը, Քրդստանը, Գիլյանը, Մազանդարանը և Արևմտյան Իրանի մնացած մասերը: Զարգացնելով իրենց նվաճումները, 1507թ. ղզլբաշները գրավեցին Հայաստանը մինչև Դիարբեքիր, իսկ 1508թ. վերցրին Բաղդադն ու իրենց ենթարկեցին Արաբական Իրաքը: Ի դեպ, Միջագետքի նվաճումն ուղեկցվում էր սուննիթների ու քրիստոնյաների նկատմամբ զանգվածային հալածանքներով, ամեն մի այլախոհության անվերապահ ճնշմամբ, սուննիների սրբավայրերի կործանումով: Հիմքից ավերվեցին Իրաքում ամենահարգված սուֆիական սրբերից մեկի՝ Աբդալ-Ղադեր ալ- Ղայլանիի և Օսմանյան կայսրությունում տարածված իսլամի հանիֆիական մազհաբի հիմնադիր, սուննիթական իմամ Աբու-Հանիֆի դամբարանները: Մոլեռանդ ղզլբաշները իմամի աճյունը հանեցին գերեզմանից, պղծեցին, այրեցին ու փոշին քամուն տվեցին: Բազմաթիվ սուննիթական մզկիթներ և դերվիշական մենաստաններ վերածվեցին շիհթական աղոթավայրերի: Քոչվոր ռազմիկների խժդժություններին զոհ գնացին ոչ միայն տասնյակ հազարավոր սուննիթներ, այլև քրիստոնյաներ: Ամենուրեք հրի և սրի միջոցով արմատավորվում էր շիհզմը: Իրաքի բնակչությունը բիրտ ուժի սարսափի ներքո ստիպված էր ընդունել նոր հավատը: Բաղդադում և Արաբական Իրաքի մյուս քաղաք-

ներում սկսեցին բնակություն հաստատել մեծ թվով պարսիկներ, լայնորեն տարածվում էր պարսկերեն լեզուն: Էն-Նաջաֆում, Քարբալայում և Սամարրայում գործող սրբավայրերը ստանում էին խոշոր նվիրատվություններ: Շահ Իսմայիլի կարգադրությամբ, Սեֆյանների նախահայր համարվող յոթերորդ շիիթական իմամ Մուսա Քազիմի գերեզմանի վրա սկսեցին կառուցել վիթխարի չափերի հասնող մի դամբարան: Ղզլբաշական խաները ստացան լավագույն հողերն ու արոտավայրերը: Նրանք դարձան երկրի լիիրավ կառավարիչներ:

Նոր կազմակերպված պետության համար երկրի արևելքում հիմնական թշնամի էր հանդիսանում վաչկատուն ուզբեկների պետությունը՝ Մուհամմադ Շեյբանիի գլխավորությամբ, որը 1507թ. գրավել էր Խորասանը: 1510թ. Մերվի մոտ շահ Իսմայիլը ջախջախեց ուզբեկներին, իսկ ինքը Շեյբանին, ճակատամարտի ժամանակ սպանվեց: Ողջ Խորասանը և Միջին Ասիայի որոշ տարածքներ, մինչև Ամու-Դարյա գետը, անցավ ղզլբաշներին: Ի նշանավորումն հաղթանակի, սպանված ուզբեկների գանգերից Իսմայիլը կառուցեց մինարեթներ:

Սուննիթ ուզբեկների ջախջախիչ պարտությունը մեծ տագնապ առաջ բերեց ողջ մահմեդական Արևելքում: Ղզլբաշների ծայրահեղականությունը մահմեդական աշխարհը ներքաշել էր կրոնական պատերազմների ու ապստամբությունների հորձանուտի մեջ: Ըստ էության եռանդուն ու վճռական շահ Իսմայիլը մարտահրավեր էր նետել ողջ սուննիթական իսլամին: Կահիրեյում սկսվեց խուճապ, որովհետև Եգիպտոսն այդ ժամանակ գտնվում էր Սեֆյանների հետ պատերազմի շեմին և սպասում էր ղզլբաշական բանակի ներխուժմանը: 1512թ. Եփրատի մոտ զինված բախումներից հետո Սիրիան և Եգիպտոսը կրկին շունչները պահած սպասում էին շահ Իսմայիլի հետ պատերազմին. նրանց այդ տագնապները միանգամայն տեղին էին, որովհետև պորտուգալական դեսպանի հետ զրույցի ժամանակ շահ Իսմայիլը ասել էր, որ ինքը ծրագրեր ունի գրավելու Մեքքան և ներխուժելու Եգիպտական մամլյուքների տիրապետության տակ գտնվող արաբական հողեր:

Ղզլբաշների կողմից Իրանի նահանգների գրավումը հեշտանում էր նրանով, որ տեղական դինաստիաների միջև թշնամանքն ու պատերազմները անդամալուծում էին նրանց ուժերը և բացառում համատեղ դիմադրությունը:

Ղզլբաշների նվաճումները զարգանում էին նաև արևմտյան ուղղությամբ: Թեև թուրքական սուլթան Բայազեդ Բ-ը Դերվիշը Իսմայիլի մոտ ուղարկեց մի դեսպանություն, շնորհավորելու համար նրա հաջողու-

թյունները (1504թ.), սակայն դա չկանգնեցրեց ղզլբաշների շարժումը դեպի արևմուտք: Այստեղ նրանք անխուսափելիորեն բախվելու էին օսմանցիների հետ, որոնք նույնպես ձգտում էին արևելքում ընդլայնել իրենց սահմանները և զավթել Անդրկովկասը, Արաբական Իրաքը, Ատրպատականը, իրենց հսկողությունը սահմանել միջազգային առևտրական ճանապարհների վրա և այլն:

Նկատի ունենալով, որ Անատոլիայում բնակվում էին տասնյակ հազարավոր շիաներ, շահ Իսմայիլը ձգտում էր Օսմանյան կայսրությունը «նվաճել ներսից», այլ կերպ ասած հրահրել քաղաքական շարժումներ շիիթական Իրանին աջակցություն ցույց տալու կարգախոսի ներքո: Փոքր Ասիայից նրա լրտեսները հաղորդում էին, որ մյուրիդները պատրաստ են ապստամբելու և օգնելու ղզլբաշներին:

1511թ. Փոքր Ասիայի արևելյան շրջաններում, ուր շիա բնակչությունը կազմում էր մեծ զանգված, բռնկեց մի հուժկու ապստամբություն շիիթականության և շահ Իսմայիլին պաշտպանելու կարգախոսների ներքո: Ապստամբության ղեկավարը էր թեքքելյու ցեղից ղզլբաշ Հասան - օղլուն, որն իրեն անվանում էր «շահ ղուլու» (շահի ղուլ, ստրուկ): Այդ մականունը սուննիները և օսմանցիների կողմնակիցները վերափոխեցին «Շեյթան-ղուլուի» («սատանայի ստրուկ»): Վերջինս իրականացնում էր զանգվածային ահաբեկչության և սանձարձակ վայրագությունների քաղաքականություն: Ապստամբները ավերում ու քանդում էին սուննիթական մզկիթները, պղծում սրբերի գերեզմանները: Նրանք շիիթական ոգով փոխեցին Ղուրանի տեքստը, բոլոր բարեպաշտ խալիֆներին, բացի Ալիից, մեղադրեցին սրբապղծության մեջ և ի հավելումն այդ բոլորի, ցզովքի ենթարկեցին և պոռնիկ հռչակեցին Այիշային՝ մարգարեի սիրեցյալ և ամենահարգելի կնոջը, որի անվան հետ էին կապված սուննիթական շարիաթի հիմքում ընկած բազմաթիվ հաղիսներ:

Փոքրասիական շիիթների ապստամբությունը վերին աստիճանի վտանգավոր էր Օսմանյան կայսրության համար: Այն ճնշելու համար հարկ եղավ հավաքել մեծաթիվ զորքեր: Կայսերիի և Սըվասի (Սեբաստիա) միջև ընկած մի դաշտավայրում, Քյուք-չայ գետի մոտ տեղի ունեցավ մի կատաղի և արյունահեղ ճակատամարտ, որի ժամանակ զոհվեցին և՝ թուրքական մեծ վեզիրը և՝ Շահ-ղուլուն: Կենդանի մնացած ապստամբները փախան Իրան:

Թեև շահ Իսմայիլի գաղտնի էմիսարները վխտում էին Փոքր Ասիայում, սակայն շահը արդյունավետ օգնություն չցուցաբերեց ապստամբներին ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ չէր ցանկանում գործը

հասցնել մինչև օսմանցիների հետ հարաբերությունների բացահայտ խզումը և պատերազմի հայտարարումը, որին ինքը դեռ պատրաստ չէր: Տեսակետ կա այն մասին, որ ապստամբների շրջանում կային բազմաթիվ «ծայրահեղ» շիիթներ, որոնք առաջ էին քաշում շահի համար անընդունելի պահանջներ (օրինակ, համընդհանուր հավասարության պահանջ և այլն):

Շուտով օսմանյան գահի վրա իր ալեհեր հորը՝ սուլթան Բայազեդ Բ-ին փոխարինեց նրա որդին՝ Սելիմ Ա-ն (1512-1520թթ.), որին անագորույն դաժանության համար տվել են «Յավուզ» («ահեղ») մականունը: Սա արյունարբու լինելու հետ միաժամանակ եռանդուն ու շրջահայաց քաղաքագետ էր և նաև խիզախ ռազմիկ: Հայտնի է, որ ողջ XV դարի ընթացքում օսմանցիները նվաճողական պատերազմներ էին մղում Բալկանյան թերակղզու պետությունների, ինչպես նաև Հունգարիայի, Վենետիկի և եվրոպական այլ երկրների հետ: Սակայն Սելիմ Յավուզը ծրագրել էր օսմանյան վիթխարի ռազմական մեքենան շարժել նաև դեպի Արևելք: Սուլթանին լուրջ անհանգստություն էր պատճառում իր արևելյան հարևանի՝ Սեֆյան Իրանի արագ հզորացումը, նրա ուժեղացող նվաճողականությունը և քաղաքական կշռի մեծացումը ողջ տարածաշրջանում: Թեև երկու պետությունների միջև հակասություններն առավելապես ունեին տնտեսական և քաղաքական ենթահող, սակայն նրանք երկուսն էլ մահացու գոտեմարտի էին պատրաստվում կրոնական դրոշների ներքո: Սուլթան Սելիմը հայտարարում էր, որ իր միակ նպատակն է ուղղադավան իսլամը պաշտպանել «հերձվածող» շիաների հարձակումներից: Իրադարձությունների ընթացքը սրընթաց կերպով տանում էր դեպի պատերազմ: Առաջիկա ռազմական բախման ընթացքում թիկունքն ապահովելու նպատակով, սուլթանի գաղտնի գործակալների կողմից նախապես պատրաստված ցուցակներով, ոչնչացվեցին փոքրասիական 40 հազար ակտիվ շիաներ, որոնք շահի առաջին իսկ կոչով պատրաստ էին ղիմակայել *յանիչարիական* բանակներին:

1514թ. գարնանը սկսվեց թուրք-իրանական պատերազմը: Երկու հզոր, կենտրոնացված, ռազմաավատական բռնապետությունների առաջին ու վճռական ռազմական բախումը տեղի ունեցավ Վանա լճից հյուսիս-արևմուտք գտնվող Չալդրան կոչվող դաշտավայրում, 1514թ. օգոստոսի 23-ին: Թեև ղզլբաշները կռվեցին անվեհեր խիզախությամբ և շահ Իսմայիլ Ա-ը անձամբ սուրը ձեռքին նետվեց թշնամու վրա, նրա թնդանոթների կործանիչ կրակի դեմ, ճակատամարտի ելքը որոշեց թուրքական հրետանին, որն ի դեպ, բացակայում կամ համարյա բացակայում էր ղզլբաշական բանակում: Եվրոպական աղբյուրների վկայությամբ, այդ ժամանակ թուրքերն ունեին աշխարհում լավագույն թնդա-

ոթքները: Աղբյուրների հավաստմամբ, ղզլբաշները մարտում հրազենի կիրառումը համարում էին վախկոտության ու փոքրոգության դրսևորում: Սակայն դա ավելի շուտ իրենց հետամնացությունն ու անզորությունը արդարացնելուն միտված մի պատճառաբանություն էր:

Չալդրանի ճակատամարտում ոչ պակաս կարևոր դեր խաղաց նաև օսմանյան բանակի ավելի կուռ ռազմական կազմակերպությունը, զորքերի կարգապահությունը, պատերազմական մեծ փորձը և այլն: Թուրքերն ունեին նաև հիանալի հետախուզություն, քիկունքային ծառայություններ և այլն: Մի խոսքով, օսմանյան բանակի հաղթանակը կատարյալ էր: Սելիմ Ա-ի զորքերը գլխովին ջախջախեցին ղզլբաշների բանակը, որը ճակատամարտում կորցրեց մոտ 50 հազար մարդ: Սեֆյանները այն աստիճանի խուճապահար նահանջի դիմեցին, որ նույնիսկ շահական հարեմն ընկավ թշնամու ձեռքը

Օսմանցիներին հաջողվեց նաև գրավել Թավրիզը (1514թ. սեպտեմբերի 5-ին): Սակայն յանիչարիների խլրտումների պատճառով, որոնց մեջ քիչ չէին ծպտված շիաները, սուլթան Սելիմը որոշեց չզարգացնել հաջողությունը: Ատրպատականը և Արաբական Իրաքը մնացին Սեֆյան պետության կազմում: Ղզլբաշների տիրապետությունը պահպանվեց նաև Անդկովկասի երկրներում:

Չալդրանի ճակատամարտի հետևանքով Արևմտյան Հայաստանը միացվեց Օսմանյան կայսրությանը: Այսուհետև որպես բուֆերային դիրք ունեցող երկիր, Հայաստանը դառնում էր ոտքի կոխան երկու մարտնչող պետությունների միջև, աղետներ և ավերածություններ բերելով *հայ ժողովրդի զույգ հատվածներին:*

Չալդրանի ճակատամարտը, սակայն, չլուծեց թուրք-իրանական հակամարտության հանգուցային խնդիրները: Ուստի կողմերի միջև պատերազմները շարունակվեցին ևս ավելի քան մեկ հարյուրամյակ:

Շահ Իսմայիլը որոշեց Չալդրանի պարտությունը փոխհատուցել մեկ այլ հաղթական պատերազմով: 1519թ. ղզլբաշական զորքերը գրավեցին Վրաստանը, իսկ այնուհետև Շիրվանի և այլ անդրկովկասյան խանությունները:

Այսպիսով, հենց առաջին Սեֆյան շահի օրոք ստեղծվեց մի հսկա պետություն, որի հարավային սահմանները ողողում էր Պարսից ծոցը, արևելքում սահմանը հասնում էր մինչև Աֆղանստանի խորքերը, հյուսիսում մինչև Ամու-Դարյա գետը, արևմուտքում՝ մինչև Եփրատ:

Կյանքի 37-րդ տարում հանկարծամահ եղած շահ Իսմայիլ Ա-ին 1524թ. Սեֆյան գահի վրա փոխարինեց Թահմազ (Թահմասպ) Ա-ն

(1524-1576), որն ընդամենը տաս տարեկան էր: Օսմանյան սուլթան Սուլեյման Ա. Ղանունին («Հիասքանչ» հորջորջված) 1525թ. նոր շահի անունով ուղարկեց մի ուղերձ, որտեղ Իրանի դեռևս մանուկ տիրակալին առաջարկում էր գլխից հանել թագը և իր նախորդների նման ներկվել դերվիշական ցնցոտի: Սակայն այս ծաղրական վերաբերմունքը դեռ չարյաց փոքրագույնն էր: Իր շրջապատի մարդիկ ևս անքաքույց արհամարհանքով էին վերաբերվում շահի նկատմամբ, իսկ զզլբաշական վերնախավը, հատկապես ռումլու, ուսքաջլու, թեքելլյու, զու-լ-քադար և մյուս ցեղերը աշխատում էին շահին դարձնել խաղալիք իրենց ձեռքերում: Նորաթուխ շահը իր ողջ ժամանակը վատնում էր շարիաթի ուսումնասիրման և գեղագրության վրա: Միայն 20 տարեկան հասակում նա վերջնականապես իր ձեռքը վերցրեց պետական ու ռազմական գործերը, դրսևորելով խելք, շրջահայեցություն և պետական գործչի այլ անհրաժեշտ հատկանիշներ:

1525թ. ռումլու և ուսքաջլու ցեղերը սուր վեճի մտան միմյանց հետ այն հարցի շուրջը, թե նրանցից որ մեկը պետք է լինի մանկահասակ շահի վեքիլը, այսինքն խնամակալն ու դաստիարակը: Պետության առաջին դեմքի մանկահասակ և անզոր լինելը և «ուժեղ ձեռքի» բացակայությունը մղում հաղորդեց ծայրամասային ավատատերերի ինքնագլխության ձգտումներին: 1526թ. տեղի ունեցավ ուսքաջլու ցեղի ապստամբություն, 1531թ. ապստամբեց թեքելլյու ցեղը, որը կողոպուտի ենթարկեց նույնիսկ մայրաքաղաքը: Սեֆյանների հենարանը հանդիսացող այս զզլբաշական ցեղերի անհնազանդությունն ու ըմբոստությունը վատ նախանշան էր: Քոչվորական ազնվականությունը, որն իրենից ներկայացնում էր միակ ռեալ ուժը՝ բանակը, սկսել էր կենտրոնական կառավարությանը թելադրել իր պայմանները: 1529թ. ապստամբություն բարձրացրեց քոչվոր լուրերի առաջնորդներից մեկը, Քելհուրի տիրակալ Զուլֆիղար բեկը , որը գրավեց Բաղդադն ու Արաբական Իրաքը և հայտարարեց, որ ինքը դուրս է գալիս շահի տիրապետությունից և այսուհետև ենթարկվելու է Օսմանյան սուլթան Սուլեյման Ա-ին: Նա նույնիսկ սուլթանի անունով մզկիթներում մտցրեց խութբայի ընթերցում: Հարկ եղավ, որ Բաղդադը վերագրավելու համար կազմակերպվի մի մեծ արշավանք /1529թ/: Զզլբաշական զորքերը 1529թ. հունիսի 10-ին գրավեցին Բաղդադը և սպանեցին խոռվարարների գլխավորին: Հաջորդ տարում ապստամբություն բռնկեց հենց մայրաքաղաքում՝ Թավրիզում: Ընդ որում ապստամբը Թավրիզի բեկլարբեկ Ուլաման էր, որը նահանջելով շահական զորքերի առաջ, ապավինեց օսմանցիներին և ամրացավ Վանի բերդում: Դրանից քիչ

անց, թուրքերի հետ միացած Ուլաման հետ առավ Թավրիզը: Այս շարժումը հաջողվեց վերջնականապես ճնշել միայն 1575թ.:

Սեֆյան կառավարության դեմ ապստամբություններ բռնկեցին նաև Վրաստանում, Գիլյանում, Աստերաբադում, Խուզիստանում և այլն:

Թահմազ Ա-ի գահակալության առաջին տարիներին կրկին ակտիվացել էին նաև Միջին Ասիայի ուզբեկական խանությունները: Մավարաննահրի խաները համարյա ամեն տարի արշավանքներ էին կազմակերպում դեպի Խորասան և Աստերաբադի շրջանը: Նրանց հաջողվեց մի քանի անգամ գրավել Հերաթ քաղաքը: Ճիշտ է, 1528թ. ղզլբաշները ուզբեկների Ուբեյդուլլա- խանին հասցրին ծանր պարտություն, սակայն հենց որ սեֆյան զորքերը հեռանում էին, Ուբեյդուլլա-խանը կրկին գրավում էր Մեշհեդն ու Հերաթը: Ի դեպ, սեֆյան պետության պայքարը սունիզմը դավանող ուզբեկական խաների դեմ ընթանում էր շիաների և սուննիների միջև կրոնական պայքարի քաղաքի ներքո:

1533թ. սուլթան Սուլեյման Ա-ը իր առաջին պատերազմը սկսեց Իրանի դեմ: Նրա հսկայական բանակը, որը մի շարք տվյալների համաձայն հաշվվում էր 140 հազար մարդ, մեծ վեզիր, հռչակավոր Իբրահիմ փաշայի հրամանատարությամբ շարժվեց դեպի Իրան: Ղզլբաշները հապշտապ նահանջում էին, օգտագործելով «այրված հողի» մարտավարությունը: Նրանք իրենց հետևից այրում ու ոչնչացնում էին ամեն ինչ, որպեսզի գրավյալ տարածքում թշնամին չգտնի ուտելիք ու կացարան բանակի, և կեր կենդանիների համար: Իրանին հնուց ի վեր ծանոթ մարտավարության բաղկացուցիչ մասն էր հանդիսանում նաև տեղական բնակչության բոնի տեղահանությունը դեպի երկրի խորքերը:

Սուլթան Սուլեյմանը Թահմազին գրեց մի նամակ, որտեղ նա շահին մեղադրում էր վախկոտության մեջ և պահանջում էր ընդունել ճակատամարտը: Իր պատասխան նամակում Թահմազը գրում էր, որ ինքը խելագար չէ և չի կարող ճակատամարտի դուրս գալ մի թշնամու դեմ այն պայմաններում, երբ մեկ ղզլբաշի դեմ կանգնած են տասը թուրքեր: Մինչ այդ, իր զորահրամանատարներին Թահմազը գրել էր.«Ես չեմ վարվի հորս նման: Այս թշնամին շատ ուժեղ է»:

1534թ. հուլիսի 13-ին թուրքական զորքերը մուտք գործեցին Թավրիզ: Այստեղ գործող բանակին այցելության եկավ անձամբ ինքը՝ Սուլեյման «Հիասքանչը»: Համախմբելով իրենց ուժերը, թուրքերը շարժվեցին հարավ, դեպի Համադան: Այդպես էլ չհանդիպելով հակառակորդին, նրանք որոշեցին շարժվել Իրաք ձմեռելու:

1538թ. թուրքական զորքերը գրավեցին Վան քաղաքը և Վանա լճի

ավազանը:

Թուրք-իրանական ռազմական գործողությունների մշտական թատերաբեմ էր հանդիսանում նաև Արևելյան Վրաստանը: Սեֆյան պետությունը իր թույլ կենտրոնական իշխանությամբ, հետամնաց ռազմական կազմակերպությամբ և հնացած ռազմական տեխնիկայով ստիպված էր սահամանափակվել պաշտպանողական պատերազմ մղելով:

Շահ Թահմազի հիշատակարանում մենք գտնում ենք Արևմտյան Հայաստանի քաղաքների ավերման, հայ երեխաների գերևարության ու զանգվածային բռնագաղթերի մասին խիստ ուշագրավ տեղեկություններ: «Երբ ես լուր ստացա, - գրում է նա, -որ խոնդկարը (սուլթան Սուլեյմանը, Վ.Բ.), հասել է Սլվազ և պետք է երեք շաբաթ այնտեղ սպասի, մինչև որ ուղտերը յուղեն, ես ինձ մոտ հրավիրեցի շրջակա վայրերի ավագներին, երևելիներին և քյաղխուդաներին և հայտնեցի նրանց, որ կարգադրված է իմ զինվորներին՝ նահանջելով թուրքական բանակի առջևից, այրել և ոչնչացնել մոտակա վայրերի բոլոր հացահատիկն ու բերքը: Այդ վայրերի հացահատիկը այրեցինք և ոչնչացրեցինք, իսկ ջրի ակունքները փակեցինք. ինչպես ամեն մի խելացի մարդու համար պարզ է, պատերազմի գործը թղթախաղի նման է, ինչ միջոցով էլ որ լինի պետք է գործը առաջ տանել և հակառակորդին ծնկի բերել»: «Պատերազմը խարդախություն է,-ասել է Ալին,- պատերազմի ժամանակ , լինի փախչելով ,թե խաբելով, այնպես պետք է անել, որ թշնամուն ոչ մի միջոց չտրվի»:

Օսմանյան բանակը, առաջնորդվելով յանիչարիական ավանդույթներով, նույնպես իր հետևից թողնում էր ավերակներ ու ծխացող բնակավայրեր: Թուրք պատմագիր Փեչևին բերում է նման բազմաթիվ փաստեր. «Հաղթական բանակի սարսափից,- գրում է նա,- քաղաքներն ու գյուղերը այն աստիճան ամայացել, ավերվել և բուերի ու ագռավների բնակավայր էին դարձել, որ տեսնողին սարսափ էր պատճառում»:

1546թ. միանալով Իրանի նկատմամբ թշնամաբար տրամադրված Շիրվանի սուննի ավատատերերին, այդ երկրամասի բեկլարբեկ, Թահմազ Ա-ի հարազատ եղբայր Ալխազ-միրզան ապստամբեց եղբոր դեմ, նպատակ ունենալով Շիրվանը անջատել Սեֆյան պետությունից և իրեն հայտարարել նրա կառավարիչ: Սեֆյան զորքերի ճնշման տակ խռովարար բեկլարբեկը փախավ Ստամբուլ, փնտրելով սուլթանի հովանավորությունը: Ալխազ-միրզային հաջողվում է համոզել Սուլեյման Ա-ին արշավանք կազմակերպելու սեֆյանների դեմ: 1548թ. մայիսին թուրքական զորքերը կրկին գրավում են Թավրիզը: Սակայն գահը գրավելու ուղղությամբ Ալխազ - միրզայի հույսերը ի դերև ելան, որովհետև սուլթանը ըն-

դառաջ չգնաց նրա այդ պահանջին: Այն բանից հետո, երբ զայրացած իշխանազունը հանդուգն վեճի մեջ մտավ սուլթանի հետ, վերջինս հրամայեց ձերբակալել նրան և հանձնել Թահմազ Ա-ին: Հետևեց շահի հրամանը՝ նրան բանտարկել՝ Կահկահե ամրոցում, իսկ որոշ ժամանակ անց /1549թ./, նա հրամայեց սպանել հարազատ եղբորը:

1552թ. Թահմազ Ա-ը ասպատակ սփռեց Օսմանյան կայսրության սահմանամերձ շրջաններում: Հրով ու սրով անցնելով թշնամու տարածքով, ղզլբաշները արշավանքից վերադարձան հարուստ ռազմական ավարով: Պատասխան հարվածը սուլթան Սուլեյմանը հասցրեց միայն 1554թ գարնանը, զորքերը շարժելով դեպի Ատրպատական և ճանապարհին գրավելով Նախիջևանը: Հավատարիմ մնալով իր ընտրած մարտավարությանը, Թահմազը այս անգամ ևս խուսափեց խոշոր ճակատամարտերից, փոքր մարտերում շոշափելի վնասներ հասցնելով օսմանյան բանակին:

Թերևս այն հանգամանքը, որ օսմանյան բոլոր արշավանքների առաջին թիրախը Թավրիզն էր, 1548թ. շահ Թահմազը իր մայրաքաղաքը տեղափոխեց Ղազվին: Այդ գործում վճռորոշ դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ Թավրիզը չափազանց մոտ էր թուրքական սահմանին:

Շահի և սուլթանի մերձակա շրջապատում գնալով տիրապետող էր դառնում այն մտայնությունը, որ ռազմական ուժի օգնությամբ թշնամուն ծնկի բերելու փորձերը անպտուղ ու անարդյունք են: Ուստի կողմերը ավելի ու ավելի էին հակվում այն մտքին, որ անհրաժեշտ է սկսել խաղաղության բանակցություններ:

1555թ. մայիսի 29-ին /հիջրեթի 962թ. ռաջաբի 8-ին/ Փոքր Ասիայի Ամասիա քաղաքում կնքվեց թուրք-իրանական հաշտություն, որն իր ավարտին հասցրեց իրանա-թուրքական պատերազմների առաջին էտապը: Սեֆյանները հրաժարվեցին իրենց իրավունքներից Արաբական Իրաքի նկատմամբ և այն ճանաչեցին որպես Օսմանյան կայսրության բաղկացուցիչ մաս: Օսմանցիները ստացան նաև Արևմտյան Հայաստանի մեջ մտնող Վասպուրականն ու Ալաշկերտի հովիտը, ինչպես նաև Արևմտյան Վրաստանը (Իմերեթը, Մենգրելիան, Գուրիան): Իրանն իր կազմում պահպանեց Ատրպատականը, Արևելյան Հայաստանը և Արևելյան Վրաստանը (Մեսխեթը, Քարթլին, Կախեթը): Կարսի նահանգը ճանաչվեց որպես չեզոք տարածք, որոշվեց այդ նահանգը իսպառ ավերել ու մարդաթափ անել:

Այսպիսով տեղի ունեցավ Հայաստանի և Վրաստանի բաժանում Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև: Ե'վ Սուլեյման Ա-ը և'

Թահմազ Ա-ը իրենց կառավարման հետագա տարիներին չխախտեցին Ամասիայի պայմանագիրը:

1559թ. Օսմանյան սուլթան Սուլեյման Ա-ի որդի Բայազետը ապստամբեց հոր դեմ: Անհաջողություն կրելով, նա ապաստան որոնեց Իրանում՝ շահ Թահմազի մոտ: Վերջինս անշուշտ կարող էր լավագույնս օգտագործել թուրքական գահի հավակնորդի իր մոտ լինելու հանգամանքը: Սակայն շահամոլ բռնակալը որոշեց իր հյուրին վաճառել սուլթան Սուլեյմանին: Թահմազը Բայազետի զինվորներին ընդգրկեց իր բանակի շարքերը, իսկ իրեն, քաղաքական վտարանդուն, սուլթանի հետ երկու տարի տևած սակարկություններից հետո հանձնեց նրան, այդ նողկալի դավաճանության ու ստորության համար Սուլեյման Ա-ից ստանալով 400 հազար ոսկի /1561թ./:

Իր պատանեկության տարիներին զգլբաշական վերնախավի ձեռքում շահ Թահմազի խաղալիք լինելը նրա մոտ առաջ էր բերել բարդույթներ: Նա վերին աստիճանի ինքնամփոփ ու մռայլ, կասկածամիտ մի անձնավորություն էր, չէր սիրում հայտնվել ժողովրդի աչքի առջև, չէր սիրում որևէ մեկի ներկայությամբ ուտել: Քսան տարի ձի չէր նստել և տասնմեկ տարի դուրս չէր եկել իր պալատից: Նրա բնավորության բնորոշ գծերն էին ծայրահեղ ժլատությունը և մանրախնդրությունը: Գանձարանի եկամուտներն ավելացնելու համար նա այլ միջոց չէր տեսնում, բացի հարկերի հարաճուն բարձրացումից: Հարկային այդ քաղաքականությունը ծանր հետևանքներ ունեցավ Իրանի տնտեսության համար: Շահի կուտակած վիթխարի հարստությունները որպես գանձ պահվում էր գանձարանում, առանց շրջանառության մեջ մտնելու:

Թահմազ Ա-ի կառավարման վերջին տարիներին Իրանի ներքին դրությունը չափազանց ծանր էր: Ճանապարհների վրա վխտացող ավազակների հարձակումների և ավատատերերի ներքին կռիվների պատճառով երթևեկությունը դարձել էր վտանգավոր: Այդ պատճառով կարևորագույն քարավանային ճանապարհները դեպի արևմուտք՝ Հալեպ և դեպի հարավ՝ Հորմուզի նավահանգիստը, կատարելապես լքված էին: Նրա տիրապետության օրոք համաճարակի և սովի պատճառով երկրի բնակչության հսկայական զանգվածներ կորստյան մատնվեցին: Բնական աղետները և հասարակական ցնցումները անդամալուծեցին երկիրը: 1571թ. գործը հասավ նույնիսկ մարդակերության: Երկրի արևելքում իրավիճակը ոչ մի կերպ չէր կայունանում: Խորասանն անընդհատ ենթարկվում էր ուզբեկական խաների և նրանց քոչվոր ռազմիկների ասպատակություններին: Երկրի տարբեր շրջաններում գյուղացիության և քաղաքային արհես-

տավորության ապստամբական բռնկումները երբեք չէին դադարում:

1576թ. շահ Թահմազ Ա-ի մահը խուճապ ու շփոթություն առաջ բերեց զզլբաշական ազնվականության ու բարձրագույն շիիթական հոգևորականության շրջանում, որովհետև պահը միանգամայն հարմար էր դինաստիայի ու կառավարության թշնամիների խռովության ու ապստամբության համար: Բացի այդ, շահը թողել էր տասներկու որդիներ, որոնցից յուրաքանչյուրը, զզլբաշական սովորույթի համաձայն, ուներ «դաստիարակ» («լալե»), որը սովորաբար լինում էր զզլբաշական ցեղերից մեկի ներկայացուցիչը: Այս կարգի համաձայն, ամեն մի արքայազուն համարվում էր այս կամ այն ցեղի «սանը»: Ուստաջլու ցեղի էմիրները շահ հռչակեցին իրենց «սան», Թահմազի հինգերորդ որդի Հեյդար-Միրզային, որին իր զորակցությունը հայտնեց նաև արքունիքի վրացական թիկնազորը: Սակայն աֆշար, դաջար, ռումլու, վարսակ և այլ ցեղերի էմիրները չընդունեցին Հեյդար-Միրզային: Ղազվինում տեղի ունեցավ արյունալի ընդհարում, որի ժամանակ Հեյդարը սպանվեց: Զզլբաշ երևելիները գահ բարձրացրին աֆշար ցեղի «սան» Իսմայիլ-Միրզային, որին կասկածամիտ հայրը, շահ Թահմազ Ա-ը, 20 տարի շարունակ բանտարկության մեջ էր պահում Կահկահե ամրոցում:

Շահ Իսմայիլ Բ-ը /1576-1577/ ողբերական ճակատագրի տեր անձնավորություն էր: Օսմանյան զորքերի դեմ նրա տարած մի քանի հաղթանակները նրան բերել էին անպարտելի զորահրամանատարի փառք: Նրա հանդուգն ու անսպասելի հարձակումները մշտական սարսափի մեջ էին պահում թուրքերին, որոնք նրան կնքել էին «ղելի Իսմայիլ» («Խելագար Իսմայիլ») անունը: Իսմայիլի թշնամիները կարողացել էին ներշնչել շահ Թահմազին, որ իբր վերելք ապրող շահ-զադեն գաղտնի մտադրություն ունի նրան հեռացնելու գահից և հափշտակելու այն: Շահի համար այդ շշուկները թվում էին արժանահավատ ու հիմնավոր, որովհետև Իսմայիլի գահակալմանը կողմնակից էին այնպիսի ազդեցիկ ղեմքեր, ինչպիսիք էին ռումլու ցեղի առաջնորդ Հոսեյին-ղուլի-խալիֆեն, թոքման ցեղի առաջնորդ Հեյդար-Սուլթան Չաբուքը, շահական պալատի չերքեզական թիկնազորի հրամանատար Շամխալ-սուլթանը, աֆշար ցեղի առաջնորդ Ամիրասլան-բեկը և վերջապես Թահմազի դուստր Փերիխան-խանումը: Այդ բոլորի հետևանքով շահը պաշտոնազուրկ արեց 24-ամյա արքայազունին և հրամայեց բանտարկել Կահկահե ամրոցում: 20-ամյա բանտարկությունից նա դուրս եկավ քառասուն երեք տարեկան հասակում, բարոյապես ու ֆիզիկապես կոտրված, ամեն ինչի նկատմամբ չարացած: Այդ բոլորի հետևանքով Շահ Իսմայիլ Բ-ն, որը

դաժան մեկն էր, փորձում էր իր իշխանությունն ամրապնդել զանգվածային մահապատիժների ու սարսափի միջոցով: Նա չխնայեց նույնիսկ Ղազվինում բնակվող իր վեց եղբայրներին: Այնուհետև հրաման արձակեց երկրի տարբեր մասերում ապրող իր ազգականների ոչնչացման վերաբերյալ: Սակայն այդ հրամանը ամբողջությամբ ի կատար չածվեց, որովհետև Իսմայիլ Բ-ը հանկարծակի մահացավ, ընդունելով հաշիշի չափազանց մեծ քանակություն իր հալվաջի-բաշիի տանը: Չի բացառվում, որ վերջինս թունավորել էր նրան: Մեկ այլ վարկածի համաձայն, Իսմայիլ Բ-ը սպանվեց հարեմում, կանացի զգեստ հագած դավաղիրների կողմից: Էմիրների և ազնվականության բարձրագույն խորհուրդը («դիվան-ի ալի») որոշեց շահ հռչակել Թահմազ Ա-ի ավագ որդուն, Սուլթան Մոհամմադին, որն ուներ Խուդաբենդե («Աստծո ծառա») մականունը:

Վերջինիս թեկնածությունը, որպես գահի հավակնորդ, նախկինում անտեսվում էր աչքերի հիվանդության պատճառով: Շահ Սուլթան Մոհամմադ Խուդաբենդեն (1577-1587) կեղծ բարեպաշտ և անկամ ու հիվանդոտ մի անձնավորություն էր, խաղալիք իր կնոջ՝ Հեյրաննիսա-բեգիմի ձեռքին, որն ավելի շատ հայտնի էր Մահդի Ուլիյա անունով: Կամային հատկանիշներով օժտված այս իշխանատենչ և սադրանքներ հյուսելու հակում ունեցող այդ կինը խառնվում էր պետական գործերին: Նրան հաջողվեց ձեռք գցել նույնիսկ «վեքալաթ-ի դիվանի ա՛լայի» («բարձրագույն դիվանի կառավարիչ») բարձր պաշտոնը: Մահդի Ուլիյան Մոհամմադ Խուդաբենդեի երկու որդիների՝ Համզա միրզայի և Աբբաս-միրզայի մայրն էր: Ցանկանալով շահ դարձնել իր ավագ և սիրելի որդուն՝ Համզային, նա խեղդամահ արեց բոլոր նրանց, ովքեր արգելք էին հանդիսանում այդ նպատակի իրագործման ճանապարհին: Ի վերջո այդ բոլորի համար նա հատուցեց իր կյանքով. 1579թ. ամռանը շամլու ցեղի ղզլբաշ երևելիները թափանցեցին պալատում Մահդի Ուլիայի սենյակը և սառնասրտորեն սպանեցին թագուհուն:

Դաժանությամբ իր կնոջից հետ չէր մնում նաև շահը: Իր գահակալությունից հետո նրա առաջին գործը հանդիսացավ իր հարազատ քրոջը՝ Փերիխան-խանումին վերացնելը, որը մայրաքաղաք Ղազվինում ամբողջ իշխանությունը կենտրոնացրել էր իր ձեռքերում: Եղբոր հրամանով նրա գլուխը կտրեցին և համընդհանուր ցուցադրման համար կախեցին քաղաքի դարպասներից: Չմոռացան նաև խեղդամահ անել նրա մեկ տարեկան որդուն՝ Շահշոջային:

Օգտվելով Իրանում ստեղծված խառնակ վիճակից և 1577թ. հունվարին ավարտելով պատերազմը հաբսբուրգների գերմանական կայսրու-

թյան հետ, օսմանյան սուլթան Մուրադ Գ-ը (1574-1595) խախտեց Ամասիայի պայմանագիրը և վերսկսեց պատերազմը Իրանի դեմ: Այս պատերազմի ժամանակ թուրքերը իրենց առջև դրել էին ավելի ծավալուն ստրատեգիական խնդիրներ. զավթել ողջ Անդրկովկասը, դիմագրավելու համար Կովկասյան լեռնաշղթային մերձեցող Մոսկովյան պետությանը, տիրանալ Վոլգա-Կասպյան ճանապարհին, խզել ռուս-իրանական առևտրական կապերը, հսկողություն սահմանել Կասպից ծովի արևմտյան ծովափի նկատմամբ և այլն: Դեռևս սուլթան Սելիմ Բ-ը (1566-1574) փորձել էր Դոնը և Վոլգան միմյանց կապել ջրանցքով (1568թ.) և Ղրիմի խանի օգնությամբ արշավանք կազմակերպել դեպի Աստրախան (1569թ.): Սակայն այդ փորձերն ավարտվել էին անհաջողությամբ: Այժմ այդ խնդիրների իրականացման հոգսը իր վրա էր վերցրել Սելիմի ժառանգորդը՝ Մուրադ Գ-ը:

1578թ. մայիսի 9-ին սուլթանի և Մոհամմադ Խուդաբենդեի զորքերը հանդիպեցին Կարսից հյուսիս-արևելքում գտնվող Չըլդըր լճի մոտ: Ղզլբաշները կրեցին ջախջախիչ պարտություն, որը օսմանյան զորքերի առջև բաց արեց ճանապարհը դեպի Անդրկովկաս: Օգոստոսի 24-ին օսմանցիները գրավեցին բնակչության կողմից լքված Թիֆլիսը, այնուհետև սլաքնթաց արշավով վերցրին Շամախին, Բաքուն, Դերբենտը, և Շիրվանի ու Դաղստանի մյուս քաղաքները: 1588թ. նրանք գրավեցին ողջ Ատրպատականը Թավրիզ քաղաքով հանդերձ: Թուրքական զորքերը կտրեցին Վոլգա-Կասպյան առևտրական ճանապարհը:

Հակառակ Ամասիայի պայմանագրի արգելքի, Սուլթան Մուրադ Գ-ը վերականգնեց Կարս քաղաքի ամրոցը և այն հենակետ դարձնելով ներխուժեց Արևելյան Հայաստան ու Վրաստան, ամենուրեք սփռելով մահ և ավերածություն: Իրանի պալատական շրջաններում տիրում էր համընդհանուր խուճապն ու շփոթությունը:

Թուրքական զորքերի առաջխաղացումը կանգնեցվեց ընդունակ ու խիզախ գահաժառանգ Համզա-միրզայի կողմից, որի զորքերը Ատրպատականում երկու փայլուն հաղթանակներ տարան օսմանցիների նկատմամբ: Սակայն այդ հաջողությունը հնարավոր չեղավ զարգացնել, որովհետև ղզլբաշական երևելիների դավադրության հետևանքով Համզա-միրզան սպանվեց, իսկ թուրքերին օգնության հասան քուրդ-սուննիթները:

Օսմանցիների առջև Սեֆյան զորքերի ընկրկման ողջ պատասխանատվությունը ղզլբաշ երևելիները բարդեցին շահ Մոհամմադ Խուդաբենդեի վրա: Առհասարակ նրա նկատմամբ դժգոհությունը ղզլբաշական վերնախավում այլևս կրում էր անթաքույց բնույթ:

Ուսքաջլու և շամլու ցեղերը կրկին սկսեցին պատրաստվել խռովության: Ուզբեկներն անմիջապես օգտվեցին երկրի ներքին վիճակի ապակայունացումից և Աբդուլլա Բ. խանը ներխուժեց Խորասան և գրավեց Մեշհեդը, Նիշապուրը, Հերաթը և մի շարք այլ քաղաքներ: Պետության ամբողջականությունը դրվեց լուրջ սպառնալիքի տակ:

3. ԻՐԱՆԸ ՇԱՀ ԱԲԲԱՍ Ա-Ի ԵՎ ՆՐԱ ՀԵՏՆՈՐԴՆԵՐԻ ՕՐՈՔ

Քաղաքական այդ վայրիվերումների ժամանակ Խորասանի անվանական կուսակալ էր համարվում շահ Մոհամմադի կրտսեր որդի Աբաս-Միրզան: Նրա լյալե Ալի-ղուլի-խան շամլուն Մուրշիդ-ղուլի-խան ուսքաջլուի հետ գաղտնի պայմանավորվածության ու դաշինքի մեջ մտնելով, որոշեցին Աբբաս-Միրզային նստեցնել Սեֆյան գահի վրա, որպեսզի անչափահաս տղայի անունից կառավարեն իրենք: Դեռևս 1587թ. նրանք յոթնամյա տղային հրաժարվել էին վերադարձնել մորը՝ Մահդի Ուլիային, կռահելով, որ իրենց «սիրեցյալ սանին» արքունիքում վտանգ է սպառնում և դրանով նրան փրկելով հաստատ մահվանից: Այդ հարցի շուրջը երկարատև բանակցություններից հետո, երբ երեխային չվերադարձնելու վերաբերյալ բոլոր փաստարկները սպառվել էին, շահզադեի վերոհիշյալ «դաստիարակները» Մոհամմադ Խուդաբենդեի դեմ բացահայտ պատերազմ սկսեցին: Երբ Համզա-Միրզայի մահվան լուրը հասավ Խորասան, որից վախը կաշկանդում ու զսպում էր շատ-շատերին, Ալի-ղուլի-խանը և Մուրշիդ-ղուլի-խանը իրենց զորքերով շարժվեցին Ղազվին և 1578թ. գրավեցին մայրաքաղաքը: Ըստ էության նրանք ոչ մի դիմադրության չհանդիպեցին, որովհետև Մոհամմադ շահը իր ողջ բանակով զբաղված էր Ֆարսում բռնկած շարժումը ճնշելով: Երբ նրա զորքերի մեջ տարածվեց մայրաքաղաքը ղզլբաշական երկու հզոր ցեղապետերի կողմից գրավելու լուրը, նրանք լքեցին իրենց թագավորին: Ղազվինում ապստամբները ուժի օգնությամբ ստիպեցին Մոհամմադ Խուդաբենդեին հրաժարվել գահից հօգուտ իր 16-ամյա որդի Աբբասի: Շուտով, չդիմանալով ճակատագրի այդ ծանր հարվածին, նախկին շահը հրաժեշտ տվեց կյանքին:

Անշուշտ պետական այդ հարվածը, կամ ավելի ճիշտ ռազմական

հեղաշրջումը, հնարավոր եղավ իրականացնել առանց մեծ ցնցումների այն պարզ պատճառով, որ ժողովուրդն արդեն զզվանքով էր վերաբերվում «Աստծո ծառայի» և նրա անսահման վարքի տեր կնոջ բռնատիրության նկատմամբ: Ռազմական պարտությունները և տարածքների կորուստները, պետության իրականացրած հոռի հարկային քաղաքականությունը, ժողովրդի տնտեսական վիճակի անշեղ անկումը այլևս լցրել էին համբերության բաժակը:

1587թ. Ղազվինում մեծ հանդիսավորությամբ Սեֆյան գահին բազմեց Աբբաս-միրզան, ընդունելով շահ Աբբաս Ա (1587-1629) գահակալական անունը: Սա բնատուր խելքով օժտված մի անձնավորություն էր, միաժամանակ կամային հատկանիշների տեր քաղաքական գործիչ: Նրա օրոք Սեֆյան պետությունը հասավ իր ուժի ու հզորության գագաթնակետին: Այդ շահը իր երկրի պատմության մեջ մտավ « մեծ» մականունով:

Հենց սկզբից, չնայած իր երիտասարդ տարիքին (ծնվել է 1571թ.) շահն իրեն դրսևորեց որպես վճռական ու ընդունակ քաղաքագետ և շրջահայաց ու խիզախ ռազմական գործիչ: Նրանք, ովքեր այդ գաղտնապահ, լռակյաց ու խոնարհ պատանուն բերել էին իշխանության գլուխ, շատ արագ հասկացան, որ նա ոչ միայն խաղալիք չի դառնա իրենց ձեռքերում, այլև չափազանց վտանգավոր է նրա հետ առնչություններում անցնել թույլատրելի սահմանները: Իսկապես, նա իր «հովանավոր» Մուրշիդ-ղուլի-խանին հանդուրժեց ընդամենը երկու տարի: 1589թ. շահի թիկնազորի զինվորները հենց շահի հանգստյան սենյակում սպանեցին նրան:

Երկրի արևելքում ուզբեկների կողմից հաճախակի հարձակումներն ու ավերիչ ասպատակ սփռելը, Դաղստանի լեռնականների ապստամբությունները, երկրի ներսում խուլ խմորումները, որոնք ժամանակ առ ժամանակ ուենում էին բուռն ու վտանգավոր պոռթկումներ, ստիպեցին շահին ընդունելու սուլթանի կողմից պարտադրված հաշտության ծանր պայմանները :

1590թ. մարտի 21-ին Կոստանդնուպոլսում կնքված պայմանագրով Իրանը Օսմանյան կայսրությանն էր զիջում Արևելյան Հայաստանը, Արևելյան Վրաստանը, Շիրվանը, ողջ Ատրպատականը, բացառությամբ Արդեբիլի և Թալիշի, ինչպես նաև Լորեսթանի մի մասից: Շահը պարտավորվում էր նաև տարեկան 200 բեռ մետաքս վճարել օսմանցիներին, ինչպես նաև չմիջամտել թուրք-ռուսական հարաբերություններին, որն ըստ էության նշնակում էր թույլ տալ թուրքերին հիմնավորվելու Կասպից ծովի հյուսիս-արևմտյան ափերին: Սուլթան Մուրադ Գ-ի պահանջով պայմանագրի մեջ մտցվեց նաև մի կետ այն մասին, որ այսու-

հետև արքունի աղոթքի ժամանակ («խութբա») Իրանում չպետք է ցզովքի ենթարկվեն թուրքերի կողմից պաշտվող առաջին երեք «բարեպաշտ» խալիֆները:

Երիտասարդ շահը խաղաղ դաղարը օգտագործեց երկրի ռազմական և վարչական ապարատը վերակառուցելու և արևելյան շրջանները գրաված ուզբեկներին վոնդելու համար, որոնք լուրջ ոտնձգություններ էին կատարում Սեֆյան պետության սահմանների նկատմամբ: 1597-1599 թթ. նա երկու խոշոր արշավանք կազմակերպեց դեպի Խորասան: Հերաթի մոտ տեղի ունեցած ճակատամարտում կրելով դաժան պարտություն, ուզբեկները ստիպված էին հեռանալ Խորասանից: Ապագայում այդ նահանգը ուզբեկական խաների հնարավոր հարձակումներից պաշտպանելու համար, Աբբաս Ա-ի հրամանով Իրանական Քրդստանից Խորասան՝ Բոջնուրդի շրջանը տեղափոխվեց 15 հազար քուրդ:Շահը Սեֆյան պետության տարածքներին միացրեց Հերաթը, Մերվը և Բալխը:

Միաժամանակ նա ձեռնամուխ եղավ ներքին ապստամբություններն ու տեղական ավատատերերի միջավատական երկպառակությունները ճնշելուն, ինչպես նաև երկրի կենտրոնացմանն ու տնտեսության ամրապնդմանը: Նա երկաթյա կամքով և անողոք դաժանությամբ հնազանդեցրեց պետության ծայրամասերի անհնազանդ ու ինքնագլուխ ավատատերերին, որոնք մշտական կապերի մեջ էին իր թշնամիների՝ Օսմանյան կայսրության և ուզբեկական խանությունների հետ: Տեղական ավատատերերի կենտրոնախույս ձգտումների դեմ պայքարելու նպատակով, նրանց տիրույթների հաշվին մեծացվեցին պետական (դիվանի) և շահական (խասսե) հողերի չափերը: Մեծագույն վճռականությամբ շահը սկսեց սահմանափակել ղզլբաշական և այլ բյուրքական ցեղերի ռազմական ազնվականության ազդեցությունը և ընդհակառակը ուժ տալ պետության իրանական տարրին, դրանով իսկ զարկ տալով այսպես կոչված «իրանականացման» քաղաքականությանը: Հենց այդ նույն նպատակով, 1598թ. Աբբաս Ա-ը Սեֆյան պետության մայրաքաղաքը առավելապես բյուրքալեզու բնակչություն ունեցող Ղազվինից տեղափոխեց Իրանի խորքը՝ պարսկական էթնոսով շրջապատված Սպահան քաղաքը, որտեղ այսուհետև գտնվելու էր շահի նստավայրը՝ դռուլաթխանեն: Նա նոր մայրաքաղաքը վերածեց երկրի քաղաքական ու առևտրական ակտիվության կենտրոնի:

Հետևելով իր նախնիների՝ առաջին Սեֆյան շահերի ավանդույթին՝ շահը շիիզմն օգտագործում էր որպես գաղափարական զենք իր թշնամի սուննիների՝ Օսմանյան կայսրության և ուզբեկական խանություննե-

րի դեմ մղվող պայքարում: Նա սուննիներին համարում էր թուրքերի և ուզբեկների կողմնակիցներ: Շիիթականությունը նա ծառայեցնում էր նաև որպես միջոց Իրանի միասնությունն ամրապնդելու համար:

Այնուհետև շահը ձեռնամուխ եղավ ռազմական ռեֆորմի իրականացմանը: Բանակի վերակառուցումն իրականացվում էր շահի գլխավոր հրամանատար, տաղանդավոր զորավար Ալլահվերդի խանի գլխավորությամբ, որը ծագումով հայ էր: Այդ գործի մեջ ներգրավվեցին նաև անգլիացիներ Էնտոնի և Ռոբերտ Շիրլի եղբայրները, որոնք 1598 թ. ժամանեցին Իրան և ծառայության անցան շահի մոտ: Նրանց հիմնական խնդիրներից էր ծանոթացնել ռազմական գործի վերաբերյալ եվրոպական նորույթներին և Իրանում կազմակերպել թնդանոթների ու հրազենի արտադրություն:

Շահը կազմակերպեց 15-հազարանոց մի հեծելազոր, որը հիմնականում հավաքագրվում էր Դաղստանի ժողովուրդների ներկայացուցիչներից, վրացիներից, հայերից և այլն: Այդ հեծելազորը հավաքագրվում էր թուրքական ենիչերիների օրինակով: Վաղ մանկության տարիներից երեխաները վերցվում էին ծնողներից և տարվում Իրան, որտեղ մահմեդականացվելուց հետո նրանց ուղարկում էին հատուկ զինվորական դպրոցներ: Այդ զինվորներին կոչում էին «ղուլ», այսինքն՝ ծառա, ստրուկ, իսկ նրանց հրամանատարին անվանում էին «ղուլլար աղասի»: Շահ Աբբաս Ա-ի ժամանակ ղուլլար-աղասիների շրջանում ամենաբարձր դիրք էր գրավում Ալլահվերդի խանը: Հայ ղոլամներից էին նաև Ղարչխա խանը, Շիրվանի բեկլարբեկ Յուսուֆ խանը և ուրիշներ:

Շահը ստեղծեց նաև 12-հազարանոց հրացանակիրների՝ «թուֆանգչիների» մի հետևակ զորամաս, որը հավաքագրվում էր իրանական բնակչությունից: Ստեղծվեցին նաև հրետանային զորամասեր: Աբբաս Ա-ի իրագործած ռազմական բարեռեորգումը նույնպես կոչված էր նվազեցնել քոչվոր ղզլբաշական և այլ թյուրքական ցեղերի ռազմական ազնվականության քաղաքական դերը: Ղզլբաշական ցեղերը նախկինում կազմում էին Սեֆյանների հիմնական ուժը: Աբբաս Ա-ի ժամանակ նրանք վեր էին ածվել խռովություններ ու անկարգություններ սնուցող ուժերի: Բացի այն, որ այդ ցեղերի միջև անընդհատ տեղի ունեցող երկպառակությունները թուլացնում ու խարխլում էին կենտրոնական կառավարության հիմքերը, ղզլբաշական ցեղերը, որոնք ավելի շատ ենթարկվում էին իրենց ցեղապետ առաջնորդներին, քան թե շահին, հավակնություններ ունեին պետության մեջ խաղալու ղեկավար դեր և կամ մշտապես աշխատում էին իրենց դրածոներին բարձրացնել գահի վրա: Բնական է, որ այդ բոլորը հանգեցնում էր կենտրոնական իշխանության թուլացմանը:

Բանակում թյուրքական տարրին հակակշիռ ստեղծելու նպատակով շահը խրախուսում էր արաբական, աֆղանական, ուզբեկական, կովկասյան ցեղերի, ինչպես նաև հայերի ու վրացիների լայն ներգրավումը զինվորական ծառայության մեջ:

Դարձյալ, ի հակակշիռ ղզլբաշական ցեղերի, շահ Աբբասը ստեղծեց մի հատուկ ռազմական կազմակերպություն, որը խաղում էր շահական գվարդիայի դեր և ստացավ «շահսևեններ» (շահին սիրողներ) անվանումը: Շահսևենների գվարդիայի մեջ կարող էին մտնել անխտիր բոլոր ժողովուրդների ու ցեղերի ներկայացուցիչները, այդ թվում նաև թյուրքերը: Շուտով շահսևենները վերածվեցին արտոնյալ մի խմբի, որն օգտվում էր շահի հատուկ հովանավորությունից և անմիջականորեն ենթարկվում էր նրան: Ատրպատականում, Մուղանի դաշտավայրում, Սավեի շրջանում և այլուր նրանց շնորհվեցին խոշոր հողային տիրույթներ:

Աբբաս Ա-ի կառավարման շրջանում, ըստ որոշ աղբյուրների, տարբեր զորատեսակներում ընդգրկված էր 120 հազար մարտիկ, իսկ սպասարկող անձնակազմի հետ միասին բանակի թվական կազմը հասնում էր մինչև 200-300 հազար մարդու:

Աբբաս Ա-ի ժամանակ նշանակալիորեն աճեց նաև իրանական և ոչ թյուրք տարրերի նշանակությունը պետական ապարատում, որոնք սկսեցին աստիճանաբար դուրս մղել թյուրքական ազնվականությանը, որը դեռևս պահպանում էր չափազանց կարևոր դիրքեր պետական ապարատի օղակներում, հատկապես բանակում:

Օսմանյան կայսրության հետ առաջիկա պատերազմի հավանականությունը շահ Աբբաս Ա-ին ստիպում էր փնտրել դաշնակիցներ: Առհասարակ, շահը գիտակցում էր, որ իր համար չափազանց դժվար է մենմենակ մարտնչել մի այնպիսի ահեղ թշնամու դեմ, ինչպիսին Օսմանյան կայսրությունն էր, ուստի նա համառորեն փնտրում էր դաշնակիցներ: XVI դ. 90-ական թվականներից նա սկսում է դեսպանություններ ուղարկել Եվրոպա և առաջին հերթին այն երկրները, որոնց անմիջականորեն սպառնում էր թուրքերի և նրանց վասալ Ղրիմի խանի ներխուժման վտանգը, կամ որոնց շահերը մեծապես տուժել էին Արևելքի և Արևմուտքի միջև առևտրական ճանապահների վրա թուրքերի տիրապետության հետևանքով: Նման կարգի պետությունների թվին էին դասվում Ռուսաստանը, Ավստրիան, Գերմանիան, Լեհաստանը, Վենետիկի հանրապետությունը, Իսպանիան և այլն, որոնք մշտապես ենթարկվում էին թուրքերի և Ղրիմի թաթարների հարձակումներին: Եվրոպական տերությունների հետ հակաթուրքական զինակցություն կնքելու համար, 1599 թ. սկ-

սած, շահ Աբբասը բազմիցս դեսպանություններ էր ուղարկում ռուսական ցարի, գերմանական կայսրի, Վենետիկի դոժի, Հռոմի պապի, Իսպանիայի, Ֆրանսիայի և Լեհաստանի թագավորներ մոտ և իր հերթին ընդունում էր եվրոպական պետությունների դեսպաններին՝ նրանց արժանացնելով բարձր պատիվների:

Ավելի հաճախակի, քան Սեֆյան նախկին շահերը, Աբբաս Ա-ն սկսում է իրանա-եվրոպական բանակցությունների ժամանակ օգտագործել հայ բանագնացներին: Հայտնի է, օրինակ, որ 1597 թ. որպես Էջմիածնի նվիրակ, իրականում որպես շահի դիվանագիտական հանձնակատար, Եվրոպա է ուղևորվում Հակոբ Մարգարյան Ամղեցին: Թե ինչպիսի լիազորություններով էր նա օժտված, հայտնի չէ, սակայն աղբյուրներից երևում է, որ նրա առաքելությունը խիստ գաղտնի էր: 1597 թ. հունիսի 22 և 23-ին Վենետիկի Հանրապետության իշխանությունների կողմից հարցաքննության ժամանակ նա հայտնում է, որ իրեն Եվրոպա է ուղարկել շահ Աբբասը, և որ Իրանից մեկնելուց հետո ինքը եղել է վրաց Ալեքսանդր և Սիմոն «իշխանների» մոտ, որոնք իրեն նամակներ են տվել Հռոմի պապին հանձնելու համար, և որ ինքը «թղթեր» ունի նաև վրաց պատրիարքից:

1603 թ. Աբբաս Ա-ի՝ Վենետիկ ուղարկված պարսկական մեծ դեսպանության կազմում ևս կային երեք հայ վաճառականներ Նոր Ջուղայից: Իսկ 1607 թ. շահը որպես դիվանագիտական հանձնակատար Վենետիկի Հանրապետություն է ուղարկում ջուղայեցի վաճառական խոջա Շիռշին, որը դոժին է հանձնում շահի նամակը, որտեղ առաջարկվում էր կնքել եվրոպական պետությունների դաշինք և հանդես գալ «ընդհանուր թշնամու»՝ թուրքերի դեմ:

Եվրոպա ուղարկվող դեսպանություններից բացի, շահ Աբբասը տարբեր երկրներում ուներ մշտական ներկայացուցիչներ, որոնց միջոցով կապերի մեջ էր գտնվում եվրոպական տերությունների կառավարող շրջանների հետ: Նման առաքելություն էր իրականացնում, օրինակ, ջուղայեցի առևտրական Միրմանյան ընտանիքը, որը մշտապես բնակվում էր Լիվորնոյում և ներկայացնում էր շահին Թոսկանայի հերցոգությունում:

Շահը, ի վերջո, համոզվեց, որ Եվրոպա ուղարկված դեսպանությունները առայժմ չեն կարող արդյունավետ լինել, ուստի հույսը պետք է դնել սեփական ուժերի վրա: Ընդ որում՝ Օսմանյան կայսրության դեմ պատերազմի նախապատրաստությունը Աբբաս Ա-ն իրականացնում էր խորքային եղանակով՝ այդ նպատակին ծառայեցնելով ամեն ինչ: Այսպես, օրինակ՝ նա աշխատում էր իր կողմը գրավել պատերազմի հավանական թատերաբեմում ապրող ժողովուրդներին և հատկապես նրանց ավատական

դասի ներկայացուցիչներին: Այդ առթիվ Առաքել Դավրիժեցի պատմագիրը գրում էր. «...Բազումք ոմանք յաշխարհէս Ատրպատականի իշխանք և կռղմնակալք մահմետականք եւ քրիստոնեայք, գնացեալ էին առ թագավորն Պարսից, վասնզի յոյժ չարաչար նեղութեամբ նեղէին զնոսա ազգն օսմանցւոց ծանր հարկապահանջութեամբ, եւ կեղեքմամբ զրկէին եւ կողոպտէին, եւ հավատոյ կոտեճութիւն առնէին, եւ այլ բազում տառապանօք չարչարէին, ոչ միայն զազգս Հայոց, այլեւ զազգն վրաց եւ զմահմետականաց, եւ վասն այնր նեղութեան գնացին առ թագաւորն Պարսից, զի թերեւս նովաւ դիւրութիւն գտցեն զեղծեալք ի ծառայութենէն Օսմանցոց»:

Շահ Աբբասը սիրով ընդունում էր այդ փախստականներին՝ արժանացնելով մեծամեծ պատիվների, միաժամանակ նրանցից տեղեկություններ հավաքելով «զեղանակ կառավարութեանն Օսմանցւոց, զվիճակ բնակչացն Հայաստանի եւ զամենայն հանգամանս այնր սահմանի»: Շահը «զայնպիսի աղմկեալ վիճակ Հայաստանի և զտաղտկութիւն սրտից բնակչացն այնր՝ բարեղէպ ժամանակ համարէր ինքեան արշաւելոյ ի վերայ Օսմանցւոց»:

Երկու կարևոր իրադարձություններ նպաստեցին, որ շահ Աբբասը վճիռ կայացնի անհապաղ օսմանցիների դեմ պատերազմ սկսելու վերաբերյալ. նախ՝ կայսրության արևելյան նահանգներում ջալալիների հզոր շարժումը քայքայում էր սուլթանական բանակները և թուլացնում նրա հարձակողական կարողությունը. այնուհետև՝ շահը տեղեկացել էր, որ Սալմաստի քուրդ առաջնորդներից Ղազի բեկը ապստամբել է օսմանցիների դեմ, և Թավրիզի օսմանյան բեկլարբեկ Ալի փաշան, 20- հազարանոց զորքի գլուխ անցած, շարժվել է Սալմաստի վրա՝ Թավրիզում չթողնելով զորքեր: 1603 թ. սեպտեմբերի 14-ին, խախտելով 1590թ. թուրք-իրանական պայմանագիրը, շահը ռազմական գործողություններ սկսեց օսմանցիների դեմ: Առաջին անգամ ամբողջ հարյուրամյակի ընթացքում Իրանը հարձակվում էր, իսկ Թուրքիան՝ նահանջում:

Սրընթաց երթով շարժվելով դեպի Ատրպատական՝ պարսկական զորքերը սեպտեմբերի 28-ին գրավեցին Թավրիզը: Այնուհետև, համարյա առանց լուրջ դիմադրության հանդիպելու, շահը մեկը մյուսի հետևից գրավեց օսմանյան ռազմակալման ենթարկված շրջանները՝ Նախիջևանը և այլն, իսկ ավելի քան ութ ամիս տևած պաշարումից հետո՝ նաև Երևանը:

Տեղեկանալով, որ օսմանցիները իր դեմ ուղարկել են մի մեծ բանակ Ջղալ-օղլի Սինան փաշայի հրամանատարությամբ, և գիտակցելով, որ ուժերի հարաբերակցությունը իր օգտին չէ՝ շահը որոշեց արագորեն նահանջել՝ կիրառելով զզլբաշների վաղեմի ռազմական տակտիկան: Այ-

սինքն դա չէր լինելու սովորական նահանջ: Դա մի հրեշավոր նահանջծրագիր էր, որը հայոց պատմության մեջ մնաց որպես մեծ աղետ, իսկ ժամանակակիցներն այն անվանել են «մեծ սուրգուն» (բռնի տարագրություն): Նահանջող բանակին հրամայված էր իրագործել «այրված հողի» կամ «մեռյալ գոտու» ռազմավարություն, այսինքն՝ հրկիզել ու ավերել բոլոր գյուղերն ու քաղաքները, այրել հացահատիկն ու ցանքսերը, իսկ բնակչությանը քշել դեպի խորը թիկունք՝ Պարսկաստանի խորքերը: Առաքել Դավրիժեցին այդ մարտավարության իմաստը համարում է հետևյալը. «Զի եկեալ օսմանցւոցն անբնակ գտանիցեն զերկիրն ի մարդկանէ: Եւ ոչ գտցի կերակուր և ռոճիկ և այլ ինչ պիտոյք նոցա և անասնոց նոցա, և առ ի չգոյէ հարկատրաց վտանգեսցին զորքն օսմանցւոց: Նաև տարեալ ժողովուրդքն լինիցին նմա անզերծանելի հարկատուքն ծառայք և հողագործք մինչև ցհավիտեան»: Դավրիժեցին նաև նշում է, որ բնակավայրերը, տները և այլն հրկիզելու ու ոչնչացնելու մյուս նպատակն այն էր, որպեսզի տեղահանված ժողովուրդը, այդ ամենը տեսնելով, հուսահատ լինի և ետ չդառնա: Բռնագաղթի սկիզբը պատմիչը համեմատում է հողմակոծ հուրի հետ, որն անցնում է եղեգնուտով:

Զորքերին հրամայված էր տեղահանել և Իրան քշել ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնյա բնակչությանը, սակայն տեղահանվածների հիմնական զանգվածը կազմեցին հայերը, ընդ որում՝ ոչ միայն Արևելյան Հայաստանի՝ ամբողջությամբ, ինչպես նաև Մակու, Խոյ, Սալմաստ, Թավրիզ և այլ քաղաքների, այլև Արևմտյան Հայաստանի մի շարք շրջանների՝ Ալաշկերտի, Բասենի, Խնուսի, Կարինի, Մանազկերտի, Արծկեի, Արճեշի, Բերկրիի, Վանի, Կարսի, Կաղզվանի և այլ շրջանների ողջ հայությունը: Բռնագաղթն իրականացվում էր անողոք դաժանությամբ, որպեսզի ապահովվի գործողության արագությունը, և բացառվի դիմադրության ամեն մի փորձ: Տեղահանման ենթակա էին բոլորը, առանց սեռի, տարիքի ու դավանանքի խտրության:

Ըստ որոշ տվյալների՝ Հայաստանից տարագրվածների թիվը հասնում էր մոտ 400 հազարի, որից մոտ կեսն է միայն հասել Իրան, իսկ մնացած մասը խեղդվել է Արաքսի ջրերում կամ ճանապարհներին ոչնչացել սովից, ցրտից ու զրկանքներից:

Դավրիժեցին հաղորդում է, որ շահը հատուկ վերաբերմունք էր դրսևորում Արաքսի ափին գտնվող Ջուղա քաղաքի բնակչության նկատմամբ, որոնք հիմնականում զբաղվում էին եվրոպա-ասիական միջազգային առևտրով:

Շահ Աբբաս Մեծի առաջին պատերազմը Օսմանյան կայսրության

հետ փայլուն արդյունքներ ունեցավ: Ընդամենը չորս տարվա ընթացքում (1603-1607) պարսկական զորքերը Ալլահվերդի խանի հրամանատարությամբ հետ նվաճեցին այն բոլոր տարածքները, որոնք թուրքերը գրավել էին 1578-1590 թթ. միջև ընկած շրջանում. Թավրիզը (Ատրպատականը), Արևելյան Հայաստանը, Արևելյան Վրաստանը, Լուրեսթանը, Դաղստանի մի մասը, Բաղդադը, Մոսուլը և Դիարբեքիրը: Իրանին անցան նաև շիիթական սրբավայրեր Քարբալան և Էն-Նաջաֆը, որոնք գտնվում էին Իրաքում:

Պատերազմն ապացուցեց, որ Ալլահվերդի խանի իրականացրած ռազմական բարեփոխումն աննախընթաց կերպով ուժեղացրել է Իրանի ռազմական հզորությունը:

Կողմերի միջև տևական բանակցություններից հետո 1612 թ. Ստամբուլում կնքվեց իրանա-թուրքական խաղաղության պայմանագիր, ըստ որի Իրանը պահպանում էր պատերազմի ընթացքում ձեռք բերած իր բոլոր նվաճումները: Պայմանագրի մեջ անփոփոխ մնում էր այն հողվածը, որն ընդունված էր 1590 թ. Կ. Պոլսի պայմանագրով. շահը պարտավորվում էր տարեկան 200 խարվար (59 հազար կգ) հում մետաքս ուղարկել թուրքական սուլթանին որպես փոխհատուցում այն բանի համար, որ պատերազմի ընթացքում օսմանցիները կորցրել են մետաքսաբեր շրջանները:

Կողմերի միջև խաղաղությունը տևեց ընդամենը չորս տարի: 1616 թ. թուրքերը սկսեցին նոր պատերազմ՝ փորձելով ետ նվաճել կորցրածը: Սակայն հենց սկզբից նրանք կրեցին անհաջողություն: Նախ 1616 թ. նրանց կողմից Երևանը գրավելու փորձը ավարտվեց կատարյալ ձախողմամբ: Երկուս և կես ամիս տևած պաշարողական մարտերից հետո թուրքական բանակի հրամանատար Մուհամմադ փաշան հաշտության առաջարկով դիմեց շահին և խնդրեց, որ վերջինս հրամայի պարսկական զորքերին թույլ տալ, որ իրենք նահանջեն Էրզրում: Երևանի բերդի պաշտպանության և Արևմտյան Հայաստանում մղված հաղթական կռիվների համար Երևանի բեկլարբեկ Ամիրգունա խանին շահը շնորհեց «սարու ասլան» («խարտյաշ առյուծ») մարտական բարձրագույն տիտղոսը:

1618 թ. գարնանը թուրքերը ծովակալ Խալիլ փաշայի հրամանատարությամբ Ատրպատականի ուղղությամբ կազմակերպեցին խոշոր հարձակում՝ նպատակ ունենալով գրավել Թավրիզը: Թուրքական զորքերը մեծ ավերածություններ գործեցին Շիրվանում, սակայն Մարանդում հանդիպելով պարսկական գլխավոր ուժերի հետ՝ պարտություն կրեցին և խուճապահար հետ նահանջեցին: Մարանդից, Խոյից, Սալմաստից նրանք դեպի Վանի և Դիարբեքիրի կողմերը քշեցին 30 հազար հայ և

ազերի-թուրք գյուղացիների:

1618 թ. աշնանը Սարավում (Ատրպատական) կնքվեց հաշտության պայմանագիր, որը 1612 թ. Ստամբուլի պայմանագրի պայմանները թողնում էր ուժի մեջ: Թերևս միակ փոփոխությունն այն էր, որ հում մետաքսի տարեկան մուծումները թուրքական սուլթանին կրճատվում էին մինչև 100 խարվարի (29 հազար կգ): Սարավի պայմանագիրը և Մավարաննահրի ուզբեկական խաների հետ քիչ թե շատ խաղաղ հարաբերությունների ամրապնդումը հնարավորություն տվեցին շահին հայացքով շրջվել դեպի Արևելք՝ Ղանդահարի պրոբլեմը լուծելու համար: Շահ Աբբաս Ա-ն իր դեսպանների միջոցով բազմիցս դիմել էր Հնդկաստանի մեծ մողոլների պետության տիրակալ Ջահանգիր շահին՝ պահանջելով հետ վերադարձնել «պատմականորեն» Իրանին պատկանող Ղանդահար քաղաքը, որը գրավվել էր Մեծ Մողոլի զորքերի կողմից: Այդ քաղաքի պատկանելության հարցը երկու կողմերի համար էլ ուներ սկզբունքային նշանակություն, որովհետև քաղաքն ու նրա շրջակայքն ունեին առաջնակարգ ռազմավարական արժեք: Ուստի Ջահանգիր շահը կա՛մ անպատասխան էր թողնում Աբբաս Ա-ի ուղերձները և կա՛մ լավագույն դեպքում անորոշ ու խուսափողական պատասխաններ էր ուղարկում: Ի վերջո, Սեֆյան տիրակալը համոզվեց, որ հարցի լուծումը կարիք ունի սրի ներկայության: 1622 թ. պարսկական զորքերը անկասելի գրոհով վերցրին Ղանդահարը: Այս անգամ շահն իր նորաստեղծ հեծելազորի՝ շահսևենյան գումարտակի ու «թյուֆանգչիների» մարտունակությունը փորձարկեց մեծ մողոլի անպարտելի համարվող աշխարհազորի վրա:

1623 թ. պատերազմը Օսմանյան կայսրության հետ վերսկսվեց: Հարձակողական պատերազմ վարելը նս մեկ անգամ գալիս էր հաստատելու, որ Իրանը և՛ ռազմական, և՛ քաղաքական, և՛ տնտեսական առումով վերելքի մեջ էր: Օգտվելով թուրքական սուլթան Մուստաֆա Ա-ի դեմ Բաղդադում բռնկած խռովությունից՝ պարսկական զորքերը փոթորկի պես անցան Միջագետքը, և մինչ թուրքերը կձեռնարկեին ինքնապաշտպանության արդյունավետ միջոցներ, պաշարեցին ու գրավեցին Բաղդադը (1623), իսկ հաջորդ տարի՝ 1624 թ., ողջ Արաբական Իրաքը անցավ Սեֆյանների հսկողության տակ, ներառյալ նաև շիիթական սրբազան քաղաքներ Քարբալան և Էն-Նաջաֆը, ինչպես նաև Մոսուլն ու Բասրան: Ռազմական այս կամպանիան նս մեկ անգամ ապացուցեց, որ շահ Աբբաս Ա-ն այնքան էլ հակված չէ հաշվի նստելու միջազգային պայմանագրերի հետ. մի հանգամանք, որը ոչ պակաս չափով բնորոշ էր նաև թուրքերին:

Սակայն, չնայած այդ հաջողություններին, Իրանը համարյա լրիվ մեկուսացած էր Արևմուտքից, որովհետև դեպի եվրոպական երկրներ տանող բոլոր ճանապարհները գտնվում էին օսմանցիների հսկողության տակ: Պարսից ծոցը ևս ելք չէր տալիս իրանական պետությանը, քանի որ պորտուգալացիները դեռևս 1515 թ. գրավել էին Հորմուզ կղզին և շրջափակելով ելքը ծոցից՝ փաստորեն մենաշնորհացրել էին իրանական առևտուրը: Հորմուզ կղզին և նրա վրա գտնվող համանուն նավահանգիստն ունեին չափազանց կարևոր առևտրական ու ստրատեգիական նշանակություն: Հորմուզում պորտուգալացիները կառուցել էին առաջնակարգ նշանակություն ունեցող ամրոց և հիմնել էին առևտրական ֆակտորիա: Ուշ XVI դ. ընթացքում Հորմուզը հանդիսանում էր Իրանի, Օսմանյան կայսրության, Հնդկաստանի, Արաբիայի միջև առևտրի գլխավոր կենտրոնը՝ չհաշված նրա նշանակությունը հնդեվրոպական առևտրի համար:

Այս պարագաներում, երբ եվրոպական երկրների զարգացող արդյունաբերությունն ամբողջապես կարող էր կլանել Իրանում արտադրվող ողջ հում մետաքսը, օրակարգի հրատապ հարց էր դառնում Պարսից ծոցի վրայով ծովային առևտուրը եվրոպական երկրների հետ: Այդ բարդ խնդիրը լուծելու միակ տարբերակը պորտուգալացիներին ծոցից վռնդելն էր:

Չնայած սեփական ռազմական նավատորմի բացակայությանը՝ շահ Աբբասը ռազմական գործողություններ սկսեց պորտուգալացիների դեմ և 1601-1603 թթ. գրավեց պորտուգալական հովանավորության տակ գտնվող Բահրեյնյան կղզիները: Սակայն դա Իսպանիայում առաջ բերեց խիստ բացասական ռեակցիա, քանի որ 1580թ. վերջինս թագավորական ունիայով միավորվել էր Պորտուգալիայի հետ:

Մադրիդից Իրան ուղարկվեց մի դեսպանություն, որը շահից պահանջեց հետ կանչել զորքերը: Աբբաս Ա-ն կտրականապես մերժեց Ֆիլիպ Գ-ի այդ պահանջը և հայտարարեց, որ ինքը այդ խնդիրը հակված է դիտելու որպես Իրանի ներքին գործը, որը վերաբերում է անճամբ իրեն և Իրանի վաղեմի վասալ Հորմուզի շեյխին: Դրանով բանակցությունները ընդհատվեցին:

Այդ շրջանում՝ հատկապես 1588 թ.՝ իսպանական «անպարտելի armադայի» ջախջախումից հետո, անգլիացիները սկսել էին ակտիվացնել իրենց քաղաքականությունը ծոցի ավազանում: 1600 թ. կազմակերպված անգլիական Օստ-Հնդկական ընկերությունը եռանդուն կերպով փորձում էր թափանցել ծոցի գոտին: Անգլո-իսպանական և անգլո-պորտուգալական հարաբերությունները գնալով ընդունում էին ավելի ու ավելի սուր

բնույթ: 1620 թ. դեկտեմբերի 27-ին անգլիական ռազմական նավատորմը Ջասկի մոտ ջախջախեց պորտուգալացիներին: Մնում էր նրանց դուրս մղել Պարսից ծոցում գլխավոր հենակետից՝ Հորմուզ կղզուց: Այդ հարցում անգլիացիների և շահական կառավարության շահերը կատարելապես համընկնում էին: 1622թ. հունվարի 8-ին բրիտանական Օստ-Հնդկական ընկերության և Իրանի միջև կնքվեց համաձայնագիր իրանական զորքերի և ընկերության ռազմական նավատորմի համատեղ ռազմական գործողությունների վերաբերյալ՝ պորտուգալացիների դեմ: 1622 թ. հունվարի 19-ին Ալլահվերդի խանի որդու՝ Ֆարսի նահանգի բեկլարբեկ Իմամ ղուլի խանի զորքերի և բրիտանական նավատորմի նավերի համատեղ գործողությունների հետևանքով պորտուգալացիներից մաքրվեց Ղեշմ կղզին, որը Պարսից ծոցից ազատ ելք էր ապահովում դեպի Հնդկական օվկիանոսը, իսկ նույն թվականի ապրիլի 11-ին գրավվեց նաև Հորմուզ կղզին: Քանդելով կղզու պորտուգալական ամրոցը՝ շահ Աբբասը առևտրական նավահանգիստը տեղափոխեց ցամաք՝ Գոմբրուն կոչված վայրը, որը հետագայում վերանվանվեց Բենդեր Աբբասի:

Այսպիսով՝ Պարսից ծոցը բացվեց բոլոր երկրների վաճառականների համար: Անգլիացի Թոմաս Հերբերտի վկայությամբ՝ կարճ ժամանակամիջոցի ընթացքում փոքր քաղաքից Գոմբրունը վերածվեց խոշոր նավահանգստային քաղաքի՝ շնորհիվ անգլիացի, հոլանդացի, պորտուգալացի, հայ, թուրք, հնդիկ, արաբ, հրեա և այլ ազգերի վաճառականների առևտրի:

Իրանի արտաքին առևտրին զարկ տալու նպատակով շահը օտարերկրյա վաճառականներին տրամադրում էր ոչ միայն առևտրական արտոնություններ, այլև կրոնական և իրավական առանձնաշնորհումներ, օրինակ՝ դավանանքի ազատություն և այլն: Քրիստոնյա միսիոներները օգտվում էին շահի հատուկ հովանավորությունից: Իրանական հոգևորականությանը և նահանգային կուսակալներին արգելված էր միջամտել օտարերկրացիների գործերին: Կառավարությունը տալիս էր օտարերկրացիների անձի և գույքի անվտանգության երաշխիքներ: Շահը հրամայել էր, որ նահանգային իշխանություններն ապահովեն օտարերկրացիների անվտանգ տեղաշարժը երկրում և այլն: Նման կարգի միակողմանի արտոնությունների տրամադրումը դեռևս կապիտուլյացիոն ռեժիմ չէր: Իրանը շահ Աբբաս Ա-ի կառավարման շրջանում հանդիսանում էր կատարելապես ինքնուրույն և անկախ պետություն և Արևմուտքի տերությունների հետ կապեր էր պահպանում ինչպես հավասարը հավասարի հետ:

Աբբաս Ա-ի կառավարման տարիները Սեֆյան պետության համար

հանդիսացան տնտեսական ու մշակութային ծաղկման տարիներ: Չափազանց մեծ էին շահի նվաճումները նաև խաղաղ աշխարհաշինության մեջ: Մեծ զարգացում ապրեցին իրանական ավանդական արհեստները՝ գորգագործությունը, կտորեղենի, գործվածքեղենի, կաշվե գեղարվեստական իրերի արտադրությունը, ոսկերչությունը, բրուտագործությունը և այլն: Արհեստավորները միավորված էին համքարություններ մեջ: Կային նաև շահին պատկանող խոշոր արհեստանոցներ՝ «քարխանեներ», որտեղ լայնորեն օգտագործվում էր ձրի հարկադրական աշխատանքը: Արհեստագործական արտադրանքը սպառում էր գտնում ինչպես ներքին շուկայում, այնպես էլ արտահանվում էր տարբեր երկրներ: Շահ Աբբասը միայն մտահոգված չէր, որ զարգանա արտաքին առևտուրը: Նա հոգ էր տանում, որ ներքին առևտրի համար ևս ստեղծվեն բարենպաստ պայմաններ: Ճիզվիտ վանահայր Կրուշինսկին գրում էր. «Գիտակցելով, որ առևտուրը հարստացնում է երկիրը, և օտարերկրյա վաճառականներին առևտրի մեջ ներգրավելու համար չկա այլ լավագույն միջոց, քան ճանապարհների վրա նրանց պաշտպանելը ամեն տեսակի հարձակումներից՝ շահը իր տիրույթներում հաստատեց այնպիսի կարգ ու կանոն, որ մարդիկ տեղաշարժվում էին նույնպիսի անվտանգությամբ, ինչպես օրը ցերեկով ճանապարհորդում են Եվրոպայի առավել լավ հսկվող ճանապարհների վրա»:

Իսկապես, շահի հրամանով կառուցվում էին նոր ճանապարհներ, վերանորոգվում էին հները, այդ ճանապարհների վրա ստեղծվում էին պահեստարաններ, կառուցվում քարավանսարայներ և այլն: Շահ Աբբասի ժամանակներում կառուցված բազմաթիվ կամուրջներ հասել են մինչև մեր օրերը:

Շահը անողոք դաժանությամբ էր պատժում ավազակներին և բոլոր նրանց, ովքեր հովանավորում էին կողոպտիչներին: Նա առանձնահատուկ հոգատարություն էր դրսևորում իր մայրաքաղաքի՝ Սպահանի զարգացման ուղղությամբ: Շահը ծրագրել էր այդ քաղաքը դարձնել հարավը հյուսիսի հետ կապող առևտրական հանգույց: Նրա մտահղացմամբ՝ Սպահանը հանդիսանալու էր նաև Պարսից ծոցի վրայով ծովային առևտրի խոշորագույն կենտրոնը, որտեղից երկրի բոլոր կողմերից հոսող ապրանքները ուղղվելու էին դեպի ծոց: Շահը այդ խնդրին տալիս էր քաղաքական նշանակություն, որովհետև այլընտրանքային ճանապարհի բացումը երկիրը կձերբազատեր Օսմանյան կայսրությունից ունեցած կախվածությունից:

Շահ Աբբասի ժամանակ Սպահանը դարձավ տարածաշրջանի խոշո-

րագույն քաղաքներից մեկը: Միապետն արմատապես վերակառուցեց այն, քաղաքի բոլոր ուղղություններով անց կացվեցին ուղիղ ու լայն պողոտաներ, կառուցվեցին հիասքանչ պալատներ (Ալի-Ղափու, Չեհել սոթուն և այլն), գեղեցկագույն մզկիթներ (Շահ Լութֆոլլահ և այլն), Զայենդերուդ գետի վրա կառուցվեցին կամուրջներ, որոնք օգտագործվում են մինչև օրս: Դրանցից է, օրինակ, 350 մետր երկարություն ունեցող Ալլահվերդի խանի կամուրջը, որը Սպահանը կապում է Նոր Ջուղայի հետ և վոլե Հաջուն, որը հանդիսանում է աչքի ընկնող ճարտարապետական հուշարձան:

Անկասկած, շահ Աբբաս Ա-ի կառավարման տարիներին Սեֆյան Իրանը հասավ իր ուժի և հզորության գագաթնակետին: Այն դարձավ ավելի կենտրոնացված պետություն, քան իր նախորդների ու հաջորդների ժամանակ, թեև նրան չհաջողվեց մինչև վերջ հաղթահարել երկրի ավատական տրոհվածությունը, որը պատմական տվյալ ժամանակաշրջանում գուցե և անհնարին էր: Աբբաս Մեծի օրոք ևս Սեֆյան պետությունն իրենից ներկայացնում էր տիպիկ արևելյան բռնապետություն, որտեղ առաջին և վերջին խոսքը պատկանում էր ինքնակալին: Նա անսահմանափակ իրավունքներով օժտված տիրակալ էր: Թեև երկրում գործում էր «բարձրագույն խորհուրդ» կոչված խորհրդակցական մարմինը, սակայն նրա անդամները նշանակվում էին շահի կողմից և, բնականաբար, չէին կարող դեմ գնալ նրա կամքին:

Շահ Աբբասը թողել էր երկրի վարչական կառավարման համակարգը այն նույն ձևով, ինչ ժառանգել էր իր նախորդներից, սակայն նա այդ համակարգը դարձրեց ավելի ճկուն ու արդյունավետ: Նրա օրոք երկիրը բաժանված էր 13 նահանգների կամ բեկլարբեկությունների: Դրանք էին՝ Ղանդահարի, Շիրվանի, Հերաթի, Ատրպատականի, Չուխուր-Սաադի, Ղարաբաղի և Գյանջայի, Աստրաբադի, Քուհգիլույեի, Քերմանի, Մերվի, Ղալամրով-ե Ալի Շաքարի, Մեշհեդի և Ղազվինի բեկլարբեկությունները: Նահանգների կառավարումն իրականացվում էր շահի կողմից նշանակված բեկլարբեկների կողմից: Այդ հանգուցային և կարևոր պաշտոնում սովորաբար նշանակվում էին կա՛մ շահի մերձավորագույն ազգականները և կա՛մ շահսևենյան ազնվականության աչքի ընկնող ներկայացուցիչները, որոնք տարիների ընթացքում ապացուցել էին իրենց անձնական նվիրվածությունը շահին: Բեկլարբեկներն իրենց ձեռքերում էին կենտրոնացնում ինչպես նահանգների վարչական, այնպես էլ ռազմական իշխանությունը՝ հանդիսանալով տեղի զինված ուժերի հրամանատարը: Հետևելով հին իրանական ավանդույթներին՝ շահը բեկլարբեկների իշխանությունը սահմանափակելու և նրանց մշտական հսկո-

ղության տակ պահելու նպատակով նրանց մոտ նշանակում էր տեղակալ («ջանիշին»), որն անմիջականորեն ենթարկվում էր ոչ թե բեկլարբեկին, այլ շահին և հանդիսանում էր նրա «աչքը», «ականջը» և «լեզուն», այսինքն՝ բեկլարբեկի վարքագծի և նահագում ամեն մի անցուդարձի մասին գաղտնի տեղեկություններ էր հաղորդում շահին: Ի դեպ, նման ֆունկցիա կատարող մարդկանցից ջանիշինը միակը չէր: Բեկլարբեկի շրջապատում կային մեծ թվով հայտնի ու անհայտ աստիճանավորներ, որոնց գործը լրտեսելն ու շահին ամեն ինչի մասին իրազեկ դարձնելն էր:

Այս համակարգի շնորհիվ շահը ժամանակին՝ հենց իր սաղմում կարողանում էր խեղդել բեկլարբեկների կողմից կազմակերպվող ամեն մի խռովություն կամ ապստամբություն:

Իրենց իշխանության ներքո գտնվող շրջաններում բեկլարբեկները համարյա անսահմանափակ տիրակալներ էին, որոնք գործում էին ոչ միայն օրենքով, այլ հաճախ նաև քմահաճ կամքով: Եթե շահը ամբողջ երկրի տիրակալն էր, ապա բեկլարբեկը՝ այդ երկրի՝ իրեն հանձնված մասի: Բեկլարբեկներից յուրաքանչյուրը, շահական արքունիքի օրինակով, ուներ իր սեփական արքունիքը, հարեմը և այլն: Նահանգից հավաքված հարկերի ու տուրքերի մի զգալի մասը բեկլարբեկները չէին հանձնում պետական գանձարան, այլ պահում էին իրենց: Իզուր չէ, որ Իրան այցելած ֆրանսիացի Ռաֆայել դյու Մանը ոչ առանց ծաղրանքի նշում էր, որ Իրանում սովորաբար չէին հարցնում, թե ով է կառավարում այսինչ նահանգը, այլ հարցնում էին, թե ով է ուտում այսինչ նահանգը:

Բեկլարբեկության հիերարխիկ համակարգը առհասարակ չափազանց բարդ էր: Բեկլարբեկներն իրենց հերթին ենթարկվում էին վալիներին կամ փոխարքաներին, որոնց թիվը չորսն էր: Նրանցից առաջինը Արաբստանի վալին էր, որն իր նշանակությամբ ու արժանիքներով բարձր էր կանգնած մնացած երեք վալիներից, որովհետև սերում էր սեյիդների տոհմից, այսինքն՝ պատկանում էր Մոհամմադ մարգարեի տոհմին: Դրանից հետո գալիս էին Լուրիսթանի, Վրաստանի («Գյուրջիստան») և Քրդստանի վալիները: Շահական արքունիքը ևս չափազանց բարդ և խստիվ կանոնակարգված մի կառույց էր:

Էմիրները կոչված էին կատարել շահի հատուկ հանձնարարությունները: Արքունիքում գործող այդ էմիրներից չորսը օժտված էին «Հզորագույն պետության սյուներ» տիտղոսով: Դրանք էին՝ ղուրչի-բաշին (նահանգների բոլոր ցեղերի ու այմակների գլխավորը), ղուլլար-աղասին (բոլոր ղուլամների, այսինքն՝ շահական թիկնազորի ղեկավարը), իշիկ աղասի բաշին (դիվանի բոլոր իշիկ աղասիների, թիկնապահների, ներ-

քինիների, բարապանների, եսավուլների և մունետիկների գլխավորը) և թուֆանգչի-աղասին (բոլոր մին-բաշիների (հազարապետների), յուզբաշիների (հարյուրապետների), ջարչիների (մունետիկ) և բոլոր թուֆանգչիների (հրացանակիր զինվորների) գլխավորը): Այս չորս էմիրները մեծ վեզիրի «նախոսք վազիրի» (առաջին նախարար), դիվան-բեկի (ֆինանսական վարչության կառավարիչ) և «վաղեե նեվիսի» (պալատական տարեգրի) հետ մտնում էին այն յոթ անձանց կազմի մեջ, որոնք կազմում էին «էմիրների խորհուրդը»:

Առհասարակ, սեֆյան վարչակարգին բնորոշ էր պաշտոնների այլընտրանքային համակարգի լայն կիրառումը: Ամեն մի պաշտոնյա ուներ իր «ստվերը», և նրանք միմյանց նկատմամբ իրականացնում էին փոխադարձ հսկողություն:

Սեֆյան Իրանի քաղաքները կառավարվում էին քալանթարների կամ քաղաքապետների կողմից, որոնք նշանակվում էին տեղական ազնվականության ներկայացուցիչներից, հաճախ նաև հարուստ վաճառականներից: Քալանթարների պարտականությունների մեջ էին մտնում նաև հարկերի հավաքումն ու շահական գանձարանին հանձնելը:

Ամեն մի գավառ ուներ իր խանը, որը մշտապես նստում էր գավառի գլխավոր քաղաքում: Շահի կողմից նա լիազորված էր տվյալ գավառում իրականացնել դատ ու դատաստան: Գյուղերը կառավարվում էին գյուղապետների կամ քյադխուդաների կողմից: Խանների տրամադրության տակ կային որոշակի թվով զինվորներ, որոնք շահի առաջին իսկ պահանջով պարտավոր էին իրենց զենքերով ներկայանալ նրան: Այն գավառները, որոնք տրամադրում էին զինվորներ, ազատվում էին շահական գանձարան հարկեր մուծելուց:

Ինչպես նահանգներում, այնպես էլ քաղաքներում շիիթական հոգևորականության ներկայացուցիչներն օժտված էին մեծ իրավունքներով ու իշխանությամբ: Սաղրերի ու ղազիների իրավասության ներքո էին գտնվում շարիաթական դատարանները, վակուֆային գործերով զբաղվելը: «Խասսե» համարվող շրջանները, որոնք հանդիսանում էին շահի անձնական սեփականությունը, կառավարվում էին ոչ թե բեկլարբեկների, այլ շահական հատուկ աստիճանավորների՝ «վեզիրների» կողմից: Պետության կենտրոնացման քաղաքականության բաղկացուցիչ մասն էր հանդիսանում շահապատկան և պետական հողերի հարաճուն ավելացումը: Դա հնարավորություն էր տալիս, որ շահի գանձարանը հոսեն հսկայական հարստություններ: Ֆրանսիացի Շարդենը հաղորդում է, որ յուրաքանչյուր տարի շահի գանձարանը մուտք գործող եկա-

մուտները կազմում էին մոտ 16 միլիոն լիվր, որը այդ ժամանակների համար հսկայական գումար էր կազմում:

Հարկ է նշել, որ Սեֆյան Իրանում հարկերը բավականաչափ չափավոր էին: Յուրաքանչյուր հարկատու կամ գյուղ, քաղաք և այլն հստակ գիտեր իր կողմից վճարվելիք հարկերի չափերը, թեև կամայական հարկագանձումները չէին բացառվում, հատկապես կենտրոնից հեռու ընկած ծայրամասերում: Տեղական մեծ ու փոքր աստիճանավորների կողմից քույլ էին տրվում ամենատարբեր տեսակի շորթումներ, որոնք բազմիցս գերազանցում էին պետության կողմից պաշտոնապես սահմանված հարկերի չափը:

Շահ Աբբասը Ա-ն, որպես անհատականություն, անշուշտ, լայնախոհ, խելամիտ և ծրագրող ուղեղ ունեցող մի գործիչ էր: Բայց և միևնույն ժամանակ վերին աստիճանի դաժան ու կասկածամիտ էր, երբ խոսքը վերաբերում էր իր իշխանությանը: Նա հրամայեց սպանել իր ավագ որդի Սեֆի-Միրզային՝ մի ընդունակ ու օժտված պատանու՝ վախենալով նրա հեղինակության աճից: Ավելի ուշ նա կուրացրեց իր երկու որդիներին՝ Թահմազ-Միրզային և Աբու Թալիբ-Միրզային և աքսորեց Ալամութ ամրոցը, իսկ չորրորդ որդուն չհասցրեց սպանել կամ հաշմել, որովհետև նա «ժամանակին» մահացավ: Այդ ժամանակվանից սկսած՝ Սեֆյան արքունիքում արմատավորվեց մի արատավոր սովորություն, երբ շահի ընտանիքի պատանիներին դաստիարակում էին հարեմում, որպեսզի այդ մեղկ մթնոլորտում երեխաները դառնան կամազուրկ ու փափկակյաց, զուրկ սուր բռնելու կարողությունից և առնական հատկանիշներից, միայն թե շահի համար չներկայացնեն որևէ վտանգ: Նվազագույն կասկածի դեպքում նրանց կուրացնում էին:

1629 թ. հունվարի 19-ին Մազանդարանի իր ամենասիրած պալատում 60-ամյա շահ Աբբաս Ա-ն մահացավ դիզենտերիայից: Զրկված լինելով իր բոլոր որդիներից՝ մինչև իր մահը նա գահաժառանգ նշանակեց իր մանկահասակ թոռանը՝ Սեֆի-Միրզային:

Վախենալով, որ ամենազոր շահի մահվան լուրը երկրում առաջ կբերի խռովություններ՝ պալատականները մեկ ամիս շարունակ թաքցնում էին այդ փաստը: Միայն փետրվարի 19-ին 19-ամյա ժառանգորդ Սեֆի-Միրզան բարձրացավ գահ՝ ընդունելով Սեֆի Ա գահակալական անունը (1629-1642): Վերջինս ոչ միայն օժտված չէր պապի հատկանիշներով, այլև նախածեռնող ոգուց զուրկ, իսկ ամենակարևորը, պետական գործեր վարելու համար քիչ պատրաստված մեկն էր:

Շահ Աբբաս Ա-ի նման ուժեղ հակառակորդի մահը քաջալերեց օս-

մանյան սուլթան Մուրադ Դ-ին, իսկ արևելքում վերսկսվեցին ուզբեկների հարձակումները Իրանի տարածքի վրա: Ղանդահարը կրկին անցավ Հնդկաստանի մեծ մողոլների տիրակալ Ջհանշահին: 1630 թ. գարնանը թուրքական մի խոշոր բանակ Խոսրով փաշայի հրամանատարությամբ անցավ թուրք-իրանական սահմանը և գրավելով Համադանը՝ ավերեց քաղաքը և կոտորեց նրա բնակչությանը: 1635 թ. ամռանը սուլթան Մուրադ Դ-ն (1623-1640) թուրքական բանակը շարժեց Արևելյան Հայաստան և պաշարեց Երևանի բերդը: Պաշարումը տևեց ընդամենը յոթ օր: Թահմազ ղուլի խանը համարյա առանց դիմադրության հուլիսի 27-ին հանձնեց բերդը և կալվածքներ ստանալով Սկյուտարի մոտ մեկնեց Թուրքիա: Թուրքական զորքերը գրավեցին նաև Բայազետի և Մակվի բերդերը, իսկ ապա մտան Թավրիզ և Նախիջևան: Սակայն հենց որ Մուրադ Դ-ն հապշտապ վերադարձավ Ստամբուլ, Սեֆի Ա-ն խլեց նախաձեռնությունը և անցնելով հակահարձակման՝ թուրքերից ազատագրեց Թավրիզը (1635 թ. նոյեմբերին) և Երևանը (1636 թ. ապրիլի 2-ին): Այդ իրադարձություններից հետո թուրք-իրանական պատերազմների թատերաբեմը տեղափոխվեց Միջագետք, որտեղ թուրքերը 1638թ. գրավեցին Բաղդադը:

1639 թ. Զոհաբում՝ Քասրե Շիրին կոչված վայրում, կնքվեց թուրք-իրանական խաղաղության պայմանագիր, որով Երևանն ու Ատրպատականը ճանաչվում էին որպես Իրանին պատկանող տարածքներ, իսկ Արաբական Իրաքը, Բաղդադ քաղաքով հանդերձ, մնում էր Օսմանյան կայսրության կազմում: Պայմանագիրը Հայաստանը բաժանում էր երկու պետությունների միջև. Արևելյան Հայաստանն անցավ Իրանին, իսկ Արևմտյան Հայաստանը՝ Օսմանյան կայսրությանը: 1639 թ. պայմանագիրը միջազգային-իրավական տեսակետից թուրք-իրանական հարաբերությունների պատմության մեջ նոր էտապի սկիզբ դրեց: Սկսվեց տևական խաղաղության մի շրջան, որը տևեց ավելի քան 80 տարի: Պայմանագիրն առաջին անգամ գրավոր փաստաթղթով որոշում էր երկու պետությունների փաստական սահմանագիծը Արարատից մինչև Պարսից ծոց՝ անորոշ թողնելով, սակայն, մի շարք ռազմավարական նշանակություն ունեցող տարածքների պատկանելության հարցը: Երկու երկրների սահմանները լիակատար պարզությամբ չնշվելու հետևանքով ծնունդ առավ, այսպես կոչված, «վիճելի գոտու» խնդիրը, որը և պատճառ հանդիսացավ հետագա հարյուրամյակների ընթացքում համարյա անընդհատ սահմանային վեճերի և արյունահեղ ռազմական բախումների:

1642 թ. Սեֆյան գահ բարձրացավ Աբբաս Բ-ն (1642-1666), որը Սեֆի Ա-ի որդին էր: Նոր շահը ևս առատորեն ժառանգել էր իր նախնիների բո-

լոր բացասական հատկանիշները: Նա թույլ կամքի տեր, հարբեցող ու վավաշոտ պատանի էր: Սակայն նրա օրոք Սեֆյան պետությունը գեթ արտաքուստ դեռևս ապրում էր վերելքի շրջան: Օսմանյան կայսրության և Իրանի միջև ստեղծված կայուն խաղաղությունը նպաստում էր երկու երկրների տնտեսական վերելքին և առևտրական հարաբերությունների զարգացմանը: Թուրքական ցամաքային ճանապարհներով իրանական հում մետաքսի արտահանման ծավալները ոչ միայն չնվազեցին՝ նախորդ շրջանի հետ համեմատած, այլև աճեցին: Ջաքարիա Սարկավագ պատմիչը վկայում է, որ Կ. Պոլսից մինչև Սպահան վաճառականների երթևեկությունը տեղի էր ունենում «առանց երկյուղի և ահու»: Ցամաքային ճանապարհների վրա, ինչպես և Շահ Աբբաս Ա-ի ժամանակներում, գերակշիռ դիրքեր ունեին միջազգային առևտրով զբաղվող հայ վաճառականները, մասնավորապես ջուղայեցիները: Այս նոր էտապում վերջիններիս հովանավորում էին ոչ միայն իրանական, այլև օսմանյան իշխանությունները:

Աբբաս Բ-ի օրոք իրանական զորքերը վերստին հետ նվաճեցին Ղանդահարը, որը դեռևս գտնվում էր մեծ Մողոլ Ջհանշահի տիրապետության ներքո: Շահի արտաքին քաղաքականության բնագավառում հաջողություն գրանցվեց նաև ուզբեկական հարցում: Մավարաննահրում ծագած երկպառակությունների պատճառով մոտ յոթ հազար քոչվոր ուզբեկներ իրենց էմիրների և արքայազներից մեկի հետ տեղափոխվեցին Իրան: Շահը նրանց ընդունեց զինվորական ծառայության՝ արևելքից Սեֆյան պետության սահմանները պաշտպանելու համար: Աղբյուրները հիշատակում են, որ Անդրկովկասի երկրներում շահական իշխանությունները կազմակերպեցին բոնի աղջկահավաք և հավաքելով ճիշտ յոթ հազար դեռատի օրիորդներ՝ նրանց կնության բաժանեցին վերոհիշյալ ուզբեկներին:

Շահ Սուլեյման Ա-ի (Սեֆի Բ, 1666-1694) կառավարման շրջանում միանգամայն ակնհայտ էր, որ Սեֆյան պետության մեջ արդեն սկսվել է տնտեսական, քաղաքական ու ռազմական ճգնաժամ, որը միտում ուներ խորանալու: Ներքին և արտաքին առևտուրը սկսեց նկատելի անկում ապրել: Եռանդի ու կարողության փոխարեն երևան եկավ տիրողների անհոգությունը: Իրանի հզորությունն ամենից շատ ջլատեց իր ասիական կառավարության հոռի կազմակերպությունը: Ռազմական առումով պետությունն այն աստիճանի էր թուլացել, որ արևելքում ուզբեկական խաների և աֆղանների ակտիվությունը և նրանց հաճախակի հարձակումները Սեֆյան պետության սահմանների վրա այլևս չէին հանդիպում ուժեղ դիմադրության: Արևմուտքից անընդհատ հարձակումներ էին

կազմակերպում քրդական ցեղերը, հյուսիսից՝ Դաղստանի կողմերից, Շիրվանի համար սպառնալիք էին ստեղծել լեզգի ֆեոդալները: Լեզգի ցեղերի ապստամբական շարժումները խրախուսվում էին Օսմանյան կայսրության կողմից: Քանը հասավ նույնիսկ նրան, որ Պարսից ծոցում հոլանդացիները գրավեցին Ղեշմ կղզին, սակայն դա ևս չարժանացավ իրանական պետության հակահարվածին:

Շահ Սուլեյմանի քսանութ տարվա տիրապետությունը ոչ տնտեսական վերելքի, ոչ էլ մշակութային կյանքի բնագավառում արժանահիշատակ ոչինչ չարձանագրեց Սեֆյան պետության տարեգրության մեջ: Քայքայման ջղաձգություններն ավելի խորացան շահ Սուլթան Հուսեյնի օրոք (1694-1722), որը հանդիսացավ Սեֆյան պետության վերջին շահը: Հարկային լուծը, որն առանց այն էլ չափազանց ծանր էր, էլ ավելի ուժեղացավ: Հարկային կամայականությունները հասան աննախադեպ չափերի: Այդ առիթով ուշագրավ ու հավաստի տեղեկություններ է հաղորդում Աղվանքի կաթողիկոս Եսայի Հասան- Ջալալյանը: Ուժից վեր հարկերից խուսափելու համար ռայաթ գյուղացիները զանգվածորեն դիմում էին փախուստի իրենց բնակավայրերից ու հողերից, սակայն օրենքը թույլ էր տալիս 12 տարվա ընթացքում փնտրել փախստականներին և վերադարձնել իրենց տերերի մոտ:

Կենտրոնական իշխանության տկարացումը, տեղերում սաստկացող կամայականությունները ու բռնությունները հպատակ ժողովուրդների մոտ առաջ էին բերում խորը անբավականություն: Որպես դրա հետևանք՝ ընդարձակ Սեֆյան տերության տարբեր ժողովուրդների մոտ բուռն թափով արթնանում էին անկախության ձգտումներ: Միջցեղային ու միջավատական ներհակություններով պառակտված երկրի տարբեր մասերում խմորվում ու բռնկվում էին տեղական ցեղապետ-ավատատերերի զինված ապստամբություններ: 1707 թ. հայ ազատագրական շարժման կարկառուն ներկայացուցիչ Իսրայել Օրիին շնորհելով գնդապետի կոչում և ուղարկելով Իրան՝ Պյոտր Ա-ն նրան հանձնարարել էր Պետերբուրգին տեղեկացնել Իրանում գործերի վիճակի մասին: Ի կատարումն այդ հանձնարարության՝ Օրին հայտնում է ցարին, որ երկիրը գտնվում է քայքայման վիճակում:

1715-1717 թթ. Իրանում եղած ռուսական դեսպան Արտեմի Վոլինսկին, որը Պյոտր Ա-ի կողմից ուղարկված էր այդ երկիրը հետախուզելու համար, գրում էր. «Պարսիկները ի վիճակի չեն պաշտպանվելու ոչ միայն թշնամիներից, այլև իրենց ապագա ապստամբներից, և սակավ են այն վայրերը, ուր չեն ծագել ապստամբություններ»: Իսկապես, երկրի

բազմաթիվ նստակյաց շրջանների ենթարկվեցին ռազմաշունչ վաչկատուն ցեղերի ասպատակություններին: Ռազմացեղային ազնվականությունը ձգտում էր ազատվել սեֆյան բյուրոկրատիայի կապանքներից: Անսանձ տարրերը կազմակերպում էին խռովություններ ու դավադրություններ: Մինչդեռ դեգրադացված զինված ուժերն ի վիճակի չէին ոչ պաշտպանել պետության սահմանները և ոչ էլ ապահովել նրա բնակչության անվտանգությունը: Բանակը և հասարակությունը անվստահությամբ էին համակված կառավարության նկատմամբ:

Իրանի ռազմաքաղաքական՝ առանց այն էլ ծանր դրությունը գնալով ավելի էր վատթարանում ու խորանում ընդհանուր տնտեսական ճգնաժամի հետևանքով, որն իր հերթին հանգեցնում էր գանձարանի մուտքերի կտրուկ կրճատմանը: Դեսպան Վոլինսկին նշում էր, որ անազնիվ ու ոչ օրինապահ կառավարիչների պատճառով պետության հարստությունը գլխապտույտ արագությամբ նվազում է: Գանձարանը դժվարությամբ է կարողանում հավաքել տարեկան 6 միլիոնի հասնող եկամուտ. այն դեպքում, երբ նախկինում հավաքվում էր 15 միլիոնից ավել գումար: Նա ավելացնում էր, որ գանձարանի դատարկ լինելու պատճառով հնարավոր չէ վարձատրել զորքերին: «Սպասալարը (գլխավոր հրամանատարը- Վ. Բ.),- շարունակում է Վոլինսկին,- որքան փորձում էր Թավրիզում հավաքագրել զորքեր, այդ փորձերն ապարդյուն էին անցնում, որովհետև աշխատավարձ չստանալու պատճառով զինվորները հրաժարվում էին պատերազմ գնալուց և փախուստի էին դիմում»:

Սակայն, չնայած գանձարանի եկամուտների անկմանը, պալատականները բնավ մտադրություն չունեին հրաժարվելու ճոխ կյանքից ու հարստանալու մոլուցքից: Արքունիքի ծախսերը, ընդհակառակը, գնալով ավելանում էին, շահի համար կառուցվում էին պալատներ, Եվրոպայից բերվում էին պերճանքի առարկաներ և այլն: Իսկ շահը ավելի շատ մտահոգված էր իր հարեմի գործերով: Նահանգի կառավարիչներն էլ, ձգտելով դուր գալ կնամոլ միապետին, հպատակների շրջանում կազմակերպում էին բռնի աղջկահավաքներ և գեղեցիկ աղջիկներին ուղարկում շահի և նրա ազգականների հարեմները: Լեհ ճիզվիտ Թադեուշ Կրուշինսկին նկատում է, որ «այն ժամանակ, երբ ամեն ինչ և՛ նահանգներում, և՛ մայրաքաղաքում դեպի անկում էր գնում, շահ Հուսեյինը, պետության բոլոր գործերը հանձնելով ներքինիներին, իր ողջ ժամանակն անց էր կացնում հարեմում, որի ծախսերը կլանում էին նրա գանձարանի միջոցների մեծ մասը: Նա հարեմը համարում էր իր անձնական թագավորությունը և միակ վայրը, որն արժանի է ուշադրության»: Երբ շահի բազմա-

քիվ կանանցից ավագը հանդիմանեց շահին, որ նա չափից ավելի շատ ժամանակ է վատնում զվարճանքների վրա՝ մոռացության մատնելով իր երկրի կարիքները, շահ Հուսեյնը հրամայեց խեղդել նրան: Հատկանշական է նաև հետևյալ փաստը. Նաջաֆաբադ գյուղում տեղի էր ունեցել կողոպուտ, և տուժածները բողոքով դիմել էին շահին: Վերջինս, իմանալով, որ այդ գյուղը գտնվում է Սպահանից 5 փարսախ (մոտ 7 կմ) հեռավորության վրա, նրանց պատասխանում է. «Ինձ համար մեկ է, ինձ բավական է նաև Սպահան քաղաքը»:

Ճանապարհներին մեծ չափերի հասած առևտրական քարավանների կողոպուտները ոչ միայն հանդուրժվում էին կառավարության կողմից, այլև իշխանություններն իրենք էին բացահայտ կերպով խրախուսում ավազակախմբերի գործունեությունը, որոնց կողմից կողոպտված ավարի մի մասը բաժին էր հասնում իրենց:

Գնալով սանձարձակ չափերի էին հասնում տեղական տարբեր մակարդակների կառավարիչների կամայականությունները: Կրուշինսկին նշում էր, որ նրանք, իրենց պաշտոնները համարելով ժամանակավոր, ավելի շատ մտածում էին քաղաքների և նահանգների կողոպուտի, քան նրանցում կարգ ու կանոն պահպանելու մասին: Եվ, ամենակարևորը, վստահ լինելով իրենց անպատժելիության մեջ, նրանք բնավ մտահոգված չէին դրսևորելու զգուշություն իրենց սանձարձակ գործողությունների մեջ:

Ա. Վոլինսկին ծաղրանքով նկատում էր, որ «ինչպես շահը, այնպես էլ նրա պալատականները ծույլ են և անբան, երբեք չեն ցանկանում խոսել գործերի մասին, և ինչ որ պատահականորեն գա նրանց մտքին, անում են առանց մտածելու և քննարկելու: Այդ բոլորի հետևանքով նրանք իրենց պետությունը այնպես են քայքայել, որ, իմ կարծիքով, Ալեքսանդր Մեծը (Մակեդոնացին-Վ. Բ.) ևս չէր կարող պատերազմի միջոցով այդպես քայքայել: Ես զգում եմ, որ այս թագը ընթանում է դեպի վերջին քայքայում, եթե այն չունենա մեկ այլ շահ, որը նորոգի պետությունը»:

Շահ Սուլթան Հուսեյնի կառավարման շրջանում, որը ծայրահեղ մոլեռանդ շիիթ էր, պետության կառավարման գործը անցավ շիա հոգևորականության և պալատական ներքինիների ձեռքը: Շահը դարձավ նրանց կամքի կամակատար: Նա հրաժարվեց կրոնական հանդուրժողականության քաղաքականությունից, որ իրականացնում էին իր նախորդները, և արյունոտ հալածանքներ սկսեց սուննիների դեմ: Սուննիթական մզկիթները պղծվում էին կամ վերածվում ախոռների: Հալածանքները տարածվեցին նաև դերվիշ սուֆիների և ծայրահեղ շիիթա-

կան աղանդների հետևորդների վրա: Այդ հալածանքները լոկ կրոնական մոլեռանդության արդյունք չէին. շահական կառավարությունը վախենում էր, որ սուննիքականությունը կարող է դառնալ անջատողական շարժումների դրոշ, որը իսկապես շուտով տեղի ունեցավ:

Կրոնական հալածանքների ալիքը տարածվեց նաև քրիստոնյաների վրա: Նոր Ջուղայում հայերի նկատմամբ սկսեցին իրագործել բռնի մահմեդականացման գործողություններ, մոլլաների և հայ հոգևորականության միջև կազմակերպվում էին «կրոնական վիճաբանություններ»՝ ապացուցելու համար, որ իսլամը ավելի կատարյալ կրոն է, քան քրիստոնեությունը: Այդ «վիճաբանությունները» կամ «հականառությունները» ոչ այլ ինչ էին, եթե ոչ բռնի դավանափոխության սքողված ձև: Շահ Սուլթան Հուսեյնը հրամայեց, որ հայերը հասարակական վայրերում իրավունք չունենան հայտնվելու շքեղ զգեստներով, այլ պետք է հագնեն ցնցոտիներ, նրանց արգելվում է շուկա գնալ ձիով, իսկ անձրևոտ օրերին իրավունք չունեն խանութներ կամ շուկա մտնելու, որպեսզի նրանց թաց զգեստները չդիպչեն մահմեդականներին և պղծեն նրանց: Շահը այնուհետև հրամայեց է արձակում, որ հայերը պետք է քարշ տան մահապարտ սպանվածների դիակները, «իբրև գործ անարգ յամօթ և ի նախատինս ինքեանց»: Ուժի մեջ մտցվեց, այսպես կոչված, իմամ Ջաֆարի օրենքը, ըստ որի քրիստոնյա ընտանիքի վախճանված հոր ժառանգությունը ամբողջապես անցնում էր նրա այն ժառանգին, որն ընդունել էր իսլամը: Կրոնական մոլեռանդությունն ընդունում է այնպիսի չափեր, որ շահի հրամանով Նոր Ջուղայի հայկական գերեզմանատան տապանաքարերի ծայրերը կտրում են՝ իբր թե դրանով թլպատելով հայ ննջեցյալներին:

Այս բոլորի հետևանքը լինում է հայերի զանգվածային արտագաղթը, ավելի շուտ՝ փախուստը Սեֆյան Իրանից այլ երկրներ:

Միաժամանակ Սեֆյան պետությունը սկսեց կորցնել տարածքներ: 1717 թ. Մասկաթի սուլթանի ջոկատները ներխուժեցին Պարսից ծոցի Բահրենյան կղզիներ, պաշարեցին Բենդեր-Աբբասը և գրավեցին Հորմուզը՝ հսկողության տակ վերցնելով Հորմուզի նեղուցը: Փաստորեն Իրանը ենթարկվեց ծովային շրջափակման, և Պարսից ծոցը փակվեց իրանական վաճառականների առջև: Իսկ մինչ այդ՝ 1715 թ. տեղի ունեցած իրանական քրդերի ապստամբությունը ևս Իրանի տարածքային ամբողջականության համար ստեղծեց լուրջ սպառնալիք, մանավանդ որ ապստամբներն օգնություն էին ստանում Օսմանյան կայսրությունից: Սեֆյան պետության համար նույնպիսի վտանգ էին ներկայացնում նաև

1711 և 1719 թթ. բռնկված լեզգիների հուժկու ապստամբությունը Սուրխայ խանի և Հաջի Դավուդի գլխավորությամբ, որոնք նույնպես սերտորեն կապված էին Օսմանյան կայսրության հետ և նրանից ստանում էին հրահանգներ: Այնուհետև 1717 թ. տեղի ունեցավ շահսևենյան ցեղերի ապստամբությունը, 1719թ. ուզբեկները հարձակվեցին Խորասանի վրա և այլն: 1717թ. հունվարին խոշոր ապստամբություն բռնկվեց Թավրիզում: Նույն թվականի ապրիլին քաղցած ամբոխի խոշոր բունտ տեղի ունեցավ Սպահանում: Երեք հազարից ավելի ապստամբներ փորձեցին գրոհով վերցնել շահի պալատը: Շահը սկզբում թաքնվեց հարեմում, իսկ ապա փախավ նոր կառուցվող Ֆարահաբադ քաղաք-ամրոցը: Նույն ամսին ապստամբություն սկսվեց Գիլյանում, որին մասնակցում էր 20 հազարից ավելի մարդ:

Շահ Սուլթան Հուսեյնի օրոք Իրանը առաջին անգամ եվրոպական տերությունների հետ կնքեց, այսպես կոչված, «կապիտուլյացիոն պայմանագրեր»: Դրանք միակողմանի միջազգային-իրավական ակտեր էին, որ շահը հատկացնում էր այս կամ այն պետությանը՝ նպատակ ունենալով այդ երկրների վաճառականներին ներգրավել Իրանի ներքին և արտաքին առևտրի մեջ: Հարկ է նշել, որ Իրանում կապիտուլյացիոն ռեժիմ սահմանելու նախաձեռնությունը պատկանում էր Անգլիային: Դեռևս 1566 թ. Մեծ Բրիտանիան Թահմազ Ա-ից ստացավ բացառիկ իրավունքներ ու արտոնություններ: Սակայն այդ ժամանակ դեռ անգլիացիները ակտիվ քաղաքականություն չէին իրականացնում Իրանի նկատմամբ, ուստի և հիշյալ պայմանագիրը ըստ էության չաշխատեց: XVII դ. վերջին Իրան այցելեց ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս XIV-ի դեսպանությունը: Այցի ժամանակ շահը հրապարակեց հատուկ հրամանագիր, որով ֆրանսիական քաղաքացիներին թույլատրվում էր առևտուր անել Իրանում և օգտվել մի շարք արտոնություններից ու իրավունքներից, այդ թվում նաև շահի հովանավորությունից: Սակայն այդ ժամանակներում Ֆրանսիայի և Սեֆյան Իրանի միջև կանոնավոր կապերի բացակայության պատճառով ֆրանսիացիներին հատկացված կապիտուլյացիոն իրավունքները լայն տարածում չգտան Իրանում:

1708 թ. սեպտեմբերի 14-ին շահ Սուլթան Հուսեյնի և ֆրանսիական թագավորի կողմից լիազորված անձի միջև կնքվեց 31 հոդվածից բաղկացած առևտրական մի պայմանագիր, որը տիպիկ կապիտուլյացիոն պայմանագիր էր: Ներմուծվող և արտահանվող ֆրանսիական ապրանքները հինգ տարի ժամկետով ազատվում էին մաքսատուրքերից, որից հետո սահմանվում էր մաքսատուրք 3%-ի չափով: Ապրանքները՝ մինչև 500

հակ, ազատվում էին ճանապարհներից օգտվելու համար սահմանված տուրքերից («րահդար»)։ Ֆրանսիական վաճառականները և նրանց մոտ ծառայող հայերն ու հնդիկները նույնպես ազատվում էին հարկերից և տուրքերից։ Ֆրանսիացիների միջև ծագած վեճերի լուծման իրավասությունը պատկանելու էր միայն ֆրանսիական հյուպատոսին։ Ֆրանսիացու և մահմեդականի միջև վեճի ծագման դեպքում իրանական իշխանությունները պարտավոր էին հետաքննություն իրականացնել միայն ֆրանսիական հյուպատոսի ներկայությամբ։ Այնուհետև ֆրանսիացիներին իրավունք էր տրվում բնակություն հաստատել Իրանի ցանկացած վայրում, այդ թվում նաև նավահանգիստներում, իսկ ֆրանսիացի հոգևորականներին՝ կատարել կրոնական ծիսակատարություններ և անարգել զբաղվել քարոզչությամբ, պայմանով, որ կրոնական քարոզչությունը չպետք է մղվի մահմեդականների շրջանում։ Քարմելիթյան, դոմինիկյան, ֆրանցիսկյան, ճիզվիտական և այլ միաբանությունների անդամներին թույլատրվում էր ազատորեն տեղաշարժվել Իրանում։

1715 թ. օգոստոսի 15-ին Վերսալում ստորագրվեց ֆրանս-իրանական պայմանագիր բարեկամության ու առևտրի մասին, որը հավաստում էր, որ 1708 թ. պայմանագիրը մնում է ուժի մեջ։ Այս նոր պայմանագրով ֆրանսիական վաճառականները և առհասարակ ֆրանսիական դրոշի ներքո Իրանում առևտուր անող յուրաքանչյուր ոք կարող էր ազատորեն Իրան ներմուծել և այնտեղից արտահանել ցանկացած ապրանք՝ առանց սահմանափակումների և առանց որևէ մաքսատուրք ու հարկ վճարելու։ Ֆրանսիական դրոշը կարող էր բարձրացվել Իրանում ֆրանսիական ֆակտորիաների և վաճառականների տների վրա։ Պարսից արքունիքում, այլ պետությունների դեսպանների համեմատ, ֆրանսիական դեսպանին տրվելու էր նախապատվություն։

Ֆրանսիացիներին հատկացնելով վերոհիշյալ իրավունքներն ու արտոնությունները՝ շահը հույս ուներ, որ արտաքին առևտրից ստացվող հասույթների օգնությամբ հնարավոր կլինի գեթ ինչ որ չափով հաղթահարել Իրանի ֆինանսատնտեսական ծանր ճգնաժամը։ Սակայն նրա այդ հույսերը չարդարացան։ Վերոհիշյալ պայմանագրերը, ըստ էության, մնացին թղթի վրա, որովհետև Ֆրանսիան այդպես էլ չաշխուժացրեց իր առևտրական քաղաքականությունը Իրանի նկատմամբ։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԻՐԱՆԸ ԱՖՂԱՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

1. ԱՖՂԱՆ-ԳԻԼՋԱԻՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԻՐԱՆ

Դեռևս շահ Աբբաս Ա-ի մահվանից հետո աֆղանական ռազմաշունչ և մեծաթիվ գիլզաի ցեղը, որի բնակության վայրը Ղանդահարի շրջանն էր, բազմիցս ապստամբում էր Սեֆյանների դեմ: XVIII դ. սկզբին աֆղանական էմիրների ջիրգան գիլզաի ցեղի առաջնորդ նշանակեց Ղանդահարի բերդապահ, եռանդուն, փառասեր ու խորամանկ Միր-Վեյսին: Այդ ժամանակ Ղանդահարի նահանգի բեկլարբեկն էր ծագումով վրացի Գորգին (Գուրգեն) խանը, որը մահմեդականություն ընդունելուց հետո ստացել էր Շահնավազ խան անունը: Վերջինս իր սանձարձակ վարքագծով իր դեմ էր տրամադրել ոչ միայն գիլզաիների վերնախավին, այլև շարքային անդամներին: Նրա զինվորներն անխնա կողոպուտի էին ենթարկում բոլորին՝ խտրություն չդնելով ցեղապետների ու նրանց հասարակ հովիվների միջև: Ֆրանսիացի Պիկոն վկայում է, որ կանանց գողանում էին ուղղակի ամուսնական մահճից, իսկ աղջիկներին՝ իրենց մայրերի գրկից: Ատելությունը նրանց նկատմամբ վերջին հաշվով ուղղվում էր Սեֆյան շահի դեմ, որը ինքն էր նշանակել Շահնավազ խանին որպես Ղանդահարի բեկլարբեկ:

Գիլզաիները Միր-Վեյսի գլխավորությամբ նախապատրաստում են դավադրություն Գորգին խանի դեմ: Միր-Վեյսը Մեքքա ուխտագնացու-

թյան մեկնելու համար շահից թույլտվություն ստանալու պատրվակով մեկնում է Սպահան և կաշառքով ու սադրանքներով կարողանում է նախարարներին ու շահին տրամադրել Ղանդահարի բեկլարբեկի դեմ: Ի դեպ, այդ օրերին Իսրայել Օրու ժամանումը Սպահան (1708 թ.) ծայրահեղ կերպով վախեցրել էր շահին և նրա մոտ առաջ բերել կասկածներ, որ ողջ հայությունը և վրացիները հակված են դեպի Ռուսաստանը: Միր-Վեյսը փայլուն կերպով օգտագործում է այդ կասկածները, որպեսզի հարուցի շահի անվստահությունը Գորգին խանի նկատմամբ՝ որպես ծպտված քրիստոնյայի և ռուսամետի: Իր՝ Սպահանում եղած ժամանակը Միր-Վեյսը չէր օգտագործում միայն սադրանքներ հյուսելու վրա, նա հետախուզում էր Սեֆյան պետության ներքին վիճակը, ուսումնասիրում նրա թույլ կողմերը և այլն:

Վերադառնալով Ղանդահար՝ Միր-Վեյսը սուտ լուրեր է տարածում, թե իբր Սպահանում եղած ժամանակ շահը իրեն նշանակել է Ղանդահարի ոստիկանապետի պաշտոնում: Դա հնարավորություն է տալիս նրան իր շուրջը համախմբել մեծ թվով ռազմիկների և առհասարակ բեկլարբեկից դժգոհ մեծ թվով մարդկանց՝ միաժամանակ տենդորեն նախապատրաստվելով արշավանքի դեպի Իրան: 1709 թ. Միր-Վեյսը հրամայում է տանջալից մահով սպանել Շահնավազ խանին և նրա թիկնազորի բոլոր մարտիկներին: Այդ միջադեպը ծառայում է մի տեսակ ազդանշան Սեֆյանների դեմ աֆղանական ցեղերի հզոր ապստամբության բռնկման համար: Միր-Վեյսը գաղտնապես Մեքքայի սուննի աստվածաբաններից ստացել էր ֆեթվա, որը սուննիների ապստամբությունը շիա թագավորի դեմ հայտարարում էր աստվածահաճո գործ: Շարժմանը կրոնական երանգավորում տալու շնորհիվ Միր-Վեյսը կարողացավ իր դրոշի ներքո համախմբել ոչ միայն աֆղանական մյուս ցեղերին ևս, այլև առհասարակ Սեֆյան պետության արևելյան ծայրամասերի բոլոր սուննի ժողովուրդներին ու ցեղերին, այդ թվում նաև ուզբեկներին:

1711 թ. Միր-Վեյսն իրեն հռչակեց Ղանդահարի անկախ կառավարիչ: Նա դեսպանություն ուղարկեց Քաբուլի տիրակալ Դարաֆշահի մոտ՝ նրան հրավիրելով միանալ իրեն և սուտ խոստում տալով, որ Իրանին տիրելուց հետո նա կհռչակվի համայն Իրանի և Աֆղանստանի թագավոր: Նրան համոզելու համար Միր-Վեյսը ասում էր, որ իր Սպահանում գտնվելու օրերին ինքը հաստատապես համոզվել է, որ պարսից կառավարությունը թույլ է և անարի: Այդ խոստումներից գայթակղված Դարաֆշահը իր զորքերով միացավ Միր-Վեյսին, սակայն երբ միացյալ զորքը դուրս եկավ ռազմարշավի, ճանապարհին նա անսպասելիորեն մա-

հացավ: Նրա եղբայր Ամանուլլա խանը իր վրա վերցրեց զորքերի հրամանատարությունը և Միր-Վեյսից պահանջեց հավաստիացնել, որ իր եղբոր մահվանից հետո, ըստ պայմանի, ինքը պետք է հռչակվի շահ: Միր-Վեյսը խորամանկելով պատասխանում է, որ նպատակահարմար է առայժմ իր որդի Մահմուդին հռչակել թագավոր՝ պարսիկներին ւսհաբեկելու համար, բայց երբ իրենք տիրեն Սպահանին, շահ կհռչակվի Ամանուլլա խանը: Վերջինս միամտաբար հավատում է այդ ստին, և միաբան խորհրդով որոշում են սկսել շարժումը:

1715 թ. Միր-Վեյսը մահանում է, և նրա եղբայրը՝ Միր- Աբդոլլան, իրեն հռչակում է գիլզաիների առաջնորդ և գաղտնի շփումների մեջ է մտնում շահի հետ՝ նպատակ ունենալով հաշտվել նրա հետ և մարել աֆղանական ապստամբական շարժումը: Սակայն դա հայտնի է դառնում գիլզաիներին, և նրանք, որպես դավաճանի, սպանում են Միր-Աբդոլլային: Դրանից հետո Միր-Մահմուդը, իր հոր՝ Միր-Վեյսի կամքի համաձայն, գիլզաիների կողմից ճանաչվում է որպես ցեղի առաջնորդ:

1717 թ. Սպահան են հասնում տեղեկություններ այն մասին, որ աֆղանները գրավել են Հերաթը, իսկ ուզբեկները ներխուժել են Խորասան և գերել 60 հազար իրանցիների:

Աֆղանական և ուզբեկական վտանգի դեմ պայքարելու նպատակով սեֆյան կառավարությունը որոշեց հայտարարել համընդհանուր զորահավաքի նման մի բան: Սակայն, ինչպես միշտ, շահական գանձարանը դատարկ էր: Ուստի «բարձրագույն խորհուրդը» որոշեց երկրի բնակչությունից հավաքել արտակարգ հարկեր՝ 350 հազար թուման գումարով, որը ծախսվելու էր նոր բանակի ֆինանսավորման ու հանդերձավորման վրա: Սակայն շուտով պարզվեց, որ նոր հարկերը անխուսափելիորեն հանգեցնում են միայն նոր ապստամբությունների, ուստի և 1718 թ. ամռանը կառավարության կողմից ընդունվում է մի աննախադեպ որոշում՝ այդ միջոցները գանձել առաջին հերթին տիրապետող վերնախավից ու վաճառականությունից, այդ թվում նաև Նոր Ջուղայի հայ խոջաներից: Այդ «մտահղացումը» ևս ձախողման է մատնվում: Այնժամ մեծ վեզիր Ֆաթհ Ալի-խան Դաղստանիի նախաձեռնությամբ ընդունվում է նոր՝ չտեսնված մի որոշում՝ հնչուն դրամի ձուլել ոչ միայն շահական արքունիքի բոլոր թանկարժեք իրերը, այլև այդ նպատակի համար օգտագործել նաև Ղումում Սեֆյան դինաստիայի հանգուցյալների դամբարաններում պահվող բոլոր ոսկյա և արծաթյա զարդերը և բոլոր թանկարժեք իրերը: Սակայն դրանից ևս բան չստացվեց, և այդպես էլ զորահավաքի որոշումը մնաց միայն որպես լոկ ցանկություն:

Անցնելով սահմանը՝ աֆղանները «կատաղի վրեժխնդրությամբ սպանանեին և գերէին զազգս պարսից, քակէին, աւերէին և այրէին զշենս նոցա, որոց բարբարոսական կատաղութեանցն՝ հողաբլուր աւերակունք տակաւին ի բազում ուրեք Պարսկաստանի վկայք հանդիսացան»,- XIX դ. երկրորդ կեսին գրում էր Նոր Ջուղայի պատմիչ Հարություն Տեր-Հովհաննեսյանցը:

Լսելով աֆղանական արշավանքի մասին՝ շահ Սուլթան Հուսեյնը ամբարտավանորեն ու մեծամտությամբ հայտարարում է. «Ով է ստրուկ Միր-Վեյսը կամ աֆղանների վախկոտ զորքը, որ կարողանան իմ ձեռքից խլել Սպահանը»: Սակայն շահն իր այդ հոխորտանքը չամրապնդեց գործով և հանցավոր անփութություն դրսևորեց երկրի պաշտպանության կազմակերպման հարցում: Ավելին, նա հրամայեց շարունակել Սպահանի մոտ՝ Ֆահրաբադ վայրում, իր շքեղ պալատի շինարարությունը, կարծես թե արտակարգ ոչինչ չէր պատահել:

Միր-Մահմուդի առաջին ասպատակությունն Իրան (1720 թ.) նրան հաջողություն չբերեց: Թեև Սեֆյաններից դժգոհ պարսիկ զրադաշտականների օգնությամբ Միր-Մահմուդին հաջողվեց գրավել Քերմանը, սակայն Ֆարսի բեկլարբեկ Լութֆ-Ալի խանը ջախջախեց աֆղաններին և ստիպեց նրանց մազապուրծ փախուստի դիմել դեպի Ղանդահար:

Այստեղ Միր-Մահմուդը սկսեց տեսնել նոր նախապատրաստություններ ավելի հուժկու թափով արշավանք կազմակերպելու համար: 18 տարին դեռ չլրացած այդ պատանի ռազմիկը մեծացել էր զինվորների շրջապատում՝ իր հոր հետ մասնակցելով բազմաթիվ արշավանքների ու ասպատակությունների: Նրա անձնական խիզախությունը և պատերազմական փորձը երաշխիք հանդիսացան այն բանի, որ իր ողջ ցեղը համախմբվի նրա դրոշի ներքո: Հարուստ ավար ձեռք բերելու հույսով նրա շուրջը համախմբվեցին ոչ միայն գիլզաի ցեղից նորանոր ռազմիկներ, այլև աբդալի աֆղանական ցեղը, բելուջները և այլն, որի հետևանքով Միր-Մահմուդի բանակը հասավ 20-30 հազար մարդու: Այդ հեծյալ զորքերը 1721 թ. Սիսթանի (Սեյիստան) վրայով սկսեցին շարժվել դեպի արևմուտք: 1722 թ. հունվարին գրավելով ու անխնա կողոպուտի մատնելով Քերմանը՝ Միր-Մահմուդը շարժվեց դեպի Յեզդ: Աֆղանների դեմ ճակատը, ըստ էության, մնացել էր անպաշտպան, մանավանդ որ Լութֆ-Ալի խանը, դառնալով պալատական սադրանքների զոհ ձերբակալվել էր, իսկ նրա զորքերը ցրվել էին: Համոզվելով, որ կառավարությունը ի վիճակի չէ կամ ցանկություն չունի պաշտպանելու իրենց քաղաքը՝ Յեզդի բնակիչներն իրենք կազմակերպեցին ինքնապաշտպանություն: Դիմադրությունը կատաղի էր և հա-

կապես ժողովրդական, ուստի աֆղաններին չհաջողվեց գրավել այդ քաղաքը: Միայն նիզակներով ու սրերով զինված Մահմուդի զորքերը, առանց հրետանու, աստիճանների և պաշարողական այլ հարմարությունների, բնականաբար, ի վիճակի չէին գրավել ամրացված քաղաքներ: Համոզվելով դրանում՝ Միր-Մահմուդը որոշեց շրջանցել նման քաղաքները և ուղիղ շարժվել մայրաքաղաքի՝ Սպահանի վրա:

2. ԻՐԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԱՖՂԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ: ԱՖՂԱՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ

1722 թ. մարտի 8-ին, Սպահանից 25 կմ արևելք՝ Գուլնաբադ գյուղի մոտ, տեղի ունեցավ աֆղանական զորքերի հանդիպումը 50 հազարանոց իրանական բանակի հետ, որը բաղկացած էր գլխավորապես շրջակա գյուղերից հապշտապ հավաքված գյուղացի աշխարհազորայիններից: Այդ «բանակը» չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ զավթիչներին և փախուստի դիմեց՝ թշնամուն թողնելով 24 թնդանոթներ, իրենց զենքերն ու զինամթերքը, գումակը, նույնիսկ գանձարանը և առհասարակ այն ամենը, ինչ կար այդ բազմամարդ բանակում: Ժամանակակիցների վկայությամբ՝ ճակատամարտը սկսելուց առաջ պարսկական բանակի հրամանատարության շրջանում վեճ էր գնում, և ոչ մի կերպ չէին կարողանում համաձայնության գալ, թե ով է լինելու էմիրը կամ բանակի գլխավոր հրամանատարը, ով սարդարը և, առհասարակ, ով ում է ենթարկվելու: «Ծաղու արժանի է նկարագրութիւնն փախստեան մոլլայից,- գրում է նոր ջուղայեցի Տեր-Ստեփաննոս պատմիչը,- զի ոմանք հեծեալ յէշ և ի կիսամեռ երիւար սրտատրոփ աճապարմամբ ի քաղաքն անկանել փութային, և տային գոյժ թագաւորին, ասելով թե «նզովեալք (զորքն Աղուանից) ունելով զերկայն աշտէս և զսրածայր նետս, ոչ ասէին թէ այս երես է մարդոյ կամ փոր, այլ երկայնէին զնիզակն և մխէին յաչս կամ ի սիրտս մեր, ոչ փոյթ ունելով, թե վիրաւորի կամ մեռանի արարածն Աստուծոյ»: Պարսիկների փախուստը մարտի դաշտից այն աստիճանի հախուռն ու անհավատալի էր, որ մի պահ աֆղաններին թվացել էր, որ հակառակորդը դիմել է զինվորական խորամանկության՝ իրենց ծուղակը գցելու համար: Ուստի հաղթանակ ձեռք բերելուց հետո, աֆղանական բանակը 3 օր շարունակ տեղից չէր

շարժվում՝ ջանալով պարզել ստույգ իրողությունը:

Գուլնաբադից հետո աֆղանները գրավեցին Սպահանի մոտ գտնվող Նոր Ջուղա հայկական ավանը, որի հարստության լուրերով գայթակղված՝ Միր-Մահմուդը նրա բնակիչների վրա դրեց մի հսկայական ռազմատուգանք՝ պահանջելով, որպեսզի որպես արյան գին (կամ փրկագին) նրանք վճարեն 120 հազար թուման: Համոզվելով, որ նման գումարի գանձումը մի փոքրիկ վայրից անհնարին է՝ աֆղանները փրկագնի չափը իջեցրին 70 հազար թումանի, որը նույնպես ուժից վեր մի բան էր: Այն գանձելու պատրվակի տակ աֆղան զինվորները կողոպտեցին ջուղայեցիների տները և իրենց ձեռքն ընկածը տարան այնտեղից: Ովքեր չէին կարող վճարել «արյան գնի» իրենց բաժինը, մատնվում էին տանջանքների ու մահվան: Հալածանքներից գեթ առժամանակ ազատվելու համար ջուղայեցիներին հաջողվում է մի կերպ վճարել քսանմեկ հազար թուման՝ մնացածի համար տալով մուրհակներ և քառասուն աղջիկ: Ուշագրավ է նշել, որ երբ աֆղանները մոտենում էին մայրաքաղաքին, շահ Սուլթան Հուսեինի հրամանով Նոր Ջուղայի հայերը զինաթափ արվեցին: Շահի կրոնական հալածանքները, ուժից վեր հարկերն ու տուրքերը հայերի շրջանում դժգոհություն էին առաջ բերել սեֆյան իշխանությունների նկատմամբ, որոնք չէին բացառում հայերի ապստամբությունը կամ ըմբոստությունը:

Այնուհետև աֆղանական բանակը Նոր Ջուղայից շարժվում է դեպի Սպահան: Սակայն աֆղանների բոլոր փորձերը՝ գրավելու Զայենդեռուդ գետի վրա կառուցված Ալլահվերդի խանի ամրացված կամուրջը, ավարտվեցին անհաջողությամբ: Ուստի Միր-Մահմուդը փորձում է իր նպատակին հասնել բանակցությունների միջոցով: Նա շահ Հուսեյնին առաջարկում է հաշտություն, պայմանով, որ շահը գիլզաիներին զիջի Ղանդահարը, Սիսթանը և Խորասանը, վճարի 50 հազար թուման ռազմատուգանք և իր դստերը կնության տա նրան: Շահական մեջլիսը, հակառակ Իթիմադ-օդ-դոուլեի հորդորներին՝ հարցը ճգճգելու միջոցով փորձել ժամանակ շահել և առհասարակ ցուցաբերել առավելագույն զգուշություն, հախուռն ձևով մերժեց այդ առաջարկները: Շահի վերջին հույսը մնում էր իր որդին՝ իշխանազուն Թահմազը: Հարեմից նրան ուղիղ բերում են հոր մոտ, և վերջինս հանդիսավոր կերպով նրան հռչակում է ահաժառանգ և բանակի գլխավոր հրամանատարի տեղակալ՝ նրան օժտելով նաև բազմապիսի լիազորություններով: Ղաջարական 500 փորձված ու հավատարիմ զինվորների ուղեկցությամբ նորաթուխ գահաժառանգին հաջողվում է դուրս գալ շրջապատման օղակից: Նա

կոչով դիմում է ժողովրդին՝ հորդորելով զինվորագրվել իր բանակին՝ մայրաքաղաքը փրկելու համար, սակայն այդ կոչը մնում է անարձագանք: Նույնիսկ երկրի տարբեր մասերում տեղակայված զորքերը ցանկություն չեն դրսևորում կատարելու իրենց պարտքը պետության և շահի առջև: Սկսվեց Սպահանի պաշարումը, որը տևեց յոթ ամիս (1722 թ. մարտից մինչև հոկտեմբեր): Քարթլիի թագավոր Վախթանգ Զ-ն, որը զբաղված էր լեզգիների ապստամբության դեմ պայքարով, մերժեց շահի խնդրանքը օգնություն ցուցաբերելու վերաբերյալ: Պաշարված մայրաքաղաքում սննդամթերքի պաշարները սպառվեցին, և սկսվեց ահավոր սով: Մարդիկ սկսեցին ուտել շների, կատուների, ավանակի միս, ծառի տերևներ, թրիք, կաշի, հին կոշիկներ և առհասարակ, ինչ պատահի: Գործը հասավ նույնիսկ մարդակերության: Գտնվեցին նույնիսկ մայրեր, որոնք սպանում և ուտում էին սեփական զավակներին: Մեռնողների թիվն այնքան շատ էր, որ մեռելները մնում էին անթաղ:

Անհավանական է թվում Պետրոս դի Սարգիս Գիլանենցի հաղորդած այն տեղեկությունը, որ այն ժամանակ, երբ սովը մոլեգնում էր Սպահանում, Աստծո գթասրտությունը խնայեց հայերին: Ջուղայում այնքան ուտելիք կար, որ դրանք չափազանց էժան էին:

Սովը հասավ նաև շահական արքունիք: Մյուս կողմից, վախենալով մայրաքաղաքում ապստամբության սպառնալիքից, շահ Մուլթան Հուսեյնը Մահմուդ ղուլի խան Իթիմադ-օդ-դոուլեհին որպես պատգամավոր ուղարկում է Միր-Մահմուդի մոտ՝ նրան այս անգամ առաջարկելով 100 հազար թուման, համաձայնվելով իր աղջկան կնության տալ Մահմուդին, ինչպես նաև նրան տալ նախկինում իր խնդրած նահանգները՝ դրան ավելացնելով նաև Քերմանը: Սակայն աֆղանների առաջնորդը հայտարարում է, որ այժմ Իրանի բոլոր նահանգները և նրանց հարստությունները, միևնույն է, ընկնելու են իր ձեռքը, իսկ շահի բոլոր աղջիկներին ու կանանց ինքը բաժանելու է իր զինվորներին, որպես ստրուկներ:

Այս տարբերակը մերժվելուց հետո շահը Մահմուդին ներկայացրեց մի նոր առաջարկ. ինքը կհանձնի մայրաքաղաքը, եթե նա խոստանա չսպանել իրեն և քաղաքի բնակիչներին: Մահմուդը պատասխանում է, որ ինքը կընդունի այդ պայմանը միայն այն դեպքում, երբ շահը անձամբ գա իր մոտ և իր ձեռքով իրեն հանձնի թագը և Սպահանի բանալիները: Ճիզվիտ Թադեուշ Կրուշինսկին վկայում է, որ շահը ավելի շատ էր շտապում իջնել գահից, քան Միր-Մահմուդը՝ զբաղեցնել այն: Մայ-

րաքաղաքից փախուստի անհաջող փորձից հետո՝ 1722 թ. նոյեմբերի 22-ին, շահը աֆղանների ճամբար ուղարկեց լիազորված անձանց՝ կազմելու համար կապիտուլյացիայի պայմանները, որը հենց նույն օրը ստորագրվեց ու հաստատվեց կնիքով: Նոյեմբերի 23-ին տեղի ունեցավ աննախադեպ դեպք. աֆղանները շահի և նրա գլխավոր պալատականների համար ձիեր ուղարկեցին, որովհետև ամբողջ Սպահանում չէր մնացել և ոչ մի ձի. սովի ժամանակ բոլորը կերել էին: Շահ Հուսեյնը իր շքախմբի ուղեկցությամբ, նժույգների վրա նստած, դուրս եկավ իր պալատից և ուղևորվեց դեպի աֆղանների ռազմական ճամբարը: Այնտեղ նա իր գլխից հանեց թագը և դրեց Միր-Մահմուդի գլխին՝ նրան հայտարարելով գահի վրա իր փոխանորդը, իր ժառանգորդների ցուցակից հանելով սեփական որդիներին և պատգամելով, որ երկիրը լավ կառավարի, հստակ կերպով իրականացնի արդարադատություն, ծանր հարկերով չհարստահարի հպատակներին և այլն: Շահը Միր-Մահմուդի մատն անցկացրեց նաև թագավորական իշխանությունը խորհրդանշող մատանին, հանձնեց Սպահանի բանալիները՝ միաժամանակ նրա առջև խոնարհվելով իբրև թագավորի: Մահմուդն իրեն հայտարարեց Իրանի շահ: Սեֆյան ազնվականությունը հավատարմության երդում տվեց նրան:

1722 թ. նոյեմբերի 23-ին հանդիսավոր կերպով մուտք գործելով Սպահան՝ Մահմուդը դրժում է շահին տված իր խոստումները: Նախ՝ նա Սպահանի վրա դրեց ծանր ռազմատուգանք՝ 4 հազար հակ դիպակ, 105 հակ ոսկեհյուս ու արծաթահյուս կտորներ և այլն: Սակայն քաղաքը այն աստիճանի կողոպտված էր, որ բնակիչները կարողացան հավաքել միայն պահանջվածի կեսը: Աֆղանները կրկին անգամ ծանր փրկագին պահանջեցին Նոր Ջուղայի հայերից: Վերջիններս չկարողացան այն ժամանակին վճարել, ուստի նրանց քաղաքապետը՝ քալանթարը, գլխատվեց, իսկ քաղաքը սարսափելի կողոպուտի մատնվեց: Աֆղանները ծանր ռազմատուգանք դրեցին նաև անգլիական, հոլանդական, հնդկական և այլ ազգերի վաճառականների վրա: Քիչ անց՝ 1723 թ. հունվարի 25-ին, Մահմուդը ողջ սեֆյան ազնվականությանը և մայրաքաղաքի աչքի ընկնող մարդկանց իրենց ընտանիքներով հրավիրում է պալատ՝ «արքայական խնջույքի», և հրամայում է նրանց բոլորին՝ մինչև վերջին մարդը, չխնայելով նույնիսկ երեխաներին, անխնա սրի քաշել: Ժողովրդի աչքում այդ նողկալի դաժանությունն արդարացնելու համար հայտարարվեց, թե այդ մարդիկ դավադրություն էին կազմակերպել շահ

Մահմուդի դեմ՝ նրան սպանելու նպատակով:

Սակայն բոնակալը դրանով չբավարարվեց: Սպահանում էին գտնվում շահ Սուլթան Հուսեյնի թիկնազորի և բանակի երեք հազար զինվորներ, որոնք կամավոր անցել էին աֆղանների կողմը և հավատարմության երդում էին տվել Մահմուդին: Սակայն, չնայած դրան, վերջինս մշտական երկյուղի մեջ էր, որ մի գեղեցիկ օր դրանք կարող են զենքը շուռ տալ իր դեմ: Ուստի նրանց պատիվների արժանացնելու և փլավով հյուրասիրելու պատրվակով հրավիրեց շահական նստավայրերից մեկը: Երբ բոլորն անխտիր հավաքվեցին, նենգ աֆղանցին հրամայեց զինաթափ անել և կոտորել նրանց: Այնուհետև մայրաքաղաքում սկսվեց բոլոր այն մարդկանց որսը, որոնք ընդունակ էին զենք կրելու: Այդ իրադարձությունների մասին Կրուշինսկին հաղորդում է, որ Սպահանում այնպիսի մեծ քանակությամբ մարդիկ սպանվեցին, որ բազմաթիվ տներ մարդաթափ եղան:

Ինչ վերաբերում է շահ Սուլթան Հուսեյնին, ապա Միր-Մահմուդը հրամայեց բանտարկել նրան Սպահանի պալատներից մեկում:

Ստեփաննոս Երեց պատմիչի վկայությամբ՝ Սպահանի նահանգի հայության վիճակը դարձավ ուղղակի անտանելի: Ձգտելով իրենց դժբախտության համար փնտրել մեղավորներ՝ ինչ-ինչ մարդիկ սկսեցին անհեթեթ մեղադրանք ներկայացնել հայերին, թե իբր «դուք բերիք զզօրսն Աղուանից ի վերայ թագաւորին պարսից»: Միաժամանակ սանձից արձակված վաչկատուն լեռնական ցեղերը՝ լուրերը և այլն, սկսեցին ասպատակ սփռել և անխնա կողոպուտի մատնել Փերիա գավառի հայությանը: Հազարջրիք գյուղի հայ գյուղացիությանը հաջողվում է մի փոքրաթիվ ջոկատով փախուստի մատնել ավարառու ավազակներին:

Եթե Սպահանում վախը անդամալուծել էր մարդկանց կամքը և ոչ ոք չէր համարձակվում դիմադրել աֆղան զավթիչներին, ապա մայրաքաղաքից դուրս տարբեր վայրերի բնակիչներ (օրինակ Բեն-Սպահան վայրի և այլն) գիշերային հարձակումներ էին գործում աֆղանների վրա՝ սպանելով նրանցից շատ-շատերին և նույնիսկ հափշտակելով մի քանի թնդանոթ: «Եթե գահաժառանգ Թահմազը,-գրում է Կրուշինսկին,- ինչ-որ տեղ իրեն տված չլիներ զվարճանքների և որոշ քանակությամբ զորքով գար Սպահան, ինչպես այդ մասին լուրեր էին տարածում պարսիկները, ապա միանալով Բեն-Սպահանի մարդկանց՝ նա, անկասկած, կկարողանար մեծ հեղաշրջում առաջ բերել մայրաքաղաքում: Սակայն դա տեղի չունեցավ, և աֆղանները շարունակում էին իրենց անագորույն

դաժանությունները՝ չհանդիպելով ոչ մի դիմադրության»:

Աֆղաններն կորովի դիմադրության հանդիպեցին հատկապես Յեզդ քաղաքում: Այդ քաղաքի ապստամբած բնակչությունն անակնկալ հարձակումով ոչնչացրեց աֆղանական ջոկատը՝ կենդանի չթողնելով նույնիսկ մեկ մարդու, որ սարսափելի լուրը հասցներ Սպահան: Եվ քանի որ Յեզդը ընկած էր Ղանդահար տանող ճանապարհի վրա և հետևաբար, խաթարում էր Սպահանի կապը իր հարազատ քաղաքի հետ, Մահմուդը որոշեց մի այնպիսի դաժանությամբ պատժել այդ անհնազանդ քաղաքի բնակիչներին, որ սոսկումը համակեր նաև բոլոր նրանց, ովքեր պատրաստվում էին դեմ դուրս գալ աֆղաններին: Սակայն Յեզդի բնակիչները «այրված հողի» վերաբերեցին քաղաքից մոտ ու հեռու գտնվող բոլոր բնակավայրերը՝ թշնամուն զրկելու համար ուտելիքից և անասունների համար կերից: Եվ երբ աֆղանական բանակը 1724թ. դեկտեմբերին մոտեցավ Յեզդին, հանդիպեց կատաղի դիմադրության և չկարողանալով գրոհով վերցնել այն՝ հեռացավ՝ տալով մեծ զոհեր:

Սպահանի գրավումից հետո աֆղաններին հաջողվեց կարճ ժամանակամիջոցում իրենց իշխանությունը տարածել Կենտրոնական Իրանի մեծագույն մասի վրա: Մասնավորապես, նրանք գրավեցին Քաշանը, Ղումը, Ղազվինը, Գոլփայգանը և այլ քաղաքներ: Սակայն, դրանով հանդերձ, նրանց վիճակը կայուն չէր: Երկրի նշանակալից մասը փաստորեն չէր ենթարկվում զավթիչներին: Աֆղանների փորձերը՝ գրավելու Պարսից ծոցի Բենդեր-Աբբաս նավահանգիստը, նույնպես ավարտվեցին անհաջողությամբ: Տարբեր վայրերում զավթիչների դեմ բռնկվում էին մեծ ու փոքր ապստամբություններ: Որպես կանոն, Միր-Մահմուդը դրանց պատասխանում էր սարսափելի կոտորածներով և ահաբեկչական գործողություններով, որոնք, սակայն, ի վիճակի չէին կայունացնելու իրավիճակը:

1723 թ. հունվարին աֆղանների դեմ ապստամբեցին Ղազվինի քաղաքի բնակչությունը և շրջակա գյուղերի գյուղացիությունը: Գիշերային անակնկալ հարձակումով ապստամբները կոտորեցին մոտ 4 հազար աֆղանների: Կենդանի մնացածների մի փոքր խումբ մազապուրծ փախավ Սպահան: Նմանատիպ ապստամբություն տեղի ունեցավ նաև Խուզսարում, որտեղ սպանվեց մոտ 3 հազար աֆղան: Զավթիչների դեմ դիմադրության ձևերից մեկն էլ իրենց բնակավայրերը լքելն ու հեռավոր շրջաններ տեղափոխվելն էր: Մի խոսքով՝ աֆղանների ուժերը հալվում

էին: Հողն այրվում էր նրանց ոտքերի տակ: Ավելի արդյունավետ էին Մահմուդի ձեռնարկած միջոցառումները երկրում սոցիալական հենարան ստեղծելու ուղղությամբ: Քաջ գիտակցելով, որ իր ցեղի մարդիկ չունեն պետություն կառավարելու փորձ և շուտ չեն սովորի այդ դժվարին գործը՝ Մահմուդը իրենց պաշտոններում թողեց ոչ միայն Էհթեմադևլեթին (առաջին վեզիր), այլև նրա գերատեսչության մնացած բոլոր պաշտոնյաներին: Սակայն խորամանկ արևելքցին, կույր հավատ չընծայելով նրանց հավատարմության նկատմամբ, ամեն մի պաշտոնյային կցեց իր ցեղի մարդկանցից՝ որպես հսկիչներ: Այս ճանապարհով մեծ թվով պարսիկներ ընդգրկվեցին աֆղանների ստեղծած պետական ապարատի մեջ թե՛ մայրաքաղաքում և թե՛ նահանգներում:

Կրուշինսկին վկայում է, որ աֆղանները հրապարակեցին մի հրամանագիր, որով Իրանի բնակչությունը բաժանվում էր կարգերի. առաջին կարգ՝ աֆղաններ, երկրորդ կարգ՝ հայեր, երրորդ կարգ՝ դաղստանցիներ (որոնց աֆղանները Դաղստանից բերել էին իրենց բանակում ծառայելու համար), չորրորդ կարգ՝ մութանցիներ կամ մուլթանցիներ (սրանք Հնդկաստանի Մուլթան քաղաքից եկած հնդիկներ էին, որոնք մեծահարուստ վաճառականներ էին և միաժամանակ զբաղվում էին վաշխառությամբ), հինգերորդ կարգ՝ գյաբրեր կամ զրադաշտականներ, վեցերորդ կարգ՝ հրեաներ, յոթերորդ կարգ՝ պարսիկներ:

Աֆղանական վերնախավի միջև աստիճանաբար սկսեցին դրսևորվել խորը հակասություններ: Երևան եկան նաև գահի նոր հավակնորդներ: Դրանցից մեկն էր Մահմուդի եղբորորդի Աշրաֆը, որը դեմ էր իր ազգականի վարած քաղաքականությանը՝ այն համարելով արկածախնդրական: Նրա կարծիքով՝ անհրաժեշտ էր վերջ տալ զանգվածային կոտորածներին և ամեն ինչ անել մերձեցման եզրեր ստեղծելու համար աֆղան տիրապետողների և նրանց պարսիկ հպատակների միջև: Սակայն առայժմ ուժը Մահմուդի ձեռքերում էր, և նա հրամայեց բանտարկել Աշրաֆին:

Սակայն Մահմուդի համար առավել վտանգավորը շահ Սուլթան Հուսեյնի որդու՝ Թահմազի հավակնություններն էին գահի նկատմամբ: Իր հոր՝ շահ Սուլթան Հուսեյնի գահընկեց լինելուց հետո Թահմազն իրեն հռչակեց Իրանի շահ՝ ընդունելով Թահմազ Բ գահակալական անունը: Նա շահ էր ճանաչվում աֆղանների կողմից չնվաճված երկրամասերում՝ Գիլյանում, Մազանդարանում և Աղրբեջանում: Աստիճանաբար նրա շուրջը սկսեցին համախմբվել այն ուժերը, որոնք ունեին հա-

կաաֆղանական տրամադրություններ: Սակայն նրան, այնուամենայնիվ, չհաջողվեց ստեղծել մի այնպիսի բանակ, որն ի վիճակի լիներ աֆղաններին վռնդելու երկրից: Սեֆյան դինաստիան վերջնականապես վարկաբեկել էր իրեն, և մարդիկ չէին ցանկանում հավաքվել նրա դրոշի տակ:

Իրանի ներքաղաքական վիճակը էլ ավելի բարդացավ Ռուսաստանի վարած ակտիվ քաղաքականության հետևանքով: Հաջողությամբ ավարտելով պատերազմը Շվեդիայի դեմ (1721 թ.) և ստորագրելով Նիշտադյան հաշտության պայմանագիրը՝ Պյոտր Ա-ն որոշեց օգտվել Իրանում ստեղծված դժվարին իրադրությունից՝ իր վաղեմի ծրագրերը իրականացնելու, այսինքն՝ մերձկասպյան շրջանները գրավելու համար: Պյոտրի կողմից, այսպես կոչված, «կասպիական արշավանքի» կազմակերպման կարևորագույն պատճառներից մեկն էլ թուրքերին կանխելը կամ նրանց նվաճողականության ծավալումը դեպի Կասպից ծովի ավազանը կասեցնելն էր: Պյոտրի համար առկա էր նաև այդ պատերազմը սկսելու պատրվակը՝ Սուրխայ-խանին և Հաջի-Դաուդին պատժելը, որոնք Շամախիում կոտորել էին ռուս վաճառականներին և հափշտակել նրանց ունեցվածքը: Ռուսաց կայսրը կարող էր պատերազմի պատրվակ ծառայեցնել նաև քրիստոնյաների՝ հայերի և վրացիների պաշտպանությունը մահմեդական լծից: Առհասարակ, պետք է նշել, որ և Ռուսաստանը, և՛ Օսմանյան կայսրությունը Անդրկովկասի և Իրանի նկատմամբ իրենց նվաճողական ծրագրերը մշակելիս մեծ տեղ էին հատկացնում այդ երկրների ժողովուրդների ազատագրական շարժումներին, աշխատելով դրանք օգտագործել իրենց քաղաքական շահերի համար: Ընդ որում, եթե ռուսներն աշխատում էին իրենց ներկայացնել քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի և վրացիների ազատագրական ձգտումների պաշտպան ու նրանց հովանավոր, ապա թուրքերը՝ ուղղադավան մահմեդականների՝ սուննիների իրավունքների և ազատագրական ձգտումների աջակից ու պաշտպան՝ ընդդեմ «շիա հերձվածողների»:

Իրեն հատուկ խորաթափանցությամբ Պյոտրը տարիներ շարունակ ուշիուշով հետևում էր Իրանի քաղաքական զարգացումներին: Այդ երկրի վիճակը ավելի խորքային ուսումնասիրության ենթարկելու համար՝ 1717 թ. նա Սպահան էր ուղարկել Արտեմի Վոլինսկու դեսպանությունը, որին հանձնարարված էր համապարփակ հետախուզական տեղեկություններ հավաքել Ռուսաստանի հարևան երկրի ներքին կյանքի և ար-

տաքին հարաբերությունների բոլոր կողմերի վերաբերյալ: Վոլինսկին տեղում համոզվեց, որ Սեֆյան դինաստիայի դիրքերը խարխլված են, և Ռուսաստանի համար ճիշտ ժամանակն է ակտիվ գործողություններ սկսելու համար:

Ճիշտ այն նույն ժամանակ, երբ աֆղանները պաշարել էին Սպահանը՝ 1722 թ. հուլիսին, Պյոտրը հրամայեց իր զորքերին Աստրախանից ծովով անցնել Դաղստան: Ռուսաստանի ելույթը արագացվեց նրանով, որ այդ նույն օրերին թուրքերը սկսել էին եռանդուն կերպով միջամտել Շիրվանի խանության գործերին՝ նրա սուննի բնակչությանը հրահրելով ակտիվ քայլերի ինչպես Իրանի, այնպես էլ Ռուսաստանի դեմ:

Սակայն կասպիական արշավանքը՝ դեռ չսկսված, մարեց: Դրա հիմնական պատճառը Օսմանյան կայսրության հետ պատերազմի սպառնալիքն էր, որին Ռուսաստանը պատրաստ չէր: Հակառակ հայերի ու վրացիների սպասելիքների, որոնք ոգևորվել էին Պյոտրի հրապարակած մանիֆեստի այն հայտարարությունից, որ ինքը կազմակերպում է այդ արշավանքը կովկասյան քրիստոնյաներին՝ հայերին և վրացիներին պաշտպանելու համար, որի պատճառով և՛ Ղարաբաղի հայ մելիքները, և՛ Աղվանից կաթողիկոս Եսային իրենց զորքերով դուրս են գալիս, վրաց Վախթանգ թագավորի առաջնորդությամբ, դիմավորելու ռուսներին և ազատագրական մեծ հույսեր էին կապում այդ արշավանքի հետ՝ 1722 թ. սեպտեմբերին՝ Դերբենտը գրավելուց հետո, Պյոտրը իր զորքերը հետ տարավ Աստրախան, իսկ ինքը մեկնեց Պետերբուրգ: Թեև Աստրախանում նա գիլյանցիներից ստացել էր աղերսագին մի դիմում, որով նրանք օգնություն էին խնդրում աֆղանների դեմ մղվող պայքարում, Պյոտրը չփոխեց իր որոշումը և Գիլյան ուղարկեց ընդամենը երկու գումարտակ, որին հետագայում միացավ նաև գեներալ Լևաշովի փոքրաթիվ ջոկատը: Այդ ստորաբաժանումներին հրամայված չէր իրագործելու կասպիական արշավանքի պլանով նախատեսված գործողություններ: Նրանք հանձնարարություն ունեին լոկ Էնզելիում և Ռեշտում իրենց ներկայությամբ հիշեցնել օսմանցիներին, որ թույլ չեն տալու նրանց առաջխաղացումը դեպի Կասպից ծովի ավազանը:

1723 թ. ռուսական զորքերի կողմից Բաքվի գրավումը մեծապես անհանգստացրեց օսմանցիներին՝ նրանց բերելով այն համոզման, որ ռուսները քայլ առ քայլ նվաճելու են Անդրկովկասը: Սուլթան Ահմեդ Գ-ն որոշեց կանխել նրանց կողմից գեթ Վրաստանի գրավումը: Առհասարակ, Օսմանյան կայսրությունն անզուսպ ձգտում էր դրսևորում Սեֆ-

յան պետության անդրկովկասյան «ժառանգությունը» զավթելու ուղղությամբ: Ուստի 1723 թ. թուրքական 200- հազարանոց մի բանակ ներխուժեց այդ երկիրը և գրավեց Թիֆլիսը: Այնուհետև այդ հսկայական բանակը շարժվեց դեպի Իրան և գրավեց Համադանը և Քերմանշահը՝ իրենց շրջակա տարածքներով հանդերձ: Գրավված վայրերում թուրքերը սրի քաշեցին տեղական բնակչությանը, իսկ հազարավոր տղաների և աղջիկների քշեցին գերության: Համադանում, որտեղ բնակվում էին երեք հայկական տուն հայեր, թուրքերի կոտորածից հետո մնացին միայն հատ ու կենտ մարդիկ:

Թուրքական մեկ այլ բանակ հարձակվեց Երևանի վրա և գրոհով վերցրեց այն: 30 հազար հայեր, որոնք չկարողացան մտնել ամրոց, սրի քաշվեցին: Կրուշինսկու վկայությամբ՝ մեծ թվով հայերի, «ինչպես անասունների հոտ», քշում էին ստրկության: «Հայերի թիվը,- շարունակում է նա,- այդ բոլոր պատերազմների ընթացքում այն աստիճանի նվազեց, որ 1725 թ. վերջին, նույնիսկ աֆղանների՝ Պարսկաստան գալուց առաջ, չմնաց նրանց թվաքանակի կեսը»:

Ավելի ուշ՝ 1725 թ., թուրքերը գրավեցին նաև այն ժամանակ Սպահանից հետո իր մեծությամբ Իրանի երկրորդ քաղաքը՝ Թավրիզը:

1723թ. Թահմազը որպես դեսպան Պետերբուրգ ուղարկեց փորձառու դիվանագետ Իսմայիլ բեկին՝ նրան հանձնարարելով ռուսների հետ կնքել դաշինքի վերաբերյալ պայմանագիր: Նա հույս ուներ ռուսների օգնությամբ աֆղաններին դուրս մղել Իրանից և բարձրանալ գահ: Ռուսական կառավարությունը իր շահերի տեսակետից օգտակար համարեց մի այդպիսի դաշինքի կնքումը, մանավանդ, որ Թահմազը առատաձեռնորեն ռուսներին էր «շնորհում» հսկայական իրանական տարածքներ: 1723 թ. սեպտեմբերի 23-ին Պետերբուրգում ստորագրված դաշնագրով Պյոտր Ա-ն շռայլ խոստումներ էր տալիս Թահմազին Իրանը խաղաղեցնելու, «խռովարարներին» (աֆղաններին-Վ. Բ.) պատժելու և նրան շահական գահի վրա հաստատելու վերաբերյալ: Փոխարենը Թահմազը ճանաչում էր Դերբենտ և Բաքու քաղաքների ու նրանց հարակից մերձկասպյան շրջանների՝ Ռուսաստանին պատկանելը, նրան էր զիջում Իրանի մերձկասպյան նահանգներ Գիլյանը, Մազանդարանը և Աստրաբադը: Սակայն երբ պարզվեց, որ ռուսական զորքերը բնավ մտադրություն չունեն ռազմական կամպանիա սկսելու աֆղանների դեմ, առավել ևս զենքի ուժով իրեն բարձրացնելու Սեֆյան գահի վրա, Թահմազը հայտարարեց, որ Իսմայիլ բեկը գերազանցել է իրեն տված

լիազորությունները և չճանաչեց Պետերբուրգի պայմանագիրը: Նա նշեց, որ ինքը կարիք չի զգում դրսի օգնության: Եթե ռուսները, նկատում է նա, այդքան բարյացակամ և հոգատար են դեպի իր ներքին գործերը, թող ազատեն Իրանը իրենց զորքերից և թույլ տան իրեն՝ լինելու իր երկրի տերն ու տնօրենը:

Կ. Պոլսում ֆրանսիական դեսպանի եռանդուն միջնորդությամբ Օսմանյան կառավարության և Ռուսաստանի միջև սկսվեցին բանակցություններ: Կենտրոնական խնդիրը իրանական հարցն էր: Այդ պետություններից յուրաքանչյուրը վախենում էր, որ մյուս կողմը այդ երկրում ձեռք կբերի չափից ավելի մեծ ազդեցություն: Այդ ծանր ու դժվարին բանակցություններն ավարտվեցին 1724 թ. հունիսի 24-ին Ստամբուլում ռուս-թուրքական պայմանագրի ստորագրմամբ, որով, ըստ էության, Իրանի հյուսիսային, մասամբ նաև արևմտյան նահանգները այդ երկու պետությունները բաժանում էին միմյանց միջև: Անդրկովկասի և Իրանի մերձկասպյան շրջաններն անցնում էին Ռուսաստանին, իսկ Անդրկովկասի մնացած մասը, ինչպես նաև ողջ Հյուսիս արևմտյան Իրանը՝ Համադան և Քերմանշահ (ներկայումս Բախթարան) քաղաքներով հանդերձ, ողջ Ատրպատականը և Քրդստանը՝ Օսմանյան կայսրությանը:

Պայմանագիրը հատուկ կետ էր պարունակում այն մասին, որ Ռուսաստանը և Օսմանյան կայսրությունը պատրաստ են աջակցելու Թահմազին, եթե նա համաձայնվի ընդունել վերոհիշյալ պայմանագրի պայմանները: Հակառակ դեպքում նրանք սպառնում էին գահ բարձրացնել ուրիշ մեկին կամ, ինչպես նշվում էր փաստաթղթում, «պարսիկներից ամենաարժանավորին»:

Սակայն պարզվեց, որ թուրքերը բնավ մտադրություն չունեն սահմանափակվելու 1724 թ. պայմանագրով նախատեսված իրանական տարածքների գրավումով: 1725 թ. նրանք զավթեցին նաև Ղազվինն ու Արդեբիլը, որոնք ռուս-թուրքական պայմանագրով, որպես Սեֆյանների դինաստիական կալվածքներ, պատկանելու էին Թահմազին: Այնուհետև ռուսների համար միանգամայն անսպասելի կերպով Ղազվինից և Համադանից թուրքական զորքերը շարժվեցին դեպի հարավ՝ Սպահանի կողմը: Դա է՛լ ավելի սրեց աֆղանական իշխանության վերնեներում գոյություն ունեցող ճգնաժամը: Ծայր առան հակաաֆղանական մի շարք նոր ապստամբություններ: Այսպես՝ օգտվելով նրանից, որ մի ժամանակ շահ Սուլթան Հուսեյնը իր ավագ որդուն՝ Միրզա Սեֆիին նշանակել էր գահաժառանգ, իսկ վերջինս Սպահանի պաշարման ժամանակ

փախել էր այդ քաղաքից՝ Բախթիարիում հայտնվեց մի ինքնակոչ, որն իրեն ներկայացնելով որպես շահի որդի Սեֆի-միրզա՝ իր շուրջը համախմբեց հակաաֆղանական տրամադրություններ ունեցող մեծ թվով մարդկանց և երեք տարի շարունակ Բախթիարիում գլխավորում էր նրանց ապստամբությունը իշխանությունը հափշտակած աֆղանների դեմ:

Այդ ապստամբությունները, պալատական սադրանքներն ու դավերը հավասարակշռությունից հանում և ծանր հոգեկան խոռվք էին պատճառում Միր-Մահմուդին: Նա դառնում էր ավելի ու ավելի անհանգիստ, կասկածամիտ՝ վախենալով նույնիսկ իր ամենամերձավոր բարեկամներից և ենթադրելով, որ նրանք բոլորը դավեր են նյութում իր կյանքի ու գահի դեմ: Կասկածամտությունն ու վախը, ինչպես բոլոր բռնակալներին, Մահմուդին ևս դարձրել էին վայրագ ու արնախում: 1725 թ. փետրվարի 7-ին նրա հրամանով Սպահանում կազմակերպվեց նոր զանգվածային ջարդ, որի ընթացքում սրի քաշվեց նաև Սեֆյանների ողջ արական սերունդը՝ թվով 39 մարդ, բացառությամբ նախկին շահի և նրա երկու փոքրահասակ որդիների: Կրուշինսկին պատմում է, որ կեսօրին ձեռքերը կապված վիճակում պալատի դահլիճներից մեկը բերվեցին բոլոր իշխանազունները, որոնցից երեքը զառամյալ ծերունիներ էին: Մահմուդը անձամբ իր երկու հավատարիմ մարդկանց օգնությամբ սրի քաշեց նրանց: Այդ արյունալի կոտորածից հետո, Կրուշինսկու վկայությամբ, շահ Մահմուդի մոտ սկսեցին նշմարվել խաթարված բանականության բոլոր նշանները:

Ժամանակ առ ժամանակ աֆղանների առաջնորդի հիվանդ երևակայության ու կասկածամտության զոհ էին դառնում նաև հենց իրենք՝ աֆղանները: Կառավարող վերնախավի մարդկանցից շատերը սկսեցին գիտակցել, որ այդպես շարունակել չի կարելի, որ Մահմուդի անսանձ բռնությունների քաղաքականությունը տանում է դեպի Իրանում աֆղանական տիրապետության կործանում: Այդ պարագաներում Մահմուդի նկատմամբ թշնամաբար տրամադրված աֆղանների խմբավորումը սկսեց ակտիվացնել իր գործունեությունը: Նախ, համոզվելով, որ հակառակ իր հետ կնքած դաշինքի, Մահմուդը բնավ մտադիր չէ իրանական պետության թագը հանձնել իրեն՝ Ամանուլլա խանը հավաքեց իր զորքերը և մեկնեց իր տիրույթը՝ Քաբուլ՝ անկասկած, ոխը պահելով իր սրտում: Ի վերջո, որպես այդ բոլորի տրամաբանական վախճան, կազմակերպվեց դավադրություն, և 1725 թ. ապրիլի 22-ին բռնակալը

խեղդամահ արվեց իր սիրելի զորավարներից մեկի կողմից, որը նախկինում իր պարտքն էր համարել նրան զգուշացնելու, որ նա փոխի իր վարքագիծը, որովհետև, ի վերջո, «արյունը կմաքրվի արյունով»:

Աֆղանական վերնախավի կողմից շահ հռչակվեց Մահմուդի կողմից երկուս ու կես տարի բանտ նետված նրա Միր-Աբդուլլա անունով հորեղբոր որդին, որը կրում էր Աշրաֆ մականունը: Տարիներ առաջ, դավաղիր կերպով գիշերով մտնելով իր հորեղբոր՝ Աշրաֆի հոր սենյակը, Մահմուդը կտրել էր նրա գլուխը, որպեսզի նրանից հափշտակի իշխանությունը: Այսպիսով՝ անսպասելի հեղաշրջման հետևանքով Աշրաֆը բանտից միանգամից ուղարկվեց պալատ՝ գահին նստելու համար: Գիլզահի ցեղի առաջնորդները 1725 թ. ապրիլի 22-ին հավատարմության երդում տվեցին և Աշրաֆին ճանաչեցին որպես իրենց տիրակալ: Թագադրման արարողության ժամանակ բոլորի համար միանգամայն անսպասելի կերպով Աշրաֆը թագը դրեց շահ Սուլթան Հուսեյնի ոտքերի տակ և առաջարկեց այն հետ վերցնել որպես Իրանի օրինական տիրակալ: Կրուշինսկին այդ առթիվ նկատում է, որ խորամանկ աֆղանցին այդպես վարվեց այն պատճառով, որ թագը դրվի իր գլխին տիրակալի կամքով՝ իր իշխանությունը լեգիտիմ դարձնելու համար: «Սակայն որքան նա պնդում էր այդ մասին,- շարունակում է ճիզվիտ աբբահայրը,- այնքան շահ Հուսեյնը, որը դրա մեջ իր համար տեսնում էր թակարդ, ավելի ուժգին կերպով էր հրաժարվում թագից՝ հայտարարելով, որ քաղցր ժամանցը գերադասում է թագավորելու փայլից»:

Ստանձնելով շահական գահը՝ Աշրաֆի առաջին գործը հանդիսացավ ձերբակալել Միր-Մահմուդի դեմ դավադրության կազմակերպիչներին: Նրա արևելյան մտածողությունը հուշում էր նրան ժամ առաջ ազատվել անհանգիստ ու դավաղիր մարդկանցից, որոնք եթե մեկ անգամ դավաճանել են իրենց տիրակալին, կարող են դավաճանել նաև երկրորդ անգամ: Նրանց ամբողջ գույքը բռնագրավվեց հարքունիս: Այնուհետև նորընտիր շահի հրամանով սրի քաշեցին Միր-Մահմուդի թիկնա:զորի ողջ կազմը՝ թվով 500 մարդու, որոնք բոլորը պատկանում էին աֆղանական խազարեյցիների ցեղին: Այնուհետև հերթը հասավ Միր-Մահմուդի պալատականներին, մերձավորներին և այլոց:

Այդ բոլորով հանդերձ, անշուշտ, Աշրաֆը ավելի նուրբ քաղաքագետ էր, քան իր նախորդը: Նա մի կողմից՝ երկաթյա ձեռքով ճնշում էր երկրի տարբեր մասերում բռնկվող հակաաֆղանական ապստամբությունները և ստիպում, որ պետության ծայրամասային շրջանների ինք-

նագլուխ տարրերը նվերներով գան մայրաքաղաք և նոր շահին հայտնեն իրենց հպատակությունը, իսկ մյուս կողմից՝ նա քայլեր ձեռնարկեց սեֆյան ազնվականության հետ հաշտվելու ուղղությամբ: Այդ նպատակով նա ամուսնացավ նախկին շահի՝ Հուսեյնի աղջկա հետ, ավելացրեց վերջին Սեֆյան շահին հատկացվող նպաստը, դատապարտեց Միր-Մահմուդի անհարգի դաժանությունները իրանցիների նկատմամբ: Նա հասկանում էր, որ չի կարելի ամրապնդել իշխանությունը Իրանի նկատմամբ՝ մնալով միայն որպես աֆղանական ցեղերի առաջնորդ: Ուստի նա ջանում էր դառնալ Իրանի տիրակալ-թագավոր: Ըստ այնմ ձեռնամուխ եղավ պետությունը բարեկարգելու գործին. դադարեցրեց պարսիկների նկատմամբ կողոպուտներն ու բռնությունները, վերացրեց նրանց երկրորդ կարգի մարդ համարելու վերաբերյալ Միր-Մահմուդի որոշումը, ամեն ինչ անում էր իրանական հողային ազնվականությանը իր կողմը գրավելու համար և այլն: Միաժամանակ նա իր բանակի շարքերում մտցրեց կարգապահություն, հնարավորին չափ պայքար ծավալեց զինված ուժերում արմատավորված ավարառության և կողոպուտի հոգեբանության դեմ, սկսեց զբաղվել քաղաքների ու բնակավայրերի բարեկարգման գործով և այլն: Քանի որ Ամանուլլա խանի հեռանալու պատճառով աֆղանական բանակի շարքերը խիստ նոսրացել էին, Աշրաֆը սկսեց հախուռն ձևով զինվորներ հավաքագրել պարսիկներից, որը հետագայում դառնալու էր իր կործանման պատճառներից մեկը: Նրա որդեգրած վերոհիշյալ քաղաքականությունը հեշտ ու հանգիստ չէր իրագործվում: Իր այդ քաղաքականությամբ Աշրաֆը նշանակալիորեն իրենից վանեց աֆղանական վերնախավին, որը ցանկանում էր Իրանի նկատմամբ վերաբերվել ինչպես նվաճված երկրի:

Իրանի նոր տիրակալը բարյացակամության նշաններ էր ցուցաբերում նաև իրանահայության նկատմամբ: Նա հրապարակեց մի հրովարտակ, որով հայկական եկեղեցիներին շնորհվում էր ապահարկության իրավունք:

Ինչ-որ չափով ամրապնդելով իր ներքին վիճակը՝ Աշրաֆը ընդհուպ սկսեց զբաղվել արտաքին քաղաքական խնդիրներով: 1725 թ. վերջին Իրանը չէր հանդիսանում մեկ միասնական պետություն: Ըստ էության այն բաժանվում էր չորս մասի. ինքը՝ Աշրաֆը, զբաղեցնում էր ամենախոշոր՝ կենտրոնական մասը: Թուրքերն իրենց ձեռքում էին պահում մի տարածք, որը սկսվում էր Համադանից և ձգվում էր 825 կմ երկարությամբ՝ հասնելով մինչև Վրաստանի հյուսիսային սահմանները: Ռուս-

ները տիրացել էին Կասպից ծովի ողջ արևմտյան ծովափնյա շրջանին և Գիլյան նահանգին՝ 880 կմ ընդհանուր սահմանագծով: Ամենավտոքր մասը բաժին էր ընկել շահ Թահմազ Բ-ին: Նրա տիրապետության տակ էր գտնվում միայն Կասպից ծովի հարավային ափի Մազանդարան նահանգը, որտեղ բնակչության կողմից նրա իշխանությունը հազիվ էր ճանաչվում:

Աշրաֆն իրավացիորեն գտնում էր, որ տվյալ պահին ամենավտանգավոր թշնամին օսմանցիներն են, «որոնք ձգտում էին ողջ Իրանը միավորել իրենց տիրապետության ներքո: Չբավարարվելով իրենց կողմից նվաճված ընդարձակ տարածքներով, նրանք երազում էին և՛ աֆղաններին, և՛ մոսկովիտներին զրկել այն բոլորից, ինչ նրանք ունեին Պարսկաստանում»,- վկայում է Թադեուշ Կրուշինսկին:

Ուստի Աշրաֆը որոշեց առաջին հարվածը հասցնել հենց թուրքերին, որոնց 70-հազարանոց բանակը մոտենում էր մայրաքաղաքին: Աֆղանական բանակի պարսիկ հրամանատարներն իրենց տիրակալին հուշեցին թշնամու դեմ օգտագործել իրանական հին «այրված հողի» տակտիկան: Աշրաֆը այն աստիճանի ամայացրեց Ղազվինի և Սպահանի միջև ընկած տարածը, որ թուրքական բանակը, զրկվելով ամեն տեսակի մատակարարումից, ստիպված էր մայրաքաղաքին մոտենալ շրջանցիկ ճանապարհներով: Համաճարակների, լեռնային պատերազմներին վարժված աֆղանների մշտական հարձակումների հետևանքով թուրքական բանակն ուժասպառ եղավ, բարոյալքվեց և կորցնելով մեծ թվով զինվորներ՝ ստիպված եղավ մարտերով նահանջել Վրաստան, որպեսզի հանգստանա և համալրի իր կազմը: Դա 1726թ. էր: Հաջորդ տարի, երբ թուրքերի ռազմարշավը կրկնվեց, աֆղանները երկու անգամ ջախջախեցին նրանց և հետապնդեցին մինչև Համադանի պատերը: Սակայն Աշրաֆն իրավացիորեն այդ հաջողությունը համարեց ժամանակավոր և քայլեր ձեռնարկեց օսմանցիների հետ հաշտության բանակցություններ սկսելու համար: Վերջիններս նույնպես հակված էին հաշտություն կնքելու, որովհետև Սև ծովով ուղարկված մի խոշոր զորամիավորում, որը գալիս էր Իրան՝ թուրքական զորքերին օգնության, փոթորիկի հետևանքով կործանվել էր: Այդ նույն օրերին հենց բուն կայսրությունում տեղի ունեցավ զինվորների խոշոր բունտ, նրանց աշխատավարձ չվճարելու պատճառով: Իսկ Իրանում գործող Օսմանյան բանակը տառապում էր սննդի բացակայության պատճառով: Այս բոլորը ստիպեցին Բ. Դռանը՝ լրջորեն մտածել հաշտության մասին: Դի-

վանը կարգադրեց թուրքական բանակի հրամանատարին՝ սերասկերին, Աշրաֆի հետ անհապաղ սկսել բանակցություններ, որոնք ավարտվեցին 1727 թ. նոյեմբերին պայմանագրի ստորագրմամբ, ըստ որի Աշրաֆը թուրքական սուլթան Ահմադ Գ-ին ճանաչում էր որպես բոլոր ուղղադավան մահմեդականների (սուննիների) գերագույն հոգևոր և աշխարհիկ առաջնորդ՝ խալիֆ, և Օսմանյան կայսրությանն էր զիջում ոչ միայն այն բոլոր նահանգները, որոնք իրեն էին անցել 1724 թ. Կ. Պոլսի ռուս-թուրքական պայմանագրի համաձայն, այսինքն՝ Ատրպատականը և Իրանական Քրդստանը, այլև Խուզիստանը, ինչպես նաև Կենտրոնական Իրանի մի մասը՝ Զենջան քաղաքով հանդերձ, այնուհետև Ղազվինը, Սուլեյմանիեն, Թեհրանը՝ իրենց շրջակա տարածքներով: Այլ կերպ ասած՝ Աշրաֆը թուրքերին էի զիջում ողջ Իրանի տարածքի 2/3 մասը: Այդ բոլորի փոխարեն սուլթանը Աշրաֆին ճանաչում էր որպես Իրանի շահ, որը, սակայն, վասալական կախման մեջ պետք է լիներ Օսմանյան կայսրությունից, և Իրանի մզկիթներում ուրբաթօրյա աղոթքի՝ «խութբայի» ժամանակ սուլթան Ահմեդ Գ-ի անունը պետք է հիշատակվեր Աշրաֆի անունից առաջ:

Վերոհիշյալ պայմանագրի կնքման լուրը Կ. Պոլիս հասավ 1727 թ. նոյեմբերի 18-ին, և նույն օրն իսկ այն կախվեց Դիվանի շենքի դարպասից և կայսրության բոլոր գլխավոր քաղաքներում:

Թվում էր, թե Աշրաֆին հաջողվեց կայունացնել իր վիճակը: Սակայն արևելքից, հատկապես Աֆղանստանից, գալիս էին վատ լուրեր: Սպանված Միր-Մահմուդի եղբայր Հուսեյնը զավթել էր Ղանդահարը և հրաժարվում էր ճանաչել Աշրաֆի իշխանությունը: Հերաթի աբդալի ցեղի աֆղաններն այլևս չէին ենթարկվում Աշրաֆին: Սիսթանի Մելիք Մահմուդը պայքար էր սկսել ինչպես Աշրաֆի, այնպես էլ Թահմազ Բ-ի դեմ՝ ձգտելով կատարյալ ինքնիշխանության: Երկրի տարբեր մասերում հակաաֆղանական ապստամբությունները չէին դադարում: Ատելությունը աֆղանական վարչակարգի դեմ լեռնանում էր: Սակայն, չնայած դրան, աֆղանների սահմանած վարչակարգը շարունակում էր սանձարձակ ահաբեկման ու հարստահարության մատնել երկիրը և կողոպտել բնակչությանը:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԻՐԱՆԸ ՆԱԴԻՐ ՇԱՀԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ

1. ՆԱԴԻՐ ՂՈՒԼԻ ԽԱՆԻ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶ ԻՋՆԵԼԸ ԵՎ ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ԱՖՇԱՐՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Թահմազ Բ-ի փորձերը՝ դիմադրություն կազմակերպելու աֆղանների դեմ, հաջողություն չունեցան: Կրելով մի քանի ծանր պարտություն՝ նա ստիպված էր փախչել Մազանդարան: Սակայն այստեղ ևս իրեն ապահով չզգալով՝ տեղափոխվեց երկրի ծայր արևելք՝ Խորասան, առավել ևս, որ այնտեղ ձևավորվում էր հակաաֆղանական պայքարի մի կենտրոն, որին միացել էին մի շարք ազդեցիկ ցեղապետներ ու խաներ: Հենց այստեղ իր վեցհազարանոց ջոկատով Թահմազին միացավ նաև Նադիր խան Աֆշարը, որին վիճակված էր Իրանի պատմության բեկումնային շրջա՛նում խաղալու չափազանց կարևոր դեր: Նադիրը երդվեց իր գլխով, որ Թահմազին կվերականգնի իր նախնիների գահի վրա և վրեժ կլուծի աֆղաններից, եթե Թահմազը խոստանա ի հատուցումն դրա նրան դարձնել իր առաջին վեզիրը: Ուրախացած այդ անսպասելի օգնությունից՝ Թահմազն ընդունեց Նադիրի առաջարկը և նրան տվեց Թահմազ-ղուլի խան (Թահմազի ծառա) անունը:

Նադիր խան Աֆշարը ծնվել էր Խորասանում 1688 թ., աղքատ ծնողների ընտանիքում: Նրա հայրը հովիվ էր: Նադիրը սերում էր թուրքա-

կան աֆշար ցեղի քըրքլու ցեղախմբից, որի մի հատվածը դեռևս շահ Իսմայիլ Ա-ի ժամանակ Ուրմիայի շրջանից տեղափոխվել էր Խորասան՝ ուզբեկների դեմ արևելքից պատնեշ ստեղծելու համար: Վաղ պատանեկության տարիներին Նաղիրը արածացնում էր իր հոր ոչխարները: Սակայն ձանձրանալով այդ գործից ընդունակ ու չափից ավելի փառասեր այդ պատանին մտածում էր բարձրանալ ավելի վեր, քան թույլ էր տալիս իր ծագումը: Նա հորից գողացավ 700 ոչխար և դրանք վաճառեց Մեշհեդում: Այդ փողով նա վարձեց մի քանի ավազակների, դարձավ նրանց գլխավորը և սկսեց կողոպտել քարավաններ: 18 տարեկան հասակում Նաղիրը իր մոր հետ Խորեզմի ուզբեկների կողմից գըվում է ստրկության: Այնտեղից փախուստի դիմելով և վերադառնալով Խորասան՝ նա մեկ ավազակախմբերի անդամ էր, մեկ խաների, մասնավորապես Մալեք Մահմուդ Սիսթանցու զինված ջոկատների անդամ: Ավելի ուշ նա Խորասանի ղզլբաշ աֆշար ցեղերից, ինչպես նաև քրդերից հավաքեց մի ջոկատ, գրավեց Քելաթ ամրոցը և այն դարձրեց իր հիմնական հենակետը: Իր այդ բուռն գործունեության շրջանում Նաղիրը ձեռք բերեց հմուտ հրամանատարի և ընդունակ ու խիզախ ռազմիկի համբավ: Այնուհետև Թահմազ-ղուլին, զենքը զուգակցելով սադրանքների մեծ վարպետության հետ, սկսեց փառքի ճանապարհներով վեր մագլցել՝ իր համար ճանապարհ հարթելով դեպի իշխանություն: Նա Թահմազի շրջապատում սկսեց խաղալ գլխավոր դեր: Ըստ էության, նրա ձեռքն անցավ Թահմազի հսկողության տակ գտնվող նահանգների կառավարումը: Շահը, որի ղուլը՝ ստրուկն էր իրեն անվանում Նաղիրը, դարձավ խաղալիք վերջինիս ձեռքերում:

1726 թ. Նաղիրն իր զենքն ուղղեց Մալեք Մահմուդ Սիսթանցու դեմ, որի ջոկատի մեջ նախկինում ծառայելով՝ համարվում էր նրա հավատարիմ մարդը: Հետագա երկու տարիների ընթացքում Նաղիրն ընկճեց ու հնազանդեցրեց ողջ Խորասանը: Այնուհետև նրան հաջողվեց մեջտեղից վերացնել իր ամենավտանգավոր մրցակիցներից մեկին՝ Ֆաթհ Ալի խան Ղաջարին, որը Թահմազի վրա ուներ մեծ ազդեցություն: Նաղիրին հաջողվեց համոզել իր «տիրոջը», որ Ֆաթհ Ալի խանը նրա դեմ նախապատրաստում է դավադրություն: Դրան հետևեց դյուրահավատ Թահմազի հրամանը, և Ֆաթհ Ալի խանը, որը հավատարիմ նվիրվածությամբ ծառայում էր շահին, սպանվեց:

1729 թ. գարնանը Նաղիրը ձեռնամուխ եղավ Հերաթի աբդալի ցեղի աֆղանների հնազանդեցմանը: Նրանց նկատմամբ տանելով խոշոր հաղթանակ՝ նա նվաճեց ստրատեգիական կարևոր հանգույց հանդիսացող Հերաթը:

Իրար հետևից Նադիրի տարած հաղթանակները լրջորեն անհանգստացրին Աշրաֆին, որը մեծ զորաժողով գումարեց վերահաս վտանգի առաջն առնելու համար: 1729 թ. օգոստոսին, իր բանակի գլուխ անցած, նա շարժվեց հյուսիս: Նույն թվականի հոկտեմբերի 2-ին Մեհմանդուսթ գետի հովտում՝ Դամղանի մոտ, տեղի ունեցած ճակատամարտում 30-հազարանոց աֆղանական բանակը ջախջախվեց և խուճապահար փախուստի դիմեց մինչև Սպահան՝ իր ճանապարհին այրելով ու ամայացնելով ամեն ինչ, որպեսզի Նադիրի զորքերին զրկի սննդամթերք հայթայթելու հնարավորությունից, եթե նա հաղթանակից հետո մտադրվի շարժվել դեպի մայրաքաղաք: Հաղթանակը Նադիրին բերեց ոչ միայն ռազմական փառք, այլև մեծ թվով զինվորներ: Տեղական բնակչությունը հոծ խմբերով անդամագրվում էր նրա հաղթական բանակին, որն աստիճանաբար ժողովրդի շրջանում ձեռք էր բերում ազատարարի համբավ: 1729թ. Նադիրը շահ Թահմազի հետ միասին շարժվեց Սպահանի վրա: Մայրաքաղաքից 60 կմ հեռավորության վրա գտնվող Մուրչեխորթ գյուղի մոտ նա մահացու հարված հասցրեց աֆղանական զորքերին, որոնք խուճապահար փախուստի դիմեցին դեպի Շիրազ՝ հետապնդվելով տեղական բնակչության կողմից: Իսկ Աշրաֆը իր հարեմի և իրեն հավատարիմ մնացած տաս հազարանոց զորքի հետ փախավ Ղանդահարի կողմը, սակայն ճանապարհին սպանվեց բելուջական խաներից մեկի կողմից: Փախուստից առաջ գազազած Աշրաֆն իր զորապետներին հրամայեց, որ ինչքան կարող են կոտորեն պարսիկ տղամարդկանց և այն կանանց, որ իրենք կնության էին վերցրել: Հրամանը ճշտիվ կատարվեց, և մի գիշերվա ընթացքում անխնա սրի քաշվեցին երեք հազար տղամարդ, կին և մանուկ: Աֆղանները չխնայեցին նաև շահ Սուլթան Հուսեյնին: Աշրաֆի հրամանով նրան խեղդամահ արեցին:

Նադիրի հաղթանակը շրջադարձային նշանակություն ունեցավ Իրանի համար: Մայրաքաղաքն ազատագրված էր: Նադիրը, իսկ նրա հետևից նաև Թահմազը, հաղթական երթով մուտք գործեցին Սպահան և Թահմազը նստեց Սեֆյանների գահի վրա, որը յոթ տարի շարունակ զավթված էր օտարների կողմից: Բոլորի շուրթերին հնչում էր Թահմազ-դուլի խանի անունը, բոլորը նրան անվանում էին ազատարար:

Այսպիսով՝ 1729 թ. նոյեմբերին աֆղանները վերջնականապես դուրս քշվեցին Իրանից:

Աֆղանական տիրապետությունը ծանր աղետ էր Իրանի համար: Որոշ տվյալներով՝ այդ ահաբեկչական վարչակարգի տիրապետության ընթացքում Իրանը կորցրեց մոտ մեկ միլիոն մարդ: Երկրի առանձին շր-

ջաններ վերածվեցին ավերակների: Ռոզգման համակարգը, ըստ էության, շարքից դուրս եկավ: Երկրի արտադրողական ուժերին հասցվեց ծանր հարված: Մի շարք շրջաններ ուղղակի անմարդաբնակ դարձան: Առևտուրը կանգնեց, իսկ արհեստներն անկում ապրեցին: Բնակճնաբար, խոսք անգամ չէր կարող լինել մշակութային ձեռքբերումների մասին: Բոլոր տեսակետներից այդ յոթ տարիները Իրանի համար կորսված տարիներ էին: Առանձնապես խիստ տուժեց Սպահանի շրջանը: Քաղաքի մի հսկայական մաս ավերվեց ու սրբվեց երկրի երեսից, իսկ շրջակայքում քանդվեցին մոտ հազար գյուղեր: Մեծ ավերածությունների ենթարկվեցին նաև Շիրազը և Կենտրոնական ու Հարավային Իրանի բազմաթիվ այլ քաղաքներ:

Աֆղանների վտարումից հետո՝ 1739 թ., Նադիրն իր զենքն ուղղեց ամենաահալկու թշնամու՝ օսմանյան թուրքերի դեմ, որոնք, օգտվելով Իրանում խառնակ վիճակից, գրավել էին համարյա ողջ Անդրկովկասը, Դաղստանի և Շիրվանի մի մասը, ինչպես նաև ընդարձակ տարածքներ Հյուսիսային, Արևմտյան և Կենտրոնական Իրանում: Նադիրին հաջողվեց մի քանի անգամ պարտության մատնել թուրքերին և նրանցից հետ վերցնել Համադանն ու Քերմանշահը: Այնուհետև նրա հաղթական բանակը շարժվեց Ատրպատական և 1730 թ. օգոստոսին գրավեց Արդեբիլն ու Թավրիզը: Անշուշտ, չի կարելի օսմանցիների նկատմամբ տարած այդ փառավոր հաղթանակները վերագրել միայն Նադիրի բանակի մարտական բարձր հատկանիշներին և նրա հրամանատարի ռազմական հանճարին: Բանն այն էր, որ այդ նույն օրերին Ստամբուլում բռնկվել էր մի հուժկու ապստամբություն Պատրոնա Խալիլի գլխավորությամբ, որը խուճապի էր մատնել սուլթանական կառավարությանը: Պալատական ավագանու կազմակերպած դավադրության հետևանքով սուլթան Ահմադ Գ-ն գահընկեց էր արվել, իսկ մեծ վեզիր Դամադ Իբրահիմ փաշան՝ սպանվել: Նման պայմաններում, ըստ էության, իրանական գործերը մնացել էին բարձիթողի վիճակում:

Օսմանյան ռազմակալման դեմ պայքարը կիսատ թողնելով՝ Նադիրը հապշտապ մեկնեց արևելք՝ Հերաթում աբդալի ցեղի ապստամբությունը ճնշելու համար: Մինչ նա գլխավորում էր աֆղանների և ուզբեկների դեմ կռիվները, Թահմազը, հակառակ Նադիրի բազմիցս նախազգուշացումներին՝ խուսափել երկու ճակատով մարտեր մղելուց, պատերազմական գործողություններ սկսեց թուրքերի դեմ՝ նպատակ ունենալով գրավել Երևանը և Նախիջևանը: Սակայն Համադանի մոտ՝ Կուրիջանի դաշտում, տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում թուրքական բանակը հե-

քիմ զադե Ալի փաշայի հրամանատարությամբ ջախջախեց Թահմազի զորքերին: Ինքը՝ շահը, հազիվ խուսափեց գերի ընկնելուց: Թուրքական բանակի առջև ճակատը կատարելապես մերկացավ, և սրընթաց շարժվելով առաջ՝ օսմանցիները գրավեցին Համադանը, Քերմանշահն ու Թավրիզը և ներխուժեցին հարավ՝ Խուզիսթան: Անօգնական ու հուսահատ Թահմազը ստիպված էր հաշտություն թախանձել: Նրա և թուրքական սերասկերի միջև 1732 թ. հունվարի 10-ին ստորագրվեց ամոթալի մի փաստաթուղթ հաշտության մասին, որով Թահմազը օսմանցիներին զիջեց Արաքս գետից հյուսիս ընկած բոլոր տարածքները, և Արաքսը ճանաչվեց որպես երկու երկրների սահման: Բացի այդ, Բաղդադի Ահմադ-փաշան որպես «արփալըք» (կերակրում) ստացավ Քերմանշահի նահանգի իննը գավառներ: Իր այդ խայտառակ պարտությունից հետո վերադառնալով Սպահան՝ շահը սկսեց վարել սանձարձակ ու անհոգ կյանք՝ իրեն տալով վայելքներին ու հարբեցողությանը և պետության կառավարման ղեկը վստահելով իր պալատականներին:

Երբ ստոյացուցիչ պայմանագրի ստորագրման լուրը հասավ Նադիրին, նա պահը միանգամայն պատեհ համարեց Թահմազին գահընկեց անելու համար: Թահմազ-ղուլին հրապարակեց մի կոչ, որտեղ շահին անվանում էր հարբեցող, ծույլ, փոքրոգի, վախկոտ և անառակ, անընդունակ երկիր կառավարելու, որի հետևանքով թշնամիները զորեղանում են և բռնանում Իրանի վրա, հազիվ էր երկիրն ազատվել օտարի լծից, Թահմազն իր հանցավոր գործելակերպով այն կրկին նետեց գերության գիրկը և այլն: Կոչի մեջ Նադիրը մեկ առ մեկ թվարկում էր թուրքերի դեմ մղված պատերազմի ժամանակ Թահմազի թույլ տված սխալները: Ի վերջո, նրան հռչակում էր հայրենիքի թշնամի, գահը զբաղեցնելու համար անարժան մարդ և ազդարարում, որ հանուն պետության բարօրության՝ անհրաժեշտ է նրան գահընկեց անել և գահ բարձրացնել նրա որդի Աբբասին, որը հինգ-վեց ամսեկան մի մանուկ էր:

Միաժամանակ Նադիրը մի նամակ գրեց Օսմանյան գահը նոր բարձրացած սուլթան Մահմուդ Ա-ին, որտեղ պահանջում էր հետ վերադարձնել բոլոր գրավյալ տարածքները՝ հակառակ դեպքում սպառնալով պատերազմով:

1732 թ. օգոստոսին Նադիրը իր զորքերով ժամանեց Սպահան և գահընկեց անելով շահ Թահմազին՝ նոր շահ հայտարարեց նրա մանկահասակ որդուն՝ Աբբաս Գ-ին, իսկ իրեն՝ նրա խնամակալ: Պալատում այդ իրադարձությանը ներկա գտնվողներից ոչ մեկը չհամարձակվեց առարկել կամ ընդդիմանալ փաստացի կերպով տեղի ունեցած պետական հե-

դաշրջմանը: Ավելին՝ ողջ ազնվական ընտրանին Նադիրին ճանաչեց որպես «պետության խնամակալ» և իրանական բանակի հրամանատար: Այդ պահից սկսած՝ Նադիրը փաստորեն դարձավ երկրի ինքնիշխան տերը: Թահմազի որդուն գահ բարձրացնելը ևս նա դարձրեց քաղաքական շահարկումների առարկա՝ ցանկանալով շեշտել, որ ինքը կատարելապես անտարբեր է թագավորական գահի նկատմամբ, և իր միակ մտահոգությունը իր սիրելի «վաքանին» (հայրենիքին) օգտակար լինելն է: Դրանով նա իր համար ստեղծում էր ազատագրական շարժման անձնվեր առաջնորդի լուսապսակ, որը նրան բերում էր մեծ հեղինակություն և լայն ժողովրդականություն:

Նախապատրաստվելով մեծ պատերազմի Օսմանյան կայսրության դեմ՝ Նադիրը որոշեց նախ կարգավորել հարաբերությունները ռուսների հետ: 1732 թ. հունվարի 21-ին նա Ռուսաստանի հետ կնքեց պայմանագիր, ըստ որի վերջինս պարտավորվում էր անմիջապես Իրանին վերադարձնել մերձկասպյան նահանգները՝ Գիլյանը, Մազանդարանը և Գորգանը, իսկ Քուռ գետից հյուսիս ընկած Կասպից ծովի առափնյա շրջանները, ներառյալ նաև Բաքուն ու Դերբենտը, ռուսները պետք է վերադարձնեին Անդրկովկասից թուրքերին վռնդելու դեպքում:

Այդ պայմանագիրը փոխշահավետ ակտ էր, որովհետև ռուսները հնարավորություն էին ստանում Իրանի միջոցով հարվածներ հասցնելու Մերձավոր Արևելքում ու Անդրկովկասում իրենց հիմնական ախոյան Օսմանյան կայսրությանը, իսկ Նադիրը հնարավորություն էր ստանում ամբողջ ուժերը կենտրոնացնել թուրքերի դեմ և մեկ ավելորդ անգամ ևս իր ժողովրդին ներկայանալ մերձկասպյան տարածքները օտար տիրապետությունից ազատագրողի դերում:

1732 թ. վերջին Նադիրը զորաշարժ կատարեց օսմանցիների դեմ: Գրավելով Համադանն ու Քերմանշահը՝ իրանական զորքերը շարժվեցին դեպի Բաղդադ և 1733 թ. սկզբին Քիրքուքի մոտ պարտության մատնելով թուրքերին՝ գրավեցին շիիթների սրբազան քաղաքներ Քարբալան ու Նաջաֆը: Չնայած այն հանգամանքին, որ Ֆարսում ծագած ապստամբության պատճառով Նադիրը չկարողացավ գրավել պաշարված Բաղդադը, սակայն կատարելով ուժերի հաշվեկշիռ՝ Բաղդադի Ահմեդ փաշան Նադիրի հետ ստորագրեց պայմանագիր ռազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ: Պայմանագրով նախատեսվում էր, որ Ստամբուլը վերադարձնելու է վերջին տաս տարիների ընթացքում Իրանից գրաված բոլոր տարածքները և վերականգնելու է թուրք-իրանական սահմանը այն տեսքով, ինչպես որոշված էր 1639 թ. Քասրե-Շի-

րինի պայմանագրով: Սակայն նոր սուլթան Մահմուդ Ա-ն, որը Նադիրի նկատմամբ գրավել էր անհաշտ և վճռական դիրք, չճանաչեց Բաղդադի փաշայի ստորագրած պայմանագիրը և սկսեց նախապատրաստվել վճռական գործողությունների համար: Սուլթանը մարտերում զոհված Թոփալ-Օսման փաշայի փոխարեն՝ 1734 թ. արելյան զորաբանակների ընդհանուր հրամանատար նշանակեց փառաբանված զորավար Քյոփրուլու զադե Աբդուլլա փաշային, որն անցնելով բանակի գլուխ՝ Ստամբուլից շարժվեց Կարսի ուղղությամբ: Սակայն մինչ այդ Նադիրն իր զորքերը մտցրել էր Շիրվան, պարտության մատնել օսմանցիների հետ կապված լեզգի Սուրխային, գրավել ու ավերել Շամախին ու Կազի-կումուխը և պաշարել Գանձակի բերդը: Այնուհետև նա արագ երթով մեկը մյուսի հետևից հետ վերցրեց Արաքսից հյուսիս ընկած քաղաքները, այդ թվում նաև Թիֆլիսը: 1734-1735 թթ. ընթացքում Նադիրը թուրքերից մաքրեց ողջ Արևելյան Անդրկովկասը:

Աղբյուրների վկայությամբ՝ այդ կռիվների ժամանակ Նադիրի բանակում մարտնչում էին հայկական զորախմբեր, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում Արցախի և Սյունյաց հայ զինվորությունը մելիքների գլխավորությամբ: Հավատարմություն հայտնելով Նադիրին՝ հայ մելիքները ոչ միայն զորքերով էին մասնակցում թուրքերի դեմ մղվող կռիվներին, այլև միաժամանակ նյութական և այլ կարգի օգնություն էին ցուցաբերում պարսից բանակին:

1735 թ. մայիսին Գանձակը թողնելով պաշարված վիճակում, Նադիրը Լոռի-Փամբակի վրայով իր բանակը շարժեց դեպի Կարս: Սակայն ճակատամարտ տեղի չունեցավ: Աբդուլլա-փաշան փակվեց Կալսի բերդում և խուսափեց բաց դաշտում ճակատամարտ տալուց: Կարսի շրջանը ասպատակության և ավարի ենթարկելուց հետո Նադիրն իր զորքերով նորից անցավ Ախուրյանը և բարձրանալով դեպի Կարբի՝ բանակ դրեց Եղվարդի շրջակայքում: Ի դեպ, Նադիրը որոշում է այցելել Էջմիածին, որից հետո նա նոր հրովարտակներով հաստատում է կաթողիկոսի, հոգևորականության և հայ համայնքի՝ հնուց՝ շահերի կողմից սահմանված իրավունքները: Պարսիկ պատմիչ Մուհամմադ-Քյազիմի վկայությամբ՝ Նադիրը վանքի վերանորոգումը հանձնարարում է հմուտ վարպետների՝ հատկացնելով հազար թուման, տաճարը զարդարում հինգ ման (15 կգ) կշռող ոսկե ջահով և կարգադրում Քիրմանի նահանգային սարքարությանը՝ ամենաընտիր գորգերը բարձել պետական գրաստներին և ուղարկել Էջմիածին:

1735 թ. հուլիսի 8-ին Եղվարդի մոտ տեղի ունեցավ մեծ ճակատամարտ: Չնայած թվական բացարձակ գերակշռությանը, թուրքերը ջախջախիչ պարտություն կրեցին: Դամադ Մուստաֆա փաշան և սարասկյար

Աբդուլլա փաշան սպանվեցին: Վերջինիս գլխատված դիակը Նաղիրն ուղարկեց Կարսի փաշային ի տես:

Գեղարքունյաց լեռներում երկու ամիս իր բանակին հանգիստ տալուց հետո Նաղիրը գնաց պաշարելու Կարսի բերդը: Նա միաժամանակ ասպատակ սփռեց Կարսից մինչև Կարին և Բայազետ՝ կողոպուտի և գերեվարության ենթարկելով Արևմտյան Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր:

Շուտով Աբդուլլա փաշայի տեղը նոր սերասկյար նշանակված Ահմադ փաշան, որը Բաղդադից հետ էր կանչվել և արտակարգ լիազորություններով ուղարկվել Էրզրում, հատուկ պատվիրակություն ուղարկեց Կարս և հաշտության բանակցություններ սկսեց Նաղիրի հետ: Դրանք ավարտվեցին 1736 թ. սեպտեմբերի 28-ին Ստամբուլում կնքված պայմանագրով, ըստ որի թուրքերը համաձայնվում էին ճանաչել 1733 թ. Բաղդադի հաշտության պայմանները: Սակայն այս պայմանագիրը ևս չհաստատվեց և ուժի մեջ չմտավ:

Նաղիրը որոշեց օգտագործել իր ռազմական հաջողությունները և Իրանի «ազատարարի» իր փառքը շահական գահը հափշտակելու համար: Նա իր մարդկանց միջոցով ամենուրեք շեշտում էր այն հանգամանքը, որ իր կառավարման տարիներին իրանական պետությունը վերականգնվել է իր նախկին սահմաններում: 1735 թ. նոյեմբերին Նաղիրը բանակ դրեց Մուղանի դաշտում և հրավեր ուղարկեց Իրանի բոլոր նահանգների մեծամեծներին, բեկլարբեկիներին, խաներին, մելիքներին և պետական բարձրաստիճան պաշտոնեությանը, ռազմիկ ցեղերի առաջնորդներին, ամիրներին և հոգևորականության ներկայացուցիչներին՝ շտապ հավաքվելու այնտեղ՝ «ղուռուլթայ» (ավագանու ժողով) գումարելու համար: Ղուռուլթային հրավիրված էին նաև հայ մելիքներն ու կաթողիկոս Աբրահամ Կրետացին, ռուսական և օսմանյան դեսպանները: Հավաքի մասնակիցների թիվը անցնում էր 20 հազարից, այլ տվյալներով հասնում էր մինչև 100 հազար մարդու: Հավաքվածների համար եղեգնից կառուցվեցին ժամանակավոր շինություններ, այդ թվում նաև մզկիթներ, բաղնիքներ, բազարներ և այլն:

Բացելով ղուռուլթայը՝ Նաղիրը շինծու կեցվածքով հայտարարեց, որ ինքը չափազանց հոգնել է և ցանկանում է քաշվել գործերից և ապրել խաղաղ ու հանգիստ կյանքով: Ուստի առաջարկում է մտածել երկրի և նրա ապագայի մասին և որպես շահ ընտրել որևէ մեկին, որն ի վիճակի լինի կառավարել պետությունը: Դրան նա անմիջապես ավելացրեց, որ Աբբասը դեռ երեխա է և, բնականաբար. չի կարող իրականացնել շահական պարտականությունները, նա միայն անվամբ է շահ:

Ղուռուլթայի մասնակիցները, անշուշտ, անմիջապես կռահելու էին, թե ինչ է Նաղիրի մտքինը: Սակայն ղուռուլթայը շրջապատված էր նրան հավատարիմ զորքերով, և առհասարակ ամեն ինչ արված է, որ վախի մթնոլորտում ոչ ոք ծպտուն չհանի: Ղզլբաշական ցեղերի ազնվականության շրջանից որոշ ազդեցիկ անձինք դեմ էին, որ Նաղիրն ընտրվի շահ, որովհետև թեև նա աֆշար ցեղին պատկանող ղզլբաշ էր, սակայն չուներ ազնվատոհմ ծագում: Ուստի նրանք գտնում էին, որ Սեֆյան դինաստիան, որին իրենք պարտական էին իրենց բարձրացումով, պետք է շարունակի գոյություն ունենալ: Սակայն այդ կերպ մտածողները լռում էին՝ գիտակցելով, որ ռազմական ուժը և ռեալ իշխանությունը գտնվում են Նաղիրի ձեռքերում: Ղզլբաշական էմիրներից միայն Ուղուրլու խան Ղաջարը, որը Ղարաբաղի բեկլարբեկն էր, հանդգնություն ունեցավ ասելու, որ անհրաժեշտ է շահ ընտրել Սեֆյանների ընտանիքից: Հետագայում դրա համար նա վճարեց իր տիրույթների երկու երրորդի կորստով: Ավելի ողբերգական ճակատագիր ունեցավ գլխավոր մոլլան («մոլլա բաշի»), որը նույնպես արտահայտվեց հօգուտ Սեֆյանների: Նաղիրի հրամանով նրան սպանեցին:

Այս բոլորից հետո ավագանու ժողովը «միաձայն» Իրանի գահի միակ արժանի թեկնածու ճանաչեց Նաղիրին: Վերջինս սկզբում խաղաց հրաժարման կատակերգություն՝ ստիպելով, որ իրեն երկար ժամանակ խնդրեն ու համոզեն: Երբ այդ բանը տեղի ունեցավ, Նաղիրը հայտարարեց, որ ինքը կհամաձայնվի ստանձնել շահական գահը և թագը, եթե ղուռուլթայի մասնակիցներն ընդունեն իր մի շարք պայմանները: Դրանք էին. բոլորը պետք է հավատարիմ լինեն իրեն և իր որդուն, հրաժարվեն Սեֆյաններին աջակցելուց, հրաժարվեն շիիզմից և վերջ տան սուննիների նկատմամբ թշնամանքին, գոյություն ունեցող չորս սուննիթական մազհաբների (հանիֆիներ, շաֆիիներ, մալիքիներ և հանբալիներ) գոյության կողքին ընդունեն հինգերորդ նոր մազհաբը (ուղղություն), որի հոգևոր առաջնորդ ճանաչեն իմամ Ջաֆար Սադեղին:

Համընդհանուր վախի մթնոլորտում նշված պայմանների դեմ որևէ առարկություն չեղավ, և Նաղիրը տվեց իր համաձայնությունը՝ դառնալու Իրանի շահ: Գարնանամուտին՝ պարսից ավանդական ամանորին (նովրուզ), տեղի ունեցավ Նաղիրի թագադրության հանդեսը: Պատմության թատերաբեմից հեռացած Սեֆյան դինաստիային փոխարինելու եկավ Աֆշարների դինաստան:

Այստեղ ավերորդ չէ համառոտակի մեկնաբանել Նաղիրի առաջ քաշած պահանջները կրոնական խնդիրների վերաբերյալ, առավել ևս, որ ին-

քը՝ Նաղիրը, անտարբեր էր կրոնական հարցերի նկատմամբ և բնավ կրոնական մոլեռանդ չէր: Ուստի նրա կրոնական հարցադրումներն ունեին զուտ քաղաքական հնչեղություն: Նրա պահանջը՝ իմամիթական դպրության շիհթական դավանանքը կոմպրոմիսային բնույթի մեկ այլ դավանանքով փոխարինելու վերաբերյալ, բխում էր նրա մտահղացած լայնահուն քաղաքական ծրագրերից: Նաղիրը տեսնում էր, որ Իրանի բնակչության բաժանումը շիաների և սուննիների մշտապես տեղիք է տալիս փոխադարձ ատելության ու թշնամանքի, որոնք ժամանակ առ ժամանակ վեր են ածվում արյունահեղ ընդհարումների: Կրոնական այդ ներհակության պատճառով Իրանը և Օսմանյան կայսրությունը մոտ երկուս և կես հարյուրամյակ ավերիչ պատերազմներ են մղել միմյանց դեմ: Նաղիրը տեսնում էր, որ Սեֆյանների ժամանակ սուննիների անկուր հետապնդումները պատճառ հանդիսացան սուննիզմը դավանող մի շարք երկրամասերում՝ Իրանական Քրդստանում, Անդրկովկասի մահմեդականների շրջանում, Դաղստանում, Աֆղանստանում և այլուր, ապստամբությունների բռնկման համար, որից օգտվելով՝ օսմանցիներն ու ուզբեկները մշտապես փորձում էին միջամտել Իրանի ներքին գործերին: Նաղիրը ցանկանում էր իր կրոնական նորամուծությունների շնորհիվ կատարյալ համերաշխություն ստեղծել ոչ միայն Իրանի շիաների և սուննիների միջև, այլև աֆղանների, քրդերի, ուզբեկների, դաղստանյան և այլ ժողովուրդների սուննիթական ազնվականությանը գրավել իր կողմը: Բացի այդ, այդ միջոցառմամբ նա մտադիր էր հարված հասցնել և թուլացնել Սեֆյանների դինաստիայի սոցիալական և քաղաքական գլխավոր հենարաններից մեկին՝ շիհթական հոգևորականությանը: Ընդ որում՝ Նաղիրը հաշվից դուրս չէր թողնում այն կարևոր հանգամանքը, որ մինչև XVI դ. Իրանի կրոնը մահմեդականության սուննիթական ուղղություն էր, և Սեֆյաններն են շիհզմն արմատավորել որպես Իրանի պետական կրոն: Ընդհանրապես, իր գահակալության տարիներին Նաղիր շահը հետևողականորեն աշխատում էր ամեն կերպ թուլացնել շիհթական հոգևորականության դիրքերը, որն ավանդաբար շատ մեծ ազդեցություն ուներ Իրանում: Տեղեկանալով, որ այդ հոգևորականության եկամուտները հասնում են մի հսկայական գումարի՝ յոթ միլիոն ռուսական ռուբլու՝ Նաղիր շահը հետաքրքրվում է, թե ինչի վրա են ծախսվում այդ գումարները: Նրան պատասխանում են, որ դրանք ծախսվում են դպրոցների, մզկիթների և մոլլաների վրա, որոնք աղոթում են, որ Ալլահը երկիրը պահպանի թշնամիներից: Նաղիրը բռնագրավում է հոգևորականության եկամուտները և այն հատկացնում պետական գանձարանին՝ իր այդ քայլը հիմնավորելով նրանով, որ եթե

Պարսկաստանը չկործանվեց, ապա շնորհիվ ոչ թե Ալլահի, այլ իր քաջ զինվորների: Սա, անշուշտ, աննախադեպ մի երևույթ էր մահմեդական երկրի կյանքում: Տեսակետ կա նաև այն մասին, որ իբր Նաղիրը ծրագրեր էր փայփայում իր մականի տակ ողջ Մերձավոր ու Միջին Արևելքի տարածքում միասնական մահմեդական պետություն ստեղծելու մասին, ուստի և իր ապագա նվաճումների համար փորձում էր ստեղծել գաղափարական համապատասխան հող: Պատահական չէ, որ Մուղանի ղուռուլթայի ժամանակ կազմվեց քաղաքական մի հռչակագիր, որտեղ նշվում էր, որ ավագանու ժողովը համաձայն է, որ իմամ Ջաֆար Սադեղի հավատքը մահմեդական իրավագիտության չորս սունննիթական հավատքների հետ համատեղ ճանաչվի որպես իսլամի հինգերորդ հավատք (մազհաբ): Դա նշանակում էր, որ հավատքը պետք է առնչություն չունենար ոչ Օսմանյան կայսրության, և ոչ էլ Իրանի շիիթական ավանդույթների հետ, այլ պետք է նպաստեր Նաղիրի մտահղացած նոր, ընդարձակ կայսրության համախմբմանը: Իրանում գործող քարմելիթյան միաբանության միսիոներներից մեկը մեկ միասնական ունիվերսալ կրոն ստեղծելու Նաղիրի մտահղացման քաղաքական շարժառիթ է համարում հետևյալը. շահնշահը տեսնում էր, որ գնալով դժվարանում է իր բանակի համալրումը զինվորներով, որովհետև չափազանց դժվար էր մահմեդական մի երկրում, որտեղ կրոնը չափազանց մեծ ազդեցություն ուներ մարդկանց վրա, մի տեղ հավաքել հազարավոր, տասնյակ հազարավոր մարդկանց, որոնք ունեին ոչ միայն կրոնական տարաձայնություններ, այլև ուղղակի թշնամանքով էին լցված միմյանց նկատմամբ՝ այդ նույն կրոնական ներհակությունների հիմքի վրա:

Նույն միսիոները վկայում է, որ, առհասարակ, քաղաքական նկատառումներով Նաղիրն անընդհատ սևեռուն հետաքրքրություն էր դրսևորում տարբեր կրոնների նկատմամբ՝ աշխատելով ընտրել այնպիսին, որն առավելագույն կերպով կհամապատասխաներ իր երկրի պետական շահերին: Հիշյալ միսիոների հաղորդած տեղեկության համաձայն՝ Նաղիրն իր մոտ է կանչում պարսիկ մոլլաներին և նրանց հանձնարարում արաբերենից պարսկերեն թարգմանել իսլամի սուրբ գիրքը՝ Ղուրանը, թեև Մուհամմադ մարգարեի սահմանած օրենքի համաձայն՝ Ղուրանի թարգմանությունն արգելված է: Նաղիրը հանձնարարում է նաև հրեա րաբբիներին՝ պարսկերեն թարգմանել Հին Կտակարանը, հայ հոգևորականներին՝ Վարք Առաքելոցը և Հայտնություն Հովհաննուն: Իր այդ կրոնական հետաքրքրությունների մասին Նաղիրը մի առիթով ասում է վերոհիշյալ հոգևորականներին, որ ինքը մտադիր է բոլոր կրոններից ընտրել այն, ինչը ինքը կհամա-

րի լավագույնը և դրանց հիմքի վրա կկազմի իր սեփական սուրբ գիրքը:

Ինչպես տեսնում ենք, Նադիր շահի աստվածաշնչական փորձերը հետապնդում էին լուրջ քաղաքական նպատակներ: Սակայն Նադիրի կողմից առաջ քաշված՝ շիաների և սուննիների ունիայի ծրագիրը հանդիսացավ մեռելածին մի մանուկ և մնաց միայն թղթի վրա: Ջաֆարիթյան ուղղության իսլամը չճանաչվեց ոչ Օսմանյան կայսրության, ոչ ուզբեկների ու աֆղանների և ոչ էլ բուն Իրանի սուննի բնակչության կողմից, առավել ևս շիաների կողմից, որոնք ընդհանրապես բոյկոտեցին այն: Թեև օսմանյան սուլթանի հետ բանակցություններում Նադիրը համառորեն աշխատում էր, որ նա ընդունի նոր (հինգերորդ) ջաֆարիթյան մազհաբը, սակայն սուլթանը կտրականապես մերժում էր այն:

Մուղանի դաշտավայրի եզրափակիչ էտապում Նադիր շահը (1636-1747) նրա բոլոր մասնակիցներին, ըստ իրենց դիրքի ու աստիճանի, բաժանեց նվերներ, այդ թվում նաև ստրուկներ ու ստրկուհիներ: Նա բարձր պաշտոններով ու նոր ավատներով վարձատրեց մարտերում աչքի ընկած և հավատարմությամբ վստահության արժանացած ամիրներին ու ավատատերերին: Նշանակեց բեկլարբեկիներ, վեզիրներ և այլ պաշտոնյաներ, որոնք հրովարտակներ ստանալով՝ մեկնեցին իրենց պաշտոնատեղիները: Ի դեպ, Նադիրը հաստատեց նաև Երևանի մելիքներ Մելիք-Մկրտումի և Մելիք-Հակոբջանի իրավունքները: Իսկ Արարատյան երկրի քալանթար նշանակվեց Նադիրի անվերապահ վստահությունից օգտվող Մելիքջան Մելիք-Շահնազարյանցը:

Գահ բարձրանալուց մի քանի օր անց նոր շահը հասկացրեց իր շրջապատի մարդկանց, որ մտադիր չէ իշխանությունը կիսել ոչ մանկահասակ Աբբասի և ոչ էլ Սեֆյան տոհմի որևէ այլ մեկի հետ: Գահընկեց արված չորսամյա շահ Աբբաս Գ-ն ուղարկվեց Խորասան՝ հոր՝ նախկին շահ Թահմազի մոտ: Սակայն Նադիրը հրամայեց իր որդուն՝ Խորասանի բեկլարբեկ Ռեզա-ղուլիին, սպանել Աբբաս Գ-ին, իսկ հորը խեղդամահ անել: Հոր կամքին հնազանդ՝ Ռեզա-ղուլին ոչ միայն ճշտիվ կատարեց հրամանը, այլև սրի քաշեց նաև Թահմազի հարեմի բոլոր կանանց և նրանց երեխաներին: Չբավարարվելով դրանով՝ Նադիրը հրամայեց սրի քաշել նաև շահական ընտանիքի բոլոր մեծ ու փոքր շառավիղներին՝ թվով հիսուն մարդու:

Այսպիսով՝ Սեֆյան դինաստիան հիմքից արմատախիլ արվեց:

2. ՆԱԴԻՐ ՇԱՀԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իրանի նոր տիրակալը միանգամից բախվեց լայնածավալ երկիրը կառավարելու հետ կապված մի շարք դժվարությունների: Ժառանգելով օտար ռազմակալման և անընդմեջ պատերազմների հետևանքով ծայրահեղ աղքատության հասած և տնտեսապես քայքայված մի երկիր՝ Նադիրը կարծում էր, թե այդ ծանր վիճակից դուրս գալու լավագույն միջոցը արտաքին արշավանքների կազմակերպումն է, որպեսզի նվաճված երկրների կողոպուտով լցնի պետական գանձարանը և շահի իր իշխանության գլխավոր հենարանը հանդիսացող ռազմա ավատատիրական դասակարգի համակրանքն ու աջակցությունը: Նախ նա որոշեց Իրանին միացնել Ղանդահարը, որը ավելի քան երկու հարյուրամյակ կռվախնճոր էր Սեֆյանների և Հնդկաստանի Մեծ Մողոլների միջև:

1736 թ. նոյեմբերին Սպահանի շրջանի բախթիարական ցեղի ապստամբությունը ճնշելուց և հետևաբար իր թիկունքն ամրապնդելուց հետո Նադիրը, 80-հազարանոց բանակի գլուխ անցած, 1737 թ. շարժվեց դեպի արևելք՝ Աֆղանստան, և պաշարեց Ղանդահարը: Տևական պաշարումից հետո 1738 թ. մարտին նրա բանակը գրոհով վերցրեց քաղաքը: Իր հաղթական զորքերին շահնշահը թույլատրեց կողոպտել և հիմքից ավերել քաղաքը: Այնուհետև նրա զորքերը գրավեցին Ղազնին, Քաբուլը, Բալխը և այլ քաղաքներ, մտան Բելուջիսթան և Փեշավարի ու Լահորի վրայով շարժվեցին դեպի Դելի: Արշավանքը դեպի Հնդկաստան հետապնդում էր թալանչիական նպատակներ: Մեծ Մողոլների առասպելական գանձերին տիրելը Նադիրին թվում էր միակ միջոցը գանձարանը լցնելու և բանակը պահելու համար: Արշավանքի համար ժամանակը հաջող էր ընտրված: Մեծ Մողոլ Մուհամմադ-շահի ուժերը թուլացել էին հյուսիսում՝ սիկխերի, իսկ հարավում՝ Մահարաշթրայում, մարատի ժողովրդի դեմ մղված պայքարում: 1739 թ. փետրվարի 24-ին Դելիից ոչ հեռու գտնվող Քառնալ քաղաքի մոտ տեղի ունեցած մեծ ճակատամարտում Նադիրը գլխովին ոչնչացրեց Մեծ Մողոլների թագավոր Մուհամմադ շահի բանակը: Մողոլների զորքերը պարսիկ ռազմիկների հուժկու հարվածների տակ փախուստով փորձեցին փրկել իրենց կյանքը՝ ապաստան գտնելով նորակառույց ամրոցում: Սակայն դա չփրկեց նրանց: Հաղթանակած պարսից զինվորները կոտորեցին նաև 300-400

ազնվազարմ սուլթանների, էմիրների ու խաների: Մարտի 20-ին Նադիրը գրավեց Դելին: Քաղաքում լուրեր տարածվեցին, որ իբր ճակատամարտի ժամանակ Նադիր շահը սպանվել է: Սկսվեցին քաղաքային բնակչության հարձակումներ նրա զորքերի վրա: Որպես պատասխան՝ Դելիում Նադիրը կազմակերպեց ջարդ, որին զոհ գնաց ավելի քան 10 հազար մարդ: Դրանից հետո սկսվեց բնակչության զանգվածային կողոպուտը: Զինվորները մտնում էին տները և հափշտակում թանկարժեք իրերը: Այդ նույնը նահանգներում իրականացնելու համար տարբեր վայրեր ուղարկվեցին հատուկ զորամիավորումներ: Ովքեր համարձակվում էին կողոպտվածից որոշ բան պահել իրենց, անխնա կերպով պատժվում էին մահվամբ: Կողոպտվեց և ավարի մատնվեց նաև Մեծ Մողոլների ամբողջ հարստությունը, գրավվեցին վիթխարի քանակությամբ ոսկի և ակնեղեն: Դա դեռ քիչ էր, Մեծ Մողոլի վրա դրվեց հսկայական ռազմատուգանք մուծելու պարտավորություն: Այդ ռազմատուգանքի դիմաց տրված արժեքներից էր նաև «քուհի-ի նուր» («լույսի լեռ») կոչված հայտնի ադամանդը և հսկայական քանակի թանկարժեք քարերով ընդելուզված «սիրամարգի գահը»: Զորքերին բաժանվելիք ռազմական ավարից Նադիր շահը առանձնացնում էր թանկարժեք քարերը և դրանք բոլորը վերցնում իրեն, ինչն առաջ բերեց զինվորների խուլ դժգոհությունը: Մեծ Մողոլը ստիպված էր ստորագրել նվաստացուցիչ ու ծանր մի պայմանագիր, որով Հինդոս գետից արևմուտք ընկած բոլոր հողերը զիջում էր Նադիրին: Պայմանագրում ասվում էր. «Քանի որ Հինդոս գետից հյուսիս և արևմուտք ընկած հողերի մեծ մասը միշտ համարվել է Խորասանի նահանգին պատկանող, Նորին Մեծություն Նադիր շահը իր համաձայնությունը տվեց դրանք միացնելու իր տիրույթներին»:

1739 թ. մայիսին Նադիրի զորքերը Հնդկաստանից շարժվեցին հետդարձի ճանապարհով: Իրանի շահը Հնդկաստանում մնաց ընդամենը երկու ամիս: Այդ կարճատև ժամանակամիջոցի ընթացքում հատուկ վարժեցված զինվորները բնակչությանը ծեծի և կտտանքների ենթարկելու միջոցով բացահայտում էին թանկարժեք իրերի թաքստոցները և բռնագրավում ամեն ինչ: Հաղթանակած Նադիրն իրեն հռչակեց Մեծ Մողոլների գահի տիրակալ: Մեկնելուց առաջ նա թագը վերադարձրեց Մուհամմադ շահին, պայմանով, որ նա դառնա իր հարկատուն: Նադիր շահը Հնդկաստանից վերադարձավ հազարավոր պետական ուղտերի վրա առասպելական հարստություններ բարձած, որոնք գնահատվում էին երեք միլիարդ հնդկական արծաթե ռուփի:

Պետական գանձարանը անբավ հարստությամբ լցնելուց հետո Նա-

ղիրը հրովարտակ հրապարակեց Իրանի բնակչությանը երեք տարի ժամկետով հարկերից ազատելու վերաբերյալ:

1739 թ. Նաղիր շահը ձեռնամուխ եղավ Միջին Ասիայի նվաճմանը: Կարճ ժամանակամիջոցում նրա հաղթական բանակը գրավեց Բուխարան, Խիվան և Խորեզմը, որոնք նույնպես վասալական կախման մեջ ընկան Նաղիրից: Ի դեպ, այդ արշավանքի ժամանակ նա Խորեզմում ստրկությունից ազատեց 30 հազար իրանցի գերի-ստրուկների: Իսկ Խիվայում գերության մեջ գտնվող ռուս ստրուկներին թույլ տվեց վերադառնալու հայրենիք: 1741 թ. Միջին Ասիան ընկճելուց հետո նա վերաղարձավ իր մայրաքաղաքը՝ Մեշհեդ: Այստեղ դարձյալ նա արծարծեց իր կրոնական քաղաքականության հարցերը, սակայն այս անգամ ոչ թե համոզելու, այլ բռնի կերպով պարտադրելու ձևով: 1742 թ. նա հրամայեց հավաքել ոլջ Իրանի մահմեդական գիտնական-աստվածաբաններին՝ ուլեմներին, որոնք, վախից ահաբեկված հեզությամբ հաստատեցին 1736 թ. որոշումը «շիիթական հերձվածից» հրաժարվելու և սուննիզմի ջաֆարիդյան ուղղությունն ընդունելու մասին:

Նաղիր շահի պատերազմները հիմնականում մղվում էին երկրի հյուսիսային և արևելյան-արևմտյան ճակատներում: Սակայն նա կարևոր ուշադրություն էր դարձնում նաև դեպի հարավ՝ Պարսից ծոցի կողմը ծավալվելու ուղղությամբ: Նրա հրամանով, օրինակ՝ վերականգնվեց տարիներ շարունակ լքյալ վիճակում գտնվող Բենդեր-Աբբաս նավահանգիստը: Այնուհետև, դեռևս 1736 թ. արաբներից հետ խլվեց Բահրեյնյան կղզիները: 1737-1738 և 1741-1743 թթ. զորքեր ուղարկվեցին Օման՝ այն ընկճելու և Իրանին ենթարկելու նպատակով, որը, սակայն դրական արդյունք չտվեց:

Նաղիրը գիտակցում էր, որ առանց սեփական նավատորմի առկայության հնարավոր չէ Պարսից ծոցի ավազանը ենթարկել իր տիրապետությանը: Նա համոզվեց նաև, որ առանց սեփական նավաշինության, միայն անգլիացիներից ու հոլանդացիներից նավեր գնելով, հնարավոր չէ՛ ստեղծել ուժեղ նավատորմ: Ուստի Բուշեհրում կառուցվեց նավաշինարան, որտեղ, 1741 թվականից սկսած, անգլիացի Ջոն Էլթոնի ղեկավարությամբ ձեռնամուխ եղան նավերի կառուցմանը: Քանի որ Պարսից ծոցի ափերին անտառներ չկային, և հետևաբար նավաշինության համար պիտանի փայտանյութ գոյություն չուներ, Նաղիր շահը հրամայեց փայտանյութը բերել Մազանդարանից, այսինքն՝ մոտ 1500 կմ հեռավորությունից: Իրանի տարբեր շրջաններից բռնի քշված գյուղացիները իրենց ուսերի վրա լեռնային դժվարանցանելի ճանապարհներով գե-

րաններն հասցնում էին Պարսից ծոց: Ռազմանավերը կրակային հզորությամբ ապահովելու համար Նադիրի հրամանով Բուշիրում կառուցվեց նաև թնդանոթների ձուլման գործարան:

Շահը կարևոր ուշադրություն էր դարձնում իր ռազմական ներկայությունը Կասպից ծովի ավազանում ևս ամրապնդելու ուղղությամբ՝ համարելով, որ եթե բանակն ի վիճակի է հյուսիսում պաշտպանել պետության ցամաքային սահմանները, ապա ծովային սահմանը, նավատորմ չունենալու պատճառով, մնում է բաց և խոցելի: Այստեղ ևս Նադիրի վիճախարի եռանդը տվեց իր պտուղները: Կասպից ծովում սկսվեց նավատորմի շինարարություն: Մեշեդեսերում և Լենգերուդում Նադիրի հանճարարությամբ նավերի կառուցման աշխատանքները ղեկավարում էր բրիտանական զինվորական Ջոն Էլթոնը:

Սակայն, այդ բոլորով հանդերձ, Նադիրին վիճակված չէր ունենալու սեփական նավատորմ: Նավաշինության ուղղությամբ աշխատանքները թե՛ հարավում, թե՛ հյուսիսում ձախողմամբ ավարտվեցին: Համարյա բոլոր նավերը, բացառությամբ մեկի, շահի մահվանից հետո մնացին անավարտ և երբեք ծով չտեսան:

Նադիր շահը փորձում էր ստեղծել կենտրոնացված վարչական համակարգ՝ երկաթյա կամքով երկիրը կառավարելու համար: Նրա օրոք արքունիքն ու ռազմական ճամբարը ներկայացնում էին մեկ միասնություն: Իր տարածքով վիթխարի չափերի հասնող պետությունը Նադիր շահը կառավարում էր համարյա բացառապես ռազմական ուժի օգնությամբ: Նա, անշուշտ, գիտակցում էր, որ միայն ռազմական հաղթանակներով, որքան էլ որ դրանք փայլուն լինեին, հնարավոր չէ իրականացնել աշխարհակալ պետություն ստեղծելու իր նվիրական իղձը: Ուստի իր հասկացած ձևով նա ձեռնարկում էր միջոցառումներ երկրի տնտեսական կյանքն աշխուժացնելու ուղղությամբ, որոնք սակայն, ոչ մի էական արդյունք չտվեցին: Առհասարակ, Իրանի քաղաքական միավորումը չհանգեցրեց արտադրողական ուժերի աճին: Շահը փորձեց նաև իրականացնել երկրի կառավարումը կենտրոնացնելու քաղաքականություն: Նա թեև ստեղծեց այսպես կոչված պետական խորհուրդ, սակայն թույլ չէր տալիս ոչ մի կարևոր հարց լուծել առանց իր համաձայնության: Նման պայմաններում արդյունավետ գործող պետական ապարատի գոյությունը, անկասկած, բացառվում էր: Գործին խոչընդոտող պատճառներից էր նաև այն, որ շահը առհասարակ արհամարհում էր բարոյական բոլոր տեսակի պարտավորությունները: Նա երկիրը կառավարում էր արևելյան բռնատիրական եղանակով:

Նաղիր շահի տիրապետության շրջանում նրա ընդարձակ պետությունը բաժանվեց երեք բեկլարբեկությունների, որոնց կենտրոններն էին Մեշհեդը, Թավրիզը և Շիրազը: Խորասանում կառավարում էր նրա որդի Ռեզա-ղուլին, իսկ Ատրպատականում շահի եղբայրը՝ Իբրահիմ խանը: Նահանգները կառավարվում էին հաքիմների կողմից, որոնք իրենց ողջ ապարատով հանդերձ ենթարկվում էին բեկլարբեկին: Ինչպես բեկլարբեկները, այնպես էլ հաքիմները, անմիջականորեն նշանակվում էին շահի կողմից՝ որպես կանոն, կա՛մ նրա ազգականներից և կա՛մ տարիների ընթացքում իրենց հավատարմությամբ շահի վստահությունը շահած բարձրաշխարհիկ ազնվականության ներկայացուցիչներից:

Բեկլարբեկները նույնքան դաժան էին, որքան հզոր: Արևելյան մտածողությունը հարգանք էր ներշնչում «ծանր ձեռքի» նկատմամբ: Բեկլարբեկներին իրավունք էր տրված տնօրինելու իրենց հպատակների կյանքը: Առհասարակ, Իրանում ընդունված նորմ էր, երբ բարձր պաշտոններ զբաղեցնող մարդիկ ամենասանձարձակ ու ծայրահեղ կեղեքումների ու ճնշման էին ենթարկում իրենց հպատակներին: Պետության աստիճանավորների մոտ տարածված էր արևելյան բոլոր բռնատիրություններում իշխող հետևյալ սկզբունքը. «Առյուծ՝ ստորադասի, կատու՝ վերադասի նկատմամբ»:

Պետության արդարադատությունը կենտրոնացված էր մոլլաբաշիի և նայիբ-սարդարի ձեռքերում, որոնցից առաջինը վարում էր կրոնական դատարանը, իսկ երկրորդը՝ աշխարհիկ: Զինվորական դատավորի պարտականությունները կատարում էր ղազիասքյարը, իսկ գերագույն հոգևոր առաջնորդը՝ շեյխ-ուլ-իսլամը, միաժամանակ հանդիսանում էր գլխավոր դատավոր: Պետության վարչական կառավարման գործերն իրականացվում էր դավթարխանեի (գրասենյակի կամ պետական դիվանի) կողմից: Պետության գլխավոր վերահսկիչ մարմնի ղեկավարն էր մոսթոֆի-օլ-մամալեքը, որն իր տրամադրության տակ ուներ տարբեր բնագավառներ վերահսկող մոսթոֆիներ: Դրանք գահի վստահված անձինք էին: Մոսթոֆի-օլ-մամալեքը հանդիսանում էր նաև հարկահավաքման գերատեսչության ղեկավարը:

Սահմանային շրջանների զինված ուժերը ենթարկվում էին սարդարներին: Պետության մեջ ծաղկում էր կաշառակերությունը: Տեղական կառավարիչները, որպես կանոն, պետությունից աշխատավարձ չէին ստանում, այլ «կերակրվում» էին բնակչության հաշվին, ուստի և անողոք շահագործման էին ենթարկում նրան: Այդ կառավարիչներին «հանցանքի մեջ» բռնելը շահի համար հանդիսանում էր լրացուցիչ եկամտի աղբյուր,

որովհետև պատժից կարելի էր ազատվել միայն կաշառքի միջոցով: Քաղաքներում և շրջակա գյուղերում ցրված զորքերն ուղղակի ամայացնում էին ամեն ինչ: Ռուսական ռեզիդենտ Ի. Կալուշկինը հաղորդում էր, որ «ճանապարհների վրա և փողոցներում կարելի էր տեսնել, թե ինչպես զինվորներն իրենց հետևից քարշ տալով տանում էին 20-30-հոգիանոց մարդկանց խմբեր, որոնք ի վիճակի չէին բավարարել նրանց ագահությանը... Ամենուրեք լսվում էին սարսափի և հուսահատության ճիչեր... Նույնիսկ օտարերկրյա հաղթողի կողմից գրոհով վերցված քաղաքը չէր կարող ականատես լինել մարդկանց սարսափեցնելու այնպիսի տեսարանների, ինչպես որ տեղի էին ունենում Սպահանում բռնատիրող ուզուրպատոր Նադիրի ժամանակ»: Նադիր շահի զինվորները ապրուստ հայթայթելու գործում առանձնապես տարբերություն չէին դնում յուրայիների և թշնամու գույքի և կայքի միջև:

Նադիր շահի հեծելազորը գլխավորապես թուրքմենական, ուզբեկական և աֆղանական ցեղերի վերնախավն էր: Իրանական ավատատերերի շրջանում բացակայում էր բավականաչափ ուժեղ մի խմբավորում, որի վրա նա կարողանար հենվել: Բնականաբար, այդ վիճակը առաջ էր բերելու պարսիկ ավատատերերի և շիիթական հոգևորականության դժգոհությունը, մանավանդ որ շահը ձգտում էր հիմքից արմատախիլ անել վերջինիս տնտեսական և քաղաքական ազդեցությունը: Ժողովրդական լայն զանգվածների շրջանում Նադիրը ժողովրդականություն էր վայելում մինչև այն պահը, քանի դեռ ղեկավարում էր պայքարը օտարերկրյա զավթիչների՝ աֆղանների և օսմանցիների դեմ: Սակայն այնուհետև նրա չդադարող շարունակական պատերազմները երկրի բնակչության համար դարձան անտանելի բեռ:

Ինչպես նշվել է վերևում, Հնդկաստան արշավանք կատարելուց հետո Նադիրը երեք տարի ժամկետով իր պետության բնակչությանը ազատեց հարկեր մուծելու պարտավորությունից: Սակայն շուտով նա չեղյալ համարեց այդ արտոնությունն ու 1743 թվականից սկսեց հարկեր ու տուրքեր հավաքել նաև արտոնյալ տարիների համար, այն էլ բազմապատիկ չափերով: Հարկերի հավաքումը ուղեկցվում էր ահավոր դաժանություններով ու կողոպուտներով: Պատմիչ Մուհամմադ Քազիմի վկայությամբ՝ հարկերը չվճարողներին զրկում էին աչքերից ու լեզվից, իսկ ովքեր ժողովրդին հրահրում էին ընդդիմանալու հարկահավաքներին, կտրում էին նրանց ականջները, քիթը և լեզուն, բռնագրավում նրանց գույքը, կանանց ու երեխաներին վաճառում ստրկության: Ընդ որում՝ պետք է նկատի ունենալ, որ մարմնի անդամահատումը և հարկերը չվ-

ճարելու համար որպես ստրուկ վաճառելը արգելվում էր իսլամի կողմից և հանդիսանում էր մահմեդական իրավունքի սկզբունքների կոպիտ խախտում: Դաժան բրածեծ անելու, ոտքերին երկաթյա կաղապարներ դնելու, շղթայակապ զնդանը նետելու և խարույկի վրա կենդանի այրելու միջոցով իշխանությունները մարդկանցից կորզում էին խոստովանություն, թե ով ինչ ունեցվածք ունի, և բռնագրավում էին հարքունիս: Օրինական հարկերից բացի գանձվում էին բազմապիսի կամայական հարկեր: Մարդիկ, չկարողանալով վճարել իրենց հարկերը, ստիպված էին վաճառել իրենց երեխաներին. 12 տարեկան տղան արժեր 10 մահմուդի, իսկ նույն տարիքի աղջիկը՝ 5 մահմուդի: Շատերը վաճառում էին իրենց կանանց, իսկ փրկություն գտնելու առավել տարածված ձևը լեռներն ու անտառները փախչելն էր:

Մի խոսքով՝ ամենուրեք իշխում էր բիրտ ուժի սարսափը, օրենքը փոխարինվել էր քմահաճ կամքով: «Մարդիկ,- գրում է այդ բոլորին ականատես ռուս ռեզիդենտ Բրատիշչևը,- Պարսկաստանում Նադիրի կառավարման շրջանում ոչ թե կյանք, այլ մահ են երազում»: Իսկ անգլիացի Հանվեյը նշում էր, որ «կարծես թե Նադիրը աշխատում էր ավելի շատ ստոլացնել իր սեփական հպատակներին, քան թշնամիներին»: Նա Նադիրին անվանում է «ողջ Ասիայի խրտվիլակը»:

Նադիր շահի պետական հարկապահանջությունը խստագույնս գործել է նաև Հայաստանում՝ ետին թշվառության մատնելով ժողովրդին: Աբրահամ Կրետացի կաթողիկոսը ստիպված է եղել բազմիցս բողոքելու հարկային պաշտոնյաների կողմից Էջմիածնի մուաֆության իրավունքների ոտնահարման դեմ: Ավելի դաժան էր իշխանությունների վերաբերմունքը իրանահայության, մասնավորապես Նոր Ջուղայի գաղթօջախի նկատմամբ: Նադիր շահը ուժից վեր հարկեր դրեց հայ վաճառականների վրա. «Նադէր շահ,- գրում է Նոր Ջուղայի պատմիչ Հարություն Տեր-Հովհաննյանցը,- ունելով բնավորութիւն յոյժ ընչասէր և ագահ, և յաղագս զորականացն հարկ լինելով նմա պատրաստել զոռճիկս, ջուղայաբնակ վաճառականացն հայոց հասոյց զմեծամեծ տառապանս, ստանալով ի նոցանէ զբազում գումարս»:

Նադիր շահը առանց որևէ լուրջ պատճառի հրամայում է խարույկի վրա կենդանի այրել նորջուղայեցի անվանի վաճառական, կաթոլիկ համայնքի գլխավոր Հարություն Շահրիմանյանին, որին Ավստրիայի Հաբսբուրգների կողմից շնորհվել էր կոմսության տիտղոս: Մի քանի օր անց վշտից ու վախից իր մահկանացուն է կնքում նաև նրա եղբայրը՝ կոմս Լևոն Շահրիմանյանը:

Առհասարակ, Նադիր շահի ներքին քաղաքականության գլխավոր գիծը զանգվածային ահաբեկչությունն էր գործնականում բնակչության բոլոր խավերի, ներառյալ նաև ավատական ազնվականության նկատմամբ: Դա առաջ էր բերում քաղաքացիների, գյուղացիների և քոչվորների մշտական հուզումներ ինչպես բուն Իրանում, այնպես էլ նվաճված երկրներում: Ապստամբների հետ հաշվեհարդարներն անողոք էին ու դաժան: 1747 թ. Քերմանում ապստամբությունը ճնշելուց հետո Նադիր շահը հրամայեց կտրված գլուխներից բուրգ պատրաստել, իսկ մի մասի աչքերն էլ հրամայեց հանել: Աբրահամ Երևանցին պատմում է, որ բախթիարական ցեղերի ապստամբությունը ճնշելու ժամանակ արյունը հոսում էր գետի նման:

1741 թ. Նադիր շահը կազմակերպեց մեծ արշավանք դեպի Դաղստան: Դեռևս 1738 թ. լեզգիները և Դաղստանի ու նրա սահմանակից Կովկասի մյուս ցեղերը հրաժարվեցին ճանաչել տեղի շահական ներկայացուցիչներին: Երբ Նադիր շահի եղբայրը՝ Ատրպատականի բեկլարբեկ Իբրահիմ խանը, փորձեց ուժով հնազանդեցնել լեզգիներին, վերջիններս ջախջախեցին նրա պատժիչ զորքերին: Ինքը՝ Իբրահիմ խանը, սպանվեց, իսկ նրա զորքի մնացուկները ստիպված էին խուճապահար նահանջել: Խռովարարներին պատժելու նպատակով 1741 թ. Նադիր շահը անձամբ բանակը շարժեց Դաղստան:

Այդ ժամանակ Նադիրի և նրա քաղաքականության նկատմամբ դժգոհությունը Իրանում այն աստիճանի ուժեղ էր, որ երբ նա անցնում էր Մազանդարանի անտառներով, նրա նկատմամբ կազմակերպվեց մահափորձ:

Դաղստան շարժվելու ճանապարհին Նադիրի բանակը գլորվող ձնագնդի նման մեծանում էր: Նրան միացան թաթարների, ուզբեկների, աֆղանների և նույնիսկ հնդիկների մեծաթիվ ջոկատներ՝ բանակի թվաքանակը հասցնելով 150-200 հազար մարդու:

Սակայն համարյա գլխովին զինված և հրազենը նս լավ յուրացրած լեռնականները, իրենց կանանց, երեխաներին և ունեցվածքը տեղափոխելով անառիկ լեռները, ցույց տվեցին կորովի դիմադրություն: Նրանք անընդհատ կազմակերպում էին մանր հարձակումներ, շարքից հանում էին պահակազորը և պարսկական բանակը հյուծելուց ու բարոյալքելուց հետո համարձակվեցին գիշերով մեծ ուժերով հանդուգն գրոհ կազմակերպել Նադիրի գլխավոր ուժերի վրա: Շահական բանակը դիմեց անկանոն փախուստի: Հավաքելով իր վերջին ուժերը, շահը կողոպուտի մատնեց հարթավայրային վայրերը՝ ավերածության ենթարկելով և կրակի ճարակ դարձնելով հովիտների գյուղերը:

1743 թ. փետրվարին Նադիրը ստիպված էր հրաժարվել Դաղստանը նվաճելու մտքից, և այնտեղից շարժվեց դեպի հարավ՝ Ատրպատական: Ետդարձի ճանապարհին նրա բանակը սառնամանիքների և սովի պատճառով մեծ կորուստներ ունեցավ: Սամուրա գետի կիրճից մինչև Մուղանի տափաստանի քոչավայրերը պատված էին դիակներով: Բանակում սկսվեց դասալքություն:

Անհաջող արշավանքից գազազած վերադառնալով Սպահան՝ Նադիր շահը սկսեց փնտրել իր անհաջողության մեղավորներին և կազմակերպեց ահավոր մի ջարդ՝ սրի քաշելով նաև արքունիքի ամենաաչքի ընկնող դեմքերին և նույնիսկ բանակի բարձր սպայության ներկայացուցիչներին:

Դաղստանյան պատերազմը հանդիսացավ Նադիր շահի առաջին ռազմական անհաջողությունը, որը մեծ հարված հասցրեց նրա հեղինակությանը: Անհրաժեշտ էր մի հաղթական պատերազմով վերականգնել իր ռազմական վարկը, այլապես ապստամբությունների և խռովությունների ալիքը կարող էր սրբել տանել ամեն ինչ: Կար նաև հարցի մեկ այլ կողմ: Քանի որ այդ արշավանքի հետևանքով ռազմական ավար ձեռք չբերվեց, բանակը գտնվում էր քայքայման վտանգի առջև: Այս բոլորը մղեցին Նադիրին նոր պատերազմ սկսելու Օսմանյան կայսրության դեմ՝ Արաբական Իրաքը նվաճելու և այնտեղ հարուստ ռազմական ավար ձեռք բերելու նպատակով:

1743 թ. կեսերին իրանական զորքերը ներխուժեցին Միջագետք: Սկզբում հաջողությունն ուղեկցում էր Նադիրին: Նա գրավեց Քիրքուքը, պաշարման ենթարկեց Մոսուլը և Բասրան: Սակայն Մոսուլի օսմանյան զորամասի կատաղի դիմադրությունը հնարավորություն չտվեց գրավելու քաղաքը: 1743 թ. վերջին ժամանակ շահելու նպատակով շահնշահը բանակցություններ սկսեց օսմանցիների հետ և 1744 թ. սկզբին նոր թափով շարունակեց պատերազմը: Սակայն այդ պատերազմը կողմերից ոչ մեկին չբերեց վճռական հաղթանակ, և 1746 թ. սեպտեմբերի 4-ին Սուրբ-բուլաղի մոտ գտնվող Քուրդան կոչված վայրում կնքվեց թուրք-իրանական խաղաղության պայմանագիր, որը հաստատում էր երկու պետությունների միջև 1639 թ. Քասրե-շիրինի պայմանագրով որոշված սահմանները: Օսմանյան իշխանությունները պարտավորվում էին աջակցել իրանական բոլոր ուխտագնացներին և ապահովել նրանց անվտանգությունը Բաղդադի և Սիրիայի վրայով Մեքքա մեկնելու ճանապարհին: Նախատեսվում էր նաև յուրաքանչյուր երեք տարին մեկ փոխանակել դեսպաններ: Հատկանշական է, որ նշված պայմանագիրը ստորագրելիս Նադիր շահը այլևս չէր պնդում, որ օսմանցիները ճանաչեին իր կողմից

առաջ քաշված ջաֆարիդների հինգերորդ սուննիթական մազհաբը:

Թուրք-իրանական այդ պատերազմի ընթացքում Նադիր շահի լայնածավալ պետությունը ծայրից ծայր փոթորկում էր ապստամբությունների ու խռովությունների հորձանուտում: Դեռևս 1740 և 1743 թթ. Շիրվանում բռնկվեց երկու հուժկու ապստամբություն: Երկրորդ ապստամբությունը ճնշելուց հետո պատժիչ զորքերի հրամանատարները որպես «նվեր» շահին ուղարկեցին 14 բաթման (մոտ 42 կգ) մարդկային աչքեր: 1743 թ. անդրկովկասյան խանություններում Սամ միրզայի գլխավորությամբ սկսվեց մի շարժում, որը մեծ վտանգ էր ներկայացնում Նադիրի համար, որովհետև ապստամբության ղեկավարն իրեն ներկայացնում էր որպես Սեֆյան շահ Հուսեյնի որդի: 1743 թ. ապստամբություն բռնկվեց Արևելյան Վրաստանում Գիվի Ամիլախվարիի գլխավորությամբ: 1743-1744 թթ. ողջ Ֆարսը գտնվում էր ապստամբական հրդեհի մեջ: Աստերաբադի շրջանում 1744 թ. ապստամբեց ղզլբաշական ղաջար ցեղը: Այդ ապստամբությանը միացավ թուրքմենական յոմուդ վարչկատուն ցեղը: Նշված ապստամբությունը ճնշելիս Աստերաբադի կուսակալը շատերին խարույկ բարձրացրեց, մեծ թվով մարդկանց կախեց, հազարավոր գյուղացիների կուրացրեց, իսկ նրանց կանանց, որպես ստրուկների, բաժանեց Նադիրի ռազմիկների միջև: 1744 թ. երկրի հյուսիս-արևմուտքում հայտնվեց ևս մեկ ինքնակոչ իրեն ներկայացնելով որպես շահ Հուսեյնի որդի Սեֆի միրզա: Այդ նույն թվականին Խոյի և Սալմաստի շրջաններում ապստամբեց քրդական վաչկատուն դումբուլի ցեղը: 1746 թ. ընդվզեց լուր ցեղի առաջնորդ Ալի Մուրադ խանը: Այդ նույն տարիներին տեղի էր ունենում գյուղացիության զանգվածային փախուստ ուր պատահեր՝ դեպի Հնդկաստան, Միջին Ասիա, արաբական շրջաններ, Դաղստան և այլն:

Այսպիսով՝ Նադիրի նվաճումների հետևանքով ստեղծված հսկայածավալ պետությունը դրսևորում էր քայքայման բացահայտ նշաններ: Անհաջողություններն էլ ավելի ուժեղացրին Նադիր շահի դաժանությունը: Ռզաղուլիխան Հեդայաքը գրում է, որ ամեն օր Նադիրին ներկայացնում էին մեկ և կես «ման» հանված աչք: Արքունիքում ծայր առած խարդավանքների հետևանքով նրա կասկածամտությունն ու նենգությունը հասել էին աներևակայելի չափերի: Ենթարկվելով պալատական բանսարկություններին՝ շահը հրամայեց կուրացնել իր հարազատ որդուն՝ Ռզա ղուլի միրզային: Եվ երբ պարզվեց, որ որդին անմեղ էր, կորցնելով հոգեկան անդորրը, հայրը գտնվում էր կիսամեղսունակ վիճակում: Կասկածամիտ շահը հրամայեց սրի քաշել իր անձնական պահակազորի զինվորներին՝ թվով չորս հազար մարդու: Նախապես տեղեկանալով այդ

հրեշավոր մտահղացման մասին՝ զինվորներին հաջողվում է փախուստով փրկել իրենց կյանքը:

1746 թ. դեկտեմբերի 14-ին շահը արքունի հարկահավաքներին հրամայեց մեկ առ մեկ մտնել Սպահանի բնակիչների տները և «քարից փող քամել»: Դա հարկահավաքների համար չափազանց ծանր մի գործ էր, որովհետև մինչ այդ նրանք Սպահանից և շրջակա գյուղերից արդեն հասցրել էին «քամել» 300 հազար թուման, որն այդ ժամանակների համար մի վիթխարի գումար էր: Դահիճները շատերին տանջանքների էին ենթարկում՝ նախապես իմանալով, որ նրանք աղքատ են և տալու ոչինչ չունեն: Հարկահանների զեղծարարությունը պատրվակ ծառայեցնելով՝ Նադիրը նրանցից ևս կորզում էր խոշոր գումարներ: Իրենց վերագրվող հանցանքներից ազատվելու համար մեղադրյալ հարկահանները զրպարտում էին ուրիշներին: Մայրիկ մահապատժի վախից խոստովանում էին իրենց չգործած հանցանքները և զրկվում քիթ ու ականջից և աչքերից: Նադիրը առանց որևէ լուրջ պատճառի դատի տակ էր դնում զանազան երկրամասերում իր նշանակած պաշտոնյաներին՝ նրանցից կորզելով մեծ գումարներ: Նադիր շահի դաժան հետապնդումների զոհ էին դառնում ոչ միայն ժողովրդական զանգվածները, այլև ավատատեր խաները, շիիթական հոգևորականությունը և այլք, որոնք ավելի ու ավելի էին դրսևորում իրենց դժգոհությունը նրա ահաբեկչական վարչակարգի նկատմամբ: Հասունանում էր դավադրությունը շահի կյանքի դեմ: Ապստամբություններն ընդունում էին ավելի հուժկու թափ: «Նադիր շահի պետությունը հասավ մայրամուտի սահմանին, և հզորության ճրագը մարեց ճակատագրի ու նախախնամության փոթորիկից»,- գրում է պարսիկ պատմիչը:

1747 թ. Քերմանում բռնկված ապստամբությունը նոր էր ճնշվել, երբ ավելի հուժկու ապստամբություն սկսվեց Սիսթանում: Ապստամբներին միացան նաև բելուջները: Այդ վտանգավոր շարժումը ճնշելու համար Նադիր շահն ուղարկեց իր եղբորորդուն՝ Ալի դուլի միրզային: Ժամանելով Սիսթան՝ վերջինս համոզվեց, որ շահի վարչակարգը նահանգում առաջ է բերել համընդհանուր ատելություն և ապստամբությունը ճնշելու գործը շատ դժվար է լինելու իր համար: Ալի դուլի միրզան որոշեց օգտագործել այդ շարժումը իր փառասիրական նպատակների համար, այլ կերպ ասած՝ զոհաբերելով Նադիրին՝ գահը պահպանել Աֆշարների դինաստիայի համար: Միանալով ապստամբությանը՝ Ալի դուլին ղեկավարեց այն և իրեն հռչակեց շահ: Եղբորորդու դավաճանությանը Նադիրը պատասխանեց անողոք դաժանությամբ. նա հրամայեց կենդանի այրել նրա երկու որդիներին և կուրացնել մորն ու կնոջը:

Քերմանում ու Խորասանում բռնկված խռովությունը ճնշելու համար Նադիրն անձամբ կազմակերպեց պատժիչ արշավանք: Խորասանի կենտրոն Մեշհեդում նա մարդկային կտրված գլուխներից կառուցեց յոթ շատ բարձր աշտարակներ՝ սարսափի մթնոլորտ ստեղծելու համար:

Այսուհետ հաշվեհարդարը շարունակվում էր, երբ Խաբուշանի մոտ (Խորասան) գտնվող իր ռազմական ճամբարում գիշերով իր վրանի մեջ, Նադիր շահը մորթվեց իր համիարզ սպաների և պահակազորի խանների կողմից կազմակերպված դավադրության հետևանքով (1747 թ. հունիսի 24-ին): Նրա մարմինը կտոր-կտոր արեցին և ուղարկեցին երկրի տարբեր շրջանները: Գլուխն անջատվեց մարմնից և ցցելով նիզակի ծայրին՝ ի ցույց դրվեց բոլորի համար:

Նադիրի մահվանը հաջորդեց մի կատաղյալ քաոս: Երկրում ծայր առան միջֆեոդալական կատաղի կռիվներ, ապստամբության դրոշ պարզեցին մի շարք ցեղապետներ, որոնք իրենց հռչակեցին թագավոր: Երկիրը մասնատվեց մի շարք մանր թագավորությունների:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՅՐԻՎԵՐՈՒՄՆԵՐ ԻՐԱՆՈՒՄ ՆԱԴԻՐ ՇԱՀԻ ՄԱՀՎԱՆԻՑ ՀԵՏՈ: ԻՐԱՆԸ ԶԵՆԴԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՐՋԱՆՈՒՄ

Նաղիր շահի սպանությունից հետո նրա պետությունը գահավեժ արագությամբ սկսեց քայքայվել: Այդ պետության տարածքային ամբողջականության առաջին լուրջ հարվածը հասցրին դարձյալ աֆղանները: Նաղիրի մոտ ծառայության մեջ գտնվող աֆղանները, Ահմեդ խան Աբդալիի գլխավորությամբ ավարի ու կողոպուտի մատնելով Նաղիրի ռազմական ճամբարը, հեռացան Ղանդահար: Հենվելով իր՝ աբդալի ցեղի վրա, որն Ահմեդ խանը վերանվանեց «դուրրանի» (մարգարտյա), նրան հաջողվեց միավորել մինչ այդ ներհակ շահեր ունեցող և միմյանց հետ արյունախանձ կռիվների մեջ գտնվող մի շարք աֆղանական ցեղերի և նրանցից ստեղծելով մարտունակ բանակ՝ սկսեց ռազմակալման ենթարկել հարևան տարածքները: Շուտով նրա տիրապետության տակ անցան Հերաթը, Սիսթանը, Փենջաբը և Քաշմիրը: 1747 թ. նա Աֆղանստանը հայտարարեց Իրանից այլևս կախում չունեցող առանձին պետություն և իրեն հայտարարելով շահ՝ փաստորեն հիմք դրեց անկախ աֆղանական պետության գոյությանը՝ Ղանդահար մայրաքաղաքով: Նշված իրադարձությունից հետո Աֆղանստանը այլևս երբեք չմտավ Իրանի կազմի մեջ: Ըստ էության, Ահմեդ շահ դուրրանիի պետությունը վերածվեց մի ընդարձակ կայսրության:

1747 թ. հուլիսի 6-ին Նադիր շահի դեմ դավադրություն կազմակերպած Խորասանի ղզլբաշական ցեղերի խաները Մեշհեդում շահ հռչակեցին նրա եղբորորդի Ալի-ղուլի միրզային, որն ընդունեց Աղիլ շահ («արդարամիտ») անունը: Նադիր շահի դաժանություններից տառապած և ծայր հուսահատության հասած Իրանը հույսեր էր փայփայում, որ բռնակալի եղբորորդին կլինի մեղմ և չափավոր: Իսկապես, կարծես թե ամեն ինչ խոստանում էր, որ այդ երիտասարդ տիրակալը կուներևա երջանիկ ու հանգիստ թագավորության շրջան: Նա հրապարակեց մի կոչ, որտեղ նշվում էր, որ Նադիրի ժամանակ նրա դաժանությունների հետևանքով երկիրը վեր է ածվել ավերակի, գյուղերը դատարկվել են, քաղաքները լքվել բնակչությունից: Մարդիկ հասցվել էին անասունների հոտի վիճակի: Այնուհետև ասվում էր, որ նոր շահը որոշել է վերջ տալ այդ բոլորին և իր պարտքն է համարում օգնության ձեռք մեկնել տառապյալներին ու անմեղներին:

Սակայն պարզվեց, որ խնծորը ծառից հեռու չի ընկնում: Իր դաժանությամբ «արդարամիտ շահը» չէր զիջում Նադիրին: Նա իր առաջին գործը համարեց սրի քաշել Խորասանում գտնվող Նադիրի մեծ գերդաստանի արական սեռի բոլոր շառավիղներն՝ որդիներին, թոռներին, ինչպես նաև մյուս մերձավորագույն ազգականներին: Մի շարք իշխանազունների Աղիլշահը թունավորեց: Նրանցից փրկվեց միայն 14-15 տարեկան մի պատանի՝ Շահրոհ միրզան, որի վրա անհայտ պատճառով թույնը չէր ազդել: Աղիլ շահը հրամայեց նաև ճղել հանգուցյալ շահի բոլոր կանանց, ինչպես նաև նրա որդիների կանանց որովայնները, որպեսզի նրանք չծնեին ժառանգորդներ, որոնք երբևիցէ կարող էին հավակնել իշխանության:

Շիիթական հոգևորականության աջակցությունը ստանալու նպատակով նոր շահը դատապարտեց Նադիրին շիաների նկատմամբ հալածանքներ կազմակերպելու մեղադրանքով: Իրանում այդ ամենազոր ուժի համակրանքը շահելու համար խոշոր հոգևորականության ներկայացուցիչներին հատկացրեց մի շարք արտոնություններ ու իրավունքներ, հետ վերադարձրեց Նադիրի կողմից նրանցից բռնագրավված հողային կալվածքները, ամեն կերպ աշխատում էր բարեկամական հարաբերություններ հաստատել նրանց հետ և այլն: Նա նույնիսկ շիիթական հոգևորականներին, ինչպես նաև իր իշխանությունը ճանաչած ղզլբաշական ցեղերին բաժանեց Խորասանում Նադիր շահի Ղալաթ (Կալաթ) ամրոցից բռնագրավված գանձերի մի մասը: Մեշհեդում իմամ Ռեզայի դամբարանի և նրա վակֆի հոգաբարձու նշանակվեց Իրանի սաղր

(քաղաքացիական վարչության ղեկավար)՝ մի բարձրաստիճան հոգևորական:

Նորսաթուխ շահը հրամանագիր հրապարակեց նաև բնակչությանը նախորդ տարիների ընթացքում չմուծված հարկերից ազատելու, ինչպես նաև մեկ տարի սովորական հարկերից և երկու տարի արտակարգ հարկերից ազատելու վերաբերյալ: Այս բոլորի շնորհիվ նա փորձում էր վաստակել Աղիլ շահի՝ արդարադատ ու արդարամիտ տիրակալի անուն: Սակայն պարզվեց, որ նրա իրագործած միջոցառումները բավարար չեն գահի վրա կայուն կերպով հիմնավորվելու համար: Գահ բարձրանալուց անմիջապես հետո շահական իշխանության նկատմամբ հավակնություններ ունեցող անձանց, ինչպես նաև պետության ծայրամասերում ինքնագլխության ձգտող ավատատերերի ու խաների կողմից նոր շահի դեմ անմիջապես սկսվեցին ապստամբություններ ու խռովություններ:

Նախ իրենց անհնազանդությունը հայտնեցին Խորասան նահանգի ռազմաշունչ քրդերը, որոնք զենքի դիմեցին իրենց «պապենական իրավունքները» պաշտպանելու համար: Գահ բարձրանալուց անմիջապես հետո Աղիլշահը ստիպված էր զորքերով շարժվել Խաբուշան՝ ապստամբած քրդերին ճնշելու համար: Աղիլ շահի իշխանությունը հրաժարվեցին ճանաչել նաև բուն Իրանի և Անդրկովկասի բազմաթիվ մեծ ու փոքր կառավարիչները: Շահից դժգոհ Թավրիզի բնակչությունը, որպես իշխանության հավակնորդ, առաջ քաշեց ոմն Սիյամի: Նրա դեմ Աղիլ շահն ուղարկեց Ամիր Ասլան խանին, որը հաղթելով Սիյամին՝ սրի քաշեց մեծ թվով թավրիզցիների: Սակայն չբավարարվելով իրեն շնորհված Ատրպատականի բեկլարբեկի պաշտոնով՝ Ասլան խանը այս անգամ իր զենքն ուղղեց շահի դեմ և պարտություն կրելով՝ փախավ Ուրմիա: Իսկ Արևելյան Հայաստանի բնակչությանը խաղաղեցնելու նպատակով Աղիլ շահը գերադասեց խաղաղ միջոցները. նա այդ նահանգն ուղարկեց խոշոր գումարներ, որպեսզի դրանք բաժանվեն աղքատությունից հուսահատության հասած բնակիչներին, նրանց հնարավորություն տալու համար, որ մշակեն լքված հողերը: Միաժամանակ նա խոստացավ որոշ չափով կրճատելու նրանցից գանձվող հարկերը: Այնուհետև Աղիլ շահը ջախջախեց Մազանդարան նահանգի տիրակալ Ֆաթհ Ալի խան Ղաջարին: Բանակը, որը կոչված էր ճնշել ապստամբական շարժումները, անհուսալի էր: Այնտեղ ևս սկսվեցին հուզումներ: Երկրի ներսում հենարանից զուրկ շահը Վրաստանի թագավոր Թեյմուրազի խորհրդով որոշեց դիմել Ռուսաստանին՝ նրանից աջակցություն ստանալու հույսով: Այդ նպատակով նա Աստրախանի վրայով դեսպանություն ուղարկեց Ռու-

սաստան: Սակայն շահի թախանձագին խնդրանքներին ռուսները մնացին անհաղորդ:

1748 թ. Աղիլ շահի դեմ ապստամբեց իր հարազատ եղբայրը՝ Իբրահիմ միրզան, որին նա նշանակել էր Պարսկական Իրաքի (Իրաք-ե Աջամ, Աջեմա) բեկլարբեկ: Ստանձնելով իր այդ պաշտոնը՝ Իբրահիմ միրզան անմիջապես սկսեց ծրագրեր փայփայել երկրի գերագույն իշխանությունը հափշտակելու ուղղությամբ: Դաշինքի մեջ մտնելով Պարսկական Իրաքի և Ատրպատականի ավատատերերի, ինչպես նաև Ատրպատականի զինվորական կառավարիչ Ամիր Ասլան խան Աֆշարի հետ՝ 1748 թ. վերջին Իբրահիմ խանը բացահայտ կերպով ապստամբեց իր եղբոր դեմ: Աղիլ շահը ապստամբ եղբոր նստավայր՝ Սպահան է ուղարկում Զոհրաբ խան անունով մի մահմեդականացած վրացու՝ նրան հրամայելով սպանել Իբրահիմ խանին: Սակայն վերջինիս հայտնի է դառնում ուրացյալ վրացու՝ իր մոտ գալու պատճառը, և բաղնիքում լողանալու ժամանակ նրան մորթազերծ են անում: Իբրահիմ միրզան որոշում է իրադարձությունների նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը և մեծ զորաշարժ է կատարում դեպի Ատրպատական, որտեղ այդ պահին գտնվում էր շահը: Երկու եղբայրների միջև գլխավոր ճակատամարտը տեղի ունեցավ Սուլթանիեի և Զենջանի միջև ընկած Սաման-արխի կոչված վայրում: Դա մի իսկապես արյունահեղ ճակատամարտ էր, որի ժամանակ Աղիլ շահի կողմից կռվողների մեջ էին նաև նրա մյուս երկու եղբայրները, որոնք մինչև վերջ հավատարիմ մնացին իրենց եղբորը: Ճակատամարտում Աղիլ շահը պարտություն կրեց և փախավ Թեհրան, որտեղ նա ընկավ Իբրահիմ միրզայի մարդկանց ձեռքը: Շուտով հաղթողի հրամանով նա կուրացվեց:

1748 թ. դեկտեմբերի 8-ին Իբրահիմ միրզան իրեն հայտարարեց շահ և Թավրիզում իր անունով սկսեց հատել դրամ: Նա մեկնեց Սպահան՝ իր գահակալության իրավունքը ճանաչել տալու համար: Նոր շահը իր հետ տանում էր շղթայակապ ու կուրացված իր եղբորը՝ որպես իր հաղթանակի գլխավոր հիշեցում: Նա դեռ մուտք չէր գործել մայրաքաղաք, երբ լուր ստացվեց, որ Թավրիզի նահանգապետը բարձրացրել է խռովություն: Անմիջապես Իբրահիմ շահը ձեռնամուխ եղավ արշավանքի խռովարար խանի դեմ: Նրանց զորքերը հանդիպեցին Թավրիզի շրջակայքում: Սակայն Միրասլան խանին սպասում էր դժբախտ Աղիլ շահի ճակատագիրը: Մի քանի օր տևած ոչ մեծ բախումներից հետո նրա զորքերը լքեցին իրեն: Շահը հրամայեց խեղդել նրան:

Անդրկովկասի և Իրանի բազմաթիվ ավատական տիրակալներ հրա-

ժարվեցին Իբրահիմին ճանաչել որպես Իրանի շահ: Նրանց հատկապես զայրացնում էր այն, որ նա իր գլխավոր հենարան էր դարձրել աֆղանական և ուզբեկական խաներին: Մեշհեդում սկսեց պատրաստվել դավադրություն նոր շահի դեմ: Այդ նահանգում տեղակայված զորքերի հրամանատարները որոշեցին գահ բարձրացնել հարեմում բանտարկված Թահմազ-դուլի խանի թոռանը՝ 14-ամյա Շահրուխ միրզային (1748 թ. հոկտեմբերի 1-ին): Վերջինս, անցնելով իրեն հպատակություն հայտած զորքերի գլուխ, 1749 թ. հունիսի սկզբին շարժվեց Իբրահիմ շահի դեմ: Սակայն Շահրուխի կողմից հաղթանակը ձեռք բերվեց դեռևս մինչև ճակատամարտի սկսվելը: Իբրահիմ շահի զինվորները, հետևելով իրենց հրամանատարների օրինակին, անցան հակառակորդի կողմը: Համոզվելով, որ իր գործը ձախողված է՝ Իբրահիմը որոշեց գեթ փախուստի միջոցով փրկել իր կյանքը: Սակայն 1749 թ. դեկտեմբերին Ղալափուր ամրոցում նա ձերբակալվեց և հանձնվեց Շահրուխ շահի մարդկանց, որոնք նրան գլխատեցին: Մեկ այլ վարկածի համաձայն, երբ ծպտված հալածական շահը իր մերձավորագույն ծառաների ուղեկցությամբ մուտք գործեց գյուղերից մեկը, տեղական ռայիսը, որի մի աչքը հանել էին Իբրահիմ շահի հրամանով, ճանաչեց նրան: Գյուղի բնակիչները հարձակվեցին ձախողակ շահի ու նրա ծառաների վրա և սպանեցին շահին, իսկ ծառաներին մինչև վերջին թելը կողոպտեցին:

Խորասան նահանգի ազնվականական վերնախավը, որին Շահրուխը պարտական էր իր ազատությամբ ու թագով, ցանկություն հայտնեց, որ նա իր գահանիստ քաղաքը դարձնի Մեշհեդը: Նորաթուխ շահը տվեց իր համաձայնությունը:

XVIII դ. 50-ական թթ. սկզբին Իրանը տրոհվել էր մի շարք մանր ավատական տիրույթների, որոնց կառավարիչները համարյա անդադար պայքար էին մղում միմյանց դեմ հանուն իշխանության:

Խորասանում Ահմեդ խան դուրրանիի աֆղանական ջոկատների օգնությամբ հիմնադրվեց ձևականորեն անկախ մի պետություն, որի ղեկավարը նշանակվեց Շահրուխը, մինչդեռ փաստացի կերպով Խորասանը գտնվում էր աֆղանների հսկողության տակ: Աստարաբադում, իսկ ապա նաև Մազանդարանում հիմնավորվեց ղաջարական ցեղի առաջնորդներից մեկը՝ Նադիր շահի կողմից սպանված Ֆաթհ Ալի խան Ղաջարի որդի Մուհամմադ Հասան խանը: Ատրպատականում կառավարում էր Նադիրի զորահրամանատարներից մեկը՝ աֆղանական գիլզաի ցեղից Ազադ խանը: Հայաստանի, Արևելյան Վրաստանի և Անդրկովկասի խանությունները դարձան փաստորեն անկախ: Գիլյանում իրեն անկախ կառավարիչ

հռչակեց տեղական ազդեցիկ ավատատերերից մեկը՝ Հեդայաթոլլա խանը: Հարավային Իրանում իշխանությանը տիրացան բախթիարական ցեղերի առաջնորդ Ալի Մարդան-խանը և զենդերի ցեղի առաջնորդ Քերիմ խանը: Սպահան քաղաքը նրանք իրար մեջ բաժանեցին երկու մասի և կառավարում էին իրենց կողմից առաջ քաշված Սեֆյան ընտանիքի մայրական կողմից վերջին շառավիղ շահ Իսմայիլ Գ-ի անունից:

Սակայն այդ փոքր պետությունները երբեք կայունություն ձեռք չբերեցին: «Զայնու ժամանակաւ թագաւորութիւնն Պարսից եղեալ էր որպէս առագաստ յուժգին մրրկէ ծուատեալ, և որպէս նաւ անղեկավար տարուբերեալ ի կոհակաց. զի մարզպանք իւրաքանչիւր քաղաքաց կրել ի գլուխ զթագն արքայական բաղձային. վասն որոյ իւրաքանչիւր ոք զօրաժողով լինէր, և անդադար էր գոռմունք պատերազմաց ի սահմանս պարսից»,- գրում է Հարություն Տեր-Հովհաննեսյանցը:

1749 թ. դեկտեմբերին Խորասանում Շահրուխի դեմ խռովություն կազմակերպեց Մեշհեդ քաղաքի շիիթական հոգևորականությունը, որը Շահրուխին հայտարարեց այլակրոն և Նադիրի քաղաքականությանը հետևող և առաջ քաշեց գահի իր թեկնածուին՝ մոջթեհիդ միրզա Սեյիդ Մուհամմադին կամ Միր-Սեյիդին, որը մոր գծով սերում էր Սեֆյաններից: Սեյիդ Մուհամմադը գահընկեց արեց Շահրուխին: Ընդ որում՝ հեղաշրջման կազմակերպիչները անհեռատեսորեն կենդանի թողեցին նրան: Սեյիդ Մուհամմադն իրեն հռչակեց շահ և ընդունեց Սուլեյման Բ գահակալական անունը: Թվում էր, թե երկրում իշխանությունը կրկին տնական ժամանակով անցել է Սեֆյանների ձեռքը, սակայն Աֆշարների կողմնակիցների խմբավորումը դեռևս շատ ուժեղ էր: Երեք ամիս անց, օգտվելով նրանից, որ Սուլեյման Բ-ն արշավանքի էր մեկնել Աֆղանստան՝ Ահմեդ շահ դուրրանիի դեմ, զորավար Յուսուֆ Ալի խան Ջալաիրին 1750թ. հունվարի 14-ին գահընկեց արեց նրան և գահի վրա վերականգնեց Շահրուխին: Վերջինս բոլոր իրավունքներն ուներ դառնալու համայն իրանական պետության ինքնակալը: Նրա ծագումը ազնվականական էր (հանդիսանում էր երկու դինաստիաների՝ Սեֆյանների և Աֆշարների շահերի թոռը), ազդեցիկ էր ու հարուստ: Սակայն նրան խանգարում էր մի էական հանգամանք. նա դժբախտություն ուներ լինելու կուրացված խռովարար: Ծանր ու թեթև անելով թեր ու դեմ բոլոր հանգամանքները, Շահրուխը եկավ այն եզրակացության, որ ավելի լավ է մնալ Մեշհեդում և բավարարվել անխռով կյանքով, քան վտանգի ենթարկել իրեն՝ մտնելով ողջ Իրանի գահի տիրակալի համար պայքարի մեջ: Շահրուխի կառավարումը Խորասանում ընդմիջումներով շարու-

նակվեց մինչև 1795 թ.: 1754 և 1770 թթ. նա ստիպված էր իրեն ճանաչել որպես Ահմեդ շահ դուրրանիի վասալ, իսկ 60-ական թթ. կեսերից իշխանությունը բաժանում էր իր որդիների՝ Նասերուլլահ միրզայի և Նաղիր միրզայի հետ, որոնք մշտապես թշնամական հարաբերությունների մեջ էին միմյանց հետ:

1753 թ. անզիջում պայքար սկսվեց նաև Սպահանում՝ բախթիարական ցեղի առաջնորդ Ալի Մարդան խանի և զենդերի առաջնորդ Մոհամմադ Քերիմ-խանի միջև: Զենդերի ցեղը մտնում էր Ֆեյլի կոչված լուրերի կամ լորերի ցեղի մեջ, որի բնակության վայրը Մալայիրի շրջանն էր (Համադանից հարավ-արևելք): Օսմանյան կայսրության հետ պատերազմի ժամանակ (XVIII դ. 30-ական թթ.) զենդերի առաջնորդ Մահդիխանը թուրքերի դեմ մղում էր պարտիզանական պատերազմ: Թուրքական զորքերի հեռանալուց հետո զենդերը հրաժարվեցին ենթարկվել Աֆշարներին: Նաղիր շահը ճնշեց զենդերի դիմադրությունը, իսկ ավելի ուշ՝ ճակատամարտերից մեկի ժամանակ, Մահդի խանը սպանվեց (1748 թ.): Զենդերի նոր առաջնորդներից մեկը՝ Մոհամմադ Քերիմ խանը, սպանեց Ալի Մարդան խանին և դարձավ իրանական պետության փաստացի ղեկավար:

Այժմ իշխանության համար թեժ պայքար ծավալվեց Քերիմ խան զենդի, Ազադ խան գիլզաիի և Մուհամմադ Հասան-խան Ղաջարի միջև, որոնք իրենց հսկողությունն էին սահմանել Իրանի տարածքի մեծ մասի վրա: Միջավատական այդ արյունախանձ կռիվների ժամանակ հաջողությունն ուղեկցում էր մերթ մեկին, մերթ մյուսին: 1753թ. Ազադ-խանը մեծ զորքով շարժվեց դեպի Սպահան: Տեսնելով, որ ուժերի հարաբերակցությունը իր կողմը չէ՝ Քերիմ խանը առանց դիմադրություն ցույց տալու թշնամուն թողեց Սպահանը և ամրացավ Շիրազի ամրոցում: Աֆղաններն ու Լուրիսթանի ռազմաշունչ ցեղերը ներխուժեցին քաղաք և սկսեցին վայրենի ու գիշատիչ կողոպուտ: Ազադ-խանն իրեն հայտարարեց գերագույն իշխանության տեր և բնակություն հաստատեց սեֆյան շահերի պալատում: Կողոպտիչներից ու ստահակներից բաղկացած նրա օրդերը տեղավորվեցին քաղաքի լավագույն շենքերում, իսկ եկեղեցիները վեր ածեցին իրենց ձիերի ախոռների: Ազադ խանը ծանր ռազմատուգանք է դնում Նոր Ջուղայի հայկական գաղթօջախի վրա՝ սպառնալով, որ ժամկետին չմուծելու դեպքում ավարի է մատնելու Սպահանի այդ արվարձանը: Ստեփաննոս Երեց պատմիչը այդ առթիվ վկայում է. «Յետ ընդունելոյ զայնպիսի սաստկագին հրամանՙ ելեալ հարկահանացն դիմեցին ի վերայ ողորմելի, եղերական և անպատսպար քրիստոնէիցն իբրև հողմախառն հուր ընդ եղէգն ընթացել, այնպէս լլկէին՝ գանէին՝ խա-

րակէին՝ հարկաճէին՝ նեղէին՝ չարչարէին... և կալեալ կապէին զարս և զկանայս ի փողոցս և իր հրապարակս և խնդրէին զդրամն, և ոչ ուստեքէ էր օգնութիւն նոցա»: Ազադ խանը Նոր Ջուղան նվիրեց իր դաշնակից ուզբեկներին, որոնք ստիպեցին նրա բնակչությանը «կերակրել» իրենց, այսինքն՝ հոգալ ապրուստի բոլոր ծախսերը:

Մեկ տարի տևած պայքարից հետո՝ 1754 թ. Ազադ խան գիլզաին ստիպված էր զենքը ցած դնել և հանձնվել Քերիմ խանին: Ազադ խանի պարտությունը միանգամայն օրինաչափ էր: Իրանի լայն զանգվածների համար նա մարմնավորում էր ատելի աֆղանական տիրապետությունը: Նրա բանակը կազմված էր սուննի աֆղաններից, ուզբեկներից, բելուջներից ու քրդերից, որոնց նկատմամբ շիա բնակչությունը տածում էր կրոնական ատելություն: Աֆղան բռնակալը վերին աստիճանի դաժան վերաբերմունք էր դրսևորում պարսիկ բնակչության նկատմամբ: Քաղաքներ գրավելիս նա մասամբ կոտորում էր բնակչությանը, մասամբ քշում ստրկության: Եվրոպացի միսիոներները հաղորդում են, որ Ազադ խանը և նրա մարդիկ վաճառում են տղամարդկանց, կանանց և տղաներին ինչպես եզների, ոչխարների ու ձիերի:

Քերիմ խանի պայքարը Մուհամմադ Հասան խան Ղաջարի հետ փոփոխակի հաջողությամբ շարունակվեց ընդհուպ մինչը 1759 թ. փետրվարը, երբ Քերիմ խանին հաջողվեց ջախջախել նրան: Պարտված Մուհամմադ Հասան խան Ղաջարը գլխատվեց, իսկ նրա որդիներին տարան Շիրազ, որպես Քերիմ խանի «ամանաթներ» (պատանդներ):

Հաղթանակ տարած Քերիմը բազմաթիվ անկախ ու կիսանկախ խաների անունով ուղարկեց ուղերձներ՝ պահանջելով իր մոտ ծառայության ուղարկել զինված ջոկատներ: Այդ պահանջի բավարարումը հավասարազոր էր խաների կողմից նրա գերագույն իշխանության ճանաչմանը: Պարսկական Իրաքի, Մազանդարանի, Գիլյանի, Քրդստանի, Արևմտյան ու Կենտրոնական Իրանի խաների արձագանքը իրենց ուղղված ուղերձներին դրական էր, և նշված նահանգներն անցան Քերիմ խանի տիրապետության տակ: Սակայն Վրաստանի և Դաղստանի կառավարիչները, ինչպես նաև Ատրպատականի մի շարք խաներ, չցանկացան ճանաչել Քերիմի գերագույն իշխանությունը: Ուստի նա իրար հետևից ընկճեց ու գրավեց Ատրպատականի խանությունները, իրեն ենթարկեց Քերմանը, Յեզդը, Քաշանը, Ղումը: Նրա կողմն անցան նաև Ղարաջադաղի և Ղարաբաղի կառավարիչները, հնազանդեցրեց շահսևենյան ցեղերին, արևմուտքում հասավ Ուրմիա: Մի խոսքով՝ 1760-1763 թթ. ընթացքում նա իրեն ենթարկեց համարյա ողջ Իրանը, բացառությամբ Խորասանի, որ-

տեղ կառավարում էր կույր Շահրուխը: Քերիմ խանը մտադիր էր անցնել Արաքսը և շարժվել դեպի Անդրկովկաս, սակայն Արդեբիլում ստանալով տեղեկություն այն մասին, որ իր եղբայր Չեքի խան զենդը և ազգական շեյխ Ալի Մուհամմադ խան զենդը ապստամբել են իր դեմ Քերիմ խանը որոշեց հետաձգել իր ծրագիրը և նախ ճնշել այդ ապստամբությունները:

Հաշվեհարդարը ապստամբ խռովարարաների նկատմամբ սովորական էր. Քերիմ խանը հրամայեց այրել (խարանել) շեյխ Ալիի աչքերը, մյուսներին սպանել:

Մտավախություն ունենալով, որ իր բանակի սուննիթ զինվորները (ուզբեկ, բելուջ և այլն) կարող են հանդիսանալ մշտական խռովությունների պատճառ՝ 1759 թ. մարտի 21-ին իրանական նովրուզի (Նոր տարվա) օրը Թեհրանում, Մազանդարանում, Սեմնանում, Սպահանում, Ղումում, Քաշանում և այլ վայրերում Քերիմ խանի գաղտնի հրամանով կոտորեցին մի քանի հազար զինվորների: Բացի այդ, նա պատանդի վիճակով Շիրազում պահում էր մի խումբ խաների, որոնց իր դեմ ընդվզելու հավանականությունն առանձնապես մեծ էր: Այդ խաներից էին Ֆաթհ Ալի խան Աֆշարը, Ղարաջադաղի կառավարիչ Քազեմ խանը, Թավրիզի կառավարիչ Նաջաֆ Ղուլի-խան Դոմբոլին, Նախիջևանի կառավարիչ Խոջա խան Քենգերլուն, Գյանջայի խանի եղբայր Ռեզա Ղուլի խան Զիյադօղլուն, Մարաղայի կառավարիչ Մուհամմադ Ղուլի խանը և ուրիշներ:

Նկարագրելով Իրանում տիրող անհանգիստ ու խառնակ վիճակը, Սպահանի քարմելիթյան եպիսկոպոս Կորնելիուսը գրում էր. «Ինչպես և նախկինում, այստեղ թագավորում է խռովությունը. դժվար է հասկանալ, թե որտեղ է գլուխը, որտեղ՝ պոչը: Քերիմ խանը, որին եվրոպական թերթերը ներկայացնում են որպես ամենազոր, ի վիճակի չէ հնազանդեցնել իր ախոյաններին սեփական ուժերի փոքրաթվության և հակառակորդների մեծաթվության պատճառով»: Ղանդահարը ենթարկվում էր զենդերի ցեղից Ահմեդ շահին, Սինդը, Հորմուզը, Մասկաթը, Վրաստանը, Բելուջիսթանը և այլ նահանգներ ունեին իրենց անկախ կառավարիչները: Նույնիսկ Լորեսթանը, որտեղ ծնվել էր Քերիմ խանը, կառավարվում էր իր հակառակորդ խաներից մեկի՝ Զաքարիա խանի կողմից: Հնդկաստանից մինչև Բասրա՝ ողջ Պարսից ծոցի առափնյա շրջանները, բացառությամբ Բուշեհրի, գտնվում էին հայտնի ծովահեն Միր-Մոհաննայի հսկողության տակ:

1763 թ. Քերիմ խանն ընդլայնեց իր ռազմական գործողությունները Խուզիսթանի անհնազանդ ավատական տիրակալների դեմ, որոնց տիրույթները նվաճելուց հետո սկսեց ինքնագլուխ արաբական ցեղերի (բա-

ցի քաաբ և այլն) հնազանդեցումը: Այսպիսով՝ Իրանի ողջ հարավը ևս մտավ նրա ընդարձակ պետության կազմի մեջ:

1775 թ. մարտին Քերիմ խանի 30-հազարանոց զորքը պաշարեց Բասրան: Տասներեքամսյա պաշարումից հետո հիվանդություններից ու սովից ուժասպառ եղած ու հյուծված քաղաքն ընկավ: Քերիմ խանը քաղաքի բնակիչների վրա դրեց ծանր ռազմատուգանք: Սակայն նրա մահվանից անմիջապես հետո իրանական զորամասը լքեց ու հեռացավ քաղաքից, և Բասրան վերստին անցավ օսմանյան տիրապետության տակ (1779 թ.):

Չնակառնորեն Քերիմ խանը իրեն շահ չհայտարարեց: Սեֆյանների շառավիղ Իսմայիլ Գ-ին, որին նախկինում նա Ալի Մարդան խանի հետ համատեղ հայտարարել էր շահ, բանտարկեց Շիրազից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող մի ամրոցում, որտեղ նրա համար ստեղծված էին վայելքների համար ամեն տեսակի հնարավորություններ և այդ «հաճելի» բանտարկության վիճակում՝ հարեմի կանանց մեղկ շրջապատում, նա անց էր կացնում իր «շահական գահակալության» միապաղաղ օրերը: Նրա անունից կառավարելով երկիրը, Քերիմ-խանը իրեն համեստորեն կոչեց «վաքիլ» («վաքիլ-օդ-դոուլե» կամ «վաքիլ-ար-րայա»), որը նշանակում է լիազորված անձ, և այդ կարգավիճակով կառավարեց երկիրը 1761-1779թթ.:

Քերիմ խանը ամեն կերպ ձգտում էր դրսևորել իր նվիրվածությունը Սեֆյան դինաստիային: Մյուս կողմից, իրեն ներկայացնելով որպես Սեֆյանների «ոտնահարված» իրավունքների վերականգնման ջատագով՝ Քերիմ խանը մտադիր էր թուլացնել գերագույն իշխանության նկատմամբ հավակնություններ ունեցող ապագա հավակնորդների դիրքերը:

Նախապես Քերիմ խանի մայրաքաղաքը Սպահանն էր, սակայն հետագայում նա իր նստավայրը տեղափոխեց Ֆարսի կենտրոն Շիրազ քաղաքը, որի բնակչությունն ու հատկապես տեղի ազնվական վերնախավը անվերապահորեն պաշտպանում էին իրեն: 1765թ. հուլիսին ժամանելով Շիրազ՝ Քերիմ խանը մինչև իր կյանքի վերջը այլևս այդ քաղաքից դուրս չեկավ: Իր իշխանության տակ վերցնելով Սպահան, Ղազվին, Գոլփայեգան, Խունսար, Թեհրան քաղաքների և մահալների կառավարման գործը՝ Քերիմ խանը մյուս նահանգների կառավարումը հանձնեց իր մերձավոր ազգականներին:

Քերիմ խանի տիրապետությունը նշանավորվում էր նրանով, որ Բուիների դինաստիայի անկումից հետո (1055 թ.)՝ 700 տարի անց, նա Իրանի առաջին տիրակալն էր, որն ուներ ոչ թե բյուրքական, մոնղոլական կամ աֆղանական, այլ իրանական ծագում: Այնուհետև, թեև նա սերել էր քոչվո-

րական ազնվականության կազմից, սակայն աշխատում էր հենվել ոչ միայն վաչկատուն ցեղերի և նրանց վերնախավի, այլև նստակյաց ավատատերերի, ինչպես նաև Իրանի առևտրական-վաճառականական դասի վրա:

Քերիմ խանը ժառանգեց երկարատև երկպառակությունների, միջավատական պատերազմների, իշխանության համար անընդմեջ կռիվների հետևանքով քայքայված տնտեսությամբ և նոսրացված բնակչությամբ մի երկիր: Ուստի նա սկսեց եռանդուն ջանքեր գործադրել գյուղատնտեսության, արհեստների և առևտրի զարգացման ուղղությամբ: Նա հրապարակեց մի շարք ֆերմաններ (հրամանագրեր), որոնք ինչ-որ չափով սահմանափակում էին գյուղացիության շահագործումը, նրանց նկատմամբ խաների սանձարձակ կամայականությունները: Խրախուսում էր վիթխարի չափերի հասնող հողերի յուրացումը, աշխատում էր վերականգնել նախկին մանուֆակտուրաները: Երկրում սկսվեց շինարարական եռուզեռ: Քերիմ խանն առանձնակի ուշադրություն դարձրեց իր մայրաքաղաք Շիրազի կառուցման ու բարեկարգման վրա: Քաղաքի շուրջը փորվեցին խորը պաշտպանական խանդակներ, որոնք լցվեցին ջրով, կառուցվեցին բարձր պարիսպներ, որոնցում թողնվեցին թնդանոթների համար կրակակետեր, իր համար կառուցված շքեղ պալատից բացի, ավելի փոքր չափսերի պալատներ կառուցվեցին նաև Քերիմ խանի եղբայրների և գլխավոր պալատականների համար: Կառուցվեց Շիրազի հայտնի բազարը, որը գոյություն ունի մինչև օրս, սլացիկ մզկիթներ, իրենց գեղեցկությամբ զարմացնող դամբարաններ և այլն: Քերիմ խանի հրամանով պարսիկ հանճարեղ բանաստեղծներ Սաադիի և Հաֆեզի գերեզմանների վրա կառուցվեցին աննման գեղեցկության դամբարաններ: Թեև ինքը՝ Քերիմ խանը, անգրագետ էր, սակայն մեծագույն հարգանքով էր վերաբերվում գիտնականների ու բանաստեղծների նկատմամբ: Նա ամեն կերպ խրախուսում էր գրականության ու արվեստի վերածնունդը, արքունիքում իրեն շրջապատում էր բանաստեղծներով, երաժիշտներով, գիտնականներով և այլն: Ի հակակշիռ Նադիր շահի կրոնական քաղաքականության, Քերիմ խանը հովանավորում էր շիիզմը և շիիթական հոգևորականությանը՝ միաժամանակ վարելով կրոնական հանդուրժողականության քաղաքականություն: Արտաքին առևտուրը զարգացնելու նպատակով Քերիմ խանն անողոք պայքար ծավալեց ավազակախմբերի դեմ՝ դրանով իսկ ապահովելով քարավանային ճանապարհների անվտանգությունը: Բացի այդ, նա աշխատում էր դյուրություններ հատկացնել եվրոպական վաճառականներին և առևտրական ընկերություններին՝ նրանց Իրանի արտաքին առևտրի

մեջ ներգրավելու համար: Այսպես՝ 1763 թ. հուլիսի 2-ին նա հրապարակեց մի հրամանագիր, որով անգլիական Օստ-Հնդկական ընկերությանը հատկացրեց Իրանում ցանկացած չափով հողեր ձեռք բերելու, Բենդեր-Բուշիրում և Պարսից ծոցի այլ նավահանգիստներում առևտրական գրասենյակներ (ֆակտորիաներ) բաց անելու իրավունք, նրանց թույլատրվեց առանց մաքսատուրքեր վճարելու ազատ առևտուր անել ողջ Իրանի տարածքում և այլն: Անգլիացիներն իրավունք էին ստանում անկաշկանդ կերպով ողջ Իրանի տարածքում կատարել կրոնական արարողություններ, նրանց ֆակտորիաները և ծառայողները ազատվում էին հարկահանումից և իրանական օրենսդրությանը ենթարկվելուց և այլն: Իրենց հերթին անգլիացիները պարտավորվում էին վատ չվերաբերվել մահմեդականների նկատմամբ, չհովանավորել իրենց տիրակալի դեմ ապստամբած իրանահպատակներին, չօգնել նրանց փախուստի դիմելու Իրանից և թաքնվելու այլ վայրերում, ապաստան չտալ նրանց, ոչ մի դեպքում յաղղակի կամ անուղղակի ձևով չօգնել Իրանի տիրակալի թշնամիներին և այլն: Նույնատիպ արտոնություններ նա հատկացրեց նաև հոլանդացիներին, որոնք այդ շրջանում ծավալում առևտրատնտեսական հարաբերություններ ունեին Իրանի հետ:

Քերիմ խանը փորձում էր աշխուժացնել նաև միջազգային առևտրով զբաղվող Նոր Ջուղայի հայ խոջաների առևտուրը՝ հույս ունենալով նրանց բերած եկամուտների հաշվին շենացնել երկիրը: «Թէ ի սկզբան զորանալոյ իւրոյ (Քերիմ խանի–Վ. Բ.) և թէ յամենայն ժամանակս թագաւորութեանն՝ սիրեաց սա զազգ հայոց, կարեկից գտաւ ջուղայեցւոց, վարեցաւ ընդ նոսա առանձին իմն խնամով, գթով և մարդասիրութեամբ»,- գրում է Նոր Ջուղայի պատմագիր Հ. Տեր-Հովհաննյանցը:

Քերիմ խանը տարիներ շարունակ պատերազմեց օսմանցիների դեմ, սակայն առանց շոշափելի հաջողություններ ձեռք բերելու: Որպես այդ պատերազմների հիմնավորման պատրվակ օգտագործվում էր շիիթների սրբազան քաղաքներ Քարբալան և Նաջաֆը ազատագրելու և պարսիկ ուխտավորներին օսմանցիների հետապնդումներից ազատելու վարկածը:

Այսպիսով՝ Քերիմ խանի տիրապետության շրջանում նրա պետության մեջ տիրեց հարաբերական հանգստություն: Իրանի նոր տիրակալն աշխատում էր իր գթասրտությամբ ձեռք բերել պարսիկների վստահությունը: Պատերազմների ժամանակ և Նաղիր շահի գազանությունների հետևանքով Իրանից տարբեր երկրներ փախած հազարավոր մարդկանց, այդ թվում նաև հայերի, վեքիլը հրավերներ էր ուղարկում՝ վերադառնալու Իրան և բնակություն հաստատելու անմարդաբնակ

դարձած քաղաքներում ու ավաններում: Դա պետական նշանակություն ունեցող կարևոր գործ էր, որի մասին պատկերացում կազմելու համար բավական է ասել, որ միայն Բաղդադում ապաստան գտած պարսիկների թիվը հասնում էր հարյուր հազարի: Իսկ Բասրայում նրանք կազմում էին բնակչության երկու երրորդը: Մեծ թվով մարդիկ Իրանում տիրող անիշխանությունից փախուստ տալով, իրենց ընտանիքներով ապաստան էին գտել Հնդկաստանում, Արաբական թերակղզում և մոտ ու հեռու այլ երկրներում:

Քերիմ խանի հրամանով զենք կրելու ընդունակ բոլոր տղամարդկանց ընդգրկեցին բանակի շարքերը, նրանց ստիպելով ենթարկվել կարգապահության: Ամեն ոք պետք է զբաղվեր որևէ հանրօգուտ աշխատանքով: Իշխանությունը ուժի օգնությամբ հարկադրում էր մարդկանց հրաժարվել անբան ու թափառաշրջիկ կյանքից:

Սակայն Քերիմ խանի կողմից երկրում արմատավորված հանգստությունը մի խաղաղ դադար էր փոթորկից առաջ: Ֆրանսիացի Պիկոյի դիպուկ արտահայտությամբ՝ այդ հանգստությունը ավելի շուտ նման էր մահվան անդորրին: Իրանում տիրող վիճակն այնպիսին էր, որ կարճ ժամանակամիջոցի ընթացքում հնարավոր չէր նրանում բեկում առաջ բերել: Ուստի այդ եռանդուն տիրակալի բոլոր փորձերը՝ վերակենդանացնելու կործանման եզրին հասած գյուղատնտեսությունն ու առևտուրը, չտվեցին ցանկալի արդյունքներ: Պատերազմների ամենակուլ երախը տարել էր մեծ թվով հողագործների, իսկ առևտրով զբաղվող մարդիկ, որոնք անվտանգության բացակայության պատճառով լքել ու հեռացել էին երկրից, չպատասխանեցին վերադարձի նրա կոչերին:

Իր բոլոր դրական հատկանիշներով հանդերձ՝ Քերիմ խանն իր ժամանակի և երկրում տիրող պայմանների ծնունդ էր, խառնվածքով տիպիկ արևելյան բռնակալ՝ մարդկանց այդ տեսակին բնորոշ բոլոր հատկանիշներով՝ անհագ ագահություն, կանանց, գինուն ու վայելքներին տրվելու անզուսպ ձգտում, անտարբերություն դեպի իր երկրի ու ժողովրդի ապագան: Նրան առավելապես հետաքրքրում էր մի բան՝ մինչև կյանքի վերջը ապրել խաղաղ պայմաններում՝ վայելելու համար կարճ ու ունայն կյանքի բոլոր քաղցրությունները:

Եթե նահանգների բեկլարբեկները իր կողմնակիցներն էին, ապա նրա ականջները խուլ էին նրանց հասցեին բողոքների նկատմամբ: Նա խուսափում էր լսել ընչազուրկ մարդկանց բողոքի ճիչը: Սակայն այն, որ նա 18 տարի շարունակ երկաթյա կամքով կարողացավ ապահովել երկրի հանգստությունը, Իրանի պատմության մեջ մեծ փառքով է պսակում նրա անունը:

Քերիմ խանն իր կյանքի վերջին օրերին ընկել էր ծանր մտորումների մեջ, որովհետև նրան գահաժառանգության իրավունք չէր վերապահված: Եվ նա հասկանում էր, որ իր արած գործերը իր հետ միասին գնալու են դեպի անէություն:

1779 թ. մարտի 13-ին Քերիմ խանը վախճանվեց մոտ 80 տարեկան հասակում: Նրա մահվան լուրն արագ տարածվեց ողջ երկրով մեկ, ժողովրդի շրջանում առաջ բերելով խորը տագնապի և անհանգստության զգացումներ: Հանգուցյալի դիակը դեռ հողին չհանձնած՝ նրա հինգ որդիների, ինչպես նաև իշխանության մարմաջով տարված ազգականների և նույնիսկ զորահրամանատարների միջև սկսվեց քաղաքական պատերազմ, որից 1782 թ. հաղթող դուրս եկավ Քերիմ խանի եղբորորդի Ալի Մուրադ խանը, որը գրավելով Սպահանը՝ իրեն հռչակեց շահ (1782-1785): Նրան հաջողվեց իրեն ենթարկել Իրանի մեծ մասը, ի բացառյալ հյուսիսային նահանգների և Կասպից ծովի առափնյա շրջանի, որոնք գտնվում էին դաջարների իշխանության ներքո:

«Թագավորակերպ ելուզակներից» պաշտպանվելու հոգսը ստիպում էր Ալի Մուրադ խանին՝ երկրից դուրս փնտրել դաշնակիցներ: Այդ նպատակով նա Ռուսաստան ուղարկեց իր ներկայացուցչին՝ ռուսական կառավարությանը առաջարկելու, որպեսզի կողմերի միջև ստորագրվի մի դաշնագիր Աղա Մուհամմադ խան Ղաջարի և Օսմանյան կայսրության դեմ համատեղ պայքար մղելու համար: Համաձայնության դեպքում Ալի Մուրադ խանն իր պատրաստակամությունն էր հայտնում ռուսներին զիջելու Երևանը, Նախիջևանը, Ղարաբաղը և Ղարադաղը, ինչպես նաև Կասպից ծովի առափնյա տարածքները, պայմանով, որ Ռուսաստանը ճանաչի Ալի Մուրադ խանին որպես Իրանի շահ:

Այդ առաջարկը հետաքրքրեց Եկատերինա Բ կայսրուհուն, և նա հետաձգելով ռուսական զորքերի պարսկական արշավանքը, 1784թ. Իրան ուղարկեց ռուս դիվանագետ, գնդապետ Վ. Ս. Տամարային: Վերջինս Ալի Մուրադ խանին պետք է ներկայացներ վեց կետից բաղկացած մի պայմանագիր, որն ընդունելու դեպքում Ռուսաստանը համաձայնվում էր Ալի Մուրադ խանին ճանաչել որպես Իրանի շահ: Ի դեպ, այդ պայմանագրի չորրորդ կետը պարունակում էր կայսրուհու պահանջը, որպեսզի «վերականգնվի Հայկական երկրամասը և նրա անկախությունը»: Սակայն գնդապետ Տամարայի առաքելությունն Իրանում նպատակին չհասավ Ալի Մուրադ խանի մահվան պատճառով: Տևական կռիվներից հետո նրան հաղթեց եղբայրը՝ Ջաֆար խանը (1785-1789): Սակայն մի շարք նահանգների կառավարիչներ չճանաչեցին նրան, և

նրա իշխանության չորս տարիներին Իրանը կրկին ներքին պատերազմների հորձանուտը: Իրանական պետությունը կրկին տրոհվեց: Ի վերջո՝ Ջաֆար խանը ևս սպանվեց, և նրա գլուխը դահիճները պատուհանից շպրտեցին հրապարակ՝ ի տես ամբողջ ժողովրդի:

Այսպիսով՝ տարիներ տևած արյունախանձ կռիվների ընթացքում զենդերը ոչնչացրին մեկը մյուսին՝ ղաջարների համար ճանապարհ հարթելով դեպի շահական գահը: Զենդերի դինաստիայի վերջին տիրակալ Լոթֆ Ալի խանի (1789-1796) կառավարման տարիներն ընթացան իրենց գլխավոր մրցակիցների՝ ղաջարների դեմ պայքարով:

Իրանը պատմության

նոր
դարաշրջանում

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՂԱՋԱՐՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՆ ԻՐԱՆՈՒՄ

1. ՂԱՋԱՐՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մինչ զենդերը պայքարում էին միմյանց դեմ, Իրանի հյուսիսում՝ Մազանդարանում ու Աստրաբադում, ամրապնդվում էին տվյալ պահին Իրանում առավել ուժեղ ցեղային կազմավորում հանդիսացող ղաջարները, որոնք արդեն XVIII դ. սկզբից ներգրավվել էին քաղաքական պայքարի մեջ՝ փայփայելով իրենց իշխանությունը ողջ Իրանի վրա տարածելու փառասիրական ձգտումներ: Այդ պայքարում նրանց աջակցում էին նաև Իրանի հյուսիսի մի շարք թյուրքական ցեղեր:

Ավանդությունը ղաջարական ցեղի ծագումը կապում է Սերթուկ-Նոյենի որդի Ղաջար Նոյենի հետ, որն Իրան էր եկել XIII դ. Հուլաղու խանի զորքերի հետ: Թյուրք-ղաջարների բազմանդամ տոհմը Ղազան-խանի ժամանակ ցրվեց ողջ Իրանով մեկ, իսկ Իլխանների պետության անկումից հետո տեղափոխվեց Սիրիա: Լանկ-Թամուրի ժամանակ նրանց տեղափոխեցին Երևանի և Գյանջայի շրջանները: Աղ-Ղոյունլու դինաստիայի կառավարման տարիներին ղաջարները կրկին բնակություն հաստատեցին բուն իրանական հողերի վրա: Հետագայում նրանք մտան յոթ ղզլբաշական ցեղերի կազմի մեջ, որոնք հանդիսանում էին առաջին Սեֆյանների հիմնական ռազմական ուժը:

Շահ Աբբաս Ա-ն, վախենալով նրանց քաղաքական ազդեցության վերելքից, ղաջարական ցեղը մասնատեց երեք մասերի և նրանց բնա-

կեցրեց Սեֆյան պետության տարբեր շրջաններում՝ Մազանդարանում, Ղարաբաղում և Մերվում: Ղաջարական այն ցեղերը, որոնք բնակվում էին Գորգան գետի ձախ ափին, կոչվում էին «յուխարի-բաշ» կամ «դուվալու» («վերին»), իսկ աջ ափին բնակվողներն անվանվում էին «աշաղի բաշ» կամ «քովանլու» («ստորին», «ներքին»): Նրանք մշտական պայքարի մեջ էին միմյանց հետ արոտավայրերի, ջրի և առհասարակ առաջնության ձեռք բերելու համար:

XVIII դ. սկզբին դուվալու ղաջարները սկսեցին բարձրանալ և տիրապետող դիրքեր ձեռք բերել, իսկ նրանց առաջնորդ Ֆաթհ Ալի խանն իրեն ենթարկեց Աստրաբադը: Դեռևս Սեֆյան շահ Թահմազ Բ-ի օրոք նա ստացավ սեվահասալարի (գլխավոր հրամանատարի) պաշտոն: 1744/45 թ. Մոհամմադ Հասան խան ղաջարը հանդես եկավ Նաղիր շահի դեմ, սակայն անհաջողություն կրելով՝ փախավ թուրքմենական տափաստան: Նաղիր շահի սպանությունից հետո (1747 թ.) նա վերադարձավ Աստրաբադ:

Իրանում ղաջարական դինաստիայի ապագա հիմնադիր Աղա Մոհամմադ խանը, որը Մոհամմադ Հասան-խանի որդին էր, ծնվել էր Աստրաբադում 1741 թ.: 1747 թ.՝ Նաղիր շահի սպանությունից հետո, ղաջարները ապստամբեցին՝ նպատակ ունենալով ձեռք բերել ինքնագլխություն: Նաղիրի եղբորորդի Ալի ղուլի խան Աֆշարին (Ադիլ շահին) հաջողվեց ապստամբությունը ճնշելիս գերել Մոհամմադ Հասան խանի երկու մանկահասակ որդիներին՝ Աղա Մոհամմադ-խանին և Հոսեյին ղուլի խանին: «Արդարամիտ» հորջորջված Ադիլ շահը հրամայեց ամորձատել վեց տարեկան Աղա Մոհամմադին: 1748-1762թթ. վերջինս ապրում էր թուրքմենական տափաստանում՝ իր մասնակցությունը բերելով զենդերի դեմ իր հոր՝ Մոհամմադ Հասան-խանի կազմակերպած արշավանքներին: 1759 թ. փետրվարին Մոհամմադ Հասան խանն ընկավ զենդերի ձեռքը և գլխատվեց: 1762 թ. Աղա Մոհամմադ խանն իր երկու եղբայրների՝ Հոսեյին ղուլի խանի և Ռեզա ղուլի խանի, ինչպես նաև մի քանի այլ ազգականների հետ որպես Քերիմ խան զենդի պատանդ, ուղարկվեց Շիրազ: Վաքիլը նրանց հետ վերաբերվում էր ոչ թե որպես գերիների, այլ ավելի շուտ որպես իր ընտանիքի անդամների՝ նույնիսկ նրանցից մեկին ամուսնացնելով իր ազգականուհու հետ:

Պատանդ եղած տարիներին Աղա Մոհամմադը կամ, ինչպես նրան անվանում էին, Ախթա խանը շատ ժամանակ էր հատկացնում ընթերցանությանը, ուսումնասիրում էր մարդկանց, ռազմական արվեստը, պետական գործերը: Բոլոր ժամանակակիցները նշում են, որ Աղա Մոհամմադը չափից ավելի փառասեր էր և շահական թագին տիրելու երազանքը

հավանաբար պատանեկության տարիներից հետապնդում էր նրան: Նա նաև համբերատար էր, ծածկամիտ ու կասկածամիտ, համառ ու եռանդուն և իր առջև դրված նպատակին հասնելու համար մեծ կամքով օժտված, խելոք և խորամանկ: Միաժամանակ իր մարմնական արատի պատճառով ծայրահեղ չարացած և սադիստորեն դաժան:

1774 թ. թուրքմեն-յոմուդների հետ բախումներից մեկի ժամանակ Աղա Մոհամմադի եղբայրը՝ Հոսեյին ղուլի խանը սպանվեց: 1779 թ. Քերիմ խան զենդի մահվանից հետո Աղա Մոհամմադը փախավ Շիրազից, սկզբում մեկնելով Թեհրան, իսկ ապա հայտնվելով Մազանդարանում, որտեղ նա անմիջապես համառ պայքար սկսեց իր եղբայրների դեմ՝ ղաջարական ցեղի առաջնորդի դիրքը ձեռք բերելու համար: Նա այդ պայքարի մեջ մտավ հասուն տարիքում՝ ուժերի ծաղկման շրջանում, երբ ուներ նաև կյանքի մեծ փորձ: Այդ անզիջում պայքարից դուրս եկավ հաղթանակով և արդեն 80-ական թթ. սկզբին կարողացավ իրեն ենթարկել Մազանդարանը, Աստրաբադն ու Գիլյանը: Դրանից հետո նա իր ողջ ուշադրությունն ու ուժերը ուղղեց զենդերի դեմ պայքարին: 1782 թ. մի պահ Աղա Մոհամմադ խանի վիճակը դարձավ օրհասական, մանավանդ որ իր եղբայր Մորթազա ղուլի-խանը իր զորքերով անցավ զենդերի կողմը: Սակայն 1785 թ. Ալի Մուրադ-խան զենդի մահը արծակեց Աղա Մոհամմադ-խանի ձեռքերը, որը 500-600 հոգուց բաղկացած մի ոչ մեծ ջոկատով Մազանդարանից շարժվեց դեպի Թեհրան և գրավեց այն: Այդ նույն 1785 թ. հաջողվեց նվաճել նաև Ղումը, Քաշանը և Սպահանը: Ստեփաննոս երեց պատմիչը, որը ականատեսն էր Սպահանի գրավմանը, գունեղ կերպով նկարագրում է հայերի ապրած տառապանքները. «Մարք լային զղստերս իւրեանց, հարք զորդիսն, եղբարք՝ զեղբարսն և զքորսն, և արք լային զկանայս իւրեանց. իսկ գերեալքն ողբային զծնողսն, զսիրելիս և զբարեկամս հւրեանց: Ճչումն գերելոց, աղաղակ հարցն, սուգ առնուլ մարցն, աղիողորմ հառաչումն քերցն, կոծումն սիրելեաց, մորմոքումն բարեկամաց, բառաչումն անասնոց և կսկիծ տեսողացն՝ էին իբրև որոտմունք ամպոց: Եղև գերեվարութիւնն այն ի 23 յուլիսի ամսոյ յամի 1785»: Ականատեսների վկայությամբ՝ նախկինում ոչ մի անգամ, նույնիսկ աֆղանների արշավանքի ժամանակ, Սպահանը չէր տեսել այդպիսի սարսափներ ու արհավիրք: Ղաջարների բյուրք զինվորների բարբարոսություններն ու դաժանությունները աներևակայելի էին:

Իշխանության համար պայքարում Աղա Մոհամմադ խանը հենվում էր ղաջարների և մի շարք խոշոր բյուրքական ցեղերի խաների վրա: Նա վարպետորեն օգտագործում էր բազմաթիվ մանր ցեղերի խաների դժգո-

հությունը զենդերից, որոնք, նրանց կասկածելով դավաճանության մեջ, անլուր հալածանքների էին ենթարկում՝ նետելով զնդանները, կուրացնելով ու սպանելով նրանց: Մինչդեռ Աղա Մոհամմադ խանն իր դաշնակից խաներին շնորհում էր հողային տիրույթներ, նրանց նշանակում տարբեր պաշտոնների և այդ ճանապարհով շահում նրանց աջակցությունը:

1785 թ. զենդերի առաջնորդներից մեկի՝ Ջաֆար խանի նկատմամբ Աղա Մոհամմադի տարած հաղթանակը ստիպեց Ատրպատականի, Քրդստանի և Պարսկական Իրաքի (Իրաք-ե աջմի կամ Կենտրոնական Իրան) բազմաթիվ խաների անցնել դաջարների կողմը: 1790 թ. Աղա-Մոհամմադ խանը իր բանակը շարժեց Ատրպատական, որտեղ ջախջախեց իրենց անկախ հռչակած Սաղեղ խան Շեքքաքիին և Մոհամմադ դուլի խան Աֆշարին: Իրանի հյուսիսում դաջարների ամենաուժեղ հակառակորդը Ալի խան Աֆշարին էր: Աղա Մոհամմադը նրան խոստացավ գլխավոր վեզիրի և ողջ Հյուսիսային Իրանի կառավարչի պաշտոնը: Երբ այդ խոստումներից գայթակղված՝ Ալի-խանը անցավ Աղա-Մոհամմադի կողմը, վերջինս կուրացրեց նրան: Աղա Մոհամմադի անագորույն վրիժառությունից խուսափելու համար Ատրպատականի մնացած խաները ժամանեցին Թավրիզ, Աղա-Մոհամմադի ոտքը՝ հայտնելով նրան իրենց հնազանդությունը:

Այնուհետև Աղա Մոհամմադը ձեռնամուխ եղավ թուրքմենական խաների ընկճմանը: Թուրքմեն-յոմուդների այն խաները, որոնք հրաժարվում էին ճանաչել նրա իշխանությունը, սպանվեցին կամ ստրկացվեցին: Անհնազանդների կտրված գլուխներից կառուցվեց բուրգ: Աղա Մոհամմադ խանի այդ դաժանության լուրը տարածվեց ամբողջ Իրանով մեկ՝ սարսափ և վիատություն առաջ բերելով բոլորի մոտ: Դա խանի կողմից ճշգրիտ քաղաքական հաշվարկ էր, որը միտված էր անդամալուծելու մարդկանց կամքը:

Զենդերի մայրաքաղաք Շիրազը Աղա Մոհամմադը գրավեց 1791 թ.: Դա նրան հաջողվեց համարյա առանց դիմադրության, որովհետև քաղաքի քալանթար (քաղաքապետ) Հաջի Իբրահիմը դավաճանեց Լոթֆ Ալի խան զենդին: Զենդերի գանձարանը և հարստություններն անցան Աղա Մոհամմադ խանին, իսկ Շիրազն ավերվեց: Աղա-Մոհամմադը հրամայեց քանդել Քերիմ-խան զենդի գերեզմանը և նրա ոսկորները տեղափոխել Թեհրան ու թաղել Գյուլիստանի իր պալատի մուտքի առջև, որպեսզի ամեն անգամ ինքն անցնի իր ոխերիմ թշնամու ոսկորների վրայով: Միայն 1926 թ., իրանական մեջլիսի որոշմամբ, Քերիմ խանի աճյունը հողին հանձնվեց, և նրա գերեզմանի վրա կառուցվեց հուշարձան:

1791 թ. Աղա Մոհամմադի եղբորորդին՝ Բաբա խանը (Ֆաթհ Ալի խան), ջախջախեց Քերմանում թաքնվող զենդերի վերջին տիրակալ Լոթֆ

Ալի-խանին: Ղաջարների և զենդերի միջև վերջին արյունահեղ բախումը տեղի ունեցավ Քերմանի մոտ 1794 թ.: Այդ քաղաքը հինգ ամիս շարունակ դիմադրում էր, սակայն, ի վերջո, գրոհով վերցվեց: Լոթֆ Ալի-խանը լքեց իր կողմնակիցներին և ճողոպրեց, երբ դեռ նույնիսկ պարզ չէր ճակատամարտի ելքը: Քերմանի բնակչությունը ենթարկվեց դաժան դատաստանի: Նրա մեծ մասը սրի քաշվեց, երեխաները որպես ստրուկներ բաժանվեցին զինվորների միջև, իսկ 8 հազար կանանց հանձնեցին զինվորներին՝ հաճույք վայելելու համար: Ղաջարական զորքերին իրավունք տրվեց երեք օր շարունակ կողոպտել բնակիչներին, 20 հազար տղամարդ կուրացվեց:

Բամ քաղաքում Լոթֆ Ալի խանը բռնվեց Աղա Մոհամմադի մայրկանց կողմից: Ղաջարների խանն անճամբ հանեց նրա աչքերը, հրամայեց կտրել նրա ոտքերն ու ձեռքերը, որից հետո խեղդամահ արեցին: Ի նշանավորումն զենդերի նկատմամբ տարած հաղթանակի, Աղա Մոհամմադ խանը հրամայեց 600 գերիների գլխատել և նրանց գլուխներից կառուցել բուրգ: Այսպիսով՝ Զենդերի դինաստիան 1794 թ. դադարեց գոյություն ունենալուց: Իրանական պատմաբանների մեծ մասի կարծիքով, զենդերը իրանցիների հիշողության մեջ մնացին որպես մարդկային բարեմասնություններով օժտված, արդար, գթասիրտ և բարյացակամ մի դինաստիա:

Աղա Մոհամմադ խանը քայլ առ քայլ իրագործում էր մեծ կայսրություն ստեղծելու իր երազանքը: Նա իր գերիշխանությունը հաստատեց համարյա ողջ Իրանի տարածքի վրա, բացառությամբ Խորասանի, որտեղ կառավարում էր Նաղիր շահի հետնորդներից մեկը, ինչպես նաև մի շարք ծայրամասային կիսանկախ տարածքների: Սակայն փառասիրությամբ տարված խանը իր լայնածավալ պետության կազմի մեջ էր ձգտում մտցնել ոչ միայն նշված տարածքները, այլև ողջ թուրքմենական տափաստանը, անդրկովկասյան խանությունները, Վրաստանը, Հերաթի խանությունը և ողջ Քրդստանը:

Դեռևս 1785 թ. Աղա Մոհամմադ խանն իր մայրաքաղաքը դարձրեց Թեհրանը, որն այն ժամանակ մի փոքր և աննշան քաղաք էր, սակայն ուներ այն առավելությունը, որ մոտ էր ընկած իրեն հենարան հանդիսացող ցեղերի բնակության վայրերին: Թեհրանի շուրջը կային նաև լավ արոտավայրեր, որոնք անհրաժեշտ էին ղաջարական զորքերի կորիզը հանդիսացող հեծելազորին:

1794 թ. վերջին Աղա Մոհամմադը սկսեց պատրաստություններ տեսնել դեպի Շիրվան և Վրաստան արշավանք կազմակերպելու համար: Նրան լուրեր էին հասել, որ դեռևս 1783 թ. Քարթլիի և Կախեթի թագավոր Հերակլ (Իրակլի) Բ-ն Ռուսաստանի հետ ստորագրել է Գեորգիևյան

պայմանագիրը Արևելյան Վրաստանի նկատմամբ ռուսական հսկողություն սահմանելու վերաբերյալ: Դա Աղա Մոհամմադի կողմից գնահատվեց որպես Իրանի վասալի դավաճանություն: Ուստի արշավանքը դեպի Վրաստան կրելու էր պատժիչ բնույթ: Սակայն, մինչև ռազմական գործողությունների դիմելը՝ Աղա-Մոհամմադը որոշեց փորձել հարցի լուծման դիվանագիտական ճանապարհը: Նա նամակով Հերակլին կանչեց Թեհրան: Սակայն վերջինս, տեղյակ լինելով, որ խանը հավաքել է մեծաթիվ զորքեր, փորձեց ժամանակ շահել, մինչև որ Ռուսաստանը, իր տված խոստման համաձայն, օգնական զորքեր կուղարկեր Վրաստան: Երբ ռուսներից բանակի փոխարեն նա ստացավ մի քանի ջոկատներ, հասկացավ, թե ինչ ճակատագիր է սպասում իրեն, և որոշեց խիզախորեն ընդունել այն:

1795 թ. գարնանը Աղա Մոհամմադը, 60-հազարանոց բանակի գլուխ անցած, շարժվեց դեպի հյուսիս, որպեսզի ոչ միայն պատժի անհնազանդ վրացական թագավորին և Վրաստանը ենթարկի իրեն, այլև վերստին նվաճի ողջ Անդրկովկասը և Դաղստանը, որոնց խաներն ու տիրակալները հայտարարել էին իրենց անկախության մասին, կամ, փաստորեն, վաղուց արդեն դարձել էին Իրանից անկախ:

Ռազմարշավի ճանապարհին Աղա Մոհամմադը, Շուշի քաղաքում հանդիպելով ուժեղ դիմադրության, այդպես էլ չկարողացավ գրավել այն և Ղարաբաղի բնակչությանը ենթարկելով անխնա կողոպուտի՝ շարժվեց դեպի Թիֆլիսի կողմը՝ պատժելով նաև թալիշներին, որոնք կապերի մեջ էին մտել Ռուսաստանի հետ: 1795 թ. սեպտեմբերին պարսկական զորքերը մոտեցան Թիֆլիսին, ջախջախեցին վրացական փոքրաթիվ բանակը և գրոհով վերցրին Թիֆլիսը: Իրակլի թագավորն իր մերձավորների հետ թաքնվեց լեռներում: Վրաստանի մայրաքաղաքը հիմնովին ավերվեց, բազմաթիվ շինություններ կրակի ճարակ դարձան, ութ օր շարունակ զավթիչները կոտորում էին Թիֆլիսի բնակչությանը, որի մի զգալի մասը հայեր էին: Վրացական թագավորի հարստությունները հափշտակվեցին, իսկ ավելի քան 22 հազար մարդու քշեցին Իրան՝ ստրկության:

Եկատերինա Բ-ի կառավարությունը, որը Հերակլին, ինչպես նաև Անդրկովկասի խանություններին խոստացել էր օգնություն, այդպես էլ չկատարեց իր խոստումը:

Այդ ողբերգական իրադարձությունների ժամանակ ռուսական զորքերը գեներալ-մայոր Սավելևի հրամանատարությամբ կանգնած էին Վրաստանի սահմանամերձ շրջաններում: Պատրվակ բռնելով իրենց փոքրաթիվությունը, նրանք բացարձակապես մասնակցություն չունե-

ցան ռազմական գործողություններին և նրանց աչքի առջև իրենց դաշնակից Հերակլ թագավորը, որը մինչև վերջ հավատարիմ էր մնացել ռուսներին, զրկվեց գահից:

Երևանի Մոհամմադ խան ղաջարը, Էջմիածնի կաթողիկոսը, Դերբենտի, Բաքվի և Գյանջայի խաները շտապեցին իրենց հնազանդությունը հայտնել Աղա-Մոհամմադ խանին: Այդ քալանչիական արշավանքը դեպի Վրաստան և Աղա Մոհամմադի ահավոր գազանությունները առաջ բերեցին Անդրկովկասի ողջ բնակչության, հատկապես ոչ մահմեդականների անզուսպ ատելությունը ղաջարների նկատմամբ:

Վրաստանից վերադառնալուց հետո Աղա Մոհամմադ խանը պահը միանգամայն հարմար համարեց իրեն Իրանի շահ հռչակելու համար: 1796թ. մայիսին Մուղանի տափաստանում կազմակերպվեց թագադրման հանդիսավոր արարողություն: Էմիրները, խաները, զորահրամանատարները, ցեղապետները, շիիթական հոգևորականության բարձրաստիճան ներկայացուցիչները և այլք Աղա Մոհամմադին ճանաչեցին որպես իրենց շահ: Այսպիսով՝ Իրանի գահի վրա կրկին հաստատվեց թյուրքական դինաստիա, որը կոչվեց Ղաջարների դինաստիա, և որն այդ երկիրը կառավարեց մոտ 130 տարի:

Թագադրման ժամանակ Աղա Մոհամմադ շահը (1796-1797) հայտարարեց. «Ես երբեք չեմ համաձայնվի թագ կրել, քանի դեռ նրան չեմ ավելացրել ողջ այն իշխանությունը, որից մինչև այժմ դեռ երբեք չի օգտվել Պարսկաստանի տիրակալներից որևէ մեկը»: Աղա Մոհամմադ շահը երազում էր ստեղծել ճիշտ այնպիսի իրանական մեծ պետություն, ինչպիսին էր Սեֆյան տերությունը: Նա գտնում էր, որ Իրանն ունի ներքին ներուժ՝ ուժեղ պետության վերածվելու համար, որն ի վիճակի կլիներ վարելու եռանդուն ու ինքնուրույն քաղաքականություն և ազդեցություն գործելու հարևան երկրների ու ժողովուրդների վրա: Նա հրաժարվեց իր գլխին կրել Նաղիր շահի չորս փետուրանոց թագը, որը խորհրդանշում էր արքայական տիրապետությունը Իրանի, Աֆղանստանի, Հնդկաստանի և Մերձին Ասիայի նկատմամբ: Նրան թագադրեցին մի ոչ մեծ թագով և մեջքին կապեցին Արդեբիլում շեյխ Սեֆի-էդ-դինի դամբարանում օրհնված արքայական մի սուր, որը խորհրդանշելու էր Սեֆյանների իշխանության շարունակականությունը և Աղա Մոհամմադի նվիրվածությունը շիիզմին:

Շահ դառնալուց հետո նա անագորույն դաժանությունը մինչև իր կյանքի վերջը դարձավ Աղա Մոհամմադի կառավարման ոճը: Ծայրահեղ կասկածամիտ ու դաժան շահը հազարներով ոչնչացնում էր իր իրական և ենթադրյալ թշնամիներին. մի մասին նա ցից էր բարձրացնում,

մյուսներին գցում էր վանդակը, որպեսզի վագրերը հոշոտեն և այլն: Նրա օրոք ոչ ոք չէր համարձակվում մտածել անգամ օրինականության ու արդարության մասին: Այդ բռնակալը սիրում էր անվերապահ հնազանդությունը: Նա ոչ ոքի չէր վստահում: Ահավոր հիվանդագին էր ընդունում իր ֆիզիկական ոչ լիարժեքությունը: Նրանից վախենում էին բոլորը: Նույնիսկ իր մերձավորների մտքով չէր անցնում որևէ բան խնդրել շահից:

Մոհամմադ Հասան խան դաջարն ուներ ինը զավակ: Աղա Մոհամմադը նրանցից ավագն էր: Նրա հարազատ եղբայր Հոսեյին դուլի խանը, որն իր դաժանության պատճառով ստացել էր «ջահանսուզ» (աշխարհին այրող) ոչ պատվաբեր մականունը, սպանվել էր իր իսկ թուրքմեն ծառաների կողմից: Մյուս եղբայրը՝ Ռեզա դուլի խանը, Աղա Մոհամմադի դեմ անհաջող ելույթից հետո, վախենալով եղբոր վրիժառությունից, փախել էր Խորասան և շուտով այնտեղ մահացել: Մորթազա դուլի խանը, որը նույնպես երկար ժամանակ պայքար էր մղում եղբոր դեմ, ստիպված էր փախչել Ռուսաստան, որտեղ և (Պետերբուրգում) մահացավ: Մուստաֆա դուլի խանը եղբոր դեմ անհաջող ելույթից հետո կուրացվեց: Ջաֆար դուլի-խանը, որը բանակի և ժողովրդի սիրելին էր և օգնել էր Աղա Մոհամմադին իշխանությունը զավթելու գործում, Մազանդարանում նշանակվեց մի աննշան շրջանի կառավարիչ և վիրավորվելով հրաժարվեց ոտքն արքունիք դնել: Նա մոր խնդրանքով վերադարձավ Թեհրան, որտեղ և սպանվեց: Այդ սպանության առթիվ շահը իր ազգական Բաբա խանին, որը դրանից քիչ առաջ հայտարարվել էր գահաժառանգ, ասաց, որ սպանությունը կատարվեց նրա հանգստության համար, «որպեսզի այդ առաքինի մարդը (Ջաֆար դուլի խանը–Վ. Բ.) չկարողանա քո գլխից հափշտակել թագը»:

Աղա Մոհամմադի վեցերորդ եղբայր Ալի դուլի խանը, լսելով Ջաֆար դուլի խանի սպանության մասին, խնդրեց իր հորեղբորորդի Բաբա-խանին՝ շահին փոխանցել հետևյալը. «Ես լսել եմ, որ Դուք ինչ-որ առիթով ասել եք Ձեր մերձավորներից մեկին. «Քանի այս աշխարհից չվերացնեմ իմ եղբայրներին, ես իմ թագավորելը չեմ համարի կայուն և անվտանգ»: Այժմ ես դա տեսնում եմ և գիտեմ, որ Դուք չեք շրջանցի նաև ինձ: Ինչ որ անելու եք, արե՛ք արագ»: Աղա Մոհամմադ շահը պատասխանեց. «Ինչ որ լսել ես, ճիշտ է: Ես այդ մտադրությունը ունեցել եմ իմ հոր որդիների, բայց ոչ թե նրա աղջիկների նկատմամբ: Ես քեզ համարում եմ Մոհամմադ Հասան խանի աղջիկը»: Այնուհետև նամակով դիմելով Բաբա խանին՝ Աղա Մոհամմադ շահը գրում էր. «Քանի դեռ ես կենդանի եմ, իմ եղբայր Ալի դուլի խանը Մոհամմադ Հասան խանի աղջիկն է: Երբ թագա-

վորելու հերթը կհասնի քեզ, նա կդառնա Մոհամմադ Հասան խանի որդին, և դու որքան կարելի է շուտ, կուրացրո՛ւ նրան: Երբ ղաջարական ազնվականությունն ու Իրանի առաջնորդները կտեսնեն, որ դու կուրացրիր իմ եղբորը և Մոհամմադ Հասան խանի որդուն, դու ձեռք կբերես ուժ և հզորություն»: Գահ բարձրանալուց հետո Բաբա խանը (Ֆաթհ Ալի շահը) անհապաղ հետևեց իր հորեղբորորդու խորհրդին:

Աղա Մոհամմադ շահի միայն երկու եղբայրները մահացան բնական մահով: Մի առիթով նա ասել է. «Ես այդ ողջ արյունը թափեցի միայն նրա համար, որպեսզի Բաբա խանը կարողանա հանգիստ թագավորել»:

Աղա Մոհամմադ շահին հանգիստ չէին տալիս նաև Մեշհեդում գտնվող Նաղիր շահի անհամար գանձերը: Ուստի նա կազմակերպեց արշավանք դեպի Խորասան, որտեղ կառավարում էր Նաղիր շահի թոռ, կույր Շահրուխի որդին՝ Նաղիր միրզան: Շահը թուրքմենական հողերով անցավ «հրով և սրով» ցուցադրելով իր իշխանությունը և իրանական քաղաքների և գյուղերի վրա թուրքմենների կազմակերպած ասպատակությունների համար նրանց պատժելու իր ունակությունն ու վճռականությունը: Շահը գերեվարեց թուրքմենների բազմաթիվ կանանց ու երեխաների և որպես ստրուկ վաճառեց «եսիր-բազարներում» (ստրկավաճառանոցներում):

Նաղիր միրզան, տեղեկանալով, որ շահական զորքերը մոտենում են Խորասանին, իր կույր հորը՝ Շահրուխին, թողեց ճակատագրի քմահաճույքին և եղբայրների հետ փախավ Աֆղանստան: Շահրուխը բանկարծեք ևվերներով ընդառաջ գնաց շահին և առանց մարտի հանձնեց Մեշհեդը: Աղա Մոհամմադը հրամայեց տանջանքների ենթարկել այդ կույր ծերունուն, որպեսզի ցույց տա, թե որտեղ են պահված Հնդկաստանից բերված Նաղիր շահի գանձերը: Ծերունու գլխին լցնում էին հալեցրած կապար: Չդիմանալով դժոխային ցավերին՝ Շահրուխը հայտնեց, որ գանձերը պահվում են Մեշհեդի իման Ռեզա մզկիթում: Հենց դա էլ հանդիսացավ նրա մահվան դատավճիռը: Նրան տեղնուտեղը սպանեցին:

Խորասանի նվաճումից և Նաղիր շահի առասպելական հարստություններին տիրանալուց հետո Աղա Մոհամմադ շահը որոշեց իր երկրորդ արշավանքը կազմակերպել դեպի անդրկովկասյան խանությունները և Վրաստան՝ նրանց կատարելապես ընկճելու և Անդրկովկասում տեղակայված ռուսական զորքերին վտարելու նպատակով: Թեև ինքը ավերել էր Վրաստանը, սակայն ռուսները դեռևս գտնվում էին այնտեղ: Աղա Մոհամմադը որոշել էր նրանց ընդմիշտ հեռացնել Վրաստանից: 1797 թ. գարնանը Աղա Մոհամմադի զորքերն անցան Արաքսը: Կովկասի տեղական կառավարիչների անունով ուղարկվեցին շահական ֆիր-

մաններ, որոնցում պահանջվում էր ճանաչել Իրանի գերագույն իշխանությունը: Անհնազանդներին հրամանագիրը սպառնում էր չարաչար պատիժների ենթարկել:

Շահական զորքերի առաջապահ ջոկատները, թվով 16 հազար հեծյալներ, պարտության մատնեցին Վ. Ա. Զուբովի հրամանատարությամբ գործող ռուսական հետևակին, որի մնացուկները ստիպված եղան թաքնվել Դերբենտի ամրոցի պատերի հետևում:

Աղա Մոհամմադ շահը գրավեց Ղարաբաղի խանությունը և կանգ առավ Շուշիում՝ սպասելով, թե երբ ռուսական զորքերը կհեռանան Անդրկովկասից (Իրանում տեղյակ էին Ռուսաստանի նոր կայսր Պավել Ա-ի հրամանին՝ Վրաստանից ռուսական զորքերի դուրս բերման և գեներալ Զուբովի արշավանքի դադարեցման վերաբերյալ): Շուշին գրավելուց հետո Ղարաբաղի Իբրահիմ Խալիլ խանը փախավ Դաղստան: Իսկ Իրակլի Բ-ի վիճակը Վրաստանից ռուսական զորքերի դուրս գալուց հետո դարձավ ուղղակի օրհասական, որովհետև նա չէր պատասխանել շահի նամակներին: Սակայն այդ օրերին տեղի ունեցավ մի իրադարձություն, որը միանգամից փոխեց իրադրությունը ինչպես Իրանում, այնպես էլ Կովկասում: 1797 թ. մայիսի 14-ին Շուշիի բերդի իր վրանում գիշերով՝ քնած ժամանակ, Աղա Մոհամմադ շահը սպանվեց իր ծառաների կողմից, որոնց ինչ-որ մեղքի համար շահը դատապարտել էր մահվան, և լուսաբացին պետք է վճիռը ի կատար ածվեր: Մեկ այլ վարկածի համաձայն՝ շահին սպանողները կապված էին նրանից դժգոհ խաների հետ, որոնք ձգտում էին վերացնել նրան և հափշտակել իշխանությունը: Այլ կերպ ասած՝ շահը զոհ գնաց կազմակերպված դավադրության:

Բացահայտված մարդասպանները սրախողխող արվեցին ղաջարական տոհմի ազնվազարմ տիկնանց կողմից: Շահի մարմինը տեղափոխվեց Մեշհեդ, որտեղ հողին հանձնվեց:

Աղա Մոհամմադի սպանությունը կանխեց արշավանքը դեպի Վրաստան: Շահական բանակի շարքերում սկսվեցին անկարգություններ: Զորամասերի հրամանատար խաները և ցեղերի առաջնորդները ինքնագլուխ կերպով սկսեցին հեռանալ իրենց տիրույթները: Բանակն ապագրեն ցրվում էր: Այս ընդհանուր խուճապի և խառնաշփոթության օրերին Իրանում գահի շուրջը ծավալվեց պայքարի նոր ալիք:

Դեռևս իր կենդանության օրոք շահը որպես իր ժառանգորդ նշանակել էր Ֆաթհ Ալի խանին (Բաբա խան), որը հանդիսանում էր Ֆարսի նահանգի կառավարիչ և շահի սպանության ժամանակ գտնվում էր Շիրազում: 25 տարեկան այդ երիտասարդ իշխանազունը, ստանալով շա-

հի մահվան գույժը, իր ոչ մեծաթիվ զորքի գլուխ անցած, անմիջապես շարժվեց դեպի Թեհրան: Շահական գահի նկատմամբ մի քանի այլ հավակնորդների հետ համեմատաբար ոչ տևական պայքարից հետո՝ 1798 թ. մարտին (հիջրեթի 1212 թ. նովրուզի օրը), Բաբա խանը թագադրվեց շահական գահի վրա՝ ընդունելով Ֆաթհ Ալի շահ (1798-1834) գահակալական անունը: Նա համարվում է Իրանի երկարակյաց շահերից մեկը՝ կառավարելով ավելի քան 36 տարի:

Իր մերձակա ազգականների նկատմամբ վերաբերմունքի հարցում նոր շահը խստիվ հետևում էր Աղա Մոհամմադի քաղաքականությանը: Նա անմիջապես հրամայեց կուրացնել իր հորեղբայր Ալի ղուլի խանին (ինչպես որ պատգամել էր նրան հանգուցյալ շահը), իսկ մոր մահվանից հետո, որն իր կենդանության օրոք աղերսում էր ձեռք չտալ հարազատ եղբորը՝ Հուսեյն ղուլի խանին, կուրացրեց նաև նրան: Ղաջարական խանների կրտսեր սերնդին շահը չէր հետապնդում: Ընդհակառակը, նրանց առաջ էր քաշում առավել պատվավոր ու կարևոր վարչական պաշտոնների:

XIX դ. բազմաթիվ հեղինակներ հակված են շեշտելու Ֆաթհ Ալի շահի երեք «արժանիքները»՝ բացառիկ երկար մորուքը, նրբագեղ իրանը և արտասովոր բեղունությունը: Շահն ուներ մոտ երկու հազար ժառանգորդներ՝ 57 որդի, 46 դուստր, 296 թոռ, 292 թոռնուհի և բազմաթիվ ծոռներ: Շահական պալատը բաղկացած էր մոտ 1000 կանանցից ու հարճերից, որոնցից 158 կանայք շահի համար ծնել էին զավակներ: Շահական արքունիքում և առհասարակ Իրանի քաղաքական կյանքում Ֆաթհ Ալի շահի կանայք խաղում էին կարևոր դեր: Օրինակ՝ շահի կանանցից մեկը՝ Գյուլբադան բաջին, ոչ միայն կառավարում էր հարեմը, այլև հանդիսանում էր պետության գանձապահը («խազնի օդ-դոուլե»)՝ ստանալով «սանդուխտար» տիտղոսը: Իսկ շահի աղջիկներից մեկը՝ խելացի ու կրթված Շահրեկում խանում Զիա էս-սալթանեն, որն ուներ չափազանց ազդեցիկ դիրք, ապրում էր հարեմից առանձնացված մի պալատում, և քանի դեռ շահը կենդանի էր, չէր ամուսնանում, որովհետև զբաղված էր պետական կարևոր գործունեությամբ. նա էր գրում շահի առավել գաղտնի նամակները: Նրան էր բաժին հասել մոր ամբողջ զարդեղենը և թանկարժեք իրերը, որի շնորհիվ նա ֆինանսական կախում չուներ որևէ մեկից, ինչը նրան տալիս էր գործողությունների կատարյալ ազատություն:

Իրանական պատմաբանների վկայությամբ՝ Ֆաթհ Ալի շահը ռազմաշունչ հակումներ ունեցող մարդ չէր և աշխատում էր խուսափել պատերազմներին անձամբ մասնակցելուց: Սակայն շահը բացառիկ ընդունակություններ էր հանդես բերում գահի նկատմամբ հավակնորդների

դեմ պայքարում և ծայրամասային խաների ու նահանգապետների անջատողական ելույթները ճնշելու գործում: Միաժամանակ նա զուրկ չէր դիվանագիտական տաղանդից:

Հենց Ֆաթհ Ալի շահի կառավարման շրջանում Իրանը դարձավ Մերձավոր ու Միջին Արևելքում բարդ միջազգային քաղաքականության օբյեկտ և սուբյեկտ: Չնայած իր հասարակական-քաղաքական և տնտեսական հետամնացությանը՝ XVIII դ. վերջին Իրանը չէր հանդիսանում ոչ գաղութային և ոչ էլ արևմտաեվրոպական պետություններից կախյալ երկիր: Նա կատարելապես անկախ մի պետություն էր: Եվրոպական տերությունների դիրքերն այդ երկրում դեռևս շատ թույլ էին, ուստի նրանց շահերը սահմանափակվում էին լոկ առևտրական հարաբերությունների շրջանակներում: Եվրոպական տերությունները որևէ էական ազդեցություն չունեին նաև Իրանի ներքին ու արտաքին քաղաքականության վրա: Սակայն, XVIII դ. վերջից Մերձավոր ու Միջին Արևելքը միջազգային հարաբերություններում ձեռք է բերում հատուկ կշիռ, և ըստ այնմ մեծանում է եվրոպական տերությունների հետաքրքրությունը Իրանի նկատմամբ: Այդ երկիրը ընդգրկվում է եվրոպական քաղաքականության շրջանակների մեջ: Նախկինի պես իրանական շուկան դեպի իրեն էր հրապուրում անգլիական և ֆրանսիական բուրժուազիային: Սակայն նորը այն էր, որ Եվրոպայի քաղաքական շրջաններում սկսեցին գիտակցել նաև Իրանի գրաված կարևորագույն ստրատեգիական դիրքի նշանակությունը Ռուսաստանի և Օսմանյան կայսրության սահմանների մոտ և Հնդկաստանի ու Միջին Ասիայի մատույցներում:

Անգլիայում տեղի ունեցած արդյունաբերական հեղաշրջումը և XVIII դ. վերջի ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը հուժկու մղում հաղորդեցին Եվրոպայի այդ երկու առաջատար պետությունների հետաքրքրությունների մեծացմանը Իրանի նկատմամբ: Նրանց միջև բորբոքված անզիջում պայքարի կիզակետում էր գտնվում նաև Եվրոպայից դեպի Հնդկաստան տանող ծովային ճանապարհների վրա կարևորագույն դիրքեր գրավող իրանական լայնարձակ պետությունը: 1798 թ. Նապոլեոնի եգիպտական արշավանքի ձախողումից հետո, որը ձեռնարկվել էր դեպի Հնդկաստան տանող ծովային ճանապարհների վրա Ֆրանսիայի անբաժան տիրապետությունը հաստատելու նպատակով, Բոնապարտը սկսեց մշակել ցամաքային արշավանքի պլան, որի իրականացումն անհնարին էր առանց Օսմանյան կայսրության և Իրանի տարածքն օգտագործելու: Այդ հարցերի վերաբերյալ նախնական զոնդաժ կատարելու, իսկ հնարավորության դեպքում նաև ֆրանս-թուրք-

իրանական մի դաշինք կնքելու նպատակով Նապոլեոնը 1796 թ. Թեհրան ուղարկեց իր երկու ներկայացուցիչներին՝ բնագետ գիտնականներ Լամարք-Օլիվիեին և Բրյուգերին: Նույն թվականի հուլիսին ժամանելով Թեհրան՝ նրանք Իրանի առաջին վեզիր Հաջի Իբրահիմին հանձնեցին Կ. Պոլսում ֆրանսիական դեսպանի նամակը և Իրանի հետ 1708 և 1715 թթ. Ֆրանսիայի կնքած առևտրական պայմանագրերի պատճենները՝ առաջարկելով վերականգնել դրանք և մտցնել գործողության մեջ: Նապոլեոնի ներկայացուցիչները ներշնչում էին պարսիկներին, որ վաղ թե ուշ Ռուսաստանը կգրավի Կովկասը և անորոշ ձևով խոստանում էին Ֆրանսիայի օգնությունը՝ ռուսներին հակազդելու համար: Միաժամանակ նրանք խնդրում էին Ֆրանսիային զիջել Պարսից ծոցի Խարք կղզին: Չնայած ֆրանսիացիների գործադրած մեծագույն ջանքերին՝ Աղա Մոհամմադ շահն այդպես էլ չընդունեց նրանց: Իսկ նրա մահվանից հետո Հաջի Իբրահիմը ֆրանսիական էմիսարներին առաջարկեց հեռանալ Իրանից: Չնայած նրանց առաքելության ձախողմանը, այնուամենայնիվ, հաջողվեց իրանցիների մոտ միտք արթնացնել Ռուսաստանի դեմ իրանա-թուրքական դաշինք կնքելու հնարավորության մասին: Շահական կառավարությունը Ստամբուլ ուղարկեց դեսպանների, որոնց հանձնարարված էր պարզել սուլթանական արքունիքի կարծիքը Ռուսաստանի դեմ համատեղ ելույթի հնարավորության մասին: Սակայն 1791 թ. Յասսիում Ռուսաստանի հետ հաշտություն կնքելուց հետո սուլթանը բնավ մտադրություն չուներ նոր կոնֆլիկտի մեջ մտնել նրա հետ: Բանակցությունների ժամանակ իրանական դեսպաններին տրվեց սադրիչ հարց. «Ինչո՞ւ պարսիկները չօգնեցին թուրքերին, երբ նրանք պատերազմում էին ռուսների և ավստրիացիների դեմ»: Իրանական դեսպանությունը մեծ պատիվներով հետ ուղարկվեց Թեհրան:

1800 թ. վերջին Նապոլեոնը Ռուսաստանի կայսր Պավել Ա-ի հետ կնքեց պայմանագիր ֆրանսիական և ռուսական զորքերի կողմից Իրանի վրայով դեպի Հնդկաստան համատեղ արշավանք կազմակերպելու վերաբերյալ: Արդեն 1801 թ. սկզբին 22,5 հազար Դոնի կոզակներ Պավել Ա-ի հրամանով դուրս եկան արշավանքի: Սակայն 1801 թ. մարտի 11-ին ռուսական կայսրը սպանվեց, և, բնականաբար, արշավանքի գաղափարը ևս օրակարգից հանվեց:

Հնդկաստանի վրա հարձակվելու ֆրանսիական ծրագրերին հակազդելու, Իրանն իրենց ազդեցությանը ենթարկելու, ինչպես նաև անգլիական ապրանքների ազատ մուտքը դեպի Իրան ապահովելու նպատակով Հնդկաստանում անգլիական իշխանությունները 1800 թ. մի հս-

կայական շքախմբի և զինվորական խոշոր ջոկատի ուղեկցությամբ Իրան ուղարկեցին իրենց ներկայացուցիչ կապիտան Ջոն Մալքոլմին: Անգլիացի այս ականավոր դիվանագետը, արևելագետ ու Օստ-Հնդկական ընկերության բարձրաստիճան չինովնիկը «Պարսկաստանի պատմությունը» վերնագրով իր գրքում այն տեսակետն էր հայտնում, որ Իրանը պետք է դառնա անգլիական առևտրի փոխաբեռնման կենտրոն մետրոպոլիայի և հնդկական գաղութի միջև, ինչպես նաև Միջին Արևելքում Անգլիայի քաղաքական կենտրոն և ռազմական հենակետ: Թեհրանում Մալքոլմն աներևակայելի առատաձեռնությամբ նվերներ էր բաժանում արքունիքի բոլոր կարևոր մարդկանց՝ կաշառելով բոլորին՝ «շահից մինչև վերջին ուղտապանը»: Մալքոլմին հաջողվեց համոզել առաջին վեզիր Հաջի Իբրահիմին 1800 թ. դեկտեմբերի 29-ին Անգլիայի հետ կնքել քաղաքական մի պայմանագիր, որը նախատեսում էր հետևյալ պայմանները. եթե Աֆղանստանի կառավարիչը համարձակվի ներխուժել Հնդկաստան, ապա շահը պարտավորվում է իր զորքերն ուղարկել աֆղանական տիրույթներ՝ աֆղաններին զսպելու համար: Աֆղանստանի և Իրանի շահի միջև հնարավոր խաղաղության պայմանագիր կնքվելու դեպքում պետք է նախատեսվի, որ Աֆղանստանի կառավարիչը և նրա զինված ջոկատները հրաժարվում են անգլիացիների տիրույթների վրա հարձակվելու ամեն մի ծրագրից: Աֆղանական ցանկացած կառավարչի կամ ֆրանսիացիների՝ Իրանի վրա ցանկացած հարձակման դեպքում անգլիական կառավարությունը պարտավորվում է շահին տրամադրել թնդանոթներ, ռազմական հանդերձանք և մասնագետներ: Եթե ֆրանսիական բանակը ցամաք դուրս գա Պարսից ծոցի կղզիներից մեկում կամ ծոցի ափերին, պայմանավորվող երկու կողմերը պետք է գործեն համատեղ, որպեսզի վռնդեն ու ոչնչացնեն ֆրանսիական զորքերին:

Թեև քաղաքական այս պայմանագիրն ուներ հակաֆրանսիական, հակաաֆղանական և հակառուսական ուղղվածություն, սակայն Թեհրանում առաջին հերթին այն ընկալվեց հակառուսական առումով, քանի որ օրակարգում առավել հրատապ խնդիր էր Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցը:

Ի դեպ, Իրանին ռազմական օգնություն ցուցաբերելու խոստման դիմաց անգլիացիները պահանջում էին վարձակալության իրավունքով իրենց տրամադրել Կասպից ծովի բոլոր նավահանգիստները:

Իսկ 1801 թ. հունվարին ստորագրված անգլո-իրանական առևտրական պայմանագրով անգլիացի և հնդիկ վաճառականներն Իրանում ստանում էին խոշոր արտոնություններ ու իրավունքներ (նրանց համար

սահմանվում էին ցածր մաքսատուրքեր, Իրանի ցանկացած վայրում ստանում էին բնակություն հաստատելու, տներ և առևտրական գրասենյակներ կառուցելու, երկու երկրների տարածքով անվտանգ տեղաշարժվելու իրավունք և այլն): Անգլիական կառավարության մոտ ծառայության մեջ գտնվող անգլիացի ու հնդիկ վաճառականներին թույլատրվում էր բնակություն հաստատել Իրանի ցանկացած նավահանգստում ու քաղաքում և այլն:

Երբ Մալքոլմը հետ էր վերադառնում Հնդկաստան, նրա հետ մեկնեց նաև շահական դեսպանորդ Հաջի Ղալիլ խանը: Սակայն 1802 թ. հուլիսին նրա պահակախմբի և Օստ-Հնդկական ընկերության զինվորների միջև Բոմբեյում տեղի ունեցած ընդհարման ժամանակ իրանական դեսպանորդը սպանվում է: Ընկերությունը նրա արյան գինը շահին հատուցեց հարուստ դրամական նվերների միջոցով: Այդ կապակցությամբ Ֆաթհ Ալի շահը ասել էր, որ անգլիացիները որքան ցանկանան կարող են սպանել իր դեսպաններին, եթե նույն առատաձեռնությամբ վճարեն նրանց համար:

Դժվար չէ նկատել, որ իրենց արտաքին քաղաքականության մեջ ղաջարները մշտապես խուսանավում էին՝ աշխատելով խաղալ Անգլիայի և Ֆրանսիայի հակասությունների վրա և փորձելով դրանք օգտագործել ի շահ Իրանի և ընդդեմ իրենց գլխավոր թշնամու՝ Ռուսաստանի:

1801 թ. սեպտեմբերի 12-ին Ալեքսանդր Ա ցարը ստորագրեց մանիֆեստ Վրաստանը Ռուսաստանին միացնելու վերաբերյալ, որը կտրուկ սրեց իրանա-ռուսական հարաբերությունները:

Վրաստանի միացումը Ռուսաստանին Թեհրանում առաջ բերեց զայրույթի փոթորիկ: Հասունանում էր պատերազմը Ռուսաստանի հետ: Այն պայթեց 1804 թ. մայիսին: Իրանական զորքերը ներխուժեցին Անդրկովկաս ոչ միայն վրացիներին պատժելու, այլև ողջ Անդրկովկասում իրենց տիրապետությունը վերականգնելու համար: Ռուսական զորքերը, անցնելով հակահարձակման, գրավեցին Գյանջան, Շաքիի, Շիրվանի և Ղարաբաղի խանությունները, իսկ ապա՝ համարյա ողջ Անդրկովկասը, բացառությամբ Երևանի և Նախիջևանի խանությունների: Պատերազմն ընդունեց երկարատև բնույթ:

Վկայակոչելով 1801 թ. պայմանագիրը՝ շահը պահանջում էր, որ Անգլիան Իրանին ցուցաբերի օգնություն: Սակայն անգլիացիները շահի դիմումները թողնում էին անպատասխան, որովհետև Անգլիան հակաֆրանսիական դաշնության մեջ հանդես էր գալիս որպես Ռուսաստանի դաշնակից: Զայրացած շահը և գահաժառանգ Աբբաս միրզան խզեցին իրենց հարաբերությունները Անգլիայի հետ և գնացին դեպի Ֆրանսիա-

յի հետ մերձեցում: Նապոլեոնն անմիջապես արձագանքեց Թեհրանի արքունիքի այդ տրամադրություններին և Իրան ուղարկեց իր մոտ դիվանագիտական ծառայության մեջ գտնվող հայազգի Դավիթ Մելիք-Շահնազարյանին (Դավուդ-բեկ Ծատուրով) նրան հանձնարարելով շահին և արքունիքը տրամադրել Ռուսաստանի դեմ: Միաժամանակ 1805 թ. հունիսին Նապոլեոնը Իրան ուղարկեց ֆրանսիական սպա Ամեդեյ Ժոբերին: Վերջինս Ստամբուլից Իրան մեկնելու ճանապարհին Բայազետում ձերբակալվեց տեղական փաշայի կողմից և զնդան նետվեց: Ուշագրավ է, որ Էջմիածնի կաթողիկոս Դավիթը միջնորդում է Էրզրումի սերասկեր Յուսուֆ փաշայի մոտ, որպեսզի նա ազատ արձակի Ժոբերին: Սակայն նա ազատ արձակվեց միայն այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ 1805 թ. դեկտեմբերի 2-ին Աուստերլիցի մոտ Նապոլեոնը հաղթանակ է տարել: Սուլթան Սելիմը, այդ իրադարձություններից հետո փոխելով իր քաղաքականությունը Ֆրանսիայի նկատմամբ, հրամայեց ազատ արձակել Ժոբերին: 1806թ. հունիսին Ժոբերը վերջապես հասավ Թեհրան: Ի դեպ, շահի հետ հանդիպման ժամանակ վերջինս խոսք է բաց անում Ֆրանսիայում տեղի ունեցած հեղափոխության մասին և տալիս է անսպասելի հարց. «Ի՞նչը ստիպեց ձեզ սպանելու ձեր թագավորին»:

Բանակցությունների ժամանակ շահը բանավոր խոստում տվեց Ֆրանսիսայի հետ կնքել ռազմական դաշինք և Ռուսաստանի նկատմամբ հաղթանակ տանելուց հետո թույլ տալ, որ ֆրանսիական բանակը Իրանի վրայով շարժվի դեպի Հնդկաստան: Միաժամանակ շահը հավաստիացնում էր, որ ինքը ևս զորքեր կուղարկի Հնդկաստան, եթե դրա անհրաժեշտությունը զգացվի: Նա հայտարարում է Ժոբերին, որ ինքն անձամբ կմասնակցի այդ արշավանքին և իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները կօգտագործի, որ Հնդկաստանում Անգլիայի բազում թշնամիներն ապստամբեն նրա դեմ: Ժոբերի հետ հանդիպման վերջում Ֆաթհ Ալի շահը խնդրում է հայտնել Բոնապարտին, որ շահը, գահաժառանգը, Իրանի ողջ ժողովուրդն ու բանակը նայում են Նապոլեոնի կողմը, «ինչպես անապատում բեդվինը նայում է բացվող օրն ավետող աստղին»: Իր հերթին Ժոբերը խոստանում էր գահաժառանգ Աբբաս միրզային, որ Ֆրանսիան պատրաստ է վերակազմակերպել իրանական բանակը և Իրան ուղարկել ֆրանսիացի ռազմական հրահանգիչներ, հանդերձանք ու հրետանի, օգնել Իրանին վերստին գրավելու Վրաստանը և այլն, պայմանով, որ շահը խզի իր դաշինքը Անգլիայի հետ: Չնայած ֆրանսիացու բոլոր ջանքերին՝ Ֆաթհ Ալի շահը հրաժարվեց Ժոբերի հետ ստորագրել որևէ գրավոր պայմանագիր: Ուստի նա չուտով վե-

դաղարծավ Ֆրանսիա: Քանի որ Բայազետի բանտում գտնվելու ժամանակ Ժոբերի առողջությունը խաթարվել էր, շահը մտավախություն ուներ, որ նա ճանապարհին կմեռնի: Ուստի նրան ուղեկցելու համար առանձնացրեց մի բժիշկ, իսկ որպես ծառա՝ մի ներքինի: Վերջինիս հանձնարարված էր սպանել բժշկին, եթե Ժոբերը հանկարծ մեռներ:

Ի դեպ, մտավախություն ունենալով, որ Ստամբուլից Իրան մեկնելու ճանապարհին Ժոբերը կսպանվի՝ շրջահայաց ու զգույշ Բոնապարտը համարյա միաժամանակ Թեհրան ուղարկեց նաև իր գործակալներից մեկին՝ Ռոմյեին: Հալեպում և այլ վայրերում գտնվող անգլիական հյուպատոսները քայլ առ քայլ հետևում էին ֆրանսիական էմիսարներին: Թեհրան ժամանելուց հետո երկուս և կես շաբաթ անց Ռոմյեն և նրան ուղեկցող երկու ֆրանսիացիներ խորհրդավոր պայմաններում մահացան: Սպանությունը կատարվել էր Ֆաթհ Ալի շահի իմացությամբ՝ դրանով նպատակ ունենալով ազդել անգլիացիների վրա և նրանցից ստանալ օգնություն: Շահը հույս ուներ, որ Անգլիան ավելի արագ և մեծ չափով կարող է օգնություն ցուցաբերել Իրանին, քան Ֆրանսիան: Պատահական չէ, որ Ռոմյեի սպանությունից հետո շահը իր դեսպանին ուղարկեց Հնդկաստան՝ անգլիական օգնությունն ստանալու համար:

1806 թ. ռուսական զորքերի կողմից Դերբենտի, Բաքվի, Մուղանի դաշտավայրի և Անդրկովկասի այլ շրջանների ու քաղաքների գրավումը իրանական իշխանություններին դրեցին դժվարին վիճակի առջև: Նույն թվականին Պրուսիայի և Ռուսաստանի նկատմամբ Նապոլեոնի տարած հաղթանակներից, մանավանդ ռուս-թուրքական պատերազմը սկսվելուց հետո շահը Նապոլեոնի մոտ ուղարկեց իր դեսպան, Ղազվինի բեկլարբեկ Միրզա Մոհամմադ Ռեզա խանին՝ նրան հանձնարարելով հնարավորին չափ շուտ Ֆրանսիայի հետ կնքել ռազմական դաշինք: Միրզա Ռեզա խանին տրված հրահանգում ասվում էր, որ «Ռուսաստանի ոչնչացումը հանդիսանում է երկու տիրակալների՝ շահի և ֆրանսիական կայսրի պարտականությունը»: Միրզա Ռեզան կեղծ տեղեկություններ էր հաղորդում Նապոլեոնին՝ մասնավորապես նրան պատմելով, թե իբր իրանական զորքերը մեծ հաղթանակներ են տանում Կովկասում: Նա նույնիսկ ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Ցիցիանովի ուխտադրուժ սպանությունը Բաքվի Հուսեյին դուլի խանի հետ նրա հանդիպման ժամանակ ներկայացնում էր որպես ողջ ռուսական բանակի կործանում: Նապոլեոնին ուղղված նամակում շահը գրում էր, որ Միրզա Մոհամմադ Ռեզա խանը օգտվում է իր կատարյալ վստահությունից, և դեսպանը լիազորված է «համաձայնվել այն ամենի հետ, ինչն ընդունելի

է Նապոլեոնին դաշինք կնքելու համար, որը աստծո կամքով կլինի նույնքան հավերժ, որքան ժամանակը»:

1807 թ. մայիսի 4-ին Արևելյան Պրուսիայի Ֆինկենշտեյն վայրում գտնվող Նապոլեոնի ռազմական ճամբարում իրանական կողմից իշխանազուն Մոհամմադ Ալի միրզայի և դեսպան Մոհամմադ Ռեզա խանի, մի կողմից, և Նապոլեոն Ա-ի մինիստր Մարեի միջև, մյուս կողմից, ստորագրվեց ֆրանս-իրանական պաշտպանողական-հարձակողական դաշինք, որն ուղղված էր ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Անգլիայի դեմ: Պայմանագիրը հռչակում էր «հավերժական դաշինք Ֆրանսիայի կայսրի և Իրանի շահի միջև»: Նապոլեոնը երաշխավորում էր Իրանի «ներկա տարածքի» անձեռնմխելիությունը և Վրաստանը ճանաչում էր որպես «օրինական ձևով» Իրանին պատկանող տարածք: Ֆրանսիան պարտավորվում էր ստիպել Ռուսաստանին՝ դուրս բերել իր զորքերը Վրաստանից և Անդրկովկասի մյուս շրջաններից: Նապոլեոնը պարտավորվում էր Իրանին տրամադրել անհրաժեշտ քանակությամբ թնդանոթներ ու հրացաններ և շահի տրամադրության տակ դնել սպաներ՝ ամրություններ կառուցելու և իրանական բանակը եվրոպական ռազմական արվեստի սկզբունքներով վերակառուցելու համար: Շահը իր հերթին պարտավորվում էր Անգլիայի հետ խզել բոլոր քաղաքական ու առևտրական հարաբերությունները, նրան հայտարարել պատերազմ, Բոմբեյից հետ կանչել իրանական դեսպանին և թույլ չտալ որևէ անգլիական ներկայացուցչի կամ գործակալի մուտքը Իրան: Այնուհետև՝ ապահովել զորքերի ազատ անցումը Աֆղանստանի վրայով՝ Հնդկաստանի անգլիական տիրույթների վրա հարձակվելու համար: Շահը պարտավորվում էր նաև թույլ տալ իրանական տարածքի վրայով ֆրանսիական բանակի անցումը այն դեպքում, եթե այն շարժվելու լինի դեպի Հնդկաստան, ինչպես նաև Պարսից ծոցի նավահանգիստները բացել ֆրանսիական նավատորմի առջև, և Ծոցի Խարք կղզին տրամադրել Ֆրանսիային, որպես լիարժեք սեփականություն: Պայմանագրով նախատեսվում էր բանակցություններ վարել Իրանի և Ֆրանսիայի միջև նոր առևտրական պայմանագիր կնքելու համար:

Ֆինկենշտեյնի պայմանագիրը կատարելապես ջնջում ոչնչացնում էր 1801 թ. Մալքոլմի ստորագրած անգլո-իրանական պայմանագիրը:

Ֆինկենշտեյնի պայմանագիրը կնքվելուց հետո Ստամբուլում ֆրանսիական դեսպանորդ Սեբաստիանին եռանդուն աշխատանքներ էր տանում ֆրանս-թուրք-իրանական եռյակ ռազմական դաշինք կնքելու ուղղությամբ, որն ուղղված էր լինելու Ռուսաստանի դեմ: Անշուշտ ֆրան-

սիացիները գիտակցում էին, որ Իրանի և Թուրքիայի միջև երբեք չի եղել իսկական բարեկամություն: Սակայն Նապոլեոնը ենթադրում էր, որ ընդհանուր վտանգը կարող է նրանց միավորել: Ընդ որում՝ Ֆրանսիայի կայսրն առաջարկում էր Ռուսաստանի դեմ պատերազմին հաղորդել կրոնական բնույթ: «Թող Թուրքիան և Իրանը Ռուսաստանին ներկայացնեն բոլոր մուսուլմանների, ինչպես Ալիի հետևորդների, այնպես էլ Օմարի կողմնակիցների համար միատեսակ ատելի երկիր», - ասվում էր Նապոլեոնի հրահանգում:

Ֆինկենշտեյնի դաշինքի իրականացմանը խանգարեց ռուսական զորքերի հաղթանակը թուրքերի նկատմամբ 1807 թ. հունիսի 18-ին տեղի ունեցած Արփաչայի ճակատամարտում:

Ռուսների դեմ պատերազմում շահական զորքերի կրած պարտությունները համոզեցին իրանական կառավարությանը, որ անկանոն ավատական աշխարհազորն ու խանական ջոկատները չեն արդարացնում իրենց: Ուստի որոշվեց կազմակերպել կանոնավոր բանակ: Այդ ծրագրի իրականացման ոգեշնչողն ու եռանդուն մասնակիցը գահաժառանգ (Վալիահդ) Աբբաս միրզան էր (1789-1833): Անտարակույս, նա հանդիսանում էր իր ժամանակի ականավոր քաղաքական գործիչներից մեկն Իրանում: Նա օժտված էր զորահրամանատարի, դիվանագետի և վարչարարի բացառիկ ընդունակություններով: Որպես գլխավոր հրամանատար՝ նա ձեռնամուխ եղավ իրանական բանակի վերակառուցմանը: Աբբաս միրզան Իրանում ռուսական ազդեցության համոզված հակառակորդ էր, որի պատճառով և օգտվում էր երկրի բնակչության, ինչպես նաև անգլիացիների հատուկ համակրանքից:

Վալիահդը ձգտում էր ոչ միայն վերակառուցել բանակը, այլև ողջ պետական ապարատը: Նա հստակորեն գիտակցում էր, որ երկրի անկախությունն ու ամբողջականությունը պահպանելու համար անհրաժեշտ է վերակառուցել ու արդիականացնել ողջ պետական համակարգը, զարկ տալ տնտեսությանը և այլն: Նրա այդ մղումների հետ կատարելապես համամիտ էր Աբբաս միրզայի վեզիր, ղայեմ-մաղամ միրզա Աբուլղասեմ Ֆարահանին, որն առաջին քայլերը կատարեց Իրանը վերակառուցելու և արդիականացնելու ուղղությամբ: Այս երկու գործիչների ներշնչմամբ Ֆաթհ Ալի շահը դիմեց Ֆրանսիային՝ խնդրելով Իրան ուղարկել զինվորական գործիչների մի խումբ՝ իրանական բանակը մարզելու համար: Ընդառաջելով այդ խնդրանքին՝ Բոնապարտը Թեհրան ուղարկեց 70 սպաներից բաղկացած մի խումբ՝ գեներալ Կլոդ Մաթյե Գարդանի (Ժարդանի) գլխավորությամբ: Ֆրանսիացի սպաները ձեռ-

նամուխ եղան Իրանում եվրոպական ձևով կանոնավոր բանակի ստեղծմանը, որը պետք է գոյություն ունենար ավատական աշխարհազորի հետ համատեղ: Նրանք տանում էին նաև ակտիվ հետախուզական աշխատանք՝ մասնավորապես ուսումնասիրելով և քարտեզագրելով Հնդկաստան տանող ճանապարհները:

1808 թ. հունվարին Թեհրանում Գարդանի և շահի առաջին վեզիր միրզա Շաֆիի միջև կնքվեց 23 կետերից բաղկացած ֆրանս-իրանական առևտրական պայմանագիր, որը հաստատում ու զարգացնում էր 1708 և 1715 թթ. Սեֆյան շահ Սուլթան Հուսեյնի կողմից Ֆրանսիային տրամադրված կապիտուլյացիոն իրավունքները: Հիշյալ պայմանագրով Ֆրանսիան Իրանում ստանում էր բացառիկ արտոնություններ. ֆրանսիացիները կարող էին հյուպատոսներ ունենալ ցանկացած իրանական քաղաքում, վարձակալել հողեր և նրանց վրա կառուցել շինություններ, ֆրանսիական վաճառականները կարող էին ներմուծել և արտահանել ցանկացած ապրանք՝ վճարելով լոկ 3 %-անոց արտոնյալ մաքսատուրքեր:

Նշվում էր նաև, որ Ֆրանսիայի դեսպանները, հյուպատոսները և վաճառականները առավելություն ունեն այլ երկրների դեսպանների, հյուպատոսների ու վաճառականների նկատմամբ: Միայն ֆրանսիական հյուպատոսներն իրավունք ունեն դատելու Ֆրանսիայի հպատակներին Իրանի տարածքում՝ նրանց միջև վեճեր ծագելու դեպքում: Իրանական իշխանություններն իրավունք չունեն քննության ենթարկել ֆրանսիական և իրանական հպատակների միջև ծագած քաղաքացիական և քրեական գործերը:

Կաթոլիկ հոգևորականներն իրավունք են ստանում ոչ միայն անարգել կատարել կրոնական ծիսակատարություններ, այլև ազատորեն քարոզչություն մղել ողջ քրիստոնյա բնակչության շրջանում: Իրանական իշխանությունները պարտավորվում են խստիվ պատժել այն մահմեդականներին, ինչպես նաև հպատակ քրիստոնյաներին (հայերին ու եվրոպացիներին), որոնք կդրսևորեն անհարգալից վերաբերմունք կաթոլիկ հոգևորականների նկատմամբ:

Պայմանագրի 17-րդ հոդվածում ասվում էր, որ այն բանից հետո, երբ ռուսները դուրս կբերեն իրենց զորքերը Վրաստանից և բոլոր պարսկական նահանգներից, Իրանը, որպես նվեր, Ֆրանսիային կտրամադրի Պարսից ծոցի Խարք կղզին, որպեսզի այն ընդմիշտ դառնա ֆրանսիացիների սեփականությունը: Ֆրանսիական առևտրական և ռազմական նավերին իրավունք էր տրվում ազատորեն մուտք գործել Պարսից ծոցի նավահանգիստները:

Պայմանագրում հատուկ կետ էր պարունակվում այն մասին, որ իրանական պաշտոնական անձինք, լինեն նրանք դատական թե քաղաքացիական իշխանության ներկայացուցիչներ, իրավունք չունեն մտնելու ֆրանսիական հպատակների տները, առանց նրանց թույլտվության:

Գարդանին տրված հրահանգում Նապոլեոնը կարգադրում էր հասնել նրան, որ Կասպից ծովից մինչև Սև ծով ընկած այդ լայն ճակատում ձեռք բերվի համագործակցություն իրանական և թուրքական բանակների միջև: Նա առաջարկում էր համոզել շահին, որ չի կարելի մեն-մենակ կռվել Ռուսաստանի դեմ: «Ֆրանսիան, - ասվում էր հրահանգում,- Իրանը դիտում է երկու տեսանկյունից. որպես Ռուսաստանի բնական հակառակորդ և որպես ճանապարհ դեպի Հնդկաստան»: Ուստի Գարդանին հանձնարարվում էր իրանական բանակը վերածել ահեղ ուժի Ռուսաստանի դեմ: Նրան խորհուրդ էր տրվում ուսումնասիրել Միջին Ասիայի կողմից Ռուսաստանի դեմ նոր ճակատ բացելու հնարավորությունը:

Շուտով, սակայն, միջազգային իրադրության մեջ տեղի ունեցավ արմատական փոփոխություն: Նապոլեոնը զոհեց Իրանի շահերը հաշուն ֆրանս-ռուսական հարձակողական-պաշտպանողական դաշինքի կնքման, որը ստորագրվեց Տիլզիթում 1807 թ. հուլիսի սկզբին Նապոլեոնի և Ալեքսանդր Ա-ի հանդիպման ժամանակ: Տիլզիթի դաշինքը ոչ միայն արմատապես փոխեց իրերի վիճակը Եվրոպայում, այլև Մերձավոր ու Միջին Արևելքում: Բնականաբար, ֆրանսիացիները այլևս չէին կարող իրականացնել իրանական զորքերին զենք մատակարարելու վերաբերյալ իրենց տված խոստումները: Առհասարակ, Ֆրանսիան զգալիորեն կորցրեց իր հետաքրքրությունը Իրանի նկատմամբ: Թեհրանի արքունիքը Տիլզիթի հաշտությունը գնահատեց որպես Նապոլեոնի ուխտադրուժ դավաճանություն: Այդ դաշնագիրը Ֆրանսիային պարտավորեցնում էր նաև քշնամական կեցվածք չորդեգրել Ռուսաստանի նկատմամբ: Ուստի Գարդանը սկսեց պնդել, որ շահը հաշտություն կնքի Ռուսաստանի հետ: Քանի որ Իրանը չանսաց այդ պնդումներին, գեներալը հեռ կանչեց իրանական զորքերին մարզող ֆրանսիական ռազմական հրահանգիչներին:

1808 թ. իրանական զորքերի խոշոր պարտությունները (ռուսները գրավեցին Նախիջևանի խանությունը և պաշարեցին Երևանը) հույս ներշնչեցին անգլիացիներին, որ ֆրանսիացիներից հիասթափված շահը քայլեր կձեռնարկի իրենց հետ մերձենալու համար: Բրիտանական կառավարության հանձնարարությամբ, Լոնդոնից դեպի Պարսից ծոցի Բուշեհր նավահանգիստ ուղևորվեց Հարֆորդ Ջոնսը: Գարդանի պա-

հանջով նրան չքուլլատրվեց մեկնել Թեհրան, սակայն անգլիացի փորձառու դիվանագետին հաջողվեց ուղիներ գտնել բրիտանական կառավարության առաջարկությունները շահին հասցնելու համար: Այդ առաջարկությունները կազմված էին կարկանդակի ու մտրակի սկզբունքով. անգլիացիները խոստանում էին Իրանին հատկացնել ռազմական ու դրամական օգնություն, պայմանով, որ նա խզի իր կապերը Ֆրանսիայի հետ: Միաժամանակ նրանք սպառնում էին շահին, որ նրա՝ ֆրանսիական կողմնորոշման դեպքում իրենք Պարսից ծոցի կողմից կներխուժեն Իրան, կպաշտպանեն զենդական դինաստիայի շառավիղներից մեկին, որը հավակնություններ ուներ գահի նկատմամբ, կկազմակերպեն աֆղանների և արաբ վահաբիների ելույթներ Իրանի դեմ, կարգելեն իրանական վաճառականների առևտուրը Հնդկաստանում և այլն:

Չնայած այն հանգամանքին, որ առաջարկությունների այդ կոպիտ ու վիրավորական ոճը դիպչում էր շահի ինքնասիրությանը, նա ընտրություն կատարելու այլևս ոչ մի հնարավորություն չուներ: Կար նաև մեկ այլ հանգամանք: Շահը չէր կարող չհամոզվել, որ ինքը խաբված է Նապոլեոնի կողմից, և որ Անգլիան այնուամենայնիվ, հանդիսանում է չարյաց փոքրագույնը, քանի որ հարևան Հնդկաստանում իր տրամադրության տակ ուներ ամենազոր Օստ-Հնդկական ընկերություն, ոսկի և մեծաքիվ զորքեր, մինչդեռ Ֆրանսիան հեռու է Իրանից: Ֆաթհ Ալի շահը 1809 թ. փետրվարի 13-ին շտապ կարգով Թեհրանից հեռացրեց Գարդանի ռազմական միսիան՝ ֆրանսիացիներին հայտարարելով, որ չխզելով իր հարաբերությունները նրանց հետ՝ Իրանը շփումների մեջ է լինելու Անգլիայի հետ մինչև այն ժամանակ, երբ Ֆրանսիան կստիպի Ռուսաստանին Վրաստանը զիջել Իրանին:

Գարդանի հեռանալուց հետո բրիտանական դեսպանորդ Հարֆորդ Ջոնսը փետրվարի 14-ին ժամանում է Թեհրան: Նրա շքախմբի առջևից շարժվում էր նվերներով բարձված մի ամբողջ քարավան: Նախապես շահին թանկարժեք աղամանդներ, 30 հազար անգլիական հրացաններ, 20 դաշտային թնդանոթներ և 40 արկղ ռազմամթերք նվիրելուց հետո բանակցություններ է սկսում շահի առաջին վեզիր միրզա Շաֆիի հետ: 1809 թ. մարտի 12-ին կողմերի միջև ստորագրվում է նախնական (պրելիմինար) մի պայմանագիր, որը բովանդակում էր հետևյալ պայմանները. Իրանի և որևէ եվրոպական պետության միջև ստորագրված ցանկացած պայմանագիր և համաձայնագիր (այդ թվում նաև 1801 թ. անգլո-իրանական պայմանագիրը և 1807 թ. Ֆինկենշտեյնում կնքված ֆրանս-իրանական պայմանագիրը) կորցնում է իր ուժը և դառնում անվավեր: Ցանկա-

ցած եվրոպական պետության զինված ուժերին չի թույլատրվելու Իրանի տարածքով շարժվել դեպի Հնդկաստան: Իրանի տարածքը որևէ եվրոպական պետության զինված ուժերի ներխուժման դեպքում Անգլիան շահին կտրամադրի իր զինված ուժերը կամ դրանց փոխարեն դրամական հատկացում և զենք՝ թնդանոթներ, հրացաններ և այլն, ինչպես նաև իր սպաներին այնպիսի քանակությամբ, որ բավարար լինի ներխուժած ուժերի վտարմանը համար: Աֆղանների կամ մեկ այլ պետության կողմից Հնդկաստանում անգլիական տիրույթների վրա հարձակվելու դեպքում, Իրանի շահը պարտավորվում է իր զորքերն ուղարկել այդ տիրույթները պաշտպանելու համար: Անգլիացիներն իրավունք են ստանում շահի համաձայնությամբ զորքեր մտցնել Պարսից ծոցի Խարք կղզին, եթե նրա վրա կախվի օտարերկրյա ներխուժման սպառնալիքը: Պայմանագրում նշվում էր, որ իրանական շահի և անգլիական թագավորի ու նրանց ժառանգորդների միջև հաստատվում է դաշինք և բարեկամություն:

Շահի հետ իր հանդիպումների ժամանակ Ջոնսն աշխատում էր համոզել նրան, որպեսզի Իրանը ռազմական դաշինք կնքի Օսմանյան կայսրության հետ և շարունակի պատերազմը Ռուսաստանի դեմ: Անգլիացի դիվանագետը փորձում էր նաև շահից ստանալ Իրանի հայ բնակչությանը հովանավորելու իրավունք՝ հավանաբար օգտագործելու համար նրանց առևտրական կապերը ի շահ բրիտանական առևտրի:

Ջոնսի առջև դրված խնդիրներից մեկն էր նաև Իրանից ֆրանսիական էմիսարների հեռացումը: Ի դեպ, այդ էմիսարներից մեկին՝ Ժուանենին, անհայտ մեկի կողմից ուղարկվել էր մի գիրք, որի բոլոր էջերը թաթախված էին թույնով:

Հարֆորդ Ջոնսի կնքած պայմանագիրը Լոնդոնում գնահատվեց որպես «հույժ օգտակար», և շահին տարեկան սուբսիդավորման գումարը 160 հազար թումանից հասցվեց 200 հազարի:

1810 թ. Ջոն Մալքոլմը կրկին ժամանեց Իրան: Նա շահական զորքերի համար իր հետ բերեց թնդանոթներ, 7 հազար հատ հրացան, ռազմական հրահանգիչների մի խումբ, և ամենակարևորը, հարուստ նվերներ: Ի պատիվ Օստ-Հնդկական ընկերության այդ ներկայացուցչի՝ շահը կազմակերպեց փառավոր ընդունելություն: Մալքոլմին պարգևատրելու համար նա նույնիսկ հիմնեց նոր շքանշան, որը կոչվում էր «Առյուծ և արև» («Շիր-օ-խորշիդ»):

1811 թ. Իրան ժամանեց նոր անգլիական դեսպան սըր Հենրի Աուզլին, որն իր հետ բերեց 600 հազար թուման (երեք տարվա սուբսիդավորման գումարը), մոտ հազար հրացան, թնդանոթներ և այլ զենքեր ու ռազմական

հանդերձանք: Նրա հետ Թեհրան ժամանեցին նաև անգլիական նոր ռազմական հրահանգիչներ: 1812 թ. մարտի 14-ին Առզրումի սարդարազամ Միրզա Շեֆիի հետ ստորագրեց «վերջնական» անգլո-իրանական պայմանագիրը, որը փոխարինելու էր 1809 թ. պրելիմինար պայմանագրին:

Հիշյալ պայմանագիրն, անկասկած, իրենով նշանավորում էր բրիտանական դիվանագիտության խոշոր հաջողությունը: Այն նպաստեց անգլիական ազդեցության շեշտակի մեծացմանն Իրանում: Սակայն 1812 թ. Նապոլեոնի ռուսական արշավանքից հետո անգլո-իրանական պայմանագրի գործողության շրջանակները նկատելիորեն սահմանափակվեցին, որովհետև Ռուսաստանը դաշինքի մեջ հայտնվեց Անգլիայի հետ: Այսպիսով՝ Իրանը մեծ-մենակ մնաց իր հզոր հակառակորդի՝ Ռուսաստանի դեմ: Հիշտ է, 1810թ. օգոստոսին վերջապես գլուխ էր եկել թուրք-իրանական դաշնակցային պայմանագրի կնքումը՝ և Թեհրանում թուրքական դեսպան Սեյիդ Աբդուլ-Վահաբ էֆենդիին և թուրքական փաշա Խայրեթ էֆենդիին հանձնարարվել էր մշակել թուրքական և իրանական զորքերի համատեղ գործողությունների պլան՝ 1811 թ. ամռանը Թիֆլիսը գրավելու վերաբերյալ, սակայն այդ դաշինքը գործնական կենսագործում չստացավ, մանավանդ որ 1812 թ. մայիսի 16-ին Ռուսաստանի դեմ պատերազմում պարտություն կրած Թուրքիան ստիպված էր ստորագրել Բուխարեստի հաշտության պայմանագիրը:

Ֆաթհ Ալի շահը կորցրեց իր թուրքական դաշնակցին: Նա Բուխարեստի հաշտությունը գնահատեց որպես սուլթանի կողմից դավաճանություն, քանի որ 1810 թ. իրանա-թուրքական պայմանագրով թուրքերը պարտավորվում էին Ռուսաստանի հետ հաշտություն կնքել միայն Իրանի համաձայնությամբ և Իրանի հետ միաժամանակ:

Մինչդեռ իրանական զորքերը կրում էին անհաջողություն անհաջողության հետևից: 1811 թ. դեկտեմբերի 20-ին ռուսները գրոհով վերցրին Ախալքալակի ամրոցը: Ռուսական մի փոքրաթիվ ջոկատի քաջության և հայ աշխարհազորայինների խիզախության շնորհիվ ձախողվեցին Աբբաս միրզայի փորձերը Մեղրիի ամրոցը և Զանգեզուրի մաղալը գրավելու ուղղությամբ:

1812 թ. հոկտեմբերին Արաքսի ափին՝ Ասլանդուզի մոտ, տեղի ունեցած ճակատամարտում Աբբաս միրզայի զորքերի կրած ջախջախիչ պարտությունը ստիպեց իրանական կառավարությանը՝ խնդրել հաշտություն: Դաշտային Ղարաբաղի Գյուլիստան հայկական գյուղում ռուսական լիազոր, գեներալ-լեյտենանտ Ն. Ֆ. Ռտիշչևի և իրանական ներկայացուցիչ Միրզա Աբուլ-Հասան խանի միջև սկսվեցին բանակցու-

թյուններ, որոնք ավարտվեցին 1813 թ. հոկտեմբերի 12-ին պայմանագրի ստորագրումով, որը վերջ էր տալիս 9 տարի տևած ռուս-իրանական առաջին պատերազմին: Գյուլիստանի պայմանագրով ռուսներին էր անցնում պատերազմի ընթացքում ռուսական զորքերի գրաված բոլոր տարածքները, այսինքն՝ Վրաստանը (Ծորագյալի շրջանով հանդերձ), Իմերեթիան, Գուրիան, Մինգրելիան, Աբխազիան, ինչպես նաև Ղարաբաղի, Գյանջայի, Շեքիրի, Շիրվանի, Դերբենտի, Ղուբայի, Բաքվի և Թալիշի խանությունները, Արևելյան Հայաստանի Լոռիի, Շամշադինի, Ջանգեզուրի և Ծորագյալի գավառները: Պայմանագրի 5-րդ հոդվածով Իրանը հրաժարվում էր Կասպից ծովում իր նավատորմն ունենալու իրավունքից, և, ընդհակառակը, Ռուսաստանին տրվում էր բացառիկ իրավունք՝ նշված ծովում պահելու ռազմական նավատորմ: Ռուսական վաճառականները ստանում էին Իրանում առևտրի և ազատ տեղաշարժվելու իրավունք, իսկ իրանական վաճառականները՝ համամասխանաբար Ռուսաստանում:

Գյուլիստանի պայմանագիրը Իրանի և Ռուսաստանի միջև չէր ամրակայում ճշգրիտ սահմաններ, որը հետագայում պատճառ հանդիսացավ այդ երկու պետությունների միջև մշտական վեճերի ու թյուրիմացությունների համար: Այդ պայմանագիրը չլուծեց նաև ռուս-իրանական հակասությունները: Ռուսաստանը բավարարված չէր այդ պայմանագրով, քանի որ նա ծրագրել էր իրեն միացնել Երևանի և Նախիջևանի խանությունները, ավարտել ողջ Անդրկովկասի միացումը Ռուսաստանին և ռուս-իրանական սահմանն անց կացնել Արաքս գետով: Հետևաբար, ռուս-իրանական հարաբերությունները մնացին անորոշ ու լարված:

Պայմանագրից բավարարված չէր նաև Իրանը: Նախ՝ այն ծանր հարված էր նրա պետական հեղինակությանը: Իրանական կառավարող շրջանները չէին կարող հաշտվել նաև այն մտքի հետ, որ անդառնալիորեն կորցրել են անդրկովկասյան խանությունները: Ուստի հետագայում շահական կառավարությունը համառորեն պնդում էր, որ պայմանագիրը վերանայվի: Այդ հարցերի շուրջ բանակցություններ վարելու նպատակով շահը Պետերբուրգ ուղարկեց միրզա Աբուլ-Հասան խանին՝ նրան հանձնարարելով, որ կարողանա հասնել այն բանին, որ կորցրած տարածքների գեթ մի մասը վերադարձվի Իրանին: Դիմելով Ալեքսանդր Ա կայսրին՝ պարսից դեսպանը խնդրում էր «չմերժել շահի խնդրանքը և Իրանին վերադարձնել գոնե Արևելյան Անդրկովկասը, որը ռուսական կայսրի հոգու վեհության համեմատ մի չնչին բան է. այն կայսրի, որի փառքը խամրեցրել է նույնիսկ Ալեքսանդր Մակեդոնացու ունեցած հռչակը»:

Սակայն իրանական փորձառու դիվանագետի այդ դժվարին առաքելությունը հաջողությամբ չպսակվեց: Ի պատասխան շահի խնդրանքների՝ Ալեքսանդր Ա-ն հայտարարեց նրա դեսպանին, որ երկու երկրների միջև գոյություն ունեցող բոլոր հարցերի լուծման համար ինքն արտակարգ և լիազոր մինիստրի պաշտոնով Իրան է ուղարկելու գեներալ Երմոլովին: Շահական դեսպանին այլևս ոչինչ չէր մնում, եթե ոչ 1817թ. ձեռնունայն վերադառնալ հայրենիք:

Իսկապես, շուտով ռուսական գեներալի դեսպանությունը ժամանեց Թեհրան: Այդ կապակցությամբ իր ամառային նստավայրում շահը կազմակերպեց շքեղ ընդունելություն:

Ցարը Երմոլովի դեսպանության առջև դրել էր համարյա անիրագործելի խնդիրներ. Իրանի հետ կնքել Օսմանյան կայսրության դեմ ուղղված ռազմական դաշինքի վերաբերյալ պայմանագիր, հնարավորության դեպքում վերացնել անգլիական ազդեցությունն Իրանում, Թեհրանում բաց անել ռուսական դիվանագիտական ներկայացուցչություն, Ռուսաստանի համար հանգուցային նշանակություն ունեցող վայրերում՝ Ռեշտում, Էնզելիում և Աստրաբադում հիմնադրել ռուսական առևտրական ներկայացուցչություններ, վերադարձնել պատերազմի ժամանակաշրջանի ռուս գերիներին ու դասալիքներին և այլն: Երմոլովին հանձնարարված էր նաև «վերացնել անգլիական ազդեցությունն Իրանում»:

Այդ բոլոր հարցադրումների գծով Երմոլովը ստացավ մերժում: Նրա միակ հաջողությունն այն էր, որ շահը իր համաձայնությունը տվեց Իրանում բաց անել Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցչություն: Ընդ որում՝ այդ ներկայացուցչության նստավայրը հանդիսանալու էր ոչ թե մայրաքաղաքը՝ Թեհրանը, այլ Թավրիզը, որը համարվում էր գահաժառանգ Աբբաս միրզայի նստավայրը, իսկ վերջինս շահի կողմից լիազորված էր վարել Իրանի արտաքին հարաբերությունները: Ի դեպ, բրիտանական դիվանագիտական ներկայացուցչությունը ևս գտնվում էր այդ նույն քաղաքում: Միայն 1825 թ. ռուսական ներկայացուցչությունը Թավրիզից տեղափոխվեց Թեհրան:

1817 թ. Երմոլովի դեսպանությունը ձեռնունայն վերադարձավ Պետերբուրգ:

Մինչդեռ փոփոխված միջազգային իրադրությունը ստիպել էր անգլիացիներին նոր պայմանագրային հարաբերություններ հաստատել իրանական կառավարության հետ: Մասնավորապես Ռուսաստանի հաղթանակը 1812 թ. Հայրենական պատերազմում, Իրանի հետ պատերազմում, ինչպես նաև Նապոլեոնի կայսրության կործանումը և Ֆրան-

սիայի դիրքերի թուլացումը Միջին Արևելքում միջազգային հարաբերությունների մեջ ստեղծում էին սկզբունքորեն նոր իրավիճակ: Ուստի 1814 թ. նոյեմբերի 13-ին (25-ին) Թեհրանում ստորագրվեց անգլո-իրանական նոր պայմանագիր, որով պահպանվում ու ամրակայվում էին 1812 թ. մարտի 14-ի այսպես կոչված, «վերջնական պայմանագրի» բոլոր հիմնական կետերը: Հիշյալ պայմանագրում նորն այն էր, որ Իրանը պարտավորվում էր ստիպել Խորեզմի, Թուրքեստանի, Բուխարայի և Սամարղանդի կառավարիչներին, որպեսզի նրանք թույլ չտան, որ իրենց տարածքների վրայով եվրոպական պետությունների (իմա՝ Ռուսաստանի–Վ. Բ.) զորքերը շարժվեն դեպի Հնդկաստան: Այնուհետև Իրանը պարտավորվում էր այսուհետև ռազմական հրահանգիչներ հրավիրել միայն Անգլիայից կամ նրա հետ բարեկամական հարաբերությունների մեջ գտնվող երկրներից: Վերջապես՝ հիշյալ պայմանագրի մեջ պարունակվում էր մի կետ, որտեղ ասվում էր. «Ռուսաստանի և Պարսկաստանի միջև սահմանները պետք է որոշվեն Մեծ Բրիտանիայի, Պարսկաստանի և Ռուսաստանի միջև կնքվելիք համաձայնությամբ»: Սա նշանակում էր, որ նախ՝ Անգլիան առաջ էր քաշում Գյուլիստանի պայմանագրով նախատեսված ռուս-իրանական սահմանի վերանայման հարց և ապա՝ իրեն իրավունք էր վերապահում միջամտել Իրանի արտաքին քաղաքական հարաբերություններին:

Ի դեպ, Իրանի շահ Մոհամմադ Ռեզա Փեհլևին «Առաքելություն հայրենիքիս համար» գրքում 1814 թ. անգլո-իրանական պայմանագիրը գնահատել է որպես «պաշտպանողական մի դաշինք, որն ամբողջապես կոչված էր հակազդելու ռուսներին»:

Իրանում իշխանության ղեկի մոտ գտնվող ռազմական և քաղաքական գործիչներից Աբբաս միրզան թերևս միակն էր, որը գիտակցում էր, որ Իրանի նկատմամբ եվրոպական տերությունների աճող ճնշման պայմաններում փրկության միակ ելքը բանակում և պետական-վարչական համակարգում արագ և արդյունավետ բարեփոխումների իրականացումն է: Ուստի նա համառորեն ու հետևողականորեն իրագործում էր այդ նպատակին միտված քաղաքականություն: Հատկապես բանակի վերակառուցման ուղղությամբ 1814 թ. հետո նրա ձեռնարկած քայլերը 20-ական թթ. սկզբին արդեն տվել էին շոշափելի արդյունքներ: Այդ արդյունքները հատկապես ակնհայտորեն դրսևորվեցին 1821-1823 թթ. իրանա-թուրքական պատերազմի ընթացքում: Այդ պատերազմը բորբոքվեց թուրք-իրանական սահմանային վեճի հետևանքով: Իրանում հակաթուրքական տրամադրությունները բորբոքվում էին նաև մահմեդական սրբա-

վայրեր՝ Մեքքա, Քարբալա և Նաջաֆ մեկնող ուխտագնացների բողոքների հետևանքով, որոնց նկատմամբ Օսմանյան իշխանությունները չէին վարանում կիրառել հալածանքներ, որպես շիաների վիրավորում էին ուխտագնացների կրոնական զգացումները և այլն: Իրանական կառավարող շրջանների մեջ առանձնակի զայրույթ առաջ բերեց թուրքական իշխանությունների կողմից Ֆաթհ Ալի շահի կանանցից մեկի քարավանի խուզարկումը: Հենց այդ փաստն էլ պատրվակ հանդիսացավ պատերազմի բռնկման համար: Աբբաս միրզան որոշեց փորձարկել իր վերակառուցված բանակի մարտունակությունը, առավել ևս, որ այդ շրջանում Օսմանյան կայսրությունը գտնվում էր դժվարին կացության մեջ: Նա ծանր պատերազմ էր մղում ապստամբած հույների դեմ, Վալախիայում զբաղված էր հուժկու ապստամբության ճնշման գործով, իսկ Ստամբուլում և վիթխարի կայսրության տարածքում ծեռնամուխ էր եղել յանիչարիների ջախջախմանը:

Պատերազմի հենց առաջին ամիսներին Աբբաս միրզայի 50- հազարանոց բանակը ներխուժեց Արևմտյան Հայաստան, գրավեց Բայազետը, Վանը, Կարսի փաշալիքը և մոտեցավ Էրզրումին: Միաժամանակ Քերմանշահի կողմից իրանական զորքերը, սրընթաց շարժվելով առաջ, գրավեցին Սուլեյմանիեն, Բաղդադը, Քիրքուքը և Մոսուլը:

1822 թ. գարնանը Ատրպատականում Աբբաս միրզան ջախջախեց դեպի Թավրիզ շարժվող օսմանյան մեծաթիվ բանակը, իսկ Թոփրակկալեի մոտ թուրքերը կրեցին ևս մեկ ծանր պարտություն: Սակայն այդ բոլորից հետո Իրանը ի վիճակի չեղավ զարգացնելու իր հաջողությունը, և կողմերի միջև սկսվեցին բանակցություններ հաշտության պայմանագիր կնքելու վերաբերյալ: 1823 թ. հուլիսի 23-ին Էրզրումում կնքված պայմանագրով բոլոր գրավված տարածքները վերադարձվում էին Օսմանյան կայսրությանը: Իրանը պարտավորվում էր 60 օրվա ընթացքում թուրքերին վերադարձնել պատերազմի ժամանակ Արևմտյան Հայաստանում ու Միջագետքում գրաված բոլոր ամրությունները և հողերը (Բայազետը, Բիթլիսը, Մալազգերդը, Ախլաթը, Սուլեյմանիեն, Քիրքուքը, Մոսուլը): Պատերազմում հաղթանակած Իրանի համար պայմանագիրը չէր նախատեսում որևէ առավելություն: Աբբաս միրզան համակերպվեց դրա հետ, որովհետև նրա հիմնական նպատակը Ռուսաստանին ռևանշ տալն էր: Ոչ պակաս կարևոր դեր խաղացին նաև եվրոպական պետությունները, մասնավորապես Անգլիան ու Ռուսաստանը, որոնք Իրանի կողմից օսմանյան հսկայական տարածքների նվաճումը գնահատեցին որպես սպառնալիք մերձավորարևելյան և նույնիսկ եվրոպական հավա-

սարակշռությանը և ստիպեցին Իրանին զիջող լինել:

Էրզրումի պայմանագրով կողմերի միջև հայտարարվում էր «հավերժական խաղաղություն»: Երկու պետությունների միջև պահպանվում էին 1639 թ. Քասրե-Շիրինի պայմանագրով որոշված սահմանները: Նրանք պայմանավորվում էին չմիջամտել միմյանց ներքին գործերին, չխախտել պետական սահմանները, որոնք, ի դեպ, պայմանագրի կնքումից հետո ևս մնում էին նույնքան անորոշ, որքան և մինչև պատերազմը: Երկուստեք պայմանավորվում էին իրենց մոտ չընդունել խռովարար ցեղերին և չհովանավորել նրանց, մասնավորապես հսկողություն սահմանել քրդական հայդարանլու և սիբքիքի ցեղերի նկատմամբ, որոնք արոտավայրերի փնտրտուքներում թուրք-իրանական սահմանն ինքնագլուխ անցնելու հետևանքով երկու պետությունների միջև անընդհատ տեղիք էին տալիս սահմանային վեճերի ու լարվածության:

Թուրքական իշխանությունները պարտավորվում էին արգելքներ չհարուցել Մեքքա, Մեդինա, Քայբալա ու Նաջաֆ ուխտագնացության մեկնող իրանցիների առջև և հովանավորել նրանց ու թույլ չտալ, որ սովորական հարկերից բացի, նրանցից գանձվեն լրացուցիչ հարկեր ու տուրքեր: Էրզրումի պայմանագիրը Իրանի ոչ ցավագին կապիտուլյացիա էր: Ռուս դիվանագետ Ա. Կ. Ամբուրգերին հաջողվել էր պարզել, որ Էրզրումի պայմանագիրն ուներ գաղտնի մի կետ Օսմանյան կայսրության կողմից Իրանին օգնություն ցուցաբերելու մասին, որը, անշուշտ, ուղղված էր Ռուսաստանի դեմ:

Անտարակույս, իրանական զորքերի խոշոր հաղթանակները թուրքերի նկատմամբ մեծապես նպաստելու էին շահական արքունիքում հուսահատության հաղթահարմանը և ռազմաշունչ տրամադրությունների վերելքին: Իրանական կառավարող շրջանները ոչ մի կերպ չէին կարողանում համակերպվել այն մտքի հետ, որ առհավետ կորցրել են իրենց «օրինական» կովկասյան տիրույթները: Նրանք հույսը չէին կորցնում, որ հաղթական պատերազմի շնորհիվ իրենց կհաջողվի դրանք վերստին հետ ստանալ: Ռևանշի հասնելու վճռականությունը համակել էր բոլորին: Ուստի շահը, Աբբաս միրզան և պետության ղեկի մոտ կանգնած մյուս կարևոր դեմքերը գիտակցաբար սկսեցին սրել իրանա-ռուսական հարաբերությունները: Իրանին թև էին տալիս նաև Դաղստանից ստացվող լուրերը Ռուսաստանի դեմ տեղական քնակչության ելույթների մասին: Թեհրանի արքունիքը մեծ նշանակություն էր տալիս նաև Պետերբուրգում դեկաբրիստների ապստամբությանը՝ համարելով, որ Նիկոլայ Ա-ի դիրքերն անկայուն են:

Արդեն 1826 թ. սկզբին Իրանի և Ռուսաստանի միջև հարաբերությունները չափազանց լարված էին: Ղաջարական պետությունը տենդորեն նախապատրաստվում էր պատերազմի: Վճռական քայլը կատարելուց առաջ Իրանը փորձեց դաշինք կնքել Օսմանյան կայսրության հետ՝ ընդդեմ «իսլամի ոխերիմ թշնամի» Ռուսաստանի: Այդ նպատակով Ստամբուլ ուղարկվեց միրզա Ֆեյզ-Օլլան, որը սուլթանի հետ հանդիպման ժամանակ շահի անունից խնդրեց դաշնակցել Իրանին կամ, ծայրահեղ դեպքում, ուղղակի աջակցել նրան Ռուսաստանի դեմ նախապատրաստվող պատերազմում: Բանակցությունների սկզբում օսմանյան կառավարությունը ա/ակնողմնորոշեց իրանական դեսպանին հայտնելով, որ Ռուսաստանի դեմ պատերազմի համար իրենք պատրաստի վիճակում ունեն 10-հազարանոց մի զորամաս, մինչդեռ իրականում նրանք Ակկերմանում բանակցություններ էին վարում ռուսների հետ: Երբ այդ փաստը իրանական լրտեսների օգնությամբ հայտնի դարձավ շահին, թուրքերն այլևս խուսանավելու ոչ մի հնարավորություն չունեին և ուղղակի հայտարարեցին Ֆեյզ-Օլլային, որ առաջիկա իրանա-ռուսական պատերազմում կայսրությունը պահպանելու է խստիվ չեզոքություն:

1826 թ. հունիսի 23-ին շիիթական բարձր հոգևորականության ներկայացուցիչները՝ ուլեմները, հրապարակեցին ֆեթվա (գրավոր հրամանագիր) Ռուսաստանի դեմ «ջիհադ» (սրբազան պատերազմ) սկսելու թույլտվության վերաբերյալ: Իսկ 1826 թ. հուլիսի 16-ին Երևանի սարդարի զորքերը ներխուժեցին Բաշ Ապարան: Այնուհետև, հուլիսի 18-ին Աբբաս միրզայի բանակը ներխուժեց Ղարաբաղ և հուլիսի 25-ին սկսեց Շուշիի պաշարումը: Պարսկական զորքերը գրավեցին նաև Ղարաքիլիսան և Ջալալ-Օղլին՝ միաժամանակ ռուսների դեմ հանելով Թալիշի և Շիրվանի խաներին: Երկու ամսից պակաս ժամանակամիջոցի ընթացքում Արևելյան Հայաստանի գավառների մեծ մասն անցավ Իրանի տիրապետության տակ: Այսպիսով՝ սկսվեց իրանա-ռուսական երկրորդ պատերազմը:

Սկզբում ռուսական զորքերը ստիպված էին անկանոն կերպով նահանջել՝ թշնամուն թողնելով Գյանջան, Լենքորանը, Սալյանին, Շիրվանը: Պարսկական զորքերը պաշարեցին Բաքուն: Շուշիի հերոսական պաշտպանությունը, որը 48 օր շարունակ իր վրա գամեց Աբբաս միրզայի հիմնական ուժերը, ռուսական հրամանատարությանը հնարավորություն տվեց ժամանակ շահել: Թիկունքային ուժերի հաշվին համալրվելով նոր զորամասերով՝ 1826 թ. ռուսները ծավալեցին հուժկու հակահարձակում: Գեներալ Մադաթյանցը (Մադաթով) 1826 թ. սեպտեմբերի 3-ին Շամխորի մոտ ջախջախեց Աբբաս միրզայի որդու՝ Մոհամմադ միրզա-

յի զորքերին, իսկ Գյանջայի մատույցներում գեներալ Պասկևիչը կործանիչ հարված հասցրեց հենց իր՝ Աբբաս-միրզայի բանակին: Պարսկական զորքերը խուճապահար փախուստի դիմեցին՝ անցնելով Արաքս գետը: Աբբաս միրզայի ջանքերով ստեղծված իրանական կանոնավոր բանակը համարյա ամբողջապես քայքայվեց: Դրա պատճառը ոչ այնքան նրանց կենսունակության բացակայությունն էր, որքան այն, որ ազդեցիկ խաները, որոնք ի սկզբանե դեմ էին կանոնավոր բանակի ստեղծմանը և կողմնակից էին կովելու սեփական ջոկատներով, հրաժարվում էին ճշտիվ կատարել գլխավոր հրամանատարի հրամանները, գործում էին ինքնագլուխ կերպով և այլն: Աբբաս միրզայի կողմից նոր բանակ հավաքելու փորձերն էական արդյունքներ չտվեցին: Նույնիսկ նրա եղբայրները հրաժարվեցին նրան զորք տրամադրել: Արդեն 1826-1827թթ. ձմռանը Աբբաս միրզայի բանակից մնացին միայն խղճուկ մնացուկներ:

1827 թ. ռուսական բանակը պաշարեց Երևանը, և նույն թվականի հոկտեմբերին հայ բնակչության օգնությամբ ռուսներին հաջողվեց գրավել այդ ամուր քաղաք-ամրոցը: Խ. Աբովյանը իր «Վերք Հայաստանի» վեպում գունեղ կերպով նկարագրում է Երևանի բնակչության խանդավառ վերաբերմունքը ռուս ազատարար զորքերի նկատմամբ՝ միաժամանակ պատմելով հայ կամավորական ջոկատների խիզախության ու անվեհերության մասին: Երևանից հետո ռուսները գրավեցին նաև Նախիջևանի խանությունը: Այնուհետև, անցնելով Արաքսը և մուտք գործելով Ատրպատական, նրանք գրավեցին Թավրիզը, Խոյը, Մարանդը, Սալմաստը և այլ քաղաքներ: Իրադարձություններին ականատես ռուս աստիճանավոր Նոսկովը վկայում է, որ երբ գեներալ Մադաթովի զորքերը մոտենում էին Թավրիզին, «քաղաքում բնակվող հայերի մոտ եղած զենքը իշխանություններն անմիջապես բռնագրավեցին: Հայերին արգելվեց դուրս գալ իրենց տներից, նույնիսկ նրանց սնունդ էր տրվում պատերի վրայով, իսկ այն փողոցները, որոնք տանում էին դեպի հայերի թաղամասերը, լրիվ փակվել էին»:

Խուճապի մեջ էր նաև Թեհրանը, որտեղ ենթադրում էին, որ գեներալ Մադաթովը կներխուժի նաև ղաջարների մայրաքաղաքը:

Միանգամայն ակներև էր, որ Իրանը տանուլ է տվել պատերազմը: Աբբաս միրզայի առաջարկով սկսվեցին հաշտության բանակցություններ, որոնք ավարտվեցին 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայում հաշտության պայմանագրի ստորագրմամբ: Գյուլիստանի պայմանագիրը հայտարարվում էր իր ուժը կորցրած: Իրանի և Ռուսաստանի միջև հաստատվում էր նոր սահման, որն անցնելու էր Արաքս գետով: Ռուսաս-

տանին էին անցնում Երևանի և Նախիջևանի խանությունները: Իրանը պարտավորվում էր Ռուսաստանին մուծել ռազմատուգանք 10 քուրուր թուման (20 միլիոն արծաթե ռուբլի) գումարով: Պայմանագրի 8-րդ հոդվածը հաստատում էր Գյուլիստանի պայմանագրի համապատասխան կետն այն մասին, որ Ռուսաստանը ստանում է Կասպից ծովում նավատորմ ունենալու իրավունք, իսկ պարսիկներին, ընդհակառակը, մերժվում էր այդ իրավունքը: Ռուսաստանը Աբբաս-միրզային ճանաչում էր որպես գահաժառանգ: Ռուսահպատակներին Իրանում տրամադրվում էր հյուպատոսական իրավասություն: Ռուսահպատակ վաճառականների համար սահմանվում էին ներմուծվող և արտահանվող ապրանքների 5%-ի չափով մաքսատուրք և առևտրական այլ արտոնություններ: Պայմանագիրը նախատեսում էր դեսպանորդների փոխանակում և Ռուսաստանին իրավունք էր տրամադրում իր հայեցողությամբ Իրանի քաղաքներում բաց անելու հյուպատոսություններ: Ընդ որում՝ հյուպատոսությունները ստանալու էին արտաերկրայնության իրավունք և գտնվելու էին շահական իշխանությունների հատուկ հովանավորության ներքո:

Պայմանագրի 13-րդ հոդվածը նախատեսում էր ռազմագերիների, ինչպես նաև ավելի վաղ ժամանակներում Իրան քշված գերիների՝ հայերի, վրացիների, ազերի-թուրքերի վերադարձը Անդրկովկաս՝ իրենց հայրենի օջախները: Այնուհետև երաշխավորվում էր մեկ տարվա ընթացքում Իրանի բնակիչների ազատ տեղափոխությունը Ռուսաստան և հակառակը:

Թուրքմենչայի հաշտության պայմանագրի հետ միաժամանակ՝ 1828 թ. փետրվարի 10-ին ստորագրվեց ռուս-իրանական հատուկ տրակտատ առևտրի մասին, որով ռուս և ռուսահպատակ վաճառականները Իրանում դրվում էին ավելի ձեռնտու պայմանների մեջ, քան իրանական վաճառականները:

Թուրքմենչայի պայմանագիրը իրենով նշանավորում էր XIX դ. սկզբի ռուս-իրանական պատերազմների ավարտը:

Ռազմատուգանքը մուծելու պարտավորությունը ստիպեց իրանական կառավարությանը, մտցնել արտակարգ հարկեր ու տուրքեր, որոնք չափազանց ծանր բեռ էին առանց այն էլ պատերազմի հետևանքով քայքայված երկրի համար: Թեհրանում ռուսական դեսպանորդ Ա. Գրիբոյեդովը տեղեկացնում էր իր կառավարությանը, որ երկիրը ծայրահեղ աղքատացել ու ծանրաբեռնվել է ուժից վեր հարկերով: Նրա ասելով՝ երբ պարզվեց, որ ժողովուրդն այլևս ոչինչ չի կարող վճարել հարկահասներին, Աբբաս միրզան «մեզ մոտ գրավ դրեց իր բոլոր թանկարժեք իրերը: Նրա արքունիքը և կանայք տվեցին նույնիսկ իրենց զգեստների աղա-

մանդյա կոճակները: Աբբաս միրզան հրամայեց հալել հրաշալի մոմակալները և հարեմի թանկարժեք իրերը, որոնց վրա կատարված աշխատանքը նույնքան արժե, որքան և ինքը՝ մետաղը»: Բուռն դժգոհություն էին դրսևորում նաև այն խաները, որոնք զրկվել էին իրենց հողային տիրույթներից՝ թիուլներից: Դժգոհ էր շիիթական հոգևորականությունը, որի եկամուտները կտրուկ կրճատվել էին: Դժգոհ էր նաև բանակը, որի համար ռազմական ավար ձեռք բերելու աղբյուրը համարյա չորացել էր: Խախտվել էր Իրանի կենտրոնական և հյուսիսային շրջանների ավանդական առևտուրը Անդրկովկասի հետ, որը ծանր հարված էր վաճառականական դասի համար: Մի խոսքով՝ իրանական հասարակայնության բոլոր խավերին համակել էր զայրույթը՝ որպես հետևանք իրենց անելանելի վիճակի: Այդ զայրույթն ու ցասումը վարպետորեն ուղղվում էին Ռուսաստանի և Իրանում նրա ներկայացուցիչների, մասնավորապես դեսպանորդ Ա. Գրիբոյեդովի դեմ: Վերջինիս թախանձագին դիմումները Պետերբուրգին՝ որոշ չափով երկարաձգել ռազմատուգանքը վճարելու ժամկետները և մեղմել ճնշումը, մնում էին անարձագանք: Ցարը պահանջում էր ոչ մի քայլ զիջումների չգնալ:

Այդ բոլորի հետևանքով հակառուսական տրամադրություններն Իրանում գնալով ահագնանում էին: Մզկիթներում և շուկաներում շիա հոգևորականությունն իր քարոզչությամբ կրակի վրա յուղ էր լցնում: Ժողովրդին ներշնչում էին, որ Իրանի բոլոր դժբախտությունների պատճառը Ռուսաստանն է: Մոլեռանդ ամբոխը և Թեհրանի քաղաքային տականքները, որոնք պատրաստ էին մի բուռ բրնձի վարձատրությամբ որոշակի թեմայով ահռելի հարայ-հրոց բարձրացնել, լցվում էին փողոցները «Մահ Ռուսաստանին, մահ Գրիբոյեդովին» կարգախոսներով: Պակասում էր մի կայծ՝ վիթխարի հրդեհ բռնկվելու համար: Այդպիսի կայծի դեր կատարեց հետևյալ միջադեպը: 1829թ. հունվարին Գրիբոյեդովին դիմեցին շահի գանձարանապետ և թանկարժեք քարերի գլխավոր հսկիչ, շահական հարեմի ներքինի, ծագումով հայ, սակայն իսլամացած Միրզա Յաղուբը (Մարգարյան) և շահի ազգական, նախկին սաղրազամ (գլխավոր վեզիր) Ալլայար խանի հարեմի երկու հայ կանայք՝ խնդրելով, որ դեսպանորդն իրենց ուղարկի հայրենիք: Դա օրինախախտում չէր, քանի որ նախատեսված էր Թուրքմենչայի պայմանագրի 13-րդ հոդվածով: Գրիբոյեդովը Միրզա Յաղուբին և այդ կանանց վերցրեց իր հովանավորության տակ և նրանց թաքցրեց ռուսական միսիայի շենքում: Այդ դեպքը խիստ զայրացրեց շահին, մանավանդ որ Միրզա Յաղուբը կարող էր Գրիբոյեդովին պատմել Իրանի ֆինանսների վիճակի

մասին և առհասարակ հրապարակել բազմաթիվ արքունական գաղտնիքներ: Նա պահանջեց իրեն հանձնել Միրզա Յաղուբին: Գրիբոյեդովը հրաժարվեց: Այնժամ Յաղուբին մեղադրեցին, որ իբր նա շահական գանձարանից հափշտակումներ է կատարել:

Ալլայար խանն ու հոգևորականությունն անմիջապես կառչեցին այդ միջադեպից՝ ծավալելով մոլեգին քարոզչություն, որ ռուս դեսպանորդը խախտում է երկրի օրենքներն ու սովորույթները և այլն: Ամբոխին կոչ նետվեց՝ հարձակվել ռուսական միսիայի վրա և հաշվեհարդար տեսնել Գրիբոյեդովի հետ: 1829 թ. փետրվարի 11-ին Ալլայար խանի մարդկանցից և քաղաքային տականքներից բաղկացած ամբոխը հարձակվեց ռուսական միսիայի վրա և ջախջախեց այն: Ա. Ս. Գրիբոյեդովը և նրա աշխատակիցները զոհվեցին:

Ցարական կառավարությունը ձեռնպահ մնաց դիմելու վճռական քայլերի իր դեսպանորդի զոհվելու կապակցությամբ: Նիկոլայ Ա-ն ոչ միայն բավարարվեց Ֆաթհ Ալի շահի կողմից ներողություն խնդրելու և նվերներ մատուցելու քայլով, որոնք Պետերբուրգ ուղարկվեցին շահի թոռ Խոսրով-միրզայի միջոցով, այլև նույնիսկ երկու միլիոն ռուբլով պակասեցրեց ռազմատուգանքի գումարը: Ըստ երևույթին, դրանում կարևոր դեր խաղաց այն հանգամանքը, որ այդ ժամանակ ընթանում էր ռուս-թուրքական պատերազմ, և անցանկալի էր հարաբերությունների սրումը Իրանի հետ:

Պետերբուրգի կողմից Իրանի «ներողությունն» ընդունելուց հետո իրանա-ռուսական հարաբերություններում սկիզբ էր դրվում մի նոր էտապի: Իրան ուղարկվեց նոր դեսպանորդ իշխան Դոլգորուկին: Ռուսական կառավարությունը հետաձգեց ռազմատուգանքի հերթական մուծման ժամկետը: Սկսվեց երկու պետությունների սահմանների ճշտման ու կարգավորման գործընթացը: Դրական լուծում ստացան մի շարք անդրկովկասյան խաների՝ Իրանո՞ւմ, թե՞ Ռուսաստանում բնակություն հաստատելու հարցերը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց մի շարք քոչվոր ցեղերի՝ մի երկրից մյուսը տեղափոխվելու, ինչպես նաև հայերի, ասորիների և մահմեդականների առանձին ընտանիքների՝ ռուսական կայսրության սահմանները տեղափոխվելու հարցը: Հաջողությամբ սկսեցին զարգանալ իրանա-ռուսական առևտրատնտեսական կապերը:

Սակայն Իրանը շարունակում էր մնալ ծայրահեղ դժվարին կացության մեջ: Պատերազմների հետևանքով նա ուժասպառ էր եղել: Խոլերայի և ժանտախտի համաճարակներն ուղղակի մարդաթափ արեցին ամբողջ շրջաններ: Սովը, հատկապես երկրի հարավային շրջաններում, ներքին երկպառակությունները, ուժից վեր հարկային բեռը և այլն քայքայեցին

երկիրը և բնակչությանը հասցրին մինչև թշվառության եզրը:

Ճգնաժամային վիճակից դուրս գալու փնտրտուքներում շահը և գահաժառանգը իրենց առջև տեսնում էին երկու ուղի. հնազանդությունից դուրս եկած տարբեր նահանգների իշխանազուն-կառավարիչների ընկճումը և նրանցից նշանակալից միջոցների կորզումը և կամ հարևան երկրների՝ Աֆղանստանի, Միջին Ասիայի, Օսմանյան կայսրության տիրույթների նվաճման ճանապարհով նոր հողերի և հարուստ ռազմական ավարի ձեռքբերումը: Իրենց հետագա գործունեության ընթացքում Իրանի կառավարող շրջանների կողմից այդ երկու տարբերակներն էլ փորձարկվեցին:

Ռուս-իրանական պատերազմի տարիներին խորասանյան խաները, Քերմանի, Յեզդի և մի շարք այլ շրջանների ու քաղաքների կառավարիչները, որոնք ձգտում էին ինքնագլխության, այլևս դադարել էին կենտրոնական կառավարությանը ենթարկվելուց: Ուստի պատերազմի ավարտից անմիջապես հետո Աբբաս միրզան ձեռնամուխ եղավ նրանց ընկճմանը: Հերթը հասավ նաև Աֆղանստանի տարածքում գտնվող Հերաթի խանությանը, որի կառավարիչը հրաժարվում էր ընդունել իր խանության նկատմամբ Իրանի տիրապետությունը և հաճախ շահի դեմ ապստամբության էր հրահրում Խորասանի նահանգի խաներին:

1833 թ. իրանական զորքերը Աբբաս միրզայի որդու՝ Մոհամմադ միրզայի և ղայեմ-մաղամ Աբու-լ-Ղասեմ Ֆարահանիի գլխավորությամբ Խորասանից շարժվեցին դեպի Հերաթ և պաշարեցին այն: Այստեղ նրանց լուր հասավ, որ հոկտեմբերի 23-ին Մեշհեդում շահական գահի ժառանգորդ Աբբաս միրզան կնքել է իր մահկանացուն: Տեղեկանալով իր հոր մահվան մասին՝ Մոհամմադ միրզան, որը ծեր ու հիվանդ Ֆաթհ Ալի շահի մահվան դեպքում կարող էր դառնալ գահի հավակնորդ, հանեց Հերաթի պաշարումը, համաձայնագիր կնքեց այդ խանության կառավարիչ Քամրան-միրզայի հետ և իր զորքերով շտապեց Թեհրան: Մայրաքաղաք հասնելուց հետո Մոհամմադ միրզան հայտարարվեց գահաժառանգ և ընդունված կարգի համաձայն՝ նշանակվեց Ատրպատականի կառավարիչ: Սակայն գահի շուրջը բորբոքված կրքերը դեռ չհանդարտված՝ 1834 թ. հոկտեմբերին մահացավ Ֆաթհ Ալի շահը: Անմիջապես հայտնվեցին գահի մի քանի հավակնորդներ, այդ թվում նաև Ֆաթհ-Ալի շահի երեք որդիները: Նրանցից մեկին՝ Զելլ-ի Սուլթանին, հաջողվեց Թեհրանում զավթել իշխանությունը: Նա իրեն հայտարարեց շահ և գահաժառանգ Մոհամմադ միրզային գրեց մի նամակ, որտեղ շահական տոնով հրամայում էր, որ քանի դեռ ինքը թագավորելու է, նա պետք է մնա Թավրիզում, այլապես կզրկվի գահաժառանգի իր կարգավիճակից:

Սակայն, ելնելով իրենց քաղաքական հաշվարկներից, Անգլիան և Ռուսաստանը պաշտպանեցին Մոհամմադ միրզայի թեկնածությունը, և օգտվելով այդ հզոր աջակցությունից՝ նա կարողացավ ասպարեզից հեռացնել շահական գահի մնացած բոլոր հավակնորդներին և 1835 թ. հունվարի 31-ին թագադրվեց՝ դառնալով ղաջարական գահի երրորդ տիրակալը: Ժամանակակիցները նրան բնութագրում են որպես ոչ խելացի, ձեռներեցությունից զուրկ, հիվանդոտ մի մարդու, որը շատ վատ էր կողմնորոշվում պետության ներքին և արտաքին գործերում, պետական ողջ իշխանությունը տվել էր իր առաջին միհիստր դայեմ-մաղամ հաջի Աղասիի ձեռքը և նստելով շահական գահի վրա՝ կատարում էր դիտորդի դեր:

2. ՀԵՐԱԹԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՖԼԻԿՏԸ: ՂԱՋԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

1837 թ. Մոհամմադ շահ Ղաջարը (1834-1848) դուրս եկավ արշավանքի Հերաթի խանությունը նվաճելու համար, որը տնտեսապես և պատմականորեն սերտորեն կապված էր Իրանի հետ: Շահը հայտարարեց, որ ինքը ձեռնարկում է այդ արշավանքը, որովհետև Հերաթի կառավարիչ Քամրան միրզան չի կատարում իր կողմից ստորագրված համաձայնագրի պայմանները և շահական գանձարան չի մուծում համաձայնագրով նախատեսված գումարները:

Ձեռնարկելով այդ արշավանքը՝ շահը մտադիր էր միաժամանակ լուծել մի շարք հարցեր. թուլացնել խորասանյան խաներին, որոնք, օգտվելով Հերաթի կառավարչի աջակցությունից, ձգտում էին ինքնագլխության և մշտապես ապստամբում էին կենտրոնական կառավարության դեմ. վերջ տալ Սիսթանի նկատմամբ աֆղանների փայփայած հավակնություններին. իր իշխանությունը հաստատել Հերաթի նկատմամբ, որը Սեֆյանների և Նաղիր շահի ժամանակներում մտնում էր Իրանի կազմի մեջ:

1837 թ. նոյեմբերին շահական զորքերը մոտեցան Հերաթին և այն պաշարեցին: Դա մեծապես անհանգստացրեց անգլիացիներին, որոնք կարծում էին, որ այդ արշավանքի մեջ խառն է Ռուսաստանի մատը:

Բացի այդ, նշված շրջանում արդեն բրիտանական դիվանագիտությունը ծրագրեր էր մշակում Աֆղանստանը և Միջին Ասիան նվաճելու ուղղությամբ, իսկ այդ ծրագրային նախանշումներում Հերաթն իր կարևորագույն ստրատեգիական դիրքով կարող էր խաղալ առաջնակարգ դեր՝ որպես հենակետ: Այս նկատառումներից ելնելով՝ Թեհրանում անգլիական դեսպանորդ Մաք-Նեյլը շտապեց Հերաթի մոտ տեղակայված Մոհամմադ շահի ռազմական ճամբարը, որտեղ փորձում էր սպառնալիքների միջոցով ստիպել շահին՝ հանելու Հերաթի պաշարումը: Տեսնելով, որ այդ բոլորը չի ազդում շահի վրա՝ դեսպանորդը հայտարարեց, որ Հերաթի արշավանքը բրիտանական կառավարությունը դիտում է որպես իր նկատմամբ թշնամական ակտ, ուստի և ինքը իր միսիայի ողջ կազմով հեռանում է Իրանից: Իսկապես, նա թողեց շահի ճամբարը և մեկնեց արևմուտք՝ թուրքական սահմանի ուղղությամբ: Հավանաբար ըստ նախնական պայմանավորվածության՝ բրիտանական ռազմական նավատորմը հայտնվեց Պարսից ծոցում և գրավեց Բուշեհրից հյուսիս-արևմուտք գտնվող Խարք կղզին: Սակայն մկանների այդ ցուցադրումը ևս բավարար ազդեցություն չունեցավ շահական արքունիքի վրա և Լոնդոնը այս անգամ սկսեց սպառնալ պատերազմով: Վախեցած շահը 1838թ. օգոստոսին հանեց Հերաթի պաշարումը: Սակայն, քանի որ իրանական զորքերը շարունակում էին իրենց ձեռքում պահել Հերաթի իշխանության մեջ մտնող Հորիան ամրոցը և Ֆերրահ ու Սաբզեվար քաղաքները, Մաք-Նեյլը 1838թ. նոյեմբերին հայտարարեց, որ Անգլիան խզում է իր դիվանագիտական հարաբերությունները Իրանի հետ և այս անգամ իսկապես հեռացավ Իրանից:

Վախեցած Մոհամմադ շահը վերջնականապես ընկրկեց և Անգլիայի հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով Լոնդոն ուղարկեց Հոսեյին խանին: 1838թ. կեսերին նրա և վարչապետ Պալմերստոնի միջև սկսվեցին բանակցություններ: Իրանական դիվանագիտական հանձնակատարին ներկայացվեց 11 կետերից բաղկացած մի վերջնագիր, որոնց անվերապահ ընդունման դեպքում Անգլիան համաձայնվում էր Իրանի հետ վերականգնել դիվանագիտական հարաբերությունները: Պալմերստոնի ներկայացրած առավել կարևոր պահանջներն էին. իրանական զորքերը հետ կանչել Հորիան ամրոցից, ինչպես նաև Աֆղանստանի այլ կետերից. Անգլիայի հետ կնքել առևտրական պայմանագիր, որը նրան կտրամադրեր արտաերկրյա իրավունք և անգլիական հպատակների վրա կտարածեր կապիտուլյացիաների ռեժիմը:

Թեև այդ պահանջները և նրանց ներկայացման ձևը վիրավորական

էին Իրանի պետական հեղինակության համար, սակայն իր անձնական հանգստությանն ու անվտանգությանը հետամուտ շահը հեզորեն ընդունեց այդ պահանջները: 1841թ. մարտին Հորիան ամրոցը հանձնվեց Հերաթի կառավարիչ Քամրան միրզային, որը դեռ 1840 թ., ըստ էության, ձևականորեն ճանաչել էր իր վասալական կախումը շահից: Կատարվեցին նաև վերջնագրի մյուս պահանջները: 1841 թ. հոկտեմբերին Անգլիայի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունները վերականգնվեցին և անգլիական դեսպանորդ Մաք-Նեյլը վերադարձավ Թեհրան: Անգլիական զորքերը դուրս եկան Խարք կղզուց 1842 թ.: 1841 թ. հոկտեմբերի 28-ին ստորագրվեց անգլո-իրանական առևտրական պայմանագիր, որով անգլիացիներին տրամադրում էր արտաերկրայնության իրավունք և ազատում էր ներքին մաքսատուրքեր վճարելու պարտավորությունից: Իրան ներմուծվող անգլիական ապրանքների համար սահմանվում էր արտոնյալ մաքսատուրք: Անգլիայի վրա տարածվում էին նաև կապիտուլյացիոն այն բոլոր իրավունքները, որոնք Ռուսաստանը ստացել էր 1828թ. Թուրքմենչայի պայմանագրով: Ավելի ուշ՝ 1845 թ., Իրանը նույնանման արտոնություններ հատկացրեց նաև Ֆրանսիային, իսկ ապա նաև Ավստրիային և այլ եվրոպական պետությունների: ԱՄՆ-ի վրա արտաերկրայնության ու կապիտուլյացիոն իրավունքները տարածվեցին քիչ ավելի ուշ՝ 1856 թ. դեկտեմբերի 13-ին կնքված իրանա-ամերիկյան «Բարեկամության և առևտրի մասին» պայմանագրի շնորհիվ: Այդ պայմանագրով կողմերը նաև պայմանավորվում էին փոխանակել դեսպաններ կամ դիվանագիտական գործակալներ: Հարկ է նշել, որ այդ պայմանագիրն իրենով նշանավորեց իրանա-ամերիկյան հարաբերությունների սկզբնավորումը: Մինչ այդ, Իրանում եռանդուն գործունեություն էին ծավալել ամերիկյան բողոքական եկեղեցու միսիոներները, որոնք 1834 թ. Ուրմիայում ստեղծել էին իրենց կենտրոնը և այնտեղից աստիճանաբար տարածվել ամբողջ Իրանով մեկ՝ հատկապես քարոզչական լայն գործունեություն ծավալելով Ատրպատականում և Կենտրոնական Իրանում:

Աստիճանաբար կապիտուլյացիոն իրավունքները տարածվեցին նաև մյուս պետությունների վրա: Այսպես՝ 1861 թ. ստորագրվեց հույն-իրանական պայմանագիր «Բարեկամության, առևտրի և նավագնացության մասին», 1873 թ.՝ իրանա-գերմանական առևտրական պայմանագիր: Կապիտուլյացիոն իրավունքներից սկսեցին օգտվել նաև Շվեդիան, Դանիան, Հոլանդիան, Բելգիան, Իսպանիան, Իտալիան և Ավստրո-Հունգարիան:

XIXդ. 30-40-ական թթ. բարդ զարգացումներ էին տեղի ունենում

իրանա-թուրքական հարաբերություններում: Երկու պետությունների միջև սահմանային վեճերը, որոնք սկիզբ էին առել XVI-XVII դդ. նոր թափով բորբոքվեցին նշված ժամանակաշրջանում: 1837 թ. ձգտելով հարված հասցնել իրանական Մոհամմերա (ներկայումս Խորրեմշահր) իրանական նավահանգստի առևտրական նշանակությանը, որը հանդիսանում էր Բասրայի մրցակիցը, Բաղդադի վալի Ալի Ռեզա փաշան հարձակում գործեց Մոհամմերայի վրա, կողոպուտի մատնեց քաղաքը և կանանց ու աղջիկներին քշեց գերության: Այնուհետև՝ 1840 թ. թուրքական զորքերը ներխուժեցին Իրանական Քրդստան: Իրանը դրան պատասխանում էր «չափաուլներ» (ասպատակ սփռել) կազմակերպելով դեպի Օսմանյան կայսրության տարածքը: Թուրք-իրանական սահմանային ընդհարումները, ի վերջո, 1842 թ. վերածվեցին պատերազմի: Բաղդադի Ալի Ռեզա փաշան (Նաջիբ փաշա), գրավելով Քարբալան, սրի քաշեց քաղաքի համարյա ողջ շիիթական բնակչությանը, թվով 15-22 հազար մարդու՝ իր փաշայության մեջ բնակվող բոլոր շիաներին համարելով Իրանի կողմնակիցներ: Այդ կոտորածի հետևանքով բազմաթիվ ազդեցիկ շիիթական ուլեմներ (աստվածաբան-գիտնականներ) սպանվեցին: Ի դեպ, մեծ թվով հարուստ իրանցիներ իրենց կապիտալները ի պահ էին տվել այդ ուլեմներին՝ համարելով, որ սրբազան քաղաքի հեղինակավոր հոգևորականներն ամենահուսալին են, քանի որ ոչ Իրանում և ոչ էլ Օսմանյան կայսրության մեջ գոյություն չունեին անձի և ունեցվածքի անվտանգության երաշխիքներ: Եվ ահա այդ հարուստները, զրկվելով իրենց ունեցվածքից, կառավարության վրա ճնշում էին գործադրում պատժելու «ավազակ Ալի Ռեզային»: 1842 թ. իրանական զորքերը երկու անգամ ներխուժեցին թուրքական տարածք:

Իրանը և Օսմանյան կայսրությունը սուր վեճի մեջ էին գտնվում նաև կրոնա-քաղաքական խնդիրների շուրջը: Այդ երկու պետություններն էլ հավակնում էին մահմեդական աշխարհում հոգևոր առաջնության դերին. նրանցից յուրաքանչյուրը համարում էր, որ իսլամի իր դավանած ուղղությունը՝ շիիթականությունը կամ սուննիթականությունը, ավելի ճիշտ է և «մաքուր»: Օսմանյան կայսրության տարածքում շիաների սրբավայրերի (Քարբալա, Նաջաֆ, Քազեմեյն) գտնվելը Օսմանյան կայսրությանը հնարավորություն էր տալիս տարբեր եղանակներով ճնշում գործադրելու Իրանի վրա, այդ թվում նաև իրանական ուխտավորների առջև արգելքներ հարուցելու ճանապարհով: Բացի այդ, Օսմանյան կայսրությունը կրոնի միջոցով կապված էր Իրանի հարևան այն երկրների հետ (Աֆղանստան, Հնդկաստան, Բուխարայի և Խիվայի խանու-

թյուններ և այլն), որոնք «ուղղադավան» մահմեդականներ էին, այսինքն հանդիսանում էին սուննիզմի հետևորդներ: Թուրքական սուլթանը բոլոր սուննիթ մահմեդականների խալիֆն էր, հոգևոր առաջնորդը:

Օսմանյան կայսրությունն առհասարակ հաճույքով ընդունում էր ղաջարների թագավորող տան բոլոր քաղաքական հակառակորդներին: Դրա հետևանքով նա դարձավ հակաղաջարական ընդդիմության ճգնության կենտրոն: Իսկ Իրանում ապաստան էին գտնում սուլթանական վարչակարգի բոլոր հակառակորդները:

Թուրք-իրանական մերթ հանգչող, մերթ նոր ուժով բռնկվող պատերազմական գործողություններին վերջ տալու նպատակով 1843 թ. մայիսին Էրզրումում գումարվեց միջազգային մի համաժողով, որին մասնակցում էին չորս պետությունների՝ Իրանի, Թուրքիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի ներկայացուցիչները: Համաժողովի աշխատանքները ընդհատումներով տևեցին մինչև 1847 թ., երբ նույն թվականի մայիսի 31-ին կնքվեց իրանա-թուրքական խաղաղության պայմանագիր: Իրանը հրաժարվում էր Սուլեյմանիեի և Ջոհաբի շրջանի արևմտյան մասի նկատմամբ հավակնություններից: Իր հերթին Օսմանյան կայսրությունը ճանաչում էր Իրանի իրավունքները Մոհամմերա նավահանգստի, Հեզր կղզու և Շաթթ-էլ-Արաբ գետի ձախ ափի շրջանում նավագնացության վերաբերյալ: Թուրքերը պարտավորվում էին այլևս արգելքներ չհարուցել իրանական ուխտագնացների առջև: Կողմերը պայմանավորվեցին նաև արգելք չհանդիսանալ երկու երկրների միջև առևտրին, թույլ չտալ ցեղերի ասպատակությունները միմյանց տարածքում և այլն: Որոշվեց ստեղծել մի խառը հանձնաժողով՝ երկու երկրների միջև ճշգրիտ սահմաններ որոշելու համար:

Էրզրումի պայմանագիրը ստորագրելուց ընդամենը մի քանի ամիս անց, խախտելով այն, Օսմանյան կայսրությունը բռնի ուժով զավթեց առաջնակարգ ստրատեգիական նշանակություն ունեցող Ղոթուրի շրջանը, որը Իրանին հաջողվեց հետ ստանալ միայն 1878 թ. Բեռլինի կոնգրեսի ընդունած 60-րդ հոդվածի շնորհիվ: Այդ հարցում իրանական կառավարությանը մեծ ծառայություն մատուցեց Լոնդոնում իրանական դեսպան, հայազգի Մելքոն խանը (Մալքոմ խան): Նշված ծառայության համար շահը նրան պարգևատրեց Իրանի ամենաբարձր շքանշանով:

Մոհամմադ շահի կառավարման շրջանում օտարերկրյա ազդեցությունն Իրանում զգալիորեն մեծացավ: Եվրոպական, հատկապես անգլիական ու ռուսական դիվանագետները եռանդուն կերպով միջամտում էին երկրի ներքին գործերին: Այդ շրջանը նշանավորվեց նաև նրանով,

որ օտարերկրյա, հատկապես անգլիական կապիտալը, սկսեց ակտիվորեն ներթափանցել Իրան: XIXդ. 30-ական թթ. սկսած՝ Իրանի տարբեր քաղաքներում հիմնադրվեցին եվրոպական ընկերությունների առևտրական տներ: Օտարերկրյա կապիտալի ներթափանցումն արագորեն քայքայում էր Իրանի արհեստներն ու տնայնագործական արտադրությունը, որոնք չէին դիմանում եվրոպական մեքենայական ապրանքների մրցակցությանը: Շահական կառավարությունը և նահանգների կառավարիչները չէին կարողանում արդյունավետ միջոցառումներ ձեռնարկել օտարերկրյա մրցակցությունից հայրենական արտադրության ապրանքների պաշտպանության համար:

1848 թ. օգոստոսի 24-ի գիշերը Մոհամմադ շահը մահացավ: Այդ մասին գահաժառանգ Նասր-էդ-դին միրզան տեղեկացավ միայն օգոստոսի 31-ին՝ Թեհրանից ստանալով իր մոր նամակը: Անհրաժեշտ էր շտապ մեկնել Թեհրան, որպեսզի ասպարեզում հայտնված գահի հավակնորդներ Սեյֆ-ուլ-Մուլյուք միրզան և մյուսները երկրում չհրահրեին անկարգություններ և չբարդացնեին իր գահաժառանգման գործը: Նասր-էդ-դին միրզայի կարգադրությամբ՝ նրա ռազմական մինիստր ամիր Նեզամ միրզա Թաղի խանը շտապ հավաքեց զորքերի հինգ գունդ՝ գահաժառանգին Թեհրան ուղեկցելու համար, սակայն մեկնումն իրագործել հնարավոր չէր գանձարանի դատարկ լինելու պատճառով: Ապագա շահն իրեն հայտարարեց հիվանդ, որպեսզի ժամանակ շահի դրամ հայթայթելու համար: Ի վերջո, նրան հաջողվեց հույն և պարսիկ վաճառականներից ստանալ 20 հազար թուման, և իր շքախմբով, զորքերի ուղեկցությամբ, սեպտեմբերի 6-ին նա դուրս եկավ Թավրիզից և ուղևորվեց Թեհրան:

1848 թ. հոկտեմբերի 19-ին հանդիսավոր պայմաններում տեղի ունեցավ Նասր-էդ-Դին շահի (1848-1896) թագադրման արարողությունը: Ժամանակակիցները և հետագա ուսումնասիրողները ղաջարական դինաստիայի այս թագակիր տիրակալին գնահատում են որպես խելացի, բավարար չափով կրթված, պետական գործունեության համար նախապատրաստված, եվրոպական քաղաքակրթության արժեքները գնահատող և երկիրը ճգնաժամային վիճակից դուրս բերելու վճռականությամբ համակված մի քաղաքական գործիչ:

Նասր-էդ-Դին շահը երեք անգամ ուղևորություն է կատարել Եվրոպա և Ռուսաստան (1873, 1878, 1889 թթ.):

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԲԱԲԻՆԵՐԻ ԿՐՈՆԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԱՄԻՐ ՆԵՋԱՄԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

XIX դ. Իրանը պարտություն կրեց իրանա-ռուսական երկու պատերազմներում, տանուլ տվեց Աֆղանստանի հետ պայքարը Հերաթի խանության համար, չկարողացավ կարգավորել իր հարաբերությունները միջինասիական խանությունների և Օսմանյան կայսրության հետ: Երկիրը մխրճվել էր խորը սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի մեջ, որը համակել էր բնակչության բոլոր խավերին և տնտեսական ու քաղաքական գործունեության բոլոր բնագավառները՝ անդրադառնալով երկրի մարտունակության և նրա միջազգային հարաբերությունների վրա:

Շահական կառավարության այդ անհաջողությունները և տնտեսական կյանքի պայմանների շեշտակի վատթարացումը դժգոհություն առաջ բերեցին երկրում, ընդ որում՝ պարսիկ (ֆարս) բնակչության մի մասի շրջանում ձևավորվեց այն մտայնությունը, որ երկրի աղետյալ վիճակի պատճառը թյուրք կառավարիչներն են՝ ի դեմս ղաջարական դինաստիայի:

Քաղաքական ու սոցիալական դժգոհության այդ պարարտ ենթահողի վրա երկրում ծայր առան քաղաքային և գյուղական բնակչության հուզումներ, ցեղերի ապստամբություններ, ծայրամասային շրջանների ֆեոդալների անջատողական շարժումներ և այլն: Երկրի առաջավոր ուժերը հանդես էին գալիս նոր սոցիալական կարգեր հաստատելու օգտին: Նրանց մոտ հասունանում էր իրանական պետության արդիականաց-

ման գաղափարը: Որպես դրա նմուշ՝ նկատի էին առնվում թանզիմաթի բարեփոխումները Օսմանյան կայսրությունում:

Շիիթական հոգևորականությունը, որն ավանդաբար մեծ ազդեցություն ուներ Իրանում, երկրի առջև կանգնած մարտահրավերների նկատմամբ միասնական տեսակետ չուներ: Նրա մի մասը, հատկապես էլիտար խավը, կողմնակից էր հին կարգերի պահպանման և հանդես էր գալիս ամեն մի նորամուծության դեմ: Իսկ հոգևորականության մի ոչ ստվար մասը, թեև զգում էր պետության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, սակայն ինչպիսի փոփոխություններ՝ նա չգիտեր: Արժե՞ր արդյոք վերադառնալ վաղ իսլամի ժամանակներին, ինչպես կոչ էին անում վահհաբիները, կամ թուրքական թանզիմաթի օրինակով գնալ պետության արդիականացման ճանապարհով, թե՞ Իրանի համար որոնել սեփական զարգացման ուղի՝ առաջնորդվելով զանազան շիիթական աղանդների առաջ քաշած սկզբունքներով:

Երկրի քաղաքական զարգացման ուղիների ընտրության այս կատարյալ շփոթի ու անորոշության պայմաններում Իրանում հրապարակ է իջնում մի նոր ուսմունք՝ բաբիզմը կամ բաբիականությունը, որը կարճ ժամանակամիջոցում գտավ լայն տարածում՝ տիրապետելով տասնյակ հազարավոր ընչազուրկ և հուսահատ մարդկանց մտքերը: Այդ ուսմունքի հիմնադիրը սեյեդ Ալի Մոհամմադն էր (1819-1850 թթ.), որը ծնվել էր Շիրազում, կտորեղեն վաճառող առևտրականի ընտանիքում: Հետևելով ընտանեկան ավանդույթին՝ Ալի-Մոհամմադը ևս Բենդեր-Բուշեհրում հինգ տարի շարունակ զբաղվել է առևտրով: Այդ տարիներին նա տարվել էր կրոնական-աստվածաբանական խնդիրների ուսումնասիրությամբ՝ մասնավորապես ծանոթանալով քրիստոնեության, զրադաշտականության և հուդայականության ուսմունքների հետ: Որոշ աղբյուրների համաձայն՝ նա սկսում է վարել ճգնավորական կյանք և անսպասելիորեն դադարեցնելով իր առևտրական գործունեությունը՝ ուխտագնացության է մեկնում շիիթների սրբազան քաղաքներ Քարբալա և Էն-Նաջաֆ, որտեղ դառնում է շեյխիների աղանդի ղեկավարներից սեյեդ հաջի Քազեմ Ռեշտցու հետևորդ: Այս աղանդի հիմնադիրն էր շեյխ Ահմեդ Ախսայիին (ծնվել է 1752 թ. Քահրեյնում և մահացել Յեզդում 1826/27 թ.): Նա գտնում էր, որ ողջ տիեզերքը համակված է աստվածայինն սկզբով, իսկ աստծո հատկանիշները իրենց դրսևորումներն են ունենում նրա ընտրյալների՝ իմամների մեջ: Դա բնապաշտական-պանթեիստական ուսմունքի մի տարատեսակ էր: Սակայն Ախսայիի ուսմունքի մեջ գլխավորը, որը հրապուրեց և դեպի իրեն ձգեց բազմաթիվ աշակերտների ու

հետևորդների, կերպարանափոխության ու մեսիականության գաղափարն էր: Շեյխիները քարոզում էին, որ ավելի քան հազար տարի առաջ անհետացած 12-րդ իմամ Մահդին շուտով հայտնվելու է, որպեսզի երկրի երեսից ջնջի անարդարությունը և սահմանի նոր, արդար կարգեր:

Շեյխ Ախսայիի ուսմունքի մեջ խոսքը լոկ բարոյական նորոգման և ոչ թե հասարակության վերակառուցման մասին էր: Սակայն բնական է, որ ամեն ոք կարող էր այդ «նորոգումը» ընկալել յուրովի նրա մեջ դնելով բոլորովին այլ իմաստ: Առհասարակ, պետք է նշել, որ իսլամի համար բնորոշ է, այսպես կոչված, «թարիքաթի» վերաբերյալ ուսմունքը: Այսինքն ճշմարտության որոնումներում յուրաքանչյուր անհատ կարող է ընտրել իր սեփական ուղին:

Իրաքում Ալի-Մոհամմադը մնաց մոտ մեկ տարի և վերադարձավ իր հայրենի քաղաքը՝ Շիրազ, որտեղ նրա շուրջը սկսեցին համախմբվել սեյեդ Քազեմ Ռեշտիի ուսմունքի հետևորդ շեյխիները: Շեյխ Քազեմի մահվանից հետո մոլլա Հոսեյին Բոշրույեի առաջարկով շեյխիները Ալի-Մոհամմադին ընտրեցին իրենց մուրշիդ՝ ղեկավար: 1844 թ. մայիսին հիշյալ Բոշրույեի հետ զրույցի ժամանակ Ալի Մոհամմադը հայտարարեց, որ «նա», որի հայտնության մասին կանխագուշակում էր սեյեդ Քազեմը, շուտով հայտնվելու է, և աստված ընտրել է իրեն որպես «բաբ» (դարպաս) կամ աստծո պատվիրակ, որի միջոցով սպասվող Մահդին իր կամքը կհաղորդի ժողովրդին և այդպիսով կբացի նոր կյանքի մուտքը: Բաբը իր աշակերտներին՝ «բաբիներին», ուղարկեց երկրի տարբեր կողմերը՝ ավետելու ավելի մեծ պատգամաբերի՝ «նրա» մոտալուտ գալուստը: Բաբի հայտնության լուրը տարածվեց ողջ Իրանով մեկ՝ ալեկոծելով հավատավոր ու աստվածավախ բնակչությանը: Բաբիական քարոզիչների ձայնը խեղդելու համար Շիրազի ուլեմները դիմեցին հաքիմ (նահանգապետ) Հոսեյին խանին, խնդրելով իրենց հակառակորդներին զսպել բռնի ուժով: 1845 թ. օգոստոսին հաքիմի հրամանով բաբիական քարոզիչները ձերբակալվեցին: Նրանց մահակներով ղաժան ծեծի ենթարկելուց հետո քթներին երկաթե օղակներ հագցրին և դրանցից պարան կապելով՝ քարշ տալով պտտեցրին շուկաներն ու մարդաշատ վայրերը՝ ժողովրդի առջև ենթարկելով ծաղր ու ծանակի: Այնուհետև, կտրելով նրանց ոտքերի ջիլերը, որպեսզի չկարողանան տեղաշարժվել և վարել քարոզչություն, բաբիներին վտարեցին քաղաքից: Գաղափարական առումով Բաբին ջախջախելու և ժողովրդի աչքում նրան վարկաբեկելու նպատակով 1845 թ. սեպտեմբերին Շիրազում կազմակերպվեց կրոնական վիճաբանություն ուլեմների և Բաբի միջև: Այն ավարտվեց նրանով, որ Բաբին հայտարա-

ընեցին խելագար և մահակներով սկսեցին գանահարել նրա կրունկները:

1847 թ. Ալի-Մոհամմադն իրեն հռչակեց ուղղակի Մահդի՝ ասելով, որ «նա», որ պետք է հայտնվեր, հենց ինքը՝ Ալի-Մոհամմադն է: Նա գրեց «Բայան» («Հայտնություն») անունով մի գիրք, որտեղ շարադրված էին նրա ուսմունքի հիմնական դրույթները: Այդ գիրքը դարձավ բաբիների սրբազան գիրքը: Նրա լույս աշխարհ գալը առաջ բերեց մահմեդական հոգևորականության կատաղի թշնամանքը, որը Ալի-Մոհամմադին հռչակեց անաստված ու հերետիկոս, «կեղծ մարգարե»՝ գտնելով, որ աստծո մարգարեն միայն Մուհամմադն է, և ով կբացասի դա, կենթարկվի մահապատժի ու գեհենի հավերժական տանջանքների:

Բաբը գտնում էր, որ մարդկային հասարակությունը զարգանում է հետևողականորեն մեկը մյուսին փոխարինող դարաշրջաններով («դոուրե»): Յուրաքանչյուր հաջորդ դարաշրջան գերազանցում է նախորդին և տարբերվում է նրանից: Յուրաքանչյուր դարաշրջան ունի իր առանձնահատուկ կարգերն ու օրենքները: Հին կարգերն ու օրենքները ոչնչանում են հին դարաշրջանի ավարտին և նոր դարաշրջանի սկզբին և փոխարինվում են նոր կարգերով: Իրենք՝ մարդիկ, ինքնուրույն կերպով չեն կարող սահմանել նոր կարգեր ու օրենքներ: Աստված դա անում է մարգարեի միջոցով, որին նա ամեն մի դարաշրջանում ուղարկում է մարդկանց մոտ:

Ամեն մի դարաշրջան ունենում է իր մարգարեն, որի պատվիրանները հանդիսանում են բարձրագույն օրենք տվյալ դարաշրջանի մարդկանց համար: Մարգարեի պատվիրանները մարդկանց են տրվում նոր սուրբ գրքի ձևով, որը փոխարինում է հնին: Բաբի կարծիքով՝ այդպիսի՝ հետևողականորեն մեկը մյուսին փոխարինող մարգարեներ ու սուրբ գրքեր են հանդիսացել Մովսեսն ու նրա Հնգամատյանը, Հիսուսն ու նրա Աստվածաշունչը, Մուհամմադն ու նրա Ղուրանը: Հիսուսը ավելի կատարյալ մարգարե էր՝ Մովսեսի հետ համեմատած, իսկ նրա սուրբ գրքի՝ Աստվածաշնչի պատվիրանները գերազանցում էին Մովսեսի օրենքները: Երբ Հիսուսի կողմից սահմանված օրենքները հնացան և սպառեցին իրենց, ապա հայտնվեց Հիսուսից ավելի կատարյալ մարգարե՝ Մուհամմադը, որը մարդկանց տվեց իր սուրբ գիրքը՝ Ղուրանը, որը գերազանցում էր Աստվածաշնչին: Մարդկանց համար հին պատվիրանները և վարքի նորմերը վերացվեցին և Ղուրանն ու շարիաթը դարձան նոր իրավակարգի հիմքը: Այսպիսով՝ սկսվեց մարդկային հասարակության զարգացման նոր դարաշրջան:

Այդ ժամանակվանից, ասում էր Բաբը, անցել է շատ ժամանակ՝ ավելի քան հազար տարի: Իր զարգացման մեջ մարդկային հասարա-

կությունը շատ առաջ է գնացել: Մուհամմադի դարաշրջանն արդեն անցել է, Ղուրանն ու շարիաթը հնացել են և պետք է փոխարինվեն նոր օրենքներով, որը մարդկանց տալու է նոր մարգարեն իր սրբազան գրքով: Սակայն հաքիմներն ու ուլեմները, որոնք, հենվելով Ղուրանի ու շարիաթի վրա, հափշտակել են իշխանությունը, կառչել են հին կարգերին և չեն ցանկանում հրաժարվել նրանցից: Չգտնելով անձնական հարստացման և հաճույքներ վայելելու՝ նրանք պահպանում են միայն օրենքի ու հավատի ձևը, այլ ոչ թե դրանց ոգին ու էությունը:

Բաբը գտնում էր, որ հենց այդ պատճառով էլ երկիրը ծայրից ծայր լցված է անարդարությամբ ու բռնություններով: Ոգևորված ու խանդավառ՝ Բաբն աներկյուղ հարձակվում էր տիրող կրոնի՝ իսլամի թերությունների վրա, քարոզում նորը, որը հիմնված պետք է լիներ արդարության և իրավահավասարության սկզբունքների վրա: Ցանկանալով իր ունկնդիրներին համոզել, որ «Բայանը» գերազանցում է Ղուրանին՝ Բաբը նշում էր, որ Մուհամմադի ժամանակ աստվածային պատվիրանները մարդկանց էին փոխանցվում միայն բանավոր խոսքի միջոցով (Մուհամմադն անգրագետ էր և գրել չգիտեր), իսկ այժմ աստված իր օրենքները տրամադրում է ուղղակի գրավոր ձևով (Բաբը դրանք գրում էր անձամբ):

Ընդհանուր գծերով ահա այդպիսին էր Բաբի կողմից մարդկային հասարակության զարգացման ընկալումը: Կարևորն այն էր, որ նա հայտարարում էր Իրանի պատմության մեջ նոր դարաշրջանի սկզբնավորումը, որի գալստյան շունչը զգացվում էր ողջ պետության մեջ, յուրաքանչյուր ընտանիքում և յուրաքանչյուր անհատի կողմից: Իսկ այդ նորը և անհայտը ժողովրդի մեջ առաջ էր բերում խորը տագնապի և վաղվա օրվա նկատմամբ անվստահության զգացումներ:

Բաբի գաղափարները պարարտ հող էին գտնում տառապող ու կեղեքվող զանգվածների մեջ նաև այն պատճառով, որ Ղաջարները հեղինակություն չունեին Իրանի բնակչության ճնշող մեծամասնության շրջանում:

Ըստ բաբիների ուսմունքի՝ «Ղաիմի» հայտնվելու նախօրյակին պետք է հայտնվի «ռեզալե սեֆիհանին», այսինքն՝ Ղաիմի ոխերիմ թշնամին, որը ոչ այլ ինչ էր, քան աստվածաշնչային նեռը: Բաբիները այդպիսի նեռ էին համարում Ղաջաների ողջ դինաստիան: Քանի որ գերագույն իշխանությունը պետք է պատկանի իմամ Մահդիին, այստեղից եզրակացվում էր, որ շահի և մյուս աշխարհիկ տիրակալների իշխանությունն օրինական չէ, որոնք այն զավթել են ուժով: Իրանական ժողովրդի բոլոր դժբախտությունների մեղավորը՝ Բաբը, համարում էր դաջարական տիրակալներին և բարձրագույն շիիթական հոգևորականությանը: Կրոնա-

կան հերձվածի իր բնույթով, բայց ընկերային կյանքի փոփոխության ձգտող այս գաղափարախոսությունը ավելի լայն ծավալ ստացավ կառավարության ու հոգևորականության գործադրած ծայրահեղ խստությունների հետևանքով, ինչպես նաև այն պատճառով, որ ժողովուրդը տառապում էր ծանր հարկերի ու տուրքերի տակ, գույքային անհավասարությունը հասել էր հսկայական չափերի:

Բաբիզմը դեմ էր դիրքի, իշխանության ու ժառանգականության իրավունքներին: Նա ընդհանուր էր հայտարարում ստացվածքը, հողը և աստվածատուր՝ բերքը: Չկա մաքուր ու կեղտոտ անձ կամ ցեղ: Ամենքը հավասար են: Տղամարդ և կին ունեն նույն իրավունքները: Բաբը կողմնակից էր միամուսնության և միայն բացառիկ դեպքերում էր ընդունում բազմակնությունը: Կանանց թույլատրվում է չադրան հանել: Բաբը վերացրեց աղոթքը, պասը և ծոմը, ուխտագնացությունը դեպի սուրբ վայրեր, ողորմության պարտադիր բաշխումը, որոնք հանդիսանում էին իսլամի հիմնարար դրույթները:

Գիտնականների կարծիքով՝ Բաբի ուսմունքը չի կարելի դիտարկել որպես կրոնական ռեֆորմացիայի փորձ, քանի որ այն ավելի շատ միտված էր դեպի նոր հասարակության ստեղծումը: Բաբի ուսմունքի մեջ հստակորեն ասվում էր, որ Իրանը կդառնա այն առաջին երկիրը, որտեղ կհաստատվի արդարության թագավորություն. մի բան, որ հանդիսանում է տառապյալների հավերժական երազանքը:

Բաբը պնդում էր, որ ժամանակի ընթացքում իր ուսմունքը կտարածվի ամբողջ աշխարհով մեկ, սակայն մոտակա ժամանակներում բաբիների սրբազան թագավորությունը կհաստատվի միայն Իրանի հինգ գլխավոր նահանգներում՝ Ատրպատականում, Մազանդարանում, Պարսկական Իրաքում (Կենտրոնական Իրան), Ֆարսում և Խորասանում: Այդ արդարության թագավորության մեջ կապրեն միայն այն մարդիկ, ովքեր ընդունել են Բաբի ուսմունքը: Բոլոր նրանք, ովքեր կհրաժարվեն ընդունել «Բեյանը», այդ թվում նաև օտարերկրացիները, կվռնդվեն բաբիների սրբազան երկրից, իսկ նրանց գույքը կբռնագրավվի ու կբաժանվի բաբիների միջև: Բաբիների թագավորությունը լի կլինի արդարությամբ ու երջանկությամբ, որտեղ մարդիկ կապրեն միմյանց նկատմամբ եղբայրական սիրո զգացումներով:

Բաբը գտնում էր, որ մարդկային զբաղմունքներից լավագույնը առևտուրն է, որն ապահովում է բարեկեցություն և հասարակության հետագա զարգացում: Նա վերացրեց շարիաթի այն բոլոր պատվիրանները, որոնք սահմանափակում էին առևտուրը և շփումները օտարերկրացի-

ների հետ: Նա նույնիսկ վերացրեց «ջիհադը»՝ «անհավատների» դեմ պատերազմի իսլամական այդ հայտնի դրույթը, արգելում էր մարդկանց սպանել այլախոհության ու անհավատության համար: Բաբը թույլատրեց իսլամի կողմից արգելված վաշխառուական տոկոսը, պահանջում էր, որ պարտքատերն անպայման վճարի իր պարտքը, պահպանվի առևտրական նամակագրության գաղտնիությունը: Բաբն առաջարկում էր երկրում մտցնել միասնական դրամական համակարգ, բարելավել հաղորդակցության ճանապարհները, ապահովել վաճառականների, այդ թվում նաև օտարերկրացիների ազատ ու անվտանգ երթևեկությունը, ինչպես նաև անձի և սեփականության անձեռնմխելիության սկզբունքը:

Բաբը մեծ նշանակություն էր տալիս լուսավորությանը: Նա իր հետևորդներին կոչ էր անում մշտապես սովորել, տիրապետել գիտություններին, յուրացնել օտար լեզուներ: Նա անհրաժեշտ էր համարում փոխել Իրանում գոյություն ունեցող երեխաների դաստիարակության համակարգը, արգելում էր դպրոցում երեխաների դաժան մարմնական պատիժները և հորդորում էր նրանց դաստիարակել խոսքի ուժով:

Բաբի ուսմունքն արագորեն տարածվում էր Իրանում: Այն մեծ թվով հետևորդներ գտավ վաճառականության, պետական պաշտոնյաների և նույնիսկ կառավարող ավատական վերնախավի շրջանում: Մի խոսքով՝ իրանական հասարակության բոլոր խավերի շրջանում (բացառությամբ քերևս ցեղերի) այդ ուսմունքի համակիրների թիվը շատ մեծ էր: Դրա պատճառները բազմապիսի էին, որոնց մեջ կարևոր նշանակություն ունեին նաև այդ ուսմունքի քարոզած բարձր նպատակները, ինչպես նաև իրանական ժողովրդի մեծ մասի մոտ խորը կրոնական զգացումների առկայությունը, որն անկեղծորեն հավատում էր աստվածային նախասահմանությանը, և որ վաղ թե ուշ արդարությունը հաղթանակ է տանելու:

Կառավարող վերնախավի ներկայացուցիչներից մեկը, որը մինչև իր կյանքի վերջն աջակցել ու պաշտպանել է Բաբին, Սպահանի նահանգապետ, հայազգի (մահմեդականացած) Մանուչեհր խան Մոաթամեդ-օդ-Դոուլեն էր («Պետության հենարան»), որը լսելով այդ նորահայտ քարոզչի մասին՝ ցանկություն էր հայտնել նրա հետ ծանոթանալ: Հենց Մանուչեհր խանի ջանքերով Բաբին հաջողվեց փախչել Շիրազի բանտից և ապաստան գտնել Սպահանում, նահանգապետի տանը, որը մինչև վերջ հովանավորեց ու պաշտպանեց նրան:

Մանուչեհր խանի այդ վարքագծից ծայրահեղ դժգոհ ուլեմները Թեհրանի հոգևոր իշխանություններին և շահի առաջին վեզիր հաջի Աղասիին գրեցին բողոքագիր: Սակայն, չնայած վեզիրի սաստումներին,

Սպահանի նահանգապետը շարունակում էր հովանավորել Բաբին: Նա նույնիսկ նամակներ գրեց շահին, որոնցում անթույլատրելի էր համարում Բաբի նկատմամբ հալածանքները:

1847 թ. Մանուչեհր խանը մահացավ, և Բաբը զրկվեց իր հզոր հովանավորից: Սպահանի ժամանակավոր կառավարիչ Գուրգեն խանը պահակախմբի ուղեկցությամբ նրան անմիջապես ուղարկեց Թեհրան: Ճանապարհին ստացվեց շահի հրամանը՝ նրան չբերել մայրաքաղաք, այլ տանել Իրանի հյուսիս-արևմուտքում գտնվող Մակու քաղաքի ամրոցը: Բաբի աքսորը էլ ավելի մեծացրեց նրա հեղինակությունը՝ նպաստելով նրա ուսմունքի առավել արագ տարածմանը: Քանի որ երկրի տարբեր շրջաններից մեծ թվով հետևորդներ սկսեցին ուխտագնացության գնալ նոր մարգարեի աքսորավայրը՝ Մակու, իշխանությունները 1848 թ. սկզբին նրան տեղափոխեցին Ուրմիայից ոչ հեռու գտնվող Չեհրիք ամրոցը: Սակայն այստեղ ևս սկսվեց ուխտագնացությունը Բաբի մոտ:

Ահաբեկված շիիթական բարձր հոգևորականությունը՝ մոջթեհիդները, ուլեմները և այլն, Բաբի ուսմունքը հայտարարեցին հերետիկոսություն, նզովքի ենթարկեցին բաբիներին, նրանց դեմ հրապարակեցին ֆեթվաներ, տարածում էին հակաբաբիական քռուցիկներ, կոչ էին անում ոչնչացնել բոլոր բաբիներին և արմատախիլ անել բաբիզմը:

Բաբի առավել եռանդուն կողմնակիցներից ու աշակերտներից էին մոլլա Հոսեյին Բոշրույեն, ականավոր քարոզչուհի և տաղանդավոր բանաստեղծուհի Քուրրաթ-էլ-Այնը, նախկին ֆինանսների մինիստր Աղա Բոզորգ Աբբասի երկու որդիները՝ միրզա Հոսեյին Ալին (Բեհա-ուլլա) և միրզա Յահյան (Սուբհ-ե Ազալ, որ նշանակում էր «հավերժության առավոտ») և ուրիշներ: Բաբիների կողմն անցան նաև մի շարք հայտնի շիիթական ուլեմներ, ինչպես, օրինակ՝ հաջի սեյեդ Ջավադ Քերբելայիին, Աբուլ Ֆազլ Գոլփայեգանիին, Յահյա Դարաբին և այլն: Բաբիների մեջ մեծ թիվ էին կազմում նաև կանայք, ընդ որում՝ ինչպես ազնվազարմ, այնպես էլ հասարակ ծագում ունեցողները: Նրանցից շատերը ապստամբությունների ժամանակ զենքը ձեռքին կռվում էին կառավարական զորքերի դեմ:

Բաբիական շարժման մասնակիցների ստույգ թիվը հայտնի չէ: Տվյալներ կան, որ այդ թիվն անցնում էր 100 հազարից:

1848 թ. ամռանը Շահրուդ քաղաքից արևելք ընկած Բեդաշտ անունով մի աննշան գյուղում տեղի ունեցավ բաբիների համաժողով: Այստեղ քննարկվեց նրանց հետագա գործողությունների ծրագիրը: Բեդաշտում նրանց միջև բացահայտվեցին սկզբունքային տարաձայնություններ. մի մասն արտահայտվեց հօգուտ զինված պայքարի՝ կառավարության ու

ֆեոդալների դեմ, իսկ մյուս մասը՝ հօգուտ ոչ բռնի պայքարի՝ խաղաղ քարոզչության: Հավաքի ժամանակ բաբիների մեծ մասը պաշտպանեց մոլլա Մոհամմադ-Ալի Բարֆորուշցու տեսակետը, որը գտնում էր, որ եկել է բաբիների արդար թագավորություն ստեղծելու ժամանակը: Դա նշանակում էր, որ այդ նպատակին հասնելու ճանապարհին թույլատրվում է նաև զինված պայքարը: Բեդաշտյան հավաքույթի ժամանակ Մոհամմադ Բարֆորոշցու բերանից հնչեցին նաև արմատական հայտարարություններ: Նա, օրինակ, հայտարարեց, որ ապագա սրբազան թագավորության մեջ բոլոր «բարձրերը» կդառնան «ցածր», իսկ «ցածր» մարդիկ՝ «բարձր», որ մասնավոր սեփականությունը հանդիսանում է այլ մարդկանց իրավունքների բռնաղատում, ուստի այն պետք է վերանա: Ամբողջ գույքը պետք է լինի ընդհանուր ունեցվածք, և յուրաքանչյուր մարդ այդ գույքից պետք է ստանա իր բաժինը: Մահդիի թագավորության մեջ մարդիկ պետք է հավասար պայմաններով օգտվեն բոլոր բարիքներից: Ներկայացնելով Բեդաշտում տիրող նման մտայնությունը՝ Բաբի հետևորդներից Միրզա Ջանին գրում էր. «Մարդիկ կգնան շուկաները և աղոթքներ կարդալով՝ կրպակներից կվերցնեն այն ամենը, ինչ ցանկանում են: Համեմատելով անցյալի կարգերը ներկայի հետ նա շարունակում է,–իսկ այժմ, եթե որևէ մեկը այդպես վարվի, ապա համաձայն Մուհամմադի շարիաթի՝ նրա ձեռքը կկտրեն»:Բեդաշտում բաբիները ներկա աշխարհն անվանեցին «ապականված ու կեղտոտված տուն» և «ժամանակավոր կացարան, որը լի է դառնություններով ու վշտով»: Երկրային հաճույքների ձգտող մարդկանց Միրզա Ջանին անվանում էր եսասերներ («խուդփարաստան»): Նրա կարծիքով՝ նոր ուսմունքի և նոր կյանքի համար իրական մարտնչողները պետք է հրաժարվեն ամեն մի երկրայինից, վարեն խստակյաց կյանք և միշտ պատրաստ լինեն մեռնելու իրենց գաղափարի համար: Հետագայում՝ բաբիական ապստամբությունների շրջանում, բաբիներն իրենց հետևորդներին համոզում էին, որ մահվանից հետո հանդերձյալ աշխարհում նրանց սպասում է Մահդիի հավետ երջանիկ թագավորությունը:

1848 թ. սեպտեմբերին Մոհամմադ շահի մահվանից հետո, երբ բազմաթիվ իշխանազուրկների միջև պայքար սկսվեց գահին տիրելու համար, բաբիները որոշեցին օգտվել քաղաքական անկայունությունից և բացահայտ կերպով հանդես եկան Ղաջարների իշխանության դեմ:

Բաբիների առաջին ապստամբությունը տեղի ունեցավ Մազանդարանում 1848 թ.: Նրանք սկզբում հավաքվեցին Բարֆորուշում, բայց քանի որ բավարար ուժեր չունեին տեղի կառավարչի զորքերի դեմ պայքա-

ռելու համար, թողեցին Բարֆորուշը և քաշվեցին անտառները՝ տեղավորվելով Շեյխ-Թաբարսի կոչված վայրում, որտեղ գտնվում էր նույնանուն շեյխի դամբարանը: Բաբիների այդ առաջին ապստամբությունը գլխավորում էին մոլլա Մոհամմադ-Ալի Բարֆորուշցին և մոլլա Հոսեյին Բոշրույեն: Բաբիները չթրծված աղյուսից կառուցեցին մի ամրոց ու կենտրոնացան այնտեղ: Նրանց միացան շրջակա գյուղերից գյուղացիներ և արհեստավորներ, թվով մոտ 2 հազար մարդ:

Գյուղացիները իրենց հետ բերում էին անասուններ, սննդամթերք և այլն, արհեստավորները պատրաստում էին զենք:

Ամրոցում բաբիները ապրում էին կոմունայի սկզբունքով. սնունդը միասնական էր, առանձնացվել էին հատուկ մարդիկ, ովքեր զբաղվում էին հագուստի և բնակարանների բաշխմամբ (ամրոցի ներսում կառուցվել էին փայտյա տներ՝ եղեգով ծածկված տանիքներով): Մասնավոր սեփականությունը վերացվեց, մտցվեց գույքի ընդհանրություն: Մի խոսքով՝ սկսվել էր բաբիների «ազատ թագավորության» առաջին բջջի կազմակերպումը:

Բաբիների ահից Մազանդարանի բազմաթիվ խաներ իրենց կալվածքներից փախչում էին լեռները: Նրանք հոգևորականների հետ միասին զրպարտչական լուրեր էին տարածում, որ իբր բաբիները կողոպտում են բնակչությանը, մտցնում են կանանց ընդհանրություն և այլն:

Ապստամբների դեմ ուղարկվեցին շրջակա խաների ջոկատները և կառավարական զորքեր: Հոգևորականությունը հայտարարեց «ջիհադ»՝ սրբազան պատերազմ: Սկսվեց Շեյխ-Թաբարսիի պաշարումը և հրետակոծումը թնդանոթներով: Բաբիները հետ մղեցին առաջին գրոհները և սկսեցին ամրացնել Շեյխ-Թաբարսին՝ ամրոցի շուրջը փորելով լայն ու խոր մի խանդակ, որը լցրին ջրով: Պաշարվածները չորս անգամ, դուրս գալով ամրոցից, համարձակ գրոհներ կազմակերպեցին զորքերի վրա: Սակայն շուտով պաշարման պատճառով խզվեց բաբիների կապը շրջակա բնակչության հետ: Սննդամթերքի պաշարները վերջացան, որի հետևանքով սկսվեց պաշարվածների փախուստը՝ իրենց կյանքը փրկելու համար: Մինչև 1849 թ. մայիսը ամրոցում մնացին միայն 250 բաբիներ: Տեսնելով, որ հետագա դիմադրությունն անիմաստ է՝ մոլլա Մոհամմադ-Ալին համաձայնվեց զենքը ցած դնել: Շահական զորքերի հրամանատար, Մազանդարանի կառավարիչ Մահդի Ղուլի միրզան Ղուրանի վրա երդվեց, որ կխնայի բաբիների կյանքը և ազատ կարձակի նրանց: Սակայն երբ բաբիները, հավատալով այդ խոստմանը անզեն դուրս եկան ամրոցից, Մահդի Ղուլին հրամայեց նրանց բոլորին սրի քաշել:

1850 թ. փետրվարին իշխանությունները Թեհրանում բացահայտեցին

բաբիների մի կազմակերպություն, որը Մազանդարանում տեղի ունեցած հաշվեհարդարի վրեժը լուծելու համար որոշել էր սպանել շահին, Ամիր Նեզամին և մի քանի բարձրաստիճան հոգևորականների: Ձերբակալվածների մեծ մասը, օգտագործելով շիաների մոտ տարածված և նրանց կողմից չդատապարտվող կարգը, երբ մահվան վտանգի դեպքում թույլատրելի է համարվում իր գաղափարներից հրաժարումը, դատապարտեց Բաբին և նրա ուսմունքը՝ դրանով իսկ փրկելով իր սեփական կյանքը, իսկ յոթ հոգի, որոնք հաստատուն կերպով պնդեցին իրենց նվիրվածությունը Բաբի ուսմունքին, հրապարակավ մահապատժի ենթարկվեցին:

1850 թ. մայիսին բաբիների մի նոր ապստամբություն սկսվեց Զենջանում: Դա իր մասնակիցների թվով (մինչև 15 հազար մարդ) ամենախոշոր ապստամբությունն էր: Այն գլխավորում էր մոլլա Մոհամմադ-Ալի Զենջանցին: Ապստամբները այստեղ ևս փորձեցին իրականացնել իրենց ուսմունքի հիմնական սկզբունքները՝ ապրել համատեղ կոմունայի սկզբունքով, հաղթահարել ունեցվածքը, սահմանել իրավահավասարություն բոլորի համար: Ապստամբների դեմ ուղարկվեց 30-հազարանոց մի բանակ, որը 1850 թ. դեկտեմբերին անողորմ դաժանությամբ ճնշեց ապստամբությունը:

1850թ. բաբիական ապստամբություններ բռնկվեցին նաև Յեզդում և Ֆարսի նահանգի Նեյրիզ քաղաքում: Ձգտելով կանխել բաբիական շարժման հետագա զարգացումը՝ առաջին վեզիր Միրզա Թաղի խանը շահից պահանջեց մահապատժի ենթարկել Բաբին: Շահին ուղղված զեկուցագրում նա գրում էր, որ քանի դեռ Բաբը կենդանի է, նրա հետևորդների ապստամբությունները չեն դադարի և կարող են վերածվել համընդհանուր խռովության, որը կհանգեցնի Ղաջարների դինաստիայի տապալմանը:

Անսալով այդ խորհուրդներին՝ շահը տվեց իր համաձայնությունը: Մոջթեհիդ Աղա սեյիդ Ալի Զունուսին հրապարակեց ֆեթվա, որը թույլատրում էր Բաբին մահապատժի ենթարկել «սրբազան կրոնը հայհոյելու» մեղադրանքով:

1850 թ. հունիսի սկզբին Չեհրիք ամրոցից Բաբին տեղափոխեցին Թավրիզ և բանտարկեցին զինանոցի շենքում: Մահապատժից առաջ նրան պտտեցնում էին փողոցներով, որպեսզի մարդիկ տեսնեն, որ Բաբը կենդանի է և չի անհետացել, որպես Մահդի: 1850 թ. հուլիսի 19-ին Բաբը գնդակահարվեց Թավրիզի «Ջաբբա-խանե» (զինագործարան) կոչված հրապարակում հայազգի Սամսոն խանի ջոկատի զինվորների կողմից, որովհետև իշխանությունները մտավախություն ունեին, որ մահմեդական զինվորները կհրաժարվեն կրակել նրա վրա:

Բաբի մարմինը դուրս նետվեց քաղաքային դարպասներից և դարձավ շների բաժին: Միայն մի քանի օր անց բաբիները հավաքեցին նրա աճյունի մնացուկները և հողին հանձնեցին հեռավոր Պաղեստինում՝ Ակկայում, որը հետագայում դարձավ բաբիների սրբավայր: Մահապատիժը մարտիրոսացրեց Բաբին: Նրա հետևորդների համոզումով՝ նա՝ որպես սուրբ, չի կարող սպանվել ու մահանալ: Ընդհակառակը, իր աներևույթ ներկայությամբ նա շարունակում է ուժ ներշնչել իր հավատացյալներին՝ տոկալու անլուր տանջանքներին և կատարյալ անտարբերությամբ ընդունելու նահատակի պսակը:

Բաբի գնդակահարությունից հետո իշխանությունները բաբիների նկատմամբ սկսեցին ահավոր հալածանքներ: Նրանց կենդանի այրում էին, կապում թնդանոթների փողերին ու կրակում: Բազմաթիվ կանանց ու երեխաների վաճառեցին ստրկության:

Դեռ իր կենդանության օրոք Բաբը իր ժառանգորդ էր նշանակել Սուբհ-ե Ազալին, սակայն նա չուներ այն ազդեցությունը, որ կարողանար շարժումը տանել վերընթաց գծով: Առավել մեծ հեղինակությունից էին օգտվում շեյխ մոլլա Ազիմը («Ջանաբ-ե ազիմ»), Քուրրաթ-էլ-Այնը, հաջի Սուլեյման խանը և Սուբհ-ե Ազալի եղբայր Միրզա Հոսեյին-Ալի Բեհա-Ուլլան (1817-1892): Սակայն նրանց միջև գոյություն ունեին խորը հակասություններ, որոնք դրսևորվեցին դեռևս Բեդաշտի հավաքի ժամանակ: Բաբիների հետագա գործունեության վերաբերյալ նրանց միջև միասնական տեսակետ գոյություն չուներ: Բաբիների մի մասը որոշեց սպասել Բաբի կողմից խոստացված նոր մարգարեի գալստյանը: Մյուսները հանդես էին գալիս ահաբեկչական գործելակերպի օգտին: Իսկ մի փոքրաթիվ խումբ էլ հույս ուներ բարձրացնել նոր ապստամբություն՝ վրեժ լուծելու համար Բաբի մահվան և մահապատժի ենթարկված իրենց գաղափարակիցների համար:

1852 թ. օգոստոսին բաբիները անհաջող մահափորձ կազմակերպեցին Նասր-էդ-Դին շահի կյանքի դեմ: Վերջինս ահաբեկչի ատրճանակի կրակոցից թեթև վիրավորվեց: Ձերբակալված ահաբեկիչներից մեկը դաժան կտտանքների հետևանքով խոստովանեց, որ բաբիների հավաքատեղին գտնվում է Թեհրանի մոտ գտնվող Զարգյանդե ամառանոցային վայրում: Կառավարությունը ձերբակալեց այնտեղ հավաքված բոլոր բաբիներին՝ ի բացառյալ միրզա Հոսեյին Ալիի (Բեհա-Ուլլայի), և մահապատժի ենթարկեց նրանց: Ուշագրավ է, որ վախենալով բաբիների վրիժառությունից և ձգտելով նրանց նկատմամբ հաշվեհարդարի ողջ պատասխանատվությունը բարդել ամբողջ կառավարող վերնախավի վրա՝

շահը հրամայեց մահվան դատապարտված բաբիներին բաժանել զորքերի տարբեր տեսակների, համքարությունների, մսագործների, պալատականների, վեզիրների և ուլեմների միջև, որոնք պարտավոր էին անձամբ հաշվեհարդար տեսնել իրենց զոհերի հետ՝ մինչև տանջամահ անելը եռթարկելով ահավոր խոշտանգումների: Ոմանց պայտում էին, ոմանց դանակի հարվածներ հասցնելուց հետո վերքերի մեջ մտցնում այրվող մոմեր, ոմանց կենդանի-կենդանի սղոցով քառատելուց հետո մարմնի մասերը մսագործի կեռերով կախում քաղաքի չորս դարպասներից, ոմանց սպանում էին՝ քարձեծ անելով և մահակներով մինչ ի մահ գանահարելով: Շահի վրա մահափորձի ժամանակ սպանված ահաբեկիչ Սադեղ Զենջանիի մարմինը շահի հրամանով հանվեց գերեզմանից և կտոր-կտոր արվեց: Քուրրաթ-էլ-Այնին խեղդամահ արեցին շահի մայրը, սաղր-ազամ միրզա Աղա խանը և ֆերրաշների գլխավոր հաջի Ալի խանը:

Բարձրագույն հոգևորականությունը՝ մոջթեհիդները և ուլեմները, հայտարարեցին, որ բաբիներին սպանելը սուրբ գործ է: Ծայր էր առել արյունոտ մրցակցություն, որի մասնակիցները ձգտում էին բաբիներին սպանել հնարավորին չափ դաժան ձևերով՝ դրանով իսկ ձգտելով ապացուցել իրենց հավատարմության զգացումները շահի նկատմամբ:

Մի շարք ականավոր բաբիների՝ Սուբհ-ե Ազալին, նրա ավագ եղբայր Բեհա-Ուլլային և այլոց հաջողվեց փախչել Բաղդադ: 1864թ. շահական կառավարությունը Օսմանյան Թուրքիայից պահանջեց բաբիների այդ ականավոր ղեկավարներին տեղափոխել Իրանից ավելի հեռու շրջաններ: Նույն թվականին սուլթանի հրամանով նրանց տարան սկզբում՝ Կ. Պոլիս, իսկ ապա՝ Ադրիանոպոլիս (Էդիրնե):

Թեհրանում բաբիների հետ արյունոտ հաշվեհարդարից հետո նրանց նկատմամբ հալածանքներն ու մահապատիժները ծավալվեցին ողջ երկրով մեկ: Բաբիներն արյունաքամ եղան: Խոշտանգումներով մահվան վերահաս սարսափը շատերին ստիպեց հրաժարվել իրենց համոզմունքներից, մի ստվար մասն էլ դադարեց հավատալուց, որ դաջարների բռնատիրության դեմ իրենց մղած պայքարը կարող է հաջողությամբ պսակվել:

Կառավարությունը բաբիների նկատմամբ հալածանքները շարունակեց ընդհուպ մինչև XIX դ. 90-ական թթ. վերջը, այսինքն՝ Նասր-էդ-Դին շահի ողջ կառավարման շրջանում: Իշխանություններին հաջողվեց նրանց դեմ տրամադրել քաղաքային տականքներին և մոլեռանդ ամբոխին, որոնք տարբեր ժամանակներում Իրանի քաղաքներում (Սպահանում, Յեզդում և այլուր), ինչպես նաև արտասահմանում (Էն-Նեջեֆ) կազմակերպեցին բաբիների զանգվածային ջարդեր: Բաբիները ստիպ-

ված էին բնակվել քաղաքների առանձին թաղամասերում (մահալե-յե բաբիան), որպեսզի կարողանան կազմակերպել ինքնապաշտպանություն: Իրանական կառավարությունը բաբիներին զրկում էր քաղաքացիությունից և բռնագրավում նրանց գույքը: Ռեշտում ռուսական հյուպատոս Վ. Ի. Իգնատևը 80-ական թթ. գրում էր, որ պարսիկ կառավարիչները կարողանում էին բաբիզմի գաղափարախոսությունը օգտագործել որպես իրենց համար եկամտի աղբյուր. «Երբ նրանց փող էր հարկավոր լինում, նրանք որևէ ունևոր մարդու մեղադրում էին բաբիզմին հարելու մեջ, և նա վճարում էր»:

Իրենց անձը հալածանքներից փրկելու համար բաբիները զանգվածորեն լքում էին Իրանը և հեռանում այլ երկրներ՝ կամ, ապավինելով շիիթական, այսպես կոչված, «թաուհիդի» սկզբունքին, խնամքով թաքցնում էին իրենց դավանած իրական սկզբունքները: Շատերը պաշտպանություն էին գտնում եվրոպական դեսպանություններում ու հյուպատոսություններում:

Անկասկած, բաբի և բաբիականության քարոզչությունը հանդիսացավ այն ազդակը, որը սկիզբ դրեց իրանական ժողովրդի զարթոնքին և նպաստավոր հող պատրաստեց ազատական գաղափարների ջատագով գործիչների գործունեության համար: Իզուր չէ, որ եվրոպացիները Բաբին անվանել էին մահմեդական կրոնի նոր Լյութերը Իրանում:

1865 թ. հայտնի իրանագետ Միրզա Քազեմ բեկը գրում էր, որ «քաղաքական բաբիզմին ծնունդ տվող պատճառները շարունակում են հուզել Պարսկաստանում կրթված հասարակության խավերին»:

Անդրադառնալով Իրանում բաբիզմի տարածման հոգեբանական կողմին՝ ռուս արևելագետ Վ. Պ. Նիկիտինը նկատում էր, որ «թափառող ու անհանգիստ Իրանի ոգին չեն դադարում կրծել կրոնական կասկածներն ու որոնումները... Ոչ մի տեղ չեն եղել այնքան հերձվածներ, կրոնական ձևով բողոքի արտահայտություններ, որքան Իրանում»:

Ինչպես նշվեց վերևում, Բաբի աշակերտներից Սուբհ-ե Ազալը և նրա եղբայրը՝ միրզա Հոսեյին Ալի Բեհա-Ուլլան («Աստծո փառք»), շահական հալածանքներից ազատվելու համար փախուստի դիմեցին և հաստատվեցին Բաղդադում: Շուտով նրանց միջև ծագեցին սուր հակասություններ ինչպես բաբիզմի հիմնական դոգմաների, այնպես էլ տեղի բաբիական համայնքի գործերը վարելու հարցի շուրջը: Վեճի սրման պատճառով Բեհա-Ուլլան մեկնեց Քրդստան և երկու տարի ապրեց այնտեղ: Այնուհետև նա կրկին վերադարձավ Բաղդադ: Դեռևս 1858 թ. Բեհա-Ուլլան գրեց «Իքան» անունով մի աշխատություն, որտեղ փորձում

էր ապացուցել, որ ճշմարիտ և ընդունելի է միայն բաբիզմի իր մեկնությունը: Դա է՛լ ավելի սրեց հարաբերությունները եղբայրների միջև: Բաբիական համայնքը գտնվում էր պառակտման եզրին, երբ 1862 թ. շահի հանձնարարությամբ Թեհրանից Էն-Նաջաֆ ժամանեց շեյխ Աբդոլ-Հոսեյին Ֆաքիհը՝ Քազեմեյնի շիիթական սրբավայրի գմբեթը վերանորոգելու համար: Այնտեղ հավաքված շիիթական ուլեմները որոշեցին պատրաստել բաբիների դեմ ուղղված մի ֆեթվա, սակայն գլխավոր մոջթեհիդ շեյխ Մորթեզա Անսարին դեմ արտահայտվեց մի այնպիսի ֆեթվայի ընդունմանը, որը մնացած բաբիներին դներ օրենքից դուրս վիճակում: Ֆաքիհը ցանկանում էր շիաներին հանել բաբիների դեմ, սակայն Բաղդադի օսմանյան նահանգապետ Նեջեֆ փաշան արգելեց իր փաշայությունում կազմակերպել անկարգություններ: Ֆաքիհը սկսեց գործել իրանական դեսպանի ու հյուպատոսի միջոցով՝ պահանջելով բաբիներին վտարել Բաղդադից: Թուրքական կառավարությունը որոշում ընդունեց բաբիներին տեղափոխել կայսրության արևմտյան շրջանները:

Բաղդադից մեկնելու նախօրյակին՝ 1863 թ. ապրիլի 22-ին, Ռիզվան պարտեզում Բեհա-Ուլլան հայտարարեց, որ ինքն այն ավետվածն է, որի գալստյան մասին պատգամել էր Բաբը: Հենց այդ ժամանակվանից նա սկսեց խոսել Աստծո անունից: 1863 թ. դեկտեմբերին Ադրիանուպոլսում նա իրեն ուղղակի հայտարարեց Աստված: Սուբհ-ե Ազալի կողմնակիցները չճանաչեցին Բեհա-Ուլլային որպես նոր մարգարե և բահայիների ու ազալիթների միջև բորբոքվեց անհաշտ թշնամանք: Տարաձայնությունները եղբայրների կողմնակիցների միջև այն աստիճանի սրվեցին, որ նրանք սկսեցին սպանել իրենց հակառակորդներին: Ուստի սուլթանի հրամանով նրանք 1868 թ. վտարվեցին Ադրիանուպոլսից տարբեր վայրեր. Բեհա-Ուլլան՝ Ակկա, իսկ Սուբհ-ե Ազալը՝ Կիպրոս կղզու Ֆամագուստա քաղաքը: Սակայն դա վերջ չտվեց նրանց միջև մղվող պայքարին: Պաղեստինում (Ակկայում) Բեհա-Ուլլան 1872-1873 թթ. գրեց «Քեթաբ-ե աքդես» աշխատությունը, որը համարվում է բահայիների սրբազան գիրքը:

Սովորաբար առանձնացնում են բահայիզմի 12 հիմնական սկզբունքներ, թեև «Քեթաբ-ե աքդեսում» առկա է մոտ 400 կետ, որոնք կանոնակարգում են բահայիների քաղաքացիական և հոգևոր կյանքը: Պացիֆիզմ, հրաժարում դասակարգային պայքարից, համընդհանուր խաղաղություն. սրանք են Բեհա-Ուլլայի ուսմունքի հիմքերը: Սակայն այդ ուսմունքի առանցքը կամ պսակը կարելի է համարել մարդկության միասնականության սկզբունքը: Բեհա-Ուլլայի կարծիքով՝ աշխարհի միությունը կամ միասնականությունը մարդկության կողմից հասունության հաս-

նելու վերջին հանգրվանն է: Մարդկության միասնականությունը ուղիղ ճանապարհով կտանի դեպի «տիեզերական խաղաղության» հաստատում: Նա կոչ էր անում հրաժարվել պայքարի բռնի միջոցներ կիրառելուց՝ գտնելով, որ անհրաժեշտ է քննադատել ոչ բանական, հնացած կրոնական դոգմաները և աշխարհիկ իշխանությունների անարդարությունը և աստիճանաբար վերափոխել աշխարհը: Անհրաժեշտ է հասնել ճշմարտության բանականության օգնությամբ և նոր ուսմունք (կրոն) ստեղծել գիտության ու բանականության օրենքներին համընթաց: Բեհա-Ուլլան ուսուցանում էր, որ կրոնն ու գիտությունը ներդաշնակ են միմյանցով: Ճշմարիտ կրոնն ու ճշմարիտ գիտությունը իրար երբեք չեն հակասում: Նրանք ճշմարտության ամբողջական մասնիկներն են: Մարդկությունը չպետք է ինչ-որ մեկի թելադրանքով կուրորեն ընդունի որևէ հավատք: Մարդկությունը և առանձին անհատը պետք է ազատ փնտրտուքով հասու լինեն ճշմարտությանը: Գիտությունը աստծո պարգևներից մեծագույնն է. նրանք, ովքեր իրենց զրկում են գիտություն ստանալու առիթից, դատապարտվելու են ավելի սահմանափակ մի կյանքի: Նա պնդում էր, որ ազգային պետությունները անցյալի դարաշրջանների ժառանգությունն են, իսկ այժմ պետք է ձգտել ստեղծելու համաշխարհային պետություն, միասնական լեզու, միասնական մշակույթ, ձգտել համայն մարդկության եղբայրությանը:

Բեհա-Ուլլան դուրս նետեց Բաբի բոլոր ծայրահեղական գաղափարները և հայտարարեց, որ իրենց միակ նպատակն է բարելավել մարդկային բնույթը:

Իր կտակում Բեհա-Ուլլան գրում էր. «Օ՜ հողագնդի մարդիկ. Աստվածային կրոնը ստեղծվել է սիրո ու միասնության համայն. դուք այն միք դարձնի թշնամանքի ու տարաձայնությունների պատճառ»: «Ընորհ Աստծո,- ասում էր Բեհա-Ուլլան,- թող միասնության ճրագը շրջապատի համայն աշխարհը, և Աստծո թագավորության կնիքը դրոշմվի բոլոր ժողովուրդների ճակատի վրա»:

«Ո՜վ Աստված իմ, ո՜վ Աստված իմ, միացրո՛ւ քո ծառաների սրտերը և քո հզոր նպատակը հայտնիր նրանց: Թող նրանք հետևեն քո պատվիրաններին և հնազանդվեն քո օրենքին: Օգնիր նրանց, ո՜վ Աստված իմ, մի՛ լքիր նրանց, այլ քո գիտության լույսով առաջնորդի՛ր նրանց քայլերը և քո սիրով պարփակի՛ր նրանց սրտերը: Հիրավի, դու նրանց օգնականն ես և նրանց Տերը», - ասում էր Բեհա-Ուլլան: Այնուհետև՝ «Միայն իր հայրենիքը սիրողը չէ, որ կարող է հպարտանալ, այլ նա, ով սիրում է համայն աշխարհը: Երկրագունդը մեկ երկիր է՝ և մարդկությունը իր քաղաքացի-

ները»: Բեհա-Ուլլան հայտարարեց տղամարդկանց ու կանանց հավասարության ու համագործության մասին: Նա այդ գաղափարը համարում էր հասարակական կառույցի գլխավոր ազդակը: Նա դեմ էր մարդկանց միջև ամեն տեսակի խտրականության՝ գտնելով, որ խտրականության ճշմարիտ դարմանը մարդկության միասնականության գիտակցումն է:

Բեհա-Ուլլան այն կարծիքին էր, որ պետք է ջնջել ու վերացնել ինչպես ծայրահեղ հարստությունը, այնպես էլ ծայրահեղ աղքատությունը: Պետք է հիմնադրել տիեզերական մի ատյան ազգերի միջև ծագող վեճերի լուծման համար: Մարդկային հասարակության իշխող սկզբունք պետք է հանդիսանա «արդարության փառաբանումը»: Պետք է գտնել նաև տնտեսական հարցերի «հոգևոր լուծում»: Անհատը պետք է խստիվ հնազանդություն պահպանի երկրի կառավարության նկատմամբ և ոչ մի դեպքում չպետք է պայքարի դուրս գա իշխանությունների դեմ:

Բեհա-Ուլլան գտնում էր, որ Բաբը իրավացի չէր՝ վերացնելով մասնավոր սեփականությունը և քարոզելով ուտոպիստական կոմունիզմի գաղափարը: Մասնավոր սեփականությունը սրբազան է, և այն պետք է պահպանվի: Այն վերացնելու դեպքում հասարակությունը կմատնվի քաոսի: Սակայն չարժե հատուկ նշանակություն տալ կյանքի նյութական կողմին, քանի որ այս աշխարհում ունեցվածքը կայուն ու հարատև չէ, և այն, ինչ ենթակա է ոչնչացման ու փոփոխության, արժանի չէ ուշադրության:

XIX դ. վերջին բահայիների համայնքը արդեն չէր դիտվում որպես իրանական, այն ձեռք բերեց միջազգային կրոնի բնույթ:

Այսպիսով՝ Բեհա-Ուլլան շարունակեց ու զարգացրեց Բաբի ուսմունքը և ընդլայնեց նրա տարածման աշխարհագրական սահմանները: Բեհա-Ուլլան կյանքից հեռացավ 1892 թ. իր ավագ որդի Աբբաս-Էֆենդի Բահայիին («փառքի ծառա») նշանակելով իր գործի շարունակող և «խոսքի թարգման»:

Ոմանք բահայիզմը (նեոբաբիզմ) համարել են իսլամի աղանդներից մեկը: Սակայն կան նաև գիտնականներ, որոնց կարծիքով՝ թեև բահայիզմը ծնունդ է առել իսլամական հողի վրա, սակայն այն պետք է համարվի կրոնական բարեփոխում ընդհանրապես և ոչ թե որևէ մեկ կրոնական ուսմունքի ռեֆորմ: Ռուս արևելագետ Վ.Վ.Բարտոլդը գտնում է, որ բահայիզմը «մահմեդական աշխարհի նորագույն պատմության մեջ ամենաուշագրավ երևույթներից մեկն է»:

Բաբիների ապստամբությունները նշանակալիորեն ազդեցին շահական կառավարության քաղաքականության վրա: Բաբիները ստիպեցին լրջորեն խորհել Իրանի ապագայի, նրա հետագա զարգացման ուղիներ-

րի, հասարակության մեջ մարդու տեղի և դերի մասին և այլն:

40-ական թվականների վերջին Իրանի ներքին քաղաքական իրադրությունը վերին աստիճանի լարված էր: Բաբիական շարժումը էլ ավելի սրեց այն: Բնակչության բոլոր խավերի շրջանում դժգոհությունը գնալով մեծանում էր: Այս պարագաներում, Իրանի տիրապետող վերնախավի առավել հեռատես մասը գիտակցում էր, որ անհրաժեշտ է «վերևից», այսինքն՝ կառավարության կողմից իրականացնել որոշ բարեփոխումներ, այլապես նոր սոցիալական ցնցումների հավանականությունը չափազանց մեծ կլինի:

Երկրում բարեփոխումներ իրականացնելու առավել եռանդուն կողմնակիցը էր Նասր-էդ-Դին շահի սաղր-ազամ (առաջին մինիստր) միրզա Մոհամմադ Թաղի խան Ֆարահանին: Նա ազնվական ծագում չուներ: Հայրը՝ Մահմուդ-Ղուրբան Քերբելային, սկզբում եղել էր Իրաք-ե Աջամի (պարսկական Իրաքի) կառավարիչ Իսա Ֆարահանիի տան խոհարարը: Երբ վերջինս նշանակվեց գահաժառանգ Աբբաս միրզայի ղայեմ-մաղամի պաշտոնում, Քերբելային իր ընտանիքով տեղափոխվեց Թավրիզ, դառնալով Ֆարահանիի տան կառավարիչ:

Մոհամմադ-Թաղին դաստիարակվում էր ղայեմ-մաղամի զավակների և թոռների հետ՝ նրանց հետ միասին անցնելով նախնական ուսումնառության շրջանը և հասակ առնելով նույն մթնոլորտում: Իր անձնական հատկանիշների՝ բնատուր խելքի, կրթվածության, գրասենյակային աշխատանք կատարելու հմտության և կազմակերպչական ընդունակությունների, ինչպես նաև ղայեմ-մաղամի ու գահաժառանգի հովանավորության շնորհիվ երիտասարդ Մոհամմադ-Թաղին սկսեց արագ առաջ գնալ:

Որպես Աբբաս միրզայի դիվանի կարևոր աստիճանավոր՝ նրան ներգրավեցին Խոսրով միրզայի դեսպանության կազմում, որը 1829 թ. մեկնեց Պետերբուրգ՝ Թեհրանում ռուսական միսիայի ջախջախման և Ա. Ս. Գրիբոյեդովի սպանության կապակցությամբ ցարից ներողություն խնդրելու համար: Այդ ուղևորությունից վերադառնալուց հետո նա դարձավ միրզա, քարտուղար:

1831 թ. նա ստացավ խանի տիտղոս և «սարթիբի» (զորահրամանատարի) աստիճան: 1843 թ. Մոհամմադ-Թաղի խանը նշանակվեց Ատրպատականում տեղակայված գահաժառանգի բանակի «ամիր-նեզամի» (գլխավոր հրամանատարի) պաշտոնում: Ընտանեկան կապերը նույնպես նպաստում էին միրզա Թաղի խանի արագ բարձրացմանը պաշտոնների սանդուղքով. նա ամուսնացել էր Մոհամմադ շահի աղջիկներից մեկի հետ:

1848 թ. գահ բարձրանալով՝ Նասր-էդ-Դին շահը Թաղի խանին նշանակեց սադր-ազամ՝ նրան շնորհելով «Ամիր-ե քաբիր» (մեծ էմիր) և «Աթաբեկ-ե ազամ» (մեծ աթաբեկ) տիտղոսները: Այդ առթիվ հրապարակված շահական հրամանագրում ասվում էր. «Ամի՛ր Նեզամ. Մենք Ձեզ հանձնեցինք Իրանի բոլոր գործերը. այսուհետև մենք գտնում ենք, որ բոլոր լավն ու վատը կախված է Ձեզանից: Մենք Ձեզ դարձրինք Իրանում առաջին դեմքը այն հույսով ու վստահությամբ, որ Դուք հպատակների նկատմամբ կունենաք ազնիվ և բարի վերաբերմունք: Մենք ոչ ոքի վրա վստահություն չունենք, բացի Ձեզանից»: Սա նշանակում էր, որ սադր-ազամը ստացել է անսահմանափակ իրավունքներ: Անտարակույս, դրա հետ չէին կարող հաշտվել ազդեցիկ պալատականները, որոնք հենց սկզբից համախմբվեցին մի ընդդիմության մեջ, որը ղեկավարում էր շահի մայրը՝ Մահդի-ե Ուլիյան, որն ուներ սադր-ազամի այլ թեկնածություն: Սակայն դրա փոխարեն՝ Թաղի խանը օգտվում էր շահի, գահաժառանգի, Թավրիզի արքունիքի և բանակի անվերապահ և ուժեղ աջակցությունից, որի վրա հենվելով, նա ձեռնամուխ եղավ բարեփոխումների իրականացմանը՝ անկասկած գտնվելով Օսմանյան կայսրությունում ընթացող թանզիմաթի բարեփոխումների ուժեղ ազդեցության տակ:

Երեք տարվա ընթացքում (1848-1851 թթ.) ամիր Քաբիրը իրականացրեց բազմապիսի բարեփոխումներ, որոնք կոչված էին որոշ չափով արդիականացնել պետական կառավարման համակարգը, ամրապնդել շահի դիրքերը, սահմանափակել քաղաքացիական իշխանությունների կամայականությունները և հոգևորականության միջամտությունը պետական գործերին, ամրապնդել երկրի տնտեսությունը, բարձրացնել բանակի մարտունակությունը և Իրանի միջազգային հեղինակությունը, նպաստել իրանական ժողովրդի մշակութային վերածննդին:

Ամիր Նեզամն առաջին հերթին զբաղվեց բանակի վերակառուցմամբ: Նա պայքար ծավալեց զորամասերի ու նրանց հրամանատարների անկարգապահության ու թափթփվածության, պետական փողերի յուրացման դեմ և այլն:

Ձգտելով բարելավել երկրի ֆինանսական վիճակը՝ Թաղի խանը վճռական պայքար ծավալեց երկրում լայնորեն տարածված գանձագողության, կաշառակերության, պետական պաշտոնների վաճառքի և այլ չարաշահումների դեմ: Կատարվեց չինովնիկների քվի նշանակալից կրճատում, որոնք Մոհամմադ շահի ժամանակ ստանում էին բարձր աշխատավարձ՝ ըստ էության, ոչ մի գործ չանելով: Ծառայության մեջ թողնված չինովնիկների աշխատավարձը կիսով չափ կրճատվեց: Արքայազուննե-

րի մեծ մասը զրկվեց իր եկամուտներից, և շահական գանձարանից այսուհետև նրանք ստանալու էին թոշակ:

Միրզա Թաղի խանը մեծ ուշադրություն էր դարձնում երկրում ներքին կարգ ու կանոն հաստատելու գործին: Նա պայքար էր մղում նահանգապետների չարաշահումների և առևտրական ճանապարհների վրա կողոպուտների դեմ, խրախուսում էր արդյունաբերության զարգացումը: Միջոցներ էր ձեռնարկում մայրաքաղաքի բարեկարգման ուղղությամբ: Թեհրանը ջրով ապահովելու համար նրա հրամանով մշակվեց նախագիծ Քերեջ գետի ջրերն օգտագործելու վերաբերյալ:

Այնուհետև իրականացվեց պետական և մասնավոր հողերի հաշվառում, որոշ չափով կարգավորվեց հարկահավաքման գործը, վերանորոգվեց ոռոգման համակարգը, Կարուն և Գորգան գետերի վրա կառուցվեցին նոր ջրամբարտակներ, ճանապարհները բարեկարգվեցին, կառուցվեցին քարավանսարայներ և բազարներ, հայրենական արդյունաբերությունը և առևտուրը օտարերկրյա մրցակցությունից պաշտպանելու համար մտցվեցին հովանավորողական օրենքներ, ներքին մաքսերը վերացվեցին, խրախուսվում էր իրանահպատակների կողմից երկրի օգտակար հանածոների հանույթն ու մշակումը, արդիականացվեց ֆինանսական և փոստային գործը, ստեղծվեցին աշխարհիկ դատարաններ և այլն:

Ամիր Քաբիրի կողմից լուսավորությունը դիտվում էր որպես Իրանի սոցիալական, քաղաքական ու մշակութային առաջընթացի հիմնական գործոններից մեկը: Նա գտնում էր, որ անհրաժեշտ է առաջին հերթին զարկ տալ աշխարհիկ կրթությանը, հրաժարվել մաքթաբներում տառաճանաչություն ձեռք բերելու ավանդական համակարգից: Նրա կարգադրությամբ արտասահման էին ուղարկվում երիտասարդ իրանցիներ՝ ուսում ստանալու համար, Իրան էին հրավիրվում օտարերկրյա ուսուցիչներ: Ամիր Քաբիրին հաջողվեց Թեհրանում հիմնադրել ուսումնական մի հաստատություն՝ «Դար-օլ-ֆունունը» («Գիտությունների տուն»), որի նպատակն էր մասնագետներ պատրաստել զինվորական գործի, բժշկության և այլ մասնագիտությունների գծով: Նա ձեռնամուխ եղավ նաև Իրանում առաջին պաշտոնաթերթի հրատարակմանը, որն անվանվեց «Վաղայի-ե էթթեֆաղիե», հիմնեց տպարան, պետական հիվանդանոց: Միրզա Թաղի խանն առաջինն էր, որ առաջ քաշեց երկրում երկաթուղիներ կառուցելու գաղափարը: Նա ձգտում էր Իրանում ստեղծել եվրոպական տիպի արդյունաբերություն: Նրա նախաձեռնությամբ բացվեցին զենքի և թնդանոթների, շաքարի, մահուդի, կտորեղենի արտադրության գործարաններ: Նա ձեռնարկեց մի շարք միջոցառումներ անձի և սեփա-

կանության անվտանգության երաշխիքներ ստեղծելու համար: Ամենուրեք փորձում էր արմատավորել օրենք և կարգ ու կանոն: Զինվորականների կողմից կոպիտ վերաբերմունքը բնակչության նկատմամբ պատժվում էր: Վերացրեց «սուրսաթը», այսինքն՝ բնակչության պարտականությունը՝ ձրի կերակրելու տվյալ վայրից անցնող զորքերին կամ կառավարական զինվորներին: Փոփոխություններ մտցրեց դատական համակարգի մեջ, մասնավորապես կրճատեց շարիաթական դատարանների իրավասությունը և ընդլայնեց «ուրֆ» կոչված աշխարհիկ դատարանների իրավասությունները: Բոլոր նահանգապետներին ուղարկվեց հրահանգ այն մասին, որ կրոնական փոքրամասնությունները՝ հայերը, զրադաշտականները և հրեաները, պետք է օգտվեն իրենց կրոնական ծիսակատարությունները կատարելու կատարյալ ազատությունից, և նրանց իրավունքները պետք է պահպանվեն բացարձակ արդարության հիմքի վրա:

Նա աշխատում էր սահմանափակել Անգլիայի և Ռուսաստանի միջամտությունը Իրանի ներքին գործերին:

Ամիր Նեզամը փորձում էր նաև սահմանափակել բարձրագույն շիիթական հոգևորականության ազդեցությունը Իրանի պետական գործերի վրա: Մի խոսքով՝ այդ զարմանալի եռանդի տեր, շրջահայաց ու հեռատես մարդը փորձում էր շրջել Իրանի պատմության անիվը դեպի երկրի արագացված զարգացում:

Նման քաղաքականությունը նրա դեմ հանեց հոգևորականությանը և ավատական ազնվականության այն խմբերին, որոնց ձեռքերում էր կենտրոնացած իշխանությունը, և որոնք չէին ցանկանում զրկվել իրենց արտոնություններից ու իրավունքներից: Դժգոհների այդ խմբի պարագլուխներն էին Նասր-էդ-Դին շահի մայրը՝ Մահդի-Ուլիյան, Թեհրանի իմամ-ջոմա միրզա Աբդ-ալ-Ղասեմը, սաղր-ազամի պաշտոնի հավակնորդ Աղա խան Նուրին և ուրիշներ: Սրանք բացահայտ պայքար ծավալեցին Միրզա Թաղի խանի և նրա բարեփոխումների դեմ: Կարևոր է նշել, որ Ամիր Քաբիրի միջոցառումները չհասկացվեցին ու չընկալվեցին նաև իրանական բնակչության ցածր խավերի կողմից: Անգրագետ, իրենց առօրյա հոգսերի տակ կքած, հոգևորականության մեծ ազդեցության ներքո գտնվող ժողովրդական զանգվածները, բնականաբար, կասկածանքով էին վերաբերվելու սաղր-ազամի կողմից իրագործվող նորամուծությունների նկատմամբ, մանավանդ որ դրանք տոգորված էին արևմտյան շնչով և թելադրված էին, իրենց ընկալմամբ, քշնամի գյավուրների կամ «ֆերենգի»-ների (եվրոպացիների) կողմից:

Այս պարագաներում Ամիր Քաբիրի հակառակորդների համար չա-

փազանց հեշտ էր խաղալ իրանցիների կրոնական-քաղաքական զգացումների վրա: Կրակե օղակը սադր-ազամի շուրջը գնալով սեղմվում էր: 1849 թ. մարտին նրա հակառակորդները կազմակերպեցին Թեհրանի զորամասի մի քանի գնդերի ելույթներ: Ապստամբած զինվորները, որոնց աշխատավարձը չէր վճարված, շրջապատեցին միրզա Թաղի խանի տունը և պահանջեցին, որ շահը պաշտոնաթող անի իր առաջին վեզիրին: Սակայն հաջողվեց զինվորներին համոզել, որ ցրվեն, և այս անգամ սադր-ազամը դեռ մնաց իր պաշտոնում:

Տեսնելով, որ Նասր-էդ-Դին շահը դեռևս վստահում է միրզա Թաղի խանին և ամեն կերպ պաշտպանում ու հովանավորում է նրան՝ սադր-ազամի թշնամիները դիմեցին իրենց դավաղրական զինանոցի ամենահզոր զենքին՝ սկսեցին շահին կասկածներ ներշնչել, որ Ամիր Նեզամը ցանկանում է գահընկեց անել իրեն և հափշտակել շահական գահը, և որ նրա կողմից բարեփոխումների իրականացման գաղտնի նպատակն այն է, որ բանակում և ժողովրդի շրջանում ձեռք բերի բարձր հեղինակություն: Դա քիչ համարելով, Ամիր Քաբիրին մեղադրեցին լրտեսության մեջ՝ նրան զրպարտելով, թե իբր գաղտնի կապերով կապված է ռուսական դեսպանության հետ:

Այդ նրբին սադրանքների դեմ հանդիման կատարյալ անպաշտպան առաջին վեզիրը, ի վերջո, շահի կողմից հեռացվեց իր պաշտոնից և աքսորվեց Քաշան: Որոշ ժամանակ անց իջեցվեց շահի հրամանագիրը նրան մահվան դատապարտելու մասին, որտեղ ասվում էր. «Մեր արքունիքի ծառա, հրեշտակների պահապան և անձնազոհ հաջի Ալի խանը՝ մեր հատուկ հանձնարարություններն իրագործող ֆարրաշ բաշին, հանձնարարություն ունի մեկնել Քաշանի մոտ գտնվող Ֆին կոչվող վայրը և հանգստացնել միրզա Թաղի խան Ֆարահանիին»:

Ֆարրաշ բաշին, այսինքն ոստիկանապետը, ժամանեց Քաշան և 1852 թ. հունվարին կատարեց շահի հրամանը՝ կտրեց մեծ վեզիրի երակները:

Չնայած այդ բարեփոխիչի կործանմանը՝ նրա իրականացրած վերափոխումները մեծ ազդեցություն ունեցան առավել լայնախոհ ժամանակակիցների վրա և՛ անշուշտ, ինչ-որ չափով նպաստեցին պետական ապարատի կատարելագործմանը, մշակույթի վերելքին և, անտարակույս, նաև իրանական ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարգացմանը:

Սակայն, ընդհանուր առմամբ, Ամիր Նեզամի բարեփոխումների հետևանքով Իրանում խորը փոփոխություններ տեղի չունեցան:

Նոր սադր-ազամ Էթեմադ-օդ-Դոուլե միրզա Աղա խան Նուրին, որը բարեփոխումների և առհասարակ ցանկացած նորամուծությունների

համոզված հակառակորդ էր և նշանակալից դերակատարություն ուներ միրզա Թաղի խանի դեմ կազմակերպված դավադրության մեջ, չեղյալ հայտարարեց կամ կասեցրեց իր նախորդի բարեռորոգչական նախաձեռնությունների մեծ մասը:

Այսպիսով՝ քանի դեռ Ամիր Նեզամը զբաղված էր բաբիական ապստամբությունների ճնշման գործով, ավատական ազնվականությունն ու հոգևորականությունը հանդուրժում էին նրան ու նրա բարեփոխումները: Բայց հենց որ բաբիները ընկճվեցին, այդ բարեփոխիչն այլևս նրանց պետք չէր:

Անտարակույս, Իրանը «վերևից» բարեփոխման ենթարկելու առաջին փորձի ձախողումը բացասական ազդեցություն էր ունենալու նրա հետագա զարգացման ճանապարհին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ԻՐԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՔՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ (XVIII Դ. ՎԵՐՋ ԵՎ XIX Դ.)

XVIII դ. վերջը Իրանի համար մի յուրահատուկ դարաշրջան էր: Հենց այդ ժամանակ տեղի ունեցավ նրա միավորումը ղաջարների թյուրքական դինաստիայի իշխանության ներքո, հիմնականում որոշվեցին պետական սահմանները, ձևավորվեց պետական ապարատը, որն անթաքույց միտումներ ուներ ընդօրինակելու եվրոպական վարչության ձևերը: Այդ շրջանում սկսում է ուժեղանալ արևմտյան տերությունների ռազմաքաղաքական և տնտեսական ճնշումը Իրանում տիրապետող դիրքեր ձեռք բերելու համար, մշակվում են արտաքին քաղաքականության սկզբունքները, որոնց հիմնական նպատակը երկրի ամբողջականության ու իրավական անկախության պահպանումն էր: Միաժամանակ դա մի շրջան էր, երբ սկսում են նշմարվել քաղաքական ու սոցիալ-տնտեսական ճգնաժամի նշաններ, ալիք առ ալիք բարձրանում է ժողովրդական դժգոհությունը:

Պահպանելով հիշողությունն ու պատկերացումները իր նախկին հզորության ու մեծության մասին՝ այդ նոր դարաշրջանում Իրանը բախվում է սոցիալ-տնտեսական, ռազմական, քաղաքական և մշակութային առումով ավելի զարգացած պետությունների հետ, կրում է պարտություն, ստիպված է գնալ նվաստացուցիչ զիջումների, անհաջողությունների հետևանքով ունենում է ծանր ապրումներ, տանջալից ձևով է հար-

մարվում նոր պայմաններին, փնտրում է իր աղքատ ու թշվառ վիճակի պատճառները և ուղիներ որոնում միջնադարյան հետամնացության հաղթահարման համար: Իրանում դեռ չեն չքացել այն պատրանքները, որ երկիրը կկարողանա պահպանել իր քաղաքական ու տնտեսական կատարյալ անկախությունը, կվերականգնի իր նախկին հզորությունը, անփոփոխ կերպով կպահպանի շիիթական գաղափարախոսությունն ու շիիթական նորմերը, ավանդական հասարակական կառուցվածքը, հնամենի ու հարուստ մշակույթն ու կենցաղը:

XIX դ. կեսերի իրադարձությունները բազմաթիվ իրանցիների ստիպեցին ավելի իրատեսական գնահատական տալ Մերձավոր ու Միջին Արևելքում և առհասարակ ամբողջ աշխարհում ստեղծված իրադրությանը և այդ նոր մարտահրավերների ֆոնի վրա գնահատել Իրանի հնարավորությունները: Հենց նշված ժամանակաշրջանից էլ սկսվում է իրանական պետության պատմության՝ որակապես նոր ժամանակաշրջանը:

Նշված ժամանակների Իրանի բնակչության ստույգ թվի մասին հավաստի տեղեկություններ գոյություն չունեն այն պարզ պատճառով, որ այդ երկրում մարդահամարներ չէին անցկացվում: Ենթադրվում է, որ XIX դ. վերջին երկրի բնակչությունը կազմում էր մոտավորապես 8-ից 10 միլիոն մարդ, որի կեսից ավելին վարում էր նստակյաց կյանք, իսկ 1/4-ը քոչվորներ էին: Ընդհանրապես, դա նոսր բնակեցված երկիր էր:

Իրանի բնակչությունը բաղկացած էր մեծ թվով տարբեր ժողովուրդներից ու ցեղերից: Բնակչության մոտ կեսը կազմում էին պարսիկները (ֆարսերը), որոնք իրենց թվաքանակով ամենախոշոր ժողովուրդն էին: Ըստ թվաքանակի՝ նրանցից հետո գալիս էին ազերի-թուրքերը, որոնց բնակության վայրը հիմնականում Ատրպատականն էր: Ազերի-թուրք բնակչությունը վարում էր նստակյաց և քոչվորական կյանք:

Իրանի բնակչության ճնշող մեծամասնությունը, ըստ դավանանքի, շիա մահմեդականներ էին (ավելի քան 85 %-ը), իսկ մոտ 10 %-ը կազմում էին մահմեդական սուննիթները (օրինակ՝ արաբները, քրդերը, բելուջները և այլն):

Երկրի քրիստոնյա բնակչության մեջ մեծամասնություն էին կազմում հայերը, որոնց թվի մասին նույնպես հավաստի տեղեկություններ գոյություն չունեն. ենթադրվում է՝ մոտ 50-60 հազար մարդ: Հայերն ապրում էին հիմնականում Սպահանում (Նոր Ջուղա), Թավրիզում, Շիրազում, Համադանում, Թեհրանում և այլ քաղաքներում:

Քրիստոնյա-ասորիների (մոտ 20 հազար) բնակության վայրը Ուրմիա լճի հարավ արևմտյան շրջաններն էին: Հրեաները (մոտ 20 հազար)

ցրված էին ողջ երկրի քաղաքներում: Իսկ զրադաշտական գյաբրերը (մոտ 10 հազար) բնակվում էին գլխավորապես Յեզդ, Քերման, Թեհրան և մի շարք այլ քաղաքներում:

Պատմության նոր դարաշրջանի շեմին Իրանը դեռ շարունակում էր մնալ որպես ավատական մի երկիր, որն իր սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման մակարդակով անհուսալիորեն հետ էր մնացել Արևմուտքի երկրներից, ընդ որում՝ զարգացման մակարդակների միջև եղած խզումը գնալով ոչ թե նվազում, այլ է՛լ ավելի էր մեծանում:

Վերլուծելով դրա պատճառները՝ գիտնականները թվարկում են մի շարք գործոններ, որոնցից առավել կարևորագույններն են հետևյալները. Իրանի բնակչության բազմացեղ ու բազմալեզու կազմը, որն արգելակում էր ազգային համախմբմանը. հնացած, բայց բավականաչափ կայուն սոցիալական կազմակերպությունը շահի բռնատիրական իշխանության գլխավորությամբ. քոչվորների առկայությունը, տրանսպորտի և կապի թույլ զարգացած ճևերը, նահանգների անջատողականությունը, բնակչության նշանակալից զանգվածների ոչնչացումը իշխանությունների կամայականությունների, ռազմական գործողությունների, համաճարակների, սովի հետևանքով:

Ինչպես միջին դարերում, այնպես էլ պատմության նոր դարաշրջանի արշալույսին Իրանը բազմիցս ենթարկվում էր օտարերկրյա նվաճողների ավերիչ արշավանքներին: Բուն Իրանի տարածքում բնակվող վաչկատուն-քոչվորական ցեղերը (քրդեր, լուրեր, բախթիարցիներ, թուրքմեններ, բելուջներ, արաբներ և այլն) ևս պարբերաբար ավերիչ ասպատակություններ էին կազմակերպում դեպի նստակյաց հողագործական շրջանները: Ընդհուպ մինչև XIX դ. Իրանում անվերջանալի էին տարբեր ավատական ու ցեղային խմբավորումների միջև երկպառակությունները ու պատերազմները: Պետք է նկատի ունենալ նաև, որ իրանական քաղաքակրթությունը կառուցված էր արիեստական ոռոգման համակարգի վրա կամ ուներ «ջրային» բնույթ: Ուստի ներքին պատերազմների, քոչվորների ասպատակությունների հետևանքով ոռոգման բարդ համակարգը, առանց որի երկրի տարածքի մեծ մասում հնարավոր չէ հողագործության գոյությունն Իրանում, ոչնչանում ու դուրս էր գալիս շարքից, ինչն իր հերթին հանգեցնում էր գյուղերի ու քաղաքների քայքայմանն ու կործանմանը: Բնականաբար, այս բոլորը կասեցնում ու արգելակում էր երկրի տնտեսական ու հասարակական զարգացումը:

Անկախ այն հանգամանքից, որ նստակյաց բնակչության կողոպուտն ու ավարառությունը հանդիսանում էր վաչկատուն-քոչվորական

կյանքով ապրող ցեղերի ապրուստն ապահովող կարևոր կովանոցներից մեկը, և քոչվորների մեծ զանգվածների առկայությունն անխուսափելիորեն արգելակում էր ցանկացած երկրի հասարակական-տնտեսական զարգացումը, քոչվորները առհասարակ նստակյաց բնակչության համեմատությամբ գտնվում էին զարգացման ավելի ցածր մակարդակի վրա: Իրանի քոչվորական անասնապահական տնտեսություն վարող վաչկատուն ցեղերի շրջանում տիրապետում էին նահապետական-կիսասավատական հարաբերությունները, որոնք վերին աստիճանի կենսունակ էին և արգելակում էին ոչ միայն քոչվորական ու կիսաքոչվորական, այլև նստակյաց շրջանների զարգացումը: Քոչվորական ռազմաշունչ ցեղերը, որոնք ապրում էին նահապետական-ցեղային օրենքներով ու սովորույթներով, չէին ցանկանում ենթարկվել իրենց բացարձակ ազատությունը կաշկանդող որևէ օրենքի, ուստի հանդիսանում էին անջատողականության տարածողներ: Եվ եթե նկատի ունենանք, որ Իրանում քոչվորական ու կիսաքոչվորական ցեղերը նշանակալից դեր էին խաղում երկրի պետական կառավարման մեջ և բանակում (շահական հեծելազորը հիմնականում բաղկացած էր ցեղերից հավաքված ջոկատներից), ապա անվարան կարելի է ասել, որ նրանք աշխատում էին երկրում արմատավորել առավել հետամնաց տոհմատիրական-ավատական հարաբերություններ: Ցեղերի խաները, որոնք օգտվում էին բազմաթիվ արտոնություններից և իրավունքներից, շահագրգռված չէին, որ իրենց հսկողության տակ գտնվող ցեղերն անցնեն նստակեցության:

Իրանի նստակյաց հողագործական շրջաններում գյուղական համայնքի բավականին նշանակալից մնացուկների առկայությունը նույնպես արգելակում էր երկրի զարգացման գործընթացը:

Իրանում հարստության հիմնական աղբյուրի՝ հողի գերագույն սեփականատերը շահն էր: Նա իր հպատակների կյանքի ու մահվան, հավասարապես նաև նրանց ունեցվածքի լրիվ տերն էր: Մոտավոր հաշվարկներով՝ XIX դ. սկզբին մշակման համար պիտանի հողերի մոտ մեկ երրորդը պատկանում էր պետությանը: Շահապատկան հողերը կոչվում էին «խաս» հողեր, որոնք ոչ մի պայմանով չէին հատկացվում որևէ մեկին որևէ ծառայության դիմաց: Պետական ֆոնդի մեջ էին մտնում նաև ցեղերին պատկանող հողերը («իլյաթի»), որոնք կազմում էին Իրանի տարածքի մոտ 1/4 մասը: Այս հողերի վրա, փաստորեն, հարկեր չէին դրվում, քանի որ ցեղերի մեծ մասը պարտավոր էր կատարել զինվորական ծառայություն և իշխանությունների առաջին իսկ պահանջով ներկայանալ նրանց իր զինված ջոկատով: XIX դ. ուժեղացավ իլյաթի հողերի վե-

րածումը խաների սեփականության:

Երկրում շարունակում էր գոյություն ունենալ նաև սելջուկ-մոնղոլների ժամանակներից արմատավորված ռազմա-լենային համակարգը, երբ ռազմական ծառայության դիմաց շահը խաներին շնորհում էր հողեր՝ որպես «թիուլ» կամ «սոյուրղալ»:

Իրանում գոյություն ունեին հողային սեփականության հետևյալ ձևերը. պետական հողեր («խալիսե կամ դիվանի»), խոշոր ավատատերերի ու խաների ժառանգական հողեր, մասնավոր կալվածատիրական հողեր («արբաբի կամ մոլք, մուլք»), վաքֆեր կամ վաքուֆային հողեր («ամլյաք-ե մոքուֆանե»), այսինքն մզկիթապատկան հողեր: Սրանք շահական իշխանությունից հարաբերականորեն անկախ հողեր էին, որոնք գտնվում էին շիիթական, մասամբ նաև սուննիթական հոգևորականության տնօրինության ներքո: Չէր թույլատրվում վաքֆային հողերի ոչ վաճառքը (օտարումը) և ոչ էլ նվիրաբերումը, թեև XIX դ. վերջից այդ կարգն արդեն չէր պահպանվում և հոգևորականներն ամեն անգամ որևէ պատճառ էին գտնում հողերի վաճառքի համար: Առկա էին երկու տեսակի վաքֆեր՝ ընդհանուր, որոնք կոչված էին ապահովել մզկիթների, մեդրեսեների և այլնի կարիքները, և մասնավոր, որոնք հանդիսանում էին առանձին հոգևոր անձանց սեփականությունը:

Վաքֆային հողերն ունեին հարկային իմունիտետ, այսինքն՝ ազատված էին հարկեր վճարելու պարտականությունից: Համայնքներին պատկանող հողերը կոչվում էին «ումումի», իսկ մանր հողատերերի հողերը՝ «խորդեմալեք»:

Իրանում ճորտատիրություն գոյություն չի ունեցել: Համաձայն շարիաթի՝ գյուղացին համարվում էր ազատ մարդ: «Տերը» իրավունք չուներ նրան ոչ վաճառել և ոչ էլ գնել: Գյուղացին անձամբ ամրացված էր ոչ թե կալվածատեր-ավատատիրոջը, այլ կալվածքին: Գյուղին տիրելը դեռ չէր նշանակում, որ այդ տիրող անձն իրավունքներ ուներ նաև գյուղացիների նկատմամբ,- գրում էր ֆրանսիացի Գասպար Դրուվիլը: Գյուղացիները օգտվում էին հողերի ժառանգական վարձակալման իրավունքից մի քանի սերունդների ընթացքում: Իրանում գյուղացիները հողի նկատմամբ ունեին նշանակալիորեն ավելի շատ իրավունքներ, քան նույն ժամանակաշրջանի եվրոպական գյուղացիները: Սակայն ամբողջությամբ վերցրած, գյուղացիների վիճակը ծանր էր, և նրանք իրավազուրկ էին, թեև դարերով ձևավորված սովորական իրավունքի նորմերը և շարիաթը կանոնակարգում էին վերաբերմունքը գյուղացիների նկատմամբ և նրանց համար ապահովում որոշակի պաշտպանություն:

Չափազանց հետաքրքիր է Աղա-Մոհամմադ շահի «խրատը» Իրանի գահի ապագա թեկնածու Ֆաթհ-Ալի շահին: Ռեզա Ղուլի խան Հեդայաթի վկայությամբ՝ մի անգամ Աղա-Մոհամմադը խնդրում է Բաբա-խանին՝ արտահայտել որևէ ցանկություն: Գահաժառանգը ասում է հետևյալը. «Ձեր հզորության շնորհիվ ես ոչ մի բանի կարիք չունեմ... Եթե գյուղացիների հարկերը թեթևացվեն, նրանք ավելի շատ կաղոթեն Ձեզ համար»: Զայրացած Աղա-Մոհամմադը պատասխանում է. «Քո այդ արտահայտած միտքը խակ է և սխալ, որովհետև դու գյուղացիների հետ չես ապրել և գաղափար չունես այդ ռամիկների մասին: Եթե գյուղացին ազատ լինի իր հոգսերից, նրա գլխում կհասունանա այն միտքը, որ անհրաժեշտ է վերացնել իրենց պետերին ու կառավարիչներին: Ուստի եթե նրանց մոտ հայտնվի ազատ ժամանակ, նրանք այլևս չեն հնազանդվի իրենց կառավարիչներին և կընկնեն անվերջ մտորումների և խորհրդածությունների գիրկը: Այդ ցածր դասի մարդկանց անհրաժեշտ է զբաղեցնել աշխատանքով, որպեսզի նրանք աշխատանքից հանգիստ չունենան, այլապես հողագործությունը կքայքայվի, բերքը կնվազի, կսկսվի սով, զինվորն ի վիճակի չի լինի ծառայել, ծայր կառնեն մեծ խռովություններ, և պետությունը կկործանվի»: Խորհուրդն ընդունվեց ի գիտություն, և Ֆաթհ-Ալի շահի ժամանակ գյուղացիներն այլևս հանգստի ժամանակ չունեին: Նրանց մշտապես սովորեցնում էին հարգանքով վերաբերվել «աստծո կողմից տրված» ցանկացած բարձրագույն իշխանության նկատմամբ:

Գյուղացիներից գանձվող անօրինական հարկերն ու նրանց նկատմամբ կիրառվող բռնությունները սովորական երևույթ էին: Նույն Գասպար Դրուվիլը վկայում է, որ ավատատերերն ու խաները «ռայաներին» (բառացիորեն՝ «անասունների հոտ») համարյա թե մարդու տեղ չէին դնում: Երբ շահի փեսաներից մեկի՝ Ղազեմ-խանի պահանջով գյուղացիները նրա համար չբերեցին շարքաթ և կոնֆետներ՝ պատասխանելով, թե իրենք չգիտեն, թե դրանք ինչ են, խանը ավարի մատնեց գյուղը, ավերեց տները և կրակի ճարակ դարձրեց ցանքսերը: Ավատական կարգերի պայմաններում գյուղացիների նկատմամբ վերաբերմունքը, հիրավի, հանդիսանում էր անմարդկային ու վայրենի: Գյուղացիներին կարող էին սպանել, կախել, ոտքերին կաղապարներ հագցնել, ստիպում էին որպես նվեր իրենց հանձնել մերձավոր հարազատներին:

Շահագործման առումով գյուղացիության վիճակն էապես չէր փոխվում այն բանի հետևանքով, թե ինչ կարգի հողերի վրա էին նրանք աշխատում: Նրանց պարտականությունն աշխատելն էր: Գյուղացիների և

ավատատեր-հողատերերի միջև փոխհարաբերությունների հիմք էր հանդիսանում բերքի բաշխման միջնադարյան հայտնի հնգանդամ սկզբունքը, երբ ամբողջ բերքի արժեքը բաժանվում էր հինգ հավասար մասի՝ հող, ջուր, սերմ, լծկանիներ և աշխատող ձեռքեր: Առաջին չորսը, այսինքն՝ բերքի չորս հինգերորդ մասը, պատկանում էր կալվածատիրոջը, իսկ գյուղացին ստանում էր միայն «աշխատող ձեռքերի» իր մեկ բաժինը: Սակայն դա բոլորը չէր: Գյուղացին պարտավոր էր խաներին վճարել բնամթերային հարկեր՝ բուրդ, յուղ, ձու, հավ, վառելափայտ և այլն, անվճար կերակրել իրենց գյուղերով անցնող պետական մարդկանց, խաներին, զինվորական ջոկատներին, տարբեր առիթներով (հարսանիք, որդու ծնունդ և այլն) խաներին ու պետության մեծամեծերին տրամադրել «փիշքեշներ» (նվերներ): Գյուղացիներից գանձվում էին նաև մի հարկատեսակ՝ հոգուտ հոգևորականության («զաքյաթ»), հարկեր նրա անասուններից, արտակարգ հարկեր պատերազմների ժամանակ և այլն:

Հարկերի և բնամթերային տուրքերի գանձումն իրականացվում էր խանի կառավարչի (մոբաշիրի) և գյուղապետի (քեդխուդա) կողմից, որը գլխավորում էր գյուղական համայնքը:

Գյուղացիության դաժան շահագործումը և անընդմեջ ավատական պատերազմները հանգեցնում էին գյուղերում զանգվածային աղքատացման և պարբերական սովահարությունների: Գյուղացիության շրջանում հաճախ բռնկվում էին ժանտախտի և խոլերայի համաճարակներ:

Իլյաթների (քոչվորներ) վիճակը նվազ ծանր էր, քան նստակյաց գյուղացիներինը (ռայաթներ): Խաների օգտին հարկերն ու տուրքերը նրանցից գանձվում էին ավելի քիչ, քան ռայաթներից: Պետության գանձարան ևս քոչվորները մուծում էին ավելի քիչ հարկեր, կամ ընդհանրապես չէին մուծում: Մտնելով խանական ջոկատների և ավատական աշխարհազորերի մեջ՝ քոչվորները մասնակցում էին ռազմական արշավանքների կամ ասպատակությունների, որոնց հետևանքով ստանում էին ռազմական ավարի իրենց բաժինը: Դա հանդիսանում էր այն պատճառներից մեկը, որ քոչվորները չէին ձգտում անցնել նստակեցության:

Իրանում ցեղերը ցրված էին ամբողջ երկրով մեկ, սակայն մաքուր «ցեղային» էին հանդիսանում պետության ծայրամասային շրջանները, որտեղ բնակվում էր ցեղերի հիմնական զանգվածը: Ցեղերը միանգամայն տարբեր էին ոչ միայն ըստ էթնիկական պատկանելության, այլև սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով, իրենց քվաքանակով, զբաղեցրած տարածքների չափերով, կրոնով, ռազմական ներուժով,

քաղաքական կյանքում իրենց խաղացած դերով: Իրանական միապետները պետք է տիրապետեին բազմաթիվ ցեղերի կառավարման նրբին արվեստին, որպեսզի նրանց կարողանային պահել հնազանդության մեջ: Ամբողջությամբ վերցրած՝ դաջարներին դա հաջողվում էր: Նրանք կարողացան ստիպել ցեղերին ճանաչելու կենտրոնական կառավարությանը և պաշտպանելու պետական սահմանները: Ավելի դժվար էր ցեղերից հարկեր հավաքելը և իշխանությունների դեմ նրանց պարբերական ելույթները ճնշելը:

Աշիրեթային քոչվորական ցեղերն ունեին արտոնյալ վիճակ, մինչդեռ նստակյաց կամ ռայաթ ցեղերը գտնվում էին աշիրեթային ցեղերից կախյալ վիճակում: Ցեղերի ավատական վերնախավը բազմաթիվ թելերով կապված էր շահական արքունիքի և տեղական իշխանությունների հետ: Ցեղերի շրջանում գործում էր արյան վրիժառությունը: Այդ հողի վրա հաճախ տեղի էին ունենում արյունահեղ ընդհարումներ տարբեր ցեղերի միջև, որոնց ընթացքում զոհվում էին հազարավոր մարդիկ:

Իրանական գյուղում տիրապետում էր բնամթերային տնտեսությունը: Հողագործությունը զուգակցվում էր տնային արդյունագործության հետ: Շատ գյուղացիներ հողագործության ու անասնապահության հետ մեկտեղ զբաղվում էին նաև ջուլհակությամբ, մետաքսագործությամբ, գորգագործությամբ և այլն:

XIX դ. առաջին կեսին իրանական քաղաքների տնտեսական բազան շարունակում էր մնալ զարգացած արհեստագործական արտադրությունը, առևտուրն ու գյուղատնտեսությունը: Այդ ժամանակ իրանական քաղաքներն ունեին կիսաագրարային բնույթ. քաղաքային տարածքների համարյա կեսը, քաղաքամերձ բոլոր թաղամասերը, զբաղեցված էին այգիներով ու բանջարանոցներով: Նշված ժամանակաշրջանում Իրանի քաղաքային բնակչությունը կազմում էր երկրի ողջ բնակչության 20%-ը:

Կյանքը քաղաքներում հարաբերականորեն ավելի անվտանգ էր, քան գյուղերում: Նախ՝ քաղաքը ավելի լավ էր պաշտպանված քոչվորների ասպատակություններից: Քաղաքներում վարչական իշխանությունների առկայությունն ապահովում էր տնտեսական կյանքի արագ վերականգնում տարերային աղետներից ու ռազմական գործողություններից հետո: Բոլոր խոշոր քաղաքները կառավարվում էին դաջարական իշխանազունների կողմից, որոնք հանդիսանում էին նահանգների կառավարիչներ:

Քաղաքային արհեստը պահպանում էր միջնադարյան համքարային կազմակերպության բնույթը: Յուրաքանչյուր մասնագիտության արհեստավորներ միավորված էին համքարությունների մեջ, որոնք ունեին

իրենց ավագները, ենթավարպետներն ու աշակերտները: Արհեստավորները հարկեր էին վճարում կա՛մ դրամով, կա՛մ իրենց արտադրանքով: Համքարությունները պաշտպանում էին իրենց յուրաքանչյուր անդամի իրավունքները իշխանությունների ոտնձգություններից:

XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին արհեստների հետ միաժամանակ Իրանում գոյություն ունեին նաև պարզագույն մանուֆակտուրաներ: Իրանական արհեստը, նստակյաց գյուղացիների և քոչվոր-անասնապահների տնայնագործական արդյունաբերությունը և պարզագույն մանուֆակտուրաները («քարխանե») ողջ երկրին մատակարարում էին բամբակյա, բրդյա և մետաքսյա կտորեղեն, գորգեր, երկաթյա և պղնձյա, ինչպես նաև բրուտագործական իրեր, որոնց մի մասն արտահանվում էր հարևան երկրներ ու Եվրոպա: Արհեստներն ու արհեստավորները սերտորեն կապված էին առևտրի հետ: Արհեստանոցները հիմնականում կենտրոնացված էին «բազարում»: Ընդհանրապես, բազարը ոչ միայն գործարար և տնտեսական կյանքի կենտրոն էր, այլև նշանակալից չափով նաև քաղաքական կյանքի: Հաճախ, ի նշան բողոքի իշխանությունների այս կամ այն գործողությունների դեմ, արհեստավորներն ու վաճառականները կամ «բազարի մարդիկ» («ահլ-ե բազար») հայտարարում էին գործադուլ, փակում էին բազարները, և այնժամ քաղաքի տնտեսական կյանքը մեռնում էր:

XIX դ. վերջից իրանական տնայնագործական արդյունաբերության ավանդաբար զարգացած ճյուղերում սկսվել էր երկարատև անկման ժամանակաշրջան: Արտասահմանյան արդյունաբերական ապրանքներն աստիճանաբար հեղեղում էին իրանական շուկան: Չդիմանալով Արևմտյան Եվրոպայից և Ռուսաստանից ներմուծվող մեքենայական արտադրության էժան ապրանքների մրցակցությանը՝ քարխանեները և արհեստանոցները փակվում էին, իսկ արհեստավորները՝ սնանկանում: Այդ էր պատճառը, որ դարավերջին Իրանում գոյություն ունեցող կապիտալիստական արտադրության սաղմերը հետագա զարգացում չստացան:

Իրանում արհեստավորների և վաճառականների մեջ հարաբերականորեն մեծ տոկոս էին կազմում հայերը: Հրեաները զբաղվում էին «ամենացածր» արհեստներով:

Իրանական քաղաքների ապաղասակարգայնացված տարրերը՝ լոթիները («լութի») չափազանց կարևոր դեր էին խաղում քաղաքային համարյա բոլոր ապստամբություններում: 1815 թ. Թեհրանի լոթիները, որոնք կաշառվել էին շեյխ-ուլ-իսլամի կողմից, ջախջախեցին ու կողոպտեցին քաղաքի հայկական թաղամասը: Առհասարակ, XIX դ. առաջին

կեսին Իրանում բավականին բարձր էր «պարապ-սարապների» տոկոսը, որոնց թվի մեջ, լոթիներից բացի, մտնում էին ֆաքիրները, դերվիշները, աղքատ սեյիդները, մուրացկանները, փողոցային երաժիշտները և այլն:

Խոշոր կապիտալներ ունեցող վաճառականների թիվը, որոնք զբաղվում էին ներքին առևտրով, այնքան էլ մեծ չէր: Ապրանքաշրջանառության բնականոն զարգացմանը և միասնական ներքին շուկայի ձևավորմանն արգելակում էին երկրի ավատական մասնատվածությունը, հաճախակի բռնկվող ներքին խռովությունները և այլն: Խանգարիչ գործոններ էին նահանգապետների կամայականությունները, իշխանությունների չարաշահումները, ճանապարհների վրա լայնորեն տարածված ավազակությունը, ներքին մաքսատուրքերի առկայությունը և այլն:

Նահանգների մի շարք կառավարիչներ ոչ միայն չէին պայքարում առևտրական ճանապարհների վրա գործող ավազակախմբերի դեմ, այլև հաճախ իրենք էին կազմակերպում այդպիսի խմբեր, կամ ավազակապետներից ստանում էին կողոպտված ապրանքներից որոշակի բաժին: Հաճախ նահանգի կառավարիչը մենաշնորհացնում էր առևտրի առավել եկամտաբեր բնագավառները, և ինքն էլ որոշում էր վաճառվող ապրանքների գները: Կուտակված կապիտալները վախով ու կասկածամտությամբ էին դրվում առևտրական շրջանառության և ձեռնարկատիրական գործունեության մեջ: Ոչ հաճախակի, բայց տարբեր քաղաքներում, առավելապես հայ վաճառականների կողմից, կազմակերպվում էին առևտրական ընկերություններ: Առևտրական կապիտալը վարկավորում էր իշխանավորներին, այդ թվում նաև շահին: Տարբեր երկրներ այցելող վաճառականները հաճախ իրականացնում էին նաև շահի և կառավարության կողմից տրվող դիվանագիտական հանձնարարություններ:

Մինչև XIX դ. կեսերը գյուղում տիրապետող տարրը ժառանգական խաներն էին: Սակայն դարի վերջից իրադրությունը կտրուկ փոխվում է: Առևտրական կապիտալը ներթափանցում է գյուղ: Արտաքին առևտրի հետ կապված խոշոր վաճառականներն Իրանի տարբեր շրջաններում գնում են զգալի քանակությամբ հողեր՝ զարկ տալով առևտրային հողագործությանը: Մասնավորապես հսկայական հողային կալվածքներ ձեռք բերեցին առևտրաղրամական կապիտալի այնպիսի խոշոր ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Ջամշիդյանները, Ջահանյանները (փարսեր), հայազգի Թումանյանցները և այլոք:

Միևնույն ժամանակ տեղի էր ունենում հակադարձ երևույթ: Խոշոր ավատատերերը կամ, առհասարակ, հողատերերը, ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, սկսում էին սեփա-

կան տնտեսություն վարել և անմիջականորեն, կամ միջնորդների միջոցով զբաղվել առևտրով:

Վաճառականները Իրանում համարվում էին հասարակության արտոնյալ մասը: Վաճառականը հարգված մարդ էր, իսկ երբեմն դառնում էր երկրի քաղաքական կյանքում կարևոր դեմք: Վաճառականների գլխավորը («թաջեր բաշի», «մալեք-օթ-թոջար») քաղաքի գլխավոր դեմքերից մեկն էր:

Քաղաքական անկայունության, օտարերկրյա ներխուժումների ու պատերազմների տարիներին արևելյան բոնատիրական պետության մեջ անձի և գույքի անապահովությունը դառնում էր ազգային աղետ: Աղբյուրներից հայտնի է, օրինակ, որ XIX դ. առաջին կեսի Իրանի մեծահարուստ վաճառականներից մեկը՝ հայազգի Դավիթ խան Մելիքովը, որը Սպահանի նահանգապետ, մահմեդականացված հայ Մանուչեհր խան Մոթամադ օդ-Դոուլեի ազգականն էր և հայտնի էր իր առևտրական լայն կապերով Հնդկաստանի, Բաղդադի, Ստամբուլի և Անդրկովկասի հետ, իշխանությունների հրահանգով կողոպտվեց և զրկվեց իր ունեցվածքից: Նրա կողոպտիչներն ասել էին, որ «հրաման կա կողոպտելու քեզ»:

Հարկ է նշել, որ Իրանում սնանկացումն ու աղքատացումը մեծամասնությունն ընդունում էր հանգիստ, դա վերագրելով աստծո կամքին ու ճակատագրին:

XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին Իրանում կային հարաբերականորեն մեծ թվով ստրուկներ, որոնք առավելապես քրիստոնյաներ էին և սևամորթներ: Գերի ընկածները սովորաբար վեր էին ածվում ստրուկների: Սևամորթ ստրուկները ներմուծվում էին Պարսից ծոցի նավահանգիստների վրայով կամ գնվում էին Բասրայում և Բաղդադում: Քոչվոր ցեղերի մեջ կային ստրուկներ տեղական բնակիչներից գերեվարված գյուղացիներից կամ հարևան ցեղերի անդամներից: Քոչվորները սովորաբար նստակյաց բնակչությունից գերեվարում էին մեծ թվով մարդկանց և վաճառում ստրկության:

Իրանում ոչ գյուղատնտեսության մեջ և ոչ էլ արհեստանոցներում ստրկական ուժ չէր օգտագործվում: Առկա էր միայն, այսպես կոչված, տնային ստրկություն («ղոլամներ»): Նրանցից ոմանց կարելի էր վաճառել, իսկ ոմանք օգտվում էին որոշ իրավունքներից: Շատ ստրուկներ ստանում էին ազատություն: Դրանցից էին, օրինակ, այն կանայք, որոնք իրենց տերերի համար ծնում էին երեխաներ, կամ տղամարդիկ, որոնք իրենց տերերին մատուցել էին որոշակի ծառայություններ, կամ տարիների ընթացքում հավատարմորեն ծառայել էին նրանց:

Չնայած այն հանգամանքին, որ ստորագրվել էին պայմանագրեր Պարսից ծոցում ստրկավաճառությունն արգելելու մասին (1845,1847, 1851 թթ.), այն շարունակվում էր Սիսթանում և Բելուջիսթանում, որտեղ վաճառվում էին սպիտակ և սև ստրուկներ: Ռուսական հյուպատոս Ա.Միլլերի վկայությամբ՝ Իրանում վերաբերմունքը ստրուկների նկատմամբ «մարդկային» էր:

Իրանի քաղաքական կարգը անսահմանափակ ավատական միապետությունն էր: Ավելի քան երկու հազար տարիների ընթացքում այդ երկրում գերագույն իշխանությունը գտնվում էր անսահմանափակ իրավունքների տեր, միահեծան բռնատիրոջ՝ շահի ձեռքերում: Ֆաթհ Ալի շահը «Իրանը դիտում էր ոչ թե որպես մի երկիր, որին նա պետք է սիրի, պաշտպանի ու հզորացնի, այլ որպես մի կայք, ունեցվածք, որը նա վարձել է՝ սակայն վստահ չլինելով, թե որքան ժամանակ այն գոյություն կունենա: Ուստի նա աշխատում է նրանից «քամել» առավելագույնը, ինչ հնարավոր է, քանի դեռ ինքը գտնվում է իշխանության ղեկի մոտ: Շահը իր պետության հետ վարվում է, ինչպես նվաճված մի երկրի: Նրա միակ հետաքրքրությունն այն է, թե ինչպես ժողովրդից կորզի հնարավորինն չափ խոշոր գումար»,- գրում էր անգլիացի Ֆրեյզերը:

Շահական բռնատիրության պայմաններում բոլորը պարտավոր էին կատարել շահի կամքը և նույնիսկ պետական գործերի վերաբերյալ իրենց անձնական հայացքները ենթարկել շահի հայացքներին: «Ուժեղագույն ազնվականն անգամ չի կարող վստահ լինել իր անձի և ունեցվածքի անվտանգության համար. ինչպես վերջին ռամիկի՝ նրան կարող էին ծեծի ենթարկել և հաշմել ամենադաժան ձևով. նրա կանայք և աղջիկները կարող են դառնալ պարսկական տիրակալի ախոռապանների լկտիության զոհերը, և դա առաջ չի բերի ոչ մի ցավակցություն, և ոչ ոք այդ մասին ոչ մի խոսք չի ասի»,- XIXդ. սկզբին գրում էր գերմանացի գիտնական Հ. Մարտենսը: Միայն կատարյալ անօրինականության երկրում կարող էր ծնվել հետևյալ ասացվածքը. «Այն ամենը, ինչ ես ունեմ՝ քոնն է»:

Շահի իրավասությունն էր ընդունելու վերջնական վճիռներ: Նրա իրավունքն էր՝ հայտարարել պատերազմ և կնքել խաղաղություն: Նա էր նշանակում նահանգապետներին, հանդիսանում էր բանակի գլխավոր հրամանատարը և այլն:

Երբեմն, հույժ կարևոր դեպքերում, շահը հավաքում էր ավատական ազնվականության և հոգևորականության խորհուրդ, որն ուներ խորհրդակցական իրավունքներ: Շահը ոչ միայն վաճառում էր պաշտոնները ու կոչումները, այլև հաճախ դրանք դնում էր աճուրդի: Դժվար չէ պատ-

կերացնել, թե իր պաշտոնն աճուրդով շահածը իր ծախսած դրամը փոխհատուցելու համար ինչպես պետք է վարվի ռայաների հետ, առավել ևս, որ շահն իրավունք էր տալիս աճուրդում շահածներին շահատակության ենթարկելու իրենց տիրապետության տակ դրված շրջանները:

Չգրված օրենք էր, որ բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները թանկարժեք քարեր, ոսկեղեն և հազվագյուտ իրեր պետք է «փեշքեշ» («ընծա») աներին շահին: Շահի հետ անձնական մոտիկությունը բարձր պաշտոն ձեռք բերելու ամենահուսալի ճանապարհն էր: Յուրաքանչյուր հպատակի բարձրացումը և կործանումը կախված էր շահի քմահաճույքից: Մեկ անգամ վարկաբեկված կամ շահի առջև մեղավոր հանված անձն այլևս ոչ մի հնարավորություն չուներ կրկին բարձրանալու:

Ղաջարական շահերը մշտապես ձգտում էին ազգակցական կապերի մեջ մտնել Իրանի բոլոր ազնվազարմ ընտանիքների հետ: Նրանք իրենց աղջիկներին ու քույրերին կնության էին տալիս առավել ազդեցիկ աստիճանավորներին, նրանց որդիներին, իսկ իրենք որպես իրենց պաշտոնական («աղդի») կամ ժամանակավոր կին («սիղե») էին վերցնում այն խանական մեծատոհմիկ ազնվականական և նույնիսկ հարուստ վաճառականական ընտանիքների աղջիկներին, որոնց «բարեկամության» ու աջակցության կարիքն իրենք զգում էին: Արդեն Նասր-էդ-Դինի շահի ժամանակ Իրանի ողջ կառավարող վերնախավը ամուսնական-ընտանեկան կապերով կապված էր միմյանց հետ և ճգնաժամային պահերին հանդես էր գալիս միասնական ճակատով:

Շահից հետո պետության մեջ առաջին դեմքը սադր-ազամն էր: Փաստորեն, պետության կառավարման գծով հարցերի մեծ մասը լուծվում էր նրա կողմից: Նա էր պետական-վարչական ապարատի ղեկավարը: XIX դ. առաջին կեսին այդ պաշտոնը սովորաբար զբաղեցնում էին խելոք, բայց ոչ միշտ կրթված անձինք, որոնք կարողանում էին նույնիսկ իրենց կամքը թելադրել շահին: Սակայն ինչ պաշտոններ էլ որ զբաղեցնելու լինեին շահի ստորադասները, նրանք ոչ այլ ինչ էին, եթե ոչ բարձրաստիճան ծառաներ: Մինչև իսկ նրանց որդիները էլ գործիք էին շահի ձեռքում, որոնք կարող էին բարձրանալ կամ իջնել նրա ցանկությամբ: 1858 թ. տեղի ունեցած կառավարման համակարգի բարեփոխման ժամանակ սադր-ազամի պաշտոնը վերացվեց և ստեղծվեց մինիստրների խորհուրդ՝ շահի գլխավորությամբ: Ծնունդ առան վեց մինիստրություններ: Սակայն շուտով սադր-ազամի պաշտոնը կրկին վերականգնվեց: Սադր-ազամն ուներ երեք օգնական կամ տեղակալ. մոսթոուֆի-օլ-մամալեք (ֆինանսների կառավարիչ), մոնշի-օլ-մամալեք

(վարում էր շահական գրասենյակի գործերը: Նրա պարտականությունների մեջ էր մտնում նաև օտարերկրյա պետությունների հետ հարաբերությունների իրականացումը), և սալար-լաշքյար (ռազմական գործերի գծով վեզիր): Բացի այդ, գոյություն ունեին բազմաթիվ տարբեր պալատական պաշտոններ, ինչպես, օրինակ՝ արարողակարգի գծով, ֆարրաշների (ոստիկանության) պետ, գլխավոր ներքինի, որսորդների գլխավոր, շահական ձիանոցների, շնանոցների պետ և այլն: Սրանք սպասարկում էին գլխավորապես շահական արքունիքը, սակայն պետական կարևոր հարցեր լուծելիս և պաշտոնյաներ նշանակելիս նրանք խաղում էին ոչ պակաս կարևոր դեր, քան վեզիրները:

Արդեն XIX դ. առաջին երեսնամյակին սկսեց նկատվել պետական ապարատի եվրոպականացում. սադր-ազամը երբեմն սկսեց կոչվել առաջին մինիստր, մոնշի-օլ-մամալեքը՝ արտաքին գործերի մինիստր և այլն:

Պետական գործերի վրա մեծ ազդեցություն ունեին Թավրիզում գահաժառանգի արքունիքի առաջին դեմքերը՝ դայեմ-մաղամները, որոնք գահաժառանգի գահ բարձրանալուց հետո սովորաբար դառնում էին առաջին մինիստր:

Նահանգների գլուխ էր կանգնած նահանգապետը (բեկլարբեկը կամ «բեյլերբեյ ամիր օլ-ումարաե»): Բեկլարբեկները վարչական իշխանությունը զուգակցում էին զինվորականի հետ: Բեկլարբեկի պաշտոնում նշանակումը միշտ ուղեկցվում էր խանի տիտղոսի շնորհումով: Սովորաբար բեկլարբեկներ էին նշանակվում շահի որդիներից (շահզադե) կամ նրա մոտ ազգականներից, ինչպես նաև տեղական ազնվականության ներկայացուցիչներից, իսկ առանձին դեպքերում՝ տեղական խանական տոհմի ընտրյալներից: Բեկլարբեկի վարչական ապարատի մեջ մտնում էին ինքը՝ բեկլարբեկը, շեյխ-ուլ-իսլամը (նշանակվում էր Թեհրանի կողմից որպես շիիթական հոգևորականության ղեկավար), շարիաթական դատավորները (ղազիներ և մոլլաներ), սադրը (վարում էր վիլայեթի վակուֆային գույքերի գործերը և ենթարկվում էր բարձրագույն սադրի («սադր աս-սուդուր») դիվանին, վեզիրը (պատասխանում էր հարկերի մուտքի համար և ենթարկվում էր մեծ վեզիրին կամ սադր-ազամին): Յուրաքանչյուր տարի նովրուզի (իսլամական նոր տարվա՝ մարտի 21-ին) նահանգապետները պարտավոր էին գնել, ավելի ճիշտ՝ վերագնել իրենց պաշտոնը:

Շրջանների կառավարիչները կոչվում էին «հաքեմ» կամ «զաբիթ», իսկ գյուղերը կառավարվում էին քեդխուդաների կողմից:

Նահանգապետը իր կողմից կառավարվող նահանգին նայում էր ճիշտ այնպես, ինչպես շահն էր նայում Իրանին՝ որպես իր կալվածքի:

Երբեմն հարևան նահանգների կառավարիչների միջև ծագում էին վեճեր «սահմանային տարածքների» և այլ հարցերի շուրջը: Հաճախ այդ վեճերը վեր էին ածվում բացահայտ ռազմական գործողությունների:

Իրենց պարտականությունների մեջ թերացած բեկլարբեկները կանչվում էին մայրաքաղաք և իրենց մեղքը հաստատվելու դեպքում կուրացվում էին, կամ նրանց գույքը բռնագրավվում էր հարքունիս: Ուստի, հիանալի գիտակցելով, թե ինչ ճանապարհներով կարելի է բավարարություն տալ շահի և նրա վեզիրների պահանջներին, նրանք աշխատում էին իրենց պաշտոնավարության ժամանակ կուտակել խոշոր գումարներ, առավել ևս, որ ոչ ոք իրենցից չէր հարցնում, թե ինչ եղանակներով են ձեռք բերվել այդ գումարները: Բռնանալով իրենց հաքեմների վրա՝ բեկլարբեկները նրանցից կորզում էին խոշոր գումարներ, իսկ վերջիններս էլ իրենց հերթին բռնանում էին գյուղացիների նկատմամբ՝ քամելով նրանց: Նկարագրելով այս բոլորը՝ անգլիացի Մաքդոնալդ Քինները այդ ամբողջն անվանում է «կեղեքման ու թալանի մի կանոնավոր համակարգ»:

Նահանգապետների և գավառապետների պարտականությունն էր յուրաքանչյուր տարի հարկերից հավաքված որոշակի գումար մուծել շահական գանձարան և պատերազմի մեկնելու կամ ապստամբություններ ճնշելու ժամանակ իրենց զինված ջոկատներով ներկայանալ շահին: Սակայն այդ պահանջները հաճախ չէին կատարվում, և նահանգապետները արքունիքի կողմից հռչակվում էին «ապստամբ», «խռովարար» և այլն: Ընդհանրապես նահանգներում հաճախ տեղի էին ունենում տեղական իշխանությունների և ավատատերերի ապստամբություններ շահի և նրա կառավարության դեմ: Մի շարք ազդեցիկ խաներ նույնիսկ հանդես էին գալիս որպես շահական գահի հավակնորդներ: Երբեմն այս կամ այն նահանգում կամ քաղաքում իշխանությունը հափշտակվում էր տեղական խաների կամ նույնիսկ պատահական մարդկանց կողմից: Այսպես՝ Սպահանում Միրզա Նաբի խանի նահանգապետության ժամանակ, փաստորեն, քաղաքը կառավարում էր տեղական լոթիների գլխավոր («լութի-բաշի») միրզա Աբդուլ-Հոսեյնը:

XVIII դ. վերջին և XIX դ. առաջին կեսին ղաջարական շահերը ստիպված էին մղել համարյա անընդմեջ ներքին պատերազմներ անհնազանդ ավատատերերին ընկճելու համար:

Առանձնակի մեծ ինքնուրույնությունից էին օգտվում քոչվորական ցեղերի խաները: Իրենց ցեղերի քոչի վայրերում նրանք կառավարում էին ինչպես ժառանգական տիրակալներ՝ շատ հաճախ հրաժարվելով նույնիսկ ձևականորեն ճանաչել շահի իշխանությունը:

XIX դ. 40-ական թթ. Իրանը բաժանված էր 12 խոշոր նահանգների (վիլայեթների), որոնք էին. Ադրբեջան (Ատրպատական), Գիլյան, Մազանդարան, Աստրաբադ, Քղստան, Իրաք Աջմի (Կենտրոնական Իրան), Խորասան, Խուզիստան (Արաբստան), Սիսթան, Ֆարս, Քերման, Լուրեստան, որոնք իրենց հերթին բաժանվում էին գավառների (քոլուք), շրջանների (մահալե), իսկ վերջին վարչական միավորը հանդիսանում էր գյուղը (դեհ): Քաղաքները (շահր) բաժանվում էին թաղամասերի (մահալլե):

Շահի և նահանգների կառավարիչների զորքերը գլխավորապես բաղկացած էին անկանոն ավատական աշխարհազորից, իսկ հեծելազորը, որպես կանոն՝ վայելատուն ցեղերի ջոկատներից: Այդ ջոկատները նախ և առաջ ենթարկվում էին իրենց խաներին, որոնք հաճախ հրաժարվում էին կատարել շահի հրամանները: Աղա- Մոհամմադ շահի օրոք, ընդհուպ մինչև Ֆաթհ Ալի շահի կառավարման առաջին տարիները, իրանական կանոնավոր բանակ գոյություն չուներ: Անհրաժեշտության դեպքում հավաքվում էին աշխարհազորեր ցեղերից ու քաղաքային բնակչությունից, որոնք ռազմական արշավանքից հետո ցրվում էին: Իրանական հրետանին մեծ չէր, հրետանային զորամասերում թնդանոթների թիվը մատների վրա կարելի էր հաշվել: 1823 թ. Ալեքսանդր Ա ցարը Աբբաս միրզային նվիրեց երկու վաշտի համար հրետանի, որը հետագայում օգտագործվեց ռուսական զորքերի դեմ: Աբբաս միրզայի կողմից իրականացված ռազմական բարեփոխման ժամանակ կանոնավոր գնդերը ձևավորվեցին Ատրպատականի բնակչությունից. զինվորները հավաքագրվում էին թյուրքական ցեղերից և քաղաքային բնակչությունից: Զորքերը հավաքագրվում էին կամ կամավոր վարձակալության սկզբունքով, կա՛մ բռնի ճնով:

Կանոնավոր զորքերը (նեզամ) սկզբում մարզում էին ֆրանսիական, իսկ ապա՝ անգլիական, ավստրիական և իտալական սպաները: Բանակում վճարում էին աշխատավարձ: Կանոնավոր բանակը (նեզամ) բաղկացած էր սարբազների և ջանբազների գնդերից: Անկանոն զորքերը կոչվում էին «ղեյրե նեզամ», իսկ աշխարհազորը՝ «չարիք»: Շահական պահակազորը (քեշեքջի) բաղկացած էր սարբազներից և հեծյալ դոլամներից: Բացի այդ, 3 հազար մարդ ծառայում էր պալատներում, և 6 հազար հոգի մտնում էր շահական գվարդիայի մեջ:

Թեհրանում ռուսական դեսպանորդ Ա. Ի. Մեդեմի տվյալներով՝ XIX դ. 40-ական թթ. իրանական բանակում առկա էր 99 հազար հետևակ (որից 40 հազարը կանոնավոր), 15 հազար անկանոն հեծելազոր, 5 հազար հրետանավոր՝ 60 թնդանոթներով: Նորագույն ուսումնասիրողների

կարծիքով՝ այդ թվերը խիստ չափազանցված են: Ռազմամթերքով ու հանդերձանքով բանակի հագեցվածությունը բավարար չէր: Բարձր չէր նաև իրանական բանակի մարտունակությունը, որի մասին են վկայում նրա պարտությունները Ռուսաստանի և Անգլիայի հետ պատերազմներում: Իրանա-ռուսական պատերազմներից հետո կարգապահությունը իրանական բանակում էլ ավելի ընկավ: Ռազմական ծառայության ոչ մի որոշակիորեն սահմանված կարգ գոյություն չուներ: Բանակում հաճախ 80-90-ամյա ծերունիների հետ կողքկողքի կարելի էր տեսնել 16-ամյա պատանիների: Նույնիսկ օրենքով որոշված չէր զորակոչման տարիքը: Կառավարությունը բանակի վրա ծախսում էր չնչին միջոցներ: Բանակի մատակարարումը պատշաճ մակարդակի վրա չէր գտնվում: Իրանական բանակի մարտունակությունը նրա վերակազմակերպումից հետո ևս բարձր չէր: Զորքերի մատակարարման գործի վատթարացման և աշխատավարձը կանոնավոր կերպով չվճարելու կապակցությամբ, սպաների համաձայնությամբ, զինվորները սկսեցին զբաղվել արհեստներով ու մանր առևտրով, դրամափոխությամբ, ոմանք դառնում էին այս կամ այն մեծահարուստի մոտ դռնապան կամ ծառա, իսկ շատերը ընդհանրապես ցրվեցին տները: Բանակում կարող էին ծառայել միայն մահմեդականները, իսկ այլադավանները ազատվում էին զինվորական ծառայությունից: Բանակի կրտսեր սպայական կազմի ընտրության իրավունքը պատկանում էր բարձր սպայական կազմին, որի համար դա ևս դրամ կորզելու հիանալի միջոց էր: Գոյություն չուներ նաև զինվորական աստիճաններ շնորհելու որոշակի կարգ: Հաճախ զինվորական ծառայության մասին գաղափար չունեցող մարդիկ միանգամից ստանում էին բարձր սպայական կոչումներ: Յուրաքանչյուր հարուստ բեկ կամ խան կարող էր գնել սարքիքի (գեներալ) աստիճան:

Սովորաբար բանակի հրամանատարներ էին դառնում խոշոր հողատերերն ու նրանց զավակները: Հաճախ սպայական կոչումները փոխանցվում էին ժառանգաբար, որի հետևանքով երբեմն գումարտակների ու գնդերի հրամանատար էին դառնում 13 տարեկան երեխաները: Սպայական կոչումը կարելի էր գնել 30-100 թումանով:

Զինվորների ծառայության ժամկետը տևում էր 20 տարի և ավել: Զինվորները բնակվում էին համերկրացու սկզբունքով: Սպաները կաշառքով զինվորներին արձակուրդ էին տալիս, թույլատրում էին զբաղվել առևտրով ու արհեստներով: Աշխատավարձը վճարում էին մթերքներով, երբեմն տարիներով ոչինչ չէին վճարում:

Հարկերի, տուրքերի և մաքսատուրքերի գանձման գործը ամենուրեք

հանձնվում էր կապալով: Կապալառուները բնակչությունից ավելի շատ հարկեր էին գանձում, քան իրենք մուծում էին շահական գանձարան:

Իրանում չափազանց լայն տարածում ունեին կաշառակերությունն ու կոռուպցիան: Պետական և ազգային շահերը զոհաբերվում էին հանուն անձնական շահի: Աստիճանները, պաշտոնները, կոչումները, տիտղոսները, այդ բոլորը շահի կողմից վաճառվում էր: Նվերների («փիշքեշ») անվան տակ կաշառք տալը սովորական երևույթ էր: Փիշքեշներ վճարում էին գյուղացիները խաներին, վաճառականները՝ նահանգապետներին, խաները՝ շահի վեզիրներին, մի խոսքով՝ բոլորը բոլորին: Շահը ուներ նույնիսկ փիշքեշներ հավաքելու հատուկ գրասենյակ:

Երկրի հասարակական-քաղաքական կյանքում մահմեդական շիիթական հոգևորականությունը խաղում էր չափազանց կարևոր դեր: Իրանի բնակչության շրջանում վերին աստիճանի խորն էին կրոնական զգացումները: Այդ պատճառով խիստ ուժեղ էր հոգևորականության ազդեցությունը ժողովրդի և երկրի բովանդակ գործերի վրա: Իրանական հասարակության մեջ առկա էր հարգալից վերաբերմունք հոգևոր դեմքերի նկատմամբ, որոնք բազմիցս հանդես էին եկել որպես կեղեքվող ու հարստահարվող ժողովրդի պաշտպան, հատկապես օտարերկրյա ներխուժումների ու ներքին երկպառակտչական պատերազմների ժամանակ:

Այդ պաշտպանությունը մեծապես բարձրացնում էր հոգևորականության հեղինակությունը՝ միաժամանակ նպաստելով շիիզմի դիրքերի ամրապնդմանը, որը վեր էր ածվում մի յուրահատուկ «ազգային գիտակցության ձևի»:

Խավար ու անգիտակից, դյուրահավատ և ճակատագրապաշտ զարքաշ զանգվածները, որոնք իրենց տառապանքների սփոփանքը միայն կրոնի, երկնային ողորմածության մեջ էին փնտրում, մշտապես շփման մեջ էին հոգևորականության հետ և բացարձակապես ենթարկվում էին նրան:

Իրանում Դուրանը, շարիաթը և հադիսները (Մուհամմադ մարգարեի և նրա մերձակա հետևորդների գործունեության վերաբերյալ ավանդությունները) համարվում էին քաղաքացիական և քրեական դատավարության հիմքը: Դուրանը, շարիաթը և հադիսները մեկնաբանելու բացառիկ իրավունքից օգտվում էր բարձր հոգևորականությունը՝ ուլեմներն ու մոջթեհիդները: Երբեմն նույնիսկ շահն էր դիմում նրանց՝ հարցում անելով, թե այս կամ այն վճիռը, որ ինքը պատրաստվում է անել, համապատասխանում է արդյոք Դուրանի և հադիսների ոգուն: Շահը դիմում էր այդ բայլին նաև իր վճիռներին կրոնական ուժ ու հեղինակություն հաղորդելու համար: Չպետք է մոռանալ նաև, որ մինչև 1906 թ., այսինքն՝ սահմանադ-

րության հռչակումը, Իրանում գրավոր օրենքներ գոյություն չունեին:

Տիրելով վակուֆային ունեցվածքի (հողեր, խանութներ, արհեստանոցներ և այլն), ինչպես նաև բնակչությունից գանձելով զանազան հարկեր՝ զաքյաթ (ողորմություն հօգուտ աղքատների), խումս կամ սահմե-ի-մամ (իմամի բաժինը՝ եկամուտների մեկ հինգերորդ մասը՝ մարգարեի ժառանգորդներին պահելու համար) և այլն՝ հոգևորականությունը ձեռք էր բերում նաև տնտեսական անկախություն: Շատ հաճախ հոգևորականները միջնորդավորված անձանց միջոցով կամ անմիջականորեն կապված էին առևտրի հետ և զբաղվում էին վաշխառությամբ: Բացի այդ, բարձր հոգևորականության ձեռքերում կենտրոնացված էր բուն կրոնական իշխանությունը, ժողովրդական կրթությունը և քաղաքացիական դատավարությունը (շարիաթական դատարանը), որը վճիռներ էր կայացնում կրոնական գործերի, ժառանգության, ամուսնության, ապահարզանի, առևտրական և այլ գործարքների և ընդհանրապես բոլոր քաղաքացիական գործերի վերաբերյալ: Գլխավոր դատավորներ էին հանդիսանում մոջթեհիդները՝ հոգևորականության շրջանում առավել հայտնի ու հեղինակավոր անձինք: Նրանց կայացրած վճիռները վերջնական էին, եթե դրանք չեղյալ չհայտարարեր մեկ այլ՝ առավել հայտնի ու հեղինակավոր մոջթեհիդ: Հոգևորականները, հիմնականում մոջթեհիդները, զբաղվում էին նաև փաստաթղթերի հաստատմամբ՝ կատարելով նոտարի դեր: Բացի կրոնական շարիաթական դատարանից, գոյություն ուներ նաև աշխարհիկ («ուրֆ») դատարան, որի ներկայացուցիչները՝ դարուղաներն ու քեդխուդաները, որոշումներ էին կայացնում՝ հաշվի առնելով կրոնական դատավորների՝ ղազիների, ուլեմների, մոլլաների կարծիքը: Սովորական իրավունքի (ադաթ) հիմքի վրա լուծվում էին բազմաթիվ մանր վեճեր:

Եկեղեցական և սովորական իրավունքը կարգավորում էր քրիստոնյաների միջև եղած հարաբերությունները, որոնք ունեին կրոնական ներքին ինքնավարություն և վիճելի հարցերի լուծման համար հազվագյուտ դեպքերում էին դիմում իշխանություններին: Տեղական իշխանությունները համարյա չէին խառնվում հայկական, հրեական, ասորական, զրադաշտական համայնքների անդամների միջև հարաբերություններին: Քրիստոնյայի, հուդայականի կամ զրադաշտականի նկատմամբ հալածանքի ու հետապնդման դեպքում, նրանց բողոքի հիման վրա, գործը քննության էր ենթարկվում տեղական իշխանությունների կողմից, իսկ երբեմն հասնում էր մինչև շահական արքունիք:

Ուրֆ դատարաններում քննության էին ենթարկվում գողության, սպանությունների, խարդախությունների և այլ հանցանքների վերաբերյալ քրե-

ական գործեր: Ուրֆ դատարանների գերագույն դատավոր էր համարվում շահը: Քաղաքացիական իշխանությունների տնօրինության ներքո կային բանտեր: Մարդասպանության, զինված կողոպուտի, գողության և նման հանցագործությունների համար պատժամիջոցը մահապատիժն էր կամ երկարաժամկետ բանտարկությունը: Բացի այդ, կտրում էին հանցագործների ականջներն ու քթերը, ձեռքերն ու ոտքերը, մահակներով ծեծի էին ենթարկում, քթածակերից անցկացրած պարանով քարշ տալով՝ հանցագործին պտտեցնում էին բազարում կամ նստեցնում էին էշի վրա՝ երեսը դեպի պոչը, և ցուցադրում ժողովրդին: Ազնվազարմ մարդկանց մահապատժի «պատվավոր» ձև էր հանդիսանում խեղդամահ անելը (երբեմն մահվան դատապարտվածին ուղարկում էին մետաքսյա թել՝ ինքն իրեն խեղդելու համար) կամ թունավորումը: Արտոնյալ վիճակում էին գտնվում Մուհամմադ մարգարեի սերնդի սեյիդները, որոնց սովորաբար մահապատժի չէին ենթարկում և հազվագյուտ դեպքում էին պատժում, եթե նույնիսկ նրանք պետական հանցանքներ էին գործել:

Դպրոցներում դասավանդումը կառուցված էր կրոնական դոգմայի վրա և ամբողջապես գտնվում էր հոգևորականության հսկողության ներքո:

Երկրի իրական երկու մեծ ուժերը՝ պալատն ու հոգևորականությունը, մշտապես խուլ պայքար էին մղում միմյանց դեմ ի խնդիր կատարյալ տիրապետության: Այդ պայքարի մեջ մեծ մասամբ տանուլ էր տալիս հոգևորականությունը: Սակայն տարաձայնությունները բարձրագույն հոգևորականության ու շահի միջև շատ չէին խորանում: Բոլոր դեպքերում ղաջարները չէին ձգտում հոգևորականությանը ներգրավել պետության կառավարման գործի մեջ, նյութապես սեղմում և սահմանափակում էին նրանց գործունեությունը՝ նրանցից խլելով վաքֆերի մի մասը:

Ուլեմների մեջ ամենաբարձր դիրքում էին գտնվում մոջթեհիդները, որոնք օգտվում էին բարձր հոգևոր հեղինակությունից: Նրանք էին իրականացնում շիիթական համայնքի կառավարումը, բնակչությունը նրանց էր դիմում բոլոր վիճելի կրոնական ու իրավական հարցերի կապակցությամբ: Այստեղից էլ բխում էր նրանց քաղաքական, իրավական և բարոյական մեծ ազդեցությունը ղաջարական Իրանում: Ըստ Մուհամմադ մարգարեի հայտնի ավանդի՝ մահմեդականների ղեկավար կարող էր լինել միայն գիտնականն ու իրավաբանը: Ուստի մոջթեհիդ դառնալու և իջթիհադին (կրոնական օրենքները մեկնաբանելու իրավունք) հասնելու համար մարդը պետք է տիրապետեր աստվածաբանությանը, կրոնի հիմունքներին, տրամաբանությանը, օրենսդրության հիմունքներին: Հետագայում մոջթեհիդներն աստիճանաբար կոչվեցին այաթոլլա (աստվածային նախանշա-

նակ), իսկ ամենաազդեցիկները՝ մարջա-աթ-թաղլիդ կամ հոջաթ-օլ-էսլամ:

Բազմաթիվ ազդեցիկ մոջթեհիդներ բնակվում էին Իրաքի շիիթական սրբազան կենտրոններում՝ Քարբալայում, Էն-Նաջաֆում, Քազեմեյնում և Սամարրայում:

Ֆաթհ-Ալի շահի տիրապետության շրջանում ավելի նկատելի դարձավ շիիթական հոգևորականության կողմից դրսևորվող միտումը՝ ակտիվորեն մասնակցելու երկրի քաղաքական կյանքին և միջամտելու իշխանությունների կարգադրություններին: Մոհամմադ շահի տիրապետության շրջանում տեղի ունեցավ մահմեդականների դիրքերի հետագա ամրապնդում: Միրզա Թաղի խան Ամիր Քաբիրի փորձերը՝ սահմանափակելու հոգևորականության ազդեցությունը, ունեցան այն հետևանքը, որ նրանք միավորվեցին և տապալեցին պետության երկրորդ դեմք հանդիսացող այդ ազդեցիկ գործչին:

Նասր-էդ-Դին շահի կառավարման առաջին տարիներին որոշ չափով մեծացվեցին վաքֆային տիրույթները, շահը և արքունիքը ավելի շեշտված ձևով սկսեցին դրսևորել իրենց հարգալից վերաբերմունքը բարձր հոգևոր դեմքերի և առհասարակ կրոնի նկատմամբ, մայրաքաղաքում ծավալվեց մզկիթների շինարարություն և նույնիսկ շահի նախաձեռնությամբ Թեհրանում կառուցվեց մի հատուկ շենք (Թաքիե դոուլաթ)՝ սգո օրերի ժամանակ շիաների զանգվածային հավաքների համար:

Այս բոլորով հանդերձ, սակայն, XIX դ. առաջին կեսին շիիթական հոգևորականությունը դեռևս ամբողջ թափով հանդես չէր գալիս քաղաքական ասպարեզում, թեև 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ մոջթեհիդները «ջիհադ» (սրբազան պատերազմ) հայտարարեցին Ռուսաստանի դեմ:

Առաջին ղաջարների շրջանում նկատելիորեն ուժեղեցավ նաև սուֆիական միաբանությունների և դերվիշական «խանեքա»-ների գործունեությունը:

Իրանում հայկական, նեստորական, զրադաշտական և հրեական հոգևորականությունն օգտվում էր ազդեցությունից միայն իր հոտի շրջանակներում՝ որևէ կշիռ չունենալով պետական գործերի վրա:

Մինչև XIX դ. 70-ական թթ. Իրանը արևելյան այն հազվագյուտ պետություններից էր, որ պարտքեր չուներ: Անհրաժեշտության դեպքում, երբ ուրիշ երկրներում, օրինակ, կառավարությունները դիմում էին ներքին կամ արտաքին փոխառությունների, Իրանի շահը հարցը լուծում էր յուրովի. գանձարանը լցնելու համար նա ժողովրդի վրա նոր հարկեր էր բարդում՝ չնայած այն բանին, որ դրանք առանց այն էլ չափազանց ծանր էին:

XIX դ. կեսերին եվրոպական պետությունների հետ կապերի ընդլայնումը, պետական ապարատի արդիականացումը, առևտրի զարգացումը, բանակի վերակառուցումը և այլն ստեղծում էին նոր գիտակ կադրերի պատրաստման անհրաժեշտություն: Այդ հողի վրա ծնունդ էր առնում ժամանակակից իրանական մտավորականությունը («ռոշանֆեքրան»): Աբբաս միրզան առաջիններից մեկն էր, որ զգաց «ժամանակի ոգին» և սկսեց խրախուսել երիտասարդ իրանցիների ճգտումը դեպի գիտությունը և եվրոպական կրթությունը:

XIX դ. կեսերին Իրանում արդեն ի հայտ եկավ կրթված և եվրոպական լեզուների տիրապետող մի խավ, որը հատկապես բնորոշ էր արտաքին գործերի նախարարությանը: Շահական արքունիքում համարյա այլևս չէին մնացել հին քոչվորական սովորույթները: Նասր-էդ-Դին շահը կողմնակից էր եվրոպական նիստ ու կացին, պաշտպանում էր աշխարհիկ կրթության գաղափարները և այլն: Միապետի այդ վերաբերմունքն ամրապնդում էր սոցիալական այն նոր խավերի դիրքերը, որոնց շրջանից հետագայում դուրս եկան Իրանում լուսավորչական շարժման ներկայացուցիչները:

Այդ բոլորով հանդերձ՝ ընդհուպ մինչև XIX դ. վերջը Իրանը հանդիսանում էր տիպիկ արևելյան միջնադարյան երկիր: Գյուղերում և քաղաքներում, առավել ևս ցեղերի շրջանում, դեռևս կայուն կերպով տիրապետում էին ավատական կարգերը: Բնակչության կենցաղի ու սովորությունների մեջ էական փոփոխություններ տեղի չէին ունեցել: Միայն զարգացած կապիտալիստական պետությունների կողմից այդ երկրին հաղորդած ներքին մղումը պատճառ հանդիսացավ Իրանում կապիտալիզմի տարրերի զարգացման համար: Արևմտյան տերությունների քաղաքական և մշակութային ազդեցությունը նպաստեց Իրանի «արևմտականացմանը»:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ԽԱՂԱՂ» ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄՆ ԻՐԱՆ

XIX դ. երկրորդ կեսից սրվում է Իրանի համար արևմտյան տերությունների պայքարը: Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, ստրատեգիական և տնտեսական նշանակության՝ Իրանը մշտապես հանդիսանում էր Ռուսաստանի և Անգլիայի տնտեսական ու քաղաքական թեժ մրցակության կենտրոն:

1853-1856 թթ. Ղրիմի կամ Արևելյան պատերազմի շրջանում անգլո-ռուսական մրցակցության հարաճուն սրման պայմաններում իրանական կառավարությունը որոշեց լուծել Հերաթի պրոբլեմը, որի վրա կախված էր իրանական ազդեցությունից դուրս գալու վտանգը: Խորասանի նահանգի մեջ մտնող այդ խանության նկատմամբ լուրջ հավակնություններ էր սկսել ներկայացնել անգլիացիների կողմից ուժգին աջակցություն գտնող Աֆղանստանի էմիր Դոսթ Մուհամմադ խանը: Հերաթը շարունակում էր մշտապես մնալ անգլիացիների սևեռուն ուշադրության կենտրոնում՝ որպես Հնդկաստան տանող հյուսիս արևմտյան ճանապարհների բանալի: Անգլիայի համար Հերաթը առանձնահատուկ արժեք էր ներկայացնում ոչ միայն որպես Հնդկաստանը պաշտպանելու համար ճակատային ամրություն, այլև մի հենակետ դեպի Իրան ու Միջին Ասիա շարժվելու համար:

1853 թ. հունվարին Իրանում անգլիական դեսպանորդ Շեյլը, կիրառելով կոպիտ ճնշման ու սպառնալիքների քաղաքականություն, ստիպեց

շահական կառավարությանը՝ պարտավորություն տալ այն մասին, որ ինքը հրաժարվում է Հերաթը Իրանին ենթարկելու փորձերից: Անգլիացիների դեմ լուրջ հակակշիռ ստեղծելու նպատակով դեռևս մինչև պատերազմի սկսվելը՝ 1853 թ. հուլիսին, Իրանը բանակցություններ սկսեց Ռուսաստանի հետ՝ առաջարկելով կնքել ռազմական դաշինքի վերաբերյալ պայմանագիր: Սակայն բանակցություններն ավարտվեցին անարդյունք, քանի որ Ռուսաստանը հրաժարվեց այդպիսի դաշինքի գաղափարից. նախ՝ գտնելով, որ Իրանը իր ռազմատնտեսական ներուժով առանձնակի արժեք չի ներկայացնում, և ապա՝ այսպես կոչված «Արևելյան հարցի» կապակցությամբ ծայր աստիճանի սրվել էին ռուս-անգլիական և ռուս-ֆրանսիական հարաբերությունները, և Պետերբուրգը չէր ցանկանում Միջին Արևելքում ևս իր համար ստեղծել մի լրացուցիչ բարդություն:

Ղրիմի պատերազմը սկսվելուց հետո Հերաթի հարցում Իրանի համար բացվում էին նոր հնարավորություններ: Լոնդոնի զգոնությունը բթացնելու նպատակով 1854 թ. իրանական կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ Ղրիմի պատերազմում ինքը պահպանելու է չեզոքություն: Սակայն անգլիացիներին հայտնի դարձավ, որ թաքնվելով այդ չեզոքության հետևում՝ Իրանը տենդագին նախապատրաստություններ է տեսնում Հերաթի իրանական կառավարիչ Մոհամմադ Յուսֆին օգնելու պատրվակի տակ այդ խանությունը զորքեր ուղարկելու համար: Անշուշտ, անգլիացիները կռահեցին, որ շահը մտադրություն ունի վերջնականապես լուծել Հերաթի պրոբլեմը, որը 30-ական թթ. ավարտվել էր կատարյալ ձախողմամբ: Բրիտանական դիվանագիտությունը լծվեց տենդագին գործունեության՝ փորձելով խափանել շահի կողմից նախապատրաստվող արշավանքը, այն էլ մի ժամանակ, երբ Անգլիան մտել էր Ռուսաստանի հետ ծանր պատերազմի մեջ: 1855 թ. վերջին, համոզվելով, որ անգլիացիներին չի հաջողվի կասեցնել իրանական զորքերի մոտալուտ արշավանքը Հերաթ, Թեհրանում անգլիական դեսպանորդ Մերրեյը հայտարարեց Անգլիայի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների խզման մասին:

Արդեն 1856 թ. սկզբին իրանական զորքերը հասան Հերաթ և նույն թվականի մայիսին այն պաշարեցին: Հնգամսյա պաշարումից հետո Հերաթի ամրոցի պաշտպանները զենքը ցած դրեցին: Քաղաքն անցավ իրանական զորքերին: Որպես դրա պատասխան՝ 1856 թ. նոյեմբերի 1-ին Հնդկաստանի գեներալ-նահանգապետը բրիտանական կառավարության անունից պատերազմ հայտարարեց Իրանին: Սկսվեց այսպես

կոչված երկրորդ Հերաթի պատերազմը: Շուտով բրիտանական ռազմական նավատորմը հայտնվեց Պարսից ծոցում: Դեկտեմբերի 4-ին ծովային հետևակայինները գրավեցին Խարք կղզին, իսկ դեկտեմբերի 10-ին՝ Բուշեհր նավահանգիստը: 1857 թ. փետրվարին անգլիական զորքերը Բուշեհրից անցում կատարեցին դեպի Բորազջան: Սակայն Խուշաբի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո նրանք հետ վերադարձան, քանի որ այդ ընթացքում որոշվել էր փոխել հարձակման ուղղությունը: 1857 թ. մարտի վերջին հուժկու ռմբակոծումից հետո անգլիացիները գրավեցին Պարսից ծոցի Մոհամմերա (այժմ՝ Խորրամշահր) նավահանգիստը և նավերով Կարուն գետով շարժվեցին դեպի հյուսիս՝ Իրանի խորն ընկած շրջանները: Ապրիլի 1-ին նրանք վերցրին Ահվազ քաղաքը: Սակայն շուտով տեղեկություն ստացվեց, որ դեռևս 1857 թ. մարտի 4-ին Փարիզում շահի կողմից Եվրոպա ուղարկված Ֆարրոխ խանը Անգլիայի հետ կնքել է խաղաղության պայմանագիր:

Անգլիան չհասցրեց մի լավ «դաս տալ» իրանցիներին և ստիպված եղավ հապճեպ ավարտել պատերազմը, որովհետև արդեն 1857 թ. հունվար-փետրվարին Հնդկաստանում սկսվել էին հուզումներ, որոնք հանդիսանում էին Սիփայիների հուժկու ապստամբության նախանշանակ: Հնդկաստանում բրիտանական իշխանությունները հայտնվել էին դժվարին կացության մեջ նաև այն պատճառով, որ զուտ անգլիացիներից բաղկացած զորամասերը, որոնց վրա կարող էին հույս դնել, ուղարկված էին Իրան: Հնդկաստանում ազգային-ազատագրական շարժման մոտալուտ պայթյունի վտանգը ստիպեց անգլիացիներին Փարիզում բանակցությունների ժամանակ զիջող լինել, որը բնորոշ չէր անգլիական դիվանագիտությանը, եթե մանավանդ հարցը վերաբերում էր «ինչ-որ» արևելյան երկրի հետ հարաբերություններին: Փարիզում, օրինակ, անգլիացիները հրաժարվեցին Պարսից ծոցի առափնյա շրջաններում իրենց «հատուկ շահերը» ճանաչելու պահանջից:

Հաշտության պայմանագրով անգլիացիներին, այնուամենայնիվ, հաջողվեց պարտավորեցնել շահին ընդունելու հետևյալ պայմանները.

1. Հերաթից դուրս բերել իր զորքերը և հրաժարվել բոլոր հավակնություններից այդ խանության և առհասարակ աֆղանական մյուս նահանգների նկատմամբ. 2. այսուհետև չմիջամտել Աֆղանստանի ներքին գործերին. 3. ճանաչել Հերաթի և Աֆղանստանի անկախությունը. 4. Իրանի, մի կողմից, և Հերաթի ու Աֆղանստանի միջև, մյուս կողմից, տարածայնություններ առաջանալու դեպքում դիմել Անգլիայի միջնորդությանը: Իր հերթին Անգլիան խոստանում էր անհապաղ դադարեցնել

ռազմական գործողությունները և իր զորքերը հետ կանչել Իրանից:

Փարիզի պայմանագրի ստորագրումից հետո երկու երկրների դիվանագիտական հարաբերությունները վերականգնվեցին:

Անգլո-իրանական այս պատերազմը կրկին անգամ բացահայտեց Իրանի տնտեսական, քաղաքական և ռազմական թուլությունն ու նրա անհույս կերպով հետ մնալը եվրոպական պետություններից: Միևնգամայն ակնհայտ էր, որ Իրան ներթափանցելու համար այլևս ուժային մեթոդների կարիք չէր զգացվում, ուստի սկսվեց արևմտյան տերությունների «խաղաղ» մուտքը այդ երկիրը: Սա միանգամայն նոր երևույթ էր այն առումով, որ եթե նախկինում եվրոպական տերությունների գլխավոր գաղութային ձեռքբերումները տեղի էին ունենում առանձին երկրների անմիջական ռազմական զավթումների ճանապարհով, ապա այժմ նախապատվությունը տրվում էր տնտեսական և քաղաքական ներթափանցմանը: Մեծ Բրիտանիայի ռազմավարական շահերը Իրանում թելադրվում էին մի շարք հանգամանքներով և առաջին հերթին՝ Հնդկաստանի հետ աշխարհագրական մոտիկությամբ: Լորդ Քերզոնը գտնում էր, որ, անկախ դրանից, Իրանը բացառիկ կարևորություն ունի բրիտանական կայսրության համար:

Օտարերկրյա պետություններից Անգլիան առաջինը սկսեց կապիտալներ արտահանել Իրան և ձեռք բերել կոնցեսիաներ: Այդ երկիրը հրապուրում էր անգլիական կապիտալին ոչ միայն որպես արտահանման շուկա և հումքի աղբյուր. Միջին Արևելքի կենտրոնում իր զբաղեցրած նպաստավոր աշխարհագրական դիրքով Իրանը կարող էր ծառայել որպես հարմար հենակետ՝ Արևելքում Մեծ Բրիտանիայի ծավալապաշտական նպատակների իրագործման համար: Քանի որ Իրանի հյուսիսային շրջանները գործնականում փակ էին անգլիացիների առջև, այնտեղ ռուսական ազդեցությունը հաստատվելու կապակցությամբ, անգլիական ներթափանցման համար առավել հարմար և հեռանկարային ճանապարհ էր հանդիսանում Պարսից ծոցի շրջանը, որը, ըստ էության, գտնվում էր բրիտանական նավատորմի հսկողության տակ:

Անգլիացիները կենսականորեն շահագրգռված էին կայուն և հուսալի կապ ստեղծել Հնդկաստանի հետ: Ուստի հետևողականորեն սկսեցին աշխատանքներ տանել Իրանում հեռագրական գծեր անցկացնելու ուղղությամբ կոնցեսիաներ ձեռք բերելու համար: 1862, 1865 և 1872 թթ. նրանք ստացան Խանեկին-Թեհրան-Բուշեհր հեռագրական գծի կառուցման ու շահագործման կոնցեսիան: Բուշեհրում այդ գիծը միանում էր ֆաո-Ջասկ-Մասկաթ-Կարաչի անգլիական ստորջրյա մալուխին:

Այդ կոնցեսիոն պայմանագրի հիման վրա «Հնդեվրոպական հեռագրական ընկերությունը» կառուցեց Լոնդոնը Կալկաթայի հետ կապող հեռագրական գիծ, որն անցնում էր Բեռլին, Վարշավա, Օդեսա, Կերչ, Թիֆլիս, Ջուլֆա, Թավրիզ, Ղազվին, Թեհրան, Սպահան, Կարաչի քաղաքների վրայով: 1868թ. կնքված առանձին համաձայնագրի հիման վրա անգլիացիները կառուցեցին նաև Ջասկ-Կարաչի վերգետնյա գիծը: Մինչև 1920 թ. Իրանում հեռագրական գծերի ընդհանուր երկարությունը կազմեց 5676 կմ.: Այդ գծերը հիմնականում կառուցվում էին Իրանի հաշվին: Դրանք սպասարկվում էին անգլիացիների կողմից և, անկասկած, նպաստում էին երկրում Անգլիայի քաղաքական ազդեցության ամրապնդմանը: Հեռագրատներում աշխատող իրենց մարդկանց միջոցով անգլիացիները արժեքավոր տեղեկություններ էին հավաքում երկրի անցուդարձի վերաբերյալ: Իրանական կառավարությունը չէր կարող ձեռնարկել ոչ մի քայլ, որը հայտնի չդառնար անգլիական գործակալությանը: Հաճախ Իրանի որևէ շրջանում տեղի ունեցած այս կամ այն իրադարձության մասին անգլիական կառավարությունն ավելի շուտ էր տեղեկանում, քան իրանական կողմը: Հեռագրատների միջոցով անգլիացիներն Իրանի մասին հավաքում էին նաև հրատապ տնտեսական-առևտրական ինֆորմացիա, անգլիական ընկերություններին տեղեկացնում էին տարբեր ապրանքների պահանջարկի, շուկայական գների մասին և այլն: Հեռագրական գծերի կառուցումը, անկասկած, էական նշանակություն ունեցավ Իրանի ներքին հաղորդակցության արդիականացման համար: Այդ գծերը միաժամանակ լայն հնարավորություններ ընձեռեցին առևտրի, ինչպես նաև իրանական մամուլի զարգացման համար:

1872 թ. հուլիսի 25-ին Նասր-էդ-Դին շահը բրիտանահպատակ խոշոր բանկիր բարոն Ջուլիուս Ռեյթերին տրամադրեց ցանկացած երկրի պատմության մեջ մի աննախադեպ կոնցեսիա՝ 70 տարի ժամկետով: Նա մենաշնորհային իրավունք էր ստանում կառուցել Կասպից ծովը Պարսից ծոցի հետ կապող տրանսիրանական երկաթուղի, որի ճյուղավորումները երկրի տարբեր քաղաքներն ու նահանգները կապելու էին միմյանց հետ, ինչպես նաև միանալու էին այլ երկրների երկաթուղագծերին: Ռեյթերին թույլատրվում էր ողջ Իրանի տարածքում կառուցել խճուղային ճանապարհներ, քաղաքներում տրամվայի գծեր, շահագործել երկաթի, պղնձի, կապարի, նավթի և երկրի բնական հարստությունների մյուս հանքավայրերը (բացառությամբ ոսկու և թանկարժեք քարերի), պետական անտառները, կառուցել նոր ոռոգման ջրանցքներ, ջրամբարտակներ, աշխատանքներ տանել գետերի հոսանքը կարգավորելու

ուղղությամբ, փորել ջրհորներ, կառուցել գործարաններ, ճեռք բերել հողեր: Կոնցեսիոներին թույլատրվում էր բաց անել բանկ, կառուցել ջրաղացներ, բարեկարգել մայրաքաղաքը՝ Թեհրանը: Նրա տնօրինության տակ էին անցնելու Իրանի բոլոր ճանապարհները, փոստը, հեռագրատները: 20 հազար ֆունտ ստեռլինգով իրանական կառավարությունը 25 տարով Ռեյթերին հանձնեց բոլոր իրանական մաքսատների կառավարման գործը, ինչպես նաև պարտավորվեց ապագայում առաջին հերթին նրան տրամադրել զանազան այլ կոնցեսիաներ:

Այդ պայմանագրի առթիվ նույնիսկ լորդ Քերզոնը հայտնել է այն կարծիքը, որ դա իրենից ներկայացնում էր «աննախադեպ և արտառոց մի փաստ պետության ողջ հարստությունները օտարերկրացիներին վաճառելու ուղղությամբ»:

Կոնցեսիայի վերաբերյալ համաձայնագիրը խորը դժգոհություն առաջ բերեց շիիթական հոգևորականության, ինչպես նաև ցարական կառավարության շրջանում: Ալեքսանդր Բ-ն հատուկ ուղերձ հղեց շահին, վերջնագրի ձևով պահանջելով չեղյալ հայտարարել այդ կոնցեսիան: Բնական է, որ նրա իրականացումը պահանջում էր խոշոր կապիտալներ, որ Ռեյթերն անձամբ ի վիճակի չէր գործի մեջ դնել: Իսկ նրա կողմից Անգլիայում բաց թողնված բաժնետոմսերը հաջողություն չունեցան: Այդ բոլորի հետևանքով մինչև 15-ամսյա ժամկետի ավարտը, որը նախատեսված էր համաձայնագրով, Ռեյթերն ի վիճակի չեղավ սկսելու աշխատանքները, ինչը և պատճառ հանդիսացավ 1873 թ. դեկտեմբերի 5-ին շահի կողմից այն չեղյալ հայտարարելու համար:

Պարսից ծոցից Իրանի կենտրոնական շրջանները ներթափանցելու համար հիանալի հարմարություն էր ստեղծում Իրանի միակ նավարկելի Կարուն գետը: Անգլիացիների համար առանձնակի կարևորություն ուներ Մոհամմերա քաղաքը, որը նրանք անվանում էին «Պարսկաստան տանող դռներ»: Գտնվելով երկու գետերի՝ Կարունի և Եփրատի միախառնվելու վայրում՝ Մոհամմերան հանդիսանում էր Հնդկաստանի, ինչպես նաև Բաղդադի ու Բասրայի հետ առևտրի համար կարևորագույն կենտրոն: XIXդ. 40-50-ական թթ. անգլիացիները երկու անգամ փորձեցին զենքի ուժով գրավել Մոհամմերան, սակայն հաջողություն չունեցան: 1875 թ. նրանք շահին առաջարկեցին վաճառել այն, սակայն ստացան կտրուկ մերժում: Ի վերջո, անգլիացիներին հաջողվեց շահին համոզել, որպեսզի նա Մոհամմերա քաղաքի նահանգապետ նշանակի իրենց հետ վաղուց կապված շեյխ Միզալին, որի շնորհիվ և այդ քաղաքն անոտղակի կերպով ընկավ բրիտանական հսկողության տակ: 1888 թ.

շահը հրապարակեց հրամանագիր, որով բոլոր օտարերկրյա պետություններին հատկացվում էր Կարուն գետի վրա նավարկություն կազմակերպելու իրավունք: Այդ իրավունքից փաստորեն կարող էր օգտվել միայն Անգլիան, որը Պարսից ծոցում ուներ նավատորմ և նավարկության մենաշնորհային իրավունք: Անգլիական «Լինչ եղբայրներ» նավային ընկերությունն անմիջապես կոնցեսիոն իրավունքը վերցրեց իր ձեռքը:

1889 թ. հունվարի 30-ին, հակառակ ռուսական դեսպանորդի հակազդեցության, բարոն Ռեյթերի որդին՝ Ջոն Ռեյթերը, իրանական կառավարության հետ կնքեց համաձայնագիր, որով ստանում էր Իրանում Կայսերական (Շահնշահական) բանկ կազմակերպելու կոնցեսիա՝ 60 տարի ժամկետով:

Բանկն իր գործունեությունը չէր սահմանափակելու զուտ ֆինանսական գործառնություններով, քանի որ լայն լիազորություններ էր ստանում երկրի առևտրական ու արդյունաբերական գործերում: Բանկին տրամադրվում էր թղթադրամ կտրելու, Իրանի տարբեր քաղաքներում բաժանմունքներ բացելու, երկրի հանքային հարստությունները շահագործելու և այլ իրավունքներ: Դրամատունն իրավունք ուներ կատարելու նաև իրանական պետական բանկի գործառնություններ, և նրա թողարկած բանկատոմսերը կարող էին շրջանառության մեջ դրվել ողջ Իրանի տարածքում՝ որպես վճարման միջոց: Անգլիական բանկի ընթացիկ հաշիվների վրա կարող էին մուտքագրվել իրանական պետական եկամուտները, մաքսատուրքերը և այլն: Նրա իրավասությունների մեջ էր մտնում նաև օտարերկրյա տարադրամի կուրսի որոշումը: Շահնշահական բանկը հանդիսացավ Իրանում անգլիացիների տնտեսական ու քաղաքական դիրքերի ամրապնդման կարևորագույն լծակներից մեկը:

Նկատի ունենալով այդ կոնսեցիայի կարևորությունը, բրիտանական կառավարությունն այդ բանկը վերցրեց իր իրավական պաշտպանության ներքո:

XIX դ. 90-ական թթ. անգլիացիներն Իրանում ձեռնամուխ եղան նաև լայն ճանապարհաշինության: Մասնավորապես նրանք կառուցեցին մայրաքաղաքը երկրի կարևորագույն կենտրոնների հետ կապող ճանապարհների մի ամբողջ ցանց: 1890 թ. շահը անգլիական «Թալբոթ» ընկերությանը տրամադրեց Իրանի ողջ տարածքում ծխախոտի գնման, վերամշակման ու վաճառահանման կոնցեսիան՝ 50 տարի ժամկետով:

Եվրոպական կապիտալը Իրանի տնտեսական կյանքն իրեն էր ենթարկում նաև դրամական փոխառությունների միջոցով: 1892 թ. շահը անգլիական բանկից ստացավ Իրանի պատմության մեջ առաջին օտա-

ներկրյա փոխառությունը՝ 500 հազար ֆունտ ստեռլինգ գումարով, Հարավային Իրանի մաքսատներից ստացվող եկամուտները հայտարարելով որպես վճարման երաշխիք:

1897 թ. հոկտեմբերին պարսկական կառավարությունը գրավոր պարտավորություն տվեց Անգլիային, որ Հարավային Իրանը երբեք չի գտնվելու որևէ այլ պետության հսկողության ներքո: Անգլիացիները մշտապես ներշնչում էին շահական կառավարությանը, որ Մեծ Բրիտանիան ոչ մի կերպ չի համաձայնվի, որ Ռուսաստանը Պարսից ծոցում ունենա ռազմական կամ ծովային հենակետ, քանի որ դա կարող էր սպառնալիք հանդիսանալ նրան և Հնդկաստանում նրա դիրքերին: Լոնդոնը սպառնում էր, որ եթե Իրանը նման կոնցեսիա տրամադրի Ռուսաստանին, ապա Նորին գերազանցության կառավարությունը ստիպված կլինի Պարսից ծոցում ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարողանային պաշտպանել Մեծ Բրիտանիայի շահերը՝ ապահովելով անգլիական նավատորմի անվտանգությունն այդ ջրերում:

Վերլուծության ենթարկելով բրիտանական քաղաքականության շահերն Իրանում՝ լորդ Քերզոնը գրում էր. «Մենք այն կարծիքին ենք, որ Պարսկաստանը կարևոր ռազմավարական և քաղաքական նշանակություն ունի ոչ միայն Հնդկաստանի համար, այլև ամբողջությամբ վերցրած, կայսրության համար»:

1901 թ. մայիսի 28-ին անգլիական հպատակ, ավստրալիացի դրամատեր, ինժեներ Վիլյամ Նոքս դ'Արսիին հաջողվեց Նասր-էդ-Դինի շահից ստանալ Իրանի ողջ տարածքում, բացառությամբ երկրի հյուսիսային շրջանների, նավթի հանքավայրերի շահագործման մենաշնորհը: Այդ կոնցեսիան ձեռք բերվեց չնչին գումարով: Կոնցեսիոները պետք է իրանական կառավարությանը վճարեր, ընդ որում ոչ միանգամից, այլ միայն նավթի շահագործման գծով ընկերության կազմակերպումից հետո, ընդամենը 20 հազար ֆունտ ստեռլինգ կանխիկ գումար, ընկերության կազմակերպումից հետո պարտավորվում էր իրանական կառավարությանը հանձնել նույնչափ գումարով ընկերության բաժնետոմսեր, նավթի շահագործումից ստացված մաքուր եկամտից վճարել տարեկան 16%, ինչպես նաև տարեկան 2 հազար թուման այն բանի համար, որ դ'Արսիին են փոխանցվում կոնցեսիայով հանձնված տարածքների այն բոլոր նավթահորերը, որոնք մինչ այդ շահագործվում էին պրիմիտիվ եղանակով:

Ավելի ուշ դ'Արսիի կոնցեսիան խաբեության միջոցով՝ «Ինտելլիջենս սերվիս» գաղտնի ծառայության օգնությամբ, անցավ անգլիական կառավարությանը: Այդ կոնցեսիայի հիման վրա 1909 թ. կազմակերպվեց

Անգլո-պարսկական նավթային ընկերությունը, որը դարձավ համաշխարհային նշանակություն ունեցող տրեստներից մեկը: Անգլիացիների համար այդ կոնցեսիան ունեցավ հսկայական քաղաքական և ռազմավարական նշանակություն:

Ծովահենների և ստրկավաճառության դեմ պայքարի պատրվակի ներքո անգլիական ռազմածովային նավատորմն իր հսկողությունն էր հաստատել Պարսից ծոցի ավազանի երկրների նկատմամբ: Տեղական արաբական շեյխերին պարտադրվում էին «պայմանագրեր», որոնք պարտավորեցնում էին նրանց անգլիացիների հետ պահպանել «հավերժական խաղաղություն»:

Դեպի Իրան տնտեսական «խաղաղ» ներթափանցման առումով Մեծ Բրիտանիան խաղում էր գլխավոր դերը: Սակայն Իրանի բնական հարստությունների շահագործման մենաշնորհային իրավունքի ձեռքբերման անգլիական քաղաքականության ճանապարհին խոչընդոտ էր հանդիսանում նրա գլխավոր մրցակիցը Իրանում՝ ցարական Ռուսաստանը, որը ձգտում էր թույլ չտալ, որ Անգլիան Իրանում հաստատի միանձնյա տիրապետություն: Իրանի հարևանությունը, ապրանքների տեղափոխման համեմատական հարմարությունը կանխորոշեցին Ռուսաստանի համար իրանական շուկայի կարևորությունը: Բացի այդ, Իրանից արտահանվող գյուղատնտեսական հումքը Ռուսաստանում սպառման լայն շուկա ուներ: Իրանը Ռուսաստանի վրայով վարում էր նաև տարանցիկ առևտուր Եվրոպայի հետ:

Իր ֆինանսատնտեսական թուլության պատճառով հնարավորություն չունենալով Մեծ Բրիտանիայի հետ չափվել տնտեսական մրցակցության ոլորտում՝ Ռուսաստանն առավել մեծ կարևորություն էր տալիս Իրան ներթափանցելու ռազմական ու քաղաքական բնագավառներին:

1879 թ. մի խումբ կոզակական սպաների ուղեկցությամբ Թեհրան ժամանեց ռուսական գլխավոր շտաբի փոխգնդապետ Ա. Ի. Դոմանտովիչը: Շահական կառավարության խնդրանքով ռուսական սպաները կոզակական զորքերի օրինակով կազմակերպեցին «պարսկական կոզակական կանոնավոր հեծյալ գունդ», որը հետագայում դարձավ գումարտակ, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին վերածվեց դիվիզիայի: Այն հետագայում դարձավ պարսկական բանակի՝ ըստ էության միակ մարտունակ զորամասը, որը միաժամանակ կատարում էր ներքին ոստիկանական ֆունկցիաներ: Դա Իրանում ցարական Ռուսաստանի ազդեցության ուժեղացման և ցարիզմի գաղութային քաղաքականության իրականացման զորավոր մի գործիք էր ընդհուպ մինչև

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը: Կոզակական այդ զորամասի հրամանատարը պարտադիր կարգով պետք է լիներ ռուս սպա, իսկ կրտսեր հրամկազմը և շարքայինները՝ պարսիկներ: Գումարտակի կրտսեր հրամանատարական կազմի մեջ ներգրավված էին նաև հայեր (օրինակ՝ Մարտիրոս խանը և ուրիշներ): Նախատեսված էր նաև, որ ռազմական այդ կազմակերպությունը պետք է դառնար մի դպրոց՝ իրանական բանակի սպաներ պատրաստելու համար:

Ռուսները ևս կարևոր նշանակություն էին տալիս Իրանի հետ կանոնավոր հեռագրական կապ ունենալու հարցին: 1879թ., օրինակ, նրանք Իրանի հյուսիսում ձեռք բերեցին Աստրաբադ և Չիքիշլյար քաղաքների միջև հեռագրական գծի կառուցման իրավունքը: Սակայն նրանց չհաջողվեց անգլիացիներին համահավասար քափով այդ գործը ծավալել ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

1888 թ. հայազգի ռուսահպատակ խոշոր դրամատեր Ստեփան Լիանոզովը (Լիանոզյան) ստացավ Կասպից ծովի հարավային մասի և նրա մեջ քափվող գետերի ձկնորսական տեղամասերի (Ասթարա գետից մինչև Աքրեք գետն ընկած հատվածում) ձկան որս կազմակերպելու իրավունք: Լիանոզովի ընկերությունն իրենից ներկայացնում էր խոշոր, սարքավորումներով լավ հագեցված ժամանակակից արդյունաբերական ձեռնարկություն, որի մշտական աշխատողների քիվն անցնում էր 4 հազարից, իսկ ընկերության գույքը գնահատվում էր 1 միլիոն ռուբլի:

Լիանոզովի կոնցեսիան գտնվում էր ցարական կառավարության հատուկ հովանավորության տակ, որը բոլոր միջոցներով աջակցում էր Լիանոզովին: Նրան պատկանող ընկերությունը հանդիսանում էր Իրանի տարածքում գտնվող խոշորագույն արդյունաբերական ձեռնարկությունը: Ի դեպ, Ստեփան Լիանոզովի մահից հետո, 1896 թ. նրա որդի Գեորգի Լիանոզովը իրանական կառավարության հետ կնքեց նոր համաձայնագիր, ըստ որի կոնցեսիոն պայմանագրի ժամկետը երկարաձգվում էր մինչև 1925 թ.:

1890 թ. ռուս դրամատեր Յակով և Լազար Պոլյակով եղբայրները շահից ստացան ողջ Իրանի տարածքում ապահովագրական ու տրանսպորտային գործի կազմակերպման կոնցեսիա՝ 75 տարի ժամկետով: Նշված կոնցեսիան Ռուսաստանին մեծ հնարավորություններ էր ընձեռում երկրի հյուսիսում և առհասարակ Իրանի ողջ տարածքում կառուցելու խճուղային ճանապարհներ: Հիշյալ կոնցեսիայի հիման վրա կազմակերպվեց «Պարսկական փոխադրամիջոցների բյուրո» ընկերությունը, որը կազմակերպեց նավային հաղորդակցություն Կասպից ծովում,

ստացավ Ենզելի նավահանգստի շահագործման իրավունք, կառուցեց մի շարք ճանապարհներ (Ենզելի-Թեհրան, Թեհրան-Համադան, Ասթարա-Արդեբիլ, Թեհրան-Մեշեդեսսեր, Աշխաբադ-Քուչան) և այլն:

Իրանում Ռուսաստանի կողմից ստացած առավել կարևոր կոնցեսիաներից մեկը Հաշվառու-վարկատու բանկի հիմնադրման վերաբերյալ կոնցեսիան էր: Այդ բանկի խնդիրը էր ակտիվորեն ներազդել Իրանի հյուսիսային շրջանների ֆինանսատնտեսական կյանքի վրա և ամեն կերպ խոչընդոտել անգլիական Շահնշահական բանկի հետագա ծավալումը: Բանկի կարևորագույն խնդիրներից մեկն էլ Իրանում ռուսական արդյունաբերական ապրանքների համար շուկայի ապահովումն էր: Բանկն իրավասու էր գործառնություններ իրականացնել ողջ Իրանի տարածքում: Նրա գույքը, կապիտալները և եկամուտներն ազատվում էին ամեն տեսակի հարկումից:

Շահնշահական և Հաշվառու-վարկատու բանկերի միջև մշտապես ընթանում էր սուր մրցակցային պայքար:

XIX դ. կեսերից Իրանի արտաքին առևտրում իրանահպատակ հայ վաճառականների հետ միասին սկսեցին կարևոր դեր խաղալ նաև ռուսահպատակ հայերը: Որոշ տվյալներով՝ նշված ժամանակաշրջանում հայ վաճառականների բաժինն Իրանի արտահանման մեջ կազմում էր 30-50%, իսկ ներմուծման մեջ՝ 30-60%: XIX դ. 70-ական թվականներից Իրանի հետ առևտրի բնագավառում ակտիվ գործունեություն էին ծավալել Թումանյանց եղբայրների առևտրական տունը, «Արգումանով եղբայրներ», «Տեր-Մկրտիչև և եղբայրներ», «Հախնազարյանց, Աբիյանց և ընկ.», «Խալափյանց և ընկ.», «Նասիբյանց և Տեր-Պետրոսյանց» և բազմաթիվ այլ առևտրական տներ ու ընկերություններ:

Հայ առևտրաարդյունաբերական կապիտալի ներկայացուցիչները (Թումանյանցներ, Ծատուրով, Մայիլով և այլն) մասնակցում էին Հյուսիսային Իրանի անտառային հարստությունների շահագործմանը: Նրանք նաև իրանական բամբակի հիմնական արտահանողներն էին: Իրանի հյուսիսային շրջաններում բամբակազտիչ գործարանների գերակշիռ մասը նույնպես պատկանում էր նրանց:

1883 թ. անդրկովկասյան տարանցիկ առևտրական ուղու փակումից հետո, հայ վաճառականությունը վերակողմնորոշվեց դեպի ռուսական արդյունաբերություն, դառնալով Իրանում Ռուսաստանի առևտրական շահերի գլխավոր ներկայացուցիչը:

XIX դ. 80-ական թթ. կեսերից հայ վաճառականները հիմնավորապես հաստատվեցին Իրանի հյուսիսային շրջաններում և իրենց ձեռքը

վերցրին ռուսական արտահանման և ներմուծման հիմնական ճյուղերը: Հայ վաճառականների դիրքերն ավանդաբար ուժեղ էին Ատրպատականում, Գիլյանում, Մազանդարանում, Աստրաբադում, Շահրուդ-Բաստամում, Մեշհեդում և այլն:

Հայ դրամատերերը ձեռնարկատիրական գործունեություն էին ծավալել նաև Իրանի արդյունաբերության բնագավառում: Նրանք զգալի միջոցներ էին ներդնում նաև արդյունաբերական շինարարության բնագավառում:

Իրանական կառավարությունը Ռուսաստանից վերցնում էր նաև փոխառություններ, որոնք սովորաբար գնում էին անարտադրողական ծախսերի վրա՝ ոչնչով չբարելավելով Իրանի ֆինանսական վիճակը: Արտաքին փոխառությունների ձեռքբերումը առաջ բերեց բնակչության դժգոհությունը, որովհետև գոյացած վիթխարի պետական պարտքի ողջ ծանրությունը ընկնում էր հենց նրա վրա: Իրանական ընդդիմադիր մամուլը և հոգևորականությունը քննադատում էին կառավարությանը՝ նշելով, որ «մինչև օրս լսված բան չէ, որ ժողովրդի ղեկավարները հաճույքների համար իրենց երկիրը վաճառեն օտարներին»: Սպահանի գլխավոր մոջթեհիդը, որն ուներ մեծ հեղինակություն ու ազդեցություն, շահին դիմեց մի նամակով, որտեղ խնդրում էր չկործանել երկիրը: Ստանալով շահի կտրուկ պատասխանը՝ նա գլխավոր մզկիթում հավատացյալների առջև հանդես եկավ քարոզով, որտեղ ժողովրդին կոչ էր անում «այլևս հարկեր չմուծել շահին, որն արժանի չէ իր անվանը»:

Ռուսական ցարիզմը դեմ էր Իրանում երկաթուղային շինարարությանը: Ուստի նա ամեն գնով արգելակում էր երկաթուղագծերի շինարարության նախագծերին, որոնք առաջարկվում էին ոչ միայն օտարերկրյա պետությունների, այլև ռուս կամ ռուսահպատակ դրամատերերի կողմից: Այսպես՝ դեռևս 1887 թ. ռուսահպատակ Ֆոն Դերվիզը առաջ էր քաշել Կասպից ծովից (Էնզելի քաղաքից) մինչև Պարսից ծոց իր անձնական կապիտալով, առանց որևէ ֆինանսական հատկացումների և առանց որևէ երաշխիքի երկաթուղի կառուցելու մի նախագիծ: Սակայն նա ոչ միայն չստացավ ռուսական կառավարության աջակցությունը, այլև վերջինս ուղղակի ձախողեց այդ գործը:

Երկաթուղիների հարցի վերաբերյալ ռուսական կառավարության այդ դիրքորոշման պաշտոնական բացատրությունը հանգում էր նրան, որ Ռուսաստանը, որն ինքը կարիք ուներ տնտեսական զարգացման, չպետք է խոշոր միջոցներ ներդնի Իրանում: Իրականում դա միայն պատրվակ էր: Տնտեսապես թույլ զարգացած Ռուսաստանը վախենում

էր օտարերկրյա մրցակցությունից և հատկապես մտավախություն ուներ, որ Իրանում իր ուժեղ մրցակից Մեծ Բրիտանիան երկաթուղագծերի միջոցով կմոտենա Միջին Ասիայի և Անդրկովկասի սահմաններին և մրցակցային պայքարում անհախադեպ կուժեղացնի իր դիրքերն Իրանում: Ուստի 1890 թ. հոկտեմբերի 30-ին ռուսները հարկադրեցին իրանական կառավարությանը ստորագրել մի համաձայնագիր, որով վերջինս պարտավորվում էր մինչև 1900թ. Իրանում չկառուցել և օտարերկրյա պետություններին էլ թույլ չտալ կառուցելու երկաթուղագծեր: Համաձայնագրով բացառություն էր արվում Թեհրանից մինչև Շիմրան՝ շահի ամառային նստավայրը երկաթուղու անցկացմանը, որի երկարությունը լինելու էր ոչ ավել, քան երկու ֆարսախ (12-14 կմ):

1900 թ. Ռուսաստանի կողմից ռազմական սպառնալիքների և քաղաքական ճնշման հետևանքով իրանական կառավարությունը նոր համաձայնագիր ստորագրեց, որով երկաթուղիների կառուցման արգելքը երկարաձգվում էր ևս 10 տարով: Ինչ վերաբերում է Իրանում երկաթուղիների շինարարության գծով Անգլիայի քաղաքականությանը, ապա վերջինս մինչև Սուեզի ջրանցքի բացումը ոչ միայն դեմ չէր, այլև շահագրգռված էր անդրիրանյան երկաթուղագծի կառուցմամբ, քանի որ այն կարճ ճանապարհ էր բացում դեպի Հնդկաստան: Վերոհիշյալ ջրանցքի բացումով Անգլիան Հնդկաստանի հետ կապող ծովային հարմար ուղի ստացավ և կորցրեց հետաքրքրությունն Իրանում երկաթուղիների կառուցման նկատմամբ: Ավելին՝ նա սկսեց ամեն կերպ խոչընդոտել անդրիրանյան երկաթուղու կառուցմանը, նպատակ ունենալով թույլ չտալ Ռուսաստանի ելքը Հնդկական օվկիանոս:

Բնականաբար, երկաթուղիների բացակայությունը տևական ժամանակով արգելակելու էր Իրանի տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումը: Իրանում երկաթուղային ճանապարհների շինարարությունը փաստորեն 30 տարով սառեցվեց: Իզուր չէ, որ Իրանն անվանել են «դասական ճանապարհազրկության երկիր»:

Սա ցայտուն վկայությունն էր այն իրողության, որ շահական կառավարությունը կորցնում էր իր ինքնուրույնությունը: Այդ մասին խոստովանել է հենց ինքը՝ Նասր-էդ-Դին շահը: Իրանում Ռուսաստանի գործերի հավատարմատարին ուղղված 1888 թ. հոկտեմբերի 20-ի ուղերձում նա գրում էր. «Ինչո՞ւ մենք չպետք է կառուցենք ճանապարհներ և բաց չանենք գործարաններ, որպեսզի չզգանք օտարերկրյա ապրանքների կարիքը: Եթե մենք սկսեինք կառուցել ճանապարհներ, ապա սովը և թանկությունը յուրաքանչյուր երկու-երեք տարին մեկ չէին կրկնվի Թեհրա-

նում և մյուս քաղաքներում, և շատերը կփրկվեին... Ոչ մի պետություն չի գտնվում մի այնպիսի վիճակում, ինչպիսի վիճակում որ հայտնվել է Պարսկաստանը: Անգլիան և Ռուսաստանը ուշադիր հետևում են մեր ամեն մի քայլին: Մեր կողմից հարավում ձեռնարկվող ամեն մի միջոցառում, որն ուղղված է երկրամասի բարեկեցությանն ու ծաղկմանը, ինչպես, օրինակ՝ ճանապարհների անցկացումը, առաջ է բերում ռուսական կառավարության բողոքները: Երբ մենք ձեռնամուխ ենք լինում Պարսկաստանի հյուսիսային, արևմտյան և արևելյան մասերում ճանապարհներ անցկացնելուն, ապա անգլիացիներն առարկում են, ասելով, որ դա կատարվում է ի շահ Ռուսաստանի: Մենք ցանկանում ենք անցկացնել ճանապարհներ, կառուցել գործարաններ, հոգ տանել մեր տիրույթների ու մեր հպատակների ծաղկման ու բարեկեցության նկատմամբ: Ի՞նչ իրավունք ունեն ռուսական ու անգլիական կառավարությունները մեզ դիմելու նման հարցումներով ու հայտարարություններով»:

Իր այս դիմումից մի քանի ամիս առաջ՝ 1888 թ. մայիսին, Նասր-էդ-Դին շահը հրապարակեց հրամանագիր հպատակների կյանքի ու գույքի պաշտպանության և արդյունաբերական ու առևտրական գործունեության ազատության մասին, որը սակայն, հանդիպելով մրցակից պետությունների դիմադրությանը, ի չիք էր դառնում:

Չնայած այն հանգամանքին, որ Իրանի համար ռուս-անգլիական մրցակցության առաջին էտապը, այսինքն՝ XIX դ. 70-ական թթ. մինչև 1905 թ., ընթանում էր փոփոխակի հաջողությամբ, սակայն, ամբողջությամբ վերցրած, այն ավարտվեց Ռուսաստանի պարտությամբ: Այդ մրցակցության մեջ հաղթեց կենսունակ, տնտեսապես ու քաղաքականապես ուժեղ տերությունը: Ռուսաստանի պարտությունը ռուս-ճապոնական պատերազմում, իր նախկին ազդեցության կորուստը Բալկաններում ուժգին հարված հասցրին նրա արտաքին քաղաքական հեղինակությանը: 1905թ. ռուսական հեղափոխությունը էլ ավելի թուլացրեց ցարական կառավարությանը:

XIX դ. 70-ական թթ. գաղութային «հին» պետությունների՝ Անգլիայի և Ռուսաստանի կողքին, Մերձավոր ու Միջին Արևելքում հանդես եկավ մի նոր գիշատիչ՝ Գերմանիան: Իր առևտրական և գաղութային նվաճողականությունը Օսմանյան կայսրության նկատմամբ ծավալելու հետ զուգահեռ՝ Գերմանիան, բնականաբար, չէր կարող իր հետաքրքրությունների շրջանակից դուրս թողնել նաև Իրանը: Գերմանիայի առաջին ակտիվ փորձերը՝ Իրան ներթափանցելու ուղղությամբ վերաբերում են XIX դ. 70-ական թթ.: 1873 թ. նրան հաջողվեց Իրանի հետ կնքել «Բարե-

կամության, առևտրի և ծովագնացության մասին» պայմանագիր, որը սկիզբ դրեց այդ երկու երկրների միջև հարաբերությունների հաստատմանը: Պայմանագիրը Գերմանիային տրամադրում էր դիվանագիտական և առևտրական հարաբերություններում առավել բարենպաստության իրավունք: Նա ստանում էր ազատ առևտրի և նավագնացության իրավունք, կապիտուլյացիոն արտոնություններ, ինչպես նաև Թեհրանում, Թավրիզում և Բուշեհրում հյուպատոսություններ բացելու թույլտվություն: Պայմանագրի 18-րդ հոդվածը նախատեսում էր Գերմանիայի միջնորդությունը այն դեպքում, եթե Իրանը վեճի կամ ընդհարման մեջ մտներ որևէ երրորդ պետության հետ:

Կնքելով հիշյալ պայմանագիրը՝ Գերմանիան ձգտում էր ամրապնդվել Իրանում և հող նախապատրաստել իր հետագա առաջխաղացման համար դեպի Միջագետք և Միջերկրական ծովի ավազանը: Իրանում գերմանական քաղաքականության հետագա ակտիվացմանը մեծապես նպաստեց Բաղդադի երկաթուղու նախագծի հայտնվելը: Այդ ճանապարհը պետք է սկիզբ առներ Բեռլինից, այնուհետև, անցնելով Բոսֆորի վրայով, պետք է հասներ մինչև Պարսից ծոց: 3,5 հազար կիլոմետր երկարություն ունեցող այդ երկաթգիծը պետք է պողպատյա շղթայով Մերձավոր ու Միջին Արևելքի երկրները, մասնավորապես Օսմանյան կայսրությունը և Իրանը, կապեր Գերմանիայի հետ: Պանգերմանական գաղափարախոսները ցինծությամբ հայտարարում էին, որ Բաղդադի երկաթուղին Գերմանիայի համար ճանապարհ կբացի դեպի Իրան և կնպաստի, որ Գերմանական մշակույթը տիրապետող լինի ողջ Ասիայում:

Բաղդադի երկաթուղու շինարարությունն անօրինակ կերպով սրեց մեծ պետությունների հակասությունները Մերձավոր ու Միջին Արևելքում՝ դառնալով Առաջին համաշխարհային պատերազմի բռնկման պատճառներից մեկը:

1902 թ. հունվարին Ռայխստագում կանցլեր Բերնհարդ ֆոն Բյուլովը հայտարարեց, որ այսուհետև Իրանը պետք է ընդգրկվի Գերմանիայի ակտիվ քաղաքականության շրջանակների մեջ:

Գերմանական առևտրական քաղաքականությունը ձգտում էր թափանցել Իրան ինչպես հյուսիսից՝ Տրապիզոն-Էրզրում-Բայազետ ցամաքային ճանապարհի վրայով, այնպես էլ հարավից՝ Պարսից ծոցով, որտեղ գերմանացիները ցանկանում էին իրենց ձեռքը վերցնել ծովային առևտրի մի մասը:

Իրանում Գերմանիայի առևտրատնտեսական ներթափանցման հետ միաժամանակ տեղի էր ունենում նաև քաղաքական և գաղափարա-

կան ներթափանցում: Իրանի քաղաքներում գերմանացիները սկսեցին կազմակերպել միսիոներական քարոզչության կենտրոններ, ստեղծել կուլտուր-լուսավորչական և ֆիլանտրոպիկ հիմնարկություններ, ուսումնասիրել տեղական լեզուները, բարքերն ու սովորությունները և այլն:

XIX դ. 50-ական թթ. վերջերին նկատվում է նաև ամերիկացիների հետաքրքրության մեծացում Իրանի նկատմամբ: 1853 թ. դեկտեմբերի 13-ին Կ.Պոլսում ստորագրվեց իրանա-ամերիկյան «Բարեկամության և առևտրի մասին» պայմանագիր: Կողմերը համաձայնվում էին փոխանակել դեսպաններ, իսկ իրանական և ամերիկյան վաճառականները այսուհետև օգտվելու էին առավել բարենպաստության իրավունքից: ԱՄՆ-ին իրավունք էր տրվում Իրանում բաց անելու երեք հյուպատոսություններ (Թեհրանում, Բենդեր-Բուշիրում և Թավրիզում), իսկ Իրանին՝ Վաշինգտոնում, Նյու Յորքում և Նյու Օռլեանում: 1883թ. առաջին անգամ Իրան ուղարկվեց ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչ Բենջամինը, որն անմիջապես ծավալեց բուռն գործունեություն: Նրա նկատմամբ ցուցաբերվեց բարյացակամ վերաբերմունք, քանի որ շահը ձգտում էր Անգլիայի և Ռուսաստանի ազդեցությանը հակադրել որևէ երրորդ պետության: 1886 թ. Իրանում ԱՄՆ-ի նոր ներկայացուցիչ Ֆ. Ուիլյամսոնը Յահյա խան Մոշիր-էդ-Դոուլեից 50 հազար ռուբլով գնեց երկաթուղային մի կոնցեսիա: Ամերիկյան ներթափանցման դեմ Իրան եռանդուն կերպով հանդես եկան Թեհրանում ռուսական և անգլիական դեսպանորդները, որոնց ջանքերի շնորհիվ Ուիլյամսոնի նախագիծը տապալվեց:

1888 թ. Վաշինգտոն ուղարկվեց առաջին իրանական դիվանագիտական առաքելությունը հաջի Հոսեյին Ղուլի-խանի գլխավորությամբ: Այդ նույն թվականին շահը ամերիկացիներին 25 տարի ժամկետով հատկացրեց մի կոնցեսիա Իրանում արտեզյան ջրհորներ փորելու և հանքավայրեր շահագործելու վերաբերյալ: Համաձայն պայմանագրի՝ կոնցեսիոներին, որը Իրանում ամերիկյան հոգևոր միսիայի անդամ դոկտոր Տորրենսն էր, տրամադրվում էր նաև բամբակազտիչ արհեստանոցներ աշխատեցնելու իրավունք: Այս կոնցեսիան ևս գերեզմանվեց հատկապես Ռուսաստանի ջանքերով, որը կտրուկ կերպով հանդես եկավ ամերիկացիների դեմ:

Այսպիսով՝ իրանական կառավարության փորձերը ԱՄՆ-ի հետ հաստատելու ավելի կայուն հարաբերություններ և դրանք օգտագործելու Անգլիայի և Ռուսաստանի դեմ, ավարտվեցին անհաջողությամբ:

1855 թ. հուլիսի 12-ին «Բարեկամության ու առևտրի վերաբերյալ» պայմանագիր էր ստորագրվել նաև Իրանի և Ֆրանսիայի միջև: Կողմե-

րը պայմանավորվում էին փոխանակել դեսպաններ: Երկու երկրների ճանապարհորդներին, վաճառականներին և այլոց հատկացվում էր առավել բարենպաստության, ինչպես նաև փոխադարձության հիմքի վրա ազատ առևտրի իրավունք: Ֆրանսիան իրավունք էր ստանում հյուպատոսություններ բացել Թեհրանում, Բենդեր-Բուշիրում և Թավրիզում, իսկ Իրանը՝ Փարիզում, Մարսելում և Ռեյունիոն կղզում:

Իրանը նույնատիպ պայմանագրեր ստորագրեց նաև Ավստրո Հունգարիայի (1857 թ. մայիսի 17-ին), Բելգիայի (1857 թ. հուլիսի 31-ին), Դանիայի (1857 թ. նոյեմբերի 30-ին), Նորվեգիայի (1857 թ. նոյեմբերի 17-ին), Հոլանդիայի (1857 թ. հուլիսի 3-ին) և Շվեդիայի (1857 թ. նոյեմբերի 17-ին) հետ:

Իրանական կառավարությունից կոնցեսիաներ ձեռք բերեցին նաև եվրոպական մի շարք այլ մեծ ու փոքր պետություններ: Այսպես՝ 1898 թ. մաքսային, իսկ հետագայում նաև փոստային գործի կազմակերպման կոնցեսիոն իրավունքը հանձնվեց բելգիացիներին, որոնք հնարավորություն ստացան հսկողություն սահմանել երկրի ֆինանսական գործերի նկատմամբ: 1900 թ. ֆրանսիացիներին հատկացվեց Իրանում հնագիտական պեղումներ կատարելու մենաշնորհային իրավունք, իսկ 1880 թ. բելգիացիները ստացան խաղատներ կազմակերպելու կոնցեսիա: 1907 թ. հունական մի ընկերություն ստացավ Իրանի անտառների շահագործման կոնցեսիան:

Սակայն, այդ բոլորվ հանդերձ, XIX դ. վերջին տարիներին և XX դ. սկզբին ինչպես Անգլիան, այնպես էլ Ռուսաստանը, եվրոպական մյուս տերությունների և ԱՄՆ-ի համեմատ նշանակալից հաջողություններ ձեռք բերեցին պարսկական շուկան յուրացնելու գործում՝ զբաղեցնելով մենաշնորհային դիրք համապատասխանաբար երկրի հարավում և հյուսիսում: Միաժամանակ օտարերկրյա ազդեցության մեծացումը հանգեցրեց անգլո-ռուսական մրցակցության ու քաղաքական դիմակայության սրմանը:

Կարևոր է նշել, որ Իրանի յուրացումը օտարերկրյա կապիտալի կողմից հանգեցրեց երկրի սոցիալ-տնտեսական կյանքում մի շարք կարևոր փոփոխությունների: Իրանի ներգրավումը համաշխարհային շուկայի շրջանակների մեջ նպաստեց այդ երկրում կապիտալիստական տարրերի ծննդին ու աճին, ինչպես նաև իրանական ավատականության հետագա քայքայմանը: Սակայն, չնայած այն բանին, որ օտարերկրյա ներթափանցումը հնարավորություններ էր ստեղծում Իրանի կապիտալիստական զարգացման համար, երկիրը զարգանում էր չափազանց դանդաղ ու անհավասարաչափ:

XIX դ. վերջին, չդիմանալով օտարերկրյա մրցակցությանը, Իրանի արհեստագործական արտադրության ամբողջ ճյուղեր դադարեցրին իրենց գործունեությունը: Այդ նույն շրջանում տեղի ունեցավ երկրի քաղաքական վերնաշենքի քայքայում, որը դրսևորվեց ողջ պետական ապարատի մեջ կոռուպցիայի և կաշառակերության անօրինակ մեծացմամբ: Կտրուկ կերպով վատթարացավ ֆինանսական վիճակը, բյուջեի ճեղքվածքը տարեցտարի մեծանում էր: Ուժեղանում էր երկրի ապակենտրոնացումը, որի մասին վկայում է առանձին նահանգապետների անջատողական ձգտումների աճը: Այդ բոլորը նպաստում էր Իրանի թուլացմանը: Նասր-էդ-Դին շահը՝ թեև բռնակալ ու անողոք, սակայն խելացի, վճռական և ուժեղ կամքի տեր ու առաջադեմ հակումներ ունեցող այս իշխանավորը, պալատում ազատական գաղափարներով տոգորված և բարեշրջական ծրագրեր ունեցող երկու գործիչների՝ սադր-ազամ Ամին-էդ-Դոուլեի և հայազգի Մալքոմ խանի (Մելքումյան Հովսեփ Հակոբի) ներշնչումներով երեք անգամ ճամփորդություն է կատարում Եվրոպայում: Եվրոպական երկրների զարգացումը խորը տպավորություն է թողնում նրա վրա: Նա ցանկանում է իր երկիրը ևս տեսնել այդպես շքեղ և լուսավոր: Ամեն անգամ Եվրոպայից վերադառնալիս Նասր-էդ-Դին շահը կատարում էր որոշ բարեփոխություններ: Թեև դրանցից շատերը աչքի չէին ընկնում իրենց խորքային նպատակներով, այլ ցուցադրական էին, սահմանափակ ու ոչ արմատական և առավելապես տուրք էին տալիս արտաքին փայլին, սակայն, դրանով հանդերձ, դրանք առաջադիմական քայլեր էին հետամնաց ու խավար մի երկրում: Ստեղծվեցին մինիստրություններ (ներքին գործերի, արդարադատության, լուսավորության, փոստի և հեռագրի), ավատական ազնվականության զավակների համար բացվեցին մի քանի դպրոցներ, որոնք կոչված էին գլխավորապես պատրաստել սպաներ: Հրավիրվեցին ավստրիական մարզիչներ բանակը եվրոպական ձևով մարզելու համար: Բացվեց «Դար-էլ-ֆընունը» (գիտությունների տուն), որտեղ դասավանդվում էին նաև օտար լեզուներ: Շահի հրամանով ուսանողներ էին ուղարկվում Եվրոպա, որպեսզի կրթություն ստանալուց հետո վերադառնան Իրան և կանոնավորեն պետական վարչությունը: Կատարվեց պալատականների զգեստների որոշ եվրոպականացում: Փորձ արվեց իրականացնելու դատական բարեփոխում, որի նպատակն էր հոգևոր դատարանների իրավասությունների սահմանափակումը: Շահի կարգադրությամբ ստեղծվեց «Արդարության օրենքների

գիրքը» («Քեթաբչե-ե ղանունի»), առաջին անգամ Իրանում կազմվեց պետական նախահաշիվ (բյուջե), իրանական հայտնի պատմաբան Սանի-էդ-Դոուլեի ղեկավարությամբ կազմակերպվեց գրատպություն, մայրաքաղաքի փողոցներում կառուցվեցին ճիաքարշի գծեր և այլն: Շահը Եվրոպայում գնեց մանվածքի, լուցկու, շաքարի, ապակու, հախճապակու, թղթի և այլ գործարաններ, որոնք զետեղվեցին Թեհրանի և Սպահանի շրջակայքում:

Սակայն այդ բարեփոխումները ի վիճակի չէին երկրում մտցնելու արմատական փոփոխություններ: Ավատական վարչակարգը և օտարերկրյա կապիտալը համարյա անհաղթահարելի դժվարություններ էին ստեղծում հայրենական արդյունաբերության զարգացման համար: Ուստի վաճառականները, վաշխառուները, հոգևորականությունը, հարուստ աստիճանավորները գերադասում էին իրենց կուտակումներն օգտագործել խաներից ու շահից հողեր գնելու, քան արդյունաբերական ձեռնարկություններ ստեղծելու վրա: Իսկ շահը, ձգտելով լցնել իր գանձարանը, սկսեց վաճառել պետական (խալիսե) հողերը: Լայն ծավալ ստացան կալվածատերերի կողմից գյուղացիական հողերի բռնագրավումները: Ղաջարական իշխանազուններից մեկը՝ Զիլլի-Սուլթանը, իր ձեռքերում կենտրոնացրեց 2 հազար գյուղ՝ կես միլիոն բնակչությամբ: Իրանական գյուղում սկսեց ծաղկում ապրել վաշխառությունը: Նոր հողատերերի հանդես գալով գյուղացիության շահագործումը բնավ չնվազեց: Գյուղացիներն ավելի ու ավելի էին քայքայվում ու աղքատանում: Հողազուրկ գյուղացիները հողը վարձակալում էին կալվածատերերից: Պահպանվում էր բերքի բաժանման հնգաննդամ բանաձևը: Երկրում հաճախակի սով էր լինում: Առանձնապես ահավոր էր 1869-1872 թթ. սովը, որի ժամանակ մահացավ երկրի ողջ բնակչության 10%-ը:

Քայքայված, աղքատացած մեծ թվով գյուղացիներ և արհեստավորներ մեկնում էին արտագնա աշխատանքների, գլխավորապես Ռուսաստան (Անդրկովկաս և Միջին Ասիա):

Իրանում ստեղծված իրավիճակի գնահատականը պարսիկ պատմաբան Մալեքզադեն տալիս է հետևյալ կերպ. «Օտար պետությունների ագահության և բռնության հետևանքով Իրանի ժողովուրդը, նստած իր երկրի ընդերքում թաքնված գանձերի վրա, մահանում էր սովից»:

Շահը, որ ամբողջ երկրի տեր ու տիրականն էր, աճուրդի էր դնում պետական բարձր պաշտոնները: Իրանում ընդհանրապես գոյություն չուներ պետական ռոճիկ հասկացությունը: Միայն ցածր պաշտոնյա-

ներին էին տրվում չնչին գումարներ: Քարծր և միջին պաշտոնյաներն իրենք պետք է հոգային իրենց ապրուստի ծախսերը: Իրենց պաշտոնի համար շահին վճարված գումարի արտոնությամբ մեծ իրավունքներ ստացած պաշտոնյաներն աշխատում էին ուղղակի «ուտել» իրենց պաշտոնավայրում եղած-չեղածը: Այս կարգը Իրանում գոյություն է ունեցել երկար տարիներ:

Անսանձ տարրերը ազատ կողոպուտի իրավունք ձեռք բերելու համար մշտապես ըմբոստացել են կենտրոնի դեմ, հարուցել խռովություններ, ասպատակ սփռել և ամբողջ շրջաններ մատնել անիշխանության, միմյանց հետ մշտական ընդհարումներով քանդել ու քայքայել են երկիրը և կոտորածի ու գերեվարության մատնել անպաշտպան գյուղացիությանը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ԻՐԱՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻՆ ԵՎ 1905-1911 ԹԹ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Թեև XIX դ. բաբիական շարժումներից հետո Իրանում խոշոր ժողովրդական ապստամբություններ տեղի չունեցան, սակայն, այնուհանդերձ, ժողովրդական զանգվածների դժգոհությունը պոռթկումներ էր ունենում տարերային հուզումների ու բռնկումների տեսքով: Այդպիսի բռնկումներից մեկը 1891թ. ժողովրդական շարժումն էր անգլիական ծխախոտային մենաշնորհի դեմ:

Ծխախոտի մենաշնորհի համառոտակի պատմությունը հետևյալն էր: 1890 թ. մարտի 8-ին շահը անգլիացի մայոր Հ. Տալբոթին 50 տարի ժամկետով շնորհեց ծխախոտի արտադրության, վաճառքի ու արտահանման մենաշնորհը: Պայմանագրում նշվում էր, որ ծխախոտագործությամբ զբաղվող բոլոր հողագործները պարտավոր են հաշվառման ենթարկվել ընկերության գործակալների մոտ: Արգելվում էր արտադրված ծխախոտն ընկերությունից թաքցնելը կամ ինքնագլուխ վաճառելը: Կոնցեսիոներն իրավունք ուներ որոշել ծխախոտի և ծխախոտային արտադրանքի գները: Այս կանոնները խախտողներին սպառնում էին տուգանքներ կամ բանտարկություն:

Կոնցեսիան դիպչում էր իրանական հասարակության լայն խավերին՝ սկսած ծխախոտ արտադրողներից և վերջացրած վաճառականներով ու սպառողներով: Ուստի երկրում սկսվեց դժգոհության մի բուռն

շարժում, որն ի վերջո վերածվեց բունտի: Հոգևորականությունն սկսեց հանդես գալ կրակի վրա նավթ ավելացնողի դերում: Նա այդ առիթը միանգամայն պատեհ համարեց իր դժգոհությունը օտարերկրացիների ու շահի դեմ դրսևորելու համար: Ամբոխը շահ Վզից կախեց անգլիացիներին ծխախոտի մենաշնորհը հատկացնելու հրովարտակի օրինակը և շանը սկսեց պտտեցնել փողոցներում: Կրոնապետները իսլամի անունից «հարամ» («կեղտոտ», «պիղծ») հայտարարեցին ծխախոտը: 1891 թ. սեպտեմբերին շիիթական հոգևորականության կրոնապետ հաջի Միրզա Մոհամմադ Հասան Շիրազին արգելք դրեց Իրանում ծխախոտ ծխելու վրա՝ մինչև ծխախոտի կոնցեսիայի չեղյալ հայտարարումը: Ծխախոտի բոլոր կրպակները փակվեցին: Բնակչությունը այն աստիճանի ճշտությամբ էր կատարում այդ կարգադրությունը, որ երբ Թեհրանում ֆեթվան ստանալու հաջորդ օրը շահը իր համար պահանջեց ղայլան, նրան պատասխանեցին, որ պալատում ծխախոտ չկա, քանի որ այն ամբողջապես ոչնչացված է:

Միաժամանակ Հասան Շիրազին ֆեթվայով դիմեց շահին, որտեղ նա քննադատում էր նրա օտարերկրացիներին մերձենալու, նրանց կողմից պետության ներքին գործերին միջամտելու, երկրում նորամուծություններ մտցնելու քաղաքականությունը, ինչը, նրա կարծիքով, վնասակար է երկրի համար և դեմ է Ղուրանի սկզբունքներին:

Բարձրագույն հոգևոր առաջնորդի այդ ֆեթվան հրապարակվելուց հետո ամբողջ երկրով մեկ, սկսած խոշոր քաղաքներից, վերջացրած գյուղերով, սկսվեց մի հուժկու շարժում: Ամենուրեք ղեկավարելով այդ շարժումը՝ հոգևորականությունը ձգտում էր օգտագործել այն իր հեղինակությունը բարձրացնելու համար: Ընդ որում՝ դա ոչ միայն կրոնական թշնամանքի դրսևորում էր ընդդեմ օտարերկրյա ներթափանցման, այլև ուլեմների ուժի ցուցադրում: Ծխախոտի կոնցեսիայի դեմ իրենց ընդդիմադիր վարքագծով նրանք առաջին անգամ ցուցադրեցին իրենց համախմբվելու և բռունցքվելու կարողությունը: Հետագա տարիներին նրանց դիրքորոշումը գնալով ավելի ագրեսիվ էր դառնում, քանի որ նրանց ուժերը գնալով մեծանում էին: Ժողովրդի շրջանում հայտնվեցին կոչեր օտարերկրացիների դեմ պայքար ծավալելու համար, որոնցում շահի կառավարությունը անվանվում էր դավաճանների կառավարություն և ասվում էր, որ շահը զբաղված է հայրենիքի առուծախով: Ծխախոտավաճառները ոչնչացրին իրենց մոտ եղած ծխախոտը, որը կառավարության կարգադրությամբ նրանք պարտավոր էին վաճառել անգլիական ընկերությանը: Շատերը նույնիսկ ոչնչացրին ծխախոտի սերմե-

րը՝ որոշելով ընդմիշտ դադարեցնել դրա մշակումը: Երկրի մի շարք խոշոր քաղաքներում՝ Թեհրանում, Թավրիզում, Մեշհեդում, Շիրազում և այլուր սկսվեցին խոշոր հուզումներ: Մայրաքաղաքում ծխախոտի մենաշնորհի դեմ ֆեթվա հրապարակեց քաղաքի գլխավոր մոջթեհիդ հաջի Միրզա Հասան Աշթիանին: Որպես պատասխան քայլ՝ Նասր էդ Դին շահը պահանջեց Աշթիանիից, որ նա «կա՛մ դայլան ծխի, կա՛մ թողնի և հեռանա երկրի սահմաններից»: Մոջթեհիդը նախընտրեց վերջինը: Տեղեկանալով այդ մասին, քաղաքի բնակչությունը փակեց բազարներն ու կրպակները, և հոգևորականության առաջնորդությամբ թափորը շարժվեց դեպի շահի պալատը: Շահի որդիներից մեկը դուրս եկավ պալատից և փորձեց հանգստացնել ամբոխին: Սակայն ապարդյուն: Այնժամ հրաման տրվեց զորքերին կրակել ժողովրդի վրա, որի հետևանքով 7 մարդ սպանվեց, և 30-ը վիրավորվեց:

Վախեցած շահը 1891 թ. դեկտեմբերի 28-ին չեղյալ հայտարարեց անգլիացիների հետ կոնցեսիոն պայմանագիրը և որպես վնասի փոխհատուցում՝ նրանց վճարեց 6 կուրուր (500 հազար ֆունտ ստեռլինգ): Այդ խոշոր գումարը վճարելու համար կառավարությունը Շահնշահական բանկից վերցրեց փոխառություն:

Ծխախոտի կոնցեսիայի դեմ ուղղված բողոքի շարժումը առաջին հակաօտարերկրյա ելույթն էր Իրանում: Միաժամանակ այն հանդիսացավ 1905-1911թթ. իրանական սահմանադրական շարժման նախագուշակ: Միանգամայն իրավացի է Է. Լեմբտոնը, որը գտնում է, որ այդ շարժումը հանդիսացավ Իրանում հասարակական կարծիքի ձևավորման սկիզբը:

Կոնցեսիայի չեղյալ հայտարարելուց հետո զայրացած ու վրիժառության զգացումներով լցված շահը հրամայեց հալածանքներ սկսել շարժման մասնակիցների նկատմամբ: Որպես պատասխան քայլ՝ Թեհրանում ստեղծվեց մի գաղտնի կազմակերպություն, որն իր առջև նպատակ դրեց սպանել շահին: 1896 թ. մայիսի 1-ին Միրզա Ռեզա Քերմանին ատրճանակի կրակոցներով սպանեց Նասր էդ Դին շահին:

Այդ նույն թվականին գահ բարձրացավ Մոզաֆֆար էդ Դին շահը (1896-1906 թթ.), որի գահակալությունից անմիջապես հետո բացվում է պետական գաղտնիքը՝ գանձարանի դատարկությունը, որ այնքան հմտորեն ծածկում էր նրա քաղաքագետ հայրը: Սակայն չնայած դրան, այդ թույլ ու հիվանդ շահը, իր հոր նման, երեք անգամ (1900, 1902, 1905 թթ.) ճանապարհորդություն կատարեց դեպի եվրոպական երկրներ՝ դրանց ծախսերը հոգալու համար դիմելով անգլիական Շահնշահական և ռուսական Հաշվառու-վարկատու բանկերին:

Իրանի առաջադեմ մտածողության տեր մարդիկ գիտակցում էին, որ երկիրը մխրճվել է խոր ճգնաժամի մեջ, որից դուրս գալու համար անհրաժեշտ է իրագործել որոշ բարեփոխումներ: Այս հողի վրա XIX դարի վերջին սկսեցին ծնունդ առնել ազգայնականության գաղափարները: Ազգային ինքնագիտակցության ձևավորումը առաջին հերթին իր արտացոլումը գտավ մտավորականության գործունեության մեջ, ընդ որում՝ ինչպես բուն Իրանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ արտասահմանում: Եվրոպական երկրներում կրթություն ստացած իրանցիների թիվը նշանակալիորեն աճեց: Արտասահմանում, ինչպես եվրոպական, այնպես էլ ասիական երկրներում (Օսմանյան կայսրություն, Հնդկաստան և այլն) ապրում էին մեծ թվով իրանցի վտարանդիներ, այդ թվում նաև շահական իշխանությունների հետապնդումներից փախած մարդիկ, ովքեր քաղաքական վերափոխումների կողմնակիցներ էին:

Իրանում ազգայնական գաղափարների առավել կարկառուն ներկայացուցիչ էր հանդիսանում հայազգի Մալքոմ (Մելքոն) խանը (Մելքումյան Հովսեփ Հակոբի): Ծնվել է Նոր Ջուղայում 1833 թ.: Հայրը՝ մահմեդականացած Յաղուբ խանը, ունեցել է բարձր դիրք և մոտիկ հարաբերություններ պալատի հետ: Թեհրանում սկզբնական կրթությունը ստանալուց հետո Մալքոմ խանը մեկնում է Ֆրանսիա, սովորում Փարիզում, Մուրատ-Ռափայելյան վարժարանում, պոլիտեխնիկ ուսումնարանում և Փարիզի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Փարիզում ուսանելու տարիներին նա ներշնչվում է ազատական գաղափարներով: Վերադառնալով Թեհրան՝ հրավիրվում է պետական ծառայության: Որպես կրթված և եվրոպական լեզուների տիրապետող հազվագյուտ անձնավորություններից մեկը մայրաքաղաքում՝ նրան հրավիրում են պաշտոն զբաղեցնելու պալատում իբրև շահի անձնական քարտուղար և թարգմանիչ՝ միաժամանակ նրան տալով դիվանագիտական մի շարք հանձնարարություններ:

1856-1857 թթ. անգլո-իրանական պատերազմի ավարտից հետո պարսկական պատվիրակության կազմում Մալքոմ խանը Փարիզում մասնակցել է Մեծ Բրիտանիայի հետ հաշտության պայմանագրի կնքմանը:

1859 թ. Մալքոմ խանը Թեհրանում հիմնել է «Ֆարամուշ-խանե» («Մոռացության տուն»), որը, ըստ էության, ֆրամասոնական շարժման հետ կապված քաղաքական մի ակումբ էր, ուր ընդգրկվեցին իր ժամանակի առաջադեմ մտածողներ: «Ֆարամուշ-խանեների» միջոցով Մալքոմ խանը ձգտում էր իրանական ժողովրդին ծանոթացնել համաշխարհային քաղաքականությանը, օրենքի և ժողովրդական իշխանության ընձե-

ռած առավելություններին, պրոպագանդել Իրանը արևմտականացնելու կամ եվրոպական ձևով բարեփոխելու, երկրում սահմանադրական կառույցներ արմատավորելու, անձի ու սեփականության իրավունքների պաշտպանության գաղափարներ: Մալքոմ խանն աշխատում էր մի կողմից՝ իր բարեռորոգչական ծրագիրն իրականացնել վերևից՝ պալատի միջոցով, իսկ մյուս կողմից՝ ժողովրդական կարգերի ու արդարամիտ օրենքների մասին մտքեր պատրաստել քիչ շատ մտավորական դասի մեջ քարոզչության միջոցով: Իրանում բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ իր մտքերը Մալքոմ խանը շարադրել է «Քեթաբչե-ե ղեյբի» կամ «Դավթար-ե քանզիմաթ» անունով մի գրքում:

1862 թ. Նասր էդ Դին շահի հրամանով «Ֆարամուշ-խանեն»՝ ցրել են, իսկ Մալքոմ խանին աքսորել երկրից՝ իբրև «խռովարար մտքերի տեր», «գահի, կրոնի և երկրի թշնամի»: Նրա վտարումը Իրանից և դարձյալ վերականգնումը բարձր պաշտոններում կրկնվել է մի քանի անգամ:

1873 թ. շահը Մալքոմ խանին ուղարկեց պատվավոր աքսոր, նշանակելով Լոնդոնում Իրանի դեսպան: Այստեղ նա կապվեց իրանական քաղաքական վտարանդության հետ և շարունակեց իր քարոզչությունը հոգուտ Իրանում սահմանադրական միապետության հաստատման և առհասարակ բարեռորոգումների իրականացման: Շուտով նա հեռացվեց դեսպանի պաշտոնից, բայց մնաց Լոնդոնում և 1890-1893 թթ. այնտեղ հրատարակեց «Ղանուն» («Օրենք») պարսկերեն պարբերականը (լույս է տեսել 42 համար), որը կարևոր դեր է խաղացել Իրանի հասարակական-քաղաքական մտքի զարգացման և առհասարակ իրանական հասարակության զարթոնքի գործում: Թերթը քարոզում էր օրենքի իշխանության հաստատում Իրանում: Մալքոմ խանը իր հոդվածներում սուր քննադատության էր ենթարկում օտարերկրացիներին զիջումներ կատարելու շահական կառավարության քաղաքականությունը: «Ղանունը» գաղտնի ճանապարհով մուտք էր գործում Իրան և ընթերցվում երկրի ապագայով մտահոգված հազարավոր մարդկանց կողմից:

Մալքոմ խանը նաև պարսկական նոր գրականության հիմնադիրներից է: Նա հիմք է դրել սոցիալական դրամատուրգիային: Իր երգիծական պիեսներում ու կատակերգություններում, որոնց բնորոշ է սրամիտ հումորը և խարազանող բովանդակությունը, նա բացահայտում ու մերկացնում էր գոյություն ունեցող կարգերի արատները, անօրինականությունները, շահական կառավարիչների և աստիճանավորների ծախվածությունը, տիրող չարաշահումները, կաշառակերությունը և այլն:

Մալքոմ խանը հանդիսանում էր նաև Իրանում մշակութային-լուսա-

վորչական շարժման առավել արմատական թևի ներկայացուցիչը: Նրա պատմական ծառայությունը կայանում է նրանում, որ նա՝ որպես Իրանի առաջին լուսավորիչ, դաստիարակեց այդ երկրի առաջադիմական զարգացման համար պայքարող մի ամբողջ սերունդ: Չափազանց մեծ է նրա դերը պարսիկ ժողովրդի քաղաքական զարթոնքի բնագավառում: Նա զարկ տվեց զանգվածների գիտակցության արթնացմանը և դրանով իսկ, անկասկած, ուղի հարթեց դեպի սահմանադրական իրավակարգը: Իզուր չէ, որ պարսիկ մտավորականները ու քաղաքական գործիչները նրան համարել են «Իրանի սահմանադրության սերմնացան», «սահմանադրական գաղափարի դրոշակակիր», «ազատության շարժման առաջնորդ» և այլն:

Մալքոմ խանը առաջիններից մեկն է եղել Իրանում, որ հանդես է եկել հանուն երկրում օրենքների հաստատման և խորհրդարան ստեղծելու:

XIX դարի վերջին Իրանում, ինչպես նաև Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, լայն տարածում է գտնում պանիսլամիզմի (համիսլամականության) գաղափարների քարոզչությունը: Նրա հիմնադիրն էր սեյեդ Ջեմալ էդ Դին ալ Աֆղանին, որը ծնվել էր Իրանի Ասադաբադ քաղաքում: Նա եղել էր Աֆղանստանում, որտեղ 60-ական թթ. զբաղեցրել էր վարչապետի պաշտոնը, Հնդկաստանում, Արաբիայում, Եգիպտոսում, Կ. Պոլսում, Լոնդոնում, Փարիզում, Մոսկվայում ու Պետերբուրգում:

Պանիսլամիզմը, որն իր սուր ծայրով ուղղված էր եվրոպական պետությունների դեմ, քարոզում էր մահմեդական ժողովուրդների միավորման գաղափարը մեկ միասնական կայսրության մեջ, մեկ գերագույն խալիֆի գլխավորությամբ: Պանիսլամիստները մահմեդական ժողովուրդներին կոչ էին անում համախմբվել օտարերկրացիների դեմ մղված պայքարում: Այդ միավորման դրոշ պետք է ծառայեր իսլամական կրոնը: Մեքքայում սեյեդ Ջեմալ էդ Դինը հիմնադրեց պանիսլամիստական մի միություն, որն իր առջև նպատակ էր դրել գումարել համայն աշխարհի մահմեդականների ներկայացուցիչների մի համաժողով՝ գերագույն խալիֆ ընտրելու համար, որի նստավայրն էր լինելու կա՛մ Կ.Պոլիսը, կա՛մ Քուֆան:

Նասր էդ Դին շահի հրավերով սեյեդը ժամանեց Իրան: Սակայն շուտով շահի և նրա միջև ծայր առան տարաձայնություններ, որոնք հանգեցրին նրան, որ 1890 թ. Ջեմալ էդ Դինը աքսորվեց Օսմանյան կայսրություն: Այդ աքսորը պանիսլամիստներին մղեց դեպի շահական կառավարության նկատմամբ ընդդիմադիրների ճակատը:

Իրանի պատմությունը հարուստ է ամբոխային ցույցերով ու շարժումներով: Անցյալում այդ շարժումները եղել են մեծ մասամբ կրոնա-

կան հողի վրա: Ավելի մոտ ժամանակներում ժողովրդական խլրտումներն ու պոռթկումները հիմնականում ծագել են կա՛մ որևէ նահանգապետի, շահական աստիճանավորի ծայրահեղ կամայականությունների ու հարստահարությունների դեմ, կամ կապված են եղել որևէ ավազակ-ցեղապետի կողոպուտների ու խժդժությունների հետ: Հաճախ բողոքի շարժումներ կամ բունտեր են տեղի ունեցել հացի սղության կապակցությամբ: Այլ կերպ ասած, այդ շարժումները սահմանափակվել են նեղ շրջանակներում, ունեցել են տեղական բնույթ, և նրանց ծավալման ընթացքում առաջադրվել են մասնավոր պահանջներ:

XX դարի սկզբին Իրանում տարերային հուզումների բռնկումների տեսքով ժողովրդական դժգոհության պոռթկումներ էին տեղի ունենում համարյա ամեն տարի: 1900 թ. սովի պատճառով Թեհրանում և այլ քաղաքներում տեղի ունեցան հուզումներ և անկարգություններ:

1903-1904 թթ. հացի գների արհեստական բարձրացումը Իրանի համարյա բոլոր խոշոր քաղաքներում առաջ բերեց սովահար ամբոխի բունտեր: Ժողովուրդը ջարդ ու փշուր էր անում հացի և պարենի խանութները: Տարածվում էին թռուցիկներ, որոնցում սաղր ազամ աթաբեկ Ազամը մեղադրվում էր գանձագողության ու կաշառակերության, ինչպես նաև օտարերկրյա պետությունների գործակալ լինելու մեջ: Ժողովրդին հանգստացնելու նպատակով շահն աթաբեկ Ազամին պաշտոնանկ արեց և սաղր ազամի պաշտոնում նշանակեց Այն էդ Դոուլեին: Սակայն վարչապետի այդ փոփոխությունը չհանգեցրեց խռովյալ ամբոխի հանգստությանը: Գնալով բորբոքվածությունը մեծանում էր: Սկզբնական շրջանում քաղցած զանգվածները, հավատալով ամբոխավարական քարոզիչների զանազան խոստումներին, մեծ հույսով ու խանդավառությամբ հավաքվում էին շարժման ղեկավարների շուրջը և բարձրագոչ աղաղակներով իրենց համաձայնությունն էին հայտնում նրանց զանազան առաջարկներին ու խոստումներին և հնազանդորեն գնում նրանց հետևից:

Սակայն գնալով շարժումը ձևավորվում և կազմակերպված ու ընդհանրական բնույթ էր ստանում: Այն դուրս էր գալիս մայրաքաղաքից և ծավալվում նաև գավառներում: Միանգամայն ակնհայտ էր դառնում, որ այն սոսկ բողոքի դրսևորում չէր կառավարության ընթացքի կամ կամայականությունների դեմ, այլ քաղաքական շարժում առհասարակ տիրող կարգերի դեմ: Ներքին ու արտաքին ազդեցությունների ու տարբեր ներշնչումների տակ սկսված այդ շարժումը, թեև կրկին անկազմակերպ ու հոսանքային, սակայն, այնուամենայնիվ, իր մեջ ցուցադրում էր ժո-

ղովրդական զարթոնքի որոշ նշաններ, թեկուզ դրանք շատ թույլ ու աղոտ լինեին: Թեև շարժումը անորոշ էր իր բովանդակությամբ և նույնքան անկազմակերպ իր հետապնդած նպատակներով, բայց կար փոքրաթիվ ազատական մի խմբակցություն, որ ջանք էր գործադրում շարժումը ժողովրդական հունի մեջ դնելու:

Անմիջապես հոգևորականությունը, հատկապես նրա բարձր դասը, սկսում է ջանքեր գործադրել շարժման ղեկավարությունը իր ձեռքը վերցնելու ուղղությամբ: Մզկիթներում ու շուկաներում քարոզչություն էր տարվում այն մասին, որ օտարերկրացիներն Իրանում ամեն ինչ վերցրել են իրենց ձեռքը, իսկ պարսիկներին ստիպում են ողորմություն խնդրել: Պահանջվում էր երկրից հեռացնել մաքսատների տնօրեն բելգիացի Նաուսին, որին մեղադրում էին գանձարանը և վաճառականներին թալանելու և կողոպտելու մեջ, հորդորում էին բոյկոտի ենթարկել օտարերկրյա բանկերն ու նրանց կողմից բաց թողնված թղթադրամները: Կոչեր էին հնչում այդ թղթադրամները հայտարարել «կեղտոտ» («հարամ»), որպեսզի մահմեդականները չշփվեն դրանց հետ: Քարոզիչները սուր քննադատության էին ենթարկում նաև շահին ու նրա կառավարությանը՝ նրանց ևս մեղադրելով գողության ու կաշառակերության մեջ: Սեյեդ Ջեմալ անունով քարոզիչներից մեկը մզկիթում ժողովրդի հոծ բազմության ներկայությամբ հայտարարում է. «Պարսկաստանում, ինչ սովորույթի համաձայն գոյություն ունի գողության համար ձեռքը կտրելու օրենք, սակայն ներկայումս այն կիրառվում է միայն աղքատների նկատմամբ: Խղճի մտոք ասացեք. եթե այդ օրենքը կիրառվեր արդարացի կերպով, մի՞թե անհրաժեշտ չէր կտրել բոլոր խոշոր ու մանր գողերի ձեռքը՝ սկսած շահից մինչև վերջին պաշտոնյան: Սակայն այդպես չեն վարվում, և հենց դրանում է Պարսկաստանի դժբախտությունը: Օրենքները պետք է հավասար լինեն բոլորի համար»:

Ինչպես նման բոլոր շարժումների դեպքում, ցուցարար ամբոխը թեև հստակորեն չէր ըմբռնում իր ղեկավար հոգևորականության պահանջների միտքն ու էությունը, բայց հոսանքով գնում էր նրա հետևից այն հույսով, որ իր հոգևոր պետերը պաշտպանում են իր շահերը:

Արդեն 1905 թ. տարերային ժողովրդական դժգոհությունը սկսեց կազմակերպչական ձևեր ընդունել: Հյուսիսային Իրանի քաղաքներում սկսեցին ստեղծվել մոջահեդների («մարտիկներ արդար, հեղափոխական գործի համար») կազմակերպություններ: Իրանում հեղափոխական շարժումների վրա անմիջական ներգործություն էին ունենում նաև Անդրկովկասում տեղի ունեցող հեղափոխական իրադարձությունները: Քեր-

մանում խախտելով բեստի* օրենքը, նահանգապետի հրամանով ձերբակալվեցին տեղի մոջթեհիդի տանը բեստ նստած մարդիկ: Իսկ Թեհրանում չարաշահության մեղադրանքով սադր ազամ Այն էդ Դոուլեի հրամանով 1905 թ. դեկտեմբերի 12-ին ձերբակալվեցին և մահակներով գանակոծության ենթարկվեցին երկու անվանի վաճառականներ: Դա Իրանում սովորական մի երևույթ էր, որ մինչ այդ լռությամբ տանում էր թե՝ պատժվողը և թե հանդիսատես շրջապատը: Բայց խլրտումների հետևանքով ստեղծված հուզումնալից մթնոլորտում այս անգամ առևտրական դասը, իր պատիվը արատավորված համարելով, բողոքում է ոչ թե այդ մասնավոր դեպքի, այլ ընդհանրապես կառավարության կամայականությունների և գործադրած ապօրինությունների ու խստությունների դեմ: Առևտրական դասին հետևում են նաև զանգվածները, որոնք, պետական պաշտոնյաների հարստահարությունների ու ճնշումների տակ կքած, արդարադատության պահանջ են դնում:

Քանի որ հրապարակում չկար իրական ղեկավարություն, որ հանդես գար հանուն զանգվածների շահերի ու իրավունքների պաշտպանության, այս անգամ ևս դատարկ ասպարեզում մեջտեղ է գալիս հոգևորականությունը և գրավում շարժման ղեկավարությունը: Առաջին հայացքից խիստ անբնական է թվում այդ երևույթը, որովհետև պահպանողական հոգևորականությունը հարում էր ազատական կարգեր պահանջող սահմանադրական շարժմանը, այլ կերպ ասած, նա լծվում էր իր հոգեբանությանը բոլորովին անհարիր գաղափարի հաղթանակի օգտին: Սակայն նա մտնում էր ասպարեզ իր շահերի հիանալի գիտակցությամբ: Բարձր հոգևորականությունը հետապնդում էր մի նպատակ՝ խորտակել իր հակառակորդ պալատի ուժն ու ազդեցությունը և վրեժ լուծել նրանից, որովհետև պալատը համառ հետևողականությամբ կրճատել էր իր իրավունքները և շարունակում էր իր այդ քաղաքականությունը:

---

*Բեստը իշխանությունների համար անձեռնմխելի վայրում ապաստան գտնելու իրավունք է, ուր թաքնվում էին հետապնդվողները: Հնուց անտի բեստի վայր էին հանդիսանում մզկիթները, իմամ զադեները, որևէ սրբի դամբարանը և այլն: Կապիտուլյացիոն ռեժիմի հաստատումից հետո ապաստանի իրավունքը տարածվեց նաև օտարերկրյա դեսպանությունների ու հյուպատոսությունների վրա: Բեստ էին նստում նաև ի նշան բողոքի իշխանությունների կողմից իրականացվող բռնությունների ու հալածանքների դեմ: Չգրված օրենքը թույլ չէր տալիս բռնի դուրս հանել բեստ նստածին և ձերբակալել նրան:

Ժողովրդական այդ շարժմանը հարելով և նրա ղեկավարությունը ստանձնելով՝ հոգևորականությունը ձգտում էր ժողովրդի միջոցով վերագրավել իր նախկին դիրքն ու հեղինակությունը և իր բացարձակ իշխանությունը տարածել երկրի ու ժողովրդի վրա:

1905 թ. դեկտեմբերին Թեհրանում, Թավրիզում, Շիրազում և այլ քաղաքներում տեղի ունեցան զանգվածային ցույցեր և բողոքի համընդհանուր գործադուլներ: Խանութները, կրպակները, արհեստանոցները փակվեցին, առևտուրն ընդհատվեց: Ցույցարարները պահանջում էին պաշտոնանկ անել շահի ազգական սադր ազամ Այն էդ Դոուլեին և իրականացնել բարեփոխումներ: Ցույցերն ավարտվեցին ոստիկանության և զորքերի հետ բախումներով: Այն բանից հետո, երբ իշխանությունները փորձեցին ձերբակալել մի քանի աչքի ընկնող քարոզիչների, 1905 թ. դեկտեմբերի 14-ին Թեհրանի բարձրաստիճան հոգևորականությունը, այդ թվում նաև Թեհրանի մոջթեհիդներ սեյեդ Մոհամմադ Թաբաթաբային և սեյեդ Աբդոլլա Բեհբեհանիին, որոնց հետ նաև 5 հազար արհեստավորներ, վաճառականներ, հոգևոր ուսումնարանների սաներ և մոլլաներ բեստ նստեցին Թեհրանից ոչ հեռու գտնվող Շահ Աբդոլ-Ազիմ մզկիթում: Բեստ նստածները կոչով դիմեցին ժողովրդին, որում շահի կառավարությունը հայտարարվում էր ժողովրդական բոլոր դժբախտությունների մեղավոր: Պահանջվում էր Այն էդ Դոուլեի հրաժարականը, ինչպես նաև ղրվում էր «Արդարության տուն» («Ադալյաթ խանե») ստեղծելու պահանջ: Այդ ասելով հասկացվում էր բարեմիտ, անաչառ անձնավորություններից բաղկացած մի դատարանի ստեղծում, որը արդարության պաշտպան լինի, լսի ժողովրդի բողոքները, քննի նրա գանգատները և արդար վճիռներ կայացնի: Միաժամանակ պաշտպանի ժողովրդին պետական պաշտոնյաների հարստահարություններից ու կեղեքումներից: Քարձր հոգևորականությունը միաժամանակ տեսակցություն է ունենում սադր ազամի հետ և զգաստացուցիչ գրություններ է ուղղում շահին: Բայց այդ բոլորից որևէ դրական արդյունք չստանալով՝ ի վերջո մի գրությամբ դիմում է Թեհրանում անգլիական դեսպանատանը և խնդրում նրա աջակցությունը: Սակայն դեսպանատնից պատասխանում են, որ «անգլիական դեսպանատունը ոչ մի կերպ չի կարող աջակցել այն անձանց նպատակներին, որոնց ընթացքը դեմ է շահի կառավարությանը»:

Շարժման ղեկավար կրոնապետ (մոջթեհիդ) Աղա սեյեդ Աբդոլլա Բեհբեհանիին երեք օր հետո կրկին դիմում է անգլիական դեսպանատուն, որը, հակառակ սկզբնական մերժման, միջամտում է շարժմանը: Դա բացատրվում է նրանով, որ Անգլիան մտադիր էր սահմանադրական շարժ-

ման միջոցով թուլացնել Իրանում Ռուսաստանի ազդեցությունը և կասեցնել նրա անզուսպ ձգտումը դեպի հարավային նահանգները և Պարսից ծոցի ավազանը, որոնք անգլիացիները համարում էին իրենց ազդեցության շրջանները:

Դեռևս 1906 թ. հունվարի սկզբին ժողովրդական շարժումների վերելքից անհանգստացած Մոզաֆֆար էդ Դին շահը գնաց զիջումների: Նա խոստացավ սկսել բարենորոգումների իրականացումը, գումարել «Արդարության տուն», պաշտոնանկ անել ժողովրդի ատելությանն արժանացած Թեհրանի նահանգապետին, պատժել Քերմանի նահանգապետին, որը հրամայել էր մահակներով գանակոծել մոլլաներին, Թեհրանում ընտրության կարգով բնակչության կազմից ստեղծել մի խորհուրդ, որը «թանկավաճառության» դեմ պայքարելու համար որոշելու էր սննդամթերքների գները: Դրանից հետո հոգևորականությունը դուրս եկավ բեստից և վերադարձավ Թեհրան, որտեղ նա հանդիսավոր ընդունելություն գտավ մայրաքաղաքի բնակչության կողմից:

Սակայն Թեհրանում ու մյուս խոշոր քաղաքներում ժողովրդական հուզումները ու ցույցերը չէին դադարում: Կառավարությունը ցուցարարների դեմ հանեց զորքեր և ոստիկանական ուժեր, որոնք կրակ բաց արին անզեն ժողովրդի վրա: Այդ անտեղի դաժանությունից վրդովված ամբոխը մոլեգնեց: Թեհրանի արհեստավորներն ու վաճառականները բազարում փակեցին իրենց կրպակները, և մոտ 14 հազար մարդ 1906 թ. հուլիսի 15-ին բեստ նստեց անգլիական դեսպանատան ընդարձակ այգում: Դեսպանատան հուշումներով «Ադալյաթ խանե» («Արդարության տուն») ստեղծելու համար պահանջը փոխարինվեց «ժողովրդական ներկայացուցչական կարգեր» հաստատելու, այլ կերպ ասած՝ Իրանում սահմանադրական կարգեր արմատավորելու պահանջով: Միաժամանակ, որպես շահական իշխանությունների գործողությունների դեմ բողոքի նշան, Թեհրանի հոգևորականությունը լքեց մայրաքաղաքը և մեկնեց Ղում քաղաք, որտեղից շահին ներկայացվեցին հետևյալ պահանջները. պաշտոնանկ անել Այն էդ Դոուլեհն, գումարել մեջլիս (խորհրդարան), ընդունել շարիաթի վրա հիմնված սահմանադրություն, երկրից վտարել բելգիական մաքսային աստիճանավորներին և այլն: Հոգևորականությունը սպառնում էր, որ եթե շահը չկատարի այդ պահանջները, ինքը ընդմիշտ կհեռանա Իրանից: Երկրի մյուս քաղաքներում ևս տեղի էին ունենում ցույցեր, շուկաները փակվում էին, և բնակչությունը նստում էր բեստ: Առանձին վայրերում սկսեցին հնչել ապստամբության կոչեր: Գնալով շարժումն ընդունում էր սպառնալից չափեր: Շահը ստիպված էր

զիջումների գնալ: Անգլիական գործերի հավատարմատարի միջնորդությամբ նա սկսեց բանակցություններ վարել բեստ նստածների հետ: Ի վերջո, հուլիսի 30-ին Այն էդ Դոուլեն պաշտոնանկ արվեց: Սաղր ազամի պաշտոնում նշանակվեց ազգայնական տրամադրություններ ունեցող ազատական հայացքների տեր Մոշիր էդ Դոուլեն:

1906 թ. օգոստոսի 5-ին հրապարակվեց շահի հրովարտակը սահմանադրություն ընդունելու և մեջլիս (խորհրդարան) հիմնադրելու վերաբերյալ: Սակայն այդ հրամանագիրը չբավարարեց անգլիական դեսպանատան այգում և Ղումում բեստ նստած հոգևորականությանը, որը գտնում էր, որ հրովարտակում հստակ չի նշվում, որ մեջլիսը պետք է լինի ընտրովի, այն պետք է կոչվի «իսլամական», և որ նրա գործունեությունը պետք է համապատասխանի շարիաթի նորմերին, ուստի շահը օգոստոսի 7-ին հրապարակեց լրացուցիչ հրամանագիր, որը բավարարում էր բեստ նստածների պահանջները: Հոգևորականությունը Ղումից վերադարձավ Թեհրան. դադարեցվեց նաև բեստը անգլիական դեսպանատան այգում:

1906 թ. հոկտեմբերի 7-ին տեղի ունեցավ իրանական առաջին մեջլիսի բացման հանդիսավոր նիստը: Առանց երկու անվանի մոջթեհիդների՝ սեյեդ Մոհամմադ Թաբաթաբայիի և սեյեդ Աբդոլլա Բեհբեհանիի նախնական հավանության մեջլիսում ոչ մի կարևոր հարց չէր լուծվում: Մեջլիսի նիստերը բաց էին: Ժողովրդի ներկայացուցիչները ոչ միայն ներկա էին լինում նիստերին, այլև մասնակցում էին քննարկումներին, հարցեր էին մշակում քննարկման համար և այլն: Նիստերի վերաբերյալ հաշվետվությունները տպագրվում էին թերթերում և լայնորեն քննարկվում էին բազարում: Քննարկումները հաճախ ընթանում էին շատ բուռն ձևով՝ երբեմն հասնելով ծեծկռտուքի:

1906 թ. դեկտեմբերի 30-ին մահամերձ Մոզաֆֆար էդ Դին շահը հաստատեց սահմանադրության առաջին մասը՝ «Հիմնական օրենքը»: Իրանը հռչակվում էր սահմանադրական միապետություն: Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր ընդունվող օրենքները պետք է ստանային մեջլիսի անդամների հավանությունը: Առանց մեջլիսի որոշման, կառավարությունը իրավունք չուներ հատկացնել կոնցեսիաներ և այլն:

1907 թ. հունվարի 8-ին Մոզաֆֆար էդ Դին շահը մահացավ: Նոր շահ հռչակվեց նրա որդին՝ Ատրպատականի կառավարիչ Մոհամմադ Ալին: Վերջինս հաստատեց սահմանադրության «Հավելումները», որոնք իրավաբանորեն ձևակերպեցին երկրի անցումը սահմանադրական միապետության վարչակարգի:

Այսպիսով՝ ժողովուրդը ստացավ սահմանադրություն, սակայն նա իր ճնշող մեծամասնությամբ չէր գիտակցում այդ նոր իրավակարգի էությունը: Խախուտ, անհաստատ և մակերեսային էր սահմանադրությունը, քանի որ բոլոր երդվյալ միապետականները, բոլոր հետադեմ տարրերը, սահմանադրական դիմակ հագած, շարունակում էին պահել իրենց դիրքն ու իշխանությունը և դավեր էին նյութում սահմանադրության դեմ:

Սակայն, չնայած այդ բոլորին, ժողովուրդը սկսեց ալեկոծվել: Կազմակերպվեցին հեղափոխության մարտիկների՝ «մոջահեդների» կազմակերպություններ, ֆիդայիների ջոկատներ, գյուղացիները հրաժարվում էին վճարել հարկերը, կալվածատերերին հանձնել նրանց հասանելիք բերքը, խմբեր կազմելով հարձակվում էին կալվածատիրական տների վրա, քանդում ու ավերում էին դրանք: Գյուղացիական բունտերի ժամանակ ոչնչացվում էին կալվածատերերին պատկանող ցորենի և բրնձի ամբարները, քշում տանում էին անասունների հոտերը: Կալվածատերերը գյուղացիական շարժումներին պատասխանում էին անագորույն դաժանություններով: Օրինակ՝ Թալիշի խանի որդին հրամայել էր կարել իր գյուղացիներից մեկի բերանը, որը համարձակվել էր արտասանել «մաշրութե» (սահմանադրություն) բառը: Ամենուրեք կազմակերպվում էին «էնջումեններ», որոնք տեղական իշխանությունը վերցնում էին իրենց ձեռքը:

Սահմանադրական շարժումն Իրանում իր ճշտումները մտցրեց նաև Անգլիայի և Ռուսաստանի՝ միջինարևելյան քաղաքականության մեջ: Ռուսաստանը մտավախություն ուներ, որ հեղափոխական շարժումներն Իրանում կարող են այդ երկրում կործանիչ հարված հասցնել իր դիրքերին: Անգլիան իր հերթին վախենում էր, որ Իրանում տեղի ունեցող իրադարձությունները կարող են խթանել հեղափոխական շարժումը Հնդկաստանում: Այդ երկու պետություններին հավասարապես անհանգստացնում էր Գերմանիայի ուժգին ներթափանցումը Իրան: Այս և նմանատիպ այլ գործոններ անգլո-ռուսական հակասությունները մղեցին հետին պլան և ստիպեցին Մեծ Բրիտանիային և Ռուսաստանին՝ այդ վտանգի մրցակից-ախոյաններին, բանակցություններ սկսել իրանական և ընդհանրապես միջինարևելյան գործերի վերաբերյալ: 1907 թ. օգոստոսի 31-ին ստորագրվեց անգլո-ռուսական համաձայնագիր Իրանը, Աֆղանստանը և Տիբեթը ազդեցության գոտիների բաժանելու վերաբերյալ: Այդ համաձայնագրով Իրանի հյուսիսային մասը 790 հազար քառ. կմ տարածքով՝ Ղասրե Շիրին-Սպահան-Յեզդ-Զուլֆաղար գծից հյուսիս, հայտարարվում էր Ռուսաստանի ազդեցության գոտի, իսկ հարավային մասը՝ Բանդար-Աբբաս-Քերման-Բիրջանդ-Ղազիկ գծից հարավ-



Iran in 1907

showing the Russian & British Spheres of Influence

արևելք՝ 350 հազար քառ. կմ տարածքով՝ անգլիական ազդեցության գոտի: Այդ երկու գոտիների միջև թողնվում էր մի շերտ, որը հայտարարվում էր «չեզոք գոտի» և բաց էր մեծ պետությունների մրցակցության համար: Կողմերը պարտավորվում էին քաղաքական և տնտեսական բնույթի կոնցեսիաներ չփնտրել «ուրիշի գոտում» և ճանաչում էին միմյանց «հատուկ շահերը» իրենց ազդեցության գոտիներում: Աֆղանստանը ընդգրկվում էր անգլիական ազդեցության գոտու մեջ: Ռուսաստանը պարտավորվում էր Աֆղանստանի հետ իր քաղաքական շփումների ժամանակ օգտվել «բրիտանական կառավարության միջնորդությունից»: Հրապարակվում էր նաև Աֆղանստանում երկու կողմերի առևտրական իրավահավասարության սկզբունքը: Անգլիան և Ռուսաստանը ճանաչում էին Չինաստանի ինքնիշխան իրավունքները Տիբեթի նկատմամբ, պարտավորվում էին չմիջամտել նրա ներքին գործերին և նրա հետ շփվել միայն չինական կառավարության միջոցով: Տիբեթը հայտարարվում էր անգլիական առևտրական ազդեցության գոտի:

1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրի կնքումով ավարտվեց անգլո-ֆրանս-ռուսական ռազմաքաղաքական դաշինքի՝ Անտանտի կամ Եռյակ համաձայնության ստեղծումը:

Վերոհիշյալ համաձայնագիրը, սակայն, չվերացրեց անգլո-ռուսական մրցակցությունն Իրանում: Դրանից հետո ևս այն շարունակվում էր, սակայն ավելի քողարկված ձևերով:

Անգլիացի հետազոտող Է. Լեմբտոնը նշում է, որ անգլո-ռուսական համաձայնագրի վերաբերյալ լուրը սասանեց սահմանադրության կողմնակիցների հավատը անգլիացիների նկատմամբ:

Այդ շրջանում, մեծ պետություններից բացի, Իրանի նկատմամբ գորշ գայլի ախորժակ էր ցուցաբերում նաև հարևան Օսմանյան կայսրությունը, որը հավակնություններ ուներ Ատրպատականի նկատմամբ, իբրև քրքախոս մի շրջանի:

1907 թ. իրանական հետադիմությունը սկսեց գլուխ բարձրացնել: Մոհամմադ Ալի շահը սկսեց իրեն շրջապատել սահմանադրության ու մեջլիսի հակառակորդներով: Նրա և խորհրդարանի ազատական պատգամավորների միջև սկսվում է բացահայտ պայքար: 1907 թ. ապրիլին շահը արտասահմանից հետ կանչեց նախկին վարչապետ աթաբեկ Ազամին, որը 1903 թ. ժողովրդի պահանջով հեռացվել էր պետական գործերից: Իրանական հասարակությունը զայրույթով դիմավորեց հետադեմ աթաբեկ Ազամի վերադարձի լուրը: Մեջլիս էին ուղարկվում բողոքի հեռագրեր, բազմաթիվ քաղաքներում տեղի էին ունենում ցույցեր, ատե-

լի աստիճանավորների դեմ տարածվում էին թռուցիկներ: Չնայած այդ բոլորին՝ 1907 թ. ապրիլի կեսին աթաբեկ Ազամը ռազմանավով ժամանեց Էնզելի, իսկ այնտեղից մեկնեց Թեհրան: Շահը պաշտոնանկ արեց ազատական-ազգայնական Մոշիր էդ Դոուլեհին և նրա տեղը վարչապետի պաշտոնում նշանակեց աթաբեկ Ազամին: Այդ նշանակումը վկայում էր այն մասին, որ շահը պատրաստվում է ինչ-որ քայլերի սահմանադրականների դեմ: Գնալով երկրում վիճակը սրվում էր: 1907թ. օգոստոսի 31-ին մեջլիսից դուրս գալու ժամանակ աթաբեկ Ազամը սպանվեց մոջահեդների կազմակերպության անդամ Աբբաս-աղայի կողմից: Այդ իրադարձությունը արագացրեց հետագա զարգացումների ընթացքը: 1907թ. աշնանից Մոհամմադ Ալի շահը սկսեց պատրաստվել պետական հեղաշրջում իրականացնելու: Նրան այդ քայլին մղում էր Նիկոլայ Բ ցարը: Թեհրանում ռուսական դեսպանորդ Գարտվիգի 1907 թ. դեկտեմբերի 31-ի զեկուցագրի վրա, որտեղ հաղորդվում էր Իրանում ճգնաժամային վիճակի և դրա հետ կապված շահի խնդրանքի մասին, որպեսզի անհրաժեշտության դեպքում իրեն թույլ տրվի ապաստան գտնել Թեհրանի ռուսական դեսպանատանը, Նիկոլայ Բ-ն մակագրել էր. «շահը կարող է Պարսկաստանը և գահը փրկել միայն մեջլիսը և այլ հեղափոխական խառնամբոխը անհապաղ ցրելով: Դա իմ միակ պատասխանն է»:

1907 թ. դեկտեմբերի 1-ին և 2-ին Թեհրանի Բահարիսթան հրապարակում, մեջլիսի շենքի առջև, կենտրոնացվեցին զորքեր, որոնց տրված էր գաղտնի հրաման՝ ջախջախել ու ցրել մեջլիսն ու ընջումենները: Սակայն, մինչև զորքերի կողմից վճռական գործողությունների անցնելը, մեջլիսի պատգամավորները, Թեհրանի ընջումենների անդամները և ֆիդայիների զինված ջոկատները գրավեցին մեջլիսի շենքը և նրա հարևանությամբ գտնվող Սեփահսալարի մզկիթը: Միաժամանակ մեջլիսի շրջակայքում հավաքվեցին հազարավոր զինված կամավորներ՝ սահմանադրությունն ու մեջլիսը պաշտպանելու համար: Նահանգներից բողոքի հեռագրեր էին գալիս շահի գործողությունների դեմ: Թավրիզի ընջումենները մեջլիսի և օտարերկրյա դեսպանությունների հասցեով ուղարկեցին մի հեռագիր, որտեղ հայտարարվում էր, որ ժողովուրդն այլևս չի ճանաչում ներկա շահին, որը խախտել է հավատարմության երդումը սահմանադրությանը և մեջլիսին կոչ էր անում ընտրել նոր շահի: Տարբեր նահանգներից ու քաղաքներից Թեհրան էին գալիս ֆիդայիների զինված ջոկատներ՝ սահմանադրությունը պաշտպանելու համար:

Ուժերի հարաբերակցությունը բացահայտ կերպով շահի կողմը չէր, ուստի նա ստիպված էր ընկրկել ու զիջումների գնալ: Կառավարության

անդամներից մի քանիսին (Սաադ էդ Դոուլե և այլն) նա պաշտոնանկ արեց, իսկ մի քանիսի իշխանությունը սահմանափակեց: Շահի և մեջլիսի միջև կայացավ համաձայնություն, որն ամրապնդվեց 1907 թ. դեկտեմբերի 9-ին երկու կողմերի երդումով Ղուրանի վրա: Շահը պարտավորվեց պահպանել ու հարգել սահմանադրության հիմնական օրենքն ու սկզբունքները, իսկ մեջլիսի պատգամավորները երդվեցին պահպանել շահի գերագույն իրավունքները, և քանի դեռ շահը ոտնձգություն չի կատարել սահմանադրության դեմ, «չքայքայել գահի հիմքերը»: Սա ոչ այլ ինչ էր, քան գործարք շահի և մեջլիսի միջև:

1908թ. փետրվարի 15-ին Մոհամմադ Ալի շահի դեմ կազմակերպվեց մահափորձ: Նրա շքախմբի վրա նետված ռումբը, սակայն, շահին չվնասեց: Այդ դեպքից հետո շահի և էնջումենների միջև առճակատումը գնալով սկսեց սրվել: Թեհրանի էնջումենները պահանջեցին, որ շահը պետական գործերից հեռացնի Ամիր Բահադուր-Ջանգին, որի ազդեցությունը ինքնակալի նկատմամբ չափազանց մեծ էր, ինչպես նաև շահի քարտուղար Շապշալին և նրա մերձավորներից ևս չորս անձանց: Սակայն, անպատասխան թողնելով էնջումենների պահանջը, 1908 թ. հունիսի սկզբին Մոհամմադ Ալին կոզակական գումարտակի ուղեկցությամբ անակնկալ կերպով հեռացավ Թեհրանից և մեկնեց մայրաքաղաքից դուրս գտնվող իր Բաղեշահ պալատը: Էնջումենների ղեկավարները հասկացան, որ շահը պատրաստվում է հարձակման անցնել: Մեջլիսի բազմաթիվ պատգամավորներ, ֆիդայիների զինված ջոկատներ, Թեհրանի էնջումենների անդամներ, թվով մի քանի հազար մարդ, կենտրոնացան մեջլիսի շենքում և Սեփահսալարի մզկիթում սահմանադրությունը պաշտպանելու վճռակամությամբ: Մայրաքաղաքի բնակչությանը զենք բաժանվեց:

1908 թ. հունիսի 22-ին շահը Թեհրանում հայտարարեց ռազմական դրություն: Թեհրանի զինվորական նահանգապետ նշանակվեց կոզակական գումարտակի հրամանատար, ռուս գնդապետ Վ. Պ. Լյախովը, որը շահի կարգադրությամբ մեջլիսից պահանջեց իրեն հանձնել Թեհրանի էնջումենների ղեկավարներին և մեջլիսի մի խումբ պատգամավորների: Մեջլիսը հրաժարվեց բավարարել այդ պահանջը: Հունիսի 23-ի առավոտյան որոտացին թնդանոթները: Շահի հրամանով Լյախովը սկսեց մեջլիսի շենքի և Սեփահսալարի մզկիթի ռմբակոծումը, որը տևեց մինչև կեսօր: Մեջլիսի բազմաթիվ պատգամավորներ և էնջումենների անդամներ ձերբակալվեցին և տեղափոխվեցին Բաղեշահ, որտեղ նրանց հետ տեղի ունեցավ գազանային հաշվեհարդար: Կախաղան

հանվեցին 12 պատգամավորներ, այդ թվում նաև «Սուրե իսրաֆիլ» արմատական ուղղության թերթի խմբագիր միրզա Ջահանգիր խան Շիրազին և ճանաչված հռետոր Մալեք էլ Մոթքալլեմինը: Մեջլիսի Թավրիզի պատգամավոր հաջի միրզա Իբրահիմը սպանվեց զինվորների կողմից: Մի շարք պատգամավորներ, այդ թվում՝ ազդեցիկ Թաղի-զադեն, թաքնվեցին անգլիական դեսպանատանը, շատերը հետապնդումներից ազատվելու համար հեռացան երկրից: Հայտարարվեց, որ մեջլիսն ու ենջումենները ցրվում են: Մեջլիսի փոխարեն ստեղծվեց պետական խորհուրդ, որի անդամները նշանակվեցին շահի կողմից: Ճիշտ է, Մոհամմադ Ալին խոստացավ երեք ամիս հետո թույլատրել գումարել նոր մեջլիս, սակայն իր այդ խոստումը նա այդպես էլ չկատարեց:

Թեհրանում տեղի ունեցած հեղաշրջումից հետո մոտավորապես նմանատիպ իրադարձություններ տեղի ունեցան նաև նահանգական կենտրոններում ու քաղաքներում: Հետադիմությունը ամենուրեք անցավ հարձակման: Մեշհեդում, Ռեշտում և ուրիշ քաղաքներում ենջումենները փակվեցին, և նրանց ղեկավարները կա՛մ ձերբակալվեցին և կա՛մ ստիպված էին թաքնվել:

Մոհամմադ Ալի շահի հակասահմանադրական ընթացքը, իր բռնություններով ու վայրագություններով, ընդհակառակը, մեծ ծառայություն մատուցեց սահմանադրական գաղափարների ամրացման գործին: Նրա գործադրած խստությունները թեև լքում առաջացրին սահմանադրականների տատանվող շարքերում, բայց խթան հանդիսացան ժողովրդի գիտակցության բարձրացմանը: Նրա կատարած ճնշումն ու հալածանքը դեպի առաջավոր դիրքերը մղեցին փոքրաթիվ ազատականներին: Այս նոր պայմաններում հեղափոխական պայքարի կենտրոնը տեղափոխվեց երկրի հյուսիսային նահանգները՝ Ատրպատական և Գիլյան: Հատկապես հեղափոխական շարժման կենտրոն դարձավ Թավրիզը, որն այդ պահին Իրանի ամենաքաղաքականացված քաղաքն էր: Այստեղ ձևակերպվեց իրական ազատության և իրավահավասարության պահանջը՝ զենքի դիմելու օգնությամբ: Թավրիզի ենջումենը որոշում կայացրեց «պատերազմ հայտարարել արյունախում բռնակալի դեմ և գահազուրկ անել նրան»:

Դեռևս 1907 թ. ամռանը Թավրիզի դեմ էին հանվել հայտնի ավազակ Ռահիմ խանի ջոկատները, որոնց աջակցում էին տեղական թուրք-ազերիական ավատատերերը: Թեհրանում տեղի ունեցած հեղաշրջումից հետո Թավրիզում հետադիմական ուժերը սկսեցին աշխուժանալ: Կազմակերպվեց «Իսլամիե» կոչվող ենջումենը, որը միավորում էր հետադիմա-

կան ուժերին: 1908 թ. առաջին կեսին Թավրիզի փողոցներում ընթանում էին թեժ մարտեր ֆիդայիների և «Իսլամիե» էնջումենի ջոկատների միջև: Շահը Թավրիզ ուղարկեց կառավարական զորքեր, որի մասն էին կազմում նաև Թունուքաբունի Սըփահդարը իր հեծյալների խմբով, ինչպես նաև շահսևենյան, Ղարադաղի, Մակուի և Մարաղայի շրջանների ցեղապետերն իրենց հարդաներով: 1908 թ. հուլիսի վերջին Ռահիմ խանը, 500 ձիավորների գլուխ անցած, մուտք գործեց Թավրիզ, որտեղ սկսվեց բնակչության համատարած կողոպուտը: Թավրիզի հետադիմականները միացան Ռահիմ խանին: Քաղաքում սկսվեցին փողոցային բարիկադային մարտեր: Ժողովրդին սովով ընկճելու համար քաղաքի շուրջը հետադիմականները կտրել էին ճանապարհները, որ չթողնեն մթերք մտնի քաղաք:

Այդ կռիվների ընթացքում աչքի ընկան սահմանադրության կողմնակիցների ջոկատների երկու ղեկավարներ՝ Սաթթար խանը և Բաղիր խանը, որոնք թեև խանական ծագում չունեին, սակայն ժողովրդի կողմից որպես մեծարման նշան պարգևատրվել էին այդ կոչումով:

Հեղափոխականները ուխտել էին սահմանադրության վերահաստատման համար ապրել կամ մեռնել: Նրանց կարգախոսներն էին. «մահ կամ ազատություն», «սահմանադրություն կամ կործանում»:

Հարկ է նշել, որ ինչպես Իրանի մյուս շրջաններում, Ատրպատականում նույնպես, «սահմանադրություն» («մեշրութե») բառով, ինչպես նրբին կերպով դիտարկում է Ատրպետը, հասկանում էին շահի և նրա շրջապատողների անսահման կողոպուտը չափավորելու և կամայականություններից ազատվելու ձգտումը:

Համառ փողոցային մարտերից հետո՝ 1908թ. հոկտեմբերին, ֆիդայիների ջոկատները Թավրիզից դուրս քշեցին Ռահիմ խանի ավազակախումբը, որը փախուստի դիմեց դեպի Ղարադաղի լեռները: Այդ հաղթանակի մեջ կարևոր դեր ունեցավ նաև Արշակ Գաֆավյանի («Քեռի») մարտական խումբը:

Թավրիզի հեղափոխականների հաջողություններից ոգևորված՝ ապստամբության դրոշ են բարձրացնում նաև Ատրպատականի մյուս քաղաքները:

Հեղափոխական Թավրիզին չափազանց մեծ օգնություն էին ցուցաբերում անդրկովկասյան հեղափոխականները, մասնավորապես հայերն ու վրացիները: Նրանք կազմակերպում էին զենքի գաղտնի փոխադրում Իրան, Թավրիզ էին մեկնում Անդրկովկասում կազմակերպված բազմաթիվ զինված ջոկատներ և այլն: Հատկանշական է, որ Թավրիզի թուրք (ազերի) հեղափոխականները տասնյակ տարիներ այնպես էին կապված

տեղի հայերի հետ, որ Կովկասի թուրք-հայկական ընդհարումները ի վիճակի չեղան տեղափոխվել Ատրպատական: Նույնիսկ Նաջաֆի շիա կրոնապետները հեռագրերով հորդորում էին Ատրպատականի մահմեդական հեղափոխականներին՝ հարգանքով վերաբերվել Կովկասի հեղափոխականների նկատմամբ և միանալ նրանց հանուն մեծ նպատակի՝ «ղաջարների բռնակալ և ավազակաբարո դինաստիան տապալելու»:

Հետաղիմականները՝ «Իսլամիե» էնջումենը և այլն, իրենց պարտությունը վերագրեցին ինչպես տեղի, այնպես էլ Կովկասից եկած քրիստոնյաներին: Նրանք նույնիսկ ամենախիստ բովանդակությամբ նամակ գրեցին Թավրիզի հայոց առաջնորդարան՝ սպառնալով, թե հայերը խիստ պատասխանատվության կենթարկվեն, եթե իրենց քաղամասերից չվտարեն ինչպես հայ, այնպես էլ թուրք «ջանֆիդայիներին», որոնք,Սաթթար խանի ջոկատների հետ համատեղ, «մտքով, բազկով և գիտելիքներով նպաստում են շահի ընդդիմադիրներին»:

Հարկ է նշել, որ Իրանում հեղափոխական շարժումները սկսվելուց անմիջապես հետո ՀՅ Դաշնակցության կենտրոնը Թեհրան է ուղարկում Ռոստոմին, որն առաքելություն ուներ բանակցություններ վարելու սահմանադրական շարժման ղեկավարների հետ և նրանց առաջարկելու կուսակցության աջակցությունը: Բացի այդ, Թավրիզում սկսված սահմանադրական շարժման ղեկավարների կողմից եղած դիմումներին ընդառաջելով, ՀՅԴ Ատրպատականի կոմիտեն համաձայնվում է ոչ պաշտոնական կերպով իր բարոյական աջակցությունը բերել շարժումների կազմակերպման ամենադժվարին նախաքայլերին: Ընդ որում՝ հենց դաշնակցության ներսում Իրանի սահմանադրական շարժմանը մասնակցություն բերելու հարցի շուրջը ձևավորվում են երկու հակադիր տեսակետներ: Մի մասը գտնում էր, որ դաշնակցությունը պետք է «գործոն» մասնակցություն ունենա այդ շարժմանը, իսկ նրանց ընդդիմախոսների կարծիքով նրա մասնակցությունը պետք է սահմանափակվեր լոկ բարոյական աջակցության շրջանակներով:

Գործոն մասնակցության կողմնակիցները այն տեսակետին էին, որ ՀՅ Դաշնակցությունը՝ «իբրև հեղափոխական կուսակցություն», դավաճանած կլիներ իր կոչմանն ու նպատակին, եթե չմասնակցեր մի շարժման, որը նպատակադրում է բռնակալական լծից ազատել հեծող իր ժողովրդին: Նրանք պնդում էին, որ «ժողովրդավարական կարգեր և հավասարության սկզբունքներ դավանող» մի կազմակերպություն չի կարող հեռու մնալ մի հեղափոխությունից, որի հաղթանակով պիտի վերանային կամայականությունները ու բռնությունը մի երկրից, ուր գտնվում է

հայության մի հատվածը: Նրանք անհրաժեշտ էին համարում գործոն ու եռանդուն մասնակցություն բերել մի հեղափոխության, որ նպատակադրում է դարավոր լծի խորտակումը մի ժողովրդի վրայից, որի հետ կողք կողքի ապրում են հայ համայնքները և հավասարապես տառապում «իրենց ազգակից այդ ժողովրդի հետ»:

Նրանք հավատում էին, որ ազատ կարգերում, երկրում պիտի տիրեր արդար օրենքը, վերանար խտրականությունը, և ստեղծագործական աշխատանքի լայն ասպարեզ պիտի բացվեր երկրի բաղկացուցիչ բոլոր տարրերի, այդ թվում նաև հայության համար: Եվ հայությունը, օգտվելով սահմանադրության բարիքներից, երևան պիտի գար իր ընդունակություններով ու նախաձեռնություններով՝ հօգուտ երկրի ազգային-մշակութային ու տնտեսական զարգացման:

Եվ վերջապես, նրանց կարծիքով, հեռու մնալով շարժումներին գործոն մասնակցություն ունենալուց, հետագայում հայությունը պիտի անտեսվեր հաղթական ժողովրդի կողմից և մնար պարփակված մի նեղ շրջանում: Կրկնելով Ռոստոմի տեսակետը, գործոն մասնակցության կողմնակիցները նաև այն կարծիքն էին, թե Իրանի ազատագրական շարժումը և նրա հաջողությունը խորը ազդեցություն կունենա հարևան երկրների՝ Թուրքիայի և Ռուսաստանի վրա՝ այդ երկրներում ևս առաջ բերելով նման շարժումներ և հետևապես բարելավելով այնտեղ ապրող հայության դրությունը:

Բարոյական աջակցության կողմնակիցները նախ՝ ծրագրից չեղում և ուժերի վատնում էին համարում կուսակցության գործոն մասնակցությունը մի շարժման, որը ոչ մի կապ և առնչություն չունի կազմակերպության ծրագրի և ազգային նպատակի հետ: Այնուհետև՝ նրանք վաղաժամ էին համարում սահմանադրական կարգերը մի երկրի համար, որը շատ հետամնաց է, մոլեռանդ ու ճակատագրապաշտ. մի ժողովրդի, որը զուրկ է գաղափարական առաջնորդներից, ռազմական ոգուց և մանավանդ պայքարի տոկունությունից:

Գործոն մասնակցության հակառակորդների կարծիքով՝ այսպիսի աննպաստ պայմաններում սկսված շարժումը եթե անսպասելի կերպով հաջողություն էլ ունենա, ձեռք բերված սահմանադրական կարգերը ոչ միայն չեն գործադրվի կյանքում, այլև մի նոր միջոց կծառայեն տիրողների համար՝ ավելի ծանրացնելու ճնշումն ու տիրակալությունը ժողովրդի վրա:

Հարցին մոտենալով հայ համայնքների շահերի տեսանկյունից իրատես այդ փոքրամասնությունը նախատեսում էր, որ սահմանադրականների հաղթանակի դեպքում գործի գլուխ եկող ղեկավարությունը, տար-

ված նոր արթնացած ազգայնականության ոգով, գուցե բնականորեն դժվար դրություն պիտի ստեղծի օտարազգիների համար: Իսկ այդ դրությունն ավելի ևս պիտի ծանրանա հաղթական հոգևորականության կրոնական տարամերժ օրենքների ու դավանաբանական կարգադրությունների հետևանքով:

Բարոյական աջակցության կողմնակիցները, մատնանշելով իրականությունը, նաև շեշտում էին, որ հայի ու պարսիկի միջև գոյություն չունեին ոչ ազգամիջյան վեճեր , ոչ անհանդուրժելի խտրականություն և ոչ էլ այդ հողի վրա մեծ դեպքեր էին առաջանում, որպեսզի անհրաժեշտ լիներ սահմանադրական օրենքներով վերացնել այդ ճնշումները: Իսկ եթե կրոնական մոլեռանդության կամ գրգռումների հետևանքով թեթև դեպքեր էլ պատահում էին, դրանք անմիջապես հարթվում էին երկու ժողովուրդների ազդեցիկ անձանց միջամտության և կառավարության ձեռնարկած ազդու միջոցների շնորհիվ:

Նրանք ընդգծում էին առավելությունը պարսկահայության վայելած այն արտոնությունների, որոնք հնարավորություն էին տալիս հայ համայնքներին՝ ներքին ինքնավարությանը համապատասխանող ձևով վարելու իրենց ներքին ազգային, մշակութային, կրոնական և այլ գործերը՝ համաձայն իրենց օրենքների, ավանդույթների ու սովորությունների: Ներկայացնելով պարսկահայության առանձնաշնորհյալ այս վիճակը՝ բարոյական աջակցության կողմնակիցները կասկած էին հայտնում, որ հաղթական հոգևորականությունն ու գործի գլուխ եկող ղեկավարությունը, նոր արթնացող ազգայնականությամբ տարված, բնական բերումով կդառնան ազգայնամոլներ և «հավասարության» անվան տակ կխախտեն կամ նույնիսկ կվերացնեն դարերով սրբագործված այդ արտոնությունները և հայ համայնքներին կզրկեն իրենց ունեցած մշակութային և այլ իրավունքներից:

Բացի բարոյական այս վնասներից, նրանք երկյուղ էին հայտնում նաև ֆիզիկական վտանգի մասին, որ կարող էր սպառնալ պարսկահայությանը կամ նրա մի մասին միապետականների հաղթանակի դեպքում: Վերոհիշյալ հիմունքներով նրանք պնդում էին մնալ միայն շարժման բարոյական աջակցի դերում:

Սակայն նրանք մնացին որպես փոքրամասնություն և Իրանի շրջանային ժողովը իր մեծամասնությամբ որոշեց գործոն մասնակցություն ունենալ պարսիկ սահմանադրական շարժումներում (1906 թ.):

Նույնպիսի փոքրամասնության մեջ են մնում նաև Կովկասի շրջանների մի քանի ներկայացուցիչները Կովկասի Հ Յ Դ ռայոնական ժողո-

վում, որը տեղի ունեցավ Թիֆլիսում ընդհանուր ժողովի կապակցությամբ: Ժողովը ձայների մեծամասնությամբ կողմնակից է լինում պարսկական շարժումներին ունենալ գործնական մասնակցություն:

1907թ. փետրվարին Վիեննայում գումարվում է Հ Յ Դ չորրորդ ընդհանուր ժողովը, որի օրակարգի հարցերից մեկն էլ Իրանի սահմանադրական շարժումներին դաշնակցության մասնակցության հարցն էր: Երկար վիճաբանություններից հետո ընդհանուր ժողովը հաստատում է գործոն մասնակցության տեսակետը:

Ռուսաստանը որոշեց սեփական ուժերով ջախջախել Իրանի հյուսիսում ալեկոծվող հեղափոխությունը: Որպես դրա իրականացման արդյունք՝ նա առաջ քաշեց մի վարկած այն մասին, որ իբր Թավրիզում հեղափոխականները պատրաստվում են ջախջախել ռուսական հյուպատոսությունը, հայկական թաղամասերում ամբոխը պատրաստվում է կազմակերպել ջարդեր և այլն: Բացի այդ, օտարահպատակների կյանքի և գույքի պաշտպանության և առևտրական ճանապարհները բաց անելու պատրվակով 1909 թ. ապրիլի 25-ին ռուսական զորքերն անցան իրանական սահմանը և չորս օր հետո մտան Թավրիզ: Քաղաքի «Թոփխանե» հրապարակում նրանք բարձրացրին կախաղանների անտառ: Կախաղան բարձրացվածների մեջ քիչ չէին նաև հայ հեղափոխականները: Ռուսների թելադրանքով անլուր վայրագությամբ սահմանադրականներին սրածության է ենթարկում նաև երդվյալ միապետական, Ատրպատականի նահանգապետ Շոջա էդ Դոուլեն:

Ռուսական զորքերի հարվածների տակ հեղափոխական շարժումը ջախջախվում է ոչ միայն Թավրիզում, այլև ողջ Ատրպատականում: Բայց դրա փոխարեն գլուխ է բարձրացնում Ռեշտը՝ Գիլյանի կենտրոնական քաղաքը: Այստեղ սկսվում են թեժ ընդհարումներ հեղափոխական ու հակահեղափոխական ուժերի միջև: Ռեշտում եռանդուն հեղափոխական գործունեություն է ծավալում սահմանադրական շարժմանը զինվորագրված Եփրեմ խան Դավթյանը (ծնվել է 1868 թ. Գանձակ գավառի Բորսում գյուղում): Նա Ռեշտում կազմակերպում է հեղափոխական ջոկատներ (դրանց մեջ մեծ թիվ էին կազմում նաև հայերը), որոնք 1909 թ. փետրվարին բարձրացնում են ապստամբություն: Այդ ապստամբության ոգին Եփրեմ խանն էր, որի կազմած ծրագրով էլ իրականացվեց ապստամբությունը: Կռիվների ընթացքում Գիլյանի նահանգապետ Սարդար Աֆխամը սպանվեց: Հեղափոխականները գրավեցին Ռեշտի զինանոցը: Իշխանությունը քաղաքում անցավ Գիլյանի նահանգային ենջումենի ձեռքը: Ապստամբներին միացավ նաև Մոհամմադ Ալի

շահի նկատմամբ ատելությամբ լցված գիլյանական խոշոր կալվածատեր Սեփահդարը: Ռեշտին ու Էնզելիին տիրելուց հետո ապստամբներն իրենց իշխանությունը տարածում են ամբողջ Գիլյանի նահանգի վրա և կենտրոնական կառավարությունից պահանջում են վերահաստատել սահմանադրական կարգերը:

Գիլյանի ապստամբությունը ջախջախելու համար Մոհամմադ Ալի շահը որոշում է մի բանակ ուղարկել Ռեշտի վրա: Ենթադրելով, որ այդ բանակի՝ քաղաքին մոտենալու դեպքում կացությունը կարող է կտրուկ փոխվել հօգուտ միապետականների՝ Եփրեմ խանը առաջարկում է կանխել շահին և կազմակերպել արշավանք դեպի Թեհրան՝ Մոհամմադ Ալի շահին գահընկեց անելու նպատակով: Այդ արշավանքի հանդուգն պլանը մշակված էր անձամբ իր՝ Եփրեմ խանի կողմից:

1909 թ. գարնանը Եփրեմ խանի հրամանատարությամբ գործող ֆիդայիների ջոկատները հյուսիսից՝ Գիլյանի նահանգից, շարժվեցին դեպի Թեհրան: Միաժամանակ հարավից՝ Սպահանից, բախտիարական ցեղերի մի մասը, որը հարել էր սահմանադրական շարժմանը, իրենց առաջնորդներ եղբայրներ Սամսամ էս Սալթանեի և Սարդար Ասադի գլխավորությամբ շարժվեցին դեպի մայրաքաղաք: 1909 թ. հուլիսին գիլյանական ֆիդայիներն ու բախտիարական ջոկատները Թեհրանի մատույցներում միավորվեցին: Պարսկական կոզակական գումարտակի հետ երկօրյա մարտերից հետո՝ հուլիսի 13-ին, հեղափոխական ուժերը որպես հաղթողներ, մուտք գործեցին Թեհրան: Մայրաքաղաքի բնակչությունը ցնծությամբ դիմավորեց նրանց: Մոհամմադ Ալի շահը և նրա մերձավորները քաքնվեցին ռուսական դեսպանատան ամառային նստավայր Զերգենդեյում:

Հուլիսի 16-ին գումարվեց «Ազգային խորհուրդ» («Մեջլիս-ե սաալի»), որի կազմի մեջ մտան ֆիդայական և բախթիարական ջոկատների հրամանատարները, այդ թվում նաև Եփրեմ խանը, նախկին մինիստրներ, մոջթեհիդներ, առաջին մեջլիսի պատգամավորներ, խոշոր առևտրականներ, սարրաֆներ (լումայափոխներ) և այլն: «Ազգային խորհուրդը» Մոհամմադ Ալի շահին գահընկեց հայտարարեց և շահ հռչակեց նրա 14-ամյա որդուն՝ Ահմեդին (1909-1925): Նկատի ունենալով նոր շահի անչափահաս լինելը՝ նրա խնամակալ նշանակվեց հնագույն ղաջարական իշխանազուն Միրզա Ալի Ռեզա Ազուդ էլ Մոլքը: Կազմվեց ժամանակավոր կառավարություն, որի մեջ Սեփահդարը նշանակվեց ռազմական մինիստր (այդ կառավարությունը վարչապետ չուներ, միայն 1909 թ. հոկտեմբերի սկզբին Սեփահդարը նշանակվեց վարչապետ), Սարդար Ասադը՝ ներքին գործերի մինիստր, Նասր-օլ-Մոլքը՝ արտաքին գործերի մի-

նիստը, իսկ Եփրեմ խանը՝ ժամանակավոր կառավարության զինված ուժերի հրամանատար, իսկ ապա՝ Թեհրանի ոստիկանության պետ: Հայտարարվեց սահմանադրության վերականգնման և առաջիկայում երկրորդ մեջլիսի գումարման մասին: Քաղաքական կազմակերպությունները, թերթերը և այլն վերսկսեցին իրենց գործունեությունը:

Մայրաքաղաքը հեղափոխականների ձեռքն անցնելուց հետո ևս նահանգներում միապետականները դեռ շարունակում էին դիմադրությունը: Եփրեմ խանին և բախտիարական խան Սարդար Բահադուրին հանձնարարվում է մեկնել Ատրպատական և ընկճել հակահեղափոխական ուժերին: Եփրեմ խանի հրամանատարությամբ գործող ուժերը ջախջախում են ղարադաղցի Ռահիմ խանի ավազակախմբերը, խռովարար շահսևենյան ցեղերի հակահեղափոխական ուժերը, ստիպում են հնազանդվել Մուղանի՝ ինքնագլխության ձգտող ցեղապետներին և իրար հետևից Ատրպատականի քաղաքներն ու շրջանները մաքրելով հակահեղափոխական ուժերից՝ Իրանի հյուսիսում վերահաստատում սահմանադրական կարգերը:

1909 թ. նոյեմբերի 17-ին իր աշխատանքները սկսեց երկրորդ մեջլիսը: Նրա որոշմամբ՝ ղաջարական դինաստիան մնաց անձեռնմխելի: Մոհամմադ Ալի շահի համար սահմանվեց ցմահ թոշակ՝ տարեկան 100 հազար թուման գումարով: Ռուսաստանը նրան հատկացրեց քաղաքական ապաստան՝ որպես բնակության վայր որոշելով Օդեսա քաղաքը:

Կառավարության գլուխ կանգնած Սեփահդարը և Սարդար Ասադը գործակցության հրավիրեցին նախկին միապետական իշխանության բազմաթիվ գործիչների՝ տեղ գրավելու կառավարության կազմում: Վերջիններս հնարավորություն էին ստացել սահմանադրականի պատմուճանով կրկին ասպարեզ գալու՝ շարունակելու համար իրենց նախկին գործելակերպը հօգուտ հին կարգերի վերականգնման: Քաղաքական կուսակցությունների, հռոսանքների և մեջլիսի ղեկավարությունը ևս, նահանջելով հեղափոխական դիրքերից, թույլ էին տալիս, որ նախկին իշխանության կարկառուն դեմքերից շատերը պետական ապարատում զբաղեցնեն բարձր դիրքեր:

Իշխանությունների այս գործելակերպի դեմ պայքարող հայրենասերներից կազմված խումբը, որը փոքրամասնություն էր կազմում, ի վիճակի չեղավ շտկելու դրությունը: Այդ պարագաներում Եփրեմ խանը կրկին լծվում է եռանդուն գործունեության՝ աշխատելով հասկացնել կառավարության ղեկավարներին, որ նախկին միապետականներին գործի գլուխ բերելը սպառնալիք է հանդիսանում սահմանադրական կարգերի

համար: Այսպիսով՝ Եփրեմ խանի և կառավարության ղեկավարների միջև ստեղծվում է սուր առճակատում: Վերջիններս սկսում են առիթներ փնտրել նրան ասպարեզից հեռացնելու համար:

Մյուս կողմից՝ ռուսները պատրվակ էին փնտրում, որպեսզի Ղազվինում կենտրոնացված իրենց բանակը շարժեն դեպի Թեհրան և մայրաքաղաքը ևս վերցնեն իրենց հսկողության տակ: Այդ նպատակով «օտարահպատակների շահերի պաշտպանության» պատրվակով կառավարությանը ներկայացնում էին վերջնագրեր, կատարում էին զորքերի շարժումներ և այլն:

Արտաքին քաղաքականության բնագավառում նոր կառավարությունը վարում էր Ռուսաստանի և Անգլիայի միջև խուսանավելու քաղաքականություն: Միաժամանակ նա աշխատում էր հենվել ԱՄՆ-ի և Գերմանիայի վրա՝ ենթադրելով, որ այդ հեռավոր ու «չեզոք» երկրները կարելի է հակադրել Անգլիային և Ռուսաստանին: 1910 թ. վերջին իրանական կառավարությունը դիմեց ԱՄՆ-ի կառավարությանը՝ խնդրելով ֆինանսական խորհրդականներ ուղարկել Իրանի ֆինանսական համակարգը վերակառուցելու համար: 1911 թ. հունվարին ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը որոշեց Իրան ուղարկել հինգ ամերիկյան խորհրդականների՝ Մորգան Շուսթերի գլխավորությամբ:

Օդեսայում գտնվող նախկին շահը՝ Մոհամմադ Ալին, Ռուսաստանի հովանավորությամբ պատրաստություններ էր տեսնում շահական գահը վերստին հետ ստանալու ուղղությամբ: Նրա գործակալության հրահրումով Իրանի հյուսիսում սկսվեցին միապետականների խռովություններ: Ազերի-բյուրք հետադեմ ավատատերերից մեկը՝ Ատրպատականի նահանգապետ Շոջա էդ Դոուլեն, իր ջոկատներով հանդես եկավ կառավարության դեմ՝ շրջապատելով Թավրիզը: Քրդստանում բացահայտ կերպով կառավարության դեմ ելույթի էր պատրաստվում նախկին շահի եղբայր Սալար էդ Դոուլեն:

1911թ. հուլիսին ցարական իշխանությունների աջակցությամբ Մոհամմադ Ալին Բաքվից ռուսական «Խրիստոֆորս» նավով անցավ Կասպից ծովը և ժամանեց նրա հարավ արևելյան ափի մոտ գտնվող Գյումուշ թեփե վայրը: Այստեղ նրան միանում են իր կրտսեր եղբայր Շոա էս Սալթանեն, ռազմական մինիստր Ամիր Բահադուր Ջանգը, անվանի զորահրամանատարներ Էրշադ էդ Դոուլեն, Ռաշիդ-ե Մոլքը և ուրիշներ: Շահը իր հետ բերում էր նաև 70 արկղ զենք ու ռազմամթերք, որ գնել էր Վիեննայում, ինչպես նաև ռուս ռազմագետների կողմից մշակած պատերազմական պլանը:

Նախկին շահին անմիջապես շրջապատում են թուրքմեն ցեղի հազարավոր ձիավորներ, պետական զորքի միավորները և կամավորների բազմաթիվ խմբեր: Թուրքմեններից բացի, երկրի հյուսիս արևելյան շրջանի վաչկատուն մյուս ցեղերը ևս իրենց պատրաստակամությունն են հայտնում ծառա-

յելու շահին:

Գյումուշ թեփեից Մոհամմադ Ալին իր մարդկանց միջոցով գրություններ էր ուղարկում իր կողմնակիցներին՝ շոայլ խոստումներ տալով և հրահանգելով ջանքեր գործադրել իր նպատակի իրագործման համար: Միաժամանակ նախկին շահի գործակալները քաղաքներում աշխատում էին գրգռումներ առաջացնել ժողովրդի մեջ, հրահրել շարժումներ, իսկ լեռնային շրջաններում վաչկատուն ցեղերին դրդում էին խռովությունների և ըմբոստության: Միապետականների կողմից ստեղծվում է նաև մի գաղտնի միություն՝ «Էթթեհադ-ե էսլամ» («Իսլամի միություն») անունով, որը հանդիսանալու էր հեղաշրջումը ղեկավարող կենտրոն:

Այդ բոլոր ուժերին հավաքելով իր շուրջը՝ նախկին շահը շարժվեց դեպի Թեհրան: Ընդ որում՝ նրա բանակում միայն թուրքմենական ցեղերից հավաքագրված մարդկանց թիվը, որոնց սովորական զբաղմունքը ավազակությունն էր, կազմում էր 30 հազարից ավել մարդ: Նրանք միացել էին շահին ոչ թե միայն այն պատճառով, որ առատորեն կաշառվել էին նրա կողմից, այլև այն բանի համար, որ հույս ունեին արշավանքը դեպի մայրաքաղաք օգտագործել որպես հարմար առիթ կողոպուտների համար:

Նախնական պայմանավորվածությամբ՝ Քրդստանում կառավարության դեմ խռովություն բարձրացրեց նաև նախկին շահի եղբայր, «դիվահար իշխանազուն» մականունը կրող Սալար էդ Դոուլեն, իսկ Թավրիզում խռովարարներին ղեկավարում էր նահանգապետ Շոջա էդ Դոուլեն: Հակահեղափոխական ուժերը ակտիվացել էին նաև Գիլյանում, Յեզդում և այլ վայրերում: Սահմանադրականների ճակատում տիրում էին խուճապն ու խուսալքությունը: Քաղաքական կուսակցություններն ու խմբավորումները գտնվում էին փոխադարձ պայքարի մեջ: Մեջլիսը անգործության էր մատնված: Ժողովուրդը հիասթափված էր, բարոյալքված և համակված պարտվողական տրամադրությամբ: Վարչապետ Սեփահդարը հեռացել էր մայրաքաղաքից և ապրում էր մոտիկ Զարգանդե գյուղում, որը ռուսական դեսպանատան ամառանոցն էր: Նրա նկատմամբ կային լուրջ կասկածներ, որ նա Մոհամմադ Ալիի վերադարձի դեպքում կարող է անցնել նրա կողմը: «Հեռատես» ուներները հեռանում էին արտասահման: Նախկին շահի վերադարձի ազդանշանով երկրի համարյա բոլոր վայրերում մեջտեղ են գալիս նաև նախկին իշխանավորները, խաները ու սահմանադրության բոլոր թշնամիները: Ստեղծվել էր մեծագույն սպառնալիք սահմանադրական կարգերի համար: Հակահեղափոխական ու միապետական ուժերի ջախջախման գործի նախաձեռնությունը այդ համընդհանուր հուսալքության մթնոլորտում իր վրա է վերցնում Եփրեմ խանը: Նրա կազմակերպչական տաղանդի շնոր-

հիվ շուտով կազմվում է «հեղափոխական բանակ», որը բաղկացած էր Եփրեմ խանի տրամադրության տակ եղած հատուկ զորախմբից, հայ և պարսիկ ազատական կամավորներից, Մոիզ Սալթանեի ջոկատներից և բախթիարական հեծյալներից՝ Սարդար Բահադուրի գլխավորությամբ: Այս միացյալ ուժերը 1911 թ. օգոստոսին ջախջախիչ պարտության են մատնում նախկին շահի կողմնակիցներին: Խռովարարների բանակի հրամանատար էր շաղ էդ Դոուլեն գերի է ընկնում և Եփրեմի ու Սարդար Բահադուրի հրամանով գնդակահարվում:

Այդ հաղթանակի հիմնական պատիվը վերագրելով Եփրեմ խանին՝ Իրանում ամերիկացի ֆինանսական խորհրդական Մորգան Շուսթերը գրել է. «Եփրեմ խանը ոչ միայն մայրաքաղաքը պաշտպանեց գահընկեց շահի զորքերի վտանգից, այլև փրկեց սահմանադրական կարգերը»: Եվրոպական դիվանագիտական շրջանակներն ու մամուլը այդ հաղթանակի առթիվ Եփրեմ խանին անվանեցին «Պարսկաստանի Գարիբալդի», «արևելյան Նապոլեոն», «բացառիկ ռազմավար» և այլն: Իրանի շինթական մեծ կրոնապետր հատուկ հրամանագրով իր օրհնությունը շնորհեց Եփրեմ խանին՝ նրա «առանձնահատուկ հայրենասիրության» համար:

Այնուհետև 1911 թ. աշնանը Եփրեմն ու իր զինակիցները զենքը ուղղեցին նախկին շահի կրտսեր եղբոր՝ Սալար էդ Դոուլեի դեմ, որին հաջողվել էր քելհոյի, սանջաբի, ջաֆ, լուր և դաշղայի վաչկատուն ցեղերից կազմակերպել մի հսկայական բանակ, որը մտադիր էր շարժվել Թեհրանի վրա և տապալել սահմանադրական վարչակարգն ու գահի վրա վերականգնել Մոհամմադ Ալի շահին:

Եփրեմ խանը Սալար էդ Դոուլեի դեմ է հանում հայկական զորախումբը և բախթիարական հեծյալներին Սարդար Բահադուրի և Սարդար Մոհթաշամի հրամանատարությամբ, որոնք 1911 թ. սեպտեմբերին ջախջախում են Սալար էդ Դոուլեի «անպարտելի» հորջորջված բանակը:

Մոհամմադ Ալին ստիպված էր մազապուրծ փախչել Ռուսաստան: Նախկին շահի ու իր եղբայրների պարտությունից ու փախուստից հետո մեջլիսն օրենք ընդունեց՝ իբրև պատիժ նրանց դավաճանության հարքունիս բռնագրավել նրանց կալվածքներն ու ստացվածքները:

Եփրեմ խանը զոհվեց Սուջե գյուղի մոտ (Համադանից ոչ հեռու) հակահեղափոխական ուժերի դեմ ճակատամարտերից մեկում 1912 թ. մայիսի 6-ին: Իրանական մեջլիսը հետմահու նրան շնորհեց «սարդարի» (զորահրամանատար) աստիճան և այդ աստիճանին համապատասխան ականակոռ մի սուր:

Այս իրադարձություններից հետո, 1911թ. նոյեմբերի 16-ին, Պետեր-

բուրգը Թեհրանում իր դեսպանորդի միջոցով Իրանին ներկայացրեց իր կոպտությամբ աննախադեպ մի վերջնագիր-նոտա: Նրանում առաջ էին քաշվում հետևյալ պահանջները. անհապաղ իր զբաղեցրած պաշտոնից հեռացնել Մորգան Շուսթերին և նրա աշխատակից Լեկոֆրին, այսուհետև իրանական ծառայության չվերցնել օտարերկրացիների առանց Թեհրանում ռուսական և անգլիական դեսպանությունների նախնական համաձայնության և այլն:

1911 թ. նոյեմբերի 18-ին ձայների ճնշող մեծամասնությամբ իրանական մեջլիսը մերժեց ռուսական վերջնագիրը: Նույն օրը երեկոյան մայրաքաղաքում սկսվեցին հանրահավաքներ և քայլարշավներ, որոնց մասնակիցները հանգերգում էին «մահ կամ ազատություն», «մահ կամ անկախություն» կարգախոսները: Սկսվեց ռուսական ապրանքների բոյկոտը: Նույն օրը իր տան մոտ երկու ֆիդայիների կողմից գնդակահարվեց ռուսական դեսպանության հետ սերտ կապերի մեջ գտնվող անվանի պետական գործիչ Ալա օդ Դուլեն: Դեկտեմբերի 7-ին և 8-ին Թավրիզում, Ռեշտում և Էնզելիում գտնվող ռուսական զորամասերը և հիմնարկությունները զինված հարձակման ենթարկվեցին ֆիդայիների կողմից:

Նման պայմաններում 1911 թ. դեկտեմբերին Ռուսաստանը կազմակերպեց իր երկրորդ ինտերվենցիան Իրան՝ ռազմակալման ենթարկելով այդ երկրի հյուսիսային շրջանները՝ Ատրպատականը, Գիլյանը և Խորասանը: Թեև ռուսական զորքերը հանդիպեցին կատաղի դիմադրության, սակայն ուժերը անհավասար էին: Ամենուրեք ֆիդայական ջոկատները զինաթափվեցին: Սկսվեցին գնդակահարություններ ու հալածանքներ: Ռազմաղաշտային դատարանների որոշմամբ Անդրկովկասից եկած հեղափոխականներն աքսորվեցին Սիբիր: Իրանական կառավարության անունից Թեհրանում ռուսական դեսպանորդին հանձնվեց մի նոտա այն մասին, որ ռուսական վերջնագրի բոլոր կետերը ընդունվում են իրանական կառավարության կողմից:

Այս իրադարձություններով իր ավարտին հասավ 1905-1911 թթ. սահմանադրական շարժումն Իրանում, որը գրականության մեջ անվանվում է նաև հեղափոխություն: Ամբողջ ծավալով վերականգնվեց ֆեոդալական ազնվականության գերագույն իշխանությունը: Իրանական սահմանադրական շարժման գլխավոր արդյունքը հանդիսացավ այն, որ երկիրը բացարձակ միապետությունից վերածվեց սահմանադրական միապետության: Այնուհետև Իրանում ստեղծվեց խորհրդարան՝ մեջլիս: Անտարակույս, սահմանադրական շարժումն Իրանում այդ երկրի պատմության մեջ ունեցավ չափազանց մեծ նշանակություն: Այդ շարժումն

արթնացրեց Իրանը, հզոր զարկ տվեց իրանական ժողովրդի քաղաքական հասունացմանը և առողջ ազգայնականության վերելքին, ուժգին հարված հասցրեց տիրապետող ավատական կարգերին և իրեն սպառած ղաջարական միապետությանը: Ճիշտ է, սահմանադրական կարգերը անկարող եղան կտրուկ կերպով փոխելու երկրում տիրող ընդհանուր սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակը, սակայն դրանք կարողացան ինքնավստահության ու ինքնապաշտպանության ոգի ներշնչել մինչ այդ բացարձակապես անշարժ և ամենազոր ճակատագրի պաշտամունքին հանձնված զանգվածներին:

Այդ բոլորով հանդերձ, Իրանում սահմանադրական շարժումը հետագա զարգացում չստացավ: Դրան գլխավորապես խոչընդոտեցին Առաջին համաշխարհային պատերազմի իրադարձությունները:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

ԻՐԱՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Իրանը համարյա ամբողջապես գտնվում էր Անգլիայի և Ռուսաստանի տնտեսական և քաղաքական ազդեցության ներքո: Բրիտանական նավատորմի՝ հեղուկ վառելիքի անցնելու կապակցությամբ նավթը ձեռք բերեց ռազմավարական հումքի նշանակություն: Անգլիացիները Խուզիստանում ընդլայնեցին հարավիրանական նավթի հանույթը: 1908 թ. նրանք Մասջեդ-ե Սուլեյման շրջանում հայտնաբերեցին նավթի հարուստ պաշարներ: 1909 թ. կազմակերպվեց Անգլո-պարսկական նավթային ընկերությունը (1935 թ. այն վերանվանվեց Անգլո-իրանական նավթային ընկերության), որը վերածվեց համաշխարհային տրեստի: Աբադան կղզու և հարավային մյուս շրջանների նահանգապետները նշանակվում և ազատվում էին անգլիացիների ցանկությամբ: Ընկերությունն ուներ իր ոստիկանությունը, իր դպրոցները և ինքնավար այլ կառույցներ: Շահ-շահական բանկի հետ միաժամանակ Անգլո-պարսկական նավթային ընկերությունը վերածվեց Իրանում բրիտանական կառավարության կարևորագույն լծակներից մեկի:

Ցարական Ռուսաստանի զորքերը, որոնք 1911 թ. ռազմակալման էին ենթարկել Հյուսիսային Իրանը, այդպես էլ դուրս չեկան այնտեղից: Նրանք տեղակայված էին Ատրպատականի համարյա բոլոր հանգուցային կենտ-

րոններում՝ Թավրիզում, Խոյում, Սալմաստում, Մարանդում և այլն: Հարավում՝ Կարուն գետի վրա, երթևեկում էին բրիտանական գետային ռազմանավերը, իսկ Անգլո-պարսկական նավթային ընկերության գործունեության գոտու կարևորագույն քաղաքներում՝ Ահվազ, Մոհամմերա (ներկայումս՝ Խորրամշահր) և այլն, տեղակայված էին անգլիական զորքեր:

Պատերազմի նախօրյակին ռազմական առումով Իրանը աչքի չէր ընկնում ոչ իր հզորությամբ և ոչ էլ զինված ուժերի մարտունակությամբ, եթե մանավանդ այդ չափանիշները համեմատության մեջ դրվեին հարևան Ռուսաստանի և Օսմանյան կայսրության հետ: Իրանում առավել մարտունակ զորամասեր էին հանդիսանում հյուսիսում՝ 8 հազար հոգուց բաղկացած կոզակական գումարտակը, որի հրամանատարները ռուս սպաներ էին և հարավում՝ ժանդարմական զորամասերը (մոտ 7 հազար մարդ) շվեդական սպաների հրամանատարությամբ: Մնացած զորքերը բաղկացած էին աշխարհազորից և քոչվորական ցեղերից բաղկացած հեծելազորից, որոնք աչքի չէին ընկնում իրենց մարտունակությամբ ու կարգապահությամբ:

1912 թ. փետրվարի 18-ին Անգլիայի և Ռուսաստանի ճնշման ներքո իրանական կառավարությունը ստիպված էր պաշտոնապես ճանաչել 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագիրը Իրանը ազդեցության գոտիների բաժանելու վերաբերյալ: Փոխարենը նա Անգլիայից ու Ռուսաստանից խնդրեց նոր փոխառություններ:

Համաշխարհային պատերազմի նախօրեին Իրանում նշանակալից չափով ամրապնդվել էին նաև Գերմանիայի դիրքերը: Իրանի արտաքին առևտրի մեջ Գերմանիան արդեն զբաղեցնում էր երրորդ տեղը Ռուսաստանից ու Անգլիայից հետո: Մի շարք քաղաքներում բացվեցին գերմանական ընկերությունների բաժանմունքներ: Պարսից ծոցում եռանդուն գործունեություն էր ծավալել գերմանական նավային ընկերությունը, որը ծովային փոխադրումների բնագավառում զբաղեցրեց երկրորդ տեղը՝ զիջելով միայն Անգլիային: 1913-1914 թթ. գերմանական հետախույզները վխտում էին Իրանում: Այստեղ գերմանական հետախուզությունը սերտորեն համագործակցում էր թուրքական գաղտնի ծառայությունների հետ: Գերմանա-թուրքական գործակալության գործողությունները որոշակի ծրագրով ղեկավարելու նպատակով, Բեռլինը 1914թ. սկզբներին Թավրիզում բաց արեց հյուպատոսություն, որը ղեկավարելու էր Մերձավոր ու Միջին Արևելքի լավագույն գիտակ Լիտտենը:

Համաշխարհային պատերազմի նախօրյակին Իրանի վաճառականության, մտավորականության և ավատական դասի շրջանում սկսեց իր

համար ուղի հարթել արտաքին քաղաքական նոր կողմնորոշում՝ հանդեպ Գերմանիան:

Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունները գլխավորապես հենվում էին Իրանի ազգայնական շրջանների, ինչպես նաև հոգևորականության, վաճառականական դասի, մտավորականության, թուրքասիրական ձգտումներ ունեցող շահական աստիճանավորների, «Դեմոկրատական կուսակցության» («Դեմոքրաթ-ե ամյուն») գործիչների վրա և այլն, որոնք բոլորն էլ ունեին շեշտված հակառուսական և հակաանգլիական տրամադրություններ: Մեջլիսում մեծամասնություն կազմող Դեմոկրատական կուսակցության օրգան «Իրան-ե նոու» թերթը այն միտքն էր զարգացնում, որ գերմանացիներն Իրանում հետապնդում են բացառապես առևտրական շահեր, ձեռնպահ են մնում Իրանի անկախության նկատմամբ ոտնձգություններ անելուց և, ընդհակառակը, ամեն կերպ պաշտպանում են իրանական ժողովրդի անկախության ձգտումները: Դեմոկրատների ղեկավարներ Սեյեդ Հասան Թաղի զադեն, Հոսեյին Ղոլի խան Նավաբը, Սուլեյման Միրզան, Վահիդ-օլ-Մոլքը, Սեյեդ Մոհամմադ Ռեզա Մոսավարը և ուրիշներ գտնում էին, որ Իրանը Թուրքիայի օրինակով պետք է անցնի Գերմանիայի կողմը և պատերազմ հայտարարի Ռուսաստանին ու Անգլիային:

Թուրքական գործակալների ղեկավարությամբ Իրանի բազմաթիվ քաղաքներում՝ Թավրիզում, Ռեշտում, Սպահանում և այլուր, ստեղծվեցին «Էթթեհադ-ե էսլամ» («Իսլամի միասնություն») անվամբ պանիսլամիստական կոմիտեներ, որոնց հիմնական պահանջն էր «սրբազան պատերազմը» («ջիհադ») Ռուսաստանի դեմ՝ հանուն «իսլամի պաշտպանության»:

Օսմանյան կայսրությունը հատկապես մեծ հետաքրքրություն էր դրսևորում Ատրպատականի նկատմամբ, որը, բացի իր ռազմավարական կարևոր նշանակությունից, կոչված էր կարևոր դեր խաղալու երիտթուրքական կառավարող շրջանների պանթուրքիստական հեռահար ծրագրերում: Պատերազմի նախօրյակին Ատրպատականում քայքայիչ գործունեություն ծավալելու նպատակով Ստամբուլը Իրան ուղարկեց «Իթթիհադ վե Թերաքքը» կուսակցության՝ Ատրպատականի և Արևելյան Կովկասի գործերի գլխավոր հրահանգիչ Էմեր Նաջի բեյին, որն ուներ հետախուզական աշխատանքի մեծ փորձ:

1914 թ. օգոստոսի 1-ին պայթեց Առաջին համաշխարհային պատերազմը: Միանգամայն ակնհայտ էր, որ այն չէր կարող շրջանցել Իրանը, մանավանդ որ պանթյուրքիզմի գաղափարներով տարված երիտթուրքերը երազում էին ստեղծել «Մեծ Թուրքիա»՝ մի նոր համաշխարհային պե-

տություն, որի սահմանները ծավալվելու էին Ասիայի արևմտյան մասից ու Աֆրիկայից մինչև Չինաստան:

Օսմանյան կայսրության և Գերմանիայի կառավարող շրջանները Իրանին տալիս էին առանձնահատուկ նշանակություն: Պատահական չէ, որ արդեն 1914 թ. սեպտեմբերից սկսած՝ Օսմանյան կայսրությունը Ատրպատականում ու Իրանական Քրդստանում թուրք-քրդական ջոկատների օգնությամբ հրահրեց «փոքր պատերազմ»: Ապագա պատերազմում «անբարեհույս տարրերից» իրենց թիկունքն ամրապնդելու նպատակով թուրքերի կողմից կազմակերպված «չեթայական» խմբերն ու «Համիդիե գնդերը» սկսեցին դաժանորեն դատաստան տեսնել թուրք-իրանական սահմանամերձ շրջանների քրիստոնյա բնակչության, մասնավորապես հայերի և ասորիների հետ:

Թեև այսպես կոչված «Աղրբեջանական ճակատը» ամրապնդելու նպատակով Ռուսաստանը ձեռնամուխ եղավ մի շարք ակտիվ միջոցառումների (ձերբակալվեցին թուրքերի և գերմանացիների հետ կապված մի շարք իրանական ավատատերեր, ռուսական կողմնորոշում ունեցող տեղական բնակչությանը, հատկապես հայերին ու ասորիներին, բաժանվեց որոշ քանակությամբ զենք և այլն), սակայն միանգամայն ակնհայտ էր, որ ուշացումով կատարված այդ միջոցառումները բավարար չէին Իրանը թուրքական ներխուժումից պաշտպանելու համար:

Ռուսաստանին լրջորեն անհանգստացնում էր, որ Մոսթոուֆի-օլ-Մամալեքի կառավարությունը, որը կազմվել էր 1914 թ. օգոստոսին, կայուն դիրք չէր գրավում պատերազմող խմբավորումների նկատմամբ և վարում էր «անդունդի եզրին» հավասարակշռելու քաղաքականություն, իսկ մեջլիսում «դեմոկրատները», որոնք ունեին զգալի մեծամասնություն, ըստ էության կապված էին գերմանացիների հետ:

Երիտթուրքական կառավարությունը եռանդուն ջանքեր էր գործադրում Իրանի հետ դաշնակցային պայմանագիր («տարածաշրջանային մահմեդական դաշինք») կնքելու ուղղությամբ: Այդ նպատակով 1914 թ. հոկտեմբերին Ստամբուլում բանակցություններ սկսվեցին մի կողմից՝ մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի, Էնվերի ու Թալաաթի, իսկ մյուս կողմից՝ Ստամբուլում իրանական դեսպան Միրզա Մահմուդ խանի միջև: Սակայն այդ բանակցությունները դրական արդյունքներ չտվեցին, որովհետև շահը խոհեմորեն գերադասեց ձեռնպահ մնալ Օսմանյան կայսրության հետ դաշնակցելուց և կենտրոնական պետությունների խմբավորման կազմում պատերազմի մեջ ներգրավվելուց:

Իրանական տարածքում Օսմանյան կայսրությունը Ռուսաստանի

դեմ ռազմական գործողություններ սկսեց փաստորեն 1914 թ. հոկտեմբերի 12-ից, այսինքն՝ մինչև գերմանա-թուրքական նավատորմի կողմից ռուսական սևծովյան նավատորմի վրա հարձակվելը (հոկտեմբերի 29-ին) ու Ռուսաստանին պատերազմ հայտարարելը: Այսպիսով, ըստ էության, հենց Իրանական Քրդստանում և ոչ թե Սև ծովում, որտեղից համաշխարհային պատերազմի առաջին կրակոցները Մերձավոր Արևելքում:

1914 թ. նոյեմբերի 2-ին՝ ճիշտ այն օրը, երբ Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը, Իրանի Ահմեդ շահ Ղաջարը հրապարակեց ֆիրման՝ պատերազմում Իրանի կողմից չեզոքություն պահպանելու մասին: Սակայն Իրանի բարձրագույն շիիթական հոգևորականությունը համաձայն չէր շահի այդ դիրքորոշման հետ, ուստի 1914 թ. նոյեմբերի 13-ին հրապարակեց ֆեթվա այն մասին, որ Իրանը պետք է համագործակցի Գերմանիայի և նրա դաշնակիցների հետ: Ֆեթվայում ասվում էր. «Երբեք լսված չէ, որ Գերմանիան, իր կազմավորման օրվանից սկսած, երբևիցե ոտնձգություն կատարած լինի մահմեդական երկրի նկատմամբ: Նա երբեք պատերազմի մեջ չի մտել իսլամական որևէ երկրի հետ: Ուստի մահմեդականները, Ղուրանի համաձայն, պետք է բարեկամություն անեն գերմանացիների հետ»: Ֆեթվայում նշվում էր, որ Իրանի կողմից չեզոքության պահպանումը հնարավոր չէ, որովհետև չի կարելի երկու պատերազմող կողմերի հետ էլ բարեկամ լինել: «Մենք կա՛մ պետք է հրաժարվենք մեր կրոնից, կա՛մ չեզոքությունից, որը կատարելապես անօգուտ է իսլամի համար»,- նշում էին շիիթական բարձր կրոնական հեղինակությունները: «Իմացեք,- շեշտվում էր ֆեթվայում,- որ եթե մենք իսկապես օգնենք Թուրքիային և հարձակվենք հավատի թշնամիների վրա, մենք կհասնենք նրան, որ կբավարարենք աստծո կամքը, կամրապնդենք մեր ինքնությունը, կազատվենք այլադավանների իշխանությունից, կընդարձակենք մեր պետության սահմանները»:

Այդ ֆեթվան և առհասարակ չեզոքությունից հրաժարվելու կոչերը լրջորեն անհանգստացրին Ռուսաստանին, որին անհրաժեշտ էր ամեն գնով պահպանել Իրանի չեզոք դիրքը: Ուստի Ռուսաստանի արտաքին գործերի գերատեսչության ղեկավար Ս. Դ. Սազոնովը Լոնդոնում հարց բարձրացրեց, թե անհրաժեշտ է հասկացնել շահական կառավարությանը, որ Թուրքիայի հետ ռազմական բախման դեպքում Ռուսաստանին և Անգլիային աջակցություն ցույց տալու դիմաց այս երկու պետությունները կերաշխավորեն Իրանի տարածքային ամբողջականությունը և, բացի այդ, նրան կհանձնեն շիիթների սրբազան քաղաքներ Քարբալան և Նաջաֆը: Սազոնովի կարծիքով՝ միաժամանակ անհրաժեշտ էր խստո-

րեն նախազգուշացնել շահական կառավարությանը, որ հակառակ դեպքում Իրանն իր վրա կհարուցի Ռուսաստանի և Անգլիայի զայրույթը:

1914 թ. նոյեմբերի 21-ին օսմանյան բանակը Ծյուքրի փաշայի և գերմանական գեներալ Լիման ֆոն Սանդերսի հրամանատարությամբ մի քանի վայրերից միաժամանակ (Մոսուլ, Սոուջբալաղ, Խոյ) ներխուժեցին Իրանի տարածքը և ռազմական գործողություններ ծավալեցին ռուսական «աղրբեջանական ջոկատի» դեմ:

Թուրքական բանակի հետ սերտ համագործակցությամբ գործում էին նաև քրդական անկանոն «Համիդիե գնդերը», որոնք ասպատակ էին սփռում սահմանամերձ վայրերում:

Վարչապետ Մոսթոուֆի-օլ-Մամալեքի կառավարությունը ոչ միայն չփորձեց դիմադրություն կազմակերպել թուրքական արշավող բանակի դեմ, այլև ցուցում տվեց պատժել բոլոր նրանց, ովքեր կդիմադրեն թուրքերին:

Ատրպատականում ռուսական զորքերի թիվը ընդամենը 13 հազար էր: Սակայն նրանց օգնում էին նաև հայերից ու ասորիներից կազմակերպված կամավորական ջոկատները, որոնց մեջ հատկապես աչքի ընկավ զորավար Անդրանիկ Օզանյանի վաշտը: Կամավորական այդ ջոկատները Իրանի տարածքում կատաղի մարտեր էին մղում թուրքական զորքերի դեմ: Իթթիհադի գործիչները մի քանի անգամ դիմեցին հայկական քաղաքական կուսակցություններին՝ առաջարկելով ցրել Իրանում գործող կամավորական խմբերը, փոխարենը շռայլելով առատ խոստումներ: Սակայն այդ դիմումները մնացին ապարդյուն:

Համառ մարտերից հետո, նոյեմբերի վերջին օսմանյան զորքերին հաջողվեց գրավել Ատրպատականի և Քրդստանի արևմտյան շրջանները:

Այդ նույն ժամանակ Իրանի հարավում անգլո-հնդկական զորքերը ռազմական գործողություններ ծավալեցին Պարսից ծոցի գոտում՝ 1914 թ. հոկտեմբերի 10-ին գրավելով Աբադան կղզին և Բանդար-Բուշեհր նավահանգիստը, ինչպես նաև Բասրա քաղաքը:

Այսպիսով՝ Իրանի տարածքը, չնայած շահական կառավարության կողմից հայտարարված չեզոքության, վերածվեց երկու թշնամական խմբավորում ներկայացնող պետությունների ռազմական գործողությունների թատերաբեմի: Անտարակույս, դա հանդիսանում էր միջազգային հարաբերություններում Իրանի կախյալ վիճակի նոր դրսևորում:

Թուրքական բանակի՝ Կովկաս և Իրան ներխուժելու պլանը անճամբ մշակված էր ռազմական մինիստր Էնվեր փաշայի կողմից: Այդ պլանով, հենվելով ուլտրաշովինիստական պանթյուրքիզմի կոնցեպցիայի վրա,

երիտթուրքերի ռազմամիլիտարիստական վարչակարգը իր առջև խնդիր էր դրել նախ և առաջ տիրանալ Հյուսիսային Իրանին, որտեղ գերակշռում էին թուրքալեզու ժողովուրդները և այնուհետև, միավորելով Ատրպատականը և «ռուսական» Ադրբեջանը, ստեղծել առանձին պետություն՝ Օսմանյան կայսրության հովանու ներքո: Ըստ պանթյուրքիստների ծրագրի՝ այդ «կենսունակ» երկրամասը դառնալու էր թուրքիզմի կարևորագույն կենտրոնը: Բացի այդ, Ատրպատականը ծառայելու էր որպես հենակետ Բաքվի նավթաբեր շրջանի գոտին ներխուժելու համար: Թուրքական միլիտարիզմի հայտնի գործիչներից մեկը՝ Քյազիմ Կարաբեքիր փաշան՝ իր հուշերում գրում է, որ Թուրքիան ծրագրել էր նաև Թավրիզի վրայով Դաղստան ուղարկել մեկ դիվիզիա՝ Կովկասի մահմեդականներին ոտքի հանելու և քիկունքից ռուսական զորքերին հարվածելու համար: Նախատեսված էր նաև Ռուսաստանի դեմ պայքարի մեջ ներգրավել Հյուսիսային Իրանին հարող Թուրքեստանի և առհասարակ Անդրկասպյան նահանգի թուրքմեն բնակչությանը, «որն իր լեզվով ու ծագումով մոտ էր կանգնած անատոլիական թուրքերին»:

«Այդ արշավանքի շնորհիվ,- գրում էր Քյազիմ Կարաբեքիրը,- Իթթիհադը հույս ուներ ողջ մահմեդական աշխարհը դնել շարժման մեջ»:

Ինչ վերաբերում է Հարավային Իրանին, որի նավթաբեր շրջանները նույնպես գայթակղիչ խայծ էին Թուրքիայի և Գերմանիայի համար, ապա այն ևս, ըստ Էնվեր փաշայի պլանի, պետք է դառնար առանձին պետություն: Հետագայում հյուսիս իրանական և հարավ իրանական այդ երկու պետությունները կարող էին կազմել ունիա, որպեսզի Առաջավոր Ասիայի պետությունների հետ համատեղ մտնեին թուրանական միավորումների՝ «Մեծ Թուրքիայի մեջ», դառնալու համար թուրքական գաղութ:

Ստամբուլը նախատեսում էր Իրանը լրիվ իր ազդեցությանը ենթարկելուց հետո ստիպել նրան կենտրոնական պետությունների կողմից մտնել պատերազմի մեջ:

Էնվեր փաշայի օպերատիվ պլանում նախատեսված էր նաև Իրանի տարածքը օգտագործել որպես հենակետ դեպի Միջին Ասիա, Աֆղանստան և Հնդկաստան ներխուժելու համար:

Գերմանիան իր հերթին Մերձավոր ու Միջին Արևելքի նկատմամբ ուներ սեփական նախագծեր, որոնք արմատապես հակասում էին Էնվեր փաշայի պլաններին: Մասնավորապես Բեռլինն իր առջև խնդիր էր դրել Անտանտի դեմ հաղթանակ ձեռք բերելուց հետո ողջ Մերձավոր ու Միջին Արևելքը միավորել իր իշխանության ներքո, այլ կերպ ասած՝ «դաշնակից ու բարեկամ» Թուրքիային զրկել իր պատառից: Ինչ վերաբերում

է Իրանին, ապա Գերմանիան մտադիր էր հաղթանակի դեպքում այդ երկրի ողջ տարածքը վերցնել իրեն՝ դաշնակից Թուրքիային հատկացնելով միայն Քերմանշահի նահանգը, Ատրպատականը և Պարսից ծոցի առափնյա շերտը: Դա նշանակում էր, որ Իրանը ևս պետք է վերածվեր գերմանական գաղութի: Այդ բանը սկսել էին կռահել նաև Ստամբուլում: Պատահական չէ, որ քիչ ավելի ուշ՝ 1915 թ., Իթթիհադը մշակեց երեք պետությունների՝ Թուրքիայի, Իրանի և Աֆղանստանի տարածաշրջանային եռյակ դաշինքի նախագիծ՝ առանց Գերմանիայի մասնակցության: Այդ ծրագրի հիմնական նպատակն էր «արևելյան գործերում» բացառել Բեռլինի վճռական դերը:

1914 թ. դեկտեմբերի սկզբին «Աղրբեջանական ջոկատի» հրամանատար գեներալ Չերնոզուբովը հրաման ստացավ նահանջել դեպի Ջուլֆա: Այդ չհիմնավորված «նահանջի» պատճառները մինչև օրս էլ պատված են խորհրդավորության ու անորոշության մշուշով, թեև զորքերի այդպիսի «շարժումներ» ռուսները կատարում էին նաև Արևմտյան Հայաստանում (օրինակ՝ Վանում և այլն): Ռուսական զորքերը առանց մարտի թողեցին Սոուջբալաղը, Բաշկալան, Ուրմիան, Մարաղան, Սալմաստը և Խոյը: 1915 թ. հունվարի 14-ին թուրքական առաջապահ ուժերը և քրդական ջոկատները Ահմեդ Մուխթար Շամխալի հրամանատարությամբ մուտք գործեցին Թավրիզ: Ատրպատականի գեներալ-նահանգապետ Սարդար Ռաշիդը և մի շարք այլ բարձրաստիճան անձինք ցնծությամբ դիմավորեցին թուրքերին: Քաղաքի վրա բարձրացվեց թուրքական դրոշը: Թավրիզի գրավումը թուրքերը փորձում էին ներկայացնել որպես օսմանյան բանակի ազատագրական միսիա, որպես Իրանը օտարերկրյա բռնազավթումից փրկելու մի առաքելություն:

Թավրիզը և առհասարակ Ատրպատականի ռազմակալումը ուղեկցվում էր տեղական ազգաբնակչության, հատկապես հայերի ու ասորիների ոչնչացումով ու կողոպուտով: Նույնիսկ Թեհրանում թուրքական դեսպանն աշխատում էր հրահրել հայկական ջարդեր: Այդ առթիվ ռուս զինվորականներից մեկը հաղորդում էր. «Թեհրանի հայ բնակչության շրջանում տիրում է իսկական խուճապ: Հայերը փորձում են կազմակերպել ինքնապաշտպանություն»:

Սարիղամիշի մոտ և Ալաշկերտի հովտում թուրքական զորքերի ջախջախումից հետո ռուսական հրամանատարությունը 1915 թ. հունվարի վերջին Իրանում ծավալեց հակահարձակում: Հունվարի 28-ին Չերնոզուբովի ջոկատը Սոֆիանում (Թավրիզից հյուսիս) պարտության մատնեց թուրքական զորքերի խմբավորմանը: Այդ հաղթանակի

հետևանքով հունվարի 31-ին ռուսական զորքերը վերստին գրավեցին Թավրիզը: Այդ մարտերում ռուսական զորքերին եռանդուն կերպով աջակցում էին հայկական և ասորական կամավորական ջոկատները: Մասնավորապես նրանք կարևոր դեր խաղացին Դիլմանի ճակատամարտում, որտեղ Անդրանիկի հրամանատարությամբ գործող հայկական կամավորական զորամասը ռուս կոզակների հետ սերտ համագործակցությամբ կասեցրեց թուրքերի շարժումը դեպի հյուսիս (Անդրկովկաս)՝ գրավելով Ղոթուր քաղաքը և Խանասորի կիրճը:

Օսմանյան կայսրության ղիրքերը Ատրպատականում նկատելիորեն թուլացան: Միանգամայն ակնհայտ դարձավ, որ թուրքական հրամանատարության պլանները Ատրպատականը զավթելու և Բաքվի ու Թեհրանի վրա արշավանք կազմակերպելու նպատակով հենակետ ծառայեցնելու ծրագրերը կատարյալ ձախողման են մատնվել:

1915 թ. ապրիլին սկսվեց Վանի ինքնապաշտպանությունը: Դա ստիպեց թուրքերին Իրանում տեղակայված զորքերի մի մասը նետել Վան՝ հայերի ինքնապաշտպանությունը ջախջախելու համար: Ռուսական հրամանատարությունը անմիջապես օգտվեց դրանից, և 1915 թ. մայիսին ռուսները գրավեցին Սոուջբուլաղն ու Ուրմիան՝ թուրքական զորքերին լրիվ դուրս մղելով Ուրմիա լճի շրջակայքից: 1915 թ. հուլիսին ռուսական զորքերը արդեն կանգնած էին Մանազկերտ - Ախլաթ (Խլաթ) գծի վրա:

Իրանա-թուրքական ճակատում ռազմական գործողությունները ակտիվացնելու նպատակով թուրքական ծառայության մեջ գտնվող գեներալ-ֆելդմարշալ ֆոն դեր Հոլցը («ֆոն Դեր Հոլց փաշա») նշանակվեց Իրանում գերմանա-թուրքական գործունեությունը ղեկավարող ու կոորդինացնող մարմնի պետ: Նրա տրամադրության տակ դրվեցին Վանա լճի հարավից մինչև Պարսից ծոց ընկած տարածքի բոլոր զինված ուժերը: Նրա խնդիրն էր նաև ստեղծել «իրանական բանակ» և Իրանում ապստամբություններ հրահրել Ռուսաստանի և Անգլիայի դեմ:

Ռուսական և թուրքական զորքերի միջև թեժ մարտեր ծավալվեցին նաև Համադանի, Քերմանշահի և Խանեկինի շրջաններում: Ի վիճակի չլինելով բեկում մտցնել ռազմական գործողությունների մեջ՝ 1915 թ. գարնանը թուրքական զորամասերը նահանջեցին մինչև իրանա-թուրքական սահմանը: Դրանից հետո ողջ պատերազմի ընթացքում, թուրքերը Ատրպատականում այլևս չձեռնարկեցին խոշոր մասշտաբի ռազմական գործողություններ: Թուրքական հրամանատարությունը այս նոր պայմաններում որոշեց ռուսների դեմ պայքարում լայնորեն օգտագործել Ատրպատականի թուրքալեզու ցեղերին (շահսևեններ և այլն), քրդե-

րին և հակառուսական տրամադրություններ ունեցող մյուս ցեղերին: Միաժամանակ շեշտը դրվեց պարտիզանական-չեթայական կռիվների, քաղաքական դավերի, ահաբեկչությունների և դիվերսիաների կազմակերպման վրա: Ատրպատականում ռուսների դեմ «փոքր պատերազմ» ծավալելու համար այդ երկրամաս գործուղվեցին Յաղուբ Ջամիլը, Հյուսեին Ռաուֆ բեյը, Էմեր Նաջի բեյը, գերմանացի ֆոն Շեյբներ-Ռիխտերը և այլ փորձված «մասնագետներ»: Սակայն պարտիզանական պատերազմի գործելակերպը ևս սպասված արդյունքներ չտվեց: Արդեն 1916 թ. հունիսին ռուսական զորքերի ճնշման ներքո չեթայական խմբերը ստիպված էին նահանջել դեպի Օսմանյան կայսրության տարածքը:

1914 թ. վերջին և 1915 թ. սկզբին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովի և Անգլիայի արտաքին գործերի պետական քարտուղար Էդուարդ Գրեյի միջև տեղի ունեցած գաղտնի բանակցությունների և 1915 թ. մարտին փոխանակված նոտաների հետևանքով որոշվեց միմյանց միջև բաժանել նաև 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրով նախատեսված «չեզոք գոտին»: Բանակցություններն ավարտվեցին 1915 թ. մարտի 20-ին համաձայնագրի ստորագրմամբ, ըստ որի՝ չեզոք գոտին համարյա ամբողջապես, բացառությամբ Սպահան և Յեզդ քաղաքների, անցնում էր բրիտանական ազդեցության գոտու մեջ: Փոխարենը Անգլիան Ռուսաստանին խոստանում էր նեղուցները՝ Բոսֆորն ու Դարդանելը, ինչպես նաև Կ. Պոլիսը, այն էլ պատերազմի հաղթական ավարտից հետո:

Այդ համաձայնագիրը էլ ավելի ուժեղացրեց Իրանում հակառուսական և հակաանգլիական տրամադրությունները: Օսմանյան կայսրությունը և Գերմանիան փորձում էին օգտվել այդ տրամադրություններից Իրանում հակառուսական և հակաանգլիական շարժումներ հրահրելու և հնարավորության դեպքում Իրանը Անգլիայի և Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ ներգրավելու համար: Մինչդեռ իրանական իշխանությունները, առավելապես հանճինս Գերմանիայի, ձգտում էին Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի ճիրաններից ազատվելու համար օգտագործել «երրորդ ուժի» վրա հենվելու քաղաքականությունը:

Մոսթոուֆի-օլ-Մամալեքի կառավարությունը շարունակում էր սիրախաղը թուրքերի և գերմանացիների հետ: Այդ կառավարությունը ոչ մի վճռական միջոցառում չձեռնարկեց թուրքերի կողմից իրանական չեզոքությունը կոպիտ կերպով խախտելու դեմ: Լավագույն դեպքում նա տևական բողոքի նոտաներ էր ներկայացնում Բ. Դռանը, որն իր հերթին միշտ ուներ իր պատրաստի պատասխանը, որ Օսմանյան կայսրությունը հավակնու-

թյուններ չունի իրանական տարածքների նկատմամբ, որ իբր նա զորքեր է մտցրել Իրան այնտեղից ռուսներին վռնդելու նպատակով:

1915 թ. մայիսի 1-ին Թեհրան ժամանեց գերմանական դեսպանատան նորանշանակ ռազմական կցորդ կոմս Գեորգ ֆոն Կաննից-Պոդանգենը, որի խնդիրն էր, ինչ գնով էլ որ լինի, Իրանը ներգրավել Եռյակ համաձայնության դեմ պատերազմի մեջ: Նրա ժամանումից հետո Թեհրանում գերմանական և թուրքական դեսպանատները լծվեցին եռանդուն գործունեության:

Սակայն թուրքերի պարտությունը Սարիղամիշում և Ատրպատականում, Մոսթոֆի-օլ-Մամալեքի մոտ կասկածներ էր առաջ բերել իր թուրքասիրական քաղաքականության հեռանկարների նկատմամբ: Պահը ձեռքից բաց չթողնելու միտումով նա որոշեց բանակցությունների մեջ մտնել Անգլիայի և Ռուսաստանի հետ: Իրանի չեզոքությունից հրաժարվելու և Անտանտի կողմից պատերազմի մեջ մտնելու խոստման դիմաց նա պահանջում էր ռուսական զորքերը դուրս բերել Ատրպատականից, Իրանին տրամադրել խոշոր փոխառություն, նրան հատկացնել զենք ու զինամթերք, կրճատել ռուսների ու անգլիացիների կողմից տրամադրված դրամական փոխառությունների տոկոսները, փոխել (նվազեցնելու իմաստով) մաքսատուրքերը, պատերազմից հետո Իրանին տրամադրել Իրաքում գտնվող շիիթական սրբավայրեր Քարբալան ու Նաջաֆը և այլն:

Վերոհիշյալ բանակցությունները հայտնի դարձան Թեհրանում գերմանական և թուրքական դեսպանություններին, որոնք համատեղ կերպով ճնշում գործադրեցին շահի վրա՝ պահանջելով անհապաղ դադարեցնել այդ բանակցությունները և վերակառուցել Մոսթոուֆի-օլ-Մամալեքի կառավարությունը: 1915 թ. փետրվարի 20-ին վարչապետը շահին ներկայացրեց կառավարության նոր կազմ, որի մեջ գերմանա-թուրքական բլոկի կողմնակիցների թիվը էլ ավելի մեծ էր, քան նախորդ կառավարության մեջ:

Հենց այդ նույն օրերին իր աշխատանքը վերսկսեց նաև մեջլիսը, որը լծվեց համառ ու հետևողական հակառուսական և հակաանգլիական գործունեության՝ սերտորեն համագործակցելով գերմանացիների և թուրքերի հետ: Վերջիններիս քարոզչական մեքենայի թափանիվը սկսեց պտտվել ավելի հուժկու թափով, քան երբևէ: Գերմանիան ներկայացվում էր որպես Իրանի և առհասարակ բոլոր մահմեդականների բարեկամ: Ռուսաստանի և Անգլիայի դեմ «սրբազան պատերազմի». կարգախոսների հետ մեկտեղ լայն շրջանառության մեջ դրվեց նաև Իրանի ժողովուրդների ազգային զգացումների վրա խաղալու հնարքը, որը Գերմանիային ու Թուրքիային ներկայացնում էր իբրև ռուսական ու անգլիա-

կան լծից պարսիկ ժողովրդի ազատագրման ջատագովներ: Առաջ էր մղվում այն տեսակետը, որ Գերմանիան և Թուրքիան լի են վճռականությամբ՝ օգնելու իրանական ժողովրդին, որպեսզի նա ազատագրվի Անգլիայի և Ռուսաստանի կողմից Իրանին պարտադրված անիրավահավասար պայմանագրերից ու տնտեսական-ֆինանսական ստրկացումից:

Միաժամանակ գերմանական ու թուրքական գործակալությունը ձեռնամուխ եղավ անլեգալ կերպով Իրանի բնակչությունից զինված ջոկատներ կազմակերպելուն, որոնք գործելու էին գերմանական, ավստրիական և թուրքական սպաների հրամանատարության ներքո: Այդ ջոկատների օգնությամբ հաջողվեց գրավել նույնիսկ մի շարք քաղաքներ: Իրանի հարավում գերմանական գործակալությունը հրահրեց ցեղերի հակաանգլիական ապստամբություններ: Ձգտելով շահարկել Իրանի բնակչության կրոնական զգացումները՝ նրանք անպատկառորեն լուրեր էին տարածում այն մասին, որ իբր գերմանացիները Վիլհելմ Բ-ի գլխավորությամբ ընդունել են իսլամը, և որ կայզերին այսուհետև անվանելու են «հաջի Վիլհելմ»: Խաղում էին նաև այն բանի վրա, որ իբր իրանցիներն ու գերմանացիները ունեն արիական ծագում և սերում են նույն արմատից:

Գերմանական գործակալության ձեռքին առանձնապես կարևոր լծակ էր հանդիսանում պարսկական ժանդարմերիան, որը տեղակայված էր երկրի հարավում՝ նավթաբեր շրջանում: Ժանդարմերիայի սպայական կազմը, նրա հրամանատար, գնդապետ Էդվալի հրամանատարությամբ, համարյա բոլորը շվեդներ էին, որոնց հետ 1915 թ. սկզբին Իրանում գերմանական գործերի հավատարմատար ֆոն Կարդորֆը կնքել էր գաղտնի համաձայնագիր, ըստ որի՝ այդ սպաները հավատարմության երդում էին տվել գերմանական ծառայության անցնելու վերաբերյալ:

1915 թ. նոյեմբերին շվեդական ժանդարմերիայի զորամասերի ուժերով գերմանացիներին հաջողվեց գրավել Ֆարս նահանգի կենտրոն Շիրազ քաղաքը և գերի վերցնել տեղի անգլիական հյուպատոսին և այլ անգլիացիների: Ժանդարմերիայի օգնությամբ գերմանական ազդեցությունը տարածվեց նաև Քերմանի և Հարավարևմտյան Իրանի այլ քաղաքների վրա:

Օսմանյան կայսրությունը և Գերմանիան ծրագրել էին Անգլիայի և Ռուսաստանի դեմ ուղի հանել նաև Աֆղանստանը: Այդ երկիրը հատուկ արշավախումբ ուղարկելու գաղափարը պատկանում էր Էնվեր փաշային: Վերջինս մտադիր էր համոզել աֆղանական էմիր Հաբիբուլլային պատերազմի մեջ մտնել Անտանտի երկրների դեմ: Էնվեր փաշայի պլանի համաձայն՝ այդ օպերացիայի հաջողության դեպքում հաջորդ քայլը լինելու

էր պատերազմի մեջ Հնդկաստանի մահմեդականների ներգրավումը:

Քանի որ Էնվեր փաշայի տրամադրության տակ չկային այդ դժվարին խնդիրը իրագործելու ընդունակ մարդիկ, նա դիմեց գերմանական գլխավոր հրամանատարությանը, որը, մեծ ոգևորությամբ ընդառաջ գնալով այդ առաջարկին, Ստամբուլ ուղարկեց սպաների մի խումբ՝ փորձված հետախույզ, Արևելքի քաջ գիտակ կապիտան Օսկար ֆոն Նիդերմայերի գլխավորությամբ: Նրա արշավախումբը համալրվեց նաև թուրք հետախույզ սպաներով՝ կապիտան Հուսեյին Ռաուֆ բեյի գլխավորությամբ:

Մինչև Աֆղանստան մեկնելը Նիդերմայերը Իրանում ծավալեց բուռն գործունեություն: Նա հավաքագրեց բազմաթիվ խոշոր ցեղային առաջնորդների, այդ թվում նաև Ատրպատականի շահսևենյան թյուրքալեզու ցեղերի ցեղապետերին, կազմակերպեց դիվերսիոն ակտեր, վերացրեց բազմաթիվ անցանկալի մարդկանց և այլն: Նրան հաջողվեց նույնիսկ Թեհրանում գործարկել մի ռադիոկայան, որը քարոզչություն էր մղում հօգուտ Գերմանիայի և Օսմանյան կայսրության:

Նիդերմայերի արշավախմբին հաջողվեց 1915 թ. օգոստոսին անցնել իրանա-աֆղանական սահմանը և մեծ դժվարություններով հասնել Քաբուլ: Նիդերմայերի հաշվարկը կառուցված էր այն բանի վրա, որ առաջնորդվելով պանիսլամիստական սկզբունքներով՝ աֆղանական խաների և սպայության մի մասը՝ այսպես կոչված «երիտաֆղանները», պատրաստ էին հանդես գալու Օսմանյան կայսրության և Գերմանիայի կողմից: Նիդերմայերը և Ռաուֆ բեյը առատ խոստումներ էին շռայլում էմիր Հաբիբուլլային՝ մասնավորապես խոստանալով պատերազմին մասնակցելու դեպքում նրան հանձնել Թուրքեստանը, Սամարղանդը և հնդկական հողերը մինչև Բոմբեյ: Սակայն էմիրին անգլիացիները տվել էին ավելի գայթակղիչ խոստումներ՝ դրանք ամրապնդելով նախապես տրված խոշոր դրամական հատկացումներով, ուստի և չնայած Նիդերմայերի ու Ռաուֆ բեյի հորդորներին, էմիրը մնաց անդրդվելի, և գերմանա-թուրքական արշավախումբը ստիպված էր ձեռնունայն հեռանալ Աֆղանստանից:

Այդ անհաջողությունից հետո թուրքական գործակալությունը պանիսլամիզմն օգտագործելու հետ մեկտեղ շեշտը դրեց պանթյուրքիզմի վրա՝ աշխատելով «արյան կանչի» սկզբունքն օգտագործել Իրանի մեծաթիվ թյուրքալեզու ժողովուրդներին ու ցեղերին իր շուրջը համախմբելու համար:

Գերմանիային հաջողվեց իր կողմը գրավել Իրանի երրորդ գումարման մեջլիսի մեծաթիվ պատգամավորների, որի շնորհիվ մեջլիսն արտահայտվեց գերմանա-ավստրիական բլոկի պաշտպանության օգտին:

Իսկ 1915թ. նոյեմբերին Մոսթոուֆի-օլ-Մամալեքի կաբինետը հրաժարվեց բանակցություններ վարել Ռուսաստանի և Անգլիայի հետ Գերմանիայի դեմ Իրանի՝ պատերազմի մեջ մտնելու հարցի կապակցությամբ: Դրանից անմիջապես հետո սկսվեցին գերմանա-իրանական գաղտնի բանակցություններ ռազմական դաշինք կնքելու վերաբերյալ:

Մշակվել էր 11 կետից բաղկացած պաշտպանողական դաշնագրի մի տեքստ, որի գործողության ժամկետը լինելու էր 20 տարի: Այնտեղ նշվում էր, որ կողմերից որևէ մեկի վրա Անգլիայի կամ Ռուսաստանի հարձակման դեպքում մյուս կողմը պարտավորվում է միջամտել՝ իր դաշնակցին օգնելու նպատակ: Գերմանիան պարտավորվում էր «աջակցել Իրանի պայքարին» զենքով ու հանդերձանքով, տեղեկատվությամբ, գերմանական սպաներով և այլն: Գերմանիան պարտավորություն էր տալիս բռնազավթման չենթարկել Իրանի տարածքը, իր բոլոր հնարավորություններով պաշտպանել իրանական տարածքի անձեռնմխելիությունը, նրա քաղաքական և տնտեսական անկախությունը: Իրանը պարտավորվում էր չմիանալ Գերմանիային թշնամի պետությունների որևէ խմբավորման և մոտիկ ապագայում հարձակվել թշնամիների վրա, աստիճանաբար ստեղծել 100- հազարանոց կանոնավոր բանակ, որը պետք է ենթարկվեր Թեհրանում գերմանական դեսպանությանը: Ողջ պատերազմի ընթացքում Գերմանիան խոստանում էր ֆինանսական միջոցներ հատկացնել Իրանին, պարտավորվում էր պատերազմի վերջում խաղաղության պայմանագիր կնքելիս աջակցել Իրանին՝ ազատվելու համար Անգլիային և Ռուսաստանին ունեցած պարտքերից: Պայմանագրում նաև պարունակվում էր մի կետ այն մասին, որ Գերմանիան դեմ չի լինի իրանական տարածքի մեծացմանը, եթե դա չի հակասի Թուրքիայի հետ կնքված համաձայնագրերին:

Այսպիսով՝ իրանական կառավարությունը, հակառակ շահի կողմից պաշտոնապես հայտարարված չեզոքությանը, ըստ էության խախտելով այն, պատրաստվում էր դաշինքի մեջ մտնել Գերմանիայի հետ և նրա կողմից գլխավորվող ռազմական բլոկի կազմում մտնել պատերազմի մեջ: 1915 թ. նոյեմբերի 10-ին վարչապետ Մոսթոուֆի-օլ-Մամալեքը Իրանում Գերմանիայի ներկայացուցիչ Ռայսի հետ ստորագրեց այդ ռազմական դաշինքը, որը գաղտնի էր և այդպես էլ երբեք չհրապարակվեց:

Նման պայմանագրեր գերմանացիները կնքում էին նաև Իրանի տարբեր քաղաքական ուժերի հետ: Այսպես՝ 1915 թ. դեկտեմբերի 10-ին գերմանացիները համաձայնագիր կնքեցին իրանական «Էթեդալի» («Չափավորներ») կուսակցության հետ՝ պարտավորվելով նրան մատա-

կարարել զենք և ռազմական հանդերձանք:

Իրենց հերթին Քարբալայից և Նաջաֆից մոջթեհիդները հեռագրերի տարափ էին տեղում շահի գլխին՝ նրանից պահանջելով Գերմանիայի և Օսմանյան կայսրության կողմից մտնել պատերազմի մեջ, հակառակ դեպքում Ահմեդ շահին սպառնալով, որ նա ևս իր հոր՝ Մոհամմադ Ալի շահի նման գահընկեց կլինի և գուցե նաև վտանգի տակ կդնի ողջ Պաջարական դինաստիայի գոյությունը:

Թեհրանում թուրքական դեսպանատունը, գերմանական դեսպանատան հետ սերտ համագործակցությամբ, նախապատրաստում էր զինված ելույթ՝ շահին ստիպելու համար, որ նա համաձայնվի մտնել պատերազմի մեջ: Այդ նպատակով Թուրքիայից Թեհրան էին ուղարկվում զենք ու զինամթերք, թուրքական սպաներ և այլն, որոնք պետք է տեղում թուրքասեր տարրերից կազմակերպեին զինված ջոկատներ: Մայրաքաղաքին էին մոտենում նաև «մոջահեդների» զինված ջոկատները և ժանդարմական զորամասերը:

Նախապատրաստվող այդ պետական հեղաշրջումը պետք է իրականանար 1915 թ. նոյեմբերին: Օպերացիայի իրականացման ղեկավարությունը դրված էր գերմանական դեսպանատան ռազմական կցորդ Կաննիցի վրա:

Նախապատրաստվող պետական հարվածի վերաբերյալ հետախուզական տեղեկությունները մեծ տագնապ առաջ բերեցին Պետերբուրգում և Լոնդոնում: Որոշվեց Իրանի հյուսիսում և հարավում ավելացնել ռուսական և անգլիական զորքերի թիվը: 1915 թ. հոկտեմբերին Ն. Ն. Բարաթովի էքսպեդիցիոն կորպուսը ափ դուրս եկավ Էնզելիում: Միաժամանակ Պարսից ծոցի Բուշեհր նավահանգստում ափ հանվեցին անգլիական զորքեր: Բարաթովի կորպուսի խնդիրն էր վերացնել Իրանում գործող գերմանա-թուրքական անկանոն զորամասերը, այնուհետև շարժվելով դեպի հարավ՝ շփման մեջ մտնել Միջագետքում և Հարավային Իրանում գործող անգլիական զորքերի հետ:

Բարաթովի կորպուսի շարժումը Թեհրանի ուղղությամբ մեծ խուճապ առաջ բերեց մայրաքաղաքի գերմանասերների և թուրքասերների շրջանում:

1915 թ. նոյեմբերին Ահմեդ շահը ստիպված էր պաշտոնանկ անել վարչապետ Մոսթոուֆի-օլ-Մամալեքին և ցրել գերմանասեր կառավարությանը: Ցրվեց նաև երրորդ գումարման մեջլիսը: Ցրված մեջլիսի պատգամավորների մի մասը և պաշտոնանկ արված կառավարության անդամները, արքայազները, ազնվականության ներկայացուցիչները,

բազմաթիվ պաշտոնյաներ, վաճառականներ և այլն, գերմանական և ավստրիական դեսպանների և թուրքական դեսպանատան ռազմական կցորդի ուղեկցությամբ հապշտապ լքեցին Թեհրանը և փախան Ղում քաղաք: Ռուսական և անգլիական դեսպաններին հայտնի դարձավ, որ շահը նույնպես պատրաստվում է մեկնել մայրաքաղաքից: Ուստի նրանք որոշեցին դիմել վճռական քայլերի: Ռուսական դեսպան Էթերը 1915 թ. նոյեմբերի 10-ին Ռուսաստանի արտգործմինիստր Սազոնովից ստացավ հրահանգ հետևյալ բովանդակությամբ. «Հասկացրեք շահին, որ եթե նա մեկնի Թեհրանից, միանգամայն հնարավոր է, որ այլևս երբեք չվերադառնա»: Այդ սպառնալիքի ազդեցությունը վայրկենական էր: Շահը շտապեց հավաստիացնել, որ ինքը չի հեռանա Թեհրանից և չի տեղափոխվի Սպահան:

Ղումում մեջլիսի պատգամավորներից, նախկին կառավարության գերմանասեր մինիստրներից, այսպես կոչված՝ «ազգայնական դեմոկրատներից» և այլն ստեղծվեց «ժամանակավոր ազգային կառավարություն», որը հայտնի է նաև «Ղումի կոմիտե» անունով: Իսկ մայրաքաղաքում՝ Թեհրանում, կազմակերպվեց նոր կառավարություն, որը պարտավորվեց այսուհետև Ռուսաստանի և Անգլիայի նկատմամբ վարել բարյացակամ չեզոքության քաղաքականություն: Իսկ շահը անձամբ հավաստիացրեց ռուսական և անգլիական դեսպաններին, որ ինքը թույլ չի տա, որ իրեն ներգրավեն Ռուսաստանի և Անգլիայի դեմ արկածախնդրությունների մեջ:

Ղումի «ժամանակավոր ազգային կառավարության» ղեկավար, խոշոր ավատատեր Նիզամ-էս-Սալթանեն, որն իրեն հռչակեց նաև «ազգային բանակի գլխավոր հրամանատար», իր առջև խնդիր էր դրել տապալել շահական կառավարությանը: Այդ պլանը չհաջողվելու դեպքում նա ծրագրել էր Արևմտյան Իրանում ստեղծել նոր, անկախ պետություն, որի կենտրոնն էր լինելու Քերմանշահ (ներկայումս՝ Բախթարան) քաղաքը: Այս ծրագիրը ոչ միայն արժանանում էր Գերմանիայի և Թուրքիայի հավանությանը, այլև ստանում նրանց լայն աջակցությունը: Ժամանակավոր կառավարության կարգադրությամբ ժանդարմական զորամասերը, ինչպես նաև առանձին խաների ջոկատները, սկսեցին կենտրոնանալ Ղումում: Շահին հայտարարելով ազգի միասնության խորհրդանիշ՝ Ղումի ժամանակավոր կառավարությունը կոչ էր անում «փանում հայրենիքի փրկության նրան ազատել թշնամու ձեռքից»:

Թեհրանի կառավարության կազմում կային մարդիկ, ովքեր համակրանքով էին վերաբերվում Ղումի ժամանակավոր կառավարությանը և

գաղտնապես աջակցում էին նրան՝ հորդորելով անսասան կերպով շարունակել պայքարը մինչև վերջ, «քանի որ փրկության այլ ուղի չկա»:

Ղումի կառավարության կողմն անցան նաև իրանական զորքերի մի մասը, բազմաթիվ ազգայնական գործիչներ, բուրժուազիայի, կալվածատերերի, արհեստավորական միջավայրի բազմաթիվ մարդիկ, ովքեր երկրի տարբեր շրջաններից շարժվելով Ղում՝ համալրում էին ազգայնականների ջոկատների շարքերը:

Ռուսական զորքերի և Ղումի «ժամանակավոր ազգային կառավարության» ջոկատների միջև տեղի ունեցած բախումներն ավարտվեցին վերջիններիս ջախջախումով: 1915 թ. դեկտեմբերի 9-ին ռուսական զորքերը գրավեցին Ղումը: «Ժամանակավոր կառավարությունը» ստիպված էր փախչել Քաշան: Այնուհետև նրանք կենտրոնացան Քերմանշահում, որտեղ կազմակերպեցին այսպես կոչված «ազգային կառավարություն»՝ Նեզամ-էս-Սալթանեի գլխավորությամբ: Այդ կառավարության կազմի մեջ մտան Ղումի «ժամանակավոր ազգային կառավարության» մի շարք անդամներ: Սակայն Քերմանշահի կառավարությունը կենսունակ չգտնվեց: Շուտով սուր տարաձայնություններ առաջացան դեմոկրատական և «Էթեդալիյուն» կուսակցությունների ղեկավարների միջև՝ մի կողմից, և Գերմանիայի ու Թուրքիայի իշխանությունների միջև՝ մյուս կողմից: Գերմանիան և Թուրքիան չկարողացան արդյունավետ ֆինանսական և ռազմական օգնություն ցուցաբերել Քերմանշահի կառավարությանը: Բացի այդ, այն ժողովրդի աչքում վարկաբեկվեց, երբ պարզվեց, որ նշված կառավարության վարչապետ Նեզամ-էս-Սալթանեն, ստորագրելով գաղտնի պայմանագիր գերմանական զինվորական կցորդ Կաննիցի հետ, ունեցել է անձնական նյութական շահագրգռվածություն: Լուրեր տարածվեցին նաև այն մասին, որ Նեզամ-էս-Սալթանեն գաղտնի կապեր է ունեցել անգլիացիների հետ: Այդ բոլորը հիասթափեցրեց ժողովրդին:

Իսկ ամենակարևորը այն էր, որ Քերմանշահի կառավարության պայքարի կոչերը զանգվածների շրջանում մնում էին անարձագանք: Երբ մարշալ ֆոն դեր Հոլցը 1916 թ. հունվարին եկավ Քերմանշահ, նա հավատացած էր, որ ռուսների և անգլիացիների դեմ կռվող այդ կառավարության զորքերը հասնում են 35 հազար զինվորի: Բայց մեծ հիասթափությամբ տեսավ, որ «Գերագույն հրամանատարության բանակը» բաղկացած էր ընդամենը 2500 ժանդարմներից և տարբեր վայրերում ցրված մոտ 2000 զինվորներից: Բացի այդ, տեղի բնակչությունը և նույնիսկ տեղական իշխանությունները մեծ անվստահությամբ ու կասկածանքով

էին վերաբերվում թուրքական զորքերին:

Քերմանշահի կառավարության և այդ քաղաքում տիրող իրադրության լավագույն բնութագիրն ու գնահատականը տվել է հենց ինքը՝ ֆոն դեր Հոլցը. «Իրանում անիշխանություն է: Ոչինչ չի կարելի անել: Խառնաշփոթություն, ագահություն և վախկոտություն: Հսկայական ծախսեր և ոչ մի արդյունք»:

1916 թ. հունվարի 15-ին Քարաթովի կորպուսի զորամասերը գրավեցին Համադանը և շարժվեցին Քերմանշահի վրա: «Ազգային կառավարությունը» հապշտապ կազմակերպեց «Իրանում գերագույն հրամանատարության բանակ» և փորձեց դիմադրել ռուսական զորքերին: Սակայն այդ փորձն ավարտվեց կատարյալ ձախողմամբ: 1916 թ. փետրվարի 13-ին ռուսական զորքերը գրավեցին Քերմանշահը և ապրիլին մոտեցան իրանա-թուրքական սահմանին: «Ազգային կառավարության» անդամները և ազգայնականների ջոկատների մի մասը Նեզամ-էս-Սալթանեի գլխավորությամբ և ցրված մեջլիսի պատգամավորները փախան Թուրքիա, կամ թաքնվեցին հեռավոր գյուղերում: Որոշ գործիչներ, որոնք մնացել էին Քերմանշահում, ձերբակալվեցին անգլիացիների կողմից և երկրից աքսորվեցին գլխավորապես Հնդկաստան: Մնացած ջոկատները, մնալով առանց ղեկավարության, ցրվեցին: Իրանից հեռացավ նաև ժանդարմերիայի շվեդական սպաների մեծ մասը:

Փոխադարձ պայմանավորվածության համաձայն՝ ռուսական և անգլիական զորքերի հրամանատարությունը պետք է Իրանի հյուսիսից հարավ ստեղծեր ռուս-անգլիական զինված ուժերից կազմված մի պատնեշ՝ արգելակելու համար թուրքական զորքերի հետագա առաջխաղացման հնարավորությունը դեպի արևելք: Այդ բանը խափանելու համար թուրքական զորքերը Ալի Իհսան փաշայի հրամանատարությամբ հարձակում կազմակերպեցին Քերմանշահ-Համադանի ուղղությամբ: Թուրքական զորքերին հաջողվեց սկզբում գրավել Ղասր-ե Շիրինը, իսկ ապա նաև Քերմանշահը (1916 թ. հուլիսի 1-ին): Այդ մարտերում թուրքերին մեծ օգնություն ցույց տվեց քրդական սենջաբի ցեղը: 1916 թ. օգոստոսի 10-ին թուրքերը գրավեցին նաև Համադանը:

Այսպիսով՝ 1916 թ. ամռանը ամրապնդվելով Քերմանշահ-Համադան գծի վրա՝ օսմանցիները խանգարեցին ռուսական և անգլիական զորքերի հանդիպմանը: Թուրքական բանակի այդ մասնակի հաջողությունը հնարավորություն տվեց Նեզամ-էս-Սալթանեին և նրա «Ազգային կառավարության» անդամներին՝ կրկին հայտնվելու Քերմանշահի շրջանում: Այնտեղ թուրքերի նախաձեռնությամբ կազմակերպվեց «Էթթե-

հադ-ե էսլամ» («Իսլամի միասնություն») պանիսլամիստական կոմիտեն, որը կոչ էր անում սրբազան պատերազմի դուրս գալ Ռուսաստանի դեմ:

Այսպիսին էր իրադրությունը Կենտրոնական և Արևմտյան Իրանում 1915-1916 թթ.:

Հանրագումարի բերելով վերոհիշյալ իրադարձությունների արդյունքները՝ անգլիացի Սայքսը գտնում էր, որ «ոչ մի կասկած չկա, որ ռուսական բանակը Իրանը փրկեց թուրքական տիրապետությունից»:

Ինչ վերաբերում է Իրանի հարավային շրջաններին, ապա այստեղ անգլիացիների նկատմամբ ուժգին ու խորը դժգոհություն էր նկատվում հատկապես Ֆարսի նահանգում և Պարսից ծոցի առափնյա Թանգեսթան և Դաշթիսթան կոչված շրջաններում, որոնց թյուրքալեզու ցեղերը (բահարլու, թանգեսթանլու, դաշթիսթանլու, ղաշղայի և այլն) ներգրավված էին հակաանգլիական ապստամբական շարժումների մեջ: Սպահանում գերմանացիների հենարանն էր հանդիսանում բախթիարական ցեղի խոշոր խաներից մեկը՝ Սամսամ-օս-Սալթանեն: Խոշոր բախթիարական խաները, որոնք, որպես կանոն, հանդիսանում էին Անգլո-պարսկական նավթային ընկերության բաժնետերերը, շարունակում էին աջակցել անգլիացիներին, մինչդեռ բազմաթիվ մանր խաներ անցան գերմանացիների կողմը:

Իրանի հարավում գերմանա-թուրքական գաղտնի ծառայությունների քայքայիչ գործունեության կենտրոն էին հանդիսանում նաև Բուշեհր և Շիրազ քաղաքները, որտեղ գերմանական ոսկով կազմակերպվում էին պարսիկ «կամավորների» ջոկատներ, ստեղծվում էին զենքի պահեստներ և այլն:

1915 թ. մարտին գերմանացիներին հաջողվեց անգլիացիների դեմ ապստամբության մղել բախտիարական մի շարք ցեղերի, որոնք ավերեցին Անգլո-պարսկական նավթային ընկերության նավթամուղի մի խոշոր հատված (Ահվազից մինչև Մոհամմերա), իսկ Մայդան-ե Նավթում վայրում ոչնչացրին 144 հազար տոննա նավթ, որը նախատեսված էր Պարսից ծոցում գործող բրիտանական նավատորմի համար:

Գերմանա-թուրքական գործակալությանը հաջողվեց նաև հակաանգլիական ելույթներ հրահրել Իրանի հիմնական նավթաբեր շրջանի՝ Խուզիստանի արաբ բնակչության շրջանում և նույնիսկ ոչնչացնել այդ նահանգի ազդեցիկ շեյխին, որը հայտնի էր իր անգլիամետ տրամադրություններով: Իսկ Սիսթանի և Բելուջիստանի ցեղերի շրջանում հակաանգլիական տրամադրություններ էր բորբոքում գերմանական հետախույզ Է. Յուգմայերը:

Իրանի հարավում գերմանացիներին հաջողվեց կազմակերպել նաև մի շարք ահաբեկչական գործողություններ: Այսպես՝ 1915 թ. մայիսին սպանվեց Սպահանում ռուսական փոխ հյուպատոս Կավերը, մահափորձ կազմակերպվեց անգլիական հյուպատոս Գրեհեմի նկատմամբ և այլն: Շիրազում գերմանացիներին հաջողվեց ջախջախել անգլիական շահնշահական բանկի բաժանմունքը, տեղական անգլիական հյուպատոսությունը և նույնիսկ պատանդ վերցնել բրիտանական հյուպատոս Օ'Կոննորին:

Գերմանացիների օգնությամբ ապստամբած դաշղայի ցեղին և ժանդարմական զորամասերին նույնիսկ հաջողվեց գրավել Շիրազ քաղաքը և ձերբակալել բոլոր անգլիացիներին: Շիրազում կազմակերպվեց «Իրանի անկախության պաշտպանության կոմիտե»: Գերմանացիների կողմնակիցները գրավեցին նաև Քերմանը, Յեզդը և Հարավ արևելյան Իրանի մի շարք քաղաքներ:

1915 թ. վերջին Իրանի ողջ հարավը, բացառությամբ միայն Պարսից ծոցի առափնյա շրջանի մի նեղ շերտի, գտնվում էր գերմանա-թուրքական հսկողության ներքո: Գերմանական հետախույզ Վասմուսին հաջողվեց կազմակերպել ծավալուն լրտեսական ցանց, որի գործակալները աշխատում էին Հնդկական օվկիանոսի, Սուեզի ջրանցքի և Տիգրիսի ու Եփրատի միջև ընկած հսկայական տարածություններում:

1915 թ. վերջին և 1916 թ. սկզբին Իրանի հարավում անգլիացիների համար ստեղծվել էր չափազանց ծանր վիճակ: Գերմանիան ամրապնդվել էր Հնդկաստանի մատույցներում, և բացառված չէր, որ փորձ կատարվեր սողոսկելու նաև դեպի անգլիացիների ամենախոցելի տեղը՝ Հնդկաստան: Այդ վտանգը հատկապես շոշափելի դարձավ 1916թ. գարնանը, երբ Միջագետքում Քութ-էլ-Ամարայի մոտ գեներալ Թաունսհեդի հրամանատարությամբ գործող 13-հազարանոց անգլիական էքսպեդիցիոն կորպուսը հանձնվեց թուրքերին:

Այդ պատճառով բրիտանական կառավարությունը որոշեց, ինչ գնով էլ լինի, Իրանի հարավում, որն ուներ ռազմավարական և տնտեսական մեծ նշանակություն (նավթը), ամրապնդել իր դիրքերը՝ այդ տարածքները ռազմականման ենթարկելու ճանապարհով: Այդ նպատակով 1916 թ. գարնանը անգլիացիները Հարավային Իրան ուղարկեցին ռազմական մի հատուկ արշավախումբ՝ գեներալ Պերսի Սայքսի գլխավորությամբ, որը ցամաք դուրս եկավ Պարսից ծոցի Բանդար-Աբբաս նավահանգստում: Հարավարևելյան Իրանը ռազմականման ենթարկելու, այնտեղ գերմանական ու թուրքական գործակալների գործունեությունը վերացնելու հիմնական խնդրից բացի, Սայքսին հանձնարարված էր նաև ամ-

բողջությամբ վերացնել ժանդարմերիայի զորամասերը և նրանց փոխարեն ստեղծել նոր զորամասեր՝ անգլիական սպաների գլխավորությամբ: Տեղական բնակչությունից Սայքսը սկսեց հավաքագրել ու կազմակերպել զինված ջոկատներ, որոնք կոչվեցին «Հարավ պարսկական հրաձիգների» (South Persian Rifles) և «Սեիստանյան հրաձիգների» կորպուս: Այդ զորամասերի օգնությամբ 1916 թ. ընթացքում Սայքսին հաջողվեց գրավել Մեքրանը, Քերմանը, Շիրազը, Յեզդը և Հարավարևելյան Իրանի մյուս քաղաքներն ու շրջանները և այնտեղից վռնդել հակառակորդի գործակալներին:

Հնդկաստանից ուղարկված զորքերից, ինչպես նաև Իրանում նոր կազմակերպված զորամասերից ստեղծվեց այսպես կոչված «Արևելյան պարսկական պատնեշ», որի հիմնական խնդիրն էր ամրապնդել անգլիացիների տիրապետությունը և թույլ չտալ գերմանական ու թուրքական գործակալների ներթափանցումը Հնդկաստան և Աֆղանստան:

Անգլիան աստիճանաբար օկուպացրեց Իրանի ողջ հարավային և հարավարևելյան մասը: Հակաանգլիական ապստամբությունների մասնակիցներից շատերը գնդակահարվեցին և կախաղան բարձրացվեցին, լրտեսական բոլոր օջախները ջախջախվեցին:

1916 թ. սեպտեմբերին գեներալ Պերսի Սայքսի «Հարավպարսկական հրաձիգները» և անգլո-հնդկական կանոնավոր զորքերը մուտք գործեցին Սպահան և շփման մեջ մտան գեներալ Բարաթովի ռուսական կորպուսի հետ, որը 1916 թ. ապրիլի 1-ին արդեն գրավել էր Սպահանը:

1916 թ. հուլիսի 30-ին Իրանի վարչապետ նշանակվեց անգլիամետ Վոսուղ-օդ-Դոուլեն (Միրզա Հասան խան), որը օգոստոսին Անգլիայի և Ռուսաստանի հետ կնքեց մի համաձայնագիր, ըստ որի շահական կառավարությունը դաշնակիցներից ստանալու էր ամսական 200 հազար թուման դրամական նպաստ: Իրենց հերթին դաշնակիցները իրավունք էին ստանում հսկողություն սահմանել իրանական ֆինանսների վրա և Իրանում կազմակերպել օժանդակ զորքեր. Ռուսաստանը՝ պարսկական կոզակական գումարտակի, իսկ Անգլիան՝ «Հարավպարսկական հրաձիգների» կորպուսի հիմքի վրա: Վերոհիշյալ համաձայնագիրը, ըստ էության, նշանակում էր Իրանի նկատմամբ անգլո-ռուսական հովանավորության հաստատում:

Արդեն 1917 թ. սկզբին Իրանի ողջ տարածքը ռազմակալման էր ենթարկված օտարերկրյա զորքերի կողմից: Հյուսիսային, հյուսիս արևելյան և կենտրոնական շրջանները՝ ընդհուպ մինչև Սպահան, գրավված էին ռուսների կողմից, հարավային և հարավ արևելյան նահանգները՝

անգլիացիների կողմից: Շահի և նրա կառավարության իշխանությունը ձեռք էր բերել զուտ ձևական բնույթ: Երկրի իրական լծակները փաստորեն գտնվում էին ցարական և անգլիական դեսպանորդների ու գեներալների ձեռքերում:

Իրանը ռազմական գործողությունների թատերաբեմի վերածելը, պատերազմող պետությունների կողոպտչական քաղաքականությունը, համընդհանուր քայքայումն ու թշվառությունը և այլն առաջ բերեցին ժողովրդական զանգվածների դժգոհությունը: 1917 թ. մայիսին Վոսուղ-օդ-Դռուլեի կառավարությունը ստիպված էր հրաժարական տալ: Նշանակվեց նոր կառավարություն Ալա-օս-Սալթանեի գլխավորությամբ, որը Թեհրանում անգլիական դեսպանին հայտարարեց, որ հասարակական կարծիքի ճնշման ներքո ինքը չեղյալ է համարում Վոսուղ-օդ-Դռուլեի կառավարության որոշումը «Հարավպարսկական հրաձիգների» կորպուսի ստեղծման վերաբերյալ, և որ անգլիական զորքերի ներկայությունը Իրանի տարածքում համարում է երկրի անկախության ու ինքնուրույնության խախտում: Սակայն անգլիացիները բացարձակապես չարձագանքեցին այս պահանջներին՝ շարունակելով գրավման վիճակում պահել իրանական տարածքները:

1917 թ. նոյեմբերին վեցամսյա կառավարումից հետո Ալա-օս-Սալթանեի կաբինետը ևս տապալվեց, որին փոխարինելու եկավ Այն-օդ-Դռուլեի կառավարությունը, որը իշխանության ղեկի մոտ դիմացավ ընդամենը մեկ ամիս:

Այս բոլորը վկայում էր Իրանում գոյություն ունեցող սուր քաղաքական ճգնաժամի մասին: Դժգոհությունը երկրում գնալով մեծանում էր, հակազդեցությունը երկիրը օկուպացրած օտարերկրյա պետությունների նկատմամբ՝ նույնպես: Երկրի համարյա բոլոր շրջաններում տեղի էին ունենում հակառուսական և հակաանգլիական շարժումներ, որոնք առանձնակի լայն տարածում ստացան երկրի հյուսիսում՝ Կասպից ծովի հարակից Գիլյան նահանգում: Գյուղացիական հայդուկային-պարտիզանական այդ շարժումները ղեկավարում էր Միրզա Քուչեք խանը, որը թեև խանական ծագում չուներ և իր սոցիալական վիճակով էլ խան չէր, բայց Արևելքում ընդունված ավանդույթի համաձայն՝ ի նշան հարգանքի՝ նրան մեծարում էին խան անվանելով:

Համաշխարհային պատերազմի հենց սկզբից Քուչեք խանը Գիլյանում կազմակերպել էր հայդուկային ջոկատներ ցարական Ռուսաստանի օկուպացիոն զորքերի դեմ պայքարելու համար: Նրանց հիմնական հենակետը Գիլյանի խիտ և դժվարանցանելի անտառների շրջանում

գտնվող ֆումեն քաղաքն էր ու նրա շրջակա տարածքները: Նրանք կոչվում էին «ջենգելիներ» («անտառաբնակներ»): Ջենգելիները իրենց պայքարի հիմնական նպատակն էին համարում Իրանի անկախությունը: Նրանք ուխտել էին չխուզել իրենց մազերը այնքան ժամանակ, մինչև որ Իրանը ձեռք չբերի ազգային անկախություն: Հաճախ ջենգելիները իրենց գաղափարական սկզբունքները պարուրում էին կրոնական քողով: Նրանց հակաօտարերկրյա ելույթները աջակցություն էին գտնում ազգայնականորեն տրամադրված գիլյանական վաճառականների, կալվածատերերի, գյուղացիության, արհեստավորների և քաղաքային բնակչության կողմից:

Արդեն 1917-1918 թթ. ջենգելիների հսկողության տակ էին գտնվում ոչ միայն Գիլյանի նահանգը, այլև նրա հարակից շրջանները, մասնավորապես Մազանդարանի արևմտյան մասը, Թալիշի գավառը և այլն: Ջենգելիներն ունեին նաև իրենց քաղաքական կազմակերպությունը, որը կոչվում էր «Էթթեհադ-ե էսլամ» («Իսլամի միասնություն»): Թեև անվամբ կրոնական-պանիսլամիստական, բայց բովանդակությամբ դա ազգայնական գաղափարների հետամուտ մի կազմակերպություն էր: «Էթթեհադ-ե էսլամ»-ի ծրագրի հիմնական կետերն էին. վերականգնել Իրանի սահմանադրությունը, ստեղծել ազգային բանակ, վերացնել կապիտուլյացիոն ռեժիմը, իսլամի դրոշի ներքո պայքար մղել օտարերկրյա ազդեցության դեմ՝ հանուն Իրանի անկախության, վերադարձ իսլամի նախնական «դեմոկրատական սկզբունքներին» (այդ ասելով հասկացվում էր «տասանորդի» գանձումը որպես հողային հարկ): Ջենգելիների շարժումը աջակցություն էր գտնում Թեհրանում գործող «Էթթեհադ-ե էսլամ» կազմակերպության կենտրոնական կոմիտեի և բազմաթիվ պարսիկ ազգայնականների կողմից:

Ջենգելիների և Իրանում գործող թուրքական ու գերմանական գործակալության միջև գոյություն ունեին սերտ կապեր: Թուրք, գերմանացի և ավստրիացի սպաները ոչ միայն մարզում էին ջենգելիների ջոկատները, այլև Գիլյանի «մուսուլման եղբայրներին» մատակարարում էին զենք, զինամթերք և ոսկի: Գիլյանի անտառներում եռանդուն գործունեություն էին ծավալել գերմանական ռազմական հրահանգիչների մի խումբ՝ Հուգո Էրդմանի և Պետեր ֆոն Պաշենի գլխավորությամբ:

Գիլյանում գործող Օսմանյան կայսրության գործակալությունը հրահանգ ուներ անդամահատել Իրանը: Մասնավորապես ծրագրված էր Ատրպատականը անջատել երկրի մնացած մասերից և հետագայում նրան միավորելով նաև «ռուսական» Աղրբեջանը՝ ստեղծել «նոր թուրքա-

կան պետություն»: Ի դեպ, այս խնդիրը իրագործելու համար թուրքական գործակալությունը սերտորեն համագործակցում էր Բաքվի մուսաֆաքականների հետ:

1918 թ. ջենգելիների մոտ ծառայող թուրք սպաները փորձում էին կազմակերպել Գիլյանի հայ բնակչության կոտորած: Սակայն ջենգելիները ոչ միայն կանխեցին այն, այլև միջոցներ ձեռնարկեցին հայ բնակչությանը նաև իսլամական մոլեռանդներից պաշտպանելու համար: Այս փաստը, անշուշտ, վկայում է այն մասին, որ ջենգելիները բնավ կույր գործիք չէին թուրքական գործակալության ձեռքին, թեև, ինչպես նշվեց, սերտորեն համագործակցում էին նրանց հետ:

Շահական կառավարությունը մի քանի անգամ պարսկական կոզակական զորամասերն ուղարկեց ջենգելիների դեմ, սակայն հաջողություն չունեցավ: Կառավարական զորքերի մոտենալուն պես ջենգելիների ջոկատները ցրվում էին, որպեսզի որոշ ժամանակ անց նորից հավաքվեն և վերսկսեն իրենց գործունեությունը:

Պարտիզանական-հայդուկային պատերազմի այս ճկուն մարտավարությունը երկար ժամանակ կառավարությանը հնարավորություն չէր տալիս ջախջախելու այդ շարժումը: Սակայն ի վերջո, 1918 թ. հուլիսի 12-ին Մենջիլի մոտ ջենգելիները խոշոր պարտություն կրեցին:

Այսպիսով՝ առաջին համաշխարհային պատերազմի եզրափակիչ էտապում հակառուսական ու հակաանգլիական պայքարի մեջ ընդգրկված էին իրանական հասարակայնության համարյա բոլոր խավերը: Առանձնակի ակտիվություն էին դրսևորում ազգայնական տարրերը: Նրանց կողմից կազմակերպված «Հայրենիքի պաշտպանության ընկերությունը» և «Իրանի անկախության պաշտպանության ազգային կոմիտեն» մի շարք վայրերում կազմակերպեցին ապստամբություններ ու զինված ելույթներ, սակայն, այնուամենայնիվ, նրանց չհաջողվեց ստեղծել միասնական ճակատ: Պայքարի մեջ ներգրավված ուժերը չունեին քաղաքական և կազմակերպչական միասնություն և շատ հաճախ իրենցից անկախ ծառայում էին Իրանում գերմանա-թուրքական գործակալության շահերի օգտին:

Պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիայի դիրքերն Իրանում չափազանց ուժեղացան: Ընդլայնվեց Անգլո-պարսկական նավթային ընկերության գործունեությունը: Իրանի հարավում անգլիական ազդեցությունը դարձավ տիրապետող: Ուժեղացավ նաև բրիտանական ազդեցությունը Թեհրանի կառավարության վրա: Ինչ վերաբերում է ռուսներին, ապա նրանք ռազմակալման վիճակում էին պահում Իրանի ողջ

հյուսիսը և կենտրոնական շրջանները:

Պատերազմի տարիներին ծանր վիճակ էր ստեղծվել նաև Իրանի տնտեսության մեջ: Երկրի տարբեր մասերի միջև խզվել էին տնտեսական կապերը, բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր քանդվել ու ավերվել էին: Ռոգման համակարգը շարքից դուրս էր եկել: Ռուսական, անգլիական և թուրքական զորքերը բնակչությունից բռնագրավում էին սննդամթերքն ու անասունները: Ցանքատարածությունները կրճատվեցին, և անասունների գլխաքանակը կտրուկ պակասեց: 1917թ. ամռանը սարսափելի երաշտի ու ավերածության հետևանքով սկսվեց սով, որին հետևեցին համաճարակները. Մի շարք շրջաններում ոչնչացավ բնակչության 30-50 %-ը:

1922 թ. Իրան ժամանած ամերիկյան խորհրդական Միլսպոն հաղորդում էր, որ գյուղերի ամայացման և ոռոգման համակարգերի քանդման ու ոչնչացման հետևանքով առանձին վայրեր վերածվեցին անապատի: Պարսիկ հեղինակ Ռեզա-զադե Շաֆաղը գրում է, որ Իրանում նման վիճակ թերևս գոյություն չուներ նույնիսկ մոնղոլական արշավանքների շրջանում: «Մշտապես այս կամ այն շրջանում սկսվում է սով, բռնկում են համաճարակներ, որոնց հետևանքով մահանում են հարյուր հազարավոր մարդիկ»,- գրում էր նա: Միայն Թեհրանում ընդամենը վեց ամսվա ընթացքում մահացավ մոտ 50 հազար մարդ: Նույնիսկ եղան մարդակերության դեպքեր: Քաղաքներում տեղի էին ունենում քաղցած ամբոխի բունտեր: Երկրում անիշխանությունն ու բանդիտիզմը հասան աննախընթաց չափերի: Բազում ավազակախմբեր ահաբեկում էին բնակչությանը: Առավել քայքայված շրջաններից բնակչության զանգվածային վտախուստի հետևանքով դրանք համարյա մարդաթափ եղան: Որոշ նահանգների նահանգապետներ հրաժարվում էին ենթարկվել կենտրոնական կառավարությանը, որի հետևանքով վերջինիս իշխանությունը ծայրամասերում դարձել էր լոկ ձևական: Երկրի ներքին և արտաքին առևտուրը կրճատվեց: Ֆինանսները գտնվում էին ճգնաժամային վիճակում: Մաքսային մուտքեր համարյա տեղի չէին ունենում:

1917 թ. փետրվարին Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխությունը, և ցարիզմի տապալման լուրը ցնծությամբ ընդունվեց Իրանում: Ենթադրվում էր, թե հեղափոխական Ռուսաստանը շուտով զորքերը դուրս կբերի Իրանից: Իրանի հասարակական շրջանները դիմեցին Պետրոգրադին՝ խնդրելով ընդառաջ գնալ պարսիկ ժողովրդի ցանկությանը և երկրի տարածքից պարպել զորքերը: Հիասթափությունը աննկարագրելի էր, երբ հայտնի դարձավ, որ Ռուսաստանի ժամանակավոր

կառավարության արտգործմինիստր Միլյուկովը 1917 թ. մարտի 17-ին հեռագրել է Թեհրանում ժամանակավոր հավատարմատար Վլադիմիր Մինորսկուն, որ Ռուսաստանի քաղաքականությունը Իրանի նկատմամբ ոչ մի փոփոխության չի ենթարկվելու, և նախկինի պես իրանական գործերում Ռուսաստանը համագործակցելու է Անգլիայի հետ:

Ուշագրավ է, որ 1917 թ. հունիսին թվակիր նամակ-հեռագրում Վ. Ֆ. Մինորսկին ժամանակավոր կառավարության արտգործմինիստր Մ. Ի. Տերեշչենկոյին ներկայացնում էր մի ծրագիր Իրանական Աղրբեջանը ինքնավար նահանգ հռչակելու վերաբերյալ: Կասկածից վեր է, որ այդ ծրագրի թաքնված իմաստը այն էր, որ հարմար առիթի դեպքում այդ ինքնավար նահանգը անջատվի Իրանից և միացվի Ռուսաստանին: Ընդ որում՝ որպես այդ ծրագրի քաղաքական ու տնտեսական հիմնավորում՝ ռուս ականավոր գիտնականն ու դիվանագետը առաջ էր քաշում այն տեսակետը, որ Իրանական Աղրբեջանն ունի առանձնահատուկ պատմություն, իսկ նրա բնակչությունը (աղրբեջանական թուրքեր)՝ յուրահատուկ ազգագրական ու լեզվական առանձնահատկություններ. բացի այդ, Իրանական Աղրբեջանը սերտ կապերով կապված է Անդրկովկասի հետ և այլն. «Աղրբեջանը պետք է լինի մի փորձադաշտ, որի վրա մենք կարող ենք իրականացնել մեր նոր քաղաքականության առաջին փորձերը»,- եզրափակում էր իր նամակ-հեռագիրը Վ. Ֆ. Մինորսկին:

Ի դեպ, 1917 թ. փետրվարին Վ. Մինորսկին Պետրոգրադ ուղարկած իր գաղտնի հեռագրում առաջարկում էր նաև Իրանի և Սուլեյմանիեյի (Թուրքիայում) քրդերին ևս տրամադրել ինքնավարություն, բնականաբար, պայմանով, որ նրանք գտնվեն Ռուսաստանի հովանավորության ներքո: Նմանատիպ ծրագրեր ժամանակավոր կառավարությունը փայփայում էր նաև թուրքմենների կապակցությամբ՝ մտադրություն ունենալով Թուրքմենական տափաստանը («Թորքման սահրա») հռչակել ինքնավար շրջան Ռուսաստանի հովանու ներքո, որը կնշանակեր «կլորացնել նրա սահմանները Գորգան գետով»: Այս ծրագրին գործնական իրագործում տալու համար ժամանակավոր կառավարությանը կից ստեղծվել էր հատուկ հանձնաժողով «Գյուրգանի հանձնաժողով» անունով:

Ռուսաստանում 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, ինչպես հայտնի է, բոլշևիկյան Ռուսաստանը որդեգրեց «առանց բռնազավթումների և ռազմատուգանքների հաշտություն կնքելու» սկզբունքը: Ռուսաստանի կառավարությունը հայտարարեց, որ ինքը չեղյալ է համարում Իրանի հետ ցարիզմի կնքած այն բոլոր պայմանագրերն ու համաձայնագրերը, «որոնք ուղղված են պարսիկ ժողովրդի ազատության և

անկախության դեմ»: Ռուսական կառավարության այդ հայտարարության հիման վրա իրանական կառավարությունը ուժը կորցրած ու չեղյալ հայտարարեց բոլոր այն պայմանագրերն ու համաձայնագրերը, որոնք բռնի կերպով պարտադրվել էին Իրանին կամ հակասում էին նրա քաղաքական և տնտեսական ազատության սկզբունքներին, պարսիկ ժողովրդի ազատ զարգացմանը և նրա իղձերի ու ցանկությունների իրականացմանը: Իրանական կառավությունը նախ և առաջ չեղյալ հայտարարեց 1828թ. ռուս-իրանական Թուրքմենչայի պայմանագիրը:

1918 թ. հունվարի 14-ին Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար Տրոցկին պաշտոնական ուղերձով դիմեց իրանական կառավարությանը, որով 1907 և 1915 թթ. ռուս-անգլիական պայմանագրերը, ինչպես նաև Ցարական Ռուսաստանի կողմից Իրանում ձեռք բերված բոլոր կոնցեսիաները և իրավունքներն ու արտոնությունները չեղյալ էին հայտարարվում: Ուղերձում նաև նշվում էր, որ ռազմական գործողությունները դադարելուն պես ռուսական զորքերը դուրս կբերվեն Իրանից, և «պարսիկներին իրավունք» կապահովվի ազատորեն որոշելու իրենց ճակատագիրը: Միաժամանակ շեշտվում էր, որ «սովետական իշխանությունը կանի միջազգային հարաբերություններում իրենից կախված ամեն ինչ, որպեսզի Իրանից դուրս բերվեն նաև թուրքական և անգլիական զորքերը»: Պետրոգրադը խոստանում էր նաև այսուհետև «Իրանի հետ Ռուսաստանի հարաբերությունները կառուցել փոխադարձ հարգանքի սկզբունքի վրա»:

1918 թ. հունվարի 18-ին Թեհրան ժամանեց Ռուսաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ժամանակավոր ներկայացուցիչ Կ. Բրավինը, որը հրապարակեց մի հայտարարություն, որտեղ մասնավորապես ասվում էր. «Այս հայտարարությամբ ես հայտնում եմ, որ պատրաստ եմ բանակցությունների մեջ մտնել իրանական կառավարության անդամների հետ՝ բոլոր անօրինական պայմանագրերի ու համաձայնագրերի չեղյալ հայտարարելու վերաբերյալ... Որպես Ռուսաստանի հեղափոխական կառավարության ներկայացուցիչ՝ ես պատրաստ եմ նրա անունից ստորագրել պատվավոր պայմանագիր իրանական կառավարության հետ»:

Հենվելով Բրավինի այդ հայտարարության, ինչպես նաև խորհրդային կառավարության արտաքին քաղաքական ակտերի վրա (որպես միջազգային նշանակություն ունեցող իրավական փաստաթղթերի)՝ Սամսամ-օս-Սալթանեի (Նաջաֆ դուլի խան Բախթիար) կառավարությունը 1918թ. հուլիսի 30-ին հրապարակեց հռչակագիր՝ կապիտուլյացիոն ռե-

ժիմի և Իրանի կողմից օտարերկրյա պետությունների հետ բոլոր անհրավահավասար պայմանագրերի չեղյալ հայտարարելու մասին:

1918 թ. հունվարին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը սկսեց Իրանից ռուսական զորքերի դուրս բերումը, որն ավարտվեց նույն թվականի մարտի 23-ին: Նրանց դիրքերն անմիջապես զբաղեցվեցին անգլիական զորքերի կողմից:

Իրանում մնացին միայն գեներալ Բարաթովի, Ստարոսելսկու և Բիչերախովի առանձին զորամասեր, որոնք հրաժարվեցին վերադառնալ հայրենիք: Դրանք Ռուսաստանում մահվան դատապարտված սպաներ էին, որոնք ծառայության անցան Իրանում տեղակայված անգլիական զորքերի մոտ:

Ռուսաստանի կողմից Իրանին հանձնված Ջուլֆա-Թավրիզ երկաթուղագիծը գրավվեց թուրքական զորքերի կողմից, որոնք այդ երկաթգծով զորքեր էին տեղափոխում Ատրպատական:

Անգլիացիները Իրանում պահպանեցին նախապատերազմյան շրջանից իրենց ունեցած բոլոր արտոնությունները ու իրավունքները, բոլոր կոնցեսիաները ու մենաշնորհները: 1918 թ. հունվարին նրանք Միջագետքից Իրան ուղարկեցին ռազմական մի արշավախումբ՝ գեներալ Դենստերվիլի գլխավորությամբ: Այդ ուժերի առջև, որին բրիտանական հրամանատարությունը տվել էր «Դենստերֆորս» («Դենստերվիլի ուժեր») գաղտնի անվանումը, դրված էր հետևյալ խնդիրը. կազմակերպել հակահարված թուրքական հարձակմանը դեպի Կովկաս, կանխել բոլշևիկյան առաջխաղացումը դեպի Իրան և ապահովել բրիտանական ազդեցությունը Իրանի ողջ տարածքի նկատմամբ: Դենստերվիլի զորամիավորումների հետ միաժամանակ, 1918 թ. գարնանը, անգլիական կառավարությունը Իրան ուղարկեց զորքերի նոր համալրումներ:

Այսպիսով՝ Իրանի ողջ տարածքը ռազմականացման ենթարկվեց անգլիական զորքերի կողմից: Թեև իշխանության ղեկի մոտ գտնվող Մոսթոուֆի-օլ-Մամալեքի կառավարությունը պահանջեց դուրս բերել անգլիական զորքերը երկրից և չեղյալ հայտարարել 1907 թ. համաձայնագիրը, սակայն Անգլիան չկատարեց այդ պահանջներից և ոչ մեկը: Ուստի Իրանը միակողմանիորեն չեղյալ հայտարարեց այդ համաձայնագիրը (1918 թ. մայիսին): Որպես պատասխան՝ բրիտանական դիվանագիտությունը կարողացավ հասնել նրան, որ Մոսթոուֆի-օլ-Մամալեքի ազգայնական կառավարությունը տապալվի:

Օսմանյան կայսրությունը ևս ոչ միայն իր զորքերը դուրս չբերեց Իրանից, այլև 1918 թ. հունվարից սկսեց նոր զորամասեր ուղարկել այն-

տեղ: Երիտթուրքական ղեկավար շրջանները գտնում էին, որ ռուսական զորքերի դուրս բերումը Հյուսիսային Իրանից հիանալի հնարավորություն է ստեղծել իրականացնելու իրենց փայփայած պանթյուրքիստական ծրագրերը՝ զավթելու Ատրպատականն ու Գիլյանը և այնտեղից շարժվելու Բաքու: 1918 թ. փետրվարի կեսերից, հենց որ սկսվեց թուրքական զորքերի առաջխաղացումը Տրապիզոն-Բաթում և Էրզրում-Ալեքսանդրոպոլ ուղղություններով, թուրքական չորրորդ բանակը գեներալ Ալի Իհսան փաշայի հրամանատարությամբ հրաման ստացավ հետ շպրտել քայքայվող ռուսական կովկասյան ճակատի ձախ թևը և գրավել Վան-Բայազետի շրջանը: Դրանից հետո ծրագրված էր գրավել Ատրպատականն ու Գիլյանը և Ենզելի նավահանգստից շարժվել Բաքվի վրա և այն վերցնել աքցանի մեջ: 1918 թ. մարտին Ատրպատականում թուրքական վեցերորդ բանակը գեներալ Խալիլ փաշայի հրամանատարությամբ անցավ հարձակման և գրավեց Մակուն, իսկ մայիսին՝ Խոսրովը և Սալմաստը:

Ատրպատականում թուրքերի պանթյուրքիստական քարոզչությունը՝ երկրամասը Թուրքիային միացնելու առումով, ուղեկցվում էր երկրամասի ասորի, հայ և պարսիկ բնակչության կոտորածներով, որոնց նպատակն էր էթնիկական զտման ճանապարհով Ատրպատականը վերածել զուտ թուրքական տարրերից բաղկացած մի տարածքի: Դա նաև նշանակում էր «անհուսալի» և «արյամբ խորթ տարրերից» մաքրել դեպի Թուրան տանող ճանապարհը:

1918 թ. մարտի 3-ին կնքվեց Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, որի 3-րդ հոդվածի համաձայն՝ Խորհրդային Ռուսաստանը և Թուրքիան պարտավորվում էին իրենց զորքերը դուրս բերել Իրանից:

Պատճառաբանելով, որ ինքը մտադիր է Ատրպատականը «մաքրել» հայ և ասորական հայդուկային ջոկատներից՝ Ստամբուլը ոչ միայն զորքերը չհանեց Իրանի տարածքից, այլև ծավալեց խոշորամասշտաբ ռազմական գործողություններ: Ի դեպ, Ատրպատականը գրավելու միջոցո՛ւ թուրքական հրամանատարությունը ենթադրում էր նաև խախտել կոմունիկացիաները Միջագետքում գործող անգլիական զորքերի և Գիլյանում գտնվող գեներալ Դենստերվիլի ուժերի միջև:

1918 թ. հունիսին թուրքական վեցերորդ բանակի զորամասերը, շարունակելով հարձակումը, գրավեցին Խոյը, Ուրմիան, Սերաբը և Արդեբիլը, սակայն Դիլմանի մոտ հանդիպեցին հայկական և ասորական հայդուկային ջոկատների համառ դիմադրությանը: Իսկ Ուրմիայի մոտ, որտեղ գտնվում էր հայ պարտիզանների հենակետերից մեկը, հայկա-

կան ջոկատին նույնիսկ հաջողվեց պարտության մատնել Ալի Իհսան փաշայի զորքերի խոշոր խմբավորումներից մեկը:

1918 թ. հունիսի 14-ին թուրքական զորքերը գրավեցին Թավրիզը: Երիտթուրքերը դա համարեցին կարևոր հաղթանակ, որովհետև Թավրիզը Ատրպատականի սիրտն էր: Այնտեղից նրանց առջև բացվում էին իրենց պանթյուրքիստական ծավալապաշտական ծրագրերը իրականացնելու մեծ հեռանկարներ ոչ միայն Իրանի, այլև ողջ Միջին Արևելքի նկատմամբ: Ստամբուլում լույս տեսնող «Թարջուման-ի հաղիղաթ» թերթում հայտնի պանթյուրքիստ Մեհմեդ Ֆուաղ Քյոփրուլուզադեն ոգևորությամբ գրում էր, որ Թավրիզը ոչ հեռու ապագայում կարող է դառնալ թուրքիզմի խոշոր կենտրոն և կապող օղակ Թուրքիայի, Իրանի և Թուրանի միջև:

Իրենց գործողությունները Հյուսիսային Իրանում ակտիվացրին նաև անգլիացիները: 1918 թ. հունիսի վերջին գեներալ Դենստերվիլը գրավեց Ռեշտը, իսկ ապա նաև Էնզելին՝ դրանով իսկ փակելով թուրքերի ճանապարհը դեպի Բաքու: Ջենգելիները, որոնք ընդամենը մի քանի ամիս առաջ հանդես էին գալիս անգլիացիների դեմ «Կորչեն օտարերկրացիները», «Պարսկաստանը՝ պարսիկների համար» կարգախոսների ներքո, իրենց քաղաքականության մեջ կատարելով կտրուկ շրջադարձ, դաղարեցրին պայքարը գեներալ Դենստերվիլի ուժերի դեմ, և 1918 թ. օգոստոսի 12-ին Քուչեք խանը համաձայնագիր կնքեց անգլիացիների հետ, որով նա պարտավորվում էր թույլ տալ նրանց Գիլյանի վրայով շարժվել դեպի Բաքու: Դրա փոխարեն անգլիացիները համաձայնվում էին Գիլյանում ճանաչել Քուչեք խանի իշխանությունը: Այդ մեծ հաջողությունը ձեռք բերվեց ոչ այնքան բրիտանական զինված ուժերի կողմից մկանների ցուցադրմամբ, որքան անգլիական ոսկու շնորհիվ: Հենց այդ պատճառով էլ անգլիացիների համագործակցությունը ջենգելիների հետ շատ կարճ տևեց: Իրենց գլխավոր նպատակին հասնելուց հետո Դենստերվիլը Քուչեք խանի դեմ ուղարկեց մի պատժիչ զորամաս, որից հետո ջենգելիները ստիպված եղան քաշվել խուլ անտառները:

Մինչդեռ թուրքական միլիտարիզմը իր վերջին ճիգերն էր գործադրում պատերազմի ընթացքում իր տարածքային զավթումները պահպանելու համար: Ի վերջո, Ստամբուլը ստիպված եղավ իր զորքերը դուրս բերել Կովկասից ու Ատրպատականից: 1918 թ. հոկտեմբերի 22-ին արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան այդ մասին ստացավ համապատասխան հրաման:

1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարով Օսմանյան կայսրությունը կապիտուլյացիայի էր ենթարկվում Եռյակ հա-

մածայնության դաշնակիցների՝ Անգլիայի և Ֆրանսիայի առջև: Զինադադարի 11-րդ հոդվածի համաձայն՝ Ստամբուլը պարտավորվում էր անհապաղ իր զորքերը դուրս բերել Իրանի տարածքից: Արդեն 1918 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում օսմանյան զորքերը հեռացան Ատրպատականից: Դա հնարավորություն տվեց բրիտանական հրամանատարությանը ռազմակալման ենթարկել Իրանի ողջ տարածքը: Անգլիացիները Իրանի բազմաթիվ քաղաքներում տեղակայեցին զորքեր, ստեղծեցին զենքի ու զինամթերքի պահեստներ, հեռագրական գծերով Իրանը կապեցին Իրաքի հետ, որտեղ կենտրոնացած էին բրիտանական հիմնական ուժերը, կառուցեցին ռադիոհեռագրական նոր գծեր և այլն: Էնզելի նավահանգիստը վերածվեց Կասպից ծովում անգլիական ռազմածովային հենակետի:

Դեռևս 1918 թ. հուլիսի 30-ին Թեհրանում կազմավորվել էր նոր կառավարություն Վոսուղ-օդ-Դոուլեի գլխավորությամբ, որը անգլիացիների հետ վարում էր սերտ համագործակցության քաղաքականություն:

1918 թ. ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի կողմից հայտնի «14 կետերի» հրապարակումից հետո, իրանական կառավարությունը անհապաղ քայլեր ձեռնարկեց, որպեսզի ստանա Փարիզի խաղաղության վեհաժողովին մասնակցելու իրավունք՝ որպես պատերազմից տուժած երկրի: Թեհրանում մշակվեց մի հուշագիր, որի մեջ ամփոփված էին մի շարք պահանջներ՝ ուղղված Առաջին աշխարհամարտում հաղթանակած պետություններին:

Մասնավորապես հուշագիրը պարունակում էր հետևյալ պահանջները:

1. Իրանական կառավարությանը պետք է թույլատրվի մասնակցելու խաղաղության վեհաժողովին, թեև պատերազմում չեզոքություն պահպանած մյուս պետություններին չի թույլատրվել մասնակցելու: Սակայն, նկատի ունենալով, որ Իրանը տուժել է իր տարածքում տեղի ունեցած ռազմական գործողությունների հետևանքով, նրա համար պետք է կատարվի բացառություն:

2. Պետք է չեղյալ հայտարարվեն այն պայմանագրերը, կոնվենցիաներն ու համաձայնագրերը, որոնք խախտում են Իրանի տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը: Այն պետությունները, որոնք ստորագրելու են Փարիզի խաղաղության պայմանագիրը, պետք է բավարար հավաստիացումներ տան այն մասին, որ ապագայում Իրանի ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը կերաշխավորվեն ամեն տեսակի միջամտություններից:

3. Իրանին փոխհատուցել այն վնասների դիմաց, որ նա կրել է իր

տարածքում ռազմական գործողություններ վարած պետությունների կողմից:

4. Ճանաչել Իրանի տնտեսական անկախությունը:

5. Ընդունել դրական որոշում կապիտուլյացիների վերացման մասին:

6. Կնքել առևտրական նոր պայմանագրեր և կարգավորել Իրանի մաքսային տարիֆները երկրի տնտեսական շահերը պաշտպանելու համար:

Հուշագրի 8-րդ կետում պահանջվում էր «հաստատել պարսկական սահմանները և Իրանին վերադարձնել անիրավացի կերպով նրանից անջատված տարածքները»: Այս կետը վերաբերվում էր լոկ կովկասյան և միջինասիական սահմաններին, որովհետև թեև Անգլիան բոնազավթման էր ենթարկել Պարսից ծոցում Իրանին պատկանող մի քանի կղզիներ, սակայն իրանական կառավարությունը հարց չէր բարձրացնում դրանք վերադարձնելու մասին: Թեհրանը պահանջում էր արևելքում իր սահմանը անց կացնել Ամու Դարյա գետով՝ իրեն վերադարձնելով Անդրկովկասյան շրջանները՝ Կրասնովոդսկ, Աշխաբադ, Մերվ, Խիվա և այլ քաղաքներով հանդերձ, իսկ Կովկասում վերադարձնել իր «կորցրած» հետևյալ տարածքները. Դաղստանի մի մասը, ներառյալ նաև Դերբենտ քաղաքը, ողջ Ադրբեջանը՝ Բաքու քաղաքով հանդերձ, Արևելյան Հայաստանը, ներառյալ նաև Երևանը, Նախիջևանը և Ղարաբաղը:

Իրանական հուշագրում պահանջվում էր նաև վերադարձնել մինչև Եփրատ գետն ընկած այն բոլոր տարածքները, որոնք նախկինում մտնում էին Օսմանյան կայսրության Բաղդադի փաշայության կազմի մեջ, սակայն պատմականորեն տնական ժամանակամիջոցի ընթացքում պատկանել էին Իրանին:

Արևմտյան պատմաբանները (Նիկոլսոն, Թեմպերլեյ, Սայքս, Լենչովսկի և այլն) իրանական կառավարության տարածքային այս պահանջներն անվանել են «ֆանտաստիկ»:

Վերոհիշյալ պահանջները Փարիզի վեհաժողովին ներկայացնելու համար Թեհրանը Ֆրանսիա գործուղեց մի բազմամարդ պատվիրակություն արտաքին գործերի մինիստր Մոշավեր-օլ-Մամալեքի գլխավորությամբ, որը 1919 թ. սկզբին ժամանեց Փարիզ:

Երբ իրանական հուշագիրը հանձնվեց Փարիզի վեհաժողովի քարտուղարությանը, այն առաջ բերեց հաղթանական պետությունների զարմանքն ու դժգոհությունը: Անգլիայի արտգործմինիստր լորդ Քերզոնը հայտարարեց իրանական պատվիրակության անդամ Փիրուզ միրզային, որ եթե իրանական հուշագիրը հրապարակվի, այն առաջ կբերի վեհաժողովի մասնակիցների ծիծաղը:

Փարիզի վեհաժողովը հրաժարվեց Իրանի ներկայացրած հուշագիրը մտցնել օրակարգ: Միաժամանակ պետությունները մերժեցին Իրանի պատվիրակության մասնակցության հարցը վեհաժողովի աշխատանքներին՝ դա հիմնավորելով նրանով, որ Իրանը չի մասնակցել պատերազմին, և, բացի այդ, իրանական պահանջների 8-րդ կետը խախտում է «Ռուսաստանի տարածքային ամբողջականությունը»: Իրանական դիվանագետներին հիշեցրին նաև, որ այդ ժամանակ Հարավային Կովկասում դե ֆակտո գոյություն ունեին երեք անկախ հանրապետություններ՝ հայկական, աղրբեջանական և վրացական: Ի դեպ, մեծ պետությունների ղեկավարներից միայն ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը գտնում էր, որ Իրանը իրավասու է մասնակցելու խաղաղության վեհաժողովի աշխատանքներին:

Այսպիսով՝ հայրենասերի վարկ ձեռք բերելու և դրանով իսկ իրենց դիրքերն ամրապնդելու իրանական կառավարող շրջանների այդ փորձը, որն ամբողջապես նախատեսված էր ներքին օգտագործման համար, ավարտվեց կատարյալ ձախողմամբ:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

1. ՀԻՆ ԻՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Իրանական բարձրավանդակում հայտնաբերված հնագույն մշակութային շերտը թվագրվում է մ.թ.ա. V-IV հազարամյակում: Հնագիտական պեղումները վկայում են, որ նշված շրջանում արդեն առկա է եղել ճարտարապետական ու հարդարային որոշակի կուլտուրա, բավականին զարգացած արհեստագործություն, հատկապես խեցեգործություն, մետաղամշակություն և այլն: Առաջնային կիրառում էին ստացել արծաթ և բրոնզ մետաղները:

Մ.թ.ա. III-րդ հազարամյակի նախաշեմին Իրանի հարավ արևմտյան մասում հաստատվում է առաջին պետական կազմավորումը՝ Էլամի պետությունը, որի մշակույթի մասին մեզ հասած տեղեկությունները խիստ սակավաթիվ են: Առանձին կառույցների պահպանված մասնահատվածները, որմնաքանդակների և կիրառական արվեստի նմուշները վկայում են, որ հին իրանական այդ պետության մեջ առկա է եղել որոշակի մակարդակի հասած կառուցողական արվեստ, հիմնվել են քաղաքատիպ բնակավայրեր, որոնք, ըստ էության, հանդիսացել են արհեստագործական կենտրոններ: «Ավան-քաղաք» կառուցվածքները ներկայանում են մոնումենտալ ճարտարապետական հատակագծմամբ: Լայն կիրառում է ստանում թրծված աղյուսը, որը հանդիսանում է նորույթ ժամանակի կառուցողական արվեստում:

Էլամական արվեստը գտնվել է Միջագետքի աքքադական-ասորական մշակույթի ուժգին ազդեցության ներքո: Սակայն դրանով հանդերձ, անկասկած, տիրապետող են հանդիսացել տեղական գեղարվեստական մտածողության արտահայտումները, որի մասին են վկայում խեցեգործական և քարից պատրաստված իրերի օրինակները՝ նրբագեղ մոդելավորմամբ և զարդահորինվածքների ինքնատիպ կառուցվածքներով (թռչուններ, վայրի կենդանիներ, մարդկային ֆիգուրներ, որոնց համակցվում են թևավոր առյուծների և դիվային էակների կերպարներ, ինչպես նաև կենցաղային տեսարաններ ներկայացնող թեմատիկ հորինվածքներ):

Էլամական արվեստի ձեռքբերումներից է նաև մանրափորագրության տեխնիկան (գլիպտիկա)՝ ֆրիտից (ապակեմածուկ), բիտումից, քարից, կավից, կրաքարից, ծովախխունջներից պատրաստվող կնիքներով, որոնց վրա տեղադրված զարդահորինվածքները աչքի են ընկնում գեղարվեստական բարձր կատարմամբ, ձևերի արտահայտչականությամբ, ներկայացվող կերպարների անհատականացումներով և այլն: Էլամական մշակույթի անհատական դիմագծի կազմավորման վառ ապացույցներից է նաև II-րդ հազարամյակում տեղական գրային համակարգի՝ պատկերագրի ձևավորումը:

Էլամական արվեստի և արհեստագործության նվաճումները որոշակի ազդեցություն են ունեցել հետագա շրջանների գեղարվեստական կազմավորումների վրա, որի մասնակի օրինակներից է հանդիսանում իրանական բարձրավանդակի հարավ արևմտյան շրջանում գտնվող Լուրիսթան երկրամասում կազմավորված այսպես կոչված «Լուրիսթանյան բրոնզի» արվեստը (մ.թ.ա. X-VII դարեր), որը ներկայացված է բրոնզ, պղինձ, ինչպես նաև ոսկու մետաղների ձուլալցմամբ և դրվագման բարձրակարգ տեխնիկայով ստեղծագործված ծիսական, կենցաղային, արդուզարդի բազմանպատակ իրերով, զինատեսակներով և այլն: Լուրիսթանյան բրոնզե զարդաքանդակային օրինակները հաստատում են բարձրակարգ գեղարվեստական մտածողության և վարպետության առկայությունը հին իրանական մշակույթի կազմավորումներից մեկում:

Մ.թ.ա. IX-VII դդ. Իրանական բարձրավանդակի հյուսիս արևմտյան շրջանում և Ուրմիա լճին հարող տարածքում հաստատված Մաննա պետությունը կարճ ժամանակ անց ներգրավվել է առավել հզոր Մարական (Մեդական) պետության կազմի մեջ և իր մշակութային համակարգով կազմավորել մաննա-մարաստանյան արվեստի ընդհանրական կառուցվածքը:

Ցավոք, մեզ չեն հասել մարաստանյան արվեստի լիարժեք օրինակներ: Սակայն մասնակի պահպանված բեկորները և հետագա շրջաննե-

րի իրանական արվեստի մեջ տեղ գտած մարաստանյան արտահայտումները վկայում են տեղական մշակույթի զգալի ձեռքբերումների և բարձրակարգ վարպետ ստեղծագործողների գործունեության մասին:

Մարաստանյան մշակույթի առավել ինքնատիպ դրսևորումներից է ճարտարապետությունը՝ պալատական, դամբարանային համալիրներով, ծիսական կառույցներով և այլն (օրինակ՝ Դայի-Դոխթարի, Ղասր-ե-Շիրինի և այլ վայրերի կառույցները), որոնց մոդելավորումներում հստակ նկատելի են էլամական կառուցողական մոտեցումների և մասնավորապես եգիպտական արվեստի ընդօրինակումների համատեղումներ: Ըստ էության, մարաստանյան արվեստի կառուցվածքն իր մեջ ներառում է էլամական արվեստի հիմնաձևերը և Միջագետքի արվեստների գաղափարական հիմնավորումները:

Աքեմենյան դարաշրջանի Իրանի մշակույթը համեմատաբար լավ է ուսումնասիրված: Մշակույթն այդ դարաշրջանում հասել էր բարձր մակարդակի: Դրանում, անկասկած, իրենց խոշոր ավանդն ունեին հսկա տերության բոլոր ժողովուրդները: Անտարակույս, տեղական գեղարվեստական մտածողության վրա զգալի ներազդեցություն են ունեցել էքզիկ ակտիվ փոխշփումները, որոնք նպաստել են էլամական, բաբելոնյան, եգիպտական, հունական և այլ քաղաքակրթությունների և մշակույթների սինթեզին: Կարևոր է, սակայն, նշել, որ աքեմենյան մշակույթը էկլեկտիկ բնույթ չուներ: Նրանում ցայտուն կերպով դրսևորվում էր յուրահատուկ աքեմենյան ոճը:

Աքեմենյան մշակույթը հանդիսացել է տիպիկ արքունական-մոնումենտալ, որը կոչված էր խորհրդանշելու պետության հզորությունը և արքայական իշխանության վեհությունը: Աքեմենյան պալատական ոճը գտավ լայն տարածում՝ փաստորեն ստեղծելով մշակութային միասնություն Հինդոս գետից մինչև Փոքր Ասիայի ափերը:

Աքեմենյանների շրջանում նշանակալից զարգացման հասավ ճարտարապետությունը: Իրենց նստավայրերում արքայից արքաները կառուցում էին վիթխարակերտ շենքեր: Աքեմենյան ճարտարապետության առավել աչքի ընկնող հուշարձաններ են հանդիսանում Կյուրոսի դամբարանը Փասարգադի վաղ աքեմենյան նստավայրում, Սուզայի արքայական պալատը և Դարեհի ու Քսերքսեսի պալատները Պերսեպոլիսում:

Պլուտարքոսի վկայությամբ՝ Փասարգադը հանդիսանում էր աքեմենյանների սրբազան մայրաքաղաքը: Յուրաքանչյուր նոր արքա թագադրվում էր հենց այնտեղ: Քաղաքը գտնվում էր Պերսեպոլիսից 80 կմ հյուսիս-արևելք: Փասարգադի շենքերը հանդիսանում են պարսկական

նյութական մշակույթի հնագույն հուշարձանները: Քաղաքի պալատները կառուցված են եղել զբոսայգիների և այգիների մեջ (հնագույն աքեմենյան պարադիսների), որոնք շրջապատված են եղել բարձր պարիսպներով: Փասարգադում է գտնվում մոտ 46 մ բարձրություն ունեցող մի քարե շինություն, որը ներկայումս անվանում են «Սողոմոնի գահ» («Թախթ-ի Սուլեյման»): Քաղաքի հարավային մասում կառուցված են եղել պալատներ ու տաճարներ: Այնտեղ է գտնվում նաև Կյուրոսի դամբարանը: Փասարգադում հնում վեր են խոյացել թևավոր մարդացուլերի՝ վիթխարի չափերի հասնող արձաններ:

Պերսեպոլիսը (այն Իրանում անվանում են «Թախթ-ի Ջեմշիդ» («Ջեմշիդի գահը»)) գտնվում է Շիրազից 50 կմ հյուսիս՝ «Քուհ-ի Ռահմաթ» («գթության լեռ») լեռան մոտ: Քաղաքի անվանումը հունական է: Աքեմենյան արձանագրություններից մեկում այն հիշատակվում է Պարսա անվանումով: Պարսա երկիրը (ներկայիս Ֆարսը), նրա ժողովուրդը և արքայական նստավայրը կոչվում էին Պարսա: Սխալմամբ ենթադրելով, որ դա ողջ երկրի անվանումն է՝ հույները ամբողջ Իրանը կոչեցին Պերսիա (Պարսկաստան): Միայն 1936 թ. իրանական կառավարությունը դիմեց բոլոր երկրներին՝ խնդրելով իրենց երկիրն անվանել Իրան:

Մահմեդական շրջանում Պերսեպոլիս անվանումը մոռացության էր տրվել, և նրա ավերակները անվանվեցին «Թախթ-ի Ջեմշիդ»՝ իրանական էպոսի առասպելական հերոսի անունով: Սասանյան շրջանում Պերսեպոլիսից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվել է հայտնի Ստահր քաղաքը:

Շնորհիվ տարիներ շարունակ կատարված հնագիտական պեղումների՝ Պերսեպոլիսը հանդիսանում է առավել լայն ուսումնասիրված հնագույն քաղաքներից մեկը: Քաղաքի շինարարությունը սկսվել է մոտավորապես մ.թ.ա. 520 թ. Դարեհ Ա-ի կողմից և շարունակվել է նրա հաջորդների՝ Քսերքսեսի և Արտաքսերքսես Ա-ի կողմից մոտավորապես մինչև մ.թ.ա. 450 թ.: Այսօր էլ Պերսեպոլիսը զարմացնում է իր շինությունների վիթխարի չափերով և ճարտարապետական կատարելությամբ: Պերսեպոլիսի պալատները իրենցից ներկայացնում են մի միասնական ճարտարապետական համալիր, որոնք բաղկացած են շենքերի երկու տիպից. տաչարա՝ բնակելի պալատ, և ապադանա՝ շքահանդեսային դահլիճ: Հնագետների միահամուռ կարծիքով՝ Պերսեպոլիսի ապադանան հանդիսանում է հին աշխարհի ամենահռչակավոր շինություններից մեկը: Ապադանայի վրա գտնվող խորաքանդակում պատկերված են տերության 33 ժողովուրդների ներկայացուցիչներ (այդ թվում նաև հայ),

որոնք նվերներ են մատուցում արքայից արքային: Դա մի հսկայական ազգագրական թանգարան է, որտեղ պատկերված են տարբեր ցեղերի ու ժողովուրդների զգեստները, զենքի տեսակները և այլն:

Պերսեպոլիսում ապադանայից հետո ամենամեծ շենքը գահադահլիճն է: Նրա առաստաղը պահվում էր 19,96 մ բարձրություն ունեցող հարյուր սյուների վրա: Այստեղ տեղի էին ունենում թագավորական ընդունելությունները ու խնջույքները: Գահադահլիճի հյուսիսային մուտքի մոտ պատկերված է արքայից արքան, որը մարտնչում է մի հրեշի հետ, որի գլուխը, իրանը և առջևի թաթերը առյուծի են, վիզը, թևերը և հետևի ոտքերը՝ թռչունի, իսկ պոչը՝ կարիճի: Պերսեպոլիսում կան նման բազմաթիվ պատկերներ, որոնք խորհրդանշում են պայքարը օրինական իշխանությունների դեմ ապստամբած Ահրիմանի ստեղծած չար արարածների հետ:

Աքեմենյան արքաները իրենց մերձավորների հետ «Նովրուզը» (Նոր տարին, մարտի 22-ին) դիմավորում էին Պերսեպոլիսում:

Պերսեպոլիսի կառույցի տարածական, վեհանիստ հատակագծումը, Աքեմենյան արքաների ծավալային քանդակները, բազմաքանակ քանդակազարդերն ու որմնաքանդակները, ներքին հարդարանքի շքեղությունը (ոսկեպատ սյուներ, արծաթապատ պատեր, գունագեղ որմնանկարներ և այլն) նախատեսված էին ներկայացնելու Աքեմենյաններ-ի տիեզերական մեծությունը, նրանց աշխարհակալությունը և գերագույն իշխանությունը բազմաթիվ երկրների ու ժողովուրդների վրա:

Պերսեպոլիսյան դեկորատիվ-հարդարային մշակումները նորույթ էին հին արևելյան համակարգի մեջ, զուտ աքեմենյան արվեստի ճեռքբերումներ, որոնց արտահայտումները ժառանգաբար շարունակվեցին և հետագա շրջաններում:

Աքեմենյան շրջանի նշանավոր քաղաքներից էր նաև Սուզան: Այն եղել էր հին էլամական քաղաք: Ստրաբոնի վկայությամբ՝ յուրաքանչյուր պարսից թագավոր Սուզայում կառուցում էր իր պալատը: Քաղաքում, բացի պարսիկներից, մեծ թիվ էին կազմում բաբելացիները, եգիպտացիները, հրեաները, հույները և այլն:

Դարեհ Ա-ից սկսած՝ աքեմենյան արքաները իրենց պալատներն էին կառուցում նաև Էկբաթանում:

Աքմենյան շրջանի շինությունները զարդարված են առասպելական և իրական կենդանիներ պատկերող արձաններով, նախշանկարներով, ոսկյա զարդաքանդակներով, փայտի և փղոսկրի վրա փորագրություններով և այլն:

Աքեմենյան պետության մեջ բարձր զարգացման էին հասել նաև գե-

դարվեստական արհեստները: Այդ մասին են վկայում հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերված հարուստ նյութերը, որոնք ներկայումս ցուցադրվում են Պերսեպոլիսի թանգարանում: Այնտեղ ներկայացված են դրվագված և փորագիր բուսական զարդանախշերով և թեմատիկ հորինվածքներով ոսկյա և արծաթյա կենցաղային սպասք, զարդեր, զինագործական իրերի օրինակներ, որոնք վկայում են զարգացած մետաղագործության, ոսկերչության, քարի, կիսաթանկարժեք քարերի մշակման բնագավառների գոյության մասին:

Պերսեպոլիսից ոչ մեծ հեռավորության վրա է գտնվում Նախշ-ի Ռուստամի Աքեմենյան դարաշրջանի կրոնական հուշարձանների համալիրը: Դա հնագույն Իրանի սրբավայրն է: Այստեղ են գտնվում նաև չորս դամբարաններ (Դարեհ Ա-ի, Քսերքսեսի, Արտաքսերքսես Բ-ի և Դարեհ Բ-ի):

Առհասարակ, պետք է նշել, որ աքեմենյան տերության մեջ իշխում էր մի այնպիսի մթնոլորտ, որը նպաստում էր մշակույթի ու գիտության զարգացմանը: Հին աշխարհի այնպիսի հայտնի գիտնականներ, ինչպես Եփեսոսցի Հերակլիտը, բաբելացի աստղաբաշխ Կիդիննուն, պատմիչ Հերոդոտը և շատ ուրիշներ, պարսից արքաների հպատակներ էին: Արվեստի այնպիսի ստեղծագործություններ, ինչպես Դիանա աստվածուհու տաճարը Էփեսոսում և Հալիկարնասի դամբարանը, որոնք հների կողմից վերագրվել են աշխարհի յոթ հրաշալիքներին, նույնպես ստեղծվել են աքեմենյանների հպատակների կողմից: Դարեհ Ա-ի և Քսերքսեսի պալատում է աշխատել հույն քանդակագործ Տելեֆանը: Գիտնականների կարծիքով՝ Պերսեպոլիսի բազմաթիվ հուշարձանների նրբին աշխատանքն ու ոճը հանդիսանում են տիպիկ հունական:

Հունական ազդեցությունը պարսկական մշակույթի վրա էլ ավելի ուժեղացավ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքից հետո: Այդ զորավարի փաղանգների հետ Իրան էին ներթափանցում նաև Էլլադայի գեղարվեստական ճաշակը, նրա բարձր մշակութային արժեքները: Արդեն Քսերքսեսի դարաշրջանում ստեղծվեց Արևելքի և Արևմուտքի մշակութային միասնություն: Արտաքսերքսես Բ-ն ողջ երկրով մեկ՝ Բաբելոնում, Սուզայում, Էկբաթանում, Պերսեպոլիսում, Դամասկոսում, Սարդում և այլուր, կանգնեցնում էր Անահիտ աստվածուհու արձանները: Ընդորում Անահիտը նույնացվում էր Արտեմիսի, Ապոլլոնը և Հելիոսը՝ Միթրայի, Զևսը՝ Ահուրա մազդայի հետ:

Աքեմենյանների տիրապետության շրջանը բնորոշվում էր էքնիկական խառնումների ուժգին գործընթացներով և տարբեր ժողովուրդների մշակույթների ու կրոնական պատկերացումների սինկրետիզմով:

Պարսկական նվաճումների հետևանքով բազմաթիվ ցեղերի միավորումը մեկ միասնական պետության մեջ նպաստեց մտավոր և աշխարհագրական հորիզոնների ընդլայնմանը:

Իրանը, անհիշելի ժամանակներից սկսած, հանդիսացել է Արևելքից Արևմուտք և ընդհակառակը մշակութային արժեքների փոխանցման միջնորդ. իր այդ պատմական դերը նա շարունակեց նաև աքեմենյանների ժամանակ: Անժխտելի է, որ աքեմենյանների շրջանում ձևավորված սոցիալ-տնտեսական և քաղաքական կառույցները, ինչպես նաև մշակութային ավանդույթները, մեծ դեր խաղացին ինչպես առաջավոր Ասիայի ժողովուրդների, այնպես էլ համաշխարհային պատմության մեջ:

Չափազանց մեծ էր նաև Աքեմենյան շրջանի իրանական մշակույթի ազդեցությունը Հայաստանի վրա: Բավական է ասել, որ մ.թ.ա VI դարում թագավորության վերացումից հետո Հայաստանը երկու հարյուրամյակից ավելի գտնվում էր Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ներքո:

Պարթևական շրջանի մշակույթի վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները աչքի չեն ընկնում հարստությամբ և բազմազանությամբ: Պարթևական առաջին գահանիստ պալատ-քաղաք Նիսայի (մ.թ.ա. II-I դդ.) պեղումները որոշակի պատկերացումներ են տալիս պարթևական շրջանի մշակութային ձեռքբերումների վերաբերյալ:

Պարթևների օրոք կառուցվող քաղաքները մեծ մասամբ հատակագծվում էին շրջանաձև՝ պահպանելով միջինասիական քոչվոր ցեղերին բնորոշ բնակավայրերի պաշտպանական կառուցածևը: Կառույցների դեկորատիվ հարդարանքում լայն կիրառում է ստանում որմնաքանդակը՝ սյուժետային ծանրաբեռ հորինվածքներով (ազնվականները արքայի առաջ, զոհաբերության և արքայական որսի տեսարաններ և այլն):

Իրանի պարթևական ժամանակաշրջանի արվեստը, ըստ էության, գտնվում է բարդ փոխկապակցվածության մեջ աքեմենյան ավանդական կառուցվածքների և հելենիստական շրջանի հետ, սակայն տեղական գեղարվեստական անհատականացման միտումով:

2. ԻՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ ԵՎ ՆՈՐ ԾՐՋԱՆՈՒՄ

Մ.թ. III-VII դ.դ. Իրանում հաստատված Սասանյան դինաստիայի տիրապետությունը նոր ուղղվածություն հաղորդեց իրանական մշակույթին: Սասանյան նորակազմ պետության համար առաջնային նշանակություն են ստանում կառուցողական աշխատանքները (իջևանատներ, կամուրջներ, ջրամբարտակներ, ճանապարհներ և այլն): Հիմնադրվում են պալատական ու ծիսական նորածև կառույցներ, ձևավորվում են քաղաքային ճարտարապետության նոր մոտեցումներ: Կառուցողական լայնածավալ իրականացումները խթանում են հարդարային արվեստի զարգացում, որտեղ առաջնային նշանակություն է տրվում հատկապես որմնաքանդակի արվեստին՝ արքունական, պաշտոնական և կրոնական սյուժետային հորինվածքներով:

Սասանյան շրջանի որմնաքանդակներում շեշտադրվում էր Աքեմենյանների հետ Սասանյան արքաների «տիեզերական ժառանգականության» միտքը (Նաղշ-ե Ռուսթամի, Բիշափուրի հորինվածքները և այլն):

Սասանյանների օրոք աննախադեպ զարգացում է ապրում կիրառական արվեստը, վարպետ-ստեղծագործողների կողմից բարձրակարգ կատարելության են հասցվում մետաղամշակության, խեցեգործության, ոսկերչական արվեստի, ապակեգործության, որմնանկարչության, հյուսվածքի ու գորգագործության, մանրանկարչության և այլ բնագավառները:

Սասանյանների շրջանում իրանական մշակութային միջավայրի վրա զգալի ազդեցություն է ունեցել Միջագետքից բազմաթիվ արհեստավորների վերաբնակեցումը Իրանի Ֆարս, Խուզիստան, Մարաստան շրջաններում, որոնց հետ այստեղ եկող տարբեր բնագավառների ստեղծագործողների գործունեությունը զգալի վերաիմաստավորման է ենթարկել տեղական գեղարվեստական մոտեցումները:

Սասանյան շրջանում կատարվել են առաջին քայլերը պատմագրության և բանահյուսության ձևավորման ուղղությամբ: Այս շրջանի գրական հուշարձաններից են «Խվաթայ նամաքը» («Գիրք թագավորաց»), որն իրենից ներկայացնում է սասանյան արքայական ժամանակագրությունը, ինչպես նաև «Ասորական ծառ», «Արդաշիր Փափականի արարքները», «Զարերի որդու հիշատակարանը» ասքերը, «Քալիլե և

Դիմնե» բարոյափիլիսոփայական խրատների հավաքագիրը և այլն:

Իր էությամբ Սասանյան շրջանի մշակույթի մեջ առկա կովկասյան, միջագետքյան, միջինասիական, հունա-հռոմեական, չինական, հնդկական և այլ մշակույթների տարրերը նպաստել են ժամանակի իրանական մշակույթի զարգացմանը, որն իր հերթին ունեցել է զգալի ազդեցություն Ատլանտյան օվկիանոսից մինչև Խաղաղ օվկիանոս տարածված շրջանների մշակութային համակարգերի կողմնորոշման վրա:

VII դ. կեսերին արաբները նվաճեցին Իրանը, որի հետևանքով այն վերածվեց արաբական խալիֆայության տիրույթներից մեկի: Արաբների կողմից Իրանում արմատավորված իսլամը հսկայական ազդեցություն ունեցավ իրանական մշակույթի ավանդական համակարգվածության վրա՝ իր հետ բերելով նաև որոշակի արգելակող դրույթներ, որոնք խաթարեցին դարերի ընթացքում Իրանում ձևավորված մշակութային ավանդույթները: Բայց այն է, որ Իրանում իսլամի արմատավորման հետևանքով մշակույթի առանձին ճյուղերի զարգացումը արհեստականորեն կասեցվեց, քանի որ նախ իսլամը թշնամանքով էր վերաբերվում պարսիկների մինչիսլամական մշակութային ավանդույթների նկատմամբ, և ապա՝ իսլամական կրոնի համար անընդունելի էր արվեստի և մշակույթի մի շարք բնագավառների գոյությունը: Այսպես, օրինակ՝ իսլամը առհասարակ արգելում է գեղանկարչությունը, որմնանկարչությունը, առավել ևս՝ դիմանկարչությունը: Ուստի, հարմարվելով նոր ստեղծված պայմաններին, պարսիկ արվեստագետները զարկ տվեցին կտորների, սպասք և այլ իրերի նախշանկարչությանն ու զարդանկարչությանը:

Իսլամի տարածումը Իրանում նպաստեց նոր տիպի կառույցների (մզկիթներ, մեդրեսեներ, դամբարաններ և այլն) ստեղծմանը, որոշակի վերափոխման ենթարկվեցին նաև կենցաղային շինությունների ճարտարապետական մոդելավորումները՝ ծածկեր ունեցող շուկաներով, բաղնիսներով, իջևանատներով և այլն:

Սելջուկների տիրապետության շրջանում իրանական մշակույթը ապրեց նոր էվոլյուցիա: Ճիշտ է, լինելով վաչկատուն քոչվոր ժողովուրդ՝ սելջուկների մոտ բացակայում էր մշակութային արժեքների գոյությունը: Սակայն իրողություն է նաև այն, որ յուրացնելով իրանական բարձր զարգացած մշակույթը՝ սելջուկները իրենց հերթին որոշակի ազդեցություն գործեցին իրանական մշակութային կյանքի նկատմամբ այն առումով, որ նրանց տիրապետության շրջանում ճարտարապետության, մասնավորապես մզկիթների, մեդրեսեների, քարվանսարայների, դամբարանների և այլ շինությունների կառուցման բնագավառում մշակվեց

նոր ոճ, որը թեև իր ձևերով չափազանց մոտ էր արաբա-իսլամական ոճին, սակայն ուներ նաև իր առանձնահատուկ յուրահատկությունները:

Իրանը չափազանց հարուստ է բազմապիսի շինարարական քարերով: Սակայն միջնադարում շինարարության համար օգտագործվում էր համարյա բացառապես թրծված աղյուսը: Համենայն դեպս, VIII-XIII դդ. պահպանված ճարտարապետական հուշարձաններից ոչ մեկը քարակերտ չէ: Նույնիսկ ամրոցները կառուցվում էին տարբեր չափսերի թրծված աղյուսով:

Շենքերը ներսի և դրսի կողմից երեսպատվում էին տարբեր գույների թրծված աղյուսով կամ սվաղվում էին գաջակրով: Ավելի ուշ շենքերը սկսեցին նախշազարդվել գունավոր հախճապակյա խճանկարով: X-XI դդ. Իրանում բարձր զարգացման հասան գեղարվեստական արհեստագործությունը, զարդանախշերով դաջված կտորեղենի արտադրությունը, ոսկեթել ու արծաթաթել ձեռագործությունը, գորգագործությունը, ոսկեգործությունը, սառը զենքի արտադրությունը, զանազան ամանեղենի, բրուտագործական ու հախճապակյա իրերի արտադրությունը և այլն:

X-XII դդ. իրանական ճարտարապետությանը բնորոշ է կառուցվածքի և հարդարային ձևավորման հստակությունը, որը ստեղծվում է գունավոր աղյուսաշարերի դեկորատիվ շարվածքով և ծեփափորվածքի տեխնիկայով իրականացվող պարզ զարդահորինվածքով (պալատական տեսարաններ, հեծյալներ և այլն): Իրանական զարդարվեստի մեջ ակտիվորեն մուտք են գործում արաբատառ նախշազարդումները:

VII դարում՝ արաբական նվաճումից հետո, Իրանում գրական ստեղծագործությունները գրվում էին արաբերեն լեզվով: Սակայն աստիճանաբար մտավոր գործունեությամբ զբաղվող մարդիկ սկսեցին մերժել և ընդդիմանալ այդ կարգին և շարժում ծավալվեց պարսկերեն լեզուն առաջին պլան մղելու ուղղությամբ: Մասնավորապես VIII դարից սկսած՝ Իրանում լայն տարածում գտավ այսպես կոչված «շու'ուբիական» շարժումը, որն իրենից ներկայացնում էր արաբների քաղաքական ու մշակութային տիրապետության դեմ ընդդիմադիր մի շարժում, որի հետևորդները ձգտում էին ցույց տալ իրանական մշակույթի առավելությունը զավթիչների մշակույթի նկատմամբ:

IX դ. ձևավորվեց նոր պարսկերեն լեզուն՝ «ֆարսին»: Սկզբնական շրջանում այդ լեզվով գրում էին միայն բանաստեղծական ստեղծագործություններ, սակայն X դ. երկրորդ կեսից սկսած՝ նրանով սկսեցին շարադրել նաև գիտական աշխատությունները: Աստիճանաբար նոր պարսկերենը դուրս եկավ Իրանի սահմաններից՝ տարածում գտնելով նաև Մի-

ջին Ասիայում, Սելջուկյան Փոքր Ասիայում և Հնդկաստանի մահմեդական պետություններում:

Իր անմահ ստեղծագործությունը՝ «Շահնամեն», որը հանդիսանում է համաշխարհային պոեզիայի գոհարներից մեկը, Ֆիրդուսին (934- մոտ 1025 թթ.) գրել է նոր պարսկերենով: Այդ ստեղծագործությամբ Ֆիրդուսին բանաստեղծական կամ չափածո ձևով շարադրում է Իրանի պատմությունը՝ հնագույն ժամանակներից սկսած մինչև արաբների կողմից նրա նվաճումը: Այն գրված է հերոսականության ու ջերմ հայրենասիրական շնչով, հայրենիքի նկատմամբ սիրո վառ դրսևորումներով և ատելությամբ արաբ ու թուրք զավթիչների նկատմամբ: Պոեմի լեյտմոտիվը Իրանի վրա արշավող թյուրքական վաչկատուն ցեղերի և իրանցիների միջև դարավոր պայքարն է, «Իրանի և Թուրանի» պայքարը: Պոեմում Ֆիրդուսին կերտել է Ռուստամի՝ հայրենիքի այդ նվիրյալ զինվորի և իր պարտքին գիտակից անձնվեր հայրենասերի վառ կերպարը:

XI-XII դդ. ստեղծագործել են նաև պարսից այնպիսի հռչակավոր բանաստեղծներ, ինչպիսիք են Ֆարրուխին, Մանուչեհրին, Ֆահրեդդին Գուրգանին, Օմար Խայամը, Նասիրի Խոսրովը, Աբդալլահ Անսարին, սուֆի բանաստեղծներ Սենայիին, Ֆերիդ ադ-դին Աթթարը և ուրիշներ: Այդ նույն ժամանակաշրջանի արգասիք է նաև գեղարվեստական արձակի հայտնի ստեղծագործություն «Քաբուս- նամեն»:

Իրանի քաղաքները՝ Նիշապուրը, Ռեյը, Սպահանը, Շիրազը, Համադանը, Քաշանը և այլն, հանդիսանում էին մշակութային կյանքի աչքի ընկնող կենտրոններ: Իր կյանքի մի զգալի մասը Իրանում է անց կացրել իր ժամանակի մեծ գիտնական Աբու Ալի իբն Սինան (Ավիցենա, 980-1037 թթ.):

XIII դ. առաջին կեսի մոնղոլական արշավանքների հետևանքով Իրանի մշակույթը հայտնվեց լճացման վիճակում, սակայն դարի երկրորդ կեսից նկատելի է դառնում տնտեսական և մշակութային կյանքի ակտիվացում: Զարգացում են ապրում որմնանկարչությունը և հատկապես մանրանկարչությունը: Աչքի է ընկնում Շիրազի մանրանկարչական դպրոցը: XV դ. նշանավոր են եղել նաև Թավրիզի և Հերաթի մանրանկարչական դպրոցները:

IX-XIV դդ. ծաղկում է ապրում իրանական դեկորատիվ և կիրառական արվեստը: Զարգացում է ապրում արհեստագործությունը՝ խեցեգործությունը, մետաղամշակության արվեստը, գորգագործությունը, ոսկերչությունը և այլն:

Միջնադարյան Իրանում նկատելի էր նաև գիտական մտքի զարգա-

ցումը: Առաջնային նշանակության են ստանում բնական գիտությունները, հատկապես աստղագիտությունը, բժշկագիտությունը, մաթեմատիկան, դավանաբանական-փիլիսոփայական գիտությունները և այլն:

XVI-XVII դդ., երբ Իրանը գտնվում էր Սեֆյանների իշխանության ներքո, սկսվեց մշակութային նոր վերելք: Ձևավորվեցին գաղափարագեղարվեստական նոր մոտեցումներ ու ընկալումներ: Աննախընթաց վերելք ապրեց կառուցողական գործընթացը, որտեղ առաջնային նշանակություն էր տրվում խոշոր, ծավալային, մոնումենտալ կառույցների իրականացմանը: Սեֆյանների նոր մայրաքաղաքը՝ Սպահանը, դարձավ Արևելքի խոշորագույն քաղաքներից մեկը, որտեղ կառուցվեցին պալատական շքեղագույն շենքեր, վեհաշուք մզկիթներ, իջևանատներ, կամուրջներ և այլն: Մշակույթի առավել ներկայացուցչական բնագավառ է դառնում մանրանկարչությունը, ինչպես նաև նկարչությունը: Աստպարեզ են իջնում այնպիսի վարպետ գեղանկարիչ-արվեստագետներ, ինչպիսիք են Ռեզա Աբբասը, Աղա Ռեզան, Մոհամմադ Մոսավվարը, Մոուլանա Մոզաֆար Ալին և ուրիշներ: Արվեստագետների այդ խմբի մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Մոհամմադ Զաման Քերմանին, որը առավել հայտնի է որպես իտալացի գեղանկարիչ Պաոլո Զաման:

XVI-XVII դդ. կիրառական արվեստի առաջատար ուղղություններից են դառնում հյուսվածքի և գորգագործության բնագավառները: Իրանական գորգարվեստում ստեղծվում է դիմանկարչական գորգագործության արվեստը:

XVII դ. երկրորդ կեսից Իրանում սկսվում է տնտեսական և մշակութային կյանքի լճացում, ապա և անկում, որն առավել խորացավ հատկապես XVIII դ. 20-ական թթ. սկսած, երբ Իրանը ենթարկվեց աֆղաններ ի ավերիչ արշավանքին: Այս ժամանակահատվածին բնորոշ է կառուցողական աշխատանքների կտրուկ նվազումը: Իսկ գրականության, փիլիսոփայության, արվեստի տարբեր բնագավառներում չստեղծվեց ոչ մի բարձրարժեք ստեղծագործություն: Կերպարվեստը ներկայանում էր որպես նախորդ շրջանների մանրանկարչական աշխատանքների կրկնօրինակում: Ավանդական հնչեղ գունային ներկապնակը փոխարինվեց գունային միատարր հենքով:

Իրանը նորագույն պատմության շրջանում

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՀԵՏՈ ԵՎ XX ԴԱՐԻ 20-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. 1919 Թ. ԱՆԳԼՈ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

1918 թ. հունիսին Կովկասում սովետական կառավարության արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանին Մոսկվան հանձնարարեց Թեհրան ուղարկել հատուկ ներկայացուցիչ, սովետա-իրանական հարաբերությունները «նոր սկզբունքների հիմքի վրա» կառուցելու նպատակով: Ի կատարումն այդ հրահանգի՝ 1918 թ. հուլիսին Թեհրան մեկնեց սովետական առաջին դիվանագիտական ներկայացուցիչ Ի. Օ. Կոլոմիյցևը: Վոսուղ օդ-Դոուլեի կառավարությունը հրաժարվեց նրան պաշտոնապես ճանաչել: Ընդամենը մի քանի ամիս անց՝ 1918 թ. նոյեմբերի 2-ին, Թեհրանում սովետական դիվանագիտական ներկայացուցչությունը հարձակման ենթարկվեց սպիտակ ռուսների կողմից և ջախջախվեց: Նրա աշխատակիցները ձերբակալվեցին և աքսորվեցին Հնդկաստան, ինչը ակնառու կերպով վկայում էր այն մասին, որ հիշյալ գործողության կազմակերպման ու իրականացման հետ անմիջական կապ են ունեցել անգլիացիները: Կոլոմիյցևին, սակայն, հաջողվեց խուսափել ձերբակալումից և մեկնել Մոսկվա:

1919 թ. հունիսի 26-ին Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդա-

կան կոմիսարիատը նոտայով դիմեց իրանական կառավարությանը: Նրանում, որը վերնագրված էր «Պարսիկ ժողովրդին և պարսկական կառավարությանը», հայտարարվում էր, որ խորհրդային կառավարությունը հրաժարվում է Իրանում ցարական Ռուսաստանի ունեցած բոլոր արտոնություններից և իրավունքներից, ինչպես նաև կապիտուլյացիոն ռեժիմից: Նոտայում նշվում էր, որ Իրանում Ռուսաստանին պատկանող Հաշվառու-վարկատու բանկը, նախկինում ռուսների տնօրինության տակ գտնվող երկաթուղիները, նավահանգստային կառույցները, փոստային հիմնարկությունները, հեռախոսային և հեռագրական գծերը և այլն հանձնվում են «ազատ և անկախ ժողովրդի օգտագործմանը», ոչնչացվում են այն բոլոր պայմանագրերն ու համաձայնագրերը, որոնք պարսիկ ժողովրդին դնում էին ցարիզմից կախվածության մեջ կամ հանդիսանում էին միջամտություն նրա ներքին գործերին:

Սակայն Վոսուղ օդ-Դոուլեի կառավարությունը անվստահությամբ էր վերաբերվում Ռուսաստանի անկեղծությանը: Դեռևս շատ թարմ էին ցարական Ռուսաստանի՝ Իրանում վարած քաղաքականության տխուր հիշողությունները:

Բրիտանական դիվանագիտությունը, որը լծվել էր եռանդուն գործունեության բոլշևիզմի ներթափանցումն Իրան կանխարգելելու ուղղությամբ, 1918 թ. վերջին ձեռնարկեց մի շարք քայլեր: Մասնավորապես Թեհրանում անգլիական դեսպանատունը գաղտնի բանակցությունների մեջ մտավ Վոսուղ օդ-Դոուլեի և նրա կառավարության անդամներ, դաջարական իշխանազուն, արտգործմինիստր Փիրուզ միրզա Նոսրեթ օդ-Դոուլեի և Աքբեր միրզա Սարիմ օդ-Դոուլեի հետ, համընդգրկուն համաձայնագիր կնքելու վերաբերյալ, որը կոչված էր լինելու կարգավորել հարաբերությունները Մեծ Բրիտանիայի և Իրանի միջև:

1919 թ. հուլիսին, դիվանագիտական մի առաքելության ուղեկցությամբ, որի կազմում գտնվում էր նաև հայազգի դիվանագետ Կարապետյանը, Կոլոմիյցևը կրկին ժամանեց Իրան, այս անգամ որպես ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ: Նրա ներկայությունը Իրանում ցանկալի չէր ո՛չ իրանական կառավարությանը, ո՛չ անգլիացիներին և ո՛չ էլ սպիտակ ռուսներին: Ընդամենը իր ժամանումից մեկ ամիս անց նա ահաբեկչության ենթարկվեց և սպանվեց կոզակական գնդապետ Ֆիլիպովի կողմից:

1919 թ. օգոստոսի 9-ին վարչապետ Վոսող օդ-Դոուլեն Թեհրանում բրիտանական դեսպանորդ Պերսի Քոքսի հետ կնքեց անգլո-իրանական համաձայնագիր: Անգլիան ճանաչում էր Իրանի անկախությունն ու տարածքային ամբողջականությունը, համաձայնվում էր չեղյալ հայտարա-

րել 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագիրը և Իրանի շահերը շոշափող 1915 թ. Կ. Պոլսի համաձայնագիրը: Վարչական և ֆինանսական բարեփոխումներ իրականացնելու համար Իրանը պարտավորվում էր Անգլիայից հրավիրել խորհրդականներ, նախատեսվում էր խառը անգլո-իրանական ընկերության ստեղծում՝ Իրանի տարածքում երկաթուղային և այլ ճանապարհների շինարարության համար և այլն: Համաձայնագրում նշվում էր, որ Իրանի մաքսային քաղաքականությունը դրվում է Անգլիայի հսկողության տակ: Մեծ Բրիտանիան պարտավորվում էր իր ռազմական հրահանգիչների միջոցով Իրանում ստեղծել միասնական բանակ:

Մեկնաբանելով այդ համաձայնագրի էությունը՝ լորդ Քերզոնը գրում էր, որ այն հետապնդում էր առաքինի նպատակներ, մասնավորապես Իրանի վերածննդությունը: Մինչդեռ ամիրիկյան հեղինակ Պ. Մունի կարծիքով՝ Անգլիան փորձում էր Իրանի նկատմամբ սահմանել «իմպերիալիստական հսկողության ժամանակակից խորամանկ մի ձև»:

Համաձայնագիրը ստորագրվելուց անմիջապես հետո Լոնդոնը Թեհրան ուղարկեց մի առաքելություն գեներալ Դիկսոնի գլխավորությամբ, որը ձեռնամուխ եղավ իրանական բանակի վերակազմակերպմանը: Նախատեսված էր ստեղծել 60-հազարանոց կանոնավոր և միասնական բանակ, սակայն ֆինանսական դժվարությունների պատճառով այդ թիվը իջեցվեց 40 հազարի: Միաժամանակ անգլիական գանձատան աստիճանավոր Էրմիթաջ Սմիթը սկսեց իրանական ֆինանսների վերակառուցումը: Ստեղծվեց նաև «Պարսկական երկաթուղային սինդիկատ», որի խնդիրն էր մշակել ու իրականացնել Իրանում երկաթուղային շինարարության նախագծեր:

Անգլո-իրանական համաձայնագրի ստորագրման լուրը միանշանակ ընդունելություն չգտավ Թեհրանի քաղաքական շրջաններում: Մի շարք գործիչներ հայտարարեցին, որ «այն ուղղված է երկրի շահերի դեմ»: Իսկ Մոսկվայում այդ համաձայնագիրը ուղղակի առաջ բերեց զայրույթի փոթորիկ: 1919 թ. օգոստոսի 28-ին խորհրդային կառավարությունը հրապարակեց դիմում՝ ուղղված «Պարսկաստանի բանվորներին և գյուղացիներին», որտեղ հայտարարվում էր, որ չի ճանաչում «իրանական ժողովրդի ստրկացումն իրականացնող» անգլո-իրանական համաձայնագիրը: Մոսկվան ամբողջ թափով գործի դրեց իր քարոզչական մեքենան՝ այն վարկաբեկելու համար:

Բրիտանական արտաքին գործերի գերատեսչությունը՝ Ֆորին օֆիսը, մեծագույն տագնապի մեջ էր: Լոնդոնին հատկապես անհանգստացնում էր այն հանգամանքը, որ Իրանի արտաքին գործերի մինիստր Փիլոզ

միրզան դրական կարծիք էր հայտնել իրանական հարցում խորհրդային կառավարության դիրքորոշման վերաբերյալ՝ մասնավորապես նշելով, որ Մոսկվայի կողմից ցարական Ռուսաստանի և Իրանի միջև կնքված անիրավահավասար պայմանագրերի ու համաձայնագրերի չեղյալ հայտարարումը մեծ նշանակություն ունի Իրանի համար: Դրանից հետևում էր, որ Իրանը պատրաստվում է ճանաչել Խորհրդային Ռուսաստանին:

Բրիտանական կենսական շահերի տեսակետից այդ վտանգը չեզոքացնելու և միաժամանակ անգլո-իրանական համաձայնագրի իրագործումն արագացնելու նպատակով Ֆորին օֆիսը Լոնդոն հրավիրեց Փիրուզ միրզային և Ահմեդ շահ Ղաջարին: Արտաքին գործերի մինիստրի հետ հանդիպումների ժամանակ լորդ Քերզոնը ճնշում էր գործադրում, որպեսզի իրանական կառավարությունը հրաժարվի խորհրդային կառավարության հետ պաշտոնական հարաբերություններ հաստատելու մտքից: Այդ առթիվ բրիտանական արտաքին գործերի պետ. քարտուղարը իր անձնական գրառումներում նշում է. «Ես սպառնացի նրան (Փիրուզ միրզային–Վ.Բ.)՝ ասելով, որ եթե Իրանի և խորհրդային կառավարության միջև կնքվի պայմանագիր, ապա բոլշևիկյան էմիսարները շատ շուտով կթափանցեն Իրան և ձեռնամուխ կլինեն հակաբրիտանական քարոզչության և գործողությունների»:

2. «ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱԿՏՆԵՐԸ» ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱԿԱԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Թեհրանի կառավարության վրա հավելյալ ճնշում գործադրելու նպատակով Խորհրդային կառավարությունը մեջտեղ բերեց «ազերիական խաղաքարտը»: 1920 թ. ապրիլին Թավրիզում թուրք (ազերի) անջատողական տարրերը, որոնք իրենց անվանում էին «Ադրբեջանական դեմոկրատներ» և ստեղծել էին այսպես կոչված «Իրանի դեմոկրատական կուսակցությունը» («Ֆերղե-ե դեմոքրաթ-ե Իրան») շեյխ Մոհամմադ Խիաբանիի գլխավորությամբ, կատաղի քարոզարշավ սկսեցին անգլո-իրանական համաձայնագրի դեմ, իսկ ապա բարձրացրին ապստամբություն: Ապստամբները Իրանական Ադրբեջանը հռչակեցին «Ազադիսթան» («Ազատության երկիր»), դաժան հաշվեհարդար տեսան

Աղրբեջանը Իրանից անջատելու հակառակորդների հետ և խզեցին նահանգի կապերը Թեհրանից:

Անդրադառնալով այդ իրադարձություններին՝ իրանական պատմաբան Ահմադ Քասրավին նշում է, որ «Խիաբանին ձգտում էր Աղրբեջանը դարձնել անկախ երկրամաս, իսկ այնուհետև, բավականաչափ հզորանալուց հետո, մտադիր էր շարժվել դեպի Թեհրան՝ այնտեղ ևս «բարեփոխումներ» իրականացնելու նպատակով կամ, որ միևնույնն է, կոմունիստամետ վարչակարգը ողջ Իրանի վրա տարածելու համար»:

Խիաբանիստների պահանջները հանգում էին հետևյալին. չեղյալ հայտարարել 1919թ. անգլո-իրանական համաձայնագիրը, երկրից վտարել «օտարերկրյա իմպերիալիստներին», օտարերկրյա բոլոր զորքերն ու ռազմական խորհրդականներին, ստեղծել «անկախ դեմոկրատական աղրբեջանական պետություն»՝ դրանով իսկ «իրականացնելով ազերի ժողովրդի ազգային իղձը»:

Խիաբանիի կողմնակիցները առաջ քաշեցին «Իրանը իրանցիների համար» արտաքուստ ազգայնական, բայց խորքում ամբոխավարական կարգախոսը՝ միաժամանակ հայտարարելով, որ իրենց «ապստամբությունը կոչված է Իրանում փրկել ժողովրդավարությունը դժոխային տառապանքներից»: Նրանք պահանջում էին նաև Ռուսաստանի կառավարության հետ անհապաղ հաստատել դիվանագիտական հարաբերություններ և առևտրական կապեր:

Առանց մեծ դժվարության ապստամբները Թավրիզից վռնդեցին կենտրոնական կառավարության ներկայացուցիչներին և ցրեցին նրա վարչական մարմինները: Նահանգային իշխանությունն անցավ «Հայաթ-ե Էջթիմայիի» («Հասարակական ներկայացուցչություն») ձեռքը: 1920 թ. հունիսի վերջին նրա լիազորությունները հանձնվեցին Խիաբանիի կողմից ղեկավարվող ազգային կառավարությանը: Վերջինս առաջ էր քաշում ամբոխավարական և պոպուլիստական բնույթի բազմաթիվ կարգախոսներ (օրինակ՝ «Իրանը պետք է դեմքով շրջվի դեպի ժամանակակից աշխարհը», «ողջ իրանական համակարգը պետք է ենթարկվի դեմոկրատականացման» և այլն):

«Դեմոկրատների» «Թաջջադոթ» («Նորացում») թերթի էջերում շահական արքունիքը ենթարկվում էր սուր քննադատության: Օրինակ՝ ասվում էր, որ Ահմեդ շահ Ղաջարը զվարճանալու նպատակով ուղևորություններ է կատարում Ստամբուլ և Արևմտյան Եվրոպա, մինչդեռ երկրի պետական ֆինանսները գտնվում են կատարյալ քայքայման վիճակում, իսկ պետության տարածքի մեծ մասը ռազմականման է ենթարկված

անգլիական զինված ուժերի կողմից:

Հիրավի, Թավրիզում թուրքական ազգայնականությունը, բոլշևիզմի հետ դաշնակցած, իր վերելքի մեջ էր: Թուրքերենը հայտարարվեց «Ազադիսթան»-ի պետական լեզու:

Կարևոր է, սակայն, նշել, որ Խիաբանին և նրա կողմնակիցները իրենց հանրապետությունն անվանում էին Ազադիսթան՝ նպատակ ունենալով շեշտել, որ իրենք որևէ առնչություն չունեն այդ ժամանակ գոյություն ունեցող «Աղրբեջանի Դեմոկրատական Հանրապետության» հետ (Բաքու մայրաքաղաքով), որը հակված էր համագործակցելու ոչ միայն Մեծ Բրիտանիայի, այլև Վոսուղ օդ-Դոուլեի կառավարության հետ: Սակայն երբ 1920 թ. ապրիլի վերջին 11-րդ Կարմիր բանակը մուտք գործեց Աղրբեջան և այնտեղ իշխանության գլուխ եկան բոլշևիկները, Խիաբանին ողջունեց այդ իրադարձությունը՝ իր զորակցությունը հայտնելով խորհրդայնացված Աղրբեջանին:

Խորհրդային Ռուսաստանը շտապեց Խիաբանիի շարժումը հայտարարել «ազգային-ազատագրական, դեմոկրատական շարժում»: Սակայն այդ շարժումը և նրա առաջ քաշած գաղափարները արձագանք չգտան ոչ միայն Իրանի մնացած տարածքներում, այլև հենց բուն Ատրպատականում, քանի որ այն դրսից հրահրված մի խռովություն էր և երկրամասում չուներ կայուն հիմքեր:

1920 թ. սեպտեմբերին շահական կառավարությանը հաջողվեց ոչ մեծ դժվարությամբ ճնշել այդ բունտը: Շեյխ Մոհամմադ Խիաբանին սպանվեց: Ի դեպ, այդ շարժումը ջախջախելու գործում խոշոր դեր խաղացին քրդական շեքքակ ցեղը՝ Իսմայիլ աղա Սըմկոյի գլխավորությամբ, և թյուրքական շահսևենյան կիչսաքոչվորական ցեղը:

Այդ նույն ժամանակաշրջանում հակառավարական բռնկումներ էին տեղի ունենում նաև Գիլյանում, Խորասանում և երկրի հյուսիսային մյուս շրջաններում, որոնք խրախուսվում էին Անդրկովկասում և Անդրկասպյան երկրամասում հաղթանակած խորհրդային իշխանությունների կողմից: Մոսկվան տարված էր բոլշևիկյան հեղափոխությունը Արևելքի երկրներ, այդ թվում նաև Իրան, արտահանելու գաղափարներով: 1920 թ. հունվարին Ռուսաստանի կոմունիստական բոլշևիկյան կուսակցության (ՌԿԲԿ) Կենտրոնական կոմիտեում քննարկվում էր Իրան ներխուժելու և այդ երկիրը խորհրդայնացնելու պլանը: Հունվարի 25-ին Թուրքեստանի ճակատի հրամանատար Մ. Ֆրունզեն Ռազմահեղափոխական խորհրդի նախագահ Լ. Տրոցկուն ուղղված հեռագրում խնդրում էր արագացնել զենքի առաքումը՝ միաժամանակ հաղորդելով, որ

«Պարսկաստանի և Հնդկաստանի տարածքում պետք է կազմակերպվեն հեղափոխական զինված ուժեր»: 1920 թ. մարտի 11-ին Թուրքեստանի միջազգային քարոզչության խորհրդի նախագահ, թուրք կոմունիստ Մուստաֆա Սուբխին և նույն խորհրդի կազմբաժնի վարիչ, հայտնի հայ բոլշևիկ Ավետիս Սուլթանզադեն, որը գլխավորում էր 1916 թ. Բաքվում կազմակերպված իրանական կոմունիստների «Ադալյաթ» («Արդարություն») կազմակերպությունը, դիմեցին «Թուրքեստանի ճակատի» ղեկավարությանը՝ խնդրելով թույլատրել իրանցի արտագնա բանվորներից Միջին Ասիայում կազմակերպելու պարսկական զորամիավորումներ: Նրանց թվում էր, որ 20-30 հազար մարդուց բաղկացած զինված ուժերի միջոցով հնարավոր կլինի «Պարսկաստանի աշխատավոր ժողովրդին ազատագրել ոչ միայն անգլիական իմպերիալիստներից, այլև սեփական շահագործողներից և Պարսկաստանը մտցնել խորհրդային հանրապետությունների եղբայրական ընտանիքի մեջ»:

3. ԳԻԼՅԱՆԻ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ՆՐԱ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Բոլշևիկյան հեղափոխությունը դեպի հարավ շարժելու ծրագրի բաղկացուցիչ մաս էր կազմում նաև խորհրդային տիրապետության հաստատման փորձը Կասպից ծովի նկատմամբ: Ի կատարումն այդ ծրագրի՝ 1920 թ. մայիսի 18-ի գիշերը Վոլգա-Կասպյան նավատորմի ռազմանավերը մոտեցան իրանական Էնզելի նավահանգստային քաղաքին և ռմբակոծեցին այն, ինչպես նաև քաղաքի մոտակայքում գտնվող անգլիական ռազմակայանը: Միաժամանակ տարբեր վայրերից ցամաք հանվեցին դեսանտային զորամասեր: Թույլ դիմադրություն ցուցաբերելուց հետո անգլիացիները նահանջեցին Ռեշտ, իսկ ապա՝ Ղազվին քաղաքը:

Որպես այդ գործողության քաղաքական հիմնավորում՝ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը հայտարարեց, որ անգլիացիները Էնզելին վեր են ածել «Խորհրդային Ռուսաստանի դեմ պայքարող հակահեղափոխական ուժերի մատակարարման հենակետի», և, բացի այդ, գործողությունը նպատակ է հետապնդում Խորհրդային Ռուսաստանին վերադարձնել Ա. Դենեկինի և անգլիացիների կողմից Բաքվից Էնզելի տարված նավերը, ինչպես նաև կողոպտված գույքն ու այլ արժեքները:

1920 թ. հունիսի 4-ին Լոնդոն ուղարկված հեռագրում Վոսուղ օդ-Դոուլեն Կարմիր բանակի զորամասերի ակցիան Էնզելիի շրջանում գնահատեց որպես ռազմական ինտերվենցիա՝ միաժամանակ խնդրելով, որ այդ մասին Ֆորին օֆիսը տեղեկացնի Ազգերի լիգայի խորհրդին:

Գիլյանի տարածքը ռազմականման ենթարկվելուց հետո հայտարարվեց «Գիլյանի խորհրդային հանրապետության» կազմավորման մասին: Ստեղծվեց Գիլյանի հանրապետության ժամանակավոր հեղափոխական կառավարություն՝ Քուչեք խանի (իսկական անունը Յունուս) գլխավորությամբ: Վերջինս Լենինին ուղարկեց «ժողովրդի անունից» մի ողջույն, որտեղ ասվում էր, որ Գիլյանում իշխանությունն անցել է «աշխատավորական զանգվածների ձեռքը»: Գիլյանում ստեղծվեց նաև «Պարսկական Կարմիր բանակ»:

1920 թ. կազմակերպվեց Իրանի կոմունիստական կուսակցությունը, որը դրսից (Բաքվից) ներմուծված «Ադալյաթ» կուսակցության մասնաճյուղն էր: Նույն թվականի հունիսի 23-ին Ռեշտում գումարվեց նորաստեղծ կոմկուսի առաջին համագումարը, որին մասնակցում էին նաև Անդրկովկասի և Թուրքեստանի կոմունիստները: Իրանի կոմկուսի ղեկավար ընտրվեց Ավետիս Սուլթանզադեն: Համագումարը որոշում ընդունեց ընդլայնել ու ծավալել «ազգային-ազատագրական շարժումն» Իրանում: Մշակվեց բոլոր «հակաիմպերիալիստական տարրերի» համագործակցության մարտավարություն: Ընդունվեց նաև ծրագիր ու կանոնադրություն, որոնցում նախատեսվում էր պայքար կազմակերպել «օտարերկրյա իմպերիալիստներին երկրից վոնդելու, ղաջարական փտած միապետությունը տապալելու, ժամանակավոր հեղափոխական կառավարություն ստեղծելու և Իրանը հանրապետություն հռչակելու մասին»:

Գիլյանի հեղափոխական կառավարությունը սկսեց իրագործել զուտ բոլշևիկյան տիպի մի շարք միջոցառումներ. հողային բռնագրավումներ, ագիտացիա Ղուրանի և հոգևորականության դեմ, պարսիկ բանվորներին կոչ էր անում կողոպտել ունևորներին և բռնագրավել նրանց ունեցվածքը, կանանց ենթարկել «սոցալիզացման», ստիպել նրանց, որ անհապաղ հանեն չադրաները և այլն: Առհասարակ, կոմունիստները բնավ հաշվի չէին նստում դարերով սրբագործված տեղական սովորույթների և ժողովրդի շրջանում խոր արմատներ ունեցող կրոնական գործոնի հետ:

Շուտով Գիլյանի հասարակության բոլոր խավերն անխտիր, այդ թվում նաև գյուղացիությունն ու քաղաքային չքավորությունը, երես թեքեցին «Գիլյանի հեղափոխականներից»: Միաժամանակ ծայրահեղորեն սրվեցին հարաբերությունները Քուչեք խանի և Իրանի կոմկուսի

միջև: Գիտակցելով, որ ԻԿԿ ղեկավարությունը իր դեմ նախապատրաստում է հեղաշրջում՝ 1920 թ. հուլիսի 19-ին Քուչեք խանը տեղափոխվեց Գիլյանի անտառների խորքում գտնվող Ֆումեն կոչվող վայրը, որը հանդիսանում էր նրա հիմնական հենակետը: Հուլիսի 30-ին Ռեշտում տեղի ունեցավ Իրանական կոմկուսի ԿԿ-ի նիստը, որտեղ որոշում կայացվեց տապալելու Քուչեք խանի իշխանությունը:

1920 թ. հուլիսի 31-ի գիշերը Պարսկական Կարմիր բանակի զորամասերը ռազմական գործողություններ սկսեցին Քուչեք խանի և նրա կողմնակիցների դեմ: Գիլյանում ստեղծվեց նոր «հեղափոխական կառավարություն», որը գլխավորեց նախկինում անարխիստ Էհսանոլլա խանը: Այդ կառավարությունը իր կարևորագույն նպատակը հռչակեց Իրանից անգլիացիների վտարումը և իրանական միապետության տապալումը: Դեպի Թեհրան արշավանքի կազմակերպումը հայտարարվեց այդ նոր կառավարության կարևորագույն նպատակը:

Օգտագործելով Պարսկական Կարմիր բանակի զորամասերը՝ Էհսանոլլա խանի կառավարությունը ձեռնամուխ եղավ բռնի միջոցներով կալվածատիրական հողերի բռնագրավմանը՝ հաճախ տարբերություն չդնելով կալվածատեր-ֆեոդալների և գյուղացիների միջև: Կարճ ժամանակամիջոցի ընթացքում դա առաջ բերեց երկրամասի բնակչության հիմնական զանգվածի խորը դժգոհությունը:

Արդեբիլի հայտնի մոջթեհիդներից մեկը հրապարակեց ֆեթվա, որում «բոլշևիկների» գործողությունները որակվում էին որպես հակաիսլամական: Ծայր առավ Էհսանոլլայի կառավարությունից դժգոհ տարրերի համախմբման շարժում: Միաժամանակ շահսևենյան ցեղերը սկսեցին զինված հարձակումներ գործել իշխանությունը ներկայացնող հիմնարկությունների և Պարսկական Կարմիր բանակի զորամասերի վրա:

Մոսկվան սկսեց լուրջ տագնապ ապրել «պարսկական հեղափոխության» ձախողման կապակցությամբ: Սակայն քայլեր չկատարվեցին քաղաքական կուրսը փոխելու ուղղությամբ: Ընդհակառակը, ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյի ղեկավար Ս. Օրջոնիկիձեի կարգադրությամբ 1920 թ. օգոստոսի վերջին Գիլյան ուղարկվեց «Ռուսական» դիվիզիայի 28-րդ գունդը՝ Ռեշտը շահական զորքերից ազատագրելու համար: Միաժամանակ Թեհրանի հետ պաշտոնական գրագրության ժամանակ Մոսկվան համառորեն հրաժարվում էր ընդունել, որ ինքը զինված միջամտություն է ցուցաբերում Գիլյանում իշխանության համար ներքին քաղաքական պայքարին:

1920 թ. սեպտեմբերի 20-ին Մոսկվայում տեղի ունեցավ Խորհրդա-

յին Ռուսաստանի իրանական քաղաքականության քննարկմանը նվիրված հատուկ խորհրդակցություն, որին մասնակցում էին այնպիսի առաջատար բոլշևիկյան կուսակցական-քաղաքական գործիչներ, ինչպիսիք էին Լենինը, Ստալինը, Տրոցկին, Զինովևը, Բուխարինը, Կամենևը և ուրիշներ: Խորհրդակցությունը որոշեց շարունակել օգնությունը գիլյանական «հեղափոխականներին»՝ միաժամանակ Ի. Ստալինին հանձնարարելով «կարգավորել մեր ողջ քաղաքականությունը Կովկասում և Արևելքում»: Այդ հանձնարարությունը կատարելու համար Ի. Ստալինը ուղևորվեց Բաքու, որտեղ նրա առաջին գործը հանդիսացավ Ավետիս Սուլթանզադեի հեռացումը Իրանի կոմկուսի ղեկավար կազմից: Միաժամանակ նա կոմկուսի ԿԿ-ի մեջ մտցրեց Հեյդարխան Ամու-օղլիին և Բաքվի մի քանի պարսիկ բանվորների:

ԻԿԿ նոր ղեկավարը կատարեց «ընթացիկ մոմենտի» քննություն և հրապարակեց Իրանի կոմկուսի ծրագրային թեզիսներ, որոնցում անհրաժեշտ էր համարվում հրաժարվել Գիլյանում մաքուր սոցիալիստական (կոմունիստական) միջոցառումներ իրականացնելուց: «Շահական կառավարության, խոշոր ֆեոդալների և իմպերիալիզմի դեմ պայքարում» առաջ էր քաշվում բոլոր դասակարգերի, ներառյալ նաև միջին բուրժուազիայի հետ դաշինքի գաղափարը: Միաժամանակ անհրաժեշտ էր համարվում Քուչեք խանի և նրա կողմնակիցների հետ նոր համաձայնության գալը: Թեզիսներում խոսվում էր նաև կոմունիստների կողմից հավատացյալների կրոնական զգացումները վիրավորելու անթույլատրելիության մասին:

Նախնական բանակցություններից հետո Քուչեք խանը իր համաձայնությունը տվեց համագործակցելու Հեյդար խան Ամու-օղլիի հետ: 1921 թ. մայիսի 6-ին Իրանի կոմկուսի Կենտկոմի և Քուչեք խանի միջև ստորագրվեց համագործակցության վերաբերյալ համաձայնագիր:

Սակայն, չնայած դրան, կոմունիստները, Էհսանոլլա խանի գլխավորությամբ, առանց հարցը համաձայնացնելու Քուչեք խանի հետ, ռազմական արշավանք կազմակերպեցին դեպի Թեհրան՝ շահական կառավարությունը տապալելու նպատակով: Այդ արշավանքի ծրագիրը նախապես արժանացել էր Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության ղեկավարության և Կովկասում ԿԿ-ի ներկայացուցիչ Ս. Օրջոնիկիձեի հավանությանը:

Սակայն կոմունիստների այդ արկածախնդրությունն ավարտվեց կատարյալ ձախողմամբ: Շահական զորքերը ջախջախեցին Էհսանոլլայի խառնիճաղանջ «բանակը»:

Շուտով աննախընթաց կերպով սրվեցին հակասությունները Հեյդար Ամու-օղլիի և Քուչեք խանի միջև: 1921 թ. սեպտեմբերի 29-ին Քուչեք խանը անակնկալ զինված հարձակում գործեց կոմկուսի ղեկավարությանը ջախջախելու համար: Այդ միջադեպը վերածվեց մի արյունոտ դրամայի, որին զոհ գնացին և՛ Քուչեք խանը և՛ Հեյդար Ամու-օղլին: 1921 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին տեղի ունեցած այդ իրադարձությունների հետևանքով ջենգելիների շարժումը գտավ իր վախճանը: 1921 թ. նոյեմբերին Գիլյանում և մյուս մերձկասպյան նահանգներում վերստին վերականգնվեց շահական կառավարության իշխանությունը՝ դրանով իսկ վերջ տալով «Գիլյանի Խորհրդային Հանրապետության» կարճատև գոյությանը:

Իրանում համընդհանուր քաոսի վտանգից խուսափելու նպատակով Վոսուղ օդ-Դոուլեն դիվանագիտական շփումների մեջ մտավ Մոսկվայի հետ՝ 1920 թ. մայիսին նրան հասցեագրելով մի նոտա, որտեղ առաջարկվում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել ՌՍՖՍՀ-ի և Աղրբեջանի Խորհրդային Հանրապետության հետ: Սակայն Մոսկվան հասկացրեց, որ ինքը չի ցանկանում գործ ունենալ Վոսուղ օդ--Դոուլեի հետ, որը ստորագրել է 1919 թ. անգլո-իրանական «իմպերիալիստական գործարքը»:

Խորհրդային կառավարության հետ բանակցությունները հեշտացնելու նպատակով Ահմեդ շահը Վոսուղ օդ-Դոուլեին հեռացրեց կառավարության ղեկավարի պաշտոնից և նրա փոխարեն նշանակեց Մոշիր օդ-Դոուլեին, որը հրաժարվում էր ճանաչել անգլո-իրանական համաձայնագիրը այն պատճառաբանությամբ, որ այն մեջլիսի կողմից հաստատված չէ:

Այդ կառավարությունը 1920 թ. հուլիսին քայլեր կատարեց Մոսկվայի հետ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ, այն հույսով, որ նա կդադարեցնի իր միջամտությունը Իրանի ներքին գործերին:

4. 1921 Թ. ՍՈՎԵՏԱ-ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ

1920 թ. հուլիսի 25-ին Լոնդոնում Իրանի գործերի հավատարմատար Գաֆարանը, Մոշիր օդ-Դոուլեի համաձայնությամբ, պաշտոնապես տեղեկացրեց Խորհրդային կառավարությանը, որ շուտով Մոսկվայում նշանակվելու է Իրանի արտակարգ ու լիազոր դեսպան: 1920 թ. նոյեմբերի սկզբին այդ պաշտոնում նշանակված Մոշավեր օլ-Մամալեքը (Ալի Ղոլի խան) ժամանեց Մոսկվա և անմիջապես բանակցությունների մեջ մտավ Խորհրդային կառավարության հետ՝ սովետա-իրանական պայմանագիր կնքելու վերաբերյալ: 1921 թ. սկզբին կողմերի միջև կնքվելիք պայմանագիրը արդեն պատրաստ էր ստորագրության: Սակայն Թեհրանում առկա էին ազդեցիկ ուժեր, որոնք գտնում էին, որ անգլիացիների դիրքերի թուլացումը Իրանում և, ընդհակառակը, բոլշևիկյան Ռուսաստանի ուժեղացումը Իրանի համար կունենա խիստ բացասական հետևանքներ: Նրանց կարծիքով՝ «Իրանի վերածնության նոր դարաշրջանը սկսվում է անգլո-պարսկական պայմանագրի ստորագրման պահից»: Կար նաև մեկ այլ՝ ազգայնական խմբավորում, որը գտնում էր, որ Իրանը պետք է զերծ լինի որևէ արտաքին ազդեցությունից և զարգանա ինքնուրույն ճանապարհով:

1920 թ. վերջին սովետա-իրանական պայմանագրի ստորագրման հետ կապված բոլոր խոչընդոտները արդեն հաղթահարված էին: Դեկտեմբերի 29-ին ելույթ ունենալով Սովետների համառուսաստանյան VII համագումարում, Ժողկոմխորհի նախագահ Լենինը, խուսափելով պատգամավորներին հաղորդել որևէ բան դեռևս իր ավարտին չհասած բոլշևիկյան արկածախնդրության մասին՝ Իրանը խորհրդայնացնելու ուղղությամբ, հանդիսավոր կերպով հայտարարեց. «Մենք կարող ենք ողջունել նաև Պարսկաստանի հետ պայմանագրի առաջիկա ստորագրումը, որի հետ բարեկամական հարաբերությունները ապահովված են այն պատճառով, որ իմպերիալիզմի լծից տառապող բոլոր ժողովուրդների արմատական շահերը համընկնում են»: 1921 թ. փետրվարի 26-ին Մոսկվայում տեղի ունեցավ սովետա-իրանական պայմանագրի պաշտոնական ստորագրումը: Պայմանագիրը անժամկետ էր: Նրանում նշվում էր, որ Խորհրդային Ռուսաստանը հրաժարվում է նախկին ցարական կառավարության կողմից Իրանի հետ կնքված այն բոլոր պայմա-

նագրերից ու համաձայնագրերից, որոնք «վնաս էին հասցնում այդ երկրի անկախությանն ու ինքնուրույնությանը»: Մասնավորապես շեշտվում էր, որ Ռուսաստանը հրաժարվում է կապիտուլյացիոն ռեժիմից և արտաերկրայնության (էքստերիտորիալության) իրավունքից: Հայտարարվում էր նաև, որ Խորհրդային կառավարությունը ամբողջապես հրաժարվում է ֆինանսական այն քաղաքականությունից, որ ցարական կառավարությունը վարում էր Արևելքում: Ըստ այնմ՝ ուժը կորցրած էին հայտարարվում Իրանին հատկացված բոլոր փոխառությունները՝ միաժամանակ շեշտելով, որ դրանք ենթակա չեն վճարման: Հայտարարվում էր, որ Խորհրդային կառավարությունը անվարձահատույց ձևով Իրանին է փոխանցում Պարսկաստանի Հաշվառու-վարկատու բանկը իր ողջ դրամական գումարներով, արժեքներով, Իրանի տարածքում գտնվող շարժական ու անշարժ գույքով, Կասպից ծովում գտնվող Աշուրադե և մյուս կղզիները, ճանաչում է Իրանի իրավունքը Կասպից ծովում ազատ նավարկելու վերաբերյալ և այլն: 11-րդ հոդվածում հատուկ նշվում էր, որ խորհրդային կառավարությունը ճանաչում է Իրանի իրավունքը՝ Կասպից ծովում պահելու նավատորմ սեփական դրոշի ներքո: Առհասարակ հայտարարվում էր, որ Խորհրդային կառավարությունը հրաժարվում է ցարիզմի ստացած բոլոր կոնցեսիաներից և դրանց իրավունքները անվարձահատույց ձևով փոխանցում է Իրանին, պայմանով, որ վերջինս դրանք չփոխանցի այլ պետությունների կամ նրանց հպատակներին: Պայմանագիրը Իրանին իրավունք էր վերապահում խորհրդային տարածքի վրայով կատարելու տարանցիկ առևտուր: Նույնպիսի իրավունք տրամադրվում էր խորհրդային կառավարությանը: Կողմերը միմյանց տրամադրում էին նաև «առավել բարենպաստության» իրավունք:

Պայմանագրի 5-րդ և 6-րդ կետերն ունեին զուտ քաղաքական բովանդակություն: 5-րդ կետում նշվում էր, որ իրանական կառավարությունը պարտավորվում է իր տարածքում չթույլատրել այնպիսի խմբավորների, կազմավորումների և անհատների ներկայությունը, որոնք իրենց առջև խնդիր են դրել պայքարել Պարսկաստանի և Ռուսաստանի, ինչպես նաև վերջինիս դաշնակից պետությունների դեմ:

Միանգամայն ակնհայտ էր, որ պայմանագրի այս կետը ուղղված էր Իրանի տարածքում գործող «սպիտակ ռուսների» դեմ:

Պայմանագրի 6-րդ կետը ազդարարում էր. «Այն դեպքում, երբ երրորդ երկրների կողմից փորձ կատարվի զինված միջամտության ճանապարհով Պարսկաստանի տարածքում իրագործել զավթման քաղաքականություն կամ Պարսկաստանի տարածքը վերածել Ռուսաստանի դեմ ռազ-

մական ելույթների հենակետի, որը կարող է վտանգ հանդիսանալ Ռուսաստանի Սոցալիստական Դաշնային Սովետական Հանրապետության կամ նրա դաշնակից պետությունների սահմաններին, և եթե Պարսկական կառավարությունը Ռուսաստանի սովետական կառավարության նախազգուշացումներից հետո ի վիճակի չլինի կանխելու այդ վտանգը, ապա Ռուսաստանի կառավարությունը իրավունք կունենա իր զորքերը մտցնելու Պարսկաստանի տարածք, որպեսզի ի շահ ինքնապաշտպանության ձեռնարկի համապատասխան ռազմական միջոցառումներ»: Վտանգի վերանալուց հետո խորհրդային զորքերը պարտավորվում էին անհապաղ հեռանալ Իրանի տարածքից:

Կասկածից վեր է, որ պայմանագրի 6-րդ կետում նկատի էր առնվում անգլիական վտանգը: Սակայն այն միաժամանակ տևական ժամանակների համար նախատեսված և հեռահար նպատակներ հետապնդող մի հոդված էր: 5-րդ և 6-րդ հոդվածներում չէր պահպանվում նաև իրավահավասարության սկզբունքը: Այդ հոդվածների պայմանները ձևակերպված էին Իրանի ինքնիշխան իրավունքների բացահայտ խախտմամբ, որը հետագայում Իրանի քաղաքական շրջաններում բազմիցս տեղիք էր տալիս խորը դժգոհության:

1921 թ. պայմանագիրն ուներ նաև մի շարք ստվերային կողմեր: Նրանում նշված չէին իրանական տարածքից սովետական զորքերի դուրսբերման ժամկետները ու պայմանները: Այնուհետև, չնայած խորհրդային ղեկավարների հայտարարություններին՝ Իրանում ցարական Ռուսաստանի ունեցած բոլոր արտոնություններից հրաժարվելու մասին, մոսկովյան բանակցությունների ժամանակ արտաքին գործերի կոմիսար Գեորգի Չիչերինը և նրա տեղակալ Լևոն Կարախանը համառորեն աշխատում էին, որ հօգուտ ՌՍՖՍՀ-ի պահպանվեն Իրանի հյուսիսում եղած նավթային և ձկնային կոնցեսիաները, որոնք Խորհրդային Ռուսաստանի համար ունեին կարևորագույն նշանակություն: Հնարավոր եղավ պահպանել միայն Կասպից ծովում և նրա մեջ թափվող գետերում ձկնորսություն կազմակերպելու վերաբերյալ հայազգի Լիանոզովի կոնցեսիան:

Կարևոր է նաև նշել, որ 1921 թ. պայմանագրի 11-րդ հոդվածի համաձայն՝ ուժը կորցրած էր հայտարարվում 1828 թ. Թուրքմենչայի ռուս-իրանական պայմանագիրը:

5. 1921 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ

Իրանում ստեղծված նոր քաղաքական իրադրության պայմաններում անգլիական զորքերի ներկայությունը դառնում էր անհնարին: Հարցը միայն այն չէր, որ ուժի մեջ էր մտնում 1921 թ. պայմանագրի 6-րդ կետը, այլ նաև այն, որ անգլիացիների համար այլևս նպատակահարմար չէր զորքեր պահել Իրանում: Արդեն 1920 թ. վերջին բրիտանական կառավարությունը հասկացել էր, որ իրանական իշխանությունները չեն հաստատելու 1919 թ. անգլո-իրանական համաձայնագիրը, քանի որ ընդդիմությունը նրա դեմ Իրանում չափազանց ուժեղ էր: Ուստի Անգլիայի արտաքին գործերի մինիստր լորդ Քերզոնը գտնում էր, որ անհրաժեշտ է մշակել Իրանի նկատմամբ բրիտանական քաղաքականության նոր կուրս: Այդ կուրսի մշակման պարտականությունը Ֆորին օֆիսի ղեկավարը դրել էր գեներալ Է. Այրոնսայդի և Թեհրանում անգլիական դեսպան Գ. Նորմանի վրա: 1920 թ. աշնանը Է. Այրոնսայդը որպես բրիտանական օկուպացիոն զորքերի (այսպես կոչված «Նորպեր ֆորսի») հյուսիսային իրանական խմբի հրամանատար ժամանեց Իրան: Նա դեսպան Գ. Նորմանի հետ համատեղ Ահմեդ շահից և վարչապետ Մոշիր օդ-Դոուլեից պահանջեց անհապաղ ռուս սպաներին հեռացնել իրանական զինված ուժերից: 1920թ. վերջին իրանական կոզակական դիվիզիայի հրամանատար գեներալ Ստարոսելսկին և այլ ռուս սպաներ ձերբակալվեցին: Նրանց ներկայացվեց դավաճանության մեղադրանք՝ ջենգելիների դեմ ռազմական գործողությունների ժամանակ: Կոզակական դիվիզիայից ռուս սպաների հեռացումից հետո նրանց փոխարեն նշանակվեցին իրանցիներ: Դիվիզիայի հրամանատար նշանակվեց թագավորող ղաջարական ցեղի ներկայացուցիչ Սարդար Հոմայուն Վալին, իսկ կոզակական դիվիզիայի յոթ ջոկատներից մեկի՝ համադանյան ջոկատի հրամանատար դարձավ միրփանջա (փոխգնդապետ) Ռեզա խանը: Վերջինս գրավել էր գեներալ Է. Այրոնսայդի ուշադրությունը: 1921 թ. հունվարին իր օրագրում գեներալը կատարել էր հետևյալ գրառումը. «Այն, ինչի կարիք ուներ Իրանը, առաջնորդն էր: Ես այդ երկրում հանդիպեցի մի մարդու, որն ընդունակ էր իր հետևից տանելու ազգը: Դա Ռեզա խանն էր... Կգտնվի՞ արդյոք շահի մոտ առողջ դատողություն՝ վստահելու այդ մարդուն»: Այնուհետև գեներալը մտորում էր. «Իրականում ռազմական դիկ-

տատուրան այդ երկրում հանդիսանում է լավագույն միջոց մեր պրոբլեմները հաղթահարելու համար, քանի որ միայն իրադարձությունների նման զարգացումը հնարավորություն կտա անգլիական զինված ուժերին՝ հեռանալ Իրանից՝ խուսափելով կործանարար հետևանքներից, որոնք այլ հանգամանքներում անխուսափելիորեն տեղի կունենան»:

Ռեզա խանի հետ իր հանդիպումների ժամանակ Է. Այրոնսայդը հետևողականորեն նրան պատրաստում էր լիդերի դերի համար: 1921 թ. փետրվարի 12-ին նա իր օրագրում գրում էր. «...Այսօր Ռեզայի հետ զրույցի ժամանակ ամբողջապես նրա վրա դրեցի պարսկական կոզակների հրամանատարությունը: Նա իսկապես իսկական տղամարդ է: Ես մինչև այժմ իրանցիների մեջ չեմ հանդիպել այդպիսի սպայի: Նա պարզ ու անմիջական է, զերծ երկերեսանիությունից»:

1921 թ. փետրվարի 15-ին շահի հետ հանդիպման ժամանակ բրիտանական գեներալը փորձում էր համոզել Ահմեդ շահին, որ անհրաժեշտ է պետական կառույցներում Ռեզա խանին տրամադրել բարձր պաշտոն: Սակայն շահը մերժեց այդ առաջարկը: Ուստի անգլիացիները գործի մեջ դրեցին իրենց մշակած պլանի մյուս տարբերակը՝ ռազմաքաղաքական իրականացումը:

1921 թ. փետրվարի 21-ի գիշերը 2500 պարսկական կոզակներ Ռեզա խանի հրամանատարությամբ, որին օգնում էին գնդապետ Սմիթը և մի քանի այլ անգլիացի սպաներ, շարժվեցին դեպի Թեհրան: Մայրաքաղաքի մատույցներում և քաղաքում հեղաշրջման մասնակիցներին փաստորեն ոչ մի դիմադրություն չցուցաբերվեց: Մուտք գործելով Թեհրան՝ պարսկական կոզակները գրավեցին կառավարական հիմնարկությունները և ձերբակալեցին համարյա բոլոր բարձր աստիճանավորներին:

Այսպիսով՝ տեղի ունեցավ պետական հեղաշրջում: Մի քանի օր անց Ահմեդ շահը Սեյիդ Զիա-էդ-դին Թաբաթաբաիին, որը անգլիամետ ուղղվածության «Ռա'դ» («Կայծակ») թերթի հրատարակիչն էր և աչքի էր ընկնում իր ազգայնական հայացքներով, հանձնարարեց ձևավորել նոր կառավարություն: Փետրվարի 26-ին Սեյիդ Զիյան հանդես եկավ հայտարարությամբ, որում շահական աստիճանավորներին և ազնվականությանը մեղադրում էր երկիրը կառավարելու անկարողության մեջ: Նա հոլդորում էր պայքարի դուրս գալ «ժողովրդի արյունը ծծող ազնվականության և ծրիակերների դեմ», խոստումներ էր տալիս բարելավելու բանվորների և գյուղացիների վիճակը, զարգացնելու ժողովրդական կրթությունը, արդյունաբերությունն ու առևտուրը, ստեղծելու ուժեղ և մարտունակ ազգային բանակ և այլն: Հայտարարության մեջ նաև նշվում էր օտար տերություն-

ներից անկախ արտաքին քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը: Շեշտվում էր, որ կառավարությունը թույլ չի տալու, որ օտարերկրյա պետությունները միջամտեն Իրանի ներքին գործերին:

Շուտով, սակայն, պարզվեց, որ կատարելով անգլիացիների կողմից իր վրա դրված պարտականությունը՝ Սեյիդ Զիյան չափն անց է կացնում: Նրա «մերկացնող» հայտարարությունները առաջ բերեցին իրանական կառավարող շրջանների նշանակալից մասի խորը դժգոհությունը: Առանց այն էլ նրանք խիստ մտահոգված էին, որ հեղաշրջման ժամանակ և նրանից հետո ձերբակալվել էին բազմաթիվ նշանավոր քաղաքական գործիչներ, այդ թվում նաև մի քանի ազդեցիկ ղաջարական իշխանազուններ: Ձերբակալվածների թվում էին նույնիսկ Ահմեդ շահի մերձավոր ազգականները, ինչը բնականաբար, առաջ բերեց շահի զայրույթը: Կասկածամիտ շահի աչքից չէր վրիպել նաև այն, որ Սեյիդ Զեիյան փորձեր էր կատարում կապեր հաստատելու իր եղբոր՝ իշխանազուն Մոհամմադ Հասան խանի հետ: Դա արդունիքում մեկնաբանվեց այն առումով, որ Սեյիդ Զիյան պատրաստվում է անհրաժեշտության դեպքում, ինչպես նախատեսել էին անգլիացիները, շահին փոխել դինաստիայի մեկ այլ ներկայացուցիչով:

Շահի և նրա շրջապատի այդ դժգոհությունից փայլուն կերպով օգտվեց Ռեզա խանը: Ձեռք բերելով Ահմեդ շահի վստահությունը և ունենալով անգլիացիների աջակցությունը՝ նա շուտով ստացավ ռազմական մինիստրի պաշտոնը: Այնուհետև, դավաճանելով իր ոչ վաղուցվա դաշնակցին՝ Սեյիդ Զիային, Ռեզա խանը եռանդուն պայքար ծավալեց նրա դեմ: Այդ բոլորի հետևանքով իր պաշտոնավարումից ընդամենը երեք ամիս անց՝ 1921 թ. մայիսին, Սեյիդ Զիյան հեռացվեց վարչապետի պաշտոնից և վտարվեց երկրից: Ձևավորվեց նոր կառավարություն ազնվականության ներկայացուցիչ, խոշոր ֆեոդալ, Գիլյանում հսկայական թեյի պլանտացիաների տեր Ահմեդ Ղավամ-էս Սալթանեի գլխավորությամբ: Նոր կաբինետում Ռեզա խանը պահպանեց ռազմական մինիստրի իր պաշտոնը: Այդ ընթացքում նա հասցրել էր իր ձեռքում կենտրոնացնել ինչպես կոզակական դիվիզիայի, այնպես էլ ժանդարմերիայի ուժերը: Աստիճանաբար նա իր ազդեցությունը տարածում էր նաև քաղաքացիական վարչության վրա՝ իր սպաներին ուղարկելով զբաղեցնելու նահանգապետների պաշտոնները: Հենց այդ ժամանակվանից սկսած՝ Ռեզա խանը սկսեց դառնալ Իրանի փաստական դիկտատոր: Իր այդ նոր դերում ևս նախկինի պես նա օգտվում էր անգլիացիների աջակցությունից: Իրանից հեռացած անգլիական զորքերի հրամանատարությու-

նը իր սպառազինությունների և ռազմամթերքի մեծ մասը թողեց Ռեզա խանի հրամանատարության ներքո գործող զինվորական ստորաբաժանումներին: Բացի այդ, Շահնշահական բանկի միջոցով Մեծ Բրիտանիան իրանական կառավարությանը հատկացրեց ֆինանսական խոշոր միջոցներ ռազմական նպատակներով օգտագործելու համար: Անգլիացիների կողմից «Հարավպարսկական հրաձիգների» դուրս բերումը Իրանից նույնպես նպաստեց Ռեզա խանի դիրքերի ամրապնդմանը՝ աննախընթաց կերպով բարձրացնելով նրա հեղինակությունը:

Անգլիացիները շարունակում էին նպաստել Ռեզա խանի դիրքերի ամրապնդմանը՝ առաջնորդվելով մի շարք նոր ակնկալիքներով: Նախ՝ Իրանում կայուն և հակաբոլշևիկյան տրամադրություններ ունեցող իշխանությունը կատարելապես ձեռնտու էր իրենց: Այնուհետև՝ շնորհիվ Ռեզա խանի՝ Մեծ Բրիտանիայի հետ սերտորեն կապված բազմաթիվ իրանական քաղաքական գործիչներ (Փիրուզ միրզա Նոսրեթ օդ-Դոուլե, Վոսուղ օդ-Դոուլե և այլք) շուտով կրկին հնարավորություն ստացան տեղեր զբաղեցնելու երկրի հասարակական-քաղաքական կյանքում:

Գնալով աննշեղորեն մեծանում էր նաև Ռեզա խանի հեղինակությունն ու վարկը իրանական կառավարող շրջանների մոտ: Հատկապես նրա ջանքերը բանակը վերակազմակերպելու և ամրապնդելու ուղղությամբ արժանանում էր տիրապետող վերնախավի կատարյալ հավանության ու աջակցությանը, մանավանդ որ Ռեզա խանը բանակի օգնությամբ ձեռնամուխ էր եղել երկրում անջատողական շարժումների ջախջախմանը: 1921 թ. հոկտեմբերին, նա, օրինակ, բանակը շարժեց դեպի հյուսիս՝ Գիլյանի նահանգում «կարգ ու կանոնը» վերականգնելու համար: Ռեշտը գրավելուց հետո նա զենքը ուղղեց երկրի հյուսիսարևելյան Խորասան նահանգի անջատողականների խիստ վտանգավոր հակակառավարական ապստամբության դեմ, որը գլխավորում էր այդ նահանգում տեղակայված զորքերի և ժանդարմերիայի հրամանատար՝ գնդապետ Մոհամմադ Թաղի խանը: Այդ ապստամբությունը անողոք դաժանությամբ ճնշելուց քիչ անց Ռեզա խանը տեղեկացվեց, որ կրկին ալեկոծվել է Իրանական Ադրբեջանը: 1922 թ. փետրվարին շեյխ Խիաբանիի «Անկախ Ադրբեջանի» գաղափարակիցները Թավրիզում կրկին բարձրացրել էին ապստամբություն: Այս անգամ այն ղեկավարում էր ժանդարմերիայի սպա Լահութին, որի կապերը Մոսկվայի հետ վկայված էին բազմաթիվ փաստերով: Ապստամբներին հաջողվեց գրավել Թավրիզը և տապալել կենտրոնական կառավարության մարմինները: Ապստամբած ժանդարմներին միացան այսպես կոչված «Թավրիզի բնակչության դե-

մոկրատական խմբավորումները», որոնք կազմակերպեցին «Թաջջադդոթ» («Նորացում») անվամբ ազգայնական մի կոմիտե: Թուրք-ազերի ազգայնականությունը Իրանական Աղրբեջանը Իրանի կազմից անջատելու համար կրկին զգեստավորվում էր բոլշևիկյան զգեստներով ու շրջանառության մեջ էր դնում կոմունիստական կարգախոսներ՝ պահանջելով «երկրի դեմոկրատականացում» «ազգային ազատագրում» և այլն:

Թեհրանում կռահեցին, որ ռուսական բոլշևիզմը կրկին ձեռք է կարկառում Հյուսիսային Իրանի հողերի նկատմամբ: Ուստի Թեհրանի արձագանքը Ատրպատականի քուրքերի այդ վտանգավոր շարժման նկատմամբ ակնթարթային էր: Շուտով Թավրիզը շրջապատվեց Ռեզա խանի զորամասերի խոշոր ուժերով: Տասժամյա հրետակոծությունից ու վճռական գրոհից հետո ապստամբները հանձնվեցին: Ապստամբության պարագլուխներից Լահութիին և նրա մի շարք կողմնակիցներին հաջողվեց ճողոպրել և ապաստան գտնել Մոսկվայում, որտեղ նախկին ժանդարմը ձեռնամուխ եղավ բանաստեղծական գործունեության:

Այսպիսով՝ Իրանը կարողացավ դրսևորել կենսունակություն և հաղթահարել ներքին ճգնաժամը, զսպել անջատողական շարժումներն ու կանխել տարածքային կորուստները: Այդ բոլորի մեջ անտարակույս իր խոշոր լուման ուներ Իրանի փաստական դիկտատորը՝ Ռեզա խանը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

1. ՂԱԶԱՐԱԿԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ՏԱՊԱԼՈՒՄԸ ԵՎ ՓԵՀԼԵՎԻՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԻՐԱՆՈՒՄ

XX դ. 20-ական թթ. անջատողական շարժումները ջախջախելու ընթացքում Ռեզա խանը աստիճանաբար իր ձեռքերում էր կենտրոնացնում ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական իշխանությունը: Մասնավորապես Իրանի ողջ զինված ուժերը իրեն ենթարկելու միտումով նա ձեռնամուխ եղավ միասնական ու կենտրոնացված կանոնավոր բանակի ստեղծմանը: 1922 թ. հունվարին հրապարակվեց հրամանագիր Իրանում առկա բոլոր տեսակի զինվորական միավորումների (կոզակական զորամասեր, ժանդարմներ, սարբազներ և այլն) վերացման և միասնական, կենտրոնացված և ռազմական մինիստրին, այսինքն՝ Ռեզա խանին, ենթակա բանակի ստեղծման մասին: Ռեզա խանը ողջ երկիրը բաժանեց վեց ռազմական շրջանների. 1. հյուսիսարևմտյան՝ Թավրիզ կենտրոնով. 2. հյուսիսային՝ Ռեշտ կենտրոնով. 3. արևելյան՝ Մեշհեդ կենտրոնով. 4. արևմտյան՝ Համադան կենտրոնով. 5. կենտրոնական՝ Թեհրան կենտրոնով, և 6. հարավային՝ Սպահան կենտրոնով: Նորաստեղծ ռազմական շրջաններում տեղակայվեցին նոր կազմակերպված զինված ուժերի զորամիավորումները: Դրանց հրամանա-

տարները նշանակվում էին ռազմական մինիստրի կողմից և պարտավոր էին անվերապահորեն կատարել նրա բոլոր հրամանները: Նահանգներում զինվորականները սկսեցին եռանդուն կերպով միջամտել քաղաքացիական վարչության գործերին՝ զբաղեցնելով նահանգապետների պաշտոնները: Զինվորական այդ նահանգապետները նույնիսկ ձեռք բերեցին բնակչությունից հարկեր գանձելու իրավունք: Բացի այդ, բանակի կարիքները հոգալու համար Ռեզա խանը հասավ նրան, որ պետական որոշ եկամուտներ, օրինակ՝ անուղղակի հարկերից գանձվող գումարները, հատկացվեցին ռազմական մինիստրությանը: Այսպիսով՝ նա փաստորեն իր ձեռքը վերցրեց նաև երկրի ֆինանսները տնօրինելու գործը:

Կառավարություններն անընդհատ փոխվում էին, սակայն Ռեզա խանը անփոփոխ կերպով շարունակում էր մնալ ռազմական մինիստր: Հենվելով բանակի վրա՝ նա դառնում էր Իրանի փաստական դիկտատորը՝ իր գործողություններում շատ հաճախ այլևս հաշվի չնստելով կառավարության հետ կամ փոխելով իր համար անցանկալի կառավարությունները:

Ռեզա խանը սկսեց հետևողականորեն իրականացնել երկրի կենտրոնացման քաղաքականություն: Բանակի օգնությամբ նա աշխատում էր հնազանդեցնել խոշոր կիսանկախ ավատատերերին և ինքնագլխության ձգտող քոչվորական ցեղերի խաներին: Այդ քաղաքականությունը 1922-1924 թթ. առաջ բերեց խաների և քոչվորական ու կիսաքոչվորական ցեղերի ցեղային ազնվականության կատաղի դիմադրությունը:

Հյուսիսում Ռեզա խանի կենտրոնացման քաղաքականության դեմ պայքար էին մղում Մակուի խանը, շահսևենյան, թալիշյան և խալխալի ցեղերի խաները, արևելքում՝ թուրքմենական խաները, արևմուտքում՝ քրդերը՝ հայտնի ցեղապետ Իսմայիլ աղա Սըմկոյի գլխավորությամբ, հարավ-արևմուտքում՝ արաբական ցեղերը՝ շեյխ Խազալի գլխավորությամբ, իսկ հարավում՝ ղաշղայի թուրքալեզու և բախթիարական ու լորեսթանյան իրանալեզու ցեղերը:

Նախ՝ Ռեզա խանը ձեռնամուխ եղավ Հյուսիսային Իրանի խաների հնազանդեցմանը: 1922-1923 թթ. ընթացքում նա անողոք դաժանությամբ ճնշեց շահսևենների, խալխալիների և Մակուի խանի շարժումները: Խաների մեծ մասը կախաղան բարձրացվեց, և նրանց գույքը բռնագրավվեց: Այդ արյունոտ հաշվեհարդարներն ուղեկցվում էին ցեղերի զանգվածային զինաթափմամբ, որոնք տեղիք էին տալիս մի շարք նոր ապստամբությունների: Այսպես՝ 1922 թ. կեսերին Իրանական Քրդստանում բռնկվեց հուժկու ապստամբություն Իսմայիլ աղա Սըմկոյի գլխավորու-

թյամբ: Քրդերը առաջ քաշեցին Իրանի տարածքում անկախ Քրդստանի ստեղծման պահանջը:

Այդ ապստամբության ջախջախումը առանձնակի նշանակություն ուներ Ռեզա խանի քաղաքական դիրքերի ամրապնդման համար: Բանն այն է, որ 1922 թ. սկզբին այն հողերը, որոնք գտնվում էին Սըմկոյի հսկողության տակ, հասնում էին հսկայական չափերի: 1921 թ. մարտին բրիտանական իշխանությունների կողմից գումարված Կահիրեի խորհրդաժողովում որոշում էր ընդունվել Անգլիայի հովանու ներքո ստեղծել ինքնավար քրդական պետություն, որը դառնալու էր Մերձավոր Արևելքում Մեծ Բրիտանիայի հենարաններից մեկը: Այդ որոշման համաձայն՝ անգլիացիները գաղտնապես Սըմկոյին մատակարարում էին զենք և զինամթերք, ինչպես նաև ցուցաբերում էին դրամական օգնություն:

Սակայն 1922 թ. օգոստոսին Ռեզա խանի զորքերին հաջողվեց ջախջախել այդ վտանգավոր շարժումը և գրավել Սըմկոյի հենակետ Չեհրիք կալեն: Սըմկոն ստիպված էր փախչել Իրաք: Սակայն հետագայում նա կրկին վերադարձավ Իրան՝ շարունակելու համար զինված պայքարը հանուն «քրդական պետության» ստեղծման:

Դրանից հետո օրակարգի հարց դարձավ հարավային շրջանների ցեղերի՝ լուրերի, բախթիարների, ղաշղայիների, արաբների, բելուջների հնազանդեցումը: Այդ բարդ խնդիրն իրականացնելու համար Ռեզա խանը ավելացրեց բանակի թիվը՝ այն հասցնելով 60 հազարի: Ավելացան նաև արտասահմանում ռազմական տեխնիկայի և սպառազինության գնումները: Կարևոր նշանակություն էր տրվում ճանապարհների շինարարությանը, որը նպաստում էր ցեղերի ռազմական ու տնտեսական մեկուսացմանը և նրանց ակատմամբ արդյունավետ հսկողության հաստատմանը: Ռազմական գործողությունների ընթացքում իրականացվում էր ցեղերի զինաթափում, նրանց վրա դրվում էր ծանր ռազմատուգանք, բռնագրավվում էին նրանց անասուններն ու գույքը, խաները զրկվում էին իրենց ցեղերը կառավարելու իրավունքից, դատական իշխանությունից և այլն: Ապստամբություններին մասնակից բազմաթիվ խաներ մահապատժի ենթարկվեցին, աքսորվեցին կամ քաղաքներում գտնվում էին ոստիկանության ակնդետ հսկողության ներքո:

Երկրի հարավում ամենավտանգավոր անջատողական շարժումներից մեկը արաբական ցեղերի շարժումն էր: 1922 թ. Խուզիստանի նահանգում ստեղծվեց այսպես կոչված «Հարավային ցեղերի միությունը»՝ Մոհամմերայի (ներկայումս՝ Խորրեմշահր) ազդեցիկ շեյխ Խազալի գլխավորությամբ: Վերջինս առաջ քաշեց «անկախ Արաբստան» ստեղծե-

լու պահանջը, որը աջակցություն էր գտնում անգլիացիների կողմից: Նրանք Թեհրանի կառավարությունից պահանջում էին պահպանել Խազալի՝ որպես կիսաինքնավար կառավարչի ստատուտը:

Արաբական մի շարք երկրներում մամուլը շեյխ Խազալին մեծարում էր «Արաբստանի թագավոր» տիտղոսով: Ի դեպ, 1921 թ. շեյխ Խազալը հավակնություններ ներկայացրեց նույնիսկ իրանական գահի նկատմամբ: Նա նաև մի որոշ ժամանակ հանդիսանում էր Իրաքի գահի գլխավոր հավակնորդներից մեկը: Շեյխը հրաժարվում էր նաև իրանական գանձարան մուծել հարկեր: Անգլիացիների հավանությամբ և աջակցությամբ Խազալը 1923 թ. Խուզիստանում ստեղծեց «Ղիյամ-ե սաադաք» («Երջանիկ ապստամբություն») կոմիտեն, որին անդամագրվեցին նաև մի շարք լուրական և բախթիարական ցեղեր:

Մեկնաբանելով անգլիական քաղաքականության թաքնված խորհուրդը շեյխ Խազալի նկատմամբ՝ Ռեզա խանը գրում էր. «Ո՞րն է այդ պլանի նպատակը,– և ինքն էլ պատասխանում էր,– հարավի նավթահանքերի (այսինքն՝ Անգլո-պարսկական նավթային ընկերության հսկողության տակ գտնվող շրջանների– Վ.Բ.) անկախ գոյությունը և Իրանին զրկելը այդ ձեռնարկության եկամուտներից»:

Սակայն, այդ բոլորով հանդերձ, բրիտանական կառավարությունը չցանկացավ հանուն Խազալի վերջնականապես վատթարացնել իր հարաբերությունները Ռեզա խանի հետ կամ նրա նկատմամբ կիրառել բացահայտ ռազմական միջամտություն՝ գերադասելով խուզիստանյան հարցում գտնել կոմպրոմիսային լուծումներ:

Խուզիստանում հանդիպելով հուժկու դիմադրության՝ Ռեզա խանը ստիպված էր միաժամանակ հետաձգել շեյխ Խազալին հնազանդեցնելու իր մտադրությունը: Ուստի 1923 թ. նա իր զենքն ուղղեց Լորեսթանի խաների դեմ: Ջախջախելով նրանց և գրավելով նահանգային կենտրոն Խորրեմաբադ քաղաքը՝ Ռեզա խանը որոշեց այդ ազատաբաղձ ցեղը դիմադրության կորովից զրկելու համար մասնատել նրան և մի խոշոր հատված երկրի արևմտյան շրջաններից տեղահանել ու վերաբնակեցնել ծայր հյուսիս-արևելքում գտնվող Խորասան նահանգում:

Որպես կանոն, ցեղերի հնազանդեցման գործը ուղեկցվում էր ներքին խլրտումների հետ դաժան հաշվեհարդարներով:

Ռեզա խանի հեղինակությունը երկրում անշեղորեն աճում էր: 1923 թ. հոկտեմբերին արտասահմանից վերադարձած Ահմեդ շահ Ղաջարը նրան նշանակեց վարչապետ: Շուտով նորաթուխ կառավարության ղեկավարի ճնշման ներքո շահը վերստին ստիպված էր հեռանալ երկրից՝ մեկնելուց

առաջ իր եղբորը նշանակելով խնամակալ (ռեգենտ): Նրանից Ռեզա խանը ստորագրություն վերցրեց, որ չի խառնվելու պետական գործերին:

Արդեն այդ պահին դաջարական դինաստիան զրկվել էր իրական իշխանությունից: Այն ամբողջապես կենտրոնացել էր Ռեզա խանի ձեռքերում: Վերջինս իր դիրքերը էլ ավելի ամրապնդելու նպատակով իրականացրեց մի շարք միջոցառումներ, որոնք կոչված էին ընդլայնելու նրա տիրապետության սոցիալական հենարանը: Մասնավորապես մշակվեցին մի շարք օրինագծեր (քրեական և քաղաքացիական օրենսգրքերի նախագծեր՝ համընդհանուր զինվորական ծառայություն մտցնելու վերաբերյալ, հողային հարկի, անասնահարկի, առևտրական շրջանառություններից գանձվող հարկերի չափի և գանձման կարգի վերաբերյալ) և այլն:

Ռեզա խանը կարևոր նշանակություն էր տալիս նաև երկրի ֆինանսական-տնտեսական վիճակը կայունացնելու գործին: Ֆինանսները կարգավորելու նպատակով 1922 թ. ԱՄՆ-ից Իրան հրավիրվեց Միլսպոն, որը ֆինանսական խորհրդականի կարգավիճակով պաշտոնավարեց մինչև 1927 թ.:

Քայլեր ձեռնարկվեցին նաև Խորհրդային Միության հետ առևտրատնտեսական հարաբերությունները աշխուժացնելու ուղղությամբ: Թեև մեջլիսը հրաժարվեց վավերացնել 1924 թ. սովետա-իրանական առևտրական պայմանագիրը, սակայն, անկախ դրանից, երկու երկրների տնտեսական հարաբերություններում նկատվեց որոշակի առաջընթաց: Ստեղծվեցին մի շարք խառը սովետա-իրանական ընկերություններ («Շարդ», «Ռուսպերսսախար», «Պերսխլոպոկ», «Պերսազնիք», «Պերսշոլկ» և այլն): Սովետա-իրանական առևտուրը խրախուսելու նպատակով կազմակերպվեց «Ռուսպերսբանկը»:

Ռեզա խանը աշխատում էր նաև ուժեղացնել իր ազդեցությունը Իրանի քաղաքական շրջանակներում: Այդ նպատակով նա ստեղծեց «Թաջջեդադ» («Նորացում») կուսակցությունը, որի ֆրակցիան դարձավ ամենաուժեղը հինգերորդ մեջլիսում:

1923 թ. վերջին Իրանում շարժում ծավալվեց Ղաջարների դինաստիան և առհասարակ միապետական վարչակարգը տապալելու և երկրում հանրապետական վարչակարգ ստեղծելու ուղղությամբ: Ռեզա խանը որոշեց օգտագործել այդ շարժումը իշխանությունը իր ձեռքում կենտրոնացնելու համար: Քեմալ Աթաթյուրքի օրինակով նա ցանկանում էր դառնալ ապագա հանրապետության պրեզիդենտ: Հանրապետական շարժումը առանձնակի թափ ստացավ այն բանից հետո, երբ հանրությանը հայտնի դարձավ, որ Ահմեդ շահը կապերի մեջ է «Հարա-

վիրաւնական ցեղերի միության» ղեկավար շեյխ Խազալի հետ: Սակայն հանրապետական շարժումը թշնամանքով ընդունվեց ավատական ազնվականության և ազդեցիկ հոգևորականության կողմից: Այդ շարժման դեմ ընդդիմադիր հոգևորականության պարագլուխն էր հայտնի կրոնական գործիչ Մոդարրեսը: Վախենալով, որ հոգևորականությունը և առհասարակ միապետության բոլոր կողմնակիցները ճակատ կկազմեն իր դեմ՝ Ռեզա խանը հրաժարվեց հանրապետական շարժմանը սատար կանգնելու իր քաղաքականությունից: 1924 թ. մարտի 31-ին, որպես Իրանի վարչապետ, նա հրապարակեց մի հռչակագիր, որտեղ հայտարարում էր, որ ինքը միշտ ջատագով է եղել իսլամի ծաղկմանը և հոգևորականության դիրքերի անսասանությանը: Այնուհետև նա խորհուրդ էր տալիս ժողովրդին «հրաժարվել հանրապետության մասին մտքից և դրա փոխարեն իր ողջ ջանքերը գործադրել բարեփոխումների և պետության առաջադիմության ճանապարհին եղած արգելքները հաղթահարելուն, ինչպես նաև աջակցել իրեն՝ հանուն հավատի հիմքերի ամրապնդման, պետության անվտանգության և ազգային իշխանության սրբազան նպատակների իրագործման»:

1924 թ., հանդես գալով Ռեզա խանի դեմ, շեյխ Խազալը Իրանի գործող կառավարությանն անվանեց «անաստված» և դիմեց բարձրագույն շիիթական հեղինակություններին՝ խնդրելով թույլատրել իրեն պատերազմ հայտարարելու նրա դեմ: Կրկին մակերես բարձրացավ «Անկախ Արաբստանի» կարգախոսը: 1924 թ. սեպտեմբերին շեյխ Խազալը Թեհրան հղեց օտարերկրյա դեսպաններին և մեջլիսին ուղղված մի հեռագիր, որի մեջ Ռեզա խանը մեղադրվում էր որպես «իշխանության հափշտակիչ»: Միաժամանակ շեյխը կոչ էր անում կրծքով պաշտպանել «նորին գերազանցություն սիրեցյալ շահին»: Հեռագրում նա վարչապետին մեղադրում էր, որ նա «մտադիր է ոչնչացնել իսլամի սրբազան դրոշը և ոտնատակ տալ իրանական սահմանադրությունը»:

Որպես պատասխան քայլ՝ մեջլիսը շեյխ Խազալին հայտարարեց խռովարար ու դավաճան: Ռեզա խանը Խուզիստան ուղարկեց մեծաթիվ մի բանակ: Միաժամանակ Խուզիստանի զինվորական նահանգապետին ուղարկվեց գաղտնի ծածկագրված հեռագիր, որտեղ հրամայվում էր անհապաղ ձերբակալել շեյխ Խազալին ու նրա մերձակա շրջապատի մարդկանց և պահակախմբի ուղեկցությամբ նրանց շտապ ուղարկել Թեհրան:

Մտավախություն ունենալով, որ իր կյանքի դեմ իշխանությունները մահափորձ կկազմակերպեն՝ շեյխ Խազալը գիշերներն անց էր

կացնում Պարսից ծոցում գտնվող իր զբոսանավի մեջ՝ անընդհատ տեղափոխվելով մեկ վայրից մյուսը: Զինվորական նահանգապետ Ֆազլուլլա խանի (հետագայում՝ գեներալ Զահեդի) կողմից առանձնացված զինված ջոկատը գիշերային խավարի քողի ներքո՝ մի փոքրիկ նավակով աննկատ մոտեցավ շեյխի զբոսանավին և ակնթարթորեն բարձրացավ տախտակամած: Շեյխի թիկնապահները նույնիսկ չհասցրին դիմադրություն ցույց տալ: 1925թ. ապրիլի 19-ին Խազալը, նրա երեք որդիները և անձնական քարտուղարը ձերբակալվեցին և ուղարկվեցին Թեհրան: Շեյխի համար Թեհրանի Շիմրան թաղամասում առանձնացվեց մի շքեղ առանձնատուն, որտեղ նա տնային բանտարկության պայմաններում ապրեց մինչև իր «հանելուկային» մահը:

Դեռ խուզիստանյան ապստամբության բոցը վերջնականապես չմարած՝ Ուրմիա լճից արևմուտք ընկած քրդաբնակ շրջաններում սկսվեց նոր ապստամբություն Իսմայիլ աղա Սըմկոյի գլխավորությամբ: 1925 թ. Ռեզա խանին հաջողվեց ճնշել այդ շարժումը ևս:

Ռեզա խանը Ահմեդ շահին մեղադրեց հակակառավարական շարժումների հետ կապեր ունենալու մեջ: 1925 թ. փետրվարին նա մեջլիսի առջև հարց բարձրացրեց դաջարների հետ հետագա համագործակցության անհնարինության մասին: Բանակի ճնշման ներքո, որի հրամանատարները սպառնում էին զորքերը շարժել դեպի Թեհրան, մեջլիսը որոշում ընդունեց Ռեզա խանին գերագույն գլխավոր հրամանատար նշանակելու մասին՝ նրան շնորհելով անսահմանափակ լիազորություններ: Այսպիսով՝ ոտնահարվեց իրանական սահմանադրության 50-րդ հոդվածը, ըստ որի Իրանի բոլոր զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար էր ճանաչվում շահը: Դրանից հետո Ռեզա խանը եռանդուն նախապատրաստություններ սկսեց տեսնել Ղաջարների դինաստիան տապալելու և շահական գահը զավթելու ուղղությամբ: Ի վերջո, 1925 թ. հոկտեմբերի 31-ին հինգերորդ գումարման մեջլիսի կողմից որոշում ընդունվեց Ղաջարների դինաստիան տապալելու և իշխանությունը Ռեզա խանին հանձնելու մասին: Այսպիսով՝ հիշյալ դինաստիան, որը 130 տարուց ավել միահեծան կերպով կառավարում էր Իրանում, տապալվեց և զրկվեց գահից: Դինաստիայի տապալումը նշվեց հրետանային համազարկերով: Հաջորդ օրը գահաժառանգ Մոհամմադ Հասան միրզային վտարեցին երկրից: Իրանում հայտարարվեց երեքօրյա տոնակատարություն:

Թեև Ահմեդ շահը հայտարարություն հրապարակեց այն մասին, որ իրեն գահընկեց անելը անօրինական է, քանի որ ժողովուրդը այդ առ-

թիվ չի հայտնել իր կամքը, սակայն նրա այդ հայտարարությունը մնաց անհետևանք:

Իր ոչ լեգետիմությունը ինչ-որ ձևով արդարացնելու և հատկապես հոգևորականության աջակցությունը շահելու նպատակով Ռեզա խանը անմիջապես հրապարակեց մի հայտարարություն, որտեղ ասվում էր, որ իր հիմնական խնդիրն է համարում «իսլամական օրենքների իրագործումը և ժողովրդի բարօրությունը»: Հայտարարության մեջ շեշտվում էր, որ հանուն մահմեդական նորմերի պահպանման՝ կառավարությունը փակում է բոլոր գինետները, խաղատները և այլն: Ռեզա խանի այդ հեռահար քայլը ոգևորությամբ ընդունվեց բարձրագույն հոգևորականության մի մասի կողմից, և մոջթեհիդների մի ստվար խումբ հրապարակեց ժողովրդին ուղղված մի կոչ, որտեղ հորդորում էր ենթարկվել նոր տիրակալին:

1925 թ. դեկտեմբերի 12-ին Սահմանադիր ժողովը Ռեզա խանին հռչակեց Իրանի շահ, որն ընդունեց Ռեզա շահ Փեհլևի (Փահլավի) գահակալական անունը, որը խորհրդանշելու էր քաղաքական հաջորդականության (ժառանգականության) գաղափարը: Այսպիսով՝ Իրանում հաստատվում էր նոր կառավարող դինաստիա՝ Փեհլևիների դինաստիան, որն իր անվանումը վերցրել էր ի նշանավորումն այն բանի, որ հնում Պարթևական և Սասանյան դինաստիաների կառավարման շրջանում Իրանը հանդիսանում էր աշխարհի հզորագույն պետություններից մեկը:

Ռեզա շահի թագադրման արարողությունը տեղի ունեցավ մի քանի ամիս հետո՝ 1926 թ. ապրիլի 25-ին:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

ԻՐԱՆԸ ՌԵԶԱ ՇԱՀԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1925-1941 ԹԹ.)

1. ՌԵԶԱ ՇԱՀԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԿՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռեզա խանի կողմից իրականացրած դինաստիական հեղաշրջումը Իրանի պետական կարգի մեջ չհանգեցրեց որևէ փոփոխության: Երկրի քաղաքական իրադրությունը աչքի էր ընկնում ծայրահեղ բարդությամբ: Իրանը կանգնած էր մի շարք դժվարին մարտահրավերների առջև: Ամեներեք տեղի էին ունենում գյուղացիական ելույթներ, ծայրամասային շրջաններում շարունակվում էին քոչվորական ու կիսաքոչվորական ցեղերի ավատական առաջնորդների անջատողական շարժումները: Պետական-վարչական ապարատում նախկինի պես տիրում էին քաոսն ու կոռուպցիան: Ռեզա շահը սկսեց վարել երկրում «կարգ ու կանոն» հաստատելու քաղաքականություն, որը ոչ այլ ինչ էր, քան ռազմական դիկտատուրայի ուժեղացում: Զուրկ լինելով կրթական պատշաճ մակարդակից և ծանոթ չլինելով կառավարման արդիական մեթոդների հետ՝ նորաթուխ շահը բազմաթիվ քաղաքական հարցերի լուծման լավագույն միջոց էր համարում կոպիտ բռնությունը՝ ղրանով իսկ չտարբերվելով իր շատ նախորդներից: Նա «երկաթյա ձեռքով» շարունակեց երկրի կենտրոնացման քաղաքականությունը՝ այդ ճանապարհով «հավաքելով» իրանական հողերը, որոնց վրա ղաջարների տիրապետության վերջին շրջա-

նում կախված էր կենտրոնական իշխանությունից անջատվելու ռեալ սպառնալիքը: Ռեզա շահի կողմից երկրի կենտրոնացման քաղաքականությունը իրագործվում էր «բարբարոսության դեմ բարբարոսական մեթոդներով» հայտնի սկզբունքով: Իր առջև դրված պետական նշանակություն ունեցող այդ կարևոր խնդիրը լուծելու համար շահը կանգ չէր առնում որևէ միջոցի առջև՝ ուղեցույց ունենալով «Նպատակն արդարացնում է միջոցը» սկզբունքը: Նույնիսկ այն անձանցից ոմանք, ովքեր օգնել էին Ռեզա խանին մագլցելու դեպի իշխանության բարձրունքները, հետագայում դարձան նրա զոհերը:

1921-1925 թթ. ընթացքում հիմնականում ավարտվել էր Հյուսիսային Իրանի ցեղերի «հնազանդեցումը»: Ռեզա շահի գահակալությունից հետո օրակարգում դրվեց երկրի կենտրոնական և հարավային շրջանների ցեղերի՝ լորերի, բախթիարների, ղաշղայիների, արաբների և բելուջների «սանձահարման» խնդիրը: Դա բավականին բարդ խնդիր էր, և ցեղերին զինաթափ անելն ու բոնի նստակեցության պարտադրելը դեռևս հարցի լուծում չէր: Դարեր շարունակ ցեղերի բնակեցման գոտում տոհմացեղային կյանքով ապրող հավաքականություններն ունեին ուրույն տնտեսական-սոցիալական ապրելակերպ: Ցեղերը, որոնք կազմում էին Իրանի բնակչության նշանակալից մասը և առավելապես զբաղվում էին անասնապահությամբ, որոշակի դերակատարություն ունեին երկրի տնտեսության մեջ: Սակայն կառավարության կողմից իրականացվող քաղաքականության հետևանքով ցեղերի տնտեսական գործունեությունը կտրուկ կրճատվում էր: Բացի այդ, իրենց բնակության վայրերում ցեղերը ապրում էին իրենց սեփական օրենքներով, աղաքներով ու սովորություններով, իսկ նստակեցության անցնելու դեպքում այդ կարգը կատարելապես խախտվում էր, և նրանք ստիպված էին ապրել համապետական օրենքների պահանջներով՝ զրկվելով նաև իրենց բացարձակ ազատությունից:

Ցեղերի բնակության գոտում արմատավորվում էր ռազմական ու քաղաքացիական վարչության իշխանությունը: Շահը անողորմ պայքար ծավալեց նաև ինքնագլխության ձգտող խաների դեմ: Կառավարական զորքերը ջախջախեցին նման բազմաթիվ խաների՝ նրանցից շատերին ենթարկելով մահապատժի: Կալվածատեր խաների ազդեցությունը քայքայելու նպատակով իշխանությունները հաճախ ստիպում էին նրանց փոխանակել ցեղերի բնակության գոտում գտնվող իրենց տիրույթները երկրի այլ շրջանների հողերի հետ: Ավատական ազնվականության և քոչվորական խաներից շատերի հողային տիրույթները բռնագրավվում և անցնում էին շահի կամ նրա մերձավորների ու կողմնա-

կիցների՝ զինվորականների, չինովնիկների, կալվածատերերի, վաճառականների ձեռքը: Անճամբ Ռեզա շահը տարբեր պատրվակներով երկրի հարուստ ու բարեբեր նահանգներում՝ Մազանդարանում, Խորասանում, Քերմանշահում և Գորգանում, ձեռք բերեց հսկայական հողային տիրույթներ և վերածվեց Իրանի խոշորագույն հողատիրոջ:

Ինչպես և սպասելի էր, երկրի կենտրոնացման քաղաքականությունը հանդիպեց ցեղերի համառ դիմադրությանը: 1926-1928 թթ. խոշոր հուզումներ էին տեղի ունենում Խուզիստանի նահանգի արաբական ցեղերի շրջանում: Այդ նույն ժամանակ խոշոր ապստամբություններ բռնկվեցին Լուրիսթանում: 1927 թ. վերջին ապստամբեցին Ֆարսի նահանգի Դաշթ և Թանգեստան շրջանների ցեղերը: 1928 թ. աշնանը զենքի դիմեցին Սիսթան նահանգի բելուջ (բալուջ) ցեղերը: Առանձնակի հուժկու թափ ընդունեց 1926 թ. բռնկված քրդական ապստամբությունը, որն ընդգրկեց լայնածավալ մի տարածք՝ Իրանական Քրդստանից ու Լորեսթանից մինչև Ատրպատականի ներքին շրջանները: Պայքարն ընթանում էր «Անկախ Քրդաստանի» նշանաբանի ներքո: Կառավարությանը հաջողվեց սկզբում պառակտում առաջ բերել ապստամբության ղեկավարների շրջանում, իսկ ապա ապստամբների դեմ հանել քրդական մի շարք ցեղերի առաջնորդների և արդեն 1927 թ. կատարելապես վերջ տալ շարժմանը:

1929 թ. զենքի դիմեցին բահարլու, դաշդայի և բախթիարական ցեղերը: Այդ շարժումը աջակցություն գտավ Էն-Նաջաֆի և Քարբալայի բարձրագույն շիիթական հոգևորականության կողմից, որը հրապարակեց հատուկ կոչ, որտեղ հավանություն էր տալիս «հերետիկոս կառավարության» դեմ ցեղերի մղած պայքարին: 1929-1933 թթ. ընթացքում ցեղերի զինված ելույթներ տեղի ունեցան նաև այլ վայրերում: Միայն 1933 թ. ցեղերի գոտում «խաղաղեցումը»և նրանց զանգվածային զինաթափումը հասավ իր ավարտին: Թեև դրանից հետո ևս, կառավարությունը աչալուրջ կերպով հետևում էր, որպեսզի հենց սաղմում խեղդի ամեն մի նոր ելույթ:

1926-1928 թթ. Իրանի համարյա բոլոր նահանգներում տեղի էին ունենում նաև նստակյաց գյուղացիության հուզումներ: Դժգոհությունն ընգրկել էր նաև բանակի շարքերը: Զինվորական հուզումների պատճառները բազմաթիվ էին. սպաների կամայականությունները զինվորների ու ցածր սպայական կազմի նկատմամբ, աշխատավարձի չվճարումները, վատ սնունդը և այլն: Հյուսիսային Իրանի քաղաքներում՝ Ռեշտում, Աստրաբադում և այլուր, հաճախ կարելի էր հանդիպել զինվորների, որոնք թափառում էին քաղաքում, շուկայում և զորանոցների մոտակայքում և վաճառում էին զինվորական սպիտակեղեն, կոշիկ և այլն:

Աճում էր դասալիքների թիվը: 1926 թ. ամռանը այդ դասալիքները Գիլյանի անտառներում գյուղացիների և արհեստավորների աջակցությամբ ստեղծեցին պարտիզանական ջոկատներ, որոնք պայքար էին մղում իշխանությունների և տեղական կալվածատերերի դեմ: 1926 թ. աշնանը կառավարությունը ապստամբների դեմ ուղարկեց խոշոր պատժիչ ուժեր, որոնք դաժանորեն հաշվեհարդար տեսան նրանց հետ: Ընդ որում՝ նման ապստամբությունները ճնշելիս իշխանությունները լայնորեն օգտագործում էին իրենց կողմնակից ռազմաշունչ ցեղերին, որոնց կողմից կատարված հաշվեհարդարները աչքի էին ընկնում իրենց անագորույն դաժանությամբ:

2. ՌԵԶԱ ՇԱՀԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Երկրի կենտրոնացման քաղաքականության իրականացման, ծայրամասային ավատական խաներին կենտրոնական կառավարությանը ենթարկելու շահերը, բնականաբար, պահանջում էին մեծացնել բանակի, ոստիկանության ու ժանդարմերիայի թվաքանակը, ավելացնել արտասահմանում ռազմական տեխնիկայի գնումները, ստեղծել պետական կառավարման կենտրոնական համակարգ, կառուցել ծայրամասերը կենտրոնի հետ կապող ճանապարհներ, փոփոխության ենթարկել երկրի վարչական բաժանումը և այլն: Ռեզա շահի կառավարությունը քայլ առ քայլ իրագործում էր իր առջև կանգնած այդ խնդիրները: Այսպես՝ 1927 թ. ընդունվեց օրենք համընդհանուր զինապարտության մասին, որի խնդիրն էր ավելացնել բանակի թվաքանակը և բարձրացնել նրա մարտունակությունը: Այդ օրենքի շնորհիվ արդեն 1928 թ. գարնանը բանակը հասցվեց 60 հազար մարդու: Զինակոչից ազատվում էր միայն երկրի ոչ մահմեդական բնակչությունը, այդ թվում նաև հայերը: Պաշտոնական գաղափարախոսությունը քարոզում էր բանակի, նրա առաջնորդի ու հովանավորի՝ Ռեզա շահի կուլտը: Մտցվեց անձնագրային համակարգ, որն ուժեղացնում էր բնակչության նկատմամբ ռազմաոստիկանական հսկողության հնարավորությունները: Բոլոր իրանահպատակները պարտավորվում էին ստանալ անձնագիր, ունենալ ազգանուն, արձանագրել ծնունդն ու մահը, ամուսնությունն ու ապահարզանը:

Պետական ապարատի վերափոխման բարեփոխումների մեջ կարևոր տեղ էր գրավում արդարադատության հնացած ու անկատար համակարգի վերակառուցումը: Դատական ռեֆորմը նպատակ ուներ շարիաթական օրենսգրքերը փոխարինել եվրոպական իրավունքի նորմերով: Ըստ այնմ՝ ընդունվեցին եվրոպական տիպի քրեական (1927 թ.) և քաղաքացիական (1929 թ.) օրենսգրքեր՝ որպես նմուշ վերցնելով ֆրանսիական և բելգիական օրենսգրքերը, որոնք հարմարեցվեցին տեղական պայմաններին: «Աստծո առջև հավասարության» շարիաթական սկզբունքին փոխարինեց «հավասարություն օրենքի առջև» սկզբունքը: Թեև արդարադատության համակարգի վերակառուցումը թերի էր և ոչ հետևողական, սակայն այն ուժեղացնում էր պետության դեկավար դերը երկրի տնտեսական և հասարակական կյանքում և նպաստում Իրանի պետական միասնության ու քաղաքական ինքնուրույնության ամրապնդմանը:

Նոր օրենսդրության արմատավորումը ուժգին կերպով սահմանափակում էր հոգևորականության դատական իրավասությունները, որը նրանց զրկում էր ոչ միայն եկամուտների նշանակալից աղբյուրներից, այլև որոշակիորեն խարխլում էր նրանց հասարակական դիրքը: Թեև շարիաթական դատարանները պահպանվեցին, սակայն նրանց գործունեությունը սահմանափակվում էր լոկ այնպիսի հարցերով, որոնք կապված էին ընտանեկան հարաբերությունների և կրոնական նորմերի պահպանման հետ: Ընդ որում՝ աշխարհիկ դատարանները ստացան շարիաթական դատարանների որոշումները բողոքարկելու իրավունք: Ի դեպ, 1928 թ. հրատարակված դատակազմության օրենքի համաձայն՝ իրանական գործող օրենսդրության մեջ իրենց արտահայտությունը գտան հայերի և առհասարակ ազգային մյուս փոքրամասնությունների իրավունքները:

1928 թ. ընդունվեց հողային տիրույթների գրանցման ու հաշվառման մասին օրենքը, որն ամրապնդում էր հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքը:

Ռեզա շահի կառավարությունը ձեռնամուխ եղավ նաև երկրի ֆինանսական համակարգի վերակառուցմանը: 1928 թ. կազմակերպվեց Իրանի ազգային բանկը, որը 1932 թվականից սկսեց իրագործել կենտրոնական պետական էմիսիոն բանկի գործառույթներ: Շահնշահական բանկը զրկվեց թղթադրամ կտրելու իրավունքից: 1931 թ. բացվեց հատուկ գյուղատնտեսական բանկ:

Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց հաղորդակցության ճանապարհների ցանցի ընդլայնման վրա: Բուռն թափով սկսեցին կառուցվել ավտոմոբիլային ճանապարհներ: 1926 թ. փետրվարի 9-ին մեջլիսը

որոշում ընդունեց Տրանսիրանական երկաթուղու շինարարության մասին, որն իրենով խորհրդանշելու էր Իրանի կատարյալ անկախության ձեռքբերումը, քանի որ նախկինում ցարական Ռուսաստանը արգելք էր հանդիսանում երկրում երկաթուղային գծերի շինարարությանը: Տրանսիրանական երկաթուղին, որի շինարարությունը սկսվեց 1927 թ., Պարսից ծոցի Բենդեր-Շահփուր նավահանգիստը կապելու էր Կասպից ծովի Բենդեր-Շահ նավահանգստի հետ: Երկաթուղագծի շինարարությունը իրագործվում էր առանց օտարերկրյա ֆինանսական աջակցության, բացառապես ի հաշիվ շաքարի և թեյի պետական մենաշնորհից ստացվող եկամուտների: Սակայն երկաթուղու շինարարության ժամանակ Իրանը լայնորեն օգտվեց օտարերկրյա տեխնիկական օգնությունից: 1394 կմ երկարություն ունեցող Տրանսիրանական երկաթուղին շահագործման հանձնվեց 1938 թ.: Կառուցվեցին նաև մի շարք այլ երկաթուղագծեր: Մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը Իրանում երկաթուղիների ընդհանուր երկարությունը կազմեց 2132 կմ: Դրանք դարձան երկրի տնտեսական զարգացման կարևոր գործոններ:

1928 թ. հոկտեմբերին բացվեց Մոհամմերա-Խորրեմաբադ-Թեհրան ստրատեգիական և տնտեսական առաջնակարգ նշանակություն ունեցող ավտոմոբիլային ճանապարհը, որը երկրի հարավային և արևմտյան շրջանները կապում էր կենտրոնի հետ: Այդ ճանապարհի կառուցումը ուժեղացրեց կենտրոնական կառավարության դիրքերը անհնազանդ քոչվորական բնակչություն ունեցող շրջաններում: 1941 թ. սկզբին Իրանում ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմեց 25,1 հազ. կմ: Սակայն, դրանով հանդերձ, երկրում դեռ խիստ զգացվում էր ճանապարհների պակասը, որը և վերջին հաշվով հանդիսացավ երկրի տնտեսական հետամնացության պատճառներից մեկը:

Կառավարությունը գործուն միջոցներ ձեռնարկեց նաև գյուղատնտեսության զարգացման համար: Տասը տարով վերացվեց մաքսատուրքերի գանձումը գյուղատնտեսական մեքենաների ներմուծման նկատմամբ: 1926 թ. հունվարի 10-ին ընդունված օրենքով նոր յուրացվող հողերը 5 տարի ժամկետով ազատվում էին հարկումից: Նման միջոցառումները նպաստեցին գյուղատնտեսության և առաջին հերթին նրա ապրանքային ճյուղերի զարգացմանը, որը գերազանցապես կողմնորոշվում էր դեպի արտաքին շուկան: Պետությունը սկսեց ակտիվորեն միջամտել նաև երկրում ժամանակակից արդյունաբերություն ստեղծելու ծրագրերը արագացնելու գործին: Երկրում կառուցվեցին մի շարք (առավելապես թեթև արդյունաբերության պրոֆիլի) ձեռնարկություններ: Ընդ որում՝

տնտեսական շինարարության համար պետությունը միջոցներ էր հայթայթում գլխավորապես ներքին ռեսուրսների հաշվին, առավելապես հարկերի ավելացման ճանապարհով:

Իրանական դրամատերերը, ովքեր նախկինում խուսափում էին ֆաբրիկագործարանային շինարարության մեջ դրամական ներդրումներ կատարելուց, այժմ, խրախուսվելով պետության կողմից, շահագրգռվածություն էին դրսևորում տնտեսության մյուս ճյուղերից իրենց կապիտալը արդյունաբերական ճյուղեր տեղափոխելու ուղղությամբ: Փայատիրական սկզբունքներով սկսեցին կազմակերպվել արդյունաբերական ընկերություններ («շիրքեթներ»): Իր հերթին պետությունը խոշոր միջոցներ էր դնում նոր ձեռնարկությունների կառուցման մեջ, ինչպես հարևան Թուրքիայում՝ իրականացնելով այսպես կոչված «պետական կապիտալիզմի» քաղաքականություն:

Կենտրոնացման քաղաքականության կարևոր բաղկացուցիչ մաս էր հանդիսանում վարչական բարեփոխումը: Տեղերում կառավարման ապարատը ավելի ու ավելի էր ընկնում բանակի հսկողության տակ: Նահանգներում տեղակայված զորքերի հրամանատարները միջամտում էին պետական կառավարման բոլոր գործերին, որի հետևանքով մշտական վեճեր էին ծագում քաղաքացիական և ռազմական իշխանությունների միջև: Նահանգապետների պաշտոնները ավելի հաճախ էին զբաղեցնում Ռեզա շահի զինակից զինվորականները: Բարձրագույն վարչական պաշտոնների նշանակման գործը անձամբ վերահսկվում էր Ռեզա շահի կողմից:

Կառավարությունը հետևողականորեն փորձում էր կարգավորել պետական հիմնարկությունների աշխատանքը, առավել ևս, որ ստեղծվել էր հսկայական բյուրոկրատական ապարատ: Կաշառակերության ու գանձագողության դեմ ընդունվեցին դաժան որոշումներ: Արդարադատության նախարարը հրապարակեց հրամանագիր, որը բնակչությանը կոչ էր անում խոշոր վարձատրության դիմաց կառավարությանը տեղեկացնել ծառայողների կաշառակերության մասին:

Սակայն այդ բոլոր միջոցառումներն անզոր էին վերջ տալու կոռուպցիային և ծախվածությանը, որ կայուն կերպով արմատավորվել էին վարչական ապարատում: Մանր աստիճանավորները իրենց չնչին աշխատավարձով ի վիճակի չէին կերակրել իրենց ընտանիքները, որն անսասան էր դարձնում կաշառակերության հիմքերը: Չարաշահումները հատկապես ծաղկում էին ոստիկանության մեջ ու դատական համակարգում:

Պետական և տնտեսական վերակառուցման գործընթացը կենսական անհրաժեշտություն էր դարձնում որակյալ կադրերի պատրաստու-

մը: Պետական ծառայողների մի փոքրաթիվ մաս միայն ուներ բարձրագույն կրթություն: Այդ պայմաններում կառավարությունը ստիպված էր դիմել օտարերկրյա մասնագետների ծառայություններին, ինչը տեղիք էր տալիս խոշոր ծախսերի և, ամենակարևորը, իրանցիների կողմից ընկալվում էր որպես ազգային զգացումները վիրավորող երևույթ:

1927 թ. սկսած՝ Ռեզա շահի կառավարությունը սկսեց բարեփոխումներ իրականացնել նաև լուսավորության համակարգի բնագավառում: Մեջլիսն օրենք ընդունեց համընդհանուր տարրական կրթության մասին: Աստիճանաբար երկրում ձևավորվում էր կրթական միասնական համակարգ տարրական և միջնակարգ ուսումնական հաստատությունների ծրագրերում միատեսակություն մտցնելու ճանապարհով: Դպրոցական ցանցը արագորեն ընդլայնվում էր, սակայն ուսուցման որակը դեռևս ցածր էր: 1927 թ. սկսած՝ շարժում սկսվեց օտարերկրյա հոգևոր միսիաներին պատկանող կամ միսիոներական դպրոցների գործունեությունը սահմանափակելու, նրանց նկատմամբ վերահսկողություն սահմանելու, ազգային ու կրոնական փոքրամասնություններին պատկանող դպրոցները փակելու ուղղությամբ: Թերթերը միսիոներական դպրոցներին մեղադրեցին իսլամի հիմքերը քայքայելու և աշակերտների մոտ «այն ամենի նկատմամբ, ինչ իրանական է, արհամարանք սերմանելու» փորձերի մեջ:

Աստիճանաբար հերթը հասավ նաև հայկական դպրոցներին: 1936 թ. Ռեզա շահի հանձնարարությամբ կրթության նախարարությունը մշակեց կրթական մի ծրագիր և հրահանգեց հայ դպրոցներին՝ առաջնորդվել այդ ծրագրով: Դա նշանակում էր, որ հայկական դպրոցներում դասավանդումը պետք է կատարվեր պարսկերեն լեզվով, հետևաբար վերջ էր տրվում հայկական դպրոցների գոյությանը: Կրթության նախարարությունը գրավեց հայկական դպրոցների մի մասի կալվածքներն ու գույքերը:

Հայկական դպրոցների փակմանը հաջորդեց մշակութային աշխատանքների արգելումը: Չէր թույլատրվում հայերեն լեզվով կարդալ դասախոսություններ, կազմակերպել ներկայացումներ, տպագրել գրքեր և այլն: Մոլեռանդները փողոցներում, ավտոբուսների մեջ և շուկայում հայերեն խոսողներից պահանջում էին «հասկանալի» լեզվով խոսել:

Դպրոցի բարեփոխման քայլերը նս լուրջ վնաս էին հասցնում հոգևորականության հասարակական ու նյութական դիրքերին: Մեդրեսեների (կրոնական ուսումնարաններ) և մաքթաբների (տարրական հոգևոր դպրոցներ) գործունեությունը դրվեց լուսավորության նախարարության հսկողության տակ: Մասնավորապես դպրոցի աշխարհիկացումը առաջ բերեց հոգևորականների համառ դիմադրությունը, որը

կառավարությանը մեղադրում էր իսլամի ոտնահարման և եվրոպացիների առջև ստորաքարշության մեջ: Այդ կարծիքը բաժանում էին նաև բարձրագույն հոգևոր հեղինակությունները՝ Ղումի, Մեշհեդի, Քարբալայի ու Նաջաֆի մոջթեհիդներն ու ուլեմները:

Ռեզա շահի և նրա կառավարության կողմից կարևոր ուշադրություն էր դարձվում նաև երկրի ու նրա բնակչության արտաքին տեսքը փոխելու, այն «արևմտականացնելու» և արդիականացնելու հարցերի վրա: 1925 թ. Իրանն անցավ նոր օրացույցի (արեգակնային) կիրառմանը, ընդ որում՝ ամիսների արաբական անվանումները փոխարինվեցին հին պարսկական անվանումներով: Ֆեոդալական բարձրագոչ, ճոռոմ ու փքուն տիտղոսները վերացվեցին՝ և ընդունվեցին սովորական ազգանուններ: Այդ ուղղությամբ առաջին օրինակը տվեց ինքը՝ Ռեզա շահը, որը վերցրեց Փեհլևի (Փահլավի, պահլավ) ազգանունը՝ որպես հին Իրանի վեհության ու վսեմության խորհրդանիշ: Նրա օրինակին հետևեցին ականավոր պետական գործիչները: Նոր անունների ընտրության գործը դյուրին դարձնելու համար հրատարակվեց հատուկ անձնանունների բառարան: Վերացվեցին նաև ցեղերի առաջնորդների ավատական տիտղոսները՝ «իլխան», «սալդար», «բեկ» և այլն: Պաշտոնական գրագրություններում արգելվեցին մեծարման հնաձև վերամբարձ արտահայտությունները:

Ռեզա շահի իրականացրած բարեփոխումների շրջանում հասարակությունը երկփեղկվել էր երկու մասի՝ «արևմտականների» և «ավանդապահների»: Ձախ ազատական ազգայնականների խմբավորումը կոչ էր անում ամեն ինչ, սկսած տնային կահ-կարասիից, զգեստներից, հասարակության մեջ վարքագծի նորմերից և վերջացրած ազգային տնտեսության և պետական կառավարման մեթոդների վերակառուցումից, վերափոխել նոր ձևով՝ ժամանակի պահանջներին համապատասխան: Մամուլում և դպրոցներում քարոզչություն էր մղվում հօգուտ եվրոպական կենսաձևի, հասարակության մեջ և կենցաղում նոր վարվելակերպի արմատավորման: Իրանցիներին կոչ էին անում վերջ տալ անտարբերությանը հասարակական գործերի նկատմամբ և գնահատել ժամանակը: Սակայն եվրոպական ապրելակերպը արմատավորվում էր չափազանց դանդաղ և առավելապես քաղաքային բնակչության կրթված խավերի շրջանում: «Հանուն ազգային միասնության» կարգախոսի ներքո կառավարությունը 1928 թ. կամպանիա ծավալեց զգեստների եվրոպականացում մտցնելու ուղղությամբ: Տղամարդկանց պարսկական ավանդական գլխարկների փոխարեն հրամայվեց կրել եվրոպական գլխարկներ: Նրանք, ովքեր դիմադրում էին այս նորամուծություններին, ենթարկվում

էին իշխանությունների հալածանքներին: Կանանց արգելվեց չադրա կրել: Շահի հրամանով ոստիկանությունը սկսեց հետապնդել այն կանանց, ովքեր հասարակական վայրերում հայտնվում էին չադրայով: Շահը հայտարարեց, որ Իրանի բոլոր բնակիչները «պետք է կրեն միանման զգեստներ և խոսեն մեկ լեզվով», ինչը հնարավորություն կտա հասնել «մտքերի միասնության»:

Պաշտոնական քարոզչությունը սկսեց զարգացնել «միասնական իրանական ազգի» կոնցեպցիան: Ծայրամասային շրջանների ազգային փոքրամասնությունների շրջանում պարսկերենի արմատավորման գործը դրվեց պետական մակարդակի վրա: Շարժում ծավալվեց Ֆարսի լեզուն արաբական, թյուրքական և եվրոպական փոխառություններից մաքրելու համար: 1928 թվականից մամուլում սկսեցին հայտնվել պարսկական այբուբենի լատինականացման նախագծեր: Ենթադրվում էր, որ դա ոչ միայն կհեշտացնի անգրագիտության վերացումը, այլև կարագացնի ոչ պարսիկ բնակչության համաձուլումը: Սակայն այդ նախագծերը հանդիպեցին լուրջ դիմադրության և չիրականացվեցին: Այբուբենի լատինականացման հակառակորդները գտնում էին, որ դա կթուլացնի Իրանի մշակութային ազդեցությունը Արևելքի հարևան երկրների վրա:

«Ազգային միասնության» ամրապնդման շարժումը ուղեկցվում էր պարսիկների ռասայական և մշակութային գերազանցության վերաբերյալ քարոզչությամբ: Դա դրսևորվում էր նաև Իրանի անցյալի և հատկապես Աքեմենյան միապետության ու Սասանյան պետության ֆետիշացման մեջ: Նշվում էր, որ այդ պետությունների «հզորության ու վեհության» վերածնունդը հանդիսանում է Փեհլևի դինաստիայի պատմական առաքելությունը:

Կառավարությունը փորձեց համաշխարհային ստանդարտներին համապատասխան արմատավորել չափերի ու կշիռների միատեսակություն, սակայն վաճառականների դիմադրության պատճառով այդ միջոցառումը ձախողվեց:

Փոխվում էր նաև պետության մայրաքաղաք Թեհրանը: Այն վեր էր ածվում Իրանի գործարար կյանքի կենտրոնի:

Ռեզա շահի վարչակարգը փորձում էր հավաստիացնել երկրի հասարակությանը, որ Փեհլևի միապետությունը ոչ միայն ընդհանուր ոչինչ չունի ղաջարների բռնապետության հետ, այլ, ընդհակառակը, կոչված է կյանքի կոչել նրանց կողմից ոտնահարված սահմանադրությունը և նրա հռչակած ազատությունները, հարգանքով վերաբերվել խորհրդարանի նկատմամբ և այլն:

Իրականում կատարվում էր միանգամայն հակառակը: Մեջլիսը աստիճանաբար վերածվեց միապետի կամքին հլու-հնազանդ մի մարմնի, հենց իրանցիների արտահայտությամբ՝ շահը մեջլիսը վերածեց զուտ «արարողակարգային» («քաշրիֆաթի») մի հիմնարկության: Նրա պատգամավորները զրկված էին հանդես գալու որևէ նախաձեռնությամբ: Շահը այլևս կարիք չէր զգում ո՛չ կուսակցությունների և ո՛չ էլ մեջլիսի աջակցությանը, իսկ կառավարության պատասխանատվությունը խորհրդարանի առջև մեծ մասամբ վերածվեց «դատարկ ձևականության»: Ավելի հաճախակի դարձան այն դեպքերը, երբ շահը իր որոշումները կենսագործում էր՝ չսպասելով մեջլիսի հաստատմանը: Դիկտատուրայի վարչակարգը ամեն քայլափոխում ոտնահարում էր քաղաքացիների իրավունքները:

Ի հակակշիռ կառավարության նկատմամբ ընդդիմադիր կեցվածք որդեգրած «Իրան-ե ջավան» («Երիտասարդ Իրան») կուսակցության, Ռեզա շահի շրջապատի աչքի ընկնող քաղաքական գործիչները (Թեյմուրթաշ, Դավեր, Փիրուզ Միրզա և ուրիշներ) 1927 թ. օգոստոսին ստեղծեցին «Իրան-ե նոու» («Նոր Իրան») կուսակցությունը, որը Թուրքիայում Մուստաֆա Քեմալի ժողովրդահանրապետական կուսակցության օրինակով պետք է խաղար մեծամասնության կառավարական կուսակցության դեր: Դրանով Ռեզա շահը ձգտում էր ամրապնդել իր դիկտատուրան ոչ թե խորհրդարանը փակելու, այլ այն ժամանակակից քաղաքական մեթոդներով նվաճելու ճանապարհով: «Իրան-ե նոու» կուսակցությունը իրեն հայտարարեց շահի հավատարիմ հենարան և նրա առաջադիմական վերափոխությունները «կյանքի կոչելու մի լծակ»: Իր խոսքը հասցեագրելով հոգևորականությանը և առհասարակ «լուսավորյալ դասերին»՝ նա կոչ էր անում միավորվել իր շարքերում վերափոխություններին աջակցելու նպատակով, որոնք «ընդունակ են Իրանը մերձեցնել ներկա դարաշրջանի իրողություններին»: Կուսակցությունը շեշտում էր, որ ինքը հարգանքով է վերաբերվում իսլամի սկզբունքների նկատմամբ և հանձինս նրա տեսնում է «ազգի միասնությունն ապահովելու արդյունավետ միջոցներից մեկը»: Միաժամանակ «Իրան-ե նոուն» քարոզում էր կրոնական մոլեռանդության դեմ պայքարի անհրաժեշտությունը:

1927 թ. սեպտեմբերին «Իրան-ե ջավանը» հայտարարեց, որ ինքը հրաժարվում է իր ծրագրի քաղաքական մասից և միաձուլվում է «Իրան-ե նոուի» հետ: Այսպիսով՝ շահը հասել էր իր նպատակին, և 1928 թ. վերջին «Իրան-ե նոուն», այլևս զրկվելով նրա աջակցությունից, քայքայվեց և ցրվեց:

Թեև Ռեզա շահը վարպետորեն օգտագործում էր քաղաքական խա-

ղերի մարտավարությունը և բացառիկ տաղանդ ուներ ամեն ինչ ծառայեցնելու իր շահերի օգտին, սակայն որպես զինվորական ու դիկտատոր՝ նա վարչակարգի ամենահուսալի հենարան էր համարում բանակը: Ռեզա շահի կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների քաղաքականությունը, ինչպես նաև այն, որ մահմեդական հոգևորականության դիրքերը խարխլելու համար շահի կողմից առաջին պլան էին մղվում միևչիսլամական ավանդույթները ու մշակույթը, հաճախ լարված հարաբերությունների տեղիք էին տալիս կառավարության ու շիիթական հոգևորականության միջև: Հոգևորականությանը դիտելով որպես խոչընդոտ բարեփոխումների իրականացման ճանապարհին՝ Ռեզա շահը, սակայն, հստակ գիտակցում էր նրա ուժը և ներգործության վիթխարի թափը հավատացյալ զանգվածների վրա: Ուստի նա վերին աստիճանի զգույշ էր հոգևորականների հետ ունեցած հարաբերություններում և չէր խորշում իրեն ցուցաղրել որպես հավատացյալ մահմեդական: Այսպես, երբ նա Իրանի հարավում անողոք դաժանությամբ ճնշեց շեյխ Խազալի ապստամբությունը, ուխտագնացության մեկնեց Քարբալա և Նաջաֆ, որտեղ շիիթական բարձր հեղինակությունները նրան նվիրեցին Ալիի պատկերը: Այնուհետև, 1927 թ. դեկտեմբերին նա Ղում ուղարկեց մի պատվիրակություն, որը վստահեցրեց ուլեմներին, որ կառավարությունը իր պարտքն է համարում «պահպանել իսլամի վեհությունը և հոգևորականության պատվավոր դիրքը»:

Իսլամական կրոնին իր հավատարմությունն ու նվիրվածությունը շահը առավել ցայտուն կերպով դրսևորեց 1937 թ. մարտի 1-ին մեջլիսում իր ունեցած ելույթում, որտեղ նա զգուշացրեց պատգամավորներին, որ նրանք չսխալվեն և չհամարեն, որ բարեփոխումների իրականացումը և ներկա աշխարհի քաղաքակրթության ընդունումը իբր նշանակում է կրոնական օրենքի և հավատքի սկզբունքների լքում: Շահը փորձում էր ներշնչել խորհրդարանի պատգամավորներին, որ որևէ կոնֆլիկտ գոյություն չունի բարեփոխումների ու արդիականացման՝ մի կողմից, և կրոնի ու հավատքի միջև՝ մյուս կողմից: «Եթե իսլամի մեծ օրենսդիրը,-վերամբարձ ոճով հայտարարում է նա,- այսօր կենդանի լիներ և տեսներ աշխարհի առաջադիմությունը, նա կհաստատեր իր ճշմարիտ ուսմունքի և այսօրվա քաղաքակրթության հնստիտուտների հիմքի կատարյալ ներդաշնակությունը: Դժբախտաբար, այդ ազնիվ և լուսավոր գաղափարները ժամանակի ընթացքում որոշ մարդկանց կողմից սխալ են ընկալվել ու օգտագործվել, որի հետևանքով մեր երկիրն անկում է ապրել: Տասներեք դար շարունակ, որից յուրաքանչյուրում երկիրը պետք է մի մեծ թռիչք

կատարեր դեպի առաջ, նա մնացել է անշարժ և հետամնաց»:

Միաժամանակ Ռեզա շահը փորձում էր հանդես գալ որպես մի տեսակ կրոնական բարեփոխիչ, կրոնը ժամանակի հրամայականին համապատասխանեցնելու ջատագով: Ըստ այմ՝ նա սկսեց պայքարել կրոնական ծիսակատարությունների այնպիսի դրսևորումների դեմ, ինչպես մոհարամ սգո ամսին կազմակերպվող ցույցերն ու կրոնական բազմահազարանոց թափորները էին, սահմանափակեց դերվիշների և բախտագուշակների գործունեությունը, արգելեց ուղտերի և ոչխարների զոհաբերումը և այլն:

Հայազգի ամերիկացի հեղինակ Ռիչարդ Դյոքմեջյանը գրում է. «Ռեզա խանը ոչ միայն զավթեց իրանական գահը, այլև ճնշեց իսլամական կրոնական հիմնարկները: Նա փորձում էր ներսեմացնել իսլամը որպես գաղափարախոսություն՝ առաջ քաշելով իրանական ազգայնականությունը՝ հիմնված նախաիսլամական զրադաշտական քաղաքակրթության փառքի վրա: Դա մի ապակողմնորոշող միջոցառում էր ավանդապաշտ մուսուլմանների համար և անհանդուրժելի քայլ՝ իսլամական հեռանկարների առումով, որը տագնապի մատնեց շիա հոգևորականությանը»:

Ռեզա շահի կառավարությունը ձեռնարկեց նաև մի շարք միջոցառումներ, որոնք կոչված էին ապահովել երկրի տնտեսական ներուժի աճը, մասնավոր սեփականության ինստիտուտի ամրապնդումը և մասամբ երկրի տնտեսության վերակառուցումը կապիտալիստական հիմքի վրա: Այդ միջոցառումների իրականացումը տանում էր դեպի Իրանի անկախության ամրապնդումը:

20-ական թթ. Իրանում տնտեսական նախագծերի իրականացման համար միջոցներ հայթայթելու հարցը դարձել էր երկրի ամենահրատապ խնդիրներից մեկը: Նրա շուրջը ծավալվել էր սուր պայքար: Հասարակության ազգայնականորեն տրամադրված մասը պահանջում էր տնտեսական շինարարությունն իրականացնել առանց արտաքին փոխառություններ վերցնելու, ներքին միջոցների հաշվին և առհասարակ վերացնել օտարերկրյա մոնոպոլիստների կողմից երկրի շահագործումը, սահմանափակել օտարերկրյա ապրանքների ներմուծումը, որը բացասական ներգործություն էր ունենում ներքին արտադրության զարգացման վրա և այլն: Մինչդեռ արտաքին շուկայի հետ կապված կալվածատերերն ու կոմպրադորները պնդում էին, որ պետք է ամրապնդել համագործակցությունը օտարերկրյա մոնոպոլիաների հետ և ըստ այմ պահանջում էին տնտեսական շինարարությունն իրականացնել արևմուտքի պետությունների օգնությամբ: Ընդհանուր առմամբ, այս տեսակետը բա-

ժանում էր նաև իրանական կառավարությունը: Սակայն, հաշվի առնելով, որ երկրում դժգոհություն գոյություն ուներ հին գաղութային պետությունների քաղաքականության նկատմամբ, և բացի այդ, նշված պետությունները փոխառություններ էին տրամադրում չափազանց ծանր պայմաններով, իրանական կառավարությունը ծայրահեղ զգուշորեն էր վերաբերվում Արևմտյան Եվրոպայի տերությունների կողմից օգնության առաջարկություններին: Այդ պատճառով Թեհրանը մեծ հույսեր էր կապում այսպես կոչված «չեզոք» կամ «երրորդ» երկրների հետ, որոնք Իրանում դեռևս չունեին խոշոր տնտեսական և քաղաքական շահեր և առաջին հերթին՝ ԱՄՆ-ի հետ: Իրանական կառավարությունը հույս ուներ ոչ միայն Միացյալ Նահանգներից ստանալ վարկեր, այլև ամերիկյան կապիտալը ներգրավել երկաթուղային ճանապարհների և ոռոգման ջրանցքների շինարարության, նավթային պաշարների հետախուզման և օգտակար հանածոների շահագործումը կազմակերպելու գործի մեջ:

Միաժամանակ իրանական կառավարությունը կասկածամտությամբ և անվստահությամբ էր վերաբերվում Խորհրդային Միության հետ տնտեսական հարաբերությունների զարգացմանը: Այդ պարագաներում տնտեսական շինարարության իրագործման միակ միջոցը մնում էր ներքին ռեսուրսների օգտագործումը: Պետության ակտիվ միջամտությունը տնտեսական կյանքին վկայում էր, որ Իրանը անցում է կատարել դեպի պետական կապիտալիզմի ուղին՝ ըստ էության, օրինակ վերցնելով հանրապետական Թուրքիայի էտատիզմի քաղաքականությունից: 30-ական թթ. շարունակվում էին իրանական կառավարության կողմից իրականացվող բարեփոխումները: Հիմնվեցին աշխարհիկ դպրոցներ, այդ թվում նաև ոչ մեծ թվով իգական դպրոցներ: 1933թ. հիմնադրվեց Թեհրանի համալսարանը: Մայրաքաղաքում բացվեց նաև մանկավարժական ինստիտուտ: Քերեջ քաղաքում հիմնադրվեց գյուղատնտեսական ինստիտուտ: Բացվեցին երկաթուղային, փոստային, ֆինանսական և դատական ծառայողների դասընթացներ: 1936թ. լուսավորության նախարարությունը սկսեց օգտագործել ուսանողներին չափահաս բնակչության շրջանում անգրագիտության վերացման գործում: 1937 թ. երկրում գործում էին անգրագիտության վերացման 1,5 հազար երեկոյան կուրսեր: Պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ երկրում գրագիտությունը չէր գերազանցում, սակայն, 10-12%-ը:

Առողջապահության զարգացման գործում կարևոր քայլ հանդիսացավ դեռևս 1923 թ. Պաստերյան ինստիտուտի ստեղծումը, որը պայքար ծավալեց վարակիչ հիվանդությունների ու համաճարակների դեմ: Երկ-

րում հայտնվեցին ժամանակակից սարքավորումներով հագեցված հիվանդանոցներ:

30-ական թթ. կառավարությունը քայլեր ձեռնարկեց երկրում զանգվածային սպորտը զարգացնելու ուղղությամբ: Դպրոցներում ֆիզկուլտուրայի պարապմունքները դարձան պարտադիր: Խոշոր քաղաքներում ստեղծվում էին սպորտային ընկերություններ, ակումբներ, կառուցվում էին մարզադաշտեր:

Փոխվում էր նաև խոշոր քաղաքների՝ Թեհրանի, Թավրիզի, Մեշհեդի, Սպահանի և այլն, ճարտարապետական տեսքը: Նեղ փողոցներին և կավաշեն տներին փոխարինելու էին գալիս ասֆալտապատ փողոցներ, ավտոմայրուղիներ, հիմնարկությունների բազմահարկ շենքեր, հարուստների առանձնատներ, հյուրանոցներ, սրճարաններ, կինոթատրոններ և այլն: Արմատավորվում էր փքաշուք ճարտարապետական մի ոճ, որը մինչիսլամական շրջանի կեղծ դասական վիթխարակերտության և ֆաշիստական Գերմանիայի ճարտարապետական մոդեռնիզմի մի խառնուրդ էր: Կարգավորվում էր նաև քաղաքային տնտեսությունը: Փողոցներում հայտնվեց էլեկտրական լուսավորություն, բացվեցին ավտոբուսային չվերթներ:

1935 թ. հիմնվեց լեզվի և գրականության ակադեմիան, որի հիմնական խնդիրներից մեկը պարսկերենը օտար բառերից մաքրելն էր: Նույն թվականին հրապարակվեց դեկրետ պարտադիր կերպով չադրան հանելու մասին: 1934 թ. կանանց թույլ տրվեց սովորելու բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև աշխատելու պետական հիմնարկություններում: Ընդլայնվեցին նաև կանանց իրավունքները ընտանեկան հարաբերությունների բնագավառում: Ավելացվեց կանանց հասանելիք բաժինը գույքի ժառանգման դեպքում, կարգավորվում էին ապահարզանի հետ կապված խնդիրները, ամուսնանալիս նախատեսվում էր աղջկա համաձայնությունը և այլն: Սակայն նախկինի պես կանանց արգելվում էր ամուսնանալ օտարերկրացիների և այլադավանների հետ: Ընդհանրապես նորամուծությունները շատ քիչ շոշափեցին ավանդական ընտանեկան հարաբերությունների հիմքերը: Պահպանվեցին նաև շարիաթի սկզբունքները բազմակնության մասին, ինչպես նաև ժամանակավոր ամուսնությունների («սիղե») կարգը: Նախկինի պես կանայք զուրկ էին ընտրական իրավունքից:

Քրեական օրենսդրության բնագավառում ուժեղացվեցին պատժաչափերը այն գործողությունների համար, որոնք որակվում էին որպես քաղաքական հանցագործություններ: 1933 թ. հունիսին մեջլիսը հաստատեց ոչ

շիաների (սունիների, քրիստոնյաների, զրադաշտականների, հրեաների և այլն) ընտանեկան հարցերի վերաբերյալ օրենսդրական նախագիծը:

1935 թ. իրանահայ քեմական և ազգային մարմինները կազմեցին մի օրենսգիրք, որը ներկայացվեց Իրանի արդարադատության նախարարությանը: Իրանահայերի դատական գործերի քննության ժամանակ այսուհետև դատական մարմինները պետք է ղեկավարվեին այդ օրենսգրքով:

Կառավարությունը շարունակում էր վարել հոգևորականության դատական իշխանությունից զրկելու քաղաքականություն: 1936թ. ընդունվեց օրենք, ըստ որի այն անձինք, ովքեր չունեին հատուկ իրավաբանական կրթություն, զրկվում էին դատ վարելու իրավունքից: Այնուհետև, 1935-1940 թթ. ընթացքում քաղաքացիական օրենսգրքի մեջ մտցված փոփոխությունների համաձայն, ընտանեկան հարաբերություններին՝ ամուսնությանը, ամուսնալուծությանը, գույքի ժառանգմանը վերաբերող հարցերը, որոնք նախկինում լուծվում էին հոգևորականության կողմից շարիաթի հիմքի վրա, այժմ դուրս էին բերվում նրանց իրավասությունից:

Դպրոցների մեծ մասը հանվեց հոգևորականության իրավասությունից և հանձնվեց լուսավորության մինիստրության տնօրինությանը: Վերջինիս հանձնվեց նաև վակուֆների (մզկիթապատկան կալվածքներ) մի մասը: Իսկ 1941 թ. ընդունվեց օրենք, որի համաձայն ֆինանսների նախարարությանը թույլատրվում էր վակուֆային հողերի վաճառքը:

Երկրի արևմտականացման, բարեկորոգումների, նորամուծությունների արմատավորման այդ նոր էտապը առաջ բերեց հոգևորականության կողմից դիմադրության ու հակազդեցության մի նոր ալիք: Վերջինս, որպես կանոն, կրոնական կոչերը զուգորդում էր ազատական ու ազգայնական երանգի ամբոխավարության հետ՝ կառավարությանը մեղադրելով եվրոպացիների առջև ստորաքարշության, երկրի հազարամյա ավանդույթների ոտնահարման, դարերով ժողովրդի մեջ արմատավորված սովորույթների ու ծեսերի նկատմամբ արհամարհանքի, իսլամի օրենքների հետ հաշվի չնստելու մեջ և այլն: 1936 թ. գարնանը Մեշհեդ քաղաքի հոգևորականությունը կազմակերպեց խոշոր ցույց, «հակակրոնական» օրենքներն ու որոշումները վերացնելու նշանաբանի ներքո: Զորքերը դրան պատասխանեցին գնդացրային կրակով:

Առհասարակ, հոգևորականության կողմից դիմադրության փորձերը հանդիպում էին Ռեզա շահի վճռական հակահարվածին: Նրա հրամանով կատարվեց հոգևորականության հաշվառում, շատերը զրկվեցին հոգևոր աստիճանից, որոշ ականավոր հոգևոր դեմքեր, օրինակ՝ կղերական ընդդիմադիր ճակատի ղեկավար Մոդարրեսը և ուրիշներ, ձերբա-

կալվեցին և բանտերում սպանվեցին: Հոգևոր քարոզիչներին արգելվեց շոշափել քաղաքական հարցեր, քննադատել իշխանությունների գործունեությունը և այլն: Միաժամանակ կառավարությունը հովանավորում էր «առաջադիմական» մոլլաներին, ախունդներին ու քարոզիչներին՝ դրանով իսկ փորձելով ընդդիմադիր հոգևորականության շարքերում մտցնել պառակտում: Առհասարակ, Ռեզա շահը հոգևորականության նկատմամբ իրագործվող քաղաքականության բնագավառում, որպես կանոն, օգտագործում էր «մտրակի ու բլիթի» քաղաքականությունը: Նրանց նկատմամբ կիրառվող կոշտ քաղաքականությանը սովորաբար հետևում էր «բլիթը», երբ շահը հայտարարում էր, թե ինքը մեծ հարգանք ունի իսլամի և նրա սպասավորների նկատմամբ և պաշտոնական կոչերում առաջին տեղը հատկացնում էր հավատին («Աստված, շահ, հայրենիք»):

Համաշխարհային պատերազմի նախօրյակին շահի կուլտը հասավ աննախընթաց չափերի: Թերթերը նրան անվանում էին «Մեծ Դարեհի ժառանգորդ», «մեծագույն բարեկորոգիչ ու մտածող», «Իրանի մեծության ու փառքի կերտող»: Իրանական ազգայնականությունը, ի դեմս պանիրանիզմի ուսմունքի, երազում էր նախկին իրանական աշխարհակալ պետությունների փառքի ու հզորության վերականգնման մասին: Ազգայնականության ալիքի հետ էր կապված նաև 1935թ. շահական կառավարության որոշումը երկրի «Պարսկաստան» անվանումը «Իրան» անվամբ փոխարինելու մասին, որը միաժամանակ կոչված էր շեշտելու իրանցիների արիական ծագումը:

Ռեզա շահի վարած ազգայնականության ու մեծապետական իրանական շովինիզմի քաղաքականությունը առավել ցայտուն դրսևորում ունեցավ երկրում բնակվող ոչ իրանական ժողովուրդների ու ցեղերի նկատմամբ: Շահը չէր ճանաչում Իրանում ազգային փոքրամասնությունների գոյության փաստը՝ մահմեդականություն դավանող ժողովուրդներին ու ցեղերին, անկախ նրանց ազգությունից, հայտարարելով իրանցիներ: Կառավարությունն արգելեց դպրոցներում դասավանդումը հայերենով, ասորերենով, թուրքերենով և արաբերենով: Պահպանվեցին միայն փարսերի (զրադաշտականների) դպրոցները, քանի որ իշխանությունները, որոնք բնակչության շրջանում քարոզում էին հնագույն Իրանի մշակույթի առջև խոնարհվելու գաղափարները, հարմար չէին համարում զրադաշտականների իրավունքների սահմանափակումը: Մնացած ազգային փոքրամասնությունների դպրոցները փակվեցին:

3. ՌԵԶԱ ՇԱՀԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

20-ական թթ. ավելի ակտիվ ու ինքնուրույն դարձավ Իրանի արտաքին քաղաքականությունը, որի հիմքում ընկած էր «երրորդ ուժի» դոկտրինը: Դեռևս 1920 թ. Իրանը դարձել էր Ազգերի լիգայի անդամ: Ռեզա շահը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց բազմաթիվ պետությունների հետ և դարձավ Ազգերի լիգայի դրոշի ներքո ստորագրված մի շարք միջազգային պայմանագրերի ու համաձայնագրերի մասնակից:

1928 թ. մայիսի 10-ին Իրանը չեղյալ հայտարարեց կապիտուլյացիոն ռեժիմը: Դա նպաստեց նրա միջազգային դիրքերի ամրապնդմանը և հնարավորություն ընձեռնեց վարելու ինքնուրույն արտաքին քաղաքականություն: Իրանական կառավարությունն առաջարկեց տերություններին վերանայել իրենց պայմանագրային հարաբերությունները Իրանի հետ: 1928 թ. մայիսից սկսած՝ օտարերկրյա պետությունները մեկը մյուսի հետևից սկսեցին նոր պայմանագրեր կնքել Իրանի հետ: Արդեն 1928 թ. երկրորդ կեսին նրա հետ առևտրական պայմանագրեր ու համաձայնագրեր ստորագրեցին Եվրոպայի համարյա բոլոր պետությունները և Ասիայի մի շարք երկրներ:

Ռեզա շահի կառավարությունը վերակառուցեց նաև Իրանի դիվանագիտական ապարատը՝ նրա գործունեությունը դարձնելով ավելի արդյունավետ ու ժամանակակից:

Ձգտելով երկրում թուլացնել Անգլիայի դիրքերը՝ իրանական կառավարությունը ձեռնպահ էր մնում այդ երկրում արդյունաբերական պատվերներ տեղադրելուց և մասնագետներ վարձելուց՝ գերադասելով նման հարցերով դիմել ԱՄՆ-ին, Ֆրանսիային և Գերմանիային: 20-ական թթ. կեսերից հատկապես ակնառու դարձավ Իրանի մերձեցումը Գերմանիայի հետ, որն այդ շրջանում արդեն ամբողջապես վերականգնել էր իր մինչպատերազմական դիրքերը իրանական շուկայում: 1924 թվականից Իրանում գործում էր գերմանական «Յունկերս» ընկերությունը, որին տրամադրվեց Իրանի ներքին և արտաքին օդային հաղորդակցություն կազմակերպելու կոնցեսիա: Իրանական բանակում ծառայության մեջ էին գտնվում գերմանական օդաչու-հրահանգիչները: Գերմանական նավային ընկերությունը, 1924 թ. սկսած իրականացնում էր Իրանի ծովային փոխադրումների նշանակալից մասը: Գերմանացի մասնագետ-

ները ներգրավվում էին իրանական արդյունաբերության ամենատարբեր բնագավառները:

Հարկ է սակայն նշել, որ սովետական պատմագրության մեջ խիստ չափազանցված է Ռեզա շահի «գերմանամետ» քաղաքականությունը: Բազմաթիվ աշխատություններում զարգացվել է այն տեսակետը, որ «հիտլերականները Իրանը վեր էին ածել հակասովետական ռազմական հենակետի» և այլն: Սակայն իրականում Ա. Հիտլերի ժամանակների Գերմանիան Իրանում ոչ մի ռազմական հենակետ կամ ռազմական օբյեկտ չուներ: Զարգացվում էր տեսակետ նաև այն մասին, որ ամենաբազմապիսի «մասնագետների» անվան տակ Իրանում վխտում էին մի քանի հազար գերմանական լրտեսներ ու հետախույզներ: Դա ևս կատարյալ չափազանցություն է:

Միաժամանակ Իրանը ձգտում էր կայունացնել իր միջազգային դիրքերը սահմանակից պետությունների՝ Թուրքիայի, Իրաքի և Աֆղանստանի հետ: Առավել բարենպաստ հունով էին զարգանում իրանա-թուրքական հարաբերությունները: 1926 թ. ապրիլի 22-ին այդ երկու երկրների միջև կնքվեց «Բարեկամության և անվտանգության վերաբերյալ» պայմանագիր, որը հետագայում համալրվեց մի շարք մաքսային, տրանսպորտային և փոստային համաձայնագրերով: 1930 թ. կողմերը կարգավորեցին նաև վիճելի սահմանային հարցերը, համաձայնության եկան անհնազանդ քրդական ցեղերի դեմ համատեղ գործողություններ իրականացնելու հարցում և այլն:

1929-1933 թթ. իրանական կառավարությունը մի շարք քայլեր ձեռնարկեց երկրի ֆինանսատնտեսական վիճակը կայունացնելու ուղղությամբ: Ազգային տարադրամի ամրապնդման նպատակով 1930 թ. փետրվարի 25-ին մեջլիսը օրենք հաստատեց օտարերկրյա տարադրամի բոլոր գործառնությունների նկատմամբ պետական հսկողություն սահմանելու վերաբերյալ: Բացի այդ, նույն թվականի մարտի 1-ին մեջլիսն օրենք ընդունեց ոսկյա դրամական համակարգի անցնելու վերաբերյալ: Նախկին արծաթյա ղրանի փոխարեն դրամական միավոր դարձավ ոսկյա ռիալը: 1930 թ. մայիսի 14-ին վերացվեց նաև անգլիական շահնշահական բանկի կողմից թղթադրամ կտրելու մենաշնորհը, և այդ իրավունքը փոխանցվեց 1928 թ. ստեղծված Իրանի ազգային բանկին, որը և ստանձնեց Իրանի պետական բանկի իրավասությունները:

Երկրի համար կայուն եկամուտներ ապահովելու և զարգացող արդյունաբերությունը օտարերկրյա մրցակցությունից պաշտպանելու կարևորագույն միջոցառումներից էին 1931 թ. փետրվարի 25-ին և մար-

տի 11-ին ընդունված օրենքները արտաքին առևտրի պետական մենաշնորհի մտցնելու մասին:

1932-1933 թթ. իրանական նավթի հարցի շուրջ բորբոքվեց սուր վեճ: 1932թ. նոյեմբերի 28-ին իրանական կառավարությունը չեղյալ հայտարարեց Անգլո-պարսկական նավթային ընկերության հետ կնքած կոնցեսիոն պայմանագիրը: Տեղական բնույթի վեճը վերածվեց միջազգային կոնֆլիկտի: Ազգերի լիգան ստանձնեց միջնորդի դեր: Սակայն 1933 թ. փետրվարին Անգլիան և Իրանը հրաժարվեցին Ազգերի լիգայի միջնորդությունից և ուղղակի բանակցությունների մեջ մտան միմյանց հետ: 1933 թ. ապրիլի 28-ին Իրանի ֆինանսների մինիստր Թաղի-զադեն Անգլո-պարսկական նավթային ընկերության հետ կնքեց նոր կոնցեսիոն պայմանագիր, որը իրանական նավթի շահագործման իրավունքը երկարածգում էր ևս 60 տարով՝ մինչև 1993 թ.: Պայմանագրով ավելանում էր նավթից ստացվող եկամուտներից Իրանին հատկացվող բաժինը: Անգլիական ընկերությունը իրավունք էր ստանում շահագործել Իրանի հարավային շրջանների նավթը 259 հազար քառ. կմ տարածքի վրա: Ընկերությանն իրավունք էր վերապահվում նաև գնել հողեր, կառուցել երկաթուղագծեր, նոր նավահանգիստներ, օդանավակայաններ ու ռադիոկայաններ, հեռախոսային ու հեռագրական գծեր և այլն:

Անգլո-պարսկական նավթային ընկերության հետ Իրանի հարաբերությունների սրման ժամանակ արքունիքի մինիստրի իր զբաղեցրած պաշտոնից ազատվեց Ռեզա շահի ամենամերձավորագույն գինակից Աբդոլհոսեյին Թեյմուրթաշը, որը 1925 թ. սկսած՝ կարևորագույն դեր էր խաղում Իրանի արտաքին քաղաքականության ձևավորման ու իրականացման գործում: Նրա պաշտոնաթողությունը որոշակի կապ ուներ իրանա-անգլիական հարաբերությունների հետ: Բանն այն է, որ Թեյմուրթաշը գաղտնի բանակցությունների մեջ էր մտել մի շարք արևմտաեվրոպական երկրների ու ընկերությունների հետ նավթային համագործակցության վերաբերյալ: 1932 թ. Արևմտյան Եվրոպայից վերադառնալու ճանապարհին, երբ նա կանգ էր առել Մոսկվայում, բրիտանական գաղտնի ծառայությունների աշխատակցուհուն հաջողվում է գողանալ նրա ճամպրուկը, որտեղ գտնվում էին փաստաթղթեր և գրառումներ: Ճամպրուկում հայտնաբերվում են նաև նյութեր, որոնք վկայում էին Թեյմուրթաշի գաղտնի կապերի մասին խորհրդային հետախուզության՝ ԳՊՈՒ-ի հետ:

Դա հնարավորություն տվեց անգլիացիներին՝ շահի աչքում լրիվ վարկաբեկել ազդեցիկ քաղաքական գործչին, որը հետևողականորեն աշխատում էր ավելացնել նավթից ստացվող եկամուտներից Իրանի բաժինը և

վերանայել տալ դ'Արսիի կոնցեսիայի պայմանները՝ հօգուտ իրանական պետության:

Թեհրան վերադառնալուց հետո Թեյմուրքաշին սկզբում կատարելապես հեռացրին պետական գործերից, իսկ ապա 1932թ. դեկտեմբերի 24-ին, ձերբակալեցին՝ մեղադրելով պետական դավաճանության մեջ, և դատապարտեցին հինգ տարվա բանտարկության:

1933 թ. սեպտեմբերի վերջին Խորհրդային Միության արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ Լևոն Կարախանը այցելեց Թեհրան և հանդիպում ունեցավ Ռեզա շահի հետ: Հանդիպման ժամանակ նա խնդրեց շահին՝ մեղմացնել Թեյմուրքաշի պատիժը, որը ունեցավ միանգամայն հակառակ արդյունք: 1933 թ. հոկտեմբերի 1-ին նա բանտում սպանվեց:

30-ական թթ. այսպես կոչված «Երրորդ ուժի» դոկտրինը դարձավ Իրանի արտաքին քաղաքական կոնցեպցիայի անկյունաքարը: Նրա էությունը կայանում էր նրանում, որ ի դեմս Գերմանիայի՝ իրանական կառավարությունը տեսնում էր մի «Երրորդ ուժի», որն ընդունակ էր հակազդելու Մեծ Բրիտանիային և Խորհրդային Միությանը: Առհասարակ, իրանական հասարակական կարծիքը Գերմանիան ընկալում էր որպես մի «չեզոք» պետություն, որը Իրանի նկատմամբ չունի գաղութակալական ձգտումներ:

Իրանական կառավարությունը Գերմանիայից սկսեց հրավիրել տարբեր մասնագետներ, խորհրդականներ և այլն: Գերմանացիները Իրանում ձեռնամուխ եղան արդյունաբերական շինարարության: Աստիճանաբար Իրան սկսեց ներթափանցել նաև նացիոնալ-սոցիալիզմի գաղափարախոսությունը: Հիտլերյան քարոզչության մեջ էական տեղ էին գրավում գերմանացիների ու իրանցիների ընդհանուր արիական ծագման մասին ռասայական տեսությունները: 1936 թ. հրապարակված ռայխի դեկրետը իրանցիներին ճանաչում էր որպես մաքուր արիացիներ: Գերմանական քարոզչությունը կոչ էր անում ամրապնդել հոգեկան հարազատությունը արիացիների նորդիական և իրանական խմբերի միջև: Ջարգացվում էր այն միտքը, որ Գերմանիան կոչված է Իրանն ազատագրել Անգլիայի և Խորհրդային Միության ճնշումից: Բորբոքվում էին պանիրանական տրամադրություններ՝ խոստանալով իրանական ժողովրդին օգնել ստեղծելու «Մեծ Իրան»: 1933 թ. Իրանում կազմակերպվեց ծայրահեղ ազգայանական «Իրան-ե բասքան» («Հին Իրան») կոչված կազմակերպությունը, որը ռասիզմի ֆաշիստական գաղափարախոսությունը հարմարեցնում էր մարտնչող պանիրանիզմի քարոզչությանը: Ուժեղացան նաև Իրանի կա-

պերը ֆաշիստական Իտալիայի և ռազմաշունչ ծավալապաշտական ծգտումներով տարված Ճապոնիայի հետ:

1930-ական թթ. որոշ աշխուժություն նկատվեց Իրանի հարաբերություններում սահմանակից պետությունների հետ: Այսպես՝ 1931 թ. հոկտեմբերի 27-ին Թեհրանում ստորագրվեց սովետա-իրանական կոնվենցիա առևտրի և ծովագնացության մասին: 1933 թ. աշնանը, ինչպես նշվեց, պաշտոնական այցով Իրան մեկնեց Խորհրդային Միության արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Լևոն Կարախանը: Ճիշտ է, այդ այցը նշանակալիորեն նպաստեց երկու երկրների միջև հարաբերությունների որոշ կարգավորմանը և կուտակված խնդիրների լուծմանը, սակայն դրանից հետո ևս իրանական կառավարությունը շարունակում էր հավատարիմ մնալ իր որդեգրած քաղաքականությանը: Նա կասկածամտությամբ և անվստահորեն էր վերաբերվում Խորհրդային Միությանը՝ նրան համարելով ծավալապաշտական ու կայսերապաշտական հակումներ ունեցող պետություն, որը չի խորշում նաև միջամտել ուրիշ երկրների ներքին գործերին և արտահանել կոմունիստական գաղափարները:

1929 թ. ապրիլին Անկարայում կնքվեցին իրանա-թուրքական կոնվենցիաներ սահմանների անվտանգության մասին և առևտրական համաձայնագիր: Իսկ 1932 թ. հունվարի 23-ին ստորագրվեց իրանա-թուրքական համաձայնագիր սահմանների ճշտման վերաբերյալ: Այս համաձայնագրի կնքման դրդապատճառը Թուրքիայում Արարատի շրջանի քրդական ապստամբությունն էր, որին արձագանքել էին նաև իրանական քրդերը և բարձրացրել ապստամբություն: Թուրքիան և Իրանը պայմանավորվել էին համատեղ ուժերով ճնշել այդ վտանգավոր շարժումը: Ընդ որում՝ Ռեզա շահը Թուրքիային տրամադրեց մի նեղ հողաշերտ, որի շնորհիվ Թուրքիան ելք ստացավ դեպի Նախիջևան:

Առհասարակ, Ռեզա շահը համակրանքով էր վերաբերվում Քեմալ Աթաթյուրքի իրականացրած բարեփոխումների քաղաքականության և հատկապես նրա որդեգրած պետական կապիտալիզմի («էտատիզմ») ճկատմամբ: 1934 թ. Ռեզա շահի պաշտոնական այցը Թուրքիա, որի ընթացքում նա արժանացավ թուրքական հանրապետության նախագահ Քեմալ Աթաթյուրքի ամենաջերմ ընդունելությանը, սկիզբ դրեց իրանա-թուրքական մի ամբողջ շարք պայմանագրերի ու համաձայնագրերի ստորագրմանը, այդ թվում նաև քրդական հարցի լուծման, տարանցիկ բեռնափոխադրումների, օդային հաղորդակցության և այլ հարցերի կապակցությամբ:

Նշմարվում էր նաև հարաբերությունների բարելավում սահմանակից

Իրաքի հետ: 1929 թ. ապրիլին Իրանը պաշտոնապես ճանաչեց Իրաքի պետությանը, որը ստեղծվել էր Անգլիայի կողմից այդ երկրի նկատմամբ իր մանդատային իրավունքներից հրաժարվելուց հետո: Իսկ 1930 թ. հաստատվեցին իրանա-իրաքյան դիվանագիտական հարաբերություններ: Սակայն երկու երկրների հարաբերություններում գոյություն ունեցող մի շարք վիճելի հարցերի առկայությունը այդ մերձեցումը կայուն հիմքերի վրա չէր դնում: Վիճելի հարցերից կարևորագույները հետևյալներն էին. Շաթթ-էլ-Արաբ գետի վրա նավագնացության հետ կապված խնդիրներ, Իրաքի շիիթական սրբազան վայրեր մեկնող իրանական ուխտագնացների կարգավիճակին առնչվող հարցեր և այլն: 1932 թ. Իրաքի թագավոր Ֆեյսալի՝ Թեհրան կատարած պաշտոնական այցի ժամանակ այդ հարցերի կարգավորման փորձերը ավարտվեցին անարդյունք:

Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի միջնորդական առաքելության շնորհիվ իրանա-իրաքյան սահմանային մի շարք վեճեր գտան իրենց լուծումը: 1937 թ. հուլիսի 4-ին կնքվեց պայմանագիր սահմանների վերաբերյալ: Այդ պայմանագիրը դուռ բաց արեց նույն թվականի հուլիսի 18-ին ստորագրելու «Բարեկամության մասին» իրանա-իրաքյան համաձայնագիր: 1930-ական թթ. սկզբին Իրանը պաշտոնապես բարձրացրեց Պարսից ծոցի գոտում Իրանի «վաղնջական» հողերի հարցը: 1932 թ. սեպտեմբերին իրանական կառավարությունը հայտարարեց, որ ինքը չի ճանաչում բրիտանական հովանավորությունը Բահրեյնյան կղզիների նկատմամբ: Միաժամանակ նա տարածքային հավակնություններ ներկայացրեց Փոքր և Մեծ Թոմբ, ինչպես նաև Աբու-Մուսա կղզիների նկատմամբ:

Նշված շրջանում Իրանի հարաբերությունները Աֆղանստանի հետ ամբողջությամբ վերցրած մնում էին բարեկամական, թեև ժամանակ առ ժամանակ դրանք բարդանում էին: Դրա պատճառը կայանում էր նրանում, որ Իրանը 1929 թ. հավակնություններ ներկայացրեց Հերաթի նկատմամբ, որն անցյալում, պատմական մի որոշ ժամանակամիջոցի ընթացքում, պատկանել էր Իրանին:

Իրանի, Թուրքիայի, Աֆղանստանի և Իրաքի միջև հարաբերությունների բարելավման հետևանքով նախադրյալներ ստեղծվեցին նշված երկրների տարածաշրջանային քաղաքական մի խմբավորման ստեղծման ուղղությամբ, որի գլխավոր ոգեշնչողը Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքն էր: 1937 թ. հուլիսի 8-ին Թեհրանի Սաադաբադյան պալատում Իրանի, Թուրքիայի, Իրաքի և Աֆղանստանի միջև ստորագրվեց մերձավորարևելյան տարածաշրջանային մի դաշինք, որը հայտնի է «Սաադաբադյան պակտ» անունով: Դաշինքը ստորագրող պետությունները հայ-

տարարում էին, որ Ազգերի լիգայի հեղինակության անկման, աշխարհում ռազմական կոնֆլիկտների բռնկման հավանականություն ունեցող միջազգային իրադրության պայմաններում իրենք ունեն ընդհանուր ձգտում համաշխարհային ասպարեզում ամրապնդելու իրենց դիրքերը և ապահովելու իրենց սահմանների անձեռնմխելիությունն ու անվտանգությունը:

Արևմուտքում Սաադաբադյան պակտը համարել են «մերձավորարևելյան իսլամական ռազմական դաշինք», որի մեջ կենտրոնական տեղ էին զբաղեցնում Թուրքիան և Իրանը:

Արտաքին քաղաքական հարաբերություններում և երկրի տնտեսական ու մշակութային կյանքի մեջ ձեռք բերված հաջողությունները ուղեկցվում էին ներքին կյանքում բռնատիրական-դիկտատորական վարչակարգի ուժեղացմամբ: Գնալով Ռեզա շահի վարչակարգը ավելի ու ավելի անհանդուրժող էր դառնում ամեն տեսակի այլախոհության նկատմամբ: Ընդդիմադիր դիրքորոշում որդեգրած բոլոր կազմակերպությունների ու կուսակցությունների նկատմամբ իրականացվում էին հետապնդումներ: 1931 թ. մայիսին մեջլիսն ընդունեց «միապետին վիրավորելու մասին» օրենքը, որը սահմանում էր ծանր պատիժներ: Մամուլի նկատմամբ սահմանվեց խիստ հսկողություն, մտցվեց գրաքննություն: Կառավարությունը այլևս քիչ էր հաշվի նստում սահմանադրության հետ: Այսուհետև մեջլիսի պատգամավորները ընտրվելու էին շահի ցուցումներով, իսկ մեջլիսը վերածվեց նրա հլու-հնազանդ գործիքի: Իրանը դառնում էր տիպիկ ոստիկանական վարչակարգ ունեցող երկիր:

Ռեզա շահը աստիճանաբար դադարեց հաշվի նստել ոչ միայն մեջլիսի, այլև մինիստրների կաբինետի հետ: Նա դառնում էր ավելի ու ավելի անհանդուրժող, այլևս չէր լսում մարդկանց խորհուրդները, կասկածանքով էր վերաբերվում նույնիսկ իր շրջապատի ընդունակ քաղաքական գործիչների նկատմամբ: Նա աստիճանաբար իրենից հեռացրեց բարեփոխումների իրականացման ջատագով իր նախկին կողմնակիցներին: Շահի հիվանդագին կասկածամտության առաջին զոհը դարձավ ֆինանսների նախարար Փիրուզ Միրզան, որը ղեկավարում էր ֆինանսական համակարգի բարեփոխման գործը և հանդիսանում էր Ազգային բանկի հիմնադիրներից մեկը: Նա դատի տրվեց՝ մեղադրվելով կաշառակերության մեջ: Նման ստանդարտ մեղադրանքով պետական գործիչներից շատերը կա՛մ բանտերը նետվեցին, կա՛մ ֆիզիկապես ոչնչացվեցին: Շահի կուլտը սավառնում էր ամենուրեք: Թերթերը մրցում էին իրար հետ Ռեզա շահին շողոքորթելու գործում, որը նպաստում էր այդ իսկապես ուժեղ և երկաթյա կամքի տեր մարդու բարոյական ու քաղաքական վերա-

սերմանը, նրա կողմից ռեալականության զգացման կորստին:

Ռազմաոստիկանական դիկտատուրայի ճնշող պայմաններում ազատական ու ժողովրդավարական հայացքներ ունեցող մտավորականության մի մասը հրաժարվեց իր համոզմունքներից և ընդունեց պաշտոնական գաղափարախոսությունը: Դիկտատուրայի վարչակարգը համարելով անհրաժեշտ ու անխուսափելի՝ նրանք առաջ քաշեցին «ազգայնականություն առանց ազատականության» կարգախոսը: Ազատական հայացքների տեր բազմաթիվ մարդիկ ամբողջապես իրենց նվիրեցին գիտալուսավորչական գործունեության, կամ դարձան ամեն ինչի նկատմամբ անտարբեր չինովնիկներ:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

ԻՐԱՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1. ԻՐԱՆԻ ՌԱԶՄԱԿԱԼՈՒՄԸ ԴԱՇՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

1941 թ. հունիսին Գերմանիայի կողմից Խորհրդային Միության վրա հարձակումից հետո իրանական կառավարությունը շտապեց հայտարարել պատերազմում իր չեզոքության մասին: Շահը որոշել էր վարել սպասողական մարտավարություն: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Իրանի չեզոքության խախտումը Եռյակ համաձայնության և Քառյակ դաշինքի պետությունների կողմից հիշեցնում էր այն մասին, որ չեզոքության հայտարարումը, եթե պետությունը իր տրամադրության տակ չունի բավարար թվով զինված ուժեր և նշանակալից տնտեսական ներուժ, որպեսզի պետությունները հարգեն իր չեզոքությունը, վեր է ածվում թղթի կտորի և դատարկ հայտարարության:

Պատերազմը Իրանի ազգայնական-պանիրանիստական շրջաններում հույսեր էր արթնացրել, որ եկել է ժամը, որ Իրանը հետ վերադարձնի XIX դ. ռուս-պարսկական պատերազմների ժամանակ Անդրկովկասում իր «կորցրած տարածքները»: Այդ հույսերը էլ ավելի էին բորբոքվում գերմանական քաղաքական շրջանների և Իրանում գործող նրանց գործակալության միջոցով: Մի շարք քաղաքական խմբավորումների և

հատկապես զինվորականության շրջաններում մեծ էր այն մարդկանց թիվը, ովքեր հանդես էին գալիս գերմանացիների հետ ակտիվ համագործակցության օգտին և նույնիսկ քարոզչություն էին մղում հօգուտ Գերմանիայի հետ ռազմական դաշինքի կնքման:

Դաշնակից երեք երկրները՝ Խորհրդային Միությունը, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը, առանձին-առանձին և միասնական ձևով հայտարարեցին իրանական իշխանություններին, որ իրենց անհրաժեշտ է զորքեր մտցնել Իրանի տարածքը, որպեսզի հնարավորություն ունենան օգտագործելու տրանսիրանական երկաթուղին Խորհրդային Միությանը ռազմական տեխնիկա և այլ ապրանքներ անխափան մատակարարելու համար: Անշուշտ, անցանկալի համարելով օտարերկրյա զորքերի մուտքը իր երկրի տարածքը, շահը առաջարկեց այդ առաքելությունը վստահել իրանական իշխանություններին: Սակայն դաշնակիցները կտրականապես մերժեցին: Ինչպես իր հուշերում վկայում է գեներալ Հոսեյն Ֆարդուստը, գիտակցելով, որ անխուսափելի է դաշնակիցների զորքերի ներխուժումը Իրան, Ռեզա շահը ընկավ խորը հուսահատության մեջ: Նա թեև հասկանում էր, որ իրանական զորքերի կողմից դիմադրությունը դաշնակիցներին ոչնչով չի փոխելու իրադարձությունների ընթացքը, այնուամենայնիվ, հրամայեց, դիմադրել ինչքան որ հնարավոր է:

1941 թ. հունիսի 26-ին, հուլիսի 19-ին և օգոստոսի16-ին երեք անգամ դիվանագիտական խողովակներով Մոսկվան նախազգուշացրեց իրանական կառավարությանը «ստեղծված սպառնալիքի մասին»: Խորհրդային կառավարության նոտաներում նշվում էր, որ իրանական իշխանությունների կողմից Իրանում գերմանական գործակալության գործունեության թողտվությունը անհամատեղելի է 1921 թ. սովետա-իրանական պայմանագրի դրույթների, ինչպես նաև իրանական կառավարության կողմից պաշտոնապես հայտարարված չեզոքության քաղաքականության հետ: Նույնատիպ քայլերով հանդես եկավ նաև բրիտանական կառավարությունը: Անտարակույս, այդ «զգուշացումները» նախնական հիմք էին հանդիսանալու հետագա ավելի վճռական գործողությունները հիմնավորելու ու արդարացնելու համար: 1941 թ. օգոստոսի վերջին, վկայակոչելով 1921 թ. սովետա-իրանական պայմանագրի 6-րդ կետը, խորհրդային զորքերը անցան սահմանը և մուտք գործեցին Իրան: Հատուկ դիվանագիտական նոտայով Մոսկվան հիմնավորում էր այդ «ստիպողական» քայլի «հույժ անհրաժեշտությունը երկու երկրների անվտանգության համար»:

Միաժամանակ երկրի հարավից ու հարավ-արևմուտքից Իրան

մտան նաև անգլիական զորքերը: Ավելի ուշ՝ 1942 թ. վերջին, մտցվեցին նաև ամերիկյան զորքեր:

Իրանի զինված ուժերը դաշնակիցների զորքերի նկատմամբ ցուցաբերեցին թույլ դիմադրություն, և ընդամենը մի քանի օրվա ընթացքում ռազմական գործողությունները հասան իրենց ավարտին:

Գլխապտույտ արագությամբ տեղի ունեցած այս իրադարձությունները ստիպեցին վարչապետ Ալի Մանսուրին իր ողջ կառավարության կազմով հրաժարական տալ: Ձևավորվեց նոր կառավարություն Ֆորուղիի գլխավորությամբ, որի առաջին հրամանագրերից մեկն ուղղված էր Իրանի բոլոր տեսակի զինված ուժերին: Հրամանում կտրուկ արտահայտություններով պահանջվում էր դադարեցնել ամեն տեսակի դիմադրությունը խորհրդային և անգլիական զորքերին՝ դա համարելով անմիտ ու աննպատակ:

Բնականաբար, օտարերկրյա զորքերի ներկայության իրավունքը Իրանի տարածքում անհրաժեշտ էր վավերացնել համապատասխան միջազգային համաձայնագրով, որը կոչված էր նաև համակարգել ու ճշտել Իրանի՝ մի կողմից, և Խորհրդային Միության ու Մեծ Բրիտանիայի՝ մյուս կողմից, հետագա իրավաքաղաքական հարաբերությունները: Կարճ բանակցություններից հետո՝ 1941 թ. սեպտեմբերի 8-ին, կողմերի միջև ստորագրվեց վերոհիշյալ բովանդակությամբ մի համաձայնագիր: Այն նախատեսում էր իրանական զորքերի դուրսբերումը մի շարք տարածքներից և դրանց գրավման ենթարկելու իրավունքը Խորհրդային (երկրի հյուսիսում) և Անգլիական (հարավում և հարավ-արևմուտքում) զորքերի կողմից: Համաձայնագիրը նաև որոշակի ժամկետներ էր դնում Իրանի տարածքից Գերմանիայի, Իտալիայի և նրանց մի շարք արբանյակ պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և գործակալության հեռացման համար:

Սակայն Ռեզա շահը չէր շտապում կատարել համաձայնագրի պայմանները: Նա դիմեց ձգձգումների ավանդական քաղաքականությանը: Գերմանական գործակալությանը հաջողվեց այդ կարճ ժամանակը օգտագործել զարմանալի արդյունավետությամբ՝ իր լավագույն ուժերին ընդհատակ տանելու և հետագա գործունեության հնարավորություններ ստեղծելու համար:

Դա առաջ բերեց շահական ընդդիմության հակաքայլերը: Ընդդիմության բոլոր ուժերը համախմբվեցին՝ կազմակերպելով ցույցեր ու հանրահավաքներ, որոնց ընթացքում պահանջվում էր շահի անհապաղ հրաժարականը: Կասկածից վեր է, որ ընդդիմության աշխուժացումը

խրախուսվում էր խորհրդային և անգլիական զորքերի հրամանատարության ու հետախուզական ծառայությունների կողմից:

Այդ պարագաներում Ռեզա շահը այլևս ընտրություն կատարելու որևէ հնարավորություն չուներ: Սեպտեմբերի 16-ին նա հայտարարեց, որ հրաժարվում է գահից: Ըստ իրանական գահաժառանգության վերաբերյալ օրենքի՝ փեհլևիների գահի վրա կարող էր նստել շահի ավագ որդի և գահաժառանգ 22-ամյա Շահփուր Մոհամմադը: Վերջինս հանդիսավոր պայմաններում բազմեց շահնշահական գահի վրա՝ ընդունելով Մոհամմադ Ռեզա Փեհլևի գահակալական անունը: Իսկ գահընկեց եղած շահը անգլիական նավով Պարսից ծոցից շարժվեց Հնդկաստան՝ Բոմբեյ, որտեղ, սակայն, անգլիական իշխանությունները նրան թույլ չտվեցին ափ իջնել, և նավը ուղղություն վերցրեց դեպի Ս. Մավրիկիա կղզի: 1942 թ. գարնանը Ռեզա Փեհլևին տեղափոխվեց Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն՝ Յոհաննեսբուրգ, որտեղ ուներ մի կալվածք: Հենց այնտեղ էլ նա վախճանվեց 1944 թ. հուլիսի 26-ին, 66 տարեկան հասակում:

Նոր շահը և նորաստեղծ կառավարությունը ցանկություն հայտնեցին համագործակցել դաշնակցային պետությունների հետ: Գերմանահպատակների և ֆաշիստական ակտիվ գործակալների մեծ մասը ձերբակալվեց կամ վտարվեց երկրից: Հայտարարվեց խոսքի, մամուլի, ժողովների, քաղաքական կազմակերպություններ ստեղծելու ազատության մասին: Իր իշխանությունն ամրապնդելու համար հոգևորականության աջակցությունը ստանալու նպատակով երիտասարդ շահը հայտարարեց, որ ինքը՝ որպես աստվածային շնորհով օժտված օրինական թագավոր, պատրաստ է ընդունել մահմեդական հոգևորականների հովանավորությունը:

Խորհրդային Միության, Մեծ Բրիտանիայի և Իրանի միջև սկսվեցին բանակցություններ, որոնք ավարտվեցին 1942 թ. հունվարի 29-ին դաշինքի վերաբերյալ եռակողմ պայմանագրի ստորագրումով: Այն միաժամանակ պայմանագիր էր ֆաշիզմի դեմ պայքարում համագործակցության վերաբերյալ: Պայմանագիրը սահմանում էր Գերմանիայի դեմ պատերազմի շրջանում վերոհիշյալ երեք պետությունների հարաբերությունների քաղաքական-իրավական հիմքերը: Դաշնակիցները պարտավորվում էին «հարգել Իրանի տարածքային ամբողջականությունը, ինքնուրույնությունը և քաղաքական անկախությունը»:

Խորհրդային Միությունը և Անգլիան պարտավորվում էին նաև «Իրանը պաշտպանել Գերմանիայի և ցանկացած այլ պետության ագրեսիայից իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով»: Այդ խնդրի իրականացման համար Խորհրդային Միությունը և Անգլիան

իրավունք էին ստանում «Իրանի տարածքում ունենալ այնպիսի քանակով ցամաքային, ծովային և օդային ուժեր, որոնք նրանք համարում են անհրաժեշտ»: Պայմանագրում նշվում էր, որ Խորհրդային Միության և Անգլիայի զորքերը պետք է դուրս բերվեն Իրանի տարածքից ոչ ուշ, քան դաշնակցային պետությունների և Գերմանիայի ու նրա դաշնակիցների միջև ռազմական գործողությունների դադարից վեց ամիս անց:

Իր հերթին Իրանը պարտավորվում էր «համագործակցել դաշնակցային պետությունների հետ իր համար մատչելի բոլոր միջոցներով, որպեսզի նրանք ի վիճակի լինեն իրագործելու վերոհիշյալ պարտավորությունները»:

Իրանական զինված ուժերի օգնությունը դաշնակիցներին պայմանագրով սահմանափակվում էր միայն իրանական տարածքում կարգ ու կանոնի պահպանման շրջանակներում: Բացի այդ, դաշնակցային պետություններին անսահմանափակ իրավունքներ էին տրամադրվում օգտագործելու և ռազմական անհրաժեշտության դեպքում վերահսկելու Իրանի ողջ տարածքի հաղորդակցության ճանապարհները ու հաղորդակցության միջոցները, ներառյալ երկաթուղային և խճուղային ճանապարհները, գետերը, օդանավակայանները, նավահանգիստները և այլն:

Իրանը համաձայնվում էր իր տարածքը տրամադրել դաշնակից երկրներին Խորհրդային Միության համար ռազմական բեռների տարանցիկ տեղափոխման համար:

Վերոհիշյալ եռյակ դաշինքի ստորագրումը նշանակում էր, որ Իրանը ընդգրկվում է հակաֆաշիստական խմբակցության մեջ: Դա նրան հնարավորություն տվեց Գերմանիայի նկատմամբ հաղթանակ տանելուց հետո տեղ զբաղեցնել Միավորված Ազգերի Կազմակերպությունում:

Իրանն իր պատկառելի ներդրումը ունեցավ ֆաշիստական Գերմանիայի դեմ պայքարի ասպարեզում՝ ապահովելով հուսալի կապ Խորհրդայի Միության և նրա դաշնակիցների միջև: Իզուր չէ, որ Իրանի վրայով անցնող ճանապարհը ստացել էր «կյանքի ճանապարհ» անվանումը:

Խորհրդային Միության և Մեծ Բրիտանիայի կողմից Իրանի տարածքի ռազմականացումը առաջ բերեց իրանական ազգայնականների խորը դժգոհությունն ու հակազդեցությունը: 1942 թ. ստեղծվեց «Մելլիյուն-ե Իրան»(«Իրանի ազգայնականներ») կազմակերպությունը, որը անգլո-խորհրդային դաշնակիցների դեմ վարում էր քարոզչական գործողություններ, ցեղերին հրահրում էր ապստամբության, կոչ էր անում, որ Իրանի քաղաքացիներից յուրաքանչյուրն իր աշխատանքի վայրում սաբոտաժի ենթարկի դաշնակիցներին, աշխատում էր շարքից հանել խճու-

ղային և երկաթուղային ճանապարհները՝ զորքերի տեղաշարժը արգելակելու համար և այլն:

Օգտվելով Ռեզա շահի կողմից երկրում արմատավորված դիկտատուրայի վարչակարգի թուլացումից՝ ցեղերը կրկին զենքի դիմեցին ապստամբության միջոցով իրենց նպատակներին հասնելու համար: Ուրմիայի շրջանում բռնկվեց քրդական խոշոր ապստամբություն, որն առաջ քաշեց քրդերի համար ինքնավարության քաղաքական պահանջներ: 1942 և 1943 թվականներին Իրանի հարավում, հատկապես Ֆարսի նահանգում, թյուրքալեզու ղաշղայի և իրանալեզու լոր կամ լուր և բախթիարի ցեղերը համարյա անընդմեջ դիմում էին զինված ըմբոստության: Ցեղերի առաջնորդներն ու խաները պահանջում էին հետ վերադարձնել Ռեզա շահի կողմից իրենցից գրաված հողերը, իրենց ճանաչել որպես ցեղերով բնակեցված շրջանների կառավարիչներ. մի հանգամանք, որ ավանդաբար միշտ գոյություն է ունեցել, սակայն վերացվել է «բռնակալի քմահաճ կամքով»: Մի շարք ցեղեր, գտնվելով իրանական ազգայնականների քարոզչության անմիջական ազդեցության ներքո, առաջ էին քաշում նաև զուտ քաղաքական պահանջներ, օրինակ՝ օտարերկրյա զորքերի՝ Իրանի տարածքից դուրսբերման պահանջը և այլն:

Ընդհատակում գործող գերմանական գործակալությունը աշխատում էր ցեղերի այդ շարժումն օգտագործել ի շահ Գերմանիայի: Իրանում գործող բրիտանական զինվորական հետախուզության տրամադրության տակ կային հավաստի տվյալներ այն մասին, որ գերմանացիները առատորեն ֆինանսավորում են ցեղերի շարժումները, նրանց մատակարարում զենք ու զինամթերք և քարոզչական լայն աշխատանք տանում նրանց մտքերը նախապատրաստելու ուղղությամբ:

Թեհրանի կառավարությունը և բրիտանական ռազմական իշխանությունները բանակցությունների մեջ մտան ապստամբ ցեղերի առաջնորդների հետ և բավարարեցին նրանց պահանջների մեծ մասը: Խաների քաղաքական կողմնորոշումների մեջ բեկում մտցնելու գործում չափազանց մեծ դեր խաղաց նաև անգլիական ոսկին: Կաշառքի ու նվերների միջոցով անգլիացիներին հաջողվեց իրենց կողմը շրջել առավել ռազմաշունչ ցեղերի խաներին, որոնցից շատերը սկսեցին սերտորեն համագործակցել անգլիացիների հետ: Նույնիսկ ղաշղայի ցեղի մոտ ապաստան գտած գերմանական գործակալներին ցեղապետները հանձնեցին անգլիացիներին: Երբեմն, երբ արդյունք չէր տալիս և՛ զինումների գնալու, և՛ ցեղերին ու նրանց առաջնորդներին «ֆինանսավորելու» քաղաքականությունը, ուժի մեջ էր մտնում ցեղերի հետ անողոք

դատաստան տեսնելու գործելակերպը: Բոլոր դեպքերում իրանական կառավարությանը և անգլիացիներին հաջողվեց խաղաղեցնել Իրանի հարավի ցեղերին:

1943 թ. սեպտեմբերի 9-ին Իրանը պատերազմ հայտարարեց Գերմանիային: Սակայն իրանական զորքերը չմասնակցեցին Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ ռազմական գործողություններին: Դա ավելի շուտ բարոյական-քաղաքական ակտ էր և իրական ռազմական նշանակություն չուներ: Իրանի օգնությունը դաշնակից երկրներին դրանից հետո ևս արտահայտվում էր Իրանի տարածքով բեռների տարանցիկ փոխադրումներում:

1943 թ. հակահիտլերյան կոալիցիայի երեք դաշնակից պետությունները՝ Անգլիան, ԱՄՆ-ը և Խորհրդային Միությունը, Թեհրանն ընտրեցին որպես իրենց կոնֆերանսի վայր, ուր ժամանեցին նշված երեք պետությունների ղեկավարները՝ Ու. Չերչիլը, Ֆ. Ռուզվելտը և Ի. Ստալինը: Թեհրանի խորհրդաժողովը բացվեց 1943 թ. նոյեմբերի 28-ին: Այն նվիրված էր ֆաշիստական Գերմանիայի դեմ դաշնակիցների պայքարի կազմակերպման հարցերին: Դեկտեմբերի 1-ին ընդունվեց մի փաստաթուղթ, որը հայտնի է «Իրանի վերաբերյալ երեք պետությունների հռչակագիր» անունով: Այնտեղ նշվում էր, որ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի և Միացյալ Թագավորության կառավարությունները ընդունում են այն օգնությունը, որ ցուցաբերեց Իրանը ընդհանուր թշնամու դեմ պատերազմ մղելու գործում՝ հատկապես դյուրություններ ստեղծելով արտասահմանից բեռների տեղափոխումը Խորհրդային Միություն իրականացնելու համար: Այդ երեք կառավարությունները գիտակցում էին, որ պատերազմը Իրանի համար առաջ բերեց յուրահատուկ տնտեսական դժվարություններ, ուստի նրանք համաձայնության եկան այն մասին, որ նախկինի պես Իրանի կառավարությանը հատկացնելու են տնտեսական օգնություն:

Երեք պետությունները խոստանում էին Իրանին տնտեսական օգնություն ցուցաբերել նաև պատերազմի ավարտից հետո՝ հետպատերազմյան շրջանում: Հռչակագրում այդ պետությունները հավաստում էին իրենց վճռականությունն ու ցանկությունը՝ պահպանելու և հարգելու Իրանի անկախությունը, ինքնուրույնությունը և տարածքային ամբողջականությունը:

Խորհրդային զորքերի ներկայությունը Իրանում նպաստեց այդ երկրում կոմունիստական շարժման տարածմանը: Օգտվելով պատերազմի տարիներին Իրանում նկատվող հասարակական-քաղաքական կյանքի որոշ ազատականացումից և ժողովրդավարության վերելքից՝ 1941 թ. աշնանը ստեղծվեց «Հեզբ-ե թուդե-ե Իրան» («Իրանի ժողովրդական կուսակցություն») կոմունիստական տիպի կուսակցությունը, որը

պատերազմի տարիներին դարձավ երկրի ազդեցիկ քաղաքական ուժերից մեկը: Հիմնականում գործելով Մոսկվայի հրահանգներով՝ այն դարձավ ազդու լծակ Խորհրդային Միության ձեռքերում Իրանի նկատմամբ «ստվերային» քաղաքականություն իրագործելու գործում:

Այդ շրջանում Իրանի նկատմամբ եռանդուն քաղաքականություն էր փորձում իրագործել նաև ԱՄՆ-ը: Դեռևս 1942 թ. Ղավամ էս-Սալթանեի կառավարման շրջանում Իրան ժամանեցին երկու ամերիկյան ռազմական միսիաներ բանակում և ժանդարմերիայում աշխատելու համար: Շուտով ամերիկյան խորհրդականները հայտնվեցին բազմաթիվ նախարարություններում և պետական զանազան գերատեսչություններում: Այդ նույն ժամանակ (1943 թ. հունվարին) Իրան ժամանեց ամերիկյան ֆինանսական խորհրդական Արթուր Միլսպոն, որն օժտվեց բացառիկ լայն լիազորություններով ու իրավունքներով: Որպես իրանական ֆինանսների գլխավոր վարչարարի՝ նրան հանձնարարվեց կազմել ոչ միայն պետական բյուջեն, այլև տրվեց այն վերահսկելու իրավունք: 1943 թ. ապրիլի 8-ին Վաշինգտոնում ստորագրվեց իրանա-ամերիկյան առևտրական պայմանագիր: Պատերազմի տարիներին ԱՄՆ-ի բաժինը Իրանի արտաքին առևտրի մեջ ավելի քան կրկնապատկվեց: 1943 թ. մարտի 21-ից Իրանում սկսեց գործել ամերիկյան գեներալ Կլարկենս Ռիդլիի ռազմական միսիան և գնդապետ Նորման Շվարցկոպֆի միսիան իրանական ժանդարմերիայի հրամանատարությունը ստանձնելու համար: Իրան ժամանեցին նաև ամերիկյան բազմաթիվ մասնագետներ, որոնք գործունեություն ծավալեցին զանազան մինիստրություններում, հիմնարկություններում և գերատեսչություններում:

2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՆԱՎԹԻ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԸ: ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԻՐԱՆԱԿԱՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԵՎ ՔՐԴՍՏԱՆՈՒՄ

Պատերազմի վերջին էտապում հակահիտլերյան կոալիցիայի գծով դաշնակիցների միջև սկսվեց սուր պայքար իրանական նավթի համար: 1943 թ. վերջին և 1944 թ. սկզբին անգլո-հոլանդական «Ռոյալ դետչ շել» և ամերիկյան «Ստանդարտ օյլ» և «Սինկլեր» նավթային ընկերությունները Թեհրանում իրանական կառավարության հետ բանակցություններ սկսեցին երկրի ծայր արևելքում՝ Իրանական Բելուջիսթանում և մի շարք այլ շրջաններում, նավթի շահագործման վերաբերյալ կոնցեսիա ստանալու համար: Մոսկվան անմիջապես արձագանքեց դրան և 1944 թ. սեպտեմբերին Թեհրան ուղարկեց կառավարական մի հանձնաժողով, որը բանակցությունների մեջ մտավ իրանական կառավարության հետ հյուսիսային շրջաններում նավթի շահագործման կոնցեսիա ստանալու համար: Սակայն տեսնելով, որ նավթի շուրջը ծավալված պայքարը խիստ քաղաքականացվում է և Իրանի համար կարող է ունենալ վտանգավոր հետևանքներ՝ վարչապետ Սայեղի կառավարությունը հայտարարեց, որ մինչև պատերազմի ավարտը ինքը ոչ մի օտարերկրյա պետության չի տրամադրելու նավթային կոնցեսիաներ: Միաժամանակ, քիչ անց՝ 1944 թ. դեկտեմբերի 2-ին, մեջլիսը օրենք ընդունեց այն մասին, որ կառավարությունը արգելում է նույնիսկ բանակցությունների մեջ մտնել օտարերկրյա պետությունների ու ընկերությունների հետ նավթային կոնցեսիաներ տրամադրելու վերաբերյալ:

Իրանական կառավարության և մեջլիսի այդ որոշումները Մոսկվան ընդունեց որպես հատուկ իր դեմ ուղղված քաղաքական ակտ: Խորհրդային Միության հրահանգով Իրանի կոմունիստամետ ուժերը կառավարության այդ գործելակերպի դեմ կազմակերպեցին հախուռն քարոզարշավ, «ժողովրդական զանգվածներին» հանեցին ցույցերի ու հանրահավաքների և այլն: Գնալով խորհրդային իշխանությունները և Իրանում տեղակայված խորհրդային զորքերի հրամանատարությունը ուժեղացնում էր իր ճնշումը իրանական կառավարության վրա՝ այդ նպատակով հատկապես օգտագործելով «Թուդե» կուսակցությունը և կոմունիստամետ ուժերին, որոնք հասցրել էին մեծ ազդեցություն ձեռք բերել իրա-

նական հասարակության ամենատարբեր խավերում և նույնիսկ բանակի սպայության շրջանում:

Իրանի հակակոմունիստական և հակախորհրդային ուժերը նս իրենց հերթին կազմակերպում էին հանդիպակա ցույցեր, հանրահավաքներ, զինում էին իրենց կողմնակիցներին և այլն: Թեհրանում, Թավրիզում և մի շարք այլ վայրերում տեղի ունեցան հարձակումներ խորհրդային հիմնարկությունների աշխատակիցների վրա:

Սրվում էին նաև հակասությունները դաշնակիցների միջև, մանավանդ որ Մոսկվան մեծ խանդով էր վերաբերվում անգլիացիների ու ամերիկացիների կողմից Իրանում ձեռք բերվող հաջողություններին: Ըստ էության, Իրանը առաջին երկիրն էր, ուր մեծ պետությունների միջև ծավալվեց «սառը պատերազմը»: Դա իր հուշերում խոստովանում է նաև ինքը՝ Մոհամմադ Ռեզա շահ Փեհլևին: «Ինձ թվում է և պատմաբանները ևս կվկայեն այդ մասին,- գրում է նա,- որ «սառը պատերազմը», փաստորեն, սկսվեց Իրանում: Թեև նրա նշանները նկատվում էին նաև աշխարհի այլ շրջաններում, սակայն պատերազմի այդ ձևի առաջին նշանները բացահայտ կերպով դրսևորվեցին Իրանում»:

Մի խոսքով՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի եզրափակիչ էտապում Իրանի ներքին կայունությունը դրվել էր սպառնալիքի տակ: Ավելին՝ երկիրը կանգնել էր անիշխանության ու քաոսի խորխորատը գահավիժելու վտանգի առջև:

«Կոմունիստական վտանգի» մեծացումը իրանական կառավարությանը մղում էր հավասարակշռություն սահմանելու միտումով մերձեցման քայլեր կատարել ԱՄՆ-ի հետ և ապավինել Մեծ Բրիտանիայի աջակցությանը:

Հարկ է նշել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո դաշնակցային բոլոր զորքերը, բացի Խորհրդային Միության զինված ուժերից, դուրս բերվեցին Իրանի տարածքից: Մոսկվան չէր շտապում իր զորքերը դուրս հանել այնտեղից: Իրանական կառավարության դիմումներն այդ ուղղությամբ մնում էին անպատասխան:

Այդ շրջանում սովետական ղեկավարությունն ամբողջապես տարված էր Իրանի հյուսիսային շրջանների նավթին տիրանալու մարմաջով: Այդ հարցում առանձնակի նախաձեռնություն էր դրսևորում Լ. Բերիան: Նրա կարգադրությամբ կազմվեցին գաղտնի տեղեկանքներ Իրանի մերձկասպյան նահանգների, Իրանական Ադրբեջանի և Խորասանի նավթային պաշարների մասին: Այդ գործի մեջ ընդգրկվեց նաև Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության կոմկուսի

առաջին քարտուղար Միր Ջաֆար Բաղիրովը:

Նավթային խնդիրը գործնական հողի վրա դնելու նպատակով 1944 թ. սեպտեմբերի 10-ին Թեհրան ժամանեց սովետական կառավարական մի հանձնաժողով, որը գլխավորում էր ԽՍՀՄ արտաքին գործերի կոմիսարի տեղակալ Ս. Քաֆթարաձեն: Սեպտեմբերի 25-ին վերջինս իրանական վարչապետ Մոհամմադ Սեյեղին ներկայացրեց Խորհրդային Միության առաջարկը նավթային կոնցեսիա տրամադրելու մասին՝ 60 տարի ժամկետով: 1944 թ. հոկտեմբերին իրանական իշխանություններին մոտ կանգնած թերթերում տպագրվեցին հոդվածներ, որոնց հեղինակները աներկիմաստ ձևով արտահայտվում էին ԽՍՀՄ-ին նավթային կոնցեսիա տրամադրելու դեմ: Հարցը քննարկման դրվեց իրանական մեջլիսում, և որոշվեց մերժել սովետական առաջարկը: Գործին չօգնեցին նաև Ս. Քաֆթարաձեի կոպիտ արտահայտությունները իրանական ղեկավարության հասցեին, որը պահանջում էր «ուղղել իրենց սխալը» և տալ համաձայնություն:

Դա մի ժամանակ էր, երբ Խորհրդային Միության քաղաքական ազդեցությունը Իրանի հյուսիսում և մայրաքաղաքում վերին աստիճանի ծանրակշիռ էր:

1944 թ. դեկտեմբերի 2-ին մեջլիսի պատգամավոր դոկտոր Մոհամմադ Մոսադեղի առաջարկով մեջլիսը օրենք ընդունեց օտարերկրյա պետություններին նավթային կոնցեսիա տրամադրելու արգելքի մասին:

Այդ բոլորից հետո Մոսկվան որոշեց հարցի լուծումը իրականացնել լայնամասշտաբ գործողությունների ճանապարհով: Իրանական Ադրբեջանում և Քրդստանում Խորհրդային Միության հրահրմամբ սկսվեց մի շարժում՝ այդ երկրամասերը Իրանից անջատելու համար:

Կար նաև հարցի մեկ այլ կողմ: Խորհրդային Միությունը որոշել էր, օգտվելով ստեղծված բարենպաստ իրադրությունից, Հյուսիսային Իրանի նկատմամբ վերստին վերադարձնել քաղաքական այն ազդեցությունը, որ այդ տարածաշրջանում ուներ ռուսական ցարիզմը մինչև 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը:

1945 թ. հուլիսի 6-ին Մոսկվայում կոմկուսի քաղբյուրոյի նիստում «ադրբեջանական հարցը» դրվեց հատուկ քննարկման: Նիստի մասնակիցները միահամուռ արտահայտվեցին հարցը «դեմոկրատական միջոցներով» լուծելու օգտին, որը նշանակում էր հրահրել զանգվածային «ազգային շարժում» Իրանական Ադրբեջանում՝ ի շահ այդ երկրամասին ինքնավարության տրամադրման: Այդ ծրագրի իրականացման պատասխանատվությունը դրվում էր Վ. Մոլոտովի, Լ. Բերիայի, Գ. Մալենկովի և Խորհրդային Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղար Միր Ջաֆար Բաղիրովի վրա:

Միաժամանակ 1945 թ. ամռանը ՀԿ(բ)Կ ԿԿ-ն որոշում ընդունեց աջակցություն ցույց տալ այսպես կոչված Հարավային Ադրբեջանի և Իրանի մյուս հյուսիսային նահանգների «ազգային-դեմոկրատական» շարժումներին: Կենտկոմը նաև որոշեց ստեղծել Հարավային Ադրբեջանի դեմոկրատական կուսակցություն անունով քաղաքական մի կազմակերպություն: Այդ գործը գլուխ բերելու համար Բաղիրովի հրահանգներով զինված՝ Բաքվից գաղտնապես Իրան ուղարկվեցին մի խումբ գործիչներ, որոնց թվում էին Սեյիդ Ջաֆար Փիշևարին, Քամբախշը և կոմունիստական շարժման այլ իրանցի (ադրբեջանական թյուրք) ներկայացուցիչներ, որոնք Խորհրդային Ադրբեջանում գտնվում էին քաղաքական վտարանդության մեջ: Նրանք իրենց հետ Իրան էին տանում խորհրդային ղեկավարության կողմից մշակված առաջիկայում ստեղծվելիք Ադրբեջանական դեմոկրատական կուսակցության ծրագիրը և այլ փաստաթղթեր:

Այդ արկածախնդրությունը հանդիպում էր Իրանական Ադրբեջանի մի շարք սթափ մտածող գործիչների դիմադրությանը: Նրանց դիմադրությունը ճզմելու համար Ադրբեջանի Հանրապետության ներքին գործերի մինիստրությունը պլանավորում և իրականացնում էր նրանց նկատմամբ ահաբեկչական գործողություններ: Միաժամանակ Խորհրդային Միության մամուլը և ռադիոն ծավալել էին լայն քարոզչություն՝ անթաքույց ձևով սպառնալիքներ տեղալով Թեհրանի իշխանությունների հասցեին:

Այս ամբողջ թոհուբոհի վերջնական նպատակն էր Իրանական Ադրբեջանը անջատել Իրանի կազմից և միացնել Խորհրդային Ադրբեջանին: Այդ ծրագրի իրականացումը իր լրիվ ծավալով չհաջողվելու դեպքում առկա էր նաև պահեստային տարբերակ՝ այսպես կոչված «ադրբեջանական» և «քրդական» պրոբլեմներն օգտագործել Իրանից առավելագույն տնտեսական և քաղաքական զիջումներ կորզելու համար:

1945 թ. նոյեմբերին Թավրիզում գումարված «ժողովրդական ժողովը» ընդունեց մի հռչակագիր, որի մեջ առաջ էր քաշվում Ադրբեջանին «լայն ինքնավարություն» տրամադրելու հարցը: Ընդամենը մեկ ամիս հետո՝ դեկտեմբերին, Թավրիզում գումարվեց Ազգային ժողով՝ մեջլիս, որի որոշմամբ ձևավորվեց այսպես կոչված Իրանական Ադրբեջանի ազգային կառավարությունը: Այսպիսով՝ իրադարձությունները սրընթաց տանում էին դեպի իրանական պետությունից նրա կարևորագույն նահանգներից մեկի անջատմանը:

«Դեմոկրատների» իշխանության գլուխ գալուց հետո սկսեցին ձայներ հնչել նաև Ադրբեջանի երկու մասերի՝ Հյուսիսային և Հարավային Ադրբեջանի միավորման և ԽՍՀՄ-ի կազմում միասնական ադրբեջանա-

կան պետության ստեղծման վերաբերյալ:

Իրանական Ադրբեջանի ազգային կառավարությունը իրար հետևից ընդունում էր կոմունիստական ոգով օրենքներ, որոնք կոչված էին օրինականացնել Ադրբեջանի «անկախությունը»: Այնուհետև նա զինաթափ արեց Իրանական Ադրբեջանում տեղակայված կառավարական զորքերին և ստեղծեց սեփական զինված ուժեր, որոնք բարձրագոչ կերպով կոչվեցին ժողովրդական աշխարհազոր: Թուրքերենը հայտարարվեց Իրանական Ադրբեջանի ազգային կառավարության պաշտոնական լեզու: Բոլոր նրանք, ովքեր չէին ընդունում այդ ապօրինի իշխանությունը, հայտարարվում էին «հետադիմականներ» և հալածանքների ենթարկվում:

1945 թ. վերջին Մոսկվան նույնանման շարժում հրահրեց նաև Իրանական Քրդստանում: Այստեղ ևս ստեղծվեց այսպես կոչված Քրդստանի դեմոկրատական կուսակցություն, որի ղեկավար կարգվեց տեղական քրդական առաջնորդներից մեկը՝ Ղազի Մոհամմադը, որը միաժամանակ հանդիսանում էր մուքրի քրդական ցեղերի համադաշնության կրոնական ղեկավարը: Շարժման կենտրոնը Մեհաբադ քաղաքն էր: Քրդերը ևս առաջ քաշեցին «ազատ, ինքնավար և ժողովրդավարական Քրդստանի» պահանջը: Նույն սցենարով 1945 թ. հոկտեմբերի 25-28-ին Մեհաբադ քաղաքում (նախկինում՝ Սոուջբուլաղ) տեղի ունեցած Քրդստանի դեմոկրատական կուսակցության «առաջին համագումարում» ընդունվեց հռչակագիր, որտեղ շարադրվում էին «Ինքնավար Քրդստանի» պահանջները: 1946թ. հունվարին Մեհաբադում գումարվեց շրջանային էնջումեն, որը ձևավորեց «քուրդ դեմոկրատների» «ինքնավար կառավարություն»՝ Ղազի Մոհամմադի գլխավորությամբ, որը նույնպես զինաթափ արեց կառավարական զորքերին և ստեղծեց սեփական զինված ուժեր: Իրանական Քրդստանի անջատողական շարժումը աջակցություն գտավ 1945 թ. հոկտեմբերին Իրաքից Իրանական Քրդստան անցած բարզան ցեղի քրդերի կողմից: Մոլլա Մուստաֆա Բարզանիի հրամանատարության ներքո կազմվեցին Մեհաբադի կառավարության զինված ուժերի մի մասը:

1946 թ. հունվարի 22-ին Քրդական դեմոկրատական կուսակցության ղեկավարները հայտարարեցին Քրդական Ինքնավար հանրապետության ստեղծման մասին:

Իրանական կառավարությունը բնականաբար չճանաչեց «ինքնավար Ադրբեջանի ու Քրդստանի» գոյությունը:

Դեռևս 1945 թ. նոյեմբերին (17-ին, 22-ին և 23-ին) վարչապետ Հաքիմիի կառավարությունը եռիցս խորհրդային կառավարությանը հղեց բողոքի նոտաներ, որոնցում խորհրդային պաշտոնատար անձանց (Քերի-

ա, Քաղիրով և այլք) մեղադրում էր Իրանի ներքին գործերին միջամտելու մեջ և խորհրդային իշխանություններից պահանջում անհապաղ կարգադրություններ անել, որպեսզի իրանական զինված ուժերը ազատ իրավունք ունենան մուտք գործելու Իրանական Ադրբեջան: Սակայն Խորհրդային Միության պատասխանը բացասական էր:

Գնալով Իրանական Ադրբեջանի և Քրդստանի հարցը ձեռք էր բերում միջազգային հնչեղություն: Անգլիայի համայնքների պալատում այդ հարցի վերաբերյալ իր ելույթում արտաքին գործերի պետական քարտուղար Բևինը ադրբեջանցիների անջատողական շարժումը բնութագրեց որպես «բոնություն»:

Այդ օրերին ամբողջ երկրով մեկ իր հակակառավարական գործունեությունն ակտիվացրել էր նաև կոմունիստական «Հեզբ-ե թուդե-ե Իրան» կուսակցությունը, որը կազմակերպում էր գյուղացիական հուզումներ, քաղաքային բնակչության գործադուլներ և այլն:

1946 թ. հունվարին վարչապետ Հաքիմիի կառավարությունը, անզոր լինելով սեփական ուժերով հակազդելու անջատողական այդ շարժումներին, դիմեց Միավորված Ազգերի Կազմակերպությանը՝ պահանջելով հատուկ քննարկման առարկա դարձնել «Իրանի ներքին գործերին Խորհրդային Միության միջամտության հարցը»: Սակայն ՄԱԿ-ի որոշումները անտեսվեցին Մոսկվայի և նրա արբանյակների՝ Ադրբեջանի և Քրդստանի «կառավարությունների» կողմից: Ի. Ստալինը Իրանական Ադրբեջանի տարածքից խորհրդային զորքերի դուրսբերումը կապում էր Իրանի հյուսիսային շրջաններում նավթի հանքավայրերը ԽՍՀՄ-ին որպես կոնցեսիա տրամադրելու հարցի հետ:

Իրանում սկսվեց կառավարական ճգնաժամ: Հաքիմիի կառավարությունը ստիպված էր հրաժարական տալ, և 1946 թ. հունվարի 27-ին վարչապետի պաշտոնը զբաղեցրեց քաղաքական մեծ փորձ ունեցող և ճարպիկ դիվանագետ Ահմեդ Ղավամ էս-Սալթանեն, որը, հիանալի գիտակցելով, թե ինչպիսի վտանգ կարող է սպառնալ բացահայտ առճակատումը Խորհրդային Միության հետ, սկսեց վարել բարդ, բազմաքայլ և հիանալի հաշվարկված քաղաքականություն: Նա անմիջապես դադարեցրեց հալածանքները «դեմոկրատական կազմակերպությունների» նկատմամբ՝ միաժամանակ հրաժարվելով նախկին կառավարության հակասովետական շեշտված քաղաքական կուրսից: Ավելին՝ Ղավամի կառավարությունը նույնիսկ վերացրեց երկրում «դեմոկրատական կազմակերպությունների» գործունեության ճանապարհին եղած սահմանափակումները: Նա կալանքից ազատեց «Թուդե» կուսակցության ձերբա-

կալված գործիչներին, թույլ տվեց նրա քաղաքական ակումբների ազատ և անկաշկանդ գործունեությունը, նրա հրամանով «դեմոկրատական քերթերի» հրատարակման վրա դրված արգելքը հանվեց, թույլ տրվեց ժողովների և հանրահավաքների գումարումը և այլն: Այնուհետև պաշտոններից հեռացվեցին կոմունիստների կողմից «հետադեմ» հռչակված մի շարք գործիչներ, ինչպես, օրինակ, գլխավոր շտաբի պետ գեներալ Արֆան, Թեհրանի զինվորական ցահանգապետը և այլք: Ձերբակալվեցին նաև «հետադիմականի» պիտակ կրող բազմաթիվ քաղաքական ղեկավարներ՝ Սեյիդ Զիա էդ Դինը, Դաշտին, Թահերին, Իմամին և այլք: Միաժամանակ Խորհրդային Միության ներկայացուցիչների հետ զրույցների ժամանակ Ղավամը վստահեցնում էր նրանց, որ ինքը կաջակցի Մոսկվային՝ ստանալու «Հյուսիսային Իրանի նավթը»:

Մոսկվան, սակայն, ի վիճակի չեղավ կոահելու «հին աղվեսի» խաղի հետին նպատակները: Նրան թվաց, թե Իրանի քաղաքական ղեկավարության կամքը արդեն ընկճված է, և նա այլևս ընտրություն կատարելու ոչ մի հնարավորություն չունի, ավելին՝ իր «գրպանում է»:

1946թ. փետրվարի 18-ին Իրանի վարչապետը մի ստվարաթիվ պատվիրակության հետ մեկնեց Մոսկվա՝ բանակցություններ վարելու: Նա իր հետ որպես խայծ տանում էր երկու բան՝ իրանական դիվանագիտության ավանդական «փափուկ բարձը» և իրանական նավթի գայթակղությունը:

Մոսկովյան բանակցությունների ընթացքում խորհրդային ղեկավարությունը հայտարարեց, որ զորքերի դուրսբերումը Իրանից կավարտվի 1946 թ. մայիսի 6-ին:

Այդ հայտարարությանը նախորդեցին ԱՄՆ-ի կողմից մարտի 6-ին և 8-ին ԽՍՀՄ-ին ուղղված նոտաները, որոնցում պահանջվում էր, որ Մոսկվան իր զորքերը դուրս բերի Իրանի տարածքից: Սակայն այդ նոտաները մնացին անպատասխան: Ուստի ԱՄՆ-ի նախագահ Տրումենը Ստալինին ուղարկեց իր երրորդ ուղերձը, որը հասցեատիրոջը հանձնելու համար Մոսկվա պետք է տաներ այնտեղ դեսպան նշանակված Վ. Սմիթը: Սենատոր Հենրի Ջեկսոնը իր հուշերում վկայում է, որ Տրումենը Սպիտակ տուն էր հրավիրել ԱՄՆ-ում խորհրդային դեսպան Ա. Գրոմիկոյին և նրան հայտարարել, որ եթե խորհրդային բանակը անհապաղ դուրս չգա Իրանից, ապա ԱՄՆ-ը նրա դեմ կօգտագործի ատոմային ռումբ:

Մոսկվայում Ղավամ էս-Սալթանեն վարպետորեն առաջ էր տանում բանակցությունները: Նա չորս անգամ հանդիպեց արտգործմինիստր Վ. Մոլոտովի և երկու անգամ Ի. Ստալինի հետ: Ե՛վ իրանական նավթի, և՛ Ադրբեջանի ինքնավարության հարցերը քննարկելիս նա դնում էր Իրա-

նից խորհրդային զորքերի դուրսբերման նախապայմանը: Ղավամը համբերատար կերպով լսում էր նաև Ի. Ստալինի դատողությունները Իրանում «սոցիալ-տնտեսական բարեփոխումներ» իրականացնելու անհրաժեշտության մասին՝ նկատելով, որ դրանց իրականացումը հնարավոր կդառնա միայն այն դեպքում, երբ Իրանին հանգիստ թողնեն:

Մոսկվայում բանակցությունները ավարտվեցին 1946 թ. ապրիլի 4-ին՝ առանց որևէ փաստաթուղթ ստորագրելու: Որոշվեց դրանք շարունակել Թեհրանում, որտեղ խորհրդային կողմից բանակցելու էր ԽՍՀՄ-ի դեսպանն Իրանում:

Այդ օրերին Մոսկվա մեկնեց շահի քույրը՝ Աշրաֆը, որը Ստալինի հետ բանակցությունների ժամանակ համոզում էր նրան չաջակցել Ադրբեջանի Հանրապետությանը, քանի որ այդ խամաճիկային «պետությունը» հետագա տարիների ընթացքում կսրի հարաբերությունները երկու երկրների միջև:

Ուշագրավ է նշել, որ Ստալինի հետ բանակցությունների ժամանակ դեսպան Սմիթը ոտղակի հարցնում է նրան, թե Խորհրդային Միությունը «որքան հեռու է շարժվելու դեպի Թուրքիայի կողմը»: Ստալինը պատասխանում է, որ թեև Թուրքիան իրեն պահում է ոչ բարեկամաբար և չափազանց թույլ է նեղուցները պաշտպանելու համար, սակայն ԽՍՀՄ-ը ագրեսիվ պլաններ չունի նրա նկատմամբ:

1946 թ. ապրիլի 4-ին Թեհրանում Ղավամ էս-Սալթանեն և Իրանում Խորհրդային Միության դեսպան Ի. Սադչիկովը ստորագրեցին համաձայնագիր, որտեղ նշվում էր, որ կողմերը համաձայնության են եկել ստեղծելու խառը սովետա-իրանական մի ընկերություն Հյուսիսային Իրանում նավթի հանքավայրերի հետախուզման ու շահագործման վերաբերյալ: Որպես ընկերության գործունեության ժամկետ որոշվում էր 50 տարի: Համաձայնագրում հատուկ կետ կար այն մասին, որ այն ստորագրելուց հետո մեկ ու կես ամսյա ժամկետի ընթացքում Խորհրդային Միությունը պարտավորվում է իր զորքերը դուրս բերել Իրանի տարածքից:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի և Քրդստանի խնդրին, ապա համաձայնագրում այն հայտարարվում էր որպես Իրանի «ներքին գործ»:

Մոսկվան հավատ ընծայեց Ղավամի հավաստիացումներին, որովհետև դրանք կուռ էին և տրամաբանական: Այսպես՝ Ի. Ստալինին գրած իր գաղտնի նամակում նա նշում էր, որ խորհրդային զորքերի դուրսբերման հետաձգումը մեծ բարդություններ կստեղծի իր համար իր նախանշած քաղաքական ծրագրերն իրագործելիս: Առանց խորհրդային զորքերի դուրսբերման ինքը ի վիճակի չի լինի կազմակերպել

նոր գումարման մեջլիսի ընտրությունների անցկացումը, իսկ առանց մեջլիսի հնարավոր չէ ամրապնդել իր իշխանությունը:

Ամենայն հավանականությամբ Ղավամը լուրջ տպավորություն էր թողել Ստալինի վրա և նրա մոտ առաջ բերել թյուր տպավորություն, որ նրա կառավարությունը հակված է դեպի ձախ և ըղձորեն մտադիր է բարեկամական հարաբերություններ հաստատել Խորհրդային Միության հետ:

Անշուշտ, այդ բոլորը մի ճկուն խաղ էր Ղավամի կողմից: Նա բնավ մտադիր չէր գործնականում իրագործելու իր ստորագրած փաստաթուղթը: Նրա նպատակն էր ամեն գնով խորհրդային զորքերը դուրս բերել տալ իր երկրի տարածքից և ժամանակ շահել Ադրբեջանի և Քրդստանի «ինքնավարական շարժումը» զենքի ուժով ջախջախելու համար: Ինքը՝ Ղավամը, հետևյալ կերպ է բնութագրել իր մարտավարությունը Մոսկվայում Ստալինի հետ բանակցությունների ժամանակ. «Երբ դու գործ ունես առյուծի հետ, ապա շողոքորթիր ու սիրաշահիր նրան, մի՛ ձգտիր հակադարձել նրան քո ճանկերով»: Ղավամը մեկ այլ առիթով ծաղրանքով ասել էր Թեհրանում Խորհրդային Միության դեսպանին. «ԽՍՀՄ-ից կարելի է խնդրել ամեն ինչ՝ չտալով ոչինչ»:

Անդրադառնալով իր մոսկովյան բանակցություններին, ի միջի այլոց Ղավամը ասել է. «Ես մեկնեցի Մոսկվա մաքուր սրտով ու հոգով դեպի ռուսները, բայց վերադարձա Թեհրան նենգությամբ ու խարդավանքով լի գլխով»:

1946 թ. ամռանը Ղավամ էս-Սալթանեի կառավարությունը բանակցություններ սկսեց «դեմոկրատական Ադրբեջանի» ղեկավարության հետ, որոնք ավարտվեցին հունիսի 13-ին Թավրիզում համաձայնագրի ստորագրմամբ: Թեհրանը ճանաչում էր Ադրբեջանի ազգային մեջլիսը և Ադրբեջանի կառավարությանը, միաժամանակ համաձայնվելով ընդունել նրանց ներկայացրած բազմաթիվ պահանջները: Այնուհետև՝ կառավարությունը հրապարակեց օրենք գյուղացիության շրջանում պետական հողերը բաժանելու վերաբերյալ: Առհասարակ, «դեմոկրատների» ձեռքից խլելով նախաձեռնությունը՝ Ղավամը իր բազմաթիվ ռադիոելույթներում հանդես էր գալիս հետադիմականների, Իրանի առաջադիմության թշնամիների և «օտարերկրյա գործակալների» դեմ և խոստանում էր ամբողջ երկրում իրագործել «ժողովրդական առաջադիմական բարեփոխումներ», «վերջ տալ նախկին կառավարությունների հակախորհրդային արտաքին քաղաքականությանը» և վարել հավասարակշռության սկզբունքի վրա խարսխված արտաքին քաղաքականություն:

Վարպետ ձկնորսի դրած խայծը կուլ տվեց ոչ միայն Մոսկվան, այլև Իրանի «դեմոկրատական հասարակայնությունը», այսինքն՝ կոմունիստները և կոմունիստամետ տարրերը, որոնք հավատացին Ղավամի անկեղծությանը: Խաղն այն աստիճանի վարպետ էր, որ Մոսկվան և իրանական կոմունիստները ոչ միայն սկսեցին գովել Ղավամի «պրոգրեսիվ քաղաքականությունը», այլև նրա կառավարությանը սկսեցին ցուցաբերել լայն աջակցություն:

Բայց դա դեռ բոլորը չէր: Ամենայն հավանականությամբ, անգլիացիների հուշումով Ղավամ էս-Սալթանեն կազմակերպեց Ադրբեջանի և Քրդստանի անջատողական շարժման նկատմամբ «հանդիպակա» մի շարժում երկրի հարավում, որի նպատակն էր բորբոքել Իրանի հասարակական կարծիքը ընդդեմ ազերիական և քրդական սեպարատիզմի ու միաժամանակ համոզել Արևմուտքի քաղաքական շրջաններին, որ գործը նման հունով ընթանալու դեպքում Իրանին սպառնում է ապակայունացման, մասնատման և առհասարակ «կոմունիստական վտանգը»: Մասնավորապես Իրանի հարավում կազմակերպվեց այսպես կոչված Խուզիստանի ցեղերի միությունը, որն առաջ քաշեց Խուզիստանը Իրանի կազմից անջատելու և այն Իրաքին միացնելու պահանջը՝ որպես հիմնավորում բերելով այն փաստարկը, որ Խուզիստանի արաբ բնակչությունը միշտ էլ ձգտել է միավորվել իր «արաբ եղբայրների հետ»:

Միաժամանակ աննկատ ու զգույշ կերպով Ղավամ էս-Սալթանեն ուժեր էր կուտակում հակագրոհի անցնելու համար: 1946 թ. հունիսի 23-ին նա հրապարակեց մի հռչակագիր, որտեղ վճռական ու կոշտ տոնով հայտարարվում էր, որ ինքը թույլ չի տա, որ ժողովրդավարության անվան տակ երկրում տիրի անիշխանություն, անկարգություններ ու խռովություններ: Այդ հռչակագրի հրապարակումից մի քանի օր անց՝ հունիսի 29-ին, իր ռադիոելույթում Ղավամը հայտարարեց, որ ինքը ստեղծում է քաղաքական մի կուսակցություն, որը կոչվելու է Իրանի ժողովրդական կուսակցություն: Նրա ծրագրում հայտարարվում էր, որ կուսակցության նպատակն է ապահովել Իրանի անկախությունը, տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը, բարելավել գյուղացիների և բանվորների վիճակը, արմատական բարեփոխումներ իրականացնել առողջապահության, ժողովրդական կրթության, դատական և հարկային համակարգի բնագավառներում, զարկ տալ արդյունաբերությանը և այլն:

Հռչակագրում և կուսակցության ծրագրում սքողված ձևով կոչ էր պարունակվում՝ ուղղված իրանական ժողովրդի «հայրենասեր ու առողջ

մասին»՝ զինվորագրվելու կուսակցությանը երկիրը վերահաս կործանումից փրկելու նպատակով: Կուսակցության շարքերի համալրումը տեղի էր ունենում հուժկու թափով: Նրան անդամագրվում էին իրանական հասարակայնության ամենատարբեր խավերի ներկայացուցիչներ: Նրա կազմի մեջ մտան նաև բազմաթիվ ականավոր քաղաքական գործիչներ: Ժողովրդական կուսակցության շուրջը սկսեցին համախմբվել բոլոր նրանք, ովքեր մտահոգված էին երկրի ճակատագրով: Կուսակցության տեղական կազմակերպությունները կենտրոնի հրահանգով հուժկու գրոհ նախաձեռնեցին «Թուդե» կուսակցության դեմ:

Աստիճանաբար «կոմունիստական շարժման» դեմ պայքարի մեջ ընդգրկվեցին նաև բանակը, ոստիկանությունը, ժանդարմերիան և ողջ պետական ապարատը: Կազմակերպվեցին այսպես կոչված «ազգային փրկության» ջոկատներ: Իրանի համարյա բոլոր նահանգներում բողոքի շարժում սկսվեց Իրանական Ադրբեջանն ու Քրդստանը երկրից անջատելու փորձերի դեմ: Այդ շարժման մասնակիցները պահանջում էին նաև կառավարության կազմից հեռացնել կոմունիստներին:

1946 թ. օգոստոսի 1-ին Ղավամ էս-Մալթանեն կատարեց մի այնպիսի նոր քայլ, որի էությունը սկզբում շատ քչերը հասկացան. նա վերակառուցեց իր կաբինետը՝ նրա կազմի մեջ որպես մինիստր մտցնելով «Թուդե» կուսակցության անդամ երեք գործիչների՝ Իրաջ Էսքանդերիին, Քեշավարզիին և Յազդիին: Այդ քայլը նպատակ ուներ նախ՝ պառակտել կոմունիստներին և ապա՝ վարկաբեկել նրանց որպես «հակադեմոկրատական պայքարի» մասնակիցների: Իսկապես, նոր կաբինետի օրոք «Թուդե» կուսակցության նկատմամբ հալածանքներն ավելի ուժեղացան: «Աննկատելի ձեռքը» շարժման մեջ դրեց նաև երկրի հարավի թյուրքալեզու և պարսկալեզու քոչվոր ցեղերին (ղաշղայի, բոյուրահմեդի, մամասանի և այլն), որոնք պայքար ծավալեցին միաժամանակ երկու ճակատներով՝ Ադրբեջանի և «Թուդե» կուսակցության դեմ՝ սպառնալով, որ եթե Ադրբեջանի ինքնավարությունը չվերացվի, իրենք ևս Ադրբեջանի օրինակով Ֆարսի նահանգում կպայքարեն հանուն այդ նահանգի ճիշտ այնպիսի ինքնավարության, ինչպիսին առկա է Իրանական Ադրբեջանում: Ցեղերի այդ շարժումը Թեհրանի կառավարությունը գնահատեց որպես «ազգային շարժում», որի շարժիչ ուժը իբր հայրենասիրությունն է և երկրի անկախության և տարածքային ամբողջականության պահպանման ազնիվ մղումը: 1946 թ. հոկտեմբերի 16-ին Ղավամի կառավարությունը ապստամբների հետ կնքեց համաձայնագիր Իրանական Ադրբեջանի անջատողականների դեմ համա-

տեղ գործողություններ ծավալելու վերաբերյալ:

1946 թ. հոկտեմբերին Ղավամը վերակազմակերպեց իր կառավարությունը՝ նրանից հեռացնելով Իրանի ժողովրդական կուսակցության («Թուդե») անդամ մինիստրներին, որոնք այլևս պետք չէին իրեն: Երկրի մի շարք նահանգներում կառավարությունը մտցրեց ռազմական դրություն: Խզվեցին նաև բանակցությունները իրանական կառավարության և ադրբեջանական պատվիրակության միջև, որը հեռացավ Թեհրանից: Հոկտեմբերի վերջին Թեհրանում հրատարակվող թերթերը սկսեցին բուռն քարոզարշավ մղել՝ կառավարությունից պահանջելով զորքեր ուղարկել Ադրբեջան:

Նոյեմբերի 21-ին Ղավամի կառավարությունը հրապարակեց մի շրջաբերական այն մասին, որ ապագա՝ տասնհինգերորդ մեջլիսի ազատ ընտրությունները ապահովելու նպատակով կառավարությունը որոշել է բոլոր նահանգներն, այդ թվում նաև Ադրբեջան, ուղարկել բավարար քանակությամբ ժանդարմներ ու զորքեր: ԱՄՆ-ն անմիջապես հանդես եկավ այդ շրջաբերականին աջակցելու նախաձեռնությամբ: Թեհրանում ամերիկյան դեսպան Ալլենը հայտարարեց, որ «իրանական կառավարության որոշումը երկրի բոլոր կետերը զորքեր ուղարկելու վերաբերյալ, որը պայմանավորված է մեջլիսի ընտրությունների ժամանակ հանգստությունն ապահովելու նկատառումներով, հանդիսանում է միանգամայն բնականոն և տեղին գործ»:

Մոսկվան դեռևս համառում էր իր զորքերը դուրս բերել Իրանի տարածքից: Միայն այն բանից հետո, երբ 1946 թ. ԱՄՆ-ը վերջնագիր ներկայացրեց Խորհրդային կառավարությանը, վերջինս ստիպված էր ընկրկել և գնալ այդ քայլին՝ «Դեմոկրատական Ադրբեջանը և Քրդստանը» թողնելով ճակատագրի քմահաճույքին:

Ի դեպ, զորքերի դուրսբերման նախօրյակին Քաղիրովը զանգահարել է Ստալինին և ասել. «Եթե մեր զորքերը հեռանան, Ադրբեջանի Հանրապետությունը կփլուզվի»: Դրան հետևել է Ստալինի պատասխանը. «Մենք պետք է հեռանանք, քանի որ չենք կարող դիմադրել ամբողջ աշխարհին: Ես ցավում եմ, բայց մեր զորքերը պետք է դուրս հանվեն»:

Պարսիկ հետազոտող Ֆ. Ազիմին «ռուսների հանգիստ վերաբերմունքը Թավրիզում և Մեհաբադում հաստատված վարչակարգերի անկման նկատմամբ» իրավացիորեն բացատրում է նրանով, որ Մոսկվան հույս ուներ, թե ինքը կստանա Թեհրանի կողմից խոստացված նավթային կոնցեսիան:

1946 թ. դեկտեմբերի 10-ին Ղավամ էս-Սալթանեի հրամանով իրանական զորքերը շարժվեցին դեպի Իրանական Ադրբեջան: Որպես այդ

գործողության պատրվակ օգտագործվեց մեջլիսի ընտրությունների անվտանգությունն ապահովելը: Պատժիչ գործողությունը ղեկավարում էր իրանական բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Ռազմարան: Երկրամասի բոլոր շրջաններում հայտարարվեց ռազմական դրություն, և սկսվեցին Աղրբեջանի դեմոկրատական կուսակցության ղեկավարների ձերբակալություններ: Կուսակցությունը հայտարարվեց օրենքից դուրս: Մի քանի հազար մարդ ոչնչացվեց կամ աքսորվեց: «Դեմոկրատների» մի մասին հաջողվեց անցնել ԽՍՀՄ սահմանը և փրկվել: Բանակին հրամայված էր, «հանուն օրինականության և կարգ ու կանոնի վերականգնման», գործել վճռականորեն: Այն բոլոր որոշումներն ու միջոցառումները, որոնք իրականացվել էին «աղրբեջանական դեմոկրատների» կողմից, չեղյալ հայտարարվեցին: Թեհրանը Աղրբեջանի գեներալ-նահանգապետ նշանակեց Ռեզա շահի ժամանակ վարչապետի պաշտոնը զբաղեցրած Ալի Մանսուրին:

Աղրբեջանից հետո զորքերն ուղարկվեցին Քրդստան և այնտեղ ևս վերահաստատեցին կենտրոնական կառավարության իշխանությունը: «Ինքնավար Քրդստանի» ղեկավար Ղազի Մոհամմադը, նրա եղբայր Ղազի Սաղրը և նրանց մեկ այլ մոտիկ ազգական կախաղան բարձրացվեցին:

Այսպիսով՝ վերականգնվեց իրանական պետության ինքնիշխանությունը Իրանական Աղրբեջանի և Քրդստանի նկատմամբ:

Այդ իրադարձություններից հետո XV գումարման մեջլիսը 1947 թ. հոկտեմբերի 22-ին իր օրակարգում դրեց 1946 թ.ապրիլի 4-ի սովետա-իրանական նավթային համաձայնագրի հաստատման հարցը: Իր ելույթում Ղավամ էս-Սալթանեն առաջարկեց չհաստատել այն: Մեջլիսը ձայների մեծամասնությամբ ռատիֆիկացման չենթարկեց այդ համաձայնագիրը՝ այն համարելով անվավեր ու չեղյալ:

Այսպիսով, Իրանի վարչապետը հասել էր իր նպատակին: Երկրի քաղաքական շրջաններում հիացած էին Ղավամի ճարպկությամբ: Նրա գործողությունները համեմատում էին ճյուդո ըմբշամարտի հնարքների հետ: Իրանական ժողովուրդը ևս տոնում էր երկրի միասնության ու տարածքային ամբողջականության ուղղությամբ մղված ծանր պայքարի ճանապարհին ձեռք բերված խոշոր հաղթանակը:

3. ԻՐԱՆԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Երկրորդ աշխարհամարտից հետո իրանա-ամերիկյան հարաբերությունները սկսեցին արագորեն զարգանալ: Ղավամ էս-Սալթանեի կառավարությունը որդեգրեց արևմտյան աշխարհի առավել հզոր պետության՝ ԱՄՆ-ի հետ սերտ համագործակցության կուրս: Այդ քաղաքականությունը Ղավամը անվանում էր «երրորդ ուժի կոնցեպցիա»: Այն ենթադրում էր ԱՄՆ-ի օգնությամբ հակազդել Իրանում Խորհրդային Միության ու «կոմունիստական վտանգին»: Մյուս կողմից՝ գնալով մեծանում էին ԱՄՆ-ի տնտեսական, ռազմական և քաղաքական հետաքրքրությունները Իրանի նկատմամբ:

1947 թ. հունիսին Վաշինգտոնում կնքված համաձայնագրով Իրանին հատկացվեց վարկ՝ 25 միլիոն դոլար գումարով, որը նախատեսված էր զենք և սպառազինություն գնելու համար:

Ամերիկյան ռազմական խորհրդականները ծրագիր մշակեցին իրանական ռազմական արդյունաբերությունը վերակառուցելու համար, որպեսզի իրանական ռազմական գործարանները ի վիճակի լինեին արտադրելու և վերանորոգելու ամերիկյան զենքեր: ԱՄՆ-ը ձգտում էր Միջին Արևելքում Իրանը վերածել իր ռազմա ստրատեգիական կարևորագույն հենակետերից մեկի: Ամերիկացիները Իրանի մի շարք քաղաքներում (Ռեշտ, Բաբոլսար, Ղում և այլն) կառուցեցին ռազմական օդանավակայաններ, թռիչքային հրապարակներ, Պարսից ծոցում՝ նավահանգիստներ և այլն:

1947 թ. հոկտեմբերի 6-ին Ղավամի կառավարությունը ԱՄՆ-ի հետ կնքեց մի համաձայնագիր, ըստ որի Իրանում գործելու էր ամերիկյան ռազմական խորհրդականների մի խոշոր խումբ: Իսկ իրանական ժանդարմերիայում մեծ ազդեցություն ուներ ամերիկյան գեներալ Շվարցկոպֆը:

1947 թ. դեկտեմբերի 10-ին Ղավամ էս-Սալթանեն մեջլիսում վստահության քվե չստացավ և ստիպված էր թողնել վարչապետի պաշտոնը: Նոր վարչապետ նշանակվեց Իբրահիմ Հաքիմին: Վերջինս մեջլիսում հայտարարեց մամուլի ներկայացուցիչներին, որ իր կառավարությունը շարունակելու է օգտվել ԱՄՆ-ի ռազմական օգնությունից, և որ իրանական բանակում ամերիկյան ռազմական խորհրդականները կշարունակեն իրենց գործունեությունը:

1948 թ. մայիսին Հաքիմիի կառավարությունը մեջլիս մտցրեց մի օրինագիծ Իրանի տնտեսական զարգացման յոթնամյա պլանի մասին, որը կազմելու գործում ակտիվ մասնակցություն էին ցուցաբերել ամերիկյան խորհրդականները: Այն կոչված էր լուծելու օրախնդիր տնտեսական պրոբլեմներ:

Հետպատերազմյան շրջանում Մեծ Բրիտանիան եռանդուն ջանքեր էր գործադրում իր տնտեսական և քաղաքական դիրքերը Իրանում անփոփոխ պահելու ուղղությամբ: Այդ նպատակով 1947 թ. դեկտեմբերի վերջին Իրան ժամանեց Անգլիայի ականավոր քաղաքական գործիչներից մեկը՝ Անտոնի Իդենը: Նախկինի պես Իրանում անգլիացիների ձեռքերում կարևորագույն լծակ էր հանդիսանում Անգլո-իրանական նավթային ընկերությունը:

1947 թ. մարտի 12-ին նախագահ Տրումենը հրապարակեց «հետամնաց երկրներին օգնելու» մի ծրագիր, որը հայտնի էր «Տրումենի դոկտրին» անունով: Այն իր հիմնական նպատակն էր հայտարարում Հունաստանի և Թուրքիայի անկախության ու անձեռնմխելիության պահպանումը: Այդ ծրագիրը նախատեսում էր նաև ամերիկյան կապիտալ ներդրումներ Աֆրիկայում, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, Հնդկաստանում և Պակիստանում: «Տրումենի դոկտրինի» մեջ առանձնահատուկ տեղ էր հատկացվում Իրանին՝ նկատի ունենալով նրա ռազմավարական կարևոր դիրքը և այլ գործոններ:

1949 թ. պաշտոնական այցով Մոհամմադ Ռեզա շահը մեկնեց ԱՄՆ: Վաշինգտոնում իր պատվին կազմակերպված ընդունելության ժամանակ նա հայտարարեց, որ Իրանը Միացյալ Նահանգների հետ համագործակցության կարիք ունի «ազգային պաշտպանության, տնտեսական զարգացման և սոցիալական առաջադիմություն ձեռք բերելու բնագավառներում»: Բանակցությունների հետևանքով կողմերը պայմանավորվեցին, որ ԱՄՆ-ը շարունակելու է Իրանին տրամադրել ռազմական, տեխնիկական և տնտեսական օգնություն:

1949 թ. դեկտեմբերի 29-ին այցի կապակցությամբ հրապարակված իրանա-ամերիկյան համատեղ կոմյունիկեում նշվում էր, որ ԱՄՆ-ը Իրանում ունի «նշանակալից շահեր», ուստի Վաշինգտոնը որդեգրում է «Իրանի անկախության և տարածքային ամբողջականության պահպանման քաղաքականություն»:

Գնալով ընդլայնվում էին նաև իրանա-ամերիկյան առևտրատնտեսական հարաբերությունները: Իրանական շուկան հեղեղված էր ամերիկյան ապրանքներով:

1950 թ. մայիսի 23-ին Վաշինգտոնում ստորագրվեց ռազմական պայմանագիր ԱՄՆ-ի և Իրանի միջև: Պայմանագիրը նախատեսում էր կրկնապատկել Իրանում ռազմական խորհրդականների թիվը: Այն նախատեսում էր նաև ամերիկյան զենքի ու զինամթերքի նոր մատակարարումներ Իրան, ընդ որում՝ անհատույց կերպով կամ ձրի: ԱՄՆ-ը «Տրումենի դոկտրինի» 4-րդ կետի համաձայն, Իրանին սկսեց ցուցաբերել նաև տեխնիկական օգնություն:

1950 թ. հոկտեմբերի 19-ին կնքվեց մեկ այլ համաձայնագիր, որով ԱՄՆ-ը, պարտավորվում էր տեխնիկական օգնություն ցուցաբերել Իրանին գյուղատնտեսությունը զարգացնելու համար: Այդ համաձայնագրի նպատակն էր հայտարարվում «գյուղատնտեսական շրջանների բնակչության կենսամակարդակի և աշխատանքի արտադրողականության բարձրացումը»:

Շահի ամերիկամետ քաղաքականությունը հանդիպում էր շիիթական հոգևորականության դիմադրությանը: Այդ ուղղությամբ հատկապես եռանդուն գործունեություն ծավալեցին «Ֆեդայան-ե էսլամ» և «Մոջահեդին-ե էսլամ» գաղտնի կրոնական կազմակերպությունները: Սրանք գտնում էին, որ երկիրը պետք է ղեկավարեն կրոնական մարդիկ, և ունեին շեշտված հակաարևմտյան դիրքորոշում: Այդ կազմակերպությունների անդամները զինված էին և չէին խորշում ահաբեկչական գործողություններից: «Ֆեդայան-ե էսլամի» անդամները իրենց ղեկավար Նավաբ Սաֆավիի գլխավորությամբ հանճարարարությունները կատարում էին առանց անձնական անվտանգությունն ապահովելու, այսինքն՝ նրանք փաստորեն ինքնասպան-կամիկաձեներ էին: Այդ կազմակերպության առաջին ահաբեկչական ակտը տեղի ունեցավ 1946 թ., երբ հենց դատարանի դահլիճում սպանվեց հայտնի պատմաբան Ահմադ Քասրավին, որի բարենորոգչական ծրագրերն անհարիր էին բարձր հոգևորականության շահերին: Հաջորդ ահաբեկչական ակտը 1951 թ. մարտին վարչապետ գեներալ Ռազմարայի սպանությունն էր:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԻՐԱՆԸ ՆԱՎԹԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՉԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՇԱՐԺՄԱՆ ԾՐՋԱՆՈՒՄ (1950-1953 թթ.)

Իրանական ժողովրդի մոտ գնալով հասունանում էր իր սեփական երկրի հարստություններին տեր կանգնելու գիտակցությունը: Դրան խթանող կարևորագույն գործոն էր հանդիսանում երկրի տնտեսական վիճակի հարաճուն վատթարացումը: Տեղի էր ունենում սպառողական ապրանքների մշտական թանկացում: Հացի և ցորենի գները աճել էին աննախադեպ չափերով: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո իրանական տնտեսությունը ապրում էր անկման շրջան: Բազմաթիվ գործարար մարդիկ սնանկացան: Գործարանները մեկը մյուսի հետևից փակվում էին: Առաջացել էր գործազուրկների հսկայական բանակ: Իրական վտանգ էր ստեղծվել երկրի տնտեսական և սոցիալական համակարգի կատարյալ փլուզման համար: Իրանական մամուլը մռայլ կանխատեսումներ էր անում, որ «երկիրը մոտենում է սարսափելի անդունդի եզրին»:

Դժգոհության և համընդհանուր լարվածության այդ ալիքի վրա 1949 թ. փետրվարի 4-ին մահափորձ կազմակերպվեց Մոհամմադ Ռեզա շահ Փեհլևիի դեմ: Այն իրականացվեց «Փարչամ-ե էսլամ» («Իսլամի դրոշ») քերթի թղթակցի կողմից: Շահը վիրավորվեց, իսկ ահաբեկիչը տեղում սպանվեց Թեհրանի ոստիկանության պետի կողմից: Մահափորձի հաջորդ օրը՝ փետրվարի 5-ին, կառավարությունը երկրում հայտարարեց ռազմական դրություն: Բազմաթիվ քերթեր փակվեցին, տեղի ունեցան

կասկածելիների զանգվածային ձերբակալություններ: Մայրաքաղաքում և բազմաթիվ քաղաքներում գործող ռազմադաշտային դատարանները մի քանի ամիս շարունակ կայացնում էին դատավճիռներ: «Իրանի ժողովրդական կուսակցությունը» («ԹՈՒԴԵ»), փաստորեն հայտարարվեց օրենքից դուրս: Ջախջախվեցին նաև իրանական կոմունիստների հետ կապված կազմակերպությունները:

Շահի իրավունքները ընդարձակելու նպատակով սահմանադրության մեջ կատարվեցին փոփոխություններ: Որոշվեց ստեղծել նաև խորհրդարանի վերին պալատ՝ սենատ, որը կոչված էր արգելակել, իսկ հնարավորության դեպքում նաև կասեցնել ստորին պալատի՝ մեջլիսի կողմից ընդունված կառավարության համար ոչ ձեռնտու որոշումները: Ի դեպ, սենատի ստեղծումը նախատեսված էր իրանական սահմանադրությամբ, սակայն այդ որոշումը ավելի քան 43 տարի չէր կենսագործվել:

Իրանական ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր վիճակը և երկրի ներքին քաղաքական անկայունությունը իր պոռթկումը գտավ Անգլո-իրանական նավթային ընկերության (ԱԻՆԸ) դեմ շարժման մեջ: Իրանական հասարակայնության համարյա բոլոր խավերը միասնական էին իրենց ձգտման մեջ՝ չեղյալ հայտարարելու ԱԻՆԸ-ի հետ պայմանագիրը և ազգայնացնելու Իրանի հիմնական հարստությունը՝ նավթը:

Նավթի ազգայնացման շարժման ղեկավարությունը իրենց ձեռքը վերցրին այն քաղաքական և հասարակական գործիչներն ու կազմակերպությունները, որոնք արտահայտում էին ազգային բուրժուազիայի շահերը: 1949 թ. ստեղծվեց քաղաքական մի կազմակերպություն՝ այսպես կոչված «Ազգային ճակատը», որը գլխավորեց դոկտոր Մոհամմադ Մոսադեղ օս-Սալթանեն (1879-1967): Նա նավթային արդյունաբերության ազգայնացումը համարում էր Իրանի տնտեսական և քաղաքական պրոբլեմների լուծման միակ բանալին: Մոսադեղն ու նրա կողմնակիցները պնդում էին, որ միայն այն ժամանակ, երբ Իրանին կհանձնվեն նավթից ստացվող բոլոր եկամուտները, հնարավոր կլինի երկրից վերացնել աղքատությունը և պայմաններ ստեղծել ինքնուրույն զարգացման համար: Մոսադեղը հանդիսանում էր երկրի բնական ռեսուրսների նկատմամբ ազգային ինքնիշխանության հաստատման համոզված կողմնակից: Նա եռանդուն կերպով հանդես էր գալիս օտարերկրացիներին իրանական նավթի շահագործման որևէ կոնցեսիա տրամադրելու դեմ: Նրա շուրջը համախմբվեց հայրենասեր ու եռանդուն քաղաքական գործիչների մի խումբ, որոնք հանդես էին գալիս ԱԻՆԸ-ի հետ՝ այսպես կոչված լրացուցիչ համաձայնագրի ռատիֆիկացման դեմ:

Շուտով «Ազգային ճակատին» հարեց նաև Իրանի հայտնի կրոնական գործիչ մոջթեհիդ Աբոլ Ղասեմ Քաշանին, որի ազդեցությունը չափազանց մեծ էր երկրի գործարար կյանքի կենտրոն հանդիսացող Թեհրանի բազարի վրա: Դա նպաստեց իրանական նավթային արդյունաբերության ազգայնացման համար շարժման ընդլայնմանը, քանի որ Քաշանիի հետևից գնում էին կրոնական զգացումներով տոգորված իրանցիների բազմաթիվ խավեր: Մասնավորապես նրա հետևորդների թվում էր «Ֆեդայան-ե էսլամ» («Իսլամի անձնազոհ մարտիկներ») կազմակերպությունը, որը բազմիցս ահաբեկչության էր ենթարկել իրանական այն քաղաքական գործիչներին, որոնք հանդես էին գալիս անգլիացիների հետ համաձայնության օգտին: Սակայն ոչ բոլոր հոգևորականներն էին, որ բաժանում էին Քաշանիի և նրա նման մտածող գործիչների տեսակետները: Այսպես՝ Թեհրանի Էմամջոմե Սեյիդ Հոսեյին Էմամին հայտարարեց, որ կրոնը պետք է հեռու կանգնի քաղաքականությունից: Նրա այդ հայտարարությանը անմիջապես հետևեց այն, որ նրա դեմ կազմակերպվեց մահափորձ, և նա ստիպված եղավ հրաժարվել մեջլիսի 17-րդ նստաշրջանի նախագահի պաշտոնից ու հեռանալ երկրից: Այաթոլլա Բորուջերդին ևս գտնում էր, որ հոգևորականությունը չպետք է մասնակցի քաղաքականությանը և ինչ-որ տեղ դատապարտում էր այաթոլլահ Քաշանիի գործունեությունը:

1950 թ. հունիսի 27-ին շահը վարչապետի պաշտոնում նշանակեց գեներալ Ալի Ռազմարային: Վերջինս վարում էր քաղաքական «հավասարակշռության» քաղաքականություն, այսինքն՝ աշխատում էր թույլ չտալ, որ որևէ մեծ պետություն տիրապետող դիրքեր ձեռք բերի երկրում: Նա դեմ էր նավթային արդյունաբերության ազգայնացմանը, նախ՝ գտնելով, որ Իրանը ի վիճակի չէ ինքնուրույն կերպով շահագործել իր նավթը համապատասխան գիտական և տեխնիկական մասնագետներ չունենալու պատճառով և ապա՝ նավթարդյունաբերությունը ազգայնացնելու դեպքում Իրանը ստիպված կլինի ԱԻՆԸ-ին վճարել 300 միլիոն ֆունտ ստեռլինգից մինչև 500 միլիոն՝ որպես փոխհատուցում: Ուստի վարչապետը հանդես էր գալիս որպես ԱԻՆԸ-ի հետ «արդար համաձայնագրի» կնքման կողմնակից: Այդ ոգով նա 1951 թ. մարտի 3-ին մեջլիսում հանդես եկավ հատուկ զեկուցմամբ, որի համար և վճարեց իր կյանքով: Մարտի 7-ին «Ֆեդայան-ե Էսլամի» ահաբեկիչը սպանեց նրան:

1951 թ. մարտի 15-ին մեջլիսը, իսկ մարտի 20-ին՝ սենատը միաձայն հաստատեցին խորհրդարանական հանձնաժողովի ներկայացրած բանաձևը Իրանի նավթային արդյունաբերության ազգայնացման մասին: Մայրաքաղաքում կազմակերպվեց բազմահազարանոց հանրահավաք,

որի մասնակիցները պահանջում էին անհապաղ կյանքի կոչել Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման որոշումը: ԱԻՆԸ-ի գործունեության գոտում սկսվեցին նավթարդյունաբերության մեջ զբաղված բանվորների հուժկու գործադուլներ, որոնց կառավարությունը պատասխանեց նշված շրջաններում ռազմական դրություն մտցնելով: Բանակը նույնիսկ կրակ բաց արեց գործադուլավորների վրա, որի հետևանքով եղան զոհեր: Միաժամանակ բրիտանական ռազմածովային նավատորմի նավերը Պարսից ծոցում իրագործեցին «ուժի ցուցադրում»՝ սպառնալով ռազմական ընդհարման մեջ մտնել Իրանի հետ:

1951 թ. ապրիլի 29-ին ձայների ճնշող մեծամասնությամբ մեջլիսն ու սենատը վարչապետի պաշտոնի համար առաջ քաշեցին դոկտոր Մոսադեղի թեկնածությունը, որն ապրիլի 30-ին հավանության արժանացավ նաև շահի կողմից: Մոսադեղի կառավարությունը իր գլխավոր խնդիրը հայտարարեց նավթարդյունաբերության ազգայնացման մասին օրենքի իրագործումը: Վարչապետի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ իր արտասանած ճառում Մոսադեղը հայտարարեց, որ իր կառավարությունը բոլոր ջանքերը կգործադրի, որպեսզի իրանական ժողովուրդը օգտվի նավթարդյունաբերության եկամուտներից: «Նավթի եկամուտներից,- նշում էր Մոսադեղը,- մենք կարող ենք բավարարել մեր բոլոր կարիքները և վերջ տալ աղքատությանը, տգիտությանն ու հիվանդություններին, որոնք համակել են մեր երկրի միլիոնավոր աշխատավորներին»: Միաժամանակ, ԱԻՆԸ-ի վերացմամբ, ասում էր Մոսադեղը, «կչքանա դավերի, սադրանքների և միջամտությունների կենտրոնը մեր ներքին գործերին, որը վերջապես հնարավորություն կտա Իրանին հասնելու իր տնտեսական ու քաղաքական անկախությանը»:

Սակայն պարզվեց, որ նավթարդյունաբերության ազգայնացումը մի բան էր, այն գործնականում կյանքի կոչելը՝ մեկ այլ բան: Մոսադեղի կառավարությունը հանդիպեց մի շարք լուրջ դժվարությունների և կանգնեց, ըստ էության, անհաղթահարելի մարտահրավերների առջև:

Հարկ է նշել, որ նավթի ազգայնացման համար մղված պայքարի շրջանում ԱՄՆ-ն պաշտպանեց Իրանի պահանջները ԱԻՆԸ-ի նկատմամբ: Նույնիսկ ԱՄՆ մի շարք քաղաքական գործիչներ ԱԻՆԸ-ն հայտարարեցին որպես Իրանի տնտեսական հետամնացության գլխավոր մեղավոր: Իրանում ԱԻՆԸ-ի ազգայնացման մասին օրենքի ընդունումից անմիջապես հետո ԱՄՆ նախագահը հավանություն տվեց Ազգային անվտանգության խորհրդի հայտարարությանը, որը կոչ էր անում ամերիկյան կառավարությանը՝ օգտագործելու իր ազդեցությունը կոնֆլիկտը շուտափույթ

կերպով լուծելու նպատակով: Այդ փաստաթղթում, սակայն, նշվում էր, որ ԱՄՆ-ն, ճանաչելով ինքիշխան պետությունների հսկողության իրավունքը իրենց բնական հարստությունների նկատմամբ, միաժամանակ մեծ նշանակություն է տալիս միջազգային պայմանագրային հարաբերություններին: Միջազգային նավթային ընկերությունները ու ամերիկյան դիվանագետները լրջորեն անհանգստացած էին Իրանում իրադարձությունների այդպիսի շրջադարձի պատճառով: Այդ երկրում նավթային արդյունաբերության ազգայնացումը կարող էր վարակիչ օրինակ հանդիսանալ նաև Մերձավոր Արևելքի նավթ արդյունահանող մյուս բոլոր երկրների համար:

ԱՄՆ-ի ղեկավարները Մեծ Բրիտանիայի կառավարությանը կոչ էին անում հրաժարվել Իրանի դեմ զինված ինտերվենցիայի գաղափարից՝ միաժամանակ իրենց պաշտոնական ներկայացուցիչների միջոցով աշխատանքներ տանելով, որ Մոսադեղն ու իր կողմնակիցները ԱԻՆԸ-ի հետ բանակցություններում գնան զիջումների:

Բոլոր դեպքերում ամերիկյան նավթային ընկերությունները փորձում էին վեճը լուծել բանակցությունների ճանապարհով: 1951 թ. ապրիլին տաս օր շարունակ Վաշինգտոնում տեղի էր ունենում խորհրդակցություն նավթային հարցի վերաբերյալ, որի ընթացքում ԱՄՆ-ն Անգլիային առաջարկեց ճանաչել ազգայնացման վերաբերյալ ակտը՝ միաժամանակ շարունակելով ջանքեր գործադրել նավթի վերաբերյալ Իրանի հետ նոր համաձայնագիր կնքելու ուղղությամբ: Բրիտանական կառավարությունը և ԱԻՆԸ-ն պաշտոնապես հայտարարեցին, որ իրենք դեմ չեն, որ ԱՄՆ-ն իր մասնակցությունը բերի նավթային հարցի շուրջը անգլո-իրանական կոնֆլիկտը լուծելու գործում:

ԱՄՆ-ն նաև դեմ էր, որ Անգլիան Իրանի հետ իր վեճը լուծի ռազմական ճանապարհով՝ մտավախություն հայտնելով, որ դա երկրում կուժեղացնի հակաարևմտյան տրամադրությունները: Այդ պատճառով 1951 թ. հունիսի 1-ին նախագահ Տրումենը անձնական ուղերձ հղեց դոկտոր Մոսադեղին և Անգլիայի վարչապետ Էթլիին, որտեղ նա կոչ էր անում նրանց՝ կարգավորել վեճը «հանուն արևմտյան աշխարհի ընդհանուր շահերի»:

Մինչև 1953 թ. ամառը ԱՄՆ-ի կառավարությունը Մոսադեղի նկատմամբ բռնել էր չեզոք դիրք: Վաշինգտոնը նույնիսկ նրա կառավարությանը ցուցաբերում էր որոշ օգնություն:

1951 թ. մայիսի 8-ին, վկայակոչելով 1933թ. կնքված անգլո-իրանական պայմանագրի 22-րդ հոդվածը, Անգլիան հայտարարեց իր որոշման մասին՝ Իրանի նկատմամբ բողոքի դիմումով դիմելու Միջազգային դատարանին: Անգլիացիները իրենց համարում էին իրանական նավթի օրի-

նական սեփականատերեր և հրաժարվում էին իրանական կառավարության միակողմանի գործողությունները համարել օրինական:

1951 թ. մայիսի 25-ին անգլիական կառավարությունը դիմեց Հաագայի միջազգային դատարանին՝ խնդրելով քննարկել անգլո-իրանական վեճը: Որպես հակաքայլ՝ իրանական կառավարությունը հայտարարեց, որ Հաագայի դատարանը իրավասու չէ նման հարց քննարկելու և որոշում ընդունելու համար:

Անգլիացիները փորձում էին ազդել Իրանի վրա տարբեր ձևերով. ռազմական ցույցերը նրանք համատեղում էին քաղաքական ճնշման հետ, գործում էին դիվանագիտական խողովակներով և միջազգային կազմակերպությունների միջոցով (ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդ և այլն):

Մինչդեռ իրանական կառավարությունը ակտիվացնում էր իր գործունեությունը նավթարդյունաբերության ազգայնացման օրենքը կենսագործելու համար: Խստիվ հետամուտ լինելով ընդունված օրենքների իրականացմանը՝ 1951 թ. սեպտեմբերի 27-ին իրանական զորամասերը գրավեցին Աբադանի նավթավերամշակման գործարանները՝ դրանով իսկ ձևականորեն վերջ տալով Իրանում ԱԻՆԸ-ի տիրապետությանը: 1951 թ. հոկտեմբերի 3-ին անգլիական նավը Աբադան կղզուց դուրս հանեց ԱԻՆԸ-ի վերջին մասնագետներին, որոնք հրաժարվել էին աշխատել իրանցիների կողմից ստեղծված իրանական ազգային նավթային ընկերությունում, ուստի և իրանական կառավարության պահանջով պետք է հեռանային երկրից: 1951 թ. սեպտեմբերի վերջին Լոնդոնում գումարվեց բրիտանական կառավարության արտակարգ խորհրդակցություն, որտեղ քննարկման ենթարկվեց Իրանի նկատմամբ ուղղակի ագրեսիա իրագործելու հարցը: Սակայն ԱՄՆ-ն կոչ արեց հրաժարվել նման արկածախնդրությունից:

Ռազմական սպառնալիքների հետ միաժամանակ բրիտանական կառավարությունը փորձում էր հասնել նրան, որ Իրանի նկատմամբ կիրառվեն միջազգային պատժամիջոցներ: 1951 թ. սեպտեմբերի 28-ին ՄԱԿ-ում Անգլիայի ներկայացուցիչը նամակով դիմեց Անվտանգության խորհրդի նախագահին՝ խնդրելով գումարել նիստ Իրանի նկատմամբ Անգլիայի բողոքը քննարկելու համար: Անվտանգության խորհրդի 1951 թ. հոկտեմբերի 16-ի նիստում Մոսադեղը խիստ քննադատության ենթարկեց Անգլիայի և ԱԻՆԸ-ի քաղաքականությունը Իրանի նկատմամբ: Նա նշեց, որ 50 տարվա ընթացքում անգլիացիները Իրանից արտահանել են 315 միլիոն տոնն նավթ, որի դիմաց Իրանի ստացած եկամուտները չնչին էին: Ի վերջո, Անվտանգության խորհուրդը հոկտեմբերի 19-ին որոշում ընդունեց հետաձգել նավթի հարցի վերաբերյալ անգլո-իրանական վեճի քննարկումը:

Հաագայի միջազգային դատարանը 1952 թ. հուլիսի 22-ին հայտարարեց, որ իրեն բավարար չափով իրավասու չի համարում անգլո-իրանական վեճը քննարկելու և նրա մասին վճիռ կայացնելու համար: Դա նշանակում էր, որ անգլիական բողոքը ձախողվել է:

Ի պատասխան անգլիական կառավարության կողմից Իրանի նկատմամբ ընդունած տնտեսական պատժամիջոցների՝ իրանական կառավարությունը իր հերթին դիմեց հակաքայլերի՝ մասնավորապես սահմանափակելով Իրանում գործող անգլիական շահնշահական բանկի իրավասությունները, իսկ 1952 թ. հուլիսի 30-ին պաշտոնապես փակեց այդ բանկը: Միաժամանակ իրանական կառավարությունը երկրի տարբեր քաղաքներում փակեց թվով ինն անգլիական հյուպատոսություններ:

Այսպիսով՝ Մոսադեղն ու իր կառավարությունը նավթի ազգայնացման համար պայքարի ընթացքում դրսևորեցին մեծ բարոյական ուժ և քաղաքական կամք, որը ողջ Մերձավոր ու Միջին Արևելքում աննախընթաց կերպով բարձրացրեց նրանց հեղինակությունը:

Քաղաքական ճանապարհով չհասնելով իրենց նպատակին՝ միասնական ճակատով հանդես եկող միջազգային նավթային կորպորացիաները («Յոթ քույրեր»), որոնց հսկողության տակ էին գտնվում արևմտյան աշխարհի համարյա բոլոր նավթի վաճառահանման շուկաները և տանկերային նավատորմի մեծագույն մասը, թույլ չտվեցին Մոսադեղի կառավարությանը՝ դուրս գալու նավթի համաշխարհային շուկա: Թեև դա ծայրահեղորեն վատթարացրեց երկրի ֆինանսատնտեսական վիճակը, սակայն չվհատեցրեց Մոսադեղին և նրա կառավարությանը, որոնք առաջ քաշեցին «տնտեսությունը առանց նավթի» գաղափարը: Կառավարությունը մշակեց բարեփոխումների մի համալիր ծրագիր՝ բյուջեի ճեղքվածքը և տնտեսական ճգնաժամը վերացնելու համար՝ միայն ներքին ռեսուրսները օգտագործելու հաշվին: Ըստ այնմ՝ կրճատվեցին պետական ապարատի ծախսերը, ավելացվեցին ուղղակի և անուղղակի հարկերը:

1952 թ. հուլիսի 13-ին Մոսադեղը մեջլիսից պահանջեց վեց ամիս ժամկետով իրեն տրամադրել արտակարգ լիազորություններ, ինչպես նաև ռազմական մինիստրի պորտֆելը: Նա անհրաժեշտ էր համարում երկրում զարգացող տնտեսական և ֆինանսական ճգնաժամի պայմաններում ողջ իշխանությունը կենտրոնացնել իր ձեռքերում՝ նավթարդյունաբերության ազգայնացման գործը իր ավարտին հասցնելու համար: Սակայն նրա այդ պահանջը մերժվեց, և այդ հողի վրա խորը տարաձայնություն առաջ եկավ Մոսադեղի և շահի միջև: 1952 թ. հուլիսի 16-ին Մոսադեղը ստիպված էր հրաժարական տալ: Վարչապետի պաշտոնը կր-

կին զբաղեցրեց Ահմեդ Ղավամ էս-Սալթանեն: Նա հայտարարեց, որ իր արտաքին քաղաքականության հիմնական խնդիրն է «նավթային հարցի լուծումը» մի այնպիսի ձևով, որպեսզի ապահովվեն Իրանի բարոյական և նյութական շահերը և դա ոչ մի վնաս չբերի ԱՄՆ-ի և Անգլիայի հետ բարեկամական հարաբերություններին:

Սակայն Ղավամը կարողացավ իշխանության ղեկի մոտ մնալ ընդամենը չորս օր: Երկրում ծայր առած հզոր ցույցերի և քայլարշավների ալիքը, բողոքի գործադուլները և այլն, որոնց ընթացքում պահանջվում էր Մոսադեղին վերադարձնել իշխանության ղեկի մոտ, ստիպեցին Ղավամին հուլիսի 21-ին հրաժարական տալ և փախուստի դիմել արտասահման:

Մոսադեղը կրկին վերադարձավ իշխանության ղեկի մոտ, իսկ օգոստոսի 3-ին մեջլիսը կես տարով նրան տրամադրեց արտակարգ լիազորություններ, որոնք 1953 թ. հունվարին երկարաձգվեցին ևս մեկ տարով: Միաժամանակ շահը ստիպված էր բավարարել Մոսադեղի պահանջը և նրան հաստատել ռազմական մինիստրի պաշտոնում, որը նա անմիջապես օգտագործեց բանակի և ոստիկանության սպայական կազմի զտում կատարելու և երկրի զինված ուժերի գլխավոր հրամանատար Մոհամմադ Ռեզա շահի ազդեցությունը բանակի նկատմամբ սահմանափակելու համար:

Հուլիսյան իրադարձությունները ուսանելի էին ինչպես շահի ու նրա արքունիքի, այնպես էլ արևմտյան տերությունների համար, որոնք համոզվեցին, որ Մոսադեղի քաղաքականությունը շեղվում է իրենց սպասելիքների հունից: Գնալով ուժեղանում էին հակասությունները շահի և կառավարության միջև: Մոսադեղին տապալելու հարցում շահագրգռված ուժերը համախմբվում էին արքունիքի շուրջը: Բանն այն է, որ և՛ Վաշինգտոնը, և՛ Լոնդոնը մեծ հույսեր էին կապում Մոսադեղի հետ՝ որպես «կոմունիզմի դեմ պայքարում հուսալի երաշխավորի»: Սակայն այդ դերում նա չարդարացրեց իրեն, որովհետև նրա քաղաքականության կիզակետում ոչ թե պայքարն էր Իրանում կոմունիստական շարժման դեմ, այլ նավթի ազգայնացումը: Մինչդեռ Իրանի ժողովրդական կուսակցությունը («Թուդե») անօրինակ կերպով ուժեղացրել էր իր գործունեությունը՝ իր ամբոխավարական կարգախոսների շնորհիվ կարողանալով մեծ թվով զանգվածների ներգրավել «պայքարի» մեջ: Արևմուտքը, բացի պետական հեղաշրջումից, այլընտրանք այլևս չէր տեսնում: Իսկ շահը գտնում էր, որ եթե Մոսադեղը պետք է հեռանա, ապա այդ հարցում բոլոր շահագրգռված կողմերի համար գերադասելի է, եթե տապալվի ռազմական հեղաշրջման միջոցով, քան կոմունիստական ապստամբության հետևանքով: Այդ հողի վրա 1952 թ.

վերջին Մոսադեղի կառավարության դեմ ստեղծվեց ուժեղ ընդդիմություն, որի կարգախոսն էր «շահական գահի ամրապնդման ճանապարհով հասնել երկրի կայունության ապահովմանը»:

Մոսադեղին թվում էր, թե վախենալով Իրանի նկատմամբ «կոմունիստական սպառնալիքի» հավանականությունից՝ ԱՄՆ-ը թույլ չի տա, որ աջ ընդդիմությունը դավաղրություն կազմակերպի իր կառավարության դեմ: Մոսադեղի կառավարության վիճակը բարդանում էր նաև նրանով, որ 1952 թ. վերջին և 1953 թ. սկզբին նրա կողմից ղեկավարվող «Ազգային ճակատի» ներսում ծնունդ առան լուրջ տարաձայնություններ: Մոսադեղին լքեցին ոչ միայն նրա ժամանակավոր «ուղեկիցները»՝ աջ ազգայնականները և այլն, այլև նրան դաղարեցին պաշտպանել նաև հոգևորականները՝ ի դեմս Քաշանիի, ինչպես նաև «Ազգային ճակատի» մեջ մտնող այնպիսի հեղինակավոր գործիչների, ինչպիսիք էին Բաղային, Հուսեյն Մաքքին և ուրիշներ: Ճակատը, ըստ էության, տրոհվեց երկու մասի՝ Մոսադեղի կողմնակիցների և հակառակորդների:

Ինքը՝ Մոսադեղը ևս իր գործունեության մեջ նույնպես դրսևորում էր երկվություն, անհետևողականություն ու տատանումներ: Լինելով այն տեսակետին, որ շահը պետք է թագավորի և ոչ թե կառավարի, Մոսադեղը միաժամանակ հանդես էր գալիս հակաշահական շարժումների դեմ, եթե մանավանդ այդ շարժումներին մասնակից էին նաև իրանական կոմունիստները: Այլ կերպ ասած՝ Մոսադեղի սոցիալական հենարանը գնալով նեղանում էր՝ նրա իշխանության հիմքերը դարձնելով թույլ ու անկայուն: Նրան նախկինում աջակցություն ցույց տվող ուժերը աստիճանաբար հեռանում էին նրանից՝ հիասթափվելով կամ չհավատալով նրա քաղաքականության հաջողությանը:

Իրանում պետական հեղաշրջումը հասունանում էր նաև երկիրը համակած ֆինանսատնտեսական չափազանց ծանր վիճակի պատճառով: Մոսադեղի՝ «տնտեսությունը առանց նավթի» քաղաքականությունը Իրանի նավթային շրջափակման պայմաններում չարդարացրեց իրեն: Նավթային ճգնաժամի կապակցությամբ Իրանը ավելի ու ավելի ուժգին կերպով էր զգում տարադրամի պակաս:

1951 թ. մայիսից սկսած, այսինքն՝ նավթի ազգայնացումից հետո նավթարդյունաբերության բնագավառից բյուջե մուտք գործող եկամուտները իսպառ դադարել էին: Իրանական նավթի գնորդ պետությունները շարունակում էին բոյկոտը և իսպառ դադարեցրել էին նավթի գնումները: Անգլիական մոնոպոլիաները շարունակում էին Իրանի տնտեսական շրջափակումը: Իրանի նավթային արդյունաբերությունը գործնականում

դաղարել էր գործելուց: Կառավարությունը նավթագործ կաղրերին պահելու և նրանց որակազրկումը կանխելու նպատակով ստիպված էր նրանց վճարել նպաստ:

Իրանական տնտեսության ու ֆինանսների ճգնաժամային վիճակը հասավ կրիտիկական կետի, երբ 1953 թ. կեսերին բոլոր տարաղրամային ռեզերվները վերջնականապես սպառվեցին:

Այն հույսերը, որ երկրի ներսում ներքին փոխառություն բաց թողնելու միջոցով հնարավոր կլինի ինչ-որ չափով շտկել վիճակը, նույնպես չարդարացրին իրենց: Բնակչության ունևոր խավերը ոչ միայն չէին ցանկանում ձեռք բերել փոխառության տոմսեր, այլև հրաժարվում էին երկրում ներդնել կապիտալներ: Փակուղու առջև հայտնված Մոսադեղը որոշեց գնալ իրանական բոլոր կառավարությունների տրորված ուղիներով՝ բարձրացրեց անուղղակի հարկերը:

Մոհամմադ Ռեզա շահ Փեհլևին «Իմ ծառայությունը հայրենիքին» գրքում գրում էր, որ Մոսադեղը իր գործունեության ընթացքում թույլ տվեց երկու խոշոր սխալ. նախ՝ նա ենթադրում էր, որ համաշխարհային տնտեսությունն ու արդյունաբերությունը չէին կարող «յոլա գնալ» առանց իրանական նավթի, և միջազգային նավթային ընկերությունները ստիպված կլինեն կրկին դիմել Իրանին, և երկրորդ՝ նա կարծում էր, որ իրանական նավթը կկարողանա վաճառել առանց օտարերկրացիների որևէ օգնության:

1953 թ. մայիսի 28-ին իրանական կառավարությունը դիմեց ԱՄՆ-ին, խնդրելով կա՛մ ազդել Մեծ Բրիտանիայի կառավարության վրա, որպեսզի նա ընդունի Իրանի ներկայացրած պահանջները նավթային ճգնաժամի հետ կապված հարցերի լուծման համար և կա՛մ Իրանին ցուցաբերի ֆինանսական օգնություն:

Սակայն Իրանի խնդրանքը մերժվեց, իսկ ԱՄՆ պետդեպարտամենտը հրապարակեց մի հայտարարություն, որտեղ նշվում էր, որ Իրանը կարող է հաղթահարել իր ֆինանսական դժվարությունները միայն անգլո-իրանական կոնֆլիկտը լուծելու դեպքում: Ավելին՝ Վաշինգտոնը հայտարարեց Մոսադեղին, որ եթե իրանական կառավարությունը «ռազմական հումք»՝ նավթ վաճառի սոցիալիստական ճամբարի երկրներին, ապա ինքը իսպառ կդադարեցնի ամեն տեսակի ֆինանսական և ռազմական օգնությունը Իրանին: Առհասարակ՝ պետք է նշել, որ սառը պատերազմի պայմաններում Արևմուտքում գնալով հաստատվում էր այն մտայնությունը, որ իրադարձությունների նման զարգացման պարագաներում վերջի-վերջո «Մոսադեղը իրեն կկապի Ռուսաստանի հետ»: Այդ հեռանկարից խորապես մտահոգված ԱՄՆ նախագահ Էյզենհաուերի վարչությունը

Իրան ուղարկեց գեներալ Նորման Շվարցկոպֆին, որի ղեկավարությամբ 1943-1948 թթ. իրականացվում էր իրանական բանակի ու ժանդարմերիայի վերակառուցումը: Նա գաղտնի հանդիպումներ ունեցավ շահի հետ: Իսկ ամերիկյան Կենտրոնական հետախուզական վարչության ղեկավար Ալլեն Դալլեսը ժամանեց Շվեյցարիա՝ խորհրդակցելու այնտեղ ժամանած Իրանում ամերիկյան դեսպան Լոյ Հենդերսոնի և շահի քրոջ՝ Աշրաֆի հետ, որը Իրանից մեկնելուց առաջ մարմարե պալատում բռնձ խոսակցություն էր ունեցել իր եղբոր հետ Մոսադեղի նկատմամբ նրա ոչ վճռական գործողությունների պատճառով:

Ամերիկյան կառավարությունը որոշում էր կայացրել պետական հեղաշրջման միջոցով տապալել Մոսադեղի կառավարությունը: Այդ գործը գլուխ բերելու խնդիրը Վաշինգտոնի կողմից հանձնարարված էր նախագահ Թեոդոր Ռուզվելտի թոռ՝ Քերմիթ (Կիմ) Ռուզվելտին: Վերջինս 1953 թ. հուլիսին ժամանեց Իրան՝ իր հանձնարարությունը կատարելու համար:

Այդ օրերին (1953 թ. հուլիս) ԱՄՆ-ի նոր պետքարտուղար Ջ. Դալլեսը հայտարարեց. «Ցանկացած իրանական կառավարություն, եթե նա կոմունիստական չէ, մեզ համար լավ է ներկայիս կառավարությունից: Մենք անհնարին ենք համարում գործ ունենալ Մոսադեղի հետ»:

Քերմիթ Ռուզվելտը, որը հանդիսանում էր Միջին Արևելքում ԿՀՎ (Կենտրոնական հետախուզական վարչություն) աշխատակիցների խմբի ղեկավար, հրավիրվեց Լոնդոն, որտեղ նրան ծանոթացրին «Այաքս գործողություն» նշանաբանով գաղտնի պլանի հետ: Այդ պլանը նախատեսում էր Իրանում գաղտնի գործողության իրականացում՝ Մոսադեղի կառավարությանը իշխանությունից բռնի ճանապարհով հեռացնելու նպատակով: Միաժամանակ Թեհրանում շարունակվում էր վաղուց սկսված աշխատանքը հակակառավարական ուժերի համախմբման ուղղությամբ:

1953 թ. հունիսի 22-ին Վաշինգտոնում պետքարտուղար Ջ. Դալլեսի գրասենյակում տեղի ունեցավ խորհրդակցություն Թեհրանում հեղաշրջում իրականացնելու հարցի կապակցությամբ: Խորհրդակցությունում վերջնական որոշում կայացվեց հեղաշրջումն իրականացնելու մասին:

1953 թ. օգոստոսի 1-ին Թեհրանում Ք. Ռուզվելտը գաղտնի հանդիպում ունեցավ շահի հետ: Նա շահին տեղեկացրեց իր առաքելության մասին՝ միաժամանակ հայտնելով, որ հեղաշրջման պլանը կատարյալ հավանության է արժանացել ԱՄՆ նախագահ Դ. Էյզենհաուերի և Անգլիայի վարչապետ Ու. Չերչիլի կողմից: Շահը իր համաձայնությունը տվեց հեղաշրջմանը անմիջական մասնակցություն ցուցաբերելու վերաբերյալ:

1953 թ. օգոստոսի 13-ին Շվարցկոպֆի Իրան ժամանելուց քիչ անց

շահը հրամանագիր ստորագրեց Մոսադեղին վարչապետի պաշտոնից հեռացնելու մասին՝ նրա փոխարեն նշանակելով պաշտոնաթող գեներալ Ֆազոլլա Զահեդիին:

Շահական թիկնազորը մի քանի այլ զորամիավորումների հետ համատեղ օգոստոսի 14-15-ին ծրագրել էր իրականացնել պետական հեղաշրջում: Այդ ծրագիրը հայտնի դարձավ Իրանի ժողովրդական Կուսակցության («ԹՈՒԴԵ») մամուլի օրգաններին, և այն խափանվեց: Սակայն օգոստոսի 16-ի գիշերը շահական թիկնազորի մի խումբ սպաներ գնդապետ Նեմաթոլլա Նասիրիի գլխավորությամբ, այնուամենայնիվ, կատարեցին պետական հեղաշրջման փորձ, որի ընթացքում նախատեսված էր ձերբակալել Մոսադեղին և նրա մերձավորագույն կողմնակիցներին: Բայց երբ հեղաշրջման կազմակերպիչները մոտեցան վարչապետի տանը, այնտեղ նկատեցին զորքերի խոշոր կուտակումներ, ուստի արագ փոխելով իրենց ծրագիրը՝ հայտարարեցին, որ եկել են պաշտոնապես Մոսադեղին հանձնելու շահի հրամանագիրը նրան վարչապետի պաշտոնից ազատելու մասին: Նասիրին տեղնուտեղը ձերբակալվեց, և կառավարությանը հավատարիմ զորամասերը զինաթափ արեցին շահական թիկնազորին: Հաջորդ օրը առավոտյան կառավարությունը հայտարարեց պետական հեղաշրջման ձախողման մասին: Մոսադեղի տան շուրջը կենտրոնացվեցին նրան հավատարիմ զորամասեր, ինչպես նաև տանկեր ու զրահամեքենաներ: Տեղեկանալով այդ մասին՝ շահը Ռամսարից (Գիլյան) ինքնաթիռով փախավ Իտալիա: Նույն օրը Թեհրանում «Թուդե» կուսակցությունը կազմակերպեց բազմամարդ մի քայլարշավ, որի մասնակիցները քանդեցին ու ավերեցին Ռեզա շահի հուշարձանը և Մոհամմադ Ռեզա շահի կոթողը:

Չնայած այն հանգամանքին, որ ձախ ուժերը, մասնավորապես Իրանի ժողավրդական կուսակցությունը, առաջարկեցին Մոսադեղին համագործակցել կառավարության հետ՝ նախապատրաստվող պետական հեղաշրջումը ձախողելու համար, Մոսադեղը մերժեց այդ առաջարկը: Նա գերադասեց առհասարակ «չքանալ» քաղաքական գործունեության ասպարեզից, քան կոմունիստների ու ծայրահեղ ձախ տարրերի օգնությամբ ձեռք բերել հաղթանակ: Ավելին՝ օգոստոսի 17-ին և 18-ին նա հրամայեց ձերբակալել կոմունիստների կազմակերպած քայլարշավների ու հանրահավաքների պարագլուխներին:

Ի վերջո, 1953 թ. օգոստոսի 19-ին տեղի ունեցավ պետական հեղաշրջում, որի հետևանքով Մոսադեղի կառավարությունը տապալվեց, իսկ ինքը՝ վարչապետը, ձերբակալվեց: Կառավարությունը գլխավորեց հեղաշր-

ջումն իրականացրած գեներալ Ֆազոլլա Զահեդիին: Օգոստոսի 22-ին շահը արտասահմանից վերադարձավ Իրան: Իրանական կառավարության փոփոխությունը թեթևության հոգոց առաջ բերեց Լոնդոնում ու Վաշինգտոնում: Ամերիկյան կառավարությունը 45 միլիոն դոլարի շտապ ֆինանսական օգնություն ցուցաբերեց Զահեդիի կառավարությանը: Միաժամանակ Վաշինգտոնը հայտարարեց, որ «4-րդ կետով» Իրանին հատկացվող օգնությունը կշարունակվի: Ընդ որում՝ ամերիկյան մամուլում նշվում էր, որ օգնությունը տրամադրվում է Իրանին, որպեսզի «դադարեցվի կոմունիզմի ազդեցության տարածումը երկրում»: 1953 թ. վերջին Մեծ Բրիտանիայի հետ դիվանագիտական հարաբերությունները վերականգնվեցին: Միաժամանակ Զահեդիի կառավարությունը ձեռնամուխ եղավ վարչակարգի հակառակորդների հետ հաշվեհարդար տեսնելուն: Ըստ այնմ՝ բանակում իրականացվեց զտում, Իրանի ժողովրդական կուսակցության անդամ մի խումբ սպաներ գնդակահարվեցին, ամրապնդվեց ոստիկանական ապարատը և այլն: «Թուդե» կուսակցության գործունեությունն արգելվեց: Ձերբակալվեցին ու զանազան պատիժների ենթարկվեցին Մոսադեղի կառավարության մի շարք անդամներ, մեջլիսի պատգամավորներ, բազմաթիվ ազգայնական գործիչներ: Գնդակահարվածների թվում էր նաև Մոսադեղի կառավարության մեջ արտաքին գործերի մինիստր Հոսեյին Ֆաթեմին: Մոսադեղը ևս դատապարտվեց բանտարկության:

Շարադրելով իր կառավարության ծրագիրը՝ Զահեդին հայտարարեց, որ կաբինետի խնդիրն է խեղդել «խռովարարներին ու քայքայիչ տարրերին, ապահովել երկրի անվտանգությունը, հաստատել ուժեղ և օրինական իշխանություն, փոխադարձ հարգանքի հիմքի վրա ամրապնդել դիվանագիտական հարաբերությունները բոլոր երկրների հետ, բոլորի համար ապահովել զբաղվածություն, բարձրացնել ժողովրդի կենսամակարդակը»: Ազգայնականությունը հայտարարվեց իրանական ժողովրդին դեպի հուսալի ապագա առաջնորդող սկզբունք: Կրկին հրապարակ իջեցվեց «Աստված, շահ, հայրենիք» կարգախոսը:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՄՀՍՄՄԱԴ ՌԵԶԱ ՇԱՀ ՓԵՀԼԵՎԻԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԸ (1953 - 1977 ԹԹ.)

1. ԻՐԱՆԸ ՀԵՂԱՇՐՋՄԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1953 թ. օգոստոսյան հեղաշրջումը վերջ տվեց Իրանում փաստացի գոյություն ունեցող երկիշխանությանը: Սկիզբ առավ շահի ավտորիտար կառավարման վերականգնման շրջանը: Հեղաշրջումից անմիջապես հետո ԱՄՆ պրեզիդենտ Դ. Էյզենհաուերը իրանական նոր կառավարությանը տրամադրեց չտապ անվերադարձ օգնություն 45 միլիոն դոլարի չափով: 1953 թ. դեկտեմբերին վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները Անգլիայի հետ: Այդ նույն ժամանակ ռազմական դատարանը Մոսադեղին դատապարտեց երեք տարվա բանտարկության՝ նրան ներկայացնելով մեղադրանք պետության ղեկավարի հրամանագիրը՝ իրեն վարչապետի պաշտոնից հեռացնելու վերաբերյալ չկատարելու մեջ:

1954 թ. գարնանը Քաշանին, Մաքքին և ազգայնականների մյուս ներկայացուցիչները փորձեցին կազմակերպել զանգվածային ելույթներ Զահեդիի կառավարության դեմ, բայց հաջողություն չունեցան: Այդ ցույցերն ու հանրահավաքները չհանգեցրին գոյություն ունեցող իրադրության փոփոխությանը: Արքունիքն ու կառավարությունը դարձել էին

դրության տերը՝ կատարյալ հսկողություն սահմանելով բանակի, ոստիկանության ու ժանդարմերիայի նկատմամբ:

Հեղաշրջումից անմիջապես հետո քննարկման առարկա դարձավ իրանական նավթի պրոբլեմի լուծման հնարավոր ուղիների հարցը: Ի վերջո, 1954 թ. ապրիլի 10-ին Լոնդոնում ստորագրվեց մի համաձայնագիր, ըստ որի աշխարհի ութ խոշորագույն նավթային մոնոպոլիաների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծվում էր Միջազգային նավթային կոնսորցիում (ՄՆԿ) իրանական նավթը շահագործելու համար: Կոնսորցիումը Իրանի նավթի ազգային ընկերության հետ կնքեց պայմանագիր, որով ձեռք էր բերում իրանական նավթի հանույթի, մշակման և արտահանման իրավունքը: ՄՆԿ բաժնետոմսերի 40%-ն անցավ «Բրիթիշ պետրոլեում կոմպանիին» (1954 թ. դեկտեմբերից Անգլո-իրանական նավթային ընկերությունը վերանվանվեց այդ կերպ), 14%-ը՝ անգլո-հոլանդական «Ռոյալ Դետչ-Շելլին», 35%-ը ամերիկյան «Մեծ հնգյակին» («Ստանդարտ օյլ օֆ Նյու-Ջերսի,», «Սոքոնի վակուում Օյլ», «Ստանդարտ օյլ օֆ Կալիֆորնիա», «Թեքսաս օյլ», «Գուլֆ օյլ կորպորեյշն»), 5%-ը՝ «Իրիկոն էջենսի» ամերիկյան ընկերությունների խմբին, և 6%-ը՝ ֆրանսիական «Կոմպանի Ֆրանսեզ դե պետրոլ» ընկերությանը:

Այսպիսով՝ Անգլո-իրանական նավթային ընկերությունը կորցրեց իրանական նավթի մենաշնորհային շահագործման իրավունքը: Կոնսորցիումը իրավունք էր ստանում որոշել նավթի գները և նրա հանույթի չափերը, ինչպես նաև ապահովել նավթի վաճառքը համաշխարհային շուկաներում:

ՄՆԿ-ի հետ կնքված համաձայնագրի համաձայն՝ իրանական նավթի շահագործումից ստացված եկամուտները բաշխվելու էին «հիսուն առ հիսուն» («ֆիֆթի-ֆիֆթի») սկզբունքով, այսինքն Իրանական ազգային նավթային ընկերությունը ստանալու էր ՄՆԿ-ի կողմից արդյունահանվող հում նավթի վաճառքի եկամուտների 50%-ը, որը շատ ավելին էր, քան Իրանը ստանում էր ԱԻՆԸ-ի գոյության տարիներին: Միանգամայն ակնհայտ է, որ ՄՆԿ-ի հետ կնքված համաձայնագիրը համարյա ամբողջապես ի չիք էր դարձնում իրանական ժողովրդի երեքամյա պայքարի արդյունքները՝ հանուն նավթարդյունաբերության ազգայնացման: Պատահական չէ, որ իրանական մի շարք ականավոր քաղաքական գործիչներ հայտարարեցին, որ ՄՆԿ-ի հետ կնքված համաձայնագիրը հակասում է նավթարդյունաբերության ազգայնացման մասին օրենքին: Նույնիսկ հայտնվեց այն կարծիքը, որ նախկին անգլիական առաջարկությունները ավելի էին համապատասխանում Իրանի շահերին, քան այդ նոր համաձայնագիրը: Սակայն բոլոր դեպքերում ՄՆԿ-ի հետ հա-

մածայնագիրը հնարավորություն տվեց Իրանին նավթի դիմաց ստանալու նշանակալիորեն շատ ավելի խոշոր գումարներ, քան ԱԻՆԸ-ի գոյության տարիներին:

1953 թ. հեղաշրջումից հետո իրանական ղեկավարները հանդես եկան հայտարարություններով, որ երկիրը պետք է ընդգրկել «արևմտյան համակարգի մեջ»: Ըստ այմմ՝ կառավարության կողմից հրահրվող իրանական մամուլը սկսեց սուր քննադատության ենթարկել չեզոքության կուրսը, որին Իրանը իբր հետևել էր վերջին 150 տարիների ընթացքում: Ջարգացվում էր այն միտքը, որ այդ չեզոքությունը ոչ մի լավ բան չտվեց Իրանին: Առաջարկվում էր համարձակորեն ընտրել նոր ուղի և «ձեռք բերել արժանավոր դաշնակիցներ»:

Որպես նոր որդեգրված քաղաքականության գծով առաջին քայլ՝ 1955 թ. օգոստոսին Իրանի և ԱՄՆ-ի միջև կնքվեց «Բարեկամության, տնտեսական համագործակցության և հյուպատոսական հարաբերությունների» վերաբերյալ պայմանագիր: Այն ստորագրելուց հետո շահը ԱՄՆ-ն դիտում էր որպես Փեհլևի միապետության պահպանման հուսալի երաշխավոր: Շահի ամերիկամետ քաղաքականությունը ոչ պակաս չափով մղում էր ստանում նաև տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների հետևանքով: Արաբական արևելքում լայն ծավալ էին ստացել ազգային-ղեմոկրատական շարժումները, տեղի էր ունեցել եռյակ (անգլո-ֆրանս-իսրայելական) ագրեսիա Եգիպտոսի Հանրապետության դեմ (1956 թ. աշնանը) և այլն: Այս բոլորը իրանական վերնախավին մղում էին դեպի Արևմուտքի հետ ռազմաքաղաքական դաշինքի կնքումը:

Շուտով շահը ստիպված էր ազատվել վարչապետ գեներալ Զահեդիից, որի վերաբերյալ առկա էին հավաստի փաստեր նրա կոռումպացված լինելու մասին: Բացի այդ, գեներալը սկսել էր ամենուրեք խոսել այն մասին, որ ինքն է փրկել շահին և նրա թագը՝ իրեն անվանելով «թաջբախշ», այսինքն՝ «թագաշնորհ»: 1956 թ. հուլիսի 17-ին վարչապետ նշանակվեց Հոսեյին Ալան:

1957 թ. մարտի 5-ին հրապարակվեց այսպես կոչված «Էյզենհաուերի դոկտրինը»: Դրա էությունը կայանում էր նրանում, որ ԱՄՆ նախագահը անհրաժեշտ էր համարում օգնել Միջին Արևելքի երկրներին «ամրապնդելու համար նրանց ազգային անկախությունը կոմունիզմի սպառնալիքից»: Իրանն ընդունեց այդ դոկտրինի պայմանները, որով էլ ավելի ամրապնդվեցին նրա կապերը Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի հետ: Իրանի քաղաքական ղեկավարությունը այդ կապերը գնահատում էր նաև որպես կարևորագույն միջոց «Իրանի զարգացման ու ամրապնդման համար»:

1956 թ. Իրանը անդամակցեց Բաղդադի պակտին (որի անդամներն էին Մեծ Բրիտանիան, Թուրքիան, Իրաքը և Պակիստանը):

Անտարակույս, անդամակցելով այդ պակտին և ընդունելով «Էյզենհաուերի դոկտրինը»՝ իրանական կառավարությունն աշխատում էր առավելագույն չափով շահարկել իր երկրի կարևորագույն ռազմավարական դիրքը՝ Արևմուտքից հնարավորին չափ շատ օգնություն ստանալու համար: Այդ առթիվ Մոհամմադ Ռեզա շահ Փեհլևին աներկիմաստ կերպով գրում էր. «Մենք հույս ունենք, որ արտասահմանում մեր բարեկամները մշտապես պետք է հիշեն այն մասին, որ Իրանը՝ Միջին Արևելքի դարպասն է, ուստի նրա ռազմական հզորության ուժեղացումը անհրաժեշտ է երկրագնդի այդ շրջանում խաղաղության պաշտպանության համար»: Մեկ այլ առիթով շահը նշում էր. «Իրանը կարևոր դեր ունի Արևմուտքի գլոբալ պաշտպանության համակարգում՝ ընդդեմ կոմունիստական ներխուժման: Մարդկության պատմության մեջ բոլոր ներխուժումները դեպի Ասիայի այս մասը տեղի են ունեցել Իրանի վրայով... Եթե ռուսները երբևիցե վերահսկեն Իրանը, նրանք կստանան մի բանալի ողջ Միջին Արևելքում տիրապետության հասնելու համար»:

Դրսևորելով ճկունություն՝ իրանական դիվանագիտությունը աշխատում էր, ճիշտ է՝ զգուշորեն, սակայն բարելավել հարաբերությունները նաև Խորհրդային Միության հետ: Իր հերթին վերջինս նույնպես, ձգտելով կասեցնել Իրանի մերձեցումը Արևմուտքի հետ, 1954 թ. դեկտեմբերի 2-ին Թեհրանի հետ կնքեց մի համաձայնագիր սահմանային և ֆինանսական հարցերի կարգավորման վերաբերյալ, որոնք վերջին տարիների ընթացքում դարձել էին սովետա-իրանական հարաբերությունների բարդ կնճիռը: Այդ համաձայնագիրը վերջ տվեց երկու հարևան պետությունների միջև սահմանային վեճերին, որոնք գոյություն ունեին հարյուր տարուց ավել: Կարգավորվեցին նաև ֆինանսական խնդիրները: Խորհրդային Միությունը համաձայնություն տվեց մարել Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ լենդ-լիզի գծով ռազմական բեռները Իրանի տարածքով ստանալու դիմաց պարտքերի գումարները:

Սակայն Մոսկվայի հետ կնքված հիշյալ և մի շարք այլ համաձայնագրերը ի վիճակի չեղան որևէ փոփոխություն մտցնելու շահական կառավարության կողմից ընտրած արևմտամետ կուրսի մեջ: Մանուչեհր Էղբալի վարչապետության երեք տարիները (1957-1960 թթ.) հանդիսացան Իրանի նոր քաղաքականության՝ «պոզիտիվ նացիոնալիզմի» գործնական իրականացման տարիներ: Այդ քաղաքականությունը իրենով նշանավորում էր սկզբունքորեն նոր մոտեցումներ Իրանի արտաքին

քաղաքական դոկտրինի մեջ: «Նասիոնալիզմե մոսքաքի» էությունը կայանում էր նրանում, որ Իրանը իր արտաքին քաղաքականության բնագավառում բրիտանական գաղութատիրության և միջազգային կոմունիզմի միջև խուսանավելիս որպես «երրորդ ուժ» ընդունում էր ԱՄՆ-ին, որի հետ դաշինքի ամրապնդումը դիտվում էր որպես «պոզիտիվ (դրական) նացիոնալիզմի» քաղաքականության հիմնարար դրույթ: Այդ առթիվ Մոհամմադ Ռեզա շահը իր հուշերում գրում է, որ «ի տարբերություն նախկին կայսրությունների՝ ԱՄՆ-ը երբեք չի ձգտել նվաճել մեր երկիրը և նրա նկատմամբ հաստատել իր տիրապետությունը»:

Իրանական մամուլը իր հերթին նշում էր, որ Իրանը երկար ժամանակ զբաղված էր «երրորդ ուժի» որոնումներով, որպեսզի, համագործակցելով նրա հետ հնարավոր լիներ ազատվել հյուսիսից ու հարավից մշտապես Իրանի վրա ճնշում գործադրող երկու ուժերի՝ Ռուսաստանի և Անգլիայի կեղեքումից: Մամուլը զարգացնում էր նաև այն միտքը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այդպիսի երկիր դարձավ «հզոր և ազատասեր Ամերիկայի Միացյալ Նահանգները»:

Հարկ է նշել, որ «պոզիտիվ նացիոնալիզմը» հակադրվեց Մոսաղեղի կողմից իրականացվող «բացասական հավասարակշռության» կուրսին, որը ենթադրում էր, որ Իրանը հնարավորություն կունենա արդյունավետ կերպով զարգանալ միայն քաղաքականապես լիցքաթափված միջազգային իրադրության պայմաններում: Այլ կերպ ասած՝ Մոսաղեղը գտնում էր, որ Իրանը պետք Արևմուտքի և Արևելքի միջև հակամարտության պայմաններում պահպանի չեզոքություն: Այդ տեսակետի ընդդիմախոսները հայտնում էին այն կարծիքը, որ կտրուկ կերպով հանդես գալով անգլիացիների դեմ՝ Մոսաղեղի կողմնակիցները գործնականում ճանապարհ բաց արին կոմունիզմի ներթափանցմանը Իրան:

«Պոզիտիվ նացիոնալիզմի» տրամաբանական շարունակությունը հանդիսացավ 1959թ. մարտի 5-ի իրանա-ամերիկյան երկկողմանի ռազմական համաձայնագրի կնքումը, որի ստորագրումից հետո շահական կառավարությունը սկսեց սպառազինությունների անզուսպ մրցավազք: Միաժամանակ պետք է խոստովանել, որ հիշյալ համաձայնագրի կնքումը հնարավորություն տվեց շահին՝ ձեռնամուխ լինել Իրանի զինված ուժերի արդիականացմանը: 1959 թ. իրանա-ամերիկյան ռազմական համաձայնագիրը Իրանին տալիս էր անվտանգության որոշակի երաշխիքներ: Նրանում ասվում էր, որ որևէ երրորդ պետության կողմից Իրանի նկատմամբ ագրեսիա իրականացնելու դեպքում ԱՄՆ-ն իրավունք է ստանում Իրանի տարածքում ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները

այն կասեցնելու համար, ներառյալ զինված ուժերի օգտագործումը:

ԱՄՆ-ի օգնությամբ կազմվեցին Իրանի զարգացման ու վերակառուցման առաջին (1949-1956 թթ.) և երկրորդ (1956-1962 թթ.) յոթնամյա պլանները, որոնց ֆինանսավորումը իրագործվում էր Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի, Միջազգային տարաղրամային ֆոնդի և մի շարք այլ կազմակերպությունների կողմից: Իրանին վարկեր, փոխառություններ և առհասարակ տնտեսական օգնություն սկսեցին ցուցաբերել նաև արևմտյան պետությունները, մասնավորապես Անգլիան, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը և Ֆրանսիան: Օտարերկրյա պետությունների համար Իրանը դարձավ առևտրական մի իսկական «դրախտավայր»: Խանութները գերհագեցած էին արտասահմանյան բազմապիսի ապրանքներով: Օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ բացվում էին բազմաթիվ բանկեր: 50-ական թթ. իրանական և օտարերկրյա խառը կապիտալի շնորհիվ ստեղծվեցին մի շարք քիմիական, նավթաքիմիական, դեղագործական, ռետինե իրերի արտադրության, ավտոմեքենաների հավաքման, էլեկտրաակենցաղային արդյունաբերական ձեռնարկություններ: Արտաքին առևտրի բնագավառում իրանական կառավարությունը սկսեց կիրառել «ազատ առևտրի» քաղաքականություն:

Միաժամանակ Իրանի կառավարող վերնախավը փորձում էր վարչակարգի ամրապնդման և նրա կենսունակության բարձրացման նպատակով իրագործել որոշ ազատականացման քաղաքականություն: Այսպես՝ թույլատրվեց մի շարք քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների լեգալ գործունեությունը և այլն:

1958 թ. հուլիսին Իրաքում տեղի ունեցած հեղափոխությունից հետո, երբ Բաղդադի պակտը փլուզվեց, Իրանը կանգնեց նոր մարտահրավերների առջև: Սակայն, հավատարիմ մնալով իր ընտրած արևմտյան կողմնորոշմանը՝ Թեհրանը անդամագրվեց Բաղդադի պակտի փոխարեն ստեղծված նոր ռազմաքաղաքական դաշինքին, որը կոչվում էր ՍԵՆՏՕ («Սենթրալ թրիթի օրգանիզեյշն»):

Խորհրդային Միության կառավարությունը 1959 թ. հունվարին Թեհրան ուղարկեց իր ներկայացուցիչ Վ. Սեմյոնովին, որը կոշտ տոնով Իրանի արտաքին գործերի մինիստր Ալի Ասղար Հեքմաթից պահանջեց անհապաղ դուրս գալ «այդ ագրեսիվ պակտից»: Սակայն խրուշչովյան դիվանագիտությունը ճեղքվածք տվեց. բանակցություններն ավարտվեցին անարդյունք, և խորհրդային պատվիրակությունը ձեռնունայն վերադարձավ Մոսկվա: Սովետա-իրանական հարաբերությունները

քևակոխեցին ճգնաժամի մի նոր էտապ:

Երկրի ներքին կայունությունն ապահովելու համար բանակը համարելով վարչակարգի գլխավոր քաղաքական-ուժային հենարանը՝ միաժամանակ շահը սկսեց կարևոր նշանակություն տալ ոստիկանության ու հատուկ ծառայությունների վերակազմակերպմանը, որոնց օգնությամբ երկրում ծայր առան հալածանքներ բոլոր այլախոհների նկատմամբ: Այդպիսի կառույցներից ամենանշանակալիցը ՍԱՎԱԿ-ն էր («Սազման-ե ամնիյաթ վա իթթիլաաթ-ե քեշվար»), որի հիմնադրման վերաբերյալ օրենքը խորհրդարանի կողմից ընդունվեց 1957 թ.:

2. ՔԱՂԵՔՈԽՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ: «ՍՊԻՏԱԿ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Դեռևս 50-ական թթ. կեսերից սկսած՝ Իրանի ֆինանսական համակարգում և տնտեսության մեջ սկսեցին նկատվել ճգնաժամային երևույթներ: Դրանք առանձնակի ծանր դրսևորումներ ունեցան գյուղատնտեսական արտադրության վրա՝ աղետալի չափերով իջեցնելով իրանական ժողովրդի կենսամակարդակը: Գյուղատնտեսական երկիրը իրեն չէր կարողանում ապահովել սննդամթերքներով և ստիպված էր արտասահմանից ներմուծել հացահատիկ, բուսական յուղ, միս, կաթ և այլ մթերքներ:

Անկում էր նկատվում նաև արդյունաբերության բնագավառում: Թույլ զարգացած Իրանի արդյունաբերությունը չէր դիմանում օտարերկրյա ապրանքների մրցակցությանը: Բազմաթիվ ձեռնարկություններ փակվեցին: Սնանկացումները դարձան սովորական երևույթ: Խորանում էր նաև ֆինանսական ճգնաժամը: Ռազմական չափազանց մեծ ծախսերը կլանում էին նավթից ստացվող եկամուտների մեծ մասը: Իրանը ստիպված էր մշտապես օգնության խնդրանքով դիմել ԱՄՆ-ին, Անգլիային և Արևմտյան Գերմանիային: Միայն Վաշինգտոնը, 1950 թ. սկսած, 11 տարվա ընթացքում Իրանին տրամադրեց 11 միլիարդ դոլար: Սակայն այդ գումարները նս չէին բավարարում բյուջեի ծախսերը: Իրանական ժողովրդի վիճակը տարեցտարի վատթարանում էր: Յուրաքանչյուր տարի տեղի էր ունենում 10-20 % ապրուստի թանկացում: Ապրանքների և մթերքների գների աճը բազմիցս գերազանցում էր աշխատավար-

ձի աճի տեմպերին: Վիճակագրությունը հաստատում էր, որ իրանական գյուղացու կենսամակարդակը դարձել էր ամենացածրը ողջ Մերձավոր ու Միջին Արևելքում: Գյուղի աշխատավորի տարեկան եկամուտը միջին հաշվով կազմում էր 150-200 թուման, այսինքն՝ 20-27 դոլար:

1957 թ. մարտի 9-ին Սենատում իր ելույթի ժամանակ Խոջա Նուրին հայտարարեց. «Մեր երկիրը, որն առանց դժվարության կարող էր լինել Միջին Արևելքի հացի շտեմարանը, այնպիսի վիճակում է հայտնվել, որ ստիպված է Ամերիկայից ներմուծել ցորեն, յուղ, ձու և չնայած դրան՝ Իրանի բնակչության մեծ մասը կուշտ չի ուտում: Բանը հասել է նրան, որ մի շարք շրջաններում բնակիչները խոտ են ուտում»: 1959 թ. «Սեդա-ե մարդոմ» թերթը դառնությամբ գրում էր, որ Բելուջիսթանի բնակիչները սովամահ չլինելու համար ուտում են, ինչ պատահի՝ խոտ, արմավի կորիզ, մորեխ և այլն, որ իրանական ժողովրդի 95 %-ը ապրում է ծայր աղքատության մեջ:

Իրանի բնակչությունը 90 %-ով անգրագետ էր: Բժշկական սպասարկում համարյա գոյություն չուներ: Երեխաների մահացության տոկոսը չափազանց բարձր էր: 1959 թ. շահն ինքը հայտարարեց, որ Իրանում կյանքի միջին տևողությունը կազմում է 27 տարի: 50-ական թթ. վերջին Իրանի քաղաքների փողոցներում և ողջ երկրի ճանապարհների վրա թափառում էին բազմաթիվ անտուն, քաղցած մարդիկ: Մեծ մասամբ դրանք քայքայված, ծայր աղքատության հասած գյուղացիներ էին, որոնք, լքելով իրենց գյուղերը, լցվել էին քաղաքները՝ աշխատանք գտնելու հույսով: Չունենալով գոյության որևէ աղբյուր և ապագայի հեռանկար՝ այդ աղքատ ու տնանկ գյուղացիների զանգվածները դառնում էին Իրանի կառավարող շրջանների համար վտանգավոր մի ուժ: Նա կազմակերպված չէր, բայց իր հուսահատության մեջ պատրաստ էր ամեն ինչի: Արևմտյան մամուլը գրում էր, թե «Թեհրանի հարավում խղճուկ հյուղակների մեջ գոյություն է քարշ տալիս մի ամբողջ պրոլետարական ապստամբ բանակ, որը ձևավորվել է գյուղական փախստականներից և սպասում է, թե երբ է հասնելու իր ժամը»:

Իրանական ժողովրդի կյանքի այս ծանր պայմանները դառնում էին համատարած երևույթ: Վարչակարգի համար վտանգ էին ներկայացնում ոչ միայն գյուղացիները, այլև բանվորները, գործազուրկները, կիսաքաղց գոյություն քարշ տվող արհեստավորները, մանր ծառայողները, որոնք ստանում էին խղճուկ աշխատավարձ, որ բավարարում էր միայն այն բանի համար, որ սովից չմեռնեն, այլև ավելի ապահովված մտավորականության, ազգային բուրժուազիայի խավերը, որոնք ակնառու կեր-

պով տեսնում էին երկրում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը և սկսել էին հանդես գալ հանուն դրանց իրականացման: Գործոն ուժի էր վերածվում նաև ուսանող երիտասարդությունը, որը արտասահմանում ուսում ստանալուց հետո վերադառնում էր հայրենիք, սակայն այնտեղ չէր գտնում աշխատանք: Եվրոպական մամուլը գրում էր, որ ունևոր ծնողների զավակները Եվրոպա էին մեկնում ուսանելու՝ ունենալով պահպանողական հայացքներ, սակայն վերադառնում էին որպես հեղափոխականներ:

Մի խոսքով՝ իրանական ժողովուրդը սկսում էր հասկանալ, որ այդպես շարունակվել չի կարող: Հասարակայնության այդ դժգոհությունը գնալով ծեռք էր բերում քաղաքական երանգ: Թեհրանում և մի շարք քաղաքներում սկսվեցին ուսանողների, ուսուցիչների, պետական ծառայողների, վաճառականների հանրահավաքներ ու ցույցեր, բանվորների գործադուլներ, գյուղացիների հուզումներ:

Արտասահմանյան քաղաքական գործիչները, թղթակիցները և նույնիսկ պարզ դիտորդները, այցելելով Իրան, իրենց պարտքն էին համարում համաշխարհային հասարակայնությանը նախազգուշացնել, որ Արևմուտքի երկրների տեսակետից երկիրը գտնվում է անդունդի եզրին: Շատերը հակված էին ենթադրելու, որ Իրանում ուրվագծվում էին հեղափոխության նախանշաններ: «Երկրի ֆինանսական վիճակը օրհասական է, գանձարանը դատարկ է: Ես տեսա մի ժողովրդի, որն այլևս չի կարող հանդուրժել իր աղքատությունը»,- գրում էր ֆրանսիացի մի լրագրող:

Իրանի կառավարող շրջանների առավել հեռատես ներկայացուցիչները իրենց հստակորեն հաշիվ էին տալիս, որ երկրում հարաճուն կերպով մեծանում է սպառնալիքը գոյություն ունեցող վարչակարգին: Նրանց առջև կանգնել էր անհետաձգելի մի խնդիր՝ շտապ կարգով ձեռնարկել արմատական միջոցներ: Այլ կերպ ասած՝ այդ մարդիկ հասկանում էին, որ եթե տեղի չունենա «հեղափոխություն վերևից» կամ «խաղաղ հեղափոխություն», ապա անխուսափելիորեն կիրականանա «հեղափոխություն ներքևից» կամ «արյունոտ հեղափոխություն»: Շահը մի քանի անգամ շեշտել էր, որ ինքը իրականացնելու է «սպիտակ կամ անարյուն հեղափոխություն»՝ «արյունոտ հեղափոխությունից» խուսափելու համար: Իսկ վարչապետ Ալի Ամինին մշտապես շեշտում էր, որ ունևոր դասակարգը ինքը պետք շահագրգռված լինի նրանում, որ բարելավվի ընչազուրկ զանգվածների վիճակը, հակառակ դեպքում հարուստները կկորցնեն ամեն ինչ:

Դեռևս 1955 թ. ապրիլին, վերադառնալով ԱՄՆ կատարած պաշտո-

նական այցից, Մոհամմադ Ռեզա շահ Փեհլևին կառավարության անդամներին հայտարարեց. «Ես ցանկանում եմ, որ դուք երկրում իրականացնեք հեղափոխություն: Ես ուզում եմ, որ տեղի ունենա հեղափոխություն: Իմ կարծիքով՝ մենք այն պետք է իրականացնենք ավելի շուտ, քան ուրիշները կօգտվեն առիթից, և իրենք կիրականացնեն: Եթե մենք այդ կերպ չվարվենք, ապա մեր տեղը դա ուրիշները կանեն: Եթե դուք չկարողանաք իրականացնել այն ծանր խնդիրը, որը ես հանձնարարել եմ ձեզ, ապա ես կհեռացնեմ ձեզ ձեր զբաղեցրած պաշտոններից»:

Իրանում «հեղափոխական իրադրության» կապակցությամբ անհանգստություն էին հայտնում նաև արևմտյան տերությունները, որոնց անհրաժեշտ էր կայուն և ամուր Իրան «պաշտպանողական դաշինքների» արևմտյան համակարգում: Հարկ է շեշտել, որ Իրանում ծավալվող քաղաքական, տնտեսական և սոցիալական ճգնաժամը համընկավ ԱՄՆ-ի քաղաքականության «նոր» կուրսի հետ Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների նկատմամբ, որը հռչակվել էր նախագահ Քենեդիի կառավարության կողմից: Այդ քաղաքականությունը ենթադրում էր նշված երկրներում իրականացնել «ազատականացման» գիծ, անց կացնել սոցիալական և տնտեսական վերափոխություններ, մասնավորապես արմատական բարեփոխումներ կատարել գյուղատնտեսություն մեջ, վերացնել անհավասարությունը ազգային եկամուտի բաշխման գործում, այդ երկրներում ապահովել «սոցիալական արդարություն և տնտեսական առաջադիմություն»:

Մոհամմադ Ռեզա շահ Փեհլևին հանդես եկավ «Սպիտակ հեղափոխություն» վերտառությամբ մի գրքով, որտեղ շարադրված էին նրա մտածումները Իրանում տեղի ունենալիք բարեփոխումների մասին, որոնք ստացան «շահի և ժողովրդի հեղափոխություն» անվանումը:

Այդ խնդիրների իրականացման գործը դրվեց դոկտոր Մանուչեհր Էղբալի կառավարության վրա, որն իշխանության գլուխ եկավ 1957 թ. ապրիլին: Վերջինս հնարավոր համարեց թույլ տալ, որ չափավոր կուսակցություններն ու քաղաքական կազմակերպությունները ստանան լեգալ գործունեության իրավունք:

Հասարակական կյանքի արտաքին ժողովրդավարականացումը իրականացվում էր միաժամանակ պետական կառավարման կենտրոնացված համակարգի ամրապնդմամբ ու կատարելագործմամբ: 1958 թ. սկսեց իրականացվել մի շարք մինիստրությունների ու պետական հիմնարկությունների վերակառուցում: Կառավարությունը քայլեր ձեռնարկեց կոռուպցիայի դեմ պայքարելու համար: Կաշառակերությունը, գան-

ծագողությունը և աստիճանավորների այլ չարաշահումները կանխելու նպատակով ստեղծվեց շահական տեսչություն: 1958 թ. ընդունվեց օրենք, որը պետական ծառայողներին, խորհրդարանի պատգամավորներին, կառավարության ու շահի ընտանիքի անդամներին արգելում էր մասնակցել պետական գործարքներին: Ի հավելումն այդ օրենքի՝ 1959 թ. կառավարությունը հրապարակեց օրենք, որը կոչվում էր «Որտեղի՞ց ես վերցրել»: Ըստ այդ օրենքի՝ պետական ծառայության մեջ գտնվող մարդիկ պարտավոր էին պարբերաբար տեղեկություններ ներկայացնել իրենց եկամուտների ու անշարժ գույքի մասին:

Պետական վերափոխություններն ընթանում էին շահի անձնական իշխանության աստիճանական ամրապնդմամբ, որն ավելի հաճախակի էր իր վրա վերցնում օրենսդրական նախաձեռնությունը և ավելի ու ավելի գործուն կերպով էր խառնվում գործադիր իշխանության գործառույթներին՝ դրանով իսկ ոտնահարելով սահմադրական ազատությունները: Տեղի էր ունենում խորհրդարանի օրենսդրական իրավունքների փաստացի սահմանափակում և կառավարության գործունեության նկատմամբ նրա հսկողության հնարավորությունների նվազում: Այդ լծակները հարաճուն կերպով անցնում էին շահի ձեռքը: Վերջինիս իշխանությունը գնահատելով որպես քաղաքական կայունացման կարևոր գործոն՝ Իրանի կառավարող շրջանները ամեն կերպ նպաստում էին նրա ուժեղացմանը՝ իրենց այդ ճգտումը քողարկելով «ազգային ու պետական միասնության» կարգախոսի ներքո, որն իբր մարմնավորվում էր հանճինս միապետության ինստիտուտի:

Միապետության հեղինակությունը ամրապնդելու նպատակով 1957 թ. ստեղծվեց բարեգործական «Փեհլևի ֆոնդը», որը ձևավորվեց գյուղացիներին շահապատկան հողերի վաճառքի, շահին պատկանող ձեռնարկությունների, հյուրանոցների և այլն եկամուտներից ստացվող գումարներից: Ֆոնդի միջոցները ծախսվում էին գլխավորապես մշակութային միջոցառումների, լուսավորության ու առողջապահության վրա:

Հրատապ հարց էր հանդիսանում ագրարային բարեփոխման շուտափույտ իրականացումը: XXդ. 60-ական թթ. սկզբին իրանական գյուղերում բնակվում էր երկրի ողջ բնակչության ավելի քան 70%-ը: Միանգամայն ակնհայտ էր, որ առանց ագրարային բարեփոխման հնարավոր չէր հաղթահարել իրանական գյուղում առկա տևական համակարգային ճգնաժամը: Իրանի կառավարող շրջանները հասկացել էին, որ գյուղատնտեսության մեջ տիրապետող կիսաավատական հարաբերությունները արգելակում են ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ ընդհան-

բապես տնտեսության զարգացումը: «Իրանական գյուղատնտեսությունը վերջին երկու հարյուրամյակի ընթացքում գործնականում ոչ մի փոփոխության չի ենթարկվել»,- 1955 թ. մայիսի 2-ին գրում էր Թեհրանում հրատարակվող «Իրան պրես» թերթը: Կալվածատերերի կողմից գյուղացիության միջնադարյան եղանակներով շահագործումը, սոցիալական աղաղակող անհավասարությունը և այլն էլ ավելի էին շիկացնում մթնոլորտը:

Ի դեպ, Իրանում համակարգային բարեփոխումներ իրականացնելու պահանջը ամենայն վճռականությամբ դրվում էր նաև ԱՄՆ-ի կողմից: 1961 թ. մայիսի 25-ին տեղի ունեցած իր ծրագրային ելույթում պրեզիդենտ Ջ. Քենեդին առաջ քաշեց մի թեզիս այն մասին, որ ԱՄՆ-ի ռազմական օգնությունը ի վիճակի չէ ապահովել կայունություն թույլ զարգացած այն երկրներում, որտեղ նրանց ղեկավարները պատշաճ ուշադրություն չեն դարձնում այնպիսի կարևոր պրոբլեմի վրա, ինչպիսին սոցիալական խնդիրն է:

Իրանի կառավարող շրջանները որոշեցին անհապաղ իրագործել ագրարային բարեփոխում: Այն ենթադրում էր սահմանափակել խոշոր կալվածատիրական հողատիրությունը և այդ հողերի մի մասը հանձնել գյուղացիներին: Այդ ուղղությամբ առաջին օրինակը տվեց ինքը՝ շահը, որը ձեռնամուխ եղավ շահապատկան և պետական հողերի (խալիսե) բաժանմանը գյուղացիներին: Վերջիններս այդ հողերը ձեռք էին բերում 15 տարվա ընթացքում նրա արժեքը մարելու պայմանով: Անկասկած, այդ քայլով շահը կարողացավ շահել որոշակի քաղաքական կապիտալ:

Ագրարային բարեփոխման ուղղությամբ այդ առաջին քայլերից հետո 1959 թ. դեկտեմբերի 6-ին հրապարակվեց օրինագիծ, որը սահմանում էր հողատիրության մաքսիմում չափ, որից ավել կալվածատերերի ձեռքերում գտնվող հողերը ենթակա էին վաճառքի: Միաժամանակ օրենքը կալվածատերերին էր թողնում մրգատու այգիները, տնկարանները և թեյի պլանտացիաները, ինչպես նաև այն հողերը, որոնք մշակվում էին վարձու բանվորների օգնությամբ:

Ագրարային բարեփոխումը վերջին հաշվով նպատակ ուներ կիսաֆեոդալական սեփականատերերի կալվածքները վերակառուցել մանր ապրանքային գյուղացիական տնտեսությունների բուրժուականացած կալվածատերերի կապիտալիստական տնտեսության: Այդ ճանապարհով ենթադրվում էր հասնել արտադրության աճի, ազգային արդյունաբերության համար շուկայի ընդլայնման և գյուղի աշխատավորության դժգոհության մեղմացման:

Շահապատկան և խալիսե հողերի բաժանումը անմիջապես աջակցություն գտավ ԱՄՆ-ի կողմից, որը դրա մեջ տեսնում էր արմատական

միջոց Իրանում գյուղացիական շարժումները կանխելու և կոմունիզմի գաղափարների տարածումը արգելակելու ուղղությամբ:

Սակայն, չնայած շահի կոչերին՝ հողերի բաժանման հարցում հետևելու իր օրինակին, խոշոր կալվածատերերը, ցեղերի խաները և այլն ոչ միայն չանսացին կառավարության հորդորներին, այլև հանդես եկան այդ միջոցառումների դեմ, որը հասարակության մեջ առաջ բերեց խիստ բացասական ռեակցիա:

Հենց հասարակական կարծիքի ճնշման ներքո կառավարությունը ձեռնարկեց մի շարք վճռական միջոցառումներ ագրարային բարեփոխումը իր ավարտին հասցնելու համար: Իրանից վոնդվեց հարուստ հողատերերի առաջնորդ գեներալ Թիմուր Բախթիարը: Կառավարությունը հրամայեց դատական հետապնդման ենթարկել այն անձանց, ովքեր, հակառակ օրենքի, կատարել են զանազան անօրինական հողային գործարքներ: Կիրառվում էին նաև հարկադրական միջոցառումներ այն կալվածատերերի նկատմամբ, ովքեր հրաժարվում էին կատարել օրենքի պահանջը ագրարային բարեփոխման վերաբերյալ:

Այդ միջոցառումները, ինչպես նաև վախը, որ գյուղացիությունը կարող է զինված ելույթների դիմել իրենց դեմ, կալվածատերերի զգալի մասին ստիպեցին համակերպվել, և չցանկանալով վեճի մեջ մտնել կենտրոնական կառավարության հետ՝ համաձայնություն տվեցին ագրարային բարեփոխման մասին օրենքին:

1962 թ. հունվարի 14-ին ընդունվեց ագրարային բարեփոխման վերաբերյալ նոր օրենք: Այն նշանակալիորեն տարբերվում էր նախորդ օրենքից: Նոր օրենքը սահմանափակում էր խոշոր հողատիրության չափերը: Պաշտոնապես այդ օրենքը կոչվեց ագրարային բարեփոխման օրենքի «հավելում»: Հողային բարեփոխման վերաբերյալ օրենքը թշնամանքով ընդունվեց նաև իրանական հոգևորականության կողմից: Այդ ակտը փաստորեն կառավարության և բարձրաստիճան հոգևորականության փոխհարաբերությունների շեշտակի վատացման սկիզբը հանդիսացավ: Առաջինը այդ բարեփոխման դեմ հանդես եկավ այաթոլլա Բորուջերդին, որը դիմեց վարչապետին իսլամի սրբազան օրենքների հետ այդ օրինագծի անհամատեղելի լինելու մասին գրավոր դիմումով: Նույն բովանդակությամբ այաթոլլա Քեհբահանին մի նամակ ուղարկեց մեջլիսի նախագահ Հեքմաթին, որտեղ գրում էր, որ «ոչ մի սեփականատիրոջ չի կարելի զրկել իր ունեցվածքից, առանց օրինական պատճառի»: Նա եզրակացնում էր, որ նախագիծը չի կարող օրինական համարվել, եթե անգամ հաստատվի մեջլիսի կողմից: Օրինագծի կապակցությամբ հու-

զումներ սկսվեցին Թեհրանի համալսարանում: 1963 թ. Թավրիզում, Ղումում, Թեհրանում և մի շարք այլ քաղաքներում կառավարության դեմ տեղի ունեցան բողոքի ցույցեր, որոնք հրահրված էին հոգևորականության կողմից: Փակվեց Թեհրանի բազարը: Սակայն, հակառակ այդ բոլորի, կառավարությունը շարունակում էր հողային բարեփոխման իրականացումը՝ այն տարածելով նաև մզկիթապատկան վակֆային կալվածքների վրա:

Այդ առթիվ այաթոլլահ Քեհբահանին բողոքի մի նամակ ուղարկեց վարչապետին, որտեղ գրում էր. «Իր սեփական հողերի հետ շահը թող վարվի այնպես, ինչպես կամենում է: Եթե կալվածատերերը այնքան հիմար գտնվեցին, որ իրենց հողերը տվեցին, ապա դա նրանց գործն է. բայց թող շահը ձեռք չտա մզկիթների հողերին: Ալլահի կամքով է, որ մզկիթները հողերի են տիրում»: Այդ օրերին հակաշահական ակտիվ պայքարի մեջ էր ընդգրկվել նաև ազդեցիկ հոգևորականներից այաթոլլահ Ռուհոլլա («Աստծո շունչ») Մուսավի Խոմեյնին: Ծնվել է 1900 թ. մայիսի 18-ին, Թեհրանից 250 կմ հարավ գտնվող Խոմեյն քաղաքում, հոգևորականի ընտանիքում: Դեռևս 1942 թ. իր հրատարակած «Գաղտնիքների բացահայտումը» աշխատության մեջ Խոմեյնին փորձում էր ապացուցել Փեհլևի դինաստիայի թագավորության ոչ լեգիտիմ (օրինական) լինելը: Նա վարչակարգի դեմ ուներում էր կրակոտ ելույթներ՝ սպանիչ քննադատության ենթարկելով ոչ միայն շահին, այլև ամբողջ համակարգը: Իր կրոնափիլիսոփայական բնույթի աշխատություններից մեկում նա գրում էր, որ այն հրամանները, որոնք իջեցված են բռնատիրական պետության կողմից, զուրկ են ուժից և ենթակա են այրման: 1944 թ. Խոմեյնին հոգևոր դեմքերից միակն էր, որը տեղից վեր չկացավ, երբ նոր շահը այցելեց Ղումի կրոնական կենտրոնը: Նա շահին անվանում էր «կեղեքիչ», «շայթան», իսկ նրա շրջապատը՝ Ղուրանի դարձվածքի համաձայն՝ «թաղութի» («սատանայի ծառաներ»): Հանդիպումներից մեկի ժամանակ շահը սպառնացել էր Խոմեյնիին. «Ինձ մի՛ հասցնի միևչև այն աստիճանը, որպեսզի ես հագնեմ հորս սապոգները»: Դրան անմիջապես հետևել էր պատասխանը. «Քո հոր սապոգը մի քանի համար մեծ է քեզ համար»:

Խոմեյնին շահի «սպիտակ հեղափոխության» համոզված հակառակորդ էր: Հանդես գալով շահական բարեփոխումների, հատկապես հողային ռեֆորմի դեմ՝ Խոմեյնին Մոհամմադ Ռեզա շահին համեմատեց խալիֆ Յեզիդի հետ, որը շիաների համար ամենաատելի դեմքերից մեկն է:

XX դ. 60-ական թթ. սկսած՝ Խոմեյնին դարձավ Իրանում դիմադրության ամենախոշոր գործիչը: Կրոնական ընդդիմությունը սկսեց աննող-

ջովին հեռվել նրա վրա: 1963 թ. հանդես գալով հարյուր հազարի հասնող ժողովրդի առջև՝ Խոմեյնին հայտարարեց, որ միայն մատի մեկ շարժում է պետք շահին գահընկեց անելու համար:

Իմամը իրանական ժողովրդի մեջ արթնացնում էր «շահիդության» («նահատակության») այն բոլոր բնազդները, որոնք ընկած էին շիաների կրոնական հավատալիքների հիմքում: Նա հավաստում էր, որ իսլամը միլիոնավոր զանգվածներին տալիս է մահվան սարսափից ձերբազատում, որովհետև ով զոհվել է շահի դեմ պայքարում, նա դառնում է «շահիդ» («նահատակ»), որով և դասվում է սրբերի շարքը:

Իր ուսմունքի հիմքում Խոմեյնին դրել էր հետևյալ հիմնարար գաղափարները. ազատություն, անկախություն և դիմադրություն օտար տիրապետությանը:

Խոմեյնու կառուցած ուսմունքի ելակետային սկզբունքը իսլամն էր: Բոլոր քաղաքական, տնտեսական և իրավական խնդիրները Խոմեյնին դնում էր իսլամական հողի վրա: Նրա համար իսլամը հանդիսանում էր և՛ մարդու բարոյական ինքնակատարելագործման միջոց, և՛ հասարակության սոցիալական վերակառուցման գործիք: «Իսլամն ամեն ինչ է»,- այս էր Խոմեյնու ուսմունքի պսակը: Հենց իմամի բերանով էլ իսլամը Իրանի միլիոնավոր զանգվածներին խոստանում էր ստեղծել «համընդհանուր արդարության հասարակություն»: Նրա հիմնական թեզերից մեկն այն էր, որ «իսլամը և Իրանը պետք է անկախություն ձեռք բերեն արևմտյան գաղութակալությունից, իսկ իսլամական հոգևորականությունը պետք է ձերբազատվի ակադեմիական զսպաշապիկից»: Նա գտնում էր, որ մահմեդական հոգևորականները պետք է ակտիվ մասնակցություն ունենան երկրի քաղաքական կյանքին:

Եգիպտական ականավոր քաղաքական գործիչ Մոհամմադ Հայքալը բերում է Խոմեյնու՝ հետևյալ խոսքերը. «Եթե գոյություն ունեն հակասություններ ճշմարտության ու հանգամանքների միջև, ապա պետք է փոխել հանգամանքները և ոչ թե ճշմարտությունը»:

Հայտնի է, որ Մոհամմադ Ռեզա շահի պաշտոնական գաղափարախոսության հիմքում ընկած էր ազգայնականությունը, որը նա համարում էր ազգի ու պետության վերընթաց զարգացման միակ հուսալի երաշխիքը: Մինչդեռ Խոմեյնին ազգայնականությունը համարում էր հեթանոսական գաղափար: «Իսլամական կառավարումը» գրքում նա շարադրում էր իր տեսակետները Իրանի ապագա պետական կառուցվածքի մասին: Նա իրանական հասարակությունը պատկերացնում էր իսլամական համայնքի՝ «ումմայի» ձևով: Կտրուկ քննադատում էր արևմտյան քաղա-

քակրթությունը, համակարգն ամբողջությամբ և մանավանդ վճռականորեն ժխտում էր արևմտյան ապրելակերպը: Նա գտնում էր, որ եթե արևմտյան տեխնիկան ռացիոնալ է, ապա, ամբողջությամբ վերցրած, արևմտյան համակարգի մասին դա չի կարելի ասել: Այդ համակարգը մարդկային հարաբերությունները վեր է ածել պարզ ապրանքային հարաբերությունների: Կապիտալիզմի անմարդկայնությանը Խոմեյնին հակադրում էր մետաֆիզիկան: Խոմեյնու ցանկացած համակարգը խարսխվում էր ոչ թե շուկայի և մրցակցության օրենքների վրա, ոչ թե պլանավորման և տնտեսական գործունեության պետական հսկողության վրա, այլ բարոյական սկզբունքների վրա: Նրա կարծիքով՝ ոչ մի անհրաժեշտություն չկա իրագործելու կառուցվածքային բարեփոխումներ, քանի որ այն բանից հետո, երբ հին վարչակարգի փչացած մարդիկ կհեռացվեն, ղեկավարներ կդառնան բարձր բարոյական հատկանիշներով օժտված մարդիկ:

Խոմեյնին միանշանակ ժխտում ու մերժում էր նաև սոցիալիզմը՝ այն համարելով անաստվածության վրա խարսխված ուսմունք: Ըստ այնմ՝ նա առաջ էր քաշում զարգացման երրորդ ուղու կոնցեպցիան, որը նա ձևակերպում էր հետևյալ կարգախոսներով. «Ո՛չ արևմուտք և ո՛չ էլ արևելք», «Ո՛չ աջերի հետ և ո՛չ էլ ձախերի, այլ իսլամի հետ»: Խոմեյնին մի առիթով հայտարարել էր. «Ամերիկան վատ է Անգլիայից, Անգլիան վատ է Խորհրդային Միությունից, իսկ Խորհուրդները վատ են նրանց երկուսից»:

1963 թ. Խոմեյնին Ղումում հրապարակեց մի հայտարարություն, որտեղ սպանիչ քննադատության էր ենթարկում Իրանում իշխանության քաղաքական էությունը՝ այն բնորոշելով որպես պրոիմպերիալիստական և հակաժողովրդական իշխանություն, որը իրանական ժողովրդին զրկում է իր օրինական իրավունքներից:

Խոշոր հոգևորականության ու շահական կառավարության միջև առճակատումն էլ ավելի ուժեղացավ, երբ բարեփոխումների ծրագրում տեղ գտավ նաև կանանց իրավունքների հարցը: Կառավարությունը գտնում էր, որ կանանց պետք է տղամարդկանց հավասար իրավունքներ տալ, ընձեռել ընտրելու և ընտրվելու հնարավորություններ և այլն: Մինչդեռ ազդեցիկ հոգևոր հեղինակությունները գտնում էին, որ սահմանադրությամբ և իսլամական օրենքներով կանանց տրված իրավունքները լիովին բավարար են: Ծավալուն պայքար սկսելով կառավարության այդ նախագծի դեմ՝ հոգևորականները հայտարարում էին, որ այն խախտում է ընտանիքի սրբությունը, իսլամի դոգմաները և հասարակությունը տանում է դեպի անբարոյականություն ու անկում: Այս հողի վրա հոգևորա-

կանության ղրդումով ծայր առան հակակառավարական բողոքի ցույցեր, փակվեցին շուկաները և այլն:

Սակայն կառավարությունը չընկրկեց: Նա լի էր վճռականությամբ՝ շարունակելու բարեփոխումների կուրսը: Ավելին՝ հրապարակվեց այսպես կոչված «շահի ծրագիրը», որն ավելի էր խորացնում բարեփոխումների իրականացման գործը: Ընդդիմությանը վճռական հարված հասցնելու համար կառավարությունը «շահի ծրագիրը» դրեց համաժողովրդական քննարկման, որից հետո 1963 թ. հունվարի 26-ին տեղի ունեցավ հանրաքվե: Ձայների գերակշիռ մեծամասնությամբ «շահի ծրագիրը» ստացավ ժողովրդի հավանությունը, իսկ ընդդիմությունը կրեց ջախջախիչ պարտություն:

1963 թ. ապրիլին շահը ծրագրեց ուխտագնացության մեկնել սրբազան Ղում քաղաքը և այցելել ութերորդ իմամ Ռեզայի քրոջ՝ Ֆաթիմայի դամբարանը: Սակայն իրականում նա մտադիր էր հանդիպել շիիթական հայտնի հեղինակությունների հետ և նրանց հաշտեցման ու համագործակցության կոչ անել: Բայց երբ ինքնակալը իր շքախմբով մոտեցավ մզկիթին, պարզվեց, որ առավել անվանի և հեղինակավոր ուլեմները այնտեղ չեն ներկայացել: Դա բացահայտ բոյկոտ էր: Մոլեգնությունից շահը կորցրեց ինքնատիրապետումը: Նա իր արտասանած ճառում հոգևորականության հասցեին թույլ տվեց վերին աստիճանի կոպիտ արտահայտություններ՝ նրան մեղադրելով դավաճանության և կեղծ հայրենասիրության մեջ: Նա կրոնի սպասավորներին անվանեց «սև հետադիմություն»՝ դրան ավելացնելով, որ իրանական ուլեմները «հարյուր անգամ ավելի դավաճաններ են, քան «ԹՈՒԴԵ» կուսակցության անդամները»: Նա հոգևորականությանը անվանեց երկրի առաջադիմության խոչընդոտ: Իր այդ ելույթով շահը փաստորեն մարտահրավեր նետեց հոգևորականությանը՝ համոզված լինելով, որ հաղթանակը իր կողմն է լինելու: Այդ հարցում նրան վստահություն էր ներշնչում իր հոր օրինակը, որը կարողանում էր ըմբոստ հոգևորականությանը պահել զուսպ վիճակում: Սակայն նա հաշվի չէր առնում այն հանգամանքը, որ ի տարբերություն 20-ական թթ. հոգևորականների՝ 60-ական թթ. այաթոլլաները հենվում էին բնակչության առավել լայն սոցիալական խավերի վրա, և, բացի այդ, նրանք օժտված էին կազմակերպչական ու քարոզչական աշխատանքի բավականին մեծ փորձով:

Ղումում շահի ելույթը ահազանգ եղավ իրանական թերթերի համար: Նրանք միաբերան հոգևորականներին հռչակեցին հետադիմական ու պահպանողական տարրեր, որոնք իրենց շահախնդիր նպատակներից

ելնելով՝ փորձում են իրանական ժողովրդին հակադրել նրա կրոնին՝ իսլամին, և դրանով իսկ կոնֆլիկտ ստեղծել ժողովրդի ու կառավարության միջև: Թերթերը հոգևորականությանը խորհուրդ էին տալիս հեռու մնալ քաղաքականությունից: «Էթելաաթ» թերթը գրում էր. «Շահը գտնում է, որ իրենց բարոյական նորմերով ու հոգևոր նվիրվածությամբ իրանական շիան շատ հետ է մնացել աշխարհի քարավանից: Նրա կարծիքով՝ հոգևորականության իսկական դերը ժողովրդի լուսավորման և նրա բարոյական ու կրոնական համոզմունքների ուժեղացման մեջ է»:

Այսպիսով՝ շահական կառավարությունը մտնում էր մի վտանգավոր խաղի մեջ: Հոգևորականությունը անպատասխան չթողեց շահի մարտահրավերը՝ զանգվածներին ոտքի հանելով հանուն «Ալլահի և իսլամի»: 1963 թ. մարտի 21-ին՝ նովրուզի (իրանական նոր տարվա) օրը, Խոմեյնին հրապարակեց մի հայտարարություն, որտեղ ասվում էր, որ այն պայմաններում, երբ իսլամին սպառնում է վտանգը, իրանցիների համար անիմաստ է տոնել ամանորը՝ նովրուզը, քանի որ նրանց համար ավելի շուտ սկսվում են սգո օրեր: Նա կառավարությանը մեղադրեց ԱՄՆ-ի և Իսրայելի շահերին ծառայելու մեջ: Հոգևորականության կոչով Թեհրանում, Մեշհեդում, Ղումում, Թավրիզում, Շիրազում, Սպահանում և այլ քաղաքներում սկսվեցին ժողովրդական ելույթներ, որոնք ուղեկցվում էին ոստիկանության հետ բախումներով: Մարտի 22-ին ՍԱՎԱԿ-ը կազմակերպեց զինված հարձակում Ղում քաղաքի Ֆեյզիյե մեդրեսեի աշակերտների վրա, որոնց հոգևոր ղեկավարը Խոմեյնին էր: Վերջինս ձերբակալվեց, սակայն շուտով ազատ արձակվեց:

1963 թ. հունիսի 4-ին իմամ Հուսեյնի մահվան հիշատակի օրը Խոմեյնին հորդորեց մոլլաներին մզկիթներում կարդալ քարոզներ, որոնցում անսքող կերպով սպառնալիքներ էին պարունակվում Փեհլևի դինաստիայի հասցեին: Քարոզներից բորբոքված հավատացյալները «Մահ բռնատիրոջը» աղաղակներով լցվեցին փողոցները: Իշխանությունները ձերբակալեցին Խոմեյնիին և 29 այլ կրոնական առաջնորդների: Ի պատասխան դրա՝ հազարավոր հավատացյալներ քաղաքներում կազմակերպեցին բողոքի ցույցեր՝ պահանջելով ազատ արձակել բանտարկվածներին: Ցուցարարների դեմ ուղարկվեցին ոստիկանական ու բանակային զորամասեր: Երկու օր շարունակ ընթանում էր արյունոտ ջարդ տանկերի և զրահամեքենաների կիրառմամբ: Սպանվածների թիվը միայն Թեհրանում կազմում էր հինգ հազարից ավելի մարդ:

Երկրում իրականացվող բարեփոխումների դեմ պայքար ծավալվեց նաև երկրի հարավի մի շարք ցեղերի (ղաշղայի, մամասանի, բոյեր-ահ-

մեղի և այլն) կողմից: Հարավային ցեղերի գոտում, հատկապես Ֆարսում և Խուզիստանում, ծավալվեցին իսկական ճակատամարտեր ցեղերի զինված ջոկատների և «կարգի պաշտպանության» ուժերի միջև: Ջախջախելով այդ շարժումները՝ կառավարությունը ձեռնամուխ եղավ ցեղերի զինաթափմանը: Հակապետական շարժումները գլխավորող ցեղերի վեց առաջնորդներ ռազմական դատարանի կողմից դատապարտվեցին մահապատժի, իսկ հինգ հոգի՝ տարբեր ժամկետներով բանտարկության:

Հունիսի 4-ի դեպքերի կապակցությամբ վարչապետ Ալամին գրած նամակում Խոմեյնին խիզախորեն ձեռնոց էր նետում իշխանություններին ասելով. «Իմ սիրտը պատրաստ է ձեր զինվորների սվինների համար: Ես երբեք չեմ լռի»: 1964 թ. նոյեմբերին կառավարության կողմից Խոմեյնին վտարվեց Թուրքիա: 1965 թ. աշնանը միջնորդների աջակցության շնորհիվ Թեհրանը թույլատրեց, որ նա Բուրսայից տեղափոխվի Էն-Նաջաֆ (Իրաք)՝ շիաների սրբազան քաղաքը, որտեղ նա վտարանդության մեջ անցկացրեց 13 տարի: Աքսորը էլ ավելի բարձրացրեց նրա հեղինակությունը: Շահական վարչակարգից դժգոհները ուխտագնացության էին մեկնում նրա մոտ:

1965 թ. նոյեմբերի 14-ին Նաջաֆում տեղի ունեցավ Խոմեյնիի առաջին ելույթը տեղական շիիթական համայնքի առջև: Նա առաջ քաշեց մի շարք կարևոր քաղաքական թեզեր: Հատուկ կանգ առավ Իրանի ապագա պետական կառուցվածքի հարցի վրա: Միաժամանակ նշեց, որ անհրաժեշտ է մզկիթները վերածել իսլամական շարժման ռազմաքաղաքական հենակետի: Հատուկ շեշտեց համայն աշխարհի մահմեդականների միասնության կարևորության պրոբլեմը: Շոշափեց նաև այն հարցը, որ հնարավոր է իսլամական աշխարհի բնական հարստությունները և առաջին հերթին՝ նավթը օգտագործել որպես քաղաքական լծակ արևմտյան տերությունների դեմ: Վերջապես՝ Խոմեյնին կոչ արեց մահմեդական հոգևորականությանը, մասնավորապես մեղրեսեների աշակերտներին (թալիբներին)՝ արժանապատվորեն կատարել իրենց վրա ընկած քաղաքական առաքելությունը:

Առհասարակ, Նաջաֆում գտնվելու օրերին Խոմեյնին այնտեղից մեղադրանքներ էր ուղղում շահին: Նրա քարոզները ձայնագրվում էին մագնիսական ժապավենների վրա և ուղարկվում Իրան՝ մոլլաների միջոցով տարբեր քաղաքների ու գյուղերի մզկիթներում ժողովրդին հաղորդելու համար:

Այսպիսով՝ առճակատումը բարեփոխումների կողմնակիցների ու հակառակորդների միջև գնալով ավելի ու ավելի էր սրվում ու խորանում: Իրավացի է իրանցի հեղինակ Լեյլա Ահմադը, երբ գրում է, որ շահի օրոք

Իրանի ագրեսիվ աշխարհականացումը և իսլամի անհաշվենկատ բռնորոշումը որպես պետության հետաղիմական ուժ՝ բացարձակապես չէր կարող բավարարել մահմեդական մի ժողովրդի, որը փոփոխությունների պատճառով լարված վիճակ էր ապրում:

1964 թ. մարտի 8-ին վարչապետ Հասան Ալի Մանսուրը խորհրդարանում հայտարարեց, որ իր կառավարությունը ագրարային ռեֆորմի հետ միաժամանակ պետք է վարի նաև երկրի ինդուստրացման քաղաքականություն: Այդ հայտարարությունը ճակատագրական եղավ նրա համար: Մի շարք ծայրահեղ իսլամական կազմակերպություններ («Ֆեդայան-ե Էսլամ», «Հեզբ-ե մելալ-ե էսլամի») նրա դեմ կազմակերպեցին ահաբեկչություն և սպանեցին նրան: Սակայն քաղաքական այդ սպանությունը չազդեց կառավարության վճռականության վրա՝ շարունակելու բարեփոխումների կուրսը:

Ստեղծվել էր մի վիճակ, երբ կառավարության ձեռնարկած ամեն մի քայլ հանդիպում էր ընդդիմության անզիջում ու կոշտ դիմադրությանը: Օրինակ՝ 1964 թ. հոկտեմբերի 13-ին և 25-ին մեջլիսը հաստատեց կառավարության ներկայացրած մի օրինագիծ՝ ամերիկյան զինվորական ծառայողներին դիվանագիտական անձեռնմխելիության արտոնություններ տրամադրելու և նորագույն զենքեր գնելու նպատակով երկու հարյուր միլիոն դոլար հատկացնելու մասին: Խոմեյնին անմիջապես խստորեն քննադատեց կառավարության այդ որոշումը և հայտարարեց, որ այդ օրինագծի հաստատումը հավասարազոր է դավաճանության: Հոկտեմբերի 26-ին Մոհամմադ մարգարեի աղջկա՝ Ֆաթիմայի ծննդյան օրվա առթիվ իր արած հայտարարության մեջ Խոմեյնին բացահայտ կերպով իր ատելությունն ու նողկանքը հայտնեց երեք պետությունների՝ ԱՄՆ-ի, Խորհրդային Միության և Մեծ Բրիտանիայի նկատմամբ՝ շեշտելով, որ իրանական քաղաքականությունը ամբողջապես ենթակա է այդ երեք պետությունների ազդեցությանը: Շեշտելով, որ նրանցից յուրաքանչյուրը վատ է մյուսից, և նրանցից ամեն մեկը առանձին-առանձին գարշելի է՝ Խոմեյնին համարում էր, որ «բայց այսօր մեր գլխավոր պրոբլեմը՝ վերաբերմունքն է ԱՄՆ-ի նկատմամբ: Այսօր մեր բոլոր դժվարությունները կապված են Ամերիկայի հետ, կապված են Իսրայելի հետ. Իսրայել պետությունը կախված է Ամերիկայից, իսկ մեր բոլոր պատգամավորներն ու բոլոր մինիստրները՝ բոլորն անխտիր, Ամերիկայի դրածոներն են: Մենք գործող խորհրդարանը մեր խորհրդարանը չենք համարում, մենք այս կառավարությունը մեր կառավարությունը չենք համարում: Նրանք բոլորը դավաճաններ են և ծախում են մեր երկրի շահերը»:

1965 թ. ապրիլի 10-ին պալատի պահակախմբի մի զինվորի կողմից շահի դեմ կազմակերպվեց անհաջող մահափորձ: Այդ ակտը վերագրվեց հոգևորականությանը՝ էլ ավելի սրելով կողմերի միջև թշնամական առճակատումը:

Սակայն, չնայած այդ բոլորին, շահը համառ հետևողականությամբ շարունակում էր «Սպիտակ հեղափոխությունը»: 1968 թ. սեպտեմբերի 15-ին, շահի հրամանագրի համաձայն, գյուղական վայրերում բացվում էին մշակույթի տներ, որոնք կոչված էին բնակչությանը ծանոթացնել ազգային մշակույթի և արվեստի հետ, անց կացնել սպորտային միջոցառումներ, քարոզել «Սպիտակ հեղափոխության» սկզբունքները և այլն: Մշակույթի տներին կից գործում էին անգրագիտության դեմ պայքարին աջակցող կենտրոններ, «Լուսավորության կորպուսներ» և այլն:

Գյուղական բնակչության շրջանում հիվանդությունների դեմ պայքարելու նպատակով կազմակերպվում էին «Առողջապահության կորպուսներ»: Դրանք լուրջ դեր խաղացին բնակչության մահացության (հատկապես երեխաների) տոկոսը նվազեցնելու գործում:

1963 թվականից գյուղերում սկսեցին բացվել այսպես կոչված «Արդարության տներ» («Ադալյաթ խանե»), որոնք կոչված էին լուծել բնակչության վեճերն ու կոնֆլիկտները և փոխարինելու էին կալվածատերերի կողմից կազմակերպված ինքնակոչ դատարաններին, որոնց գործունեության մեջ իշխում էր քմահաճ կամքը: «Արդարության տների» անդամներն ընտրվում էին գյուղի բնակիչների կողմից՝ իշխանության ներկայացուցիչների ներկայությամբ: 1970 թվականից սկսեցին կազմակերպվել նաև «Իրավաբանական կորպուսներ», որոնց խնդիրն էր իրավական օգնություն ցուցաբերել գյուղական բնակչությանը:

Այս բոլոր միջոցառումների շնորհիվ իրանական գյուղի աշխատավորության հիմնական զանգվածի նյութական վիճակը նկատելիորեն լավացավ: Դա ունեցավ այն հետևանքը, որ գյուղական բնակչության մեծամասնությունը սկսեց պաշտպանել «Սպիտակ հեղափոխությունը»: Մեղմացան հակասությունները պետության ու գյուղացիության միջև, և գյուղական շրջաններում տեղի ունեցավ ներքին քաղաքական որոշակի կայունացում:

«Սոցիալական արդարության հասարակություն» ստեղծելու կարգախոսի ներքո վերափոխություններ սկսվեցին նաև քաղաքում, որոնց նպատակն էր թուլացնել քաղաքի աշխատավորության դժգոհությունը, կանխել նրա կողմից մղվող տնտեսական և հատկապես քաղաքական պայքարը իշխանությունների դեմ կամ, ծայրահեղ դեպքում, այդ պայ-

քարը դնել կայուն հսկողության տակ: Իրանի պաշտոնական շրջաններ և հատկապես շահը բազմիցս շեշտում էին, որ երկրի տնտեսական ներուժի աճը և բնակչության լայն խավերի նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացումը երաշխիք պետք է հանդիսանան կոմունիզմի գաղափարների տարածման դեմ հաջող պայքարի համար:

Նշված միջոցառումների թվում կարևոր տեղ է զբաղեցնում 1963 թ. հունվարի 7-ին կառավարության կողմից ընդունված և նույն թվականի հունվարի 26-ին ժողովրդական հանրաքվեով հավանության արժանացած օրենքը ձեռնարկությունների շահույթներին բանվորների մասնակցության մասին: Այդ օրենքի գործողության մեջ մտնելուց հետո բանվորների նյութական դրությունը նշանակալիորեն բարելավվեց: Ի հավելումն նշված օրենքի՝ 1972 թ. իրանական կառավարությունը մշակեց մի ծրագիր բնակչությանը արդյունաբերական ձեռնարկությունների բաժնետոմսերը վաճառելու մասին:

Իրանական կառավարությունը լայն քարոզչություն ծավալեց այն իմաստով, որ Իրանը թևակոխում է այսպես կոչված «ժողովրդական կապիտալիզմի» դարաշրջանը: Նկատվում էր նաև բանվորների սոցիալական ապահովագրության արագ ծավալում, պետությունն ուժեղացրեց աշխատավորների շրջանում անգրագիտության դեմ մղվող պայքարը, զարգացրեց պրոֆեսիոնալ– տեխնիկական ուսուցման ցանցը և այլն: Բարեփոխման ենթարկվեցին նաև տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթությունը, առողջապահությունը, կադրերի պատրաստման գործը:

Ակնառու քայլեր կատարվեցին նաև կանանց էմանսիպացման, երկրի սոցիալ-տնտեսական կյանքում նրանց դերի մեծացման ուղղությամբ: Կանանց հատկացվեց տղամարդկանց հավասար ընտրական իրավունք, մեջլիսն ընդունեց օրենք ընտանիքում կանանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ, կանանց հասարակական ծառայության մասին և այլն:

1964 թվականից իրանական կառավարությունը որդեգրեց երկրի ինդուստրացման կուրս: Այդ գործում կարևորագույն դերակատարություն էր վերապահված բյուրոկրատական բուրժուազիայի վերնախավին, որն իրեն անվանում էր «տեխնոկրատներ»: Սրանք մերժում էին այն տեսակետը, որ «Իրանը գերազանցապես գյուղատնտեսական երկիր է»:

XX դ. 60-ական թթ. և 70-ական թթ. սկզբին Իրանը լուրջ հաջողություններ ձեռք բերեց երկրի տնտեսական ներուժի բարձրացման, հատկապես արդյունաբերության և ենթակառուցվածքների ստեղծման բնագավառներում: Նշված ժամանակաշրջանում Իրանի տնտեսությունը

զարգանում էր աննախընթաց բարձր տեմպերով: Համաշխարհային շուկայում նավթի գների աննախադեպ բարձրացման հետևանքով XX դ. առաջին անգամ Իրանի պատմության մեջ հայտնվեցին բացառիկ ֆինանսական հնարավորություններ, որոնց արդյունավետ օգտագործումը կարող էր ստեղծել երկրի սոցիալ-տնտեսական հետամնացությունը հաղթահարելու հիմքեր: 1963-1977թթ. ընկած շրջանում Իրանում նավթի հանույթն ավելացավ չորս անգամ, որի հետևանքով Իրանը այդ հումքի հանույթի գծով աշխարհում գրավեց չորրորդ տեղը (ԽՍՀՄ-ից, ԱՄՆ-ից և Սաուդյան Արաբիայից հետո): Եթե 1973 թ. նավթի վաճառքից ստացվող եկամուտները կազմում էին 5,1 միլիարդ դոլար, ապա 1977 թ. դրանք աճեցին ու հասան 23 միլիարդ դոլարի:

Նավթային եկամուտների շեշտակի աճի պայմաններում երկրում սկսեց իրականացվել լայնամասշտաբ ինդուստրացում, որը միտված էր պատմականորեն կարճ ժամանակամիջոցի ընթացքում ոչ միայն հաղթահարել երկրի տնտեսական հետամնացությունը, այլև Իրանը վերածել աշխարհի առաջատար պետություններից մեկի:

Իրանի վարչապետ Ամիր Աբբաս Հովեյդան 1970-ական թթ. սկզբին հայտարարեց. «Մեր ազգն օժտված է իր սեփական հանճարով: Երբ Իրանը կդառնա կատարելապես ինդուստրիալ երկիր, մենք կկարողանանք ասել, որ աշխարհում առաջին հին ազգն ենք, որ պատրաստ է մուտք գործել XXI դար»:

Իրանը խոշոր մասշտաբներով սկսեց ձեռք բերել ժամանակակից տեխնոլոգիաներ, պայմանագրեր էր կնքում երկրում ատոմային էլեկտրակայաններ, նավթաքիմիական կոմբինատներ, մետալուրգիական ու էլեկտրատեխնիկական գործարաններ և այլն կառուցելու վերաբերյալ: Կասկածից վեր է, որ երկրի ինդուստրացման քաղաքականությունը Իրանի սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից ունեցավ դրական հետևանքներ: Այդ քաղաքականությունը նշանակալից ազդեցություն ունեցավ նաև երկրի արտադրողական ուժերի զարգացման վրա:

Նավթային «բումի» շրջանում շահական վարչակարգը առաջնակարգ նշանակություն էր տալիս իր ռեալ հենարանի՝ զինված ուժերի ամրապնդմանը: 1971 թ., երբ բրիտանական կառավարությունը որոշում ընդունեց իր զորքերը դուրս բերել Պարսից ծոցի գոտուց, իրանական կառավարությունը որոշեց ձեռնամուխ լինել իր զինված ուժերի արդիականացմանը, մասնավորապես ժամանակակից ռազմական ավիացիայի և ռազմածովային նավատորմի ստեղծմանը: Իրանական կառավարությունը իր այդ քաղաքականությունը հիմնավորվում էր նրանով, որ Պար-

սից ծոցի գոտու պաշտպանության հարցերը պետք է իրականացվեն բացառապես տարածաշրջանի պետությունների ուժերով:

1973 թ. հետո ռազմական ծախսերի աճի տեմպերը աննախընթաց էին ոչ միայն Իրանի ժամանակակից պատմության, այլև առհասարակ բոլոր զարգացող երկրների պատմության մեջ: 70-ական թթ. կեսերին սպառազինությունների գնումները կազմում էին 5-6 միլիարդ դոլար: Ընդ որում՝ Իրանը ձեռք էր բերում զենքերի և ռազմական տեխնիկայի այնպիսի տեսակներ, որոնք իրենցից ներկայացնում էին ոչ միջուկային սպառազինության ամենաժամանակակից ու կատարյալ տեսակներ: Իրանի կողմից ձեռք բերված ռազմական տեխնիկայի մի քանի տեսակներ նույնիսկ բացակայում էին ՆԱՏՕ-ի եվրոպական անդամների զինանոցներում:

Սպառազինության նորագույն համակարգերի սպասարկման համար արևմուտքի երկրներից, հատկապես ԱՄՆ-ից, հրավիրվում էին մեծ թվով ռազմական խորհրդականներ և ռազմատեխնիկական մասնագետներ: Միաժամանակ ավելանում էր իրանական զինծառայողների թիվը, որոնք ուղարկվում էին ԱՄՆ և արևմտյան երկրներ վերապատրաստման համար:

Այդ բոլորի հետևանքով կրկնակի աճեց իրանական զինված ուժերի արդյունավետ գործողությունների շառավիղը, և աննախընթաց չափով ամրապնդվեց նրանց հարձակողական ուժը:

Իրանի ռազմական ծրագիրը նախատեսում էր նաև սեփական ռազմական արդյունաբերության զարգացումը: Իրանի ղեկավարությունը մշակել էր նաև երկրի սեփական ռազմաքաղաքական դոկտրինը: Ըստ այդ դոկտրինի՝ 80-ական թթ. ռազմական հզորության մակարդակով Իրանը պետք է դառնար աշխարհի հինգերորդ-վեցերորդ պետությունը:

Շահը և նրա մերձակա շրջապատի գործիչները պնդում էին, որ ռազմական ներուժի մեծացումը նպատակ ունի ամրապնդել ազգային ինքնիշխանությունը: Շահը նաև չէր թաքցնում, որ զինված ուժերի ուժեղացումը կապված է Իրանում գոյություն ունեցող քաղաքական համակարգի պահպանման անհրաժեշտության հետ:

Ավելորդ չէ նշել, որ Իրանում ռազմական շինարարության գլխավոր շեշտը դրվում էր երկրի հարավային շրջանների վրա, որոնք հարում էին Պարսից և Օմանի ծոցերին և Հնդկական օվկիանոսի հյուսիսային մասին: Դա, անշուշտ, պայմանավորված էր նրանով, որ Իրանը համաշխարհային կապիտալիստական տնտեսության հետ կապող գլխավոր ջրային զարկերակները անցնում էին հենց նշված վայրերով: Իրանը իր

վրա էր վերցրել ծովային հաղորդակցությունների պահապանի դերը: Միաժամանակ շահը ենթադրում էր, որ հսկայական տարածաշրջանում դառնալով առաջատար պետություն՝ Իրանը կկարողանա նշանակալից դեր խաղալ գլոբալ քաղաքականության բնագավառում՝ մասնավորապես հնարավորություն ստանալով սերտ քաղաքական ու տնտեսական համագործակցության մեջ մտնել Արևմուտքի զարգացած պետությունների հետ, որոնք սպառում էին Պարսից ծոցի գոտում արդյունահանվող նավթի մեծ մասը:

Այդ բոլորի հետևանքով Իրանի արտաքին քաղաքականությունը, 70-ական թթ. երկրորդ կեսից սկսած, գնալով ավելի ու ավելի էր դառնում շեշտված արևմտամետ: Իրանը հատկապես սերտ տնտեսական, քաղաքական ու ռազմական կապերով կապված էր ԱՄՆ-ի հետ: Հենց այդ պատճառով Իրան կատարած իր այցի ժամանակ ԱՄՆ-ի պրեզիդենտ Քարտերը 1978 թ. հունվարի 1-ին հայտարարեց, որ Իրանում բացակայում է մարդու իրավունքների ոտնահարումը՝ միաժամանակ գովեստի խոսքեր շռայլելով շահի հասցեին: «Ընորհիվ շահի հիանալի ղեկավարության,- ասաց նա,- Իրանը հանդիսանում է աշխարհի առավել անհանգիստ շրջաններից մեկում կայունության կղզյակ... Աշխարհում գոյություն չունի մի այնպիսի պետական գործիչ, որի նկատմամբ ես անձամբ տածեի այնքան մեծ երախտագիտություն ու անձնական կապվածություն»:

Հանրագումարի բերելով «Սպիտակ հեղափոխության» արդյունքները՝ հարկ է նշել, որ ընդամենը երկու տասնամյակի ընթացքում իրանական պետությանը հաջողվեց խոշոր քայլեր ձեռնարկել երկրի տնտեսական հետամնացությունը հաղթահարելու, տնտեսական ներուժը մի քանի անգամ ավելացնելու և հետագա զարգացման ու առաջադիմության համար անհրաժեշտ մի շարք սոցիալ-տնտեսական բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ, որի հետևանքով զարգացող երկրների թվում Իրանը գրավեց առաջատար տեղերից մեկը, և նրա առջև բացվեց իրական հնարավորություն՝ անցնելու զարգացած կապիտալիզմի երկրների շարքը:

1963-1973 թթ. բարեփոխումների հետևանքով բանվորների, ծառայողների, ուսուցիչների, տրանսպորտի աշխատողների, շինարարական բանվորների և այլոց աշխատավարձը կայուն կերպով ավելանում էր: Նավթային եկամուտների աճի տարիներին, հատկապես 70-ական թթ. սկզբին, երկրում լայնորեն ծավալվեց քաղաքաշինությունը: Թեհրանում, Սպահանում, Մեշհեդում և այլ քաղաքներում հայտնվեցին նորակառույց թաղամասեր: Կառուցվում էին մեծ թվով ճանապարհներ, կամուրջներ, թունելներ: Որոշ շրջաններում բարեկարգվում էին գյուղերը: Ամբողջու-

թյամբ վերցրած՝ կյանքի որակը բարձրանում էր: Այդ շրջանում դպրոցական, մասնագիտական և բարձրագույն կրթության, առողջապահության բնագավառներում, ինչպես նաև կուլտուրայի բնագավառում տեղի էին ունենում շոշափելի դրական տեղաշարժեր:

Սակայն 70-ական թթ. կեսերին ներքին քաղաքական իրադրությունը կտրուկ կերպով փոփոխության ենթարկվեց: Պետական ֆինանսների մեջ ծայր առած ճգնաժամը հանգեցրեց բնակչության մեծամասնության կենսամակարդակի արագ անկման, արագորեն աճում էր գործազրկության մակարդակը: Հենց այդ շրջանում շահի գերագույն իշխանությունը ձեռք բերեց բացարձակապետական բնույթ: Կոռուպցիան, գանձագողությունը, անօրինական ֆինանսական օպերացիաները ընդունեցին աննախընթաց չափեր: Կոռուպցիան թափանցել էր պետության քաղաքական համակարգի մինչև ուղն ու ծուծը: Նրա դեմ լուրջ պայքար չէր մղվում: Ճոխությունն ու անօրինակ շռայլությունը դարձել էին իրանական վերնախավի բնորոշ գծերը:

Այդ օրերին շահը հանդես եկավ մի նոր գրքով, որը վերնագրված էր «Դեպի մեծ քաղաքակրթություն»: Նրանում շարադրված էին իրանական պետության ղեկավարի տնտեսական, սոցիալական, փիլիսոփայական-գաղափարական սկզբունքները երկրի արևմտականացման (վեստերնիզացման) վերաբերյալ: Նրանում, որպես ելակետային թեզիս, ընդունվում էր մշակութային ավանդույթի շարունակականությունը միապետության գոյության 2500 տարիների ընթացքում: Մինչիսլամական հնագույն Իրանի արժեքները, «Ավեստան», զրադաշտականությունը, մանիքեականությունը, մեծ դասական բանաստեղծների՝ Ֆիրդուսիի, Հաֆեզի, Սաադիի, Ջալալեդդին Ռումիի, սուֆիական փիլիսոփաների ստեղծագործական ժառանգությունը, իրանական մեծ պետության պատմությունը. այս բոլորը պետք է հիմք ծառայեին միապետության անսասանության համար:

Իրանի շիիթական հոգևորականությունը երկրի արևմտականացմանն կուրսը ևս ընդունեց սվիններ վրա: Առհասարակ, իրանական հասարակայնության, այդ թվում նաև մտավորականության կողմից հիվանդագին կերպով էր ընկալվում արևմտյան արժեքները երկրում արմատավորելու ծրագիրը: Եվ շահի կողմից հրապարակված «իրանական հոգևոր ավանդույթների ու արևմտյան տեխնոլոգիայի ներդաշնակ զուգակցման» տեսության փոխարեն հասարակական գիտակցության մեջ զորեղանում ու սաստկանում էին ճգնաժամն ու տագնապը: Այդ տրամադրությունները և հոգևորականության ու մտավորականության կող-

մից մղվող գաղափարական պայքարը դարձան երկրում հեղափոխական իրադրության ձևավորման գործոններից մեկը:

Պետք է նշել, որ շիիթական իսլամը միշտ էլ հզոր ուժ է եղել տարբեր ժամանակներում առաջացած քաղաքական պոռթկումների համար: Դա հաճախ ընդունել է օտարերկրյա տիրապետության դեմ զանգվածային բողոքի շարժման ձև: Երբ որևէ ղեկավարի կողմից փորձ է կատարվել ճնշել իր հպատակների կրոնական զգացումները՝ հանուն որևէ աշխարհիկ իդեալի, ինչպես, օրինակ՝ աշխարհիկացում, ազգայնականության զարգացում և այլն, հանդիպել է շիիթական հոգևորականության վճռական հակազդեցությանը: Շիիթական բարձրաստիճան հոգևորականությունը միշտ էլ ձգտել է աշխարհիկ իշխանությունը վերցնել իր ձեռքը: Դարեր շարունակ շիա հոգևորականները աշխարհիկ ղեկավարներին համարել են իրենց օրինական իշխանության հափշտակիչներ: Շիիթական տեսակետների համաձայն՝ մոջթեհիդները կառավարության գործունեությունը վերահսկելու իրավունք ունեն: Ընդ որում՝ այդ վերահսկողությունը նրանք հասկանում են ոչ թե որպես մզկիթի կողմից ընդհանուր վերահսկողություն, այլ կատարում են անհատապես: Շիիթական այս սկզբունքը, բնականաբար, մեծ հնարավորություններ է ստեղծում կառավարության նկատմամբ դիմադրության, ապստամբությունների, ընդվզումների և հեղափոխական շարժումներ հրահրելու համար:

1971 թ. Նաջաֆում արաբերենով լույս տեսած իր «Իսլամական պետությունը» գրքույկում, որը հետագայում հրատարակվեց պարսկերեն լեզվով՝ «Վելայաթ-ե Ֆաղիհ» վերտառությամբ, Խոմեյնին սուր քննադատության էր ենթարկում կրոնը քաղաքականությունից բաժանելու գաղափարը: Նրա կարծիքով՝ նման տեսակետը նպատակ ունի մահմեդական հոգևորականությանը զրկել քաղաքական պայքարին ակտիվ մասնակցություն ցուցաբերելուց: Խոմեյնին ուլեմների պարտականությունն էր համարում ղեկավարել պայքարը հանուն մահմեդականների սոցիալական ազատության ու ազգային անկախության: Հենց մահմեդական աստվածաբանների ղեկավարությամբ, գրում էր նա, հավատացյալների զանգվածները պետք է տապալեն «սոցիալական հարստահարման իշխանությունը և դնեն իսլամական կառավարման հիմքերը»: Խոմեյնին կատարելապես ժխտում էր Իրանում շահական իշխանության լեգիտիմությունը: Դա, անշուշտ, հավասարազոր էր շահական վարչակարգին քաղաքական պատերազմ հայտարարելուն:

1977 թ.՝ իր որդու սպանությունից հետո, Խոմեյնին հանդես եկավ մի ուղերձով, որտեղ ասվում էր, որ իրանական բանակի և նրա ղեկավարնե-

րի պարտքն է հայրենիքն ազատել շահական ժանտախտից:

Այսպիսով՝ դժվար չէ նկատել, որ շահի և հոգևորականության կոնֆլիկտը գալիս էր հասարակական կյանքի բոլոր բնագավառները և հավատացյալների բոլոր արարքները հսկելու հոգևորականների ձգտումից: Իսկ դա հակասում էր բարեփոխումների բուն ոգուն և գաղափարին:

Անշուշտ, շահը ևս հոգևորականության նկատմամբ վարում էր նրա իրավունքները սահմանափակելու քաղաքականություն: Նա հայտարարում էր, որ «Իրանը կրոնի կարիք ունի, բայց մենք պետք է արդիականացնենք այն», «վերականգնենք հավատքը այն տեսքով, ինչ մարգարեն էր ցանկանում»: Դեռևս 1971 թ. հոկտեմբերին շահը ստորագրել էր մի հրամանագիր «Հավատի գումարտակ» («Սեփահ-ե աղ-դին») ստեղծելու վերաբերյալ, որի կոչումն էր լինելու նաև «Սպիտակ հեղափոխության» սկզբունքների պաշտպանությունը իսլամի դիրքերից:

Իր «Էնղելաբ-ե սեֆիդ» («Սպիտակ հեղափոխություն») գրքում շահը գրում էր. «Ինչպես զրադաշտի հին ուսմունքը, այնպես էլ իսլամի մեծ օրենքները, Իրանի փիլիսոփաների, մտածողների, գիտնականների, բանաստեղծների առաջ քաշած գաղափարները մեզ սովորեցնում են, որ ամեն մի իսկական հասարակության բնականոն կյանքի համար անհրաժեշտ են սեր, բարեկամություն, ընկերություն և միմյանց խորը ճանաչում»: Այնուհետև նա շարունակում էր. «Իրենց սոցիալ-տնտեսական զարգացման և արիական վերածննդի ճանապարհին Ղուրանը չի սահմանափակում իրանցիներին»:

Չնայած կրոնի նկատմամբ շահի այդ կոմպրոմիսային վերաբերմունքին նա հաստատուն կերպով ստացել էր կրոնի դեմ տրամադրված թագավորի համբավ:

Մոհամմադ Ռեզա շահը, իր իշխանության գաղափարախոսական հիմք ընտրելով նացիոնալիզմը, փառաբանում և բարձրացնում էր Իրանի անցած պատմական ուղին: 1971 թ. շահն աննախադեպ մեծ շուքով նշեց իրանական պետականության 2500-ամյակը, որի ժամանակ Դարեհի գերեզմանի վրա երդվեց շարունակել նրա գործը և Իրանը հասցնել իր երբեմնի հզորությանն ու վեհությանը: Սակայն ամեն կերպ բարձրացնելով Իրանի նախաիսլամական շրջանի ավանդույթները՝ շահը դրանով իսկ ստեմացնում էր իսլամական ժամանակաշրջանը: Քնականաբար, դա հոգևորականության կողմից ընկալվում էր որպես Իրանի պատմության իսլամական ժամանակաշրջանի անտեսում: Ընդ որում՝ պետական քարոզչությունը ևս նրբին ձևերով առաջ էր տանում այն գաղափարը, որ Իրանի հետամնացությունը հետևանք է արաբական նվաճ-

ման և երկրում իսլամի տարածման: Կասկածից վեր է, որ «Սպիտակ հեղափոխության» ֆենոմենը դեռևս կարոտ է խորքային ուսումնասիրության: Այդ իսկ տեսակետից պարզաբանման կարիք է զգում նաև Մոհամմադ Ռեզա շահ Փեհլևիի դերակատարությունը Իրանի պատմության այդ վերելքներով ու վայրէջքներով հարուստ ժամանակաշրջանում: Գիտության մեջ, օրինակ, հայտնվել է կարծիք այն մասին, որ ցանկացած մեկ այլ պետության մեջ Փեհլևի դինաստիայի այդ երկրորդ և վերջին շահը պատմության մեջ կմտներ որպես մեծ բարեփոխիչ, որը ի վիճակի էր երկիրը դուրս բերել ժամանակակից զարգացման ուղու վրա և այն վերածել հզոր տերության: Սակայն դա Իրանում հնարավոր չեղավ, որովհետև անդունդը կամ վիհը իրանական հասարակության «վերևների» և «ներքևների» միջև անչափ խորն էր: Իսկ շիիթական հոգևոր առաջնորդները չէին կարող համակերպվել այն մտքի հետ, որ շահը «զանգվածների քաղաքական ու հոգևոր մոբիլիզացման հարցերում այլևս չէր հանդուրժում Տեր Աստծո մրցակցությունը»:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

1978-1979 ԹԹ. ՀԱԿԱՄԻՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

1. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

XX դ. 70-ական թթ. կեսերին իրանական հասարակությունը մխրճվել էր խորը ճգնաժամի մեջ, որը համակել էր երկրի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտները: Խորանում էին երկրի ֆինանսատնտեսական դժվարությունները: Շահը ֆինանսական սուր ճգնաժամի մեղքը բարդեց Իրանում գործող միջազգային նավթային մոնոպոլիաների վրա՝ նրանց մեղադրելով, որ չեն կատարել իրենց խոստումները արտահանվող նավթի ծավալների վերաբերյալ: Բնակչության վիճակը սկսեց սրընթաց վատթարանալ: Նրա մեծ մասի գնողունակությունը արագորեն անկում էր ապրում: 1977 թ. մարտին սղաճը գերազանցեց նախորդ տարվա մակարդակը 30%-ով, իսկ գներն աճեցին 40%-ով: Կարծես թե մեկ ակնթարթում շինարարական արդյունաբերությունը, որի մեջ զբաղված էին համարյա մեկ միլիոն բանվորներ, անդամալուծվեց: Ավելի լայն ծավալ էին ընդունում կոռուպցիան, գանձագողությունը, պետական միջոցների հափշտակումը:

Քանի որ ճգնաժամը կրում էր համակարգային բնույթ, ուստի գործնականում հնարավոր չէր այն հաղթահարել վերևից իրականացվող՝ թեկուզ և արդյունավետ բարեփոխումների օգնությամբ:

Այդ բոլորի ֆոնի վրա ուժեղանում էին միապետական իշխանության մեկուսացումը և զանգվածային դժգոհությունը շահի ավտորիտար դիկտատուրայի նկատմամբ:

Շահական վարչակարգը անզոր գտնվեց հաղթահարելու երկրի առջև կանգնած տնտեսական և սոցիալական պրոբլեմները, ուստի դժգոհների նկատմամբ դիմում էր խստագույն հետապնդումների քաղաքականության: Շահը լայնորեն օգտագործում էր գաղտնի ոստիկանության՝ ՍԱՎԱԿ-ի հզոր ու ծավալուն ապարատը ամեն մի ընդդիմություն ճզմելու համար: Որպես այդ քաղաքականության արդարացում՝ միապետը ֆրանսիական «Ֆիգարո» թերթին տված հարցազրույցում ասել էր. «Չկարծեք, որ ես անձամբ հանդիսանում եմ բացարձակապետության կողմնակից: Սակայն... ներկայումս երկրին անհրաժեշտ է իմ իշխանությունը»:

Այդ բոլորի արդյունքում իրանցիների մեծ մասի և շահական վարչակարգի միջև գոյացել էր խորը վիհ: Ամերիկացի հեղինակ Հրայր Դեքմեջյանը իրավացիորեն նշում է, որ անկախ իր դրական կամ բացասական հատկանիշներից՝ շահը անընդունելի էր: Հենց այս հանգամանքը շիա հոգևորականությանը տալիս էր ժողովրդին միավորելու և համախմբելու մեծ հնարավորություն, մանավանդ որ Իրանում բացակայում էին կազմակերպված և հեղինակություն վայելող քաղաքական կազմակերպությունները ու կուսակցությունները:

60-70-ական թթ. հողային բարեփոխումները հոգևորականությանը զրկել էին հսկայական չափերի հասնող վակուֆային (մզկիթապատկան) կալվածքներից: Բացի այդ, երկրի ինդուստրացման քաղաքականությունը նպաստել էր քաղաքային «բազարների» ավանդական դերի կտրուկ նվազմանը: Մինչդեռ այդ բազարները պատմականորեն սերտ կապեր ունեին կրոնական ինստիտուտների հետ: Բազարների դերի նվազումը ուժգին հարված էր հոգևորականությանը, որովհետև նա ստանում էր խոշոր եկամուտներ զանազան հարկերի ու տուրքերի, ինչպես նաև նվիրատվությունների ձևով: Բացի այդ, 1978 թ. կառավարությունը վերացրեց հոգևորականությանը հատկացվող դրամական նպաստը: Առհասարակ, նկատի ունենալով շիիթական հոգևորականության քաղաքական հավակնությունների մասշտաբները, շահն աշխատում էր հետևողականորեն իջեցնել նրանց քաղաքական ստատուսը և պետության մեջ ունեցած կշիռը: Նա ձեռնարկեց նաև մի շարք քայլեր իրանցիների ազգային ինքնության մեջ կրոնական, իսլամական բաղադրիչը թուլացնելու ուղղությամբ: Հենց այդ նպատակով 1971 թ. շահը կազմակերպեց փառահեղ տոնակատարություններ՝ նվիրված իրանական պետականության 2500-

ամյակին, կազմակերպում էր տարբեր միջազգային խորհրդաժողովներ՝ նվիրված հին իրանական կուլտերին ու հավատալիքներին, մամուլը և քարոզչական այլ միջոցները փառաբանում էին հին իրանական միապետությունները, նրանց մշակույթը և այլն՝ դրանով իսկ անուղղակի կերպով նսեմացնելով իսլամը և ողջ իսլամական քաղաքակրթությունը:

Հարկ է նշել, որ արևմտյան աթեիզմի և «անհավատ օտարերկրացիների» ներթափանցումը Իրան հոգևորականությունը դիտում էր որպես ավանդական բարքերի ու սովորույթների աղճատում ու ոչնչացում, իսլամական նորմերից հեռացում, բարոյազրկում: Այդ բոլորը սպառնալիք էր ստեղծում հոգևորականության՝ «հասարակական բարքերի պահապանի» կարգավիճակի համար: Շիիթական ուլամայի այդ տրամաղրությունները փոխանցվում էին գյուղերից քաղաքներ տեղափոխված հարյուր հազարավոր հետամնաց ու խավար, կրոնական ջերմեռանդությամբ տոգորված մարդկանց:

Երկրի փրկությունը և առաջադիմությունը հոգևորականությունը տեսնում էր բացառապես «իսլամական կառավարություն» և «իսլամական հասարակություն» ստեղծելու մեջ: Դա դիտվում էր նաև որպես ազգային համախմբման եզակի հնարավորություն:

Շահական կառավարության դեմ հոգևորականության պայքարի մեթոդները բազմապիսի էին՝ անլեգալ հակակառավարական հրատարակչությունների տարածում, քարոզներ մզկիթներում, բացահայտ հանրահավաքներ և այլն: Այաթոլլաների շուրջը սկսեցին համախմբվել հասարակական լայն խավեր, որոնք այս կամ այն պատճառով դժգոհ էին գոյություն ունեցող կարգերից: Միանգամայն ակնհայտ էր, որ ամենաբազմապիսի սոցիալ-քաղաքական ուժերի համախմբման համար կրոնը ձեռք էր բերում առաջնակարգ դեր:

Գիտակցելով այդ իրողությունը՝ շահը փորձում էր մեղմել իր առճակատումը հոգևորականության հետ: Թեև նա սովորաբար չէր այցելում մզկիթներ, ինչպես անում էին անցյալի թագավորները, բայց շեշտելով իր կրոնական պատկանելությունը՝ ժամանակ առ ժամանակ ուխտագնացության էր մեկնում Մեշհեդի իմամ Ռեզայի դամբարանը, կամ Մեքքա: Նա ուներ իր անձնական մոլլան՝ Սեյյեդ Հասան իմամին, որը Թեհրանի իմամջոմեն էր: Շահը իր գրքերում նույնիսկ գրում էր, որ որպես Ալլահի ընտրյալ՝ ինքը մի քանի անգամ տեսել է նրան կամ նրա հրեշտակներին:

Սակայն այդ բոլորը չէր փոխում իրերի վիճակը: Շահի վրա հաստատուն կերպով կպցված էր հակակրոնական միապետի պիտակը: Անշուշտ, շահի և հոգևորականության կոնֆլիկտը անձնական համակ-

րանքների ու հակակրանքների խնդիր չէր և ոչ էլ զուտ կրոնական հարց: Ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ հոգևորականությունը ձգտում էր իր իրավասությունների մեջ ընդգրկել Իրանի հասարակական կյանքի բոլոր բնագավառները և իր հսկողության տակ պահել ոչ միայն հավատացյալներին, այլև երկրի պետական կառույցները: Իսկ դա, անշուշտ, հակասում էր բարեփոխումների իրականացման տրամաբանությանը և առհասարակ կառավարության շահերին:

60-ական թթ. ընթացքում և 70-ական թթ. առաջին կեսին միապետությանը հաջողվում էր առանց հատուկ ջանքերի հոգևորականությանը պահել սանձված վիճակում: Քանի դեռ տնտեսությունը զարգանում էր հավասարակշռված ձևով, գների աճը չափավոր էր, միապետությունը դեռ չէր ծավալել տնտեսական գրոհ հասարակության չունևոր խավերի վրա՝ նրա շահերի հաշվին սղաճը ինչ-որ չափով հաղթահարելու համար և դեռևս չէր դիմում զանգվածային հալածանքների, բնակչության շրջանում կրոնական զգացումների առկայությունը բավարար չէր, որպեսզի նա հետևեր միապետության նկատմամբ թշնամաբար տրամադրված հոգևորականության մի մասի կոչերին: Սակայն երբ մի շարք խավերի տնտեսական վիճակը փոխվեց դեպի վատը, գործողության մեջ մտավ նաև կրոնական գործոնը: Զանգվածները արձագանքեցին հոգևորականության կոչերին և դուրս եկան փողոցները:

70-ական թթ. առաջին կեսին քաղաքային բնակչության շրջանում առավել մեծ հեղափոխական ակտիվություն էր դրսևորում ուսանողությունը: Նրանցից շատերը, դժգոհ լինելով երկրի քաղաքական կլիմայից և հոգեբանական մթնոլորտից, ուսումնական հաստատություններն ավարտելուց հետո գերադասում էին հեռանալ երկրից, իսկ նրանք, ովքեր սովորում էին արտասահմանում, առհասարակ հրաժարվում էին վերադառնալ հայրենիք: Ուսանողների շրջանում լայնորեն տարածվեցին սոցիալիստական գաղափարներ՝ հաճախ կրոնի հետ խառնված վիճակում: Ձախ արմատական հայացքների հետևորդները սկսեցին օգտագործել անհատական ահաբեկչության և պարտիզանական պայքարի մեթոդները: Ստեղծվեցին «Չարիքհա-ե ֆեդայի-ե խալղ-ե Իրան» («Իրանական ժողովրդի անձնազոհ մարտիկներ») և «Մոջահեդին-ե խալղ-ե Իրան» («Իրանական ժողովրդի սուրբ գործի մարտիկներ») իսլամամարքսիստական և սոցիալիստական ուղղության կազմակերպություններ, որոնց մեջ, բացի ուսանողությունից, մտնում էին մտավորականության ներկայացուցիչներ, մանր առևտրականներ և բանվորներ: Խորը ընդհատակում նախկինի պես գործում էր «ԹՈՒԴԵ» կուսակցությունը:

Իրանական ընդդիմության ակտիվ մասը կազմող մտավորականության բողոքի հիմնական ձևերից մեկը երկրից արտագաղթն էր: Երկրում լայն տարածում ունեին նաև հակաարևմտյան տրամադրությունները: Միապետության կողմից իրականացվող Իրանի կապիտալիստական արդիականացման քաղաքականությունը այդ շրջանակները գնահատում էին որպես երկրի ենթարկում օտարերկրյա շահերին և հրաժարում ազգային դիմագծից, մշակույթից ու ավանդություններից:

1977 թ. լույս ընծայված «Ճանապարհ դեպի մեծ քաղաքակրթություն» վերտառությամբ գրքում Մոհամմադ Ռեզա շահը գրում էր, որ երկիրը շարունակում է քայլ առ քայլ ընթանալ «մեծ քաղաքակրթության ուղիով»՝ պատրաստվելով դարերի վրայով թռիչք կատարել միջնադարից դեպի միջուկային դարաշրջան: Նա խոստանում էր մեկ սերնդի կյանքի ընթացքում երկիրը մտցնել «աշխարհի արդյունաբերական զարգացած պետությունների առաջին հնգյակի մեջ»:

Այդ գրքում նոր պայմաններում իրանական պետության գլխավոր դոկտրին էր հայտարարվում այսպես կոչված «շահնշահական համակարգը» («նեզամ-ե շահնշահի»): Շեշտադրվում էր Աքեմենյանների և Սասանյանների միևչիսլամական պարսկական կայսրությունների տիպի շահնշահության վերածնության գաղափարը: Միաժամանակ գրքում կարմիր թելի պես անցնում էր այն միտքը, որ «Շահփարասթին» («շահին սիրելը») հանդիսանում է իրանցիների բնատուր հատկանիշը:

Մինչդեռ 1977 թ. մի շարք ականավոր մտավորականներ, ստեղծագործական աշխատողներ և այլք բաց նամակներով դիմեցին շահին և թագուհուն, ինչպես նաև պետության ղեկավար գործիչներին՝ նկարագրելով երկրում տիրող անտանելի հասարակական դրությունը, որի պատճառը նրանք համարում էին միապետության վարած արատավոր քաղաքականությունը, երբ ոտնահարվում են երկրի քաղաքացիների սահմանադրական ազատությունները:

Միապետության սոցիալական բազան աստիճանաբար դառնում էր նեղ ու սահմանափակ: Ըստ էության, թվում էր, թե վարչակարգի միակ հուսալի հենարանը մնում են բանակն ու գաղտնի ոստիկանությունը՝ ՍԱՎԱԿ-ը: Ուստի այդ կառույցները դառնում էին իշխանությունների հատուկ հոգատարության առարկան: 1977 թ. Իրանի զինված ուժերի (այդ թվում նաև անվտանգության ուժերի) թիվը գերազանցեց 400 հազար մարդուց, իսկ ռազմական բյուջեն հասավ տարեկան 9,4 միլիարդ դոլարի: Բանակը պահելու և սպառազինությունների վրա ծախսվում էր նավթից ստացվող եկամուտների մոտ կեսը: ՍԱՎԱԿ-ը իր կազմում ու-

ներ մինչև 40-50 հազար գործակալ և մի քանի հարյուր հազար իրազեկիչ: Նրա շոշափուկները դուրս էին եկել Իրանի տարածքից և տարածվել նաև արտասահմանում: ԱՄՆ-ից բացի, գոյություն ունեին ևս երկու գերգաղտնի ոստիկանական հիմնարկներ, որոնք հետևում էին կառավարության անդամներին, խորհրդարանի պատգամավորներին, բարձրագույն սպայության և այլն վարքագծին:

Միաժամանակ շահը իրականացնում էր խուսանավումների ակտիվ քաղաքականություն: Այսպես՝ 1975 թ. մարտին նա հայտարարեց, որ քաղաքական բոլոր կուսակցություններն ու խմբավորումները ցրվում են, և ստեղծվում է միկուսակցական համակարգ: Կազմակերպվեց «Հեզբ-ե Ռաստախիզ-ե մելլաթ-ե Իրան» («Իրանի ժողովրդի վերածննդյան») կուսակցությունը, որը, ըստ շահի, կոչված էր խորհրդանշել զանգվածների «ներդաշնակ» մասնակցությունը քաղաքականությանը և նպաստել նրա մոբիլիզացմանը ազգի «արդիականացման» համար: Այդ կուսակցության հիմնական գաղափարական-քաղաքական սկզբունք հայտարարվեց հավատարմությունը «շահնշական կարգին» (այսինքն՝ միապետությանը), սահմանադրությանը և «շահի ու ժողովրդի հեղափոխության» ծրագրին: Կուսակցության ծրագրի մեջ «շահնշահական վարչակարգը» հայտարարվում էր կառավարման միակ ձև, որը համապատասխանում է իրանական ժողովրդի «ազգային իղձերին»: Շահը անվանվեց որպես իրանական ազգի «առաջնորդ» և «հրամանատար»: Շուտով այդ կուսակցությանը անդամագրվեց վեց միլիոն մարդ: Կուսակցության գլխավոր քարտուղար, վարչապետ Ամիր Աբբաս Հովեյդան կոչ էր անում «խտացնել շարքերը» նոր քաղաքական համակարգ ստեղծելու համար: Նրա կարծիքով՝ շահի նախաձեռնությունը ի վիճակի էր կյանքի կոչել մի նոր համազգային շարժում: «Շահնշահի գլխավորությամբ Իրանի քաղաքական զարգացումը՝ կլինի նույնքան արագ, որքան վերջին տասնամյակի ընթացքում նրա տնտեսական զարգացումը»,- հայտարարում էր Հովեյդան: Նա վստահություն էր հայտնում այն մասին, որ նոր քաղաքական կառույցը կապացուցի իր բարձր կենսունակությունը, քանի որ «բոլոր իրանցիները հավատ են ընծայում իրանական հասարակությանը տոգորած շարժման երեք գլխավոր սկզբունքների նկատմամբ, որոնք են հավատն առ միապետությունը, Սահմանադրությունը և հեղափոխությունը»: «Նրանք, ովքեր չեն բաժանում այդ սկզբունքները,- իր հերթին հայտարարեց շահը,- իրանցիներ չեն, զուրկ են իրանական ազգի հատկանիշներից, այդ մարդիկ դավաճաններ են, նրանք գտնվում են օրենքից դուրս, և նրանց գործունեությունը կհետապնդվի համաձայն օրենքի:

Նրանց տեղը բանտում է կամ Իրանի սահմաններից դուրս»:

Սակայն նոր կուսակցությունը չկարողացավ իրականացնել իր առջև դրված խնդիրը՝ դառնալ մի կազմակերպություն, որի մեջ լուծվեին բոլոր ընդդիմադիր տեսակետները և զանգվածներին մոբիլիզացներ «շահի և ժողովրդի հեղափոխությանը» ծառայելու համար: Այդ կուսակցությունը շարունակեց մնալ որպես բարձրաստիճան չինովնիկների կազմակերպություն և լայն հասարակայնության շրջանում չէր վայելում ժողովրդականություն: Ինքը՝ Մոհամմադ Ռեզա Փեհլևին, ավելի ուշ խոստովանել է, որ «Ռասթախիզ» կուսակցության ղեկավարությունը չկարողացավ իրականացնել այն խնդիրը, որը նրա վրա դրել էր վարչակարգը: Այդ կուսակցությունը շուտով դարձավ անսկզբունք պայքարի ասպարեզ: 1978 թ. հոկտեմբերի 2-ին «Ռասթախիզը» ցրվեց և դադարեց գոյություն ունենալուց:

Շահը որոշեց իրականացնել աստիճանական ազատականացման քաղաքականություն: Թույլ տրվեց խոսքի սահմանափակ ազատություն, երկրում որոշ ընդդիմության գոյություն: Իր ճառերում նա խոսում էր մարդկանց տանջանքների ենթարկելու վերացման անհրաժեշտության մասին, այն մասին, որ քաղաքական բանտարկյալները պետք է ազատ արձակվեն, պետք է իրականացվի իրավական բարեփոխում, բարելավվի դատաիրավական համակարգը և այլն: Երկրի ազատականացման բաղկացուցիչ մասը հանդիսացավ նաև այն, որ երկրի դռները լայնորեն բացվեցին «արևմտյան քաղաքակրթության առջև»: Դրա հետևանքով հախուռն թափով սկսեցին երկիր ներթափանցել ոչ միայն արևմտյան մշակութային ձեռքբերումները, գիտական և տեխնիկական հայտնագործությունների նորույթները, այլև «կեղտոտ» քաղաքական տեխնոլոգիաները, ընդահատակյա բանդիտական բիզնեսի ձևերը, բարքերի ազատությունն ու «սեռական հեղափոխությունը» և այլն:

Ազատականացման քայլերն ու «արևմտականացման» հախուռն ընթացքը ունեցան այն հետևանքը, որ վախի և լռության պատը ճեղքվածք տվեց: Իրանական մտավորականության շրջանում ծավալվեց սուր գաղափարական պայքար, որը հանդիսացավ երկրում հեղափոխական իրադրության ստեղծման գործոններից մեկը: Խոշոր համալսարաններում սկսվեցին հանրահավաքներ և ցույցեր: Ուսանողական շարժումը վճռականորեն պահանջում էր ժողովրդավարացնել իրանական հասարակությունը: 1978 թ. աշնանը ուսանողների ելույթները սկսեցին ավելի սերտորեն միաձուլվել զանգվածային հակաշահական շարժման հետ:

Առանձնակի եռանդուն գործունեություն ծավալեց կրոնական ընդդիմությունը: Իրանի պատմության մեջ առաջին անգամ մահմեդական հոգևորականության ներկայացուցիչները դիմեցին բոլոր ժամանակների համար անվրեպ աշխատող «սոցիալական արդարության» կոչին: Այն իրանական հասարակայնության ընչազուրկ խավերի մոտ անմիջապես գտավ մեծ արձագանք: Մզկիթներում բացահայտ կերպով հնչում էին կոչեր՝ տապալելու միապետությունը, ստեղծելու իսլամական պետություն, վերացնելու օտարերկրյա բռնությունը: Աշխարհիկ քաղաքական ընդդիմության համեմատությամբ շիիթական առաջնորդներն ունեին գործողությունների մեծ ազատություն, քանի որ իշխանությունները չէին կարող նրանց բացահայտ կերպով ենթարկել հալածանքների:

Իրաքում վտարանդության մեջ ապրող այաթոլլա Խոմեյնին մշտապես ելույթներ էր ունենում շահական բռնատիրության և «ամերիկյան իմպերիալիզմի» դեմ: Այդ ելույթներում նա առաջ էր քաշում Իրանում «իսլամական հանրապետություն» ստեղծելու պահանջը:

Մի խոսքով՝ ստեղծվել էր հեղափոխական իրադրություն: Բոլոր նախադրյալները կային այն հեղափոխության վերածվելու համար:

2. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ԵՎ ԸՆԹԱՑՔԸ

1978 թ. հունվարի 7-ին «Էթելաաթ» պաշտոնաթերթը տպագրեց մի հոդված «Իրան. կարմիր-սև իմպերիալիզմ» վերնագրով, որտեղ Ռուհոլլա Խոմեյնին մեղադրվում էր վարչակարգի դեմ դավադրություն նյութելու մեջ: Շիիթական հոգևորականությունը այն գնահատեց՝ որպես զրպարտչական: Հենց այդ հոդվածը հանդիսացավ մի կայծ, որից հրդեհ բռնկվեց: Հունվարի 9-ին Ղում «սրբազան» քաղաքում հոգևորականության կոչով տեղի ունեցավ հանրահավաք, որին մասնակցում էին կրոնական ուսումնական հաստատությունների՝ մեդրեսեների ուսանող-թոլլաբներ: Նրանք պահանջում էին ավտորիտար միապետության վերացում և երկրում իսլամական հանրապետության հաստատում: Հանրահավաքն ավարտվեց արյունահեղությամբ: Նրա մասնակիցներից 60 հոգի սպանվեցին պատժիչների կողմից, իսկ հարյուրավոր մարդիկ վիրավորվեցին:

Ղումում տեղի ունեցած իրադարձությունները փաստորեն հանդիսացան հեղափոխության սկիզբը: Շարժումն աստիճանաբար տարածվում


CASPIAN SEA
TURKOMAN
MAZANDARAN
Tehran
Hamadan
KURDISTAN
PERSIAN
IRAN
BAKHTIARIS
QASHQAI
Kerman
PERSIAN GULF
BALUCHI
GULF OF OMAN
Tigris R.
Euphrates R.
PEOPLE OF IRAN
PRINCIPAL LINGUISTIC GROUPS
Farsi
Turkish
Arabic

էր նաև այլ քաղաքներում: Ցույցերի ժամանակ ամենատարածված կարգախոսն էր. «Պահանջում ենք հաց, ջուր բնակարան, էլեկտրականություն և ազատություն»: «Իրանական ժողովրդի ապստամբությունը դուրս է գալիս բռնապետության դեմ սովորական ապստամբության շրջանակներից,- գրում էր ֆրանսիական «Մոնդ դիպլոմատիկ» թերթը:– Դա մի ամբողջ ազգի բողոքի արտահայտություն է սոցիալական և տնտեսական զարգացման այն մոդելի դեմ, որը նրա վզին էր փաթաթվել դրսից: Իրանցիները մերժում են արևմտյան կապիտալիզմը, որը, ներմուծվելով երրորդ աշխարհի երկրները, հատկապես դաժան տեսք է ստանում»:

Թվում է, սակայն, թե իրանական կառավարող վերնախավը, շահի գլխավորությամբ, վարչակարգին սպառնացող վտանգը լուրջ չէր ընդունում: Իրադրությունը վերահսկելու նպատակով կառավարող շրջանները գնում էին աննշան զիջումների: Օրինակ՝ շահի հրամանով նրա ընտանիքի անդամները պարտավորվեցին իրենց անշարժ սեփականության մի մասը փոխանցել «Փեհլևի» ֆոնդին: Այնուհետև իր դաժանությամբ հայտնի ՍԱՎԱԿ-ի հրամանատար գեներալ Նեմաթոլլա Նասերին փոխարինեց ազատականի համբավ ունեցող գեներալ Նասեր Մողդադամը և այլն: Հոգևորականության հետ առճակատումը մեղմացնելու նպատակով մի շարք աստիճանավորներ փոխարինվեցին այնպիսի մարդկանցով, ովքեր ավելի ընդունելի էին նրանց համար: Թույլատրվեց, որ «Էթելաաթ» և «Քեյհան» թերթերը տպագրեն Խոմեյնիի մեծաղիր նկարը: Կառավարությունը որոշում ընդունեց փակել խաղատները և զվարճանալու վայրերը, հայտարարեց, որ երկիրը կրկին անցնելու է մահմեդական օրացույցին: Շահը հայտարարեց, որ ինքը պատրաստ է հարգել իսլամի օրենքները: Սակայն հոգևորականությունը այլևս չէր բավարարվում նման զիջումներով:

1978 թ. գարնանը և ամռանը հակակառավարական ապստամբություններ և ցույցեր տեղի ունեցան Մեշհեդում, Սպահանում, Թավրիզում և մի շարք այլ քաղաքներում: Ապստամբները բողոքում էին իրենց նյութական ու սոցիալական վիճակի վատթարացման դեմ, որը նրանք վերագրում էին իրանական հասարակության մեջ «շահական ճնով» իրականացված արդիականացման և արևմտականացման քաղաքականությանը:

Այդ ելույթների ակտիվ մասնակիցներ էին հանդիսանում քաղաքային միջին խավերը՝ վաճառականները, արհեստավորները և այլք: Ապստամբները ջախջախեցին «Ռասթախիզ» կուսակցության կենտրոնական գրասենյակը, բազմաթիվ գիշերային ակումբներ, խաղատներ, գինետներ, շքեղ ռեստորաններ: Նրանք այրեցին կամ պայթեցրին մեծ

թվով կինոթատրոններ, որտեղ, նրանց կարծիքով, ցուցադրվում էին արևմտյան «անպարկեշտ» կինոնկարներ:

1978թ. սեպտեմբերի 4-ին «Ֆիթրա» («Այդ իլ-ադհա») կրոնական տոնի կապակցությամբ տարբեր քաղաքներում տեղի ունեցած զանգվածային ցույցերի ժամանակ առաջին անգամ նկատվեցին զինվորների հետ ժողովրդի եղբայրացման դեպքեր: Դա առաջին դեպքն էր, երբ իսլամական կրոնական տոնին հաղորդվում էր քաղաքական բնույթ: Ամբողջ երկրում այդ ցույցերին մասնակցեց ավելի քան չորս միլիոն մարդ: Ցույցերի ժամանակ ամենատարածված կարգախոսներն էին. «Ալլահու աքբար, Խոմեյնի ռահբար» («Ալլահը մեծ է, իսկ Խոմեյնին՝ առաջնորդ»), «Մահ շահին և իմպերիալիստներին», «Մենք պահանջում ենք իսլամական հանրապետություն»:

Սեպտեմբերի 6-ին Խոմեյնին Նաջաֆից ուղարկեց հատուկ ուղերձ, որտեղ շնորհակալություն էր հայտնում բանակին այն բանի համար, որ նա Թեհրանում և այլ քաղաքներում ցուցարարների դեմ դուրս չեկավ: Միաժամանակ նա կոչ էր անում ուժեղացնել ճնշումը Փեհլևի դինաստիայի վրա:

Սեպտեմբերի 7-ին մայրաքաղաքում մոտ կես միլիոն մարդ քայլարշավ կազմակերպեց դեպի մեջլիսի շենքը: Ցուցարարները փաթաթված էին սպիտակ սավաններով՝ ցանկանալով շեշտել, որ իրենք պատրաստ են իրենց կյանքը տալու հանուն շահական բռնապետության տապալման:

Գիտակցելով, որ իշխանության վրա կախված է ռեալ սպառնալիք՝ շահը որոշեց անհապաղ կտրուկ քայլերի դիմել: Նա գեներալ Ղոլամ-Ալի Օվեյսիին նշանակեց Թեհրանի ռազմական նահանգապետ: Միաժամանակ, «կտրուկ քայլերի» կողմնակից զինվորականների ճնշման ներքո, կառավարությունը երկրի 12 քաղաքներում հայտարարեց ռազմական դրություն: Ի պատասխան դրա՝ մի քանի ժամ անց, Թեհրանում տեղի ունեցավ հզոր ցույց, որի մասնակիցները դրսևորեցին ինքնազոհաբերման զարմանալի կամք: Բանակը և ոստիկանությունը արյան մեջ խեղդեցին ցույցերը: Դա տեղի ունեցավ ուրբաթ օրը, ուստի ժողովուրդն այն անվանեց «սև ուրբաթ»: Միայն այդ օրը սպանվեց 4500 ցուցարար:

Սեպտեմբերյան իրադարձությունները շրջադարձային ժամանակաշրջան հանդիսացան իշխանությունների և ընդդիմադիր շարժման միջև առճակատման զարգացման մեջ: Այդ իրադարձություններից հետո ցուցարարները շահի անհաշտ հակառակորդ Խոմեյնիին հռչակեցին հեղափոխության առաջնորդ: Այդ իրադարձությունը հանդիսացավ իսլամիստական հոսանքի արմատական թևի խոշոր ձեռքբերումը:

Քնակչության հեղափոխական եռանդը գնալով վերելք էր ապրում:

Շարունակվող հանրահավաքների և ցույցերի հետ մեկտեղ պայքարի հիմնական ձև դարձան գործադուլներն ու դասադուլները: Սկսեցին առաջ քաշվել քաղաքական պահանջներ: Զանգվածների շրջանում աստիճանաբար հասունանում էր միապետական վարչակարգի լրիվ վերացման անհրաժեշտության գիտակցությունը: Շարժումն ընդգրկեց ողջ երկիրը՝ անդամալուծելով հիմնական տնտեսական կենտրոնները: Խուճապի մատնված դրամատերերը սկսեցին հախուռն թափով երկրից դուրս հանել իրենց կապիտալները: Նավթի արտահանման դադարեցումը կարճ ժամանակամիջոցի ընթացքում իրանական գանձարանին հասցրեց մի քանի միլիարդ դոլարի վնաս: Փաստորեն, հակակառավարական, հակաշահական շարժումը սկսեց վերաճել հեղափոխության:

Ընդդիմադիր ուժերին պառակտելու համար կառավարությունը լայնորեն օգտագործում էր «մտրակի ու կարկանդակի» քաղաքականությունը: Դրա հետևանքով ընդդիմադիր ճամբարի մի շարք ներկայացուցիչներ սկսեցին արտահայտել այն միտքը, որ արյունահեղությունից խուսափելու համար անհրաժեշտ է իրականացնել խաղաղ, սահմանադրական բնույթի փոփոխություններ, ընդ որում՝ անպայման «վերևից», և երկիրը վերածել դասական բնույթի սահմանադրական միապետության: Այդ տեսակետի կողմնակիցները դեմ էին Խոմեյնիի կողմից առաջ քաշվող այն հարցադրմանը, որ շահը անպայման պետք է հրաժարվի գահից: Նման կարգի հայտարարություններով հանդես էին գալիս Ազգային ճակատի ղեկավար Քյարիմ Սանջաբին, նույն ճակատի գործադիր խորհրդի անդամ Շահփուր Բախթիարը, Իրանում շիիթական հոգևորականության առաջնորդ այաթոլլահ Քազեմ Շարիաթ Մադարին և ուրիշներ:

Չափավոր ընդդիմության այդ տեսակետները խստորեն քննադատվեցին Խոմեյնիի կողմից: Վերջինս շահական կառավարության խնդրանքով Սադդամ Հուսեյնի կողմից վտարվեց Իրաքից: Իրաքի նախագահը գնաց այդ քայլին նաև այն պատճառով, որ վախենում էր Խոմեյնիի ազդեցության մեծացումից Իրաքի շիա բնակչության վրա: Խոմեյնին հաստատվեց Փարիզի Նոֆլ-լե-Շաթո արվարձանում, որտեղ նրա շուրջը սկսեցին հավաքվել նրա համակիրներն ու հետևորդները: Այստեղից նա Իրան էր ուղարկում մեծ քանակությամբ կոչեր, թռուցիկներ, ձայնագրված ժապավեններ և այլն: Ըստ էության, Փարիզից Խոմեյնին ղեկավարում էր հեղափոխական շարժումներն Իրանում: Անվարան կարելի է ասել, որ 1978 թ. օգոստոսի վերջերից սկսած՝ հակամիապետական շարժման նախաձեռնությունն անցավ Խոմեյնիի կողմից ղեկավարվող հոգևորականության արմատական մասի ձեռքը, որն առաջ քաշեց հա-

սարակ ու պարզ մի կարգախոս՝ «Մահ շահին»:

Երբ Խոմեյնին գտնվում էր Էն-Նաջաֆում, նրա անունը լայնորեն հայտնի էր լոկ Իրանում, իսկ Փարիզում եղած ժամանակ նրա մասին արդեն խոսում էր ողջ աշխարհը:

Շահը ստիպված էր հերթական անգամ պարզաբանել իր վերաբերմունքը իսլամի նկատմամբ: Ամերիկայի «Թայմ» ամսագրին տված իր հարցազրույցի մեջ նա հայտարարեց. «Ես անձամբ գտնում եմ, որ իսլամը չի հակասում առաջադիմությանը: Նորմալ մթնոլորտում հասարակությունը կարիք ունի կրոնի, քանի որ այն նպաստում է նրա կայունացմանն ու ուժին»: Միաժամանակ, շարունակելով խուսանավումների քաղաքականությունը, 1978 թ. նոյեմբերի 6-ին շահը Շարիֆ-Իմամիի փոխարեն վարչապետ նշանակեց գեներալ Ղոլամ Ռեզա Ազխարիին, որը շտապեց հայտարարել, որ իրականացնելու է ազատականացման քաղաքականություն: Թեհրանում ամերիկյան դեսպան Սալիվենը կառավարության այդ փոփոխությունը համարեց «հեղափոխությունը ճնշելու հարցում շահի վերջին փորձը»: Նոր կառավարությունը ձերբակալեց վարչակարգի մի շարք վարկաբեկված ներկայացուցիչների, կտրուկ կրճատեց սպառազինությունների գծով ծախսերը, բարձրացրեց աշխատավարձը, ժողովրդին խոստացավ խաղաղություն ու կայունությունը ապահովելուց հետո ստեղծել ժողովրդավարական քաղաքացիական կառավարություն:

Մինչդեռ իրադարձությունները երկրում և հատկապես մայրաքաղաքում բուռն թափով շարունակվում էին: Տեղի էին ունենում բազմահազարանոց ցույցեր, որոնց ընթացքում ցուցարարները այրում էին բանկերը, կինոթատրոնները, շքեղ խանութները և այլն: Ավելի լայն ծավալ էր ստանում պայքարի ոչ բռնի դիմադրության ձևը: Միաժամանակ հեղափոխական ուժերը սկսեցին կիրառել նոր մարտավարություն՝ տանկերի և ավտոմեքենաների հրկիզում, ճանապարհների փակում, ընդհարումներ բանակի հետ և այլն: Բանակում ավելացան դասալքության, հրամաններին չենթարկվելու և բունտերի դեպքերը: Բանակը քայքայումից փրկելու և զինված ուժերի համախմբման նպատակով 1979 թ. հունվարի 5-ին շահը գեներալ Ա. Ղարաբաղիին նշանակեց գլխավոր շտաբի պետ: Գեներալը ոգի ի բռին քայլեր ձեռնարկեց զինված ուժերի փլուզումը կանխելու համար: Այդ ժամանակ ամեն օր բանակից դասալքության էր դիմում 1000-1500 զինվոր: Օտարերկրացիների փախուստը Իրանից ընդունեց զանգվածային բնույթ: Այլևս ոչ ոք չէր հավատում, որ վարչակարգը կարող է փրկվել: Գնալով շարժումն ընդունում էր ավելի կազմակերպված բնույթ: Առաջ էին գալիս տեղական ինքնակառավարման

մարմինները: Շահի և ժողովրդի միջև «նյարդերի պատերազմի» էտապն ավարտվեց, և շահը կանգնեց փակուղու առջև: Ընկնելով խորը հուսահատության գիրկը, կոտրված ու ընկճված՝ նա առանձնացավ իր Նիավարանի պալատում: Երբ 1978 թ. նոյեմբերի վերջին ամերիկյան «Թայմ» ամսագրի թղթակիցը հարցրեց շահին, թե որն էր իր գլխավոր սխալը, որ ինքը հասավ այդ վիճակին, շահը տխուր պատասխանեց. «Այն, որ ընդհանրապես ես աշխարհ եմ եկել»:

Մուհամմադ Ռեզա Փեհլևին իր համածայնությունը տվեց իշխանությունը փոխանցել ինը հոգուց բաղկացած «գահապահ խորհրդին» և համաձայնվեց «ժամանակավորապես» հեռանալ երկրից: 1979 թ. հունվարի 16-ին թագուհի Ֆարահի հետ նա նստեց իր արձաթագույն-կապույտ «Բոինգ-707» ինքնաթիռը և հրաժեշտի մի շրջան կատարելով Թեհրանի վրա, թռավ դեպի Ասուան (Եգիպտոս)[1]:

Այդ նույն օրը երեկոյան, Թեհրանում այլևս չմնաց շահի և իր հոր ոչ մի հուշարձան: Իրանցիները իրենց անցյալին հրաժեշտ տվեցին նման ձևով:

Փարիզում այաթոլլա Խոմեյնին հայտարարեց, որ շահի մեկնումը «դեռ մեր հաղթանակի առաջին քայլն է: Առջևում դեռ շատ դժվարություններ կան: Ժողովուրդը պետք է գիտակցի, որ շահի մեկնումը դեռ հաղթանակ չէ, այլ միայն հաղթանակի նախանշան»: Խոմեյնին կոչ էր անում բոլորին՝ միավորվել, «ձեռք մեկնել մեկմեկու և մի կողմ թողնել բոլոր կուսակցական ու կրոնական տարաձայնությունները»:

Ամերիկացիներին, հատկապես Թեհրանում գտնվող ամերիկյան գեներալ Ռոբերտ Հայզերին, որը Եվրոպայում ՆԱՏՕ-ի շտաբ-բնակարանում զբաղեցնում էր բարձր դիրք, թվում էր, որ եթե շահը մեկնի երկրից, ապա կարելի է վարել հեղափոխության խաղաղ ելք ձեռք բերելու գիծ:

Սակայն դա պատրանք էր: Սրընթաց կերպով տեղի էր ունենում շահական քաղաքական համակարգի քայքայում:

---

[1] 1979 թ. հունվարի 16-22-ին շահը գտնվում էր Ասուանում: Հունվարի 22-ից մինչև փետրվարի 15-ը, որպես Մարոկկոյի թագավոր Հասան Բ-ի հյուր, հանգստանում էր Մարաքեշում և Ռաբաթում: Ավելի քան երկու ամիս նա անց կացրեց Բահամյան կղզիներում (Պարադայզ կղզում, այնուհետև Կուարնավաքում (Մեքսիկա): Նյու Յորք Սիթիում գտնվում էր բուժման մեջ, այնուհետև եղավ ԱՄՆ-ի Լեքլենդ (Տեխասի նահանգ) ռազմաօդային հենակետում, Պանամայի Կոնդրադոր կղզում: 1980 թ. մարտի 23-ին Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթի հրավերով թռավ Կահիրե, որտեղ 1980 թ. հուլիսի 27-ին քաղցկեղից կնքեց իր մահկանացուն: Հենց այնտեղ էլ նա հողին հանձնվեց:

Թեև պետության ղեկավարի պարտականությունները դրվել էին շահի կողմից նշանակված «խնամակալների» խորհրդի վրա, սակայն իրականում ստեղծվեց երկիշխանություն: Ռեալ իշխանությունը գտնվում էր երկու հակընդդեմ ուժերի ձեռքերում՝ 63-ամյա վարչապետ Շահփուր Բախթիարի, որին աջակցում էին բանակն ու ԱՄՆ-ը և Խոմեյնիի կողմից ղեկավարվող «իսլամական հեղափոխական կոմիտեների» ձեռքում: Թեհրանում ստեղծված «իսլամական հեղափոխության ժամանակավոր կոմիտեն» ժողովրդի շրջանում ստացավ «Խոմեյնիի կոմիտե» անվանումը: Ամբողջ երկրով մեկ տեղի էին ունենում հանրահավաքներ ու քայլարշավներ՝ ի պաշտպանություն Խոմեյնիի:

1979 թ. փետրվարի 1-ին (1357թ. բահմանի 12-ին) 15-ամյա հարկադրական վտարանդությունից հետո «Էր-ֆրանս» ավիաընկերության «Բոինգ-747» լայնաթիռով 79-ամյա Ռուհոլլա Մուսավի Խոմեյնին Փարիզից վերադարձավ Թեհրան: Երեք միլիոն թեհրանցիներ ցնծագին դիմավորեցին նրան: Խոմեյնին ցանկություն հայտնեց Մեհրաբադ օդանավակայանից անմիջապես մեկնել «Բեհեշթ-ե Զահրա»՝ նահատակների գերեզմանատունը, որտեղ նա հանդես եկավ իր պատմական ծրագրային ճառով: Մասնավորապես, նա հայտարարեց, որ Փեհլևիների կառավարումը ի սկզբանե հակաօրինական էր, որովհետև այն իշխանության գլուխ էր եկել սվիններուի ուժով: Նա նշեց, որ միապետական վարչակարգի սկզբունքը հակասում էր բնական օրենքներին ու կարգերին, ինչպես նաև մարդու իրավունքներին: «Ես պետք է հայտարարեմ,- իր ճառում նշեց Խոմեյնին,- որ Մոհամմադ Ռեզա Փեհլևին՝ այդ գարշելի դավաճանը, ամեն ինչ քամուն տվեց ու փախավ: Մեր երկիրը նա քանդեց, իսկ գերեզմանատները բարեկարգեց: Մեր ամբողջ տնտեսությունը քայքայված է... Մոհամմադ Ռեզան այդ բոլորը արեց այն բանի համար, որ մենք բոլորս զգանք Ամերիկայի և Իսրայելի կարիքը: Այն բոլորը, ինչ արել է այդ մարդը, սկզբից մինչև վերջ սխալ էր»:

1979 թ. փետրվարի 5-ին Խոմեյնին հայտարարեց, որ Շ. Բախթիարի կառավարությունը անօրինական է, և իր կողմնակիցներից մեկին՝ Մեհդի Բազարգանին նշանակեց ժամանակավոր հեղափոխական կառավարության ղեկավար: Նա կոչ արեց հնազանդվել այդ կառավարությանը՝ շեշտելով, որ ով հակազդի նրա գործունեությանը, հակազդում է իսլամին: Երկրում փաստորեն նորից ստեղծվեց երկիշխանություն: Շահփուր Բախթիարը հայտարարեց, որ ինքը չի ճանաչում Խոմեյնիի իրավունքը իր փոխարեն նշանակելու նոր վարչապետի:

Այդ օրերին Խոմեյնիի կողմնակիցները և ձախ արմատականների ակտիվիստները, որոնց անվանում էին «ժողովրդական մոջահեդներ» և «ֆիդա-

յիներ», սկսեցին ստեղծել զինված ջոկատներ:

Մի քանի օր անց՝ 1979 թ. փետրվարի 9-ին, Թեհրանի մոտ՝ Ֆարահաբադում գտնվող ռազմաօդային ուժերի Դովշան-թեփե ուսումնական բազայում տեղի ունեցավ զինված ապստամբություն: «Անմահներ» կոչվող շահական գվարդիայի զորամասերը հարձակվեցին ապստամբների վրա: Այդ հարձակումը, որը հաջողության դեպքում կարող էր դառնալ ռազմական հեղաշրջման նախերգանք, պատճառ հանդիսացավ, որ մայրաքաղաքում սկսվի զինված ապստամբություն: Նույն զիշերը «մոջահեդների» և «ֆիդայիների» ջոկատները շրջապատեցին բազան, մարտի մեջ մտան շահական գվարդիայի հետ և փետրվարի 10-ի առավոտյան նրան հասցրին ծանր պարտություն: Այդ միջադեպի կապակցությամբ դիմելով զինվորներին՝ Խոմեյնին հայտարարեց, որ ինքը նրանց ազատում է շահին տված երդումից: Նա կոչ արեց զինված ուժերին՝ «գալ դեպի ժողովրդի գիրկը»: Փետրվարի 11-ին Թեհրանում զինված ընդհարումները ապստամբների ու շահի կողմնակիցների միջև ծեռք բերեցին կատաղի բնույթ: Հենց այդ ժամանակ՝ առավոտյան ժամը 10 անց 30 րոպեին, գեներալ Ա. Ղարաբաղիի առաջարկությամբ սկսվեց զինված ուժերի Բարձրագույն խորհրդի նիստը, որը պետք է որոշեր բանակի ղեկավարության դիրքորոշումը երկրում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ: Խորհրդի նիստին մասնակցում էին բանակի բոլոր տեսակի զորքերի 27 բարձրագույն հրամանատարներ: Նիստը որոշեց «երկրում տեղի ունեցող քաղաքական վեճի» նկատմամբ որդեգրել չեզոք դիրքորոշում, որպեսզի կանխվեն հետագա քաոսն ու արյունահեղությունը: Հայտարարության մեջ նաև նշվում էր, որ բանակը կատարելապես պաշտպանում է «առաքինի իրանական ժողովրդի» ձգտումները: Կասկածից վեր է, որ այդ հայտարարությունը արագացրեց շահական վարչակարգի քայքայման գործընթացը:

Սակայն, այնուամենայնիվ, մայրաքաղաքում շահական թիկնազորի զորամասերը, շահին հավատարիմ մնացած գեներալների հրամանատարությամբ, կատաղի մարտեր էին մղում «ժողովրդական մոջահեդների», «ֆիդայիների» և իսլամիստների զինված ջոկատների դեմ:

Սակայն այն բանից հետո, երբ փետրվարի 11-ին՝ ժամը 11-ին, գեներալ Ա. Ղարաբաղին ռադիոյով հայտարարեց զինված ուժերի չեզոքության մասին, շահական թիկնազորի զորամասերը վերադարձան իրենց զորանոցները: Նույն օրը ապստամբների կողմից սպանվեցին շահական հայտնի գեներալներ Բաղրեհի, Ջաֆարյանը և Ռեզլարին: 1979 թ. փետրվարի 10-ի և 11-ի զինված ապստամբության հետևանքով շահական արքունիքը զրկվեց իշխանությունից: Այն անցավ դեռևս մինչ այդ Խոմեյնիի ցուցումով ստեղծ-

ված Հեղափոխական խորհրդի ձեռքը:

Փետրվարի 12-ին Թեհրանի ռադիոն հայտարարեց հեղափոխության հաղթանակի և շահական վարչակարգի տապալման մասին: Երկրում իշխանությունը ամբողջապես անցավ Ժամանակավոր հեղափոխական խորհրդի ձեռքը: Երկրի պետական կառուցվածքի մասին հարցը որոշվեց վճռել համընդհանուր հանրաքվեի ճանապարհով:

Հեղափոխության հաղթանակի հետևանքով Իրանում գերագույն իշխանությունը փաստորեն անցավ շիիթական կրոնաքաղաքական գործիչների և նրանց հետ կապված բուրժուական քաղաքագետների ձեռքը:

1. ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո՝ 1979 թ. մարտին, Խոմեյնին տեղափոխվեց Ղում քաղաքը և այնտեղից կառավարում էր երկիրը:

Հետփետրվարյան Իրանում համընդհանուր տնտեսական փլուզման հետևանքով միանգամից երկրի առջև կանգնեցին բազում դժվարություններ: Գործազուրկների թիվը հասել էր 3-4 միլիոն մարդու, գների աճը այլևս դարձել էր անվերահսկելի, երկիրը զգում էր սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների սուր պակաս և այլն: Սակայն Խոմեյնին այդ դժվարությունները համարում էր երկրորդական: Նրա կարծիքով՝ քանի որ հեղափոխության վերջնական նպատակը «իսլամական անդասակարգ հասարակության» ստեղծումն է, հետևաբար անհրաժեշտ է, որ առաջին հերթին տեղի ունենա մարդկանց հոգևոր վերածնունդ, իսլամական նորմերով մարդկային բարոյական հարաբերությունների հեղափոխական վերակառուցում: Իսկ զանազան նյութական պահանջների իրականացումը, նրա կարծիքով, պետք է հետաձգել վերոհիշյալ առաջնահերթ խնդրի լուծումից հետո:

Կառավարությանը զուգահեռ՝ Խոմեյնիին քայլ առ քայլ ստեղծում էր իսլամական գունավորում ունեցող իր կառույցները: Ընդ որում՝ բազմաթիվ ազատական-բուրժուական առաջնորդներ ստիպված էին ընդունել Խոմեյնիի գաղափարը սահմանադրական միապետությունը իսլամական հանրապետությամբ փոխարինելու մասին, քանի որ միայն այդ

դեպքում նրանք կարող էին հույս ունենալ մտնելու «հեղափոխական կառավարության» կազմի մեջ: Խոմեյնիի համաձայնությամբ՝ վարչապետի պաշտոնում նշանակվեց ինժեներ Մեհդի Բազարգանը:

1979 թ. մարտի 30-31-ին երկրում անց կացվեց հանրաքվե, որը հավանություն տվեց «իսլամական հանրապետության» ստեղծմանը: Ապրիլի 1-ին Իրանը հայտարարվեց իսլամական հանրապետություն: Դա նշանակում էր, որ երկրում 2500-ամյա միապետությունը վերանում է, և Իրանի պատմության մեջ առաջին անգամ հաստատվում է հանրապետական վարչակարգ: «Այս օրը ես հայտարարում եմ Ալլահի կառավարման առաջին օրը»,- նշեց Խոմեյնին: Երկրում ողջ իշխանությունը կենտրոնացավ Իսլամական հեղափոխական խորհրդի ձեռքում:

Իսլամական հանրապետության հռչակումից անմիջապես հետո օրակարգում դրվեց սահմանադրության մշակման հարցը: Մի շարք ազատական գործիչներ առաջարկեցին որպես հիմք ընդունել 1906-1907 թթ. սահմանադրությունը՝ նրանից հանելով այն ամենը, ինչ վերաբերում էր միապետությանը, և հավելումներ կատարելով իսլամական հանրապետության մասին: Սակայն այդ գաղափարը լայն աջակցություն չգտավ:

Խոմեյնիի և նրա կողմնակիցների համար կարևորագույն հարց էր հանդիսանում սահմանադրության մեջ «վելայաթ-ե ֆաղիհի» սկզբունքի արմատավորումը, որը կոչված էր ապահովել հոգևոր առաջնորդի, տվյալ դեպքում՝ Խոմեյնիի գերագույն իշխանությունը:

Հենց այդ հարցի շուրջը տարբեր քաղաքական խմբավորումների միջև ծավալվեց սուր վեճ: Այսպես՝ հոգևոր ազդեցիկ հեղինակություններից մեկը՝ «մեծ այաթոլլա» սեյյեդ Քազեմ Շարիաթմադարին, դեմ արտահայտվեց սահմանադրության մեջ «վելայաթ-ե ֆաղիհի» սկզբունքը մտցնելուն՝ գտնելով, որ դա հակասում է շիիթական ավանդույթին: Նա այն տեսակետին էր, որ իսլամական հոգևորականությունը չպետք է անմիջական մասնակցություն ունենա երկրի կառավարման մեջ և պետական գործերին:

1979 թ. դեկտեմբերի 2-3-ին տեղի ունեցավ նոր հանրաքվե, որը հավանություն տվեց իսլամական սահմանադրությանը: Այն նախատեսում էր «ֆաղիհի»՝ ամենաարժանավոր հոգևոր առաջնորդի ինստիտուտի արմատավորում, որը վեր էր կանգնած լինելու ողջ պետական ու կառավարական ապարատից: Հենց սահմանադրության տեքստում Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) ֆաղիհ էր հռչակվում իմամ Խոմեյնին: Այդ մասին հայտարարությունը ցնծությամբ ընդունվեց բնակչության չքավոր խավերից բաղկացած հավատացյալների նշանակալից մասի կողմից, որոնք կատարելապես վստահում էին իրենց «րահբարին» («առաջնորդին»): Մինչդեռ աշխարհիկ քաղաքական կազմակերպու-

թյունների ղեկավարները «վելայաթ-ե ֆաղիհի» ինստիտուտի արմատավորումը սահմանադրության մեջ գնահատեցին որպես մի փորձ՝ երկրում արմատավորելու համար աստվածապետական դիկտատուրա: Քրդերով, աղրբեջանական թուրքերով, բելուջներով, թուրքմեններով ու արաբներով բնակեցված նահանգներում, որտեղ ոչ շատ վաղուց ծայր էին առել հանուն ինքնավարության շարժումներ, սահմանադրության մեջ ֆաղիհի վերաբերյալ հոդվածները ընդունեցին անհանգստությամբ և տագնապալի սպասողականությամբ:

Մի շարք սուննիթական կրոնաքաղաքական գործիչներ ևս բացահայտ կերպով հայտարարեցին իրենց դժգոհության մասին «վելայաթ-ե ֆաղիհի» սկզբունքը սահմանադրության մեջ արմատավորելու կապակցությամբ: Սակայն, ինչպես նշվեց, հաղթեց Խոմեյնիի տեսակետը:

Այսպիսով՝ Իրանում ստեղծվում էր թեոկրատիկ-աստվածապետական բնույթ ունեցող հանրապետական վարչակարգ: Սահմանադրությունը իրանական պետության ցմահ գերագույն առաջնորդ էր հռչակում իմամ Խոմեյնիին: Կառավարման իսլամական ձևը իրենով նշանավորում էր ոչ միայն նոր տիպի պետական համակարգի ստեղծում, այլև նոր աշխարհայացքային կառույցի արմատավորում և սկզբունքորեն նոր հայացք դեպի աշխարհն ու հայրենիքը:

Սահմանադրության համաձայն՝ պետական իշխանության մարմինները (կառավարություն, խորհրդարան) ենթարկվում էին հոգևոր առաջնորդին՝ ֆաղիհին, որն անվանվում էր նաև «Ռահբար» («առաջնորդ»), և Դիտողական խորհրդին, որը բաղկացած էր տասներկու աստվածաբաններից ու իրավագետներից, ընդ որում՝ վեց աստվածաբանները նշանակվում էին ռահբարի կողմից, իսկ վեց իրավագետներին ընտրում էր խորհրդարանը՝ Գերագույն դատարանի ներկայացմամբ: Միաժամանակ, ըստ սահմանադրության, ստեղծվում էր հանրապետության նախագահի պաշտոն, որը պետության կառուցվածքի մասին Խոմեյնիի ուսմունքով նախատեսված չէր: Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ նորամուծությունը չէր հակասում «իսլամական կառավարման» տեսակետին, Խոմեյնին չառարկեց դրա դեմ:

Իսլամական սահմանադրությունը ճանաչում է իրանցիների բազմաթիվ քաղաքացիական իրավունքները: Սակայն այն վերապահումը, որ այդ իրավունքները պետք է համապատասխանեն իսլամական սկզբունքներին, ինքնըստինքյան նշանակում է, որ դրանք խիստ կրճատվում ու սահմանափակվում են:

Սահմանադրությունը երկրում առկա տնտեսության երեք սեկտորներից առաջնությունը տալիս է պետական սեկտորին:

Իսլամական սահմանադրության մեջ մեծ ուշադրություն է դարձվում նաև միջազգային խնդիրներին: Մասնավորապես նշվում է, որ ԻԻՀ գլխավոր արտաքին թշնամի է հանդիսանում «ԱՄՆ-ի կառավարող շրջանները»: 153-րդ հոդվածը արգելում է այնպիսի պայմանագրերի ու համաձայնագրերի կնքումը, որոնք հաստատում են օտարերկրյա տիրապետություն երկրի բնական հարստությունների, տնտեսության, մշակույթի, բանակի և առհասարակ կյանքի այլ բնագավառների նկատմամբ: 146-րդ հոդվածը թույլ չի տալիս Իրանի տարածքում ստեղծելու օտարերկրյա ցանկացած պետության ռազմակայան:

Սահմանադրության մեջ նշվում է, որ ԻԻՀ աջակցություն է ցուցաբերում բոլոր այն ժողովուրդների ազատագրական շարժումներին, որոնք տառապում են Արևմուտքի մոնոպոլիստական կապիտալի լծի տակ: Առաջ է քաշվում նաև թեզիս «իսլամական հեղափոխության գաղափարների արտահանման» անհրաժեշտության և իսլամական համերաշխության շարժման աշխուժացմանը նպաստելու վերաբերյալ: 3-րդ հոդվածը պարտադրում է պետական մարմիններին՝ «երկրի արտաքին քաղաքականությունը իրականացնել համաձայն իսլամական նորմերի, եղբայրական պարտավորությունների ոգով բոլոր մուսուլմանների հանդեպ»: 11-րդ հոդվածում նշվում է, որ բոլոր մահմեդականները կազմում են մեկ համայնք («ումմա»), և «Իրանի Իսլամական Հանրապետությունը պարտավոր է իր քաղաքական կուրսն իրականացնել իսլամական ժողովուրդների միասնության ու դաշինքի հիմքի վրա, հետևողականորեն ջանքեր գործադրել իսլամական աշխարհի քաղաքական, տնտեսական և մշակութային միասնության ձեռքբերման ուղղությամբ»: 154-րդ հոդվածում հայտարարվում է, որ ԻԻՀ-ը, «կատարելապես ձեռնպահ մնալով այլ ժողովուրդների ներքին գործերին միջամտելուց, միաժամանակ պաշտպանում է ընչազուրկների օրինական պայքարը «բարեկեցիկների» դեմ՝ աշխարհի բոլոր մասերում»:

Ձևականորեն սահմանադրությունը ժխտում է մարդու շահագործումը մարդու կողմից: Այն մասնավոր սեփականությունը հայտարարում է անձեռնմխելի ու սրբազան եթե այն ձեռք է բերված «օրինական ճանապարհով»:

Իսլամական սահմանադրության ընդունումից հետո սկսվեց իշխանության աշխարհիկ համակարգի ստեղծման գործընթացը: 1980թ. հունվարի 25-ին տեղի ունեցան նախագահական ընտրություններ: Իսլամական հանրապետության առաջին նախագահ ընտրվեց եվրոպական կրթություն ստացած Աբոլհասան Բանիսադրը, որին համարում էին Խոմեյնիի հոգեորդին: Նա իսլամական վերածնության համոզված կողմնակից

էր: Խոմեյնիի հրամանագրով Բանիսադրը նշանակվեց Իսլամական հեղափոխական խորհրդի նախագահ, ինչպես նաև Իրանի զինված ուժերի գլխավոր հրամանատար: Վարչապետ նշանակվեց նախկինում ուսուցիչ Մոհամմադ Ալի Ռաջային, որը Իսլամական հանրապետական կուսակցության անդամ էր:

ԻԻՀ-ում պետական կառույցների ստեղծումը հեշտ ու հանգիստ չէր ընթանում: Ժամանակ առ ժամանակ հնչում էին դժգոհության ձայներ, որ «Փեհլևիների դիկտատուրան փոխարինվեց մոլլաների դիկտատուրայով»: Թեժ պայքար էր ընթանում նաև կառավարող շրջանների ներսում:

Նոր պետական կարգի ստեղծմանը զուգահեռ՝ քայլեր էին ձեռնարկվում տնտեսությունը կարգավորելու ուղղությամբ: Մշակվեց «իսլամական տնտեսության» կոնցեպցիան, որի հիմքում ընկած էին այսպես կոչված «թաուհիդային տնտեսության» սկզբունքները: Այդ կոնցեպցիայի հիմնական ուղղվածությունը ինքնուրույն ու ինքնաբավ ժողովրդատնտեսական կառույցի ստեղծումն էր, իսկ վերջնական նպատակը՝ «սոցիալական հավասարության» հասարակության ձևավորումը:

Խոշոր արդյունաբերությունը, բանկերը, ապահովագրական ընկերությունները, արտաքին առևտուրը և այլն նախատեսվում էր հանձնել պետական սեկտորին:

Սակայն օբյեկտիվ իրականությունը ավելի ու ավելի էր հակասության մեջ մտնում իշխանությունների մտադրությունների ու նպատակների հետ: Ուստի «իսլամական տնտեսության» կոնցեպցիան գործնական կյանքում ճեղքվածքներ տվեց: Տնտեսական դժվարությունները գնալով խորացան, որի հետևանքով հասարակության տարբեր խավերի շրջաններում նկատվեց դժգոհության աճ: 1979 թ. վերջին կառավարությունը ստիպված էր շտապ կարգով մշակել սոցիալական միջոցառումների մի համալիր ծրագիր: Ըստ այմ՝ իրականացվեցին մի շարք ծրագրեր բնակարանային շինարարությանը զարկ տալու, հասարակության չքավոր խավերին տարբեր տեսակի օգնություն ցուցաբերելու ուղղությամբ և այլն: Նախկին շահական «Փեհլևի ֆոնդի» հիմքի վրա ստեղծվեց այսպես կոչված «Ընչազուրկների ֆոնդը», որն իր զարգացումը ստացավ շահի կողմնակիցների գույքի բռնագրավումների շնորհիվ:

Սակայն կառավարության իրականացրած միջոցառումները շատ հաճախ չէին հասնում իրենց նպատակին կամ արգելակվում էին երկրում տիրող ընդհանուր տնտեսական և քաղաքական անկայունության, կառավարական շրջաններում տարաձայնությունների առկայության, տեղական իշխանությունների ոչ կոմպետենտության, վարչաչինովնիկական ապարատի կոռուպցիայի և բազմաթիվ այլ պատճառների հետևանքով:

1979 թ. նոյեմբերի 4-ին Խոմեյնիի կոչով երիտասարդների մի խումբ, որն իրեն անվանում էր «Իմամի կուրսի հետևորդ ուսանող-մահմեդականներ», գրոհով գրավեցին Թեհրանում ամերիկյան դեսպանատունը՝ պատանդ վերցնելով նրա անձնակազմի 66 անդամների: Նրանք հայտարարեցին, որ դիվանագետներին ազատ կարձակեն միայն այն դեպքում, երբ ԱՄՆ-ում գտնվող նախկին շահ Մոհամմադ Ռեզան հանձնվի իրենց: Այդ միջադեպը համաշխարհային հանրության և ՄԱԿ-ի կողմից գնահատվեց որպես դիվանագիտական հարաբերությունների մասին 1961 թ. ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիայի կոպիտ ոտնահարում: Իրանում սկսվեց հակաամերիկյան հուժկու քարոզարշավ: Խոմեյնին հայտարարեց. «Մեր բոլոր դժվարությունները Ամերիկայի պատճառով են»:

Որպես այդ բոլորի պատասխան՝ 1980 թ. ապրիլի 8-ին Վաշինգտոնը հայտարարեց, որ ինքը խզում է դիվանագիտական հարաբերությունները Իրանի հետ: Իրանական դիվանագետները վտարվեցին ԱՄՆ-ից, մտցվեց էմբարգո Իրանի հետ բոլոր գործարար կապերի վրա, ինչպես նաև արգելվեցին ամերիկյան քաղաքացիների այցելությունները այդ երկիրը: ԱՄՆ-ը և նրա արևմտյան դաշնակիցները Իրանի նկատմամբ սկսեցին կիրառել տնտեսական պատժամիջոցներ (իրանական ավուարների սառեցում ամերիկյան բանկերում, Իրանի հետ առևտրի դադարեցում, դիվանագիտական հարաբերությունների խզում և այլն):

Ամերիկյան դիվանագետներին ռազմական ճանապարհով ազատելու ուղղությամբ Վաշինգտոնի կազմակերպած «Քլյու լայթ» («Կապույտ լույս») գործողությունը (1980 թ. ապրիլ) ավարտվեց կատարյալ ձախողմամբ:

Ներքին կյանքում Իրանի նոր ղեկավարությունը գլխավոր ուշադրությունը դարձնում էր հասարակական և ընտանեկան հարաբերությունների «իսլամականացման» ծրագրի իրականացման վրա՝ դրա մեջ ներառնելով նաև կրթական ու կառավարման նոր համակարգի ստեղծումը: Պետական հիմնարկներում իրականացվում էին զտումներ, որոնց նպատակն էր այն անձանց վտարումը, ովքեր իրենց վարկաբեկել էին նախորդ վարչակարգի հետ համագործակցելով: Նրանցից առավել աչքի ընկնողները իսլամական հեղափոխական դատարանների կողմից ենթարկվում էին մահապատժի: Պատժի էին ենթարկվում նաև իսլամական բարոյական օրենսգրքի խախտողները: Մասնավորապես արգելվում էր ոգելից խմիչքների արտադրումը, վաճառքն ու օգտագործումը, սիրային տեսարաններ ունեցող կինոֆիլմերի ցուցադրումը (1980 թվականից բոլոր կինոթատրոնները ընդհանրապես փակվեցին), արգելվեցին պարերը, արևմտյան երաժշտությունը:

Վերոհիշյալ միջոցառումները ստացան իսլամական կուլտուրական

հեղափոխություն անվանումը: Նրա հիման վրա 1980 թ. գարնանից սկսվեց նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների իսլամական ծրագրի իրականացումը: Կուլտուրական հեղափոխությունը տարածվեց նաև զանգվածային լրատվության միջոցների՝ մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության վրա: Սահմանվեց խիստ գրաքննություն: Իսլամականացվեցին նաև դպրոցները: Ամենուրեք սկսեց տիրապետել Խոմեյնիի կուլտը: «Աստված, Ղուրան, Խոմեյնի» կարգախոսը դարձավ երկրի ներքին կյանքի ուղեցույցը: Կուլտուրական հեղափոխության շտաբը իր տրամադրության տակ ուներ մարտական ուժեր, հանձինս Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (որի թվաքանակը 1980թ. կեսերին կազմում էր 200 հազար մարդ), որը պատրաստ էր անհրաժեշտ պահին ճնշել այդ հեղափոխության դեմ ամեն մի դիմադրություն: Կուլտուրական հեղափոխության իրականացմանը նպաստում էին նաև բազմաթիվ հեղափոխական կոմիտեները, հեղափոխական դատարանները և այլն:

Պահանջվում էր պայքար մղել բոլոր նրանց դեմ, ովքեր խոնարհվում էին Արևմուտքի առջև և նրանց փոխարինել «հարյուր տոկոսանոց մահմեդականներով»: Դպրոցական դասագրքերում ողջ եվրոպական պատմությունը փոխարինվեց մահմեդական տարածաշրջանի երկրների և առաջին հերթին Իրանի պատմությամբ: Կուլտուրական հեղափոխությունը կանանցից պահանջում էր անվերապահորեն կատարել շարիաթի բոլոր ցուցումները. կրել չադրա կամ հիջաբ, սահմանափակել այն մասնագիտությունների շրջանակը, որոնցով կարող էին կանայք զբաղվել, ուսուցումը կազմակերպել առանձին՝ տղաների և աղջիկների համար, արգելել ապահարզանները կանանց նախաձեռնությամբ, վերստին արմատավորել բազմակնությունը և «սիղե» կոչված ժամանակավոր ամուսնությունը: Շարիաթի սահմանած մարմնական պատիժները՝ գողության, ոգելից խմիչքներ օգտագործելու, թմրամոլության, ամուսնական դավաճանության համար, տարածվեցին նաև կանանց վրա:

Ողջ իրանական նախաիսլամական քաղաքակրթությունը հայտարարվեց «գոյություն չունեցող»: Իրանի պաշտոնական պատմության սկիզբ հայտարարվեց իսլամի մարգարե Մուհամմադի հիջրան (622 թվականը): Մոռացության մատնվեց նաև պարսկական միջնադարյան դասական պոեզիան:

Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո նրա հոգևոր առաջնորդը՝ իմամ Խոմեյնին, սկսեց խոսել համայն աշխարհի մահմեդականների անունից՝ դատապարտելով իսլամական երկրներում միապետական վարչակարգը:

Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո Իրանում ավելի

ու ավելի էր քաղաքացիություն ստանում զարգացման՝ այսպես կոչված «երրորդ ուղու» կոնցեպցիան: Ներքին պլանով այն ենթադրում էր «ոչ կապիտալիստական և ոչ էլ մարքսիստական» համակարգի ստեղծում, իսկ արտաքին պլանով՝ հավասար չափով հեռացում երկու գերպետություններից՝ ԱՄՆ-ից և ԽՍՀՄ-ից:

1981 թ. հունվարի 20-ին՝ Ռոնալդ Ռեյգանի՝ ԱՄՆ-ի պրեզիդենտ դառնալուց անմիջապես հետո, Իրանում ամերիկյան դեսպանության աշխատակիցները, որոնք 444 օր շարունակ գտնվում էին պատանդի վիճակում, ազատ արձակվեցին և «Բոինգ-727» ինքնաթիռով Թեհրանի Մեհրաբադ օդանավակայանից թռան Վեյսբադեն՝ ԳՖՀ-ում գտնվող ամերիկյան ռազմակայան՝ այնտեղից տուն մեկնելու համար: Ենթադրվում էր, որ այդ իրադարձությունից հետո իրանա-ամերիկյան հարաբերությունների կնճիռները աստիճանաբար կվերանան: Սակայն դա տեղի չունեցավ:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ԻՐԱՆ-ԻՐԱՔՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Իրան-իրաքյան պատերազմն ունի իր նախապատմությունը: Դեռևս XX դ. 60-ական թթ. Իրանի և Իրաքի միջև հարաբերությունները աչքի էին ընկնում մեծ լարվածությամբ: Շահական վարչակարգը ակտիվորեն աջակցում էր Իրաքի քրդերի զինված պայքարին ընդդեմ Բաղդադի վարչակարգի: Սակայն 1975 թ. Մոհամմադ Ռեզա շահը որոշեց հրաժարվել այդ աջակցությունից և նույն թվականի մարտի 6-ին երկու երկրների միջև կնքվեց հարաբերությունների կարգավորման վերաբերյալ մի համաձայնագիր: 1975 թ. հունիսի 13-ին Բաղդադում երկու երկրների կառավարությունների միջև ստորագրվեց նաև միջազգային սահմանների և բարիդրացիական հարաբերությունների վերաբերյալ համաձայնագիր:

70-ական թթ. կեսերին Իրաքում ծայր առավ շիիթների քաղաքական, հակակառավարական շարժում, որը վերստին սրեց հարաբերությունները երկու երկրների միջև:

1979 թ. հուլիսի 17-ին Սադդամ Հուսեյնը դարձավ Իրաքի Հանրապետության նոր նախագահ: Նա անմիջապես ձեռնամուխ եղավ երկրի շիիթական ընդդիմության նկատմամբ պատժիչ գործողությունների: Դրանում որոշակի դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ խոմեյնիականները և առհասարակ իրանական զանգվածային լրատվության միջոցները բացահայտ կերպով կոչ էին անում իրաքյան բանակին՝ տապալելու Ս. Հուսեյնի իշխանությունը և ցրելու ԲԱԱՍ (Արաբական սոցիալիստական վերածնության կուսակցություն) կուսակցությունը:

Իրանի և Իրաքի միջև հարաբերությունները գնալով սուր լարվածության բնույթ էին ստանում: Կոնֆլիկտը այդ երկու սահմանակից պետու-

թյունների միջև օրեցօր հասունանում էր: Նրանք փոխադարձաբար սկսեցին միմյանց նկատմամբ ներկայացնել նաև տարածքային պահանջներ: Իրանում հնչում էին հայտարարություններ այն մասին, որ Իրաքի տարածքի մեծ մասը, ինչպես նաև Պարսից ծոցի մի շարք երկրներ, մասնավորապես Բահրեյնը և Քուվեյթը, իրանական տարածքներ են: Երկու երկրների միջև սուր վեճի առարկա էր նաև Շաթթ-էլ-Արաբ գետի պրոբլեմը: Իր հերթին իրաքյան կողմը Իրանի հարավային Խուզիստան նահանգը, որի բնակչության մեծ մասը արաբներ էին, անվանում էր «Արաբստան» («արաբների երկիր», «արաբների հող»): Միաժամանակ Բաղդադը պահանջում էր արաբներին վերադարձնել Պարսից ծոցի Մեծ Թոմբ, Փոքր Թոմբ և Աբու-Մուսա կղզիները, որոնք գրավվել էին Իրանի կողմից, այն հիմնավորմամբ, որ դրանք Իրանի «պատմական հողերն են»: Սուր վեճի առարկա էր նաև Խորրեմշահր (նախկինում՝ Մուհամմերա) քաղաքի և նրա շրջակա տարածքների պատկանելության հարցը:

Երկու երկրների ղեկավարության միջև առկա էին նաև սուր քաղաքական և գաղափարական հակասություններ ու ներհակություններ: Իրանական ղեկավարությունը իրաքյան վարչակարգը համարում էր ոչ լեգիտիմ և կոչ էր անում իրագործել իսլամական հեղափոխություն: Իրաքի և ԻԻՀ առճակատման կենտրոնական հարցերից մեկը պետական իշխանության բնույթի հարցն էր, այսինքն՝ այն խնդիրը, թե այդ իշխանությունը պետք է լիներ աշխարհիկ, թե կրոնական-աստվածապետական: Իրաքը իրեն համարում էր պանարաբիզմի շարժման առաջապահ ջոկատը, որը հանդես է գալիս հանուն արաբական ազգի միասնության և անկախության՝ իսլամը պետությունից անջատելու հիմքի վրա: Մինչդեռ Իրանը իր հերթին հավակնում էր այն ուժերի գլխավոր հովանավորի դերին, որոնք հանդես էին գալիս բոլոր մահմեդականների քաղաքական միավորման օգտին:

Իրաքի բասիստական ղեկավարությունը Իրանի Իսլամական Հանրապետությանը մեղադրում էր նրանում, որ նա միապետական Իրանից ժառանգել է տարածաշրջանային առաջնության մեծապետական հավակնություններ, ձգտում է իսլամական հեղափոխությունն «արտահանել» գերակշիռ շիիթական բնակչություն ունեցող Իրաք, տապալել այնտեղ գոյություն ունեցող վարչակարգը և առհասարակ վերացնել Իրաքի անկախ գոյությունը, Իրաքյան Քրդստանի քուրդ բնակչությանը հրահրում է հակակառավարական ապստամբությունների և այլն:

Այդ բոլորին հակադարձելու նպատակով Բաղդադը իր հերթին ձեռնամուխ եղավ հակաիրանական հուժկու քարոզչության՝ վարկաբեկելով այդ երկրի իսլամական վարչակարգը և այլն: Միաժամանակ Իրաքի կա-

ռավարությունը իրանական քրդերին և Խուզիստանի արաբներին սկսեց եռանդուն կերպով հրահրել հակակառավարական գործողությունների:

Մի խոսքով՝ Իրան-իրաքյան առճակատման պատճառները բազմաթիվ ու բազմազան էին. սոցիալ-քաղաքական խնդիրներ, ազգային-կրոնական տարաձայնություններ, տնտեսական հակամարտություն, սահմանային վեճեր և այլն:

Շուտով սկսվեցին սահմանային բախումներ, ահաբեկչական գործողություններ և այլն:

Իրանա-իրաքյան սահմանում ծավալուն ռազմական գործողություններ սկսվեցին 1980 թ. սեպտեմբերի 4-ին: Իրաքի հեղափոխական հրամանատարության խորհուրդը չեղյալ հայտարարեց իրանա-իրաքյան հարաբերությունների կարգավորման վերաբերյալ 1975 թ. մարտի 6-ի համաձայնագիրը: Երկու երկրների սահմանամերձ շրջաններում ծավալվեցին ցամաքային, օդային և ծովային ուժերի միջև մարտեր: 1980 թ. սեպտեմբերի 22-ին Իրաքը սկսեց զանգվածային հակահարձակում: Իրաքյան բանակը անցավ սահմանը և ներխուժեց Իրանի տարածքը: Ռազմաճակատի հյուսիսային տեղամասում իրաքյան զորքերը 15 կմ խորացան Իրանի տարածքը, գրավելով Քասրե-Շիրին քաղաքը: Հարավային ճակատում իրաքցիները ներխուժեցին Խուզիստան և գրավեցին ավելի քան 10 հազար քառ. կմ տարածք: Նրանք սրընթաց մոտեցան Խորրեմշահր (Մուհամմերա) քաղաքին: Որպես պատասխան՝ իրանական օդային ուժերը հարվածներ հասցրեցին Բասրա, Վասիթ, Մոսուլ. Քիրքուք, Բաղդադ և Նինևիե քաղաքներին, ռմբակոծեցին մի շարք իրաքյան օդանավակայաններ և շարքից հանեցին մի քանի նավթաքիմիական գործարաններ: Իրանական օդային ուժերի հարվածներից իր ավիացիան պաշտպանելու համար Բաղդադը իր ինքնաթիռների մեծ մասը տեղաբաշխեց հարևան արաբական երկրներում՝ Հորդանանում, Սաուդյան Արաբիայում, Քուվեյթում և այլուր:

Գնալով պատերազմն ընդունում էր լայն թափ ու ծավալ: Սակայն կողմերից որևէ մեկը պաշտոնապես պատերազմ չէր հայտարարել:

Չնայած երկրի ներքին քաղաքական իրավիճակի բարդությանը՝ իրանական ղեկավարության որոշ ներկայացուցիչներ այդ պատերազմն ընկալեցին որպես իրենց համար բարեպատեհ առիթ: Այաթոլլա Խոմեյնիին է վերագրվում այն արտահայտությունը, թե «Այդ պատերազմը մեզ ուղարկել է ինքը՝ Ալլահը»: Իմամը խորապես համոզված էր, որ պատերազմը հնարավորություն կտա հոգեկան և կրոնական վերելքի մեջ գտնվող իրանցիներին՝ ձեռք բերել համոզիչ հաղթանակ բշնամու նկատմամբ, որը նրանց համար փայլուն առիթ կհանդիսանա հեղափոխությունը Իրաք

արտահանելու միջոցով շիիթական բնակչությանը ոտքի հանել բասսիստական վարչակարգի դեմ:

Իրաքի ներխուժումը Իրանի ժողովուրդների մեջ առաջ բերեց հայրենասիրական տրամադրությունների աննախադեպ վերելք: Նույնիսկ Խուզիստանի արաբները, հակառակ Սադդամ Հուսեյնի սպասելիքների, չդարձան «հինգերորդ զորասյուն» և Իրանի բոլոր ժողովուրդների հետ համատեղ բարձրացան պաշտպանելու իրենց հարազատ քաղաքներն ու բնակավայրերը: Քիչ չէին նաև այն դեպքերը, երբ իրաքյան բանակի կազմում կռվող շիաները դիմում էին դասալքության՝ մերկացնելով ռազմաճակատի ամբողջ տեղամասեր կամ զանգվածորեն հանձնվելով թշնամուն:

Սակայն չարդարացան նաև իրանական ղեկավարության այն հույսերը, որ իրաքյան շիաները զանգվածային ելույթներ կունենան Բաղդադի կառավարության դեմ: Իրաքի շիիթների մի ստվար մաս հրաժարվեց ակտիվորեն պաշտպանել ԻԻՀ-ը: Այդ մասը գտնվում էր Նաջաֆի ազդեցիկ շիիթական ուլեմներից մեկի՝ ծագումով իրանցի այաթոլլա Աբոլ-Ղասեմ Խոյիի (1899-1992) գաղափարական ազդեցության տակ, որը հանդես էր գալիս Իրանի իսլամական վարչակարգի մի շարք քաղաքական-կրոնական առանցքային հիմնադրույթների դեմ: Սակայն, այնուամենայնիվ, անշուշտ Իրաքի շիաների մեծագույն մասի համակրանքը Իրանի կողմն էր, և նրանցից շատերը կռվում էր իրանցիների կողմից:

Պատերազմը սկսվելուց հետո ՄԱԿ-ի և որոշ պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից փորձեր կատարվեցին հաշտեցնելու հակառակորդներին, որոնք, սակայն, ավարտվեցին ձախողմամբ:

Ինչ վերաբերում է մեծ պետությունների, այդ թվում նաև ԱՄՆ-ի դիրքորոշմանը այդ պատերազմի նկատմամբ, ապա նրանք շահագրգռված էին թույլ չտալ տարածաշրջանում ուժերի հավասարակշռության փոփոխությունը: Այլ կերպ ասած՝ գերպետությունները թույլ տվեցին, որ Իրանն ու Իրաքը պատերազմեն միմյանց դեմ, սակայն կողմերից որևէ մեկը չպետք է ջախջախեր իր հակառակորդին, այլապես որևէ մեկի հաղթանակի դեպքում նա կարող էր իր միանձնյա հսկողությունը սահմանել Պարսից ծոցի գազի ու նավթի վիթխարի պաշարների վրա և առհասարակ դառնալ տարածաշրջանում «անկառավարելի» ուժային կենտրոն:

1981 թ. սեպտեմբերի 22-ին՝ պատերազմը սկսվելու տարեդարձի օրը, իրանցիները հուժկու հարձակման անցան Աբադանի շրջանում, որի հետևանքով նավթարդյունաբերության այդ խոշորագույն կենտրոնը ազատագրվեց: Դա պատերազմի ընթացքում իրանցիների առաջին խոշոր հաղթանակն էր: Հաջողությամբ ավարտվեցին նաև իրանական

զորքերի գործողությունները սահմանամերձ Շուշ և Դիզֆուլ քաղաքների ազատագրման գործում (1982 թ. մարտ): Այդ նույն թվականի ապրիլին ազատագրվեց Խորրեմշահր քաղաքը, որը իրաքցիների կողմից գրավվել էր պատերազմի հենց սկզբին: Այդ քաղաքի համար ճակատամարտը թերևս ամենակատաղին էր ողջ պատերազմի ընթացքում:

Հաշվի ննստելով այն իրողության հետ, որ նախաձեռնությունն անցել է Իրանի զինված ուժերի ձեռքը՝ 1982 թ. հունիսի 20-ին Սադդամ Հուսեյնը հայտարարեց, որ ինքը համաձայն է կամավոր կերպով Իրանի տարածքից ամբողջապես դուրս բերել իրաքյան զորքերը: Իսկ հոկտեմբերի 26-ին Իրաքի Հանրապետության կառավարությունը պաշտոնական հայտարարություն արեց այն մասին, որ ինքը ճանաչում է միջպետական սահմանների վերաբերյալ 1975 թ. երկկողմանի պայմանագիրը: Սակայն Թեհրանը հրաժարվեց հաշտության բանակցություններ վարելուց:

1982 թ. գարնանից սկսած՝ Իրանի քաղաքական ղեկավարությունը միաձայն պնդում էր, որ շուտով Սադդամ Հուսեյնի նկատմամբ կատարյալ հաղթանակը կհանգեցնի Իրաքում իսլամական պետության ստեղծմանը, որի հետևանքով տեղի կունենա Իրանի և Իրաքի տարածքների միավորում մեկ միասնական իսլամական պետության մեջ:

Հազարավոր ու տասնյակ հազարավոր իրանցիներ, պատանիներից սկսած մինչև տարեց տղամարդիկ, անդամագրվում էին «Բասիջ-ե մուսթազաֆին» («ընչազուրկների մոբիլիզացում») կոչված աշխարհազորային ջոկատներին, որպեսզի մասնակցեն «անհավատների» («քուֆրա») դեմ հայտարարված «սրբազան պատերազմին» («ջիհադ»)՝ պատրաստ լինելով դառնալ «շահիդ» («նահատակ»)՝ հանուն շիիթական իսլամի «սուրբ գործի»: Հարձակողական գործողությունների ժամանակ «Բասիջը» դարձավ հարվածային առաջապահ ուժ, որի մեջ զգալի թիվ էին կազմում կամավոր մահապարտ մարտիկները:

1982 թ. կեսերին և 1983 թ. ընթացքում իրանական զորքերի կողմից իրականացված մի շարք խոշորամասշտաբ ռազմական գործողությունները, որոնք իրականացվեցին «Ռամազան», «Վալ ֆաջր» և այլ նշանաբանների ներքո, առանձին հաջողություն չբերեցին: Այդ գործողությունների ժամանակ միայն 1983 թ. վերջին սպանվեցին 120 000 իրանցի և ավելի քան 60 000 իրաքցի մարտիկներ:

1984-1987թթ. ընթացքում կողմերի միջև ընթանում էր փոխադարձաբար միմյանց հյուծելու և ուժասպառ անելու պատերազմ: Կողմերը օդային հարձակումների և հրթիռակոծումների միջոցով շարքից հանում էին տնտեսական կենտրոններն ու քաղաքացիական օբյեկտները: 1984 թ. գարնանից ամբողջ թափով ծավալվեց նաև, այսպես կոչված, «տանկերային

պատերազմը», երբ հակառակորդները օդային և հրթիռային հարձակումների միջոցով աշխատում էին շարքից հանել նավթարդյունաբերության ձեռնարկություններն ու նավթ տեղափոխող նավերը՝ հակառակորդին զրկելու համար նավթի արտահանումը իրագործելու հնարավորությունից:

«Տանկերային պատերազմը» առաջ բերեց Ատլանտյան դաշինքի պետությունների և առաջին հերթին ԱՄՆ-ի ուժգին դժգոհությունը: Պարսից ծոցում ռազմանավերի թիվը կտրուկ մեծացավ: Ստեղծվեց ծոցում պատերազմի միջազգայնացման իրական վտանգ:

Իրաքյան ավիացիայի օդային հարձակումների ուժեղացման հետևանքով Իրանի հյուսիսարևմտյան սահմանամերձ շրջանների խաղաղ բնակչության շրջանում տեղի ունեցան մեծ կորուստներ: Վիթխարի չափերի հասան նաև ավերածություններն ու տնտեսական վնասները: Մոտ մեկ միլիոն իրանցիներ ապաստան գտան հարևան Թուրքիայի տարածքում: Զինակոչային տարիքի բազմաթիվ երիտասարդ իրանցիներ լքում էին երկիրը և ժամանակավոր ապաստան որոնում Թուրքիայում, Հնդկաստանում, եվրոպական երկրներում և այլուր:

1985 թ. մարտից ամբողջ թափով ծավալվեց նաև այսպես կոչված «քաղաքների պատերազմը», որն իրենով նշանավորեց Իրան-իրաքյան պատերազմի նոր էտապ: Պատերազմող կողմերը սկսեցին անողոք ռմբակոծության ու հրթիռակոծության ենթարկել միմյանց մայրաքաղաքները:

1986 թ. փետրվարին իրանցիները ձեռք բերեցին խոշոր հաջողություն: Նրանց հաջողվեց գրավել Ֆաո կղզին, որտեղ առկա էր նաև նավթային նավահանգիստ: 1986 թ. վերջին, երբ ձախողման մատնվեց իրանական բանակի կողմից կազմակերպված հարձակողական գործողությունը «Քերբելա» նշանաբանի ներքո, Իրանի զինված ուժերը բացահայտ կերպով զրկվեցին իրենց առավելությունից:

1988 թ. ապրիլի 14-ին Պարսից ծոցում ամերիկյան «Սամուել Բ. Ռոբերտս» ռազմանավը ընդհարվեց ականի հետ, որի հետևանքով այն վնասվեց, և նավի աճձնակազմի տասը անդամներ վիրավորվեցին: Ամերիկյան փորձագետները պարզեցին, որ ականը իրանական արտադրության էր: Անմիջապես հետևեց նախագահ Ռ. Ռեյգանի հրամանը հատուցման գործողություն կազմակերպելու վերաբերյալ: Ամերիկյան զինված ուժերը ուժգին հարվածներ սկսեցին հասցնել Պարսից ծոցի հյուսիսային ու կենտրոնական շրջանների իրանական ռազմական ու տնտեսական օբյեկտներին: Այդ գործողությանը մասնակցում էին ամերիկյան ռազմանավերը, ռազմաօդային ուժերը, այդ թվում նաև «Էնտերպրայս» ավիակիրի վրա տեղակայված F-14 «Տոմկետ» ինքնաթիռները, ինչպես նաև ամերիկյան ծովային հետևակը: Այդ գործողության հետևանքով

Իրանը կրեց խոշոր վնասներ:

1988 թ. ապրիլից հունիս ամիսն ընկած շրջանում իրանցիների կողմից մինչ այդ ռազմակալման ենթարկված բոլոր տարածքները ազատագրվեցին իրաքյան զորքերի կողմից:

Այդ օրերին ԱՄՆ-ի ռազմածովային նավատորմի կողմից արձակված հրթիռով ոչնչացվեց Պարսից ծոցի վրայով թռչող քաղաքացիական մի աերոբուս, որը պատկանում էր իրանական «Իրան էյր» ավիաընկերությանը: Նրանում գտնվում էր 298 ուղևոր:

Իրանի զինված ուժերի կողմից ձեռնարկված մի շարք գործողությունների պատճառով ծոցի գոտում հավանական դարձավ նաև ԻԻՀ և Սաուդյան Արաբիայի միջև ռազմական ընդհարման վտանգը:

Նշված իրադարձությունները պատճառ հանդիսացան տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադրության կտրուկ սրման համար: Խոմեյնին զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնից ազատեց գեներալ Սոհրաբիին և նրա փոխարեն նշանակեց մեջլիսի նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիին:

Միանգամայն ակնհայտ էր դառնում, որ ԻԻՀ զինված ուժերի անհաջողությունները չէին կրում ժամանակավոր կամ «պատահական» բնույթ: Իրանական կողմի օգտագործած, այսպես կոչված, «մարդկային ալիքներով» հարձակման մարտավարությունը, որը հանգեցնում էր հսկայական չափերի հասնող զոհերի, գնալով ուժեղացնում էր իրանցիների դժգոհությունը: Նույնիսկ իրանական ղեկավարության շրջանում սկսեցին լսվել քննադատության ձայներ նման մարտավարության կիրառման դեմ, որը, որպես կանոն, խլում էր տասնյակ հազարավոր անփորձ պատանի զինվորների կյանք: Առողջ դատողության տեր առանձին գործիչներ սկսեցին գիտակցել, որ անհրաժեշտ է հրաժարվել իսլամա-շիիթական հեղափոխության արտահանման քարոզչությունից դեպի Իրաք: Այլևս ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ Իրաքի արաբ շիաների մեծ մասը չի արձագանքում Խոմեյնիի գաղափարներին և դեմ է Իրաքում ֆաղիհի՝ իսլամական հոգևոր-քաղաքական իշխանություն հաստատելուն: Նրանք տեսնում էին, որ գնալով պատերազմը ձեռք է բերում տոտալ բնույթ, և դրա հետևանքները կարող են շատ ծանր անդրադառնալ երկրի տնտեսության և բարոյահոգեբանական վիճակի վրա:

Իսկապես պատերազմը աննախադեպ խորացրել էր երկրի՝ առանց այն էլ ծանր վիճակը, առավել ևս, որ նավթահանքերի, նավթավերամշակման գործարանների կանգ առնելու և «տանկերային պատերազմի» հետևանքով իրանական նավթի արտահանումը կտրուկ կրճատվեց, հետևաբար և էապես կրճատվեցին նավթի վաճառքից ստացվող եկամուտ-

ները: Դա առաջ բերեց տնտեսության շղթայական ռեակցիա՝ սննդամթերքի գները աննախընթաց կերպով բարձրացան, աղաղը մեծացավ և այլն:

Մյուս կողմից՝ Պարսից ծոցի գոտում ԱՄՆ-ի ռազմական ներկայության ուժեղացումը, ամերիկյան զինված ուժերի հարձակումը ԻԻՀ ռազմատնտեսական օբյեկտների վրա իրանական ղեկավարության մոտ առաջ էին բերում խորը տագնապի զգացումներ: Ղեկավար շրջաններում ծայր առած տարաձայնությունները գնալով խորանում էին: Նվազում էր նաև պատերազմը մինչև հաղթական ավարտ շարունակելու կողմնակիցների թիվը:

Դեռևս 1981 թ. հունիսի 10-ին Խոմեյնիի հրամանով նախագահ Աբոլ-Հասան Բանիսադրը զրկվել էր զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնից: Հունիսի 20-ին մեջլիսը նրան համարել էր քաղաքականապես ոչ իրազեկ (կոմպետենտ) նախագահ՝ նրան մեղադրելով նաև տնտեսությունը քայքայելու, ռազմական գործողություններ վարելիս խոշոր սխալներ թույլ տալու և առհասարակ «իմամի կուրսից» հեռանալու հանցավոր արարքի մեջ:

Սակայն իրականում նրա պաշտոնազրկման իրական պատճառը դա չէր: Այդ ժամանակ ծայր աստիճանի սրվել էին նախագահի հարաբերությունները Խոմեյնիի և առհասարակ իսլամականների հետ: Բոլոր կամուրջները այրվել էին նաև Բանիսադրի և ազդեցիկ այաթոլլա Մ. Բեհեշթիի միջև: Մայրաքաղաքում և երկրի մի շարք քաղաքներում ծայր էին առել զինված ընդհարումներ Բանիսադրի կողմնակիցների և նրանց հակառակորդների միջև:

1981 թ. հուլիսի 28-ին իշխանությունների կողմից անողոք հալածանքների ենթարկվող նախկին նախագահը և «Մոջահեդին-ե խալղ-ե Իրան» կազմակերպության ղեկավար Մասուդ Ռաջաֆին իրենց հավատարիմ մի խումբ սպաների աջակցությամբ կարողացան փախչել երկրից՝ ինքնաթիռով թռչելով Փարիզ: Ֆրանսիայում նրանց տվեցին քաղաքական ապաստան: Բանիսադրի փախուստը նշանավորվեց նրանով, որ այսուհետև խոմեյնիական կրոնաքաղաքական գործիչները ամբողջությամբ իրենց ձեռքերում կենտրոնացրին երկրի գերագույն իշխանությունը:

Նախագահական նոր ընտրությունների հետևանքով ԻԻՀ նախագահ ընտրվեց վարչապետ Ռաջային:

Սակայն այդ բոլորից հետո ևս երկրի ներքին քաղաքական իրավիճակը չէր կայունանում: 1981 թ. ամռանից կառավարող կրոնական վերնախավի նկատմամբ սկսվեց ահաբեկչական ակտերի մի ալիք: Իսլամական հանրապետական կուսակցության շտաբ-բնակարանում տեղի ունեցած հզոր պայթյունի հետևանքով զոհվեցին կուսակցության 72 անդամներ, այդ թվում

նաև նրա գլխավոր քարտուղար այաթոլլա Մ. Բեհեշթին և խորհրդարանի 27 պատգամավոր: 1981 թ. օգոստոսի 30-ին «Մոջահեդին-ե խալղ-ե Իրան» կազմակերպության կողմից իրականացված հերթական ահաբեկչական գործողության հետևանքով զոհվեցին ԻԻՀ նախագահ Մոհամմադ Ալի Ռաջային, վարչապետ և Իսլամական հանրապետական Կուսակցության գլխավոր քարտուղար, հոջաթ-օլ-էսլամ Մոհամմադ Ռեզա Բահոնարը, ազգային ոստիկանության գլխավոր վարչության պետ, գնդապետ Հուշանգ Դասթգեյղին և հատուկ ծառայությունների մի շարք ղեկավարներ: Մեկ շաբաթ հետո ռումբի պայթյունի հետևանքով կյանքից զրկվեցին հանրապետության գլխավոր դատախազ Ալի Ղոդոսսին, Գիլյան օսթանի նահանգապետ և Իսլամական հանրապետական կուսակցության գաղափարախոս Հասան Այաթը և ուրիշներ:

Այդ ակցիաների նշանակալից մասը իրագործվել էր իսլամական վարչակարգին պատերազմ հայտարարած «Մոջահեդին-ե խալղ-ե Իրան» կազմակերպության կողմից:

Ըստ էության, երկրում ընթանում էր սքողված քաղաքացիական պատերազմ: ԻԻՀ ղեկավարությունը ընդդիմության ճեռնարկած քայլերին պատասխանեց անողորմ հալածանքներով: Դա, ըստ էության, լայնամասշտաբ ահաբեկչություն էր: Ամենուրեք գործում էին «Հեղափոխական դատարանները»: Բազմաթիվ ընդդիմադիր զինված խմբավորումներ համարյա լրիվ ոչնչացվեցին կամ ցիրուցան արվեցին: Կառավարությանը հաջողվեց մեծ ջանքերի գնով կոտրել ահաբեկչության ալիքը և ճզմել զինված ընդդիմության հիմնական օջախները:

1981 թ. հոկտեմբերի 2-ին ԻԻՀ նոր նախագահ ընտրվեց Իսլամական հանրապետական կուսակցության գլխավոր քարտուղար հոջաթ-օլ-էսլամ Սեյյեդ Ալի Խամենեին: Նա դարձավ ԻԻՀ նախագահի պաշտոնում առաջին կրոնական գործիչը: Հոկտեմբերի 29-ին մեջլիսը Իսլամական հանրապետական կուսակցության մեկ այլ գործչի՝ Միր Հոսեյին Մուսավիին, հաստատեց ԻԻՀ վարչապետի պաշտոնում: Այսպիսով՝ հեղափոխության հաղթանակից հետո՝ ընդամենը երկու տարուց քիչ ավել ժամանակաշրջանի ընթացքում, ԻԻՀ քաղաքական իշխանության հիմնական լծակներն ամբողջությամբ անցան հոգևորականության ձեռքը: Իրանում նոր վարչակարգը քայլ առ քայլ ամրապնդում էր իր դիրքերը: 1983 թ. փետրվարին արգելվեց պրոխորհրդային «Հեզբ-ե Թուդե-ե Իրանը» (Իրանի ժողովրդական կուսակցությունը), որն իրականում կոմունիստական կուսակցություն էր: Նրա ղեկավարները ձերբակալվեցին և մեղադրվեցին լրտեսության ու պետական դավաճանության մեջ:

ԻԻՀ ղեկավարությունը կարևոր նշանակություն էր տալիս արտաքին աշխարհի հետ հարաբերությունները զարգացնելու խնդրին, առաջնորդվելով

ԻԻՀ արտաքին քաղաքական հայտնի դոկտրինի սկզբունքներով, ըստ որի Իրանը պետք է բնականոն հարաբերություններ ունենա տարածաշրջանի երկրների, ինչպես նաև բոլոր այն պետությունների հետ, որոնք հարգում են Իրանի պետական անկախությունն ու ինքնուրույնությունը: Ըստ այմ՝ իսլամական մեջլիսի նախագահ, հոջաթ-օլ-էսլամ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին 1985 թ. հուլիսին պաշտոնական այցով մեկնեց Չինաստան և Ճապոնիա: Դա ԻԻՀ բարձրաստիճան որևէ քաղաքական գործչի առաջին այցն էր արդյունաբերական տեսակետից աշխարհի զարգացած երկրները:

1985 թ. օգոստոսին Սեյյեդ Ալի Խամենեին երկրորդ անգամ վերընտրվեց ԻԻՀ նախագահի պաշտոնում:

80-ական թթ. երկիրը լարել էր իր ուժերը Իրաքի դեմ ծանր ու հյուծիչ պատերազմը շարունակելու համար, որը ոչ միայն խլում էր հարյուր հազարավոր մարդկային զոհեր, այլև վիթխարի նյութական վնասներ էր պատճառում Իրանին: Իմամ Խոմեյնին դեմ էր պատերազմն ավարտելուն՝ պնդելով, որ այն պետք է շարունակել մինչև հաղթական ավարտ, որը հնարավորություն կտա պատժելու Իրաքի բասխստական վարչակարգի ղեկավարությանը և անձամբ նախագահ Սադդամ Հուսեյնին, որին նա անվանում էր պատերազմի հանցագործ:

1988 թ. հուլիսի 16-18-ը տեղի ունեցավ ԻԻՀ Պաշտպանության Բարձրագույն խորհրդի նիստ: Այն ընթացավ պատերազմը շարունակելու և այն անհապաղ դադարեցնելու կողմնակիցների միջև թեժ վեճի պայմաններում: Ի վերջո, ընդունվեց միաձայն որոշում՝ դիմելու Խոմեյնիին՝ խնդրելով, որ նա առանց նախապայմանների ընդունի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 598 որոշումը Իրանի և Իրաքի միջև պատերազմը դադարեցնելու վերաբերյալ: Իր մերձակա զինակիցների հորդորների և պատերազմն ավարտելու նպատակահարմարության վերաբերյալ նրանց բերած ծանրակշիռ փաստարկների ճնշման ներքո Խոմեյնին տեղի տվեց՝ հայտարարելով, որ ինքը «պատրաստ է խմելու թույնի գավաթը» և հաշտություն կնքելու Սադդամ Հուսեյնի հետ: ԻԻՀ առաջնորդը («րահբար») իր ռադիոելույթում հայտարարեց, որ ինքը տվել է իր համաձայնությունը Պաշտպանության բարձրագույն խորհրդի որոշմանը:

1988 թ. հուլիսի 18-ին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը ստացավ Իրանի նախագահի պաշտոնական նամակը Իրաքի հետ կրակը դադարեցնելու ԻԻՀ պատրաստակամության մասին: 1988 թ. օգոստոսի 20-ին Իրանի և Իրաքի միջև կնքվեց զինադադար: Դրանով վերջ տրվեց ութամյա պատերազմին, որը համարվում է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամենատևական լոկալ պատերազմը: 1980-1988 թթ. Իրան-Իրաքյան պատերազմը, սակայն, չբացահայտեց հաղթողին: Այն չլուծեց նաև երկու կողմերի հարաբերությունները խաթարող և ոչ մի պրոբլեմ:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ

ԻՐԱՆԸ ՀԵՏԽՈՄԵՅՆԻԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. ԻԻՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՋԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1989 թ. հունիսի 3-ին ԻԻՀ առաջնորդ (րահբար) 87- ամյա իմամ Ռուհոլլա Խոմեյնիին կնքեց իր մահկանացուն: Նույն օրը փորձագետների խորհուրդը («Շուրա-ե խոբրեգան»), որի լիազորությունների մեջ է մտնում ԻԻՀ առաջնորդի ընտրությունների կազմակերպումը և անցկացումը, այաթոլլա Սեյյեդ Ալի Խամենեիին, որը հանդիսանում էր իմամ Խոմեյնիի մերձավոր զինակիցներից մեկը, ընտրեց Իրանի Իսլամական Հանրապետության նոր առաջնորդ: Ըստ իրանական սահմանդրության՝ վերջինիս իրավասությունների մեջ է մտնում հարցերի լայն շրջանակ, որը գործնականում ընդգրկում է հասարակության և պետության կենսագործունեության բոլոր ոլորտները. ԻԻՀ քաղաքականության գլխավոր ուղղության որոշումը և նրա իրականացման նկատմամբ հսկողությունը, զինված ուժերի բոլոր տեսակների հրամանատարությունը, պատերազմի հայտարարումն ու խաղաղության կնքումը, բարձրագույն պաշտոնական անձանց նշանակումը և այլն:

Վարչապետի պաշտոնը վերացվեց: Նախագահի գործադիր իշխանությունը ընդլայնվեց: Նոր նախագահ և կառավարության ղեկավար ընտրվեց փորձված քաղաքագետ, հոջաթ-օլ-էսլամ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիին (ծնվել է 1934 թ.): ԻԻՀ տնտեսական ողջ համակարգը արդիականացնելու նպատակով նորընտիր նախագահը ձեռնամուխ

եղավ բարեփոխումների իրականացման: Նա իր կառավարությունը համալրեց տեխնոկրատ գործիչներով, որոնցից շատերը ավարտել էին ամերիկյան կամ եվրոպական համալսարաններ, արտասահմանից Իրան հրավիրեց իրանցի տնտեսական և տեխնիկական մասնագիտությունների տեր պրոֆեսիոնալ մասնագետների, լուրջ քայլեր կատարեց ամերիկյան դոլարի համեմատությամբ իրանական ռիալի արժեքը բարձրացնելու ուղղությամբ, հետևողականորեն իրականացնում էր տնտեսական ազատականացման քաղաքականություն՝ այն ուղղորդելով դեպի ազատ շուկայական հարաբերությունները: Այդ քաղաքականության կարևորագույն բաղկացուցիչներն էին պետության հսկողության տակ գտնվող մի շարք գործարանների բաժնետոմսերի վաճառքը բանվորներին ու ծառայողներին, դրական վերաբերմունքը իրանական տնտեսության մեջ օտարերկրյա մասնավոր ներդրումների նկատմամբ, համատեղ իրանա-օտարերկրյա ընկերությունների ստեղծումը, իրանական կապիտալի համագործակցության խրախուսումը բազմազգ ընկերությունների հետ, ազատ տնտեսական գոտիների ստեղծումը և այլն:

Կառավարության կողմից բարեփոխումների իրականացումը, որը ստացավ «Ռաֆսանջանիի պերեստրոյկա» անվանումը, էական դեր խաղաց հետպատերազմյան շրջանում իրանական տնտեսության վերածնման գործում: Կառավարությունը նաև նշանակալից հաջողություններ ձեռք բերեց Իրաքի հետ պատերազմի ժամանակ ուժգին կերպով վնասված քաղաքների, գյուղերի, ճանապարհների և արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման գործում: Հատկապես ակնառու ձեռքբերումներ տեղի ունեցան նավթի և գազի արդյունաբերության վերականգնման ու զարգացման բնագավառում:

Առհասարակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ երկիրը նոր էր դուրս եկել Իրան-իրաքյան ութամյա ավերիչ պատերազմից, պրագմատիկ նախագահի առջև սուր կերպով կանգնած էր ԻԻՀ հետպատերազմյան վերականգնման խնդիրը: Դա բավականին բարդ պրոբլեմ էր նաև այն առումով, որ 80-ական թթ. սկզբից երկրի տնտեսական շրջափակման և Իրաքի հետ պատերազմի պայմաններում ԻԻՀ տնտեսությունը ընթանում էր զարգացման կենտրոնացված մոդելի ուղղությամբ, որի թերությունները արդեն ամեն քայլափոխում զգացնել էին տալիս իրենց:

Իրանի տնտեսական կուրսի փոփոխության համար շրջադարձային նշանակություն ունեցավ զարգացման հնգամյա պլանը (1989-1993), որը, ըստ էության, հանդիսացավ երկրի տնտեսության զարգացման ծրագիր դեպի շուկայական հարաբերությունները: Պլանում օրենսդրորեն նախատեսված էր նաև փոխառությունների, վարկերի և ծառայությունների

ձևով օտարերկրյա կապիտալի օգտագործման հնարավորություն: Սահմանադրական արգելքի նման փոփոխությունը հնարավորություն տվեց Իրանին օտարերկրյա առաջատար ընկերությունների հետ կնքել պայմանագրեր բարձր տեխնիկական արտադրությունների շինարարության համար: Կառավարությունը վերցրեց նաև պետական սեփականության մի մասի սեփականաշնորհման կուրս՝ ի բացառյալ նավթի և գազի արդյունաբերության, որոնք ունեին ռազմավարական նշանակություն: Կառավարությունը հրաժարվեց նաև վնասաբեր ձեռնարկություններին դրամական հատկացումներ (դոտացիաներ) տրամադրելուց:

Նշված և այլ միջոցառումների համալիր իրականացումը հնարավորություն տվեց ԻԻՀ-ին՝ հիմնականում հաղթահարելու տնտեսության մեջ նկատվող ճգնաժամային երևույթները, թեև այդ բոլորով հանդերձ՝ երկրի տնտեսությունը շարունակում էր ապրել որոշակի դժվարություններ:

ԻԻՀ տնտեսական զարգացման երկրորդ հնգամյա պլանը (1993-1997) խնդիր էր դրել, որ Իրանը «զարգացող» երկրից վերածվի «զարգացած» երկրի: Ուստի նավթի արտահանումից ստացած եկամուտների մեծ մասը ներդրվում էր այնպիսի նախագծերի իրականացման մեջ, որոնք ի վիճակի էին խթանելու տնտեսության ենթակառուցվածքային զարգացումը: Սակայն Իրանի տնտեսական շրջափակումը և տնտեսական պատժամիջոցների կիրառումը, հատկապես ԱՄՆ-ի կողմից, մեծապես դժվարացնում էր նրա անկաշկանդ տնտեսական զարգացումը:

Ռաֆսանջանիի տնտեսական քաղաքականությունը դիմադրության էր հանդիպում նաև երկրի պահպանողական տարրերի կողմից, որոնք ամբոխավարական կարգախոսների օգնությամբ ժամանակ առ ժամանակ կարողանում էին ժողովրդական զանգվածներին հրահրել նախագահի կառավարության դեմ ցույցերի ու հանրահավաքների: Թերևս այդ պատճառով Ռաֆսանջանիի տնտեսական ազատականացման քաղաքականությունը չուղեկցվեց մշակույթի և քաղաքական կյանքի բնագավառում ազատականացման գործընթացով: Սակայն, ամբողջությամբ վերացրած, իշխանության ղեկի մոտ Ռաֆսանջանիի կառավարության եղած տարիները նշանավորվեցին նրանով, որ դրանք դարձան նոր իսլամական պետության կայունացման և նրա հիմնական քաղաքական-իրավական և սոցիալ-տնտեսական ինստիտուտների կայացման տարիներ: Պետք է նշել նաև, որ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի կառավարությունը 1997 թ. կատարեց նշանակալից քայլ դեպի ժողովրդավարությունը՝ ապահովելով նոր նախագահի ազատ ընտրության հնարավորություն:

2. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

1979 թ. իսլամական հեղափոխությունը Իրանում արմատական փոփոխություններ մտցրեց երկրի արտաքին քաղաքականության մեջ: Աստվածապետության հիմքի վրա ստեղծված և խիստ գաղափարայնացված նորաստեղծ պետությունը որոնում էր իր նոր տեղը միջազգային հարաբերությունների բարդ համակարգում: Իսլամական ինքնության պահպանման ջատագով և ազգային անկախության ու ինքնուրույնության նախանձախնդիր նոր վարչակարգը իր գոյության առաջին իսկ օրերից սուր խնդիրներ ունեցավ ԱՄՆ-ի հետ, որի հետևանքով իրանա-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունները խզվեցին: Անշուշտ, արևմտյան աշխարհի այդ հզորագույն պետության հետ հարաբերությունների լարվածությունը չէր կարող ուղղակի կամ անուղղակի ճևով չազդել եվրոպական երկրների վրա: Սակայն արևմտյան պետություններից միակը, որը, հետևելով ԱՄՆ-ի օրինակին, փակեց իր դեսպանությունը Թեհրանում, Մեծ Բրիտանիան էր: Մյուս պետությունները թեև հեղափոխությանը հաջորդող տարիներին առիթը բաց չէին թողնում Իրանին մեղադրելու միջազգային ահաբեկչությանը աջակցություն ցույց տալու մեջ, սակայն, այնուամենայնիվ, շարունակեցին ԻԻՀ հետ պահպանել դիվանագիտական և տնտեսական հարաբերություններ:

Իրան-Արևմուտք միջպետական հարաբերությունները, որոնք առանց այն էլ ընթանում էին վայրէջքների և վերելքների ճանապարհով, ժամանակ առ ժամանակ ուղղակի մթագնվում էին սուր առճակատումներով: Նման իրավիճակների ցայտուն օրինակ կարող է հանդիսանալ 1989 թ. փետրվարին իմամ Խոմեյնիի հրապարակած ֆեթվան, որով մահվան էր դատապարտվում բրիտանական հպատակություն ունեցող պակիստանցի գրող Սալման Ռուշդիին՝ իր «Սատանայական այաններ» գրքի համար, որն իբր իսլամի հասցեին թույլ էր տալիս վիրավորական արտահայտություններ:

Այս միջադեպը անգլո-իրանական հարաբերությունների լարվածությունը հասցրեց իր գագաթնակետին՝ միաժամանակ հարկադրելով եվրոպական մյուս պետություններին ճշտելու իրենց դիրքորոշումը վերոհիշյալ ֆեթվայի նկատմամբ: Սալման Ռուշդիի սինդրոմը, այսպիսով,

դարձավ Իրան-Արևմուտք հարաբերությունների փորձաքարը բավականին տևական ժամանակների համար:

1989 թ. իմամ Խոմեյնիի մահվանից հետո Արևմուտքը նկատելիորեն մեղմացրեց իր կոշտ դիրքորոշումը իրանական տիրապետող շրջանների նկատմամբ: Դրա շարժառիթը ոչ միայն այն ակնկալիքն էր, որ ձերբազատվելով իմամի վիթխարի հեղինակության ու ազդեցության բեռից՝ ԻԻՀ կառավարման ղեկի մոտ գտնվող նոր մարդիկ Եվրոպայի հետ հարաբերությունները կկառուցեն քաղաքական պրագմատիզմի հիմքի վրա, այլև այն իրողությունը, որ Արևմուտքի թե՝ քաղաքական և թե՝ գործարար շրջաններում ավելի ու ավելի համոզիչ ու հաստատուն կերպով էր գիտակցվում Իրանում ունեցած իրենց շահերը: Այդ երկիրը հանդիսանում էր նավթի հիմնական մատակարարողներից մեկը Եվրոպա: Այնուհետև իրանական շուկան հեռանկարային տնտեսական ու տեխնոլոգիական պահանջարկի առումով կազմում էր 40 միլիարդ դոլարի կարողություն ունեցող մի վիթխարի շուկա: Ոչ պակաս հնարավորություններ էին բացվում նաև զենքի առևտրի բնագավառում: Չպետք է մոռանալ, որ իրանական բանակի ռազմական տեխնիկայի նշանակալից մասը Թեհրանի կողմից ձեռք էր բերվել Եվրոպայում 60-70-ական թթ.: Դրանք արդեն դարձել էին «երկրորդ ձեռքի» զենքեր, և Իրանը այժմ կարիք ուներ նորագույն զենքերի: Կասկածից վեր էր, որ Իրանի հետ հարաբերությունների նորմալացմանը կարող էր հետևել արևմտաեվրոպական պետությունների մոտեցումների փոփոխությունը, այդ երկրի հետ ռազմատեխնիկական համագործակցության կողմը:

Սակայն ԻԻՀ-ի հետ հարաբերություններում էներգետիկ, ընդհանուր տնտեսական և ռազմական բնույթի շահերից բացի, Արևմուտքի երկրների համար էական նշանակություն ունեին նաև երկրաքաղաքական և ռազմաստրատեգիական շահերը: Գաղտնիք չէ, որ Իրանի երկրառազմավարական դիրքը այնպիսին է, որ նա հանդիսանում է մի տեսակ կամուրջ Արևելքի և Արևմուտքի, Հյուսիսի և Հարավի միջև: Իրանը հանդիսանում է նաև Պարսից ծոցի գոտում առանցքային նշանակություն ունեցող պետություններից մեկը, որի քաղաքականությունից է նշանակալի չափով կախված իրադրությունը ոչ միայն այդ տարածաշրջանում, այլև, ամբողջությամբ վերցրած, Մերձավոր ու Միջին Արևելքում, ինչպես նաև Կասպից ծովի ավազանում: Մի խոսքով՝ անժխտելի է իրանական գործոնի ազդեցությունը միջազգային հարաբերությունների համակարգի զարգացման վրա:

Առաջնորդվելով վերոհիշյալ սկզբունքներով՝ Արևմուտքի պետությունները ԻԻՀ-ի հետ հարաբերություններում որդեգրեցին, այսպես կոչ-

ված «քննադատական երկխոսության» քաղաքականությունը («գոֆքոգու-ե էնթեղադ»): Այն ենթադրում էր որոշակի մակարդակով պահպանել այդ երկրի հետ իրենց տնտեսական ու քաղաքական հարաբերությունները՝ միաժամանակ իրենց վերապահելով ինչ-ինչ հարցերում Իրանին քննադատելու իրավունքը:

Արևմուտքի երկրները ենթադրում էին, որ այդ քաղաքականության օգնությամբ իրենց կհաջողվի մեղմել Իրան-Արևմուտք առճակատումը և դրանով իսկ ապահովել «իրանական ուղղությամբ իրենց ունեցած շահերը»:

«Քննադատական երկխոսության» սկզբունքը մի կողմից թեև գոհացում էր տալիս ԱՄՆ-ի պահանջին Իրանի նկատմամբ իրականացնելու «զսպման» քաղաքականություն, սակայն, մյուս կողմից, այն նշանակում էր տարածություն պահել ամերիկյան պատժամիջոցներ կիրառելու քաղաքականությունից, քանի որ եվրոպական տերությունները գտնում էին, որ շփումների օգնությամբ հնարավոր էր ավելի հեշտ ու արդյունավետ կերպով միջազգային ազդեցություն ձեռք բերել Իրանի նկատմամբ:

«Քննադատական երկխոսության» քաղաքականությանը ԻԻՀ նորընտիր նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին արձագանքեց դրականորեն: Քաղաքականության մեջ պրագմատիզմի սկզբունքներին նախապատվություն տվող այդ շրջահայաց ու փորձառու գործիչը գիտակցում էր, որ առանց պետության արտաքին քաղաքական կուրսի մեջ էական փոփոխություններ մտցնելու հնարավոր չէ երկիրը դուրս բերել քաղաքական և տնտեսական մեկուսացվածության վիճակից, որի մեջ նա մխրճվել էր ԱՄՆ-ի կողմից հուժկու քաղաքական և տնտեսական ճնշման պատճառով:

Նորընտիր նախագահը և նրա շրջապատի մարդիկ համոզված էին, որ այդ խնդիրների լուծման համար անհրաժեշտ են Արևմուտքի պետությունների և Պարսից ծոցի հարուստ միապետությունների կողմից հատկացվող վարկեր և տնտեսական օգնություն: 90-ական թթ. սկզբին, հանուն օտարերկրյա ներդրումների ներգրավման, իրանական ղեկավարությունը նույնիսկ պատրաստ էր վերանայել իսլամական օրենսդրության բազմաթիվ հոդվածներ: Միաժամանակ Ռաֆսանջանին աշխատում էր ԱՄՆ-ի և Եվրոպայի հետ գտնել մերձեցման եզրեր: Այդ ուղղությամբ լուրջ քայլ հանդիսացավ ԻԻՀ հետևյալ կարևոր արտաքին-քաղաքական նախաձեռնությունը: 1990 թ. Իրաքի կողմից Քուվեյթի վրա հարձակում գործելուց հետո, որը հայտնի է «Ծոցի պատերազմ» անունով, նախագահ Ռաֆսանջանին հայտարարեց, որ այդ պատերազմում Իրանը պահպանելու է չեզոքություն և իրենից կախված ամեն ինչ անելու է, որպեսզի պատերազմը չընդլայնի իր աշխարհագրական սահման-

ները և իր բոցերի մեջ չներքաշի ծոցի երկրներին: Դրանով ԻԻՀ-ն վերստին հաստատեց իր այն վճռականությունը, որ ոչ մի գնով չի խախտելու Իրաքի հետ 1988 թ. կնքած զինադադարը: Թեհրանի այդ ժեստը արժանացավ Արևմուտքի, այդ թվում նաև ԱՄՆ-ի հավանությանը: 1992 թ. ԻԻՀ արտաքին քաղաքական քարոզչության մեջ գործնականում դադարեցվեցին հակաամերիկյան հարձակումները, որոնց պատճառով Ռաֆսանջանիի կառավարությունը արժանացավ սուր քննադատության: Արմատական ընդդիմությունը Ռաֆսանջանիի և արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթիի արտաքին քաղաքականությունը գնահատեց որպես «արևմտամետ» և սուր քննադատության ենթարկեց այն՝ համարելով, որ դա նահանջ է իմամ Խոմեյնիի հիմնարար սկզբունքներից:

Չնայած իրանական կողմի այդ նախաձեռնություններին՝ ԱՄՆ-ի դիրքորոշումը Իրանի նկատմամբ մնաց անփոփոխ: ԻԻՀ-ն մնում էր միակ երկիրը, որը Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանում ունենալով որոշակի քաղաքական-գաղափարական ազդեցություն՝ դրանով հանդերձ դուրս էր մնում ԱՄՆ հսկողությունից՝ որպես Եվրոպա էներգետիկ հումք արտահանող երկիր: Ուստի Վաշինգտոնը շարունակում էր իր ավանդական մեղադրանքները այդ երկրի հասցեին, որոնց ավելացավ նաև մարդու իրավունքների հարցը: 90-ական թթ. Արևմուտքն աշխատում էր Իրանում քաղաքականացնել այդ հարցը: Մասնավորապես ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն ընդունեց փաստաթուղթ Իրանում մարդու իրավունքների ոտնահարման մասին: Առհասարակ, ԱՄՆ-ը 90-ական թթ. Իրանի նկատմամբ կիրառում էր ռազմաուժային ճնշման կոշտ քաղաքականություն, որն ուղղված էր միջազգային ասպարեզում նրա քաղաքական ու տնտեսական մեկուսացմանը: Իսկ 1993 թ. Վաշինգտոնը Պարսից ծոցի ավազանի նկատմամբ որդեգրեց, այսպես կոչված, «կրկնակի զսպման» քաղաքականություն, որը ենթադրում էր նաև ամերիկյան ռազմական ներկայության հզորացումը ծոցի շրջանում:

Պետք է խոստովանել, որ Ռաֆսանջանիի արտաքին քաղաքական նոր կուրսը էական փոփոխություններ չմտցրեց նաև եվրոպական պետությունների իրանական քաղաքականության մեջ: Արևմուտքը նախկինի պես քննադատում էր Իրանին՝ գտնելով, որ նա դեռևս չի ձերբազատվել արտաքին քաղաքականության բնագավառում իսլամական կողմնորոշիչներից, որը, նրանց կարծիքով, արգելք է հանդիսանում այն բանին, որ երկիրն առաջնորդվի միջազգային-քաղաքական կյանքի ընդունված նորմերով:

Սակայն, չնայած դրան, իրանական դիվանագիտությունը մնում էր այն համոզման, որ էական տարբերություններ կան եվրոպական պե-

տությունների և ԱՄՆ-ի «իրանական» քաղաքականության միջև: 90-ական թթ. կեսերին Իրանը դարձել էր ԱՄՆ-ի կողմից լայնամասշտաբ տնտեսական պատժամիջոցների օբյեկտ, այդ թվում նաև այնպիսի պատժամիջոցների, որոնք ունեին արտաերկրային բնույթ, այսինքն՝ շոշափում էին երրորդ երկրների շահերը: Միաժամանակ Իրանի հասցեին ԱՄՆ-ի քաղաքական բառապաշարի մեջ մտան այնպիսի բառեր ու արտահայտություններ, ինչպես, օրինակ՝ «չարիքի առանցք», «ահաբեկչական պետություն», «քաղաքական իզգոյ» և այլն ("rogue", "terrorist", "outlaw or backlash"): Վաշինգտոնը մեղադրում էր Իրանին նաև զանգվածային ոչնչացման զենքեր ձեռք բերելու մեջ՝ նրան ներկայացնելով որպես մարդկության գլխավոր սպառնալիք:

Ճշմարտությունը պահանջում է նշել, սակայն, որ Պենտագոնի, կենտրոնական հետախուզական վարչության և պետդեպարտամենտի շատ ներկայացուցիչներ չէին բաժանում այդ քաղաքականության մի ամբողջ շարք տեսակետներ: Սակայն արտաքին քաղաքականության բնագավառում վերջին խոսքը, անշուշտ, պատկանում էր ԱՄՆ-ի պրեզիդենտին և ներկայացուցչական մարմիններին:

Իրանական կողմը համոզվել էր, որ չնայած Վաշինգտոնի ճնշումներին՝ եվրոպական պետությունների մեծամասնությունը անհրաժեշտության դեպքում հուժկու հակազդեցություն է ցույց տալիս նրան, եթե մանավանդ այդ ճնշումները անմիջականորեն շոշափում էին իրենց շահերը:

Ժամանակ առ ժամանակ բարդություններ էին առաջանում նաև Իրան-Եվրոմիության անդամ պետությունների հարաբերություններում: Այսպես՝ 1996 թ. մարտին Պալերմո քաղաքում տեղի ունեցած համաժողովում Եվրամիության անդամ պետությունների ԱԳ նախարարները կայացրին որոշում, որի համաձայն Թեհրանից պահանջվում էր պաշտոնապես դատապարտել ահաբեկչությունը և խոստանալ որևէ կերպ չարգելակել մերձավորարևելյան խաղաղության գործընթացը: Հակառակ դեպքում սպառնում էին, որ Եվրամիությունը կվերանայի Իրանի նկատմամբ իր քաղաքականությունը: Մարտի 11-ին Թեհրանում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ ԻԻՀ նախագահ Ռաֆսանջանին ստիպված եղավ հայտարարելու, որ Իրանը դատապարտում է ահաբեկչությունը և որևէ քայլ չի կատարելու մերձավորարևելյան խաղաղության գործընթացը պատնեշելու ուղղությամբ, թեև այդ գործընթացն անարդարացի է համարում:

Այն հանգամանքը, որը Միացյալ Եվրոպան դարձել էր համաշխարհային քաղաքականության և տնտեսության մի ինքնուրույն ու ազդեցիկ ուժ, իրանական դիվանագիտությանը ընդհանուր առմամբ հնարավորու-

թյուն էր տալիս մեծ ճկունությամբ խուսանավելու ԵՄ-ի և ԱՄՆ-ի միջև:

Սակայն 1997 թ. «քննադատական երկխոսությունը» մտավ փակուղի: Դրա պատճառը կայանում էր նրանում, որ 1997 թ. ապրիլի 10-ին Գերմանիայի դաշնային դատարանը ավարտեց այսպես կոչված, «Միկոնոսյան դատավարությունը»: Այդ քաղաքականացված դատավարության վճռի համաձայն՝ իրանական իշխանությունները մեղադրվում էին 1992 թ. սեպտեմբերի 17-ին Բեռլինի «Միկոնոս» ռեստորանում քրդական չորս գործիչների, այդ թվում Իրանական Քրդստանի դեմոկրատական կուսակցության գլխավոր քարտուղար Սադեղ Շարաֆքյանդիի ահաբեկչությունը կազմակերպելու գործին մասնակցություն ունենալու մեջ:

Այդ միջադեպը մեծ աղմուկ առաջ բերեց եվրոպական երկրների հասարակայնության շրջանում, որոնք իրենց կառավարություններից պահանջում էին իրանական վարչակարգի դեմ ձեռնարկել համապատասխան միջոցներ: Ի նշան համերաշխության գերմանական դատարանի որոշման Եվրամիության անդամ պետությունները, կատարելով դիվանագիտական դեմարշ, իրենց դեսպաններին հետ կանչեցին Թեհրանից: Միաժամանակ նրանք որոշեցին առկախել 1992 թ. դեկտեմբերից ի վեր Իրանի նկատմամբ իրագործվող «քննադատական երկխոսության» քաղաքականությունը: Ապրիլի 29-ին Լյուքսեմբուրգում տեղի ունեցավ ԵՄ անդամ երկրների արտգործնախարարների հերթական համաժողովը, որտեղ միացյալ որոշում ընդունվեց «քննադատական երկխոսությունը» ընդհատելու, ինչպես նաև սպառազինությունների վաճառքը Իրանին դադարեցնելու վերաբերյալ:

Իր հերթին ապրիլի 30-ին ԻԻՀ արտգործնախարարությունը հրապարակեց հայտարարություն, որտեղ նշվում էր, որ Թեհրանը նս, ապարդյուն համարելով «քննադատական երկխոսությունը», այն ընդհատում է: Այդ քայլը, անկասկած, հավասարազոր էր դիվանագիտական հարաբերությունների խզման: Սակայն պաշտոնապես Թեհրանը իր դիվանագիտական հարաբերությունները խզեց միայն Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ: Միաժամանակ ԻԻՀ արտաքին քաղաքական գերատեսչությունը հանդես եկավ հայտարարությամբ, որ այսուհետև այլևս ԻԻՀ-ն ԵՄ-ի հետ շփումների ժամանակ քննարկումների առարկա չի դարձնելու մարդու իրավունքների, Սալման Ռուշդիի և ահաբեկչության հետ կապված հարցերի փաթեթը:

«Միկոնոս» գործի վերաբերյալ իրանական պաշտոնական մեկնաբանությունը հանգում էր նրան, որ այն «սարքվել» է ԻԻՀ վարչակարգի վրա քաղաքական ճնշում գործադրելու նպատակով, և որ Բեռլինի դա-

տարանի վրա ազդել են ԱՄՆ սիոնիստական ուժերը:

Իրան-ԵՄ հարաբերությունների ճգնաժամը գնալով ավելի խորացավ: Եվրոպայում հակաիրանական քարոզչությունը հասավ աննախընթաց սրության: Թեհրանը հարվածին պատասխանում էր հարվածով: Իրանական կառավարությունը հայտարարեց, որ ինքը կարող է առևտրի գծով փոխել իր կողմնորոշումը Եվրամիությունից Ասիայի ուղղությամբ և այդպես էլ կանի, եթե ԵՄ պետությունները չդադարեցնեն իրենց քարոզչական պատերազմը Իրանի դեմ և առհասարակ չվարեն «ԱՄՆ-ից և Իսրայելից անկախ քաղաքականություն»:

Այսպիսով, նախագահ Ռաֆսանջանիի ջանքերը՝ Արևմուտքի հետ քաղաքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, ավարտվեցին անհաջողությամբ: Անտարակույս, դա ջուր էր լցնում իսլամական պահպանողականների ջրաղացին:

3. ՄՈՀԱՄՄԱԴ ԽԱԹԱՄԻՆ ԵՎ «ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ» ՆՐԱ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԻԻՀ սահմանադրության համաձայն՝ Ռաֆսանջանին իրավունք չուներ երրորդ ժամկետում քվեարկվելու նախագահի պաշտոնում: Ուստի 1997 թ.մայիսի 23-ին (իրանական օրացույցով 1376 թ. խորդատի 2-ին) ԻԻՀ-ում տեղի ունեցան նախագահական նոր ընտրություններ, որոնց ընթացքում շահելով ավելի քան 20 միլիոն ձայն՝ Սեյյեդ Մոհամմադ Խաթամին տարավ համոզիչ հաղթանակ՝ ընտրվելով ԻԻՀ թվով 5-րդ նախագահ: Իրանի նոր նախագահը ծնվել է 1943 թ.: Նրա հայրը այաթոլլա էր: Նրա ընտրությունը աննպասելի անակնկալ էր կառավարող ուժերի աջ թևի համար, որոնք համարյա համոզված էին, որ հաղթանակ է տանելու մեջլիսի խոսնակ Ա. Նաթեղ-Նուրին:

Իր նախընտրական ելույթների ժամանակ Մոհամմադ Խաթամին խոստանում էր, որ նախագահի պաշտոնում ընտրվելու դեպքում ինքը ջանքեր է գործադրելու Իրանում «քաղաքացիական հասարակություն» կառուցելու համար՝ երկրում գոյություն ունեցող քաղաքական կարգի շրջանակներում, նպաստելու է ժողովրդավարության և ազատության զարգացմանը: Նա իր քաղաքական բառապաշարի մեջ մտցրեց «իսլամա-

կան ժողովրդավարություն» հասկացությունը՝ այն համարելով 1978-1979 թթ. հեղափոխության գլխավոր նպատակներից մեկը: Հաղթանակ տանելուց հետո նորընտիր նախագահը հայտարարում էր, որ երկիրը կանգնած է նոր մարտահրավերների առջև և կարիք ունի փոփոխությունների: Նա գտնում էր, որ ԻԻՀ-ում պետք է ստեղծվի սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական՝ հավասարակշռության հասարակություն, որն իր հիմքում անպայման պետք լինի իսլամական: Խաթամին իր քաղաքականության անկյունաքարն էր համարում հասարակական ազատականացումը (ի տարբերություն Ռաֆսանջանիի տնտեսական ազատականացման), ներառյալ նաև ապրելակերպի ազատականացումը: Այդ ասելով նա հասկանում էր հետևյալը. ամբողջ աշխարհով մեկ տեղաշարժվելու ազատություն, տեղեկատվական ցանցերից օգտվելու, արտասահմանում կրթություն ստանալու հնարավորություն և այլն: Խաթամին մշտապես շեշտում էր նաև սոցիալական արդարության, սոցիալական երաշխիքների, արդարացիորեն կողմնորոշված տնտեսության, գործազրկության վերացման և այլնի կարևորության մասին:

ԻԻՀ նոր նախագահը Իրանի անկախությունը համարում էր իսլամական հեղափոխության ամենաբարձրագույն արժեք ու ձեռքբերում, ուստի ժողովրդին հորդորում էր հավատարիմ մնալ այդ հեղափոխությանը և Իմամ Խոմեյնիի պատգամներին:

Նորընտիր նախագահի ծրագրի հիմնական կետերից էին. կառուցել իրավական հասարակություն, աստիճանաբար երկիրը «բացել» օտարերկրյա ներդրումների համար, տնտեսության առողջացման ուղղությամբ իրագործել էական տեղաշարժեր, իրականացնել հակաինֆլյացիոն քաղաքականություն, հետևողական պայքար մղել կոռուպցիայի դեմ, ստեղծել նոր աշխատատեղեր, կատարել վարչական համակարգի բարեփոխումներ, եթե ոչ լուծել, ապա գեթ մեղմացնել երկրի առջև սուր կերպով կանգնած պարենային պրոբլեմը, որոշ չափով ազատականացնել երկիրը, բարձրացնել նրա պետական հեղինակությունը և այլն: Մ. Խաթամին կոչ էր անում հարգել միջազգային օրենքները և մարդու իրավունքները, դատապարտում էր ահաբեկչության ամեն մի դրսևորում: ԻԻՀ-ն Խաթամիի կառավարության օրոք ակտիվ տնտեսական երկխոսության մեջ մտավ մնացած աշխարհի հետ՝ քաջ գիտակցելով, որ առանց համաշխարհային տեխնոլոգիական փորձի և օտարերկրյա ներդրումների ներգրավման հնարավոր չէ բարձրացնել երկրի տնտեսության արդյունավետությունը: Միաժամանակ պետությունը շարունակում էր վարել տնտեսության զարգացումը հում նավթի վաճառքից ձերբազա-

տելու քաղաքականություն՝ դրան հասնելու արդյունավետ ուղի համարելով արտադրվող հայրենական ապրանքների մրցողունակության բարձրացումը:

Տնտեսության ազատականացման քաղաքականությունն իրագործելիս Խաթամին ամբողջությամբ շարունակում ու զարգացնում էր նախկին նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի գիծը: Սակայն եթե Ռաֆսանջանին հիմնական շեշտը դնում էր տնտեսության վերակառուցման ու բարեփոխման խնդրի վրա, ապա նոր նախագահը առաջնությունը տալիս էր հասարակության բարեփոխմանը, որը նա անվանում էր «մահմեդական քաղաքակրթության վերելքն ապահովող քաղաքականություն»: Հենց դրանից էլ բխում էին նախագահ Խաթամիի կողմից առաջ քաշված երկու հիմնարար գաղափարական սկզբունքները, որոնք են «իսլամական քաղաքացիական հասարակության և քաղաքակրթությունների երկխոսության» գաղափարները:

Արտաքին քաղաքականության բնագավառում ևս Խաթամիի կողմնորոշումները նորարարական էին. նա հայտարարեց, որ ինքը ձգտում է ընդլայնել Իրանի համագործակցությունը շրջապատող աշխարհի, այդ թվում նաև ազդեցության առաջատար համաշխարհային կենտրոնների՝ ԱՄՆ-ի և Եվրամիության հետ:

Նրա այդ հայտարարությունը դրական արձագանք գտավ Եվրոպայում, մանավանդ որ վերջինս, հանդիսանալով իրանական նավթի հիմնական ներմուծողը (Իրանն ապահովում է Եվրոպայի նավթի պահանջների ավելի քան 10%-ը), շոշափելի կերպով իր վրա զգացել էր Իրանի հետ հարաբերությունների խզման բացասական տնտեսական և քաղաքական հետևանքները:

Իր ընտրությունից մեկ ամիս անց՝ 1997 թ. հունիսին, ԻԻՀ նոր բարեփոխիչ նախագահը հանդես եկավ «տարբեր կրոնների ու քաղաքակրթությունների» միջև երկխոսություն սկսելու նոր նախաձեռնությամբ: «Քաղաքակրթությունների երկխոսության» սկզբունքը կոչված էր նախ՝ Իրանը դուրս բերել քաղաքական մեկուսացման վիճակից, այնուհետև՝ ստեղծել երկրի արագ տնտեսական զարգացման կայուն նախադրյալներ, ինչպես նաև երկրի նավթային արդյունաբերության մեջ ներգրավել հնարավորինս մեծ քանակությամբ ներդրումներ:

Խաթամիի առաջ քաշած քաղաքական-փիլիսոփայական այդ դոկտրինը համապարփակ մի ծրագիր էր: «Իսլամական աշխարհը և Եվրոպան պատմական և աշխարհագրական հանգամանքների բերումով պետք է լավ ճանաչեն միմյանց և այնուհետև անցնեն իրենց քաղաքա-

կան, տնտեսական և մշակութային հարաբերությունների բարելավմանը: Մեր ապագան անբաժան է միմյանցից, քանի որ անբաժան է նաև մեր անցյալը»,- ազդարարում էր Խաթամին: «Խորը, խոհուն և համակողմանի երկխոսությունը իսլամական քաղաքակրթության հետ կարող էր բացառիկ օգտավետ լինել այսօր համաշխարհային հանրության առջև կանգնած մի շարք լուրջ հարցերի արդար և գործնական լուծումներ գտնելու համար»,- շարունակում էր նա:

Խաթամիի «քաղաքակրթությունների երկխոսությունը», սակայն, ունի իր պարտադիր պայմանները: Դրանցից են ժողովուրդների և պետությունների հավասարության սկզբունքի ճանաչումը: Այլ խոսքով՝ երկխոսությունը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ նրա մասնակիցներից յուրաքանչյուրը հարգում է մյուսին և նրան վերաբերվում է, ինչպես հավասարը հավասարի հետ: Այնուհետև կարևոր է, որ երկխոսությունը հիմնված լինի ազատության, կամքի ազատ արտահայտման վրա. երկխոսության ընթացքում ոչ մի գաղափար չի կարելի պարտադրել մեկը մյուսին և այլն: Խաթամիի կարծիքով՝ միայն այդ և նման պայմանների պահպանման դեպքում երկխոսությունը կարող է դառնալ առաջին քայլ խաղաղության, անվտանգության ու արդարության ճանապարհին: Նա համոզում էր, որ Իրանի հետ երկխոսություն վարելն ունի իր առավելությունները: Դա այն է, որ Իրանը գտնվում է Եվրոպայի՝ մի կողմից, և ասիական երկրների՝ մյուս կողմից, միջև: «Այսպիսով, Իրանը գտնվում է այնտեղ, որտեղ հանդիպում են Արևելքի և Արևմուտքի մշակույթները, ճիշտ այնպես, ինչպես մարդու մեջ հանդիպում են ոգու Արևելքը և բանականության Արևմուտքը»,- գտնում էր Խաթամին:

1997 թ. դեկտեմբերին Թեհրանում տեղի ունեցավ Իսլամական կոնֆերանս կազմակերպության հերթական գագաթաժողովը, որը կարգավորեց Իրանի հարաբերությունները արաբական երկրների հետ, որոնք, հանձինս իրենց իրանական հարևանի, տեսնում էին արմատական իսլամը արտահանող պետության դերում: Դա ակնհայտորեն վկայում էր այն մասին, որ Իրանի արտաքին քաղաքականության մեջ տեղի է ունենում որոշակի փոփոխություն այն առումով, որ նշմարվում է հրաժարում արտաքին քաղաքականության գաղափարայնացման գծից:

1999 թ. ԻԻՀ նախագահն այց կատարեց Իտալիա: Վերջին քսան տարիների ընթացքում դա իրանական քաղաքական լիդերի առաջին այցն էր Արևմուտք: Ուշագրավ է, որ հյուրընկալ երկրում Իրանի նախագահը իր պաշտոնական հանդիպումները սկսեց Վատիկանից՝ այցելելով և իր հարգանքի տուրքը մատուցելով Հովհաննես Պողոս Բ պապին՝ դրա-

նով իսկ ցանկանալով շեշտել, որ հիմք է դրվում իր առաջ քաշած Արևելքի և Արևմուտքի մշակույթների երկխոսության սկզբունքին:

Այնուհետև Խաթամին այցելեց Ֆրանսիա: Այստեղ նրան հնարավորություն տրվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի նիստում հանդես գալ մեծ ճառով, որտեղ նա զարգացրեց այն միտքը, որ եթե քսաներորդ դարում պատմության առանցքը զենքի ուժն էր, ապա նոր սկսվող դարաշրջանում պետք է լինի երկխոսությունը: Ֆրանսիայի քաղաքական գործիչների, մասնավորապես պրեզիդենտ Ժակ Շիրակի հետ հանդիպումների ժամանակ Խաթամին քաղաքական պլյուրալիզմի, մշակութային երկխոսության և այլ նմանատիպ հարցերի հետ միաժամանակ քննարկումների նյութ դարձրեց նաև Իրանում քաղաքական իրադրության և մարդու իրավունքների հետ կապված խնդիրները, որն աննախադեպ մի երևույթ էր և չէր կարող գոհունակությամբ չընդունվել ողջ Եվրոհամայնքի կողմից:

Խաթամին այցելեց նաև Նորվեգիա, որի հետ Իրանի հարաբերությունները աչքի էին ընկնում իրենց լարվածությամբ: Այդ լարվածության պատճառներն ունեին ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական ենթահող: Իրանը Նորվեգիային մեղադրում էր, որ նավթային քաղաքականության բնագավառում նա իր նկատմամբ կիրառում է դեմպինգի կուրս՝ Սպիտակ ծովում հարաճուն կերպով ավելացնելով նավթի հանույթը և Իրանից աստիճանաբար խլելով նավթի իր եվրոպական գնորդներին: Օսլոյի այդ քաղաքականությունը Թեհրանում մեկնաբանվում էր որպես Իրանի նկատմամբ ամերիկյան էմբարգոյի բաղկացուցիչ մաս:

Իրանա-նորվեգական հարաբերությունների լարվածությունը հասել էր այնպիսի չափերի, որ 1995 թ. այդ երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների մակարդակն իջեցվեց հավատարմատարի աստիճանի: Քաղաքական հարաբերությունների սրման պատճառը այն էր, որ միջազգային կազմակերպություններում Նորվեգիան մի քանի անգամ հանդես էր եկել Իրանում մարդու իրավունքների ոտնահարման վերաբերյալ հայտարարություններով և կոչ էր արել որոշակի քայլեր ձեռնարկել այդ երկրի նկատմամբ: Բացի այդ, Նորվեգիան պաշտոնապես հայտարարել էր, որ միանում է ԱՄՆ-ի պրեզիդենտ Բիլ Քլինթոնի հայտարարած Իրանի նկատմամբ էմբարգոյին և կողմնակից է նրա նկատմամբ պատժամիջոցներ կիրառելուն:

ԻԻՀ նախագահի այցը վերին աստիճանի արդյունավետ էր: Նորվեգիայի գործարար շրջանները ցանկություն հայտնեցին իրենց մասնակցությունը բերել Իրանի նավթային հարստությունների շահագործման ուղղությամբ:

1999 թ. ամռանը Թեհրանը հետ կոչեց Սալման Ռուշդիի վերաբերյալ

իմամ Խոմեյնիի արձակած ֆեթվան: Դրանով իսկ լուծվեց Եվրոպայի հետ Իրանի ունեցած սուր քաղաքական խնդիրներից մեկը: Դրան անմիջապես հետևեց Մեծ Բրիտանիայի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը դեսպանի մակարդակով: Լեյբորիստների կառավարությունը հրապարակեց Իրանի նկատմամբ քաղաքական պրագմատիզմի գիծ իրականացնելու վերաբերյալ իր որոշման մասին: Դրան անմիջապես հետևեց 2000 թ. հունվարին ԻԻՀ արտաքին գործերի նախարար Քամալ Խարրազիի պաշտոնական այցը Մեծ Բրիտանիա: Բանակցությունների ընթացքում քննարկվեցին երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր: Ստորագրվեց իրանա-բրիտանական համաձայնագիր ահաբեկչության և թմրանյութերի բիզնեսի դեմ պայքարում համագործակցության մասին: Համաձայնագրի մեջ տեղ էին գտել նաև երկու երկրների միջև առևտրական հարաբերությունների զարգացման հարցերը: Նախատեսված էր, որ նույն թվականի հունիսին պատասխան այցով Իրան էր մեկնելու Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Ռոբին Քուքը, սակայն այցը տեղի չունեցավ, որովհետև այդ օրերին իրանական դատարանը թվով տասը իրանաբնակ հրեաների, մեղադրելով իսրայելական և ամերիկյան հատուկ ծառայությունների հետ համագործակցելու և լրտեսություն կատարելու մեջ՝ դատապարտել էր բանտարկության: Ի նշան բողոքի՝ Լոնդոնը չեղյալ հայտարարեց Ռոբին Քուքի այցը:

Դեռևս 1998 թ. հունվարին ամերիկյան «Սի-Էն-Էն» հեռուստաընկերությանը տված իր հարցազրույցի ժամանակ Մոհամմադ Խաթամին պատրաստակամություն էր հայտնել ԱՄՆ-ի հետ վարել «քաղաքակրթությունների և մշակույթների երկխոսություն»: Դա նպաստեց, որ ԱՄՆ-ը որոշ չափով մեղմի իր քաղաքականությունը իսլամական հանրապետության նկատմամբ: Փաստորեն, այդ պահից սկսած, տեղի ունեցավ ԱՄՆ-ի կողմից Իրանի կառավարող վարչակարգի ոչ պաշտոնական ճանաչումը:

Սակայն, չնայած այդ բոլորին, ԱՄՆ-ի և Իրանի միջև հարաբերությունները գործնական հարթության վրա չշարժվեցին մեռյալ կետից: Փաստորեն, 2000 թ. սկզբին ԻԻՀ-ն հանդիսանում էր աշխարհում միակ երկիրը, որը հրաժարվում էր ԱՄՆ-ի հետ վարել պաշտոնական երկխոսություն, թեև դրա համար որպես պատրվակ առաջ էր քաշում Վաշինգտոնի կողմից Իսրայելին աջակցելու հարցը: ԻԻՀ արմատական, շրջանները խոչընդոտեցին Իրան-ԱՄՆ հարաբերությունների կարգավորման առաջին փորձերը: Ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ բարեփորոգիչ նախագահ Մոհամմադ Խաթամիի արտաքին և ներքին քաղաքականության գործնական կենսագործումը հանդիպում էր մի շարք դժվարությունների:

Բանն այն է, որ Իրանի քաղաքական համակարգի յուրահատկությունը կայանում է նրանում, որ այն իր մեջ ներառում է ուժային երկու կենտրոն՝ կրոնական-հոգևոր և աշխարհիկ, որոնց վերապահված է երկրի ներքին ու արտաքին քաղաքականության ուղղությունների որոշումը: Ընդ որում՝ շատ հազվադեպ դեպքերում նրանց միջև ծագում են որոշակի, երբեմն նույնիսկ սուր հակասություններ: Համապատասխանաբար ԻԻՀ-ում պետական իշխանության համակարգը ևս բաղկացած է երկու կառույցներից՝ աստվածապետական, որը բնորոշ է միայն Իրանի Իսլամական Հանրապետությանը, և հանրապետական, որը, ի դեպ, իր վրա նույնպես կրում է իսլամական սկզբունքների կնիքը: Այդ բոլորի հետևանքով Խաթամիի արտաքին քաղաքականությունը, հավասարապես ևաև ներքինը, մշտապես ենթակա էր զանազան փորձությունների: Սակայն ԻԻՀ նախագահը, դրսևորելով քաղաքական կամք, փորձում էր անշեղորեն ընթանալ իր ընտրած կուրսով:

2000 թ. արմատական շրջադարձ արձանագրվեց իրանա-գերմանական հարաբերություններում: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի գերատեսչության ղեկավար Յոշկա Ֆիշերը այցելեց ԻԻՀ: Այցի ընթացքում նա շեշտում էր, որ անհրաժեշտ է երկկողմանի հարաբերությունները զարգացնել «պրագմատիզմի և ռեալիզմի» հիմքի վրա:

Պատասխան այցով 2000թ. ամռանը Գերմանիա մեկնեց ԻԻՀ նախագահ Մոհամմադ Խաթամին: Բանակցությունների ընթացքում հատուկ քննարկման առարկա հանդիսացավ երկու երկրների միջև տնտեսական համագործակցության և Իրանում մարդու իրավունքների հետ կապված իրադրության հարցերը: Գերմանական կողմը, ի դեմս կանցլեր Գերհարդ Շրյոդերի նույնպես շոշափեց մարդու իրավունքների հարցը: Սակայն էականն այն էր, որ Գերմանիան հստակ դրսևորեց իր մտադրությունը Իրանի հետ ընդլայնելու իր տնտեսական և մշակութային համագործակցությունը: Կառավարող կոալիցիայի ղեկավարները, առաջնություն տալով Մերձավոր ու Միջին Արևելքում Գերմանիայի տնտեսական շահերին, որոշեցին Իրանի հետ վերսկսել «քննադատական երկխոսությունը»՝ երկրորդ պլան մղելով մարդու իրավունքների հարցը:

Ուշագրավ է, սակայն, որ հաջորդ տարի գարնանը Գերհարդ Շրյոդերի այցը Իրան հայտարարվեց չեղյալ այն պատճառաբանությամբ, որ այդ երկրում «բացակայում է դրական քաղաքական մթնոլորտը»: Այս և նման միջադեպերը վկայում են այն մասին, որ Իրան-եվրոպական երկրներ հարաբերությունները զարգանում էին ոչ համաչափ ու հանգիստ հունով՝ ժա-

մանակ առ ժամանակ մթագնվելով այլևայլ պատճառներով: Սակայն գլխավորն այն էր, որ Արևմուտքի հետ հարաբերությունները արդեն վերականգնվել էին և կոշտ առճակատման ժամանակները մնացել էին հետևում: Իսկ իրանական կողմի համար կարևորը նաև այն էր, որ միանգամայն ակնհայտ էր դարձել Եվրոպայի և ԱՄՆ-ի միջև «իրանական հարցի» շուրջ ստեղծված անհամաձայնության մթնոլորտը: Նման եզրակացության հանգելու համար առկա փաստերը բազմաթիվ էին: Այսպես, օրինակ՝ Եվրոպական հանձնաժողովը 2001 թ. ամռանը հանդես եկավ Միացյալ Նահանգների քննադատությամբ, որը որոշել էր հերթական անգամ հինգ տարի ժամկետով երկարաձգել Իրանի նկատմամբ պատժամիջոցների կիրառումը: Ընդ որում՝ արտաքին կապերի գծով Եվրոպական հանձնաժողովի կոմիսար Կրիս Պատտենը հանդես եկավ հայտարարությամբ, որ ԱՄՆ-ի որոշումը սպառնալիք է ստեղծում միջազգային առևտրի բաց ու թափանցիկ համակարգի համար, և եթե ԱՄՆ-ը պատժամիջոցներ կիրառի Իրանում գործող եվրոպական ընկերությունների դեմ, ապա Եվրամիությունը անպայման դրան կհակադարձի և ԱՄՆ-ի դեմ կձեռնարկի համապատասխան միջոցներ՝ համաշխարհային առևտրական կազմակերպության շրջանակներում:

«Իրանական հարցի» կապակցությամբ Եվրոպայի և ԱՄՆ-ի միջև գոյություն ունեցող ամենասկզբունքային տարաձայնությունը առնչվում է այն հարցի հետ, թե որոնք են այն ուղիները, որոնք անցնելով՝ Իրանը աստվածապետական երկրից կարող է վերածվել ժողովրդավարական պետության: Հարցի լուծման տարբերակները ընտրելիս Վաշինգտոնը հիմնական շեշտը դնում է, այսպես կոչված, Իրանի «չեզոքացման» վրա, որը, նրա կարծիքով, ի վերջո իրանական պետությանը կմղի փակուղի: Մինչդեռ Եվրոպան գտնում է, որ անհրաժեշտ է կիրառել զգույշ համագործակցության մարտավարություն, որը դիվանագետները ձևակերպում են որպես «կառուցողական փոխհամագործակցություն»: Այդ մարտավարության իմաստը կայանում է նրանում, որ զարգացնելով հարաբերությունները Իրանի հետ՝ հնարավոր է քայլ առ քայլ նրան մղել դեպի բարեփոխումների իրագործումը, որոնք մի որոշ էտապում այլևս կդառնան անշրջելի:

Իրանի մերձեցման գործընթացները Արևմտյան Եվրոպայի հետ ավելի ակտիվացան ու ձեռք բերեցին գործնական բնույթ 2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո: Եվրոպական բոլոր պետությունները գոհունակությամբ նշեցին, որ Իրանը հանդես եկավ ամերիկյան քաղաքներում ահաբեկչական գործողությունների դատապարտմամբ: Նկատի ունենալով Թեհրանի ավանդական բացասական վերաբերմունքը «Թալիբան»

շարժման նկատմամբ՝ ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները մեծ հույսեր էին կապում այն բանի հետ, որ Թեհրանը կաջակցի Աֆղանստանում իրականացվող հակաահաբեկչական գործողություններին: Սակայն պարզվեց, որ թեև նա ընդունում է հակաահաբեկչական գործողություններ իրականացնելու անհրաժեշտությունը, սակայն միայն ՄԱԿ-ի հովանու ներքո և վճռականորեն դեմ է գլխավորապես ամերիկացիների կողմից իրականացվող հարվածներին «Թալիբանի» ռազմական հենակետերի վրա: Ընդ որում՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպության արտակարգ նստաշրջանում Իրանը հստակ ու կտրուկ կերպով արտահայտեց իր բացասական դիրքորոշումը Աֆղանստանում ԱՄՆ-ի իրականացրած ռազմական գործողությունների նկատմամբ:

«Քաղաքակիրթ աշխարհի հետ Իրանի համերաշխության» կեցվածքը ունեցավ այն հետևանքը, որ եվրոպական երկրները հանդես եկան հայտարարությամբ, որ այսօր Եվրոպան հնարավորություն ունի Իրանի հետ հաստատելու «նոր հարաբերություններ»: Այդ հայտարարությանը հետևեց Եվրամիության որոշումը ԻԻՀ-ի հետ սկսելու բանակցություններ առևտրատնտեսական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ: Բացի այդ, Եվրոխորհրդարանը ընդունեց բանաձև, որը կոչ էր անում ավելի կառուցողական ու սերտ երկխոսություն սկսել ԻԻՀ-ի հետ:

Հենց այդ նույն օրերին՝ 2001 թ. սեպտեմբերին՝ Մերձավոր Արևելքում իր շրջագայության ժամանակ, Իրան այցելեց Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Ջեք Ստրոն: Դա 1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո բրիտանական բարձրաստիճան քաղաքական գործչի առաջին այցն էր Իրան: Ուշագրավ է նաև այն, որ Ստրոն Իրանին խոստացավ ֆինանսական օգնություն: Սակայն այդ այցը միանշանակ գնահատականի չարժանացավ իրանական կառավարող շրջանների կողմից:

Մեծ Բրիտանիայի հետ ԻԻՀ կարծես թե բարելավվող հարաբերությունները դաժան հարված ստացան 2002 թ. փետրվարին, երբ Թեհրանը հրաժարվեց ընդունել բրիտանական նորանշանակ դեսպան Դեյվիդ Ռեդդսեյին: Արմատական տրամադրություններ ունեցող հոգևորականության ձայնափող հանդիսացող թերթերը (օրինակ՝ «Ջոմհուրի-ե էսլամի» և այլն) դեսպանի նոր թեկնածուին անվանեցին իսրայելական Մի-6 գաղտնի ծառայության լրտես կամ պարզապես «հրեական լրտես»: Իր այդ կոշտ դիրքորոշումից իրանական կողմը զիջման չգնաց նույնիսկ այն բանից հետո, երբ Անգլիայի վարչապետ Թ. Բլերը անձամբ հեռախոսային զրույց ունեցավ նախագահ Մ. Խաթամիի հետ: Որպես պատասխան քայլ՝ Մեծ Բրիտանիայում Իրանի դեսպանի կարգավիճակը իջեցվեց մինչև գործերի

հավատարմատարի մակարդակի: Անշուշտ, այդ աղմկալի միջադեպը չէր կարող բացասական ներգործություն չունենալ անգլո-իրանական հարաբերությունների վրա: Օգտվելով առիթից՝ Վաշինգտոնը չհապաղեց Իրանն անվանել «չարիքի առանցք»: Թեև Անգլիայի արտգործնախարար Ջեկ Ստրոն շտապեց տարածություն պահել ամերիկյան այդ բնորոշումից, սակայն կասկածից վեր էր, որ իրանա-բրիտանական հարաբերությունները բարելավելու ուղղությամբ տարիների ջանքերը այլևս իզուր էին անցել:

Ի պատիվ ԻԻՀ անխոնջ նախագահ Խաթամիի պետք է ասել, որ այդ անհաջողությունը չվհատեցրեց նրան: Այդ «ցավալի» ձախողումից հետո ևս նա հետևողականորեն շարունակում էր ջանքեր գործադրել եվրոպական տարբեր երկրների հետ երկկողմանի հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ: 2002 թ. նա պաշտոնական այցերով եղավ Ավստրիայում և Ռուսաստանում: Այդ այցերի ընթացքում ԻԻՀ նախագահի կարևորագույն նպատակներից մեկն էր եվրոպական քաղաքականության առաջին դեմքերին ներշնչել, որ Իրանը հստակ տարբերություն է դնում իր ընկատմամբ իրագործվող ամերիկյան և եվրոպական քաղաքականությունների միջև:

2002 թ. փետրվարի 12-ին ԻԻՀ արտգործնախարար Քամալ Խարրազին Ստամբուլում տեղի ունեցած Եվրամիության և Իսլամական կոնֆերանս կազմակերպության ներկայացուցիչների համատեղ խորհրդակցությունում հանդես եկավ ընդարձակ ելույթով, որտեղ Եվրամիությանը կոչ արեց ավելի աչքի ընկնող դերակատարություն ունենալ Մերձավոր Արևելքի խաղաղ կարգավորման գործում: Նրա արտահայտությամբ՝ ԱՄՆ-ի «միակողմանի և ռազմաշունչ» մոտեցումները այդ պրոբլեմին բացասական ազդեցություն են գործում ահաբեկչության դեմ միջազգային պայքարի վրա:

Ինչպես և սպասվում էր, Խարրազիի այդ ելույթը դրական արձագանք գտավ Եվրոպայում: Այն մեկնաբանվեց մի այնպիսի իմաստով, որ Իրանը շահագրգռված է արդյունավետ քաղաքական երկխոսության մեջ մտնել Արևմտյան Եվրոպայի հետ:

2002 թ. մարտին Բրյուսելում գումարվեց միջազգային մի կոնֆերանս, որը նվիրված էր Իրանի հետ Եվրամիության բազմապիսի խնդիրների քննարկմանը: Հատկապես շեշտը դրվում էր հետևյալ հարցերի վրա. Իրան-ԵՄ երկրների տնտեսական ու քաղաքական հարաբերություններ, Իրան-ԵՄ երկրների միջև համագործակցության հարցերը Կենտրոնական Ասիայում, Իրանի շուրջը ստեղծված տարածաշրջանային իրադրությունը և այլն:

Կոնֆերանսում եվրոպական տերությունները կոչ արեցին Իրանին

համագործակցել իրենց հետ միջազգային ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքերի տարածման դեմ պայքարում: Ցանկանալով պատնեշել ԵՄ-Իրան հարաբերությունների զարգացումը՝ Իսրայելը և ԱՄՆ-ը իրենց մտահոգությունը հայտնեցին իրանա-եվրոպական առևտրական ու քաղաքական կապերի ծավալման կապակցությամբ: Սակայն նրանց այդ անհանգստությունը արձագանք չգտավ ԵՄ անդամ երկրների մեծ մասի մոտ: Ավելին, միջազգային հարցերի գծով ԵՄ կոմիսար Կրիս Պատտենը հայտարարեց, որ ինքը լուրջ չի համարում տարածաշրջանում կայունություն ձեռք բերելու հնարավորության գաղափարը Իրանի կատարյալ մեկուսացման պայմաններում: Միաժամանակ նա վերապահում արեց, որ Եվրոպան երբեք չի անտեսել Իրանում մարդու իրավունքների հարցը: Նա հայտնեց այն կարծիքը, որ այդ բնագավառում առանց առաջընթացի հնարավոր չեն ձեռքբերումներ նաև համագործակցության այլ բնագավառներում:

2002 թ. մարտին ԱՄՆ-ն Իսրայելի աջակցությամբ հերթական անգամ խափանեց ԻԻՀ-ի դիմումը Համաշխարհային առևտրական կազմակերպությանը անդամակցելու վերաբերյալ: Ընդ որում՝ այդ հարցի կապակցությամբ ևս ԱՄՆ-ի դիրքորոշումը տարբերվում է արևմտաեվրոպական պետությունների որդեգրած դիրքորոշումից:

Իրանի հետ հարաբերությունների բնագավառում եվրոպական մյուս պետությունների համեմատությամբ Ֆրանսիան շատ ավելի առաջ էր գնացել և արտահայտվում էր ոչ թե «կառուցողական երկխոսության», այլ «կառուցողական համագործակցության» զարգացման մասին: Վարելով հարաբերականորեն ինքնուրույն արտաքին քաղաքական գիծ և շահագրգռված լինելով վերականգնել իր երբեմնի ազդեցությունը Մերձավոր Արևելքում՝ Փարիզը կենսականորեն շահագրգռված էր զարգացնելու իր հարաբերությունները (առաջին հերթին՝ տնտեսական) Իրանի հետ: Ընդ որում՝ Ֆրանսիան չէր երկնչում գործելու ի հեճուկս ԱՄՆ-ի: Այսպես՝ 1997 թ. սեպտեմբերին ֆրանսիական «Տոտալ» ընկերությունը, հակառակ ամերիկյան պատժամիջոցների ռեժիմի, խոշոր պայմանագիր կնքեց ԻԻՀ-ի հետ Պարսից ծոցում իրանական գազի հանքավայրերը յուրացնելու և շահագործելու վերաբերյալ: Առհասարակ, ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում այն հանգամանքը, որ Եվրոպան փորձում էր տարածություն պահել Իրանի նկատմամբ ամերիկյան քաղաքականությունից և այդ երկրի հետ կառուցել ինքնուրույն քաղաքական հարաբերություններ ու առևտրատնտեսական համագործակցություն: Ըստ այնմ՝ Իրանը ավելի էր իր վրա գրավում Արևմուտքի՝ արդյունաբերական տեսակետից զարգացած երկր-

ների սևեռուն ուշադրությունը: Նրանք ցանկանում էին ոչ միայն ավելի ծավալուն կերպով օգտվել այդ երկրի վիթխարի բնական հարստություններից, այլև նրա երկրաքաղաքական և երկրատնտեսական առանձնահատկություններից: Պետք է նշել, որ եվրոպական քաղաքագետները Իրանը դիտում են որպես մի կարևոր տարածաշրջանային պետություն, որից շատ բան է կախված Մերձավոր Արևելքում և Կետրոնական Ասիայում կայունություն ապահովելու համար: Ընդ որում՝ ԻԻՀ-ին հատկացվում է Եվրոպայի և, այսպես կոչված, «անկայունության իսլամական գոտու» միջև «սահմանի» դեր:

Իրանական ղիվանագիտությունը իր հերթին ակնառու կերպով ակտիվացրել էր իր գործունեությունը եվրոպական ուղղությամբ՝ փորձելով լուծել մի քարդ, սակայն Իրանի համար բացառիկ կարևոր նշանակություն ունեցող խնդիր՝ եվրոպական մեկ կամ երկու պետությունների հետ կնքելու ստրատեգիական համագործակցության վերաբերյալ պայմանագիր: Այդ ուղղությամբ առավել մեծ հույսեր իրանական ղիվանագիտությունը կապում էր Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ: Թեհրանում գտնում էին, որ Գերմանիան դեռևս պատրաստ չէ նման քայլի դիմելու, իսկ Մեծ Բրիտանիայի հետ այդպիսի պայմանագրի ստորագրումը հնարավոր չէ ոչ հիմա, ոչ էլ ապագայում: Բոլոր դեպքերում իրանական քաղաքականության «քարեկորոգչական» թևի ներկայացուցիչները գտնում էին, որ Եվրամիության հետ առևտրատնտեսական կապերի զարգացումը միակ ճանապարհն է Իրանի տնտեսական մեկուսացումը հաղթահարելու և նրա միջազգային դիրքերը ամրապնդելու համար: Այդ թեզը հիմնավորելու համար վկայակոչվում էին մի շարք տնտեսական բնույթի գործոններ, մասնավորապես այն, որ Եվրոպայի՝ արդյունաբերական տեսակետից զարգացած երկրները հանդիսանում են Իրանի գլխավոր առևտրատնտեսական գործընկերները. Գերմանիայի հետ առևտրաշրջանառությունը կազմում էր տարեկան 3 միլիարդ դոլար, Իտալիայի հետ՝ 2,6 միլիարդ, Ֆրանսիայի հետ՝ 1,6 միլիարդ: Արևմտաեվրոպական երկրները հանդիսանում են իրանական նավթի, քիմիական արդյունաբերության արտադրանքի, բնական գազի, պողպատի, կաշվեղենի, ձեռագործ գորգերի և մի շարք այլ ապրանքների հիմնական ներմուծողները: Իր հերթին եվրոպական երկրներից Իրանը ներմուծում էր սննդամթերքներ, արդյունաբերական սարքավորում (գլխավորապես նավթագազային և նավթաքիմիական արդյունաբերության և էներգետիկայի օբյեկտների համար), տրանսպորտային միջոցներ (նավեր, լոկոմոտիվներ): ԻԻՀ պաշտոնական տվյալներով՝ 2002 թ. երկրի ներմուծման համարյա կեսը ընկնում էր եվրոպական երկրներին:

Արևմուտքում քաջ գիտակցում են, որ XXI դարում Իրանը դառնալու է Հյուսիս արևմտյան Ասիայի երկրների (որոնց մեջ ընդգրկվում են ողջ Մերձավոր և Միջին Արևելքը, Աֆղանստանը, Պակիստանը և Կենտրոնական Ասիան) լիդերը: Քաղաքագետները հանճինս Իրանի տեսնում են ուժային նոր բևեռ, որը տարածվում է արևմուտքում Թավրիզից, մինչև արևելք՝ Կարաչի՝ ընդգրկելով 2 միլիոն քառ. կմ ընդհանուր տարածք: Դա հենց այն «Իրանական աշխարհ» պատմական հասկացությունն է, որի մեջ մտնող ժողովուրդներին բնորոշ են ընդհանուր մշակույթը և պետականության բազմադարյա ավանդույթները:

Նախագահ Խաթամիի ներքին և արտաքին քաղաքականությունը վճռական դիմադրության էր հանդիպում իսլամական պահպանողականների (նրանց կարելի է անվանել նաև իսլամական արմատականներ) կողմից: Երկրի տարբեր քաղաքներում նրանց և բարեփոխումների կողմնակիցների միջև տեղի էին ունենում սուր ընդհարումներ: 1999 թ. հուլիսին Թեհրանում և երկրի ավելի քան տասը քաղաքներում այդպիսի ընդհարումները կրեցին ավելի թեժ բնույթ՝ ընդունելով թշնամական առճակատման տեսք:

2000 թ. Իրանում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ: Առաջին անգամ ԻԻՀ-ի գոյության ընթացքում ազատականները խորհրդարանական ընտրություններում տարան համոզիչ հաղթանակ: Նրանք վերահսկում էին մեջլիսը և ձևավորեցին կառավարություն: Պահանջում էին իրականացնել արմատական վերափոխություններ. սեփականաշնորհել պետական սեկտորը, օտարերկրյա կապիտալին հնարավորություն տալ մուտք գործել երկրի տնտեսության մեջ, սահմանափակել այաթոլլահների իշխանությունը և այլն:

2001 թ. հունիսին տեղի ունեցած նախագահական ընտրությունների ժամանակ Խաթամին կրկին վերընտրվեց ԻԻՀ նախագահի պաշտոնում: Հարկ է սակայն նշել, որ ԻԻՀ քաղաքական համակարգը այնպիսին է, որ աշխարհիկ իշխանության հետ միաժամանակ գոյություն ունի կրոնական իշխանություն, որն օժտված է հսկող և ուղղություն տվող ֆունկցիաներով: Դա նշանակում է, որ նույնիսկ ձևականորեն զբաղեցնելով պետության մեջ առանցքային պաշտոններ, ազատականները հնարավորություն չունեն անկաշկանդ կերպով կյանքում կենսագործել իրենց ծրագրերը: Աշխարհիկ կառավարության գլխավերևում են գտնվում հոգևոր հեղինակությունները՝ հանճինս Դիտողական խորհրդի, որը համատեղում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի և սահմանադրական դատարանի ֆունկցիաները: Այն բաղկացած է 12 իրավագետներից ու աստվածաբաններից, որոնք ակնդետ հետևում են, որպեսզի իշխանությունների գործողությու-

ները չհակասեն իսլամի նորմերին: Ցանկացած նորամուծություն, լինի դա տնտեսական բարեփոխում կամ օրենք կանանց իրավունքների մասին, լույս աշխարհ գալուց և օրենքի ուժ ստանալուց առաջ պետք է գնահատական ստանա այն առումով, թե արդյոք համապատասխանում է իսլամական իրավունքին, թե ոչ: Կառավարության յուրաքանչյուր քայլը, որը հակասվի շեղում իսլամից, անմիջապես շրջափակվում ու կասեցվում է:

Այդ բոլորի հետևանքով ԻԻՀ քաղաքական կյանքում ստեղծվեց մի վիճակ, երբ նախագահն ու նրան շրջապատող դեմոկրատները շարունակում էին խոստանալ բարեփոխումներ, սակայն փոփոխություններ տեղի չէին ունենում: Տեղի չունեցավ նաև բարեփոխիչների կողմից խոստացված տնտեսական ծաղկումը: Այդ բոլորի հետևանքով մարդիկ հիասթափվեցին և այլևս հույսեր չէին տածում, որ իրենց բարեփոխիչ անվանող մարդիկ երկրում կիրականացնեն դրական տեղաշարժեր:

2004 թ. տեղի ունեցած ընտրությունները դեմոկրատների համար եղան ճակատագրական: Ընտրություններից երեք ամիս առաջ Դիտողական խորհուրդը 3600 թեկնածու զրկեց նրանցում մասնակցություն ունենալու իրավունքից: Աստվածաբանները ու իրավաբանները որոշեցին, որ նրանք այնքան էլ լոյալ չեն իսլամի նկատմամբ: Ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկվածների մեջ էին գործող 86 խորհրդարանականներ, այդ թվում նաև խոշորագույն ընդդիմադիր կուսակցության՝ «Իսլամական Իրանի մասնակցության ճակատի» ղեկավար, Իսլամական Հանրապետության նախագահի հարազատ եղբայր, խորհրդարանի փոխխոսնակ Մոհամմադ Ռեզա Խաթամին:

Սկզբում ազատականները փորձեցին պայքարել. նրանք կազմակերպեցին նստացույց խորհրդարանի շենքում և պահանջեցին, որ իրենց անունները գրվեն քվեաթերթիկներում: Սակայն երբ նրանց պահանջները մնացին անարդյունք, դեմոկրատների շարքերում տեղի ունեցավ պառակտում: Նրանց մի մասը որոշեց դառնալ արտախորհրդարանական ընդդիմություն և քննադատել գերագույն իշխանություններին: Սակայն դեմոկրատների մյուս մասը հրաժարվեց բոյկոտի քաղաքականությունից: Մեջլիսի նախագահ Մեհդի Քյարրուբին հայտարարեց, որ թեև ընտրությունները անարդար են, սակայն պետք է նրանց մասնակցել: Նախագահը՝ Մոհամմադ Խաթամին ևս դիմեց ազգին՝ կոչ անելով կատարել իրենց քաղաքացիական պարտքը:

2005 թ. հունիսին Իրանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ: Հաղթանակ տարավ և ԻԻՀ նախագահի պաշտոնը զբաղեցրեց Մահմուդ Ահմեդինեժադը:

Ներքին քաղաքականության բնագավառում նոր նախագահը թեև արտահայտվում էր երկրի տնտեսական հզորության մեծացման, նրա պաշտպանողական ունակությունների մեծացման, XXI դարում Իրանը տարածաշրջանային ուժային կենտրոնի վերածելու գաղափարների մասին, սակայն միանգամայն ակնհայտ էր, որ նա վերապահումով էր վերաբերվում երկրի ներքին կյանքում, մասնավորապես նրա հասարակական հարաբերությունների մեջ բարեփոխումներ իրականացնելու իր նախորդի՝ Խաթամիի քաղաքականությանը:

Նախագահ Ահմադինեժադը հատկապես առաջնակարգ կարևորություն էր տալիս երկրի արտաքին քաղաքականության հարցերին: Նրա արտաքին քաղաքական դոկտրինը խարսխված էր հետևյալ սկզբունքների վրա. թեև Իրանի Իսլամական Հանրապետությունը կապված է սահմանափակ թվով երկրների հետ, սակայն շնորհիվ այն հանգամանքի, որ Իրանն ունի յուրահատուկ աշխարհագրական դիրք, որին բնորոշ է Արևելքի և Արևմուտքի միջև կապող օղակի հանգամանքը, նա օժտված է ճկուն հնարավորություններով ու ռեալ առավելություններով: Այլ կերպ ասած, նրա կարծիքով Իրանն ունի ուժեղ ռազմավարական դիրք և ի վիճակի է մշտապես ազդելու տարածաշրջանային իրադարձությունների վրա: Ահմադինեժադի համոզմամբ, այդ գործոնը ավելի ուժեղ ու զորավոր է, քան Իրանի ողջ ռազմական հզորությունը: Նա նաև գտնում էր, որ Իրանը գտնվում է համաշխարհային իրադարձությունների կենտրոնում: Գիտակցելով այդ բոլորը, ըստ նախագահի, Իրանի Իսլամական Հանրապետությունը լուրջ պարտավորություններ է վերցնում իր վրա «աշխարհը լավացնելու» գործում:

Ահմադինեժադը մշտապես հայտարարում էր, որ արդեն անվերադարձ կերպով անցել են այն ժամանակները, երբ Արևմուտքի երկրները Արևելքի նկատմամբ իրենց քաղաքական խնդիրները լուծում էին ուժի օգնությամբ: Նա հայտարարում էր, որ միջազգային և տարածաշրջանային պրոբլեմները լուծելու գործում բանակցությունների տարբերակը այլընտրանք չունի:

Նախագահ Ահմադինեժադը չափազանց կարևոր նշանակություն էր տալիս Պաղեստինի պրոբլեմի լուծմանը, համարելով, որ փոխադարձ սերտ կապ գոյություն ունի տարածաշրջանային պրոբլեմների և աշխարհի ճակատագրի միջև:

Ինչպես և ժամանակին Խոմեյնին, Ահմադինեժադը մշտապես շեշտում էր, որ ժողովրդավարության գաղափարը Իրանի Իսլամական Հանրապետությունում երբեք չի կարող լինել արևմտյան դեմոկրատիայի կրկնօրինակը: Նախագահը նաև չէր խորշում հայտարարելու, որ իր ներքին ու արտաքին քաղաքականության գերակայող նպատակներից մեկը ԻԻՀ-ն մուսուլմանական ինքնության ամրակայումն է:

Ինչպես հայտնի է, Իրանի Իսլամական Հանրապետությունը իրականացնում է միջազգային ծրագիր, համաշխարհային հանրությանը վստահեցնելով, որ այն չի հետապնդում միջուկային զենք ստեղծելու նպատակներ: Մահմուդ Ահմադինեժադի՝ Իրանի նախագահ ընտրվելուց հետո վերստին բացվեցին միջուկային այն օբյեկտները, որոնք գոյություն ունեին դեռևս շահի ժամանակ: Սակայն Արևմուտքը մեղադրեց Իրանին զանգվածային ոչնչացման միջուկային զենք ստեղծելու փորձերի մեջ: Իրանը Արևմուտքի կողմից մեղադրվում էր նաև նրանում, որ աջակցություն է ցույց տալիս ահաբեկչական կազմակերպություններին, ոտնահարում է ժողովրդավարական ազատությունները և մարդու իրավունքները, ինչպես նաև ձգտում է գերակա դիրքեր ձեռք բերել տարածաշրջանում:

2013թ. հունիսի 14-ին տեղի ունեցած նախագահական ընտրություններում, ստանալով 18 միլիոնից ավել քվե, Հասան Ռոհանին ընտրվեց Իրանի Իսլամական Հանրապետության 7-րդ նախագահ: Մինչ այդ նա զբաղեցրել էր ԻԻՀ-ի Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղարի և իրանական խորհրդարանի՝ մեջլիսի փոխնախագահի պաշտոնները: 2017թ. մայիսի 19-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունների արդյունքում Հասան Ռոհանին վերընտրվեց ԻԻՀ նախագահի պաշտոնում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2000-ական թվականներից սկսած Արևմուտքը միջուկային հիմնախնդրի կապակցությամբ տնտեսական պատժամիջոցներ էր սահմանել Իրանի նկատմամբ, Ռոհանիի պաշտոնավարումը հույսեր ներշնչեց, որ Իրանի և Արևմուտքի միջև առճակատումը կընթանա մեղմացման ուղիով:

Պատահական չէ, որ Ռոհանիի կառավարությանը տրվեց «հույսի և խոհեմության կառավարություն» անունը: Հիրավի, գալով իշխանության գլուխ ԻԻՀ նոր նախագահը հայտարարեց, որ Իրանը միջուկային

ծրագրի առնչությամբ պատրաստ է կատարել քայլեր, որոնք կնպաստեն Իրանի և միջազգային հանրության միջև փոխվստահության մեծացմանը:

2013թ. սեպտեմբերին տեղի ունեցած ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանը կարևոր նշանակություն ունեցավ Իրանի և ԱՄՆ-ի հարաբերությունների մեջ դրական որոշ տեղաշարժեր մտցնելու ուղղությամբ: Իսլամական հեղափոխությունից ի վեր առաջին անգամ կայացավ Իրանի և ԱՄՆ-ի նախագահների շփում հեռախոսազրույցի միջոցով: Հասան Ռոհանիի և Բարաք Օբամայի այդ հեռախոսազրույցից առաջ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի վեհաժողովի շրջանակներում տեղի էր ունեցել նաև հանդիպում երկու երկրների արտաքին գերատեսչությունների ղեկավարների՝ Մոհամմադ Ջավադ Զարիֆի և Ջոն Քերրիի միջև: Անկասկած Վաշինգտոնի և Թեհրանի միջև ձևավորված փոխվստահության մթնոլորտը որոշակիորեն նպաստեց տարածաշրջանում լարվածության թուլացմանը, ինչպես նաև նպաստավոր պայմաններ ստեղծեց համագործակցելու միջուկային համագործակցության շրջանակներում:

Եթե Հասան Ռոհանիի կառավարման առաջին շրջանը կարելի է համարել կայունության շրջան, ապա նրա նախագահության երկրորդ շրջանում Իրանը հայտնվեց արտաքին և ներքին մի շարք մարտահրավերների առջև: Չնայած Հասան Ռոհանիի կառավարության տնտեսական կայունություն ապահովելուն ուղղված ջանքերին՝ 2017թ. դեկտեմբերին և 2018թ. հունվար ամիսներին Իրանում տեղի ունեցան լայնամասշտաբ բողոքի ցույցեր, որոնք էլ ավելի թեժացան 2018թ. գարնանը:

2021թ. համաժողովրդական ընտրության շնորհիվ ԻԻՀ-ն 8-րդ նախագահ ընտրվեց Էբրահիմ Ռայիսին:

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

III հազարամյակ մ. թ. ա. -VI դարի կեսեր - Էլամ (էլամական) պետության գոյությունը
Մ.թ.ա. մոտ 2000-1500 թթ. - Իրանի տարածքում հնդեվրոպական (արիական)ցեղերի հայտնվելը
Մ.թ.ա. 834 թ. - Աղբյուրներում առաջին հիշատակությունը մեդացիների (մարերի մասին)
Մ.թ.ա. X-VI դդ. - Մեդացիների ներկայությունը Իրանական բարձրավանդակում
Մ.թ.ա. 672 թ. - Մարերի ապստամբությունը Ասորեստանի դեմ և ինքնուրույն մարական պետության ստեղծումը
Մ.թ.ա. VII դ. վերջ-VI դ. սկիզբ - Մեդական պետության առավելագույն հզորության շրջանը
Մ.թ.ա. 553 թ. - Աքեմենյան Կյուրոս Բ-ի ապստամբությունը մարերի դեմ
Մ.թ.ա. 550 թ. - Աքեմենյան պետության հիմնադրումը
Մ.թ.ա. 550-530 թթ. - Կյուրոս Բ Մեծի կառավարման տարիները
Մ.թ.ա. 546 թ. - Կյուրոսի կողմից Լյուդիայի (Լիգիայի) նվաճումը
Մ.թ.ա. 545-539 թթ. - Կյուրոսի նվաճողական քաղաքականության ծավալումը
Մ.թ.ա. 530 թ. - Մասսագետների հետ ճակատամարտում Կյուրոսի զոհվելը
Մ.թ.ա. 530-522 թթ. - Աքեմենյան արքայից արքա Քամբիզ Բ-ի կառավարման տարիները
Մ.թ.ա. 525 թ. - Եգիպտոսի նվաճումը Քամբիզի կողմից
Մ.թ.ա. 522 թ. - Գաումատա ինքնակոչի հռչակումը Աքեմենյան թագավոր
Մ.թ.ա. 522-486 թթ. - Աքեմենյան Դարեհ Ա Վշտասպյան արքայի կառավարման տարիները
Մ.թ.ա. 522-521 թթ. - Հայերի ապստամբությունը Աքեմենյանների դեմ
Մ.թ.ա. 521-486 թթ. Դարեհ Ա-ի կողմից Թրակիայի, Մակեդոնիայի, Էգեյան ծովի կղզիների, Հյուսիսաֆրիկյան հունական գաղութների և այլ տարածքների նվաճումը: Աքեմենյան տերության վերածումը համաշխարհային պետության
Մ.թ.ա.486-465 թթ. - Աքեմենյան Քսերքսեսի կառավարումը
Մ.թ.ա. 480 թ. - Հույն-պարսկական ընդհարումները Ֆերմոպիլում և Սալամինա կղզու մոտ
Մ.թ.ա. 479 թ. - Պլատեայի մոտ հույների տարած հաղթանակը պարսիկների նկատմամբ
Մ.թ.ա. 465-424 թթ. - Աքեմենյան Արտաքսերքսես Ա արքայի կառավարումը
Մ.թ.ա. 449 թ. «Դելոսյան դաշինքի» երկրների և Աքեմենյան Պարսկաստանի միջև «հավերժական դաշնագրի» կնքումը
Մ.թ.ա. 394 թ. - Կնիդի ճակատամարտում Սպարտանցիների ջախջախումը պարսիկների կողմից
Մ.թ.ա. 387 թ. - Հույն-պարսկական «արքայական» պայմանագրի ստորագրումը
Մ.թ.ա. 338 թ. - Հունական պետությունների հակապարսկական դաշինքի կնքումը
Մ.թ.ա. 336-330 թթ. - Աքեմենյան վերջին արքա Դարեհ Գ-ի կառավարումը
Մ.թ.ա. 330 թ. - Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Իրանի նվաճումը
Մ.թ.ա. 323 թ. - Ալեքսանդր Մակեդոնացու մահը
Մ.թ.ա. III-I դդ. - Հույն-Բակտրիական պետությունը
Մ.թ.ա. շուրջ 250 թ. - Արևելքից ապարն կամ պարն (պարթևական) ցեղերի ներխուժումը Իրանի տարածք
Մ.թ.ա. 247-մ.թ. 224 թթ. - Պարթևական կամ Արշակունիների պետությունը
Մ.թ.ա. 247-212 թթ. - Պարթևական պետության հիմնադիր Արշակ Մեծի կառավարման շրջանը
224-651 թթ. - Սասանյանների կայսրությունը
227-240 թթ. - Արտաշիր Ա Պապականի կառավարումը
241-242 թթ. - Շապուհ Ա-ի առաջին արշավանքը հռոմեական կայսրության դեմ: Անտիոքի գրավումը
244 թ. - Շապուհ Ա-ի կողմից հռոմեական զորքերի ջախջախումը Տիզբոնի մատույցներում

(Ընթ-Մաշկենեում)
253 թ. - Շապուհ Ա-ի կողմից Կիլիկիայի, Փյունիկիայի և Կապադովկիայի քաղաքների գրավումը և Սասանյան զորքերի հասնելը մինչև Միջերկրական ծովի ափերը
253-255 թթ. - Շապուհ Ա-ի կողմից Հայաստանի և Վրաստանի նվաճումը
259 թ. - Պարսկա-հռոմեական պատերազմի վերսկսումը և Շապուհ Ա-ի երկրորդ արշավանքը: Հռոմեական կայսր Վալերիանոսի գերեվարումը
III դ.-Մանիհ և նրա ստեղծած կրոնը (մանիքեականություն)
387 թ. - Հայաստանի բաժանումը Սասանյան Իրանի և Հռոմեական կայսրության միջև
428 թ. - Հայաստանի բաժանումը Սասանյան Իրանի և Բյուզանդիայի միջև
451 թ. - Հայ ժողովրդի ապստամբությունը Սասանյան Իրանի դեմ: Ավարայրի ճակատամարտը
484 թ. - Հայաստանի և Սասանյան Իրանի միջև Նվարսակում կնքված հաշտության պայմանագիրը
488 թ. - Մազդակի ապստամբությունը
531-579 թթ. - Խոսրով Ա Անուշիրվանի կառավարումը և նրա իրականացրած վերափոխությունները
VI դ. - Պատերազմները Բյուզանդիայի դեմ: Միջագետքի, Պաղեստինի, Եմենի ու Եգիպտոսի նվաճումը Սասանյանների կողմից
561 թ. - Խոսրով Ա Անուշիրվանի և Յուստինիանոս Ա-ի միջև կնքված «հավերժական խաղաղությունը»
579-590 թթ. - Սասանյան Որմիզդ Դ-ի կառավարման շրջանը
591 թ. - Հաշտության պայմանագրով վերջ է տրվում պարսկա-բյուզանդական 20-ամյա պատերազմին
604 թ. - Պարսկա-բյուզանդական ամենախոշոր պատերազմի սկիզբը
619 թ. - *Սասանյան զորքերը հասնում են մինչև Բոսֆորի ափերը*
622 թ. - Սասանյան զորքերի կողմից Միջագետքի, Եդեսիայի, Ասորիքի, Պաղեստինի, Փյունիկիայի, Կապադովկիայի, Ռոդոս կղզու և Հայաստանի մի մասի գրավումը
622-628 թթ. - Պարսկա-բյուզանդական պատերազմի երկրորդ էտապում Սասանյանների կրած աղետալի պարտությունը
VII դ. 30-ական թթ. սկիզբ - Արաբների արշավանքների սկիզբը Սասանյան Իրանի վրա
637 թ. - Արաբների կողմից Սասանյանների զորքերի ջախջախումը Կադիսիի մոտ տեղի *ունեցած ճակատամարտում*
637 թ. - Արաբների կողմից Սասանյանների մայրաքաղաք Տիզբոնի գրավումը
642 թ. - Նեհավենդի ճակատամարտը: Իրանի ընդգրկումը Արաբական խալիֆայության կազմում
661-750 թթ. - Իրանը Օմայան խալիֆայության նահանգ
750-1055 թթ. - Իրանը Աբբասյան խալիֆայության կազմում
IX-X դդ. - Իրանի տարածքում Թահիրիների, Սամանիների, Բուիների և այլն ինքնուրույն ավատական պետությունների ստեղծումը
998-1030 թթ. - Ղազնյանների *թյուրքական պետությունն Իրանում Մահմուդ Ղազնևիի օրոք*
X դ. վերջ-XI դ. սկիզբ - Թյուրքական օղուզական ցեղերի հուժկու տեղաշարժ արևելքից արևմուտք
1038 թ. - Սելջուկների կողմից Խորասանի նվաճումը: Սելջուկյան պետության կազմավորման սկիզբը
XI դ. 50-ական թթ. - Իրանի տարածքի նվաճումը սելջուկների կողմից
1071 թ. Մանազկերտի ճակատամարտում սելջուկների հաղթանակը բյուզանդական զորքերի նկատմամբ
XII դ. - Իրանի տարածքում աթաբեկությունների կազմավորումը
1090-1256 թթ. - Իսմայիլիթական պետությունն Իրանում
1194 թ. - Իրանի տարածքի մի մասի նվաճումը Խորեզմշահերի կողմից
1220-1222 թթ. - Մոնղոլների առաջին արշավանքը Իրան: Չինգիզ խանի կողմից Իրանի տարածքների նվաճումը
1256 թ. - Իրանի նվաճումը Հուլաղու խանի կողմից և իլխան Հուլավյանների մոնղոլական պետության կազմավորումը

1295-1304 թթ. - Արղուն խանի որդի Ղազան խանի կառավարումն Իրանում: Նրա իրականացրած բարեփոխումները

XIVդ. 20-30-ական թթ. «Սարբեդարների» ապստամբությունը Խորասանում և Սարբեդարյան պետության ստեղծումը

XIV դ. - Հուլավյանների պետության տրոհումն ու քայքայումը մի շարք ավատական պետությունների և տիրույթների Չոբանյանների (1336-1357), Ջելայիրյանների (1340-1432), Մուզաֆարյանների (1313-1393), Ինջուիների (1336-1357) և այլն

1381-1393 թթ. - Իրանի նվաճումը Լանկ-Թամուրի կողմից և նրա տիրապետությունը այդ երկրում

1405 թ. - Թամուրի մահը և Իրանի տրոհումը մի շարք ավատական տիրույթների

1410-1468 թթ. - Ղարա-Ղոյունլու դինաստիայի տիրապետությունը Իրանում

1468-1502 թթ. - Աղ-Ղոյունլու դինաստիայի տիրապետությունը

1502-1722 թթ. - Սեֆյանների (Սեֆևիների) պետությունը

1502 թ. - Իսմայիլ Սեֆևին հիմք է դնում Սեֆյանների դինաստիային, իրեն հռչակում է շահ, Թավրիզը հայտարարում է իր մայրաքաղաքը, իսկ շիիզմը՝ Իրանի պաշտոնական պետական կրոն

1510 թ. - Սեֆյան բանակը Մերվի մոտ ջախջախում է ուզբեկներին և գրավում Խորասանը և Միջին Ասիայից տարածքներ մինչև Ամուդարյա գետը

1514 թ. - Չալդրանի ճակատամարտում Սեֆյան Իրանի կրած պարտությունը օսմանյան զորքերից

1519 թ. - Սեֆյանների կողմից Վրաստանի նվաճումը

1524-1576 թթ. - Սեֆյան շահ Թահմազ (Թահմասպ) Ա-ի կառավարումը

1534 թ. - Օսմանյան զորքերի կողմից Թավրիզի գրավումը

1548 թ. - Սեֆյանների մայրաքաղաքի տեղափոխումը *Թավրիզից Ղազվին*

1555 թ. - Ամասիայի իրանա-թուրքական պայմանագիրը

1576-1587 թթ. - Ներքին երկպառակությունները Իրանում և թուրքական զորքերի ներխուժումը Իրան

1587-1629 թթ. - Սեֆյան շահ Աբբաս Ա-ի կառավարումը

1590 թ. - Թուրք-իրանական Կոստանդնուպոլսի պայմանագրի կնքումը

1597 թ. - Ուզբեկների պարտությունը սեֆյան զորքերից Հերաթի մոտ

1598 թ. - Սեֆյանների մայրաքաղաքի տեղափոխումը Թավրիզից Սպահան

1601-1602 թթ. - Շահ Աբբաս Ա-ի կողմից Բահրեյնյան կղզիների նվաճումը

1603-1612 թթ. - Թուրք-իրանական պատերազմը: Հայերի տարագրությունը Իրան:

1612 թ. - Ստամբուլի հաշտության պայմանագրի ստորագրումը

1618 թ. - Սարավի իրանա-թուրքական հաշտության պայմանագիրը

1622 թ. - Շահ Աբբաս Ա-ի կողմից պորտուգալացիների վտարումը Հորմուզ կղզուց

1629-1642 թթ. - Շահ Սաֆի (Սեֆի) Ա-ի կառավարումը

1639 թ. - Զոհաբի կամ Քասրե-Շիրինի իրանա-թուրքական պայմանագրի ստորագրումը: Հայաստանի բաժանումը Օսմանյան կայսրության և Իրանի միջև

1642-1666 թթ. - Շահ Աբբաս Բ-ի կառավարումը

1666-1694 թթ. - Շահ Սուլեյմանի կառավարումը: Սեֆյան պետության անկման սկիզբը

1694-1722 թթ. - Շահ Սուլթան Հուսեյնի կառավարումը: Սեֆյան պետության տնտեսական և քաղաքական անկումը

1708 և 1715 թթ. - Իրանա-*ֆրանսիական առևտրական պայմանագրերը*: Կապիտուլյացիոն իրավունքների հաստատումը

1709 թ. - Ղանդահարում աֆղանական գիլզայի ցեղի ապստամբությունը Սեֆյանների դեմ

1722 թ. - Աֆղանների արշավանքը Իրան, Սպահանի գրավումը և Միր-Մահմուդին Իրանի շահ հռչակելը

1723 թ. սեպտեմբերի 23 - Ռուսաստանի հետ Թահմազի կնքած Պետերբուրգյան *դաշնագիրը*

1724 թ. հունիսի 24 - Ռուս-թուրքական պայմանագրի կնքումը: Իրանի հյուսիսարևմտյան նահանգների բաժանումը

1727 թ. - Թուրքերի հետ աշրաֆի կնքած պայմանագիրը

1729-1730 թթ. - Աֆղանների վտարումն Իրանից
1731-1736 թթ. - Թահմազի և Նադիրի պատերազմները Օսմանյան կայսրության դեմ
1732 թ. հունվարի 10 - Հաշտության պայմանագրի կնքումը Թահմազի և թուրքերի միջև
1732 թ. - Ռեշտի ռուս-իրանական պայմանագիրը
1735 թ. - Եղվարդի ճակատամարտը Նադիրի և օսմանցիների միջև
1736 թ. - Մուղանի դաշտավայրի դուռուլթայը և Նադիրի հռչակումը Իրանի շահ
1737-1739 թթ. - Նադիր շահի արշավանքը Հնդկաստան: Դելիի գրավումը
1739-1741 թթ. - Նադիր շահի արշավանքը Սինդ, Բուխարա, Խիվա, Խորեզմ
1741-1743 թթ. - Նադիր շահի արշավանքը Դաղստան
1743-1746 թթ. - Իրանա-թուրքական պատերազմ: Ներքին ապստամբություններ Իրանում
1747 թ. - Նադիր-շահի սպանությունը
1747 թ. - Ահմեդ խան Աբդալիի կողմից Աֆղանստանը անկախ պետություն հռչակելը: Ահմեդ շահը Աֆղանստանի թագավոր
1747-1758 թթ. - Իշխանության համար ներքին պատերազմներ Իրանում
1760-1779 թթ. - Քերիմ խան Զենդի տիրապետությունն Իրանում
1763 թ. - Քերիմ-խանի կողմից անգլիացիներին մի շարք առևտրական արտոնությունների և իրավունքների տրամադրումը
1776 թ. - Բասրայի գրավումը Քերիմ խանի զորքերի կողմից
1779-1794 թթ. - Քաղաքական ներքին պայքար Իրանում հանուն իշխանության
1794 թ. - Աղա Մոհամմադ խան Ղաջարի հաղթանակը միջավատական պայքարում
1795 թ. - Աղա Մոհամմադ խանի ավերիչ արշավանքը Վրաստան: Թիֆլիսի գրավումն ու ավերումը
1796 թ. - Աղա Մոհամմադի թագադրումը որպես Իրանի շահ: Ղաջարների դինաստիայի հիմնադրումը
1797 թ. - Աղա-Մոհամմադ շահի սպանությունը և Ֆաթհ-Ալի շահի գահակալումը
1800 թ. - Անգլիացի Ջոն Մալքոլմի կողմից Իրանի հետ կնքված քաղաքական և առևտրական պայմանագիրը
1804-1813 թթ. - Ռուս-իրանական առաջին պատերազմը
1807 թ. մայիսի 4 - Ֆինկենշտեյնում կնքված ֆրանս-իրանական պաշտպանողական-հարձակողական դաշինքը
1808 թ. - Ֆրանս-իրանական առևտրական պայմանագրի կնքումը
1809 թ. - Անգլիացի Հարֆորդ Ջոնսի և Իրանի միջև Թեհրանում կնքված նախնական անգլո-իրանական պայմանագիրը
1813 թ. հոկտեմբերի 12 - Գյուլիստանի ռուս-իրանական հաշտության պայմանագրի ստորագրումը
1817 թ. - Գեներալ Երմոլովի դեսպանությունն Իրան
1821-1823 թթ. - Թուրք-իրանական պատերազմը
1823թ. - Էրզրումի իրանա-թուրքական խաղաղության պայմանագրի ստորագրումը
1826-1828 թթ. - Երկրորդ ռուս-իրանական պատերազմը
1828 թ. փետրվարի 10 - Թուրքմենչայի հաշտության պայմանագրի ստորագրումը
1829 թ. հունվարի 30 - Ա.Ս.Գրիբոյեդովի սպանությունը
1833 թ. - Մոհամմադ-միրզայի արշավանքը Հերաթ
1834 թ. - Ֆաթհ-Ալի շահի մահը և Մոհամմադ-շահի գահակալումը
1837-1838 թթ. - Մոհամմադ շահի արշավանքը Հերաթ (Հերաթի առաջին կոնֆլիկտը)
1844 թ. - Սեյյեդ Ալի Մոհամմադի կողմից իրեն բաբ հայտարարելը
1847 թ. մայիսի 31 - Էրզրումի իրանա-թուրքական պայմանագիրը
1848 թ. - Մոհամմադ շահի մահը և Նասր էդ Դին շահի (1848-1896) գահակալումը
1848-1851 թթ. - Բաբիների ապստամբությունները Մազանդարանում, Զենջանում և Նեյրիզում
1850թ. - հուլիս Բաբի մահապատիժը
1849-1851 թթ. - Միրզա Թաղի խան Ամիր Նեզամի բարեփոխումները

1852 թ. - Բաբիների մահափորձը շահի կյանքի դեմ և հաշվեհարդար բաբիների նկատմամբ
1856-1857 թթ. - Անգլո-իրանական պատերազմը (Հերաթի երկրորդ կոնֆլիկտը)
1857 թ. մարտի 4 - Փարիզում անգլո-իրանական խաղաղության պայմանագրի ստորագրումը
1862,1865,1868,1872 թթ. - Իրանի կողմից կոնցեսիաների տրամադրումը Անգլիային երկրում հեռագրական գծեր կառուցելու համար
1879 թ. - Ռուսական սպաները ձեռնամուխ եղան **Պարսկական կոզակական գումարտակի** կազմակերպմանը
1888 թ. - Անգլիական «Լինչ եղբայրներ» ընկերությունը շահական կառավարությունից ստացավ կարուն գետի վրա նավագնացություն կազմակերպելու կոնցեսիա
1888 թ. - Հայազգի ռուսահպատակ դրամատեր Լիանոզովը շահական կառավարությունից ստացավ Կասպից ծովի ձկնորսական տեղամասերը շահագործելու կոնցեսիա
1889 թ. - Շահը Յ. Ռեյթերին տրամադրեց Իրանում կայսերական Շահնշահական բանկ հիմնադրելու իրավունք
1890 թ. ապրիլի 21 - Ռուս դրամատեր Ա. Ս. Պոլյակովը շահից ստացավ «Իրանի հաշվառու-վարկատու բանկի» հիմնադրման կոնցեսիա
1890 թ. նոյեմբերի 9 - Շահը Ա. Ս. Պոլյակովին տրամադրեց Իրանում ապահովագրական և տրանսպորտային գործ կազմակերպելու կոնցեսիա
1891 թ. մարտ - Անգլիական «Տալբոթ» ընկերության հետ պայմանագրի ստորագրումը ծխախոտի շահագործման մենաշնորհային իրավունքը հիշյալ ընկերությանը տրամադրելու վերաբերյալ
1891-1892 թթ. - «Ծխախոտային բունտերը» և ծխախոտի կոնցեսիայի չեղյալ հայտարարումը
1896 թ. մայիսի 1 - *Նասր-էդ-Դին շահի սպանությունը*
1901 թ. մայիս - Շահի կողմից անգլոհպատակ դ'Արսիին Իրանում նավթի հանքավայրերի շահագործումն իրականացնելու կոնցեսիայի տրամադրումը
1905 թ. դեկտեմբեր - Իրանում սահմանադրական շարժման սկիզբը
1906 թ. օգոստոսի 5 - *Մոզաֆֆար էդ Դին* շահի հրամանագիրը սահմանադրություն ընդունելու վերաբերյալ
1906 թ. հոկտեմբերի 7 - Իրանական առաջին մեջլիսի (խորհրդարանի) բացումը
1906 թ. դեկտեմբերի 30 - *Մոզաֆֆար էդ Դին* շահի կողմից Իրանի «Հիմնական օրենքի» հաստատումը
1907 թ. օգոստոսի 31 - Անգլո-իրանական համաձայնագիրը Իրանը, Աֆղանստանը և Տիբեթը ազդեցության գոտիների բաժանելու վերաբերյալ
1907 թ. հոկտեմբերի 3-7 - Մեջլիսի կողմից Սահմանադրության «Հիմնական օրենքի» ընդունումը և նրա հաստատումը շահի կողմից
1908 թ. մայիսի 26 - Իրանում նավթի արդյունաբերական շահագործման սկիզբը (Մասջադ-ե Սոլեյման)
1908 թ. հունիսի 23 - Թեհրանում Մոհամմադ-Ալի շահի գլխավորությամբ իրականացրած հակահեղափոխական հեղաշրջումը: Մեջլիսի ջախջախումն ու ցրումը
1908 թ. հունիս - Թավրիզի ապստամբությունը
1909 թ. փետրվարի 8 - Ռեշտի ապստամբությունը: Եփրեմ խան Դավթյանցի հեղափոխական գործունեության սկիզբը
1909 թ. ապրիլի 12 (25) - Ռուսական զորքերի ներխուժումը Թավրիզ, հեղափոխության ճնշումը
1909 թ. ապրիլի 13 - Անգլո-պարսկական նավթային ընկերության հիմնադրումը
1909 թ. ապրիլ-հունիս - Գիլյանի ֆիդայիների և բախթիարական ջոկատների արշավանքը Թեհրանի վրա
1909 թ. հուլիս - Թեհրանի գրավումը և Մոհամմադ-Ալի շահի գահընկեց լինելը: Ազատական կառավարության ստեղծումը
1911 թ. մայիս - ԱՄՆ-ից Մորգան Շուստերի ֆինանսական միսիայի ժամանումը

1911 թ. հուլիս - Նախկին շահ Մոհամմադ-Ալիի փորձը գահը վերստին զավթելու ուղղությամբ
1911 թ. աշուն Կառավարական զորքերը ջախջախում են նախկին շահի կողմնակիցներին: Եփրեմ խանի մեծ դերը այդ գործում
1911 թ. նոյեմբերի 29 - Ցարական Ռուսաստանի կառավարության վերջնագիրը Մ. Շուստերին պաշտոնից զրկելու վերաբերյալ: Իրանական մեջլիսի կողմից ռուսական վերջնագրի մերժումը
1911 թ. դեկտեմբեր - Ռուսաստանը լրացուցիչ զորքեր է ուղարկում Իրանի հյուսիսային նահանգները: Սահմանադրական շարժման մարելը
1914 թ. նոյեմբերի 2 - Ահմեդ շահի հրամանագիրը Առաջին աշխարհամարտում Իրանի կողմից չեզոքություն պահպանելու վերաբերյալ
1915 թ. - Գեներալ Բարաթովի հրամանատարությամբ ռուսական զորքերի ուղարկումը Հյուսիսային Իրան: Հարավային և Կենտրոնական Իրանում հակաանգլիական ելույթները: Իրանի դեմոկրատական կուսակցության անդամները Ղումում կազմակերպում են Ազգային պաշտպանության կոմիտե
1915 թ. մարտ-1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրի վերանայումը: **«Չեզոք գոտին»** անցնում է անգլիական ազդեցության գոտու մեջ:
1916 թ. մարտ - Անգլիացիների կողմից **«Հարավպարսկական հրաձիգներ» վարձու զորամասերի** կազմակերպումը
1918 թ. մարտ Միջագետքից անգլո-հնդկական զորքերի մուտքը Իրան՝ գեներալ Դենստերվիլի հրամանատարությամբ
1918 թ. հուլիսի 30 - Սամսամ օս-Սալթանեի (Նաջաֆ ղուլի խան Բախթիարի) պաշտոնական հռչակագիրը կապիտուլյացիոն ռեժիմի և Իրանի կողմից օտարերկրյա պետությունների հետ բոլոր անհրավահավասար պայմանագրերի չեղյալ հայտարարելու մասին
1919 թ. - Իրանական կառավարության հուշագիրը հասցեագրված Փարիզի խաղաղության վեհաժողովին՝ տարածքային պահանջների վերաբերյալ
1919 թ. հուլիս - Իրանում բոլշևիկյան Ռուսաստանի ներկայացուցիչ Կոլոմիյցևի սպանությունը սպիտակ ռուսների կողմից
1919 թ. օգոստոսի 9 - Անգլո-իրանական համաձայնագրի կնքումը
1919 թ. նոյեմբերի 21 - Իրանի անդամակցությունը Ազգերի լիգային
1920-1922 թթ. - Շեյխ Մոհամմադ Խիաբանիի ապստամբությունը Ատրպատականում
1920 թ. մայիսի 20 - Խորհրդային Ռուսաստանի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը
1920 թ. հունիսի 5 - Գիլյանի Խորհրդային Հանրապետության հռչակումը
1921 թ. փետրվարի 21 - Սեյիդ Զիա էդ Դին Թաբաթաբայիի և Ռեզա- խանի կողմից իրականացրած պետական հեղաշրջումը
1921 թ. փետրվարի 26 - Մոսկվայում սովետա-իրանական պայմանագրի ստորագրումը
1921 թ. մարտի 27 - Իրանական կառավարությունը չեղյալ հայտարարեց անգլո-իրանական համաձայնագիրը
1921 թ. ապրիլի 24 - Ռեզա խանի նշանակումը ռազմական մինիստր
1925 թ. մայիսի 21 - Շահի հրամանագրով Սեյիդ Զիան ազատվում է կառավարության ղեկավարի պաշտոնից
1921 թ. սեպտեմբեր - Գիլյանում միասնական ճակատի տրոհումը
1921 թ. հոկտեմբեր - Ջենգելիների շարժման ճնշումը: Միրզա Քուչեք խանի մահը
1921 թ. դեկտեմբեր - Ատրպատականում հակակառավարական ապստամբությունը Ա. Լահութիի գլխավորությամբ
1922-1928 թթ. - Կառավարական ուժերի ռազմական արշավանքները Լորեստանի, Ատրպատականի և Քրդստանի քոչվորական ու կիսաքոչվորական ցեղերի դեմ: Նրանց զինաթափումը և բռնի նստակեցության անցկացնելը
1922-1927 թթ. - Ա. Միլսպոյի (ԱՄՆ) առաջին առաքելությունն Իրան՝ Իրանի ֆինանսա-

կան-հարկային համակարգը կանոնավորելու նպատակով
1923 թ. - Անգլո-իրանական կոնֆլիկտը Բահրենյան կղզիների շուրջը
1923 թ. հոկտեմբերի 27 - Ռեզա խանի նշանակումը վարչապետի պաշտոնում: Նրա կողմից կառավարության ձևավորումը
1924 թ. փետրվար - Ռեզա խանի կողմնակիցների հրահրած հանրապետական շարժումը
1924 թ. նոյեմբեր-դեկտեմբեր - Շեյխ Խազալի խռովությունը Խուզիստանում: Ռեզա խանի կողմից խռովության ճնշումը
1925 թ. փետրվարի 14 - Մեջլիսի կողմից Ռեզա խանին Իրանի զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնում նշանակումը
1925 թ. հոկտեմբերի 31 Մեջլիսի որոշումը Ղաջարների դինաստիան տապալելու և Ռեզա խանին երկրի ժամանակավոր գերագույն կառավարիչ նշանակելու մասին
1925 թ. դեկտեմբերի 12 - Սահմանադիր ժողովի կողմից Ղաջարների դինաստիայի տապալումը հռչակելը և Ռեզա խանին Իրանի շահ հայտարարելը
1926 թ. ապրիլի 15 - Ռեզա շահի թագադրումը, որն ընդունեց Փեհլևի (Փահլավի) դինաստիական ազգանունը
1927 թ. փետրվարի 17 - Դատական համակարգի բարեփոխման սկիզբը
1927 թ. հոկտեմբերի 1 - Երաշխիքների և չեզոքության վերաբերյալ սովետա-իրանական պայմանագրի կնքումը
1927 թ. հոկտեմբերի 16 - Տրանսիրանական երկաթուղու շինարարության սկիզբը: 1938թ. օգոստոսի 25-ին նրա շահագործման հանձնումը
1928 թ. մայիսի 10 - Կապիտուլյացիոն ռեժիմի վերացումը
1928 թ. սեպտեմբերի 8 - «Բանք-ե մելլիի» («Ազգային բանկ») բացումը
1930 թ. - Թեհրանի պետական համալսարանի բացումը
1931 թ. փետրվարի 25 - Արտաքին առևտրի մենաշնորհի մասին օրենքի ընդունումը
1932 թ. նոյեմբերի 27 - Դ'Արսիի նավթային կոնցեսիայի չեղյալ հայտարարումը
1933 թ. ապրիլի 29 - Անգլո-իրանական նավթային ընկերության և իրանական կառավարության միջև նոր կոնցեսիոն համաձայնագրի կնքումը
1937 թ. հունվարի 8 - Հիջաբը (չադրան) հանելու վերաբերյալ դեկրետը և զգեստների վերաբերյալ բարեփոխումը
1937 թ. հուլիսի 8 - Իրանի, Թուրքիայի, Իրաքի և Աֆղանստանի միջև «Սաադաբադյան պակտի» կնքումը
1939 թ. սեպտեմբերի 3 - Իրանական կառավարության հայտարարությունը համաշխարհային պատերազմում չեզոքություն պահպանելու վերաբերյալ
1941 թ. օգոստոսի 25 - Դաշնակիցների զորքերի ներխուժումն Իրան (Խորհրդային Միությունը հյուսիսից, Անգլիան՝ հարավից)
1946 թ. սեպտեմբերի 16 - Ռեզա շահի հրաժարումը գահից
1941 թ. սեպտեմբերի 27 - Նախկին շահի մեկնումը երկրից
1942 թ. հունվարի 29 - ԽՍՀՄ-ի, Անգլիայի և Իրանի միջև դաշինքի վերաբերյալ պայմանագրի ստորագրումը
1942 թ. - Ամերիկյան զորքերի մուտքը Իրան
1943 թ. հունվար - Իրանական կառավարության կողմից հրավիրված դոկտոր Ա. Միլսպոյի ժամանումը Իրան երկրի ֆինանսական-հարկային համակարգը վերակառուցելու նպատակով
1943 թ. սեպտեմբերի 9 - Իրանը ձևականորեն պատերազմ հայտարարեց Գերմանիային
1943 թ. դեկտեմբերի 1 - Երեք դաշնակից պետությունների (ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի) ղեկավարների կոնֆերանսը Թեհրանում: «Իրանի մասին երեք տերությունների հռչակագրի» ընդունումը
1944 թ. օգոստոս - Իրանի ժողովրդական կուսակցության առաջին համագումարը
1945 թ. սեպտեմբերի 3 - Ադրբեջանի դեմոկրատական կուսակցության կազմակերպումը Թավրիզում
1945 թ. սեպտեմբերի 12 - Ղազի Մոհամմադի հռչակագիրը Իրանական Քրդստանում քր-

դական հանրապետության ստեղծման մասին
1945 թ. դեկտեմբերի 12 - Թավրիզում Իրանական Ադրբեջանի ազգային մեջլիսի բացումը և «ինքնավար ազգային կառավարության» ստեղծումը
1946 թ. հունվար-փետրվար - Իրանական կառավարության դիմումը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, որտեղ բողոք էր ներկայացվում Խորհրդային Միության դեմ: Խորհրդային ղեկավարությունը մեղադրվում էր 1943 թ. Թեհրանի հռչակագրի պայմանների խախտման մեջ
1946 թ. հունվարի 28 - Ահմեդ Ղավամի կառավարության ձևավորումը
1946 թ. փետրվարի 19 Ա. Ղավամի գլխավորությամբ *իրանական կառավարական* պատվիրակության մեկնումը Մոսկվա
1946 թ. ապրիլի 4 - Սովետա-իրանական համատեղ հայտարարության ստորագրումը առաջիկայում Թեհրանում համաձայնագրի կնքման մասին՝ սովետա-իրանական նավթային ընկերություն ստեղծելու վերաբերյալ: Միաժամանակ համաձայնեցվեցին Իրանական Ադրբեջանի տարածքից սովետական զորքերի լրիվ դուրսբերման վերաբերյալ ժամկետները
1946 թ. ապրիլի 4 Թեհրանում սովետա-իրանական համաձայնագրի ստորագրումը «Իրանի հյուսիսի նավթի» մասին
1946 թ. հունիսի 30 - Ա. Ղավամի կողմից Իրանի դեմոկրատական կուսակցության ստեղծումը
1946 թ. դեկտեմբերի 11-13 - Իրանական կառավարական զորքերի կողմից Իրանական Ադրբեջանում և Քրդստանում դրսից հրահրված շարժումների ջախջախումը
1947 թ. հոկտեմբերի 22 - Իրանական մեջլիսի կողմից 1946 թ. ապրիլի 4-ի սովետա-իրանական համաձայնագրի («Հյուսիսային նավթի» մասին) չեղյալ հայտարարումը
1948 թ. դեկտեմբերի 9 - Ահմեդ Ղավամի կառավարության հրաժարականը
1949 թ. ապրիլի 21 - Իրանական խորհրդարանի երկրորդ բարձրագույն պալատի՝ Սենատի ստեղծումը
1949 թ. հոկտեմբեր - Ազգային ճակատ ընդդիմադիր կազմակերպության ստեղծումը դոկտոր Մ. Մոսադեղի գլխավորությամբ
1950 թ. մայիսի 23 - Վաշինգտոնում Իրանի և ԱՄՆ-ի միջև ռազմական համաձայնագրի ստորագրումը
1950 թ. վերջ - ԱԻՆԸ ազգայնացման համար զանգվածային շարժման սկիզբը
1951 թ. մարտի 6 - Վարչապետ, գեներալ Հաջ Ալի Ռազմարայի սպանությունը «*Ֆեդայան-է էսլամ*» *կազմակերպության* անդամ Խալիլ Թահմասեբիի կողմից
1951 թ.մարտի 15-ին - XVI գումարման մեջլիսը որոշում ընդունեց Իրանի նավթային արդյունաբերության ազգայնացման մասին
1951 թ. ապրիլի 29 - Ազգային ճակատի ղեկավար դոկտոր Մ. Մոսադեղի նշանակումը վարչապետի պաշտոնում
1951 թ. մայիսի 25 - Մեծ Բրիտանիայի բողոքը Իրանի գործողությունների նկատմամբ Հաագայի միջազգային դատարանին
1951 թ. հուլիսի 15 - ԱՄՆ-ի նախագահ Տրումենի անձնական ներկայացուցիչ Ա. Հարիմանի ժամանումը Իրան
1951թ. հոկտեմբեր - ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում իրանական նավթի մասին հարցի քննարկումը
1952 թ. հոկտեմբերի 22 - Իրանի դիվանագիտական հարաբերությունների խզումը Անգլիայի հետ
1953 թ. օգոստոսի 19 - Պետական հեղաշրջում Իրանում
1953 թ. դեկտեմբեր - Իրանի դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը Անգլիայի հետ
1955 թ. հոկտեմբերի 23 - Իրանի անդամակցությունը Բաղդադի պակտին
1959 թ. մարտի 5 - Իրանի և ԱՄՆ-ի միջև ռազմական համագործակցության վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը
1960 թ. մարտ - Մեջլիսի և Սենատի կողմից հողային բարեփոխման մասին օրենքի հաստատումը

1962 թ. հունվարի 9 - Հողային բարեփոխման մասին նոր օրենքի ընդունումը
1962 թ. սեպտեմբերի 15 - Իրանական կառավարության նոտան ԽՍՀՄ կառավարությանը, որտեղ հավաստիացվում էր, որ օտարերկրյա պետություններին չի թույլատրվելու Իրանի տարածքում ունենալու հրթիռային բազաներ
1963 թ. մարտի 3 - Շահի հրամանագիրը մեջլիսի ընտրությունների ժամանակ կանանց իրավահավասարության մասին
1963 թ. մարտի 22 - Վարչակարգի անվտանգության ուժերի զրոհը Ֆեյզիե մեդրեսեում (Ղում քաղաք)
1963 թ. հունիսի 12 - Զանգվածային հակակառավարական ցույցեր Թեհրանում «Թասուա» և «Աշուրա» օրերին հոգևորականության ընդդիմադիր ներկայացուցիչների գլխավորությամբ
1963 թ. - Այաթոլլա Խոմեյնիի (Ղումում), այաթոլլա Ղումիի (Մեշհեդում) և այաթոլլաի Մահալլաթիի (Շիրազում) և այլոց ձերբակալությունը
1964 թ. ապրիլի 6 - Այաթոլլա Խոմեյնիի ազատ արձակումը և նրա վերադարձը Ղում
1964 թ. հոկտեմբերի 26 - Այաթոլլա Խոմեյնիի կտրուկ հակաշահական ելույթը: Նրա ձերբակալությունը և աքսորը Թուրքիա (Բուրսա քաղաքը)
1965 թ. հունվարի 21 - Վարչապետ Խ. Մանսուրի սպանությունը ընդհատակյա իսլամական կազմակերպության անդամ Մոհամմադ Բոխարայիի կողմից
1965 թ. ապրիլի 10 - Շահի կյանքի դեմ անհաջող մահափորձը Մարմարյա պալատում
1966 թ. հունվարի 13 - *Իրանա-սովետական համաձայնագրի ստորագրումը Սպահանում* մետալուրգիական գործարանի, Արաքում մեքենաշինական գործարանի և տրանսիրանական գազատարի շինարարության մասին
1971 թ. հոկտեմբեր Պարսկական միապետության 2500-ամյակի տոնակատարությունների կապակցությամբ պաշտոնական միջոցառումներ
1971 թ. դեկտեմբերի 1 - Իրանական զորքերի կողմից Պարսից ծոցի Աբու Մուսա, Թոմբ-ե-Բոզորգ և Թոմբ-ե-Քուչեք կղզիների գրավումը
1975 թ. մարտ - Բոլոր քաղաքական կուսակցությունների ցրումը
1975 թ. մարտի 8 - «Իրանի վերածնունդ» («Ռասթախիզ-ե Իրան») միասնական միապետական կողմնորոշում ունեցող կուսակցության ստեղծումը Ա. Ա. Հովեյդայի գլխավորությամբ
1977 թ. նոյեմբերի 21 - Թեհրանում ուսանողների հակակառավարական ցույցի ճնշումը ոստիկանության և բանակային զորամասերի կողմից
1978 թ. հունվարի 8-9 - Հակակառավարական ցույցերը Ղումում, որոնք վերածվեցին ապստամբության
1978 թ. գարուն-ամառ-աշուն - Հակամիապետական ապստամբություններ ու ցույցեր Իրանի բազմաթիվ քաղաքներում
1978 թ. նոյեմբեր - Շահի ուղերձը ժողովրդին, որտեղ նա խոստանում էր «ուղղել անցյալի փսլինքները»
1978 թ. նոյեմբերի 30 - Նախագահ Քարտերը իր *կատարյալ վստահությունը հայտնեց* շահին և հայտարարեց, որ ԱՄՆ-ը չի միջամտելու Իրանի ներքին գործերին
1979 թ. հունվարի 16 - Մոհամմադ-Ռեզա Փեհլևին և թագուհի Ֆարահը ինքնաթիռով մեկնեցին Ասուան
1979 թ. փետրվարի 1 - Փարիզից ինքնաթիռով Թեհրան ժամանեց այաթոլլա Խոմեյնին
1979 թ. փետրվարի 9 - Դավշանքեբե ռազմաօդային բազայում ընդհարում զինվորականների միջև
1979 թ. փետրվարի 10-11 - Զինված ապստամբության հետևանքով շահական վարչակարգը գրկվեց իշխանությունից: Այն անցավ մինչ այդ կազմակերպված Հեղափոխական խորհրդի ձեռքը
1979 թ. փետրվարի 11 - Իրանի զինված ուժերի Բարձրագույն ռազմական խորհուրդը հայտարարեց իր չեզոքության մասին՝ կանխելու համար հետագա քաոսն ու արյունահեղությունը
1979 թ. մարտի 5 - Իրանը վերսկսեց նավթի արտահանումը
1979 թ. ապրիլի 1 - Հայտարարվեց Իրանում նոր պետության՝ Իրանի Իսլամական Հանրապետության ստեղծման մասին

1979 թ. դեկտեմբեր - ԻԻՀ սահմանադրության նախագծի հաստատումը
1980 թ. հունվար - ԻԻՀ նախագահի ընտրություններ: Ընտրվեց Ա. Բանիսադրը
1980 թ. ապրիլի 7 - ԱՄՆ-ի նախագահ Ջ. Քարտերը հայտարարեց իր որոշման մասին խզելու դիվանագիտական հարաբերությունները Իրանի հետ
1980 թ. սեպտեմբերի 22 - Իրաքի զինված ուժերի հարձակումը Իրանի վրա. Իրաք-իրանական պատերազմի սկիզբը
1981 թ. հունիս - Բանիսադրի հեռացումը ԻԻՀ նախագահի պաշտոնից
1988 թ. օգոստոս - Իրաք-իրանական պատերազմի ավարտը ՄԱԿ-ի 1987 թ. 598 բանաձևի հիմքի վրա
1989 թ. հունիսի 3 - ԻԻՀ առաջնորդ Ռուհոլլա Խոմեյնիի մահը
1989 թ. հունիս - Փորձագետների խորհրդի կողմից Սեյիդ Ալի Խամենեին ընտրվեց ԻԻՀ առաջնորդ («Ռահբար»): Նախագահ և կառավարության գլուխ ընտրվեց Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին: Երկրորդ անգամ նա նախագահ ընտրվեց 1993 թ.
1997 թ. մայիս - ԻԻՀ նախագահ ընտրվեց Մոհամմադ Խաթամին
1997 թ. հունիս - Նախագահ Մ. Խաթամիի կողմից «Քաղաքակրթությունների երկխոսության» սկզբունքի հռչակումը
1999 թ. - Իրանական կառավարության կողմից Սալման Ռուշդիի վերաբերյալ Խոմեյնիի հրապարակած ֆեթվայի հետկանչումը
2001 թ. հունիս - Մ. Խաթամիի վերընտրումը ԻԻՀ նախագահի պաշտոնում
2005թ. հունիս - ԻԻՀ նախագահ ընտրվեց Մահմուդ Ահմադինեժադը
2013 թ. հունիս - Հասան Ռոհանին ընտրվեց Իրանի Իսլամական Հանրապետության 7-րդ նախագահ
2017 թ. մայիս - Հասան Ռոհանիի վերընտրությունը նախագահի պաշտոնում:
2021 թ. հունիս - ԻԻՀ 8-րդ նախագահ ընտրվեց Էբրահիմ Ռայիսին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամ Երևանցի, Պատմություն պատերազմացն, 1721-1736, Երևան, 1938:
2. Աբրահամ Կրետացի, Աբրահամ կաթուղիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-Շահին Պարսից,Վաղարշապատ,1870:
3. Աբրահամյան Ա. Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, հ. Ա, 1964, հ. Բ, 1967:
4. Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901:
5. Ալպոյաճյան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, մասն Ա-Գ, Կահիրե, 1941,1955, 1961:
6. Ածառյան Հր., Վավերագրեր հայ-պարսկական հարաբերությանց մասին, Երևան, 1927:
7. Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896:
8. Առաքելյան Հ., Ակնարկ Պարսկաստանի հայերի անցեալի վրայ («Եղուկի», 1904, թիւ 1-10):
9. Առաքելյան Հ., Պարսկաստանի հայերը: Նրանց անցյալը, ներկան և ապագան, մասն Ա., Վիեննա, 1911:
10. Ատրպետ, Իմամաթ, Ալեքսանդրապոլ, 1906:
11. Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, Երևան, 1971:
12. Բաբայան Լ. Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Երևան, 1964:
13. Բայբուրդյան Վ., Իրանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին, Երևան, 1984:
14. Բայբուրդյան Վ., Թուրք-իրանական հարաբերությունները (1900-1914թ.թ.), Երևան, 1974:
15. Բայբուրդյան Վ., Իրանն այսօր, Երևան, 1999:
16. Բայբուրդյան Վ., Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը 17-րդ դարում, Թեհրան, 1996:
17. Բուռնազյան Ս., Հայաստանը և սելջուկները XI-XII դդ., Երևան, 1980:
18. Գյուտերբոք Կ., Բյուզանդիոն և Պարսկաստան և անոնց դիվանագիտական և ազգային-իրավական հարաբերությունները Յուստինիանու ժամանակ: Գերմ. թարգմ. ի. Հմայակ Համբարյան, Սխիթ. ուխտեն, Վիեննա, 1911:
19. Գորոյան Ն., Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968:
20. Գրիգոր Դարանաղցի (Կամախեցի), Ժամանակագրութիւն րիգոր վարդապետի Կամախեցւոյ, Երուսաղեմ, 1915:
21. Եգանյան Հ.Մ., Ագրարային հարաբերությունները Իրանում XIX դ. առաջին կեսին, Երևան, 1963.
22. Եգանյան Հ.Մ., Ագրարային հարաբերությունները Իրանում XIX դ. երկրորդ կեսին, Երևան, 1970:
23. Եգանյան Հ.Մ., Հասարակական-քաղաքական հոսանքները Իրանում XIX դ. վերջին և XX դ. սկզբին, Երևան, 1966:
24. Եգանյան Հ.Մ., Հոգևորականության դերը Իրանի հասարակական-քաղաքական կյանքում, Երևան, 1987:
25. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914:
26. Եղիա Կարնեցի, Եղիա Կարնեցու դիվանը, Նյութեր Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի պատմության, Երևան, 1968:
27. Եղիշե, Պատմութիւն վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957:

28. Ջաքարիա Ագուլեցի, Ջաքարիա Ագուլեցու ուղեգրությունը, Երևան, 1938:
29. Ջաքարիա Քանաքեռցի, Ջաքարիայ Սարկաւագի Պատմագրութիւն, հ.Ա, Բ, , Վաղարշապատ, 1870:
30. Էլմար, Եփրեմ, Թեհրան, 1964:
31. Թաղիադյան Մ., Պատմութիւն պարսից, հ. Ա., Կալկաթա, 1846:
32. Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860.
33. Իսկանյան Վ.,Արաբները VI-XI դարերում, Երևան, 1968:
34. Լեո, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Երևան, 1934:
35. Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, Երևան հ. 1,1966, հ. 2, 1967, հ. 3 1969, հ.4, 1984:
36. Խաչատուր Ջուղայեցի, Խաչատուր աբեղա Ջուղայեցւոյ Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905:
37. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961:
38. Կիրակոսյան Գ., Հայաստանը Լանկթեմուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, Երևան, 1997:
39. Հայ ժողովրդի պատմություն (8 հատորով), ԳԱ հրատ., Երևան, հ.I, 1971, հ.II, 1984, հ.III, 1976, հ.IV, 1972, հ.V, 1974:
40. Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ.թ.ա.VII-VI դդ.), Երևան, 1998:
41. Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842:
42. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ.II, Երևան, 1959:
43. Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1907:
44. Մանանդյան Հ., Երկեր, հ.Ա, Երևան, 1977, հ.Բ, Երևան, 1978, հ. Գ, Երևան, 1977.
45. Մանասերյան Ռ., Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ մ.թ.ա. 94-64 թթ., Երևան, 1987:
46. Մաղաքիա աբեղա (Գրիգոր Ակներցի), Պատմութիւն վասն ազգին նետողաց, ՍՊԲ, 1870.
47. Սամր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., կազմեց՝ Վ.Ա. Հակոբյան, հ. 1-2, Երևան, 1951,1956.
48. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, կազմեց՝ Հ.Դ.Փափազյան, պր. I (ԺԵ-ԺՋ դդ.), Երևան, 1956, պր. 2 (1601-1650 թթ.), Երևան, 1959:
49. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, Կալվածագրեր, կազմեց՝ Հ.Դ.Փափազյան, պր. I (ԺԴ-ԺՋ դդ.), Երևան, 1968:
50. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Երևան, 1973:
51. Մելիք Շահնազարյանց Դավիթ-բեգ Ծատուր, Տեղեկությունք ի վերայ այժմյան կացության թագավորության Պարսից, Փարիզ, 1818:
52. Մինասյան Լ. Գ., Իրանի հայկական վանքերը, Թեհրան, 1971:
53. Մինասյան Լ. Գ., Պատմագիր Ստեփաննոս երեց, Թեհրան, 1956:
54. Մինասյան Լ. Գ., Պատմություն Փերիայի հայերի (1606-1956), Անթիլիաս, 1971:
55. Մոհամմադ Ռեզա շահ Փահլավի, Առաքելություն հայրենիքիս համար, Թեհրան, 1973:
56. Նաջարյան Հ., Թուրք-իրանական հարաբերությունները XVI դարում և XVII դարի առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961:
57. Նեղուեքեթ Թ., Պատմություն Սասանյան տերության, Վաղարշապատ, 1896:
58. Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի հայոց, Ս.Պետերբուրգ, 1887:
59. Շահնազարյան Ն., Հայ-իրանական և հայ-հռոմեական հարաբերությունները հայ մատենագիրների լուսաբանությամբ, Երևան, 1990:
60. Շահնազարյան Ն., Հույն-պարսկական պատերազմները, Երևան, 1958:
61. Շերմազանյան Գ., Նյութեր ազգային պատմության համար: Երևելի հայկազունք ի Պարսկաստան, *Ռոստով*, 1890:

62. Սեբեոս եպիսկոպոսի պատմություն, Երևան, 1939:
63. Ստեփանյան Ս., Հայ առևտրական բուրժուազիան Իրանի տնտեսական կյանքում, Երևան, 1992:
64. Ստեփանոսի Ասողկան Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885:
65. Տեր-Ավետիսյան Ս., Նադիր Շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու), Երևան, 1940:
66. Տեր-Յովհաննյանց Հ., Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, հ. 1-2, Նոր Ջուղա, 1880:
67. Տիտանյան Ռ., Վարդան Օձնեցին պարսիկների 1795-1796 թթ. Անդրկովկաս կատարած արշավանքի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, N3:
68. Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1933:
69. Քարամյան Ն., Պարթևները Պարսկաստանում և նրանց հարաբերությունները հայոց հետ, Վաղարշապատ, 1897:
70. Քսենոֆոն Աթենացի, Անաբասիս, թարգմ. Սիմոն Կրկյաշարյան, Երևան,1970:
71. Քսենոֆոն Աթենացի, Կյուրոսապատում, ֆրանս. թարգմ. Աշոտ Մուրադխանյան, Թեհրան, 1971:
72. Օրմանյան Մ., Բ., Ազգապատում, հ. Ա և Բ., Կ.Պոլիս, 1912
73. Абдуллаев Ф., Из истории русско-иранских отношений и английской политики в Иране в начале XIX в. Ташкент, 1971
74. Агаев С.Л., Германский империализм в Иране (Веймарская Республика, Третий рейх),Москва, 1969.
75. Агаев С.Л., Иран: внешняя политика и проблемы независимости, Москва, 1971.
76. Агаев С.Л., Иран в период политического кризиса 1920-1925 гг. (Вопросы внешней политки), Москва, 1970.
77. Агабеков Г., Секретный террор. Записки разведчика, Москва 1996.
78. Акоп Шамахеци, Походы Тамас-Кули-хана (Надир-шаха) и избрание его шахом, Тифлис, 1932.
79. Алиев И., История Мидии, Баку, 1960.
80. Алиев С.М., История Ирана XX век, Москва, 2004.
81. Алиев С.М., Нефть и общественно-политическое развитие Ирана в XX в.,Москва, 1985.
82. Алиеф А., Иран vs Ирак: история и современность, Москва, 2002.
83. Анаркулова Д.М., Социально-политическая борьба в Иране в середине XIX в., Москва, 1983.
84. Ансари Х., Имам Хомейни. Политическая борьба от рождения до кончины, Москва, 1999.
85. Арабаджян З.А., Иран: противостояние империям 1918-1941, Москва, 1996.
86. Арабаджян З.А., Иран, власть, реформы, революции (XIX-XX вв.), Москва, 1991.
87. Аршаруни А.М., Бехаизм, Москва,1930.
88. Арунова М.Р. и Ашрафян К.З., Государство Надир-шаха Ашрафа, Москва,1958.
89. Атрпет, Бабизм и бехаизм. Опыт научно-религиозного исследования, Тифлис,1910.
90. Атрпет, Имамат. Страна поклонников имамов (персидское духовенство). Историческое исследование. Александрополь, 1909.
91. Атрпет, Мамед Али шах. Народное движение в крае Льва и Солнца, Александрополь, 1909.
92. Атрпет, Откупная система в Персии, Александрополь, 1909.
93. Атрпет, Рахим-хан сардар. Народное движение в стране Льва и Солнца, Александрополь, 1910.
94. Байбуртян В.А., Армянская колония Новой Джульфы в XVII в.(Роль Новой Джульфы в ирано-западноевропейских связях), Ереван, 1969.
95. Балаян Б.П., Восстание племен на юге Ирана (1922-1930), Ереван, 1974.
96. Балаян Б.П., Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России, Ереван, 1988.
97. Бартольд В.В., Иран. Исторический обзор. Ташкент, 1926.

98. Беляев Е., Арабы, ислам и арабский халифат в раннее средневековье, Москва, 1965.
99. Бойс М., Зароастрийцы. Верование и обычай, Москва, 1987.
100. Бокщанин А.Г., Парфия и Рим. Возникновение системы политического дуализма в Передней Азии, ч.I, Москва, 1960, ч.II, Москва, 1966.
101. Большаков О.Г., История халифата, т. I, Москва 1989, т II, Москва,1993,тIII, Москва, 1998.
102. Бушев П.П., Герат и англо-иранская война 1856-1857 гг., Москва, 1959.
103. Бушев П.П., Посольство Артемия Волынского в Иран в 1715-1718 гг., Москва,1978.
104. Васильев А., Россия на Ближнем и Среднем Востоке: от мессианства к прагматизму, Москва, 1993.
105. Глуходед В.С., Проблемы экономического развития Ирана (20-ые-30-ые годы),Москва 1968.
106. Гордлевский В.А., Государство Сельджукидов в Малой Азии, Москва-Ленинград, 1941.
107. Грантовский Э.А., Ранняя история иранских племен Передней Азии, Москва, 1970.
108. Дандамаев М.А., Иран при первых Ахеменидах, Москва, 1963.
109. Дандамаев М.А.,Луконин В.Г., Культура и экономика древнего Ирана, Москва, 1980.
110. Дандамаев М.А., Политическая история Ахеменидской державы, Москва, 1985.
111. Даров И., Бехаизм. (Новая религия Востока), Ленинград, 1930.
112. Денстервилль, Британский империализм в Баку и Персии, 1917-1918. (Воспоминания), Тифлис, 1925.
113. Дневник Осады Испагани, веденный Петросом ди Саргис Гиланенц в 1722 и 1723 годах, СПб, 1870.
114. Дорошенко Е.А., Зароастрийцы в Иране (историко-этнографический очерк) Москва, 1982.
115. Дорошенко Е.А., Шиитское духовенство в современном Иране, Москва, 1975.
116. Дьяконов И.М., История Мидии от древнейших времен до конца IV в. до н.э., Москва-Ленинград, 1956.
117. Дьяконов М.М., Очерк истории древнего Ирана, Москва, 1961.
118. Дьяконов И.М., Предыстория армянского народа, Ереван, 1968.
119. Емельянов А.С., Персидский Фронт (1915-1918), Берлин,1923.
120. Жигалина О.И., Этносоциальная эволюция иранского общества, Москва, 1996.
121. Закарий Канакерци, Хроника, Москва, 1969.
122. Зароастр.Зара-Тустра. Жизненный путь правозвестника в Иране, Штутгарт, 1994.
123. Иванов М.С., Бабидские восстания в Иране (1848-1852), Москва-Ленинград, 1939
124. Иванов М.С., Иранская революция 1905-1911 гг., Москва 1957.
125. Иванов М.С., Очерк истории Ирана, Москва, 1952.
126. Иванов М.С., Новейшая история Ирана, Москва, 1965.
127. Иванов М.С., Иран сегодня, Москва, 1969.
128. Иванова М.Н., Национально-освободительное движение в Иране в 1918-1922 гг., Москва, 1960.
129. Иностранцев К.А., Сасанидские этюды, СПб, 1909.
130. Иран: ислам и власть, Москва, 2001.
131. Иран: история и культура в средние века и в новое время, Москва, 1980.
132. История Ирана. Отв. редактор проф. Иванов М.С.,Москва, 1997.
133. Истлгин Л.Г., Германское проникновение в Иран и русско-германские противоречия накануне первой мировой войны, Москва, 1979.
134. История монголов по армянским источникам. Пер. и объяснения К.П. Патканова. Вып. I, СПб, 1873; вып. II, СПб, 1874.
135. Кишмишев, походы Надир-шаха в Герат, Кандагар, Индию и события в Персии

после его смерти. Тифлис, 1889.
136. Колесников А.И., Завоевание Ирана арабами. (Иран при праведных халифах), Москва,1982.
137. Колесников А.И., Иран в начале VII века. (Источники, внутренняя и внешняя политика, вопросы административного деления). Палестинский сборник, В. 22(85), Ленинград,1970.
138. Кошеленко Г.А., Культура Парфии, Москва, 1966.
139. Кузнецов В.С., Последний правитель Иран-шахра, Новосибирск, 1991.
140. Кузнецова Н.А., Иран в первой половине XIX в., Москва, 1983.
141. Кулагина Л.М., Экспансия английского империализма в Иране в конце XIX-начале XX вв., Москва, 1981.
142. Куликан Уильям, Персы и мидяне. Подданные империи Ахеменидов, Москва,2002.
143. Луконин В.Г., Иран в III в., Москва, 1979.
144. Луконин В.Г., Иран в эпоху первых сасанидов. Очерки по истории культуры, Ленинград, 1961.
145. Луконин В.Г., Древний и раннесредневековый Иран.Очерк истории и культуры. Москва, 1987.
146. Лысцов В.П., Персидский поход Петра I (1722-1723 гг.), Москва,1951.
147. Маркарян С.А., Сельджуки в Иране XI века, Саратов, 1991.
148. Меликов О.С., Установление диктатуры Реза-шаха в Иране, Москва, 1961.
149. Мец А., Мусульманский ренессанс, Москва, 1996.
150. Мирошников Л.И., Английская экспансия в Иране (1914-1920), Москва, 1981.
151. Мохаммед Реза-шах Пехлеви, Белая революция, Париж, 1960.
152. Мухаммад-Казим, Поход Надир-шаха в Индию. (Извлечение из ,,Тарих-и аламарайи Надири). Пер. с перс., предисл. и примеч. П.И. Петрова, Москва, 1961.
153. Орлов Е.А., Внешняя политика Ирана после Второй мировой войны, Москва, 1975.
154. Очерки новой истории Ирана (XIX- начало XX вв.), Москва, 1978.
155. Патканов К.П., Опыт истории династии Сасанидов по сведениям, сообщаемым армянскими писателями, СПб, 1863.
156. Периханян А.Г., Сасанидский судебник: „Книга тысячи судебных решений", Ереван, 1973.
157. Периханян А.Г., Общество и право Ирана в парфянский и сасанидский периоды, Москва, 1983.
158. Петрушевский И.П., Земледелие и аграрные отношения в Иране XIII-XIV веков, Москва-Ленинград, 1960.
159. Петрушевский И.П., Ислам в Иране в VII-XV веках, Москва, 1966.
160. Петрушевский И.П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Ленинград, 1949.
161. Пигулевская Н.В., Арабы у границ Византии и Ирана в IV-VI вв., Москва, 1964.
162 Пигулевская Н.В., Византия и Иран на рубеже VI и VII вв., Москва-Ленинград, 1946.
163. Пигулевская Н.В., Города Ирана в раннем средневековье, Москва-Ленинград, 1956.
164. Пигулевская Н.В., Якубовский А.Ю., Петрушевский И.П., Строева Л.В., Беленицкий Л.М., История Ирана с древнейших времен до конца XVIIIв., Ленинград, 1958.
165. Рак И.В., Мифы древнего и раннесредневекового Ирана, СПб, 1998.
166. Сиасет-наме, Книга о правлении вазира XI столетия Низам ал-Мулька. (Пер.,введ. в изуч. памятника и примеч. проф Б.Н.Заходера), Москва-Ленинград, 1949.
167. Стамболцян А.Г. Внутренняя политика правительства национальной буржуазии Ирана 1951-1953 гг., Ереван, 1984.
168. Строева Л.В., Государство исмаилитов в Иране в XI- XIII вв., Москва, 1978.

169. Султан-Заде А., Современная Персия, Москва, 1922.
170. Талипов Н.А., Общественная мысль в Иране в XIX-начале XXв.в., Москва, 1988.
171. Тер-Аветисян С.В., Походы Тамас Кули-хана (Надир шаха) и избрание его шахом в описании Акопа Шамахеци, Тифлис, 1932.
172. Тер-Гукасов Г. Политические и экономические интересы России в Персии, Петроград, 1916.
173. Тер-Мкртичян Л.Х., Армения под властью Надир-шаха, Москва, 1963.
174. Тигранов Л., Из общественно-экономических отношений в Персии, СПБ, 1909.
175. Томара М., Бабек, Москва, 1936.
176. Тузмухамедов Р.А., Советско-иранские отношения (1917-1921), Москва, 1960.
177. Фильштинский И.М., История арабов и халифата (750-1517 гг.), Москва, 1999.
178. Фрай Р., Наследие Ирана, Москва, 1972.
179. Хатами Сейед Мохаммад,Традиции и мысли во власти авторитаризма, Москва, Изд-во МГУ, 2001.
180. Хинц Вальтер, Государство Элам, Москва, 1977.
181. Шарашенидзе З.М., Иран во второй половине XVIII в., Тбилиси, 1970.
182. Юсифов Ю. Б., Элам. Социально-экономическая история, Москва, 1968.
183. Abrahamian E., Iran between Two Revolutions, Princeton, New Jersey, 1983.
184. Abdulghani J.M., Iraq and Iran : The Years of Crisis. Baltimore. The John Hopkins U. Press, 1984.
185. Afschar M., La politique européenne en Perse. Quelques pages de l'histoire diplomatique, Berlin, 1921.
186. Algar H., Mirza Malkam Khan ,Berkeley,1973.
187. Algar H., Religion and State in Iran 1785-1906. The Role of the Ulama in the Qajar Period, Berkeley-Los-Angeles, 1969.
188. Amanat Abbas, Pivot of the Universe.Nazir-al-Din Shah Qajar and the Iranian Monarchy, 1831- 1896, University of California Press, Berkeley, 1997.
189. Amiralai Ch., Le pétrole et independence de l'Iran, Paris, 1961.
190. Amirsadeghi Hossein, Twentieth-Century Iran, London, 1977.
191. Arjomand Said Amir, "Introduction: Shi'ism, Autority, and Political Culture" N.Y.,1988.
192. Arjomand Said Amir, The Turban for the Crown, Oxford, 1988.
193. Atabaki Touraj, Azerbaijan: Ethnicity and the Struggle for Power in Iran, N.Y, 2000.
194. Atkin Muriel, Russia and in Iran 1780-1828, Minneapolis, 1980.
195. Avery P., Modern Iran,London, 1965.
196. Babelon E., Les Perses Achéménides, t. 1-2, Paris, 1901-1907.
197. Bahman Nirumand, Iran, The New Imperializm in Action, New York, 1969.
198. Baibourtian V., International Trade and the Armenian Merchants in the Seventeenth Century, New Delhi, 2004.
199. Bakhash Shaul, The Reign of the Ayatollahs: Iran and the Islamic Revolution, N.Y., 1990.
200. Bakhash Shaul, Monarchy, Bureaucracy and Reform under the Qajars. 1858-1896, London, Ithaca Press, 1978.
201. Banisadr A., Quelle revolution pour L'Iran (Préf. De P. Viielle), Paris, 1937.
202. Banuazizi Ali, Irans Revolutionary impasse, 1994.
203. Banani A., The Modernization of Iran, 1921-1941, Stanford, 1989.
204. Bast Oliver, Les Allemands en Perse pendant la Premiere Guerre Mondiale. Diffusion Peeters, Paris, 1977.
205. Bayani Kh.,Les Relations de L'Iran avec L'Europe Occidentale à l'epoque Safavide, Paris, 1937.
206. Bayat Mangol, Iran's First Revolution; Shi'ism and the Constitutional Revolution 1905-1906, N.Y., 1991.
207. Bernard Lewis, The Middle East, London, 1995.

208. Bill James A., The Eagle and the Lion: The Tragedy of American-Iranian Revolutions, New Haven, 1988.
209. Bellan L.L., Chah Abbas I, sa vie, son histoire, Paris, 1932.
210. Binder L., Iran. Political Development in a Changing Society. Berkeley-Los-Angeles, 1962.
211. Bonine Michael E., and Nikki R. Keddie, eds., Modern Iran: The dialectics of Continuity and Change, N.Y., 1981.
212. Bradford M.G., German-Persian diplomatic relations, 1873-1912, S.-Gravenhage, Mouton, 1959.
213. British Ambassador in World War II Persia, London, N.Y., 1991.
214. Browne E.G., Materials for the Study of the Babi Religion, Cambridge, 1918.
215. Browne E.G., The Persian Revolution of 1905-1909, Cambridge, 1910.
216. Bullard Reader, Letters from Iran: A British Ambassador in World War II Persia, London, N.Y., 1991.
217. Buller R.W., Twenty Years of Islamic Politics, "Middle East Journal", Washington, 1999, Vol.53, N2.
218. Burn A.R., Persia and Greeks, the defence of the West, London, 1970.
219. Cameron G.G., History of Early Iran, N.Y., 1936.
220. Christensen A., L'Iran sous les Sasanides. Copenhagen,1944.
221. Christensen A., La règne du roi Kawadh I et communisme mozdakiste, Copenhague, 1924.
222. Chubin Shazam and Charles Triff, Iran and Iraq at War, 1988.
223. Cosroe Chaqueri, The Armenians of Iran, Harvard university, 1999.
224. Cottam R.W., Iran and the United States. A Cold War case Study, Pittsbourgh, 1988.
225. Cottam R.W., Nationalism in Iran. Pittsbourgh, 1964.
226. Culucan W., The Medes and Persians, London, 1965.
227. Curzon G. N., Persia and the Persian Question, Vol. I-II, London, 1892.
228. Dabashi Hamid, Theology of Discontent: The ideological Foundations of the Islamic Revolution in Iran, N.Y., 1993.
229. Debevoise N.C., A Political History of Parthia, Chicago, 1938.
230. Digurd Jean- Pierre, Hourcade Bernard, Richard Yann. L'Iran au XX siecle, Paris, Fayard, 1996.
231. Duchesne-Guillemin J., La religion de L'Iran ancien, Paris, 1962.
232. Ehteshami Anaushirvan, After Khomeini. The Iranian Second Republic, London, 1995.
233. Ehtécham M., L'Iran sous les Achéménides, Friborg, 1946.
234. Elwell-Sutton L.P., Bibliographical Guide to Iran, N.Y, 1983.
235. Elwell-Sutton L.P., Modern Iran, London, 1942.
236. Elwell-Sutton L.P., Reza Shah the Great: Founder of the Pahlavi Dinasty, Stanford, 1978.
237. Encyclopedia Iranica, ed. Ehsan Yarshater, London and Boston, 1982.
238. Farmayan Hafez F., The Beginnings of Modernization in Iran. The Politics and Reform of Shah Abbas I (1587-1629), Salt Lake City (Utah), 1969.
239. Farmayan Hafez F., The Forces of Modernization in the Nineteenth Century. Iran . a Historical Survey. Beginning of Modernization in the Middle East, Chicago-London, 1968.
240. Farmanfarmaian Manucher and Farmanfarmaian Roxane, Blood and Oil: inside the Shah's Iran, N.Y., 1997.
241. Fatemi N.S., Diplomatic History of Persia 1917-1923, Anglo-Russian Power Politics in Iran, N.Y., 1952.
242. Fatemi N.S., Oil Diplomacy, Powderkeg in Iran, N.Y., 1954.
243. Fisher M.M.J., Iran from Religion Dispute to Revolution, Cambridge (Mass), London, 1980.
244. Floor Willem, Industrialization in Iran, 1900-1914. Durham, 1984.
245. Floor Willem, Safavid Government Institutions. Mazda Publishers, Inc. Costa Mesa, California, 2001.
246. Ford A.W., The Anglo-Iranian Oil Dispute of 1951-1952, Berkeley-Los-Angeles, 1954.
247. Frye R.N., The Heritage of Iran, London, 1975.
248. Garsoian N. G., Armenia between Byzan tium and the Sassanians, London, 1985.
249. Gehrke U., Persien in der deutschen Orient politik, Während des Ersten Weltkrieges, t.2, Stuttgart, 1961.

250. Ghirshman R.,L'Iran et la migration des Indo-Aryens et des Iraniens, Leiden, 1977.
251. Ghirshman R., L'Iran des origines á L'Islam, Paris, 1976.
252. Ghirshman R., Perse. Proto-iraniens, Médés, Achéménides, Paris, 1962.
253. Gottam R.W.,Nationalism in Iran, Pittsburg, 1964.
254. Graham R., Iran: Illusion of Power, London, 1978.
255. Haas W. S., Iran, N.Y., 1964.
256. Halliday F.,Iran: Dictatorship and Development, London, 1979.
257. Hasan Fasai, History of Persia under Qajar Rulle, London, 1972.
258. Hekmat M. A., Essai Sur L'histoire des relations politiques irano-ottomanes de 1722-1747, Paris, 1937.
259. Herzfeld E., Persian Empire. Studies in geography and ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968.
260. Herzfeld E., Zoroaster and his World. Princeton, 1947.
261. Hinz W., Zarathustra, Stuttgart, 1961.
262. Hiro Dilip, The Longest War: The Iran-Iraq Military Conflict, London, 1990.
263. Hiro Dilip, Iran under the Ayatollahs. Routledge and Kegan Paul, London, Boston and Henley, 1985.
264. Hoyt E. P., The Shah Mohammed Reza Pahlavi. The Glittering Story of Iran and its People, N.Y., 1975.
265. Hurewitz J.C., The Middle East and North Africa in World Politics: A Decumentary Record, New Haven and London, 1975.
266. Ingram Edward. Britain's Persian connection, 1798-1829. Prelude to the great Game in Asia, Oxford, Clarendon Press, 1992.
267. Iran after the Revolution: Crisis of an Islamic State. Edited by Saeed Rahnema and Sohrab Behdad, London, New York, I.B. Tauris, 1995.
268. Iran under the Pahlavis, Stanford, 1978.
269. Ivanov W., Studies in Early persian Ismailism, Bombay, 1955.
270. James A., Revolutionary Iran. John Hopkins University Press, 1986.
271. Katouzian Homa, Musaddig and the Struggle For Power in Iran, i.B. Tauris U.K., 1990.
272. Kauz Ralph, Politische Parteien und Bevolkerung in Iran: Die Hezb-e Demukrat-e Iran und ihr Fuhrer Qavam Saltana, Berlin, Klaus Schwarz Verlag, 1995.
273. Kazemzadeh F., Russia and Britain in Persia, 1864-1914, Haven-London, 1968.
274. Keddie Nikki R., Religion and Rebbelion in Iran. The Tobacco Protest of 1891-1892, London, 1966.
275. Keddie Nikki R., Roots of Revolution: An Interpretive History of Modern Iran, London, 1981.
276. Keddie Nikki R., The Iranian Revolution and the Islamic Republic, 1986.
277. Keddie Nikki R., and Hooglund Eric (eds.). The Iranian Revolution and the Islamic Republic, New York, 1986.
278. Keddie R. N., Qajar Iran and the Rise of Reza Khan 1796-1925. Mazda publishers, Including "Theatrical Buildings and Performance in Tehran", 1999.
279. Khomeiny R., Principes politiques, philosophiques, sociaux et religieux. Extraits de trois ouvrages majeurs de l'ayatollah, Paris, 1979.
280. Khurshudian E., Zohrabian A., Sassanian Coins of Armenia, Almaty, 2002.
281. Klima O., Mazdak. Geschichte einer sozialen Bewegung im sasanidischen Persien, Praha, 1957.
282. Lambton A.K.S., Islamic Society in Persia, London, 1954.
283. Lambton A.K.S., Landlord and Peasant in Persia, Toronto, Oxford, 1954.
284. Lambton A.K.S., The Persian Land Reform, 1962-1966, Oxford, 1977.
285. Lambton A., Qajar Persia, Austin: University of Texas Press, 1987.
286. La perse et la Grande Guerre, Etudes reunites et presentees par Oliver Bast. Ins. Francais de Recherche en Iran, Teheran, 2002.
287. Lenczowski G., Iran under the Pahlavis, California, 1978.
288. Lenczowski G., Russia and the West in Iran, 1918-1948, N.Y., 1949.
289. Le Conflict Irako-Iranien, Paris, 1981.

290. Lockhart L., Nadir-Shah. A Critical Study Based Mainly on Contemporary Sources, London, 1938.
291. Lockhart L., The Fall of the Safavi Dinasty and the Afghan occupation of Persia, N.Y., Cambridge, 1958.
292. Mahrad Ahmad, Iran under der Herrschaft Reza Shahs, Frankfurt, N.Y., 1970.
293. Malcolm A.R.,The Parthians, London, 1967.
294. Marquart J., Eränschahr nach der Geographie des Ps. Moses Horenaci, Berlin, 1901.
295. Memoirs of Jafar Sharif-Emami. Minister of Iran (1960-1961 and 1978), Tehran, 1999.
296. Migeod Heinz-Georg, Die Persische Gesselschaft unter Nasir ud-din Shah (1848-1896), Berlin, 1990.
297. Milani M.M., The Making of Iran's Islamic Revolution: From Monarchy to Islamic Republic, Boulder Colo: Westview Press, 1988.
298. Millspaugh A.C., American Task in Persia, Washington, 1946.
299. Millspaugh A.C., American in Persia, N.Y., 1976.
300. Miroshnikow L., Iran in World War I, Moskow, 1964.
301. Moaddel M.,Class, Politics and Ideology in the Iranian Revolution, Columbia University Press, 1993.
302. Morgan D., Medieval Persia 1040-1797, London, 1988.
303. Myr-Davoud-Zadour de Melik Shahnazar, Envoyè de Perse en France, Notice sur l'etat actuel de la Pers, Paris, 1818.
304. Nashat G., The Origins of Modern Reform in Iran, 1870-80, Urbana, Chicago, London, 1982.
305. Neutralité persane, Doc. diplomatiques, Paris, 1919.
306. Nirop R. F., Iran. A Country Study. Washington, 1978.
307. Nyberg H. S., Die Religionen des alten Iran, Lpz.,1938.
308. Olmstead A.T., History of the Persian Empire, Chicago, 1948.
309. Pahlavi Mohammad Reza, The Shah of Iran, Answer to History, N.Y., 1980.
310. Pahlavi Mohammad Reza, Mission for my Country, London, 1969.
311. Pakravan E., Agha Mohammad Ghadjar. Essai Biographique, Tehran, 1953.
312. Pakravan E., Abbas Mirza, Tehran, t.1, 1959, t.2, 1960.
313. Palombini B., Bündniswerben abendländischer Mächte um Persien, 1453-1600, Wiesbaden, 1968.
314. Perry J.R., Karim Khan Zand. A History of Iran, 1747-1779, Chicago,1979.
315. Porada E., The Art of Ancient Iran, N.Y., 1965.
316. Parsa M., Social Origins of the Iranian Revolution, N.Y., 1989.
317. Qajar Iran.Political, Social and Cultural Change, 1800-1925, Edinburgh, Univ. Press, 1983.
318. Rahnema A. and Nomani F., The Secular Miracle, Religion, Politics and Economic Policy in Iran, London, 1990.
319. Ramazani R., Iran's Foreign Policy: Perspectives and Projections.-Economic Consequences of the Revolution in Iran,Washington, 1980.
320. Ramazani R., Ed., Iran's Revolution: The Search for Consensus, Bloomington, Indiana University Press, 1990.
321. Ramazani R., The Foreign Policy of Iran. A developing Nation in World Affairs 1500-1941, Virginia, 1966.
322. Richard Yann, Der verborgene imam. Die Geschichte des Schiisus in Iran, Berlin, 1983.
323. Roemer H.R., Shah Ismail II, Leipzig, 1940.
324. Roosevelt Kermit, Countercoup the struggle for the Control of Iran, N.Y., 1979.
325. Rubin Burry, Paved wit Good Intentions. The American Experience and Iran, N.Y., 1987.
326. Sahebjam F., L'Iran des Pahlavis, Paris, 1966.
327. Saikal Amin, The Rise and Fall of the Shah, New Jersey, 1980.
328. Sandra Mackey, The Iranians ,London, 1999.
329. Sadary Reza, Un Chapitre de L'histoire diplomatique de L'Iran, Paris, 1941.
330. Savory R., Iran under the Safavids, Cambridge, 1980.
331. Selected Messages and Speeches of Imam Khomeini, Tehran, 1981.
332. Sheenan M.K., Iran: Impact of United States Interests and Policies 1941-1954, New York, 1981.

333. Shuster W.M., The Strangling of Persia, London, 1912.
334. Simpson J., Inside Iran: Life under Khomeini's Regime, N.Y., 1988.
335. Sullivan W.H., Mission to Iran, N.Y., 1981.
336. Sykes P.M., A History of Persia, Vol. 1-2, London, 1930.
337. Tadhkirat -al-muluk, A Manual of Safavid Administration, by V. Minorsky, London, 1943.
338. Taheri A., The Spirit of Allah. Khomeini and the Islamic Revolution, London, 1987.
339. Tehrani Bahram (Farbod), Etude sur la situation economique de l'Iran (1975-1985), Paris, I-II, 1986.
340. The Boundaries of Modern Iran, London, 1994.
341. The Cambridge Ancient History, Vol. 4: The Persian Empire and the West, Cambridge, 1969.
342. The Economic History of Iran 1800-1914, Ed. By Charles Issavi, Chicago and London, 1971.
343. Upton J.M., The History of Modern Iran: An Interpretation, Cambridge, Mass., 1961.
344. Zargar Ali-Asgar, Anglo-Iranian Relations: 1925-1941, Geneve, 1984.
345. Zonis M., The Political Elite of Iran. Princeton, 1971.
346. Waterfield R., Christians in Persia. Assirians, Armenians, Roman Catholics and Protestants, London, 1973.
347. Wilber D. N., Contemporary Iran, N.Y., 1963.
348. Wilber D. N., Iran: Past and Present. Princeton, 1976.
349. Wilson D., Contemporary Iran. N.Y., 1963.
350. Woods J.E., The Aqquyunlu. Clan. Confederation, Empire. A Study in 15th-19th Century Turco-Iranica Politics. Minneapolis and Chicago, 1976.
351. Yeselson A., United States-Persian Diplomatic Relations 1883-1921, New Brunswick, 1956.
352. Աբբաս Էղբալ, Թարիխ-ե Մոֆասսալ-ե Իրան ազ էսթիլա-ե մողուլ թա էնղերազ-ե Ղաջարի-ե, Թեհրան, 1320:
353. Աբբաս Էղբալ, Միրզա Թաղի խան Ամիր քաբիր, Թեհրան, 1962:
354. Աբդոլրեզա Հուշանգ Մահդավի, Սիյասաթ-ե խարեջի-ե Իրան դար դոուրան-ե Փահլավի 1300-1357, Թեհրան, 1375:
355. Ադամիյաթ Ֆերիդուն, Ֆեքրե-ե ազադի վա մողադդամե-ե նեհզաթ-ե մաշրութիյաթ, Թեհրան, 1340:
356. Ազիմի Ֆահր-ադ-Դին, Բոհրան-ե դեմուկրասի դար Իրան. 1320-1332 (թարգմանություն անգլերեն բնագրից), Թեհրան, 1374:
357. Ալամ Աբդ-օլ-Ամիր, Րավաբաթ-ե սիասի-ե Իրան վա Ամրիքա ազ ջանգ-ե դովվոմ-ե ջահանի, Թեհրան, 1961:
358. Ախարին Սանգար-ե ազադի: Մաղալաթ-ե Միր Ջաֆար-ե Փիշնարի, բե քուշեշ-ե Ռահիմ Ռայիսնիյա, Թեհրան, 1377:
359. Աղելի Բաղեր, Թեյմուրթաշ դար սահնե-ե սիասաթ-ե Իրան, Թեհրան, 1993.
360. Աղելի Բաղեր, Միրզա Ահմեդ խան Ղավամ օս-Սալթանե դար դոուրան-ե Ղաջար վա Փահլավի, Թեհրան, 1377:
361. Ամիր Թահմասիբ Աբդալլահ, Թարիխ-ե Ռեզա Շահ-ե Փեհլևի յա էլալ վա նաթիջե-ե նեհզաթ-ե օմումի-ե աբաս մահ-ե 1304, Թեհրան, 1926:
362. Աֆրասյաբի Բահրամ, Իրան վա թարիխ, Թեհրան, 1364:
363. Աֆրասյաբի Բահրամ, Մոսադեղ վա թարիխ, Թեհրան, 1981:
364. Բայբուրդյան Վ.Ա.,Իրանշենասի դար մոնաբե-ե արմանի, «Փայման», N5-6, Թեհրան, 1376:
365. Բայբուրդյան Վ.Ա., Նաղշ-ե արամանե-ե Իրանի դար թեջարաթ-ե բեյնոլմելալի թա փայան-ե սադե-ե XVII միլադի, Թեհրան, 1996:
366. Բայբուրդյան Վ.Ա., Սիյասաթ-ե թորքիե նեսբաթ բե Իրան դար ավայել-ե ղարն-ե բիսթոմ, Էսֆահան, 1976:
367. Բանիսադր Աբոլհասան, Էղթեսադ-ե թոուհիդի, Թեհրան, 1979:
368. Բանիսադր Աբոլհասան, Զոմհուրի-ե Էսլամի, Թեհրան, 1979:

369. Բասթանի Մոհամմադ Իբրահիմ, Սիասաթ վա էղթեսադ-ե ասր-ե սաֆավի, Թեհրան, 1974:
370. Բեհնիյա Ա., Փարդեհա-ե սիասաթ: Նավթ, նեհզաթ, Մոսադեղ, Զահեդի, Թեհրան, 1956:
371. Բիյանի Խանբաբա, Թարիխ-ե Նեզամի-ե Իրան: Ջանգհա-ե դոուրե-ե սաֆավիյե, Թեհրան, 1974:
372. Բինա Ալի Աքբար, Թարիխ-ե սիյասի վա դիփլոմասի-ե Իրան, ջ. I, Թեհրան, 1956.
373. Բի թարաֆի-ե Իրան, ջ. I, Թեհրան, 1914:
374. Բրաուն էդուարդ, էնղելաբ-ե Իրան, Թեհրան, 1959:
375. Դանեշփուր Ա., Բանք-ե շահենշահի վա էմթիազ, Թեհրան, 1326:
376. Էսքանդար-ե Բայաթի Ասադուլլա, Թարիխ-ե ջանգ-ե բեյն-օլ-մելալի-ե դովվոմ, ջ.I, Թեհրան, 1953:
377. Թաջբախշ Ահմեդ, Րավաբաթ-ե Իրան վա Ռուսիե (1800-1850), Թաբրիզ, 1337:
378. Թարիխ-ե Ջենդիե, Թեհրան, 1946:
379. Թարիխ-ե Իրան, Դովրե-ե թիմուրիան, փաժուհեշ ազ դանեշգահ-ե Քամբրիջ, մոթարաջոմ դոքթոր Յաղուբ Աժանդ, Թեհրան, 1379:
380. Թեյմուրի է., Ասր-ե բիխաբարի յա թարիխ-ե էմթիազաթ դար Իրան, Թեհրան, 1953:
381. Ջոհուր վա սողութ-ե սալթանաթ-ե Փահլավի, Ջելդե դովվոմ, Թեհրան, 1374:
382. Իբրահիմ Թեյմուրի, Ղարարդադ-ե սալ-ե 1891 ռեժի, Թեհրան, 1954:
383. Իբրահիմ Թեյմուրի, Ասր-ե բիխաբարի յա թարիխ-ե էմթիազաթ դար Իրան, Թեհրան, 1332:
384. Խալիլ Աբբաս, Իրան բադ ազ էսլամ, ջ.I, Թեհրան, 1957:
385. Խան Մալեք Սասանի, Սիյասաթգարան-ե դոուրե-ե ղաջար, Թեհրան, 1960:
386. Խոսրովփանահ Մոհամմադ Հոսեյին, Սազման-ե Աֆսարան-ե հեզբ-ե Թուդե-ե Իրան, 1324-1333, Թեհրան, 1378:
387. Հաբիբոլլա Մոխթարի, Թարիխ-ե բիդարի-ե Իրան, Թեհրան, 1947:
388. Հադի Հեդայաթի, Թարիխ-ե զանդիե, Թեհրան, 1958:
389. Հոսեյին Մաքքի, Ջենդեգանի-ե միրզա Թաղի խան-ե Ամիր-ե քաբիր, Թեհրան, 1958.
390. Հոսեյին Մաքքի, Մոխթասարի ազ զենդեգանի-ե սիասի-ե սոլթանե-ե Ահմեդ շահ-ե Ղաջար, Թեհրան, 1944:
391. Հոսեյին Մաքքի, Թարիխ-ե բիսթ սալե-ե Իրան, ջ.II, Թեհրան, 1358:
392. Մալեք-օշ-Շոարա Բահար, Թարիխ-ե ահզաբ-ե սիյասի-ե Իրան, ջ.I, Թեհրան, 1323:
393. Մալեք Սասանի Ահմադ խան, Սիյասաթգարան-ե դոուրե-ե Ղաջար, Թեհրան, 1379:
394. Մալքոմ խան Նեզամ օդ-Դոուլե, Մաջմույե-ե ասար-ե Միրզա Մալքոմ խան: Թադվին վա թանզիմ-ե Մոհամմադ-ե Մոհիթ-ե Թաբաթաբայի, ջ.1, Թեհրան, 1948:
395. Մահմուդ-ե Մահմուդ, Թարիխ-ե Րեվաբեթ-ե սիյասի-ե Իրան վա էնգլիս դար ղարն-ե նովազդահոմ-ե միլադի, ջ.V, Թեհրան 1331:
396. Մանուչեհր Ֆարմանֆարմայան վա Րոհսան Ֆարմանֆարմայան, խուն վա նավթ, խաթերաթ-ե յեք շահզադ-ե Իրան, Թեհրան, 1378:
397. Մեհդի Մալեքզադե, Թարիխ-ե էնղելաբ-ե մաշրութիյաթ-ե Իրան, Թեհրան, 1328:
398. Միրզա Մեհդի խան, Ջահանգոշա-ե նադերի, Թեհրան, 1968:
399. Մոարեխ էդ Դոուլե Սեփեհր, Իրան դար ջանգ-ե բոզորգ 1914-1918, Թեհրան, 1957:
400. Մո'թազեդ Խ., Ռեզա շահ. Սողութ վա փաս ազ Սողութ, չափ-ե դովվոմ, Թեհրան, 1376:
401. Մոհամմադ Մոհիթ Թաբաթաբայի, Մոջմուե-ե ասար միրզա Մալքոմ խան, Թեհրան, 1948:
402. Մոհամմադ Ջաֆար Խուրմուջի, Թարիխ-ե ղաջար, Թեհրան, 1344:
403. Մողթադեր Ղոլամ Հոսեյին, Նաբարդհա-ե բոզորգ-ե Նադեր շահ, Թեհրան, 1959:
404. Նազեմ-օլ-էսլամ-ե Քերմանի, Թարիխ-ե բիդարի-ե իրանիան յա թարիխ-ե մաշրուհ վա հաղիղի-ե մաշրութիաթ-ե Իրան, ջ.1, Թեհրան, (ա.թ.):
405. Նաջմի Նասեր, Իրան դար միան-ե թուֆան յա շարի-ե զենդեգանի-ե Աբբաս Միրզա Նայեբ աս-սալթանե, վա ջանգհա-ե Իրան վա րուս, Թեհրան, 1957:
406. Նավայի Ա., Քարիմ Խան-ե զանդ, Թեհրան, 1965:

407. Նաֆիսի Սայիդ, Ախերին յադիգար-ի Նադիր-շահ: «Մաջալլեի շարդ», Թեհրան, 1300:
408. Նաֆիսի Սայիդ,Թարիխ-ե էջթեմաի վա սիյասի-ե Իրան դար դոուրե-ե մոասեր: Ազ աղազ-ե սալթանաթ-ե Ղաջարիե թա փայան-ե նախոսթին ջանգ բա Ռուսիե, Թեհրան, 1335:
409. Նաֆիսի Սայիդ, Թարիխ-ե շահրիարի-ե շահան-շահ-ե Ռեզա շահ-ե Փահլավի, Թեհրան, 1965:
410. Շամիմ Ալի Ասղար, Իրան դար դովրե-ե սալթանաթ-ե Ղաջարիա, Թեհրան, 1342:
411. Շամիմ Ալի Ասղար, Իրան դար դոուրե-ե սալթանաթ-ե ալահազրաթ Մոհամմադ Ռեզա շահ-ե Փահլաևի, Թեհրան, 1965:
412. Ռաջաբի Պ., Քարիմ խան վա զաման-ե ու, Թեհրան, 1976:
413. Ռեզա Ղոլի Ղայեմմաղամի, Վաղայե-ե ղարբ-ե իրան դար ջանգ-ե ավվալ-ե ջահանի, Արաք, (ա.թ.):
414. Ռուհանի Ֆ., Թարիխ-ե մելլի շոդան-ե սանաթ-ե նավթ-ե Իրան, Թեհրան, 1352:
415. Սաթթն է., Ռեզա շահ-ե քաբիր յա Իրան-ե նոու, Թեհրան, 1969:
416. Սարդադուր Աբու Թորաբ, Թարիխ-ե նեզամի վա սիասի-ե դաուրան-ե շահ Աֆշար, Թեհրան, 1975:
417. Վահիդ-ե Մազենդարանի, Ղարար դադ-ե 1907, Թեհրան, 1960:
418. Րահիմ զադե-ե Սաֆավի, Շարհ-ե ջանգհա վա թարիխ-ե զենդեգանի-ե շահ-ե էսմայիլ-ե Սաֆավի, Թեհրան, 1962:
419. Րուհանի Սեյիդ Համիդ, Նեհզաթ-ե Խոմեյնի, ջելդ-ե դովվոմ, Թեհրան, 1364:
420. Փահլավի Մոհամմեդ ռեզա, Բե սու-ե թամադդոն-ե բոզորգ, Թեհրան, 1978:
421. Քաթուզհան-Հոմայուն Մոհամմադ Ալի, Մոսադեղ վա մոբարեզե բարայե դոդրաթ դար Իրան, Թեհրան, 1372:
422. Քեյանֆար Մեհդի, Սիյասաթ-ե Ամրիքա դար Իրան, Թեհրան, 1949:
423. Քեշավարզ Քերիմ, Հասան-ե Սաբբահ, Թեհրան, 1966:
424. Քեսրավի Ա., Թարիխ-ե մաշրութե-ե Իրան, Թեհրան, ջ. 1-3, 1968:
425. Քերմանի Նազիմ օլ իսլամ, Թարիխ-ե բիդարի-ե իրանիան, Թեհրան, 1953:
426. Ֆարդուսթ Հոսեյին, Խաթերաթ: Զոհուր վա սոդուր-ե սալթանաթ-ե Փահլավի, ելդ-ե ավվալ, Թեհրան, 1379:
427. Ֆերուդուն Ադամյաթ, Ամիր Քաբիր վա Իրան, Թեհրան, 1348:



Արգ-է Բամ (Բամ ամրոց): Աշխարհում խոշորագույն այս կավաշեն շինությունը գտնվում է Քերման նահանգի Բամ քաղաքում:



Աքեմենյան կայսրության մայրաքաղաք Թախտ-ի-Ջեմշիդ (Պերսեպոլիս)՝

(մ.թ.ա. 5-6-րդ դարեր)



Գոլեսթանի պալատ (բառացի վարդերի պալատ) Թեհրանում



Սուրբ Ամենափրկիչ վանք, հայ առաքելական եկեղեցի Սպահանի նահանգում՝ Նոր Ջուղա քաղաքում: Կառուցվել է 1655 թվականին:



Իրանական մանրանկար



Խոջայի կամուրջ կամ Խաջու կամուրջ Սպահանում, 17-րդ դար



Կյուրոս Մեծ, որը մ.թ.ա. 553 թվականին հիմնադրել էր Աքեմենյան տերությունը:



Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքը ներսից



Շիրազի Նասիր ալ Մուլք կամ վարդագույն մզկիթ ներսից, 19-րդ դար:



Չեհել Սոթուն (քառասուն սյուներ), պարսից շահ Աբաս Բ Սեֆիի պալատը Սպահանում, 17-րդ դար



Ջամե մզկիթ կամ Ուրբաթի մզկիթ Սպահանում: Հիմնադրվել է 771 թվականին և հետագայում վերակառուցվել:



Սբ. Թադեոս (Թադե) Առաքյալի վանք Չալդրանի Ղարաքիլիսա գյուղում



Դարաշամբի սուրբ Ստեփանոս վանք Իրանի հյուսիսում, 9-րդ դար



ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ ՎԱՀԱՆ ԱՌԱՔԵԼԻ

Ականավոր արևելագետ, պատմաբան, միջազգայնագետ, դիվանագետ, արտակարգ և լիազոր դեսպան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ծնվել է 1933 թվականին Վրաստանի Ախալցխա քաղաքում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան (իրանական) բաժինը: Ասպիրանտական ուսումնառությունն անցել է Մոսկվայում, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում: Եղել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարանի ընդհանուր պատմության ամբիոնի վարիչ (1980-1987), գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր (1987-1992), ռեկտորի պաշտոնակատար (1990-1991), Իրանի Իսլամական Հանրապետությունում ՀՀ առաջին արտակարգ և լիազոր դեսպան (1992–1998), ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ (1998-2021), Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ (2000-2008) և նույն ամբիոնի պրոֆեսոր (2008-2022):

Վահան Բայբուրդյանի գիտական հետազոտություններն ամփոփված են Հայաստանում և արտասահմանում հրատարակված մոտ երկու տասնյակ մեծածավալ մենագրություններում և երկու հարյուրից ավել հոդվածներում, որոնք նրան բերել են միջազգային ճանաչում: Առանձնապես հայտնի են նրա «Армянская колония Новой Джульфы в XVII веке»: (Роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях) (Ереван, 1969), «Թուրք-իրանական հարաբերությունները 1900–1914 թթ.» (Երևան, 1974), «Իրանը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին» (Երևան, 1984), «Թուրքիայի քաղաքականությունը Իրանի նկատմամբ XX դարի սկզբներին» (Սպահան, 1989, պարսկերեն), «Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին» (Երևան, 1989 թ.), «Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը» (Թեհրան, 1996 և Երևան, 2022), «Հայերի դերը միջազգային առևտրում» (Թեհրան, 1996, պարսկերեն), «Իրանն այսօր» (Երևան, 1999), «International Trade and the Armenian Merchants in the Seventeenth Century» (New Delhi, 2004), «Իրանի պատմություն» (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը) (Երևան, 2005 և Երևան, 2006), «Նոր Ջուղա» (Երևան, 2007), «Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո» (Երևան, 2008), «Օսմանյան կայսրության պատմություն» (Երևան, 2011 և Երևան, 2023), «The Kurds, the Armenian Question, and the History of Armenian-Kurdish Relations» (Ottawa, 2013), «Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ» (Երևան, 2013), «Իսլամ» (Երևան, 2016), «Ստեփաննոս Երեց Տերտերյանի (Հազարջրիբեցու) «Պատմագիրքը» («Հանգիտագիրքը»)՝ որպես սկզբնաղբյուր XVII-XVIII դարերի Իրանի և իրանահայության պատմության» (Երևան, 2020) մեծածավալ մենագրությունները, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի «Հայաստանի հարակից երկրների պատմություն» քառահատորյակի՝ Վահան Բայբուրդյանի հեղինակած առանձին գլուխները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԻՐԱՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ
1. Իրանի բնաշխարհը 10
2. Իրանի բնակչությունը 15
3. Մեդիա 20
4. Աքեմենյան պետության հիմնադրումը: Կյուրոս 32
5. Իրանը Քամբիզ Բ-ի կառավարման շրջանում 38
6. Դարեհ Ա-ի կառավարումը 42
7. Հույն-պարսկական պատերազմները: Պարսկաստանը
Դարեհ Ա-ի հետնորդների օրոք 47
8. Իրանի նվաճումը Ալեքսանդր Մակեդոնացու կողմից 60
9. Աքեմենյան պետության սոցիալական ինստիտուտները,
հասարակական հարաբերությունները և
գաղափարախոսությունը 68
10. Պարթևական պետությունը: Սելևկյան պետության և
պարթևների պայքարը Իրանում իրենց
գերիշխանությունը հաստատելու համար 85
11. Պարթևա-հռոմեական պատերազմները 93
12. Պարթևական պետության կործանումը.....109

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՍԱՍԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
1. Սասանյանների պետության կազմավորումը:
Սասանյանների ներքին և արտաքին քաղաքականությունը.....114
2. Իրանը վերջին Սասանյանների օրոք 142
3. Սասանյան Իրանի սոցիալ-տնտեսական վիճակը,
կրոնը և գաղափարախոսությունները 151

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԻՐԱՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ
ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ
1. Իրանի նվաճումը արաբների կողմից 165
2. Իրանը Օմայան և Աբբասյան խալիֆայությունների
տիրապետության շրջանում 179
3. Խալիֆայության տիրապետության վերացումն

Իրանում: Նոր պետական միավորումների կազմավորումը.....196
4. Իրանի տնտեսությունը, արհեստները, առևտուրը
և սոցիալ-տնտեսական հարաբերությունները IX-X դարերում 205

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԻՐԱՆԸ ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ
1. Թյուրքական ցեղերի ներխուժումն Իրան: Ղազնևիների
թյուրքական պետությունը 211
2. Օղուզները և Սելջուկյան պետության կազմավորումը 215
3. Իրանի նվաճումը սելջուկների կողմից
Սելջուկյան տիրապետությունն Իրանում 218
4. Սելջուկյան պետության քայքայումը.....225
5. Իսմայիլիթական պետության ստեղծումը.....230
6. Իրանի մշակույթը VIII-XII դարերում.....234

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԻՐԱՆԸ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԽԱՆԵՐԻ
ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ
1. Մոնղոլական պետության կազմավորումը և մոնղոլական
արշավանքների սկիզբը 237
2. Իլխան Հուլավյանների (Հուլաղուիդների) մոնղոլական
պետությունն Իրանում 244
3. Հուլավյանների պետության տրոհումն ու քայքայումը 265
4. Իրանը Թամուրյանների տիրապետության
ներքո: Թամուրի կողմից Իրանի նվաճումը 272

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
Ղարա-Ղոյունլու և Աղ-Ղոյունլու թուրքմենների
տիրապետությունը Իրանում 277

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
ՍԵՖՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
1. Սեֆյան պետության կազմավորումը 291
2. Սեֆյան առաջին շահերի ներքին և արտաքին
քաղաքականությունը 297
3. Իրանը շահ Աբաս Ա-ի և նրա հետնորդների օրոք.....312

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
ԻՐԱՆԸ ԱՖՂԱՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ
1. Աֆղան-գիլզաիների ապստամբությունը և
նրանց արշավանքը Իրան 337

2. Իրանի նվաճումը աֆղանների կողմից:
Աֆղանական տիրապետությունը Իրանում 341

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ
ԻՐԱՆԸ ՆԱԴԻՐ ՇԱՀԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ
1. Նադիր Ղուլի խանի քաղաքական ասպարեզ իջնելը և նրա
կողմից Աֆշարների դինաստիայի հիմնադրումը 357
2. Նադիր շահի ներքին և արտաքին քաղաքականությունը 369

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ
Քաղաքական վայրիվերումներ Իրանում Նադիր շահի
մահվանից հետո: Իրանը զենդերի տիրապետության
շրջանում 381

ԻՐԱՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՍԵԿԵՐՈՐԴ
ՂԱՋԱՐՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՆ ԻՐԱՆՈՒՄ
1. Ղաջարների ներքին և արտաքին քաղաքականությունը 397
2. Հերաթի առաջին կոնֆլիկտը: Ղաջարների կողմից
միակողմանի տնտեսական ու քաղաքական
արտոնությունների տրամադրումը եվրոպական
պետություններին 432

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ
Բաբիների կրոնաքաղաքական շարժումը և
Ամիր Նեզամի բարեփոխումները 438

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ
Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի բնորոշ գծերը
պատմության նոր դարաշրջանում
(XVIII դարի վերջ- XIX դար).....461

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ
Եվրոպական տերությունների «խաղաղ»
ներթափանցումն Իրան 483

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ
Իրանը սահմանադրական շարժման արշալույսին և
1905-1911 թթ. սահմանադրական շարժման տարիներին 503

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ
Իրանը Առաջին համաշխարհային պատերազմի
նախօրյակին և պատերազմի տարիներին 533

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ
ԻՐԱՆԻ ՍՇԱԿՈՒՅԹԸ
1. Հին իրանական մշակույթը 566
2. Իրանական մշակույթը միջնադարում և նոր շրջանում 573

ԻՐԱՆԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՀԵՏՈ ԵՎ XX ԴԱՐԻ 20-ԱԿԱՆ ԹԹ.
1. 1919 թ. անգլո-իրանական համաձայնագրի կնքումը 579
2. «Ադրբեջանական դեմոկրատները» և նրանց
հակակառավարական ապստամբական շարժումը 582
3. Գիլյանի «Խորհրդային հանրապետությունը» և
նրա կործանումը 585
4. 1921 թ. սովետա-իրանական պայմանագրի ստորագրումը 590
5. 1921 թ. փետրվարի 21-ի պետական հեղաշրջումը 593

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ
Ղաջարական դինաստիայի տապալումը և Փեհլևիների
դինաստիայի հաստատումը Իրանում 598

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ
ԻՐԱՆԸ ՌԵԶԱ ՇԱՀԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ (1925-1941 թթ.)
1. Ռեզա շահի կողմից երկրի կենտրոնացման
քաղաքականությունը 606
2. Ռեզա շահի իրականացրած բարեփոխումները 609
3. Ռեզա շահի կառավարության արտաքին
քաղաքականությունը 623

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ
ԻՐԱՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՏԱՐԻՆԵՐԻՆ
1. Իրանի ռազմակալումը դաշնակից պետությունների կողմից 631

2. Խորհրդային Միությունը և «Հյուսիսային նավթի»
վերաբերյալ հարցը: Անջատողական շարժումները
Իրանական Ադրբեջանում և Քրդստանում 639
3. Իրանա-ամերիկյան հարաբերությունները Երկրորդ
համաշխարհային պատերազմից հետո 652

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ
Իրանը նավթային արդյունաբերության ազգայնացման
համար շարժման շրջանում (1950-1953 թթ.).....655

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ
ՄՈՀԱՄՄԱԴ ՌԵԶԱ ՇԱՀ ՓԵՀԼԵՎԻԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԸ (1953-1977 ԹԹ.)
1. Իրանը հեղաշրջմանը հաջորդող ժամանակաշրջանում 668
2. Բարեփոխումներն Իրանում: «Սպիտակ հեղափոխությունը»
գործողության մեջ 674

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ
1978-1979 ԹԹ. ՀԱԿԱՍԻԱՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ
1. Հեղափոխության նախադրյալները 697
2. Հեղափոխության սկիզբը և ընթացքը 704
3. Իսլամական հանրապետության ստեղծումը 713

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ
Իրան-իրաքյան պատերազմը 721

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ
ԻՐԱՆԸ ՀԵՏԽՈՍԵՑՆԻԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ
1. ԻԻՀ տնտեսական և հասարակական
ազատականացման քաղաքականությունը.....731
2. ԻԻՀ հարաբերությունները արևմտյան երկրների հետ 734
3. Մոհամմադ Խաթամին և «քաղաքակրթությունների
երկխոսության» նրա տեսությունը 740

Կարևորագույն իրադարձությունների
ժամանակագրություն 754
Գրականություն.....764

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ)

Հրատ. պատ. խմբագիր՝ Լ. Հովհաննիսյան
Տեխ. աշխ.՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի

Հեղինակը հաստատում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 49.125 + 8 էջ ներդիր:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am